Սարագյուղ
Բավրա
Սիզավետ
Թասշուտ
Ղազանչի
Աղվորիկ
Լորասար
Դարիկ
Ծաղկուտ
Եղնաջուր
Զորակերտ
Գառնառիճ
Արդենիս
Պառակն
Բերդաշեն
Սրավետ
Մեծ Սեպասար
Շաղիկ
Ալվար
Փոքր Սեպասար
Աշոցք
Զույգաղբյուր
Հարթաշեն
Զարիշատ
Կրասար
Կարմրավան
Երիզակ
Մուսայելյան
Վարդաղբյուր
Հովտուն
Սալուտ
Ամասիա
Ցորամարգ
Բաշգյուղ
Սարապատ
Արեգնադեմ
Բանդիվան
Լեռնագյուղ
Զորաշեն
Գտաշեն
Հողմիկ
Թորոսգյուղ
Փոքր Սարիար
Գոգհովիտ
Արփենի
Կաքավասար
Զրաձոր
Կամխուտ
Փոքրաշեն
Մեծ Սարիար
Բյուրակն
Կապս
Հովունի
Քեթի
Լեռնուտ
Կրաշեն
Կարմրաքար
Ջաջուռ
Մեղրաշատ
Վահրամաբերդ
Հացիկավան
Ջաջուռ
Մարմաշեն
Մայիսյան
Հացիկ
Շիրակ
Կամո
Ողջի
ԳՅՈՒՄՐԻ
Հայկավան
Կառնուտ
Առափի
Հողմիկ
Ոսկեհասկ
Ախուրյան
Հովիտ
Ախուրիկ
Դարիբջանյան
Բասեն
Ախուրյան կայ. կից
Արևիկ
Զրառատ
Գետք
Ազատան
Երազգավորս
Բենիամին
Ապաբաց
Գեղանիստ
Բայանդուր
Հովտաշեն
Վարդաքար
Մեղրաշեն
Լուսակերտ
Սպանդարյան
Գուսանագյուղ
Սարատակ
Փանիկ
Արևշատ
Հոռոմ
Նոր Կյանք
Գետափ
Մեծ Մանթաշ
Շիրակավան
Մանուշավան
Փոքր Մանթաշ
Լուսաղբյուր
Հայրենյաց
ԱՐԹԻԿ
Սարալանջ
Իսահակյան
Տուֆաշեն
Նահապետավան
Հայկասար
Հառիճ
Աղին կայ. կից
Բարձրաշեն
Պեմզաշեն
Աղին
ՄԱՐԱԼԻԿ
Սարակապ
Ձորակապ
Լեռնակերտ
Զրափի
Քարաբերդ
Հայկաձոր
Սառնաղբյուր
Ձիթհանքով
Նորշեն
Լանջիկ
Բագրավան
Անիավան
Անիպեմզա
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Գյումրի, Աբովյան փողոցը (նախկին Ալեքսանդրովսկին)

Հառիճի վանքը

Մարմաշենի վանքը

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ШИРАК
ФОЛЬКЛОРНАЯ ТРАДИЦИЯ АРМЯН

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

SHIRAK
THE FOLKLORE TRADITION OF ARMENIANS

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
IAE PUBLICATION
ЕРЕВАН 2024 YEREVAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԻՐԱԿ
ՀԱՅՈՑ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Ա. Ա. Բոբոխյան, Պ. Ս. Ավետիսյան, Տ. Ս. Դալալյան,
Լ. Հ. Աբրահամյան, Թ. Լ. Հայրապետյան, Ս. Գ. Հոբոսյան

Պատասխանատու խմբագիր՝
Բանասիրական գիտությունների թեկնածու
Է. Հ. Խեմչյան

Կազմողներ՝
Մ. Հ. Խեմչյան (գիտական ղեկավար),
Է. Հ. Խեմչյան, Լ. Խ. Ղռեջյան, Հ. Հ. Մատիկյան

ՀՏԴ 398(=19)
ԳՄԴ 82.3(5Հ)
Շ 642

Շ 642 Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը / Կազմ.՝ Մ. Հ. Խեմչյան, Է. Հ. Խեմչյան, Լ. Խ. Ղռեջյան, Հ. Հ. Մատիկյան; ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա. – Եր.: ՀԱԻ հրատ., 2024, 640 էջ + 2 էջ նկար:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ Շիրակի մարզի բանահյուսական մշակույթը: Ի մի են բերվել մեկ հարյուրամյակի ընթացքում հավաքված և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվներում պահվող և մինչ օրս չտպագրված բանահյուսական նյութերը: Վիպական, քնարական, ասույթաբանական բանահյուսության բազմաժանր ընտրանին (հրաշապատում, իրապատում, կենդանապատում հեքիաթներ, զրույցներ, ավանդազրույցներ, զվարճախոսություններ, հուշապատումներ, խաղիկներ, հայրենասիրական, աշխատանքային, ռազմի և զինվորի, սիրո, ծիսական և այլ երգեր, առած-ասացվածքներ, դարձվածներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, հանելուկներ, աղոթքներ) կազմված է ակադեմիական չափանիշներով (հանգամանալից ծանոթագրություններ, Շիրակի բարբառի հարուստ բառարան, անձնանունների, տեղանունների և օգտագործված գրականության ցանկեր):

Ժողովածուն նախատեսված է բանագետների, ազգագրագետների, ժողովրդագետների, բանասերների, ժողովրդագիտական-հայագիտական հետաքրքրություն ունեցող ընթերցողների համար:

ՀՏԴ 398(=19)
ԳՄԴ 82.3(5Հ)

ISBN 978-9939-886-65-7

© ՀԱԻ հրատարակչություն, 2024
© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԱՌԱՋԱԲԱՆ[1]

Շիրակի մարզն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան հատվածը. մարզի կազմում ներառված են Ախուրյանի, Արթիկի, Անիի, Ամասիայի և Աշոցքի շրջանները[2]: Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի՝ Շիրակի գավառը մտել է Մեծ Հայքի տասներեքերորդ երկրամաս Այրարատի կազմի մեջ[3]: Շիրակ տեղանունը, ըստ ավանդության, ցեղանվանական ծագում ունի և դարերի խորքից է գալիս: Պատմահայր Մովսես Խորենացին (410-490) «Հայոց պատմություն»-ը շարադրելիս, վկայակոչելով իր սկզբնաղբյուր Մար Աբաս Կատինային, ներկայացնում է հայ ազգի ծագումը և Հայկ Նահապետի ու նրա զավակների և թոռների տեղաշարժը Մեծ Հայքում: Ըստ Խորենացու ներկայացրած ազգածնական ավանդության՝ Հայկի Արամանյակ որդու թոռանը՝ Արամայիսի որդի շատակեր և բազմազավակ Շարային ուղարկում են բնակվելու Արագած լեռան թիկունքում գտնվող արգավանդ ու բարեբեր դաշտում, որը նրա անունով կոչվում է Շիրակ[4]: Եվ այսպես տեղանունն աղերսվում է անվանադիր նախնի Շարայի հետ: Օտար աղբյուրները (մասնավորապես՝ Քսենոֆոն, Պտղոմեոս, Ստրաբոն, Հերոդոտոս և ուրիշներ) հիշատակում են *Siracene* երկրամասը և սարմատական ցեղեր *sirac*-ներին, որոնք սարմատական ցեղերի արշավանքից հետո հաստատվել են այս տարածաշրջանում[5] և ըստ պատմաբան Հակոբ Մանանդյանի՝ նրանց արշավանքը ոչ թե ավարառության, այլ միջազգային քարավանային ճանապարհներին տիրապետելու նպատակ է հետապնդել[6]:

Ըստ Ստրաբոնի վկայության՝ *սիրակ* կոչվող այս ցեղի ներկայացուցիչներն առևտուր էին անում: Նրանք հայերից և մարերից ստանում էին հնդկական և բաբելական բեռներ և քարավանով տեղափոխում հյուսիս[7]:

Շիրակ տեղանվան՝ *սարմատական* (*շար-մատ*) շիրակ ցեղի անվան հետ ընդհանրության վարկածն առաջին անգամ ցույց է տվել Քերովբե Պատկանյանը[8], որի վարկածը ժամանակի ընթացքում քննություն չի բռնել:

Շիրակ տեղանվան հնագույն դրսևորումը ժողովրդական ասույթաբանության մեջ առածի տեսքով օգտագործել է Մովսես Խորենացին իր պատումն ավելի ճշմարտացի դարձնելու համար՝ ընդգծելով հացառատ Շիրակի դաշտավայրի հիմնական դերը շատակեր Շարային ու նրա զարմին կերակրելու հարցում.

> *...Վասն որոյ արդարանալ թուի առասպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. «Թե քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»*[9]:

Արամ Ղանալանյանը, դիտարկելով հայկական առածների ստեղծման ժամանակի թեման, համոզմունք է հայտնում, որ պետք է ճեղքել առածի այլաբանական կեղևը և թափանցել դրա բովանդակության խորքը, որին նպաստում են տեղանունները և պատմական անձանց անունները՝

---

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 գիտական թեմայի շրջանակում:

2 ՀՀՇՏԲ-4 1998, 132-133:

3 Անանիա Շիրակացի 1979, 296:

4 Մովսես Խորենացի 1913, 39-40, Ղանալանյան 2022, 47:

5 Տես Դալալյան 2006, 65:

6 Մանանդյան-Ե 1984, 281:

7 Մանանդյան-Ե 1984, 281:

8 Патканов 1881, 112.

9 Մովսէս Խորենացի 1913, 40:

հնարավորություն տալով որոշել առածի կամ ասացվածքի հորինման մոտավոր ժամանակաշրջանը և պատմական միջավայրը[10]: Ուստի Շարայի մասին առածի քննությունը հետազոտողին տանում է հայ ազգի ձևավորման ժամանակաշրջանը, իսկ սարմատական ցեղերի վերաբնակեցման փաստը՝ մ.թ.ա IV-III դարերը:

Շիրակի և Շարայի մասին վերոհիշյալ առածը հետագայում հիմք է հանդիսացել պատմական Շիրակ գավառի Բաշ-Շորագյալ գյուղից հյուսիս գտնվող Բանձրել քարայրների մասին ավանդության համար, ըստ որի՝ քարայրները եղել են շատակեր Շարայի ամբարները[11]:

Բացի հայ և օտարազգի պատմիչների երկերից ու հնագիտական ուսումնասիրություններից, Շիրակի պատմությունը վերականգնելու համար որպես աղբյուր կարող են ծառայել նաև բազմաժանր բանահյուսական նյութերը: Ըստ այդմ՝ ավանդազրույցները, ասույթաբանական ժանրերը բանավոր փոխանցման ճանապարհով մեր օրերն են հասցրել Շիրակի բնիկ ժողովրդի դարավոր պատմությանն առնչվող հետաքրքիր իրողություններ և փաստեր:

Համառոտ ուրվագիծ Շիրակի պատմության

Ըստ հնագիտական ուսումնասիրությունների՝ Շիրակը համապատասխանում է Արարատյան թագավորության (Ուրարտու) Էրիախի կոչվող ազգագավառին[12]: Շիրակը երկար ժամանակ (մինչև IV դար) եղել է հայ թագավորների արքունական կալվածքը, որն Արշակունիները նվիրել են Կամսարականներին: Վերջիններս 783 թ. Շիրակը վաճառել են Բագրատունիներին: Բագրատունիների թագավորության օրոք Շիրակը տնտեսական ու մշակութային վերելք է ապրում: 1199 թ. Շիրակում հաստատվում է Զաքարյանների տիրապետությունը, որն ավարտվում է թաթար-մոնղոլների արշավանքների հետևանքով (XIII-XIV դդ.): XV-XVII դարերում Շիրակը պարբերաբար ենթարկվել է թուրքմենական ցեղերի, պարսիկների և թուրքերի արշավանքներին: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով, այնուհետև 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Շիրակն անցնում է Ռուսաստանին: XIX դ. Շիրակը Ալեքսանդրապոլ (Գյումրի) կենտրոնով տնտեսական ու մշակութային նոր վերելք է ապրում[13]: 1918 թ. մայիսից Շիրակի մարզը մտնում է Հայաստանի առաջին Հանրապետության մեջ: 1920-ից այն Խորհրդային Հայաստանի մաս է կազմում:

Բանահավաքչության, հրատարակության և ուսումնասիրության գործընթացը Շիրակում (XIX դարավերջ – XX դ)

Հետազոտությունն ընդգրկում է XIX դարից մինչև մեր օրերը տարածաշրջանի բանահյուսական նյութերի կենցաղավարման, շրջանառման, հավաքման և հրատարակման ընթացքը՝ իր դրսևորումներով և բանահյուսական ժառանգության պատկերը: Տարածաշրջանի հաղորդակցման լեզուն Շիրակի բարբառն է, որը մինչ այսօր ոչ միայն պահպանել է իր կենսունակությունը, այլև ժողովրդագրական զանգվածային տեղաշարժերի, փոխազդեցությունների ու փոխներթափանցումների հետևանքով ձեռք է բերել նոր որակ, որն առկա է թե՛ բանավոր խոսքում և թե՛ բանահյուսական նյութերում:

Տարածաշրջանի ազգաբնակչության հավաքական հիշողությունը պահպանել է դարերի խորքից փոխանցված բանահյուսական ժառանգությունը, որին հավելվել են արևմտահայ գաղթականության հիշողությամբ փոխանցված արևմտահայ գավառների բանահյուսական արժեքները:

Շիրակի բանահյուսական մշակույթի գրառման պատմությունը սկսվում է XIX դարի 50-ական թվականներից, երբ հայ ժողովրդի հոգևոր արժեքների գնահատումն ու հավաքումն արդեն վաղուց իր հաստատուն տեղն էր գրավել հայոց պատմության մեջ: Շիրակի պատմազգագրական

---

10 Ղանալանյան 1969, XIV, XV:

11 Бунятовъ 1891, 141, Ղանալանյան 2022, 263:

12 Էրիախի կոչվող ազգագավառի մասին տես Капанцян 1975, 66-69, Арутюнян 1985, 258-259, Դալալյան 2010, 35:

13 Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի մասին տես Գրիգորյան 1974, 131-135, 168-175:

շրջանն իր գրված դիրքով, պատմությամբ, ներէթնիկ յուրօրինակ շերտերով (Հայաստանի զանազան բնակավայրերից եկած գաղթականներ և պանդուխտներ), ավանդապահությամբ, խոսքաշենությամբ ու սրամտությամբ չէր կարող վրիպել բանահավաքների ուշադրությունից:

Պատմական բոլոր ժամանակահատվածներում բանավոր խոսքի պահպանվածությունը վտանգված է եղել: Կենցաղավարումից դուրս եկող որոշ իրողությունների կորստյամբ պայմանավորված՝ մոռացության են տրվել դրանց ուղեկցող բանավոր խոսքի դրսևորումները: Որպես ցայտուն օրինակ՝ կարելի է դիտարկել երկրագործական մշակույթի և կենցաղային արտադրամիջոցների հետ կապված գործողությունների ընթացքում կատարվող աշխատանքային երգերը (հորովել, սանդի, ճախարակի, խնոցու և այլ երգեր): Կարևորելով նման փոփոխությունների աղետաբեր հետևանքները՝ անհրաժեշտ էր բանահյուսական նյութը գրառել ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում:

Շիրակի բանահյուսական նյութերի հավաքումը ժամանակագրորեն բաժանել ենք երեք փուլի:

Առաջին փուլն ընդգրկում է XIX դարի 50-ականներից մինչև XX դարի 20-ական թվականները (բանահավաքներ՝ Աղեքսանդր Մխիթարյանց, Աղեքսանդր Ափրիկյան, Քաջբերունի, Տիգրան Նավասարդյան, Երվանդ Լալայան, Արշակ Բրուտյան, Հովհաննես Կոստանյանց և ուրիշներ):

Երկրորդ փուլը համընկնում է Հայաստանի երկրորդ Հանրապետության ժամանակահատվածին և բաժանվում է երկու ենթափուլի.

ա) 1920-ականներից մինչև 1960-ականներ (բանահավաքներ Գեղամ Թարվերդյան, Մնացական Թամրազյան, Խայաթ (Սուքիաս Զահրիյան), Նիկողոս Նիկողոսյան, Համբարձում Տեր-Վարդանյան, Վարդ Բդոյան, Արամ Ղանալանյան:

բ) Երկրորդ ենթափուլն ընդգրկում է 1960-ականներից մինչև 1990-ականները և հիմնականում կապվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական երկու բաժինների բեղուն աշխատանքների հետ: Այս փուլում հավաքչական գործով զբաղվել են թե՛ ինստիտուտի գիտաշխատողներն ու բանահավաքները (Արտաշես Նազինյան, Սարգիս Հարությունյան, Արուսյակ Սահակյան, Արազ Կարապետյան) և թե՛ սիրող մտավորականների մի մեծ խումբ (Բարխուդար Ղազիյան, Պարույր Բարսեղյան, Հրաչ Մկրտչյան, Հրաչյա Օհանյան, Ստեփան Խաչատրյան, Եղիշե Խաչատրյան, Անուշավան Գևորգյան և ուրիշներ):

Երրորդ փուլն ընդգրկում է 1990-ականներից մինչև մեր օրերը և հիմնականում կապվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ (բանահավաքներ՝ Կարինե Սահակյան, Հասմիկ Մատիկյան, Կարինե Բազեյան, Հասմիկ Հարությունյան և ուրիշներ):

Առաջին փուլ

Ազգային զարթոնքի, սեփական արմատներին մերձենալու և ինքնաճանաչման ու գնահատման մղումներով պայմանավորված, հետևելով ռուսական և եվրոպական փորձին ու ձեռքբերումներին՝ հայ մտավորականությունն ակտիվորեն ձեռք զարկեց ժողովրդագիտական բազմաբնույթ նյութերի հավաքմանը: XIX դարի երկրորդ կեսին ազգագրական և բանահյուսական նյութերի միջև դեռևս տարբերակում չէր դրվում[14], և սիրող բանահավաքները, ըստ իրենց նախասիրությունների, գրառում էին այն նյութերը, որոնք կարևորում էին: Շիրակի մարզի բանահյուսական նյութերի աշխարհագրական տարածման ու դրա ընդգրկման մասին պատկերացումները պայմանավորված էին նաև բանահավաքների շրջագայելու հնարավորություններով: Օրինակ՝ Քաջբերունին (1837–1920)[15] իր ծառայողական բազմամյա ուղևորությունների ընթացքում շրջելով Հայաստանի գավառներում՝ նաև Շիրակ, Կարս, Բասեն տարածաշրջաններում և ծանոթանալով ժողովրդի

[14] Варданян 1991, 29.

[15] Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) 1858 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1859 թ. ընդունվել և 1864 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Կես դար ծառայել է իբրև գավառական բժիշկ: Մասնագիտությանը զուգահեռ զբաղվել է գրականությամբ, հայագիտությամբ, ժողովրդագիտությամբ: Գրական ասպարեզ է իջել «Տեր Սարգիս» վեպով:

կյանքին ու կենցաղին, վարք ու բարքին, ժողովրդական տոներին և դրանց առնչվող ծիսական արարողություններին՝ գրառել է ինքնատիպ ու բազմաժանր նյութեր, որոնց մի մասը տպագրվել է Ազգագրական հանդեսի VII-VIII և IX գրքերում[16] «Հայկական սովորութիւններ» վերնագրի տակ: Քաջբերունու հավաքչական աշխատանքն ինքնանպատակ չի եղել: Նա շրջագայությունների ընթացքում նկատել է, որ ժամանակի ընթացքում հայկական սովորություններից շատերը.

«...*աննկատելի կերպով արդէն մոռացուել են, ոմանք սակաւ առ սակաւ մոռաւում են կեանքի նոր հոսանքի ազդեցութեան տակ, ուրեմն մոռացուածը կարող է պահել միայն գրականութիւնը*»[17]:

Առաջնորդվելով ազգային ավանդությունները, սովորությունները, երգերը ուսումնասիրելու և կորստից փրկելու ցանկությամբ՝ նա գրառել և հնարավորության սահմաններում տպագրել է իր գրառած նյութերն ու ուղեգրությունները: Քաջբերունին ինքնուրույն մոտեցում է ունեցել իր հավաքած նյութերի նկատմամբ, տարբեր գավառների նույնատիպ նյութերի տարբերակները, բերել է կողք կողքի, վերլուծել և ցույց է տվել դրանց նմանություններն ու տարբերությունները, ներկայացրել տարածաշրջանային առանձնահատկությունները:

Եթե Քաջբերունու հավաքչական գործունեությունը լայն ընդգրկում ուներ և միավորում էր ողջ համահայկական ժողովրդագիտական նյութերը, ապա Շիրակի տարածաշրջանում աշխատած մյուս բանահավաքներն առաջնորդվում էին զուտ տեղական բանահյուսական նյութերը գրանցելու և ուսումնասիրելու նկատառումներով:

Դեռևս XIX դարի 80-ականներին ալեքսանդրապոլցի Աղեքսանդր Ափրիկյանը[18] բանահավաքչական աշխատանքների ընթացքում նշում էր, որ Շիրակի ազգաբնակչության մեջ զգալի թիվ է կազմում արևմտահայ գաղթականությունը, որը տեղափոխվել էր թուրքական բռնաճնշումների և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով: Արևմտահայ փախստականները, հաստատվելով Շիրակի գյուղերում, համատեղ կյանքի ընթացքում միավորվելով տեղացիների հետ, ընդունելով տեղացիների վարք ու բարքը, սովորույթները, դրանց ավելացնելով տարբեր տարածաշրջանների (Վասպուրական, Մուշ, Կարին, Ալաշկերտ և այլն) սովորույթները, կենցաղը, լեզուն, հոգևոր մշակույթը՝ նպաստել էին ընդհանուր ժողովրդագիտական պատկերի նոր որակի առաջացմանը: Եկվորները նաև համալրել էին Շիրակի բարբառը սեփական ոճերով ու բառերով: Հեքիաթներ գրառելիս Ափրիկյանն ուշադրություն է դարձնում, որ՝

«...*մեզանում իւրաքանչիւր հէքիաթ ասողը համարեա ունի իւր խոսակցութեան առանձին ոճերն ու վերջավորութիւնները*»[19]:

Նա Շիրակի ժողովրդախոսակցական լեզուն անվանում է «բազմաբարբառ լեզու», որի մեջ մուտք են գործել և «պատշաճաւոր տեղ են բռնել» նաև օտար (պարսկական և տաճկական) բառերը: Հեքիաթների լեզուն դիտարկելով՝ նա հանգել է հետևյալ եզրակացության.

Արտաքսել, դուրս քշել այժմ միանգամից օտար բառերը մեր ժողովրդական հէքիաթների միջից, նշանակում է բոլորովին քամել նրանցից ժողովրդական ոգին, ջնջել նրանց վրայից ժողովրդական տիպարը[20]:

Նմանօրինակ դիտարկումների արդյունքում ձևավորվեց բանահյուսական նյութերի գրառման ընդունված մեթոդը, այն է՝ ճշգրտորեն պահպանել բանասացի արտաբերած յուրաքանչյուր բառը, անհասկանալի բառերը տեղնուտեղը ստուգաբանել և բացատրել, հավատարիմ մնալ և դույզն-

---

16 Քաջբերունի 1901; Քաջբերունի 1902:

17 Քաջբերունի 1901, 114:

18 Աղեքսանդր Ափրիկյան, ծնվել և ապրել է Ալեքսանդրապոլում, հայտնի հայագետ Գրիգոր Խալաթյանի մանկության ընկերն է, զբաղվել է բանահավաքչությամբ և հայ ժողովրդական հեքիաթների դիտարկմամբ, որն ընդհատվել է վաղաժամ մահվան պատճառով: 1880 թվականին գրառած հեքիաթները (թվով 4 հատ) Գր. Խալաթյանն ընդգրկել է «Փշրանք Շիրակի ամբարներից ժողովածուի մեջ (ԷԱԺԱ):

19 Մխիթարեանց 1901, IX:

20 Մխիթարեանց 1901, IX:

իսկ չշեղվել բանասացի պատումից: Շատ կարևոր էին նաև բանասացի արմատները (ծագումով որտեղից էին նախնիները) և իր պատումի սկզբնաղբյուրը, նյութի փոխանցման ճանապարհները հստակեցնելը, որն անհրաժեշտ էր նյութի կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար:

XIX դարի 70–80-ական թթ. տոհմիկ ալեքսանդրապոլցի Աղեքսանդր Մխիթարյանցը (1846-1916)[21], ուսուցչությանը և գրահրատարակչությանը զուգահեռ, Շիրակի և Վանանդի[22] բնակավայրերում հավաքել է բազմաժանր բանահյուսական-ազգագրական նյութեր: Դեռևս 1887 թ. նրա հավաքածուն պատրաստ էր հրատարակության, որը միջոցներ չլինելու պատճառով 14 տարի մնացել է անտիպ: Վերջապես 1901 թ. Աղեքսանդր Մխիթարյանցի «Փշրանք Շիրակի ամբարներից» խորհրդանշական վերնագրով ժողովածուն լույս է տեսել Էմինյան ազգագրական ժողովածուի Ա հատորում[23]: Այն բովանդակում է Շիրակի գավառի (Ալեքսանդրապոլի գավառ) վիպական բանահյուսության և ազգագրության առատ նյութ և տարածաշրջանի ժողովրդագիտության հավաքման, ուսումնասիրման և հրատարակման առաջին ամբողջական փորձն է: Շիրակի քնարական բանահյուսության նյութերը Մխիթարյանցը «Տաղեր և խաղեր» վերնագրով հրատարակում է 1900 թ: Սա պատմական այն ժամանակահատվածն էր, երբ առաջնորդվելով բանահյուսական «հում նյութի» արժեքով, որպես գիտական ուսումնասիրությունների հիմք, կարևորվում էին դրանց հավաքումն ու հրատարակությունը:

1899 թ. Ազգագրական հանդեսի Ե գրքում լույս է տեսնում բանահավաք և կրթական գործիչ Մկրտիչ Իսահակյանի (1870-1921)[24] «Շիրակի ժողովրդական երգեր» հավաքածուն[25], որը նա գրառել է Գյումրիի և շրջակա գյուղերի բնակիչներից: Հավաքածուում ընդգրկված են քնարական բանահյուսության Շիրակի տարածաշրջանում XIX դարավերջին կենցաղավարող սիրո երգերն ու պարերգերը, ինչպես նաև տեղական ամենատարածված և սիրված աշուղական երգերը:

XIX դարավերջին Շիրակի քնարական բանահյուսության հավաքման, ձայնագրման և ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի ալեքսանդրապոլցի հայտնի երաժշտագետ, բանագետ Արշակ Բրուտյանը (1864–1936)[26], որի «Ռամկական մրմունջներ» ժողովրդական երգարանն այնպիսի մասսայականություն է վայելել, որ ինը տարիների ընթացքում չորս հրատարակություն է ունեցել (1895, 1898, 1901, 1904): Թեև Բրուտյանն ուներ երգերի ձայնագրությունները, սակայն այլևայլ պատճառներով նա միայն տեքստերն է հրատարակում: Իր ողջության օրոք նրան չի հաջողվում հրատարակել ժողովածուի ամբողջական ձայնագրված տարբերակը, որը 1898 թ. արդեն պատրաստ էր հրատարակության: 1985 թ. Արշակ Բրուտյանի թոռնուհին՝ երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանը, ի կատար է ածում մեծ երախտավորի երազանքը, և «Ռամկական մրմունջներ» արժեքավոր ժողովածուն (բանահյուսական տեքստերով, նոտագրություններով և ճանաչողական արժեք ներկայացնող ծանոթագրություններով) երկու լեզվով (հայերեն և ռուսերեն)[27] ներկայացվում է ընթերցողների և մասնագետների դատին:

Շիրակի վիպական բանահյուսությանն ու ժողովրդագիտական բազմազան նյութերին ուշադրություն է դարձրել և հավաքել նաև Հովհաննես Կոստանյանցը: Նա յուրովի մոտեցում է ունեցել ժողովրդական նյութերին և դրանց մշակումները 1896 թ. ներկայացրել է «Շիրակի լեգենդաներից և ժողովրդական կյանքից» գրքում[28]:

---

21 Աղեքսանդր Մխիթարյանցը սովորել է Ալեքսանդրապոլում, ապա ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Զբաղվել է մանկավարժությամբ, գրահրատարակչությամբ, բանահավաքչությամբ:

22 Վանանդ գավառը մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի մեջ, գտնվում է Ախուրյան գետի հովտում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում եղել է Կարսի մարզի մեջ (ՀՀՇՏԲ-4 1998, 753):

23 Մխիթարեանց 1901:

24 Մկրտիչ Իսահակյանը ծնվել, ապրել և գործել է Ալեքսանդրապոլում: Բանաստեղծ Ավետիք Իսահակյանի եղբայրն է: Երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ և բանահավաքչությամբ:

25 Իսահակեան 1899, 200-212:

26 Արշակ Բրուտյանի ողջ ստեղծագործական, մանկավարժական, բանահավաքչական կյանքը կապված էր Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքի և Շիրակի հետ:

27 Բրուտյան 1985:

28 Կոստանեանց 1896:

Շիրակի մարզի տարածքում բանահյուսության և ազգագրության նկատմամբ ձևավորված բուռն հետաքրքրությունն ու հավաքչական աշխատանքը շարունակվեց նաև XX դարասկզբին: 1911 թ. ազգագրագետ-բանագետ Երվանդ Լալայանը նյութեր է գրառել Շիրակի գյուղերում:

Լալայանի գրառած Շիրակի հեքիաթներն ընդգրկվել են Շիրակի և հարակից շրջանների հեքիաթները ներկայացնող «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի IV հատորում[29]:

Վերոհիշյալ բանահավաքների հավաքածուները և տարբեր սիրող-բանահավաքների գրառած և մամուլում տպագրած բանահյուսական նյութերն ամբողջացնում են XIX դարավերջի և XX դարասկզբի Շիրակի վիպական բանահյուսության պատկերը:

Երկրորդ փուլ

Շիրակի բանահյուսական նյութերի հավաքման երկրորդ փուլը համընկնում է Խորհրդային Հայաստանի գոյության տարիներին: Խորհրդայնացումից հետո ժողովրդի կյանքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան, և ավանդական կացութաձևը, սովորույթները, առավել ևս՝ հավատալիքները ետին պլան մղվեցին: Կենցաղավարումից դուրս եկան բազում իրողություններ, երիտասարդությունն առաջնորդվեց նոր գաղափարներով, նոր կենցաղի յուրացմամբ, իսկ ավանդականը մնաց ավագ սերնդի հիշողության մեջ:

Դիտարկելով երկրորդ փուլի առաջին ենթափուլում գրառված բանահյուսական նյութերը՝ նկատում ենք, որ 1925–1934 թթ. հատկապես ուշադրություն են դարձրել քնարական բանահյուսության նոր դրսևորումներին: Բանահավաք Գեղամ Թարվերդյանը շրջագայել է Հայաստանով մեկ (այդ թվում նաև՝ Շիրակով) և գրառել ժամանակի նորաստեղծ երգեր, որոնց թեմատիկան հիմնականում խորհրդային երկրի առօրյայի, կուսակցական ղեկավարների (Լենին, Ստալին), կոլտնտեսային կյանքի («Տրակտորի երգը», «Կոլխոզի խաղը») տեղական նշանակության անհատների և դեպքերի («Լենինականի հայկինոյի հրդեհը») մասին էր[30]:

Այս ենթափուլում Շիրակի Ամասիա, Ղուկասյան, Ախուրյան, Լենինական, Պեմզաշեն բնակավայրերից բազմաժանր բանահյուսական նյութեր են գրառել Մնացական Թամրազյանը, աշուղ Խայաթը (Սուքիաս Զահրիյան), Նիկողոս Նիկողոսյանը, Համբարձում Տեր-Վարդանյանը, Վարդ Բդոյանը, որոնց ձեռագիր հավաքածուները պահվում են ՀԱԻ արխիվում, իսկ մի մասը տպագրվել է տարբեր ժանրային ժողովածուներում: 20–30-ականներին Հերիք Հարթենյանն իր հորից՝ աշուղ Ծաղկալուց (Մելիքսեթ Հարթենյան) գրառել է հրաշապատում և իրապատում հեքիաթներ, աստվածաշնչյան ավանդազրույցներ, զվարճապատում զրույցներ, երգեր, ժողովրդական բժշկության նմուշներ և այլն, որոնք անտիպ են և պահվում են ՀԱԻ արխիվում:

Այս ենթափուլի հավաքածուների մեջ առանձնանում են Շիրակի աշուղների գործունեությանը նվիրված աշխատանքները: Աշուղական ավանդույթի արմատները Շիրակում դարերի խորքն են գնում, և աշուղական երգարվեստն այս պատմազգագրական շրջանի բնորոշ անձնահատկություններից է: Բանահավաք Մնացական Թամրազյանը ներկայացրել է 1830–1930 թթ ժամանակահատվածում Ալեքսանդրապոլ-Լենինականում ապրած և ստեղծագործած աշուղների մասին ինքնատիպ հուշապատում-ուսումնասիրություն, որն արժեքավոր սկզբնաղբյուր է այս ասպարեզն ուսումնասիրողների համար:

Հավաքչական աշխատանքի երկրորդ ենթափուլը (1960–1990 թթ.) ներկայացնում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության և Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինների հավաքչական, հետազոտական և հրատարակչական բուռն գործունեությունը, որի մեջ ընդգրկված է նաև Շիրակի մարզի բանահյուսական մշակույթը: 60-ականներին Շիրակի մարզի տարածքում աշխատել են բանագիտական-բանահավաքչական արշավախմբեր (մասնակցությամբ Սարգիս Հարությունյանի, Արտաշես Նազինյանի, Արուսյակ

[29] ՀԺՀ- 4 1963, 15-194:
[30] Թարվերդյան FFI: 2349-3802:

Սահակյանի, Ժենյա Խաչատրյանի, Արազ Կարապետյանի), ովքեր թե՛ ձեռքով և թե՛ ձայնագրիչով գրառել են բազմաժանր բանահյուսական նյութեր՝ հիմնականում ավագ սերնդի բանասացներից, որոնք մտապահել են մանկության տարիներին լսածը և սովորածը:

Գիտաշխատողների հավաքածուները համալրվել են սիրող և կամավոր բանահավաքների հավաքածուներով: Սիրող բանահավաքները՝ հիմնականում թոշակառու մտավորականներ, ուսուցիչներ, դերասաններ, լրագրողներ, պետական-կուսակցական աշխատողներ, իրենց հետաքրքրությունների շրջանակում Շիրակի գյուղերում և Լենինական քաղաքում գրառել են բանահյուսական բազմաժանր նյութեր, որոնք պահվում են ՀԱԻ արխիվի ֆոնդերում և ներկայացնում են XX դարի 50–90-ականներին Շիրակում պահպանված և դեռևս կենցաղավարող ավանդական բանահյուսական նյութերը:

Շիրակցի սիրող բանահավաքների հավաքածուներից յուրաքանչյուրն առանձնանում է իր ընդգրկած ժանրերով, որոնք գրեթե 100 տարվա կտրվածքով տարածաշրջանի վիպական բանահյուսության պատկերն են ներկայացնում: Ալեքսանդրապոլում ծնված և մեծացած, Մոսկվայում բարձրագույն կրթություն ստացած Պարույր Բարսեյանն իր հավաքածուում ներկայացրել է Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի ինքնատիպ դեմքը.

> *«...ուրույն տրադիցիաներով, առանձնահատկություններով, կենցաղով և հոգեբանությամբ (այսինքն՝ բարբառով, հայրենասիրությամբ, կրոնասիրությամբ, լոպպազությամբ, կատակասիրությամբ, սրամտությամբ, հումորով, մարդուն ձեռ առնելու ունակությամբ, երգի ու նվագի հանդեպ սիրով, «լազաթին քեֆերով», հակումով դեպի թևավոր խոսքերը, անլեգալ դարձվածքներով և հայհոյանքներով) այն անփոխարինելի քաղաքային միջավայրն էր, որը ծնունդ և սնունդ է տալիս զվարճախոսություններին»*[31]:

Պարույր Բարսեղյանը ներկայացրել է այս ինքնատիպ քաղաքի զվարճախոսներին (Պոլոզ Մուկուչ, Ջղեր, Ծիտրո, Կուժիկ և ուրիշներ), նշանավոր հին գյումրեցիներին իրենց բազում պատումներով, գյումրեցիների 1400 մականունները, որոնցից յուրաքանչյուրի տակ մի հետաքրքիր պատմություն է թաքնված, իրապատում և հրաշապատում հեքիաթներ, զրույցներ, քնարական բանահյուսության և ասույթաբանության շիրակյան ողջ շքեղ երանգապնակը:

Շիրակի ասույթաբանական նյութը՝ հազարավոր առած-ասացվածքները, անեծքները, օրհնանքները, շուտասելուկները, հանելուկները, երդումներն ու փաղաքշական խոսքերը, կազմում է բանահավաքներ Անուշավան Գևորգյանի, Աշոտ Գևորգյանի, Հրաչ Մկրտչյանի, Հրաչյա Օհանյանի և այլոց հավաքածուների հիմնական «մեխը»: Բանահավաքները պահպանել են բարբառային առանձնահատկությունները և իրենց հավաքածուներին կցել են բարբառային բառերի բացատրական բառարաններ:

Երրորդ փուլ

Շիրակում բանահավաքչական աշխատանքների երրորդ փուլը համընկնում է Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին (XX դարի 90-ականներ – XXI դարասկիզբ) և հիմնականում կապված է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ: Կենտրոնի գիտաշխատողների նպատակներից մեկն է հավաքել և գրառել ներկայումս կենցաղավարող բանահյուսական նյութերը և դրանց հետազոտությամբ ու համեմատություններով վեր հանել ավանդական բանահյուսական նյութի պահպանվածության, փոփոխությունների և ժանրային դրսևորումների խնդիրը:

Շիրակի բանահավաքչության պատմությունը ցույց է տալիս, որ XIX դարից մինչ օրս կուտակվել է ավանդական բանահյուսական ժառանգության հարուստ նյութ, որի հրատարակությունն ու ուսումնասիրությունը համարժեք չէ հավաքչական աշխատանքներին: Խորհրդային և ետխորհր-

[31] Բարսեղյան 1969, FFVI: 6638:

դային տարիներին ակադեմիական հրատարակությամբ լույս աշխարհ են եկել հայ ժողովրդական հեքիաթների մատենաշարի շիրակյան հատորը[32] և բանահյուսական առանձին ժանրերին նվիրված ժողովածուներում ընդգրկված Շիրակի ավանդական նյութերը[33]: Սույն ժամանակահատվածում առանձին սիրող-բանահավաքներ, ըստ իրենց նախասիրությունների, գրառել և հրատարակել են ժողովրդական բանարվեստի երգիծական բնույթի զրույցներ, սրամտություններ, զվարճալի պատմություններ, անեկդոտներ և այլն: Այդ շարքում հատկանշական են Հ. Իկիլիկյանի «Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ»[34], Հ. Գևորգյանի «Լենինականյան զվարճալի զրույցներ և սրամտություններ»[35], Մ. Հովհաննիսյանի «Ոսկեհասկ (Մոլլա-Մուսա) գյուղի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը»[36] գրքերը:

Շիրակի բանահյուսական ժառանգությանը նվիրված առանձին գիտական ուսումնասիրություններ նույնպես չեն եղել: Սակայն 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմակերպած գիտաժողովներում հնչել են բանահյուսության տարբեր խնդիրների նվիրված զեկուցումներ, որոնք այնուհետև հոդվածների տեսքով հրատարակվել են ՇՀՀԿ գիտական հետազոտությունների ժողովածուներում (Սարգիս Պետրոսյան, Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան, Էսթեր Խեմչյան, Մարինե Խեմչյան, Լուսինե Ղռեջյան, Հասմիկ Գալստյան, Հասմիկ Մատիկյան, Ռաիսա Խաչատրյան և ուրիշներ):

Ելնելով Շիրակի բանահյուսական ժառանգության՝ մինչ օրս եղած ուսումնասիրությունների անբավարար քանակից ու բացթողումներից՝ նպատակահարմար ենք համարել անդրադառնալ սույն խնդրին: Ուստի Շիրակի բանահյուսական մշակույթն ուսումնասիրող խումբը (ղեկավար՝ Մ. Խեմչյան, անդամներ՝ Է. Խեմչյան, Լ. Ղռեջյան, Հ. Մատիկյան) ՀՀ Գիտության կոմիտեին է ներկայացրել մի նախագիծ, որը հավանության է արժանացել և ֆինանսավորվել երեք տարի ժամանակով: Եվ քանի որ բանահյուսական ուսումնասիրությունների համար առաջնային են բնագրերը, ապա նպատակահարմար ենք գտել խիստ ընտրությամբ հրատարակել մինչ այժմ գրառված և արխիվներում ամբարված անտիպ բանահյուսական նյութերը:

Արխիվներում և առանձին հավաքածուներում առկա բազմաժանր ու հարուստ բանահյուսական նյութերը կազմում են «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» գրքի հիմքը: Այն ամբողջացնում է Շիրակի՝ XX դարի բանահյուսական ժառանգությունը իր բոլոր տեսակներով (վիպական, քնարական, ասույթաբանական), լույս աշխարհ է հանում բացառիկ նյութեր և ապահովում ապագա հետազոտությունների դաշտը:

* * *

Շիրակի բանահյուսական ժառանգությունն ինքնատիպ է և ներկայացնում է տարածաշրջանին բնորոշ լեզվամտածողության սահմաններում ստեղծված և վերարտադրված արձակ-պատմողական, քնարական և ասույթաբանական ժանրերի ամբողջությունը, որը հարատևել է ժամանակի ընթացքում և, անշուշտ, կորուստներով հասել XX դար: Ավանդական բանահյուսության պահպանված և փոխանցված նմուշները վերջնական կորստից փրկվել են գրառման և արխիվացման միջոցով, որն այսօր ետադարձ ճանապարհով, այն է՝ տպագրությամբ, կվերադարձվի այն ստեղծող շիրակցիներին:

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն բաղկացած է երեք բաժնից՝ վիպական, քնարական և ասույթաբանական բանահյուսություն, որոնցում ընդգրկված են բազմաժանր և բազմաբնույթ նյութեր, որոնք տպագրվում են առաջին անգամ: Նյութերը գրառվել են Շիրակի

---

32 ՀԺՀ- 4 1963, 15-194:
33 Հարությունյան 1965, Հարությունյան 2006:
34 Իկիլիկյան 1989:
35 Գևորգյան 1989:
36 Հովհաննիսյան 2005:

մարզի գյուղերում և Գյումրի քաղաքում՝ տարիքային տարբեր խմբերի մեծահասակ, երիտասարդ և մանկահասակ երկսեռ բանասացներից:

Վիպական բանահյուսության բաժնում նախ ներկայացվել են հրաշապատում, իրապատում և կենդանապատում հեքիաթները (103 միավոր): Ընտրված հեքիաթները ներկայացնում են Շիրակի տարածաշրջանում կենցաղավարած և պատմված ավանդական հեքիաթների տարբերակները, երբեմն էլ պատառիկները:

Շիրակի ավանդական հեքիաթներում առկա են հեքիաթային գրեթե բոլոր տիպերը, մոտիվները, սյուժեները, որոնք բնորոշ են համաշխարհային հեքիաթային ժառանգությանը և ամրագրված են Աարնե-Թոմփսոնի և Հանս-Յորգ Ութերի հեքիաթային համացույցում (ATU):

Ինչպես Հայաստանի բոլոր տարածաշրջաններում, Շիրակում ևս, հեքիաթասացության ավանդույթն ունեցել է ինքնատիպ դրսևորումներ, որոնք փոխանցվել են սերնդե սերունդ և սրբորեն պահպանվել հեքիաթասացների կողմից: XIX դարավերջին և XX դարասկզբին Շիրակում դեռևս պահպանված էին գյուղական օդաներ, որտեղ հավաքվում էին հեքիաթասեր ունկնդիրները՝ լսելու տեղական հանրահայտ հեքիաթասացների պատումները: Բանասաց Սուրեն Սարգսյանն (Ախուրյանի շրջանի Ջրառատ գյուղ [նախկին՝ Չրախլի]) իր պատումներից մեկը սկսում է հետևյալ զգուշացում-ծանոթացմամբ. «*Է, ժողովո՛ւրդ, ըսկըսըմ եմ, հեքիաթի վա՛խտ ձեն, ծըպտուն չը բըդի էղնի: Հըլը դուզն օր յուզըմ եք յիմանաք՝ մեր մենձերն օր յիրկունը հեքյաթ էյն ըսըմ, մանդրո ոտներուն դուս էյն էնըմ (էրեխոնցը), ճըրագ էր, լամպ էր անցընըմ էյն, մութ տեղն էյն ըսըմ, օր ալըրները չը պակսի: Չիդեմ, ըդման էյն բացադըրըմ: Մենք էլ պըզտիկ էյինք: Էրթըմ էյինք մե տեղըմ պայ էյնք մըտնըմ, մենձերը պատմըմ էյին, մենք էլ լըսըմ էյինք*» [№ 2(2)]:

Փաստորեն հեքիաթասացությունն ունեցել է ժամանակային և հավատալիքասովորութային սահմանափակում, որի հիմքում ընկած էր զգուշավորությունը և դարերով ամրագրված սովորույթը՝ ի նպաստ կենսական ամենակարևոր ատրիբուտները պահպանելուն: Հեքիաթասացությունը նաև հեքիաթասացի համար ուներ որոշակի կանոնակարգ, որին հետևում էին արհեստավարժ հեքիաթասացները. «*Պապըս ուզածիդ պես հեքիաթներ էր ըսըմ: Նըստըմ էյն օդեն, յիրան քելելու տեղ էյն թողնըմ, չըմքի հեքյաթ ըսողը բըդի ման գա: Սարժուձևերը (շարժուձևերը) բըդի ցուց տա, թեզ-թեզ էլ բըդի երգե: Մե խոսքով՝ հեքյաթը հավեսին բըդի ըսես, թե չէ... Հըմի ինչ օր ես ըսըմ եմ, մըտքիս զոռ եմ էնըմ: Ա՛խ, էման հեքյաթներ եմ լըսե՛... վո՛վ գիտեր, օր ըտոնք հըմի պետք են գալըմ*»:

Հեքիաթ պատմելն արվեստ էր, և այդ արվեստին տիրապետում էին օժտված ու ընտրյալ անհատներ, որոնք ընդունելով հեքիաթապատման կանոնները՝ այն փոխանցում էին հետագա սերունդներին:

Յուրաքանչյուր վարպետ բանասաց սրբորեն պահպանում էր հեքիաթի կառուցվածքային ամբողջականությունը և հեքիաթին բնորոշ լեզվական կայուն բանաձևերն ու կաղապարները: Անգամ, եթե բանասացը կասկած ուներ հեքիաթի լինել-չլինելու մասին, միևնույն է՝ պահպանում էր սկսվածքային կայուն բանաձևը. «Ժամանակով էղնըմ է, չի էղնըմ, եսիմ էղնը՞մ է, ըշտը, խոսք է, ըսըմ են» [№ 2(2)]:

Շիրակի հեքիաթներն ունեն Շիրակի բարբառով ձևակերպված կայուն բանաձևեր, որոնք անմիջապես լսողին հուշում են իրենց ծագումնաբանության մասին: Շիրակի ամենատարածված սկսվածքային բանաձևերն են՝ «Կէղնի, չի էղնի...» [№ 11(11)], «Ժամանակոց թագավորի մեկը ալվադ-թալվադ չի ունենա» [№ 9(9)], «Ավալ ժամանակին...» [№ 8(8)], «Գըլլի, չի՛լլի, մե վախկոտ մարթ՛մ գըլի» [№ 59(59)], «Ուրեմն, էսպես կէղնի...» [№ 69(69)], «Օրեն մե օր մե գեղացի՛մ կէրթա հանդը...» [№ 93(93)] և այլն:

Հեքիաթի սկսվածքային բանաձևերը ներկայացնում են հեքիաթային ժամանակը, որն անորոշ է և ստեղծում է անհիշելի ժամանակի պատրանք, որին կարելի է և՛ հավատալ, և՛ չհավատալ: Հեքիաթային ժամանակին հաջորդում է այն տարածությունը, որով սկիզբ է առնում հեքիաթի գլխավոր նպատակն իրագործող հերոսի գործառույթը: Հեքիաթի հերոսի ապրած ժամանակը

տարբերվում է իրական ժամանակից, ուստի ավանդական սկսվածքային բանաձևը «կէղնի» բառով նախ հաստատում, ապա «չէղնի» բառով ժխտում է գործողությունների իրական լինելու հավանականությունը՝ առաջ մղելով անորոշության գաղափարը: Շիրակի հեքիաթներում կիրառելի «ժամանակոց», «ժամանակով», «ավալ ժամանակին» արտահայտչամիջոցները խորհրդանշում են ժամանակի անհիշելիությունը, որը գրեթե հավասարազոր է չլինելուն և նույնպես հավատալ-չհավատալու սահմանագծում է գտնվում:

Ավանդական կայուն սկսվածքային բանաձևերից զատ՝ Շիրակում կենցաղավարել են նաև չափածո նախաբան-սկսվածքներ, որոնք բուն հեքիաթի հետ օրգանական կապ չունեն: Ավանդական հեքիաթապատմանը բնորոշ էր հեքիաթը սկսել չափածո նախաբանով, որն իր թեթև ու տրամադրող ոճով որոշակի մթնոլորտ էր ստեղծում բուն հեքիաթին անցնելու համար: Ըստ գրառված նյութերի՝ Շիրակում ավանդական չափածո նախաբան-սկսվածքի երկու տիպ է պահպանված եղել: Առաջին տարբերակը համահայկական տարածում ունեցող «Հեքիաթ, հեքիաթ, պապս...» [№ 12(1303), № 13(1304)] նախաբանն է, որն անջատվել է հեքիաթից և հանդես է եկել որպես անկախ ստեղծագործություն: Որպես առանձին միավոր գրառված չափածո սկսվածքները բանագետ Ռ. Գրիգորյանը դիտարկել է իբրև մանկական երգ և ընդգրկել «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» ժողովածուի մեջ[37]: Երկրորդ չափածո նախաբան-սկսվածքը, «Ժամանակն էն ժամանակն էր» հիմնատողով (FFXI: 1721-1722) մինչև XX դարի 60-70-ականները կիրառվել է բանասացների կողմից: Ըստ բանահավաք Հ. Մկրտչյանի հաղորդած տեղեկության՝ բանասաց Երվանդ Սեխլեյանը (Արթիկի շրջան, գյուղ Փանիկ) բոլոր հեքիաթները սկսում էր այս չափածո սկսվածքով: Այս սկսվածքը կառուցված է երգիծական տարրերի կիրառմամբ, թեթև է ու շարժուն, թվարկում է կենդանիներին անհարիր գործառույթներ (թալանչի, վարսավիր, լարախաղաց), որոնք ավելի են սաստկացնում ժամանակի անորոշության գաղափարը[38], ստեղծում են հետաքրքրասիրության մթնոլորտ՝ նախապատրաստելով և տրամադրելով ունկնդիրներին՝ վայելելու հետաքրքրաշարժ պատումը.

Ժամանակն էն ժամանակն էր,
Խալբ (խարաբ) ժամանակն էր,
Ուղտը թալանչի էր,
Աքլորը վարսավիր էր,
Փիսիկը լարախաղաց էր,
Մուկը ճանապարհ կտրող էր:
Կա՛ր, չկա՛ր... [№ 27(27)]

Շիրակի հեքիաթները սկզբից մինչև վերջ հագեցած են հեքիաթի սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ կայուն բանաձևերի բոլոր տարատեսակներով, ասույթաբանական ժանրերի բոլոր տեսակների համապատասխան կիրառություններով, բարոյախրատական եզրահանգումներով, ուսուցողական տարրերով և այլն: Հեքիաթը շիրակցիների կյանքի անբաժան մասն է կազմել և արհեստավարժ բանասացներին զուգահեռ՝ հեքիաթասմամբ ու հեքիաթաստեղծմամբ զբաղվել են նաև Շիրակի աշուղները, որոնց ստեղծագործական երկացանկում հեքիաթն իր պատվավոր տեղն է գրավել: Արխիվային նյութերի մեջ երգերով հագեցած պատումների երգային մասն աշուղների ստեղծած հավելումներն են [№ 11(11), № 37(37)], № 61(61)]:

Ժողովածուի վիպական բանահյուսության զգալի մասը կազմում են զրույցները (ավանդական և իրապատում), զվարճախոսությունները, ստապատում զրույցները և այլն: Շիրակի ավանդական զրույցների թեմատիկան շատ բազմազան է և ներկայացնում է համահայկական ավանդական զրույցների շիրակյան համով-հոտով տարբերակները: Այն ընդգրկում է գյուղաշխարհի կյանքը,

[37] Գրիգորյան 1970, 262-269:
[38] Խեմչյան 2014-2015, 36-45:

գյուղացու հոգսերն ու խնդիրները, կենցաղը, մարդկային հարաբերությունները, հոգևորականների ու հավատացյալների փոխհարաբերությունները, քահանաների անբարո վարքն ու գործած մեղքերի համար ծխականներից ստացած պատիժը [№ 12(127), № 13(128)], կանանց բնավորության դրական և բացասական կողմերը ներկայացնող, ինչպես նաև բարոյախրատական բազմապիսի հետաքրքրաշարժ պատումները:

Ի տարբերություն այս զրույցների՝ իրապատում զրույցները տարբերակներ չունեն և ներկայացնում են կոնկրետ անձանց ու դեպքերի մասին այն պատմությունները, որոնք հետք են թողել մարդկանց հիշողության մեջ: Բանահավաք Պարույր Բարսեղյանի գրառած իրապատում զրույցներում ներկայացված են XIX դարավերջից մինչև XX դարի կեսերը Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի նշանավոր մարդկանց մասին պատումները, որոնք այսօրվա գյումրեցուն ծանոթացնում են իրենց քաղաքի պատմության այն էջերին, որ մոռացության են մատնվել: Այդ պատումներում ներկայացվել են քաղաքագլուխներ (Կամսարական), պատգամավորներ (Ավետիս Սաֆարով, Դրմբենց աղա Միլիտոս, կլայեկչի «Կենդանի գազեթ»), քաղաքային վարչության անդամ (Աղաբեկ Ամիրով), ալեքսանդրապոլցի կատակասեր լոթիներ, քեֆչիներ, արհեստավորներ, ֆայտոնչիներ, միամիտ գյուղացիներ, ովքեր պարբերաբար ենթարկվել են կատակասեր գյումրեցիների «օյիններին»:

Շիրակի և հատկապես Գյումրի քաղաքի դեմքը ներկայացնում է վիպական բանահյուսության զվարճախոսություն (անեկդոտ) ժանրը: Զվարճախոսությունները ծնունդ և սնունդ են ստացել գյումրվա ազգաբնակչության, լոթիների ու արհեստավորների, մտավորականների ու ուսանողների, առևտրականների ու աշխատավորների միջավայրում՝ շնորհիվ նրանց սրամտությունների, թևավոր խոսքերի, անզուսպ արտահայտությունների, ծաղրաբանության, սեփական սխալների ու անմխիթար վիճակի վրա լիաթոք ծիծաղելու կարողության: Յուրաքանչյուր աննշան միջադեպ գյումրեցու օգտագործած հարուստ լեզվամիջոցներով դարձել է բոլորի կողմից սիրված զվարճալի ու հյութեղ պատմություն և, բերնեբերան փոխանցվելով, տարածվել ողջ մարզում:

Զվարճախոսությունների բաժնում ընդգրկված են ալեքսանդրապոլցիների, գյումրեցիների, լենինականցիների մասին մեկ հարյուրամյակ շրջանառվող և կենցաղավարող զվարճախոսություններ, որոնք դուրս են եկել մարզի սահմաններից և պատմվում են ողջ Հայաստանում:

Գյումրին հայտնի է նաև իր անվանի ու սիրված զվարճախոսներով, որոնց հաղթարշավը գլխավորում է Պոլոզ Մուկուչը: Պոլոզ Մուկուչը (Մկրտիչ Ղազարի Մելքոնյան) ծնվել է Ալեքսանդրապոլում 1881-ին: Նա լրացրել է Գյումրիի լոթիների շարքը, դարձել նրանց տիպիկ ներկայացուցիչը և իր մեջ խտացրել գյումրեցիների առանձնահատկությունները: Գյումրեցիները նպաստել են, որ սրամիտ և ծաղրաբան Մկրտիչ Մելքոնյանը դառնա անվանի զվարճախոս Պոլոզ Մուկուչ, որի անվան շուրջ ձևավորվել են հարյուրավոր զվարճախոսություններ:

Ալեքսանդրապոլի և Գյումրիի զվարճախոսելու ավանդույթը փոխանցվել է լենինականցիներին, և անցյալի զվարճախոսների փոխարեն նոր հերոսներ են հայտնվել, ինչպիսիք են Ջղեր Խաչիկն ու Կուժիկը, Վարդանիկն ու ընկեր Մարգոն և ուրիշներ:

Շիրակի մարզում սիրված բանահյուսական ժանրերից է ստապատում զրույցը, որի կարկառուն հերոսներից են գյումրեցի Ղազար աղան [№ 3(444)], № 4(445)], № 5(446)] և իր դուստրը՝ Թագուն մորքուրը [№ 7(448)], ովքեր իրենց ստապատում զրույցներով զվարճացնում էին գյումրեցիներին: Ստապատում զրույցների հիմքում ընկած է երևույթները, առարկաները, դեպքերը չափազանցված ներկայացնելու կարողությունը, որը նպատակ ունի զարմացնելու և հետաքրքրություն բորբոքելու:

Ժողովածուի քնարական բանահյուսության բաժնում ընդգրկված են Շիրակում կենցաղավարող խաղիկներ, մանիներ, պարերգեր, վիպական, աշխատանքային, ծիսական, հարսանեկան և սիրո, հայրենասիրական, մանկական, ռազմի և զինվորի ու զանազան այլ երգեր: Ժողովրդական երգերի շարքը լրացնում են աշուղական և տեղական անհատ ստեղծագործողների ստեղծած բազմաբնույթ և բազմաքանակ երգերը:

Խաղիկները, մանիները, պարերգերը ծիսական բնույթ ունեն և կատարվել են Համբարձման, Վարդավառի և այլ տոների, ինչպես նաև ուխտագնացությունների ու տարբեր միջոցառումների ժամանակ: Խաղիկների, ջանգյուլումի և վիճակի երգերի մասնակցությամբ ծիսական գործողությունների ցիկլը ավարտին է հասել գուշակությամբ, որին անձկությամբ սպասել են ծեսի մասնակից երիտասարդները:

Շիրակի պարերգային ժառանգությունը շատ հարուստ է: Այն իր մեջ ներառել է նաև արևմտահայ գավառների պարերգերը՝ ձեռք բերելով հավելյալ մոտիվներ, աշխարհագրական տեղանուններ (պատմական հայրենիքը մատնանշող), կենցաղի և սովորությունների տեղական կամ նորագույն դրսևորումներ, օրինակ՝

Բաղովը ջուր է գնում,
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Յարիս դռնով է գնում,
Ես մի թառլան՝ դարդեպ ընկա չոլերը:
(FFX: 2501,03-2501, 03)

Յայլի դռներն ավլել եմ,
Իգդիրա կալերը, Իգդիրա կալերը,
Կիսապ թողե, կայնել եմ,
Դուխի, պուդրին շաղ տամ
Կասպումիդ ծալերը:
(FFX: 2501,08-2501, 08)

Շիրակի պարերգերի մեջ գերակշռում է սիրո մոտիվը, սակայն շիրակցիների կյանքը, կենցաղը, սովորույթները, բնության և տեղավայրերի նկարագրությունը ևս ակտիվ գործառույթ ունեն պարերգերի համատեքստում և պատկերացում են տալիս Շիրակ աշխարհի ազգաբնակչության բազմաբնույթ հետաքրքրությունների մասին:

Շիրակի երգային բանահյուսության բազմազանությունը ցույց է տալիս, որ այն ընդգրկել է շիրակցու կյանքի բոլոր բնագավառները, արտացոլել է նրա առօրյայում առկա բոլոր հիմնախնդիրները :

XIX դարի աշխատանքային երգերն անմիջականորեն իրականացրել են (վարուցանք, հորովել) բնության տեսանելի և անտեսանելի ուժերին սիրաշահելու, օգնություն խնդրելու և ապագա բերքն ապահովելու ծիսական գործառույթ: XX դարում ավանդական աշխատանքային երգերը փոխարինվել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ (կոլտնտեսային առօրյայի մասին) երգերով, որոնք հեռացել են ավանդական դրսևորումներից: Խորհրդային տարիներին Շիրակում գերակշռել են կենցաղային, երգիծական բնույթի, տեղական նշանակության դեպքերի և իրադարձությունների մասին տեղական ստեղծագործողների երգերը: Անհատ ստեղծագործողներն օգտվել են ժողովրդական բանահյուսության զինանոցից և իրենց հորինած երգերով արձագանքել են գյուղաշխարհին հուզող տարաբնույթ միջադեպերին (ողբերգական դեպքեր, արտագնա աշխատանք, աշխատանքային-մարդկային փոխհարաբերություններ և այլն): Այս ստեղծագործությունները կատարվել են գյուղի կամ շրջանի տարածքում, փոխանցվել են հեղինակից ուրիշ կատարողների և ձեռք են բերել հավաքական ստեղծագործության տեսք:

Ժողովածուի քնարական բաժնում ընդգրկված է Շիրակի մանկական բանահյուսությունը, որն իր մեջ ներառում է օրորոցայիններ, մանկախաղաց երգեր, մանկական ասելուկներ, հաշվերգեր, մատնախաղեր, զայրանք-ձեռառնոցիներ և այլ ստեղծագործություններ, որոնք օգտագործվում են որոշակի տարիքային խմբերի երեխաների համար (երգում են ծնողները, ընտանիքի անդամները, մանկահասակ երեխաները, տեքստի ուղեկցությամբ խաղում են երեխաները):

Շիրակի ասույթաբանական բանահյուսությունը ներկայացնում է ժողովածուի երրորդ բաժինը: Սա ժողովածուի քանակապես ամենահարուստ բաժինն է, որում ընդգրկված են ասույթաբա-

նության սիրված, տարածված և ամենօրյա կիրառում ունեցնող ժանրերը (առած-ասացվածքներ, դարձվածքներ, անեծքներ և օրհնանքներ, բարեմաղթանքներ, երդումներ, սպառնալիքներ, շուտասելուկներ, հանելուկներ, աղոթքներ):

Առած-ասացվածքները բանավոր խոսքում ըստ անհրաժեշտության կիրառվող փոքրածավալ ստեղծագործություններ են, որոնք սեղմ ծավալի մեջ պատկերավոր և այլաբանորեն արտահայտված մտքերով դիպուկ բնութագրում են պահը, մարդուն, նրա բնավորությունն ու հոգեբանությունը, իրադրությունը, երևույթը, մարդկային հարաբերությունները և այլն: Առած-ասացվածքները դարավոր փորձի ու գիտելիքների վրա կառուցված իմաստուն և դիպուկ եզրահանգումներ են, որոնք ընդհանրություններով հանդերձ՝ ունեն նաև տեղական առանձնահատկություն և լեզվամտածողության ինքնուրույն արտահայտություն, օրինակ՝ «Կոշտը նստե քարի գլոխը, գուլա, թե՝ յամման, անձրև գուգա, քարը կը թռչի», «Դավեն ինչքան օր հընգնի, էլի կաշին մե իշաբեռըմ կէղնի», «Գեղացին ծիլ-ծիլ օսկի դառնա՝ ջեբդ մի՛ քցե», «Հացով մենձըցած մարդը հացի ղադրը կիմանա», «Գրողը մտավ տուն, բիթունքը փեսի երեսին աշին»:

Ի տարբերություն պարզ առածի՝ երկխոսական առածները հարց ու պատասխանի միջոցով են կազմված, որտեղ պատասխանը բացահայտում է տրված հարցի բուն իմաստը՝ ինքնատիպ մեկնաբանությամբ: Օրինակ՝ «Կատվին ըսին՝ հերըդ է՞ լավ, թե՞ մերըդ, ըսավ՝ նյավրուրու... նյաու, յանի ո՛չ էն, ո՛չ էլ էն», «Մոլլին ըսին՝ մոլլա, դրկիցըդ փլաֆ կը էպե, Մոլլեն ըսավ՝ ընձի ինչ: Ըսին ձեր տուն կը տանի: Ըսավ՝ քեզի ինչ», «Գյումրեցուն հարցրին.- Ե՞փ է աշխրքի վերջը: Ըսավ.- Կնիկս օր մեռավ, յաշխրքի վերջն է»:

Շիրակցիների դրական և բացասական ցանկություններն արտահայտվել են անեծք-օրհնանքների, բարեմաղթանքների ու սպառնալիքների միջոցով: Ցանկություն արտահայտող բանաձևերը նույնպես ունեն իրենց կիրառության ժամանակը, տեղը, առիթը: Բարեմաղթանքներն ու օրհնանքներն օգտագործվել են հարսանիքի, նշանադրության, երեխայի ծնունդի և բազմաթիվ այլ ընտանեկան միջոցառումների ժամանակ. «Աստծո օրհնանքը գլխուդ անպակաս էղնի», «Բարով հասնիս թակ ու պսակիդ», «Բախտավոր զավակ էղնի» և այլն:

Թվում է՝ Շիրակի հարուստ ասույթաբանական ժառանգությունը ժողովածուում ներկայացված է բավարար չափով, սակայն պետք է նշել, որ ժողովածուի ծավալը հնարավորություն չի տվել, և մեծաքանակ ինքնատիպ նյութեր (գյումրեցիների մականունները, ժամանակակից ասույթները, առօրյա զրույց-պատումները և այլն) չեն ընդգրկվել ժողովածուում:

* * *

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն ունի առաջաբան, ծանոթագրություններ, որոնցում ներկայացված է ժողովածուում տվյալ նյութի հերթական համարը, բնագրի գտնվելու տեղը և ֆոնդային համարը, նյութի բանահավաքը, գրառման տարեթիվն ու վայրը, բանասացը, տեղեկատվություն նյութի ծագման և տպագրության մասին: Ժողովածուում ներկայացված են բանահյուսական նյութեր գրառող բանահավաքների կենսագրությունները և լուսանկարները, բանասացների ցուցակը: Ժողովածուն ունի հարուստ բարբառային բառարան (շուրջ 2500 բառ), որում տեղ գտած բարբառային խրթին և փոխառյալ բառերը բացատրված են ըստ բնագրի համատեքստի, առկա են անձնանունների և տեղանունների ցանկեր, որոնցում պատմաշխարհագրական տեղանուններին և իրական պատմական անուններին զուգահեռ՝ ներկայացված են նաև հեքիաթային մտացածին տեղանուններն ու անձնանունները: Ժողովածուն եզրափակում են օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը, համառոտագրությունները, ինչպես նաև ամփոփումները՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ժողովածուն ունի նաև Շիրակի և Գյումրիի հուշարձանների և բանահյուսական գիտարշավի անդամների աշխատանքային լուսանկարներ ու քարտեզ:

* * *

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուում պահպանել ենք տեքստաբանական այն կանոնները, որոնք մինչ այժմ կիրառվել են գիտական հրատարակություններում:

Ժողովածուում ընդգրկված բանահյուսական նյութերի տեքստերը փոփոխության չեն ենթարկվել: Հիմնականում հետևել ենք բանասացների պատումների անաղարտությանը: Նկատի ունենալով բանահավաքների կրթական մակարդակը և բանասացների պատումներին հարազատ մնալու հանգամանքները՝ աշխատել ենք անհարկի միջամտություններ չանել: Այն հեքիաթները, որոնք վերնագրված չեն եղել, վերնագրել ենք և տողատակում աստղանիշով ծանուցել այդ մասին: Տողատակում ծանոթագրել ենք նաև ա) հեքիաթներում հանդիպող անունների և բառերի արտասանական երկակի ձևերի առկայությունը, օրինակ՝ **Հախվերդի**/**Հախվերտի**, **Թուրութամք**/**Թուրութվանք**, **Փարգյուզալ-Փար-Գյուզալ**/**Բար-Գյուզալ**, **բազրգյան**/**բեբազրգյան** և այլն, բ) բանահավաքների ընդմիջարկումներն ու հավելումները: Տողատակերում ներկայացված են նաև բանահավաքների ծանոթությունները հեքիաթում հանդիպող անհասկանալի բառերի, տեղանունների, հերոսների, միջադեպերի, համեմատությունների մասին:

Ժողովածուում առկա են նաև հեքիաթներ, որոնց սյուժեի պատումն ընդհատումներով է. ենթադրվում է, որ բանասացը մոռացել կամ շփոթել է դեպքերի հերթականությունը: Նմանօրինակ հեքիաթներում նույնպես միջամտություն չի կատարվել [№ 20(20), № 21(21), № 22(22)]:

Բանահյուսական տեքստերում հանդիպող նույնատիպ բառերի գրության տարբեր ձևերը նույնպես պայմանավորված են բանասացների արտասանական առանձնահատկություններով, օրինակ՝ **նախնիքներ**, **թշներ** և այլն:

Պայմանավորված Շիրակի մարզի ազգաբնակչության կազմով (տեղացիներ և Արևմտյան Հայաստանից գաղթածների սերունդներ)՝ բանահյուսական նյութերում հանդիպում են բարբառային միախառնված ձևեր (Մուշ, Սասուն, Վասպուրական և այլն):

Ժողովածուն կազմելիս չենք առաջնորդվել բարբառային գիտական տառադարձությամբ, ուստի պահպանել ենք բանասացների հնչյունական-արտասանական նրբերանգները, օգտագործած բարբառային բառերը և դրանց քերականական դրսևորումները: Որոշ դեպքերում Շիրակի խոսվածքի նախադաս «**կը**» եղանակիչը բայից անջատ ենք ներկայացրել, օրինակ՝ **կը մենձընա**, իսկ «ասել», «լինել» և այլ բայերի կիրառության դեպքում «**կ**» եղանակիչը միացվել է բային, օրինակ՝ **կսե**, **կէղնի**, **կէրթա**: Ետադաս «կը» եղանակիչը նույնպես բայից անջատ է ներկայացված, օրինակ՝ **խոսեյին կը**, **կանչե կը**, **գրեն կը** և այլն: Տեղավայրային արտասանական նրբություններով պայմանավորված՝ «**կը**»-ի փոխարեն հանդես է գալիս «**գը**»-ն կամ «քը»-ն, օրինակ՝ գուզե, գուգա, ք'ասնի (կհասնի) և այլն:

Արխիվային բնագրերը հրատարակության պատրաստելիս՝ տեքստերում որոշակիացվել են, պարբերությունները, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերը, երկխոսությունները, ավելացվել են տեքստերում բացակայող կետադրական և առոգանության նշանները:

Տպագրության համար պատրաստված տեքստերը համեմատվել են ձեռագրերի հետ և վերջնական տեսքի բերվել:

Է. Հ. ԽԵՄՉՅԱՆ

* * *

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուի վրա աշխատել են ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Մարինե Հայկի Խեմչյանը (թեմայի գիտական ղեկավար), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Էսթեր Հայկի Խեմչյանը, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Խաչատուրի Ղռեջյանը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Համլետի Մատիկյանը: Աշխատանքային խումբը 2022 թ. հուլիսին դաշտային-հավաքչական աշխատանքներ է կատարել Շիրակի մարզում (Արթիկի շրջանի Հոռոմ, Փանիկ, Հառիճ, Մեծ Ման-

թաշ, Ախուրյանի շրջանի Բասեն, Կառնուտ, Ջրառատ, Կապս գյուղերում և Գյումրի քաղաքում):

Բնագրերը որոնելու, ընտրելու, համակարգելու և ժողովածուն կազմելու աշխատանքներն իրագործել է հետազոտող խումբը՝ Մարինե Խեմչյանի ղեկավարությամբ:

* * *

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» գրքի աշխատանքային խումբն իր խորին երախտագիտությունն է հայտնում ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրինությանը, արխիվի աշխատակիցներին, Բանագիտության բաժնի վարիչ Տորք Դալալյանին՝ արժեքավոր դիտողությունների ու խորհուրդների համար և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրինությանը, որոնց գործուն աջակցությամբ լույս աշխարհ է գալիս Շիրակի բանահյուսական մշակույթին նվիրված սույն ժողովածուն:

ԲԱՆԱՀԱՎԱՔՆԵՐ



Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյան

Վարդիթեր Նորայրի Առակյան

Բարխուդար Ջավադի Ղազիյան

Արազ Համբարձումի Կարապետյան



Վարդ Հարությունի Բդոյան

Հասմիկ Համլետի Մատիկյան

ԲԱՆԱՍԱՑՆԵՐ

Թեղուշ Հայկի Զաքարյան

Սիրուն Վաղարշակի Հարությունյան



Ռոբերտ Արտաշի Մանուկյան



Վրեժ Հմայակի Մարգարյան

Սաթենիկ Աղասու Վարդերեսյան

Կատյա Պողոսի Խաչատրյան

Հառիճավանք. Ձախից աջ՝ Հասմիկ Մատիկյան, Լուսինե Ղռեջյան, Մարինե Խեմչյան, Էսթեր Խեմչյան

Հոռոմ գյուղի բանասացների հետ

Փանիկ գյուղ

Բանահավաքներ Հասմիկ Մատիկյանը և Մարինե Խեմչյանը Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում

Էսթեր Խեմչյանը 102-ամյա բանասաց Սիրուն Հարությունյանի հետ

Բանահյուսական արշավախումբը Ջրառատի քարանձավի մուտքի մոտ

Ջրառատի քարանձավի մուտքը

Քարանձավից հայտնաբերված կարկտախափան և անձրևաբեր ոտքը [տես №1(453)]

Բանահավաքներ Էսթեր Խեմչյանը
և Արեգնազան Սխիթարյանը
բանասաց Սաթենիկ Վարդերեսյանի հետ

Գյումրիում

Բանահավաքներ Հասմիկ Մատիկյանը և Լուսինե
Ղոեջյանը բանասաց Իզոլդա Գաբոյանի հետ

Ի. ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
Ա. ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1(1). ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

Թաքավորը իրա վեզիրի հետ ման գուգար: Էկան մի գեղացու տունը նստե հաց կուտեին կը: Հաց ուտելու էդ վախթը աղջիկները իրարու հետ խոսեին կը: Մենծ քուրը կսե.—Թաքավորը օր ինձի առնե, էման մի խալի՛մ գործեմ, օր իրա բիթուն զորքը վրեն նստի, հլը բան՛մ էլ ավելնա:

Միջնակ քուրը կսե.—Թաքավորը ընձի օր առնե, էման ճաշ էփեմ՝ սաղ զորքը թափի վրեն ուտեն, չկռնան խլսցուն:

Պիճի քուրը կսե.—Թաքավորը օր ընձի առնե, էրկու երեխա բերեմ կը, մեկը՝ տղա, մեկը՝ աղջիկ: Տղի քյաքյուլը ու աղջկա գլխու մազերը օսկի էղնի:

Խապարը հասնի կը թաքավորին: Երեք քուրերին կանչե կը պալատը: Մենծ աղջիկը երեք ամիս խալիչա գործեց, չկռցավ խլսեր: Միջնակ քուրը ճաշը էփեց, վեց հոգու անջախ հերիք տվավ: Պիճի քուրը պառկավ, երկու էրեխա բերավ, մեկը՝ աղջիկ, մեկը՝ տղա: Տղի քյաքուլը, աղջկա գլխի մազերը՝ բիթունքը օսկի:

Քուրերը էդոր նախանձվան: Էրեխեքին գողնան կը, էդոնց տեղը երկու հատ շան թուլա դնեն կը, էրեխեքին գցեն կը ջուրը: Թաքավորին խապար կուտան, կսեն.—Կնիկդ ծնավ: Էրկու շան լակոտ է ծնել:

Թաքավորը էդիկ օր գիմանա, աղջկան քցե կը կպրե կարասը, կարասն էլ դնե կը սոխղի մեջտեղը: Էրթող-գալողը էդոր նալլաթ կուտա, թքեն կը էրեսին:

Խապարը տանք էդ էրեխեքուց: Էրեխեքին յաշիկի՛մ մեջը դրած օր քցեն կը ջուրը, քշե տանի կը, հասնի կը մի կղզի: Հարուստ ձուկ բռնողի մեկն էլ հոդ ձուկ բռներ կը, տեսնի կը, օր ջուրը յաշիկ՛մ բերե կը, էդ յաշիկը հանե կը ջրից, բաց կենե կը, տեսնի կը մեջը երկու քյոռփա էրեխա, մեկը՝ աղջիկ, մեկը՝ տղա: Էրեխեքուն քսե կը կնկա շապկին դառնան կը իրանց էրեխեն:

Հեքաթի էրեխա. էդոնք օրեցօր, սհաթ առ սհաթ մեծնան կը: Հերը ուր օր կէրթար, էրեխեն հետևից վազեր կը, աղջիկ էրեխեն մնար կը մոր քովը, տան գործ կէներ: Օրվա մեկը աղջիկը տան մեջ գործ էնելու վախթը ինչխ կեղնի, փեշը կգնի խաչրկաթին: Թնդրի վրեն ճաշ կէփեր: Ճաշը թափի կը, մերը հերսոտի կը կսե.—Ա՛յ շան թուլեք, էդ ուրտի՞ց բիթմիշ էղաք, վնաս տվիք:

Մերը օր էդման ըսավ, աղջիկը խելոք աղջիկ էր, հասկնա կը, օր իրանք խորթ էրեխա են, լաց էղնելեն կէրթա գոմը, նստի՝ գուլա: Ախպերը նես մտնի կը գոմը, տեսնի կը՝ քուրը նստե գուլա, հարցու կը քուրոջը, կսե.—Ա՛յ, քուր ջան, ընչի՞ գուլաս:

—Ախպե՛ր ջան, գիտե՞ս, օր մենք էսոնց էրեխեն չենք, մենք խորթ ենք՝ գդածուրիկ, էսօր մաման ըսավ,—կսե քուրը:

Ախպերը կսե.—Քո՛ւր ջան, մի՛ լա: Էկուցվանից գլոխներս կառնինք կէրթանք էսոնց քովից, տեսնենք՝ աստված ինչ դուռ բանա կը մեր վրեն:

Սաբախտան լուսը բացվի կը, քուր ու ախպեր անոթի, ծառավ կգնին ճամփա: Կէրթան, թե ուր, իրանք էլ չիտեն: Կէրթան, կէրթան, շատ թե քիչ, էդիկ իրանք գիտեն, մի քաղքի՛մ թուշ կեղնին: Քաղքի քյանարին մի հոլիք՛մ կար,

մտնին կը էդ հոլիքը: Ախպերը կսե.—Քո՛ւր ջան, դու հոս կեցի, ես էրթամ բալքի հացի իլաճ էնեմ, անոթի ենք:

Կէրթա մի ֆոնջու քովը, էդիկ քիչ՚մ հաց կուտա, բերե կը կուտեն, մութն էլ ընկել էր, պառկին քնին կը:

Էդման իրեք օր հաց մուրալեն՝ էդ հոլիքում ապրան: Չորսնջի օրը տղեն էլի կէրթա ֆոնջու քովը, ֆոնջին կսե. «Էս ի՞նչ բան է, էս տղեն ամեն օր հաց կժողվե»:

Տղեն օր կէրթա, ֆոնջին դուռը փակե կը, կէրթա տղի էդևից: Տղեն օր մտնի կը հոլիքը ֆոնջին էլ էդևից մտավ: Էդոր օր տեսնին կը, քուր ու ախպեր գելնին, օդքի կայնին կը: Ֆոնջին կսե.—Նստե՛ք, նստե՛ք, բալիկնե՛ր ջան:

Ֆոնջին օր տեսնի կը էդոնց հալը, հարցու կը, կսե.—Ի՞նչխ էք, էրեխե՛ք ջան:

Էնոնք էլ կսեն.—Հե՛չ, անտեր, եթում էրեխեք ենք, մեզ համար յոլա կէրթանք:

—Ձեզի օր տանիմ ընձի էրեխա էնեմ, չէ՞ք էղնի:

Էնոնք էլ կսեն.—Դու օր տանիս մեզի էրեխա էնես, ընչի՞ չենք էղնի:

Ֆոնջին էդոնց տանի կը իրանց տունը, իրանց էրեխա կէնե: Տղեն օրեցօր, սհաթ առ սհաթ հեքիաթի էրեխա էր, մենծնա կը, ինքն էլ ձիու շատ հավաս ուներ, հըմը ձի չունեին: Ուրիշից ձի գուզեին, նստեր, կէրթար ձիարշավի, ջիլիթ խաղար կը ու ինքը բիթունքին էլ հախտեր կը:

Օրվա մեկը թաքավորը տեսնիկ՚օր էդ տղեն լավ ձի հեծնել գիտե, օրական տանիր կը իրա տունը, լավ պատիվ կէներ, բիթունքը նախանձեին կը: Մորքուրները տեսան, ճանչեցին, իրանց նախանձից չիտեին, թե էդոր գլխուն ինչ օյին խաղաին, օր էլ իրանց աչքերին չէրևար:

Էդոնք գդնին կը մի հատ՚մ ջադու պառավ՚մ կսեն.—Պառա՛վ, կռնա՞ս էս տղին էման տեղ՚մ ղրկե, օր էրթա, էլ ետ չգա:

Պառավը գիտեր ֆոնջու տունը: Կէրթա հոն, քուրոջը օր տեսավ, կսե.—Բալա՛ ջան, ես քու մորքուրն եմ, ինչքան պատիվ ունի քու ախպերը թաքավորի ու ձիարշավի քովը, ախր էդ գյոզալ՚մ տղեն ձի չունի, օր էրթա հրեղեն ձին իրա համար լայաղ, ինչքան լավ կեղնիր: Դհա շատ պատիվ կունենա թող էրթա բերե: Իրկուն օր կէղնի, դու նիաթտ կախ: Էնիկ կհարցու. «Ինչի՞ ես նիաթտ կախե»: Դու էլ ըսա. «Հըբը ի՞նչ էնեմ նիաթս չկախեմ: Դու ձի չունիս, գնա՛ հրեղեն ձին բեր, դհա շատ պատիվ կունենաս»: Էնտեղ էրթցողը դակման ետ չի էլ գա, շատ զգուշ կեղնիս:

Իրկուն օր էղավ, ախպերը գուգա տուն, քրոջը կսե.—Քո՛ւր ջան, մի՛ մտածե, սապախտան թեզ կէրթամ:

Ու էդման էլ կէնե: Լուսը բացվավ քիմի ընկավ ճամփա, հասնի կը խորթ հոր տունը: Խորթ հերը հարցու կը.—Բալա՛ ջան, գալդ խէ՞ր է, ընչի՞ էս էկե:

Էն էլ կսե.—Հե՛ր ջան, էկել եմ հրեղեն ձին տանիմ, ուրտե՞ղ է, տեղը չիտեմ: Հերը կսե.—Ես էլ չիտեմ:

Տղեն կգնի ճամփա: Կէրթա, կէրթա, ճամփին մի պառավ մարդ՚մ ռաստ գուգա: Էդ պառավը հարցու կը, կսե.—Ո՞ւր կէրթաս, ա՛յ տղա:

Էն էլ կսե.—Կէրթամ հրեղեն ձին բերեմ:

Բիձեն կսե.—Դու գիդես, օր հոն էրթցողը դակմա հետ չի դառնա, քար կդառնա:

—Հըբը ի՞նչ էնեմ, խրատ տուր:

—Դե օր գուզես անպայման էրթաս, հետդ 10 վեդրո գինի, մի փուտ՚մ բամբակ վերցրու:

Էն էլ կսե.—Էդոնք ինչի՞ համար է,—հարցու կը տղեն:

—Դու օխթը օր ճամփա կէրթաս, դեմտ գելնի մի մենծ սար՚մ, էդտեղ կա աղբուր՚մ, ջուրը լցվի կը գռների մեջը, բամբակը կոխե ախբրի գյոզեն, գռների միջի ջուրը թափես կը, գինին լցնես կը գուռերի մեջը, ինքդ մի տեղ՚մ տափիս կը: Հրեղեն ձին գուգա ջուր խմելու, ինքը չիտի, օր գինի է: Խմե կը, հարբի, բռնես նստիս կը, հըմը ճամփին եդ չդառնաս աշես՝ քար դառնաս կը, թուշ գուգաս հոս:

Տղեն էդիկ իմանալու բաշտան կէրթա իրա բաբալղի քովը: Բաբալղը տղին նաղլ կէնե: Բաբալղը տասը վեդրո գինի, բամբակ բառնա ջորուն, ղրկե կը: Տեսնի կը, օր ջուրը էլի գուգա, բամբակով փակե կը ջրի ճամփեն, գռների միջի ջուրը թափե կը, գինին լցնե կը գռների մեջը ու ինքը հոդ տափի կը: Մի վախթ եդև տեսնի կը տաս հատ ձի էկան բաշլին խմելը, տեսան՝ ջրից ուրիշ համ ու հոտ գուգա, հետ դառան գնացին:

Օրը կես էր դառե, շոգը զոռել էր: Էման էին ծառվցե, բերները չորցել էր, իլաջը ինչ, էլի գուգան չոքին կը գռների վրա խմեն կը: Մի պիճի քուռակ՚մ կար, իսկույն էդիկ չոքի կը, ախր հար-

պել էր: Տղեն գյամը զարկե կը բերանը, թռնի կը շալակը, բիթունքը եդևեն ճվան կը, կսեն. «Հողեղենը էկավ հրեղեն տարավ»:

Ու նա էդևը չաշեց: Օխթ օրվա ճամփեն օխթը սհաթվա անցավ:

Հասնի կը բաբալղի տունը: Բաբալղը օր տեսավ, շատ ուրխցավ: Էկսի օրը գուգա հասնի կը իրանց տունը: Հոդ իրեք օր մնա կը, լավ դինջնա կը, ձիուն էլ լավ կեր կուտա, թիմար կէնե, անկճին կսե.—Ընձի ամոթով չնես:

Էն էլ կսես, թե հասկցավ, տիրոջ երեսը լիզե կը, էդի օդքերի վրեն ծառս էղավ:

Էկսի օրը տղեն հեծնի կը ձին, դուս գելնի ձիարշավի: Հոդ քաղքի երևելի մարդկանց տղեքը, լալի, վեզիրի տղեքը հոդ էին: Էկել էին ձիարշավի, բիթունքին զարկե քցե կը գեդին: Մորքուրները էդիկ օր տեսան, դիա շատ նախանձվան, կէրթան պառավի քովը, կսեն.—Էդ ինչ է կենես, էդ տղի անունը դիա շատ բանցրցավ, էսման չի էղնի: Թաքավորը էդոր ամեն օր կանչե կը իրա տունը, լավ, լավ պատիվ կէնե: Կռնաս էս հեղին ղրկե թող էրթա հազարան բլբուլը բերե: Էնիկ խոսի, դու ականճ էրա: Էսմանով օրդ դիա ուրախ կանցնի:

Էնել կսե.—Հըբը ինչխ էնեմ:

—Դու քու նիաթը կախե, էնիկ հարցու կը, կսե՝ ինչի՞ էս նիաթ էրե: Դու էլ ըսա ինչխ նիաթ չէնեմ, մեն-մենակ նստե, գործ կէնեմ, մեկ'մ չկա, օր հետը խոսիմ, սիրտս բացվի, օրս ուրախ անցնի: Դու օր լավ ախպեր էղնիս կէրթաս հազարան բլբուլը բերես կը, էնիկ խոսի կը, ես էլ ականճ կէնեմ, կուրխնամ:

Ախպերը կսե.—Մի մտածե քո՛ւր ջան, էկվան կէրթամ բերեմ կը, ու տղեն կգնի ճամփա: Կէրթա բաբալղի քովը, բաբալղը հարցու կը, կսե.—Ինչ կա, բալա՛ ջան:

Էն էլ կսե.—Բդի էրթամ հազարան բլբուլը բերեմ, հըմը չիտեմ ուրմանը էրթամ, տեղը չիտեմ:

Բաբալղը կսե.—Ես էլ չիտեմ:

Տղեն էլ ընկավ ճամփա գնաց: Գնաց, հասնի կը առաջվա բիձու քովը, բարև կուտա բիձուն, էն էլ բարևը կառնե, հարցու կը.—Ո՞ւր կէրթաս:

Կսե.—Հազարան բլբուլի քովը:

—Հըբը օր կէրթաս ճերմակ չարսաֆ ունի՞ս:

Էն էլ կսե.—Հա, ունիմ:

—Դե օր ունիս, էս ճամփեն բռնե գնա, 6 օրվա ճամպա է, դեմտ գելնի մի բաղ'մ, մտնիս կը բաղի մեջը, ձիդ հեռու տեղ'մ կապես կը, օր չտեսնին, չարսաֆը փռես կը ծառի տակը, դու մի տեղ'մ տափիս կը, օր քեզի չտեսնին: Հազարան բլբուլը կխոսի, խոսի աչքերը կսառին, կգնի ծառեն ցած, բռնես դնես կը տուզախը, կհեծնիս ձիտ, կէրթաս: Էրթլուտ վախթը չորս թարաֆեն ճվան, բոռան, հողեղենը էկավ, տարավ հրեղենը, բռնեք-բռնեք, դու չվախենաս, էդևտ չաշես, թե չէ քար կդառնաս, ձիդ քշես գուգաս:

Էդ տղեն էդևը չաշեց, ձին քշեց էկավ: Էդ տղեն հազարան բլբուլը բերավ, էլի բաշլեցին ձիարշավը, քեֆ էնելը: Մորքուրը էդիկ օր տեսավ, բախլութենեն քիչ մնար կը սիրտը պատռեր: Հերսոտի կը, պառվին թե.—Էդ ինչխ էրիր, օր ուր ղրկես կը, էլի ետ գուգա:

—Յավաշ, հիմի էման տեղ'մ ղրկեմ, օր էլ ետ չգա,—կսե պառավը:

Իրկունը նստե խորատա կէնեին, քուրը կսե.—Ախպե՛ր ջան, հազարան բլբուլը բերիր, հրեղեն ձին բերիր, հիմի գնա Դիլի-Դիլի Մարջանին բեր, քեզի կնիկ էրա:

Ախպերը կսե.—Էկուցվանից կէրթամ:

Լուսը բացվելուն պես նստի կը հրեղեն ձին, ընկավ ճամփա: Հասնի կը բաբալղի տունը, բաբալղը հարցու կը կսե.—Բալա՛ ջան, ընչի՞ ես էկել:

Էն էլ կսե.—Էկել եմ Դիլի-Դիլի Մարջանի ետևից:

Բաբալղը կսե.—Ես խապար չունիմ էդ բանից:

Տղեն կգնի ճամփա, կէրթա հասնի կը բիձի քովը, բիձեն կսե.—Հըբը էս հեդին ընչի՞ էս էկել:

Էն էլ նաղլ կէնե գալու միանեն: Բիձեն կսե.—Օր էդման է, դու էս ճամփով կէրթաս:

Էդիկ ցուց տված ճամփով կէրթա, ռաստ գուգա մի բաղի'մ: Բիձու ըսածի պես բաղի մեջը կար էրկու ծառ, էդ ծառից քաղե կը հինգ-վեց հատ խնձոր, լցնե կը խուրճինը ու էդ աղբուրից 2 շիշ ջուր վերու կը, կգնի ճամփա: Հասնի կը երկու մեծ սարի, օր էդ սարերը կէրթան-գուգան մի տեղ'մ կայնած չեն էղնի, էդոր կսեն.—Էդ սարերեն անցնելու վախթը էման էրա, օր էդոնց արանքը չմնաս, անցնիս էդոնց էն թարաֆը:

Ու էդման էլ կէնե: Կանցնի սարերի էն թարաֆը տեսնի կը, օր մի շուշաբանդով մի հատ'մ

շենք կար, երեք հատ խնձոր կառնի ձեռքը, շենքից երեսուն մետր հեռու կայնի կը, կսե.—Դիլի-Դիլի Մարջան, խնձորը թապլե կը ակուշկին: Էդման իրեք հեղ թե օր չդիպավ, քար դառնաս կը: Հետ օր դառնալու կեղնիս, գուգաս քովս:

Տղեն ձին քշելու բաշտան՝ տեսավ սարերը իրարուց բացվան: Կանցնի էն թարաֆը, կէրթա շենքի՛մ քովը երեսուն մետր հեռու կայնավ, Դիլի-Դիլի Մարջան ըսեց ու խնձորը քցեց: Նեսեն ձեն էկավ. «Դաշ քյասալասան, (այսինքն՝ քար դառնաս)»: Տղեն տեսավ ձիու ոդքերը քար դառան: Երկրորդ խնձորը թապլեց նես, էն էլի ճվացին «դաշ քյասալասան», տղեն տեսավ ձիու հետ ինքն էլ կեսեն քար դառավ: Երրորդ խնձորը քցեց, դիպնի կը ակուշկին շուշեն ջարդվի կը, աղջիկը դուս կելնի, տղի վրեն դեղ քսեց, տղեն լավնա կը, ձիերը նստին կը, կգնին ճամփա:

Տղեն ճամփին օր տեսնի կը էդքան մարդիկ քար են դառել, աղջկան կսե.—Մեղք են, էսոնց ազատե:

Աղջիկը կսե.—էսոնց օր ազատեմ, ընձի ձեռքեդ կառնեն, լավնա էն է՝ էդման բան չէնենք:

Քիչ՛մ օր հեռացան, աղջիկը կորեկ ցփնեց էդ քարերի մեջը, էդոնք հոգի առան, լավցան: Տղեն ձին քշեց էկավ բիձի քովը: Բիձեն կսե.—Ջուր բերե՞լ ես:

Տղեն կսե.—Հա՛, բերել եմ:

—Դե քիչ՛մ ջուր տուր խմեմ:

Ջուրը խմեց, դառավ տասնհինգ տարեկան տղա: Բիձեն կսե.—Դու ինձ իմ մուրազին հասցուցիր, աստված էլ քեզ հասցու քո մուրազին:

Տղեն մնաս բարև ըսավ, ինքը գուգա բաբալղի քովը: Բաբալղը մենձ քեֆըմ սարքեց: Քեֆից էդև կգնի ճամփա, էդ վախթ աղջիկը տղին նաղլ կէնե, կսե.—Ձեր քաղաքը կնիկ՛մ կար, քցին կպրե կարասը, էդիկ քու մերն էր: Քու մորքուրները էդորեն բախլան, էնոր քցին կպրե կարասը, քեզի ու քուրոջդ քցին ջուրը, երկու շան թուլա տարան դրին մորդ կողքին, թե շան թուլա է ծնե, օր էրթող-գալողը նալաթ տան մորտ: Կէրթաս քաղաք, երկու բութիլկա սուրբ ջրեն բերես կը կուտաս մորդ խմե ու էդ ջրով էլ երեսները լվանա: Թաքավորը քեզի կանչե կը, օր գլոխդ զարկե, կսես՝ թաքավորը ապրած կենա, թույլ տուր էրթամ կնկաս կանչեմ: Ես գուգամ, ջուղապը կուտամ:

Տղեն աղջկան թողե կը քրոջ քովը ու ինքը կէրթա մոր քովը ջուր կուտա, խմե կը: Մերը կսե.—Բալա՛ ջան, էս ուրտեղի՞ց:

Էրեսներին էնքան թքե, օր գեշ յարա էր էղե: Էրեսներն էլ լվաց: Խապարը հասնի կը թաքավորին: Թաքավորը կուզեր էդոր գլխատեր: Հարցու կը տղին, կսե.—Էս ջուրը ուրտի՞ց էս բերե:

Տղեն կսե.—Մի սհատ՛մ վախթ տուր կսեմ ուրտեղից:

Կէրթա կնկան բերե կը, մտնի կը թաքավորի քովը: Կնիկը թաքավորին բարև կուտա, կսե.—Թաքավորը ապրած կենա, քու ջահել վախթդ մի գեղացու՛մ տուն գնացել ես, իրեք աղջիկ կար էդ տանը, մի՞տդ է:

Թաքավորը կսե.—Այո:

—Մի՞տքդ է, օր մենձ աղջիկը ըսավ՝ թագավորը ընձի օր առնե, էման խալի՛մ գործեմ, որ սաղ զորքը նստե վրեն, հըլը բան՛մ էլ ավելնա:

Էն էլ կսե.—Միտքս է:

—Դե որ միտքդ է կատարվե՞ց, թե՞ չէ:

—Չէ՛, չկատարվեց,—կսե թաքավորը:

—Օրտանջիլ աղջիկը ըսավ՝ թաքավորը ընձի օր առնի, էման ճաշ էփեմ, որ թաքավորի սաղ զորքը ուտե, չխլսի: Կատարե՞ց, թե՞ չկատարեց:

Թաքավորը կսե.—Չկատարեց:

—Թաքավորը սաղ մնա, ինսանը շան թուլա ծնի՞ կը, թե՞ չի ծնի:

Կսե.—էդման չի էղնի, օր ինսանը ծնի, շան թուլա բերե:

—Չէ՞ օր դու կպրե կարասը քցիր էդ աղջկան, օր թուք ու նալաթ տան նրան:

Թաքավորը էդիկ օր գիմանա, կնկան կպրե կարասից հանել կուտա, էդ պառվին, մորքուրներին, կուտա ջանլաթի ձեռը, էդոնց գլուխները կտրեն կը: Տղին ու էն մեկել աղջկան բերել կուտա տուն, մենձ քեֆ սարքեն կը, կուտեն, կխմեն, քեֆ կէնեն:

Էդոնք հասնին կը իրանց մուրազին, վեվ էլ օր մուրազ ունի, թող էնոնց մուրազն էլ կատարվի:

2(2). ՕՍԿԵՔՅԱՆՔՅՈՒԼ ՏԸՂԻ ՀԵՔՅԱԹԸ

* * *

Յավա՛շ, մե ռեպետիցե՛մ էնեմ, տենամ՝ ո՞ր հեքյաթն է հարմար:

Է՛, ժողովո՛ւրդ, ըսկըսըմ եմ, հեքիաթի վա՛խտ ձեն, ծըպտուն չը բըդի էղնի: Հըլը դուզն օր յուզըմ եք յիմանաք՝ մեր մենձերն օր յիրկունը հեքյաթ էյն ըսըմ, մանդրռ ոտներուն դուս էյն էնըմ (էրեխոնցը), ճըրագ էր, լամպ էր անցընըմ էյն, մութ տեղն էյն ըսըմ, օր ալըրները չը պակսի: Չիտեմ, ըդման էյն բացադրըրըմ: Մենք էլ պըզտիկ էյինք: Էրթըմ էյինք մե տեղըմ պայ էյնք մըտնըմ, մենձերը պատմըմ էյին, մենք էլ լըսըմ էյինք:

* * *

Ժամանակով էղնըմ է, չի էղնըմ, եսիմ, էղնը՞մ է, ըշտը, խոսք է, ըսըմ են: Մե ջայե՛լ, սիրուն թագավորըմ է էղնըմ: Նըստըմ է թախտին, ըսըմ է.—Ես էման գիտնական կընիկըմ բըդի առնիմ, օր յամեն ինչ գիտենա: Վախտըմ, թագավորներուն յիրեք-չորս կընիկ էր հասնըմ՝ ըդման օրենք էր: Հողը մեր գըլխուն, հըմի է, օր մեզի մե կընիկըմ է հասնըմ:

Էս թագավորը յիրան նազիր-վեզիրին, լալեքուն առնըմ է՝ աշխարհ-աշխար է ման գալըմ, յիրան համապատասխան աղջիկ է յուզըմ ճարե: Էրթըմ են, էրթըմ, շատ են ման գալըմ, մե գեղի՛մ են հասնըմ, գիշեր է էղնըմ, սա՛ղ տընների լուսերը անցըրած են էղնըմ: Գեղից դուս մե տունըմ է էղնըմ, չա՛մ-չրաղ՝ լուսերը վառվըմ են:

Թագավորն ըսըմ է.—Էրթանք դըպա էդ տան թարաֆը:

Էրթըմ են լուսամուտի տակը կայնըմ յանգաջ են դընըմ: Յիրեք քուր յիրար հետ խորատա են էնըմ

Մենձ քուրն ըսըմ է.—Ես օր թագավորին առնիմ, էման մե խալի՛մ կը գործեմ, օր թագավորի սա՛ղ զորքը խալու վըրա տեղավորի, բանըմ էլ էն դին էրթա:

Միջնեկ քուրն ըսըմ է.—Էման պըղընձներ շինեմ, օր թագավորի զորքը էդ պըղընձի կերակուլը ուտե՛, ուտե՛, սաղ յերկիրն էլ հետը բավարարե:

Պըզդի քուրն ըսըմ է.—Թագավորն ընձի առնի, օսկեքյանքուլ տըղե՛մ ու օսկե մազերով աղջիկըմ կը բերեմ:

—Է՛,—թագավորն ըսըմ է,—ըստից լավ բա՛ն...

Թագավորն էրթըմ է յիրան թախտին է նըստըմ, էդ գեղի անունը մոտը գրած է էղնըմ, թաթարի հըրաման է տալըմ, էրթըմ են յիրեք քրոնջն էլ բերըմ են թագավորին՝ որպես կընի՛կ:

Էս յիրեք քուրը ոնչ մեկն էլ իրանց շնորքը ցուց չեն տալըմ: Ո՛նչ էնիկ է խալին գործըմ, ո՛նչ մեկելն է պըղինձը սարքըմ, զատի պըզդիկն էլ հըլը էրէխա բերելու վոխտը չի էղնըմ:

Վախտըմ անցնըմ է, ինչըղ է էղնը՞մ, մե օբլըստի՛մ տերություն պատերազմ է հայտարարըմ էս ջայել թագավորին: Յառաջվա պատերազմները չիտեմ, գիտե՞ք, թե՞ չէ, զորքի առաջեն թագավորներն էյին պատերազմի դաշտը էրթըմ... թող ըստոնք կըռվին:

Օրն ու վատեն օր թըմմըմ է, պըզդի քուրը պարկըմ է օսկեքյանքյուլով տըղե՛մ է բերըմ, մեկ է օսկե քյանքյուլով աղջիկըմ:

Ըստուր նախանձ քուրերը քիչ է մընըմ տըրաքվին, կաշառք են տալըմ մե ջադու պառվի՛մ, բերըմ են էդ էրեխանցը դընըմ են յաշիկի՛մ մեջ, նամզուկները բերընններն են դընըմ, յաշիկը մըխըմ են, մութն օր հընգնըմ է, էս ջադուն տանըմ է յաշիկը քըցըմ է ջուրը:

Յառավոտ լուսը բացվըմ է, թո՛ղ բացվի քուլլըքի վըրա, հեռու տեղ ապրող ճըգնավորըմ յելնըմ էրթըմ է յիրան աղբուրն օր լվացվի, տեսնըմ է՝ ջուր չըկա, զարմանըմ է, իջնըմ է մենձ գետն օր լըվացվի, մեկ է տեսնըմ է՞ ջըրերու յերեսը տաղլա տալով՝ յաշիկ՛մ է գալը՞մ... Հետաքըրքրվըմ է,. թե էդ պըլպըստան յաշիկի մեջ յարաբ ի՞նչ բըդի էղնի՞, յաշիկը դուս է հանըմ, բերըմ է տուն, բանըմ, տեսնըմ է էրկու սիրո՞ւն մեկը մեկից հըրեշատ էրեխեք, մե խնձոր կիսա՞ծ, էրկըսի բերանն էլ ամզուկ է դըրած, ծըծըմ են ու յիրանց հըմար դի՞նջ քընած են:

Ճգնավորն ըսըմ է.—Աստված, դու էս ի՞նչ պատիճ ղըրկեցիր ընձի, հըմի ի՞նչ բըդի էնեմ ես էս անմեղ մանուկներին, ինչը՞ղ պայեմ:

Ասսանից է՞, էսիկ մե էծըմ է ունենըմ, էծը գալըմ պըտուկի մեկը մեկի բերանն է դընըմ, մեկն էլ՝ մեկելի՞: Ըսման թըփռոշնըմ են, մենձընըմ՝ չըբլաղ ու բոբլիկ: Միջայլոց ըսեմ, օր էստոնք քըներ ից օր զարթընըմ են, յառավոտուն

ամեն մեկի գլխու տըկից մե բուռըմ օսկի է յելնըմ: Ճըգնավորն ինչ, օսկի ինչ, շատ էլ աչքին էրևըմ է՞:

Օրերից օրըմ էդ թարֆով մե վաճառականը է անցնըմ, գալըմ ճըգնավորի հետ խոսըմ է: Վաճառականը հարց է տալըմ, թե.—Էդ ինչ էրեխեք են, ճգնավոր ու էրեխա՞:

Էսիկ ըսըմ է.—Մեղք էրեխեք են, օգնըմ եմ, օր հոգիս սրբություն էրթա:

Էրեխեքը հարցընըմ են, թե.—Էդ ինչ էր վաճառականի հագը:

Ճըգնավորը բացադըրըմ է, օր.—Մարդիկ շոր են հագնըմ, ըդման է աշխարհի օրենքը:

Էս վաճառականը ըսըմ է.—Ես ըդոնց կը տանիմ, հըմը բազրգյանության եմ էրթըմ:

Հասցեն տալըմ յինքը էրթըմ է:

Վախտըմ անցնըմ է, ճըգնավորը նամակ է գրըմ վաճառականին, էսիկ գալըմ, բավական օսկի է վերցնըմ ճգնավորից, էրեխանց տանըմ է մե մենձ քաղաքըմ (թագավորանիստ քաղաքը): Էրեխեքը մարդ են տեսնըմ, զարմանըմ են: Վաճառականը ըստոնց հագուստ է առնըմ, հագցընըմ, ճգնավորի տըված օսկով էլ տուն է շինել տալըմ, մեջն է դընըմ: Ըսըմ է.—Քուր ու ախպեր ձեզի հմար ապրեք, ես էլ էրթամ իմ գործին:

Ըստոնք սիֆտայի օրերը զարմանըմ էին, ըսըմ էին.—Ուժելի՞ աշխար էսքան մարդ կա:

Ըսման քուր ու ախպեր, էրկուսն էլ տասնութ տարեկան, ախպերն յամեն օր էրթըմ է որսի, որս է բերըմ, յիրանց հըմար էփըմ ուտըմ են:

Մե օրըմ էլ օսկե քյանքուլով տըղեն յելավ տեսավ, օր թագավորի պալատի առաջ ժողովուրդը հավաքվել, սեյր են էնըմ: Յառաջներում ջիլիտ կար, չիտեմ՝ գիտե՞ք: Քսան հոգի մի թարաֆն է կայնըմ, քըսան՝ մեկ: Փոստերն առնըմ են պաշտպանվըմ. նետ ու աղեղը վերցրած յիրար վըրա են գալըմ՝ ձիանքով: Ջիլիտ են խաղըմ: Բավական վախտ անցնըմ է, հաղթող չի էղնըմ: Օսկեքանքուլ տըղեն էս օր տեսնըմ է, մե նազուկ ձի՛մ է ճարըմ, հեծնըմ ու մըտնըմ ջլիտի մեջ: Ես ըսեմ՝ յերկինք-գետին խառնըվավ յիրար՝ դու հավատա: Ըսման զարկըմ, թոզը հանըմ է... թագավորի պալատը դըղրդըմ է: Հաղթըմ է պըծնըմ, ձին քըշըմ է, դուս է գալըմ մեյդընի՞ց, դե յալլա՜...

Թագավորն ըսըմ է.—Բռնեք բերեք էդ հաղթողին:

Տե՛յ վազըմ են յետևեն, տըղեն թըռնըմ կորըմ է:

Դառնըմ է իրան նազիր-վեզիրին, յիրան կընկըտանց հարցնըմ է, ըսըմ է.—Իմ կընիկն օր պառկավ, ինչ բերեց:

Ըսըմ են.—Էրկու հատ շան թուլա, ինչ բըդի բերեր ըդուց ավելի:

Թագավորն յընգնըմ է մտածմունքի մեջ:

Ջառի կա, չեմ յիմանըմ՝ գիտե՞ք, թե՞ չիտեք: Թագավորի կընանիք էդ ջառուն ջադու էլ են ըսըմ, կանչըմ են իրանց քովը, ըսըմ են.—Թագավորի օսկեքյանքյուլ տըղեն սաղ է,—ըսըմ են,—յուրտից գուզե էղնի, բըդի գտնիս, կախարդես, էման տեղըմ ղըրկես, օր էրթալն էղնի, գալը՝ չէղնի:

Մե բանըմ էլ փարա են տալըմ քյաֆթըռին, էսիկ յելնըմ էրթըմ է... շերեփի պես քաղաքը յիրար է խառնըմ, յիմանում է՝ քաղքի մեջ ինչ օտարական յուրտեղ է ապրըմ: Հա՛րց ու փորձով գալըմ հասնըմ է քուր ու ախպոր տունը:

Օսկեքյանքյուլ տըղեն յամեն օրվա պես յառավոտուն շուտ որսի է գընացած էղնըմ, օսկեմազ քուրը տունն է:

Ջադուն գալըմ բարովըմ է աղջկան, սուտ լաց է դընըմ, յաչքերը թըքոտըմ է:

—Վա՛յ,—ըսըմ է, քոռնա ձեր մորքուրի յաչքերը, ինչխ օր քոռցել է, իմ քուրոնջ էրեխեք, էս ինչ օրի եք հընգե: Էս քա՛նի տարի է ես ձեզի եմ ման գալըմ, չէյ գըտնըմ, ես ձեր հալա՛լ մորքուրն եմ: Ձեզի յաչքի լուսի պես պայեմ:

Աղջիկըն ըսըմ է.—Մենք սարից իջած ենք, մորքուր չունինք:

Ջադուն ըսըմ է, տոչնե-տոչ համոզըմ է նըշաններով, բերըմ աղջըկան լողցընըմ է, մազերն է սանդրըռըմ, դառնըմ հարցնըմ է.—Ըբը իմ քուրոնջ տըղեն յուրտե՞ղ է:

Աղջիկն ըսըմ է.—Որսի է գընացե:

Ըսըմ է.—Իմ բալեք, բիլբուլի բաղչեն օր ըստեղ էղնի, ինչքա՞ն լավ կեղնի, դուք կը բախտավորվիք,—ըսըմ է ու անհայտանը՞մ:

Ախպերը որսատեղից տուն է գալըմ, բավականին ավ է բերըմ, քուրն ախպորն ըսըմ է.—Դու գիտե՞ս, օր մենք ըստեղ մորքուր ունինք:—Ու պատմըմ է՝ հա՛լ, հեքիաթ, ըսման-ըսման, խաս բաշխեն...

Ախպերը քուրոնջը շատ էր հազ էնըմ, յելավ առանց խոսք ըսելու գնաց... Շատ ու քիչ,

յինքը գիտե, մե ծերունի՛մ՝ մուրուքը ա՛ն ըստինց հետ, գետինն էր ավլըմ, նըստած էր ճամփու օրթատեղը: Բարով տըվավ, բարով առավ, ըսավ թե.—Էրթըմ եմ բիլբուլի բախչեն բերեմ:

Ծերունին ըսավ.—Թարկը տուր, կէրթաս, հըմը սաղ կըտորըդ յանկաջըդ կը մնա, երիտասարդ ես, մեղք ես... Ա՜ն, ութանասուն տարի է՝ էս ճամփու վըրա նըստած եմ, գնացող յետ չի դառե: Օր ըդման կըպել ես, բըդի էրթաս, ճանապարը քեզի ըսեմ էն պայմանով, օր պուդուրկե՛մ ջուր էլ ընձի բըդի բերես:—Ըսըմ է.—Կէրթաս ք՛ասնիս ծովի՛մ, ծովի կողքը կը կայնիս: Էրկու հոր կա, հորի մեջ գյամի, քիչըմ հեռու էրկու աղջիկ կան, կըսես՝ թույլ տվեք գյամին հանեմ: Թե թույլ տվեցի՛ն, գյամին կը հանես, քաշես, հըրեղեն ձին գուգա, քեզի կըսե՝ ք՛անիմ յարևը, քեզի վառեմ գը: Կըսես՝ գիջնիմ տակըդ... Ծովը կանցնիս, կայնած են (էրկու գազան) մե օչխարըմ ու մե գազան: Միսն օչխըրի յառաջն է դըրած, խոտը՝ գազանի: Ուտելքների տեղը կը փոխես՝ ճամփեդ բաց է: Կը մըտնիս խաս բախչեն. ընտեղ քառսուն աղջիկ կա, իրանք մե խազեյինըմ ունին, գուգան, օր քեզի բռնեն...

Տըղեն գնաց հասավ ինչ օր բիձեն ըսել էր, էրավ, գնաց հասավ խաս բաղչեն: Քառսուն աղջիկ մե ղլլըղով՝ մե շենքով հագած: Ըստոնք յիրար խառնըվան, չալեցին, բոռացին.—Հողեղենն էկա՛վ, հողեղենն էկա՛վ, բռնեք:

Տըղեն ուշ չէրավ, գնաց յիրեք հատ խնձոր վերցրավ, էրկու պուտուլկա ջուր, էկավ օր անցնի, սար ու ձոր ճըվացին.—Հողեղենն էկա՛վ, հողեղենն էկա՛վ:

Հինգ օր ու գիշեր էկավ, հասավ բիձին, մե պուտուլգեն տըվավ ըդուր... հասավ տուն, խնձորները դրավ, ջուրը լցրավ վըրեն... Աչքըդ ի՛չ բարին տեսնի, չորս դին խաս բախչա դառավ: Քնան:

Բարիլուսը բացվի ձեր վըրա, յառավոտուն տըղեն յելավ, սովոր էր, գնաց որսորդության:

Ցորեկը թագավորի մարդիկ յելան էլի ջիլիթ են խաղըմ, օսկեքյանքուլ տըղեն հրեղեն ձիով էկավ, փոթորիկի պես անցավ, զարկեց, թըռավ հասավ թագավորի պալատին, ամպերու հետ խաղցավ ու անհայտացավ... Հրեղեն ձի՛... հա՛յ, հա՛յ է, թագավորի պալատն էր քանդըմ:

Տըղեն պըրծավ, էկավ տուն, գընաց՝ որսորդությունը շարունակե.

Թագավորն էկավ, մեկել կընկըտանց ըսավ.—Էդ հըրեղեն ձիով տըղեն սըրտիս մեջն է մըտե: Ըսավ.—Ճիշտ ըսեք, իմ կընիկն օր պառկավ, ի՞նչ բերավ:

Ըսին.—Էրկու շան թուլա, ի՞նչ:

Էկան կընկըտիկ ջադու պառավի քովը, էսին.—Քեզի էսքան-էսքան օսկի կուտանք,—ըսին,—պառավ, էդուր էման տեղըմ ղըրկե, օր էլ յետ չըգա:

Ջադուն էկավ ըստոնց տունը, տեսավ խաս բաղչեն, ըսավ.—Իմ քուրոնջ աղջիկ, ինչքան բախտավոր եմ, օր խաս բախչի մեջ եմ տեսնըմ ձեզի: Լա՛վ է, լա՛վ, ծածկոցն է պակաս, մե ծածկոցըմ էլ օր էղնի՝ բախչեն ծածկեք, էլ ուրիշ ղըշեր չը մոտենան, ինչքա՞ն լավ կէղնի...

Ախպերն էկավ տուն, քուրն ըսավ, յելավ գնաց: Հասավ ճամփու մեջի բիձին, տըղեն ըսավ յիրան նպատակը, բիձեն ըսավ.—Աստված քեզի բարի տա, քեզի ղրկողի վիզը տակը մընա: Բիլբուլի բախչի ծածկոցը մե յայլուղըմ է, էն քառսուն աղջիկը մեկը լալըմ, մեկելին է տալըմ, էման բըդի էնես, ձեռներուց խըլես:

Տըղեն էլի չարչարանքով գընա՛ց, հասավ աղջըկների քովը: Նես մըտավ, տեսավ՝ էս քառսուն աղջիկը էման են լալըմ, օր աղեն յարցունք են թափըմ: Չալելով մոտեցավ, ուզեցան բըռնեն, յայլուղը ձեռներուց խըլեց ու յալլա՛... քար ճըվա՛ց, սար ճըվա՛ց՝ ուշ չը դարձըրավ:

Էկավ հասավ տուն, յայլուղը թափ տալուն բաշտան՝ դառավ չոլով մեկ ծածկոցըմ, խաս բախչեն առավ մեջը, ղըշերը խոսըմ են...

Քնան, յառավոտուն յելան, օր էլի թագավորի պալատի յառաջը խաղըմ են, յինքն էլ գնաց: Օր չը զարկե՞ց հոլը, հողը դընդաց, հայ հայ է՝ թագավորի պալատը գլխուն քանդըվե՞ր, թագավորն ըսավ.—Բըռնե՞ք:

Յելան յիրար խառնըվան, հարի հա՛յ, հա՛յ, տըղա, դըրել ե՞ս, գըտի, էլ յո՞ւր:

Թագավորը գնաց կընկըտանց հարցուց, ըսավ.—Դուզն ըսեք, իմ կընիկն օր պառկավ, ի՞նչ բերեց:

Էլի ըսին.—Էրկու հատ շան թուլա, չե՞ս էլ գետինը մըտնըմ, հարցընըմ ես:

Գնացին պառավի քովը:

—Պառավ,—ըսին.—թեզ էրա գըտի, էման տեղըմ ղըրկե, օր իզո՞վ, թոզով կորի, թե չէ՝ մենք քեզ կկորցնենք:

Պառավն յելավ գընաց, աղջըկան ըսավ.

—Բաղը լավ է,
Ծածկոցը լավ է,
Բաղի տերն յէվելի լավ է...
Բաղի տիրոնջն օր բերի...

Ախպերը որսատեղից էկավ: Էս անգամ քուրը էման էր թըթվի... ո՛նչ դուս է յելնըմ, ո՛նչ ձիու գյամն է բըռնըմ:

Ըսավ.—Քուր ջան,—ըսավ,—յընչի ես թըթվե՞:

Ըսավ.—Բաղի տիրոնջը գուզեմ:

—Քուր ջան,—ըսավ,—գլխուդ ու յարևուդ մեռնիմ,—ըսավ, էդ ի՞նչ է, օր ըդուր հըմար դու դիլխոր ես յընգնըմ... Է՛,—ըսավ,—էս մինութիս...

Յըրեղեն ձին շիտկեց բիձի քովը:

Բիձեն ըսավ.—Աղջիկ տանելը քեզի զոռ է: Պուտուլկե՛մ ջուր տըվել ես, դառել եմ քառսունհինգ տարեկան, իդուր հըմար էլ բըդի խրատ տամ: Ըսավ.—Կէրթաս, որ աղջկա գլխուն օր ջըղա է, ընդուր կը մոտենաս, էնքան, օր ջղեն բռնես:

Տըղեն գնաց, հասավ ծովը, անցավ, տեսավ, օր էս աղջըկները գալըմ են, օր յիրան բռնեն: Տըղեն հասավ ջըղով աղջըկան, վերցրելը, թամփը քցելն ու ձիուն դնելը, քըշելը մեկ էրավ: Քար բոռա՛ց, սար բոռա՛ց, գազան բոռա՛ց՝ տարա՛ն, հա՛ տարա՛ն, հողեղենը հրեղենը տարավ, տըղի հեչ վեճը չէ, ձին քըռտնփըշած գալըմ է: Էկա՛վ հասավ տուն, քուրը տեսավ, աշխըրով մեկ էղավ:

Հրեղեն աղջիկն ըսավ.—Տըղա, յես էնքան եմ լացե, օր ընձի պետք է լվացվիմ, գլուխս սանդրռեմ:

Յելավ լըվացվավ, սանդրռվավ, դառավ մե հուրնիկ հրեղեն: Կայնավ օսկեմազ աղջկա կողքը, էրկուսն էղան ինչխ օր մե խնձորի՛մ կիսած:

Աղջիկը տըղին թամբա էրավ, ըսավ.—Յո՛ւր կէրթաս, յո՛ւր չես էրթա, շագըմ քըցիր՝ ընձի բըդի ըսես:

Յառավոտուն յելավ, օր որսի բըդի էրթար, թագավորն յիրան ծառեքուն ղըրգել էր, տեսնին, յիմանան, թե ի՞նչ մարդ է ապրըմ յիրան քաղքի մեջը, օր ըդման բաղ ու բաղչա ունի:

Աղջիկը տըղին ըսավ.—Վերու էս դաստա ծաղիկը, ճամփու մեջ մե կընիկ՛մ է գցած, ծաղիկները վըրեն կը քըցես, յետ դառնալուց էդ կնիկը կը սաղնա, կառնիս, գուգաս, ծաղկըներտ զաղար կը դառնան:

Տըղան ըդման էնըմ է, էս կընկան առնըմ տուն է բերըմ: Գըլխու յընկա՛ք՝ վով է էղնըմ էդ կընիկը:

Թագավորին էրթըմ խաբար են հասցընըմ, թագավորը խաբար է ընըմ, օր.—Գուզեմ ձեր տունը ղոնախ էղնիմ:

Է՛, հրեղեն աղջիկն ի՞նչ էր յուզըմ՝ էդման բան: Լա՛վ պատրաստություն է տեսնըմ, թագավորին վայել խաբար է ղըրկըմ, օր.—Քու կընկըտանցով, նազիր-վեզիրով, քու լալա-ծառայով համեցեք մեր պալատը:

Էդ օրը թագավորին խաբար են տանըմ, օր.—Փոքր կընկատ վրա դրած ծաղըկները զաղար են դառե:

Թագավորն յիրան սինոտով էկավ ղոնաղ էղավ տըղի տունը:

Նըստան, հրեղեն աղջիկն ու օսկեծամը էման մե պատրաստություն են տեսե, օր խոսքով չի պատմվի: Թագավորի բերանը բաց է մնացե, մայիլ է կըտրե, նայըմ է աղջըկներուն, նայըմ է տըղին, մեկ էլ կընկան... բան չի կըրըմ ըսե:

Ըստեղ հրեղեն աղջիկն ըսըմ է.—Բան բըդի պատմեմ, հեչ մեկը իրավունք չունենա դուս էրթըլո՛ւ:

Աղջիկն էրկու հատ լավ բիլկով մարդ կայնըցրավ դըռան վըրա, էկավ թագավորի սինոտին ըսավ.—Թող ղազը օսկե ամանի մեջ էփի՛, ես մե հեքիաթըմ ըսեմ:—Ըսավ.—Կար մե հատ թագավոր, էրթում էր կերեր՝ գիտնական կընիկ առնելու, յելավ թագավորը յիրան երկըրի սայմանները ման գալու, էկավ մե քաղաքը: Էն, ինչ օր ես ձեզի պատմեցի, ըդման յիրեք քուրը բերեց...

Թագավորի մենձ կընիկն ու օրթանջիլը յիրար խառնըվան, փորերը շանջու հընգավ, հուզըմ են դուս յելնին, ճար չըկա: Քըրտընքները վըրեքն է տըվե: Մենձ կընիկը թե.—Յես գնացի՛:

Հրեղենն ըսավ.—Պայմանը պայման է, բըդի մինչի վերջ լսես հեքյաթը

Ղազը օջղի վրեն թող էփի,
Իմ խոսքիս էլ մարդ չխառնվի[39],

[39] Այս երկու տողը ասվել է թուրքերեն. Չավուշըն ղազի յամասըն,//Սովդա խլավ օլմասն (ծանոթ. բանահավաք Հ. Մկրտչյանի):

Գալողին՝ էրկու կոպալ,
Էրթողին՝ մե կոպալ:

Ըսավ, ըսավ, հասավ վերջաբանին, ըսավ. —Թագավորն ապրած կենա,— ըսավ,— էսիկ՝ տըղեդ: Օր ըսել էյն, թե կընիկդ շան թուլեք է բերե, էսիկ՝ օսկեծամ աղջիկդ, էսիկ էլ տնից վռնդած ու սպանված կընիդ, էս էլ դավաճան կընկըտիքդ:

Է՛, ինչխ օր հեքյաթների մեջ են ըսըմ, էս էրկու քուրոնջը, էն ջադու պառվին էլ հետները կապեցին ջորեքու պոչերեն, տարան սար ու քոլ հասըրին, մենակ ըդոնց մազերը ետ բերին:

Ընդոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին: Ըդման է, հալալությունը չի կորըմ:

3(3). ԴՈՒՆՅԱ ԳՈՋԱԼՈՒ ՀԵԿԱՏԸ

Ժամանակոց կեղնի, չի էղնի մե մառտ, մե կնիկ կեղնի: Կունենան օխտը էրեխա: Ամենամենձ տղեն կեղնի տասը տարեկան: Իրանկ էլ շատ դառը ախկատ են էղնմ: Օրական էրտմ են հեր ու տղա մեշեկից ցախ-մախ, փետ, ծառ, թոպ են էնմ, բերմ են ծախմ են, իրանց օրվա ապրուստ են էնմ: Մե օր՝մ էլ գնացին դես ման էկան, դեն ման էկան, շատով ցախ, կոտռած ծառ ու ճյուղ չկար, էդ օրը քիչ թոփ էրին: Տղեն ըսավ.—Ապո՛, էսկանով մենկ էգուց ի՞նչղ ապրինք: Կեցի էրտամ քիչ՝մ էլ ման գամ, բալկի կոտռած ճյուղ ու մուղ ռաստ գա, պոկեմ բերեմ:

Հերն ըսավ.—Գնա, բալա ջան:

Գնաց տղեն շատ ման էկավ, կոտռած ծառ ու ճուղ չգտավ: Աչկը քցեց մե ցածրիկ ծառի՝մ վրա: Տեսավ, օր ղշի բուն կա ծառի վրեն: Գնաց, էլավ ծառի ճուղին, տեսավ, օր մե հավգիտ՝մ կա բունը: Առավ էդ հավգիտը ու իջավ, էկավ հոր քովը: Ըսավ.—Ապի, ա՛յ հավգիտ եմ գտե: Տանիմ էպեմ ուտեմ:

Հերն ըսավ.—Լավ ես էրե, դե վերցրա ցախը շալակս, էրտանկ տուն:

Ցախը վերցուց հոր շալակը, ինկն էլ ուրախ-ուրախ ընկավ հետևեն: Շվշվցնելեն էկան տուն: Տեսան, օր մերը հլը թնդիրը չի վառե: Ըսավ.—Անա, ընչի՞ թնդիրը չես վառե:

Ըսավ.—Ինչո՞վ վառեմ, պիշկա չկա:

Տղեն ըսավ.—Անա՛ ջան, հավգիտ՝մ եմ գտե, բա ուրտեղ էպեմ, ուտեմ:

—Վա՛յ, բալա՛ ջան,—մերն ըսավ,—էդ հավգիտը տար տուր ջհուդին, մե պիշկե՝մ բեր, թնդիրը վառեմ: Իրկունը ճրագ գվառենկ:

Խեղճ տղեն մոլրավ, նա՛ էնե հավգտից ձեռ քաշե, նա՛ էնե անվառել թնդրան աշե, օր էրեխեկը չբլախ, բոբիկ մռսմ են: Է՛, ճարը կտռած տարավ հավգիտը դուկանը, տվավ դուկնչուն, ըսավ.—Ա՛ռ էսի, մե պիշկե՝մ տուր:

Առավ դուկնչին՝ ջհուդ էր, աշեց հավգտի պոչին, գլխին, վերցրավ երկու պիշկա տվավ: Տղեն վազելով էկավ տուն, մորը ըսավ.—Անա, էրկու պիշկա տվավ:

Մերն ըսավ.—Էն էլ տեսել է, օր հավկիտը մենձ է, երկու պիշկա է տվե:

Մերը թնդիրը վառեց, հերը տարավ ցախը ծախեց, բերավ քիչ՝մ ուտելիք, իրանց համար: Կերան, տակծան, էլան քնան: Առավոտ էլան էլի: Հեր ու տղա վերծրին թոկ ու չվան, գնացին էլի մեշեկը: Ըստից, ընդից թոպ էրին: Հմը տղի աշքը ղշի բնին է: Բեռները օր թմեցին, կապեծին, տղեն գնաց էլի ման էկավ բնի տեղը: Տեղը կորցրել էր: Ման էր գալմ, չէր գտնմ: Մեկ էլ օր բիրդան տեսավ՝ վազավ, էլավ ծառին: Տեսավ, օր էլի մե հավգիտ՝մ կա բնի մեճը: Վերցրավ ու էկավ: Ցախը վերցրին, շալգեցին, հեր ու տղա էկան տուն: Ճամփեն տղեն մտածմ էր. «Հավգիտը տանիմ տունը, եփեմ, կեսը բաժնեմ էրեխանծ վրեն, կեսն էլ ես ուտեմ: Էգուցվանն էլ բերեմ տամ մորս, եփե, հերս ու մերս ուտեն»: Էդման մտածելով , տղեն հասավ տուն: Խաբար չէղավ, թե որման հասավ: Տեսավ օր պզդի ախպերը լալմ է, ղժմ է, սիրտը պատռմ է:

—Վա՛յ,—ըսավ տղեն,—անա՛, էս ընչի՞ է լալմ:

Մերն ըսավ.—Շանջու է: Շակար չկա, մե թաս՝մ չայ խմե, բալկի շանջուն թողե:

Ըսավ.—Անա, ա՛ռ էս հավգիտը էպի թող քիչըմ ուտե, բալքիմ շանջուն կտռի:

—Վա՛յ, բալա ջան,—ըսավ մերը,—էդ հավգիտը տար, քիչ՝մ շակյար բեր: Չայ դնենք, թող խմե, բալկի շանջուն կտռե:

Էլի տղեն մոլրավ, չիդեր՝ ինչ էներ: Ուզմ էր, օր անպատճառ էդ օրվա հավգիտը ուտեր, էն էլ չի էղնմ: Է՛, տարավ, էլի տվավ ջհուդին, ջհուդը էս անգամ առանծ աշելու առավ դրավ դարակը ու վերցրավ մի ղանդ՝մ շաքյար տվավ տղին: Տղեն առավ շակարն էկավ տուն, տվավ մորը:

Մերը տեսավ, օր էդ շաքյարը ոչ թե մե հավկտի շաքյար է, ըսկի հինգ հավգտի էլ էդկան շաքյար չեն տալմ: «Է՛,—ըսավ,—գիտի օր մենկ ախկատ, քյասիբ մառտ ենք խղճածել է շակյար է տվե»,—մտածեց մերը:

Բերավ չայ դրավ, էրեխանցը չայ խմծրավ: Մառտն էլ ցախը ծախեց, հաց ու մաց բերավ, կերան, իրանց հմար յոլա գնածին: Էլան քնան: Հմը տղի քունը չէր տանմ: Ըսմ էր. «Եբ բտի լուսնա, օր էրտանք ցախի, ես էլի հավգիտ բերեմ, եպեմ ուտեմ»: Էդման մտածմ էր ու տեղի մեճը շուռ ու մուռ էր գալմ:

Հերը ձեն տվավ, ըսավ.—Վե՛ր, ել, ոռտի ջան, էսօր էրկու շալակ ցախ բտի բերենկ, ֆլան հացթուխը ուզմ է: Էսօր թեզ էրտանք տանից:

Էդ ըսելուն՝ տղեն տեղից թռավ: Շորերը հակավ, թոկը վերծրին, գնացին մեշեն: Տեսան, օր քամին էնքկան չոր ծառ ու ճուղ է կոտռել, օր էլ թոփ էնելով հախլամիշ չի էղնմ: Թոպ էրեծին, էրկու շալակ թմեցին, կապկպեցին: Տղեն ըսավ.—Ապո ջան, կայնի էրտամ հավկիթը բերեմ, գամ, էրտանք:

Հերն ըսավ.—Ոռտի ջան, հիմի հլը ածած չի էղնի, մնա մեկել դոնուշին:

—Չէ՛,—ըսավ տղեն,—բտի էրտամ աշեմ:

Շատ օր տղեն ըսավ, հերը խատրից չելավ, ըսավ.—Գնա աշե, կա՝ առ արի, չկա՝ թեզ արի էրտանկ: Մեկել դոնուշին ածած կեղնի, կառնիս կերտանկ:

Տղեն գնաց ղշի բունը, տեսավ օր հավգիտ չկա, եդ դառավ՝ նիատը կախ: Հերն ըսավ.—Բալա ջան, նիատդ մի կախե, հիմ գտանինկ ցախը կուտանկ հացթուխին, դառնանկ գուկանկ, էն վախտ ածած կեղնի: Կառնիս, կեռտանք:

Տղեն ցախը վերուց հոր շալակը, հերը վերուց տղի շալակը: Էկան քաղակ: Ցախը տարան դուզ հացթուխի դուռը իջցրին: Փարեն առան, էկան տուն: Մե քիչ՝մ հաց կերան, դինջածան: Էլան գնածին մեշեն: Էլի թոպ էրին, բեռները թմեծին: Էլի տղեն գնաց աշեց, հավկիտ չկա: Հերը մտկի մեճն ըսավ. «Վայտե ղուշը տեսավ, օր հավկիտը տանմ են, խռդնավ, էլ հոդ չի ածմ»: Մտածեց հերը հմը տղին այան չէնեց:

Ըսավ.—Բալա ջան, էսօր գոռծերը աճող է, քելե վերծու էրտանկ: Քու խատեր հմար մե դոնուշ՝մ էլ գուկանկ: Էն վախտ անպայման ածած կեղնի, գտանիս:

Վերցրին ցախը, էկան քաղակ: Տարան, էլ տվին հացթուխին, փարեն առան էկան տուն: Դինջծան: Գնածին մեշեն, էլի թեզ՝մ թոպ էրեծին, բեռները թմեծին: Էլի գնաց տղեն, աշեց բունը՝ հավկիտ չկա: Ըսկսեց ձենով լալը: Տղի լածի ձենից ղուշը մե ուրիշ ծառի՝մ վրայից թռավ: Տղեն գնաց աշեց, տեսավ, օր ղուշը թազա բուն է շինե ու ընդեղ էլ ածել է: Տղեն հավգիտը վերցրավ, ուրախ-ուրախ եկավ հոր քովը: Հորն ըսավ, օր ըշտա ղուշը բունը փոխել է:

Հերն ըսավ. «Իմ ըսածը դրուստ է»:

Ըսավ.—Դե, տղա ջան, ցախը վերցրու էրտանք, էս մե դոնուշն էլ քու խատերդ էկա: Շատ եմ բեզրե:

Վերցրին իրանց բեռներն էկան տուն: Ճամպեն տղեն մտածմ էր. «Տանիմ հավգիտը էփեմ, մինակ ես բտի ուտեմ, մառտու չեմ տա: Էսօր շատ եմ չարչըրվե»:

Էկան տուն: Հերը տարավ ցախը ծախելու: Տղեն գնաց տուն: Տեսավ, օր մերը կիրակուլ չի էպե: Ըսավ.—Անա, ընչի՞ կիրակուլ չես էպե:

Ըսավ.—Բալա ջան, էսօր կատուն քցեց կջուջը կոտռեց, աման չկա, օր կիրագուլ էպեմ: Ա՛ռ էս տասը շային, հերդ տվավ, գնա դուկանից մե պղինձ՝մ բեր, թնդիրը վառեմ, կերագուլ էպեմ, քանի հերդ չի էկե: Գուկա, մեխկ է, օր անոտի նստի:

Տղեն առավ տաս շային, գնաց դուկյանը: Դուկնչին ըսավ.—Տաս շայու պղինձ չունինկ: Կա մանետանոց, մանետկիսնոց, 2–3 մանետանոց:

Տղեն մոլրավ, կայնավ: Չիդեր՝ ի՞նչ էներ, առանց պղինձ էրտար, հերը գուկա տուն, բեզրած, տաք աբուր չկա, օր ուտե: Թե հավգիտը դնե փարի վրեն՝ պղինձ առնե, աշկը գմնա հավգտին: «Ի՞նչ էնեմ, ի՞նչ չենեմ: Լավ էսօր էլ չեմ ուտի, էգուցվանը գուտեմ»:—Մտածեց տղեն ու ջեպից հանեց հավգիտը: Ըսավ.—Քեռի, էս հավգիտն էլ հետը առ, ինչ կուտաս՝ տուր:

Ջհուդն առավ հավգիտը, էլ փարեն չառավ: Վերցրավ իրեկ մանետնոց պղինձ՝մ տվավ ու տղին ըսավ.—Տղա ջան, կոնա՞ս ըստոր ածող ղուշը բեր: Քեզի շատ փարա կուդամ:

Տղեն ըսավ.—Լավ, օր կոծա բռնի, գբերեմ կուդամ քեզի:

Ըսավ ու առավ պղինձն ու բերավ տվավ մորը՝ փարի հետ: Մերը շատ զարմածավ,

ըսավ. «Մե հավգտի՛մ էսման պղինձ ո՞վ կուդա»,—մտածեց ու էլի ձեն չհանեց: Բերավ թնդիրը վառեց, աբուրն էպեց: Դրավ դրաղ, հլը մառտը չէր էկե: Ամեն օր վառելիք չէր մնմ: Վառմ էր, անջաղ կջուջը ելնմ էր եռ: Էդ օրը քանի՛մ հատ ցախ քցեց թե չէ, պղինձը եռած: Աբուրն էպավ: Մառտն էկավ տուն: Բերին հաց կերան: Ըսին, խոսացին: Էդ օրվա աճողուտան վրա շատ ուրախածան, էլան քնան: Էլի տղի քունը չի տանմ, ըսմ էր. «Ճպ բտի լուսնա, օր էրտամ ղուշը բռնեմ, բերեմ տամ դուկնչուն, օր ինձի փարա տա»:

Է՛, լուսը բացվի ձեր վրեն: Լուսը բածվավ: Վերցրին հեր ու տղա թոգերը, գնածին մեշեն: Ցախ, թոփ էրեցծին, կապեծին: Տղեն ըսավ.—Ապո, ես հարի էդ ղուշը չբռնեմ, տուն չեմ գա:

Հերն ըսավ.—Ոռտի, ղուշը ղոլայ հալով չի բռնվի: Արի էրտանք տուն:

—Չէ՛,—ըսավ տղեն,—բտի բռնեմ:

Հերը շատ ըսավ, տղեն չլսեց: Գնաց էլավ ծառի վրեն: Ղշի բունը ծագեց, ձեռը անծրավ բունը: Վրեն բարագ՛մ խոտ դրավ, օր հեչ բալու չէր էնմ, թե բնին ձեռ տված է: Տղեն սուս ու փուս, կպավ ծառից ու մնաց:

Շատ մնաց թե քիչ մնաց, շատ ու քիչը ինկը գիտե: Մեկել հանկարծ ղուշը էկավ, մտավ բունը թե չէ, տղեն ոտից բռնեց: Ղուշը շատ չարչրվավ, օր ազատվեր թռներ, տղեն չթողեց: Եկան, ճամպեն ղշի ածելու վախտն էր: Ղուշը տղի ղոլտուղը զարկած էր: Տղի քելած տեղը ղուշը օր ածեց, հավգիտը ընկավ կոտրվեց: Հավգիտը օր ընկավ կոտռավ, միջեն մարգրիտներ թափավ ու փռվավ գետինը: Հեր ու տղա ցախը վեր դրին մարգրիտը թոփ էրին, լծին յայլուղի մեճը, կապին: Հերը դրավ իրան ջեպը: Ցախը նորից շալգին էկան տուն:

Ճամպեն տղեն մտածմ էր, ըսմ էր. «Գիտեմ, օր ջհուդը մե հավգտին տալմ էր մի հավգտի աժողուտենից շատ ապրանկ»:

Բերեծին տուն: Հերը տարավ ցախը ծախելու: Տղեն բերավ ղաֆաս շինեց: Ղշին դրավ ղաֆասի մեջը: Առավոտ կուտ ու ջուր դրավ: Կանանչ քաղեց դրավ առաջը, ղուշը լավ ուտմ էր, լավ խմմ էր, հմը էդ օրվանից չածեց:

Ջհուդն էլ, հա աշկը ճամպա է, օր ղուշը բտի տանին տան իրան: Էդ տղեն էլ ամեն առավոտ էլնմ էր, կտմ, ջրմ էր: Մորը ըսմ էր.—Անա, ղշիս մուղատ կեծիր:

Հա, մուղատ կեծին: Ու իրանկ՝ հեր ու տղա, էրտմ էին մեշեն՝ ցախի: Ըդոնց էրեխեկն էլ օր քներիծը գզառտնեին, գը չափռնեին ղաֆասի բոլորը: Գնային, մեկը հաց կուդա ղշին, մեկը՝ խնձոր, մեկը՝ կուտ, մեկը՝ ուրիշ ինչ-օր էղնի, կուդան: Ղշին էլ էման է սովրե, օր կտուծը հանմ է ղաֆասից, տվածները առնմ, ուտմ է: Էրեխեկը ծիծաղմ են, ուրխնմ են՝ մե շաշա-դախա, մե հառնիկ: Մե կտոր՛մ վախտ օր ղշին չեն տենմ, կարոտմ են: Մե օր՛մ տղեն գնաց դուկյանը:

Դուկնչի ջհուդը ըսավ.—Ա՛յ տղա, էլ ընչի՞ հավգիտ չես բերմ:

—Էլ չկա,—ըսավ տղեն,—ուրտի՞ց բերեմ:

—Բա ղուշը ընչի՞ չես բերմ:

—Ը՞նչ՚եմ բերմ, մենկ մառտ չե՞նք: Մեր էրեխեկը գխաղան, կուրխնան էլի:

—Այ տղա՛, ես քեզ շատ փարա կուտամ, բեր ղուշը, ի՞նչ բտի էնեք: Ձեր ինչի՞ն է պետկ,—ըսավ ջհուդը:

—Չէ՛,—ըսավ տղեն հեռսոդ,—ես գիդեմ քու փարա տալը: Հավգտներին էլ էիր տալմ,—ըսավ ու դուս ելավ:

Ջհուդը, օր շատ լավ գիտեր էդ ղշի էղելուտենը, օր էդ ղուշ կախարդական թլիսմով թողած է: Ում տանն օր էղնի, էն տունը օսկի գդիզեն: Ընդի ջհուդի ջանը ընգավ քլքլուն: Էդ տնեցոնցը որին տեսնմ էր, ըսմ էր.—Ղուշը բերեք, ձեզի շատ փարա կուդամ:

Ընդոնկ ըսմ էին.—Մեզեն մեկս մեռնի լավ է, քանց էդ ղուշը մեր տնեն էլնի:

Ջհուդը տեսավ, օր ըդմանով բան դուս չի գա, միտկը ծռեց: Ըսավ. «Սաղ օր ձեռս չի ընկնի, գոյնե են թավուր խաղ սարկեմ՝ էդ ղշի ջանդակը ես ուտեմ»:

Գնաց մե նանա-ղառի՚մ գտավ: Բերավ, բավագանին ոշվատ տվավ, ղրկեց տղի մոր քովը:

—Գնա՛,—ըսավ,—իշկան կռնաս ընձի գովա: Լավ, լավ խոսկեր ըսա, գիր, գրկապ էրա, էդ կնկան տակծրա ինձի հետ: Եթե էդ գոռծը դու գլոխ բերես, ես նորից էլի փարա կուդամ քեզի:

Ըսավ ու նանա-ղառուն ղրկեց էդ կնգա քովը:

Գնաց ղառին, դուռը զարգեց: Էկան բածին: Գնաց տուն, նստավ ու ըսկսեց ալնի-աղի

խոսալ: Կնիկը զարմածավ ըսավ. «Էս պառավը ո՞վ է, օր էկել է ընձի ես տեսակ խոսկեր է ըսմ»:

Ըսավ.—Դու ո՞վ ես:

Պառավ ըսավ.—Ես դուկնչու մորկուրն եմ: Կնիգը մեռել է, ուզմ է քեզի առնի: Քեզի շատ է հավնե: Ապսոս չե՞ս, դու էտկան սիրուն, գեղեծիկ՝ էտկան նեղուտենով ես ապրմ: Ըշտը շատ լավ մառտ է, քեզի, քու էրեխանծը լավ գպայե: Նեղուտենից գը պոձնիս, վեռճդ լավ կեղնի:

Շատ օր խոսաց, կնիգը վեռցրավ ագիշը, կապեց պառավին ծեծը, էնկան զարգեց, օր պառավը էլ չէր կռնմ տեղեն էլներ: Թևեն բռնեց դուս հռնդեց: Ըսավ.—Գնա՛, մեկ էլ էս յաներ չերևաս: Սաղ կտորդ անգաջդ գթողեմ:

Ելավ նանա-ղառին ժժնթպած անջաղ փախավ գնաց: Ջհուդին ըսավ.—Դու էլ չեղնիս, քու փարեն էլ: Ընձի սպանեց ծեծելով էդ կնիգը:

«Էդ կնիգը կամկի գալողը չէ»,—մտածեց ջհուդը, թե ինչ էնե:

Գնաց ուրիշ պառավ գտավ ընդորը դիա շատ ոշվատ խոստացավ: Քանի՛մ առշին կտոր դրավ: Քիչ՛մ չամիչ, չարազ դրավ, շակար, բան, ըսավ.—Տար, բաժնե էրեխանց վրեն, նոր արարկուն էրա:

Պառավը տարավ, տարածը բաժնեց էրեխանց վրեն: Էրեխեկը կերան պոծան, ըսկսեց խոսալ ու համոզել կնգան: Կնիգը մե լավ քոտակ՛մ էլ ըդորը տվավ ու դուս շպռտեց: Պառավը գնաց ջհուդին ըսավ.—Դու էլ չեղնիս, քո փարեն էլ: Ես գմեռնիմ, էդ կնիգը կամկի գալողը չէ:

Ջհուդը հեռսիցը տրակմ էր, ըսավ. «Յա՛ բտի էդ գոռծը գլոխ գա, յա՛ բտի իմ գլոխս ջուրն էրտա»:

Ըսավ, գնաց ուրիշ պառավ գտավ: Բերավ ըդուրը դիա շատ փարա խոստածավ ղրկեց: Էդ պառավը ըսկզբից ձևացավ մուրասկան, ըսավ.—Մե քանի՛մ օր քու տունդ ստրվորիմ, հաց մուրամ, ուտեմ, ապրիմ, թողեմ կերտամ:

Երկու օր՛մ մնաց ու ըսկսեց ջհուդին գովալ: Օրական դաստե՛մ հաց էր բերմ, ինկն էլ էր ուդմ, էրեխեկն էլ էին ուդմ: Կեսն էլ մնմ էր տեղը: Ըսմ էր.—Էսկանը ջհուդն է տալմ, էդ ինչկան ձեռնաբաց մառտ է: Ձեռնաբաց, ուրախ յուզայուզլի, ընկերասեր, խեր ու խեյրատ էնող, կամեցող: Շատ լավ մառտ է, շատ:

Հա գովմ էր, ամեն օր ուտելիկեղեն էր բերմ, տալմ էրեխանծը: Ըդմանով մե սաղ տարի՛մ մնաց կնգա տունը:

Էնկան ըսավ, էնկան գովաց, հարի կնկա միտկը դառուց, կամկի բերավ: Կնիգը էման դառավ, տակցավ ջհուդի վրեն, օր մե օր՛մ օր չէր տեսնմ, խելկը թռնմ էր: Մե քանի՛մ օր ջհուդը գնաց-էկավ: Ամեն ինչը վիրդ էրավ: Մե օր՛մ էլ ըսավ.—Ես էման հիվանդ եմ, օր հեկիմը ըսավ՝ տաս օր կապրիս:

Ջհուդն օր ըդման ըսավ, կնկա սիռդը պատռավ: Ըսավ.—Յաման, ի՞նչ ես ըսմ: Էդ ի՞նչ ցավ է, օր ճար ու դարման չկա: Դու բտի մեռնիս իմ տունն ավիրե՞ս, ես առանց քեզի մե օր՛մ էլ չեմ ուզե ապրել:

Ջհուդն ըսավ.—Բա քու խելկդ ուրտե՞ղ է: Ցավն էլ դեղ ու ճար չունենմ: Դեղ կա, հմը ձեռ չի ընգնի: Ուրտի՞ց գճարվի, օր ճարվի: Ես իմ կարողուտենս կուդամ, չեմ ապսոսե:

Ջհուդի խոսկի վրա, կնիգը ընկավ դաֆտալուբ.—Ըսա, հա ըսա՝ ի՞նչն է քու դեղը, օր չի ճարվի: Աչքիս լուսը կուտամ ու գճարեմ, թակիլա քեզի զավալ չեղնի: Դե ըսա՛, ըսա՛:

Կնիկն օր շատ զոռեց ջհուդն ըսավ.—Ախր, օր չի ճարվի, ընչի՞ ըսեմ:

—Քա՛, բալկիմ գճարվե, ըսա՛ էլի: Հիմ սիրտս կտրաքի,—լացավ ու ըսավ կնիկը:

—Դե լավ, մի՛ լա, կսեմ,—ըսավ ջհուդը:

—Դե ըսա՛:

Ջհուդն ըսավ.—Հեքիմը ըսավ, օր քեզ մնածել է տաս օր ապրելու: Դու բտի ղշի միս ուդես, էդ ճարես ուտես, դու հարուր տարի կապրիս: Քեզի բան չի եղնի: Թե օր չգտար, չկերար, տաս օր էլ չես ապրի:

—Վա՛յ,—ըսավ կնիգը,—ղուշը մեր տունն է, դու էլ ըսմ ես՝ չի ճարվի: Էլ ընչի՞ չէիր ըսմ: Ես էգուց մե միանով՛մ ղշին մոռտել կուդամ: Կեպեմ դու արի կեր:

—Չէ՛,—ըսավ ջհուդը,—հեքիմը ըսմ է, օր իմ ձեռով բտի մոռտած էղնի:

—Լա՛վ, թող քու ձեռնով էղնի,—ըսավ կնիկը:

Ջհուդը արխեին ընկավ, թողեց գնաց տուն: Մեկել առավոտ տղեն էլավ, ղշին կուտ, ջուր տվավ ու գնացին ցախի: Էրեխեկն էլ հլը քնած են: Կնիկը քաշեց ղաֆասը, քցեց ջառտեց: Զարկեց ղշի ոտն էլ ջառտեց: Նստավ լացավ: Էրեխեկն էլան, տեսան՝ ղուշը խեղճ-խեղճ կզգտել է քոշեն, մերն էլ լալմ է: Երեխեկը ելան խառնվան իրար: Իրանկ էլ լացան: Էլ ղուշը չէր ղունղունմ: Էլ էրեխանց ձեռեն բան չէր առնմ

ուդմ: Երեխեկն էլ էին տխուր: Ղուշն էլ էր տխուր ու մոլոր: Ցավից կուճ էր էկե: Ցորեկվան ցախը բերին: Հերը տարավ ցախը ծախելու: Տղեն մտավ տուն, տեսավ օր տնեծիք սաղը լացել են: Մերն էլ օր տղին տեսավ, գորխրավ, սուտ լացիկ էրավ: Տղեն ըսավ.—Էս ինչ բան է:

Մերը լալով ըսավ.—Ինչ բան է, անտեր կատուն թռավ ղավասը քցեց, համ ղաֆասը կոտռավ, համ՝ ղշի ոտը:

—Է, ինչ էնենք, կոտռավ՝ կոտռավ, էլ ընչ'եք դառե սկվոր: Բերեկ մոռտեմ:

—Վայ, չէ, բալա ջան, թող մնա, ես յախու կդնեմ, կլավցնեմ: Եպ օր չլավցավ, նոր մոռտե:

Ազմ ճալան-ճռտան խոսաց: Տղեն անգաճ չէրավ, քաշեց դանակը՝ ղշի գլոխը կտռեց: Բնբուլը պոպկեց, իստկեց, փորը բացեց, օր լվանար, տեսավ ջիգրով բոգրագը, խելկը գնաց: Էնկան մակուր, էնկան լավ, օր մարկրիտի պես շողմ էր: Ըսավ. «Հայ-հայ, ես էնկան սաբր էնեմ, օր չուրի էսի էպի: Ես բտի էսի հում-հում ուտեմ»,—ըսավ, քցեց բերանը:

Բերանը քցելուն պես խաբար չեղավ, թե ինչղ կուլ գնաց: Ղշի ջանդակն էլ դրավ էպեց ու բաժնեց տնեծոնցը, կերան: Ինկը գնաց իրան գործին: Մերը նստավ շիվան էրավ, օր ջիուդը ղշի միսը չկերավ: Տաս օրից եդև գմեռնի: Դառդը մինակ մեռնելը չէ. բա օր էկավ ըսավ՝ դե բեր ղշի միսը ուտեմ, ինկն ինչ ըսի: Շատ լածավ, շատ մտածեց, շատ վայնասուն էրավ, բան դուս չեկավ: Վեռջը ըսավ. «Գոյնե բերեմ խորոզն էլա մոռտեմ, ըսեմ, օր էսի ղշի ջանդակն է: Թող ուտի, ինչ էղնմ է էղնի»:

Բերավ խորոզը մոռտեց, պոպկեց, իստկեց, էպեց, պայեց: Իրկունը ջիուդը էկավ, իշտայը պայած, օր բտի ղշի միս ուտե՝ իրան ձեռով մոռտած, ջիգրով բոգրակն էլ հում-հում կուլ տա, օր հարստանա: Էկավ, բերավ կաղին, քիշմիշ բաժնեց էրեխանց վրեն: Նստավ:

—Դե բեր ղուշը,—ըսավ,—բեր մոռտեմ:

—Ա՛խ,—ըսավ կնիկը,—ղշի ոտը կոտռեցի, օր դու գայր մոռտեիր: Տղես էկավ, տեսավ, օր ղուշը շատ է ինջմիշ էղնմ, քաշեց դանակը մոռտեց: Ես էլ էպեցի, պահեցի, օր գաս ուտես:

Ըսավ.—Բա ջիգրով բոգրամկը:

Կնիկն ըսավ.—Հետն է, սաղ պայել եմ քեզի:

—Ախր, ջիգրով բոգրակը բտի չէպեիր: Քեզի ոմ ըսավ էպեիր,—բարկացավ ջիուդը:

—Դե, ինչ էնեմ, տղի տեր եմ, մառտի տեր եմ, մինակ ես չեմ, իմ խոսկս չի: Հմի էպել եմ, էպած կեր, էլի էն չէ՞,—ըսավ կնիգը:

—Լավ, դե բեր,—ըսավ ջիուդը:

Կնիկը գնաց բերավ խորոզի ջանդակը, ոտով-գլխով, սիրտ ու թոկով, սարկով դրավ ջիուդի առաջը: Ջիուդը վերցրավ խորոզի ջանդակը աշեց ու շպռտեց: Ըսավ.—Դու ընձի ուզմ ես խապե՞ս, ես չե՞մ հասկնմ ղշի ջանդակն ու խորզի ջանդակը:—Ըսավ ու էլավ քաշեց կնկան լավ ծեծեց, ջառտեց: Ըսավ.—Ես քեզի չէի թամայմ: Իմ դառդս ղուշն էր, օր ղշի ջիգրով բոգրակը ես կուլ տայ: Հմի ըսա՝ որ երեխեդ է կուլ տվե:

Ըսավ.—Մենձ տղես է կուլ տվե:

—Դե ա՛ռ էս դեղը,—ըսավ ջիուդը,—խմծու մենձ տղիդ, օր սիրտը ետ տա, ջիգրով բոկրակը վերցնես տաս ինձի, օր կուլ տամ չմեռնիմ, թե չէ տաս օր է մնածե, օր մեռնիմ,—ըսավ թամբահ էրավ ջիուդն ու գնաց: Ըսավ.—Ես էրտմ եմ, էկուց էս վախտ գուկամ, օր ըսածս չի էղե, վեռջիտ օրն է:

Կնիկն էլ առավ դեղը, պայեց: Տղեն էկավ, բերավ դեղը, ըսավ.—Բալա ջան, ա՛ռ էս դեղը խմե՝ գլոխդ չցավա:

Տղեն ըսավ.—Իմ գլոխը չի ցավմ, ես ընչ'եմ դեղ խմմ:

Մերն ըսավ.—Հիմի չի ցավմ, եդև գցավա, ա՛ռ խմե:

—Չե՞մ խմե,—ըսավ:

—Ա՛ռ խմե:

Շատ օր մերը հոկուն հասուց, ըսավ տղեն.—Լավ, տուր, եպ օր գլոխս ցաված, գխմեմ:

Մերն ըսավ.—Էսօր բտի խմես:

Ըսավ.—Էսօր գխմեմ:

Ըսավ ու դեղը առավ դրավ ջեբը: Մնաց, մերն էլ հա ղարավուլ է քաշմ, օր տղի սիրտը ետ տա՝ էդ ջիգրով-բոգրակը վերու տա ջիուդին: Մեկել օր ջիուդն էկավ:

—Հա, ըսածներս էրեցի՞ր, թե՞ չէ:

Ըսավ.—Հա՛, էրել եմ, հմը հլը սիրտը չի թապե:

Էլի քաշեց կնգան լավ ջառեց, թողեց գնաց: Ըսավ.—Էգուց գուգամ, օր չի էղե, վեռջիտ օրն է:

Ջհուդը գնաց, տղեն էկավ: Մերն ըսավ.—Բալա ջան, խմեցի՞ր դեղը:

Ըսավ.—Հա՛, անա, խմեծի, հմի գլոխս շատ է ցավմ:

—Բան չկա, կանցնի, բալա ջան,—ըսավ մերն ու շատ ուրխծավ, օր տղի գլոխը ցավմ է: Սիրտը անպատճառ եդ կուդա, ջիգրով բոգրակը գուկա գընկնի, վերու կուդա ջհուդին, ջհուդից կազատվի:

—Դե, բալա ջան, դուս մի՛ էլնի, տեղ մի՛ գնա, պառկի, թող գլխուդ ցավը թեթևնա: Վախենում էր, թե տղեն սիրտը ուրիշ տեղ ետ տար, ջիգրով-բոգրակը կորեր:

—Չէ՛, ես գոռծ ունեմ, բտի էռտամ,—ըսավ տղեն ու գնաց դուս:

Մեկել օր էլի ջհուդն էկավ: Կնգա չոկերը դողաց:

Ըսավ.—Հա՛, էլի չկա՞:

Կնիգը կմկմցրավ, ըսավ.—Ըշտը, համպերե, խու վռազ չէ՞, չես համպե՞րմ:

Ըսավ.—Էլ ի՞նչ համպերեմ, դու ընձի ինչի՞ տեղ ես դնմ:

Ըսավ քաշեց կնգան դրբի առաջ, ջառտեց, թկեց-մրեց, թողեց գնաց:

Կնիկը նստավ լածավ: Տղեն էկավ, տեսավ, օր մերը լալմ է:

—Հա՛, անա ջան, ընչ՚ե՞ս լալմ:

Ըսավ.—Ջհուդն էկավ ընձի ծեծեց, ջառտեց, գնաց:

—Ընչի ջհուդը քու հետ ի՞նչ գործ ունի, օր քեզի ծեծեր,—ըսավ տղեն:

Մերն ըսավ.—Ես ի՞նչ գիտեմ: Ըսմ է՝ դուկ ղուշ ունիկ, տվեկ ընձի: Ես էլ ըսի՝ չունինկ, քաշեց ընձի ծեծեց, թողեց գնաց:

Մերն օր լալով էդման պատմեց, տղին էրեխեկն ըսին.—Ապեր, գիդե՞ս ջհուդը դեղ է տվե, օր դու խմես գլոխդ ցավա, սիրտդ ետ տաս, ջիգրով բոգրակը գա թափի, մերս վերծնի տա ջհուդին, ջհուդը կուլ տա՝ չմեռնի:

Էրեխեկն օր էդման ըսեցին, տղեն մենձցել էր, եղել էր տասնհինգ տարեկան, ամեն ինչ հասկնմ էր, ըսավ.—Ուրեմն դու ջհուդի հետ կապ ունի՞ս, դու մեզի կենդանի-կենդանի թաղելու ես: Էլ ո՞նչ ես մեր ունիմ, ո՞նչ էլ դու ըսա՝ տղա ունիմ, ես գնածի:

Ըսավ ու դուռը շրխծրավ գնաց: Մերը դառավ էրեխանծը քվրտեց, անիծեց:

—Թաղե՞մ ձեզի, ձեր արևը մեռնի, ձեզ ո՞վ էր ըսմ ըդման մեկ-մեկ պատմեկ: Էդի լա՞վ էղավ, օր ապերը խռովավ գնաց, էլ չի գա:

Թող ըդոնք ըդման խառնվեն իրար, մենկ տեսնինկ, թե տղեն ո՞ւր բտի էրտա:

Տղեն էլ գնաց, էլավ քաղկից դուս: Մի ճամպե՚մ ընկավ առաջը, բռնեց էդ ճամպեն ու գնաց: Գնաց, գնաց, դուս էկավ մե սիրուն, գեղեցիկ, հարուստ քաղակ՚մ: Դես ման էկավ, դեն ման էկավ, է՞, ղարիբ, ջահել տղա, տես ու ծանոթ չունի, բարեկամ չունի, ի՞նչ բտի էնե: Էկավ, արևը մտնելով է, տեղ չկա: Գնաց մե դուկնի՚մ առաջ նստավ: Դուկնջին էլավ, օր դուռը փակե, էրտա տուն: Տղին տեսավ, ըսավ.—Հա՛, ի՞նչ մառտ ես:

Տղեն ըսավ.—Ղարիբ մառտ եմ, էկել եմ, օր աշխատիմ քանի՚մ շայի, տանիմ, ապրինկ:

Դուկնչին ըսավ.—Իմ քովս կաշխատի՞ս:

Տղեն ըսավ.—Ընչի՞ չեմ աշխատի, օր դու աշխատցուս:

Ըսավ.—Դե արի՛ նես:

Դուկնչին տղին տարավ նես, հաց, ջուր տվավ ուտելու, տեղ շինեց քնելու: Ըսավ.—Հաց կուտես, կելնիս գքնիս: Ես առավոտ գուկամ, գտեսնինկ, թե ինչ բտի էնենկ: Ըսավ, ելավ դուռը փակեց տղի վրեն ու գնաց: Տղեն էլ հաց կերավ, ջուր խմեց, էլավ պառկավ քնավ:

Առավոտուն թեզ զառտնավ, էլավ դուկյանն առավ ձեռ: Քոշից, քունջից, թորեկ-դախլից բռնած՝ էրավ հայլի: Սռպեց, իստկեց: Դառավ ջոջնկեց, ավլեց: Էկավ իրան տեղը վերուց, տեսավ՝ իրան գլխու տակը քիսիկ՚մ օսկի կա:

—Հը՞,—ըսավ,—էս դուկնչին է ընձի է փոռծմ:

Վերուց դրավ դախլի վրեն: Նստավ, տեսավ՝ դուկնչին էկավ: Դուռը բածեց, մտավ նես դուկան, օր ի՞նչ մտնի, դուկյան մի ըսա, մե դրախտ ըսա: Դուկյանը փոխվե, լավծել է, շնորկի է էկե: Տեսավ, շատ ուրխծավ: Բարև, բարի՚լուս տվավ: Տեսավ՝ դախլի վրեն քիսիկ՚մ օսկի կա: Վերցրավ ըսավ.—Ա՛յ տղա, էս ի՞նչ է, վրես ե՞ս խնդմ:

—Դու դրել էիր գլխուս տակը՝ ընձի փոռծելու համար:

Դուկնչին էն սհատը գլխու ընկավ, օր էս տղի վրեն ինչ-օր կախարդական բան՚մ կա: Դու մի տես, օր էդ դուկնչին էլ է ջհուդ: Էլ տղին

բաց չթողեց, ըսավ. «Եպ էղնի էս տղեն գիասկնա, օր օսկին իրանից է, էլ ես չեմ օկտվի: Էնկան բտի պայեմ, չուրի ըստուր թլիսմը պոկեմ: Հիմի հլը խամ է, չիդի»,—մտածեց դուկնչին ու ըսավ.—Հա՛, տղա ջան, քանի ծառայող բոնեծի ըսման քիսիկով օսկին յա փարա դնմ էի գլխնեբի տակը, օր փոռծեի: Վերցնմ էին, ըսում էին՝ խաբար չենք: Դու լավ տղա ես: Դու հալալ կատնակեր ես: Էլ ես քեզի իմ քովից չեմ հեռեծու:

Ըսավ ու ըսկսին աշխատել: Հեչ չաշխատին էլ, ցավ չէ դուկնչու համար: Առանց աշխատել քիսիկ՚մ օսկու տեր է էղել: Էդման մե օր, էրկու օր, հա ամեն օր տղեն տեսնմ է, օր քիսիկ՚մ օսկին գլխու տակն է : Վերցնմ տալմ է դուկնչուն: «Ջանմ, էդ մառդը ընձի փոռցե մեկ օր, էրկու օր, էդի ը՞նչ է ընձի փոռծմ: Յավաշ, էսօր բտի իրան էրտլուց ետև տեղը թապ տամ, աշեմ՝ բան կա՞»:

Իրկուն էր, դուկնչին դուռը տղի վրեն փակեց, գնաց: Տղեն էլավ, տեղ ու բառձ քանդեց, էս դին, էն դին էրավ, բան չգտավ: Տեղը շինեց, էլավ քնավ: Առավոտ էլավ, աշեց տեսավ՝ էլի էն քիսիկ օսկին գլխու տակը դրած: «Հեյ վա՛խ, հեյ վա՛խ,—ըսավ,—ես ընչի՞ տաս քիսիկ օսկին տվի էս ջհուդին: Ես ջհուդից փախա, էլի էկա ջհուդի ռաստ էկա»:

Վերծրավ օսկին, դրավ ծոցը, նիատը կախեց նստավ: Տեսավ՝ դուկնչին էկավ: Դուռը բաձեց: Աշեց դախլին, օսկի չկա: Աշեց տղին՝ նիատը կախ է: Հասկցավ, օր տղեն գլխու է ընկե: Կերտա: Ըսավ. «Հարի ես ըստրա թլիսմը չգտնիմ ո՞ւր գթողեմ էրտա»:

Մտածեց ու վռազ ըսավ.—Գիդե՞ս տղա՛, էսօր բտի չաշխատինկ, էսօր խանմդ քեֆ է սարկմ, ըսմ է՝ էդկան գովմ ես քու ծառային, բա ընչի՞ չես բերմ տեսնինկ: Ես ըսեցի՝ էսօր դու պատրաստուտեն տես, ես կբերեմ տուն:

Տղեն ըսավ.—Չէ՛, ես բտի էրտամ, ես քեֆի չեմ կռնա մնա:

—Չէ՛,—ըսավ դուկնջին,—ես ընձի գսպանեմ, օր քեզի պես լավ տղեն, առանց իմ հացը ուտելու էրտա:

Տղեն ըսավ՝ չէ, դուկնջին ըսավ՝ չէ: Վերջը տղեն ըսավ. «Լա՛վ, մե էսօր էլ գմնամ, ընձի ի՞նչ բտի էնեն»:

—Դե լա՛վ, թող քու կամկով էղնի, դե դու առևտուրդ էրա, ես էրտամ,—ըսավ դուկնչին, գնաց հարկավոր բաներ առնելու:

Խաբեց տղին, գնաց տուն: Կնգան հասկցրավ գոռծի էղելուտենը ու դառավ էկավ: Տղին ըսավ.—Դե էրտանկ, հմի խանումը մեր ճամպեն կաշե:

Էլան դուռը փակին, գնածին տուն: Տեսան՝ կնիգը ամեն ինչը հազրել է: Ըստական՚մ էլ աղջուր էրել է, դրել է հազր: Տեսավ, օր էկան, վազավ առաջ, ըսավ.—Քա, քեզ էլ մեռնիմ, քու ղոնախին էլ: Օր էսկան լավ տղա էր, բա ընչի՞ թեզ չէիր բերմ տեսնեի,—ըսավ, փատտվավ տղին:

—Ես քեզի ղուրբան, դու իմ ախպոր լման ես: Էլ ես քեզի չեմ թողե տեղ էրտաս, բտի մնաս իմ քովս:

Մե խոսկով տղին շատ տափ ու քաֆեց: Տղեն հասկցել էր ամեն ինճը, բանատեղ չդրավ: Տարան տղին նես: Բերին սեղանը բացեցին: Վրեն հազար տեսակ ուտելիքներով լիկն էր: Հմի ուզմ են տղին խմծնեն, քեֆոֆծնեն, օր աղջուրը խմծնեն, սիրտը թափի, տեսնին, թե ի՞նչ թլիսմ է՝ վերցնեն իրանց: Տղեն էլ հասկծել է, էլ չի խմմ, մե հատ՚մ առնմ է բերանը, ըստականը վեր է դնմ: Մառտն իրա կողմից է զոռմ, խնդրմ: Կնիկն ըսմ է.—Լավ օր չի խմե, մի զոռե: Օր խմե, իմ խատերս գխմե:

Վեռջապես էսման իրեք օր, զօր ու գիշեր նստան, չուրի տղի զայլեն տարան: Քեֆոֆծրին, բերին աղջուր խմծրին: Տղեն սիրտը թափեց: Ջիգրով բոգրակը ընկավ: Կնիկը տարավ լվաց բերավ: Հմը մառտը ըսմ է՝ ես կուլ տամ, կնիգն ըսմ է՝ ես կուլ տամ: Չէ, մառտը խլեց կնգա ձեռնեն ու կուլ տվավ: Կնիգը շատ նեղեցավ մառտուց, իրան էրածը փոշմնավ, թե. «Ես ընչի՞ էս խեղճ տղին էս օրը քցեծի, եպ օր ես չբտի կուլ տայ»:

Բերավ տղի ոտ ու ձեռը լվաց, տեղը քցեց, տղին քնցրավ: Տղեն էլ քնավ, զարտնավ, տեսավ օր առոկ-փառոկ տեղի մեջը պարկած է: Հմը հասկցավ, օր ջիգրով բոկրակը տարել են: «Ի՞նչ ենեմ, ի՞նչ չենեմ»,—մտածեց տղեն, ըսավ. «Յավաշ, ձևանամ, օր ես բան չեմ ֆայմմ, հարի հնարը գտնիմ, դուս առնիմ»,—մտածեց տղեն:

Տղեն էլավ, ուրախ-ուրախ շորերն հակավ:

—Ուրա՞նի խազեինս,—հարցրավ խանմին:

Խանմը քթով ըսավ.—Եսիմ, դուգյան գնաց:

Տղեն լվածվավ, սանդրվավ, գնաց դուկյանը տեսավ, օր խազեինը ուրխծել է, աշխարով մեկ է եղե: Ինկը դհա ուրախ ձևածավ:

—Հա՛,—ասավ,—տղա ջան, ճպ ես էրտլու:

Ասավ.—Քանի՛մ օր աշխատիմ, ճամպու խառջըլղ էղնի, էրտամ:

—Հա՛, ուրախ եմ մնալդ, թե չես մնա, ես կուդամ՝ գնա: Արժան է քեզի,—ասավ դուկնջին:

—Շնորակալ եմ,—ասավ տղեն,—առանց աշխատել, ընչի՞ ընձի դու փարա տաս: Կաշխատիմ, կառնիմ կեռտամ:

Դուկնչին արխեին ընգավ, ասավ. «Էս հլը խաբար չէ, թե ինչ է ունեծե, ինչ է կոռծրե: Թող մնա, իչկան ուզմ է»:

Իսկ ինկը էդ օրվանից օրական մե քիսիգ՚մ օսկի ուներ: Էդման գնաց մե վախտմ, տղեն ընկել է մտկի տակ: Չիդի, թե ինչ էնե: Շատ մտածեց, շատ տվավ, առավ՝ հնարը գտավ: Ասավ. «Յավաշ, հլը տեսնիմ մորս տված դեղը քովս է՞, թե՞ չէ: Թե քովս է, շատ ղոլայ գդուս բերեմ ջիկրով բոգրակը: Թե կործրած էղա, էնե ձեռ քաշեմ, թողեմ էրտամ»:

Իրկուն դուկնչին դուռը փակեց, գնաց:

Տղեն ջեբերը քանդեց, դեղը գտավ, ասավ. «Էլ չեմ մտածե, գտա, հիմի ղոլայ գը դուս բերեմ»:

Առավոտ էկավ ջհուդը: Դուկանը բացեց: Տղեն ասավ.—Խազեին, էսօր էման վատ էրազ եմ տեսե, դու կեծի դուկյանը, ես հլը էրտամ տեսնիմ՝ մեր քաղկեն հեչ մառտ չի էկե՞: Մեր տնեն խաբար առնի:

—Գնա, տղա ջան, քեզի առկել չկա,—ասավ դուկնջին:

Տղեն գնաց, իրան համար պտտվավ, ման էկավ: Քաղակից լուրեր լսեց, դառավ էկավ: Ասավ.—Մորկուրիս տղեն էկել է, շատ հարուստ է: Ընձի ասմ է՝ արի մե քանի՚մ օր քովս կեցի, չուրի ես քաղակին ծանոտանամ: Էնվախտ դու գիտես, գուզես գնա, գուզես մնա: Ես էկա քեզի ասեմ, օր դու քնիս դուկյանը, հմը կես գիշերին մոտիկ սառսապելի ձեներ է գալմ դսեն, օր մառտ գխոցվորի: Գալմ են դուռը, պատուհանը զարգմ են: Դուռը, պատուհանը ճանգռտմ են: Ձեներ են հանմ: Չվախենաս, առավոտ տեսնմ ես բան չկա: Չիդեմ գալմ են դուկյանը կտռեն, թե ինչ բան է, չեմ հասկնմ:

—Հը՞, հը՞,—ծիծաղած ջհուդը,—էս քառսուն տարի ես քնմ եմ, չեմ վախեծե, հմի բտի վախենամ: Գնա դու, ես չեմ վախենա:

Տղեն գնաց իրեն հմար ման էկավ, ծառնեորի հովը նստավ, էլավ գնաց ջուր գտավ, լողծավ: Մլոլ տվավ, ընչուրի մուտն ընկավ: Մուտն օր ընկավ, խալվատ ճամպեկով էկավ դուկնին մոտեծավ: Տեսավ դուկնչին դուկնի դուռ ու պատուհան փակեց: Ճրակը անցրավ:

«Ահա՛,—ասավ տղեն,—շնտռավ»:

Մե խելի՚մ մնաց, էղավ կեսգիշերին մոտիկ: Տղեն գնաց դսի դիեն դուռը ժնջլեց, օր չելնի դուս, նեսը մնա, օր լավ վախենա: Ու ինկը ասկսեց էն տեսակ ձեներ հանել, օր տասը մառտ էլ օր իրար քով էղնեին, դառձյալ գվախենայն: Ձեն էլ է հանմ, դուռն է զարգմ ու ճանգռդմ: Փանջարից ձեն է տալմ, օյիններ է թափմ: Ջհուդը տեղի մեճը ցմկել է: Լիզուն կապ է ընկե: Ձեռները քաշվե, կոկել է: Էդման մնաց, չուրի լուսածավ:

Առավոտ տղեն էկավ, դուռը զարգեց, զարգեց, դուռը բացող չկա: Ձեն տվավ.—Խազեին, խազեին, քեռի՞:

Ելավ փանջարից աշեց, օր ինչ աշե, ջհուդն էղել է քիրաջ ու պարկել է:

—Ա՛յ մառտ, դուռը բաց,—ասմ է:

Հեչ տերը չի էղնմ: Է՞, ճարը կտռավ, բերավ դուռը ճխնահան էրավ, նես մտավ: Տեսավ, օր ջհուդը կիսամեռ պարկած է տեղը:

—Վա՛յ, վա՛յ էդ ի՞նչ է էղե:

Բան չի ասմ:

Ասավ.—Մի՞ վախենա, հմի ես քեզի գլավծնեմ:

Վերցրավ մե բուտուլգե՚մ, էլավ դուս: Դուռը փակեց: Գնաց խելի՚մ պտտվավ: Առավ բուտուլգով ջուր, էկավ: Դուռը բացեց, նես մտավ: Նորից նեսեն փակեց, օր մուշտարի նես չգա: Հանեց ջեպից մոր տված դեղը ասավ.—Տասը դոխտուրի քով գնացի անջաղ ճարի, չէր ճարվմ: Ա՛ռ, ա՛ռ էս դեղը խմե, գլավնաս:

Է՞, ջհուդի ձեռները կոկված է, չի կոնմ դեղն առնի: Ինկը բածեց ջհուդի բերանը, դեղը լծեց ջհուդի բերանը, մե քիչ՚մ էլ ջուր լծեց վրեն, նորից պարկըցրավ: Ջհուդի ցավը տասն էր, դառավ տասնըմեկ: Էման գլխացավ՚մ բռնեց, օր քիչ մնաց թասլիմ էղներ: Գլխու ցավից խելկը մաղեց, պտտեց, սիրտը թապեց: Ջիգրով բոգրակն էկավ ընկավ: Տղեն վերուց, լվաց, իստկեց, կուլ տվավ: Էլավ դուկնչուն թկեց-մրեց, անպատվեց: Ասավ.—Անկուշտ, ագահ, էսկան հարուստ ես, էնկան էլ ես քեզի քիսիկներով օսկիկ տվեցի, չկշտածմ՞: Է՞ս էլ վրես կտռեծիր,

համ: Դե գնա՛, հմի նոր քեզի քու վրեն կտռել տես,—ասավ տղեն, էլավ կրակ քցեց, դուքյանը վառավ:

Ինկը թողեց գնաց: Գնաց, գնաց քաղքեն էլավ: Էլի մե ճամպե՛մ ընկավ առաջ, բռնեց էդ ճամպեն ու գնաց: Գնաց, գնաց, հասավ մե ուրիշ քաղակ՛մ: Էդ քաղակն դիա հարուստ ու մենձ քաղակ է, ընդից: Ընդեղ գնաց, մե թեթև այվան՛մ քիրայեց նստավ: Օրական քնմ-էլնմ էր, մե քիսիգ՛մ օսկի գլխու տկեն վերցնմ էր: Իրան համար ուտմ, խմմ, քեֆին պտտվմ էր:

Մե օր՛մ էլ, պտտվելով գնաց քաղակի մեճն տեսավ՝ ջայել-ջուուլ տղեկն էրտմ են ու գալմ են: Ինկն էլ ընկավ էրտողների հետ, գնաց: Տեսավ, օր օխտը ատաշից վիրև, էրտմ աշմ են հայատից, գալմ են: Ասավ.—Տղեկ, էդ ի՞նչ կա ըդեղ, օր էրտմ եկ ու գալմ եկ:

—Իա՛,—ասին տղեկը,—բա դու չիդե՞ս, օր էսի Դունյա Գյոզալու քոսկ ու սարայն է:

—Ա՛յ մառտիկ, ի՞նչ Դունյա Գուզալ, ի՞նչ քոսկ ու սարայ:

Ասին.—Ըշտա, ըդեղ օխտ ատաշից վիրև մե ախճիկ՛մ է նստած, օր աշխարկի ամենա գեղեցիկն է: Ըդուր համար ըսմ են Դունյա Գյուզալի: Էրտմ ենք մանետ՛մ տալմ ենկ, տեսնմ ենկ, գալմ ենկ:

Տղեն էլ գնաց, մտավ հայատը, հանեց մե օսկի՛մ տվավ Դունյա Գյուզալուն: Դունյա Գյուզալին գլոխը փանջարից դուս հանեց: Տղեն տեսավ ասավ. «Դունյա Գյուզալի, քի Դունյա Գյուզալի: Աջաբ էլ ըդման սիրուն կա՞ աշխարկը, թե մինակ էդի է»:

Ասավ, հանեց մե օսկի՛մ տվավ՝ նորից տեսավ, մե օսկի՛մ էլ տվավ՝ նորից տեսավ: Թողեց էկավ տուն: Հաց կերավ, ջուր խմեց, էլավ քնավ: Առավոտ թեզ էլավ գնաց, էլի օսկի՛մ տվավ՝ տեսավ, էլի տվավ՝ տեսավ: Չուրի հինգ անգամ տեսավ: Մեկել օր տաս օսկի տվավ: Մեկել օրը տասնհինգ օսկի տվավ: Դունյա Գյոզալին ինկն էլ ջհուդ էր: Շատ փարապաշտ էր, ասավ.—Ախճկնե՛ր, էս տղի փարեն աշխատանքի փարա չէ, կա չկա էսի ջիգրով բոգրակ է կուլ տվե: Բերեկ մե քեֆ՛մ սարկենկ, էդ տղին խմծնենկ, բալկի ջիգրով բոգրակը ձեռ բերենկ:

Է՛, ջայրեկի ջանին մունատ: Բերին բոլամադի ամեն ինչը էպին-թապին, առան, հազրին: Էկսի օրը տղեն էկավ: Առաջ հանեց մե օսկի՛մ տվավ: Ետև հանեց քիսիկով տվավ ասավ.—Դունյա Գյուզալի, էս վառա քեզ օսկի տալով ու էրեսդ ղայդով չտեսնելեն: Մե քիչ՛մ անգլու էղի, երեսդ տեսնիմ:

Դունյա Գյուզալին ջայրեկեն մեկին ղրկեց, ասավ.—Գնա ասա, օր էդման ինչկան աշես չես կշտանա, էսկան օսկին, օր տվել ես, խանմս ասմ է թող գա վիրև, քիչ՛մ հետս խորատա էնե, էրտա:

Ջայրեն գնաց, էդման էլ ասավ: Տղի ոտնեը գետնեն ուրախուտենեն կտռավ: Գիդեր թե լավ բանի համար էին տանմ:

Տարան նստցրին: Բերին սեղանը բաձին: Հազար թուռլու բաներ վրեն շարին: Դունյա Գյուզալին էլ նստավ կոխկը, ասկսեց մեղրից անուշ խոսալ հետը.—Դե հիմ էլ ուտենկ-խմենկ: Տղեն տարված Դունյա Գյուզալի սիրունուտենով, տված խմիչկը չէ չսավ, խմեց, խմեց, քեֆովծավ:

Դունյա Գյոզալին ասավ.—Ախճկներ, աղջուր բերե՛կ:

Բերին, ըստկան՛մ աղջուր խմծրին թե չէ, տղեն սիրտը թապեց: Ջիգրով բոգրակը էկավ ընկավ:

—Հա՛,—ասավ,—ախճկներ տարե՛կ օխտը ջուր լվածեկ, բերեկ:

Տարան ախճկները օխտը ջուրը լվածին, բերեծին, Դունյա Գյուզալին կուլ տվավ: Տղին վերծրին տարան հայատից դուս՝ պատի տակը, ընդեղ մնաց, ընդեղ էլ քնավ:

Զառտընավ, ելավ տեսավ ո՛չ օսկի կա, ո՛չ սեղան, ո՛չ էլ Դունյա Գյուզալի:

«Հեյ վա՛խ, հեյ վա՛խ,—ասավ,—գնաց, էլ եդ չի գալ, չի էղնի: Ես էլ ըստեղ մնամ ի՞նչ էնեմ: Առնիմ գլոխս էս քաղկեն հեռանամ: Ըստեղ մնալն ամոտ է ընձի համար: Ինչ սմիս[40], վրեն մնամ»,—ասավ ու էլավ ընկավ ճամպա, գնաց:

Թող տղեն էրտա, մենկ տեսնինկ, թե ո՞վ է գալմ Դունյա Գյուզալին տեսնելու: Շատ էկան, շատ գնացին: Լուրը գնաց հասավ երկրներ, օր, ըշտը, ասման սիրուն ախճիկ՛մ կա: Օրական էրտմ, տեսնմ, գալմ են: Մե հեռու տեղե՛մ ելան էրկու տղա դառդակ ու բոշ ընկան ճամպա:

---

[40] Սմիս (смысл) – միտք, իմաստ (ի՞նչ իմաստ ունի) (ծանոթ. կազմողների)

էկան, էկան տաս-քսան օր, անջաղ էկան հասան հոդ: Էկան, հառցնելով գտան Դունյա Գյուզալի տեղը: Էկան օր տեսնին, փարա չունին:

—Տո բա մենկ գիտենկ, թե առանց փարա է,—ասին ու մնածին մոլրված:

Մե ընկերը ասավ ընկերոջը.—Դու մի՛ վախենա, ես էման խաղ գը սարկեմ, օր փարով տեսնողներից լավ մենկ լավ տեսնինկ:

Ասավ.—Ինչ խաղ բտի սարկես, մենկ էլ մառտ տեսնինկ,—հուսահատ ասավ հընգերը:

Ասավ.—Քելե էրտանկ:

Առավ ընկերոջը, գնացին քաղկից դուս: Գնացին տեսան չոբանը սուրունը փռել է դուրանը առծծնմ է: Հընգերոջն ասավ.—Դու ըստեղ պառկի ու վժա, ասա՝ մեռա՛, հա մեռա՛:

Հընգերը պառկավ ըդեղ ու գոռաց.—Վա՜յ, յաման մեռա՛, հավար մեռա՛:

Ինկը գնաց չոբնի քովը ասավ.—Չոբան ախպեր, ինչ կեղնի քու բախտն ենկ ընգե: Ախպերս տիա պարկած՝ հավար-մադատ է ճվմ, գեշ շանջու է կպե: Փարա չունինկ, օր դոխտորի տանինկ, դեղ առնինկ: Էն պզդի ուլը տաս, աստված շհադ էղնի, օր աշխատենկ, բերենկ գինը տանկ:

—Է՛,—ասավ չոբանը,—օր ախպերդ բտի լավնա մե ուլով՛մ, տար, ընձի գինը պետկը չէ:

—Հա՛,—ասավ,—պիտի մոռտեմ, կաշին քաշեմ փորին, օր շանջուն թողե:

—Տա՛ր,—ասավ չոբանը:

Վերուց էդ տղեն ուլը, զարգեց ղոլտուղը, էկավ վերուց հնգերին ու էկան մե քանդած տուն՛մ: Տարան ընդեղ հնգերի էրեսներին պեխ ու միրուկ դրավ, սարկեց: Շորերը թառսեց, փափախը անծուծ անգջները, փետը տվավ ձեռը, էլավ հալիվոր, ինկն էլ էղավ տղեն: Ուլը զարգեց ղոլտուղը, գնածին Դունյա Գյուզալի հայատը: Ուլը վեր դրին ու ասկսեցին իբր ուտել: Մեկը մի անգջից է կախ ընգե, խաձմ է, մեկը մե անգջից է կախ ընկե, խաձմ է, ուլը վժժմ է: Դառնմ են մեկը մե ոտեն է խաձմ, մեկը պոչն է խաձմ: Ուլը մի օրոտուն՛մ է դրե, օր մառտու սիրտը չի դիմանմ:

—Ջա՛նմ,—ասավ Դունյա Գյուզալին,—էս ինչ վայնասուն է, մե տեսեկ, ախճկներ:

Ախճկները պատուհանից աշեցին, տեսան, օր ինչ տեսնին, հեր ու տղա մե ուլ՛մ դրել են սաղ-սաղ ուտմ են:

—Վա՜յ, խանմ, հլը արի տես, էս մառտիկը ուլին սաղ-սաղ ուտմ են:

Դունյա Գյուզալին էկավ աշեց պատուհանից, շատ զարմածավ: Տղեքը օր տեսան Դունյա Գյուզալին, ավելի զարմանալի բաներ էրին ու իրար ասմ էին.—Թո՛ղ ես ուտեմ, լավ տե՛ս, թե ինչղ կուտեն:

Մեկը մեկին հասկցնմ էր, թե լավ տես Դունյա Գյուզալուն:

Տղեքը լավ տեսան, լավ թամաշա էրին: Դունյա Գյուզալին ասավ.—Ախճի՛, մեղկ են, տարեկ փետ տվեք, պղինձ տվեք, թող էպեն ուտեն:

Ախճկեքը տարան վառելիք տվին, պղինձ տվին, ասին.—Ա՛ն, մոռտեք, էպեք, կերե՛ք:

Տղերքը բերին գյուռ կրակ վառին, պղինձը կոռձին՝ բերնավոր, ուլը սաղ-սաղ դրին պղնձի վրեն: Ուլի ջանը վառվմ էր, էլնմ, փախնմ էր: Դունյա Գյուզալին զարմցած աշմ էր, ասմ էր.—Ա՜խ, աստված, ըստոնք աշխարկ չեն տեսե:

Իսկ տղերքը ծառս էրած աշմ էին իրան: Ճարը կտռավ ասավ.—Ախճկներ, գնացեկ մոռտեկ, քեռտեկ, էպեկ տվեկ իրանց:

Ինկն էլ պատուհանից դեն չէր էրտմ: Ախճկները գնացին ուլը մոռտեցին, քեռտեցին, լցին պղինձը էպեցին, բերին չանաղ, գդալ տվեցին: Լցեցին, դրին ասեցին.—Դե կերեկ:

Հիմի վերցնմ են գդալը, տանմ են մեկը մեկու անգաջը: Էնի ասմ է.—Ամի, կե՛ր:

Էնի ասմ է.—Տղա, կե՛ր:

Ճարը կտռավ Դունյա Գյուզալին ասավ.—Աղջկներ, գնացեկ կերցրեկ, մեխկ են:

Ախճկները գնացին կերցրին, պռծան: Հմել ուզմ են քնին: Տղեկը հանեցին շորները, փռեցին ու մեկը էլնմ ընգնմ է մեկի գլխուն: Ասմ է՝ ես գքնիմ օրտլաղ, էսի ասմ է՝ ես գքնիմ օրտլաղ: Ու մեկը մեկին գողտուկ ասմ է՝ լավ թամաշա արա, տես, թե ինչկան սիրուն է: Աջաբ էլ էդման սիրուն կա աշխարկը, թե մինակ էս մեկն է: Դունյա Գյուզալին էլ իրանց շատ աշեց, ծիծաղեց: Շատ ծիծաղելուց թուլացավ, ընկավ: Ախճկներին ասավ.—Ջա՛նմ, գնացեկ դուս էրեկ, թող էրտան: Բոլ է, էդ խելռներին թամաշա էնենք:

Ախճկները գնացին հայատից դուս հանին դուռը փակին, էկան: Տղեկը ուրախ-ուրախ գնացին, շատ էին ուրխծե, օր առանց փարա մե սաղ օրմ տեսան Դունյա Գյուզալի երեսը: Թող

տղեկը ուրխնան, մենկ տեսնինկ գնացած տղեն ինչ է էնմ:

Տղեն էդ քաղկից դուս էկավ: Ընկավ էս սարից էն սար, էս ձորից էն ձոր, էս մեշից, էն մեշեն: Էնկան էր ման էկե, անոտծե ու բեզրե, օր վրեն էլ հալ չէր մնածե: Գնաց մտավ մե մեշե՛մ, տեսավ, օր էդման խնձոր է ճտռե, կարմրե, կախ ընկե, օր մեկը մե մառտ չի կռնա ուտե: Քաղեց մի հատ՛մ կերավ, տեսավ մե կոդոշ՛մ էլավ աջ կոխկ գլխուն: «Անոտի եմ,—ըսավ,—օր տասը կոդոշ էլ էլնի բտի ուտեմ»: Քաղեց, մեկ՛մ էլ կերավ: Մի կոդոշմ էլ էլավ ձախ կոխկը գլխուն: Էման կոդոշներ են, օր չի կռնմ ծառների արանկեն անցնի: Չէ՛, զոռով-շառով անցավ: Գնաց քիչ՛մ առաջ, տեսավ՝ ընդից էլ լավ խնձորներ կան, ըսավ. «Օր ջանիս վրեն էլ կոդոշ բուսնի, էս խնձորներից բտի ուտեմ»: Ըսավ ու քաղեց ու մե լավ խնձոր՛մ կերավ: Օր կերավ, աջ կողկի կոդոշը ընգավ: Մեկ՛մ էլ պոկեց կերավ՝ ձախ կողկի կոդոշը ընկավ: «Էս ինչ լավ բան էղավ: Ես ընդոնցով դուս կառնիմ իմ ջիգրով բոգրակս»,—մտածեց տղեն ու շլվարը հակից հանեց, ուրիշ բան չկար քովը, փաչեկի բերանը կապեց: Քաղեց մե փաչեն լցեց կոդոշ բուսծնող խնձորից, մի փաչեն լցեց կոդոշ քցող խնձորից: Քաղեց ծոծերն էլ լծեց լավ խնձորներեն՝ իրան ճամպու պաշար ու ընկավ ճամպա՝ դիպա Դունյա Գյուզալի, որտե՞ղ ես, օր էկա քեզի: Տղեն զօր գնաց, գիշեր գնաց, անջաղ հասավ Դունյա Գյուզալու քաղակը: Գնաց իրան քիրայած այվանի դուռը բացեց, իբր թե տեղ էր գնացե, էկավ: Նես մտավ, բեռը վեր դրավ, դինջացավ, հաց կերավ, էլավ պարկավ քնավ:

Առավոտ էլավ, բերավ էման շոր հակավ, օր իրան մառտ չճանճընա: Բերավ սլի մե դինը ըծեց լավ խնձորից, մե դինը լծեց գեշ խնձորից, դրավ գլխուն, գնաց դեմ ու դեմ, Դունյա Գյուզալու հայատը, ճվաց.—Հա՛յ, լավ խնձորը, հա՛յ, էժան խնձորը գնա՞ց ու չմնա՞ց:

Շատ օր ճվաց, Դունյա Գյուզալին ըսավ.—Գնացեկ մե երկու գրվանկա առեք, թող կորի էրտա, խլծրավ մեզի:

Ախճկները էկան ըսին.—Բեր հինգ գրվանկա կշռե տուր:

—Չէ՛,—ըսավ,—թող խանմը գա վերցնե ուտե, համը տեսնի, հավնի, նոր առեկ: Առանց համն աշելու չեմ տա:

Գնածին խանմին ըսին, խանմը ըսավ.—Հա էլի, ճվա, ճվա, թողե էրտա, ես ելնողը չեմ:

Տղեն հա թակրրմ էր.—Հա՛յ, լավ խնձորը, անմահական խնձորը, ով օր ուտե, տաս տարի ավել կապրի, գնա՞ց ու չմնա՞ց:

Շատ օր ճվաց, Դունյա Գյուզալին գլոխը հանեց փանջարից դուս: Ըսավ.—Բեր տեսնիմ՝ ինչ տեսակ խնձոր է:

Տղեն վերցրավ մե խնձոր՛մ քցեց ըսավ.—Էս խնձորն օր ուտես, ինչկան օր գեղեծիկ ես, երկու էնկան էլ դիա գը գեղեծկանաս: Դունյա Գյուզալին խնձորը կերավ պռծավ, գլխու աջ կոխկը կոդոշ՛մ էլավ:

—Վա՛յ, վա՛յ, էս ի՞նչ էր, էս ի՞նչ էրեցիր,—ըսավ:

—Բան չկա, մի՛ վախենա, ա՛ռ էս մեկն էլ կեր, գը ընցնի:

Առավ մեկ՛մ էլ կերավ: Կոդոշ՛մ էլ ձախ կողմը էլավ:

—Հա՛յ, հավա՛ր, էս ի՞նչ էրեցիր: Էս ի՞նչ զուլում բերիր գլխուս:

—Բա քու ֆել ու ֆանդիցն ես խաբար, իմ ֆել ու ֆանդիցը խաբար չե՞ս,—ըսավ տղեն ու նորից բարկացավ,—Դունյա Գյոզալի թեզ ջիգրով բոգրակս տուր, թե չէ քանի սաղ ու կենտան ես, կոդոշները գմնա գլխուդ վրեն:

—Վա՛յ,—ըսավ Դունյա Գյոզալին,—էսի ջիգրով բոգրակի տերն է, թեզ աղջուր հասծրեք ընձի:

Ախճկները ձեռած ստական՛մ աղջուր տվեծին, խմեց թե չէ, սիրտը թապեց: Ջիգրով բոգրակն էկավ ընկավ: Ախճկները տարան լվածին, տվին տղին: Տղեն կուլ տվավ: Վերցրավ մե լավ խնձոր՛մ տվավ, ըսավ.—Ա՛ռ կեր, կոդոշդ գընգնի:

Առավ կերավ մե կոդոշը ընկավ: Մե խնձոր՛մ էլ տվավ, կերավ, մե կոդոշն էլ ընկավ: Գլոխը նես տարավ: Նեսից խոսած, ըսավ.—Ա՛յ տղա, թե ընձի պես գեղեցիկ չկա աշխարկը, քեզի պես էլ ֆել ու ֆանդով ու հնարգետ տղա չկա: Արի առնինկ մենկ իրար: Մենկ էլ պռծնինք, էս ջայել-ջույուլն էլ պռձնին: Բոլ է ախ ու վախ էնելով գան ու էրտան:

Տղեն ըսավ.—Ինչկան օր սիրուն ես, էրկու էնկան էլ սիրուննաս, ես քեզի պես օյինբազ ախճկան չեմ առնի: Դու փարասեր ես: Ես քեզի մոտ տասը քիսիկ օսկի տվեցի, դու էլի մե րո-

պեյին մե մանետ ես առնմ: Էտկանով չբավա-կանացած՝ խաբնուտենով իմ ջիգրով բոգրակս գողծար: Ես քու ինչին թամայիմ, օր քեզի առ-նիմ: Քու սիրունետեննին եդ էլ է անցողական: Միշտ սիրուն չես մնա,—ըսավ տղեն, անպատ-վեց, թքեց-մրեց, թողեց հեռացավ:

Գնաց իրան լավ շորեր, լավ հագուստներ առավ, իրան պակաս պռատը թմմեց, դրստեց ու նստավ մտածեց: Ըսավ.«Ես էսկան տարի էկել եմ մեր տնեն, հորիցս, մորիցս, մեր էրեխանծեն հեչ խաբար չունիմ: Ինչ եղան, ինչ չեղան, հլը բտի էրտամ տեսնիմ՝ կան, չկան»,—մտածեց:

Էլավ գնաց քաղքի մեյդանը: Մե լավ ձին՝մ առավ, իրան հմար ճամպու պաշար առավ: Հե-ձավ ձին, ընկավ ճամպա՝ դեպի իրանց քաղա-կը:

Գնաց, գնաց զօր ու գիշեր, վեռջապես հա-սավ իրանց քաղակը: Գնաց իրանց տունը, տե-սավ, օր հերը մենձծել է, էլ չի կռնմ ցախ բերե: Մերն էլ էնքան է իրան հմար դեմ ընկե, լածե, օր աշկերից խեղճցել է: Ախպրտիկը խոշրծել են, որը քաղկին գառնարած է, որը հոռտարած է: Քուրերը էլի էման խոշռծել են հմը նեղուտենի մեճ են: Հերն ու մերը տեսան, հա՛մ ուրխծան, հա՛մ շատ լածան:

—Է՛,—ըսավ,—էլ մի լածեք, ըստից եդև շատ լավ կեղնի:

Հանեց հորը օսկի տվավ, ըսավ.—Ապո, ա՛ռ տան պակաս-պռատը հոգա:

Հերն ըսավ.—Ոռտի ջան, մեր տան պա-կաս-պռատը դու էիր, օր էկար: Հիմի էլ պակաս-պռատը էն է, օր քեզի նշանենկ, հառս բերենկ, տեսնինք, ուրխնանկ: Մենձծել ենք, մեռնինք՝ ցավ չեղնի:

—Է,—ըսավ տղեն,—դուկ գիտեկ:

Տղեն օր ըսավ՝ դուկ գիտեկ, համաձայնե-լու նշան է: Հերը տղին նշանեց, պսակեց, օխտը զօր, օխտը գիշեր հառսնիկ, քեֆ-ուրախուտեն էրին: Ընդոնք հասան իրանց մուրազին, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին: Վերևեն իրեք հատ խնձոր ընկնե, մեկը՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ հեքյատ կապողին:

4(4). ԲԻԼԴԻԼԻԿԻ ՄԱՌՋԱՆԻ ՀԵԿՅԱԹԸ

Ժամանակոց կեղնի, չի եղնի, մե մառտ՝մ ու կնիկ՝մ կեղնին: Ըդոնկ կունենան իրեկ ախ-ճիկ: Կեղնի, օր կնիգը գմեռնե: Վախտ՝մ գմնա դրկցները, բարեկամները, ծանոթները կպնին յախեն, կսեն.—Դու հլը ջայել ես, քու էրեխեկտ մեխկ են, դու մեխկ ես: Կարկվի քեզի մի օղլու-շաղ՝մ բեր, քու տունդ յոլա տանե:

—Չէ՛,—կսե,—ես իմ երեխանց վրեն խոռտ մեր չեմ բերե՝ իմ երեխանծս քոռլուղ տա:

Շատ կսեն, էդ մառտը չի լսե: Էրեխեկն էլ հեջղել էին առանց մեր՝ տան մենձի ու պզդկի գործը էնելով, ամեն օր կպնմ էին հոր յախեն, թե՝ մեզ մեր բեր, հա մեր բեր: Հերը տեսավ օր չի կռնմ յախա թալե, բերավ ջուխտ՝մ էրկտե չա-ռոխ կարեց, կախեց առկից, ըսավ.—Եպ օր էս չարխները քրքրավ, էն վախտ ես ձեզի մեր գբե-ռեմ:

Ըդից ետև ամեն օր էրեխեկը չարխները իջցնել էին տալմ, տեսնմ էին, թե քրքրել է, օր հերը իրանցը մեր բերե: Տեսնմ էին չի քրքրվե, էլի կախմ էին: Հմը իրանցը մե դրկեց կա՝ որպ-ևէրի, ունի մե ախճիկ՝մ: Էդ կնգա աշկը էս մառ-տին է, օր առնի: «Ինչ էնեմ, ինչ չենեմ, օր էտ մառտին առնիմ,—ըսավ,—յավաշ, ըդուր ախ-ճըկներին խրատ տամ, թող հորը գուռոբդեն, հերը կարկվի, առնի ընձի»,—մտածեց էդ կնիգը ու ըսկսեց ախճկներին ամեն օր կանչել իրան տունը ու խրատել:

—Ախճի՛, ընչի՞ հերդ չի կարգվմ, ընչի՞ ձեզի մեր չի բերմ, ը՞նչ՝եք մնածե անմեր, ապսոս չե՞ք: Մոր գոռծն էլ եկ դուկ էնմ, ձեր գործն էլ եկ դուկ էնմ: Ըսեկ հորդ թող ձեզի մեր բերի:

Մե էրկու օր, հա ըսկսեց էրեխանծը խրա-տել: Էրեխեկն էլ գալմ կպնմ էին հոր յախեն, թե՝ մեզի մեր բեր, հա, մեզի մեր բեր: Հերը չէր ուզմ, օր խոռտ մոր ձեռը դիպներ էրեխանծը. Ըսմ էր.-Հա՛, էրեխեկ ջան, եպ օր չարխները քրկրավ, ես ձեզի մեր գբերեմ:

Մե օր՝մ էլ, օր էդ կնիկը շատ ըսավ ու խրա-տեց, ախճկները ըսին.—Մորկուր ջան, ըշտա, հերս չարուխ է կարե կախե, ըսմ է. «Եպ օր չարխ-ները քրքրան, էն վախտ ես ձեզի մեր գբերեմ»:

—Հը՛, հը՛,—ծիծաղած կնիգը,—հողը ձեր բեյնավա գլխուն էղնի, էրկտե չարոխը կախած

տեղը ընչ'է քրքրմ, հերդ ձեզի է խապմ, օր ձեզի մեր չբերի:

—Բա ինչ էնենք, մորկուր ջան:

Ըսավ.—Ինչ էնեկ, հերդ օր տեղ կէրթա, չարխները իջցրեկ, դրեկ չակճի տակ՝ ծեծեկ, ծակռտեկ, էլի կախեկ տեղը: Հերդ օր տուն գուկա, ըսեք. «Հայրիկ, բեր հլը տեսնինկ չարխները չի՞ քրքրե: Գբերի, գտեսնի, օր քրքրել է, կերտա ձեզի մեր գբերե»:

Ըսավ, խրատեց, ղրկեց տուն:

Ախճկներն էին, էկան տուն, տեսան հերը տունը չէր: Չարխները իճցրին, դրին չակճի տակ, ծեծեծին, ծակռտեցին, էրեծին շեշխանա, կախեցին տեղը: Անծավ քանի'մ օր, էլի կպան հոր յախեն, թե բեր չարխները տեսնինկ՝ չի՞ քրքրվե: Հերն էլ գիտե, օր էրկթի չարխները կախած տեղը չի քրքրվի, էլավ չարխները իջուց: Բերավ տեսավ, օր չարխների մեջը իդարա չի մնածե: Հասկցավ ամեն ինճը: Ըսավ.—Էսի ձեր խելկի բանը չէ, ձեզի ո՞վ է խրատ տվե:

Ախչկները ըսին.—Մառտ չի խրատ տվե, մենկ էլ բան չենք էրե, իրանկ են քրքրե:

Պզդի ախճիկն ըսավ.—Հայրիկ, մեր դրկծի կնիկը խրատ տվավ:

—Է,—ըսավ,—ձեր մուր՝ ձեր գլոխը, ես չեմ ուզմ, օր խոռտ մերը գա ձեզի ճնշե, դուկ օր ձեր լավը չիդեկ, ես ինչ էնեմ:

Հերն էր, հասկծավ, օր դրկծի կնիգը ուզմ է իրանը առնի: Ելավ մառտ ղրգեց քովը: Ըսավ.—Ինչ է ըսմ, ընձի կառնի՞:

Կնիգը ըսավ.—Ինկն օր ընձի առնի, ես իրան ընչի՞ չեմ առնի:

Էկան մառտուն ըսին: Մառտը ելավ ինկը գնաց կնգա քովը, կնգա հետ խոսած: Ըսավ.—Դու լավ գիդես, օր ես իրեք ախճիկ ունիմ: Էս աղճկներն ու իմ կյանկը մեկ է: Ախճիկ են, տղա չեն, եպ էղնի վիրի քամին է՝ գտանի, ներքի քամին է՝ գտանի: Արի դու դուզը խոստովանի, թե կռնաս հալալ մերուտեն էնես, էն է, օր ես քեզի կառնիմ, իսկ թե չես կռնա հալալ մոր պես մերուտեն էնես, ես քեզի չեմ առնի: Ես էրեխանցեն ձեռ չեմ քաշե:

Կնիգը ըսկսեց էն տեսակ լիզու թափել, օր հալալ մերն էլ էդման չի էղնի, օր էդի բտի էղնի:

—Ես մեր չե՞մ, ես ջիգյար չունի՞մ, ես հալալ մորից էլ լավ կեղնիմ, օր դու զարմանաս:

Վեռճապես էն տեսակ լիզու թապեց, օր մառտն ըսավ.—Օր դու էդքան լավն ես, դե արի էրտանկ:

Առավ բերավ տուն: Կնիգը մե վախտ'մ լավ էղավ էրեխանցը, լավ աշեց, դիտեց, լված, կարեց, կարկտեց: Եդև ըսկսեց ղայդեն փոխել, էրեխանցը լավ չէր աշմ: Չէր լվանմ, չէր կարմ, հաց չէր տալմ: Քոռլուղ էր տալմ: Երեխեկը օրեցօր հալվմ ու մաշվմ էին:

Մառտը ըսավ.—Ո՞ւր ա քու խոստումդ, էսման էրեխա գպայեն:

Ըսավ.—Ես լավ եմ, գեշը իրանկ են: Թե գտանես մե դիում գկործնես, ես կմնամ էս տուն, թե չես կործնե, ես չեմ մնա էս տունը:

Մառտն ըսավ.—Տո՛ւր քու ախճիկն էլ իմ իրեք ախճկների հետ կործնեմ, իրեկ՝ ընձեն, մեկ՝ քեզեն:

—Իյա՛,—ըսավ,—իմ ախճիկս դույնի մալի հետ չեմ փոխե:

Մառտն ըսավ.—Հլբատ օր չես փոխե, էնի քուկդ է, ջանիդ ցավ կուդա: Իմ իրեկ էրեխեն ջանիդ ցավ չի տա, յադ են,—ըսավ մառտը, կռվավ, կնկան քաշեց ծեծեց, ջառտեց, առավ իրեկ ախճկան ու սուրգուն ընկավ, գնաց:

Շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը աստված գիտե: Գնածին հասան թակավորի քաղակը: Ըդեղ հերը աշխատմ էր, երեխանծը պայմ էր, իրանց հմար ապրմ, յոլա էին էրտմ: Մե վախտ'մ էդման ապրան: Մեկ էլ բիրդան հերը հիվնդցավ, մեռավ: Էրեխեկը, որը տաս տարեկան էր, օրը տասերկու-տասհինգ տարեկան, մնածին մոլրված: Ինչ էնեն, ինչ չենեն: Պզդի քուրոջ ձեռը բռնին, գնածին քաղքի մեջը, տեսան, օր սելերով չամիճ են կրմ, ընկան էդ սելերի եդևեն, գնացին: Գնածին, դուս էկան թակավորի ձիանոծի քովը: Տեսան, օր էդ չամիճը տանմ լծմ են ձիանոնց մսուրկը: Պզդի քուրը գնաց առաջ, ձիապայը վերուց փեշը չամիչ լցեց: Ախճիկն առավ գնաց՝ ուրախ-ուրախ: Էդ օրը յոլա գնածին: Էկսի օրն էլի էկան, մյուս օրն էլ: Հա էկան բերեցին, չամիչ կերան: Մենձ քուրը խելկահաս էր ըսավ.—Արեկ մնանկ հոս, էլ չերտանկ:

Էդ օրվանից մնածին ըդեղ: Օրական ինչկան օր չամիճ էին բերմ, պզդի քուրը էրտմ էր փեշով բերմ էր, ուտմ էին: Եպ օր էլի անոտնմ էին, միչնեկ քուրը մտնմ էր ձիանունցը առճեն փեշը լցնմ, բերմ էր, ուտմ էին ու օրեց օր լցվմ, սիրուննմ էին: Զատի իրանկ էլ շատ սիրուն

էին: Չամիչն էլ զօր ու գիշեր կերել էին, դառել էին ակլա խնձոր: Հմը ինչղ օր միջնեկ ախճիկը ըսկսեց ձիանոնց առաջեն չամիչ հանել, ձիանը օրեցօր զաբնան: Ձիապայի քնած վախտը վիրդ էին էրե, եպ օր ձիապայը քնմ էր, ախճկն էրտմ էր չամիճը բերմ էր:

Մե օր'մ էլ թակավորի տղեն էկավ ձիերի դրուտենը տեսնելու: Տեսավ, օր ձիանը շատ են զաբնե, ըսավ ձիապային.—Ձիանի եմը ավելծրա, ձիանը զաբուն են:

Ձիապան ձիերի եմը ավելծրավ, ճար-իլաջ չեղավ, քանի գնաց, ձիերը զաբնան: Թակավորի տղեն նորից էկավ ձիանոնցը տեսնելու: Տեսավ, օր ձիերը դիա են զաբնե: Ըսավ ձիապային.—Դու ձիանու եմը քիչ ես տալմ, օր քանի էրտմ, զաբնմ են:

Ձիապան ըսավ.—Թակավորի տղա, ես երկու ձիու կերը մե ձիու'մ եմ տալմ, էլ ինչ էնեմ:

—Լավ,—ըսավ թակավորի տղեն ու գնաց:

Իրկվորե ժասմում'մ անծավ, չանծավ: Թակավորի տղեն կարծիկ տանելով, թե. «Բալկիմ ձիապայը խնայմ է, յա մե գաղտնիկ'մ կա, օր ընձի այան չի հանմ», շայիշով էկավ, գողտուկ մտավ ձիանոցը, պայվավ: Տեսավ, օր ձիապայը էկավ ձիանոց եմը լծեց, տկները ավլեց, իստկեց, թիմրեց, շփեց թողեց: Ինչ օր պետք էր էրավ, պռծավ, գնաց պառկավ քնավ:

Ձիապայի քնելուց եդև, քիչ'մ անծավ, տեսավ՝ փանջարից մե սիրուն, հուրի հրեղեն ախճիկ'մ հին, քրկրած շորերով էկավ մտավ ամեն ձիու առաջեն ըռպ'մ չամիչ վերուց, լցեց փեշը: Էկավ օր փանջարից էլներ, թակավորի տղեն ձեռը բռնեց:

—Հա՛,—ըսավ,—ինս էս, ջինս էս, թե ջանավոր ես, էս վախտ ըստեղ ինչ բան ունիս:

Ըսավ.—Ես էլ չիդեմ, թե ինչ եմ, ես մինակ չեմ, մենկ իրեկ քուր ենկ, ըշտա էտում, մնածել ենք անոտի: Էկել եմ քիչ'մ չամիչ տանիմ, ուտենք:

—Հա՞:

—Հա՛:

—Դե քելե տեսնինկ՝ քուրերդ որտեղ են:

Գնածին տեսան, օր ինչ տեսնին, թակավորի տղի խելկը գնաց, օր տեսավ էդման սիրուններ: Ըսավ.—Արեք էրտանք:

Տարավ մե թեթև սենյակ'մ տվավ: Թախտ, յատաղ, հաց ու ջուր տվավ, ըսավ.—Ձեզի հմար կերեկ, ապրեկ, հարի տեսնինկ ինչղ կեղնի:

Ախճկները յոլա գնածին: Թակավորի հացը բադևա էր. կերան, խմեծին, լավծան: Էդման անծավ քանի'մ տարի: Ախճկներն ըսկսեծին իրանց հմար մտածել, թե ումն առնին, ումը չառնին, օր ղավասից դուս գան: Ըդեղ մնալով իրանկ, իրանծ հեջղել էին: Մենձ քուրը ըսկսեց իրան հմար խաղեր կապել ու ըսել: Միշնեկ քուրն էլ ըսկսեց: Մենձ քուրը հա խաղ կապեց, հա ըսավ՝ ցածր ձենով: Հա կապեց, հա ըսավ: Տեսավ, օր իշկան օր ինկն է սիրուն, օխտը էնկան ձենն է սիրուն ու անուշ: Նստավ մտածեց, ըսավ.—Ջանմ թակավորի տղեն իմ ինչիս բտի չհավնի, օր ընձի չառնի: Թակավորի տղեն օր ինձի առնի, իմ քուրերին իմ թևիս տակը գպայեմ: Մեխկ են, հարի բախտները բացվի մե դիով'մ էրտան: Էդման մտածեց, նստավ իրա հմար ըսկսեց խաղ ըսել բարձր ձենով՝ զրնգուն ու անուշ:

Թակավորի տղեն օր ընձի առնի,
Ես խալի գգործեմ շատ զարմանալի:
Հազար տեսակ նխշ ու նմուշներով գովանի,
Տեսնողի խելքը գլխոծը գտանի:

Կեսն էլ ապռեշումից, կեսը զուֆ շալից,
Նխշեր էնեմ, մանիշակի փնջերից,
Տեսության գան, քաղակներից, երկրից,
Դուս կբերե բլբուլներին բաղերից:

Իրան բյուր սինոտը վրեն նստի,
Կեսն էլ ծալած մնա, ծալը չբածվի,
Ես պարապ մնալու էլ չեմ դիմանա,
Քաջ խալի գոռծող եմ, թե օր իմանա:

Հորս տունն օր էղնեի, գար ընձի ուզեր,
Հերս հազար թումանով բաշլղ գուզեր:
Քանի թակավորներ էկան ուզելու,
Հերս չտվավ, ջհեզ էր անելու:

Ոտովս եմ էկե, բախտը բերել է,
Հազար թուման բաշլղից ազատվել է:
Թե օր ընձի չառնի, խելագառվել է,
Տես թե ինչ գառշելու'մ սերով տարվել է:

Սիրուն տեսկիս, պատկերիս սպասում եմ,
Թե չե հիմի կերտամ ու ջուրը գըգնեմ,
Չէ, լայեղ չէի էնմ էն թակավորին,
Հիմի էկա հասա էս դառ օրերին:

Անոտի, ծառավ էինկ մնում օրերով,
Տեսկներս փոխվել է էս հին շորերով,
Ռանգներս գնաց, երեսներիցս,
Զրգվանկ թակավոր ուզողներիցս:

Թակավորի տղեն, թե առնելու գա,
Ես իրան չեմ առնի, իրան խելկ չկա,
Սիրտս թակավորի տղից սառել է
Էլ չեմ առնի իրան, ինկ պառավել ա:

Չեմ-չեմ թակավորի ձեռնիծը փախանկ,
Էկանք ըստեղ, տես, թե ինչ օրը հասանկ,
Ամենավատ ու դառ օրերը տեսանկ,
Էրտանք Չեմ-չեմ թակավորին մեղա գանք:

Մենձ քուրն օր էդ խաղը ըսավ, միջնեկ քուրոջ զեինը բացվավ: Ըսավ. «Ուրեմն թակավորի տղեն մեզի կառնե, օր քուրս միտկը դրել է: Յավաշ, ես էլ էդման, էդից էլ լավ խաղ ըսեմ, թող ընձի առնի թակավորի տղեն»,—մտածեց միջնեկ քուրը ու ըսկսեց խաղ կապել ու ըսել: Էն վախտ, օր ձեն հանեց, սար ու քար զնգածին, կսեիր՝ գրամաֆոն է:

Թակավորի տղեն օր ինձի առնի,
Իմ արևս վկա, օր չի փոշմանի,
Էման հաց կթխեմ, ինկը զարմանա,
Սինոտը գա ուտե՝ կեսն էլ ավելնա:

Իմ պեսը չի գտնի, աշխարկը ման գա,
Ինչ սոսրատի՛մ ինկը բտի ռաստ գա,
Ամեն մառտու քովը ամոտով կենա,
Ես էլ ձեռնեն գելնիմ, էլ ձեռը չի գա:

Թակավորի տղեն փառկն էլ չիդե,
Մենկ իրան փառկն ենկ, դուռն ենք էկե.
Թե առնել է ուզմ, թող առաճարկե,
Գոնե մե պառվի՛մ թող պատկամ ղրկե:

Թակավորի տղեն էլ մեղավոր չէ,
Հիմի մեզի ետնյալ մառտ գկառծե,
Մեր թակավոր ուզողներից խաբար չե,
Գիտի ստոր մառտ է, առնել կամանճե:

Լավ է էլի դառնանկ էրտանք մեր հողը,
Չեմ-չեմ թակավորին տանի գրողը,
Զզրկեր հորս գանձից, խազինից,
Քցեր մեզի պատվից, զրկված թախտից:

Չեմ-չեմ թակավոր օր ուզելու էկավ,
Քանի թակավորի դեմ կռիվ էրավ,
Ախտեց ու չախտվավ քար ու քանդ էրավ,
Զրկեց մեզի փառկից, էս օրն հասծրավ:

Երանի թե մեզի չբերեր մերս,
Մեր հմար թախտիցը զրկվավ հերս,
Հիմի մեզի ման է գալմ ախպերս,
Տեղերս էլ չիդեն ազգականներս:

Թուրդ շլինկդ ընկնի, ախ Չեմ-Չեմ սուլտան,
Ընչի՞ մեզ էրեծիր թափառական:
Ամեն մառտու քովը էղել ենկ հեչ բան,
Արեկ, քուրեր, էսօր մենկ էրտանկ վաթան:

Ը՞նչ՛ենկ նստե, իզուր կյանկերս ենք մաշմ,
Թակավորի տղի ճամպեն ենկ աշմ,
Յաման, չեմ առնի թակավորի տղին,
Չեմ հավնա ըդրա տեսկին ու խելկին:

Ա՜խ, ինչ ենեմ, ո՞ր ջուրն ընկնիմ, պոծնիմ.
Էսկան դարդ ու ցավը ես ի՞նչդ տանիմ:
Ը՞նչ՛եմ ըստեղ մացե, ես թասիբ չունի՞մ,
Էրտամ էլի էն թակավորին առնիմ:

Մենձ քուրերն, օր էդքան սուտ բաները ըսին, փոքր քուրոջը դուր չեկավ: Վերցրավ ինկն էլ իրան հմար խաղ կապեց ու ըսավ.

Թակավորի տղեն գա ընձի առնի.
Ես յալվար գընգնիմ, հեչ չեմ փոշմանի,
Թակավորի տղին թակուհի դառնամ,
Էս տեսակ դառ օրերս գմոռանամ:

Օր հիմի պառծենամ, եդև կամենամ,
Թակավորի տղին ես ի՞նչ ջուղաբ տամ:
Կամկը իրանն է, գուզե՝ թող առնի,
Չի էլ առնի՞, խո մեզի չի սպանի:

Էս օրերը պոծնեմ, կապրիմ երջանիկ,
Էլ ի՞նչ կենեմ սուտ խոսելը, իմ քույրիկ,
Չիդեմ ես հաց թխել ու խալի գոռծել,
Չիտեմ ես սուտ խոսալ, չիտեմ պարծենալ:

Հազար տարի մնա, ես սուտ չեմ խոսա,
Ես գբերեմ, մե աղջիկ ու մե տղա՝
Օսկե ճկուտավոր սիրուն ախճիկս,
Օսկե քյանկուլավոր տղես՝ ջանիկս:

Թակավորի տղին ես չեմ ըստիպե,
Թե իմ բախտն է՝ մեզի իրար գկապե,
Ես չեմ ուզե օգտիս հմար մառտ խապե,
Ամեն մառտու մե չվանով չեն չապե:

Հազար տարի մնա, ես սուտ չեմ ըսե,
Իզուր տեղը մառտկանց չեմ բանբասե,
Թակավորի տղեն լսե՝ ի՞նչ կսե,
Խոսկդ չկատարես քեզի վնաս է:

Որ թակավորն էկավ, օր մենկ չհավնանկ,
Բախտավոր ենք,
օր մենկ թակուհի դառնանկ,
Ամեն տեսած ցավ ու դառդը գմոռնանկ,
Արև դառած՝ արևի տեղ փայլ կուտանք:

Խոռոտ մերս չպայեց, հերս կոռծրեց,
Բախտը բերեց, էս օրին մեզ հասծրեց,
Ծնող հերն օր զավակներին ուրանա,
Էն զավակն էլ ինչ բախտի գտիրանա:

Էդքան խաղերն ու խոսկերը ըսելուն, դու մի տես, թակավորի տղեն դռան եդև լսմ է ու ինկը իրան ըսմ է. «Յավաշ, ես բտի իրեկին էլ առնիմ տեսնիմ՝ օր մեկի ըսածը օղոռտ կեղնի»:

Ըսմ է ու գալմ է իրանց հացթուխ պառավին ըսմ է.—Մամի՛, գնա ըլը հառցրա, տես՝ էդ ախճկները ընձի կառնի՞ն: Թե կառնին, արի ընձի ըսա:

Թակավորի տղեն պառավին չէր ղրգե, ղրկեց ընդոր հմար, օր ախճկները ըսին՝ թող պառավ՚մ ղրկե մեր քովն իմնալու: Ըդուր հմար ղրկեց: Թակավորի տղեն օր ըսավ, թե գնա տես ընձի կառնին, պառավն ըսավ.—Պա՛յ-պա՛յ, պա՛յ-պա՛յ, ակաս-պակաս էդ էր պակաս, օր ժողվողկրանները թակավորի տղին բագյամիշ չենեն, չառնին:

—Չէ՛,—ըսավ թակավորի տղեն,—ժողվողկրան չեն, ըդոնկ էլ են թակավորի ախճիկ:

—Լավ,—ըսավ պառավը,—կերտամ:

Թակավորի տղեն հո չէր ավտցե, օր ըդոնկ թակավորի ախճկներ են, յա թակավոր ուզողներ ունին: Համ շատ սիրուն ախճիկ էին, թակավորի տղեն շատ էր հավնե, համ էլ փոռծելու հմար՝ տեսներ, թե որի՞ ըսածը բտի օղոռտ էղնի: Է՛, պառավն էլ գնաց ախճկների քովը: Դուռը զարգեց, եկան բացին: Պառավը տեսավ ախճկների սիրունուտենները, գյամալ-ջամալները, խելկը գլխեն գնաց: Ըսավ. «Վալա, ըդոնք առժան է՝ էղնին թագուհի», մտածեց պառավը ու դառավ ախճկներին, հառծրավ, ըսավ.—Ախճիկներ, դուք կառնի՞ք թակավորի տղին:

Ախճիկները սատանա էին, հասկցան, ըսին. «Կա, չկա թակավորի տղեն մեր խաղ ըսելն իմծել է: Յավաշ, ըսենք թե՝ չենք առնի»:

Մենձ քուրերը ըսին.—Չէ, մենկ չենք առնի: Ինկն օր մեզի առնող էր, ընչի՞ թեզ չէր առնմ, օր չուրի հիմի մեզի պայմ էր էս ղավասի մեջը: Հիմի ուզմ է առնի: Մենկ չենկ առնի:

Օղոռտ է, լիզվով ըսմ էին թե՝ չենկ առնի, հմը սռտով դողմ էին, թե վայտե ըսենք՝ չենկ առնի, ինկն էլ եդ կայնի, մեզի չառնի: Էս անկամ թողենք չոկերս՝ ծեծենկ գլխներս: Մենձ քուրերը ըսմ ու դողմ էին, պզդի քուրը ըսավ.—Քելե, մամի ջան, ես առնմ եմ էլ, գալմ եմ էլ:

Ըսավ, էլավ ընկավ առաջ: Գնաց թակավորի տղին ըսավ.—Ես իմ օժար կամկովս էկել եմ քեզի առնելու, գուզես էրա պադվավոր թակուհի, գուզես էրա քեզի ղուլ:

Թակավորի տղեն չի կռնմ աշկն աղճկա երեսեն թեռցե: «Ի՞նչ ղուլ, ի՞նչ բան»:

Ըսավ.—Բա էն երկուսն ուրա՞ն ին:

Պզդի քուրն օր լավ գիդեր քուրերի միտկը, օր երպ էղնի գուկան, էլ բան չըսավ:

Ըսավ.—Ընդոնք իրանց շորերն են լվածե, չործան՝ գուկան:

Պզդի քուրը գնաց տեղավորվավ: Վերծրավ էլի պառվին ղրկեց՝ քուրերին կանճեց:

Խրատ տվավ, ըսավ.—Իմ քուրեր, ես էսման եմ ըսե, թե իմ ըսածին հոժարին չեկ, ձեր խոսկը բտի պնդեկ գոյնա: Ըսեք. «Թակավորի տղա, յա՛ մեր քուրոջը տուր տանինկ, յա՛ արի մեզ էլ տար»:

Ըդման ըսավ, խրատեց, ղրկեց: Գնացին իրանց տեղը: Հմը օր տեսան պզդի քուրոջը՝ հակած, կապած, զարտարված, թակույու թակը գլխուն դրած, խալի-կարպետները փռած, ինկը փապուկ աթոռի վրեն նստած, իշկան օր սիրուն էր, էրկու էնկան էլ վրա է էկե: Քուրերը նախանձվան ըսին. «Տեսա՞ր, էնի մեզեն խելկով դուս էկավ: Էնի գնաց բախդավորվավ, մենկ մնածինկ մոլորված»:

Մենձ քուրերը էդման էին մտածմ, իսկ պզդի քուրը դատար չուներ, սիրտը մռմռմ էր: Մառտին ըսավ.—Այ տղա ես էկա, քուրերս մնածին, յա՛ ընդոնցն էլ բեր, յա թող ես էլ էրտամ ընդոնց քովը:

Տղեն ըսավ.—Ես ի՞նչ էնեմ, թող էլնեին, քու հետ գայն:

Քուրը կոտր չքցեց քուրերին ըսավ.—Ընդոնկ ամեն ինչով բանձր են ընձեն, ընդոնկ պառավի խոսկով գուկա՞ն, դու գնա առ, արի:

Թակավորի տղեն լսեց կնգան, գնաց էրկու քուրոջն էլ առավ էկավ: Բերավ ընդոնցն էլ ղրկեց բաղնիկ, շորերը փոխել տվավ, հակցրավ, կապծրավ, թագերը դրավ, ամենկին մե տեղ՚մ նստծրավ: Ըդման խաղաղ ապրան մե վախտ՚մ: Տղեն ըսավ. «Ըստունծը բտի փոռծեմ, տեսնիմ՝ որն է իրան ըսածին տեր»:

Գնաց մտավ մենձ քրոջ այվանը: Մենձ քու-

որը տեղեն չելավ, առաջ չեկավ: Ըսավ.—Թակույի, մեզի մե հատ՚մ մենձ խալի բտի գոռծվի: Մեր սինոտին խոսկ եմ տվե, օր ըշտա էման խալի՚մ բտի գոռծես, օր գան վրեն նստեն, կեսն էլ մնա ծալած:

—Հա՛,—ըսավ,—ես իլաջ ու՞նիմ խալի գործեմ: Խալի գոռծող գտի, տուր գործել:

—Հա, հա, լավ,—ըսավ տղեն:

Դուս էկավ գնաց միջնեկ քուրոջ այվանը մտավ, ըսավ.—Թակույի, քանի՚մ փութ հաց բտի թխվի մեզի: Մեր սինոտը գան բտի մեզի խոնախը:

—Հա՛,—ըսավ՝ տեղեն չելնելով,—ես թև ու թիկունկ ունիմ՝ հաց թխեմ: Հաց թխող գտի՝ տուր թխել:

—Հա, հա, լավ,—ըսավ:

Գնաց պզդի քրոջ այվանը մտավ, տեսավ՝ նստած ուրախ-ուրախ քառկա է էնմ: Մառտն օր ներս մտավ թե չէ, տեղեն թռավ, էլավ գլոխ իջցնելով էկավ առաջ, բարև կապեց՝ կայնավ: Մառդն էլ կնգա աջն առավ, ինկն էլ գլոխ իջցրավ, թողեց գնաց: Անցավ էդման վախտ՚մ: Բիրդան տղեն գոռծով գնաց ուրիշ քաղակ: Պզդի քուրոջ էլ ազատվելու օրերն է: Էկավ վախտը՝ ազատվավ, բերավ օսկե քյանկուլով տղա, օսկե ճկտով ախճիկ:

Քուրերն օր տեսան՝ պզդի քուրն իրան խոստումը կատարեց, իրանկ մնածին ամոտով, ըսին. «Ի՞նչ էնենք, ի՞նչ չէնենք»: Բերին տատմորը օսկի-առծաթ տվին՝ ոշվատ, գնաց ջուխտ՚մ շան լակոտ բերավ դրավ հառսի կողկը: Էրեխեկը փատեց, էրավ բալուլ, դրավ յաշկի մեջը, մուշամբեց: Տարավ քցեց ջուրը, գնաց: Ինկը էկավ տեսավ՝ քուրերը խառնվել են իրար:

—Վա՛յ, էս ի՞նչ էրեցիր, մեզի խայտառակ էրեցիր, իսանն էլ շան լակոտ կբերի, քու մառտուն ի՞նչ ջուղաբ բտի տաս:

Եսիմ, ազմ բաներ ըսեցին, խոսածին, գնացին: Նամակ գրին մառտին. «Թակավորի տղա, աշկդ լուս էղնի, օր կնիկդ պառկավ, ջուխտ՚մ շան լակոդ բերավ»:

Տղեն գրեց. «Շան լակոդ կեղնի թե գիլու լակոդ, պայեք, չուրի ես գամ:» Նամակի պատասխանը, օր ըստծան ճղին թապեծին, բերին իրան ձեռագրին նմանող, նորից գրեցին, օր. «Շան լակոտ կեղնի, թե ինչ կեղնի, տարեկ օխտը ճամպու օրտլաղը, էրեկ նալատլամա»: Բերին օխտը ճամպու օրտլաղը փորեցին, օխտը գոմշի կաշով, էրին նալատլամա: Անցնող դառնողը թկմ էր, քար էր քցմ, կոշտ էր քցմ, փուշ էր քցմ:

Թող էդի ըտեղ տանջվի, մենկ խաբար իմնանկ, տեսնինք, թե ինչ եղան էրեխանկը՝ յաշիկով: Յաշիկը գնաց ընգավ ջախցպանի նավը: Ջուրը կտռավ, քարը կայնավ: Ջախճպանը էլավ, վազավ տեսավ՝ նավը լիքն է ու քարը չի դառնմ: Ջուրը կտռեց, դառուց դենը: Նավը դառտկվավ, տեսավ, օր մե սիրուն յաշիկ՚մ, զմռվել է օլուղը, էնդի ջուրը չի էրտմ քարին: Ջախճպանը շորերը հանեց, մտավ նավը: Քաշեց յաշիկը հանեց, տեսավ, օր յաշիկը ծանտռ է, ըսավ. «Յա՛ օսկի բտի էղնի, յա՛ առծաթ, հեչ մեկն էլ դառդիս դարման չեն էղնի: Է՛հ, օր էկել է, մեր ղսմատն է, թող էղնի»:

Ջախճպանն էր, յաշիկը բերավ ջաղաջը: Սապր չէրավ՝ տուն տաներ: Բացեց յաշիկը տեսավ, ի՞նչ տեսնի: Երկու երեխա, յաշկի մեճը քնած են: Ջախճպանը ուրխուտենեն էլավ պարեց: Ըսավ. «Փա՛ռք քեզեն աստված: Ինչ գիտեիր օր ըստոնկ կեղնին իմ դառդիս դարման: Թե դու չէիր տվե ընձի մարմնավոր զավակ, տվեծիր հոկևոր զավակ: Փառկդ շատ էղնի»:

Ըսավ ջախճբանը, աստված փառաբանեց: Վերցրավ յաշիկը, ուրխուտենեն ջախաջը թողեց բառադյա, գնաց տուն:

—Կնիկ,—ըսավ,—էսօր մեզի մենձ աշկալուս՚մ է էկե: Բեր ջուր տակծու, էս երեխանծը լոխծու, փատտե: Կատ կերծրա: Պայե, օր էլնին, ըստոնկ էղնին մեզի տղա ու աղճիկ:

Կնիկն էլավ, տեսավ էրեխանծը, մառտիցը շատ կնիկն ուրխծավ: Ըսավ. «Էլ ես դառտ չունիմ: Իմ դառդս էրեխա չունենալն էր, օր, ահան, էղան: Էլ ի՞նչ դառտ ունիմ»: Ըսավ, դրավ ջուրը տակծրավ, էրեխանծը քանդեց, օր լողծներ, տեսավ, օր տղեն օսկե քյանկուլավոր է, ախճիկն օսկե ճկուտավոր է: Կնիգը խորամանկ կնիկ էր ըսավ. «Է, գպայեմ, գտկտեմ հոգուս վառսկի հմար, հմը ըստոնկ մեզի օկուտ չունին: Եպ եղնի, ըստոնց տերը այան գելնի: Ըստոնծը դուշմանուտենով քցել են ջուրը, հմը սխալվել են: —Մտածեց կնիգը, հմը մառտուն բան այան չհանեց:

Էրեխանծը լողծուծ, փաթեց, կատը լցեց նամզուկը, կերծրավ, քնցրավ, պայեց: Էրեխեկն

էլ թակավորի ոռտի էին, օրեցօր խոշոռցան, էղան եկա երեխա: Հմը հեչ ըտոնց երեսը ծիծաղ չէր գալմ: Էնկան սիրուն, էնկան աննման, օր աշխարկի էս ծերից էն ծեր ման գաս, պեսները չկա: Ջախճպանն ու կնիգն էլ շատ անտանելի, աննման գեշատես էին: Էրեխեկը աշմ են իրար, աշմ են ջախճպանին, իրա կնգան, լալմ են. «Վայտե ըստունկ մեր հերն ու մերը չեն, ընչ'ենք մենկ էսքան սիրուն, ըստոնկ էսկան գեշ:

Ջախճպանն էր, էրեխանծը տվավ ուսումնարան: Գնածին իրանց հմար գրել, կառտալ սովրան: Մե օր'մ էլ, տղեն քնած էր, երազին տեսավ, օր իրանց իսկական մորը օխտը ճամպու արանկ էրած էն նալատլամա: Ասնող-դառնողը թքմ է, քար է քցմ, կոշտ է քցմ, դադար չեն տալմ: Զառտնավ, էլավ ջախճպանին ըսավ.—Հայրիկ ջան, մենկ շնորհակալ ենկ, օր մեզի պայել եք, սիրել, մենձցրել եք: Ես էդ լավուտենը մտահան չեմ էնե: Հմը մենկ, բտի էրտանկ, մեզեն չնեղենաք: Եպ եղնի, էլի մենկ ձեզի զավակուտեն կենենկ:

Ջախճպանն ըսավ.—Ախր, որտի, դուկ մեր երեխեկն եք: Էրեխեն էլ թողե իրա հորն ու մորը էրտմ: Ո՞ւր բտի էրտակ:

Տղեն ըսավ.—Ուր էլ էրտանկ, ձեզի մտհան չենկ էնե, թող մենկ էրտանկ:

Կնիգն ըսավ.—Մառտ, թող, թող էրտան, մի՛ դեմ առնի: Ըդոնցը հերն ու մեր կա, ըդոնկ մեզի օգուտ տվողը չեն:

—Դե լավ, տերը ձեր հետ: Դուկ՝ ձեր աստված, ընձիկ պայել'մ գհասներ՝ պայեծի: Հիմի դուկ՝ ձեր կատը,—ըսավ ջախճբանը:

Բերավ մե ձի'մ ու չադր'մ տվավ:

—Դե,—ըսավ,—նստի ձիուն, քուրոջդ առ թարկդ, ուրտեղ գմտնե, ընդեղ չադր գզարգեք, գմնակ: Չէղնի գիշերը ճամպա էրտակ: Ամեն մառտու ըսածով էլ տեղ չէրտակ, չլսեկ, դոստ ու դուշման գիտեծեկ:

Ըսավ, խրատեց: Աղ ու հաց հալալ էրին: Ջախճպանի ու կնգա ձեռը պակեծին, նստան ձին ու յալա դիպա հոր քաղակը: Զուրի հոր քաղակը հասնելը, էրկու գիշեր վրա տվավ, չադրը զարգին, մնածին: Հմը, օր ջախճպանը թամպա էրած չեղներ, տղեն բանտ չէր էղնի տեսած էրազի հմար, հմը քուրոջը բան այան չէր հանե: Վեռջապես, գնածին հասան հոր քաղակը: Քաղկից ղրաղ չադր զարգին, մնածին: Էլան առավոտ թեզ, տղեն ձին հեծավ: Քուրոջն ըսավ.—Ես էրտմ եմ տեսնիմ՝ կարող ե՞մ մե կակավ զարգեմ, բերեմ խորովենկ ուտենկ: Դու դուռը փակե, քնի:

Թամբա էրավ ու գնաց: Գնաց գտավ մորը: Բերավ փունջ'մ ծաղիկ ցանեց վրեն: Աբռշումե յայլուղով երեսը սռպեց:

Մերն ըսավ.—Վա՜յ, քարով զարգին, կոշտով զարգին, էսկան չցաված, էս ինչ ձեռ էր՝ ընձի դիպավ,—գանգտվավ մերը:

Հմը ոնչ թե ցավ տվավ, օր մերը գանգտվավ, ինչ օր սռտից վկայեց, էտի իրանց ջիգյարն էր: Տղեն էլ մոր խոսկերի վրեն սիռտը մռմռած, լածավ: Էլավ մե երկու հատ ղուշ, աղունիգ զարգեց տարավ տուն, օր քուրը բան չհասկնա: Քուրը բերավ պոպկեց, իստկեց, եպեց քուր ու ախպեր կերան: Հմը տղեն օր տեսել էր մոր դրուտենը, մոր խոսկերը, շատ տխուր էր: Քուրն ըսավ.—Ախպեր ջան, ընչ'ես էտկան տխուր:

Ըսավ.—Բա ի՞նչ էնեմ, ըստեղ նա՛ հեր ունինկ, նա՛ մեր, նա՛ տուն ու տեղ, էնդի էլ տխուր եմ:

Քուրն ըսավ.—Ես էլ քու հետ չե՞մ, տեսնմ ե՞ս ես ինչկան ուրախ եմ: Քանի դու կաս, ես էլ դառդ չունիմ, չեմ տխրի, դու ընձի հա՛մ հեր ես, հա՛մ մեր ես, հա՛մ էլ ախպեր ես:

—Լավ,—ըսավ,—քուր, դու օր ուրախ ես ես էլ ուրախ կեղնիմ:

Ըսավ ու էդ օրից ըսկսեց ավղուշ էրտալ: Ամեն օր էրտմ էր, իրան հմար ավ էր զարգմ: Ռաստ գալած ջանավարը, յա թռչուններն էր զարգմ, իրկուն տուն գալուց վառտի թպով զարգմ էր մորը, աբռշումե յայլուղով սռպմ էր, էլի մերը ինջմիշ էր էղնմ: Ըսման վախտ'մ գնաց: Մե օր'մ էլ գնաց ավի, տեսավ՝ մի քանի հոգի էլ են ըդեղ ավ զարգմ: Հա, ինկը գնաց, հա, ընդոնկ էկան, հասան իրար: Բարև տվին, բարև առան: Պտտվան, հա, բան-ման զարգին: Իրկունը եկան տուն: Օր էկան, հասան նալատլամին, տղեն վառտի տերևով զարգեց: Աբռշմե յայլուղով սռպեց: Հետի թակավորի տղեն զարմացավ: Ըսավ.—Ա՛յ մառտ, էնկանը քարով, կոշտով են զարգմ, թքմ, նալտմ են: Իսկ դու վառտի թպով ես զարգմ: Աբռշմե յայլուղով ես մակրմ:

Տղեն ըսավ.—Անմեղ մառտուն ի՞նչ հարկավոր է զարկել ու թքել:

Թակավորի տղեն ընկավ մտկի տակ, թե էս ջայել, ղարիբ տղեն ինչ գիտե՝ էսի մեղավոր է, թե անմեղ է:

Տղեն օր էդման ըսավ, էլ մեկել մառտիկն էլ չը զարգեծին, չթկեծին, անցան-գնաձին: Մե օր, երկու օր, հա թակավորի տղեն տեսնմ է, օր էդ տղեն մի լավ վառտի թպով զարգմ է, աբռշումի յայլուղով սռպմ է: Մե օր՝մ էլ գնաց տուն տնեծոնցը բան այան չանեց: Հմը տխուր, մոլոր նստավ: Իրիկունը մենձ կնիգը շատ յախա, փաչա էղավ, թե.—Ը՞նչ՝ես էսօր տխուր, մոլոր: Ինչ է էղե, ըսա տեսնիմ, թե ո՞վ է նեղեծրե:

Վեռճապես մառտը ըսավ էղելուտենը: Կնգա չոկերը դողած, ըսավ. «Վա՛յ, վա՛յ, կա, չկա էրեխեկը սաղ են մնաձե, էկել են: Մեր էրաձը անպատճառ այան գելնի: Թակավորի տղեն մեզի ղիմա-ղիմա գբռտե: Ինչ էնեմ, ինչ չենեմ, կանճեմ էլի տատմորը, թե բան՝մ էնե, էնի կէնե»:

Առավոտ, կանչեց տատմորը, ըսավ.—Դու էլ չեղնիս, քու էրեխա կործնելն էլ, էնե տղեն էկել է: Եպ էղնի՝ մեր էրաձները գելնի այան, թակավորի տղի ձեռնեն էլ չենք պռծնի: Դու էլ մեր հետ գկորիս, թեզ հնարը գտի:

Տատմերն էր, թեզ ընկավ էս դին, ընկավ էն դին, ման էկավ, հառծրավ, էրեխանծ տեղը իմծավ: Օրվա մեկը, ելավ գնաց դուռը զարգեց: Ախճիկն ըսավ.—Դու վո՞վ ես, ես դուռ չեմ բանա:

—Քա՛, բալա ջան,—ըսավ տատմերը,—ես քու մորքուրն եմ, իմծա, օր դուկ էկել եք, էկել եմ տանիմ, բաց դուռը:

Ախճիկն էլավ դուռը բացեց: Պառավն էկավ նստավ, հառցրավ.—Ե՞պ էկակ, ընչի՞ էկակ, ախպերդ ուրանի՞:

—Եսիմ:

Ազմ ալնի, աղի խոսաձ, ըսավ.—Քա, բալա ջան, տեղս հեռու, չեմ կռնա ամեն օր գա, քիչ՝մ սիրտդ բանամ, դու ամեն օր հարի իրկուն ինչղ ես նստմ մինակ: Գոյնե ախպորդ ըսա՝ թող էրտա տուտի ղուշին բերի: Ինկը ճլվլա, դու անգաջ կէնես, էլ մենակուտենը վրեդ չի էրևա: Ապսոս չե՞ս, սաղ օրը մենակ նստաձ ես:

—Հա մորկուր ջան, ախպերս օր էկավ, կսեմ՝ էրտա, բերե:

Իրկուն ախպերն էկավ տուն, տեսավ՝ քուրը նիատը կախ նստաձ է, տխուր ու մոլոր:

—Հա,—ըսավ,—քուր ջան, ը՞նճ՝է նիատդ կախաձ:

Ըսավ.—Բա ինչ ենեմ, օր նիատս չկախեմ: Դու էրտմ ես սար ու քար ման էս գալմ, մառտամեջ ես մտնմ, ըսմ, խոսմ, սիրտդ բացվմ է: Ես մենակ էս չադրի մեճը սաղ օրը գժվմ եմ:

—Բա ինչ ենեմ, քուր ջան:

—Ինչ էնես, գնա ֆլան թակավորի ախճկա տուտի ղուշին բեր, թող ըստեղ ճլվլա, ես ուրխնամ:

—Տո, քուր ջան, չէ՞ դու ըսմ էիր, քանի դու կաս, ես չեմ տխրի, բա հմի ը՞նչ՝ես տխրմ:

—Է՞, ինչ էնեմ, ես մինակ եմ է:

—Է՞, քուր ջան, դառդ մի էնե, կէրթամ բերեմ:

Տղեն էր, էլավ առավոտ, մնաս բարով, էրտաս բարով ըսին, ընկավ ճամպա: Գնաց: Գնաց, շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը ինկը գիտե: Հասավ մե բարձր սարի՝մ գլոխ: Տեսավ, օր մե հալիվոր՝մ է նստաձ, ճերմակ միրուկն իջել է չոկերին:

—Բարև քեզի,—ըսավ տղեն,—պապի ջան:

—Վայ, դու բարով, հազար բարի էկար, բալա ջան, ո՞ւր ես էրտմ:

Ըսավ.—Էրտմ եմ էս ինչ թակավորի ախճկա տուտի ղուշին բերեմ:

—Վայ, քու ղրկողի շլինկը տակը մնա,—ըսավ հալիվորը,—բալա ջան, մի՛ գնա, էրտողը ետ չի դառնմ, ապսոս ես, ջայել-ջիվան ես, ետ դառի:

—Չէ,—ըսավ տղեն,—բտի էրտամ:

—Դէ օր բտի էրտաս, ճանպեն էսի է, ըսման դուզ գնա: Ինչկան օր էկել ես, էնկան էլ բտի էրտաս: Թակավորը ունի տասերկու բաղ: Իրան քոսկ ու սարայն էլ բաղերով չապռնաձ է: Օխտը ատաշանի է տները: Ախճիկը ամենավերևի պատուհանի օտաղն է քնաձ: Իրեկ օր քնաձ է, չորս օր էլ բտի քնի: Կերտաս մե կերպ՝մ գելնիս պատուհանը: Տուտի ղուշին ղաֆասով դրաձ է պատուհանը: Կառնիս, գդառնաս, քանի չէ զառտնե, օր զառտնավ էլ փրկվելու ումուտ չունիս:

Տղեն էր, շնորակալ էղավ: Մնաս բարով ըսավ հալևորին, ընկավ ճամպա, գնաց: Շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչն էլ մտահան էրավ, անջաղ հանիռկտուր հասավ թակավորի պալատին: Տեսավ, օր ինչ տեսնի: Ո՛չ էլնելու հնար կա, ո՛չ իջնելու: Ման էկավ դես, ման էկավ դեն,

բաղերի չորս դին պտտվավ, տեսավ, ըհը, մե տեղ՚մ կա նես մտնելու: Իջավ, ձին կապեց մե տալդա տեղ՚մ, ըսավ՝ թող հոս մնա, չուրի գամ: Ինկը գնաց մե ծալովի նառդվան՚մ շինել տվավ: Նառդվանը բերավ, էդ նառդվանով հա՛մ բաղերից ղոլայ անցավ, հա՛մ ղոլայ բարձրացավ ամենավիրի ատաշեն: Ելավ տեսավ, տուտի ղուշին ղաֆասի մեջը ցածր ձենով ղունղունմ է: Թակավորի աղջիկն էլ սադաֆե կառավատի վրեն քնած է: Գլխու վիրևի շամտանները վառմ են, ոտների տկի շամտանները մարած են: Թակավորի աղջիկն էլ գլմանի նոր ծագած արև, էնկան օր սիրուն է: Տղեն մտավ նես, ոտների տկի շամտանները վառեց, գլխու վիրևինը մարեց: Ծոցից մատնիք՚մ հանեց, դրավ ախճկա մատը: Ըսավ. «Երպ էղնի, դու իմն ես»: Երկու երեսը համպուրեց, տուտի ղուշին առավ ու իջավ ցած: Էկավ նստավ ձին, յայլա՝ իրանց քաղակը: Էկավ տեսավ, օր հալիվորը նստած է:

Ըսավ.—Բարև, պապի ջան:

—Վա՛յ, դու հազար բարի էկար, բալա ջան, բերի՞ր:

—Բերի:

—Դե, տար, հմը ուր օր գղրգեն, մեկել չերտաս, չխաբվիս:

—Լավ,—ըսավ տղեն,—չեմ էրտա, պապի ջան:

Ըսավ, մնաս բարով ըսավ, ընկավ ճամփա, գալմ է դեպի տուն, ուրախ-ուրախ, բոց ու կրակ, օր ձիու ոտները գետին չի առնմ: Էկավ, էկավ, հասավ տուն, բերավ տուտի ղուշին դրավ փանջարի առաջը: Ինչ իլաջ էնմ են, չի կվկվմ, չի ղունղունմ:

—Լավ,—ըսավ տղեն,—բալկիմ բեզրել է, յա ղարիբ է: Թող քանի՚մ օր մնա, դինջանա, սովրի, գկվկվա:

Հմը տղեն օր գնացել էր, հերն իշկան օր տուն կէրտար, տխուր էր. Ըսմ էր.—Էն տղեն չկանի, ինճղ օր գնացել է, աշխարկս խավար է: Չի երևմ: Չիդեմ՝ ուր է գնացե:

Տատմերը գողտուկ ըսմ է. «Էման տեղ եմ ղրկե, օր էլ ուրտեղ էրևա»:

Էդ օրն օր տղեն գնաց, հերը տեսավ, ուրխուտենեն ոտները գետնեն կտռավ: Իրկուն՝ տուն գալուց, տղեն էլի վառտի թպով մորը զարկեց, աբրշմե յայլուղով երեսը սրպեց: Մերը վայնասուն էրավ.—Քարով զարգեն, կոշտով զարգեն, վառտի թպով չզարգեն: Էս ում ձեռով զարգեցին, սիրտս յարեկ բացեցին:

Հերը զարմանկից քարցե, մնածել էր: Չիդեր՝ ինչ կառծիկներ անցան-գնացին: Թակավորի տղեն տուն մտնելուց էնկան ուրախ էր, չապ չկար: Կնիկն էկավ առաջ, ըսավ.—Հա, ի՞նչ կա, էսօր քեֆիդ քեֆ չի գա:

—Հը,—ըսավ մառտը,—ընչի՞ բտի քեֆիս քեֆ գա, օր իմ կործրածն էկել է:

Մառտը միամիտ ըսավ՝ որպես քանի օր էր, չկաներ: Կնիգը վախից թուլծավ: Ըսավ. «Կա, չկա ամեն ինչ այան է էլե»: Կանչեց դայեկին ըսավ.—Գլխեդ անծել ես, տղին էման տեղ չես ղրկմ, օր էլ եդ չդառնա:

—Էլի էկել է՞:

—Հա՛, հա՛:

Ելավ առավոտ, շորեր քցեց հակը, լվածվավ,՝ չլվածվավ, յալա, գնաց ախճկա քովը: Դուռը զարգեց: Ախճիկն էկավ բացեց: Փաթթվավ ախճկան, պակպկեց, կեղծավոր խոսած.—Մորկուրը մեռնի ջանիդ, ախպերդ բերա՛վ տուտի ղուշին:

—Հա, մորկուր ջան, հմը չի ղունղունմ: Ախպերս ըսմ է՝ խամ է, ղարիբ է, գսովրի, նոր գղունղունա:

—Հը,—ծիծաղաց դայեգը,—քա, բալա ջան, ախպերդ էդման է ըսմ, օր չչարչրվի էրտա մեկ էլ: Էստոնք իսանից էլ ֆայմով են: Էսի հարի իրան տերը չեղնի, չի ղունղունա: Ըսա ախպորդ, թող էրտա թակավորի ախճկան բերե: Հա՛մ իրան կին է, հա՛մ էլ տուտի ղուշին գկվկվա: Քեզ էլ հնգեր է, էս տուտի ղուշին հազար տարի մնա, առանց թակավորի ախճկա չի խոսա:—Ըսավ, թամպա էրավ, թողեց, գնաց:

Ախճիկը նիատը կախեց, ձեռները դրավ ծոցը, նստավ: Իրկունը ախպերը էկավ:

—Հա՛, քուր ջան, հիմի ի՞նչ է էղե: Ը՞նչ՚ես նիատդ կախե:

—Ի՞նչ էնեմ, օր չկախեմ, իրկուն մորկուրն էկավ, ըսավ՝ հազար տարի մնա, էս ղուշը չի խոսա, ընչուրի իրան տիրոջը չբերեկ:

—Լավ, էլ մի տխրի քուր ջան, կերտամ գլոխս տուրը կուդամ ու քու ուզածը գբերեմ,—ըսավ:

Նստան, հաց կերան: Ըսին, խոսածին, էլան քնան: Առավոտ տղեն էլավ նստավ ձին,

յալա դիպա թակավորի քաղակը: Գնաց էլի էն բարձր սարի գլոխը, տեսավ՝ հալիվորը նստած է՝ ճերմակ միրուքը չոքերին:

—Բարև, պապի ջան:

—Վա՛յ, դու բարով, հազար բարի էկար, բալա ջան, ու՞ր կերտաս:

Ըսավ.—Կերտամ թակավորի ախճկան բերեմ: Ինչդ, օր ղուշը տարել եմ, չի խոսմ: Ըսմ են՝ տերը բտի գա, օր խոսա: Ես էլ էրտմ եմ, բերեմ:

—Է՛,—ըսավ հալիվորը,—չար շառի ես ռաստ էկե: Ես քեզի չսեցի՞, ուր օր ղրգեն, չէրտաս: Ախր, էնի թռչուն էր՝ թեթև, զարգիր ղուլտուղդ՝ բերիր: Էսի թակավորի ախճիկ է, հազար ուզող ունի, հազար քաջեր կռվող ունի: Դու ջայել տղա՝ անփորձ, ի՞նչ կռնաս էնես: Արի ընձի լսե, ետ դառի:

—Չէ,—ըսավ տղեն,—ես եկել եմ, բտի էրտամ:

Հալիվորը տեսավ, օր տղեն բտի էրտա, ըսավ.—Ա՛յ տղա, տեսնմ եմ, օր եդ չես դառնա, օր կերտաս էլ, կսես, օր էկել եմ թակավորի ախճկան առնելու: Թակավորը գը առաջարկե կռվելու քաջերի հետ, չոժարնաս, կախտվիս: Հմը ինչ օր գը հառցնեն, դուզը կսես: Ախճիկը քեզի կառնի: Կառնիս գուկաս:

—Լավ,—ըսավ տղեն,—էդման կենեմ:

Ըսավ, հեծավ ձին, մնաս բարով, էրտաս բարով ըսեցին, ընկավ ճամպա, գնաց դեպի թակավորի քաղակը: Գնաց, գնաց հասավ թակավորի քաղակը: Գնաց Քոսկ ու սարայն, տեսավ՝ թակավորի աղջիկն նստել է ծառի տակն: Տխուր երգ է ըսմ, հետն էլ լալմ է: Դու մի ըսա, եպ օր քնից զառտնավ, տեսավ՝ մատնիկը մատը, շամտանները փոխած, տուտի ղուշին էլ տարած, էն օրվանից ճամպա է աշմ ու ման է գալմ տանողին, ըսմ է.

Ի՞նչ իգիտ է, հողի վրա ոտ դրավ,
Անվախ էկավ, պատուհանեն նես մտավ,
Ի՞նչ կտռիչ էր, մատանին մատս դրավ,
Ո՞ւր ա, չի երևմ, պատկերը տեսնեմ:

Տարել է սիրելի իմ տուտի ղուշիս,
Սրտով կսեմ, օր չի երևմ աշկիս,
Թե էրևա էռնեկ կուտամ իմ բախտիս,
Ո՞ւր ա, չի երևմ տեսնիմ պատկերը:

Զոր ու գիշեր, միշտ անմ եմ ախ ու վախ,
Թե էրևա, կենեմ թանկագին մատաղ,
Գմարեմ կռիվը, կատարեմ խաղաղ,
Ո՞ւր ա, չի երևմ տեսնիմ պատկերը:

Ես մի ուժեղ թակավորի աղջիկ եմ,
Սիրունների մեջը ճիշտ մի հատիկ եմ,
Թե գտնվի, ես նրան առժանի եմ,
Ո՞ւր ա, չի երևմ տեսնիմ պատկերը:

Տղեն տեսավ, օր ախճիկը ինչ օր ըսմ է, խոսկերը իրան վրա է գալմ, ըսավ. «Էս լավ էղավ»: Տեղնոց տեղ թուղթ՝մ գրեց: Գրեց քցեց պարիսպից էն դին: Ախճիկը գլոխ վերցրավ վիրև, տեսավ՝ ըհը՛, մե թուխթ՝մ, վերցրավ: Բացեց կառտաց, օր գրած է. «Օ՜վ սիրուիս, հոգուս հատոր, մի՛ լա, մի՛ թափե առտասունկ: Արտասունկիդ մեջ կար հուր կրակ: Յարդ էկել էր, դու չիմացար, քեզ տեսա, քեզնով տարվեցի, ջուխտ երեսդ համպուրեծի, մատանիկը մատդ դրեցի, բայց քնած էիր, չիմածար: Քեզի տեսա՝ խորը քնած, շամտանները վառ ու մարած: Ղուշդ պատուհանը դրած՝ առա, տարա, դու չիմածար: Ես եկել եմ քեզի տանելու, հորդ կամկը իմանալու: Քաջերի դեմը կռվելու: Մեկ պատիվ տալ չիմացար»:

Ախճիկը թուխտը կառտած պոծավ: Ելավ նառդվանը դրավ, պարիսպից դուս աշեց, օր ի՞նչ աշե, նա՛ իրանց երկիրը կա պեսը, նա՛ էտկան գնացող-գալացողների մեջը կար: Էլ չիդեր, թե ինչ տեսակ խոսեր, ըսեր, օր տղեն ձեռնեն չելներ: Վեռճապես, մե կերպ իրար հասկցան, հասկցցին: Պայման էրին, թե ինչ բտի էնեն: Տղին տուն հրավիրեց, լավ պատիվ տվավ, ըսավ.—Ես հորս հետ գխոսամ, օր առանց կռիվ անցնի,—ըսավ, խաբար ղրգեց հորը, օր ես քու հետ խոսալու բան ունիմ, վախտ նշանակե, թե եպ դու վախտ կունենաս, խոսանկ:

Հերն ըսավ.—Երկու սհատ ետև:

Երկու սհատ ետև, ախճիկը գնաց հոր քովը: Ըսավ.—Հայրիկ, ես չեմ ուզմ, օր նորից կռիվ եղնի, ինչ օր էղավ ու ջայել-ջույուլ կոտորվան, բոլ է: Հիմի ես ուրիշ ձևի գընդրեմ ընձի փեսածու: Դու թալալ քցե, քաղկիդ մեջը, թող իշկան օր ջայել երիտասարդ կան, գան մեյդան: Գալած քաջերը, թակավորների տղեկը, թող քուլի գան մեյդան: Ես հառծնեմ, ով օր իմ մատը մատանիկ է դրել, ու իմ Տուտի ղուշին տարել է, ես ընդուրը կառնիմ, ընդից քաջը չկա աշխարկը:

—Դու գիտես,—ըսավ հերը,—ու թալալը քցեց քաղկի մեճը:

Իրեկ օր ճվածին, չուրի քաղկի ջայելները՝ սաղը, թոպ էղան մեյդանը: Գալած քաջերն ու թակավորի տղերքը էլի էկան մեյդանը:

Ախճիկը տղի հետ պայման էր էրել, օր քեզի վեռճը գհառծնեմ, չվռազնաս, հերս էլ զատի էդ մասին բան չիդե:

—Լավ,—ըսավ տղեն:

Էկավ վախտը, օր ախճիկը բտի հառծնե քուլեկին մեկ-մեկ: Ըսկսեց քաջերից հառցնելը: Առաջուց ըսավ.—Ով օր իմ մատս մատնիկ է դրե, իմ տուտի ղուշին տարել է, ես ընդուրն եմ առնմ, ով օր տարել է, թող առաջ գա:

Քաջերից մեկն էկավ, ըսավ.—Ես եմ տարե քու տուտի ղուշին:

Ախճիկն ըսավ.—Ինչպե՞ս ես տարե:

Ըսավ.—Էկա մտա քու ննջարանը, տեսա՝ մառտ չկար: Վերցրի ղուշդ տարա:

Ախճիկը մե շամառ'մ քաշեց քաջի էրեսին, ըսավ.—Հեռեցի՛, մեկելը՛:

Մեկելը էլի սուտմուտ բաներ ըսավ: Մեկելը, մեկելը ... վեռճապես իրեկ օր ախճիկը հառծրավ ու զարկեց, պատժեց, թքեց-մրեց՝ սուտ խոսալու համար: Կեսին էլ չհառծրավ: Ըսավ.—Էլ ո՞վ է էկե ղարիբ տեղից, թող առաջ գա:

Տղեն ըսավ.—Ես եմ էկե:

Ըսավ.—Արի առաջ:

Տղեն էկավ առաջ: Ախճիկն ըսավ.—Ո՞վ է տարե իմ տուտի ղուշին:

Տղեն ըսավ.—Ես:

—Ինչպե՞ս տարար:

—Էկա մտա քաղակը ման էկա, ձեր պալատները գտա, տեսա օր պարիսպներից ասնել չի եղնի, գնացի ծալովի նառդվան'մ շինել տվեցի, բերեցի դրեցի, պարիսպներեն անցա: Ընդից դրի քու պատուհանիդ տակը, բարձրացա վիրև՝ պատուհանը: Ղուշը պատուհանը դրած էր, օր ուզենայ գվերցնեի ու կէրթայ:

Ախճիկն ըսավ.—Ժողովուրդ, լավ լսեկ:—Տղին ըսավ.—Պատմե էրածներդ մեկ-մեկ, մի՛ թակծնէ:

—Չեմ թակծնե,—ըսավ տղեն,—եպ օր տեսա՝ դու սադաֆե կառավատի վրեն քնած էիր, գլմանեիր նոր բացված վառդ: Նես մտա, գլխուդ վիրևի շամտանները մարեցի, ոտներիդ տկի շամտանները վառեցի: Առա տուտի ղուշին, մատնիկը մատդ դրեծի, ջուխտ երեսդ համպուրեծի, գնացի: Հիմի ղուշը չի խոսմ, էկել եմ, օր քեզի տանիմ, ղուշը ղունղունա:

—Լսեծի՞կ, ժողովուռդ, ահա էդ տեսակ է տարե ղուշը, ոչ թե վերցրե ու գնացել է: Հիմի առժանի է՞, օր ես էսման քաջին առնիմ, թե՞ չէ:

Ժողովուրդը միաբերան ըսին.—Առժան է, առժան:

Ըսեցին ու ամեն իրան ճամպեն գնածին: Թակավորը բերավ, ախճկա հմար ամեն պատրաստուտենը տեսավ, բառծավ դավեկին, ջորեկին, ճամպու դրավ, գնացին: Տղեն ու ախճիկը էկան, էկան հասան հալիվորին: Բարև տվին, բարև առան, նստան հաց կերան, դինջցան, ըսին, խոսածին: Մնաս բարով ըսեցին հալիվորին, ընկան ճամպա՝ դիպա իրանց քաղակը: Էկան, հա էկան հասան տուն: Էն վախտ, օր թակավորի ախճիկը ներս մտավ, ղուշը չիդեր, թե ինչ տեսակ ղունղունար: Քուրը էլավ առաջ էկավ, բարևեց, համպուրեց: Բեռները վեր առան, տեղավորցրին: Ամեն ինչ կարկավորեցին:

—Տեսա՞ր՝ ինչ լավ էղավ,—ըսավ քուրը:

—Հա, շատ լավ էղավ, չարչարանկից ու երկուղից խաբար չես:

Մնածին, էլան առավոտ, տղեն նստավ ձին գնաց ավղուշ: Էլի ռաստ էկավ հորը: Հերը շատ ուրխծավ, ըսավ.—Ա՛յ տղա, ուրտեղ էիր, չէիր էրևմ:

Ըսավ.—Թակավորն ապրած կենա, տեղ էի գնածե:

—Ա՛յ տղա, օր չես էրևմ, շատ եմ տխրմ:

Ըսավ.—Շնորակալ եմ, օր էտկան բարի ես:

Պտտվան, ավք զարգին, ձին խոջ էրեծին իրանց հմար, ուրխծան: Իրկունը էկան տուն: Էլի տղեն վառտի թպով զարգեց, սռպեց: Էլի մերն ինջմիշ էղավ: Թակավորը զարմացավ, իրարուց բաժանվան, էկան տուն:

Թակավորի տղեն էդ օրն էլի ուրախ տուն մտավ: Էլի կնիգը հառցրավ.—Հա, ի՞նչ է պատայե, օր էլի ուրախ ես:

Չէ՞ օր, ինչղ օր գիլու այը օխճրի սուրից չի էլնմ, էման էլ տղի այը ըդոնց սռտից չի էլնմ: Հմը մառտը ուրախ նես է մտնմ տուն, կնգա չոկերը դողմ է:

Մառտն ըսավ.—Հմը էն տղեն չի էրևմ, իմ աշխարկս խավրմ է, հմը օր գալմ է, ընձի հմար նոր արև է ծագմ: Քանի օր էր չկար, էսօր էկել է: Էնդի էլ ուրախ եմ:

Էդ լսելուն կնգա սիրտը ընգավ դողը: Հավար քցեց տատմորը կանչեց, ըսավ.—Դու էլ չեղնիս, քու ղրկած տեղն էլ չեղնի: Էդ ո՞ւր ես ղրկմ, օր էլի գալմ է: Էման տեղ ղրկե, օր չգա:

Ըդոնկ ըդեղ են խոսմ իրանց սև գոռծի համար: Տղեն ընդեղ թակավորի աղջկան ըսմ է.—Գիդե՞ս, հլը պսակվելու մասին չմտածես, հարի տեսնինկ՝ ինչղ կեղնի: Էլան առավոտ, կերան-խմին, էլի տղեն գնաց ավուղուշի: Հա գնաց, էկավ:

Անցավ քանի՛մ օր: Տատմերն ու կնիկը հլը մտածմ են, թե ուր ղրգեն, օր եդ չգա: Շատ մտածելուց ետև տեղը գտան: Պառկան քնան: Առավոտ էլավ տատմերը, շորերը որը հակավ, որը չհակավ, առանց լվա, վազավ ախճկա քովը: Դուռը զարգեց, ախճիկը էկավ դուռը բացեց: Պառավը փաթտվավ ախճկան, համպուրեց ըսավ.—Տեսա՞ր, ախճիկս, իշկան լավ էղավ, բա օր էրտա Բիլդիլիկի Մառջանը բերե, ինչկան լավ կեղնի: Իրեկով կնստիկ, կսեկ, գխոսակ: Էլ աշխարկը դառտ չեկ ունենա:

—Հա, մորկուր ջան, ախպերս օր էկավ, կսեմ, կերտա բերի:

Թակավորի ախճիկը օր տեսավ պառվի ըսելն ու խոսալը, ղրկած տեղը, ըսավ. «Օհո՛, էս խեղճ, ջայել տղեն, էնտի էր էկե ընգե մեր երկիրը»:

Մտածեց թակավորի ախճիկը, պառվի թևեն բռնեց, դուս վռնդեց, ըսավ.—Ը՞նճ՛ես ղրկմ էդ անդառնալին: Ի՞նչ դուշմանուտեն ունիս դու էդ ջայել տղի հետ, քավթառ, կորի գնա՛: Մեկել ոտ չդնես էս աներ:

Թակավորի ախճիկն օր պառվին վռնդեց, քուրը նիատը կախեց, նստավ: Իրկուն ախպերն էկավ, տեսավ՝ քուրը նիատը էրած՝ նստած է: Ըսավ.—Հա, քուր ջան, ինչ ուզեծիր՝ բերեծի, հիմել մինակ չես: Ը՞նչ՛ես նիատդ կախե:

Ըսավ.—Ի՞նչ էնեմ, օր նիատս չկախեմ: Էրեկ՝ մեկ, էսօր՝ էրկու, մորկուրս էկավ, մորկուրիս վռնդեց:

—Հը՛ը,—ծիծաղաց թակավորի ախճիկը, ըսավ,—էնի մորկուր չէ, էնի դուշման է:

—Հը, ը՞նչ՛է դուշման, էնի, օր ղրկեց քու ղուշն ու քեզի բերավ, ի՞նչ էղավ:

—Հա՛, մենակ բերելը չէ,—ըսավ,—բա չարչարանկը, գլոխ տուրը տալը: Էնի, ոչ թե ղրկմ էր, օր ընձի ու իմ ղշին բերեր, ախպորդ ղրկմ էր, օր եդ չդառնար: Հիմ էլ էկել է, ըսմ է՝ թող էրտա Բիլդիլիկի Մառջանին բերե, ով գիտե քանի ոսկի է առել ռշֆատ, ում խոսկովն է էկե:

—Լավ,—ըսավ տղեն,—ես կերտամ էդ էլ գբերեմ: Տեսնինկ՝ հմի ինչ գպակսի, օր ուզես, քուր ջան:

Բերին, ամեն օրվա սովորական կերան-խմին, էլան քնան: Առավոտ տղեն էլավ, հեծավ ձին, մնաս բարով ըսավ:

—Ես էրտմ եմ,—ըսավ:

Թակավորի ախճիկը շատ ըսավ, յալվար ընկավ, թե.—Մի՛ գնա, թե էրտմ ես, ես էլ գուկամ հետդ:

Ճար չեղավ: Գնաց, գնաց հասավ հալիվորին:

—Բարով քեզի, պապո ջան:

—Վա՛յ, դու բարով, հազար բարի էկար,—ըսավ,—բալա ջան, հմի՞ ուր ես էրտմ:

Ըսավ.—Էրտմ եմ Բիլդիլիկի Մառջանին բերեմ:

—Վա՛յ, քու ղրկողի շլինկը պոկվի,—ըսավ հալիվորը:—Ա՛յ մառտ ը՞նճ՛են քեզի ղրկմ էդ անդառնալիկը: Բալա ջան, մի՛ գնա, էդտեղ էրտողը քար է դառնմ, եդ չի գալմ:

Տղեն ըսավ.—Քար չէ, օր էրկատ էլ դառնամ, բտի էրտամ:

Հալիվորը տեսավ, օր տղեն ետ դառնողը չէ, էրտմ է, ըսավ.—Տղա, գիդիմ, օր էրտմ ես, գոյնե լսե խրատներս: Հիմի օր կերտաս, գհանդիպես մե ղզիլ չիմանի՛մ: Էն տեսակ չիման է, օր ո՛նչ օձը գճղե, ո՛նչ ղուշը կասնի: Ասնելու ճար, իլաջ չի էղնի: Դու դաստե՛մ գքաղես ֆոտ կենես: Էման գեշ, գառշելի հոտ գուկա, օր ըղողդ գծակե: Դու կսես՝ ի՞ֆ, էս ինչ անուշ ֆոտ է: Էսի մեր դուռն էղնի, ամեն օր ես ֆոտ էնեմ: Էնի քեզի ճամպա կուդա, դու կասնիս, կերտաս: Կերտաս, քեզի էման ջուր՛մ ռաստ գուկա, օր դու գը զահուրիս: Ասնելու ճար, հնար չի էղնի: Դու, մե էրկու բուռ գխմես: Էնկան անտանելի է, օր օռծակ-օռծակ գուկաս: Էլի կսես՝ ի՞ֆ, էս ինչ անմահական ջուր է: Էսի մեզի մոտիկ էղներ, ամեն օր խմեի: Էնի քեզի ճամպա կուդա, դու կասնիս, կերտաս: Կասնիս, կերտաս, գհասնիս Բիլդիլիկի Մառջանի քոսկ ու սարային: Ընդեղ գտեսնիս, օր սաղ քար են մառտու քիսպատից: Ընդոնք սաղը մառտ են էղե: Գնածել են Բիլդիլի-

կի Մառջանին բերելու, Բիլդիլիկի Մառջանը քարացրել է: Դու չվախենաս, ձեն կուտաս, կսես՝ Բիլդիլիկի Մառջան, ինկը կսե. «Չոռ, իսան օղլի, էլի քու ձենն իմ անգաջը ընկամ, ոտներեդ հետ՝ քար»: Դու կսես՝ ջան, ես էկել եմ քեզ համար, դուս արի: Էլի կսես՝ Բիլդիլիկի Մառջան, էնի էլի կսե. «Չոռ, իսան օղլի, էլի քու ձենն իմ անգաջն ընգամ: Ծնկներեդ հետ՝ քար»: Էլի դու կսես. «Ջան, ես էկել եմ քեզի համար, դուս արի»: Էդման, հա էնի կսե, դու կսես, չուրի կսե. «Իսան օղլի, դու տարար»: Կերտաս նեսը գմտնիս մազերը գփաթես ձեռդ, կսես. «Էսկանը, օր քարացրել ես, էլի շունչ տուր կենտանածու: Գուկաս: Ինչկան գը բոռան, գճվան, թե. «Բոնեկ, տարամ, տարամ», չդառնաս, եդևդ չաշես, հմը դառար՝ աշիր, էն սհատին քար գդառնաս: Ետևդ չաշես:

Էդման խրատեց տղին: Տղեն մնաս բարով ըսավ ու ընկավ ճամպա դիպա Բիլդիլիկի Մառջանի երկիրն: Գնաց, գնաց հասավ եշիլ չիմանին, տեսավ ինչ տեսնի. ոնչ տակ կա, ոնչ ծեր: Մառտը ձիով ու գլխով բատրմիշ կեղնի: Ճար ու ճամպա չկա ասնելու: Կռածավ դաստե՛մ քաղեց, դեմ էրավ քթին, քիչ մնաց ըղողը վերցներ: Ըսավ.—Ֆ էս ինչ անուշ ֆոտ է, քաշկամ էսի մեր դուռն էղնի, ես ամեն օր քաղեմ ֆոտ էնեմ:

Ըսելու քիմի՝ եշիլ չիմանի արանկը մե դուրան ճամպե՛մ բացվավ: Ձին քշեց անցավ: Գնաց, գնաց, հասավ ջրին: Տեսավ, ինչ տեսնի մե ջուր չէ, մի աջեպ, նա՛ սև է, նա՛ ճերմակ է, նա՛ կապուտ է: Հեչ չիդես՝ ինչ ռանգ է: Գոռգոմ է, օր մառտ է զահրմ: Ձին մոտիկ չի էրտմ: Իջավ, գնաց մոտիկ: Էրկու բուռ խմեց, սիրտն ու թոկը իրար էկավ, ըսավ.-Ֆ, երանի էսի մեզի մոտիկ էղներ, ես ամեն օր էս ջրից խմեմ, էս անմահական ջրից: Ըսավ թե չէ, ջուրը կիսվավ, արանկը բացվավ: Տղեն էկավ նստավ ձին ու յալա՝ Բիլդիլիկի Մառջանի քոսկ ու սարայ: Գնաց տեսավ, օր ինչ տեսնի՝ քոսկ ու սարայի չոռս բոլորը մառտ է, կերպարանկ է: «Հայ, հայ,—ըսավ ինկն իրանը,—էսկանն օր քար են դառե, ես էլ քար գդառնամ, ես ըստոնծեն ինչոմ եմ ավել», մտածեց ու մոտեցավ Քոսկ ու Սարային: Ձեն տվավ.—Բիլդիլիկի Մառջան, Բիլդիլիկի Մառջան:

Բիլդիլիկի Մառջանը նեսից ըսավ.—Չոռ, իսան օղլի, էլի քու ձենն ընգավ իմ անգաջը, ոտներեդ հետ՝ քար:

Տղեն ըսավ.—Ջան, ես էկել եմ քեզի մոտ, դուռս արի:

Էնի նեսից ըսավ.—Ծնկներեդ հետ՝ քար:

Տղեն ըսավ.—Բիլդիլիկի Մառջան, Բիլդիլիկի Մարջան:

Էնի նեսից ըսավ.—Չոռ, իսան օղլի, էլի քու ձենն իմ անգաջն ընկամ, պոռտեդ հետ՝ քար:

Տղեն ըսավ.—Ջան, ես էկել եմ քեզի մոտ, դուս արի:

Ըսավ.—Բգետ հետ՝ քար:

Տղեն ըսավ.—Բիլդիլիկի Մարջան:

Էնի նեսից ըսմ էր.—Չոռ, իսանօղլի, էլի քու ձենն իմ անգաջըս ընկամ: Գլխետ հետ՝ քար:

—Ջան,—ըսավ տղեն,—ես էկել եմ քեզի մոտ, դուս արի.:

Ըսավ.—Տարար, իսան օղլի:

Տղեն նես մտավ, մազերը փաթեց ձեռը, ըսավ.—Իշկան օր քարացրել ես, էս սհատին քուլիկին էլի դառծրա մառտ, թող էլնին էրտան ամեկը իրանց ճամպան:

Բիլդիլիկի Մառջանն ըսավ.—Շունչ առեկ, շնչավորվեկ, ձի հեծեկ, ձիավորվեկ, էլեք ձեր չամպեն գնացեկ:

Իրեկ անկամ օր ըսավ, մեկ էլ տեսավ՝ սաղ դառան մառտ, սաղծան: Ըսին.—Վայ, էս իշկան ենկ քնե, անջաղ ձեն տվիկ:

Ըսին էլան, ամեն իրանց ձին հեծավ ու ընկան իրան ճամպեն: Տղեն ըսավ.—Դե արի թարկս՝ էրտանկ:

Բիլդիլիկի Մառջանին առավ թարկը, ընկավ ճամպա, գնացին: Գնացին, հմը ետևանց ձեներ էր գալմ, ձեներ էր գալմ, օր հազար մառտ էլ էղնեին, գխույվորեին: Կանճմ էին՝ բռնեկ, սպանեկ, տարամ, քցեկ, սուր, քար, կրակ, տեսակ-տեսակ օռնոցներ, ղժոցներ էին հանմ: Տղեն հա ուզմ էր ետևն աշեր, հա վախենմ էր: Էդմանով գնածին, հասան ջրին: Էլի տղեն երկու բուռ ջուր խմեց, ըսավ.—Ֆ, էս ինչ անմահական ջուր՛մ է, էռնեկ, էս ջուրը մեզիկ մոտիկ էղներ, ես ամեն օր ըստից խմեյ:

Ըսավ թե չէ, ջուրը կիսվավ, ճամպա բացվավ, անցան գնացին: Ձեները կտռավ: Գնացին հասան եշիլ չիմանին: Տեսան եշիլ չիմանին էղել է երկու էնկան: Տղեն կռածավ դաստեմ քաղեց, ֆոտ էրավ, գլոխը պտտեց գեշ ֆոտից: Ըսավ.—Օ՜ֆ, էս ինչղ անուշ հոտ է: Էսի մեր քով էղներ, ես ամեն օր ըստից ֆոտ էնեի:

Ըսավ թե չէ, եշիլ չիմանի արանկը սիրուն ճամպա բացվավ: Անցան գնացին: Գնացին էն սար: Հալիվորին տեսան, օր նստած է, ճերմակ միրուկը իջած է չոկերին: Բարև տվին, բարև առան, նստան: Ըսին, խոսածին: Տղեն ըսավ.—Պապի, էսկան լավուտենն օր դու էրեծիր, ես ինչո՞վ կոնամ քու լավուտենի տկից էլնիմ: Արի էրտանք մեր հետ, մեր տուն, դու՝ ընձի հեր, ես՝ քեզի տղա: Զատի ես հեր չունիմ:

—Հը,—ծիծաղած հալիվորը, ըսավ,—Որդի ջան, ես ըստից հեչ մե տեղ՚մ չեմ էրտա: Իմ տեղն էսի է:

—Ընչի՞, պապի ջան:

Հալիվորն ըսավ.—Դու օր էդկան տեղերը գնածիր ու բերեցիր, հեչ գիշեր էկա՞վ վրեդ: Սադա զօր չէ՞ր: Չէ՞ օր ես ցերեկն եմ: Գիշերը սև միրուկավոր է: Ես համաշա զօր էի էնմ, օր քու գոռծդ գլոխ բերեիր: Բերեցիր պռծա՞ր, դե հմի գնա, տերը՝ քեզի հետ,—ըսավ հալիվորը:

Տղեն էր, մնաս բարով ըսավ, շնորակալ էղան ու ընկան ճամպա, դեպի իրանց երկիրը գնացին: Գնացին զօր ու գիշեր մեկ էրած: Վեռճապես հասան իրանց երկիրը: Գնացին տուն հասան: Թակավորի ախճիկն ու քուրը ուրխծան, աշխրով մեկ էղան: Տուտի ղուշին սկսեց երգն ու ղունղունալը, գումարվան իրար քով: Եղան թամամ գերդաստան: Հմը պետք է ըսել, օր տղեն գնածած օրից, թակավորի աշխարկը գլխուն դուման էր դառե, մոլոր-մուշկող ման էր գալմ: Տղեն օր էդ օրը էկավ, էկսի օրն էլ մնած տունը, դինջծավ, նոր մեկել օրը գնաց ավղուշի: Էլի հանդիպավ հորը: Հերը փատտվավ տղին, համպուրեց, ըսավ.—Տղա ջան, էնկան էի կարոտծե, իշկան օր գկարոտնա հարազատ հերը հարազատ տղին:

—Շնորակալ եմ,—ըսավ տղեն,—էլի ման էկան դես, ման էկան դեն, ռաստ գալած ղուշ ու ղշորենկ, գազան-մազան զարգեցին, իրկունը՝ էլի ամեն օրվա վախտին, էկան տուն: Էլի տղեն վառտի փնջով մորը զարգեց, աբռշմե յայլուղով սռպեց: Մերը ինջմիշ էղավ.—Ա՜խ,—ըսավ,—քարով զարգեին, կոշտով զարգեին, վառտի փնջով չզարգեին: Սռտիս յարեկը չբացեին:

Նալատլամեն օր ինջմիշ էղավ, թակավորի տղեն զարմացած գլոխը կախեց ու մտածեց, ըսավ. «Էս մառտը խղջմ է, լավուտեն է էնմ, էս նալատլամեն ընչ՚է էսկան գանգտվմ: Բան չեմ հասկնմ: Է, կեղնի՞, օր մեխկից է ամճնմ, ո՞վ գիտե»:

Իրկուն թակավորի տղեն օր գնաց տուն, էնկան ուրախ էր, օր ըսել-խոսալով նես մտավ: Քիչ մնար թևերը վերցուր պարեր: Կնիկն էլի դողալով ըսավ.—Հա, էլի ինչ է էղի, քեֆիդ քեֆ չի հասնի:

Մառտն ըսավ.—Ընչի՞ բտի հասնի, օր ես իմ կործրածս գտել եմ:

Մառտը միամիտ մտքով էր ըսմ, կնիգը հասկնմ էր, թե մառտը գիտե, օր էտի իրան տղեն է: Վեռջապես, էդ օրից էլի ըսկսեծին ավղուշի էրտալ-գալը: Էլի տղեն վառտով էր զարգմ, աբռշմե յայլուղով էր սռպմ, էլի մերը գանգտվմ էր: Խուլասա, ըդման օր վախտ՚մ գնաց, թակավորի տղեն կանճեց իրան սինոտբետներին, գիտնականներին, լալա-վազիրներին հառցրավ, թե.—Էս բանը դուկ բտի գիտենակ, թե ընչ՚է տղեն վառտի տերևով, փնջով զարգմ, աբռշմե յայլուղով սռպմ: Ը՞նչ՚է նալատլամեն ինջմիշ էղնմ:

Ըտեղ գտնվող մառտիկը ամենկը բան՚մ ըսին: Որն ըսավ. «Ով գիտե, ղարիբ մառտ է: Բալկի իրանց էրկիրը, ատատն էդման է: Որն ըսավ. «Բալկի ղարիբ մառտ է, ըդուր մեխկերը չիդե»: Որն էլ ըսավ. «Ով գիտե, ղարիբ մառտ է, բալկի փոռծմ է»:

Մենձ մորկուրն ընդից էլավ ըսավ.—Ով գիտե՝ ինչ շան զավակ է…թակավորի տղի վրեն է ծիծաղմ, թակավորի տղեն օր լավ էղնի, գլոխը գզարգե, օր մեկել էղնի ըդման քարի չզարգե գլոխը:

Մառտը ըսավ.—Ձենդ կտռե, տեղդ նստի: Քեզի օր անգաջ էնեմ, երկիրս գվառեմ:

Հմը հերը թեպետ շատ էր ծերածե, հմը շատ խելածի ու փոռծառու մառտ էր: Ըսավ.—Որդի, ես օր մե խոսկ՚մ ըսեմ, ընձի գլսե՞ս:

Ըսավ.—Ըսա, հայրիկ, օր լսելու էղնի, ընչի՞ չեմ լսե, գլսեմ:

Հերն ըսավ.—Որդի ջան, դու օր տղին էդկան հավ՞սել ես, ըսմ ես՝ շատ խելածի, լավ տղա է: Օր խելածի լավ տղա է, անխելկ բան չի էնե: Մե օր՚մ կանչե պատիվ, հետը ըսա, խոսա, հառծրա, իմածի, թե ընչ՚է էդման վարվմ: Դու բերել ես էսկան մառտուն հառծնմ ես: Ըստոնկ ինչ գիտեն, օր ինչ ըսեն: Յա բտի ալնի ըսեն, յա՝ աղի:

Հոր ըսածին սաղը հավանուտեն տվին, սավայ կնգաց: Կնիգը օժար չէր, օր տղեն գար տունը: Ըսավ.—Ո՞վ է տեսե՝ մառտ իրան դուշ-մանին պատիվ կանճե:

Հեչ մեկը ուշկ չդառծրին կնկա ըսածնե-րին: Կնիկը հեռսիծը տրակմ էր: Կանչել տվավ տատմորը: Քցեց քացու տակ, էնկան զարգեց քացով ու գոմպով, օր չուրի բեզրավ, թախտի վրեն վեր ընկավ:

Ըսավ.—Ես քեզի ըսեցի էն տեսակ տեղ ղրկե, օր էլ չգա: Դու էրտմ, մեկ դրկմ էիր, ջուխտ էր գալմ: Դէ գնա հիմի ջուղապ տուր:

Տատմերը լալով ըսմ էր.—Էլ ուրտեղ ղրկեի, էման տեղ էի ղրկմ, օր սատանեն էլ էրտար, ետ չէր գա: Օր գալմ էր, ես ի՞նչ էնեմ:

Ըսավ.—Ինչ էնես, էլի՛ գնա՛, էման տեղ՚մ ղրկե, օր էլ հեչ սոլ ու սվալը չգա:

Տատմերն ըսավ.—Էս անկամ էլ դու գնա, ես էլ տեղ չիդեմ: Իմ գիտեցած տեղերը ղրգեցի, ետ էկավ: Դու գնա ղրկե, բալկի չգա:

Էլավ կնիգը, ինկը ղլղը փոխեց, հակավ տատմոր շորերը՝ էղավ պառավ ու գնաց ախճ-կա քովը: Դուռը ծեծեց, ախճիկն էկավ դուռը բացեց: Գիտեր թե էլի տատմերն է:

—Յա, մորկուր ջան, էլի էկա՞ր:

Մորկուրը փաթթվավ ախճկան պակպկեց, ըսավ.—Մորկուրը մեռնի քեզի, տեսա՞ր իշկան լավ էղավ, գնաց քեզի հնկերներ բերավ: Էլ մե-նակ չես: Բա, օր էրտա օխտը ծովի հրեղեն ձին բերե, իշկան լավ կեղնի: Իրան իշկան գսազե:

—Հա,—ըսավ ախճիկը մորկուրին,—իր-կուն ախպերս գա, ըսեմ, էրտա բերե:

Էդ ըսելուն էլան Բիլդիլիկի Մառջանն ու թակավորի ախճիկը, մորկուրին քցին քացու տակ, տուր, թե կտաս, էնկան զարգին, օր ինչ-կան օր ինկը զարգել էր տատմորը, օխտ էնկան զարգին իրան: Էլ չէր կռնմ տեղեն էլներ:

—Ես քեզի չսեցի՞ մեկել ոտդ ըստեղ չդնես, դու էլի էկար, աներես շուն, կորի գնա՛:

Անջախ տեղեն էլավ, փախավ տկտկալեն: Ախճիկը նիատը կախ նստավ: Իրկուն ախպերն էկավ, տեսավ՝ քուրը նիատը կախ նստած է: Հա, ըսավ.—Քուր ջան, հիմի ինչ կա, պակաս: Ը՞նչ՚ես նիատդ կախե:

Ըսավ.—Բա ի՞նչ էնեմ, օր չկախեմ: Մոր-կուրս էկավ, ծեծեցին: Բամբկով ջուր կատծրին բերանը: Անջախ փախավ խեղճ մորկուրս, խո մեր գեշը չի ուզե: Ուրտեղ ղրկեց աճողուտենով էկար, հիմի էլ ըսմ է, օր օխտը ծովից հրեղեն ձին բերե: Քու հետ շատ գսազե:

—Հա,—ըսավ,—քուր ջան, նիատդ մի կա-խե: Ես կերտամ գբերեմ:

Թակավորի ախճիկն ու Բիլդիլիկի Մառջա-նը էն քովեն ըսին.—Ջանմ, էդի ի՞նչ մորկուր է, օր իշկան օր անդառնալի տեղ կա, հոն է ղրկմ: Մենկ օժար չենկ էրտլուտ, բտի չեռտաս:

Ըսավ.—Ես կեռտամ, դուկ մի թողեկ:

Շատ ըսին տղեն չլսեց: Բիլդիլիկի Մառ-ջանն ըսավ.—Տղա, յա բտի դու էլ չերտաս, յա օր էրտաս էլ, գուկամ հետդ, ընձի տարա՞ր, հրե-ղեն ձին գբերես, չտարար՝ չես բերե:

—Չէ,—ըսավ տղեն,—ես առանց քեզի էլ գբերեմ: Դու գաս հետս, օր ետև ըսես՝ իմ հու-նարն էր, օր հրեղեն ձին բերիր:

Եռտում, կրակ, թե.—Ես էդման բան չեմ ըսե,—ըսավ Մառջանը:

—Չէ դուկ մացեկ ձեր տեղը, ես կերտամ գբերեմ:

Ելավ առավոտ, ձին նստավ, յալա, դիպա հալիվորը գնաց: Գնաց, շատ ու քիչը աստված գիդե, հասավ հալիվորին: Բարև տվավ, բարև առավ:

—Հա՛, բալա՛ ջան, հիմի ու՞ր ես էրտմ:

Ըսավ.—Էրտմ եմ օխտը ծովից հրեղեն ձին բերելու:

—Վա՛յ,—ըսավ,—ղրկողիդ շլինկը պոկվի, էդ ի՞նչ տեղ է ղրկե, ե՛դ դառի,—ըսավ,—ես հմի բարկանմ եմ քեզ վրա: Բավական է դու քեզի քցես փոռծանկի մեջ: Ուր օր գնածիր, փոռծանք էր, բախտդ բերավ, ազատ ետ դառար: Ամեն վախտ տերտերը գաթա չի ուտե, օր՚մ էլ գատեն իրան կուտե: Դու ընձի լսե, ետ դառի:

—Չէ՛,—ըսավ տղեն,—օր էկել եմ, բտի էր-տամ, ետ չեմ դառնա:

Հալիվորն օր տեսավ տղեն կայնել է տտին, բտի էրտա, խղճաց, ապսոսած տղին, ըսավ.-Բալա ջան, քու ղրկող քեզի դուշման է: Ղրկմ է, օր եդ չդառնաս: Ղրկողը չիդե էլ, թե ուրտեղ է: Ուրտեղ օր գնածիր ու եդ դառար, էսի ընդու-ծեն ղոլայ է, հմը չերտաս՝ լավ է, թե օր կերտաս, գնա՛: Օխտը ծով ըսելը, իրեկ գետ էս դինն է, իրեկ գետ էն դինն է, ծովն արանկն է: Հմը էդ արանկը ռյատ կա, թակավորուտեն կա: Իրա-ռուց շատ հեռու են: Ջրերն էլ, կա տեղ, օր ձին

կասնի: Իրեկ գետը կասնիս, կերտաս գիասնիս մենծ ծովին: Ընդեղ մոտիկ քաղակ կա, էդ քաղկից կառնիս մե տասը տիկ օխտը տարվա հին գինի, մի տասը հոխա բամբակ: Կերտաս ծովի ղրաղը, ծովի ջուրը շատ գեշ ջուր է, ընդոնկ չեն խմմ ծովի ջրից: Ծովի ղրաղը հավուզ կա, էն հավուզի ջուրն են խմմ: Էն հավուզի ջուրը իստակ գկոռճես: Ակունկները բամբակ գզարգես, գինին գլծես հավուզը, դու գտապիս: Ցորեկվա շոկին հրեղեն ձին գուկա՝ օխտը քուռակ ետևեն: Գփլշին հավուզի վրեն, գխմեն, գքեֆովխան, գընգնին վեր: Էն վախտ դու գամը զարգ մոր բերանը ու թռի կռնակը: Ինկը կսե՝ հա՛, իսանօղլի, գհանեմ երկինք, գքցեմ գետին, սաղ կտորդ անգաջդ գմնա: Կսես՝ գիջնիմ փորիդ տակը, գելնիմ կռնակդ: Կսե՝ տարար, իսանօղլի: Դու կառնիս հրեղեն ձին՝ գուկաս:

Ըսավ, խրատեց տղին: Տղեն մնաս բարով ըսավ, ընկավ ճամպա, գնաց, էնկան գնաց, օր բեզրավ, դատրավ, հալից ընկավ: Գնաց գեղ ու քաղակ անծավ, գետ ու ջուր անծավ, հասավ ծովին: Մոտիկ քաղակը գնաց, առավ տասը տիկ օխտը տարվա գինի: Տասը հոխա բամբակ, գնաց ծովի ղրաղը: Տեսավ, ինչ տեսնի, էման ջուր է, օր տեսնողը գը զահուրի: Ծովին էլ զատի չափ ու ծեր չկա: Դես ման էկավ, դեն ման էկավ, հավուզը գտավ: Տեսավ, օր էման զուլալ ջուր է մեջն, օր չի ղմշմ, օր կոջե: Չէ՛, կոջեց, իստակ թապեց, ակունկները բամբակ զարգեց, գինին լծեց, ինկը տապավ: Մեկ էլ տեսավ՝ ցորեկվա շոկին հրեղեն ձին էկավ՝ օխտը քուռկները ետևեն: Փլշան հավուզի վրեն, խմին, ցամկծրին, քեֆովծան, վեր ընկան: Տղեն ելավ, գամ զարգեց մոր բերան ու թռավ կռնակը:

—Հա՛,—ըսավ,—իսանօղլի, գհանեմ երկինկ, գքցեմ, սաղ թիկեդ անգաջդ գմնա:

Ըսավ.—Գիջնիմ փորիտ տակը:

Ըսավ.—Գգռսեմ գետին, տրորեմ, գսպանեմ:

Ըսավ.—Կելնիմ կռնակդ:

Ըսավ.—Տարար, իսանօղլի:

Տղեն էր, հրեղեն ձին հեծած՝ ընկավ ճամպա: Տասը օրվա գնածած ճամպեն մե օր՝մ էր գալմ: Էկավ, էկավ հասավ հալիվորին: Բարև տվավ, բարև առավ, ըսին, խոսածին: Վեռճը մնաս բարով ըսավ, շնորակալ եղավ, ընկավ ճամպա՝ դիպա տուն: Էկավ, էկավ հասավ տուն: Օր՝մ, երկօր դինջացավ, ելավ գնաց ավղուշ: Հանդիպավ հորը: Էլի իրանց ավղուշն էրին պոծան, ընկան ճամպա էկան: Էլի տղեն վառտի տերևով զարգեց, աբռշումե յայլուղով սոպեծ: Էլի մերը ինջմիշ եղավ: Խուլասա, էկան տուն:

Թակավորի տղեն էլի ուրախ էր, էլի կնգա չոկերը դողան, ըսավ. «Չեղնի՛, էլի տղեն էկել է»: Ըսավ.—Ը՞նչ՝է էլի քեֆդ լավ:

Ըսավ.—Ընչի՛ բտի քեֆս լավ չեղնի, իմ կործրածն եմ գտե: Թատարուկ տեսեկ, էգուց բերմ եմ տուն:

Կնգա լիզուն չործավ: Քնան, առավոտ էլան գնածին ավղուշի: Ետ դառնալուծ հերն ըսավ.—Տղա՛ ջան, էսօր դու իմ ղոնախն ես: Էրտանկ մեր տուն:

—Լա՛վ,—ըսավ տղեն:

Գնածին թակավորի տղի տունը: Ընդեղ նստան, ըսին,-խոսածին, սանտռով խաղծան, հացի վախտին սեղանը բածին: Հազար տեսակ ուտելիկ վրեն լծած, բրնձով փլավն էլ բերին դրին: Հերը հա զոռմ էր տղին.—Տղա ջան, հաց կեր:

Օսկե կաքավն էլ օսկե սինով հազր դրած է, օր բտի փեշքեշ տա տղին: Տղեն ձեռը երկնծուծ սինով կակավը բերավ քովը, ըսավ.—Օսկե կակավ, փլաֆ կեր:

Քանի հերն ըսավ՝ ա՛յ տղա, հաց կեր, տղեն ըսավ՝ օսկե կակավ փլաֆ կեր:

Հերը զարմանկից էլ չդիմածավ ըսավ.—Տղա ջան, աշմ եմ տեսկիդ, դեմկիդ, խելկիդ՝ աննման ես: Աշմ եմ խոսկիտդ չեմ հավատմ, թե դու ես ըսմ:

—Էդ՝ էդ խոսկը,—ըսավ,—ընչի՛, թող ուտե, մեխկ է:

Ըսավ.—Ա՛յ տղա, էդի տան ամարատ է, զառտարանկ է, ախր օսկե կակավն էլ փլաֆ ուտե՞:

—Ընչի՛ չի ուտե, օսկե կակավ է:

—Փլաֆ չի ուտե,—ըսեց հերը:

Տղեն ըսավ.—Օսկե կակավն օր փլաֆ չի ուտե, բա իսանը շան լակոդ գբերե՞: Չէ՞ օր էդ անպատվուտենը ավելի շատ քուկն է, քանց թե ընդուրը: Քեզեն էր ծնվե շան լակոտը, ոչ թե, ըսենկ, ընդից, ուրեմն քեզ էլ էր հարկավոր նալատլաման էնել: Էնի ի՞նչ մեղավոր է, օր ընդուրն եք նալատլամա էրե: Ետե ես էղնեի դատավորը, էդման գդատեյ: Հլը քիչ՝մ խորունկ մտածե, օր

ետե էդ կնիգը շան լակոտ էլ բերած էղներ, քու կնիգտ է, շան լակոտը քեզեն է էղե, ոչ թե ընդից:

Տղեն օր ըդման ըսավ, հերը ամոտու գլոխը կախեց: Ըսավ.—Էս էրեխա տղի ըսածը շատ տեղին է: Շան լակոտ, թե գիլու լակոտ էղած էղներ, ընձեն էր էղե, ընչի՞ ես չուրի հիմի չէի ֆայմմ, օր էս ջայել տղեն ընձի ամոտանկ չտար:

Հերն ընկավ մտկերի տակ: Տղեն հա խոսմ էր.—Անմեղ կնգան անմեղ տեղը տարե նալատլամա էկ արե, օխտ ջաղացի օռտլաղը քիչ է, դեռ առնմ-դառնմ քարով ու կոշտով զարգմ եկ, զարգմ եկ: Էլ քու հացը կուտվի՞, օր ըսմ ես՝ հաց կեր: Ահա քսան տարի է, օր էդ անմեղ կնիգը ղայտով խամ հաց էլ չի կերե ու ջուր խմե: Էլ քու հացը ի՞նչ ուտելու հաց է:

Ըդման օր ըսավ, հերը ջիլիզ ամճցավ: Ըսավ.—Էս սհատիս գնացեկ հանեկ, տարեկ համամ, օխտը ջուր լողծրեկ, լվածեկ, հակծրեկ բերեկ:

Էն սհատին գնածին:

Հանին տարան համամ լոխծրին, լվածին, հակծրին բերին տուն: Տղեն ըսավ.-Ըտրանով չվեռճածավ: Չէ՞ օր էս մառտն իրա խոստումն կատարել է: Բա ուրանի՞ քու էրեխեկը, հիմի դառել են ամեկը քսան տարեկան:

Թակավորի տղեն ըսավ.—Ուրեմն շան լակոտ բերելը սուտ է՞:

—Հը,—ծիծաղած տղեն, ըսավ,—ուրեմն դու էլ համոզված ես, օր շան լակոտ է բերե՞,—ըսավ տղեն ու գլոխը բածեց:

Օր օսկե քյանկուլը տեսավ հոր ու մոր ուշկը գնաց: Օյամիշ եղավ ըսավ հերը.—Բերեկ իմ դուշմանը: Ո՞վ է էղե, բերեկ, օր պատժեմ:

Բերեծին էրկու քուրոճը ու տատմորը, ըսին.—Ինչ օր էրել են, ընդոնկ են էրե:

Բերավ էտ իրեկին կապեց ջորեկու պոճը, բաց թողեց, ըսավ.—Տարե՞կ զարկեկ սարեսար, քարեքար: Ղուռի ղաֆեկը տուն բերեկ:

Տարան ջորիկը զարգին սարեսար, քարեքար, իրկունը ղուռի ղաֆեկը տուն բերին: Թակավորի տղեն էր, մառտ ղրկեց Բիլդիլիկի Մառջանին, թակավորի ախճկան ու իրա քուրոջը բերին պալատ:

Բերավ առաջ ինկը հառոնկով, դավուլզուռնով, քեֆ-ուրախուտենով պսակվավ: Օխտը զօր ու գիշեր հառոնիկ էրավ: Ետև էլ տղեն պսակեց Բիլդիլիկի Մառջանի հետ ու թակավորի ախճկա հետ: Նորից օխտը զօր, օխտը գիշեր հառոնիկ, քեֆ-ուրախուտեն, աշկալուս էրավ, օր համ դուշմաններին էր գրե, համ էլ հարազատներին: Ըսմ էին՝ անմեղուտենը չի կորի: Ըստոնկ իրանց հարազատներին գտան, դուկ էլ ձեր հարազատներին գտնեկ, ուրխնակ: Եռտկեն ընկավ իրեկ խնձոր, մեկն՝ ըսողին, մեկն՝ լսողին, մեկն էլ՝ հեքյատ հնարողին:

5(5). ՍՈՅԼԱՄԱՋ ԽԱՆՈՒՄ-1

Լինում է մի թագավոր, ունենում է մի գեղեցիկ աղջիկ: Աղջիկը էնքան գեղեցիկ է լինում, որ արևին ասում է. «Դու մի դուս գա, ես եմ դուս գալու»: Էդ աղջիկը բոլորովին չի խոսում, դառցել է քսան տարեկան:

Ինչքան իմաստուն, ինչքան հեքիմ, ինչքան բժիշկ՝ չեն կարողացել աղջկան բժշկել: Բոլորի գլուխները կտրել են, որ պալատից գաղտնիքը դուս չգա:

Մի գյուղացի տղա ունենում է մի մեր, քասիբ են լինում: Տղեն տնից դուս է գալիս, որ գնա քաղաք աշխատի, բերի մորը պահի: Մի քանի հաց է վերցնում, մի կտոր պանիր ու ընկնում ճամբա:

Գալիս գետի կողքով անցնելիս տեսնում է՝ մի ձուկ թփրտում է չոր գետնի վրա:

«Խեղճ ձուկ»,—վերցնում է քցում ջուրը, ուզում է շարունակել ճանապարհը, հանկարծ լսում է մի ձայն. «Դու ինձի լավություն արիր, ես քու լավությունը չեմ մոռանա, նեղ տեղը որ ընկար, ես քեզ կը հասնիմ»:

Նայում է չորս բոլորը՝ ոչ ոք չկա, շարունակում է ճանապարհը:

Շատ է գնում, թե քիչ է գնում, շատ ու քիչը աստված գիտե, հասնում է մի մեծ ծառի՝ տակը մի հարմար քար դրած: Նստում է քարին, շուք տեղը, բաց է անում մարմեն, որ հաց ուտի: Հանկարծ տեսնում է՝ մի մարդ կողքին կայնած: Գալողը հարցնում է.—Բարև, աղբե՞ր, էդ ո՞ւր ես գնում:

—Գնում եմ քաղաք փող աշխատելու, մորս պահելու:

—Ես էլ եմ գնում քաղաք աշխատելու,—ասում է գալողը,—արի՛ աղբեր դառնանք:

—Դառնանք:

Ճկուտները կտրում են, արյունը արյունի հետ են խառնում ու դառնում են «ողջում աղբեր»: Գեղացին դառնում է մեծ աղբերը, իսկ գալողը՝ փոքր աղբերը:

Գալողը ասում է.—Աղբեր, ես ոչ մի բան չունիմ, հետս ոչ մի բան ուտելու չեմ վերցրե:

—Վնաս չունի, աղբեր ջան, ես ունիմ հաց էլ, պանիր էլ:

Նստում են, հաց ու պանիր իշտայով ուտում են, սառը ջուրը բռով խմում են ու ընկնում ճանապար՝ դեպի քաղաք: Շատ են գնում, թե քիչ, աստված գիտե, վերջապես հասնում են մի մեծ քաղաք:

Փոքր աղբերը ասում է.—Մի հատ տուն բռնենք, ապրենք:

Առավոտը, երբ բարի լուսը բացվում է, բարի լուսը բացվի բոլորի վրա, վեր են կենում գնում:

Փոքր աղբերը ասում է.—Դու էս ճամփով գնա, ես էլ էս ճամփով կէրթամ, կաշխատենք, իրիկունը կուգանք տուն:

Մեծ աղբերը գնում է իրա ճանապարհով, ամբողջ օրը կանգնում է, ոչ ոք աշխատանք չի տալիս: Առանց փող աշխատելու տուն է գալիս:

Իսկ փոքր աղբերը իրիկունը որ տուն է գալիս, փող է բերում:

Մեծ աղբերը շատ է տխրում, որ փող չի աշխատե:

Փոքր աղբերը ասում է.—Ինչ դարդ ես անում, աղբեր ջան, ես փող ունեմ, վերցրու գնա, ինչ որ պետք է ա՛ռ:

Մյուս օրը փոքր աղբերը ասում է.—Արի պայմանավորվենք, ինչ որ աշխատենք գնանք նորից էն ծառի տակը, [որտեղ առաջի անգամը հանդիպեցինք], հալալ կես անենք:

—Լավ, աղբեր ջան, համաձայն եմ,—ասում է մեծ աղբերը:

Մի քանի օր էդպես գնում են [աշխատանքի], մեծ աղբերը տուն ոչինչ չի բերում, իսկ փոքր աղբերը ամեն անգամ, միշտ, շատ փող է բերում: Լավ ապրում են, նոր հագուստներ առնում:

Մի օր մեծ աղբերը ասում է.—Արի՛ էսօր դու իմ ճամբովս գնա, ես քու ճամբովդ երթամ:

—Լավ,—ասում է փոքր աղբերը:

Փոխում են ճանապարհները: Մեծ աղբերը էլի ոչինչ չի բերում, իսկ փոքր աղբերը էլի փողով է գալիս: Ճարը կտրած, մեծ աղբերը ասում է.—Էսօր իրար հետ դուս գանք՝ միասին աշխատելու:

—Լավ,—համաձայնվում է փոքր աղբերը:

Դուրս են գալիս մի ճանապարհով գնում, տեսնում են, որ ժողովուրդը հավաքվել է: Մեկը՝ թագավորի մարդը, պալատից [բալկոնից] բղավում է.—Ով որ թագավորի աղջիկը՝ Սոյլամազ խանումը խոսացնի, թագավորը նրան կնության կուտա ու թագավորության կեսն էլ կտա:

Պզդի աղբերը մեծ աղբորը ասում է.—Էդ լավ բան է, գնա խնամքարին նստի ու Սոյլամազ խանումին խոսացրու, թագավորի փեսեն կը դառնաս:

—Ես մի անգրագետ գեղացու տղա, ես ի՞նչ կըրնամ թագավորի աղջկան՝ Սոյլամազ խանումին խոսացնել:

Փոքր աղբերը ստիպում է.—Դու պետք է գնաս ու խոսացնես: Որ կը գնաս, քեզ կը տանեն պալատ՝ աղջկա սենյակը, դու կը մտնես նես, աղջկա հետ չես խոսի, ուշադրություն չես դարձնե նրա վրա, բարև կուտաս պատի փեչքին, աղջիկը քեզ կը հրավիրե սեղանին դրած բոլոր բարիքները ուտելու, դու կուտես, կը կշտանաս ու կը խոսիս պատի փեչքի հետ, շատ խոսելուց յետո կսկսես վիճել... Երբ որ հասնի այն տեղը, որ քեզ ջղայնացնե: Դու կացինը կը վերցնես, որ փեչքին խփես, աղջիկը էնտեղ կը խոսի:

Մեծ աղբերը նոր, լավ շորերը հագնում, մաքրվում ու գնում է թագավորի խնամաքարին նստում: Պալատականները հարցնում են.—Ա՛յ տղա, ի՞նչ մարդ ես:

—Ես Սոյլամազ խանումին կրնամ խոսեցնել:

Տանում են թագավորի մոտ: Տղեն թամալա է տալիս, չոքում, թագավորի ձեռքը համբուրում:

—Ի՞նչ մարդ ես,—հարցնում է թագավորը:

—Եկել եմ Սոյլամազ խանումին խոսեցնելու համար:

—Եթե դու խոսացրիր իմ աղջկան, աղջիկս էլ ՝ քեզի, կարողությանս կեսն էլ է քեզի, հմը որ չը կարողացար խոսացնել, գլուխդ կը կտրեմ:

Տղեն համաձայնվում է: Գնում է աղջկա մոտ: Ինչպես որ ասել էր փոքր աղբերը, բոլորը կատարեց և երբ որ ուզեց կացնով խփել փեչքին, աղջիկը խոսեց.—Ինչո՞ւ ես ուզում կոտրել այդ թանկագին փեչքը:

Երբ պալատականները դռները բացեցին, աղջիկը ձեռքով թափ տվեց, որ չի խոսել: Պալատականները համաձայնվեցին աղջկա հետ:

Տղին տարան թագավորի մոտ, որ հրամայե՝ գլուխը կտրեն: Տղեն ասաց.—Թագավորն ապրած կենա, ես աղջկանդ խոսացրի, բայց նա ձեռքով հասկացրեց քո պալատականներին, որ չեմ խոսացրել: Պալատականներն էլ նրա ասածը ընդունեցին:

Թագավորն ասաց.—Լա՛վ, վաղն արի խոսացրու, ես ինքս կը նայեմ ու կը հետևեմ, աղջիկս ինձ չի կարող խաբել:

Գնում է տղան տուն: Փոքր աղբերը տեսնում է, որ աղբերը տխուր ու տրտում եկավ տուն, հարցնում է.—Ինչո՞ւ ես տխուր, աղբե՛ր ջան, չը խոսացրի՞ր:

—Խոսացրի հմը չը հավատացին... պայմանավորվել ենք թագավորի հետ, որ վաղը խոսացրի՝ լավ, չը խոսացրի՝ գլուխս կը կտրե:

—Աղբեր ջան, մի դարդ անի, դու էլի կը խոսացնես: Սոյլամազ խանումը մի թանկարժեք մարմարից, ամբողջ ոսկով զարդարված մի շանդան ունի, որը նրան ընծայել են իրա ծննդյան քսան տարին թմմած օրը: Ինչպես էն անգամ, էս անգամն էլ կը խոսես, կը վիճաբանես շանդանի հետ, յետո վեր կառնես, որ գետնին խփես ջարդես՝ էդ ժամանակ Սոյլամազ խանումը կը խոսի:

Մյուս առավոտը, ինչպես որ պատվիրել էր փոքր աղբերը, մեծ աղբերը գնաց պալատ: Տարան աղջկա մոտ, թագավորը թաք կացավ դռան հետևը: Տղան նես մտավ սենյակը, բարևեց շանդանին: Աղջիկը հրավիրեց ուտելու սեղանի ճոխ բարիքներից: Երբ որ տղան կերավ կշտացավ, սկսեց խոսել և վիճել շանդանի հետ, վեճի տաք ժամանակ ջղայնացավ, վերցրեց թագավորի նվերը՝ աղջկան և ուզում էր գետնին խփել ու ջարթ ու փշուր անել, այդ ժամանակ աղջիկը բացվեց.—Ինչ ես անում, իմ ծննդյան նվերն է:

Էդ րոպեին թագավորը դուռը բաց է անում, գրկում տղին, համբուրում ճակատը ու ասում է.—Աղջիկս էլ է քոնը, թագավորության կեսն էլ է քոնը,—հետո հարցնում է,—ա՛յ տղա, ի՞նչ ունիս:

—Ես քասիբ տղա եմ, գեղում ունիմ մի մեր, քաղաքում էլ մի աղբեր, որի հետ միասին մի տան մեջ ապրում ենք:

—Դե գնա՛, աղբորդ բեր, որ հարսանիք անենք:

Տղան ուրախ-ուրախ գնում է աղբոր մոտ, ասում.—Աղբե՛ր ջան, աչքդ լուս, Սոյլամազ խանումին խոսացրի, դառա թագավորի փեսա... գնանք պալատ, հարսանիքը անենք:

Փոքր աղբերը պատասխանում է.—Չասեցի՞, որ Սոյլամազ խանումին կը խոսացնես:

Փոքր աղբորը տանում է պալատ, ծանոթացնում թագավորի հետ:

Սկսեցին հարսանիքը: Օխտը օր, օխտը գիշեր քեֆ ուրախություն արին: Մեծ աղբորը լավ աշխատանք տվեցին:

Թագավորական կյանք են վայելում, բայց Սոյլամազ խանումը էլի չէր խոսում: Մեծ աղբերը շատ էր մտածում, տխուր էր:

—Աղբե՛ր ջան, եղար թագավորի փեսա, թագավորական կյանք ես վայլում, ի՞նչ է պատճառը, որ դու տխուր ես:

—Աղբեր ջան,-պատասխանում է մեծ աղբերը,—Սոյլամազ խանումը [էլի] չի խոսում, կսեմ՝ յեսօր-վաղը կը խոսի, հըմը չի խոսում:

Պզդի աղբերը կսե.—Գնա թագավորի ձեռքը համբուրի, չոքի յառաջը ու ըսա. «Թագավորն ապրած կենա, ահա վեց ամիս է, որ մենք ամուսնացել ենք, չես ասում, թե ծնող ունիս, բարեկամ ունիս, թույլ տուր կնոջս առնեմ, գնամ մորս, բարեկամներիս տեսության»:

Թագավորը տալիս է հրաման.—Որդի, կամքը քոնն է, ուզում ես գնաս [գնա], ինչ ուզում ես վերցրու [հետդ]:

Տղեն վերցնում է էրկու խուրճին ոսկի, ուտելիք, ինչ որ պետք է: Կառեթը լծում են ձիանները, փողերը փչում են, զորքը թմբուկներով ճանապար են գցում: Երկու աղբերը, Սոյլամազ խանումը, զորքը ընկնում են ճամբա:

Շատ են գնում, թե քիչ, հասնում են էն ծառի մոտ, որտեղ աղբրացել էին: Իջնում են, որ այդտեղ հանգստանան, ուտում, խմում են, մեծ աղբերը ասում է.—Շատ շնորհակալ եմ ձեզանից, մենք էստեղից կը գնանք: Մեզ մենակ հարկավոր է էրկու ձի: Դուք գնացեք եդ, խաբար տարեք թագավորին, որ սաղ-սալամաթ ճամբա գցեցինք...

Զորքը գնում է եդ, թող նրանք գնան թագավորի մոտ:

Մնում են երեքով՝ երկու աղբերը ու Սոյլամազ խանումը:

Պզդի աղբերը ասում է.—Աղբեր ջան, մենք էստեղ աղբրացանք ու պայման կապեցինք, որ ինչ որ աշխատենք հալալ հավասար կես անենք:

Սկսում են բաժանել իրանց օսկին, ունեցվածքը. բոլորը հավասար բաժանում են, ձիու մեկը առնում է մե աղբերը, մյուսը՝ մեկել աղբերը, մնում է Սոյլամազ խանումը:

Փոքր աղբերը ասում է.—Էս էլ իրար հետ ենք աշխատե, պիտի կես անենք:

—Ա՛յ աղբեր, վո՞նց կլինի, որ ողջ մարդուն կես անենք, ամբողջը քեզ, միայն էս խեղճ աղջկան մի կես անե:

—Չէ՛, պիտի կես անենք, պայմանավորվել ենք: Ամեն բան ինձ լսել ես, է՛ս էլ պիտի լսես:

—Ա՛խր, ո՞նց կլնի, կմեռնի:

Բայց փոքր աղբերը էլի ասում է.—Չէ, պիտի կիսենք:

Տեսնում է, որ ճար չկա, մեծ աղբերը ասում է.—Ինչ անում ես՝ արա, միայն ես չը տեսնեմ, ասում է ու գնում հեռու, երեսը շուռ տալիս:

Փոքր աղբերը չվանը բերում է, աղջկան ամուր ծառից կապում, կացինը առնում է, գնում է հեռու, թափով վազում գալիս է վրա, որ կես անի:

—Չէ՛, հալալ կես չի էղնի, լավ չափս չը վերցրի:

Գնում է, երկրորդ անգամը թափով գալիս, բարձրացնում է կացինը, բայց էլի ասում է.—Էլի չափս սխալ վերցրեցի:

Երրորդ անգամը ասում է. «Ինչպես էլ լինի պիտի կես անեմ»,—գնում է ու նորից թափով գալիս է վրա, ահագին կացինը բոլոր ուժով խփում է աղջկա գլխավերևը:

Աղջիկը սարսափից սիրտը թափում է ու բերնից մի փոքրիկ օձ է դուս գալիս, ընկնում գետնին: Էդ օձն էր, որ բկի մեջ մնացել էր ու աղջկա լեզուն բռնել էր, դրա համար չէր կրնա խոսիլ: Օձին փռթիկ-փռտիկ են անում:

Սոյլամազ խանումի լեզուն բացվում է, խոսում է ու պատմում, որ փոքր ժամանակ այգում էդ օձը մտել է բողազը, որ խոսելու ժամանակ չէր թողնում խոսել:

Փոքր աղբերը ասում է.—Իմ փայ օսքին ու ունեցածներս քեզ, Սոյլամազ խանումն էլ քեզ, գնացեք ապրեք, ուրախացեք: Ես էն ձուկն էի, որ դու լավություն արեցիր, գցեցիր ջուրը, ասում է ու անհայտանում:

Տղեն շատ է ողբում, սաստիկ լաց է լինում.—Ա՛յ իմ աղբերս, ա՛յ իմ աղբերս...

Բայց իզուր [աղբեր չկար]:

Կինը ասում է.—Դու նրա կյանքը փրկել ես, նա էլ փոխարեն քեզ լավություն արեց... Գնանք հասնենք քո ծնողներին:

Հասնում են տեղ: Բոլոր օսկին, ունեցածը բաժանում է իրա բարեկամներին ու քասիբ գյուղացիներին: Մորը, կնոջը վերցնում է, գալիս է թագավորի պալատը, բաղդավոր ու երջանիկ ապրում:

Իրանք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնինք մեր մուրազին:

Երկնուց երեք խնձոր ընկան, մեկը՝ պատմողին, մեկը՝ գրողին, մեկն էլ՝ ուստա Աշոյին (պատմողի ամուսինը, որը ներկա էր):

6(6). ՍՈՅԼԱՄԱԶ ԽԱՆՄ-2

Կեղնի, չի էղնի մե թակավոր կեղնի: Էդ թակավորը կունենա օխտը տղա: Օխտն էլ ճնդիկ հասած, կայացած են, բտի նշանվին: Թակավորն ըսավ.—Բտի ընգնիմ երկրուց երկիր, գտնեմ էման թակավոր, օր ունենա օխտը ախճիկ, օխտն էլ ուզեմ, բերեմ մեկ անգամից հառնիկ էնեմ:

Ըսավ, էլավ առավ լալին, ընկավ երկրից երկիր: Գնաց: Գտավ մե թակավոր՝մ: Ուներ օխտ ախճիկ: Օխտն էլ ուզեց, էրավ հառս: Քառսուն օր վադա կտռին, օր քառսուն օրեն ետև թակավորն էրտա, իրան հառսներին բերի: Ուզեց, կտռեց, կապեց, ելավ էկավ:

Քառսուն օրից ետև ելան թակավորի հառսնավորները դավուլ-զուռնով, քեֆ էնելով՝ գնածին հառսները բերելու: Գնացին հարի ճամպու կեսն: Մե հալիվոր մառտ՝մ բոստան ուներ դրած ճամպու կոխկը: Խմած, քեֆովծած մառտիկ գմտնին հալիվորի բոստանը գտրորեն: Պզդի տղեն խապար էղնելուն պես՝ ձին քշեց, ըստուր բոտեց դուս, ընդուր բոտեց դուս, բոստանից հեռեծրավ: Հանեց քանի՝մ օսկի տվավ հալիվորին՝ զիանի տեղ ու անծան գնածին, բոստանից հեռեծան: Մե սիրուն չայիր տեղ՝մ չադրներ զարգին, կեծան հոդ, չուրի լուսու դեմ: Էլան թոպ էրին չադր-մադր, գնածին:

Գնածին, գնածին, շատ գնածին, թե քիչ, շատն ու քիչը իրանկ գիտեն: Վեռճապես հասան թակավորի քաղակը: Գնածին, նստան իրանց կերուխում, քեֆ-ուրախուտենն էրեծին: Էլան, առան իրանծ հառսները ջամով, ջիեզով էկան: Էկան, էկան հասան հալիվորի բոստանին մոտիկ: Բերին չադրները զարգեցին ու գիշերը մնածին, առավոտ էլնին էրտան: Պզտի տղեն էլ հեձավ ձին, ընկավ դավատվորների մեճը, ըսավ.—Ա՛ն, ըսմ եմ, օր ոչ մեկդ չեղնի հալիվորին զարար տակ: Ինչ օր ձեզի պետկ է, ըսեկ, ես առնիմ, բերեմ,—ըսավ, էկավ մտավ իրան չադրը:

Ընդոնկ էլ ամեկը մտան իրանց չադրը, մնացին, չուրի լուսածավ: Ելան ամեկը իրանց չադրը քանդեց, վերծրավ: Հազրվում են, օր բտի էրտան, տեսան, օր պզդի տղի չադրի բոլորը էման մե վիշապ՚մ է փատե, գլոխը դրել է պոճին, օր տեսնողը գզահուրի: Ո՛նչ նեսից մառտ է թողմ դուս էլնի, ո՛նչ դսից մառտ է թողմ նես մտնի: Քաշեծին ամեկն իրանց սրերը վրա պռծան, օր ղիմա-ղիմա էնեին: Ըսավ.—Լավ եղնիկ, ձեր սրերը կդնեկ իրանց տեղը, թե չէ սաղիդ մե զարկելով գփռեմ գետին:

Թակավորի մառտիկը անսաս սրերը դրին տեղերը: Թակավորի պզտի տղեն էլավ չադրից, ըսավ.—Ա՛յ անասուն, ճամպա տուր էլնիմ դուս, գամ իմ հառնածույիս հետ էրտամ իմ ճամպեն՝ մեր մառտկանց հետ:

Ըսավ.—Դու քու տեղդ արխեին նստի, ես քու հետը գոռծ ունիմ:

—Է՛,—ըսավ տղեն հարսնկվորին,—դուկ գնացեկ, ես գուկամ:

Հառսնկվորը թողին պզտի տղին ու հառսին, գնածին: Վիշապն ըսավ.—Թակավորի տղա, ես քու հետ բազար ունիմ:

—Ի՞նչ բազար,-ըսավ թակավորի տղեն:

Ըսավ.—Դու բտի էրտաս Սոյլամազ խանմին բերես տաս ընձի, օր ես թողեմ քու նշանածին առնիս, էրտաս: Բերիր՝ բերիր, չբերիր՝ նշանածիծդ ձեռ քաշե, չեմ տա:

—Ախր,—ըսավ,—ի՞նչդ կեղնի՝ նշանածս մնա մենակ չոլի գլոխը, գոյնե թող տանիմ տուն, եդ գամ: Աստված շիատ էղնի, թող տանիմ տուն, գամ քու պահանջդ կատարեմ:

—Չէ՛,—ըսավ,—նշանածիծդ հեչ մի վախենա, ես աշկիս լուսի պես գպայեմ չուրի գալդ: Դու գնա, մի՛ վախենա:

—Դե, դու՝ քու ասված,—ըսավ թակավորի տղեն, ընկավ ճամպա, գնաց:

Գնաց, գնաց, զօր գնաց, գիշեր գնաց, մտավ մե մեշե՚մ: Մտավ մեշեն ծառները էնկան սխ էին, օր ձի չի ասնմ: Գնաց, գնաց տեսավ մե ճնջուղ՚մ թռնմ է էս ծառին, էն ծառին, ըսմ է.—Թակավորի տղեն օր ընձի տանի հետը, Սոյլամազ խանմին գբերե, օր չտանի, չի բերե:

Տղեն անգաջ չէր էնեմ, ձին քշմ էրտմ էր: Շատ օր ճնճուղը ըսավ, տղեն ըսավ. «Լա՛վ, թող գա, բռնեմ վիզը քաշեմ, էրտամ»: Դառավ ճնճուղին ըսավ.—Արի՛, արի՛, արի՛ տանիմ:

Ճնճուղն ըսավ.—Հա՛, գամ, օր շլինկս քաշե՞ս, չեմ գա: Առանց ընձ էլ չես կռնա Սոյլամազ խանմին բերես:

Տղեն մտածեց, ըսավ. «Լա՛վ, ես շլինկ առա, օր Սոյլամազ խանմին գբերեմ, հմը ինչո՞վ բտի բերեմ, ո՛նչ տեղը գիտեմ, ո՛նչ ձևը գիդեմ: Կեցի էս ճնճուղին տանիմ հետս: Թե բան՚մ էնե, էս ճնճուղը կենե»,-ըսավ, կանչեց ճնճուղին, բռնեց դրավ ծոծը, գնացին:

Գնացին, գնացին, շատ գնացին, թե քիչ, շատն ու քիչն իրանկ գիտեն, հասան Սոյլամազ խանմի հոր սայմանը: Ընդեղ ճնճուղն ըսավ.—Թակավորի տղա, մենկ էկանկ հասանկ էդ մառտու սայմանը, հմի ի՞նչ բտի էնես, ըսա՛:

Ըսավ.—Ի՞նչ ըսեմ, բտի էրտամ, առնիմ գամ:

—Հը՛,—ծիծաղած ճնճուղը, ըսավ,—թակավորի տղա, Սոյլամազ խանմին իրեկ անկամ բտի խոսըծնես, օր բերես, թե չէ եռեսունինի գլոխը զարգել է, դու կեղնիս քառասունը:

—Հա՞:

—Հա՛:

—Բա ի՞նչ էնենկ:

Ճնճուղն ըսավ.—Գիտե՞ս ինչ կենենք: Հիմի օր գնածինկ, դու թակավորի հետ պայման գկապես: Թակավորն օր չի օժար էղնի, հմը դու կպնդես: Կսես, օր ես էկել եմ խոսծնեմ: Վեռճը թակավորը կօժարի: Կերտանկ, օր գմտնինկ Սոյլամազ խանմի օդևանը դու ընձի բաց գթողես: Ես կմտնիմ կառավատի տակը: Դու գուկաս Սոյլամազ խանումին բարև գուտաս: Ինչ լիզվով բարև տաս, քու բարևը չի առնի: Դու դառնաս բարև կուտաս կառավատին, ես բարևդ կառնիմ: Ետև առակներ կսես, ես հա-

կառակը գորոշեմ, դու էլի նույնպես հակառակ կսես: Էն վախտ էնի գխոսա: Իրեկ անկամ օր խոսաց, նոր կառնիս գուկաս:

—Հա՞:

—Հա՛:

Գնածին թակավորի դարբասներից անցան: Գնածին նշանակված տեղ կար, նստան ընդեղ: Գնածին թակավորին ըսին.—Էլի մառտ է էկե:

Ըսավ թակավորը.—Էջզանկ, էլի էդ անիծածին բտի արունկ էնել տան: Կանճեք գա:

Էկան տղին կանճեցին: Գնաց, իրեկ անկամ գլոխ տվավ թակավորին, բարև կապեց, կայնավ: Թակավորը տեղ նշանց տվավ, տղեն նստավ: Թակավորն աշեց տղի դեմկին, լիբազին, զարմածավ, ըսավ.-Ա՛յ տղա, էկել ես, բարով, հազար բարի ես էկե: Արի կեղնի եդ դառի գնա, մի՛ իզուր գլխեդ ձեռ քաշե, ապսոս ես դու:

—Չէ՛,—ըսավ տղեն,—ես էկել եմ, բտի փոռծեմ: Խոսծրի՝ գտանիմ, չխոսծրի՝ արունս իրան հալալ:

—Դե, քու մեխկդ՝ քու վիզը,—ըսավ թակավորը:

Բերավ մե գրագիր՝մ տվավ, էրկու հատ էլ շիատ, ըսավ.—Գնացեկ:

Գնածին: Գրագիրը նստավ դռան եդև: Շիադները նստան կոխկը: Տղեն գնաց առաջ տեսավ, օր ի՞նչ տեսնի, աշխարկի միակն է, օր կա: Ո՞նչ արևն է ըդուր պես սիրուն, գեղեծիկ, ո՞նչ էլ լուսնակը: Տղի խելկը գլխեն գնաց, օր տեսավ: Անջաղ իրան պայելով բարև տվավ: Ըսավ.—Բարև քեզի:

Ձեն չհանեց:

Ըսավ.—Սալամ ալեկում[41]:

Ձեն չհանեց:

—Գամառ ջոբա[42]:

Ձեն չհանեց:

Ուսուլով ճնճուղը թողեց, ճնճուղը գնաց մտավ կառավատի տակը:

—Է՛,—ըսավ.—բարև քեզի, կառավատ ախպեր:

—Վա՛յ, դու բարո՞վ, հազար բարի էկար: Իմ գլխուն, իմ էրեսին էկար: Էս քանի՞ տարի է՝ ես ըստեղ վեր ընկած եմ, հլը մեկը չէր էղե, օր ընձի բարև տար: Ա՛յ տնաշեններ, բարևն օր կա ասունն է: Ի՞նչ կեղնի, օր բարև՝մ տան:

—Է՛,—ըսավ տղեն,—կառավա՛ատ ախպեր, ընդոնկ չեն տվե, ես տվի: Դե հիմի ըսա տեսնինկ հեչ ի՞նչ կա, ի՞նչ չկա: Հնուտեն, նոր խաբար, խոսկեր:

Ծիծաղած կառավատը, ըսավ.—Թակավորի տղա, վրես ե՞ս ծիծղմ: Ես ո՞ւր եմ գնածե, օր բան գիտենամ: Դու ես աշխարկ ման էկե, խոսկ ու խաբար լսե: Դու բան՝մ ըսա, անգաջ էնենկ:

—Լա՛վ, կառավատ ախպեր, լավ անգաջ էրա, ես մե զարմանալի բան՝մ պատմեմ:

—Ըսա՛, թակավորի տղա, ես շատ փապակով գլսեմ:

Տղեն ըսավ.—Կառավատ ախպեր, ես էսօր գալմ էի, մեշի մեչը տեսա չոռս հոգի վիճաբանմ, կռվմ էին: Քի՞չ՝մ անկլու էղա, լսեցի, օր էն իրեկի կռիվը մե ախճկա՝մ վրա է: Ուրեմն ըդոնց մեկը տերտեր էր, մեկը՝ թառզի, մեկն էլ դուրգյար էր: Իրեկը իրար հետ ճամպա են գալմ: Գալմ հասնմ են մեշեն: Մուտը տալմ է վրա: Ըդոնկ մնմ են մեշի մեջը: Դուրգարին թողմ են ղարավուլ, օր դուրգյարն էլ թառզուն ձեն տա, թառզին՝ տերտերին: Ըդմանով ղարավուլ քաշեն, չուրի լուսնա: Լսմ ե՞ս, կառավա՛ատ ախպեր:

—Լսմ եմ, թակավորի տղա, պատմե:

—Դուրգյարն էլ տեսավ օր քունը իրան խեղճծրավ, վերցրել է ուրակ, սխոց, ծառն կտռել է շինել է մե ախճկա՝մ քիսպատի: Կայնծրել է ծառի հետ ու էկել է թառզուն ձեն է տվե. «Թառզի՛, էլի՛, միհ էլ ես քնիմ»: Թառզին ելե տեսել է, օր մե չիբլախ ախճիկ՝մ հոն կայնած: Թարզին կսե. «Էս սատանա է, ի՞նչ է, էս վախտ չպլախ կայնել է, չի՞ մռսմ»: Ձեն կուտա, ձեն կուտա, ձեն չի հանե: Ինչ լեզվով գխոսա, ջուղաբ չի տա: Թարզին կերտա մոտիկ: Գտեսնի, օր փետ է, կսե. «Էսի դուրգյարն իրան շնորկն է նշանց տվե: Կեցի ես էլ իմ շնորկս նշանց տամ»,—ըսավ թառզին: Բերավ ձեռկ՝մ շոր կարեց, հակցուց փետե ախճկան: Էկավ տերտերին ձեն տվավ ըսավ. «Տերտեր, ելի, հիմ էլ ես քնիմ»: Տերտերն էլավ, տեսավ իրանծեն քիչ՝մ հեռու մե ախճիկ՝մ է կայնած: «Իսոս Քրիստոս, էս սատանա է, ի՞նչ է»: Ձեն տվավ, ձեն տվավ, ինչ լիզվով խոսաց, ջուղաբ չտվավ: Գնաց մոտիկ, տեսավ՝ փետ է: Ըսավ. «Էս դուրգարն ու թարզին են իրանց շնորկն նշանց տվե: Յավաշ, ես էլ իմ շնորկը նշանց տամ»,—ըսավ

[41] Մահմեդականների ողջույնի խոսք (ծանոթ. կազմողների):

[42] Ողջույն (վրացերեն) (ծանոթ. կազմողների)

տերտերը, գլոխը բացեց, կայնավ: Ավետրանը առավ ձեռը, կայնավ: Ծունկ չոկավ դեմ աղոտրնին, էնկան ըսավ, էնկան աղաճեց, էնկան երկրպակեց, աղոտեց, արտասունկ թապեց, հարի փետից ախճիկը շնչավորվավ, դառավ իսան: Հիմի էդ իրեկը կռվմ են: Դուրգյարն ըսմ է. «Ընձի գհասնի ախճիկը, ես եմ փետից վրեն չարչրվե, շինե, ամագ դրե, չուրի դառել է իսանի նմուշի: Ախճիկն ընձի գհասնի»: Թառզին ըսմ է. «Ես եմ շոր կարե, հակծրե, ախճիկն ընձի գհասնի»: Տերտերն էլ ըսմ է. «Ես եմ աղոտք էրե, պատարակ կայնե, ասուն երկրպակե, օր ախճիկը հոգևորվել է: Ախճիկն ընձի գհասնի»: Հիմի, կռավատ ախպեր, դու օր էղնիս դատավոր, ախճիկը ո՞ւմ գհասուս:

Կառավատն ըսավ.—Ախճիկը դուրգյարինն է, օր դուրգյարին գհասնի, ո՞ւմ բտի հասում:

—Է՛, չեղավ կառավատ ախպեր: Շատ մեխկ կեղնի էդ դատը: Ախճիկը թառզուն գհասնի,—ըսավ տղեն:

—Չէ՛,—ըսավ կառավատը,—դուրգյարին գհասնի, դուրգյարն է չարչրվել, փետից մառտ շինե: Թառզին ի՞նչ է էրե:

Խուլասա, էնի ըսավ՝ դյուրգարին գհասնի, էնի ըսավ՝ թառզուն գհասնի: Սոյլամազ խանումի սիրտը չհամպերեց, տեղեն էլավ կայնեց, զարկեց, կառավատն էրավ հազար կտոր: Ճնճուղը գողտուկ էկավ, մտավ տղի ջեպը: Սոյլամազ խանմը կառավատը փշրեց, ըսավ.—Դուկ էլ չեղնիկ, ձեր էրած դատն էլ չեղնի,—ըսավ,—դուրկյարն առնե իրան ամակը, թառզին առնի իրան ամակը: Ախճիկը տերտերին գհասնի, օր տերտերն է հինգ սհատ լածե ու աղաճե, չուրի հոգեորցրել է: Ախճիկը տերտերինն է, օր տերտերին գհասնի:

Տղեն ըսավ.—Դու էլ ընձի գհասնիս:

Ախճիկը, օր մորեն ծնվե, չէր խոսածե, աշկալուս տարան հորը, թե՝ աշկդ լուս, օր ախճիկդ խոսած: Էլան գնածին ամեկ իրան տեղը: Առավոտ էկան, գրագիրն նստավ իրան տեղը, շհադները նստան քովը: Տղեն նես մտավ, իրեկ անկամ գլոխ տվավ, ամեն լիզվով բարև տվավ: Ո՛նչ գլոխը բանծրծրավ, ո՛նչ բարևն առավ: Տղեն ճնճուղը գողտուկ թողեց, ճնճուղը գնաց, մտավ շամդանի տակը: Տղեն ըսավ.—Բարև քեզի, շամդան ախպեր:

—Վա՛յ, դու բարով ու հազար բարի էկար: Իմ գլխուն, իմ երեսին տեղ ունիս, թակավորի տղա: Քանի տարի ես ըստեղ լալի պես անխոս վեր ընգած եմ, մեկը բարև տվող չկար: Ի՞նչդ էղավ,օր դու բարև տվիր, թակավորի տղա:

Տղեն ըսավ.—Տեսնմ եմ՝ բարևս առնող չկա, ես էլ ձեզի եմ տալմ: Ի՞նչ էնեմ, շամդան ախպեր, դե հիմի ըսա տեսնիմ ի՞նչ կա, ի՞նչ է անծե գլխովդ:

—Է՛,—ըսավ,—թակավորի տղա, ես էնկան չեմ խոսածե, օր խոսալն էլ եմ մտհան էրե: Դու ջայել մառտ ես, աշխարն ման գալող: Լավ, նոր խաբարներ գգիտենաս: Բան՝մ ըսա, անգաճ էնենկ:

—Լա՛վ, Շամդան ախպեր, օր ըսմ էս կսեմ: Հմը լավ ուշկ բտի դառծնես:

—Հա՛, թակավորի տղա, դու պատմե, ես փափակով գլսեմ:

Տղեն ըսավ.—Շամդան ախպեր, էս քանի վախտը ես մե զարմանալի բանի՝մ ռաստ էկա: Իրեկ օղլուշաղ էկե մեշի մեջը բանդ էին էղե: Իրեկից մեկը տատմեր էր, մեկը սուբեի օղլուշաղ էր, մեկը ծննդկան էր: Մե բալուլ՝մ քաշկշմ էին իրար: Ծննդկանն ըսմ էր՝ իմ էրեխեն է, ընձի գհասնի, տատմերն ըսմ էր՝ ես եմ ազատե, ընձի գհասնի: Էն սուբեյի օղլուշաղն էլ ըսմ էր՝ ես եմ թևը բռնե, ընձի գհասնի: Հիմի, Շամդամ ախպեր, օր ըդոնկ շատ չկռվեն ու էրեխին չչարչրեն, դու որի՞ն գհասծնես:

Ըսավ.—Չիդե՞ս՝ որին գհասցնեմ: Էրեխեն տատմորն է, տատմորը գհասցնեմ:

—Է՛, չեղավ: Տատմերն ի՞նչ է էրե, օր տատմորը գհասցնես: Էրեխեն թևը բռնողին գհասնի: Թևը բռնողը չէղներ, ըշտը, էրեխեն գխեղտվեր: Թևը բռնողին գհասնի:

—Չէ՛,—ըսավ Շամդանը,—տատմորը գհասնի:

—Չէ՛, թևը բռնողին:

—Չէ՛, տատմորը:

Սոյլամազ խանմի սիրտը չդիմածավ: Տեղեն էլավ: Ճնճուղը էկավ մտավ տղի ջեպը: Սոյլամազ խանմը Շամդանը քցեց քացու տակ, էրավ հազար կտոր:

—Ա՛ռ քեզի, քանի տարի ըստեղ վեր ընկած էիր, լալ ու կյառ էիր, հիմի ընչի՞ դառար հազարան բիլբուլ ու անխիղճ էլ դատ եկ էնմ: Տատմերն առնի իրան ամակը, թև բռնողն առ-

նի իրան ամակը, էրեխեն մորը գհասնի, ուրիշն ինչ գոռծ ունի էրեխի հետ:

Տղեն ըսավ.—Դու էլ ընձի գհասնիս:

Գրագիրը գրեց, շհատները ձեռ քաշեծին: Թակավորին աշկալուս տարան, օր էրկու անկամ խոսըծուց, մնաց մեկը: Էլան ամեկ իրանց գնաձին:

Առավոտ էկան էլի, գրագիրը նստավ իրան տեղը, շհադները իրան կոխկը: Թակավորի տղեն նես մտավ: Իրեկ անկամ գլոխ տվավ, ամեն ազգի լիզվով բարև տվավ, հեչ գլոխը չբանծրծուծ: Տղեն ճնճուղը թողեց, ճնճուղը գնաց, մտավ խալու տակը:

Ըսավ.—Բարև քեզի, խալի ախպեր:

—Վա՛յ, դու բարո՛վ ու հազար բարի էկար, թակավորի տղա: էս քանի տարի ես ըստեղ կախած եմ, գալող-էրտողի բերնին է մնմ աշկս, օր մեկը ընձի բարև տար: Հեչ մեկը բարև չէին տալմ: Դու բարով էկար, անգաջս բարևի ձեն ընկավ:

—Խելկերը չի հասե, օր քեզի բարև տան, դու էլ քեզի հմար մառտ ես:

—Էդ ըսա, թակավորի տղա,—ըսավ խալին:

—Է՛, խալի ախպեր, բոլ տարիկ ունիս: Շատ բան անծած կեղնի գլխովդ: Պատմե տեսնինկ՝ հեչ ինչ կար ձեր վախտին: Բան՚մ պատմե անգաջ էնենկ:

—Այ քու տունը շեն, թակավորի տղա, ես մենձեել եմ, ընձի կործրել եմ: Երեկվա տեսածս էսօր միտկս չկա: Անծած-գնաձածը ինչ բտի միտկս էղնի, օր պատմեմ: Դու ջայել մառտ ես, աշխարկ տեսած, շա՛տ բան գգիտենաս: Լավ բան՚մ ըսա, պատմե լսենկ:

—Լա՛վ, օր ըսմ ես, գպատմեմ,—ըսավ տղեն,—հմը լավ ուշկ ու միտկ դառու՝ լսես:

—Հա՛, թակավորի տղա, ես զատի էդման բանի կաշեմ, օր լսեմ:

Ըսավ.—Խալի ախպեր, շուտունց չէ, օր ես մե բանի հանդիպա:

—Ինչ բանի, թակավորի տղա:

Ըսավ.—Մե մառտ՚մ մե թեթև տղի հետ էրտմ է իրան տունը: Ճամպեն գելը խլմ է էդ մառտու տղեն, ձեռնեն տանմ է: Չոբանի շունը ընկնմ է գիլու ետևեն, գելը մոլրվմ ընկնմ է ջուրը: Տղեն գիլու բերնեն ընկնմ է ջուրը, էրտմ է ջախջի նավն է ընկնմ, ջուրը կտռմ է: Քարը կայնմ է, ջախճպանն էլնմ հանմ է տղին, տղեն պոծնմ է: Հիմ տղի հերը, չոբանը ջախճպանը, կռվմ, վիճմ են: Հերն ըսմ է՝ ընձի գհասնի, իմ տղեն է, չոբանն ըսմ է՝ ընձի գհասնի, իմ շունն է գիլուն փախծրե, ջախճպանն ըսմ է՝ ընձի գհասնի, ես եմ նավից հանե, մայից պոծծրե: Հիմի, խալի ախպեր, տղեն որի՞ն գհասնի:

—Թակավորի տղա, դու չիդե՞ս որին գհասնի, ընձի ես հարցնմ: Տղին ջախճպանն է ազատե, ջախճպանին գհասնի:

—Է՛,է՛,է՛,—բարկածավ տղեն,—դու անառտար ես դատմ: Չոբանն է գիլուն փախծրե: Չփախծներ ըշտը գելը գտաներ: Չոբանին գհասնի:

Տղեն.—Չէ՛:

—Թակավորի տղա, էդ շունը չփախծներ, մե ուրիշ շուն՚մ գփախծներ: Տղեն ջախճպանին գհասնի:

—Չէ՛, չոբանին գհասնի:

Սոյլամազ խանումն էլավ, ճնճուղն էկավ ընկավ տղի ջեպը:

Սոյլամազ խանմը խալին ձեռն առավ, էրավ թիկա-թիկա:

—Ա՛ն քեզի ջախճպանին հասնել: Անտեր մնակ, ես նստած տեղեն տրակմ եմ ձեր անխիղճ դատեն, դուկ էլի ձերն եկ ըսմ: Չոբանն առնի քանի՚մ շայի, ջախճպանն առնի քանի՚մ մանետ, յա չէ հեչ փարան էլ օր չառնին, ինչ կեղնի: Իրանց խեր ու խեյրատ, իրանծ խեր ու վառծկ հարկավոր չէ: Տղեն հորն է, հորն էլ գհասնի:

Տղեն ըսավ.—Տղեն օր հորը գհասնի,դու էլ ընձի գհասնիս:

—Մաշալա, մաշալա,—ըսին գրագիրն ու շհադները:

Աշկալուս տարան թակավորին.—Աշկդ լուս, թակավոր, տղեն իրեկ անգամն էլ խոսծրավ:

Թակավորը կանճեց տղին, ճակատը համպուրեծ:

—Տա՛ր,—ըսավ,—քեզի էղնի: Ջամ ու ջեզը ես գղրկեմ:

Լավ ձի՚մ տվավ, ճամպու ուտելիկ, ծախսելիկ դրավ:

—Դե ձեզի բարի ճամպա, գնաձեկ,—ըսավ թակավորը:

Թակավորի տղեն ու Սոյլամազ խանումը գնածին հասան մեշեն, ճնճուղը ըսավ.—Թակավորի տղա, դե ընձի թող, ես երտամ, դու տար, բարով վայելես:

Տղեն ճնճղին բաց թողեց ու ախճիկա հետ շարունակեց ճամպեն: Էկան, էկան մեշիծը բտի դուս գային, տեսան ետևանց ճերմակ ձիավոր՝մ է գալմ ու ձեն է տալմ.—Հեյ, ո՞ւր ես տանմ, էդի իմն է:

Կայնան: Էկավ հասավ, ըսավ.—Էդի իմն է, ո՞ւր ես տանմ:

Ըսավ.—Ես եմ խոսծրե:

—Լա՛վ, օր դու ես խոսծրե, բեր կիսենկ:

—Ա՜յ ջանմ, թող սաղ քեզի էղնի, էլ ը՞նճ՝ես խեղճին սպանմ:

—Չէ՛, բտի կիսեմ, օր կիսեմ:

Բերավ ամեն թևը մե ծառից կապեց: Ամեն ոտը մե ծառից կապեց: Էդկան չարչարեծին դառձյալ մե բերան չխոսած Սոյլամազ խանմը: Գոյնա ըսեր՝ էս ի՞նչ էղավ, ես ի՞նչ եմ էրե, օր ընձի կիսմ ես:

Էդման կապած՝ քաշեց թուրը ձիավորը, տարավ, բերավ, օր բտի գլխեն զարկեր, հալալ կիսեր, էներ էրկու կտոր, մեկը՝ իրան, մեկը՝ թակավորի տղին: Օր թուրը տարավ, բերավ վրա, ախճիկը օռձկտած, մի օձ՝մ բերնեն ընկավ, օր մե վիշապի՝մ չապ:

—Դե հառծկե,—ըսավ ձիավորը:

Տղեն հառծկեց: Սոյլամազ խանումը դառավ հազարան բիլբուլ: Ձիավորն ըսավ.-Դե ա՛ռ ու գնա, ընձի պետկը չէ:

Տղեն շնորակալ եղավ: Նստան ձիանը, ընկան ճամպա դեպի հալիվորի բոստանը: Էկան հասան: Տղեն տեսավ, օր ինչ տեսնի. իրա նշանածը հոր տունն էլ էդման փառահեղ չէր, ինչղ օր չադրի մեջն էր՝ վիշապի պահպանուտան տակ: Թակավորի տղեն ըսավ.—Ահա՛, քու ուզածդ բերել եմ, դե տուր իմ նշանածս ես երտամ:

Վիշաբն էն սհատը լաղաբը հանեց, էղավ բոստնջին՝ հալիվորը: Կայնավ կոխկը, ըսավ.—Թակավորի տղա, դու օր չէիր թողմ իմ բոստանս տրորեին, գիտես ես քու բարիուտենը հաշիվի չառա՛մ, օր սաղ բոստանն էլ, օր տրործին ընձի վնաս չէր, հմը դու օր բարուտեն էրիր, ես էլ քեզի լավուտեն էրի: Ահա, տեսնմ ես, ես բոստնչի եմ: Ըստեղի վիշաբն էլ ես էի, էն ճնճուղն էլ ես էի, էն ձիավորն էլ ես էի: Իմ ինճի՞ն էր պետկ Սոյլամազ խանմը, ես քեզի համար բերել տվեծի: Տա՛ր, բարով վայելես:

Տղեն էլ շատ շնորակալ եղավ, վերծրավ նշանածին էլ, ընկան ճամպա՝ դպա հոր քաղակը: Գնացին, հասան քաղկին մոտիկ: Թակավորին աշկալուս տարան, թե աշկդ լուս, տղեդ էկավ, ջուխտ հառս է բերմ:

Հերը էլավ, ղոշուն կապեց, գնաց տղի առաջը: Շատ ուրխծավ: Էն վեծը տղեն էլ հլը առանց պսակվել էին: Բերավ օխտը տղին իրար հետ հառսնիկ էրավ: Օխտը զօր, օխտը գիշեր հառսնիկ, դավուլ-զուռնա, քեֆ-ուրախուտեն, կերուխում: Սավսավ-թավթավ, Սոյլամազ խանմն էլ հա՛մ սիրուն էր, հա՛մ խելկով էր, հա՛մ ըսող-խոսող էր: Սաղ օրը ըսմ-խոսմ, ծիծաղմ էր ու ծիծաղծնմ էր: Էդման ուրախ, երջանիկ ապրան ու ապրում են չուրի հիմի:

Ընդոնկ հասան իրանց մուրազին, ապրան երջանիկ, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին, ապրիկ երջանիկ:

Վերևեն ընկնի իրեկ խնձոր: Մեկը՝ հեքյատ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ տարեկ հիվանդներին:

7(7). ԱՎՋՈՒ ՏՂԻ ՀԵՔՅԱՏԸ

Ժամանակոց կեղնի, թե չի էղնի, մե մառտ՝մ ու կնիգ՝մ կեղնին, կունենան մե տղե՝մ: Էդ մառտն էլ ինչղ օր մորուծ ծնվել է, խելկն առել է, պարապել է ավճուտենով: Ուրիշ բան, գործ չի էրե: Ինկը էղել է այտնի ավճի ու ինկն էլ ապրմ էր թակավորի քաղկի մեճը: Թակավորի հետ միշտ էրտմ էր ավղուշ: Լավ ավերը զարգմ, բերմ էր թակավորին: Մե խոսկով՝ լավ ավջի էր:

Եղավ, օր ավճին, ինկը ծերածել էր, բտի մհանար: Տղեն էլ հասել էր, էլի հոր պես ուրիշ գոռծ չէր էնմ, ավջուտենով էր պարաբմ:

Էղավ, օր հերը նեղ հիվանդ էր, ինկը հասկցավ, օր բտի մեռնի, կանչեց տղին ըսավ.

—Ոռտի, ես ծերածել եմ, գմահանամ: Գիդեմ՝ դու էլ ուրիշ գոռծ չես էնե սավայ ավջուտենից: Ահա՛, ես քեզի ըսմ եմ, էս սաղ սարերն ու մեշեկը քեզի չէ, քու օխտը պոռտ՝ թոռեց թոռ օր դառնան ավչի, քուլեկին բոլ է: Շատ է ու քիչ չէ: Էդքանը քեզի, մինակ Սև սարը չերտաս, ընդեղ քեզի փոռծանկ գուկա:

—Լա՛վ, հայրիկ,—ըսավ տղեն,—օր ըսմ ես, չեմ էրտա:

Հերը մեռավ: Տան ղայրեն ընկավ տղի շլինկն: Տղեն, թե չուրի, հերն օր սաղ էր, արևը դիպնմ էր, նոր տեղեն էլնմ էր, հիմի լուսը չբաց-ված՝ ելնմ էր, հազրվում էր, էրտմ էր ավ զարգե-լու: Մե օր'մ էլ էլավ թեզ գնաց: Շատ դես ու դեն ման էկավ, հեչ բան ռաստ չեկավ: Էկավ, մուտը ընկնմ է, հեչ բան ռաստ չի էգե: Տղեն նստավ միտկ էրավ, միտկ էրավ ու դառավ, ըսավ. «Ջանմ, էդ Սև սարն ինչ կա, օր հերս ըսմ էր՝ չեղնի Սև սարն էրտաս: Յավաշ, ես էսօր բդի Սև սարը տեսնիմ, թե ինչ կա, օր բտի ինձի կուլ տա, փոռծանքի մեջ քցե»: Մտածեց տղեն ու տե-ղեն էլավ, նետ ու անեղը քցեց ուսը, դեմ էրավ Սև սարն ու գնաց: Գնաց, գնաց, շատ գնաց, թե քիչ գնաց, աստված գիտե: Հասավ Սև սարը:

Բարձրածավ սարի գլուխը, տեսավ, օր ինչ տեսնի: Էն տեսակ մե ջանավար'մ է նստած: Դունչը դրել է թաթերի վրեն, աշկերը ճրակի պես վառվմ են: Իրան փոստը աստների պես պեծկլդմ է, աշողի աշկը ծագմ է: Ինկն էլ էնկան խոշոր է, օր սարիծը բան պակաս չէ:

Տղեն օր տեսավ, երկուղն իրան առավ: Սիր-տը դողաց, մոլրավ, չիտեր, թե ինչ էներ: Իրան վախիծը հանկառծ հանեց իրան նետ ու անեղը, զարգեց գազանին: Օր զարգեց, դիպավ գա-զանի սռտին: Գազանը էն տեսակ ձեն հանեց, օր մռնճած, գոռգոռած: Տղեն ճչած, վեր ընկավ, մնաց վեր ընկած: Էլ խաբար չեղավ, թե ինճղ մտնեց, ինչղ լուսծավ: Էդման մնաց, չուրի լուսա-դեմի պաղ քամին փչեց երեսին: Սռսպած օյա-միշ էղավ, ելավ նստավ տեղը: Ուշկի չէր գալմ, թե ինչ էր էղե, ինչ չէր էղե: Չէ՛, տղեն իրան թոր-թոպ էրավ, ելավ տեսավ, օր գազանը փռված է գետին, լուսը բացվել է: Արտղ լավ էրևմ է, թե ինչ կա, ինչ չկա: Տղեն, օր լավ աշեց, տեսավ, օր գա-զանը ընկած է անշունչ ու սոլուղ: Սիրտ առավ, գնաց մոտիկ: Տեսավ, օր օղոռտմա գազանը սատկած է: Ուրխծավ: Հանեց ջեբեն դանակը, գազանի կաշին քերտեծ, քցեց ումուզին, ու-րախ-ուրախ էկավ տուն: Է՛, փոստը զատի իրա-նից փայլուն էր: Արևն էլ նոր էր ծագե, արևի տակ վառվռմ էր, չոռս դին լուսավորել էր: Ավջու տղեն օր մտավ քաղակ, թակավորի վազիր տեսավ, օր ավջու տղեն էման մե փոստ'մ է բերմ, օր էդման փոստ, էդման աբրանկ ըսկի թակավորին էլ չկա:

Մոտկծավ տղին, ըսավ.—Տո՛ւր էդ փոստը ընձի:

Տղեն ըսավ.—Ը՞նչ'եմ տալմ, ես մառտ չեմ, մենկ տուն չենկ, օր տամ քեզի:

Վազիրն ըսավ.—Տո՛ւր, գփոշմնիս:

Տղեն ըսավ.—Չեմ փոշմնի:

Վեռջը տղեն փոստը չտվավ, բերավ տուն, ձեռած զարգեց պատը: Տունը էղավ չամ-չրաղե: Մուտ պատերին լուս տվավ: Տան զիբարը բաց-վավ, ռանգի էկավ, լավծավ, դառավ չտեսնված դրախտ'մ:

Տղեն աշեց, շատ ուրխծավ: Մեր ու տղա շատ ուրխծան իրանց թաժա հարստուտենի վրեն: Մերը բերավ տղին հաց դրավ, ըսավ.—Ոռտի, էրեկվանից դու քաղծած ես, հաց կեր, պառկի հանգստածի:

Տղեն բռտուջը տարավ բերանը, թակավորի գզիրը դուռը զարգեց: Նես մտավ, ըսավ.—Թա-կավորը քեզի կանճմ է:

Տղեն ըսավ.—Թակավորն իմ հետ ինչ գոռծ ունի: Ես նոր եմ էկե տուն, հաց էլ չեմ կերե:

—Չիդեմ, կանճմ է:

Տղեն ելավ գնաց: Թակավորին ինչպես պետկն էր գլուխ տվավ, իրեկ անկամ բարև բռնեց, կայնավ՝ բանից բեխաբար:

Դու մի ըսա, վազիրը գնածել է թակավո-րին ըսել է, օր. «Թակավորն ապրած կենա, ավջու տղեն մե փոստ'մ բերավ, օր իսկական քու պալատիդ լայեղն է: Օր բերես պատեն կա-խես, պալատիդ զիբարը գբացվի, էլ թակավո-րից թակավոր գխոսան քու պալատիդ զիբա-րի, զառտարանկի մասին: Կանչե, ձեռեն առ»: Ըդոր հմար էլ թակավորը տղին կանճել է:

Թակավորն ըսավ.—Տղա, գիտե՞ս՝ ընչ'եմ քեզի կանչե:

—Չէ՛,—ըսավ տղեն,—ինչ գիտեմ:

—Դու փոստ ես բերե: Էդ փոստը բտի տաս ընձի:

—Հը՞, թակավորն ապրած կենա, ես լայեղ չեմ տեսնի, օր մե փոստով'մ քու փեշկեշը տված էղնիմ, մե թեթև փոստ'մ է, ինչ է, օր ես լայեղ տեսնիմ քեզի:

—Թեթև է, թե ինչ օր է, բտի բերես տաս ընձի:

Տղեն թողեց, նիատը կախ՝ էկավ տուն: Մերն ըսավ.—Հա՛, տղա՛, ինչ է պատայել, ը՞նչ'է նիատդ կախ:

—Ի՞նչ էնեմ, թակավորը փոստը ուզմ է:

Մերն ըսավ.—Ուզմ է, տար տուր, էլ ը՞նչ՚ես նիատդ կախմ, բան չկա:

Տղեն փոստը քցեց թևին, առավ գնաց, տարավ տվավ թակավորին: Թակավորն օր փոստը տեսավ ուշկը գնաց: Ըսավ.—Թե՛զ էրեկ, կախեկ փոստը պատից:

Բերեծին ձեռած կախեծին: Թակավորը ուրխծավ, էլավ աշխրքով մեկ: Պալատը դառավ մե լուսեղեն դրախտ: Էդ տեսակ, օր տեսավ, թակավորն ըսավ.—Տա՛ր, վազիր, տղին բուռ՚մ օսկի տուր, թող էրթա:

Վազիրը տարավ խազինի դուռը բացեց, տղին խազինեն տեսծրավ, շայի՚մ տվավ, սիլե՚մ զարգեց, քվրեց, ըսավ.—Դե, գնա՛:

Տղեն լալով գնաց: Մերն ըսավ.—Հա՛, տղես, ը՞նչ՚ես լալմ:

—Հալ, հեքյաթ, էսման, էսման:

Մերն ըսավ.—Ըդով էլ պոծնինկ, լավ է, մի՛ լա:

Վազիրն օր տղին ճամպու դրավ, գնաց թակավորի քովը, ըսավ.—Թակավորն ապրած կենա, բա, օր ըսմ էի, իշկան լավ էղավ, տեսմ՞ր, բա օր օխտ տարեկան զմռուտ ղուշն էլ էղնի ըստուր հետ, իշկմն լավ կեղնի:

—Բա էդի ո՞ւմը բերել տանկ:

—Ավջու տղին, ո՞ւմը:

—Դե, կանչե՛կ ավջու տղեն գա:

Գնաց գզիրը կանչեց ավջու տղին: Եկավ ավջու տղեն, իրեք անկամ գլոխ իճծրավ, բարև կապեց, կայնավ:

Թակավորն ըսավ.—Ավջու տղա, բտի էրտաս զմռուտ ղուշը բերես, տաս ընձի:

Տղեն ըսավ.—Թակավորն ապրած կենա, էդի հլը գազան էր, ռաստ էկավ, զարկեցի: Բերեցի փոստը տվեցի քեզի: Ես զմուխտ ղուշը որտեղի՞ց բերեմ:

—Ես քեզի եմ ըսմ, չիդեմ,—ըսավ թակավորը,—բերիր՝ բերիր, չբերիր՝ գլոխդ գզարգեմ:

Թողեց տղեն, փոր-փոշման էկավ տուն: Մերն ըսավ.—Հա՛, որտիս, ի՞նչ է պատայել, ը՞նչ՚ես տխրե:

Տղեն ըսավ.—Ի՞նչ էնեմ՝ չտխրեմ: Թակավորն ընձեն զմռուխտ ղուշ է ուզմ, օր բերեմ:

—Է՛, ուզմ, ուզմ է, ի՞նչ էնենկ, գնա բեր:

—Է՛, ես ի՞նչ գիտեմ, օր էրտամ բերեմ:

Մերն ըսավ.—Ռոտի ջան, առաջինն, օր դու հորդ բտի լսեիր, Սև սարը չերտայիր, օր չլսեծիր, գնածիր: Գնածիր, ջանիդ ցեց ու կրակ բերեծիր: Հմի էլի գնա թակավորի քովը ըսա. «Թակավոր, ապրած կենաս, դու օր ընձեն ուզմ ես զմրուխտ ղուշը, ես քու խատեր ջուրն էլ գը ընկնիմ: Դու հմի ընձի տուր քառսուն հատ դավա՝ մոռտելու հմար: Քառսուն դավաբեռ կորեկ, մե հատ՚մ էլ օխտը տարվա անծին էրինջ, օր ես էրտամ էդ զմռուխտ ղուշը բերեմ: Հմը էդ բոլոր ծախսը բդի էղնի վազիրի հաշվից, օր թլիսմը փոզմիշ չեղնի, օր քու խազինիծդ մե կապեկ էղավ, թլիսմը չի բռնե: Ես չեմ կռնա զմռուխտ ղուշը բերեմ»:

Մերը էդման խրատ տվեց տղին ու ղրկեց թակավորի քովը:

Տղեն գնաց թակավորի պալատը: Նես մտավ, իրեք անկամ գլոխ իջծրավ, բարև կապեց, կայնավ: Թակավորն իզին տվավ խոսալու: Տղեն ըսավ.—Թակավոր, ապրած կենաս, դու, օր ընձեն զմռուխտ ղուշ ես ուզմ, ես էլ քեզնեն գուզեմ քառսուն դավա մսածուի հմար, քառսուն դավաբեռ կորեկ, մե հատ օխտը տարվա անծին երինջ՚մ: Հմը էդ բոլորը բդի էղնի վազիրի ծախսով, օր թլիսմը փոզմիշ չեղնի: Օր մե կոպեկ՚մ քու խազինիցը էղնի, թլիսմը փոզմիշ կեղնի, ես էլ չեմ կռնա զմրուխտ ղուշը բերեմ:

—Հա՞:

—Հա՛:

—Լա՛վ,—ըսավ թակավորը,—կանճեց վազիրին:

Էկավ վազիրը: Վազիրին բածադրին եղելուտենը: Վազիրի փորեն արուն էր էրտմ, հմը ի՞նչ էներ, ինադ էր ընգե տղի հետ: Ուզմ էր, օր տղի գլոխը զարգեր քարերը, չիդեր, թե բտի իրան տունը քանդվեր: Խուլասա, վազիրն ընկավ չարանգ-վարանկ, դրստեց, թմեց տվավ տղին:

Տղեն առավ, գնաց մոր քովը: Մերը ըսավ.—Ռոտի ջան, ընդոնք գտանիս էս ինչ սարի գլուխը, ղշերի բուն-վատանը հոն է: Ղշերի մեջն էլ հմի թունդ սովկ է: Տանիս գը սարի գլոխը, քառսուն դավին էլ գմոռտես: Քառսուն դավաբեռ կորեկը գփռես, ընդից եդ՝ օխտը տարվա անծին էրինջը գմոռտես, փորը գթապես, կենես մաղարա, գմտնիս մեճը: Չիբուղը

կառնիս ձեռդ, գալող ղշին գվռնդես, չես թողե մոտիկ գան, չուրի, կշտանան, նոր իրանց թակավորը մտկերը գընկնի: Կէրթան բերելու: Կէրթան, գընգնեն թաերի տակը գբերեն: Անոտուտենեն ղուդումը կոտռել է, չի կռնա գա: Կբերեն գընիջծնեն էդ էրնջի վրեն: Կուդե, գկշտանա, կենե, օր թռնի էրտա, ձեռդ գքցես, ոտը գբռնես: Ինկը կսե՝ հա, իսանօղլի, թող ոտս, գհանեմ էրկինկ, տամ արևին գվառիս: Կսես՝ գիշնիմ փորիդ տակը: Կսե՝ գռսեմ գետին, գսբանեմ: Կսես՝ կելնիմ կռնակդ: Կսե՝ տարար, իսանօղլի: Դու գվեռծնես ղուշն, գնստիս ձին, գուկաս:

Էդման մերը տղին թամպխար էրավ: Տղեն գնաց դիպա մոր ըսած սարը: Մե օր, հինգ օր, թե տասը օր, վեռճապես հասան տեղ: Բերին քառսուն դավեկը մոռտեծին, փորերը բածեծին, թողեցին: Քառսուն դավաբեռ կորեկը փռեծին: Դառան էրինջը մոռտեծին, փորը բածեծին, դառդկեծին: Տղեն առավ չիբուղը մտավ էրինջի փորը: Գալող ղշին վռնդեց: Ղշերն էկան, էկան սաղ սարով մեկ ղուշ լցվան: Կերան, կշտածան: Մտկերը ընկավ, օր իրանց թակավորը ղուդումը կոտռել է, չի կռնմ գա: Գնածին ընկան թաերի տակը, առան էկան: Բերին, իջծրին էրնջի վրեն: Կայնավ, կերավ, կշտածավ: Էլավ թե թռներ, տղեն ոտը բռնեց:

Ղուշն ըսավ.—Հա՛, իսանօղլի, ոտս թո՛ղ, թե չէ կելնիմ էրկինք, կուտամ արևին, գվառիս:

Տղեն ըսավ.—Գիշնիմ փորիդ տակը:

—Գգռսեմ գետին, գջնջեմ:

—Գելնիմ կռնակդ:

—Տարար, իսանօղլի:

Տղեն էլավ, առավ ղուշն ու էկավ: Բերավ, տարավ տվավ թակավորին: Թակավորն էն սհատին ղաֆասը շինել տվավ, ղուշը դրավ մեճը, կախեց փոստի կոխկը: Պալատը ձեռած մե ուրիշ տեսակի փոխվավ: Թակավորը շատ ուրխծավ, ըսավ վազիրին.—Տարեկ տղին բավականին օսկի տվեկ, թող էրտա:

Վազիրը տարավ տղին թակավորի խազինի դուռը բացեց, խազինի դիզած օսկի-առծաթ տեսծրավ: Կապեկ՚մ չտվավ, սիլե՚մ, զարգեց տղին, ըսավ,—Գնա՛:

Տղեն լալով էկավ տուն:

Մերը ըսավ.—Հա՛, տղաս, ը՞նչ՚ես լալմ:

Տղեն ըսավ.—Հալ-հեքյատ, ըսման, ըսման:

Մերն ըսավ.—Բան չկա, ըդոր հմար գուլմն, մի՛ լա:

Բերավ մերը տղին հացավորեց: Տղեն հաց կերավ, էլավ պարկավ՝ քնելու: Մերն ըսավ. «Վազիրը հլը չի դզվե»:

Վազիրը գնաց թակավորին ըսավ.—Թակավորն ապրած կենա, ես օր ըսմ էի՝ գբերե, տեսմ՚՝ ինչդ լավ էղավ: Բա, օր ղրկես էրթա Չինմաչինի թակավորի ախճիգը բերե քեզի հմար, ինշկմն լավ կեղնի:

Թակավորն ըսավ.—Էդ էրեխեն ի՞նչ կռնա Չինմաչինի թակավորի ախճիկը բերե:

Վազիրն ըսավ.—Դու ղրկե՝ գբերե:

—Կանճեկ տղին,—ըսավ թակավորը:

Գզիրը գնաց կանչեց տղին, բերավ: Թակավորն ըսավ.—Ավջու տղա, բտի էրտաս Չինմաչինի ախճիկը բերես, ընձի տաս:

Տղեն ըսավ.—Թակավոր, ապրած կենաս, ախր ե՞ս ով, Չինմաչինի թակավո՞ր ով, օր ես կռնանամ Չինմաչինի թակավորից ախճիկ բերեմ:

Թակավորն ըսավ.—Չիդեմ, բերիր՝ բերիր, չբերիր՝ գլոխդ գզարգեմ:

Տղեն նիատը կախ՝ էկավ տուն:

—Հա՛, բալա ջան, ը՞նչ՚է, նիատդ կախ:

—Թակավորն էսման է ըսմ:

Մերն ըսավ.—Բան չկա, բա ըդոր հմար նիատ գկախե՞ն: Գնա թակավորին ըսա, թող էսինչ ծովի վրեն էն տեսակ մե գյամի՚մ շինե, օր մե քաղակի՚մ բարա: Մեճն ունենա ամեն հարմարուտենները, բաղնիկից, խեյրատխանից, բախճից ու բաղից բռնած ամեն ինճը մեճն էղնի: Տեսակ-տեսակ դուկաններ բտի էղնի, օր ես կռնանամ բերե, թե չէ, չեմ կռնա բերե, հմը էդ բոլորը վազիրի ծախսով բտի էղնի: Թե չէ թլիսմը փոզլմիշ կեղնի:

Տղեն էլի լսեց մորը, գնաց թակավորի պալատը: Նես մտավ սովորականի պես և պահանջեց էն, ինչ օր մերը իրան ըսել էր:

Թակավորն ըսավ.—Վազի՛ր, լսեծի՛ր:

Վազիրը կիսաբերան ըսավ.—Լսեծի՛:

—Դե օր լսեծիր, թե՛զ էրա, շինել տուր, հազրե:

Վազիրն էր, ախ քաշելով՝ ընկավ դես-դեն, ճարեց-մարեց, փոխով-տալիքով գյամին շինեց, գլոխ բերավ: Տղեն վերծրավ ինչ օր հարկավոր էր, գնաց նստավ գյամին: Գամջուն ըսավ.—Գյամջի, գիդեմ, թակավորի ախճիկը գուկա ամենավեռճն: Եպ օր դու գիմանաս իմ

խաղիս ձենը, դու գյամու գլոխը գդառուս դիպա մեր երկիրը:

Գյամջին ըսավ.—Լա՛վ:

Հմը տղեն էլավ գյամին, տեսավ, օր երկու ջայել տղա, թոռը քցել են, մե ձուկ՚մ է էղե: Հանել են, դրել են չարչրմ են, ուրխնմ են: Քցմ են ջուրը, ձուկը խաղմ է, իրանք խնդմ են: Ջրից հանմ են, ձուկը խեղճնմ է, բերանը բանմ-խպմ է, խեղճնմ է, էլի են քցմ ջուրը, հանմ: Մե խոսկով՝ չարչրմ են:

Տղեն օր տեսավ, խղճաց: Ըսավ.—Առեք էս էրկու առձատը, էդ ձուկը տվեկ ընձի:

Տղեկը առձատն առան, ձուկը տվին տղին: Տղեն առավ ձուկը, քցեց ծովը: Ձուկը մոտեծավ տղին, ըսավ.—Տղա, դու օր էս լավուտենն էրիր ընձի, ա՛ռ իմ փշից մեկը քովդ: Եպ օր նեղը գընգնիս, հան էս փուշը, քցե ջուրը, ես գհասնիմ հավարիդ:

Տղեն առավ փուշը դրավ ծոծը: Քիչմ առաջ գնաց տեսավ, օր էդ գյամու վրա բաղ ու բաղճա են քցե, ղշերն էկել են բուն են դրե, ձագ են հանե: Թե ուրտից մե կատու՚մ էլնմ է ձագերը ուտե: Ղուշը վիրևը պտտվմ է, վայնասուն է էնմ, ճար չի գտնմ: Տղեն օր տեսավ ղշի վայնասունը, աշեց ծառին, տեսավ, օր կատուն էլնմ է՝ ղշի ձագերը բռնե ուտե: Հմը բռնեց կատվին, քցեց ջուրը: Ղշի ձակերը պռծան կատվից: Ղուշը իջավ տղի քովն, ըսավ.—Տղա, դու օր էդ լավուտենն էրեծիր ընձի, ա՛ռ իմ բմբուլս քովդ, եպ նեղը գընգնիս, իմ բմբուլս տաս կրակին, ես գհասնիմ քու հավարիդ:

Տղեն բմբուլն էլ առավ, դրավ ծոծը: Նստավ գյամին, հայդա գնացին: Գնացին, գնացին օրերով, շապատներով, թե ամսով, վեռճապես հասան տեղ: Գյամին կապաններով կապին ծովի ղրաղը: Մնաց մե օր, երկու, թե հինգ օր, մեկը մեկին ձեն տվավ: Արտղ ըսկսեծին քաղկի ժողովուռտը գալ, մտնել հաց ուտել, ջուր խմել, բաղնիկ էրտալ: Ժողովուռտը շատ հավսան: Վեռճը խաբարն հասավ էդ ախճկան՝ թակավորի: Աղճիկն էլավ նստավ կառետ: Եկավ ման գալու, տեսնելու: Էկավ մտավ գյամին, զարմաձած ըսավ. «Արևս վկա, էսի մե տերուտան ուժի բան չէ: Հիմի հերս իրան սաղ կարողուտենը ծախսե, ըսման գյամի՚մ չի կռնա շինե»,—մտաձեց ախճիկը ու գնաց դուկանները տեսավ:

Գնաց մտավ խեյրաթխանի ճաշարանը, ճաշ կերավ, էլավ գնաց: Մտավ բաղնիկը, տղեն սկսեց խաղ ըսելը: Գամջին գյամու գլոխը դառուց դիբա իրանց երկիրը:

Ախճիկն, օր իրան լողնալ-լվաձվելու հետն էր, խաբար չեղավ գյամու էրտալը: Չուրի լողծավ էլավ, էդ վախտն էլ տարվավ տղի անուշ ձենին ու խաղին: Գյամին հասավ ծովի կեսը, նոր ախճիկը խաբար էղավ: Հանեց մատից մատնիկը, քցեց ծովը: Ծովը կիսվավ, էլավ երկու ծով: Գյամու ճամպեն ցամկավ: Գյամին էլ էրեմիշ չեղավ: Տղեն հանեց ձկի փուշը, քցեց ջրի մեջը թե չէ, ձուկն էկավ:

—Հա՛, տղա, ի՞նչ է քեզի հարկավոր:

Տղեն ըսավ.—Ըշտա, ախճիկը մատնիկը քցեց ջուրը, ծովը կիսվավ, գյամին կայնավ:

Ձուկն էն սհատին մատնիկը գտավ, բերավ տվավ տղին: Տղեն առավ մատնիկը, դրավ ծոծը: Ծովը միացավ, գյամին գնաց: Ախճիկը հանեց մեջկից քյամարը, քցեց ծովը: Էլի ծովը կիսվավ, գյամեն կայնավ: Տղեն ղշի բմբուլը հանեց տվավ կրակը: Ղուշն էկավ:

—Հա՛, տղա, ի՞նչ է քեզի հարկավոր:

Ըսավ.—Ըշտա քյամարը քցեց ծովը, կիսվեց, գյամին կայնավ:

Ղուշը էն սհատը հավալամիշ էղավ, էլավ էրկինք, իջավ ցամակիցը հանեց քյամարը, տվավ տղին: Տղեն քյամարն էլ դրավ ծոծը: Ախճիկն ըսավ.—Տարա՛ր, տղա:

Ախճիկն օր ըսավ՝ տարար տղա, տղեն նորից ըսած խաղը թարկրեց: Ըսավ.—Դու էկել ես լողանալու, մենք էկել ենք քեզ տանելու,—բերանածի ըսավ տղեն:

Ախճիկն ըսավ.—Եղանակով ըսա՛:

Ախճիկը գիտեր, թե տղեն իրան հմար է տանմ: Տղեն ախճկա խատրը չկոտրեց: Նորից խաղը ըսավ եղանակով.

Դու էկել ես՝ լողանալու,
Մենկ էկել ենք քեզ տանելու,
Մեր երկրի թակավորին
Քեզի թակուի էնելու:

Ման եմ էկե, շատ քաղակներ,
Չեմ տեսե քեզ պես սիրուններ,
Ծովը ցամկծնելու հմար,
Գոռծեծիր պես-պես հնարկներ:

Ծովը քցեցիր մատանին,
Ցամկավ ջուրը, կայնավ գյամին,
Գուզեիր դառնայիր, էրտայիր նորից,
Օր գլխատեիր շատ շատերին:

Ավջու տղեն միամիտ չէր,
Էկել էր, օր քեզի տաներ,
Թակավորի դառ վճռից,
Ջայել-ջիվան կյանկն ազատեր:

Տղեն օր ըդման ըսավ, ախճիկը հասկծավ, օր տանմ է թակավորի հմար: Ըսավ.-Տղա, դուզն ըսա, ընձի ում հմար ես տանմ:

—Մեր թակավորի հմար եմ տանմ:

—Թե քեզի հմար ես տանմ, տար, թե չէ ուրիշի հմար ես տանմ, թող, ես ծովը գընգնիմ, չեմ գա:

Տղեն ըսավ.—Ես օր դուզը ըսմ եմ, տանմ եմ թակավորի հմար, իսկ դու օր թակավորին չես ուզե, ընձի գուզես, օր գբաշարես հնարկը գտնիս, օր մենք առնինք իրար: Ես դիա ուրախ եմ:

Էդման ըսել-խոսալով հասան տեղ: Խաբարը գնաց թակավորին:

Թակավորը ելավ կառետ ղրկեց: Թակավորի ախճիկն ու ավջու տղեն էկան թակավորի պալատը: Թակավորը տեսավ, օր էդ տեսակ պատկերով, սիրուն ախճիկ աշխարկ ման գաս, չես գտնի:

—Տո՛,—ըսավ,—էս իմ վազիրը ամեն բանից տեղյակ է:

Շատ ուրխծավ: Վազիրին ըսավ.—Տա՛ր ավջու տղին, իմ խազինից, ինչքան օր կամկը գուզե, թող էնկան օսկի վերծնի:

Վազիրը տարավ խազինի դուռը բացեց, տղին տեսծրավ օսկու ու առծատի թեղերը, հանեց մե կապեկըմ տվավ, սիլե՛մ զարգեց, ըսավ.—Գնա:

Տղեն լալով, լալ աշկով գնաց տուն: Մերն ըսավ.—Հա՛, բալա ջան, ը՞նչ՚ես լալմ:

Տղեն ըսավ.—Էսման, էսման:

Մերն ըսավ.—Բան չկա, բա ըդոր հմար գուլմն:

Ըդոնկ թող ըդեղ խոսան, մենկ տեսնինկ, թե վազիրն ինչ բտի ըսե թակավորին:

Թագավորը թադարուկ է էնմ հառսնիկի: Ախճիկն ըսավ.—Ընձի խապնուտենով է բերե, հերս խաբար չէ: Կեծի նամակ գրեմ, հերս թող իմանա, նոր հառսնիկի մասին մտածե:

Վազիրն ըսավ.—Թակավոր, ապրած կենաս, ըստոնկ խոսկը մեկ են էրե, քու թակավորուտենը ձեռնեդ կառնին: Բեր ավջու տղին վեռճածու:—Թե,—մեր քաղակը իշկան օր խոտ կա, բերել տուր դիզե մեյդանը: Տղին նստծու գլուխը, կրակը տուր, թող տկեն վառի, էլնի բոցը իրան էլ առնի, ինկն էլ վառվի, օր դու ըդուր ձեռնեն ազատվիս, թէ չե, էդկան բանն օր էդի գիտե, անպատճառ գլխուդ օյին՚մ գբերե:

Թակավորն անգաջ էրավ վազիրին, բերավ սաղ քաղկի խոտերի դեզերը թոպ էրավ մեյդանը: Տղին կանճեց ըսավ.—Բդի էլնիս նստիս էս խոտի գլոխը, իմ քաղկին ղարավուլ քաշես:

Տղեն ըսավ.—Լա՛վ, էրտամ տուն, գամ էլնիմ նստիմ խոտի գլոխը, ղարավուլ քաշեմ:

—Գնա՛, արի,—ըսավ թակավորը:

Տղեն գնաց տուն մորն ըսավ.—Ա՛յ մեր, թակավորը մե դեզ՚մ է զարգե մեյդանի մեջը, օր մե սարի՚մ բարա է: Ըսմ է՝ բտի նստիս վրեն, ղարավուլ քաշես իմ քաղկին:

—Հը՛,—ծիծաղած մերը,—էդի հանմ է քեզի խոտի գլոխը, օր տկեն կրակ տա, դու վառիս: Կերտաս թակավորին կսես՝ թակավոր, ապրած կենաս, չուրի հիմի քու քաղկին ղարավուլ չկմ՚ր, հիմի ը՞նչ՚ես ընձի նստծնմ ղարավուլ: Կա, չկա դու բտի ընձի վառես: Գոյնե բեր իմ բերածներս, ինչ օր բերել եմ, շարե սրով աշկիս առաջը, ես թամաշա էնեմ, կրակն ընձի առնելուց խաբար չեղնիմ:

Տղեն գնաց մոր ըսածով թակավորին թարկրեց: Թակավորն ըսավ.—Շատ լավ, դու օր գիտես, օր բտի քեզ վառեմ, գբերեմ քու բերածներդ գշարեմ սրով քու աշկիդ առաջը:

Թակավորն էր, հանեց խոտի գլոխը տղին, բերավ փոստը կախեց մեյդանի պատից, ղուշը կայնծրավ կոխկն, ախճկան էլ՝ մեկել կոխկին: Մերն էլ առավ ձին, բերավ կայնավ ղրաղը: Թակավորն ու վազիրն էլ նստան թամաշա էնելու: Տղեն աշմ էր իրան բերածներին սրով, չուրի էդ, էդ օր բդի կրակն առներ տղին, հմը ղուշը հավալամիշ էղավ, էլավ էրկինք, իջավ տղին առավ բերանն ու թռավ: Ախճիկը, մերն ու ձին էկան միածան, բռտին, թակավորին ու վազիրին բռտին քցին կրակի մեջն, առան փոստն ու փախան, գնացին:

Ղուշն էր, տարավ տղին իրանց սարի գլոխը իջուց: Ձեն տվավ կանչեց իրան ղշերին, ըսավ.—Կերտակ թակավորի ու վազիրի աշկերը գհանեք, բերեկ ընձի:

Տղեն ըսավ.—Դու օր ընձի էդքան լավուտենն էրեցիր, իմ կյանկն ազատեծիր, յավաշ, ես էլ իմ մառտուտենս էնեմ:

Բերավ թուղտ՝ մ գրեց, տվավ էրտող ղշերին, ըսավ.—Տանի՛կ, կուտակ մեր տունը:

Ղշերը տարան թուխտը տվին թակավորի ախճկան: Թակավորի ախճիկը թուխտը բացեց, կառտած, օր գրել է. «Թակավորի ախճիկ, ես էս ինչ սարն եմ: Դու կբառնաս քառսուն դավաբեռ կորեկ, մե անծին էրինջ՝մ առկատի հմար ու թեզ գուկաս»:

Թակավորի ախճիկը, ձեռած բերավ քառսուն դավա բառծավ: Մե անծին էրինջ՝մ, դրավ դավի վրա, ընկավ, առաջ գնաց: Դավաճիկն էտևեն գնածին: Ղշերն էլ գնածին տեսան, օր նա՛ թակավոր կա, նա՛ վազիր: Եդ դառան հասան ախճկա քարավանին, իրար հետ գնածին: Գնածին հասան տեղ: Ավջու տղեն կորեկ փռեց: Դավեկը մոռտեցին, փռեծին: Էրինջն էլ մոռտեց, տվավ զմրուխտ ղուշին: Ելան թակավորի ախճկա հետ էկան: Էկան տուն հասան: Բերին էրկուսն առան իրար:

Օխտը զօր, օխտը գիշեր հառսնիկ էրեծին, ուրախուտեն, ուտել-խմել: Հառսնիկն օր պռծավ, թակավորի ախչիկն ըսավ.

—Ժողովո՛ւռտ, էսի՝ ես, էսի էլ՝ ավջու տղեն: Դուկ լավ գիդեկ, թե ձեր թակավորը ինչ չարշամբեկ էր խաղծե ավջու տղի գլխուն: Վեռճը մեղավորը ինկը պատիժն առավ: Հիմի թե ուզմ եք ավջու տղեն մնա ձեզի թակավոր, ես էլ թակուի, գմնանկ: Թե չեկ ուզմ, ահան, ձեր քաղակը, մենկ կերտանկ:

—Վա՛յ,—ըսին ժողովուռտը,—էդ տղեն, օր մեզի ազատեց էդ թակավորի ձեռնեն, մենկ ըդից լավ թակավոր չենք ճարե: Էդիկ է մեր թակավորն, օր էդիկ է: Բերեծին ավջու տղին նստծրին թակավոր, թակավորի ախճկան էլ՝ թակուի: Շատ լավ կառավարմ էին ժողովուռտին: Ժողովուռտն էլ շատ գոյ էին իրանց նորընձա թակավորից:

Ընդոնկ հասան իրանց մուրազին, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին: Էրտգեն ընգներ հինգ հադ խնձոր. Մեկն՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկը՝ բաժնողին, մեկը՝ հեկյատ կապողին, մեկն էլ՝ երեխանծը:

8(8). ՋՈՒՄՇՈՒՏԻ ԵՎ ՍԱԼՎԻՆԱԶԻ ՀԵՔԻԱԹԸ

Ավալ ժամանակին Արևելքում ապրում էր կռապաշտների Ասլան թագավորը: Էս թագավորը աշխարհի ամենահարուստ թագավորն էր: Էսոր հարստությունը ծովը լցնեիր, կը ցամքցներ, երկնքի աստղերին հատ ու հաշիվ կար, էս թագավորի մալ ու դոլվատին հաշիվ չկար: Էս թագավորը ունենում է մեկուճար մե տղե՝մ, անունը՝ Ջումշուտ: Էս տղեն շատ սիրուն ու ղոչաղ տղա կեղնի: Մե անգամ էսի էրազին կը տեսնի, օր իրան տարան մի չոլ յաբանի տեղ՝մ մե էրկու ատեժանի տան՝մ մեջ հետև բերին մե սիրուն աղջիկ՝մ, էնքան սիրուն, օր արևին կըսե՝ դու դուս մի գա, ես հերիք եմ աշխարքին լուս տալու հմար:

Էսոնք գուքան իրար քով, տղեն աղջկան կը հարցնե.—Անունդ ի՞նչ է:

Աղջիկը կըսե.—Անունս Սալվինազ է: Արևմուտքի Խուրշուտ թագավորի աղջիկն եմ:

Տղեն կըսե.—Ես էլ Արևելքի Ասլան թագավորի տղեն եմ, անունս էլ Ջումշուտ է:

Էսոնք ըստեղ կը ծանոթանան, կուտեն, կը խմեն: Էդ վախտը մե ծեր մարդ՝մ գուքա, կըսե, օր.—Էսօրվանից դուք սիրահարներ եք, հմը մեկդ կռապաշտ եք, մեկդ՝ խաչապաշտ: Թե ինչխ կրնաք իրար առնի, էդ էլ դուք գիտեք: Բերեք մատանքներդ փոխեք:

Էսոնք մատանքները կը փոխեն, կը հանբուրվին ու էդ վախտը Ջումշուտը կը զարթնի, տեսնի, օր էրազ է, մուխը կը մարի, կըսե. «Հեյ վախ, էլ մեկ էլ կը տեսնի՞մ էդ աղջկան»:

Կաշե, օր մատի մատնիքը իրանը չէ, ըստեղ քիչ՝մ կը դինջանա, կըսե. «Օր էդպես է, ինչխ էլ էղնի կէրթամ էդ աղջկան կը գտնեմ»:

Թող Ջումշուտը մնա ըստեղ, հմի մենք խաբարը տանք Սալվինազից: Էսի էլ ըստեղ էդ էրազը կը տեսնի ու կը մտածե Ջումշուտի հմար. «Յարաբ, բտի մեկ էլ տեսնի՞մ էդ տղին»:

Էսպեսով՝ տղեն աղջկա, աղջիկը տղի հմար կը վառվին ու կը տանջվին՝ թե արժան բտի էղնին իրա՞ր, թե՞ չէ:

Թող էսոնք էսպես տանջվելով մնան, մենք խաբարը տանք Ջումշուտի հորից: Էս թագավորը կը տեսնի, օր տղեն մենձցել է դառել 19-20 տարեկան տղա: Մե օր՝մ կը կանչե տղին քովը,

կըսե.—Ա՛յ որդի, դու հասակդ առել ես, նշանվելուդ վախտն է, ես էլ ծերացել եմ, ըսա տեսնիմ՝ ո՞ւմ աղջիկն ես ուզում, քանի սաղ եմ, նշանեմ, քու թագն ու պսակը տեսնիմ, նոր մեռնիմ:

Ջումշուտը կըսե.—Արքա, թե օր կուզես՝ ես երջանիկ էղնիմ ու իմ սրտի ուզածն առնիմ, ես կուզեմ Արևմուտքի խաչապաշտների Խուրշուտ թագավորի աղջկան:

Թագավորը էս օր կիմանա, ային-բեյին կէղնի, կըսե.—Այ որդի, Արևմուտքի Խուրշուդ[43] թագավորի երկիրը մեզեն մի քանի տարվա ճանպա հեռու է, համ էլ մենք կռապաշտ ենք, էնի՝ խաչապաշտ: Մեզի աղջիկ չի տա, արի էդ քարը փեշիցդ թափե, մեր երկրից ինչ աղջիկ կուզես, ես կուզեմ: Յա՛ մեր մոտիկ թագավորներից, որի աղջիկը կուզես, ուզեմ:

—Չէ, օր չէ,—կըսե տղեն,—էդ աղջկանից սավայ ես ուրիշ աղջիկ չեմ ուզե: Էդի էղավ՝ էղավ, չեղավ, ուրիշ աղջիկ ընձի պետք չէ:

Թագավորը շատ կը խրատե, շատ կը համոզե, իլաջ չի էղնի:

Ջումշուտը կըսե.—Դու օր չես ուզե, իզին տուր՝ ես կէրթամ կբերեմ:

Թագավորը գուլա, կը ողբա.—Այ որդի, էդ բանը մի՛ էնե, տեսնում ե՞ս՝ ես ծերացել եմ, կրնա էղնի՝ հարի քու գալդ ես մեռնիմ: Բա դու ըստեղ չեղնի՞ս, օր բուռ՚մ հոխ քցես էրեսիս:

Թագավորը ինչքան կըսե, տղի մե անգճից մտնի, մեկելից դուս գուքա:

—Չէ, օր չէ, բտի էրթամ:

Թագավորը կը տեսնի՝ իլաջ չկա, կըսե.—Կէրթաս՝ գնա, քու մուրը՝ քու գլոխը:

Ջումշուտը կը հազրվի, իրան հավատարիմ ծառաներից մեկին հետը կը վերցնե ու, Ասված կը կանչե, կընկնին ճամփա: Շատ կէրթան, քիչ կէրթան, Ասված գիտե, սար ու ձոր, ծով ու ցամաք կանցնին: Որտե՞ղ ես խաչապաշտների թագավորի քաղաք, գուքանք քեզի:

Էդ օրվանից կանցնի վեց ամիս: Մե օր՚մ էլ գուքան մե չոլ-յաբանի տեղ՚մ, կը հանդիպին մե ծեր մարդու՚մ, բարև կուտան:

Էս ծերը կըսե.—Բարև, հազար բարի, Արևելքի թագավորի տղա:

Ջումշուդը ային-բեյին կեղնի, կըսե.—Պապ, դու ի՞նչ գիտես, օր ես Արևելքի թագավորի տղեն եմ:

—Գիտեմ, որդի,—կըսե ծերը,—գիտեմ էլ, թե ուր ես էրթում: Հմը էդ ընկերոջդ հետ դու աջողության չես հասնի, արի կեղնի ետ դառի:

Ջումշուդը կըսե.—Պապ, իմ ընկերս ընձի շատ հավատարիմ է, էս վեց ամիս է՝ իրար հեդ գուքանք, հըլը իրարից մե գեշ բան՚մ չեմ տեսել, իրար հետ կէրթանք, իրար հետ կուտենք, իրար հետ կը քնենք, էլ ըստեղ ի՞նչ գեշ բան կա:

Ծերը կըսե.—Այ որդի, էդ է օր կա, դրա համար դու աջողության չես հասնի, եդ դառի գնա մե ավելի հավատարիմ ընկեր՚մ ճարե, նոր գնա:

Ջումշուդը կը մտածե, կըսե. «Էս մարդը օր իմացավ, թե ես վով եմ, ուր կէրթամ, կրնա էղնի էդ ըսածն էլ օղորտ էղնի»:

Ծառային կը կանչե կըսե.—Մենք բտի ետ դառնանք էրթանք մեր երկիրը:

Ետ դառնան գուքան, թագավորը կը տեսնի՝ տղեն ետ էկավ, կուրախանա, կըսե.—Տեսա՞մ, որդի, օր կըսեի՝ մի՛ էրթա, ընձի անգաճ չէրիր, մեծեն անգաճ չէնողի ոռը քարին կառնի:

Տղեն կըսե.—Թագավորն ապրած կենա, էկա, հըմը էլի կէրթամ:

Մե էրկու օր կը դինջանա, իրան ծառաների մեջը մե Գուջո աննով տղե՚մ կեղնի, էդի հա՛մ ղոչաղ կեղնի, հա՛մ էլ՝ խելացի:

Ջումշուդը էդոր կըսե,—Գուջո ջան, հազրվի, օր ես, դու տեղ բտի էրթանք:

Ջումշուտն ու Գուջոն ճանպա կընգնին կէրթան: Գուջոն էնպես կը ծառաե Ջումշուտին, օր հեչ խոսք չկա: Դինջանալու վախտը Գուջոն՝ ինքը, կնստի Ջումշուտին կը քնցնե, հաց ուտելուց Ջումշուտը կուտե պրծնի, նոր մնացածը ինքը կուտե: Գիշերները քնելուց Ջումշուտին կը քնցնի, նոր ինքը կը քնի: Ճանպա էրթլուց մե քանի քայլ հետևից կուգա: Էսպեսով՝ կուքան կը հասնին էլի էդ ծերունուն:

Ծերը կը հարցնե.—Էկա՞ք, Ջումշուտ ջան:

—Էկանք,—կըսե տղեն:

—Նոր ընկերդ ի՞նչխ է,—կը հարցնե ծերը:

Ինչխ օր ես պատմի, Ջումշուդը կը պատմե ծերունուն:

—Հիմա կրնաս աջողության հասնիս, օր էդպես ընկեր ունիս,—կըսե ծերունին,—գնացեք, Ասված հետներդ:

[43] Հեքիաթում օգտագործվում է այս անունի տարբեր ձևեր՝ Խուրշուտ, Խուրշուդ (ծանոթ, կազմողների):

Ջումշուտը կը շարունակե ճամբեն, կէրթան: Շատ կէրթան, թե քիչ, Ասված գիտե, օրերից մե օր՝մ չոլ-յաբանի տեղ՝մ կը հանդիպեն մե քոշք ու սարայի՝մ: Կիջնեն ձիանից, Ջումշուտը կը մնա դուռը, Գուջոն կը մտնի նես, կը տեսնի մե օթաղ՝մ, էրկու կառավատ, էրկու աթոռ, մե ստոլ՝մ, էրկու հոգու հմար կերակուր սարքած: Կէրթա գոմը, կը տեսնի էրկու ձիու հմար մսուրք, կերը՝ լիքը:

Գուքա դուս Ջումշուտին կըսե.—Քելե նես, էսի թե ինչ տեղ է, չիտեմ, հարամի են, ջին են, ջանավար են, օր էսպես սարքած, թողել գնացել են:

Կը մտնին նես, Գուջոն ձիանը կը տանի կապե, իրանք կը մտնին օթաղը, հա՛մ բերզած կեղնին, հա՛մ անոթի:

Ջումշուտը կը նստի հաց ուտելու, Գուջոյին կըսե.—Արի հաց կեր:

Գուջոն կըսե.—Դու կեր, ես հետև կուտեմ:

Թուրը քաշե կէրթա դուսը կը կայնի, հարի Ջումշուդը հաց կուտե կը պրծնի, նոր ինքը կուքա հաց կուտե: Իրիկունը մութը օր կընկնի, Ջումշուտը կըսե.—Գուջո ջան, ելի քնինք, դինջանանք, օր առավոտ թեզ էրթանք մեր ճամբեն: Ամեն մեկը մե կառավատին կը պարկին, հըմը Գուջոն չի քնի, սապռ կէնե, հարի Ջումշուտը կը քնի, ինքը կը ելնի, կը քաշե թուրը, կէրթա դուռը կը կայնի, կըսե. «Չոլ-յաբանի տեղ, վո՞վ գիտե՝ գիշերը ինչ եղնի»:

Էդպես կը կայնի հարի կեսգիշեր, մեկ էլ ոտի ձեն կիմանա, կըսե. «Ահան, տան տերերը էկան»:

Թուրը հազր կը պահե, մեկ էլ կը տեսնի՝ էրկու ծեր մարդիկ, մեկը՝ հուսիսից, մեկը՝ հարավից էկան իրար բարևեցին: Մեկը էն մեկելին ըսավ.—Ահան, տղեն էկել է, հմի ի՞նչխ պտի էրթա: Արևմուտքի թագավորի քաղաքը էս ղոջա օկյանոսից ի՞նչխ բտի անցնին:

Էն մեկելը կըսե.—Էգուց թող ըստից ոտով էրթան, կը հասնին ծովին, ըտեղ մե կարմիր քար՝մ կա, էդ քարը դեն քցեն, տակը մե օսկեցե գյամ՝մ կա, վերցնեն կախեն ծովը, մե ձի՝մ դուս կուքա, նստին կէրթան, թե քնած են, էրազնեին տեսնին, թե արթուն ին, թող իմանան:

Էսպես կըսեն, օր բտի էրթան, էն մե ծերը կը հարցնե.—Ծովը օր անցան՝ ի՞նչ բտի էնեն:

—Ծովը օր անցան, ձիու գլխից գյամը կը հանեն, ձին էլի կէրթա ծովը, իրանք գյամը թող պահեն ծովի ղրաղը, իրանք էրթան կը հասնին Խուրշուդ թագավորի քաղաքը: Ընդից հետև հունարը կը մնա իրանց, օր աղջիկը բերեն,—էսպես կըսե, ու կէրթան:

Գուջոն էս բիրադի կիմանա ու կէրթա հանգիստ կը քնի: Առավոտ օր կը լուսանա, բարի լուսը բացվի վրներդ, Ջումշուտը կելնի, նոր կը տեսնի, օր էսի էն տունն է, օր ինքը էրազին Սալվինազին տեսել է: Կը նստին հաց կուտեն:

Օր կելնին էրթլու, Գուջոն կըսե.—Հարի հմի ես քեզի էի ենթարկվում, ըստից հետև դու ընձի բտի ենթարկվես, ինչխ օր ըսի, էնպես բտի էղնի: Թե օժար ես, հետդ գուքամ, թե չէ՝ չեմ գա:

Ջումշուտը կըսե.—Օժար եմ, Գուջո ջան:

—Դե,—կըսե,—օր օժար ես, ըստից մենք ոտով բտի էրթանք:

Ջումշուտը կըսե.—Ոտով ի՞նչխ էրթանք:

Գուջոն կըսե.—Էդպես է: Չե՞ս ուզե, ես ետ կէրթամ:

Ջումշուտը կը տեսնի, օր ճար չկա, կըսե.—Օժար եմ, Գուջո ջան, էրթանք:

Ձիանը կը թողնին ըտեղ, իրանք ոտով կէրթան: Շատ կէրթան, թե քիչ, շատն ու քիչը Ասված գիտե, կը հասնին ծովին: Գուջոն ման գուքա կարմիր քարը կը գտնի, դեն կը քցե, գյամը տկից կը հանե: Էս օր կը տեսնի Ջումշուտը, կշշմի, կըսե. «Էս ի՞նչ բան է, ուրտեղի՞ց գիտեր Գուջոն էսոր տեղը»:

Գուջոն գյամը կը կախե ծովը, էն սհաթին հրեղեն ձին ծովից դուս կուքա: Էրկուսով կը նստին ձիուն ու կընկնին ծովը: Մե քանի սհաթվա մեջ ձին դուս կուքա ծովի էն ղրաղը: Ըստեղ Գուջոն գյամը ձիու բերնից կը հանե, ձին կիջնի ծովի տակը: Գյամը կը պահե, ու իրանք ոտով կընկնին ճամբա: Շատ կէրթան, թե քիչ, Ասված գիտե, կը հասնին Խուրշուդ թագավորի քաղաքը:

Կէրթան մե պառվի՝մ տուն, էսոր կըսեն, օր.—Մա՛մ, էսօր մեզի ղոնախ էրա, ծանոթ-բարեկամ չունինք:

Պառավը կը տեսնի էսոնց հագուստը, կըսե.—Բալեք ջան, ես ձեզի լայեղ տուն չունիմ, գնացեք հարուստ տուն կամ ղոնախանա, ես ո՞նչ ուտելիք ունիմ, ո՞նչ գողինք, ձեզի ի՞նչխ նես առնիմ:

Գուշոն կը հանե մե բուռ՚մ օսկի կուտա պառվին, կըսե.—Գնա, ինչ օր հարկավոր է, առ՝ արի:

Պառավը օսկիքը օր կը տեսնի, խնդլու ոտները գետնից կը կտրի: Կէրթա բազար, ինչ օր հարկավոր է, կառնի, կուտա համալի շալակը, կը բերե տուն: Կերակուր-բան կեփե, նստին կուտեն, կը խմեն, կելնին դուս, կաշեն քաղաքին, կը տեսնին, օր քաղքի մե թարաֆը մութ-խավար է, մեկել թարաֆը՝ լուսավոր, կերուխում:

Պառվին կը հարցնեն, թե,—Էս ի՞նչ է, մե թարաֆը սուգ ու շիվան է, մե թարաֆը՝ քեֆ ու ուրախություն:

—Էլ միք հարցնե, բալեք ջան,—կըսե պառավը, մեր գլխին էնպես ղազաբ է էկել, օր էլ ըսելու չէ: Մեր թագավորը մե լավ, սիրուն աղջիկ՚մ ունի, անունը՝ Սալվինազ, հմի մե խան՚մ էկել է էդոր ուզելու, աղջիկը չի առնի, էս քանի ամիս է՝ խանը իրան զորքով ըստեղ է: Էն թարաֆն, օր սուգուշիվան է, էնի մեր քաղքի ժողովուրդն է, էն մեկել թարաֆը խանի զորքն է: Մնացել է, օր աղջկան համոզեն, օր խանին առնի, աղջիկը մե ձեռը առել է խանչալը, մե ձեռը՝ աղուն, հեչ մե մարդու մոտիկ չի թողնում: Էսպեսով՝ էս քանի վախտ է, օր մեր ժողովուրդը տանջվում է:

—Մամ ջան,—կըսե Գուշոն,—քանի օր ըստեղ ենք, մենք քեզի տղա, դու մեզի՝ մեր: Ինչ օր կըսեմ, դու ընձի անգաճ էրա: Էգուծ կելնիս կէրտաս թագավորի քովը, կըսես, օր ես աղջկան կը համոզեմ, օր խանին առնի: Կէրթաս աղջկա քովը, մեր գալու հըմար կըսես աղջկան:

—Վա՛յ, չէ, գուզեք, օր իմ գլոխս կտրե՞ աղջիկը, ես չեմ էրթա:

Գուշոն Ջումշուտի մատից կը վերցնե աղջկա մատնիքը, կուտա պառվին, կըսե.—Առ էս մատնիքը, մե հնարքով աղջկան տեսցրա, էնի քեզի բան չի ըսե:

Պառավը կը վերցնե մատնիքը կը դնե մատը, կէրթա դուզ թագավորի պալատը, կը տեսնի, օր ժողովուրդը էնպես է լցվել, օր ասեղ քցելու տեղ չկա: Պառավը, էսոր, էնոր դեն քշելով, մե հնարքով կը մոտենա թագավորին, կըսե.—Հերիք չէ՞ էս ժողովրտին սուգուշիվանի մեջ պահեք, թողեք ես էրթամ աղջկան համոզեմ:

Թագավորն օր կիմանա, պառվին կը կանչե քովը, կըսե.—Պառավ, օր կրցար աղջկաս համոզեիր, քու կշեռքով մեկ քեզի օսկի կուտամ:

—Կը համոզեմ, թագավորն ապրած կենա:

—Դե գնա, աշե, ինչքան օր հունար ունիս, խարջե, բալի խելքի բերես, մենք էլ էս կրակից ազատվինք:

Պառավը կէրթա դպա աղջկա օթախները: Ժողովրդին էս դին, էն դին քշելով, կէրթա կը մոտենա օթաղի դռանը, կըսե.—Սալվինազ ջան, բաց դուռը, տես քեզի ինչխ լավ խաբար եմ բերել, հերիք է՝ էսքան ժողովրդի լացուկոծի պատճառ դառնաս, բաց դուռը՝ նես գամ:

Աղջիկը կըսե.—Հեռեցի, պառավ, թե չէ խանչալը սիրտդ կը կոխեմ, կը սատկեցնեմ:

Պառավը շատ կըսե, աղջիկը քիչ կը լսե, վերջը կը տեսնի, օր իլլաջ չկա, պառավը կըսե.—Թագավորի աղջիկ, հեչ օր չէ, դուռը մի քիչ՚մ բաց, էնքան, օր մե մատս նես առ, տես:

Աղջիկը կը մտածե. «Ըստեղ կրնա էղնի մե բան կա, օր էս պառավը էսքան կը խնդրե»:

Դուռը մե քիչ՚մ կը բանա, պառավը մատը կը տեսցնե: Աղջիկն օր կը տեսնի իրան մատնիքը էտոր մատին, քիչ կը մնա ուշքը էրթա:

—Արի նես, մորքուր ջան, արի, հըբը ինչի՞ չես ըսե քու մորքուրդ եմ, արի, ինչ օր ըսես քու խոսքից դուս չեմ գա:

Էս խոսքերը օր կիմանան, ժողովուրդը քիչ՚մ կսրտապնդվին, թե էս պառավը բան կէնե, մեզ էլ կազատե էս տանջանքից:

Պառավը նես կը մտնե, Սալվինազը կը հարցնե.—Պառավ, ուրտե՞ղ է էս մատնիքի տերը:

—Մեր տունն է,—կըսե պառավը:

Աղջիկը կը փաթթվի պառվին, կը համբուրե, կըսե.—Կէրթաս հորս քովը, կըսես, օր աղջիկը մե քիչ՚մ կակխցավ, մե էրկու-իրեք օր գամ, համոզեմ: Խոսք կուտա, կէրթաս տուն: Ջումշուտին էլ կըսես՝ թող էսօր իրկունը գա մեր խաս բախչեն, հավուզի քովը ընձի սպասե:

Պառավը կէրթա թագավորին կըսե, թագավորը կուրախանա, լավ փեշքեշ կուտա պառվին, ճամբու կը դնե: Պառավը գուքա, ինչխ օր աղջիկը ըսել էր, էնպես էլ կըսե Ջումշուտին:

Մեկել օրը իրկունը Ջումշուտը կէրթա խաս բախչեն, հավուզը կը գտնի ու Սալվինազի ճամբեն կաշե: Շատ կը մնա, թե քիչ, Ասված գիտե, աղջիկը չկա ու չկա: Շատ օր մտքի տակ կընկ-

նի, թե պառվին խապե ճամբու է դրել, էսպես քունը կը տանի, կը քնի: Մե քիչ՚մ հետև աղջիկը գուքա, կը տեսնի, օր տղեն քնել է, կըսե. «Հլը աղջիկ տանողին տեսեք, Արևելքից հարի ըստեղ էկել է, օր աղջիկ տանի, ընկե քնել է»:

Ջեբիցը էրկու ճան կը հանե կը քցե տղի ջեբն ու կէրթա: Տղեն շատ կը քնի, թե քիչ, Ասված գիտե, մեկ էլ կը զարթնի, օր լուսու դեմ է ո՛չ աղջիկ կա, ո՛չ բան: Գելնի փոր-փոշման կէրթա պառվի տունը:

Գուշոն կը հարցնե.—Ի՞նչ էղավ:

Ջումշուտը կըսե.—Հարի հմի ճամբեն աշի՝ չեկավ:

—Չի կրնա էղնի, օր գալած չէղնի, խո չե՞ս քնե:

—Հա, քիչ՚մ քնա:

—Օր էդպես է, էկել է, քնած ես էղել, թողել գնացել է: Ջեբերդ աշե, մե նշան՚մ թողած կեղնի:

Ջումշուտը կաշե, ջեբից մե ջուխտ՚մ ճան կը հանե:

—Յա՛, էս ի՞նչ բան է,—ային-բեյին կեղնի տղեն:

—Էդ ճաները աղջիկն է քցե ջեբդ, թե հլը էրեխա ես, գնա ճան խախցի:

Ջումշուդը նիաթ-միաթը կը կախե, Գուշոն կըսե.—Հեչ մի մտածե, էսօր էլի պառվին կը ղրկենք աղջկա քովը:

Առավոտ պառավը էլի կէրթա դուզ աղջկա օթաղը: Հմը աղջիկը օր կիմանա պառվի ձենը, նես չի թողնի, կըսե,—Հեռեցի, պառավ, թե չէ խնձորի փետ վերցնեմ վրեդ կը ջարդեմ:

Էս օր կիմանա պառավը, թողնի կը փախնի, կուքա տուն: Գուշոն կը հարցնե.—Ի՞նչ էղավ, մամի:

—Էլ մի հարցնե, այ որդի, էսօր էնպես էր կատղել, օր հեչ չթողեց, օր նես մտնեի: Ըսավ՝ հեռեցի գնա, թե չէ խնձորի փետը վրեդ կը ջարդեմ:

—Հա,—կըսե Գուշոն,—ըտով հասկցրել է, օր էսօր իրկունը թող գա խնձորի ծառի տակը:

Կը մնան հարի մութը կընկնի: Ջումշուտը էլի կէրթա, Գուշոն կըսե.—Չը քնիս:

—Չեմ քնի, էսօր կդիմանամ, հարի գա:

Ջումշուդը կէրթա խաս բախչեն, ման կուքա խնձորի ծառը կը գտնի: Ծառի տակ կը նստի, կէղնի կեսգիշեր, աղջիկը չկա: Տղեն էլի մտքի տակ կընկնի, քուն կը տանի, կը քնի: Էլի աղջիկը գուքա, կը տեսնի, օր քնած է. ծառից մե պզտի ճուղ՚մ կը կտրե, դնե տղի ծոցը, ինքը կէրթա: Մեկ էլ տղեն կը զարթնի, տեսնի կը, օր լուսացել է, աղջիկը չկա: Փոր-փոշման կէրթա տուն:

Գուշոն կը հարցնե.—Ի՞նչ էղավ:

—Էսօր էլ չեկավ:

—Էլի քնել ե՞ս, տես ջեբերդ՝ նշան թողած կէղնի:

Ջումշուտը կաշե, ծոցիծ մե ճուղ՚մ կը հանե:

Գուշոն կըսե.—Քեզի աղջկա տեղ է դրել, թե՝ աղջիկ տանելը քու գործը չէ, գնա թեշիկ մանե:

Առավոտ էլի պառվին կը ղրկեն, էլի աղջիկը նես չի թողնի, կըսե.—Հեռեցի, թե չէ տանձի ծառի փետը վերցնեմ՝ գլոխդ կը ճղեմ:

Էլի պառավը կուքա տուն, ինչ օր աղջիկը ըսել էր, կըսե:

Գուշոն կըսե.—Էսօր էլ ըսել է՝ թող տանձի ծառի տակը գա:

Ջումշուտը իրկունը կէրթա տանձի ծառի տակը կը նստի, աղջկա ճամփեն կաշե: Կեղնի կեսգիշեր, աղջիկը չկա, քունը կը տանի: Հանե խանչալը, մատը կը կտրե, քիչ՚մ թութուն կը դնե վրեն, մռմուռը կուտա ջանը, քունը կը փախնի:

Գեջտանգեջ, աղջիկը կուքա, իրար կը տեսնին, կը փաթթվին, կը համբուրվին, հարի լուս կը մնան ըստեղ: Առավոտ աղջիկը կըսե տղին,—Էսօր պառվին ղրկեք, թող գա, ինչ օր կըսեմ, էնպես էլ կէնեք:

Թող էսոնք մնան ըստեղ ու աղջկա խապարին աշեն, մենք դառնանք աղջկան: Աղջիկը պառվի հետ խապար կէնե թագավորին.—Ես հոժար էմ առնելու խանին, մենակ թող էսօր իրկունը հայտնե ժողովրդին, օր բիրադիքը դռները փակեն նես մտնին, օթախները հեչ մե լուս՚մ չը վառեն, օր ես էլնիմ քաղաքը ման գամ, կարոտս առնեմ քաղքից ու էրթամ խանի հետ: Պառավը էս բիրադի կըսե թագավորին: Թագավորը շնորակալ կեղնի պառվից, իրան խոստացած փեշքեշը կուտա: Պառավը կէրթա էլի աղջկա քովը: Աղջիկը կըսե.—Ջումշուտին կըսես՝ էսօր իրկունը սհաթի 10-ին, թող հազրվի գա մեր խաս բախչեն, օր էրթանք իմ հավատարիմ ջառյեքից մեկին էլ հետս կբերեմ:

Պառավը գուքա Ջումշուդին կըսե, Գուջոն կէրթա էրկու լավ ձի կառնի, կը հազրվին, իրկունը՝ աղջկա ըսած վախտը, կուքան խաս բախչեն: Թագավորի աղջիկն ու իրան ջայռեն էլ կուքան՝ ձիանի վրա նստած: Ըստեղից կէրթան պառվի տունը:

Ջումշուտը կըսե.—Գուջո ջան, էս էլ քու նշանած:

Կելնին, ձիանքը կը հազրեն, էս պառվին բոլ օսկի կուտան իրան էրած լավության փոխարեն, կը նստին ձիանքն ու կընկնին ճամփա: Շատ կէրթան, թե քիչ, Ասված գիտե, կէրթան կը հասնին ծովին: Գյամը կը հանեն կախեն կը ծովը, ձին դուս կուքա, կը նստին կէրթան կը հասնին էն քոշք ու սարային, կը մտնին նես, տեսնին չորսը կառավատ, չորսը աթոռ, չորս հոգու հըմար ուտելիք: Գուջոն կէրթա գոմը, կը տեսնի չորսը ձի կապած, կերը՝ առաջները: Էսոնք կը նստին հաց կուտեն, կը դինջանան: Իրիկունը կելնին քնելու: Գուջոն էլի կելնի դուս. Թուրը քաշե կը կայնի: Խելի վախտ կանցնի, էլի էն ծերունիները կուքան իրար կը բարևեն:

Մեկը կըսե.—Տղեն ու աղջիկը հասան իրանց մուրազին, բարի ճանպա իրանց:

Էն մեկելը կըսե.—Հըլը մենձ փորձանքը հետոն է:

—Ինչ կա,—կըսե մեկելը:

—Թե քնած են, թող էրազներին տեսնին, թե զարթուն են, թող իմանան:

Էս օր կըսե, Գուջոն անկըջները կը սրե, օր լավ իմանա:

Ծերը կըսե.—Էսոնք օր հասան իրանց քաղաքին, գուքան դիմավորելու: Վազիրը մե ձի՛մ կը բերե թագավորի տղին: Ձին կախարդված է, թող տղեն չը նստի, վազիրին նստըցնե, էն սհաթին ձին էլ, վազիրն էլ կը տրաքին: Վազիրի աղջիկը մե ջուխտ՛մ լավ օսկեցե տուլֆի կը բերե թագավորի հարսին, թող էլի վազիրի աղջկան հագցնեն: Եբ օր կը հասնին պալատին, թող թագավորի տղեն ու հարսը էրկուսն էլ սովորական դռնից նես չը մտնեն, էրկուսն էլ կը տրաքվեն: Էս բիրադի վազիրն է էրել նախանձությունից, չումքի Ջումշուդը իրան աղջկան չառավ:

Էս բիրադի Գուջոն կիմանա, ծերունիները կէրթան: Գուջոն կուքա կը քնի: Առավոտ օր կը լուսանա, բարի լուսը բացվի վրներդ, էսոնք կելնին կը հազրվին ճամբա կը ընկնին: Շատ կէրթան, թե քիչ, շատ ու քիչը Ասված գիտե, կուքան կը հասնին էն ծերունուն: Ծերը կը տեսնի, օր տղեքը էկան, էրկու աղջիկներն էլ հետները, էդոնց կօրշնի, էսոնք մնաս բարով կէնեն ծերունուն ու կընկնին ճամբա՝ դեպի իրանց երկիրը:

Թող էսոնք էրթան, մենք խաբարը տանք աղջկա հորից՝ Խուրշուդ թագավորից: Էսոնք առավոտ կելնին կը տեսնին, օր՝ լալա քոչմիշ, յուրդի բոշ[44]: Ո՛չ աղջիկ կա, ո՛չ բան: Էս բանը կիմանա խանը, էսոնք ղոշուն կը վերցնեն՝ կընկնին հետևներեն: Էլ որտեղի՞ց, փոր ու փոշման ետ կը դառնան կէրտան իրանց տեղերը:

Ջումշուդը իրան խմբով գուքան օրերից մե օր՛մ կը հասնին իրանց քաղաքի ղրաղը, էստեղ կիջնին դինջանալու, էրկու մարդ ռասդ կուքան, կէրթան քաղաք:

Ջումշուտը էսոնց կըսե.—Կէրթաք թագավորին կըսեք, օր տղեդ ու հարսդ էկան:

Էսոնք կէրթան թագավորին կըսեն, թագավորը բոլ մուժտուլը կտա, ու կը հազրվին դիմավորելու: Մի քանի հարուր հոգով երգով, չալելով, խաղալով գուքան կը հասնին Ջումշուդին:

Գուջոն կըսե, օր.—Քեզի փեշքեշ կը բերեն, հըմի իմ էրեսիս կաշես, որն օր ես ըսեմ՝ չէ, չես վերցնե:

Թագավորը գուքա, առոք-փառոք կը մոտենա տղին, կը համբուրվին ու կընգնին ճամբա կէրթան: Էդ վախտը վազիրը մե շատ սիրուն ձի՛մ, այարը, գյամը բիրադի օսկուց, կը մոտեցնե Ջումշուտին:

Կըսե.—Էսի ընձեն քեզի փեշքեշ:

Ջումշուտը կաշե Գուջոին, էսի կը հասկցնե, օր թող վազիրը հեծնի:

Ջումշուտը վազիրին կը զոռե, օր.—Դու նստի էդ ձիուն:

Վազիրը կը տեսնի, օր էլ ճար չկա, կը հեծնի: Ձին էլ, վազիրն էլ կը տրաքին: Ըստեղ Ջումշուտը ային-բեյին կեղնի, թե էս ի՞նչ բան էր: Հըմը Գուջոն հեչ բան չի ըսե: Քիչ՛մ կէրթան, վազիրի աղջիկը մե ջուխտ՛մ օսկուց շինած տուլֆի կը բերե՝ թագավորի հարսին փեշքաշ: Ջումշուտը էլի կաշե Գուջոյի երեսը: Գուջոն կը հասկացնե, օր վազիրի աղջիկը թող ինքը հաքնի: Զոռով էդոր հակցնել կուտան, աղջիկը կը տրաքի: Էս-

[44] Ծաղիկը գնացել է, վրանը դատարկ է մնացել (ծանոթ. կազմողների)

պեսով՝ կը հասնին պալատին, օր նես մտնին: Գուջոն չի թողնի, օր Ջումշուդն ու Սալվինազը էդ դռնով նես մտնին, կը տանի գաղտնի դռնով: Էսպեսով՝ սաղ սալամաթ տեղ կը հասնին: Թագավորը բերե Ջումշուտի ու Գուջոյի հարսնիքը իրար հետ կէնեն, քառսուն օր, քառսուն գիշեր քեֆ կէնեն: Հարսնիքից հետև նոր Գուջոն Ջումշուդին կը պատմե քոշք ու սարահում ծերերի հետ հանդիբելը, էնոնց ըսածները բիրադի մանրամասը կը պատմե:

Թագավորը ծերացած կեղնի, բերի Ջումշուտին նստեցնե թագավոր, Գուջոյին էլ՝ գլխավոր վազիր:

Էնոնք կը հասնին իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Երկնքից իրեք խնձոր ընկավ, մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողներին, մեկն էլ՝ ալամ աշխարքին:

9(9). ՀԱԽՎԵՐԴՈՒ ՀԵՔՅԱԹԸ

Ժամանակոց թագավորի մեկը ալվադ-թալվադ չի ունենա: Էս թագավորը շատ դարտ կէնե, թե. «Ես օր մեռա, վո՞վ պտի իմ մալ ու դոլվթին, իմ թագավորություն տիրե»:

Գիշեր ու զօր էդ մասին կը մտածե, մե օր՝մ էլ իրան խաս բախչեն նստած կեղնի, մե դարվիշ՝մ «յա, ալլահ» կէնե, նես կը մտնի թագավորի քովը: Թագավորն օր կը տեսնի դարվիշին, կըսե.—Համեցի, դարվեշ բաբա, նստի:

Դարվեշը չի նստի, կըսե.—Թագավորն ապրած կենա, ես էկել եմ քու դարդին դարման էնելու: Ես գիտեմ, օր դու ժառանգ չունիս, էդոր հըմար շատ դարտլամիշ կեղնիս: Ա՛ռ էս խնձորը տար, կպճները կուտաս ձիուդ, միջինն էլ դու, թագուհին կուտեք, Ասսու հրամանով ձեզի մե տղե՝մ կեղնի, ձին էլ մե քուռակ՝մ կունենա:

Թագավորը էս օր կիմանա, կը շշմի, հարի ուշքի կուգա, դարվիշը աներևութացած կեղնի, կըսե. «Հեյ վա՜խ, մե փեշքեշ՝մ բիլա չը կրցա տայի»:

Թագավորը կէրթա տուն, դարվիշի հետ պատահածը կը պատմե թագուհուն, թագուհին էլ կուրախանա, օր Ասված խղճած իրանց ծերությանը և ձեռք մեկնեց իրանց:

Թագավորը խնձորը կը կպճե, կպճները կուտա ձիուն, մեջն էլ ինքն ու թագուհին կուտեն: Էդ օրվանից խելի վախտ կանցնի, թագուհին կիմանա, օր էրեխով է, թագավորին կըսե, թագավորը կուրախանա: Բերե քասիպներին օղորմություն կը բաժնե, մատաղ կէնե, քեֆ-ուրախություն: Կանցնի ինը ամիս, ինը օր, ինը սհաթ, թագուհին կազատվի, մե տղե՝մ կը բերե: Կուքա ձիու վախտը կը թմմի, ձին էլ ցկնի մե քուռակ՝մ կը բերե: Ինչխ օր թագավորը, էնպես էլ սաղ քաղաքի ժողովուրդը կուրախանան, քեֆ կէնեն, թագավորի տղին երկար կյանք ու երկար արև կը մախտեն: Տղին կը կնքեն, անունը կը դնեն Հախվերդի[45], քուռակի անունը՝ Ղամարթայ: Տղեն ու քուռակը իրար հետ կը մենձնան: Տղեն շատ կը սիրե Ղամարթային, հեչ քովեն չի հեռենա:

Հախվերդին օր կեղնի 10 տարեկան, թագավորը կը կանչե իրանց տնական մոլին, կըսե.—Մոլլա, տղիս տալիս եմ քեզի, լավ գրել-կարդալ կը սովրցնես, էնպես, օր մենձցավ լավ բարի ու գիտուն մարդ դարձնես: Ինչ օր ա, միսը՝ քեզի, օսկոռը՝ ընձի:

Էդ օրվանից մոլլեն Հախվերդուն գրել-կարդալ կը սորվցնե: Տղեն կեղնի տասնինը-քսան տարեկան, ուսումը կը վերջացնե, կըսկսե իրան թայտաշ տղոնց հետ ավղուշության էրթալ: Թագավորը կը տեսնի, օր տղեն սերը տվել է ավղուշությանը, մե օր՝մ կը կանչե քովը, կըսե.—Այ որդի, դու ամեն օր կէրտաս ավղուշության, հազար ու մե ջին ու ջանավարի ռաստ կուքաս, օր՝մ էլ տեսար էդոնցեն մեկը քեզի մե վնաս՝մ տվեց: Էն վախտը ես ի՞նչ էնեմ, վերցրու իմ թուրը: Քանի էդ թուրը վրեդ է, օր մե ղոշուն՝մ ջին ու ջանավարի մեջ մտնիս, յա թե չէ՝ զորքի, քեզի հեչ մե փորձանք՝մ չի գա, մուղաթ կեցի՝ բիրդան թուրդ ղնիցը չը հանեն: Օր հանեցին, դու իմացի, օր հաղթված ես.—կըսե ու թուրը կուտա տղին:

Հախվերդին թուրը կը կապե, կէրթա ավղուշության: Ինչ տեսակ գազան ռաստ կուքա, ինչխ օր մե ճնճուղ՝մ սատկցնե դեն կը քցե: Օրերից մե օր՝մ կէրթա մոր օթախը, կը տեսնի, օր մերն ու մոլլեն փաթթված համբուրվում են: Օր կը տեսնի, եդ կը դառնա, կը մտածե, թե. «Էս ի՞նչ բան է, մերս սիրում է մոլլին, հորս անունը խայտառակում է: Ի՞նչխ էնեմ, օր էսոնցեն հորս վրեժը հանեմ»:

[45] Հեքիաթում օգտագործվում է այս անունի երկու ձև՝ Հախվերդի և Հախվերտի (ծանոթ. կազմողների)՝

Թող Հախվերդին մտածե, օր մորից ու մոլլից վրեժ հանե, մենք խաբարը տանք էտոնցեն: Էտոնք օր կը տեսնին, օր Հախվերտին իրաց էդպես փաթթված տեսավ, կըսեն.—Անպատճառ թագավորին կըսե, հարկավոր է տղից ազատվել:

Միջոց ման կուքան, օր տղի գլոխը ուտեն: Մե անգամ'մ Հախվերդին կէրթա Ղամարթայի քովը, կը տեսնի, օր ձիու աչքերից արցունքը կը թափի, կըսե.—Յա, Ղամարթայ ջան, ինչ է էղել, ընչի՞ կուլաս:

Ձին լիզու կառնի, կըսե.—Հախվերտի, մերդ ու մոլլեն ուզում են քեզի փորձանքի բերեն, օր քեզեն ազատվին, հարկավոր է՝ ըստեղից փախնինք, թե չէ վերջը լավ չի էղնի:

—Լավ, Ղամարթայ ջան, օր էդպես բան կա, էրթանք:

Էդ օրը կանցնի, մեկել օրը Հախվերդին ձին կայարե, գյամը կը դնե բերանն ու կը հեծնի կուքա հոր քովը, կըսե.—Թագավորն ապրած կենա, ես մե խելի վախտ կէրթամ ման գալու, աշխարք տեսնելու, թե սաղ սալամաթ էկա՝ էկա, չէկա, էդ էլ Աստու գործն է, դե մնաս բարով: -Կըսե տղեն ու ձիու գյամը բաց կը թողնի:

Թագավորը կըսե.—Բռնե՛ք:

Էլ ուրտի՞ց բռնեն, տղեն կէրթա: Թագավորը տղի էրթլուց հետև շատ կը մտածե, զօր ու գիշեր կուլա, կը ողբա, հըմը էլ ինչ կըրա էնե: Էնոր թագուհին էլ կուրախանա, թե. «Լավ է գնաց, մեր սռը չբացեց»:

Հախվերդին շատ կէրթա, քիչ կէրթա, շատ ու քիչը Ասված գիտե, կանցնի շատ քաղաքներ, գեղեր, սար ու ձորեր, խուլասա կը հասնի մե աղբրի'մ: Ըստեղ կիջնի ձիուց, ձին կը թողի արծալու, ինքն էլ կը նստի ծառի տակ, կը դինջանա: Մեկ էլ մե ջահել տղե'մ կուքա Հախվերդուն բարև կուտա, կը նստի: Քիչ հետև մե տղե'մ էլ կուքա, կը նստին մե քիչ'մ խորաթա կէնեն:

Հախվերդին կը հարցնե, թե.—Վո՞վ եք, ո՞ւր կէրթակ:

Էսոնք կըսեն.—Կէրթանք աշխատանք էնենք, գլխներս պահենք:

—Ի՞նչ հունար ունիք,—կըսե թագավորի տղեն:

Մեկը կըսե.—Ես ռամջի եմ, որտեղ ինչ էղնի, կրնամ ռամ քցեմ՝ իմանամ:

Մեկն էլ կըսե.—Ես էլ լավ լողջի եմ, ասեղն էլ օր ընկնի ծովի մեջ, կրնամ սկի տակը, էդ ասեղը գտնի:

—Իմ հունարն էլ էս թրի մեջ է,—կըսե Հախվերդին,—քանի էս թուրը վրես է, օր հազարավոր մարդիկ թափվին վրես, հեչ բան չեն կրնա էնե, բիրադքուն կը ջարդեմ, հըմը թուրը օր ղնից հանեցին դեն քցեն, էն սհաթը կը հախտվիմ:

Էսոնք կընկերանան, կընկնին ճամփա, կէրթան: Շատ կէրթան, թե քիչ, Ասված գիտե, կը հասնին մե չոլ-յաբանի տեղ'մ, ո՞նչ գեղ կա, ո՞նչ քաղաք, ո՞նչ ժողովուրդ: Բիրադի քարուքանդ է էղած, խարաբա դառած: Էսոնք քարանան, կը մնան, թե՝ էս ի՞նչ բան է, վո՞վ է էսպես ավերակ դարձրել էս գեղերն ու քաղաքները:

Մե քանի օր կէրթան, խուլասա մե քոշք ու սարայ'մ կէրևա: Կէրտան կը հասնին էդ քոշք ու սարային: Կը տեսնին՝ բալկոնը մե սիրուն աղջիկ'մ նստած՝ ձեռագործ կէնե:

Հախվերդին կըսե.—Աղջի, մե ջուր'մ տաս, ճամբորդ մարդիկ ենք: Էսքան տեղ էկանք՝ ջրի չը հանդիպանք:

Աղջիկը օր կը տեսնի էսոնց, կը շշմի:

—Այ տղեք,—կըսե,—հավքն իրան թևով, օձը իրան պորտով ըստեղ չի էրևացել, ի՞նչխ է, օր դուք էկաք: Չեք իմացե՞լ իրեք գլխանի դևի անունը, թեզ հեռեցեք, հըմի դևը կուքա, իրեքիդ էլ կուլ կտա:

—Աղջի մե թիքե'մ հաց տուր ուտենք, մե թաս'մ ջուր խմենք, կէրթանք: Ընչի՞ ես թեզ'մ դևով վախեցնում:

Աղջիկը բերի ուտելիք կուտա, էսոնք կուտեն, կը խմեն: Էդ վախտը դեմից դխկրտոցի ձեն կուքա:

Աղջիկը կըսե.—Թեզ'մ հեռեցեք, դևը էկավ:

Էսոնք կը նստին ձիանը, կէրթան: Հախվերդին ընկերներին մե թարաֆի վրա կը ղրկե, ինքը կէրթա դուզ դևի դեմը:

Դևը օր կը տեսնի, կըսե.—Այ տղա, էս որտե՞ղից էկաք, քանի վախտ է՝ իսանի միս չէի կերել:

—Կեր, նոր պարծեցի.—կըսե Հախվերդին:

Էս օր կիմանա դևը, կը կատղի, ձեռքի գուրզը կը քցե տղին, Ղամարթայը հավալամիշ կէղնի, կելնի վերև, գուրզը ոտների տկից կանցնի: Հախվերդին թուրը կը քցե, իրեք գլոխն էլ կը կտրե:

Դևը կըսե.—Մեկ'մ էլ զարկ, իսանօղլի:

Տղեն կըսե.—Մորիցս մե անգամ՚մ եմ էղել, մեկ՚մ էլ զարկի՝ հերիք է:

Դևը կը սատկի: Հախվերդին անկնջները կը կկտրե վերցնե, դառնան կուքան էլի աղջկա քովը: Աղջիկը կըսե.—Վա՛յ, էլի էկա՞ք, հըմի դևը կուքա:

—Ահան, քու դևի անկջները:

Աղջիկը օր կը տեսնի, ուրախությունից վազելով նարդիվաններից կիջնի ցած, փաթթվի կը տղոնցը, կը տանի վերև: Ըստեղ խորատա կէնեն: Հախվերտին կը հարցնե.—Ո՞ւմ աղջիկն ես, ի՞նչ ես անում ըստեղ դևի քովը:

Աղջիկը կըսե.—Ֆլան թագավորի աղջիկն եմ, մենք իրեք քուր ենք: Էս դևը, իրանք իրեք ախպեր են, էկան մեր քաղաքը ավրեցին, սաղ ժողովրդին սպանեցին, մեր իրեք քուրոջը բերին, ես մեծն եմ: Օրդանջիլ քուրս հինգ գլխանի դևի ձեռն է, պզտի քուրս օխտը գլխանի դևի ձեռն է: Էս քանի տարի է՝ էսպես տանջվում ենք:

Մութը օր կընկնի, Հախվերդին ռամջուն կըսե.—Ախպեր ջան, դու մեզեն մեծ ես, էսի քու նշանածն է, կապրիք էստեղ, մենք էրկսով կէրթանք:

Աղջիկը կըսե.—Արի կեղնի, միք էրթա, հինգ գլխանի դևը ավելի կատղած է, օր իմացավ՝ դու ախպորը սպանել ես, ավելի կը կատղի ու ձեզի կը վնասե:

—Ինչ կուզե՝ էղնի, բտի էրթամ, էն քուրերիդ էլ ազատեմ: Առավոտ լուսը կը բացվի, բարի լուսը բացվի վրներդ, Հախվերդին ու լողջի ընկերը կը հազրվեն, մնաս բարև կէնեն ու կընկնին ճամբա: Շատ կէրթան, թե քիչ, Աստված գիտե, կը հասնին էլի մե քոշք ու սարայի՚մ, կը տեսնին բալկոնը մե սիրուն աղջիկ՚մ կայնած:

Հախվերդին կըսե.—Աղջի ջան, մե թաս՚մ ջուր տուր խմենք:

Աղջիկը օր կը տեսնի էսոնց, կըսե.—Վա՛յ, էս ուրտի՞ց էկաք, հըմի հինգ գլխանի դևը էկավ, էրկսիդ էլ մեկեն կուլ կուտա, իլլայի օր իմացել է իրան ախպորը սպանել եք, կատղել է: Թեզ հեռեցեք, քանի չի էկել:

—Է՛հ, դևով ընձի մի վախեցնե.—կըսե Հախվերդին,—դու մե քիչ՚մ ուտելիք տուր ուտենք, էրթանք:

Էդ վախտ սար ու ձոր սկսեց դղրդալ: Աղջիկը կըսե.—Տիա, դևը էկավ:

Բերե էսոնց ուտելիք կը դնե, կուտեն, կը պրծնին, կելնին կէրթան: Հախվերդին կէրթա դուզ դևի դեմը: Դևը օր էսոր կը տեսնի, էնպես կը գոռա, օր սար ու ձոր ձեն կուտա: Կըսե.—Իրեք գլխանի ախպորս սպանել ես, հըմի էկել ես ըստեղ, տես՝ քեզի ինչխ հողին կը հավսրեմ:

Էս ըսելուց գուրզը կը վերցնե կը քցե տղին: Ղամարթայը հավալամիշ կեղնե, կելնի վիրև, գուրզը կանցնի: Էդ վախտը Հախվերդին կը քաշե թուրը, հինգը գլոխն էլ կը կտրե:

Դևը կըսե.—Տղա, մեկ էլ զարկ:

Տղեն կըսե.—Մորիցս մե անգամ եմ էղել:

Էստեղ դևը կը սատկի: Հախվերդին ու լողջին կէրթան աղջկա քովը:

Աղջիկը կըսե.—Էլի էկա՞ք, հըմի դևը կուքա, հեռեցեք՝ քանի չի էկել:

Տղեն ջեբից կը հանի դևի անկջները, կը լցնե աղջկա առաջը, կըսե.—Ահան, դևի անկջները:

Աղջիկը օր կը տեսնի, ուրախությունից քիչ կը մնա ուշքը կորցնե, տղոնցը կը կանչե վիրև, կը հարկե, պատվե, նստին խորատա կէնեն: Իրկունը կը մնան, առավոտ Հախվերդին կըսե լողջուն.—Էս էլ քու նշանածը, մնացեք էստեղ, ես կէրթամ:

Աղջիկը շատ կաղաչե, օր տղեն չէրթա: Հըմը Հախվերտին անկաջ չի էնե, էսոնց մնաս բարև կէնե, կընկնի ճամբա, կէրթա:

Շատ կէրթա, թե քիչ, կը հասնի մե քոշք ու սարայի՚մ, կը տեսնի մե աղջիկ՚մ կա, ո՛ինչ ուտես, ո՛ինչ խմես, մենակ կայնիս էտոր սեյր էնես: Արևին կըսե՝ դու դուս մի գա, ես կուքամ, հերիք է: Էդոր մազերը օսկու պես կը փայլե, արևի պես շողքը կը քցե չորս դին: Հախվերդին օր կը տեսնի, քիչ կը մնա՝ ուշքը կորցնե:

Աղջիկը կըսե.—Այ տղա, հավքն իրան թևով, օձն իրան պորտով էստեղ չէր սիրտ էնե գա, դու ի՞նչխ էկար:

—Քու սերը բերեց, չքնաղ աղջիկ:

—Է՛հ, իմ սերից ի՞նչ օգուտ կունենաս, հըմի որտեղ օրա է, օխտը գլխանի դևը կուքա, սաղ կտորդ անկաջդ կը թողնի, թեզ էրա՝ գնա, քանի չի էկել:

—Է՛հ, աղջի, ընչի՞ դիվով կը վախեցնես, ճանպա եմ եկել, անոթի եմ, մե թիքե՚մ հաց տուր ուտեմ, թաս՚մ ջուր տուր խմեմ, նոր վախեցրա:

Աղջիկը տղին կը կանչե վերև, հաց կը դնե՝ կուտե, քիչ՚մ կդինջանա, էդ վախտը սաղ սար ու ձոր դղրդոցը կը ընկնի: Աղջիկը կըսե.—Տղա, դևը էկավ:

Տղեն կելնի կը նստի ձին ու կը քշե դեպի դևի գալած ճամպեն:

Դևը կը տեսնի տղին, կը կատղի, կըսե.—Հա, էրկու աղբորս սպանեցիր, հմի էլ էկել ես՝ ընձի սպանե՞ս: Տես՝ ինչխ եմ էրկու ախպորս հարիֆը հանում, սաղ թիքեդ անգաջդ կը թողնիմ:

Էսպես կըսե ու գյուրզը կը քցե տղին, Ղամարթայը հավալամիշ կեղնի, կելնի երկինք, գուրզը ոտների տկից կանցնի: Հախվերդին կանցնի դևի հետևը, թուրը քցե, օխտը գլխն էլ կը կտրե: Հարի թուրը սրբե ղնի մեջ կը դնե, դևի գլխները էլի կը կպնին իրանց տեղերը, տղեն էլի կը զարկե՝ կտրե, էլի դևը կը սաղնա: Ինչ օրա, հարի իրկուն, էսպեսով հա՛մ տղեն իլջից կընկնի, հա՛մ դևը:

Վերջը դևը կըսե.—Այ տղա, արի էրթանք տուն հաց ուտենք, դինջանանք, էլի առավոտ կը կռվինք:

Կէրթան տուն, դևի հմար մե մենձ ղազան՚մ միս էր էփած, դևը կուտե, աղջիկը տղին էլ ուտելիք կտա, կուտե: Իրկունը դևը թեզ՚մ կընկնի քնի, աղջիկը կէրթա Հախվերդու քովը, խորադա կէնեն: Տղեն կը հարցնի աղջկա անունը:

Աղջիկը կըսե.—Անունս Օսկեմազ է, ընձի հմար շատ թագավորներ ու թագավորի տղեք կուքային ու կէրթային, հըմը դևերը էկան մեր երկիրը ավրեցին, մեր իրեք քրոջն է տարան:

Առավոտան կելնին, աղջիկը տղին կըսե.—Դու էդ դևի թլիսմը չիտես: Հմի օր կէրթաք կռվելու, գլխները օր կը կտրես, թուրդ էն սհաթին դիր ղնի մեջ, օր թրի պսպղալը չը տեսնի, կը սատկի:

Կէրթան կռվի, տղեն էլի դևի գլխները կը կտրե ու թուրը էդպես արնոդ կը դնե ղնի մեջ: Դևը կըսե.—Վա՛յ, քու սորվցնողիդ վիզը կոտրեր, հեչ օր չէ մե հադ՚մ էլ զարկ:

Տղեն կըսե.—Մորիցս մե անգամ՚մ եմ էղել, մեկ՚մ էլ կը զարկեմ, ավել չեմ զարկե:

Էստեղ դևը կը սատկի, տղեն կուքա աղջկա քովը, նոր կը փաթթվի, կը համբուրվեն, ալ շավթալի, վեր շավթալի, շավթալինն հոխաս ի բիր կապեկ:

Էստեղ Հախվերդին ու Օսկեծամը մե խելի վախտ իրանց հըմար դինջ կապրին: Հախվերդին ամեն օր կէրթա ավղուշի, մե օր՚մ էլ ավղուշից կուքա տուն, Օսկեմազը կըսե.—Հախվերդի ջան, էս քանի վախտ է՝ տնից դուս չեմ էլել, արի էրթանք ծովի ղրաղը, քիչ՚մ ման գանք, գլոխս լվանամ, գանք:

—Էրթանք,—կըսե Հախվերդին:

Ման գալով կէրթան ծովի ղրաղը, Օսկեմազը գլոխը կը լվա, սանդրե: Սանդրի հետ էլած մազերը կուտա Հախվերդուն, տղեն մազերը վերցնե, կը քցե ծովը: Մե քիչ՚մ կանցնի. Աղջիկը կըսե.—Հախվերդի, ի՞նչ էրեցիր մազերս:

Տղեն կըսե.—Քցեցի ծովը:

—Վա՛յ,—կըսե աղջիկը,—էլ ընձեն քեզի օգուտ չկա, մազերս որ քաղքի քովը օր դուս էկավ, մարդիք տեսան, կիմանան, օր դևը չկա, կուքան ընձի կը տանին, չումքի դևը էդ բանը գիտեր, չէր թողնում մազերս ջուրը քցեի:

—Մի վախենա, Օսկեմազ ջան, քեզի իմ քովիցս տանողը հըլը մորից չի ծնվել:

—Լավ, կտեսնինք:

Կելնին կուքան տուն, էլի իրանց հըմար դինջ կապրին: Թող էսոնք էստեղ ապրին: Մենք խաբար տանք մազերից: Ծովը տաղլա տալով կը տանի հանե Չինիմաչին թագավորի քաղաքի ղրաղը, փաթթե կը մե ծառի՚մ չղից: Մե թոռչի՚մ գուքա ձուկ բռնելու, կը տեսնի, օր մե բան՚մ պսպղում է՝ ինչխ օր օսկի:

Կըսե.—Էս ի՞նչ լավ էղավ, էդի օսկի է, կամ անգին քար է, Աստված իմ ծերության վախտը ձեռ բռնեց, օգնեց ընձի:

Կէրթա դպա էդ պսպղացող բանը, կը տեսնի՝ աղջկա մազ: Թոռչին կը շշմի, կըսե. «Էս մազերը օր էսքան սիրուն են, հըբը էսոր տերը ինչքան սիրուն կեղնի: Տանիմ տամ թագավորին, ընձի փեշկաշ կուտա»:

Մազերը կը փաթթե թղթի մեջ, կը դնե ջեբը, իրկունը օր տուն կէրթա, մազերը կը տանի թագավորի պալատը:

Թագավորը կըսե.—Ի՞նչ կա, ի՞նչ ես ուզում:

Թոռչին կըսե.—Հեչ բան էլ չեմ ուզում, թագավորն ապրած կենա, էս մազերը բերել եմ քեզի փեշքաշ:

Թագավորն օր կը տեսնի մազերը, այնբեյին կեղնի, կըսե.—Էս ուրտի՞ց:

Թոռչին կըսե.—Ծովի ղրաղը ծառի ճղին փաթթված էր, վերցրի բերի:

Թագավորը մազերը կը վերցնե, մե քանի օսկի կուտա թոռչուն, ճամբու կը դնե: Ինքը կը մտածե, թե ինչղ էնե, օր էս մազերի տեր աղջկան բերել տա:

Իրկունը կը կանչե իրան պալատականներին, կըսե.—Ձեզեն վո՞վ գիտե էս մազերի տեր աղջկա տեղը:

Պալատականներից մեկը կըսե.—Թագավորն ապրած կենա. էդ աղջիկը էս քանի տարի է դևի ձեռն է, հեչ մե թագավոր իրան ղոշունով սիրտ չի էնում էդ դևին մոտենա, դևը աղջկան չի թողնում, օր տնից դուս գա, հըմի կէրևա, օր դևին սպանել են, օր աղջիկը դուս է էկել ծովի ղրաղը, դևին սպանողին ի՞նչղ կրնաս մոտենա: Թե օր կուզես աղջկան բերել, մե ջատու պառավ'մ գտի, ղրկի էրթա, խորամանկությամբ բալի բերե:

Թագավորը կը մտածե, օր խելքի մոտիկ բան է: Առավոտ կելնի մարդ կը ղրկե մե ջատու պառավ'մ կը գտնի, բերեն թագավորի քովը:

Թագավորը կըսե.—Պառավ, բտի էրթաս ծովի էն ղրաղը, օխտը գլխանի դևի քովից, մե աղջիկ'մ կա, բտի բերես: Թե օր բերիր, քու կշեռքով մեկ քեզի օսկի կուտամ:

Պառավը կըսե.—Լավ, թագավորն ապրած կենա, կէրթամ, հըմը մե լավ խնոցի'մ շինել տուր, էնպես, օր մարդ տեղավորցի մեջը, խնոցու մեջը լավ փայլուն զուքս դնել կուտաս, օր դրսից տեսնողը մոտենա նայե:

Թագավորը կը հրամայե, խնոցին շինել կուտա, լավ կը զարդարե կուտա պառվին, բոլ էլ խարջլղ կուտա, ճամբու կը դնե: Պառավը կէրթա, խնոցին կը տանի ծովի ղրաղը, օձը կէնե ղամչի, կը նստի խնոցին ու կընկնի ծովը, կէրթա: Ուրտեղ ես Օսկեծամ, էկա քեզի: Պառավը շատ կէրթա, թե քիչ, կը հասնի ծովի էն ղրաղը, ուրտեղ Հախվերդու քոշք ու սարայն է: Խնոցին կը տանե ծառների մեջ կը պահե, ինքը քոշք ու սարայից մե քիչ'մ հեռու կը նստի ու կը տկա:

Էդ վախտը Հախվերդին ավղուշից կուքա, կը տեսնի պառվին, կը հարցնե.—Այ մեր, էստեղ ի՞նչ կէնես, ո՞ւր կէրթաս:

—Այ որդի,—կըսե պառավը,—իմացանք, օր դևին սպանել են, մե քանի հոգով էկանք՝ Երուսաղեմ կէրթայինք, էստեղ ես հիվնդցա, չը կրցա էրթայի, ընկերներս ընձի թողին գնացին:

—Լավ, էլի էրթանք մեր տունը,—կըսե Հախվերդին:

Պառվին կը նստցնե ձիուն կը տանի տուն: Օսկեմազը օր պառվին կը տեսնի, կըսե.—Էսոր ընչի՞ ես բերել, էսորից մեզի վնաս կուքա, վոնդե թող էրթա:

Հախվերդին կըսե.—Օսկեմազ ջան, էսի ի՞նչ է, օր տեղովը կրակ դառնա, մեզի չի վառի, էսորից ընչի՞ կը վախենաս: Խեղճ կնիկ է, թող մեր տունը ապրի, քեզի էլ քոմակ կէղնի:

Պառավը կը մնա էդտեղ: Էնքան լավ կաշխատի, էնքան խելացի գործ կէնե, օր Օսկեմազն էլ կը սկսե էդոր սիրել: Էս պառավը կը դառնա էսոնց տան անդամը: Էնքան էլ կը սիրե Հախվերդուն ու Օսկեմազին, ինչխ օր իրան հալալ էրեխեքը: Էսպեսով կանցնի մե քանի'մ ամիս:

Մե օր'մ էլ Հախվերդին ավղուշի էրթցած կեղնի, պառավն ու աղջիկը տունը նստած խորատա կէնեն: Մեկ էլ պառավը աղջկան կը հարցնե.—Հախվերդին էսքան որ ղոչաղ է, դևերին հաղթեց, էդոր հունարը ի՞նչն է, օր հեչ վախ չունի:

—Ես ի՞նչ գիտեմ՝ ի՞նչ է, չեմ հարցրել:

—Բա էլ ի՞նչ կնիկ ես, օր չես հարցնում՝ իմանաս, օր'մ էլ մե փորձանքի'մ կուքա, բա չիմանա՞ս ինչով օգնես:

—Լավ,—կըսե Օսկեմազը,—իրկունը օր էկավ տուն, կը հարցնեմ:

Իրիկունը Հախվերդին կուքա տուն, հաց կուտեն կը պրծնին, կելնին քնելու: Պառավը կէրթա իրան օթաղը, էսոնք էլ՝ իրանց: Կը պառկեն քնելու: Օսկեմազը կը հարցնե.—Հախվերտի, դու ի՞նչ հունար ունիս, օր կրցար իրեք դևին հախտել: Սաղ թագավորները իրանց ղոշունով սիրտ չէին էնում էտոնց հետ կռվելու: Ըսա քու հունարը, թե բան'մ պատահի, բալքի կրնանամ քոմակ էնեմ:

Հախվերդին կըսե,—Օսկեմազ ջան, իմ ղոչաղության հունարը իմ թրի մեջն է, թուրս ղնիցը օր հանեն քցեն դեն, ես էն սհաթին կը հախտվիմ:

Առավոտ օր կելնին, Հախվերդին կէրթա ավղուշի, պառավն ու աղջիկը կը մնան տանը: Աղջիկը կը պատմե պառվին, օր Հախվերտու ղոչաղության հունարը թրի մեջ է: Թուրը

օր հանեն ղնից, քցեն դեն, էն սհաթին ինքը կը հախտվի: Պառավը էս բիրադի կիմանա, առավոդյան Հախվերտին կէրթա ավղուշի: Օսկեմազը պառվին կը պատմե, պառավը դարտլամիշ կեղնի.—Յաման Օսկեմազ ջան, ըսա՝ թող մուղաթ կենա, բիրդան թուրը չհանեն, թե չէ էրկուսս էլ կը մնանք անտեր-անտիրական:

Կանցնի էդ օրը, իրկունը Հախվերտին տուն կուքա, կը նստին խորաթա կէնեն, կելնին քնելու: Հախվերտին ու Օսկեմազը միամիտ կը քնին, հըմը պառավը չի քնի: Կը տեսնի, օր էդոնք քնան, կը մտնի էդոնց օթախը: Թուրը պատից կախած տեղեն ղնից կը հանե, կը տանի քցե ծովը, ինքը կուքա կը քնի: Առավոտ օր կելնին, Օսկեմազը կը տեսնի, օր Հախվերտին քնած է, կըսե.—Էս ընչի՞ էսօր էսքան քնավ:

Պառավը կըսե.—Էրեկ շատ է չարչրվե, բեզարած է, էդոր հըմար քնած է, թող քնի, քելե մենք էրթանք քիչ'մ դուսը ման գանք, հարի զարթնի:

Էրկուսով կէրթան ման կուքան, մեկ էլ բիրդանց պառավը կըսե.—Օսկեմազ ջան, էս ինչ է ըստեղ էսպես կը պսպղա:

—Ինչ կա,—կըսե Օսկեմազը:

—Հըլը արի տես,—կըսե պառավը:—Հըբը էսքան վախտ էստեղ կապրիք, չես տեսե՞:

Աղջիկը կէրթա ծառի տակը, կաշե, օր մե բան'մ էմպես կը պսպղա, օր էլ պատմելու չէ:

—Էս ինչ է,—կըսե աղջիկը,—էսպես բան հեչ չեմ տեսել,—ու կաշե:

Պառավը կը կռանա խնոցու վրա, կըսե.—Օսկեմազ ջան, հըլը մեջն աշե, տես՝ ինչքան սիրուն է:

Աղջիկը օր գլոխը կը կոխե խնոցու մեջը, պառավը հետևից կը հրե քցե խնոցու մեջ, բերանը կը կապե ու քցե կը ծովը, քշելով կէրթա: Օրերից մե օր'մ կը հասնի Չինիմաչին թագավորի քաղաքը, աղջկան կը հանե խնոցուց, կը տանի թագավորին: Թագավորը օր կը տեսնի աղջկան, ուշքը կէրթա էդոր սիրունությունից: Խոստացած փեշքաշը կուտա պառվին, կը ճամբե: Օսկեմազին կը տանի իրան օթաղը, հըմը աղջիկը հեչ թագավորի երեսին չի աշե: Թագավորը շատ կը խնտրե, աղջիկը կըսե, օր.—Ես նշանված եմ, նշանած ունիմ, քառսուն օր ընձի իզին տուր, թե օր էդ վախտ նշանածս չեկավ, նոր ես քուկդ եմ:

Թագավորը կը հոժարի, աղջկան բաշխա օթաղ կուտան, իրան հըմար կապրի հարի քառսուն օրը թմմի: Թող աղջիկը մնա էստեղ, մենք խաբարը տանք Հախվերտու ռամջի ընկերոջից: Էսի նշանածին կըսե.—Ընկերներս գնացին ո՞նչ խաբար կա, ո՞նչ բան, տեսնիս՝ ի՞նչ էղան:

Վերցնե ռամ կը քցե, օր հինգ գլխանի դևի քոշք ու սարայի մեջ լողջի ախպերը դինջ կապրի, հըմ Հախվերդին լավ վիճակի մեջ չէ, նշանածին կըսե.—Հախվերտին վատ վիճակի մեջ է, ես կէրթամ էնոր հավարին:

Կելնի կը նստի ձին ու ճամբա կընկնի: Կէրթա կը հասնի լողջի ընկերոջը, կըսե.—Ել էրթանք, մեր ընկերը նեղության մեջ է, թուրը ղնից հանե քցել են ծովը:

Էսոնք էրկուսով կընկնին ճամփա, կէրթան: Շատ կէրթան, թե քիչ, Աստված գիտե, կը հասնին Հախվերդուն: Կաշեն, օր թլբիշ ընկած է: Կը խոսան, հեչ ջուղապ չի տա: Կէրթան ծովի ղրաղը, լողջին կընկնի ջուրը, թուրը կը հանեն, բերեն կը դնեն ղնի մեջ: Հախվերդին աչքերը կը բանա, կը տեսնի, օր ընկերները գլխի վիրևը կայնած են, կըսե.—Էս ինչքա՞ն քնել եմ, օր ձեր գալը չեմ իմացել:

—Ելի, չես քնել, ո՞ւր է Օսկեմազը:

Նոր Հախվերտին կաշե, օր ո՞նչ աղջիկը կա, ո՞նչ պառավը: Կը հարցնե.—Էս ի՞նչ բան է:

Նոր ընկերները կը պատմեն, ինչ օր էղել էր:

Հախվերտին կը վերցնե ընկերներին ու կընկնի ճամբա՝ դպա Չինիմաչին թագավորի քաղաքը: Շատ կէրթան, թե քիչ, Ասված գիտե, օրերից մե օր'մ կը հասնին: Հախվերտին դուզ կէրթա թագավորի պալատը, կըսե.—Իմ նշանածիս պառավը փախցրել բերել է ըստեղ, բեր նշանածիս տուր, թե չէ՝ թախտդ ծակեմ գլոխտ կանցնեմ:

Թագավորը կը դիմադրե, Հախվերտին քաշե թագավորի գլոխը կը կտրե: Լալա-վազիրին կըսե.—Յա բերեք նշանածիս տվեք, յա թե չէ, սաղ քաղաքը տակուվրա կէնեմ:

Էսոնք բերեն Օսկեմազին կը հանձնեն, Հախվերտին կը վերցնե նշանածին ու կէրթան, կը հասնին իրանց քոշք ու սարային, մե քանի'մ օր կը դինջանան: Ինչ օր գինը թանգ, քաշը թեթև բան կար, կը վերցնեն ու կէրթան կը հասնին լողջու քոշք ու սարային: Էստեղ էլ քա-

շը թեթև, գինը ծանդր ինչ օր կար կը վերցնեն, կէրթան ռամջու տունը, էստեղ էլ էլի կը վերցնեն թանգարժեք ինչ օր կա, կընկնին ճամբա, կէրթան: Շատ կէրթան, թե քիչ, Ասված գիտե, կէրթան կը հասնին էն աղբրին, ուրտեղ օր հանդիպել էին իրար: Էստեղ կը նստին դինջանան: Ամեն մեկը իրանց նշանածներով ու ունեցվածքով կէրթան դիպա իրանց քաղաքները:

Հախվերդին օրերից մե օր կը հասնի իրանց քաղաքի ղրաղը, մեկին կը ղրկե, թե՝ գնացեք թագավորին ըսեք, օր տղեդ էկավ:

Էս մարդը կէրթա թագավորին կըսե, թագավորը էդոր բոլ փեշքաշ կուտա ու զորքով, նվակով կը դիմավորե տղին, կը բերե տուն: Էգսի օրը հարսնիք կէնե, օխտը օր, օխտը գիշեր կերուխում կէնեն, սաղ քաղքի ժողովուրդը կը մասնակցի հարսնիքին: Հարսնիքը օր կը վերջանա, նոր Հախվերդին կը պատմե թագավորին իրան հեռենալ հըմար: Էդ վախտը թագուհին մեռած կեղնի, թագավորը կանչե մոլլին՝ կախարանից կախել կուտա:

Թագավորը ծերացել էր, բերե Հախվերտուն կը նստցնե թագավոր:

Էնոնք կը հասնին իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Երկնքից իրեք խնձոր ընկավ, մեկը՝ պատմողին, մեկը՝ գրի առնողին, մեկն էլ՝ լսողներին:

10(10). ՋԱՄՓՈՒԼԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

Լինում է մի քյասիբ ընտանիք՝ մ, տրանց լինում է մեկ մեկուճար տղա: Էդ տղու անունը լինում է Ջամփուլադ: Այ, այս հեքիաթը հենց այդ Ջամփուլադի մասին է, որը ես ձեզի պիտի պատմիմ:

Ուրեմն դրա հայրը զբաղվում էր հովիվությամբ: Էդ Ջամփուլադը մեծանում է, բայց չէր աշխադի: Օրերից մի օր հայրը հիվանդանում է, ինքն է գնում ոչխարի: Մի քանի օր ոչխար արածցնելուց հետո, մի օր Ջամփուլադ նկատեց, որ բնից մի սև օձ դուրս եկավ, չորս կողմ նայեց, մտմտաց-մտմտաց, ինչ-որ գաղտնի ձայներ հանեց, բնից մի կարմիր օձ դուրս եկավ, մոտեցավ սև օձին և փաթաթվեց անոր: Ջամփուլադի սիրտը չտարավ, թե. «Էս սև, մունդառ օձն ինչ է, որ փաթաթվի էս գեղեցիկ օձին»: Խփեց: Պետք է դիպներ, ուրեմն, սև օձին, դիպավ կարմիր՝ սիրուն օձին: Օձերը թե՛ փախան, թե՛ սատկեցին, չիմացվեց, հետո կիմացվի, բայց Ջամփուլադի սիրտը տրորվեց: Էդպես եկավ տուն: Հերը, մերը նկատեցին, որ Ջամփուլադը ոնց որ հիվանդ է:

Դե, քանի որ նա մեկուճար տղա է, խնդրին, թե.—Ախպեր, եթե հոգնել ես, դու ոչխար մի գնա, թող, հերդ լավացել է, ինք գնա:

—Չէ՛:

Պատմեց, ինչ որ ես պատմի: Նորից եմ պատմում, որ...

Ասում է.—Սև օձ՝մ դուրս եկավ, կծկծաց էդ, էդ, էդ հարևան բնի մոտ: Մի գեղեցիկ կարմիր օձ դուրս եկավ, փաթաթվեցին, սիրտս չվերցրեց: Խփեցի, որ սև մունդառ օձին սպանեմ, դիպա կարմիր սիրուն օձին:

—Էդ որդեղ է, որդեղ է:

—Հբա, էս ինչ տեղն է, մեր արտի գլուխն է:

—Բա, բալիկ ջան, էլ էտ տեղը չգնաս: Էդ օձը քեզի հակառակ է, կխփե:

Էդ օր չգնաց, մյուս օր ըսավ. «Հլա էրթամ տեսնեմ՝ էդ օձը ի՞նչ է էղե, ինչ չի էղե»: Գնաց էդպես տխուր, նստեց էդ դատարկ տեղը, որովհետև ո՛չ օձ կար, ո՛չ բան: Էդ վախտ կտեսնի, որ մի փոքր, սիրուն օձ, էլի կարմիր, եկավ, թե.—Քեռի, քեզի իմ պապաս կանչում է:

Նայեց չորս կողմ, մարդ չկա՝ ինսանօղլի չկա:

—Քեռի.—ըսավ,—ես եմ: Ես էն օձի որդին եմ, որ դու խփել ես, վիրավորված է: Էդի թագավորի կինն է, թագավորը քեզի կանչում է:

Ջամփուլադ ընկավ էդ փոքր, կարմիր օձի ետևից:

—Եթե չգաս,—ըսավ,—քեզ իսկույն կը դեղեն, կը թույնեն. Դու իսկույն կմահանաս:

Ընգավ էդ փոքր օձի հետևից, գնաց: Էդ փոքր օձ մտավ իրա բուն, էդ մեծ մարդ չկարցավ:

—Քեռի,—ըսավ,—էդիկ [ինչ է՝ թելիսմ է, այսինք՝ աչքակապություն է] ,—ըսավ,—դու ոտդ դիր տեղ, նոր դարբաս կ՚բացվի:

Էդպես էլ ըրավ, դարբաս բացվեց, գնաց ներս: Գնաց ներս, տեսավ՝ իսկապես որ թագավորի պալատ, գեղեցիկ, մահճակալներ դրած...

Ուրեմն էդ փոքր օձի ձագը իրա գլխով ցույց տվեց աթոռ, քյասիբի տղան նստավ: Ջամփուլադը, հա՛, Ջամփուլադը նստեց: Նստած կ՚սպասե, թե ի՞նչ պիտի անեն:

Կգա էդ օձ, ուրեմն էդ փոքր օձ կնստի Ջամփուլադի գրկում, թե.—Քեռի, ես քեզի մի բան կասեմ: Հիմի հայրս կուգա, հեչ չվախենաս: Ինչ լեզվով որ խոսաս, իմ հերը կհասկանա: Բոլորովին կասկած չանես: Իսկ եթե նա ինքը կբավարարվի քո ասածով՝ նվեր կխոստանա: Որ հարցնի, թե ինչ կուզես, կասես՝ էդ քո լեզվի տկի ալմաստը տու: Իսկ եթե դա տվեց քեզ, նշանակում է՝ ինչ ազգի լեզվով, ինչ ղուշի լեզվով կշտիդ խոսեն, կհասկնաս:

Ասաց օձը, իջավ գնաց նստավ իրա տեղ:

Չանցավ մի կես ժամ, հայրը եկավ, այսինքն՝ թագավորը: Բոլորը վեր կացան կայնան: Դե քանի որ թագավորի կինը վիրավորված է, ուրիշ հյուրեր էլ են եկել: Լսել, եկել են:

Ջամփուլադն էլ վեր կացավ, թագավորին գլուխ իջեցրեց, թե.—Ինչո՞ւ եք ինձ բերել ստեղ:

Ասում են.—Հիմի մենք քու դատաստան կանենք: Եթե շնորհքով մարդ ես, շնորհքով ճամփու կդնենք: Եթե շնորհքով մարդ չես...

Ջամփուլադ նորից գլուխ իջեցրեց, ըսավ.—Ես քեզ կհասկանամ, դու ինչ ես ասում, թագավոր, դու չես հասկանա, ես ինչ եմ ասում, ափսոս:

Ասավ.—Ես քեզ էլ գիտեմ, ամբողջ աշխարի լեզուն էլ գիտեմ, դու պատմիր այն, ինչ որ եղել է: Եթե սուտ ասես, քեզնից ամենամեծ կտորը անգաճրդ կմնա:

Պատմեց այն, ինչ որ ես պատմեցի: Ասավ.—Հայրս հիվանդ էր, ոչխարները ես բերի, արածեցին: Հետո,—ասում է.—մի սև օձ'մ դուրս եկավ, չորս բոլոր մտիկ ըրեց, կաղկանձեց, մի կարմիր սիրուն օձ դուրս եկավ բնից, փաթաթվեցին իրարու, իմ սիրտ չկրցավ տանել այդ գործողություն, խփեցի, որ սև մունդառ օձին սպանեմ, կպավ կարմիր սիրուն օձին: Կպավ կարմիր սիրուն օձին, էդ օրվանեն էլ ես հիվանդ եմ, այսպես էլ մնացել եմ,—ասում է,—մինչև, ահա, քու որդին որ ինձ կանչել է:

—Բա դու ինչ գիտես, որ իմ որդին է:

Ասում է.—Ես էլ էնպիսի մարդ եմ, որ ջինսից կհասկնամ՝ քու որդին է՞, թե՞ ոչ:

Ասում է.—Ինչ ջինսից կհասկնաս:

Ասում է.—Օրինակ՝ իմ հայրս չոբան է, ես գյուղի գառների ջինսից գիդեմ, թե էդի որ ոչխարի, որ մաքու գառն է:

Ասում է.—Եթե բերենք էդ կարմիր օձը, կճանանչե՞ս:

—Հա՛:

Կէթան մահճակալով կբերեն (ինքը հիվանդ, վիրավորված) կդնեն դեմը:

Կասի.—Հա, սա է:

—Իսկ մյուսը որ բերե՞նք...

Ասում է.—Հա՛, կճանանչեմ, նրան էլ կճանաչեմ:

Էդ թագավոր օձը հայտարարություն տվեց իրա լալա-վազիրներուն, իրա պալատականներուն, իրա խորհրդականներուն, թե ինչքան օձ կա մեր երկրում պիտի բերեք, որ էսպես անցնեն:

Ջամփուլադին հանին դուրս, մի բարձրության վրա կայնացրին, ինչքան օձ կա էդ թագավորի երկրում եկան դրա առաջով անց կացան:

—Էսի չէ, էսի չէ, էսի չէ, էսի չէ...

Վերջը ոչ մեկը չէ:

—Իսանօղլի, ի՞նչ է ախեր:

Ասեց.—Իմ տեսած օձը ստեղ չի:

Նորից կանչեց զորավարներ, զորապետներ, գնդի հրամանատարներ՝ դիվիզիայի մաշտաբով՝ բոլորին:

Էլան էկան, ընկան չոլերը, բան չգտան, ասին.—Մին պառվի տղա կա, մայրը մահացել է, ինքը քառասուն օր սգի մեջ է:

—Հապա, գնացեք դրան բերեք,—թագավորը կըսե:

Գնացին բերին, որ՝ դա է:

Բանից պարզվեց, որ էդ սիրուն օձը թագավորի կինն է եղել՝ կարմիրը: Նա որ վիրավոր պառկած է մահճակալի մեջ: Էն փոքրիկ կարմիրը սրա տղան է: Էն սև, մունդառ օձն էլ թագուհու սիրածն է եղել, այսինքը՝ այս տղայի մոր և թագավորի կնկա սիրածը: Դե էլ ի՞նչ ասեմ, առաջ ո՛չ դատ կար, ո՛չ դատավոր, ամեն ինչ մնում էր թագավորի հայացողության: Կարգադրեց, որ ամեն մի օձ իր կնոջ սիրածից իր բաժինը վերցնի: Ամեն մեկը որ չնչին բան'մ վերցնի, տակը ի՞նչ կմնա: Սև օձը ոչնչացավ:

Թագավորը մոտեցավ տղային, ասաց.—Այ տղա, ինսանօղլի, ես շուտ-շուտ քու անունը մոռանում եմ:

Ասում է.—Իմ անունը, նորից եմ կրկնում, Ջամփուլադ է:

—Ջամփուլադ, էդ քու ճշտության համար, էդ քու մտածմունքի համար, էդ քու թասիբի համար, ի՞նչ ես ուզում՝ քեզի տամ:

Թե.—Թագավորը ապրած կենա, քո լեզվի տկի ալմաստը:

Թե.—Այ հողածին, ինչ ալմաստ:

Թե.—Ես գիտեմ, թե քու լեզվին ալմաստ կա, որ դրանով բոլոր ազգերի լեզուները գիտեք, թռչուններին ամբողջ... Եթե ուզում ես ինձ լավություն անել՝ դա տուր ինձ:

Ասում է.—Այ բալամ, քու հայրդ քյասիբ մարդ է, քար ուզե, մալ ուզե, ոսկի ուզե, փող ուզե՝ տամ: Ոսկի տամ, թող ինչ կուզե առնի, ապրի:

—Չէ՛,—ասում է,—ինձ էդիկ պետք չէ, էդ քո լեզվի տկի ալմաստը կուզեմ:

Քանի որ թագավորը խոսք էր տվել, չմերժեց: Հանեց լեզվի տկից ալմաստը, տվեց:

Ոսկի ալմաստը [չէ, լեզվի ալմաստը պիտի ասեի], լեզվի ալմաստն ստանալուց հետո Ջամփուլադ կը վերադառնա իրա հին օջախը: Էդ ալմաստով Ջամփուլադը իմացավ, թե հերն ու մերը ինչքան են իրան ման եկել գնալուց հետո և ինչքան ուրախացան գտնելուց հետո:

Ջամփուլադը դեռ փոքր հասակում սիրահարվել է իրենց մոտի քաղաքի թագավորի աղջկան: Առաջ աշխարհում հո մի՛ թագավոր չկար: Մի քաղաքն էլ մի թագավոր կունենար: Ուրեմն՝ մի քաղաքի մեծ մարդուն թագավոր են ասում:

Ջամփուլադի հերը նեղացավ, մերը նեղացավ, թե էսքան խալա են ուզում, էսքան ոսկի են ուզում, ինչ ես մտածում, դու քու գլխուց դուրս ես անցել:

—Չէ՛, գնացեք ուզեցեք:

Թագավորի դռանն էլ մի քար են թաղել, անշարժ, որ անշարժ մնա, ով գալիս էր խնամաթոր, էդտեղ գրված էր. «Խնամաքար», նստում է էդ քարի վրա, թագավորի լալա-վազիր ծառան տանում է վերև՝ իրա պահանջը հայտնելու համար:

Թագավորի տան հին պահակներից մեկը տեսնում է, որ մի չոբան եկել է նստել էդ քարի վրա, մտածում է, որ ծեր մարդ է, հոգնել է, նստել հանգստանում է: Ձեռը բռնում է թե.—Պապի ջան, էդ քարը ուրիշ իմաստ ունի: Հիմի, որ թագավորը լսե, ինձ էլ կբանտարկե, քեզ էլ: Ինչո՞ւ նստել ես էդ քարին:

—Բալիկ ջան,—ասում է,—ես որ էդ քարի նպատակ գիտեի, դու հլա ստեղ չես ծառայել: Հենց էդ նպատակով էլ նստել եմ:

Ուրեմն.—Հա՞:

—Հա՛:

Գնում ասում է, թե.—Մեր քաղաքի հովիվն է: Եկել է քու աղջիկ ուզելու:

—Է,—ասում է,—մարդ ղրկեք բերեք:

Բերում են: Թե.—Ծերուկ, դուն գիտե՞ս ում տունն ես եկել:

—Գիտեմ:

—Էդ քարի նշանակություն գիտե՞ս:

—Էդ քարի նշանակություն դեռ քու հանգուցյալ հորից գիտեի:

—Դու գիտե՞ս, որ դու մեր քաղաքի ամենաքյասիբ մարդն ես, ես՝ թագավոր:

—Գիտեմ, թագավորն ապրած կենա:

—Ախր չի լինի: Ես ո՞նց իմ ախճիկ վերցնեմ տամ մի հասարակ չոբանի տղայի:

Ասում է.—Թագավոր,—ասում է,—քրդերեն մի խոսքըմ կա. «Հիալիան՝ վալի, խոլիյան՝ խոլի»,—ասում է,—Հողից ծնվում է այնպես մարդ, որ դա լինում է գիտնական և ամենամեծ բանաստեղծ: Եվ այդ նույն հողից, թագավոր, ծնվում է այնպես մարդ, որ հեչ էլ հոր ազգանուն կրելու իրավունք չունի:

Ասում է.—Համաձայն եմ: Բայց մինչև ամուսնութուն, ինչ պալատ որ ես ունեմ, քու տղան էդպիսի պալատ պիտի շինե: Ինչպիսի այգիներ որ ես ունեմ, դուք պիտի ունենաք: Ինչ տերիտորյա,—ասում է,—ես ունեմ, նմանապես դուք պիտի ունենաք, ձեզի ինչքա՞ն փող ունիք, որ ձեզի ունենաք էսպիսի հարմարանք:

Ծերուկը թագավորի պալատեն կիջնի մտածելով. «Էս ինչ եղավ, ես էլ կրակն ընկա, իմ տղան էլ կրակն ընկավ»:

Գալիս է, պատմում է տղին, տղեն ծիծաղում է: Ասում է.—Էդ բոլոր կանենք:

Ջամփուլադի հերն ու մեր, ուրեմն, էդ գիշեր չեն կարող քնի, Ջամփուլադ՝ նմանապես, որ ըսել է՝ պիտի լինի: Հանում է էդ իրա լեզվի անթիքեն, բութ մատով սեղմում է, նրա դեմ կայնում են, ուրեմն, քառասուն հատ քաջ:

—Հը,—ասում են.—Ջամփուլադ, ավիրում ե՞նք, թե՞ շինենք:

Ասում է.—Ո՛չ ավիրեք, ո՛չ շինեք: Թագավորի պալատի դեմ, պալատի նման էս գիշեր ինձ պալատ շինեք: Թագավորի, ուրեմն, այգու պես, էս գիշեր ինձ այգի պիտի լինի: Լույ-

սը բացվի, ուրեմն, լինի ամեն ինչ իմ ուզածի, ասածի նման:

Պառկում քնում են: Առավոտ տեսնում են, որ, թագավորը տեսնում է՝ ժամը տասն է, դեռ նրա լուսամուտներու վրա արև չի դիպնի: Նայում է հակառակ կողմ՝ արև կա: Էս ինչ բան է: Նրա խորհրդատուն ասում է.—Թագավոր,—ասում է,—չոբնի տան տեղ մի պալատ է բարձրացել, սաղ ժողովուրդ գնացել են թամաշա անելու դրան:

Իսկապես որ էդ պալատը թագավորի պալատին չէր զիջի, այգին էլ թագավորի այգուն չէր զիջում:

Էդպես էլ, ուրեմն, դարձան դրանք խնամիներ: Աղջկան, ուրեմն, ուզեց, բերեց և իրան կնացու դարձրեց:

Աղջկա հին սիրողը հետևում էր, թե ոնց եղավ, որ էդ քյասիբ մարդ դարձավ պալատական, ինսանից ինսան և վերջն էլ թագավորի փեսա: «Էդոր գաղտնիքը, ուրեմն ես պետք է իմանամ»:

Մի ծեր կնոջ է քցում մեջ: Էդ ծեր կինը մեր հին լեզվով ասում են՝ ջադի ղառի: Էդ ջադի ղառին շատ քյասիբ դրութան մեջ եկավ, ընկավ էդ աղջկա ոտքերին, թե.—Ես տեր չունիմ (էսօրվա նման էլ, փառք աստծու, ծերանոց չկա, թե մտնի ծերանոց՝ ապրի), հաց հավաքելով եմ ապրում, խնդրում եմ մի օթևան տաս, քեզի ճուր պերիմ, ավլեմ, լվացք անեմ, թափեմ... ինչ ուզես՝ անեմ, ուրեմն, միայն թե ժողովրդից հաց չհավաքեմ:

Էս աղջիկը գնում է մարդուն ասում:

Մարդն ասում է.—Հեռու կաց: Էդպիսի կանանցից հեռու կաց:

—Չէէ՛, դու բիդի թույլ տաս, որ էդ կինը լինի մեզի աղախին:

Դե մարդը շատ է հավատում իրա կնոջ, ինչպես մեր Թաթուլը՝ իրա կնոջ, և դրանով էլ Թմբկա բերդը հանձնեց թշնամի շահին[46]:

Վերջը ասում է.—Դու ես իմանում, բայց դրա տակ մի բան կա:

—Այ մարդ,—ասում է,—ինիսուն տարեկան պառավի տակ ինչ բան կարող է լինի:

Ընդունում է: արդեն կանցնի մեկ ամիս, երկու ամիս, կդառնա էդ հարսին հարազատ:

—Այ բալա ջան,—կըսե,—էս ինչ հանելուկ է, էդոր հոր ես գիտեմ, մոր ես գիտեմ, էս ինչ բան է:

Թե.—Ես չգիտեմ, մի շաբաթում այդպես դառավ:

—Կինը մարդու գաղտնիքը որ չիմացավ, բախտը ձեռքիցը բաց կթողնի,—պառավն է էս ջահել կնոջն ասում:

Սա գնում է իր մարդու մոտ:

—Գաղտնիքդ որ ինձ չըսիր, բախտը մեր ձեռքից կգնա,—ասաց:

Շատ ասաց, շատ խնդրեց, վերջը մարդը պատմեց այն, ինչ ես քեզի պատմեցի: Պատմեց, թե ինչպես ալմաստ ստացավ, և դա ինչ զորութուն ունի:

Տղան էլ քնելուց միշտ ալմաստ կհանի, կդնի գլխի տակ, առավոտ կէլնի, կհագնի: Պառավը կը հաջողացնի կգողանա, կտանի տա աղջկա առաջվա սիրողին: Սա կսեղմի մատով, քառասուն կտրիճներ կկայնի դեմը:

Ասում են.—Հա, լալա-վազրի տղա (թագավորի խորհրդատուի տղան է էդիկ), ավրինք, թե՞ շինենք:

Ասում է.—Ո՛չ ավիրեք, ո՛չ շինեք: Էն չոբանի տունը նախկին տեսքը տվեք, ինչպես որ կար: Տղան էլի չոբան մնա՝ իր հոտի վրա, իսկ նրանց տուն ինչքան կահ-կարասի կար, ապրանք կար, ինչ կար, էդպես էլ մնար: Իմ պալատը տեղափոխեք մի կղզի, որ էնտեղ էլ բնակչութուն, մարդ չկարողանար էթար (դե առաջ ո՛չ նավ կար, ո՛չ գիդութուն, որ կարողանան մի փոքր նավ շինեն, որ էրթեն): Եվ էդ պառավն էլ ինձ հետ մի դիր:

Առավոտ դուրս են գալիս, թե պալատ ես դրել, արի տար: Էլի էն հին տունը, էլի էն հին չոբան, էլի էն հին էղած-չեղածը: Առավոտյան տղան էլ կ'ելնի տեսնի՝ ո՛չ պառավ կա, ո՛չ կնիկ կա, ո՛չ էլ պալատ: Էլի էն քառասուն հավ, մի խորոզ, էլի իրենք, էլի էն հին ոչխարի փարախ, էլի էն ծեր հերն ու մեր: Էդ տղան նստում է տխուր, հերը նայում է կնոջ, կինը՝ տղին:

—Այ մարդ, թե երազ էր, էդպե՞ս էլ էրազ էղնի: Մենք հարս ենք ուզե, թագավորի աղջիկ ենք ուզե, պալատ ենք ունեցե, էս ինչ տեսիլ է: Էլի էն հինգ ոչխար, էլի էն քառասուն հավ, էլի էն... շունն ու կատուն:

Իսկ էն տղան մատը կ'սեղմի ալմազին , և քառասուն կտրիճներ կ'կանգնեն նրա առաջ:

---

46 Բանասացը նկատի ունի Հովի. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը (ծանոթ. կազմողների):

—Աշխարհ քանդեմնք, թե՞ շինենք:

—Ո՛չ քանդեք, ո՛չ շինեք, էն չոբանի տղային իջեցրեք զնդան, որ հերն ու մեր տեղը չիմանան:

—Էդքան բա՞ն:

—Էդքան բան:

Սուտկից հետո հերն ու մեր կելնին, որ իրենց տղան էլ չկա: Գիտեն, թե տղան գնացել է աղջկա ետևից: Այնինչ նրան տարել են քաղաքի մոտի անապատ, դրել քառասուն մետրանոց հորի մեջ, որ նա սովածությամբ մահանա այդ խոր վիրապում:

Բայց չէ՞ որ ասացի՝ քառասուն հավ ու մի խորոզ'մ կա, մի կատու ու մի փոքր շուն: Էդ շունն ու կատուն մտածում են, թե՝ ի՞նչ էղավ մեր տերը, գնանք ման գանք: Էդպես տխուր նստել են, մտածում են, թե ոնց գտնեն իրենց տիրոջը, փոքր տիրոջը: Խորոզը քառասուն հավերի առաջն ընգած՝ տանում է թառցնի:

—Շուն ախպեր, կատու ախպեր, մի կողմ քաշվեք, որ իմ հավեր՝ իմ կանայք, չվախենան ձեզնից:

—Այ հողը քու գլխուն, քու կանաց,—խորոզին է ասում շունը,—մեր տերը իրա գաղտնիք ասել է իրա կնոջ, գտածը կորցրեր, խեղճ հերն ու մերը փնտրում են, չեն գտնում, դու քու կանաց մասին ե՞ս մտածում:

—Այ հող,—ասում է,—տանի ձեր խազային: Ես քառասուն կնիկ ունեմ, ասեմ՝ մեռեք, կմեռնեն, ապրեք՝ կապրեն: Նա մի կնկա դարդ չի քաշե՞, ինչո՞ւ իր գաղտնիք ասավ կնոջ: Դե որ ասել է, թող էդպես էլ հորի մեջ մեռնի, փչանա:

Բա.—Ի՞նչ հոր:

—Այսպես, այսպես: Ձեր խազային այսինչ տեղ, այսինչ հորի մեջ է:

Գնացին տեսան, իսկապես դրուստ է: Գալիս են շունն էլ, կատուն էլ, հաց են հավաքում, տանում գցում հորի մեջը:

Էքսի օրը շունն էլ, կատուն էլ նվալով, հաչալով, իրենց խազայիների, այսինքն՝ Ջամփուլադի հոր, մոր առաջն ընկած, հաչալով, նվոցով, վնգստոցով՝ կտանին կկանգնեցնին հորի բերանը: Ձեն են տալիս, ահա, Ջամփուլադը գտնվում է հորում:

Թող մայրն ու հերը Ջամփուլադին հաց ու ջուր տան, որպեսզի նա չմահանա, մենք խաբար տանք էդ փոքր շնիկեն ու կատվեն:

Ման են գալիս, ման են գալիս, ման են գալիս, գնում են հասնում են էն կղզին, ուր թագավորի աղջիկն է ուր սիրածը: Պալատ են տեսնում:

Շունն ասում է.—Էստեղ կլինին:

Կատուն էլ է ասում.—Էստեղ կլինեն:

Կատուն ասում է.—Իմ աչքերը սուր են, ես լավ տեսնում եմ: Պառվին էլ եմ տեսնում, թագավորի աղջկան էլ, բայց մի երիտասարդ'մ էլ կա, նրան չեմ ճանաչում:

Շունն ասում է.—Ես լավ հոտ եմ քաշում, դու ճիշտ ես ասում՝ երկուսից սովորական, ծանոթ հոտ է փչում, մեկից՝ դառը: Դու արի նստի շալակս:

Դե կատուն լող տալ չգիտի: Շուն շատ լավ լողում է: Կատուն հեծնում է շան վրա, լողալով գնում են, ուրեմն, դեպի կղզին: Աղջիկը տեսնում է: Տեսնում է, որ իրա առաջվա տան, ուրեմն, պալատի շունն ու կատուն են:

Ասում է.—Էն շունն ու կատուն ինչքան սոված են մնացել, ի՞նչխ մեր հոտին եկել, հասել են ստեղ:

—Թագավորի աղջիկ,—ասում է,—էդ շունն ու կատուն վերջը մեր գլուխ մի օյին կհանին: Թող էս որսորդական հրացանով էրկուսին էլ ոչնչացնեմ (որսի էր գնացել, նոր է որսից դարձել):

—Չէէ՞,—ասում եմ—չէ, ինչ կէնես՝ արա, էդպիսի բան մի արա: Էդ շունն ու կատուն մեզ վրա են եկել, դրանք շատ բախտավորված անասուններ են, շատ շնորհքով, ընդունելի անասուններ են:

Ասացի, որ մարդ շուտ է լսում կնոջը, չէ՞: Սա էլ լսում է: Թողնում է մի շաբաթ, էրկու շաբաթ ապրում են, դե հիմի շունը դուրսն է մնում, չէ՞, շունը դուրս է մնում, կատուն ներս է մնում:

Շուն ամեն օր կատվին կհարցնե.—Ինչ եղավ քեզ: Եկանք հաց ու ջուր գտանք և վե՞րջ: Մենք նպատակով ենք եկել:

—Եկել ենք,—ասում է,—ես չեմ մոռացել, շուն ախպեր, ամմպայման էդ գործը կանենք:

—Ինչպե՞ս կանես:

—Կանեմ:

Դե գիտենք, որ Ջամփուլադ իր ալմաստ հանում դնում էր իր գլխի տակ, չէ՞: Էսիկ էդենց չի անում, բերանից չի հանում, որպեսզի պառավ հանկարծ չկաշառքվի: Ասում են. «Ոսկոր բերողը, ոսկոռ էլ կտանի»:

Տեսնում է՝ էդ կատուն գնում պառկում է էդ տղի քով, տեսնում՝ ալմաստ բերանից չի հանում: Դրա զոռն էդ է: Կատուն ման է գալիս, ման է գալիս, մի հատ փոքրիկ մկնիկ բռնում:

Մուկն ասում է.—Կատու ախպեր,—ասում է,—ինձ էսօր մի ուտի, թող, էսօր իմ հարսնիքն է: Ես եկել եմ իմ հարսնիքի համար մթերք եմ հայթայթում,—ասում է,—ես քեզի մեծ լավութին կէնեմ, թող:

—Ինչ լավություն կէնես:

—Ինչ որ ուզես:

—Դե,—կըսե.—ուրեմն, էս տղայի լեզվի տակ մի հատ, ուրեմն, ալմաստ կա: Էդ ալմաստ կարող ես բերել:

—Էս րոպեիս:

—Ինչպես կբերես:

Կըսե, մուկն է ասում,—իմ պոչը,—ասում է,—թրջում եմ, թաթախում եմ բիբարի ամանի մեջ, դնում եմ,—ասում է,—էդ տղայի քթին, էդ տղան կփռշտա, ալմաստ կընկնի, ես իսկույն կհասցնեմ քեզ:

—Տո, ինչ ես ասում:

—Հա՛:

Վերջապես, ինչպես պատմեցի, էդպես էլ անում է: Տղան փռշտում է, էտա գիշեր էլ լույսերը հանգում են, ալմաստը մուկը գտնում, բերում տալիս է կատվին:

—Կատու ախպեր, իմ հորն ու մոր հոգու փրկութուն և իմ հոգու փրկութուն ու քեզի լավութուն:

Կատուն էլ լուսամուտից թռնում է.—Շուն ախպեր, պատրաստ էղիր, որ ծովն անցնենք:

Հիմի շունն ասում է՝ տուր ես տանեմ, կատուն ասում է՝ չէ, ես եմ բերե, ես տանեմ:

Շունն ասում է.—Ես չեմ գա: Ես ինձ համար էստեղ կնստիմ, թող ման գան, գան ալմաստը քեզի մոտ գտնին, քեզի թիքա-թիքա էնին:

Վախենալուց կտա շան, ինքն էլ նստի շան վրա:

—Շուն ախպեր,—կըսե,—ձուկ է գալիս, մուկ է գալիս, չէլնի,—ասում է,—հաչաս: Հաչացիր՝ բեռնիցդ կթռչի:

Հակառակ՝ մ, մի ձուկ գալիս կպնում է շան, շունը հաչում, էդ ալմաստ ընգնում է, ձուկը կուլ է տալիս:

Հիմի էդ շունն ու կատուն գան ինչ ընեն, ինչ չընեն: Ման են գալիս, ման են գալիս, սուտկեն լրանում, էրկուս, խուդումներ կոտրում, էլնում են ափ: Տեսնում, որ էնտեղ ձուկ են որսում: Ինչ ձուկ գցում են դրանք, էդ շունն ու կատուն չեն տանում: Նստած հետևում են: Ախար ճանաչում են ալմաստ կուլ տվող ձկանը: Հենց տեսնում են դրան, առնում են էդ ձուկը, փախնում են:

Էդ ձուկ բռնողներից մեկը ասում է.—Այ մարդ, դրանք ոչ մի ձուկ չը վերուն, էս ինչպես էղավ:

Թե.—Բան չունի, թող տանեն, դրանց ղեսմաթն էլ դա է:

Տանում են, փորը տալում, իսկապես որ էդ ալմաստը հանում են: Նորից, հիմա, շունն ու կատուն իրար հետևից վազում են, բայց ալմաստը նորից շան բերանում է, շունն է փորքը քանդրտում, հանում:

Տանում են էնտեղ, որտեղ էդ տղային քցել են զնդան՝ հորի մեջ:

—Ջամփուլադ ջան, կենդանի ես:

Կըսե.—Հա, բա, կենդանի եմ:

—Ան,—ասում է,— գոգդ բռնե, ես քո ալմաստը բերել եմ:

—Էհ,—ասում է,—կատու, շուն, ես էն օրին ընգա, որ դուք էլ ինձ ձեռք եք առնում:

—Չէ՛,—ասում է,—շունը մարդին միշտ հավատարիմ է եղել, հավատարիմ էլ կմնա:

—Դե,—ասում է,—ես մի հատ՝մ փորձիմ:

Հանում է իր պիդջակ, փռում իր չոքին, ասում.—Քի՛ց:

Քցում տեսնում է՝ իսկապես, այնուամենայնիվ այն ալմաստն է, որ օձերի թագավոր Ջամփուլադին է տվել:

Ջամփուլադ սեղմում է, քառասուն կտրիճներ գալիս են:

—Նորից ենք վերադարձել:

Ասում է.—Բարով եք էկել:

—Քանդենք, ավերենք, թե՞ շինենք:

Ասում է.—Ո՛չ քանդեք, ո՛չ ավերեք, ո՛չ շինեք: Ինձ էստեղից հանեք, տարեք իմ հայրենական հին օջախը:

Էդպես էլ անում են:

Հետո ամեն ինչ նորից փոխվում է: Ով ինչ պատիժի արժանի է, այդ պատիժն էլ տրվում է:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

11(11). ԱՂԲԱԼԱՍԻ ԵՎ ՂՈՒՇԲԱԼԱՍԻ

Կէղնի, չի էղնի, Թեյրան քաղաքի մեջ կէղնի մեկ վաճառական: Էդ վաճառականը ալվատ-թալվատ չի ունենա մինչևի վացցուն տարեկան հասակը: Մե օր վաճառականը էրթըմ է քաղաքի խաս բախչեն նստելու: Մեկ էլ հանկարծ, քնած էր, թե զարթուն, մե մարդըմ բարև կուտա: Յաչկերը բաց կէնե էս վաճառականը, տեսնի, օր մե դարվեշըմ է կայնած:

—Բարև,—կըսե,—Դատ վաճառական: Ես էկել եմ, օր դարդըդ հոգամ:

Դատ վաճառականն ըսըմ է.—Դարվեշ ջան, ընձի ի՞նչ դարդ: Ընձի դարդ չկա:

Դարվեշըն ըսըմ է.—Դատ վաճառական, դու ընձի մի խաբե: Ես քու դարդիդ հնարը կըսեմ: Դու ալվատ-թալվատ չունիս, էդոր մասին էլ մտածըմ ես: Ձեր դռան յառեջը կա մե կաղնի ծառ, ծառի վրա կա էրկու հատ թռչունի ձագ: Կէրթաս մե տղի՛մ կկանչես՝ ձագերը իջեցնե ցած, մորթեք կը, մեկը դու կուտես, մեկը՝ կնիկըդ: Ինն ամիս կթըմմի՝ կունենաք էրկու հատ տղա: Հըմը չկնքեք, մինչևի ես գամ քավոր էղնիմ:

Ու դարվեշը կանայտանա:

Դատ վաճառականը ելնըմ է էրթըմ տուն, դարվեշի ըսածը կատարըմ է: Ձագերից մեկը յինքն է ուտըմ, մեկելն էլ՝ կնիկը: Ինն ամիս օր թըմմավ, կնիկն ունենըմ է էրկու հատ տղա: Տղեքին անուն չեն դընըմ, չեն կընքըմ՝ մինչևի դարվեշը գա: Յէսօր դարվեշ գա, յէգուց դարվեշ գա, դարվեշը չկա: Դատ վաճառականը հերսն էլնըմ է, ըսըմ է.—Բերեք կնքենք, անուն դնենք:

Մեկ է դարվեշը գալըմ է, ըսըմ է.—Դատ վաճառական, ինչքան նամարդ մա՛րդ էիր դու: Խոստումըդ չկատարեցիր: Ես քեզի որդու տեր էրի, դու ընձի մտյան էրիր: Դե օր ըդման է, դե բերեք էրեխեքուն ես կէղնիմ քավոր:

Բերըմ են տղոնցը կնքըմ են: Մեկի անունը դնըմ են Աղբալասի, մեկելինը՝ Ղուշբալասի:

Էս տղեքը օրեցօր մյենձընըմ են, դառնըմ են ութ տարեկան տղա: Էդ քաղաքի մյեջը մե դպրոցըմ է էղնըմ, էն էլ թաքավորի էրկու տղեն են սորվըմ: Դատ վաճառականը էրթըմ է Դանել վարժապետի քովը, խնդրըմ է, օր.—Էրկու տղա ունիմ, բերեմ քովըդ սորվելու:

Դանել վարժապետն ըսըմ է,—Դեմ չեմ, Դատ վաճառական, բայց թե թաքավորն յիմանա, ընձ էլ սուրգյուն կէնե քաղքեն, քու տղոցդ էլ:

Վերջը Դանել վարժապետը շատ մտածեց, փոշմընավ: Ըսավ.—Գնա բե տղոնցըդ: Թե սրտիս դուր էկան, կը վերցնեմ:

Դատ վաճառականը գնաց տուն, էրեխանցը միատեսակ շոր հագցրավ, առավ էկավ Դանել վարժապետի քովը: Դանել վարժապետը, էդ էրեխանցը տեսնելուն պես՝ խելքը գլխեն գնաց: Ըսավ.—Թող ու գնա: Սորվըցընեմ գը, ինչքան օր ուժըս ախտըմ է:

Անցան տարիներ, տղեքը սկսեցին լավ սորվել, բայց թաքավորի տղեքը հեչ բան չեն սորվըմ: Դասատուն ինչքան հարց է տալըմ, Աղբալասին ու Ղուշբալասին պատասխանըմ են, թաքավորի տղեքը չեն պատասխանըմ:

Խաբարը տանք թաքավորից: Թաքավորն ըսավ.—Լալա, վազիր, ըսքան վախտ էրեխեքը դպրոցն են: Հեչ չենք հարցնըմ՝ սորվա՞ն, մնացի՞ն: Ելեք էրթանք, տեսնինք յըլը:

Ելավ, թաքավոր, լալա, վազիր գնացին դպրոց: Զվանոկ են տալըմ, օր թաքավորը գալըմ է դպրոց: Դանել վարժապետը վախենալուն՝ Աղբալասուն ու Ղուշբալասուն նստըցնըմ է գրատախտակի ետևը: Նես են մտնըմ:

—Համեցե՛ք, համեցե՛ք:

Նստըցնըմ են թաքավոր, լալա, վազիրին: Թաքավորն ըսըմ է, թե.—Հարց տու տեսնինք՝ էրեխեքը էսքան վախտ ի՞նչ են սորվե:

Դանել վարժապետը կանչըմ է երեխանցը, հարց է տալըմ, հեչ մե հարցի՛մ չեն պատասխանըմ: Մեկ էլ Աղբալասին հազըմ է:

Թաքավորը դառնըմ ըսըմ է.—Ըդո՞նք յում էրեխեքն են:

Դանել վարժապետը վախենըմ է, ըսըմ է.—Հեչ, թաքավորն ապրած կենա, Դատ վաճառականի տղեքն են: Բերավ, շատ խնդրվավ, նստըցրել եմ հեռու, ո՛չ հարց, ո՛չ պատասխան: Ձեր տղոնցը հարցնըմ եմ, ըդոնք էլ լսըմ են:

Թաքավորն ըսավ.—Բան չկա, Դանել վարժապետ, Դատ վաճառականն էլ թաքավորի լայեղ մարդ է: Հլը բեր տեսնինք՝ էրեխեքը բան սորվել ե՞ն, թե՞ չէ:

Դանել վարժապետը տղոնցը հարց է տալըմ: Ի՞նչ հարցնըմ է, մեկին՝ տասը պատասխանըմ են: Թաքավորը նստած տեղը մտածըմ է. «Էստոնք մեձըցան, թախտըս ծակեն, գլոխըս

կանցընեն»: Թաքավորը ելնում, լալա-վազրի հետ էրթում է յիրա պալատը:

Ըսում է.—Լալա, վազիր, եթե էդ տղեքը մյենձընան, իմ թախտըս ծակեն, գլոխըս կանցընեն: Հնարը տեսեք:

Լալա, վազիրն ըսում են.—Դու՝ թաքավոր մարթ, յընչի՞ ես խեղճընում, դպրոցեն հեռեցրա, յուր էրթում են, թող էրթան: Յուսում չեն առնի, քեզ է վնաս չեն տա:

Յառավոտը, բարիլուսը բացվի ձեր վրեն, բացվավ էրեխանց վրեն, թաքավորը կանչեց Դանել վարժապետին, ըսավ.—Յէգուց էս վախտ էդ տղեքը հոս էղան, քեզ է կգլխատեմ, էդ տղոնցն էլ: Ք'եռեցընես դպրոցեն, թող էրթան:

Թաքավորի հրաման էր՝ Դանել վարժապետը նույն րոպեին կատարեց: Գնաց էրեխանց հորը կանչեց, ըսավ.—Դատ վաճառական, գուզես շնորակալ էղի, գուզես՝ մի էղնի: Անիծածը տղոնցը չի թողնում, քու տղեքըդ յուր էրթան, ընդեղ թաքավոր կէղնին: Յամմեն ինչ գիտեն քու տղեքըդ: Առ ու տար:

Դատ վաճառականը շնորակալուտուն է հայտնում Դանել վարժապետին, հախը մեկին՝ էրկուս տալում է, տղոցն առնում, էրթում է:

Տղեքը մե էրկու-յիրեք ամիս մնում են յիրանց տունը, մե յառավոտ Ղուշբալասին տեղեն թեզ է ելնում, տեսնում է՝ մե էրկու-յիրեք ձիավոր երգելեն անցնում են: Նես է մտնում, ըսում է.—Հայրիկ, հայրիկ, յըլը արի դուս: Էս ի՞նչ ձիավոր են, յո՞ւր են էրթում:

Հերը ըսում է.—Տղա ջան, ըդոնք մեր քաղաքի որսորդներն են: Էրթում են յիրանց հըմար դաշտը որսորդուտուն են էնում, պտըտվում են, յիրգունն էլ գալում են յիրանց տները:

—Հայրիկ,—ըսում է,—ի՞նչ կէղնի, մեզի էլ ղըրկես էրթանք որսորդների հետ:

Հերն ըսում է.—Տղա ջան, յիրգունը հարցնեմ որսորդներին, եթե թուլ տվին, ձեզի հմար էլ ձի վերցնեմ, գնացեք հետները որսորտուտան:

Բարիլուսը բացվի ձեր վրեն, բացվըմ է էդ մարդկանց վրեն: Որսորդները էլի երգելով գալում են, Դատ վաճառականը հարցնում է, ըսում.—Տղեք ջան, էրկու հատ տղա ունիմ, ձեզի հետ չե՞ք տանի:

Որսորդներն ըսում են,—Ձի առ, որսորտուտան հագուստ, հրացան առ, յառավոտը թող պատրաստ էղնին, հետներս կտանինք:

Բարիլսի հետ՝ Աղբալասին, Ղուշբալասին գնացին որսորդների հետ դաշտ:

Անցան տարիներ, Աղբալասին ու Ղուշբալասին էղան որսորդների խմբապետ: Որսորդների խումբը էղավ էրկու հարուր մարդ: Ըդոնք էրթում էին, թաքավորի պալատի տըկից անցնում էին, լալա, վազիրը Աղբալասուն ու Ղուշբալասուն տեսան: Վազին թաքավորի քովը, թե.—Չես ըսում, դու վաճառականի տղոնցը դպրոցեն հեռեցրիր, օր յուսում չառնեին, հըմի քաղաքիդ մեջը բանակ են կազմե:

Թաքավորը հրաման տվավ՝ բռնեն Աղբալասուն ու Ղուշբալասուն, գլխատեն: Կայնան ճամփի վրեն, որսորդների խումբը էկավ:

Թաքավորն ըսավ.—Բռնեք Աղբալասուն ու Ղուշբալասուն, մեկելներին բաց թողեք:

Բռնեցին Աղբալասուն ու Ղուշբալասուն, մեկել տղոնցը բաց թողեցին: Թագավորն ըսավ՝ գլխատեք: Սինոդը դեմ կայնավ:

Ըսին.—Թաքավորն ապռած կենա, էս տղեքը քու ինչի՞դ են վնաս էրե, օր գլխատըմ ես: Ո՛չ քեզի են վնասե, ո՛չ տղոնցդ են վնասե, ո՛չ է քաղաքին են վնաս տվե: Ընչի՞ ես գլխատըմ:

Որոշեցին՝ աքսորեն, քաղաքից, յիրանց սայմանից հանեն, յուր էրթըմ են, թող էրթան: Տղոնց ձեռից առան ձիանը, հագուստն ու հրացանը, ձեռները կապին, ոտները կապին, դրեցին յուրիշ ձիանու վրեն, տվին էրկու հատ տղի, թե.—Տարեք, մեր սայմանից հանեք, նոր կապերը քանդեք, ընդից ետև յուր կէրթան, թող էրթան:

Մենք խաբարը տանք մորեն: Հարևանները խաբարը տարան մորը, թե.—Ի՞նչ ես էնըմ, Բարգյուզալ, օր տղոնցըդ տարան:

Բարգյուզալը, յինքը մյեծահասակ կնիկ, ելավ վազեց, հասավ տղոնցը, տեսավ տղոնց վիճակը, ուշքը գնաց:

Աղբալասին յիրանց տանող տղոնցը խնդրըվավ,—Տղեք, թուլ տվեք էրկու խորատա մորըս ըսեմ, նոր ձեռներըս կապեք, տարեք:

Մե տղեն չ'ամաձայնըվավ:

—Չէ,—ըսավ,—ի՞նչ ես ըսըմ: Թաքավորը ընձի քեզի հե՞տ աքսորե:

Մեկել յընկերը ըսավ.—Ես բտի ձեռներն յարձըկեմ, թող մորը ի՞նչ ըսըմ է, ըսե:

Տեսնինք՝ Աղբալասին ի՞նչ է ըսըմ.

Մի՛ լար, մայրիկ, մի՛ լար,
Պատմեմ մեր սև բախտը,
Զուլում թաքավորը
Չը մնա թախտը:

Մեզի սուրգյուն էրավ
Էդ ապերախտը,
Աղես յուրտեղ թողավ
Մեր ձիու զարդը:

Մի՛ լար, մայրիկ, մի՛ լար,
Պատմեմ մեր սև բախտը,
Զուլում թաքավորը
Չը մնա թախտը:

Երգը վերջացնելուց հետո, տղեքը վռազցընում են, ձեռ ու ոտը նորից կապըմ են, ձիերը քշըմ են: Հարևանները մոր ուշքը տեղն են բերըմ, տանըմ են տուն:

Մենք խաբարը տանք Դանել վարժապետեն: Դանել վարժապետն օր չի՞ յիմանըմ՝ տղոնցը տարել են, խելքը գլխեն էրթըմ է: Վազըմ է Դատ վաճառականի քովը:

—Դատ վաճառական,—ըսըմ է,—տղոնցը տարան, հետները հեչ ուտելիք, օսկի-արծաթ չե՞ք դրե:

Մերը ըսըմ է.—Տղեքը մինչևի անգամ անոթի գնացին:

Ըսըմ է.—Մայրիկ, բեր մե խուրջինըմ, մե յաչքը լըցնենք ուտելիք, մե յաչքն է՝ օսկի-արծաթ, ես տանիմ:

Վերցնըմ է Դանել վարժապետը, տղոնց ետևից էրտըմ է: Տղերքը էրտըմ են, յինքն էլ՝ ետևներեն:

Խաբարը տանք տղոնցեն: Տղոնցը հասցրին Սեյրիբազ Չայրին[47], ձեռ ու ոտներն յարձըկին, մնաս բարով էրեցին ու յիրանք ետ դառան:

Դանել վարժապետն արդեն հասել էր տղոնց քովը: Տղեքն օր տեսան Դանել վարժապետին, չճանչըցան, վախեցան, մութն էր:

Դանել վարժապետը ձեն տվավ.—Տղեք, ես եմ,—ըսավ,—չվախենաք:

Տղեքն օր չտեսան Դանել վարժապետին, ինչղ օր գառը մորը վազեր:

—Իա՛, Դանել վարժապետ, էս ո՞ր հող ու ջուրը բերավ քեզի ըստեղ:

Դանել վարժապետը տղոնցը սիրտ տվավ:

—Տղեք ջան,—ըսավ,—հեչ չմտածեք: Դուք ընձնից լավ ուսումնագետ եք, դուք ընձնից խելացի եք, յուրտեղ էրթաք, ընդեղ կապրիք: Նստեք հըլը քիչըմ յիրար հետ հաց ուտենք:

Նստըցնըմ հաց է կերցնըմ Դանել վարժապետը, արդեն մութը յընկել էր, մնաս բարով էրավ տղոնցը: Տղեքը մնացին Սեյրիբազ Չայրի վրեն, յինքը դառավ դպա Թեյրան քաղաք: Աղբալասին ու Ղուշբալասին քնան Սեյրիբազ Չայրի վրեն:

Բարիլուսը բացվի ձեր բոլորի վրեն, բացվավ տղոնց վրեն: Ղուշբալասին զարթնավ, Աղբալասին հըլը քնած էր: Ղուշբալասին պըտըտվավ, լվացվավ, ծաղիկ քաղեց, օր Աղբալասին քնի, հանգստանա: Ղուշբալասին ըսավ. «Հերիք է քնի Աղբալասին: Ձեն տանք, մե կողմի՞մ էրթանք, տեսնինք՝ յո՞ւր ենք էրթըմ»: Մեկ էլ գնաց՝ ի՞նչ տեսնի՝ Աղբալասին բերանը փրփուրը տվել է, ուշքը գնացել է: Ձեն տվավ.—Աղբալասի, Աղբալասի:

Ի՞նչ հնար էրավ՝ չզարթնավ: Սիրտը լցվավ, մե հատըմ երգեց.

Յարեգակը պայծառացավ,
Զարթնիր, Աղբալասիս, զարթնիր,
Քյարվանները շար-շար անցան.
Զարթնիր, Աղբալասիս, զարթնիր:

Հերիք քնես երազներով,
Մորս թողինք սև օրերով,
Յարևն անցավ ամպի տակով,
Զարթնիր, Աղբալասիս, զարթնիր:

Ղուշբալասիս՝ ես ի՞նչ անեմ,
Շալկեմ մինչևի յո՞ւր տանեմ,
Իզուր տեղը ինձ կսպանեմ,
Զարթնիր, Աղբալասիս, զարթնիր:

Երգը վերջացնելուց ետև Ղուշբալասին աշում է բոլորը, տեսնըմ է՝ էն կողմը մե չորսհինգ ձի արծըմ են, մե քանի երիտասարտ էլ բռնե, պար են խաղըմ: Իսկ մե հոգի՞մ ղրաղ նստած է: Մտածըմ է. «Էրթամ շատվորի քովն, օր ձիանը շատվորի քովն է»: Վազըմ է խաղող տղոնց քովը:

—Տղեք ջան,—ըսըմ է,—բարիլուս ձեզի: Ի՞նչ կէղնի՝ օգնեք ընձի, եղպարըս անճար է, քնավ ու մնաց: Մե ձի՞մ տվեք, հասցընեմ դեմի քաղաքը, ձեր վարձը տամ:

---

[47] Սեյրիբազ Չայրա – կախարդական մարգագետին (ծանոթ, բանահավաք Ստեփան Խաչատրյանի):

Տղեքն ըսեցին.—Ախպեր ջան, մենք նոքյար ենք, մեր աղեն էնիկ է, օր նստած է ղրաղ: Գնա ընդուրից յուզե, մենք իրավունք չունինք ձի տալու:

Ղուշբալասին դառավ աղի քովը: Բարև տըվավ, բարևը չառավ: Սիրտը լցվավ, ըսավ. «Յավաշ, երգով ըսեմ, օր խղճա ընձի»: Ըսկսեց,

Գլխիդ մատաղ լինեմ,
Ով պարոն աղա,
Եղբայրըս անճար էր՝
Քնավ ու մնաց:

Եթե ինձ չը օգնես,
Ինչ անեմ ապա,
Եղբայրըս անճար էր՝
Քնավ ու մնաց:

Ելավ ու հըմը մե շապալաղըմ տալու պես՝ Ղուշբալասու քիթ ու բերնեն յարունը քցավ: Էն կողմեն յիրան նոքյարները վազեցին, էկան հասան, ըսին.—Այ տղա,—ըսին,—հեռու գնա, գլոխըդ կը կտռե, ինչդ օր մեզի հետ է, էման է քեզի հետ է:

Ղուշբալասին, թե.—Թողեք մե տունըմ էլ ըսեմ, նոր էրթամ.

Ինչո՞ւ զարկիր, քիթ ու բերնես յարուն կկաթի,
Ասսանից կխնդրեմ՝ ապրանքըդ փտի,
Եղբայրս անճար էր, քնավ ու մնաց,
Եթե ինձ չը օգնեք, ի՞նչ անեմ ապա:

Հըմը թուրը քաշեց էդ աղեն, օր Ղուշբալասու գլոխը կտռե: Տղեքն ըսին.—Այ ախպերըս, հեռեցի ըստից:

—Չէ,—ըսավ,—մե տունըմ է բտի ըսեմ.

Ղուշբալասիս կայնե՝ երեսըդ է աշում,
Մաշվել է կյանքը, հոգին է դուս գալում,
Աղբալասիս անճար էր, քնավ ու մնաց,
Եթե ինձ չը օգնեք՝ ի՞նչ անեմ ապա:

Երգը վերջացնելեն ետև՝ ելավ էկավ ախպոր քովը: Տեսավ, օր քանի գնացել է, էնքան Աղբալասին փրփրել է: Վերցրավ գլխու տկի խուրջինը, քցավ ուսին, նոքյար տղոնցը հարցրեց.—Տղեք ջան, էդ դիմացի քաղաքը ո՞րն է:

Տղեքն ըսին.—Ալբուխարի քաղաքն է:

Խուրջինը քցավ շալակը, փափախն էլ զարկավ ղոլթուղը, Ալբուխարի քաղաք, յո՞ւր ես, գալում եմ քեզի: Քաղաք, տիրուդ տունն ավրի, մտավ, հեչ մարդ չկա: Դըպավ էս կողմ, դըպավ էն կողմ, գոնե մե իշու՛մ, ձիու՛մ կաչկա գտնի, ախպորը տանի: Գնաց հասավ մե բուտկի՛մ դուռ, տեսավ մե վացցուն-յոթանասուն տարեկան բիձե՛մ նստած է:

—Բարև,—ըսավ,—հայրիկ ջան:

Ըսավ.—Բարով էկար, հազար բարի, թաքավոր ջան:

—Հայրիկ,—ըսավ,—ձեր քաղաքի կաչկեքը, էշերը, ձիանը յո՞ւրտեղ են:

Ըսավ.—Է՛, բալա ջան, յըբը յընչի ես քեզ ըսի՝ թաքավոր ջան: Հարի հըմի մեր քաղաքը ղեկավարըմ էր թաքույին, իսկ հմի ըսըմ է՝ օր ընձի թաքավոր գտեք: Վով ձի՛մ ունի, ծախել է, վով էշըմ ունի, ծախել է, վով կաչկե՛մ ունի, ծախել է, թաքավորական շոր են առե, օր թաքավոր էղնին: Գնա, տղա ջան,—ըսավ,—դու յէսօր բտի դառնաս մեր թաքավորը:

Տղին տեսցրավ թաքավորական մեյդանը, տղեն գնաց: Էդ վախտը դովլաթ ղուշը բաց թողին: Պտըտվավ, պտըտվավ, էկավ Ղուշբալասու գլխուն կայնավ: Ղուշբալասին խամ էրեխատղա էր, ճվաց, ճըվճըվաց.—Վա՜յ, վա՜յ, էս ի՞նչ է:

Ժողովուրդը հասկըցավ, օր խամ տղա է, ղուշը սխալվել է:

—Տարեք,—ըսին,—տղին նես էրեք, դուռը փակեք, ղուշը նորից բաց թողեք:

Տղին տարան էն մարդու քովը, օր յինքն յառաջուց ըսել էր՝ մեր թաքավորն ես: Նես էրեցին, դուռը փակեցին, բալլինքը տվեցին բիձին, օր թաքավորը ընտրեն, նոր բաց թողնին տղին: Բերողները թող էրթան, բիձեն տղին դուս հանեց, ըսավ.—Տղա, յընչի բերին քեզի ըստեղ:

Տղեն պատմեց:

Բիձեն խրատ տվավ.—Տղա ջան,—ըսավ,—էն օր իշով էրթաս ախպորըդ բերես, գնա թաքավոր էղի, թաքավորի լայեղ կառեթը նստի, գնա բեր: Բայց թե՝ ղուշը յիջնելուց ըսա. «Թաքավորը ես եմ, թաքույին էլ իմս է»:

Տղեն խուրջինով օսկին թողավ բիձի քովը, գնաց թաքավոր էղնելու: Տղի՝ մինչև ընտեղ հասնելը, ղուշը բաց էին թողե, բայց չէր յիջե, պըտըտվըմ էր, մինչևի տղեն հասավ տեղ: Էկա՜վ, էկավ Ղուշբալասու գլխուն իջավ: Ժողովուրդը խառնըվավ իրար:

Ըսավ.—Հեչ մի խառնվիք,—ըսավ,—թաքավորը ես եմ, թաքույին էլ իմս է:

Երրորդ անգամ բաց թողին, նորից յիջավ Ղուշբալասու գլխուն: Ղուշբալասուն տարան թաքույիի պալատը, տարան բաղնիք, լողցրին, թաքավորական լայեղ շոր հագցրին, տարան թաքույիի կողքը նստըցրին: Թաքույուն տեսավ՝ ախպորը մտյան էրավ:

Մենք խաբարը տանք Աղբալասուց: Աղբալասուն բուտա էր տվե սուրբ Սարգիս բոզ ձիավորը Ալբուխարի քաղաքի Ջեյրան խանըմի հետ: Ջեյրան խանըմն էլ բեշքյարթմա էր էրած Սայաթ խանի տղի՝ Շայվալատի հետ: Էրազի մեջը մատնիքները փոխել է: Ջեյրան խանըմի մատնիքի վրեն գրած է՝ Ջեյրան խանում: Աղբալասին ելավ տեղեն, դպավ էս քով, դպավ էն քով, ո՛չ ախպեր կար, ո՛չ էլ խուրջին: Բայց էրզի մյեջը սուրբ Սարգիս բոզ ձիավորը ըսել է. «Մինչևի Սինավանք ուխտ չէրթաս, Ջեյրան խանըմը քեզի չի հասնի»: Աղբալասին յընկավ ճամփա: Սինավանք, յուրտեղ ես՝ գալըմ եմ քեզի: Բայց դե Աղբալասին ճամփեն ծուռն էր էրթըմ: Դըպավ էս կողմ, դըպավ էն կողմ, մեկ է մե քամի՛մ էկավ, յառեջը մե ձիավորըմ կայնավ: Հիշեց, օր յիրան գիշերվա էրզի ձիավորն է:

Ըսավ.—Տղա, մրզախըս կոխեմ, լուսըդ ք՚անեմ, Սինավանքը էն սարն է:

Սինավանքի տեղը տեսցրավ ու կորավ: Աղբալասին դեմ տվավ դեպի սարը: Ըտեղ սիրտը լցվավ, մե հատըմ ըսավ.

Կարդալ գիտեմ, գրիչ չունիմ,
Ի՞նչ եմ անում թանաք, թուղթ,
Սրտիս մեջը մուրազ ունիմ,
Սիանավանքը կէրթամ ուխտ:

Բուտա տվավ, բեվուշտ քցավ,
Սիրտըս վառել է յաղութ,
Նա ախչիկ չէր, ջավայիլ էր,
Ալ ու մարջան և զմրութ:

Երգը վերջացնելուց ետև՝ ելավ Սինավանքը, ուխտ էրավ, ետ էկավ, դեպի յո՛ւր ես էրթում՝ Ալբուխարի քաղաք, գալըմ եմ քեզի: Անոթի էր, չէր կրըմ էրթա, տեսավ՝ ծիծեռնակները էն կողմից էրթըմ են իրանց երկիրը, սիրտը լցվավ, մե հատըմ ըսավ.

Ծիծեռնակներ, գիտեմ՝ կէրթաք Թեյրանը,
Մեկ ժամանակ հյուր կլինեք մեր տանը,
Գրեմ կուտամ՝ տվեք իմ Բարգյուզալ մորը,
Ասեք՝ կորուցել է եղբորը:

Հայրըս եմ կորուցե՝ Հոսեփի նման,
Մայրս եմ կորուցե՝ Աննայի նման,
Վարժապետ կորուցի՝ Դանելի նման,
Գրեմ կուտամ՝ տարեք իմ Աննա մորըս:

Ա՜խ կորուցել եմ ջիվան եղբորըս,
Մնացել եմ անքուն, մոլորված,
Աղբալասիս մնացել է տանջըված,
Տարեք տվեք իմ Աննա մորըս:

Երգը վերջացնելուց ետև՝ շարունակըմ է ճամփեն: Տեսնըմ է, օր ճամփու վրեն կա մե եղնիկըմ, հետը՝ ձագերը: Հասնըմ մեկին բռնըմ է: Տեսնըմ է, օր մերը, ինչղ օր մարդը, աղաչե՝ տուր ընձի ձագըս: «Հեյ վա՜խ,—ըսըմ է,—մերըս կենդանու չափ ի՞լ չկա, կորցրել է Աղբալասուն ու Ղուշբալասուն, մոլորված մնացել է»: Ձագը բաց է թողնըմ եղնիկի ետևեն, յինքը շարունակըմ է յիրան ճամփեն: Բայց թե անոթի է, չի կրըմ էրթա:

Աղբալասին տեսնըմ է, օր յարտի ղրաղը օչխարը արծըմ է: Ըսըմ է, «Էրթամ քիչըմ հաց, կաթ յուզեմ ուտեմ, ոտներս թաղաթ էղնի, մինչև հասնիմ Ալբուխարի քաղաք»: Հասավ չոբանին, բարև տվավ:

—Բարիլուս,—ըսավ,—չոբան ախպեր:

Չոբանը ձեն չհանեց: Տասնէրկու լիզվով բարև տվավ, չոբանն էլի բարևը չառավ: «Է՛,—ըսավ,—ես իմ հորն ու մորես ի՞նչ խերվա, օր հմի անծանոթ չոբնից խերվիմ»: Ջղայնացավ ու շարունակեց ճամփեն: Մեկ էլ չոբանը ետևեն ճվաց.—Ախպեր, ախպեր, ի՞նչ քթեդ բանձրռ մարդ ես դու: Օչխարն յընկել էր աղի յարտ, աղեն յիմանար, ընձի կվռնդեր: Համբերե՝ օչխարը դարձընեմ, կաթ կթեմ, հաց ուտենք: Նստի հանգստացի, նոր յուր յուզըմ ես՝ գնա:

Աղբալասին անոթի էր, ետ դառավ, էկավ չոբնի քովը, ըսավ.—Չոբան ախպեր,—ըսավ,—ի՞նչ լիզվով խոսացի, չպատասխանեցիր: Ես էլ զաթի անոթի էի, յուզըմ էի քովը քիչըմ հաց ուտեի, նոր էրթայի:

Չոբանը էդ օր յիմացավ, բերավ օչխար կթեց, հաց հանեց, նստավ Աղբալասին կուշտ հաց կերավ, յաշկերը լուսովցան:

Չոբանը հարցրավ.—Ի՞նչ մարդ ես,—ըսավ,—յուրտի՞ց ես էկե, յո՞ւր ես էրթըմ:

Աղբալասին ասավ.—Թեյրան քաղաքից էկել եմ, էրթում եմ Ալբուխարի քաղաք: Ես թաքավորից աքսորված մարդ եմ: Էրթում եմ Ալբուխարի քաղաք՝ ապրելու:—Ու պատմում է գլխու անցածը:

Չոբանը մտածում է. «Էս տղեն իմ աղիս հարմար տղա է»:

Ասում է.—Աղբալասի ջան, ես ունիմ մե աղե՛մ, յինքը ունի քառասուն խանութ, տղա չունի, ունի մե ախչիկում, անունը՝ Բաննի խանում: Կէրթաս Բանի խանումին կառնիս, կէղնիս բազրգյանին փեսա:

Աղբալասին յինքն յիրան մտածում է, «Չեմ էղնի փեսա, կէղնիմ տղա»: Էլնում է, «մնասբարով» է էնում, չոբնին շնորակալուտուն է հայտնում, էրթում է բազրգյանի տունը: Հասնում է բազրգյանի տունը, զվանոկը տալում է, բազրգյանի դուռը բացին, դուս էկավ Բաննի խանումը, տեսավ, օր ղարիբ տղա է, յինքը ետ կայնավ, հերն էկավ յառեջ: Տղին տեսնելուն պես՝ սկսեց երգով հարցուփորձ էնելը: Տեսնինք, թե ինչ է ասում բեբազրգյանը[48].

Գլխիդ մատաղ լինիմ թազա մավջիվան,
Ինչո՞ւ համար է քու մինակ ման գալը դ,
Ասա՝ ցավիդ անեմ ես դեղ ու դարման,
Ինչո՞ւ համար է քու մինակ ման գալը դ:

Աղբալասին.
Գլխուդ մատաղ լինեմ, ով պարոն աղա,
Սիրելուս համար է մենակ ման գալս,
Եթե ցավիս անես դու դեղ ու դարման,
Սիրելուս համար է մինակ ման գալս:

Բեբազրգյանը.
Էն կողմից որ ելար, պատկերդ տեսա,
Քեզ սիրով ընդունի թանկագին փեսա,
Սիրելուդ անունը մի պահե, ասա,
Ինչո՞ւ համար է քու մինակ ման գալը դ:

Աղբալասին.
Գլխիդ մատաղ լինեմ, ով պարոն աղա,
Եթե ինձ կսիրես, կէղնիմ քեզ տղա,
Սիրելուս անունը Ջեյրան խանում ա,
Սիրելուս համար է մինակ ման գալս:

Բեբազրգյանը.
Ես մեկ աղջիկ ունեմ՝ ծաղիկներին խառ,
Ամեն մեկ խոսքիս դրիր մեկ պատճառ,
Բաննիս կուտամ քեզի, եկ դու նրան առ,
Ինչո՞ւ համար է քու մինակ ման գալը դ:

Աղբալասին.
Բեբազրգյան, դու ես իմ գլոխ-տերը,
Թեյրան քաղաք թողի իմ հերն ու մերը,
Բաննի խանումն է իմ մերն ու քուրը,
Սիրելուս համար է մինակ ման գալս:

Բեբազրգյանը.
Ահա կուտամ քեզի քու խոսքի լուրը,
Քո տեսած աղջկա աչկերն է ծուռը,
Բոյը շատ ցածր է, բերանը ճոռ է,
Ինչո՞ւ համար է քու մինակ ման գալը դ:

Աղբալասին.
Իմ տեսած աղջիկը կարմիր խնձոր է,
Տասնհինգնոց լուսնու նման կլոր է,
Բոյը շատ բարձր է, յաչքերը բիլոռ է,
Սիրելուս համար է մինակ ման գալս:

Երգը վերջացնելուց ետև Աղբալասին ասում է բեբազրգյանին.—Ընձի տղա էնում ես՝ էրա, չէ՝ դուռը դի ու գնա նես:

Բեբազրգյանը մտածում է. «Թեյրան քաղաքն յուրտեղ է: Էս մարդը աքսորված մարդ է: Բերեմ էնեմ ընձի տղա, սաղ խանութերըս առուտուր էնե, աշխատի ընձի հըմար»: Ու Աղբալասուն կանչում է նես: Նստում են, հաց են ուտում, Աղբալասին ասում է.—Մինչևի Ջեյրան խանումին ընձի չյուզեք, ես ձեզի տղա չեմ էղնի:

Բեբազրգյանը խոսկ է տալում, ասում է.—Գուզենք, Աղբալասի ջան:

Բայց այան չեն հանում, օր Ջեյրան խանումը բեշքյարթմա է էրած Սայաթ խանի տղա Շայվալատի հետ: Բեբազրգյանը յինքնյիրան մտածում է. «Ախչիկ, տղա մե տան մյեջ յիրար մոտ են, յիրար սիրեն, կառնին, կէղնի մեզի փեսա»:

Բարիլուսը բացվի ձեր բոլորի վրա, բացվավ Աղբալասու ու բազրգյանի վրա: Բազրգյանը տարավ քառասուն խանութը յանձնեց Աղբալասուն: Թող Աղբալասին ըստեղ յիրան հմար առուտուր էնե, մենք խաբարը տանք Ղուշբալասուց: Հանկարծ նստած տեղը մտածեց Աղբալասու մասին ու ուշքը գնաց, թաքուին վազեց էկավ:

[48] Բանասացն օգտագործում է երկու՝ **բազրգյան** և **բեբազրգյան** ձևերը (ծանոթ, կազմողների)

—Գլխուդ մատաղ էղնիմ, թաքավոր ջան,—ասավ,—վայ թե ես քու սրտովըդ չեմ, յընչի՞ է ուշքըդ գնացե:

—Է՛,—ասում է,—թաքույի, դու չես ասում, թե Թեյրան քաղաքից ինչըղ էղավ, օր էկար, ընձի առար, էղար թաքավոր:

Ասում է.—Ես ի՞նչ գիիտեմ, թաքավոր ջան, ես գիտեմ, օր յիմացել ես՝ ես թաքույին եմ, թաքավոր եմ յուզում, էկել ես թաքավոր էղնելու:

—Է՛,—ասում է,—թաքույի, ես էկել էի, օր մե իշու՛մ կաշկա, մե ձիու՛մ կաշկա տանեի, ախպերըս անճար էր, Սեյրիբազ չայիրի վրա քնավ ու մնաց: Բայց էկա, յընկա քեզնով, թաքույի առա, թաքավոր էղա, ախպորըս մոռացա:

—Է՛,—ասում է,—թաքավոր ջան, յընչի՞ ես մտածում: Ելի էրթանք ջանդակը բերենք թաղենք, պրծնինք:

Թաքույին հրաման է տալում, թաքավորական լայեղ կառեթը գալում է, թաքավորն ու թաքույին նստում են, յո՞ւր ենք գալում, Սեյրիբազ չայիր՝ քեզի: Էրթում հասնում են Սեյրիբազ չայիրը՝ էն տեղը, յուրտեղ ախպոր գլոխը դրել էր սալքարի վրեն: Ախպորից հեչ բան չկա՝ ո՛չ շորերը, ո՛չ ջանդակը: Սիրտը լցվում է, մե հատում ասում է.

Չայիրների գլխավորն ես,
Գեղերի յառաջավոր,
Պատմե՝ յիմանամ ցավըս,
Ասա, յո՞ւր գնաց եղբայրըս:

Չայիր.
Մի՛ լաց, տղա, մի՛ լար՝ ասեմ,
Եղբայրըդ այսրեղից անվնաս գնաց,
Ինձնից մե փունջ ծաղիկ քաղեց,
Արտասվելով նա էլ գնաց:

Թաքույին չի թողնում Ղուշբալասին լա, ասում է,—Գլխուդ մեռնիմ, թաքավոր ջան, ըստեղից էրթած կէղնի, ելի էրթանք:

Առնում է թաքավորին, էրթում են: Թաքավորը, թաքույին թող էրթան յիրանց տեղը, մենք խաբարը տանք հորն ու մորեն: Վատ մարդիկ խաբարը տանում են Զուլում թաքավորին, թե.—Հըբը չես ասում՝ Դատ վաճառականը յամմեն յառավոտ անիծում է քու էրեխանցըդ, քեզի, քու թաքավորուտունդ:

Թաքավորը հրաման տվավ.—Կանչեք՝ գա քովըս:

Կանչեցին: Էկան Դատ վաճառականն ու յիրան կնիկը թաքավորի քովը, գիր գրեց, զարկավ ճակտըներին. «Տասը տուն մտնին՝ մե տուն հաց չտա: Մեր սայմանիցը ելնին, յուր կէրթան՝ էրթան»:

Դատ վաճառականին, յիրան կնկան հեռեցրավ յիրան սայմանից: Էրտըլով հասան էն քաղաքը, օր յիրանց տղեն էդ քաղաքի թաքավոր էր: Հասավ քաղաքի մեջ Դատ վաճառականը, գնաց թաքավորի քովը, զվանոկը տվավ, թաքավորի ծառաները ելան:

—Հա՛, ի՞նչ ես յուզում,—ասին,—ծերունի հայրիկ:

Ասավ.—Մե խնդրանք ունիմ ձեզնից: Գնացեք թաքավորին ասեք՝ մե ծեր մարտըմ էկե՝ մե խոզանոցըմ, մե ղազանոցըմ գյուզե՝ կնկա հետ ապրի: Աքսորված մարդ եմ:

Ծառաները գնացին թաքավորի քովը:

—Թաքավորն ապրած կենա,—ասին,—մե ծեր մարդըմ էկել է՝ մե խոզանոցըմ, մե ղազանոցըմ է յուզըմ՝ յիրան կնկա հետ ապրի:

Թաքավորն ասավ.—Գնացեք,—ասավ,—էսինչ սենյակը, մե ձեռքըմ է տեղաշոր տվեք՝ թող էրթան յիրանց համար ապրին:

Մե քանի օր յոլա էրթըլուց ետև՝ ծեր մարդը գնաց թաքավորից գործ յուզելու: Ծառաները գնացին թաքավորին ասին, թաքավորն ասավ.—Գնացեք բերեք քովըս:

Բերըմ են ծեր մարդուն, տանըմ են թաքավորի քովը, թաքավորն ասում է.—Արի էղի մեզի չբուխչի:

Ծեր մարդը սկսում է աշխատել թաքավորի յառաջ՝ չբուխչի: Թող էս մարդն աշխատի էստեղ չբուխչի, մենք խաբարը տանք Աղբալասուց: Աղբալասին առուտուր էրած վախտը տեսնում է, օր սոխակը գուզեր հոտ քաշեր վարդից, տեսավ, օր չի հասնում վարդին, յընկավ փշի վրեն, սատկավ: Ըտեղ Աղբալասու սիրտը լցվավ, մե հատում երգեց.

Պեկք է խոսեցնեմ սազիս թելերը,
Սոխակ, վարդի համար ինչո՞ւ սպանվար,
Էէէ՛, սոխակ ջան:
Աղբալասիս նստե՝ խրատ է տալում,
Էէէ՛, սոխակ ջան:
Ջեյրան խանումն յիրա համար է լալում,
Էէէ՛, սոխակ ջան:

Թող գան ընձի տանին սարի գելերը,
Սոխակ, վարդի համար ինչո՞ւ սպանվար,
Էէէ՛, սոխակ ջան[49]:

Երգը վերջացնելուց ետև՝ ուշաթափ է էղնում, յընկնում է դախլի վրեն, մնում է: Բաննի խանումը յամմեն յառավոտ գալում Աղբալասուն տանում է, յիրար հետ հաց են ուտում, ախպերն էրթում է յիրան գործին, քուրը՝ յիրան գործին: Բաննի խանումն էկավ խանութ, օր Աղբալասուն տանի հաց ուտեն, տեսավ, օր Աղբալասու ուշքը գնացել է:

—Վա՛յ, գլխուդ մեռնիմ, Աղբալասի ջան, ախպեր ջան, էդ ի՞նչ է պատայե:

Աղբալասու խելքը գլոխն էկավ, քուրոջն ըսավ.—Է՛, քուր ջան,—ըսավ,—ես օր էկա ձեր տունը, դուք ընձի ի՞նչ խոսք տվեցիք:

—Ի՞նչ խոսք տվեցինք,—ըսավ,—Աղբալասի ջան:

—Դուք ընձի խոսք չտվեցի՞ք,—ըսավ,—օր Ջեյրան խանըմին յուզեք ընձի:

—Է՛,—ըսավ, ախպեր ջան, էլի՛ գուզենք քեզի: Քելե էրթանք տուն, հաց ուտենք, հանգստացի, ես Ջեյրան խանումին գուզեմ քեզի: Ջեյրան խանումը իմ դերեկտորն է:

Գնացին տուն, հաց կերան, Բաննի խանումը Աղբալասու մատեն վերցնըմ է Ջեյրան խանումի մատնիքը, դնըմ է յիրա մատը: Ըսըմ է.—Ախպեր ջան, դու գնա հանգիստ քու առուտուրդ էրա:

Թող Աղբալասին էրթա յիրան առուտուրն էնե: Բաննի խանումն էդ օրը դասի չի էրթըմ: Ջեյրան խանումը յիրան տալըցուին՝ Նարգըզին ղրկըմ է Բաննի խանումի ետևեն: Նարգիզը գալըմ է:

—Բաննի խանըմ, Ջեյրան խանըմը կանչըմ է:

—Նարգիզ ջան,—ըսավ,—գնա ըսա՝ Բաննի խանըմը հիվանդ է, չի կրա գա:

Նարգիզը էրթըմ է Ջեյրան խանըմին ըսըմ, օր Բաննի խանըմն ըսըմ է՝ հիվանդ եմ, չեմ կրա գա: Ջեյրան խանըմը Նարգզի վրեն ղժղժըմ է, ըսըմ է.—Գնա ըսա՝ գա:

Նարգիզը գալըմ է:

—Բաննի խանըմ, էն լիրբը կատղել է, քելե, էլի՛:

Ըսըմ է.—Ընչի՞ է կատղե: Ըսա՝ նշանվել եմ, մարդ եմ առե, չեմ գալըմ:

Նարգիզը նորից էրթըմ է Ջեյրան խանըմի քովը:

Ըսըմ է.—Ջեյրան խանըմ, Բաննի խանըմն ըսավ՝ նշանվել եմ, մարդ եմ առե, չեմ գալըմ:

Ջեյրան խանըմը քաշեց խեղճ Նարգըզի մազերը պռճոկ-պռճոկ էրավ: Ըսավ.—Ես քեզի ըսըմ եմ՝ գնա ըսա թող գա: Նշանվել-մշանվել չեմ հասկընըմ:

Նարգիզը լալեն վազեց Բաննի խանըմի քովը:

—Բաննի խանըմ,—ըսավ,—դու է մեռնիս, Ջեյրան խանըմն էլ մեռնի, առածդ էլ հետներդ մեռնի: Էն լիրբը քաշեց, մազերըս մեկ-մեկ պռճոկ-պռճոկ էրավ:

Ըսավ.—Ընչի՞ է լրբըցե օր:

Ելավ Բաննի խանըմը, շորերը հագավ, հարի մեկ, Ջեյրան խանըմ յո՞ւր ես, գալըմ եմ քեզի:

Գնաց Ջեյրան խանըմի քովը, ձեռը կանթեց, ըսավ.—Ընչի՞ ես լրբըցե, ի՞նչ ես ըսըմ: Նշանվել եմ, մարդ եմ առե, չեմ գալըմ:

—Լա՛վ,—ըսավ,—ես էլ հասկցա, օր նշանվել ես, բը քու նշանածդ յո՞ւր ա, նշանվողը նշան կունենա: Օր մենք էլ յիմանանք՝ նշանվել ես, մարդ ես առե, չես գալըմ:

Ըսավ.—Դու ի՞նչ գիտես՝ նշան չունիմ: Ահան,—ըսավ,—նշանըս:

Նշանը տեսնելուն պես՝ Ջեյրան խանըմը բռնեց Բաննի խանըմի մատն ու ըսավ.—Ըստուր տերը վո՞վ է, աստված ունի՞ս՝ ըսա:

Ըսավ.—Լիրբ, ընչի՞ ես լրբըցե, ըստուր տերը իմ առածըս մարդն է:

Ըսավ.—Յաման, Բաննի խանըմ, քու ոտրդ պակեմ, էսի քու մարդըդ չի էղնի, էս մատնիքի տերը վո՞վ է, չէ՞ օր էտիկ իմ մատնիքս է:

Բաննի խանըմը ծրծաղալեն ըսավ.—Էս մատնիքի տերը իմ ախպերըս է:

—Հոգուդ մեռնիմ,—ըսավ,—Բաննի խանըմ, գնա բեր:

—Ախչի,—ըսավ,—ինչը՞ղ բերեմ, դու բեշքարթմա էրած, ախպերըս՝ տղամարդ, յուրմա՞ն բերեմ, օր մարդ չյիմանա:

—Այ տնաշեն,—ըսավ,—բեբազրգյանի խանութները քուլլի կնկա շոր են: Ձեռքըմ շոր

[49] Երգվում է «Դուզանլամա» եղանակով (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):

հագցրու, ձեռք՚մ է կոշիկ՝ ախչկա հաշվի առ ու արի:

Բաննի խանըմը[50] ելավ գնաց խանութը ըսավ.—Ախպեր ջան, յաչքըդ լուս, Ջեյրան խանըմի քովն եմ տանըմ քեզի:

Ըսավ.—Քուր ջան, ինչը՞ղ տանիս: Օրը ցերեկ է, յինքը բեշքարթմա էրած է, կերսանց տեր է:

Բաննի խանըմն ըսավ.—Աղբալասի ջան, քելե խանութը, ձեռքըմ կնկա շոր հագի, էրթանք:

Քուր ու ախպեր ելան գնացին խանութը, Աղբալասին ձեռքըմ կնկա շոր հագավ, ձեռքըմ էլ՝ կոշիկ, գնացին Ջեյրան խանըմի քովը: Ջեյրան խանըմը օր չտեսա՞վ Աղբալասուն, խելքը գլխեն գնաց: Պակեցին յիրար: Նարգիզը նկատեց, օր մեկըմ յիրան հարսի հետ համբուրվավ, բայց ինչղ օր կնիկ մարդ չէղնիր: Մե էրկու օր էսպես շարունակվավ: Երրորդ օրը Նարգիզը բուսու պայեց խաս բախչի ծառներու տակ: Բաննի խանըմը ախչըկներուն տարավ ծաղիկ քաղելու: Նարգիզը նկատեց, օր յիրան հարսի քովինը կնիկմարդ չէ, տղամարդ է: Վերյապալաղ վազեց թաքավորի պալատը:

Ըսեց.—Թաքավորն ապրած կենա, դու է մեռնիս, քու թաքավորութունդ էլ, օր քու քաղաքիդ մեջը իմ հարսըս յուրուշ տղի հետ խաս բախչեն կայնած են:

Թաքավորն ըսեց.—Այ ախչի, կարող է՝ յիրան ծանոթն է, կարող է՝ հարազատն է:

—Չէ,—ըսավ,—թաքավորն ապրած կենա, բեր պայման էրա, եթե սուտ էղավ՝ ընձի կախարան հանե, եթե օղորթ էղավ՝ էրկըսին կախե:

Բերեցին, պայմանագիրը գրեցին, թղթերը հաստատեցին, թաքավորն էլ ստորագրեց, Նարգիզն էլ: Թաքավորը կանչեց չբուխչուն, ըսավ.—Գնա, չբուխչի, էսինչ խաս բախչի մեջը էրկու հատ մեղավոր կա, առ արի:

Չբուխչին Նարգըզի հետ ելավ, գնաց տեսավ, օր մե ախչիկըմ, մե երիտասարտըմ կայնած են:

Նարգիզն ըսավ.—Մեղավորները ըստոնք են, վերցրու տար:

Վերցրավ չբուխչին էրկըսին, տարավ թաքավորի պալատը: Նարգիզը գնաց ետևներից, ըսավ.—Կախարա՞ն:

Թաքավորը ստորագրել էր, բտի կախեր: Բերին թոկերը սարքեցին, օր բտի Աղբալասուն ու Ջեյրան խանըմին կախեն, խաբարը հասցրին Աղբալասու խորթ հորը՝ բեբազրգյանին: Բեբազրգյանը էկավ տեսավ՝ ի՞նչ տեսնի՝ Աղբալասին, Ջեյրան խանըմը կախարանի տակ են, կախըմ են: Խնդրվավ թաքավորին.—Թուլ տու,—ըսավ,—թաքավորն ապրած կենա, էրկու խորատա ըսեմ, ընտուց ետև իրավունքը քուկդ է:

Հըմի տեսնինք, թե Աղբալասու խորթ հերը ինչ ըսավ.

Արտասունք մի թափե, օ՛ֆ իմ Աղասիս,
Թաքավորից բանտարկված ես, ի՞նչ անեմ,
Բոլոր կայքըս փչացնեմ քու մասիդ,
Թաքավորից բանտարկված ես, ի՞նչ անեմ:

Գիշերը՝ երազիս օրըս դուման էր,
Մագյար Սայաթ խանեն ընձի դուշման էր,
Ասսանից կխնդրեմ՝ վրեժըս հաննե,
Թաքավորից բանտարկված եմ, ի՞նչ անեմ[51]:

Խորթ հերը, խոսքը վերջացնելեն ետև, Աղբալասին խնդրվավ.—Թաքավորն ապրած կենա,—ըսավ,—թուլ տու, էրկու խորաթա ըսեմ, ընդից ետև կախըմ ես՝ կախե:

Թաքավորն ըսավ.—Էրկուս մի ըսե, տասնէրկուս ըսա, տեսնինք՝ հըլը դո՞ւ ինչ բտի ըսես:

Թաքավորն արդեն հասկըցել էր, օր կախարանի տըկինն յիրա ախպերն է:

Հըմի տեսնինք, թե Աղբալասին ինչ է ըսըմ.

Բեբազրգյան, դու ես իմ գլուխ՝ տերը,
Թեյրան քաղաք թողի իմ հերն ու մերը,
Սեյրիբազ չայիրը կորավ ախպերըս,
Թաքավորից բանտարկված եմ, ի՞նչ անեմ:

Աղբալասիս պանդուխտ մարդ է, ծախըմ են,
Երդիկը կալնել են, դուռը վրեն ախըմ են,
Տարաղաջ են սարքե, բերե կախըմ են,
Թաքավորից բանտարկված եմ, ի՞նչ անեմ:

Աղբալասին, երգը վերջացնելուց ետև, յառաջ էկավ Ջեյրան խանըմը, խնդրվավ.—Թուլ տու, թաքավորն ապրած կենա, էրկու խորատա էլ ես ըսեմ:

---

50 Այս բառը ասացողն օգտագործում է երկու ձևով՝ **խանում** և **խանըմ** (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

51 Երգվում է «Դարբեդարի» եղանակով (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):

Տեսնինք, թե Ջեյրան խանը՝մը ինչ ըսավ.

Աչքը քցեմ թառլան թաքույու դուռը,
Ինձ սպանեք, Աղբալասուս ազատեք,
Պեպք է զովացնեմ սրտիս մրմուռը,
Ինձ սպանեք, Աղբալասուս ազատեք:

Ալբուխարի շելլիկ կայնել եք սեյրի,
Մարդ մեղք չուներ, ես իմ ձեռքովըս էրի,
Սայաթ խանեն ինձ հարս էր արե թերի,
Ինձ սպանեք, Աղբալասուս ազատեք:

Ջեյրան խանը՝մից ետև ձեռ տնկեց չբուխչին:

—Թաքավորն ապրած կենա,—ըսավ,—թուլ տուր էրկու խորատա էլ ես ըսեմ:

Կողքի կայնող ժողովուրդը չբուխչու գլխուն զարկեցին: Թաքավորը նեղեցավ, ըսավ.—Թուլ տվեք տեսնիմ ըդուր ցավ ու դարդն ինչ է, ընչի՞ կզարգեք:

Բայց թաքավորը նույն րոպեին հասկըցավ, օր չբուխչին էլ յիրան հերն է:

Հըմի տեսնինք, թե չբուխչին ինչ է ըսում.

Ես իմ ձեռքով կտրել տվի ծառներըս,
Արքա, քեզ եմ խնդրում՝ ազատե որդուս,
Թեյրան քաղաքից սուրգյուն արին գառներըս,
Արքա, քեզ եմ խնդրում՝ ազատե որդուս:

Թեյրան քաղաքի մեջ վաճառական էի,
Մեծամեծների հետ նիստուկաց կանեի,
Իշխաններից բարձր գլուխ իշխան էի,
Արքա, քեզ եմ խնդրում՝ ազատե որդուս:

Չբուխչին խոսքը վերջացնելուց ետև՝ յառաջ էկավ չլոտ, պառավ, գըլըլած կնիկըմ: Թաքավորը նույն րոպեին յինքնյիրան ըսավ.—«Էդ էլ մերըս կէղնի: Հերըս ու մերըս իմ յառաջը, ուրեմն ծառա են դառե»:

Էս պառավը սկսեց երգել.

Աղբալասիս արտասունքը գետ արեց,
Զարացած թշնամին դռները քարեց,
Սար ու քար լինեն, չեն դիմանա մեր ցավին,
Թողեք ես լամ իմ դարդլու ցավերըս:

Բարգյուզալիս սիրտը մաքուր, միամիտ,
Ջուխտ գառներըս սուրգյուն էրին
մեր տանից,
Սար ու քար լինեն, չեն դիմանա իմ ցավին,
Թողեք ես լամ իմ ցավալու դարդերըս:

Պառավը վերջացնելուց ետև՝ ժողովուրդը ըսպասըմ էր, թե թաքավորն ինչ պտի ըսե: Թաքավորը ձեռ տնկեց:

—Ժողովուրդ,—ըսավ,—յարցունքի տեղ յարուն եմ լալըմ, թուլ տվեք՝ էրկու խորատա էլ ես ըսեմ:

Տեսնինք, թե թաքավորն ինչ է ըսըմ.

Առաջ միտքըս քցեմ իմ աննման մորս,
Սեյրիբազ չայիրը թողի եղբորըս,
Թեյրան քաղաքի մեջ թողի յարընքտերըս,
Թողեք ես լամ իմ ցավալու դարդերըս:

Ղուշբալասիս՝ արքա, կանե աղաղակ,
Վճիռքը կանես, ստեղծող էակ,
Ես ու Աղբալասիս մեկ մորից ծնվանք,
Թողեք ես լամ իմ դարդլու ցավերըս:

Թաքավորը խոսքը վերջացնելուց ետև, բոլորը լուռ կսպասեին, թե թաքավորը ինչ բտի ըսե: Մեկ էլ Սայաթ խանի տղա Շայվալատը տեղեն դուս թռավ, ըսավ.—Թաքավորն ապրած կենա, Ջեյրան խանը՝մին ընձի հետ բեշքյարթմա են էրե, էսքան ժամանակ հետն է չեմ խոսացե: Ջեյրան խանը՝մին իմ կողմես նվիրըմ եմ Աղբալասուն:

Բեբազրգյանը էն կողմեն էլավ ու ըսավ.—Իմ կողմես Բաննի խանը՝մըս նվիրըմ եմ Շայվալատին:

Կախարանի թոկերը կտրեցին, օխտը զօր ու գիշեր հարսնիք էրեցին, կերան, խմեցին՝ մեզանով անուշ, բայց ոխը յիրանց սրտեն չէլավ: Ղուշբալասին էրկու հատ լոթի տղա, յիրան բազրգյան, լալա-վեզիրներով գնաց Սեյրիբազ չայիրը կերուխումի: Լալա-վազրին ղրկեց Թեյրան քաղաք՝ Զուլում թաքավորի ետևեն, բերեցին Սեյրիբազ չայրի վրա կերուխումի: Թաքավորն է էլավ, յիրան կառեթով ուրախ-ուրախ էկավ:

Ղուշբալասին թաքավորին ըսավ.—Ես Ղուշբալասին եմ, էն էլ Աղբալասին է:

Տղոնցը հրաման տվավ՝ Զուլում թաքավորի գլոխը կտռին: Ըսավ.—Մանդրռ-մանդրռ-մանդրռ կտրտեք:

Էդ նույն կառեթով Աղբալասին յիրան խորթ հորով, յիրան ընտանիքով գնաց Թեյրան քաղաքը՝ թաքավորելու: Ղուշբալասին էլ մնաց Ալբուխարի քաղաքի թաքավոր:

Ըդոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Երկընքուց յընկավ յիրեք հատ խնձոր...

12(12). ԱՂ-ԲԱԼԱՍԻ, ՂՈՒՇ-ԲԱԼԱՍԻ

Ժամանակով մե քաղաքի՛մ մեջ կապրեր կուպեց Տիգրանը՝ իրան կնկա՝ Փարգյուզալի[52] հետ: Ային-ղայինի տեր էր էդ կուպեց Տիգրանը: Հըմը՛, ինչ էրած, օր էրեխա չուներ: Բար-Գյուզալը չըբեր էր: Օրվա մեկը կուպեց Տիկրանը էլավ իրան բախչեն՝ պտտելու: Ծառներու միջեն էրտըծած վախտը աշկն ընկավ մե վիրունի խնձորի՛մ ծառի, տեսավ, օր ղուշը վրեն բուն է դրի: Մոտկցավ ծառին, բունը ցածլիկ էր, վերցրավ նոր էղած ձագերուց մեկը. վերցնելը տեսավ: Մե ղուշըմ իրան վերևեն քցեց էդ մարդու ոտներու առաջը, ծղրդաց, զարկվավ հողին: Կուպեց Տիկրանը ձագը դրավ տեղը, ղուշը թռավ իրան բնին, հանդրտվավ:

«Հե՛յ գիդի բախտը, հըլը էս ղշին աշե, իրան ձագի հըմար ինչ կէնե: Ըբը ես, օր ադամորդի իմ, էդ ղըշի չափ էլ չըկա, էլ ընչի՞ կը մնամ էս աշխըրքի էրեսը, արևը բիլամ ապսոս է»,—ըսավ էնի ու լացավ:

Օր լացավ, սիրտն իջավ, քիչըմ նըստավ էդ ծառի հովը ու էլավ, օր էրտար տուն: Էրտըլու վախտը աշկըն ընգավ ծառին, օր խընձորըմ է բուսի վրեն: Ըսավ, «Հա՛յ, հա՛յ, էս էրկու դախի մեջն էլ պտուղ գը բուսի, էս ի՞նչ բան էր,—ըսավ,—ես բդի ուտիմ էս խնձորը, ինչ էրե, աստված է էրե, յա՛ կը մեռնիմ, յա՛ աշխըրքի էրեսը ըսպես բայղուշի պես չեմ պըտտի»:

Քաղեց խնձորն ու էկավ տուն: Կանչեց Փար-Գյուզալին, խընձորն էրավ հալալ էրկու կըտոր, կեսն ինքը կերավ, կեսն՝ էնի:

Էդ օրվանեն, ախպեր ջան, անցավ ինը ամիս, ինը օր, ինը սհաթ, ինը դախա, Բար-Գյուզալը չոքը զարկեց գետին ու էրկու ղոչ տղա բերավ: Կուպեց Տիկրանը բերավ պալ սարքեց. օխտը զօր, օխտը գիշեր գինին ջրի լման կէրտար, զուռնա-դավուլը գը զարկեր: Վո՞ւվ քեֆ կէներ՝ կուպեց Տիկրանը, վո՞ւվ կուրախնար՝ կուպեց Տիկրանը: Ու էդ տղոնց մեկի անունը դրին Աղ-Բալասի, մեկինը՝ Ղուշ-Բալասի:

* * *

Ուրիշները տարով կը մենձընան, հեքթի տղեն օրով կը մենձընա: Մենձըցան Աղ-Բալասին ու Ղուշ-Բալասին: Օրն հասավ, Տիկրան կուպեցը բռնեց իրան տղոնց ձեռը, տարավ էդ քաղքի Վարժապետ Դանելի քովը, յուսումի տվեց: Դանել Վարժապետը լալա-նազիր-վեզիրներու տղոնցը կը կարդացներ:

Վախտըմ անցավ, էս էրկու ախպրդանը մե էնբեսի ընդունակ սորվող էղան, օր Դանել Վարժապետը հայիլ-մայիլ մնաց: Նազիրի ու լալի տղեքն ընդոնց դեմը հեչ բան դառան: Լալի տղեն մե օրըմ Աղ-Բալասուն նեղեցըրեց: Տղա, դու տղա, մե շամառըմ օր չը քաշեց լալի քյաչալ տղին, արունը քթեն-բերնեն գնաց: Էս բանը իմացավ լալեն: Անցավ մե վախտըմ, օրըմ էլ լալեն բացեց օդի դուռն ու մտավ էդ աշակերտներու քովը:

Դանել Վարժապետը մռութը խաձեց, ըսավ. «Ըստեղ բանըմ կա»:

Էլավ, թամալլա էրեց լալին ու իրան դասին անցավ: Լալեն տեսավ, օր սաղին վարժապետը դաս հարցուց, ղրաղի էրկու տղոնցը դաս չը հարցրավ:

Լալեն ըսավ.—Դանել Վարժապետ, էն էրկու տղոնցըն ընչի՞ դաս չիս հարցու:

—Լալա,—ըսավ վարժապետը,—էնոնք հեչ բան չիտին, դըմբո ին:

Էդ վախտը լալեն մե հարցըմ տվավ էրեխանցը՝ ղըստու:

Ըսավ.—Էրեխեք, աշխարքը երկընքի վրեն է կանգո՞ւն, թե՞ հողի:

Էրեխեքն ըսին, օր.—Աշխարքը էրկընքով է կանգուն, լալա:

Սըրեն հասավ Աղ-Բալասուն, էլավ ըսավ.—Աշխարքը հողի վրեն է կանգուն:

Լալեն խանձըրհըմավ, էլավ ու հարի մե թաքավորի պալատը: Գնաց ըսավ.—Տունըդ չը քանդվի, թաքավոր, քաղքիդ մեջը էրկու ախպեր է լուս ընկե, Դանել Վարժապետի քովն ին: Քանի՛մ տարի էլ անցավ, էնոնք քու թախտը տարմետաղան կէնին, քու թագը թարս քու գըլոխը կանցուն,—ու ըսավ ընդոր, հալ-հեքիաթ, ըսման, ըսման:

Թագավորն ըսավ.—Լալա, ի՞նչ ընինք:

Ըսավ.—Վոնդե էդոնց Դանել Վարժապետի քովից, հեռու մնան ուսումից, էրտան բըռի-բառադա մենձընան:

Ըդպես էլ էրին, թաքավորի զոռ էր:

Շատ լացավ, շատ խընդաց էդոնց հերը, օյլամա-բեյլամա՝ հընար-մյուքուն, չեղավ:

[52] Պատումի ընթացքում բանահավաքը այս անունի տարբեր ձևեր է օգտագործում՝ Փարգյուզալ, Փար-Գյուզալ, Բար-Գյուզալ (ծանոթ. կազմողների):

Դուս վըռնդին Աղ-Բալասուն ու Ղուշ-Բալասուն Դանել Վարժապետի քովեն:

Օր ախպրդանը դուս մնացին դպրոցեն, մե օրըմ էկան, հորն ըսին.—Հայրիկ, մեզի ձի առ, նետ ու անեղ տուր, էրթանք պտտինք, որս էնինք, էսպես պարապ-սարապ ի՞նչ դուս գուքա:

Հերը գնաց, մե-մեկ ձի առավ, նստան էնոնք, առան նետ ու անեղները, գը պտտեին մեշեքը, սարերը, ղուշ գը զարկեին իրանց համար, իրկվան դառնային տուն գուքային: Հըմը տղեք էին կայնե, հա՛, ամեն մեկը՝ մեկ-մեկ ասլանի ձագ, բոյով, սիրուն, թուրվանդա:

Օրըմ թաքավորի դոլվաթ ղուշին բաց էին թողե, գը պտտեր քաղքի վրեն: Ուրդից ուրդեղ մե ուրուրըմ ընկավ էնոր էդևեն: Դոլվաթ ղուշը սրտապատառ գը փախներ: Մեկ էլ էնոր ոտներու օսկե զնջիլը փաթըվավ չինարի ծառի բանցր ճուղքերուն: Ուրուրին փախցրին, հըմը դոլվաթ ղուշին կախվուկ մնաց ծառի ճուղքերեն, էնդոր հնար-իլլաջ չեղավ ցած բերելու: Թաքավորը յայտնեց, ըսավ.—Ով օր դոլվաթ ղուշին ցած բերե, էնոր մենձ փեշքեշ կուտամ:

Թոփ էղան քաղքի էրևցող մարդիքը, ինչքան օր ավճի-դոխճի կային, բանըմ էլ չը կըրցան էնեին. շվարուկ կայնած էին: Իրիկվապայ էր. Աղ-Բալասին ու Ղուշ-Բալասին չոլերեն գուքային: Հասան ըդեղ, տեսան, եղելությունը իմացան: Հըմը՛, գյոզըմ Աղ-Բալասի, քաշեց իրան նետն ու անեղը ու հայդա՛, դեմ էրավ չինարու գագթին՝ դըպա դոլվաթ ղուշին: Հարի թոփ էղուկները օյամիշ էղան, նետը վզզալով թռավ, գնաց-կտրեց դոլվաթ ղշի ոտներու զընջըլի հանգուստը, ղուշը թռա՛վ, իջավ պալատի գլխուն: Էդ հաղլողանի բերանը բաց մնաց:

Հարի էդ տղի անունն ու խաբարը գը հասներ թաքավորին, լալեն ըսավ.—Տունըդ չը քանդըվի, թաքավոր, էդի օր կար, կուպեց Տիգրանի տղեն էր, տարի՛մ էլ անցավ, թախտըդ գլխուդ կավիրե, քանի թեզ է, հնարդ տես:

Թաքավորն ըսավ.—Ի՞նչ էնինք:

Լալեն ըսավ.—Աքսորե ընդոնց հորն ու մորը քու երկրի սայմաններեն, էն էրկու լակոտին էլ տուր ջալլըթի ձեռը, տանե վերջացնե: Դու խաբար չեղար, քաշեցին նետը, օր զարկեին դոլվաթ ղշին, հըմը աստըծուց էր, օր չը բռնեց, ոտի ժընջըլին բռնեց:

Թաքավորն համոզվավ լալին ու գործն ըդպես էրավ: Աղ-Բալասուն ու Ղուշ-Բալասուն տվավ ջալլըթի ձեռը, ըսավ.—Գը հանիս իմ երկրի սայմաններեն դուս, գը մորթիս էնոնց, արնոտ շապիկները գը բերիս:

Տիկրան կուպեցի կայք ու կարողությունը խլեց, աղքտի շոր հագցրավ ու էնոր ու կնկա դոշերեն մեկ-մեկ տախտակ կապեց, վըրեն գրեց, օր հարուր տուն ման գան, նոր հարուր մե տունը հաց տա էնոնց:

Թող էնոնք ջնդրըրի պես ման գան, իրանց օրվա դըպարն էնին, մենք խաբարը տանք ջալլըթներուց:

* * *

Ջալլըթներն էլան երկրի սայմաններեն դուս, ըսին, օր.—Ախպեր, էս թուրվանդա, խեղճ տղեքն ի՞նչ ին էրի, օր մորթինք ըստոնց:

Մուջադալա էրին: Տեսան, օր վիրունի էձըմ կանցնի, զարկին ընդոր, տղոց շապիկները թաթխին արնի մեջը, օր տանին էդի թաքավորին ու տղոնցը բաց թողին, ըսին.—Գնացեք, թող աստված ձեզի քոմակ էղնի:

Ջալլըթները դառան դիպա քաղաք, էնոնք էլ յոլ ու ռևան էղան, գնացին: Շատ գնացին, քիչ գնացին, շատ ու քիչը աստված գիտե, հասան մե չայիրի՛մ: Բեզըրել էին: Ղուշ-Բալասին ըսավ.—Ախպե՛ր, արի դինջանանք, տեսնինք՝ աստված ինչ լուս կէնե:

Մե աղբուրըմ կար, զուլալ՝ կռնկի յաշկ, ջուր խմին: Ղուշ-Բալասու քունը տարավ, քնավ էնի: Քիչըմ էդև մե բազրգյանըմ էլ իրան քարավանով էկավ իջավ էդ դաշտի մեջը, կը դինջանային: Վախտըմ օր անցավ Աղ-Բալասու աշկըն ընկավ ախպորը: Ախպեր, քու տունը չքանդվի, ախպեր, փրփուրը տվել է բերանը, քրտնել է՝ մեռել, թե դրել իս՝ արի տես: Դես գը քաշե, դեն կքաշե՝ չկա...

(Աղ-Բալասու երգը...)[53]

Տեսավ, օր ախպերը չի զարթնի, էլավ գնաց բազրգյանի քարվանի քովը, հազըրվել էին էրտըլու: Լացավ, աղաչեց բազրգյանին, օր ախպորն հասցնե մե տեղըմ: Բազրգյանը չլսելու տվավ:

(Աղ-Բալասու երգը...)

[53] Բանահավաքը երգերը չի գրառել (ծանոթ. կազմողների):

Օր նորից խնտրրվավ, բազրգյանի հերսն էլավ, ըսավ,—Կորի, գլխես ռադ էղի, իմ ապրանքը ըստեղ ձեռնե գելնի, ես բդի աղքատ սըղըցռ՞ւմ ու քաշեց քյարվանը, գնաց: Աղ-Բալասին, ձեռը ծոցը, կայնած մնաց: Տեսավ, օր ախպերը օյամիշ չի էղնի, ըսավ. «Էրթամ, մոտիկ տեղե՛մ բալի մե լուս ու ճարըմ էնիմ ախպորս»,—ըսավ, ախպոր ճակատը պակեց ու գնաց: (Աղ-Բալասու երգը...):

Թող էնի էրթա իրան ճամփով, մենք խաբարը տանք Ղուշ-Բալասուց:

* * *

Մնաց էնի ըդպես, մեկել էրձին մե բոզ ձիավորըմ կայնավ կողքը:

—Հա՛,—ըսավ,—Ղուշ-Բալասի, աշկերդ լեն բաց: Էսի օր կա Բել քաղքի բազրգյան Մելիքսեթի աղջկա՝ Ջեյրան Խանըմի պատկերն է, լավ աշե:

Տեսավ, Ջեյրան Խանըմ, քու տիրու տունը չքանդվի, օխտը օր, օխտը գիշեր ո՛չ ուտիս, ո՛չ խմիս, նստիս ու էնոր ղանդ ու ղալին, մալ-ջամալին սեյր էնիս, էնպես սիրուն է էնի: Ղուշ-Բալասու մռութը պատռավ ու արունը գնաց: Բոզ ձիավորը հանեց էնոր մատեն հորական մատնիքը ու Ջեյրան Խանըմի մատնիքը անցրավ ընդոր մատն ու ինքը փոզմիշ էղավ: Ղուշ-Բալասին էր, էլավ... արար աշխարքը մտեն էլավ... Ջեյրան խանըմի պատկերը աչքի առաջը, ընկավ մե ճամփե՛մ ու գնաց: Էնի թող էրտա իրան ճամփեն, մենք խաբարը տանք Աղ-Բալասուց:

* * *

Գնաց Աղ-Բալասին, շատ գնաց, քիչ գնաց, շատ ու քիչը աստված գիտե: Հասավ էնի մե քաղաքըմ, նես մտավ դարբասներեն... Քաղաք, քու տիրու տունը չավիրի, ինչ քաղաք: Տներու, ժամերու, դյուքաններու, արեստանոցներու դռները ալարղա՝ կրնկի վրա բաց, ամեն ինչը թափած, ծով, հըմը մարդ-մադաթ չկա: Էս դին ընկավ, էն դին ընկավ, մեկ էլ տեսավ, օր մե թուքնի՛մ առաջը մե բիձա մարդ՛մ է նստե ու թազբեղ կքաշե: Բարևեց ընդոր, կայնավ: Բիձեն աշեց տղին, ըսավ.—Հը՞ն, այ տղա, ի՞նչ մարդ իս, ուրդի՞ց գուքաս, ո՞ւր կէրթաս:

Էնի ըսավ.—Հայրիկ ջան, ես էս էրկրեն չիմ, ղարիբ մարդ իմ:

Ու ուզեցավ, օր իրան ախպոր վրեն խոսա, հըմը բիձեն չթողեց ընդոր՝ բերան բանա:

Ըսավ.—Էլ մի կայնի, այ տղա, հասի քաղքի մենձ մեյդանը, սաղ քաղաքըն ընդեղ է, էսօր դոլվաթ ղուշին բդի բաց թողնին, թաժա թաքավոր բդի նստի քաղքին: Հասի էնդեղ, էլ մի կայնի ու խրատ տվավ ընդոր ճամպեն:

Աղ-Բալասին էր, ձեռը ծոցը, հասավ քաղքի մենձ մեյդանը, տեսավ, օր հալղոլանը ծով, ասեղ քցելու տեղ չկա, դավուլ զուռնեքը դաստա-դաստա գը չալին: Գնաց էնի մե ղրաղըմ իրան հըմար կայնավ: Դոլվաթ ղուշին բաց թողին: Թռավ ղուշը. ֆռաց, ֆռֆռաց, պտըտա՛վ, էկավ հըմը Աղ-Բալասու ումուզին իջավ: Թափան քաղքի մենձամենձները, ի՞նչ տեսնին, մե աղքատ օտարական տղե՛մ:

Ըսին,—Ախպեր, էս չլոտ օտարականը ուրդի՞ց բուսավ, դոլվաթ ղուշին սխալվել է:

Տվին Աղ-Բալասուն մե քանի՛մ հոգու ձեռ, ըսին.—Տարեք էրեք մե հոլիքըմ, ետ դառեք:

Ըդպես էլ էրին: Ձեռ ու ոտը կապին, տարան քաղքի ղրաղը, մե հոլիքը քցին, դուռը վրեն փակին ու ետ էկան: Դոլվաթ ղուշը թաժադան թողին: Ֆռֆռաց ղուշը, պտտավ, պտտավ, էկավ իջավ հոլիքի գլխուն, քանդեց էրդիքը, իջավ նստավ Աղ-Բալասու ումուզին:

Կատղան քաղքի մենձ-մենձ մարդիկը, հանին ղուշը ընդից, վերցրին Աղ-Բալասուն ու հայտա մե բանդը, քցին մե նեղ մաղազե՛մ: Ու էկան ղուշը թաժադան բաց թողին: Էնոնք գուզեին, օր իրանց վրեն իջներ ղուշը: Ղուշ, դու ղուշ, օր բաց թողին, թըռավ գնաց բանդի գլխուն նստավ:

Քաղքի մարդիկը թոփ էղան, մուջադալա էրին, ըսին.—Ախպեր, զոռով խո բան չի էղնի: Կա, չկա, էդ ջայել տղեն է մեր թաքավորը: Հալբաթ էդ մարդու բախտն էլ էդի է:

Ու էկան բանդի դուռը բացին, հանին Աղ-Բալասուն, վրեն քըցին ալ-բինիշը, նստըցրին էնդոր քայլան ձիու վրեն ու զուռնով, ղալմաղալով հասցրին հարի մե պալատ, նըստըցրին գային, դարձրին էդ էրկրի թաքավոր, ըսկսին թաքավորական սինոտը:

Սինոտի հըմը էն գյուռ վախտը Աղ-Բալասու միտքն ընկավ իրան ախպերը, ախըմ քաշեց էնի սրտի խորնկեն ու առանց մե լալու էրկու կաթ արտըսունք ընկավ ընդոր աչքերեն:

—Հա՛ն,—ըսին լալա-նազիր-վեզիրները,—գլխուտ ու արևուդ մեռնինք, Աղ-Բալասի,

մեր տեր ու թաքավոր, ինչ պատայավ քեզի:

Աղ-Բալասին էր, պատմեց ընդոնց, հալ-հեքիաթ, իրանց տան, իրան ու ախպոր՝ Ղուշ-Բալասու գլխու գյալաջեն: Է՛, թաքավորի ախպերը էլ չոլի օրթլախը գը մնամ: Վռազ նըստան ձիանները, լծին օսկե կառետը ու մե գլոխ, թաքավորի հետ հասան սեյրիբազ չայիրը: Էկավ թաքավորը իրանց նստած ախպրի քովը, տեսավ, օր կանչները տրորած, նոր գլխները բանցրցրած ին: Ղուշ-Բալասի, թե դրել իս, արի տես: Զարկեց Աղ-Բալասին գլխուն, տրորվավ, հըմը վախտն անցած էր: Քոռ-փոշման ետ էկավ էնի իրան քաղաքը, աշխրքի ամեն մե ծերը մե սուրանդակըմ ղրկեց, մենձ փեշքեշ խոստցավ մարդկանց, օր իրան ախպոր տեղը գտնին:

Թող էնի սպասե խաբրի, մենք հարցնինք Ղուշ-Բալասու հալը: Ղուշ-Բալասին էր, ախպեր ջան, էլավ տեղեն, բռնեց մե էրևցող ճամփե՛մ ու աղեն-արդունք թափելեն գնաց: Հորն ու մոր դարդը հերիք չէր, ախպերն էլ ընպես փոզմիշ էղավ կողքեն, էդի էլ հերիք չէր, մե թաժա կրակըմ ավելցավ սրտին՝ Ջեյրան Խանըմի սիրու կրակը:

Գնաց էնի, շատ գնաց, քիչ գնաց, շատ ու քիչը աստված գիտե, օրըմ՝ անոտի, օրըմ՝ ծարավ, օրըմ՝ չոլերու մեջը, օրըմ՝ ավիրակներու քյոլկեն, գնաց դեմ էղավ մե քաղքի՛մ: Պտտավ էդ քաղքի մեջը, մե օրըմ՝ էս դին, մե օրըմ՝ էն դին ու գուքար մեյդնի պատի տակը գը նստեր: Հըմը մե օրըմ դուս էկավ քաղքեն: Տեսավ, օր քաղքի ղրաղը չոբանն օճխար կարծըցու, գնաց բարևեց: Հըմը էդ վախտը էրկնուց մե անգեղա ղուշըմ սուրուտլամա իջավ սուրույի վրեն, օճխարըմ վերուց ու էլավ: Չոբանը նետն արձկեց ընդոր վրեն, հըմը փըստ անցավ, չդիպավ: Էդ վախտ գյոզըմ Ղուշ-Բալասին առավ նետն ու աղեղը ու հա էնելում պես, ցած բերավ ղշին, օճխարն ազատվավ:

Չոբանն ըսավ,—Տղա, դու թաքյին մարդ չիս էրևնա, դու ըսա ընձի քու այվալը, ես քեզի ճարըմ կէնիմ:

Ղուշ-Բալասին նստավ ու իրան գլխու գյալաջեն հարի մե էս քաղաքը հասնելը, ըսավ չոբնին: Չոբանը ձեն չը հանեց, մինչև իրկվան իջան էդ քաղաքը: Չոբանը ընկավ ընդոր առաջ, տարավ քաղքի յայտնի մարդկանցից մեկի տունը: Էդ մարդը բազրգյան Մարգարն էր: Էնի քաղքի մեջը մենձ ճոթեղենի թյուքյան ուներ ու մե աղջիկըմ ուներ: Տղա չուներ էնի: Էդ աղջիկը բանից պարզվավ, օր Մելիքսեթ բեկի Ջեյրան Խանըմի առաջի ջառիեն էր:

Ղուշ-Բալասին դուր էկավ բազրգյանի սրտին, ըսավ.—Դու ընձի՝ տղա, ես քեզի՝ հեր:

Ու բազրգյանի աղջիկ Սոֆի Խանըմն էլ արունը խառնեց ընդոր յարնին ու դառան հոգեկան քույր ու եղբայր:

Ժամանակըմ անցավ, Մարգարը իրան թյուքնները տվավ Ղուշ-Բալասու ձեռը: Ըսավ.—Որդի, ես հիմի մենձըցել իմ, առուտուրս դու էրա:

Գյոզըմ Ղուշ-Բալասի յիստակ ապրընքերու գինը իջըցրավ, հագավ, կապեց, դառավ մե ռաշիդըմ ու կայնավ խանութի մեջը: Քաղքի առուտուրը կայնավ: Ընդոր սեյր էնելու հըմար մարդիկ գը մտնեին թյուքանն ու չէին ուզե ընդից դուս գա: Խըլբըլդունը ընկավ էդ քաղքի վաճառականներու մեջը: Ու էնդոնցեն մեկը՝ Զաքար իշխանը, քունը կտրեց գլխեն ու զօր ու գիշեր գը մտածեր, թե ինչղ Ղուշ-Բալասու գլոխը օղյաթըմ հանե:

Մե յառավոտըմ Ղուշ-Բալասին գը լվացվեր, քուրն ընդոր փեժգիրըմ բերավ ու ընդոր աշկը ընգավ Ղուշ-Բալասու մատին, արմանքզարմանքն առավ ընդոր, կեցավ: Ճանչըծավ էնի Ջեյրան Խանըմի մատնիքը, պռոշը խաձեց, հըմը ձեն չհանեց: Էդև ըսավ.—Ախպեր ջան, քեզնեն մե խնդիրքըմ ունիմ, էդ մատնիքը չես տա՞ ընձի:

Ղուշ-Բալասին ըսավ,—Գլոխս ուզե, քուր, քուկըդ է, հըմը էդ մատնիքը իմ խաթրուս...

—Լավ,—ըսավ Սոֆի Խանըմը,—մե էսօր տու դնեմ մատս:

Հասկըցավ էնի ինչն ինչոց է ու մատնիքն առավ, անցրեց մատը, գնաց իրան ջառիությունն էնելու:

Էդ օրը Ջեյրան Խանըմը ղուտնի յորղանդոշկի միջեն ուշ էլավ ու տեսավ, օր իրան առաջի ջառիեն հըլը չկա: Չը հագավ իրան շորերը առանց էնդոր, կեցավ, հարի առաջի ջառիեն՝ Սոֆի Խանըմը էկավ: Ջեյրան Խանըմը նեղեցավ ընդոր վրեն, ըսավ.—Հարի էս վախտ ո՞ւր իս, մեկել հեղը չուշանաս:

Սոֆի Խանըմըն ըսավ.—Ջեյրան Խանըմ, դու Մելիքսեթ Բեգի աղջիկն իս, ես՝ Մարգար

բազրգյանի աղջիկ Սոֆին, քիչըմ կարգին,—ու ձեռը դրեց դոշին՝ թամալլա կայնավ:

Ջեյրան Խանըմի աշկըն ընկավ ընդոր մատի մատնիքին, ճչաց ու ուշքը գլխեն թռավ: Յոթը զօր, յոթը գիշեր բեուշտ ընկավ Ջեյրան Խանըմը: Թափան քաղքի ֆալջեքն ու էնոր անջախ ուշքի բերին: Հըմը ուշքի եկավ, ըսավ.—Մազըս՝ ոտիդ տակը, Սոֆի Խանըմ, էդ մատնիք ռ՞ւրդից քեզի:

Հըմը Սոֆի Խանըմը գիտեր, թե ինչն ինչոց է: Դու մի ըսի, Ջեյրան Խանըմն էլ է բութա ընկի, էն բոզ ձիավորը էնդոր սիրտն էլ Ղուշ-Բալասու սիրու կրակն է քըցի ու ընդոր մատնիքն էլ դրել է ընդոր մատը:

Սոֆի Խանըմն ըսավ.—Ջեյրան Խանըմ, հարի հիմի դու ընձեն բան չէիր պայե, էդ ի՞նչղ բան է:

Ջեյրան Խանըմը նստավ ու ընդոր պատմեց իրան բութա ընկնելը:

Սոֆի Խանըմն ըսավ.—Էդ մատնըքի տիրոջը քու քովը բերելը իմ պարտքըս էղնի, մինակ էդ մատիդ մատնիքը մե օրըմ տու իմ քովը:

Վերցուց էնդոր քովեն մատնիքն ու իրկունը էկավ տուն:

Ղուշ-Բալասին ըսավ,—Քուր, խաթրըդ չը մնա, մատնիս չե՞ս տա:

Ըսավ.—Ընչի՞ չէ:

Ու օր չտեսցրավ իրան հորական մատնին, Ղուշ-Բալասին էր, ճչաց ու ընկավ, ուշքը գլխեն գնաց:

Խոսքը չերկնցունք: Մեկել առավոտը, եփ օր Ջեյրան Խանըմը մտավ իրան խաս բախչեն, տեսավ, օր իրան առաջի ջառիյի հետ բախչի դռնեն նես մտավ, մտավ մե ղարիբական աղջիկըմ: Աշկն առավ ընդոր մատի մատնիքն ու քիչ մնաց ուշկը գլխեն էրտար: Ազատեց իրան քառասուն ջառիեքուն, ըսավ.—Գնացեք քեֆ էրեք:

Ղուշ-Բալասին ու Ջեյրան Խանըմը մնացին իրար քով: Բութա ընկած տղա-աղջիկ, ախպեր ջան, խաս բախչի մեջը: Աղբըրները գըլգլան, հարուր ռանգի բիլբուլները կը ղունղունան: Բռնին էնոնք իրար ձեռ ու էդ անմահական բաղի մեջը խոշբեշ կէնեյին, էնոնց բերնեն վարդ կթափեր, ոտներու տակը ալվան-խորոտ կբուսեր:

Թող Ղուշ-Բալասին ամեն օր աղջկա ղլըղ մտած գա Ջեյրան Խանըմի քովը, հարի մե ճար ու իլլաջըմ էնին իրար հասնելու հըմար, մենք խաբարը տանք Զաքար աղից: Զաքար աղեն իմացել էր Ջեյրան Խանըմի սիրունության լուրը, ինքն իրան էնդոր հարսնացու էր դարձրե, հըմը ինքը ընդոր չէր տեսե: Օրն հարի իրկուն գը ֆռռար խաս բախչի բոլորը, հըմը՝ իզուր, Ջեյրան Խանըմը էնդոր ղրկած մարդկանցը ետ էր դարձրե: Օրըմ էլ, օր էնի կը պըտրտեր խաս բախչի բոլորը, իրիկվա պայ, տեսավ, օր խաս բախչի բադանից մե աղջիկըմ թռավ անցավ էն կողմ, իրան ղալաբը հանեց:

Զաքար աղեն ճանչցավ Ղուշ-Բալասուն: Հըմը դուզ գնաց թաքավորի պալատը: Թոփ էրավ իրան պես մե քանի՛մ թյուքընջեքու ու ըսավ թաքավորին, թե.—Մե ղարիբ լակոտըմ սաղ քաղքի առուտուրը կայնցրավ, հերիք չէ, հիմի էլ գողտուկ գը տեսնըվի իմ հարսնացույի հետ:

Բերին Ղուշ-Բալասուն դատի առաջ: Էդ վաճառականները իստակ կայնան, ըսին, օր.—Էդ մարդը կախարդ է, բդի քաղաքը էդ կախարդից ազատվի, թե չէ, ինչըղ կեղնի, օր մեր առուտուրը սաղ կայնըցրավ, դարձրավ իրան:

Զաքար աղեն էլ ըսավ, օր.—Հըմը էդ կախարդության միջոցով էլ էդ մարդը գողտուկ գը տեսնվի իմ հարսնացուի հետ:

Դատավորը վկա ուզեց էնդորեն: Զաքար աղեն բերավ մե ջնդրար մարդըմ ու կնիկըմ: Էնոնք ըսին,օր.—Ինչ օր կըսե Զաքար աղեն, դուզ է, մենք մեր աշկով տեսանք:

Ղուշ-Բալասուն կախարդի աբով որոշեցին կախաղան հանել: Քաղքի օրտըլաղը քաշեցին կախաղանը, ժողովուրդը թոփ էղավ, թագավորին կաշեյին, օր գար: Թաքավորն էկավ, իրան լալա-վեզիրով նըստավ: Թող նստի, մենք խաբարը տանք Ջեյրան Խանըմեն:

Առաջի ջառիյեն՝ Սոֆի Խանըմը, լերդապատառ ընկավ ընդոր քովը, ըսավ.—Տունդ չը քանդվի, Ջեյրան Խանըմ, Ղուշ-Բալասուն էս է կախաղան գը հանին:

Էդ վախտ թոկը գը քցեին Ղուշ-Բալասու շլինքը: Բիրդան, վազվազ, մազերն արձակ, բոբլիկ, մե օսկեցե ոտնըմանըմ ձեռը վազելեն էկավ ու ընկավ թաքավորի չոքերու առաջը:

—Ապրած կենաս, թագավոր,—ըսավ էնի, —հարի իմ դատը չվերջացնիք, էդ մարդուն չպտի կախիք:

—Ի՞նչ դատ է,—ըսավ թաքավորը:

—Իմ օսկե մաշիկի թաքը գողցավ Զաքար

աղեն, ահան, մե թաքն էլ իմ ձեռն է, գը խընդրվիմ հրամայիս՝ իմ մաշիկը տա:

Սաղ դառան Զաքար աղի էրեսն աշին:

—Զաքար աղա, ճիշտ է՞,—ըսավ թագավորական դատավորը:

—Այ լիրբ, անսկամ, իմ էրես՝ սև, քուկդ՝ ճերմակ, ես քու էրեսը տեսել ի՞մ:

—Ճիշտ է՞,—հարցրավ դատավորը աղճկան:

—Ճիշտ է,—ըսավ աղջիկը:

—Էլ ի՞նչը գողցավ էնի քու օսկե մաշիկը,—ըսավ դատավորը:

—Թաքավորն ապրած կենա,—ըսավ աղջիկը,—թե օր էնի իմ էրեսը չէ տեսե, ի՞նչղ է դարձրե ընձի իրան հարսնացու ու էդ խեղճ ջայելին էլ կախաղանի տակ է կայնցըրե: Չէ՞ օր ես Մելիքսեթ Բեկի աղջիկ Ջեյրան խանըմն իմ:

Հալղոլանը սառավ: Զաքար աղեն էրավ, օր փախնի, հըմը բռնին էնոր:

—Կանչեք վկեքուն,—ըսավ դատավորը:

Էկան:

—Ինչ վկայություն օր տվել իք, ճիշտ է՞,—ըսավ դատավորը:

Էդ վախտ ջնդրար մարդ ու կնիկ լացան: Մարդն ըսավ, օր.—Իրանք սուտ վկայություն ին տվի, հոգեքը սևցրել ին: Զաքար աղեն ընդոնց ժամի պատի տկեն վերցրի տուն է տարի, բոլըմ օսկի է տվի, օր գան էդ վկայությունը տան: Ես էսինչ քաղաքի կուպեց Տիկրանն իմ, էսի իմ կին Փար-Գյուզալը, մենք թաքավորի կողմանե աքսորված ինք:

Օր էդ բանը ըսավ ջնդրարը, մեկ էլ տեսան, օր թաքավորի ուշկն անցավ, կախաղանի տակը Ղուշ-Բալասու ուշկն անցավ: Ժողովուրդն ու դատավորները իրար խառնվան: Եփ օր ուշկի բերին էնոնց, թաքավորը կայնավ ու սկզբից հարի մե վերջ պատմեց իրանց գլխու էկած գյալաջեն:

Կուպեց Տիկրանը փաթըվավ Աղ-Բալասուն, Բար-Գյուզալը՝ Ղուշ-Բալասուն: Իրեք օր ու գիշեր իրանց կարոտներն առան իրարուց:

Իրեք օրվանից էդև էրկու ախպըրդանը զորք կապին, էկան իրանց քաղքի թաքավորի վրեն: Գրավին քաղաքը: Թաքավորի գլոխը թոցրին, էն լալին կապին մե ղըռ ձիու՝ պոչեն ու բաց թողին չոլերը:

Աղ-Բալասին Ղուշ-Բալասուն կարգեց իրանց երկրի թաքավոր:

Նշանեցին Աղ-Բալասուն Մարգար աղի աղջիկ Սոֆի խանըմի հետ, Ղուշ-Բալասուն՝ Ջեյրան Խանըմի հետ ու յոթը զօր, յոթը գիշեր կայնավ էնոնց հարսնիքը: Յոթը զօր ու գիշեր կերան-խմին, քեֆ էրին:

Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Օղորմի լավ մարդու հորը, գեշ մարդն իրան գյոռը չդադրի:

Էրդկեն ընկավ իրեք խնձոր: Մեկը՝ ըսողին, մեկելը՝ անգաճ էնողին, էն մեկն է՝ պզտլի էրեխանցը:

13(13). ԹԱԳԱՎՈՐԻ ՏԸՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակոց քաղքի՝ մեջ կար մե թագավորըմ: Էդ թագավորն ուներ յիրեք տըղա, յիրեք աղջիկ: Շատ սիրուն, մեկը մեկից սիրուն աղջըկներ էյն: Ո՞ր թագավորություններից ըսես էկան աղջըկներուն յուզելու, թագավորը չը տվավ:

Մե օր էլ թագավորը յելավ տեսավ, օր մե հատ չորս գլխանի դև նըստած է սեղանաքարին, յիրան ծառաներուն ղըրկեց, ըսավ.—Գնացեք տեսեք՝ ինչ է յուզում:

Դևն էկել էր թագավորի մենձ աղջըկան էր յուզըմ՝ հարսնացու:

Թագավորը պատասխանեց, օր.—Ուրիշ յերկըրների թագավորներ եկել են յուզելու, յինքը չի տըվվե՞, հըմի դևերո՞ւն բըդի աղչիկ տա, դևին պատասխանեց, օր,—գնա՛, ես այլակերպ մարդու աղջիկ չեմ տա:

Դևը յելավ սո՞ւս ու փուս գնաց:

Քանի՞մ ամիս յետև մե ուրիշ դև էկավ՝ յոթ գըլխանի, օր թագավորի օրթանջիլ աղջկան յուզե:

Ըդոր էլ ատկազ էրավ, չը տվավ:

Վեց ամիս չէր անցե, մե ուրուշ դև էկավ՝ տաս գըլխանի: Էս դիվանը յիրեք ախպեր են: Թագավորը նորից ատկազ էրավ, էս էլ գնաց, յինքը մենձըցել էր, էլ չէր կըրըմ կառավարե:

Կանչեց տըղոնցը, ըսավ օր.—Ես ձեզի օսյաթ եմ էնըմ՝ յում կարաք իմ աղջըկներուն տըվեք, դիվանուն չը տա՛ք:

Միջայլոց թագավորի տունը մե հատ ջիուդ էր ապրըմ, ուներ մե հատ ձի՝ յիրեք ոտնանի: Թագավորը յիրան յարևը ձեզի է բաշխըմ, վախճանվըմ է... Թագավորի վախճանվելուց ետքը դիվանը յիմանըմ են, նորից շարունակըմ են գալ՝ աղջիկ յուզելու:

Մենձ ախպերն էկավ, ախպըրտիքը թոփ էղան յիրար գըլխու, ըսկըսեցին մուշավարա էնել: Պըզդի ախպերն ըսավ.—Ընձի մե քուրըմ չի՞ հասնի, ես իմ քուրոջը տալըմ եմ դևին:

Ախպըրտիքը ռազի էղան, վերցըրին մենձ քուրոնջը տըվին մենձ դևին: Դևն իրան բաժինն առավ, գընա՛ց...

Վախտըմ անցավ, օրթանջիլ դևըն էկավ: Ըստոնց տունը կըռիվ-ղալմաղալ ընկավ: Մենձ ախպերն ըսավ.—Մե քուրոնջս սխալվանք, տըվինք, ըստուր չենք տա:

Պըզդի ախպերը շատ ուժեղ էր, ըսավ.—Ես կուտամ, թե տըղա եք, արեք դեմ կայնեք:

Վերցըրավ էդ քուրոնջն էլ օրթանջիլ դևուն տըվավ, առավ գնաց:

Քանի՛մ տարի անցավ, նորից փոքր դևն էկավ, էն օր տաս գլուխ ուներ:

Տըղեն ըսավ.—Օրենքով էլ օր քըցեք, պըզդի քուրը պըզդի ախպորն է հասնըմ:

Մեկել ախպըրտիքը կայնան ըսին.—Ըբը մեզի յընչի՞ գլխե գըցիր, թող քու քուրոջըդ տայիր, տանեյին:

Էսիկ վերցրավ էդ քուրոնջն էլ պըզդի դևին տվավ, առավ՝ գնաց: Տան մեջ էլ կինարմատ չը մնաց: Էկան յիրեք ախպըրով մուշավարա էրին, օր ամուսնանան:

Գընացին մե յուրիշ թագավորի քովը, էդ թագավորի աղջիկը յուզեցին մենձ ախպորը, լալի աղջըկան՝ օրթանջիլ ախպորը, վազիրի աղջըկան՝ փոքրին: Էս պըզդի ախպոր կընիկը էնքան սիրուն էր, օր ըսըմ էր. «Յարև, դուս մի՛ յելնի, լուսնա՛կ, դուս մի՛ յելնի, ես յելա»:

Ջոկ-ջոկ հարսնիք էրեցին, ամենքը յիրան հարսնըքվորով ճամփա յընգավ դրպա տունը՞:

Էկան, էկան, չոլի մեջտեղը չադըրները զարկեցին, օր հարսնըքվորը դինջանա: Յառաջ սովորություն կար, փեսեքը տունն էյն մընըմ, հարսնքվորն էր հարսին տուն բերըմ: Փեսեքը տունն էյին: Յառավոտուն յելան տեսան, օր էրկու ախպոր հարսնըքվորը գալըմ է, պըզդի հարսի չադրի բոլորը շայմար օձը գլուխը բերե պոչի վըրեն, պառկել է:

Հարսնըքվորը կայնավ ըսավ.—Ի՞նչ ես յուզում, ընչի՞ ես էդման էրե:

Շայմարն ըսավ.—Ես,—ըսավ,—փոքր տըղին եմ յուզըմ, թե կէրթաք, ղըրկեք գա՛, ես կը քաշվիմ իմ բնակարանը:

Էդ պայմանն օր դըրավ, պըզդի տըղի հարսնըքվորը քուլլի սև հագան:

Ախպըրտիքը հեռադիտակները դըրեցին, տեսան, օր էրկու հարնըքվորը ուրախ-զվարթ մոտենըմ են քաղքին, գալըմ են, փոքր տըղի հարնըքվորը յետևից է գալըմ, շատ տըխուր ու տըրտում:

Ախպերտիքն ըսին.—Էս ի՞նչ խաբար է, էս ինչ է պատայե՞:

Ըսին.—Ըսման, ըսման...

Փոքր ախպերը յելավ ձին դուս քաշեց, խուրջինըմ օսկի քըցեց ձիու թամքը, ընկավ ճամփա: Հասավ յիրան հարսնըքվորին, ըսավ.—Էս ի՞նչ է էղե, էս ընչի՞ ես ըսման գալըմ:

Ըսին.—Էսպես դժբախտություն է էղե:

Տըղեն խոսըմ էր, մեկ էլ տեսավ՝ ախպըրտինքը ձիանով յիրան հասան: Ախպըրտանցն ըսավ.—Յեդ դառեք, թե սաղ էկա՛... իմ կընկաս կը պայեք՝ իմն է, թե օր չեկա, ձեր քուրն է, կամուսնացընեք:

Ձին քըշեց գնաց: Շատ գնաց, քիչ գնաց, յանձրևը բռնեց, էման մե յանձրևըմ էկավ,օր էս մարդը ոտեն-գլխեն ջուր դառավ: Յարևը դիպավ, դիպնի ձեր վըրա, տըղեն ձիուց իջավ, պլաշչը փըռեց, օսկին լըցրեց վըրեն, յիրան շորերը փըռե, չորցընըմ էր, մե հատ մուկ բընից յելավ, մե օսկի՛մ վերցըրեց, փախավ մտավ բունը: Տըղեն ըսկըսեց բունը քանդել, էդ է, հայ հայ է, բունը քանդըմ էր, մուկը լիզու յելավ, տըղին ըսավ.—Տըղա,—ըսավ,—դու բըդի էրթաս էնպե՞ս տեղ, օր քո գլխուն փորձանք կա: Արի՛, կեղնի, ընձի մի ըսպանե: Վերու դի ջիբըդ, ախլուխի մեջը, յուր-ուր օր բըդի էրթաս, էնչ օր բըդի էնես, ես քեզի կըսեմ:

Տըղեն լսեց, վերցըրավ մուկը, աղլուխի մեջ փաթըթեց, դըրավ ջեբը: Ձին քըշելով՝ հասավ Շայմարի բնակարանը: Շայմարին բարև տըվավ, Շայմարն ըսավ, օր.—Դու բըդի էրթաս էսինչ թագավորի աղջիկը ուզես ընձի համար:

Տըղեն ըսավ.—Յուրտե՞ղ է էդ թագավորը:

Շայմարը ցուց տըվեց ճամփեն: Տըղեն գնաց ցույց տըված քաղաքը: Յիրկուն էր, քաղ-

քից ղըրաղ մե պառվի՛մ տուն գնաց, ղոնաղ էղավ: Պառավն ուներ տաս հատ հավ, մե պըզդի սենյակըմ:

—Նանի ջան,—ըսավ,—մե տեղըմ էրա,—ըսավ,—ես ըստեղ ապրիմ:

Պառավն ըսավ.—Տաս հատ հավ ունիմ,—ըսավ, ես եմ, մե պըզդի օթախըմ, տեղ յուրտի՞ց:

Տըղեն ըսավ.—Ի՞նչ կեղնի, մեր ու տըղա ենք, յիրար հետ կապրինք:

Հանեց մե բուռըմ օսկի տըվավ պառվին: Պառավն օսկին օր տեսավ, խելքը գընաց:

Պառվին ըսավ.—Էս օսկիքն էլ առ (հանեց էլի տըվավ), գնա մե հատ կռավատ բե, յորղան ու դոշակ, ես քընիմ:

Պառավը յառավոտուն գնաց, ինչ օր թամբա էր էրե, առավ էկավ: Հավերը լցեց յաշկի՛մ մեջ, հաց կերան, էլի պառկան քընան:

Յառավոտուն, բարիլուսը բացվի ձեր վըրա, բարիլուսը բացվավ, յելավ վըլացվավ, ըսավ,—Պառավ, գիտե՞ս,—ըսավ,—բըդի էրթաս ձեր թագավորի աղջիկը յուզես ընձի:

—Վա՛յ,—ըսավ,—բալա ջան, գործ չունիս, ափսոս չէ՞, քեզի պես տըղեն էրթա էդոր դուռը: Էդ թագավորը էնքան մարդու գլուխ է զարկե, օր մարդկանց գլխներով բերդ է շինե:

—Ընչի՞, նանի,—ըսավ:

—Ընդուր հըմար, օր էդ աղջիկը չի խոսըմ, վո՛ւվ խոսցըրավ, ընդուր էլ կառնի:

—Գընա՛,—ըսավ,—նանի, մի՛ վախենա:

Նանին գնաց, իրանց օրենքով մոտեցավ թագավորին բարև տվավ, ըսավ.—Թագավորն ապրած կենա, ես մի երիտասարդ տըղա ունիմ, գուզեմ ամուսնացնեմ քու աղջկա հետ:

Թագավորն ըսավ.—Պառավ, էս երկիրը կապրիս ու տեյ հըմի պայմանը չիտե՞ս, գընա տըղիդ ըսա՝ գա, պայման կապենք:

Էկավ տըղին ըսեց, տըղեն յելավ գնաց թագավորի քովը, ըսավ.—Ի՞նչ պայման է:

Թագավորն ըսավ.—Պայման կը դնեմ քեզի, թե իմ աղջկաս կըրացիր յերեք անգամ խոսըցնե՞, զատի աղջիկը՝ քեզի, թե օր չկրացիր, գլուխդ կզարկեմ:

Թագավորի տըղա էր, հասկընըմ էր, յելավ պալատի մեջը յոթը կըտրեց, յոթը կապեց, ըսավ.—Թող քու ըսածն էղնի, թագավորն ապրած:

Թագավորը կանչեց յիրան սինոտին, կանչեց մինիստըրներին, գրագրներին, պայմանն ըսկըսեցին գրել: Տըղեն ստորագրեց էս պայմանով, օր. «Յիրեք անգամ իմ աղջըկաս խոսըցնես, իմ աղջիկը քուկըդ, թե չը խոսըցնես, քու գլուխը կզարկեմ»:

Յէքսի օրը էկավ տըղեն, օր խոսըցնե աղջկան: Էկավ նես մըտավ, բարովեց, բարով տըվավ, բարով առավ, մուկն ըսավ.—Տըղա՛, ի՞նչ բըդի խոսաս, ինչը՞ղ բըդի վարվիս, յընչի՞ չես հարցընըմ:

Տըղեն ըսավ.—Յեսիմ,—ըսավ, ես էլ չիտեմ:

Մուկն ըսավ.—Հըմի ընձի լըսե,—ըսավ,—յինքը՝ աղջիկը, փարդի յետևը կայնած է:

Նես օր մըտան, աղջիկը յիրան տըկի բալիջը տըղին տըվավ, օր նըստի վըրեն:

Էկա՛ն... սինոտով, նազիր-վեզիրով, գիտուններով թոփ էղան թագավորի բոլորը:

Թագավորն ըսավ.—Դե, տըղա, բանըմ ըսա, օր մենք յանգաջ էնենք:

Տըղեն ըսավ.—Թագավորն ապրած կենա, ես օտար երկրից գալած մարդ եմ, մե բանըմ դո՛ւք ըսեք, ես անգաջ էնեմ:

Թագավորն ըսավ.—Պայմանի համաձայն՝ դու բըդի խոսաս:

Մուկը տըղին ըսավ.—Մուղաթ կեցի, ավելպակաս բան չխոսաս: Բոլորըդ աշե՞, տե՞ս՝ կատու-մատու չէղնի, օր հանկարծ ընձի բըռնե ուտե, կատուն ընձի թշնամի է:

Տըղեն չորս բոլորը աշեց, մկին ըսավ.—Չէ,—ըսավ,—կատու չկա:

Մուկն ըսավ.—Օր էդման է, վերու տկիդ բալիջը, ընձի էլ հետը շպրտի սենյակի օրթալըղը:

Տըղեն վերուց յիրան տըկի բալիջը, մուկը դըրավ մեջը, շըպրտեց օրթալըղը:

—Լավ,—ըսավ,—յէսօր թող իմ տեղակ բալիջը խոսա, մենք յանգաճ էնենք:

Թագավորն ըսավ.—Քու բանն է, յում ուզըմ ես՝ խոսըցընել տուր:

—Բալիջ ջան,—ըսավ,—խոսա՛:

Բալիջը ձեն տըվավ, ըսավ.—Ի՞նչ խոսամ, շատ օր յուզըմ եք, հըմի կըսեմ, դուք իմացեք: Ապրած կենաս,—ըսավ,—թագավոր, սինոտ, երիտասարդներ:

Յիրեք երիտասարդ սիրահարված էյն մե աղջկա՛մ վըրա: Մեկը բըժիշկ էր, մեկը լոտչիկ էր, մեկն էլ՝ իմաստուն: Աշխատանքի վախտ էկան իրար քով: Էս իմաստունը ըսավ.—Գիտե՞ք օր մեր սիրահարը նեղ, անելանելի վիճակի մեջ է, ծանդըռ հիվանդ պառկած է յերեսին, հասնի՞նք, թե՞ չը հասնինք:

Բըժիշկն ըսավ.—Ա՜խ, թաքիլան հասնիմ, էնքան, օր հոգին տըրըվա, յես յեր կը բերեմ:

Լոտչիկն ըսավ.—Հեծեք, էս մինուտիս ձեզի տեղ հասցընեմ:

Հըմի կը մտածեք ուժելի՞ էն վախտ սամալոտ կար: Իհարկե էն ժամանակ սամալոտ չըկար, խալի էր փըռած: Խալու վրա նըստան լոտչիկը, կախարդական գավազանով մե հատ զարկեց, աչքերը թարթեցին, խալին տարա՛վ հասցըրեց աղջկա քովը:

Բըժիշկը հասնելուն բաշտան հանեց դեղ տըվավ, աղջիկը ալբեալ աչքերը բացավ, մորե մեկ էղավ, լավցավ:

Հըմի, թագավորն ապրած կենա, դուք որոշեք, էդ աղջիկը յո՞ւմ կը հասնի:

Ըսկըսեցին վիճելը՛: Մեկն ըսավ.—Ք'ասնի բըժշկին, բըժիշկը դեղն օր չը տար, աղջիկը չէր լավնա:

Մեկն ըսավ.—Խալի քըշողին ք'ասնի, խալին օր տեղ չը հասցըներ, բըժիշկը ինչը՞ կըռնար վախտին դեղը տա:

Մեկն էլ ըսավ.—Թե իմաստունը չիմանար, օր աղջիկը հիվանդ է, ինչ կը գինային, օր էրթային:

Աղջիկը ֆարդեն բացավ, ըսավ.—Թագավորական սինոտ է նըստե, գիտուններ ու գիտնականներ կան, նըստել եք, հեչ մեկըդ բան չեք հասկընըմ: Չիտե՞ք, օր աղջիկը կհասնի էդ իմաստունին:

Բարիջն ըսավ.—Թե էդ աղջիկը կը հասնի իմաստունին, դու էլ կը հասնիս էս տըղին:

Տըղեն բալինջը քաշեց, բերավ դըրավ տեղը, մուկը միջեն վերցրավ, դրավ ծոցը: Յելավ տըղեն գնաց:

Յէքսի օրը էկավ, աղջիկը բերավ մե սամավարըմ, դըրավ, ըսավ.—Թե տըղա է, թող սամավարին խոսըցնե, տեսնինք՝ կըրա՞մ:

Էլի թոփ էղան, ինչը՞ օր յառաջին օրը. թագավոր, սինոտ...

Տըղեն մուկը ուսուլով բաց թողավ սամավարի մեջը:

Տըղեն ըսավ.—Բանըմ չեք ըսե, յանգաջ էնենք:

Թագավորն ըսավ.—Դու բըդի ըսես:

Տըղեն ըսավ.—Թող էսօր էլ սամավարը խոսա, մենք յանկաջ էնենք:

Ըսին.—Լավ:

Սամավարն ըսավ.—Ինչ ըսեմ,—ըսավ,—թագավորն ապրած կենա, դե օր յուզըմ եք, բանըմ կը պատմեմ, թող տըղեն դինջանա:

Յիրեք յընկեր ճամփա էյն էրթըմ, մութը կոխավ, ըստոնք ճամփեն կորցըրին, մընացին անտառի մեջը: Չորս դին՝ ջանավար, ինչ էնեն: Մուշավարա էրեցին.—Եթե յիրեքս էլ քընի՞նք, գազանները գուգան, ք'ոշոտեն մեզի:

Մեկը տերտեր էր, մեկը՝ դերձակ, մեկը՝ դուրգար: Դուրգարն ըսավ.—Օր ըդման է, դուք քընեք, ես գիշերը կը կայնիմ հերթի, ձեզի ձեն կուտամ, ընձի կը փոխեք:

Դուրգարը կայնավ հերթի: Որպեզի չը քընի, ուրագը քաշեց կողքեն, փետ կըտրեց՝ մե գեղեցիկ մարդու նմանակ: Թևերը, ոտները, գլուխը, յամեն ինչ պատրաստեց, կայնըցըրեց: Յիրան ժամը թըմմավ, գընաց դերձըկին ձեն տըվավ: Դերձակն յելավ տեսավ, օր յիրանք յիրեք հոգի էյն, դարձել են չորսը: Մոտեցավ տեսավ, օր փետից շինած է. դուրգարը իրա մարիֆաթն է ցուց տըվե: Ըսավ. «Օր էդպես է, ես էլ իմ մարիֆաթը ցուց տամ»: Յինքն էլ թփերից շոր կարեց, հագցրավ յիրան: Ժամը թըմմավ, գընաց տերտերին ձեն տըվավ: Տերտերն յէլավ տեսավ, օր յիրանք յիրեք հոգի էյն, հըմի դառել են չորս: Տերտերը մոտեցավ, աշեց, աշեց, տեսավ, օր շինած մարդ է, դերձակն յիրան շնորքն է ցուց տըվե, դուրգարն՝ իրան:

Տերտերը չոքերը քըշտեց: Աղոթրանը բացվըմ էր, աղոթըրանը բացվի ձեր վըրա... Բարիլուսի հետ էնքան լացավ, էնքան պաղատեց, էնքան չոքավ ու յելավ, ասսուն աղաչեց, օր... էդ փետը դառավ մե հատ գեղեցիկ աղջիկ:

Թագավորն ապրած կենա,—ըսավ սամավարը,—էդ աղջիկը ըդոնցից որո՞ւն կը հասնի:

Ձեզի եմ հարցընըմ, դուք էլ մըտածեք, որի՞ն կը հասնի[54]:

Մեկն ըսավ.—Ք'ասնի տերտերին:

Մեկը՝ դերձակին, դուրգարին:

---

[54] Բանասացը դիմում է հեքիաթ լսողներին:

Աղջիկը փարդեն բացավ ըսավ.—Ճիշտ է, գրագետ մարդիկ եք, հըմը հեչ մեկըդ բան չեք հասկընըմ: Չեք բաշարըմ մե կարգին որոշում հանեք:—Ըսավ.—Եթե դուրգարը չշիներ, դերձակն ու տերտերը ինչ բըդի կրայն էնեյն: Դերձակն ինչ բըդի կարեր, ում հըմար, տերտերն ում բըդի խոսըցըներ կամ ընչի էր լալըմ, աղաչըմ: Էդիկ ք'ասնի դուրգարին:

Սամավարն ըսավ.—Եթե էդ աղչիկը հասնըմ է դուրգարին, դու էլ հասնըմ ես էս տըղին:

Յելավ տըղեն, շարունակեց յիրան ճանփեն:

Թագավորի աղջիկը տարավ սամավարը տեղը դրավ, նըստավ առաջը, ըսավ.—Դե հըմի էլ ընձի հետ խոսա: Է՛, սամավարը կը խոսա՛...

Յէքսի օրը տըղեն էկավ, սենյակի մեջը մե խալի'մ էր փըռած: Էլի էկան թոփ էղան: Տըղեն մուկը հանեց գուղտուկ բաց թողավ խալու տակը: Ըսավ.—Թող էսօր էլ խալին խոսա:

Թագավորն ըսավ.—Յո՛ւմ կը խոսըցընես՝ խոսըցըրու, մեզի հըմար մեկ է:

Խալին ըսավ.—*Թագավորն ապրած կենա, յիրեք ընկերով ճամփա էյն էրթըմ, յիրեք ընկերոնցից երկուսը անխիղճ էին, մեկը խղճով մարդ էր: Էս բարեխիղճ ընկերը քանի'մ կապեկ փարա ուներ քովը, էսոնք մտածեցին. «Սպանենք, էդ փարեքը ձեռից առնինք»:*

Ըստոնք էս մըտքին էյն, ճամփեն գալած տեղը մե ղուշ նըստավ էդ խղճով մարդու ումուզին, բերնից հանեց մե հատ խնձոր, տըվավ էդ մարդուն, ըսավ.—Կիսե, կեսը մե ընկերոջըդ տուր, կեսը՝ մեկելին:

Տըղեն խնձորը կիսեց, տըվավ ընկերներին: Ըստոնք կերան ու ինչ օր մտածել էյն, փոշմընան: Ըսին.—Ընչի՞ էդ մարդուն քանի'մ կապեկի'մ հըմար ըսպանենք:

Էդ ղուշը նորից նըստավ ումուզին, էս անգամ մե օսկեցե ձուկ տըվավ: Ձուկը դառավ աղջիկ: Էդ աղջիկը որի՞ն կը հասնի:

Յիրար մեջ որոշեցին՝ թագավորի լալա, վեզիր, չը կրացին պատասխան տա: Աղջիկը փարդեն բացավ, ըսավ.—Ըտից հեշտ գո՞րծ, աղջիկը ք'ասնի բարեխիղճ մարդուն:

—Օր ըդման է,—ըսավ խալին,—դու էլ կը հասնիս էս տըղին:

Թագավորն ըսավ.—Աղջիկըս քեզի հալալ է:

Յէքսի օր կառեթները սարքեցին, կերուխում էրին, հարս ու փեսին ճամփա քըցեցին՝ դըպա Շայմարի հողը: Աղջիկը գիտեր, թե էս թագավորի տըղեն յիրան հըմար է տանըմ կընիկ:

Տըղեն գընա՛ց հասավ Շայմարի հողը:

—Հա՛,—ըսավ Շայմար օձը,—տըղա՛, բերեցի՞ր:

Ըսավ.—Բերել եմ:

—Դե իջեցրու ձիուց:

Տըղեն աղջըկան իջեցրեց ձիուց, կայնավ:

Շայմարն ըսավ.—Չորս հատ ղասըխ շինե, ղասըխները գետին զարկ, էման, օր ղայիմ էղնի: Բեր աղջկան պառկեցրու, ոտներն ու ձեռները ղայիմ կապե ղազըխներուց, թուրդ քաշե:

Տըղեն աղչկան պառկեցրեց, թևը, ոտը քանդըրով կապեց էտ ղասըխներուց, թուրը քաշեց կայնավ գլխավերը:

Շայմարն ըսավ.—Թագավորի տըղա, թուրդ քաշել ես չէ՞,—գաղտուկ ըսավ,—թուրըդ վըրա կը բերես, բայց չես խփի, կը վախեցնես, աղջկա բերնեն ինչ օր գելնի, էլ չես աշե, կը կըտըրտես, եսիր աղջկան էման բըդի կիսես, օր կեսը՝ ընձի, կեսը՝ քեզի:

Տըղեն թուրը քաշեց, թուրը քաշելու բաշտան աղջիկը յետ տըվավ, հա յետ տըվավ: Էդ բաշտան բերնից մե շայմարըմ դուս էկավ: Տըղեն շայմարին կըտըրտեց, բայց էն վոխտ էն Շայմարը ճըվաց.—Դու,—ըսավ,—հալալ չես կիսըմ:

Տըղեն էլի թուրը վըրա բերեց, աղջիկը նորից հետ տըվավ, բերնից մե շայմարըմ դուս էկավ, էսոր էլ կըտըրտեց: Էլի Շայմարը ճըվաց, թե.—Դու սխալ ես բաժնըմ,—ըսավ,—էրկու գրամ քու սամթեդ յավել էր: Նորից,—ըսավ,—թուրըդ քաշե:

Նորից թուրը քաշեց, բերնեն մե շայմարըմ էլ թըռավ, էդ շայմարն էլ կըտրտեց: Թագավորի տըղեն դառավ տեսավ, օր մե երիտասարդ կողքը կայնած է:

—Հա՛,—ըսավ,—այ տըղա էս դու յուրտի՞ց էկար:

Ըսավ.—Ես էն թագավորի տըղեն եմ, օր դու ընդից աղջիկ բերեցիր: Էսիկ օր կա, իմ քուրս է: Էնքան անխըճություն էրավ, օր ես շայմար էղա, ընկա չոլերը: Ես գիտեյ, օր դու կբե-

ռեյիր իմ քուրոջը: Էդ մուկն օր կա, ես էյի: Էս աղջկան բերեցիր հասցըրիր տեյ ըստեղ, հըմի գուզես տար, գուզես թող: Ես էլ էրթամ իմ հոր ապարանքը: Էս է քըսան տարի է՝ էս չոլերու, քարուքըռեքի մեջ ման էյ գալըմ:

Տըղեն ըսավ.—Ես իմ անունով բերել եմ, ես էլ կըրամ տանի:

Թող թագավորի շայմար դառած տըղեն էրթա յիրան հայրենիքը, էս թագավորի տըղեն էլ վերցրեց աղջկան՝ դըպա իրան հայրենիքը: Էկավ հասավ յիրանց քաղքին մոտիկ, էրկու էրեխա կանչեց, հանեց էրկու օսկի տըվավ, ըսավ.—Գնացեք ախպըրտանցըս ըսեք, օր ձեր ախպերը գալըմ է, կընիկն էլ հետն է բերե:

Էս էրեխանցից մեկը փալասանք էր, ջեբերն էլ ծակ էյին, մեկելը լավ էր: Էս ծակջեբ տըղեն հասավ քաղաք, ախպրոնցն ըսավ, չհավատացին, ըսին.—Ինչ նշան կա քովըդ:

Էրեխեն ջեբերը աշեց, օր օսկին ցուց տա, ծակ ճեբի մեջ օսկի կը մնա: Վերցրին էրեխին քըցին չոբլուկը, ընդից՝ ղազանոցը: Էդ սըրին մեկելն էկավ, ըսավ.—Աչքներդ լուս, ձեր ախպերն էկավ:

—Ինչ նշան ունիս:

Ըսավ.—Օսկի:

Հանեց, օսկին ցուց տըվավ: Ըսին,—Մեկելին էլ հանեք ղազանոցից, մեղք է:

Ըստոնք յիրանց փեշյաշն առան, ճամփու դըրին: Յիրանք էլ յելան կառեթներըն հազըրեցին, գնացին ախպոր յառաջը:

Ըսկըսեցին քեֆը... դավուլ զուռնեն զարկելով՝ բերեցին պալատը:

Եբ օր պալատը մըտավ, տըղեն հարցըրավ.—Իմ կընիկը յո՞ւր ա:

Տեսավ, օր հաստատ չկա, ըսավ.—Ինչ մուխաննաթ ախպըրտիք էյիք: Չէ՞, ես թամբա էրի, օր էկա՝ իմ կընիկն է, թե օր չեկա, ձեր քուրունջ պես կը կարգեք:

Ախպըրտինքը պատասխանին, օր.—Էն ջհուդն օր մեր տանն էր, յիրեք ոտնանի ձի ուներ, կընկադ փախցըրեց:

—Հայ, հայ,—ըսավ,—ես,—ըսավ,—Շայմարի ձեռից քուր բերեմ, էսօր ջհուդը իմ կընկան տանի՞: Ախպըրտինք ջան,—ըսավ, էսոր էլ կը պայեք, ինչ օր պետքն է, թե սաղ էկա՞, իմ կընիկն է, թե մեռա, կը կարգեք ձեր քուրունջ պես:

Յելավ ձին հեծավ, յալլա, յոլ էրևա, ընկավ չոլը՞...

Շատ էր գընացե, քիչ էր գընացե, Աստված է խաբար, հասավ մե սարայի՞մ: Սարայի չորս բոլորը պըտըտավ, դուռը չգտավ: Նըստավ պատի տակը՝ պապիլոզ քաշեց, մուխը լուսամուտեն նես յընգավ: Մե հատ կին լուսամուտը բացեց, տեսավ, օր մեկը պապիլոզ է քաշըմ: Էդիկ էն աղջիկն էր, օր թագավորի տղեն տվավ դևին՝ կնության: Տեսավ յիրան ախպերն է, գժվավ, իջավ ցած:

—Վա՛յ, ախպեր ջան,—ըսավ,—դու ըստեղ ինչ ես էնըմ:—Ըսավ.—Հիմի դևը ուր որ է գուգա, քեզի հազար կտոր կէնե:

Նես մըտան, տեսավ, օր դևը մե մեծ ծառ քաշե դըրել է ումուզին, ինչ կենդանի ըսես, յառաջը խառնած՝ բերըմ է:

Բերավ ախպորը խալու մեջ փաթթեց, կայնըցրավ պատի տակը: Դևը իրան բերած անասունները տեղավորցըրավ, էկավ նես:

—Հը՛,—ըսավ,—կընիկ, իսանօղլու հոտ է գալըմ:

Ըսավ.—Ես իսանօղլի եմ, յամեն օր էլ էդ հոտը չե՞ս առնըմ իմ վըրեջեն: Դու չիտե՞ս, օր իմ վըրեջեն է գալըմ:

Ըսավ.—Կընիկ, դու ընձի չես կըրա խաբե, ախպրտանցիցդ մեկնումեկն է էկե, սուտ մի ըսա, թե մենձ ախպերըդ էղնի՞, յառկիս տակը քըցեմ՝ կաթըմ յարուն գետին չնգնի: Թե օրթանջիլն է, էլի ըդման կէնեմ: Պզդիկն է՞, իմ գլխըներու, իմ աչքերու վըրա տեղ ունի:

Կընիկն ըսավ.—Քեզնեն ինչ պայեմ,—ըսավ, ասսուց ինչ պայեմ, պըզդի ախպերս է էկե:

Ըսավ.—Յընչի՞ ես պայե, անխիղճ:

Գընացին խալու մըջեն հանեցին: Աներ-ձագն է էկե, դևը պըռոշտի է էղնըմ, քիթը, մըռութը, գլուխը առնըմ էր բերանը:

Քուրն ըսավ.—անխիղճ, ըսպանեցի՞ր իմն ախպորը, քիչըմ մարիֆաթ ունեցի:

—Կընիկ,—ըսավ,—յելի էնպես պատրաստություն տես, օր յամեն ինչ թագավորական էղնի: Ախպորըդ թագավորական պատիվ բըդի տամ:

Բերեցին ճոխ սեղան բացեցին, կերան, խըմեցին պըրծան, դևն ըսավ.—Հըմի նոր հարցընենք, թե ընչի ես էկե՞: Կըրա՞նք մե բանովըմ քեզի ծառայենք:

Ըսավ,.—Կընիկըս ջհուդը տարել է:

Դևն ըսավ,—Բոլ է, էլ մի ըսե, քելե՛, քելե՛ էրթանք, ո՞ր թագավորի աղջկան օր հավնար, քեզի հըմար յուզենք, ըդուրեն ձեռ քաշե, թարկը տուր: Ըդուր համար, օր մենք յիրեք ախպըրով վախենալուց ըդուր հողի մեջ չենք մըտնըմ: Մենք մեր դև հալով օր ըդուրից սարսափըմ ենք, դու ի՞նչ կըրաս էնես:

Յառավոտուն լուսը բացվավ, էլի շատ ըդման լուս բացվի ձեր վըրա, տըղեն յելավ ըսավ.—Չէ՛,—ըսավ,—ես կէրթամ իմ կնկա յետևեն:

Դևն ըսավ.—Այ տըղա, գլխուտ ու յարևուտ մեռնիմ,—ըսավ,—կէրթաս,—ըսավ,—փորձանքի ռաստ գուգաս:

—Չէ՛,—ըսավ,—կէրթամ:

—Դե,—ըսավ,—դու գիտես, օր կէրթաս ու ետ չես կայնըմ, ան իմ մատնիքը, անցու մատդ, իմ հողին կից ախպորս հողն է, էնիկ յավելի գազըզած է, եթե մատնիքըս տեսնի, էնիկ քեզի չի ըսպանե, ղոնախ կէնե, ինչ օր պետքն է:

Տըղեն յելավ նըստավ ձին, մատնիքը քըցավ թևը, գընա՛ց հասավ ընդուր հողը՛... Յոթը գլխանի դևն էր, մե փոթորիկ բըռնկվավ՝ հող ու քար քանդելով գալըմ էր դըպա տըղին: Տըղեն մոլը՛ըրավ, չիտե ինչ էնե, այուն թևը տընկեց միայն: Դևը տեսավ ախպոր մատնիքը, էլ փոթորիկ չէրավ: Մոտեցավ տեսավ, օր թագավորի պըզդի տըղեն է, ըսավ.—Վա՛յ քու էկած ճամփեքուդ մեռնիմ, կանանչ բուսներ անցած ճամփեդ, վայ, քեզի մեռնիմ,—ըսավ,—դու բարով ու հազար բարով ես էկե, իմ յոթը գլխու վրա ես էկե:

Վերցըրավ տըղին տարավ յիրան տունը, կընկան աչքալուս տըվավ, բերին մեծ պատրաստություն տեսան, խմի՛չք ու, եսիմ, խորոված ու, դևի տանը բան չըկա՛մ... Կերա՛ն, խըմեցի՛ն, թագավորի տըղին վայել գողինք քըցեցին, դևը հարցըրավ, ըսավ.—Աներձակ,—ըսավ,—յընչի՞ ես էկե, խեր էղնի, ինչո՞վ ծառայեմ քեզի:

Ըսավ.—Կընիկըս ջհուդը տարել է...

Դևն էլ չթողավ, օր տըղեն խոսա, ըսավ.—Աստված,—ըսավ,—քեզի բարի տա, զմրուխտ ղուշը քըցի ջհուդի հետևից, էնոր թոզին չհասավ: Մենք յիրեք ախպըրովըս, ո՞ր թագավորին դիմենք, օր քեզի աղջիկ չը տան: Կընիկ ես յուզը՞մ, քեզի էնպես աղջիկ ճարենք, օր հողագունդը ծընած չեղնի: Ձեռ քաշե ջհուդեցեն:

—Չէ՛,—ըսավ,—բացի էդ աղջըկանից ընձի ուրուշ բան հարկավոր չէ:

—Է՛,—ըսավ,—դու գիտես:

Յառավոտուն յելավ ըսավ.—Օր ըդման է, առ իմ մատնիքը, իմ սայմանին կպած է իմ ախպոր սայմանը: Տաս գլխանի դև ախպերս է, ընդուր սայմանն էլ կպած է ջհուդի սայմանին: Կէրթաս ցուց կուտաս մատնիքս, բանըմ էրա՛վ՝ էրա՛վ, թե չէ մեզնեն գյուման չըկա:

Յելավ տըղեն ճամբա ընկավ գնաց: Գնա՛ց հասավ տաս գլխանի դիվու սայմանը: Դևը էն քովեն էկավ տեսավ, դիպա տըղեն էկա՛վ: Տըղեն ձեռը տնկեց, մատնիքը ցուց տըվավ, սիրով ունդունեց, տարավ տուն, կերցըրավ, խըմցըրավ, հարցըրավ.—Տղա՛,—ըսավ ընչի՞ ես էկե:

Ըսավ.—Ջհուդը կընիկս տարել է:

—Տըղա,—ըսավ, վերջ տուր, ձեռ քաշե էդ գործից, սայմանիս կից է, ես որսորդության էդ թարաֆը չեմ էրթըմ:

Ըսավ.—Ի՞նչ էղնի՛, ես կընկաս բըդի բերեմ:

—Մեղքը՝ քու շլինքը,—ըսավ,—կէրթաս՝ գընա:

Տըղեն գնաց, չորս օր, վեց օր, վեց ամիս էր գընացե, հեռևանց տեսավ, օր ջհուդը մե ձիթյանքի՛մ ղոշատ թևին դրած՝ բոստան է ջըրըմ, բոստընի գլուխն էլ մե դագյե՛մ կա: Մոտեցավ դյագին, տեսավ, օր աղջիկը էնքան է լացել, օր յամեն աչքը էսքան էր էղե: Աղջիկն օր տեսա՛վ, գժվավ:

—Տըղա,—ըսավ,—էկել ես, հըմը դարդակ կէրթաս:

Ըսավ.—Էկել եմ քեզի տանելու:

Աղջիկն ըսավ.—Ես ուրախությանը գուգամ, դու դագի յետևը յիրեք ոտնանի ձին տեսա՛ր... էդ ձին հըմի կը ճըվա: Ջհուդը գուգա մե սիլլե՛մ զարկե, տեղնուտեղը կմնաս: Փորձի,—ըսավ,—յելի նըստի ձիուդ՝ էրթանք:

Յելան նըստան ձիուն, գնացին: Ջհուդի ձին ճվաց.—Ջվի՛ուդ, դագասի: Տընգըլ-մընգըլիկի վա՛ր[55]:

Ջըհուդը էկավ, տեսավ, օր դագեն մարդ չկա՛, ձիուն ըսավ.—Եփ կըռնաս հասցնե՞ս:

Ձին ըսավ.—Էսօր՝ հինգ օր է գնացել են, մե ոտըդ հարի դընես մեկելին, հասցընեմ գը յետևներեն:

Օղորդ օր, ոտը հըլը չէր դըրել ուզանգուն, տըղի յետևեն հասավ:

---

55 Դագայում մարդ կա (ծանոթ. բանահավաք Հրաչ Մկրտչյանի):

Ձին թագավորի տղին վերցրավ թաբլեց, ջհուդն կնիկն առավ ետ դառավ:

Դևերը կայնած էյն սայմանի բերանը, յիրեք ախպրար տեսան, օր ըդման էղավ, վերցրին թագավորի տըղին, տարան տանը պայեցին, լավցըրին ջարդածը, կոտրածը: Լավցրին, հանին կայնըցրին, ըսին.—Դու ո՞ր թագավորի աղջկան ես յուզըմ, յուզե՝ յուզածըդ բերենք, էրթանք ուզենք:

—Ոչ մի թագավորի աղջիկ,—ըսավ տըղեն,—ես իմ կընկանն եմ յուզըմ, ըդուր բըդի բերեմ:

Տաս գլխանի դևն ըսավ.—Օր ըդման է, լավ: Ան,—ըսավ քեզի ձի կուտանք. Եթե կինդ քեզի բըռնըմ է, մընտնիս կը կառավատի տակը, մենակ թող կնիկդ իմանա ձիուն շնորքը, թե ուրտից է ճարել էդ ձին:

Տըղեն հեծավ ձին, գնաց հասավ դագեն, մտավ կառավատի տակը, կընկան ըսավ, ըսավ.—Ջհուդին կանչե ու մե կերպ յիմացի, թե էս ձին ուրտի՞ց ես բերե:

Տղեն օր մընտավ կառավատի տակը, էդ մամենտին ճվաց.—Ջհո՛ւդ, դագասի: Տընգըլ-մընգըլիկի վա՛ր:

Ջհուդն էկավ տեսավ, օր դագեն մարդ չկա: Քաշեց ձիուն տըվա՛վ, տըվա՛վ, թե.—Ընձի հընչի՞ ես խափըմ:

Գնաց տեսավ՝ կնկա յերեսը ուրախություն կար:

—Հա՛,—ըսավ,—էդ ընչի՞ ես ուրախացե:

Կընիկն ըսավ.—Հարի հըմի ըսպասըմ էյի թագավորի տըղին, դե հըմի աշքովս տեսա, օր մեռել պըրծել է: Է՛լ յընչի՞ չուրախանամ: Ջհո՛ւդ,—ըսավ կընիկը,—էսքան տարի է՝ ընձի բերել ես, կողքըս չես նըստե, խորատա չես էրե, անջախ բոստընի հետ ես: Դու ընձի ըսա՝ մենք հինգ օր գնացել էյինք, դու ո՞ր քամին նըստար, օր մեզի հասար, կամ էդ ձին յուրտի՞ց ես բերե:

—Ես ձիուն,—ըսավ,—բերել եմ անմահական սարից, ըստոնց դռան վրա կայնած է ասլան-ղափլանը: Էրթլու վախտ էրկու դմակ տարա, մեկը մեկին տըվի, մեկելը՝ մեկին: Նես մտա, հետս տարել էյ մե տոննա՛մ բուրդ, ըդտեղ յաղբըրներ կա, յաղբըրներու ջըրերը փակեցի, գինին լցրի գռներու մեջը: Ըստոնք (ձիերը) սարերից իջան, շո՛գ վախտ էր, գինին խմեցին, հարբան, նըստա էս ձիուն,—ըսավ,—Ձին ըսավ. «Ք՛անեմ՝ արևով կը վառեմ»: Ես ըսի՝ գիջնիմ պոռտիդ տակը: Ըսավ. «Էման գետնին գիջնիմ, օր սաղ կտորդ անկաջդ մընա: Ըսի՝ գելնիմ մեջքիդ: Էդ վախտ ձին էղավ ընձի հավատարիմ: Մե դմակըմ մնաց քովս, էկա ետ դառնալուց ասլան-ղափլըներաց մեկի՛մ քըցի, մեկի՛մ էլ չը հասավ, էկավ ձիու ոտի մեկը տարավ:

Կընիկն ըսավ.—Էլ բան կա՞ ըսելու:

—Չէ,—ըսավ, էլ բան չըկա:

Թողեց գնաց բոստանը: Տըղեն նորից ետ դառավ, էկավ դևերու քովը:

Ըսին.—Ի՞նչ իմացար:

Ըսավ.—Ըսման, ըսման:

Դևն ըսավ.—Էդ մեր բանն է, էլ մի մտածե:

Էսիկ մե տոննա՛մ բուրդ էր ըսել, ըստոնք հինգ տոննա բուրդ դրին, վեդրո՛մ գինի էր ըսե, հարուր վեդրո գինի դրին, տո եսիմ. թե ջհուդը յիրեք դմակ էր ըսել, ըստոնք քսան հատ դրին: Դիվանը յելան առան տըղին հասցրին էդ անմայական սարը:

Ըսին.—Տըղա, ինչ շնորք ունիս դու էրա, մենք էկա՞նք, ձիանը հոշոտեն գը մեզի, նես չեն թողնի:

Տըղեն տարավ ասլան-ղափլաներուն կերակլեց, բուրդը ջրի տրուբեքի մեջ դրավ, գինին լցրավ գռները, ինքը պայ մտավ թփերու տակը:

—Է՛,—ըսավ,—յարաբ օղո՞րդ է, թե՞ սուտ է:

Ցորեկվա շոգը սխմեց, յեռսընինը հատ ձի իջան սարեն: Գըփան գինու վրեն խըմեցին, հարբան, յելավ տըղեն, մեկի գյամը զարկեց, այարը դրեց, հեծավ, տըղին ըսավ.—Ք՛անեմ՝ արևը՝ վառեմ:

Ըսավ,—Գիջնիմ պոռտիդ տակը:

Ըսավ.—գիջնիմ էման, օր սաղ կտորդ անկաջդ մընա:

Ըսավ.—Գելնիմ կըռնըկիդ:

—Քելե,—ըսավ,—տըղա, քելե, ես մուրազիդ հասցընեմ:

Դըմկները, ինչ օր պետք էր, տվավ Ասլան-Ղափլանին, բանըմ էլ յավել տըվավ: Դո՛ւզ քըշեց հասավ ջվդի դագեն, աղջկան ըսավ.—Յելի հեծի:

Յելավ աղջիկը հեծավ:

—Ձի, ըսավ, ղուրբանդ էղնիմ, գնա, թե չէ էդիկ գուգա կը հասնի:

Ձին ըսավ.—Նա, իմ մենձ քուրն է, ինչքան օր էնի զիլ գա՛, ես կամաց էրթամ, իմ յետևեն

չի հասնի: Թե հասցնե, ջվդին ես գիտեմ՝ ինչ կէնեմ:

Ջվդի ձին ճըվաց.—Տարամ, տարամ, տարամ:

Ջվուդ էկավ տեսավ, օր դագեն մարդ չկա:

Ձին ըսավ.—Տո՛, անամոթ,—ըսավ,—լապատկի սուր բերնով էյր ընձի զարկըմ, տափակ բերնով էլ չէյր զարկըմ, օր չը ցավար, ես քեզի ի՞նչ լավություն էնեմ... էն վախտ էլ ըսի՝ դագեն մարդ կա, դու չ'ավատացիր, հըմի կընկադ են տարել:

Ջհուդը գնաց ըստուգեց, էկավ ձիու ոտներն ընկավ, աղաչեց, ձին ըսավ.—Դե լավ, հեծի, հըմը իմացի, օր ընդոնց քուրս է տանողը:

Հեծավ հասավ, էնի՝ յավա՛շ-յավաշ, յիրան հըմար կամանց էրթըմ էր: Էնի կայնավ, էսի գնաց:

—Տըղա,—ըսավ,—գյամս թուլ թող:

Էկավ հասավ, բերանը տվեց ջվդին, էմա՛ն թաբլեց, օր մինչև հըմի ձենն է գալըմ:

Մե քուրունջը կնիկն հեծավ, մեկելին՝ մարդը: Էկավ տեսավ, օր յիրեք փեսեն էլ սինոռի բերանը, գյուռզերը ձեռը կայնած են:

—Հը,—ըսավ,—տըղա, բերեցի՞ր:

Ըսավ.—Այո՛:

Ըսկսեցին հարսնիքը մեծ դևի տանը: Էկան յոթ գլխանի դևի տունը, ընդեղից՝ յիրեք գլխանի դևի տունը: Յիրեք դևը թագավորի տըղի հետ շարունակեցին թագավորի պալատը:

Էկան, հարսնացուն էլ տունն էր: Եկան կնկա հարսնիքը ըսկըսեցան: Յոթ օր, յոթ շաբաթ, յոթ ամիս կերա՛ն, խըմեցին:

Հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին: Մեր կարդըցողներն էլ՝ ձըզի հետ:

14(14). ՋԱՆ ՀՐԵՇ ԹԱԳԱՎՈՐԸ

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում, անունը՝ Հրեշ: Նա ունենում է մի հատ որդի, անունը՝ Սերգո: Թագավորը մեծացել էր, ուզեց իր տղային փորձ կատարի, թե ինչպես պիտի երկիրը ղեկավարի: Մի օր կանչում է տղին իր մոտ ու ասում.—Իմ սիրելի որդի, պետք է, որ դու գնաս այսինչ երկիրը, մի կին կա այնտեղ, լվացք անող, նրա դարդ ու ցավը իմանաս ու գաս պատմես ինձի:

—Հայրիկ, ինձ ճանապարահածախս տուր, որ ես գնամ այդ երկիրը:

Տղան վերցնում է մի լավ ձի և մի խուրճին ոսկի, հոր հետ մնաս բարով է անում ու շարունակում է իր ճանապարհը՝ գնալու:

Շատ է գնում, թե քիչ, աստված գիտե, հասնում է լվացք անող կնոջ երկիրը: Եվ ձին տանում է կապում է մե խանջու մոտ և ինքը ման է գալում, որ փնտրի գտնի այդ կինը և գտնում է կնոջը և հարց է տալիս.—Իմ մայրիկ, ես մուրազ ունեմ հասնելու, պատմիր քու գլխիտ գալաճաղը, որ ես հասնեմ իմ մուրազիս:

—Բալիկս, եթե դու գնաս այսինչ երկիրը յիմանաս կույրի գլխի գալաճաղը, գաս պատմես յնձի, ես էլ իմ գլխի գալաճաղը կը պատմեմ քեզ:

Եվ այդ մայրիկից շնորհակալություն հայտնեց և շարունակեց իր ճանապարհը՝ գնալու կույրի երկիրը:

Շատ էր գնացել, թե քիչ, աստված գիտեր նրա գնացածը: Հասնելով այդ կույրի երկիրը և գնալով այն քաղաքը, որ կույրը ապրում էր Ղոշավանքի հայաթում: Երբ որ այդ քաղաքի ժողովուրդը գնում էին Ղոշավանքը՝ իր աղոթքը անելու, այդ բոլոր ժողովուրդը այդ կույրին ողորմություն էին տալիս: Ղոշավանքից ժողովուրդը ցրվելուց յետո, ջահել երեխաները հավաքվում էին կույրի բոլորը և նրան սկսում էին ծեծել և փողերը խլել: Կույրը սոված, տանջվելով՝ գնում էր իր ննջարանը՝ քնելու համար:

Այդ թագավորի տղա Սերգոն կամաց-կամաց հետևում է, թե կույրը ո՞րտեղ է քնում: Երբ կույրը նես է մտնում իր բնակարանը, ինքը դուռը թխկացնում է.—Կարե՞լի է մտնել ձեզ մոտ:

—Խնդրում եմ, մտեք նես:

Տղեն ասում է.—Ինձի յէսօր ղոնախ չե՞ս ընդունե:

Կույրը պատասխանում է.—Ղոնախը որ կա՝ ասսունն է:

—Սիրելի եղբայր, ես եկել եմ քովդ, որ գլխիդ գալաճաղը պատմես, որ ես գնամ հասնեմ իմ մուրազիս:

—Սիրելի ղոնախ ջան, եթե դու երթաս այսինչ էրկիրը յիմանաս բազրկանի գլխի գալաճաղը ու գաս պատմես ինձ, ես էլ իմ գլխի գալաճաղը կը պատմեմ քեզ:

Երբ որ այդ է իմանում և մնաս բարով է ասում կույրին և քաղաքից դուս է գալիս, շարու-

նակում ճանապարհը դեպի այն երկիրը, որտեղ ապրում է բազրկանը:

Շատ է գնում, քիչ է գնում, ասված գիտե դրա գնալը, հասնում է բազրկանի երկիրը և ձին վերցնում տանում է մի խան ու խանջուն թամբա է անում, որ՝ ձիուս մուղատ կաց, քու վարձը կուտամ ու ինքը հեռանում է քաղաքի մեջ փնտրում և գտնում է բազրկանին:

Յիմանում է, որ բազրկանը տանը չի լինում: Բազրկանը գնացած է լինում խրիտ: Քսան օր անցել է, քսան օր էլ պիտի անցներ, որ բազրկանը վերադառնա իր էրկիրը:

Այդ տղան քսան օր ման է գալիս քաղաքի ելք ու մուտքը իմանալու:

Երբ որ քսան օրը թամամում է, Սերգոն դուս է գալիս քաղաքից և փնտրում է բազրկանի ճանապարհները:

[Սերգոն պահվում է գերեզմանոցում][56]:

Տեսնում է, որ բազրկանը դեմ եկավ գերեզմանոցին... Բազրկանը իր քարավանի ունեցվածները թափեց գերեզմանոցի մոտ և ինքը եկավ մտավ գերեզմանոց և սկսեց լալ ու գոռալը: Եկավ երկու քարի մեջտեղին կանգնեց՝ գլուխը զարկելով այս քարին, այն քարին և էնքան զարկեց, որ գլուխը ջարդվեց և սկսեց արյուն հոսալը: Կիսամահ վեր ընկավ:

Մարդիկ էկան վերցրեցին բազրկանին և տարան չգիտեմ՝ որ հիվանդանոց:

Տղեն տեսածից մոլրված կայնեց ու մտածեց. «Էս ինչ բան էր իմ գլխիս էլավ, ես որտից գտնեմ այդ մարդին, որ գնամ դրա դարդ ու ցավը իմանամ»:

Սկսեց քաղաքի մեջ ման գալը և հարցնելով գտավ բազրկանին որ հիվանդանոցն էր պառկած:

Մտածելով Սերգոն՝ դրան ինչ նվեր տաներ, գանձի կարիք չի զգում: Մտածեց և մի ծաղկափունջ ճարելով, գնաց էն հիվանդանոցը, որտեղ պարկած էր բազրկանը: Հարցնելով մտավ նրա պալատը, որտեղ պարկած էր ինքը: Ծաղկափունջը նվիրելով հիվանդին՝ սկսեց հետը խոսել.—Հորեղբայր ջան, ինչպես ես, քու առողջությունդ ոնց է,—հարցնում է Սերգոն:

Նա պատասխանեց.—Բալիկ ջան, դու որ երկրացի ես, ես քեզի չեմ ճանաչում:

—Ես այսինչ-այսինչ երկրացի Հրեշ թագավորի տղան եմ: Եկել եմ մոտդ, որ ես հասնեմ իմ մուրազիս:

—Բալիկ ջան, ես ճանաչում եմ քեզ էլ, քու հորդ էլ, միտքդ ինչ է, որ ասում ես. «Էրթամ հասնեմ իմ մուրազիս»:

—Հորեղբայր ջան, եկել եմ մոտդ, որ քու դարդդ ու ցավդ պատմես ինձ, որ ես գնամ հասնեմ իմ մուրազին:

Ուստեն գիտե իր պատմությունը:

Բազրկանը պատմում է իր գլխի գալաճաղը:

—Աղբեր տղա, ոչ մի մարդու չէի պատմե, դու որ եկել ես, քո ծնողի պատվին կը պատմեմ, որ դուն էլ հասնես քու մուրազին,—և պատմում է:—Բալիկ ջան, իմ հերս էլ բազիրկան մարդ էր, ես ջահիլ տղա էի, հերս ինձ նշանեց, հարսանիք արավ պրծավ և արևը բաշխեց ինձ ու քեզ: Ես ջահիլ էի, ոչինչ չէի իմանում առևտրական կողմից: Ես սկսեցի հորս փեշակը՝ բազրկանությունը, շարունակել: Ոչ մի բանից խելքս չէր հասնում, չգիտեի, թե ինչ ապրանքը կը ծախվի, ինչը չի՛ ծախվի: Վերցրի էնպես կուրս, որ [էն ապրանքը], որ էդ երկրները գին չէր անում, [տանում էի ուրիշ երկիր], և սկսեցի ման գալ երկրից երկիր:

Այդ ման գալը տևեց քսան տարի: Տնիցը ոչ մի տեղեկություն չունեի, ոչ էլ ընտանիքս՝ ինձանից:

Երբ որ քսան տարին լրացավ, ես վերադարձա իմ հայրենիքը՝ իմ գործերս անհաջող գնալու պատճառով:

Մտածեցի, որ իմ կնոջս փորցելու համար [տուն չերթամ], եկա հարևանիս ղոնախ եղա, որը ինձ չէր ճանաչում: Ես հարևանիս խնդրեցի, որ շոք է, իմ տեղս քցեք երթիքը՝ քնելու համար, և ելա երթիքը, սկսեցի նայել [դեպի մեր տունը]: Տեսա իմ կնոջս: Մի ջահիլ երիտասարդ եկավ մոտը և սկսեցին սեղան բանալ հաց ուտելու համար [երբ] վերջացրին հաց ուտելը, իմ կինս համբուրելով այդ տղային՝ քուն է դնում: Էդ տղան նորից համբուրելով կնոջս՝ իմ կնոջ ծոցը մտավ ու քնեց:

Ես չը համբերելու պատճառով [իջա երթքից, մտա կնոջս սենյակը] դաշունս վերցրեցի,

[56] Փակագծերում բանահավաք Պ. Բարսեղյանի հավելումներն են, որոնք նույնությամբ պահպանվել են (ծանոթ. կազմողների):

ջկեցի կնոջս և, դաշունը սրտին սեղմելով, նես տարա, այդիկ բավական չէր, նորից դաշունով գլուխը կտրեցի: Լիզուն բլբլաց. «Ա՛յ մա՛րդ, ինձ ոչ հաց տվեցիր, ոչ ջուր տվեցիր, ինչո՞ւ իմ գլուխս կտրեցիր»:

Այդ խոսքերը իմանալով ջիլիզ ջգրվա տղայի գլուխն էլ կտրեցի:

Երբ որ տղայի գլուխը կտրեցի, լիզուն բլբլալով ասաց. «Հայրի՛կ, ինձ ոչ հաց տվեցիր, ոչ էլ շոր հաքցրեցիր, ինչո՞ւ անտեղի իմ գլուխս կտրեցիր»:

Երբ որ այդ իմացա, սկսեցի մազերս պոկել ու լաց լինել, որ անտեղի կնոջս և երեխայիս սպանեցի: Եկա տեղս հանգիստ պարկեցի:

Բարի լուսը բացվում է: Ամբողջ հարևաններ-ը վեր են կենում, ես սուտ քուն եմ էրե, հարևան-ները սկսում են լաց ու կոցը, ես իբր քնիցս վեր եմ թռչում. «Ի՞նչ է պատահե, ի՞նչ է պատահե»:

Երբ որ լաց ու կոցը վերջանում է, խնդրում եմ հարևաններին, որ իմ փողովս ես դրանց տանեմ հողին պահ տամ:

Երբ որ թաղեցի վերջացրեցի կնոջս ու տղայիս ասածները միտքս է յընկնում, սկսում եմ գլուխս էս քարին խփում, էն քարին խփում և ուշաթափ էղնում, վեր ընկնում:

Այս է իմ գլխիս գալաճաղը: Բալիկ ջան, դու էլ գնա հասի քու մուրազիդ:

Սերգոն խորհին շնորհակալություն է հայտնում, ձեռք-ձեռքի խփում ու շարունակում իր ճանապարհը: Նստում է ձիուն, շատ է գնում, թե քիչ, աստված գիտե, հասնում է կույրի երկիրը և գնում է իր սովորական տեղը ձին կապում ու գնում կույրի մոտ:

—Այսօր ինձ ղոնախ չե՞ս անում:

—Ղոնախը որ կա, Աստծունն է:

—Հորեղբայր, ինձ ճանաչում ե՞ս:

—Ես վո՞նց պիտի իմանամ:

—Ես այն մարդն եմ, որ գնացել էի բազրկանի մոտ՝ նրա գլխի գալաճաղը իմանալու:

Սերգոն մանրամասը կույրին պատմում է բազրկանի գլխի գալաճաղը: Երբ որ պատմեց բոլորը, պրծավ, կույրը պատմեց իր գլխի գալաճաղը.

—Աղբոր տղա, ես ջահել ժամանակս մի երիտասարդ էի և՛ ուժեղ, և՛ բժշկություն անել էլ գիտեի, ոչ ոքից չէի վախենում: Ես ոչ մի մարդու հաշվի չէի առնում:

Մի օր, գիշերվա 12-ին ման էի գալիս քաղաքի մեջը: Ման գալուս տեղը մի բիձա ռաստ էկավ, ինձ ըսավ.—Էհ, երիտասարդ, ի՞նչ ես ման գալում էս ժամանակին: Ինչքա՞ն վարձ տամ քեզի, որ իրար հետ մի տեղ գնանք:

—Ինչ տալում ես՝ տուր, ես գուկամ, ոչ մի բանից չեմ վախենում:

—Ես այդպիսի տղա եմ ուզում, որ հեչ մի բանից չը վախենա: Դե՛ հետվիր ինձ, գնանք[57]*:*

Գնում են, գնում, քաղաքից դուրս են գալիս: Տեսնում են շենքեր, աշխրքի երեսին էդպիսի շենքեր չէր լինի, բոլորը ոսկուց ու արծաթից: Ներս է մտնում բիձեն, տղան՝ ետևից:

Նստեցնում է, սեղան է բացում, և սկսում են հաց ուտել: Երբ որ հացկերույթը վերջացնում են, բիձեն ասում է.—Բալի՛կ ջան, արի գնանք, էս դուռը նես մտնենք: [Նես մտանք]: պատրաստիր քսան հատ էշ և քառսուն հատ մեշոք [պատրաստեց մեշոքները, բարձան իշաններին ու գնացին]:

Շատ գնացին, թե քիչ, աստված գիտե, հասան մի ժայռ քարի մաղարա: Բիձեն հրամայեց, որ մեշոքները պատրաստե և մի գիրք հանեց ծոցից ու սկսեց կարդալ:

Երկար կարդալուց յետև ժայռը տրաքվեց և ոսկին շռռաց այդ ժայռից: Սկսեց տղան հավաքել [ոսկին] և քառասուն մեշոքը լցրեց և բարձեց իշաններին: Բիձեն հրամայեց. «Ել քարափի վրեն»: Քայլելով ելավ վեր: «Մի բութիլկա ջուր վերց ժայռի ճեղքվածքից»: Վերցուց: «Վար իջիր», վար իջավ: Բիձան գիրքը վերջացրեց դրեց ծոցը: Շարունակեցին իրանց ճանապարհը դեպի քաղաք:

Ճանապարհին [տղան] մտածեց ու ասավ բիձային.—Էս ոսկու կեսը՝ քեզ, կեսը՝ ինձ:

Բիձեն վախից համաձայնվեց:

Երբ մոտենում են քաղաքին, տղան ասում է.—Քու բաժնիդ կեսն էլ ինձի:

Բիձեն էլի համաձայնվում է:

Քաղաքին մոտենալուն պես տղան ասում է.—Էս բոլորը ինձի պիտի լինի:

—Թող բոլորը քեզ լինի:

—Այդ քովիդ բուտիլքա ջուրն էլ ինձ տուր, չտաս՝ կսպանեմ:

---

[57] Այստեղից պատմողն առաջին դեմքից անցնում է երրորդ դեմքի (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Բիձեն բութիլկա ջուրը տալիս է երիտասարդին, նա առնում է ու ասում.—Ասա՝ էս ջրի զորությունը ինչ է, ասա, թե չէ քեզ կսպանեմ:

Բիձեն թե.—Դրա զորությունը այն է, որ եթե աչքերդ լցնես, ոչ մի մարդ քեզ չի տեսնի, դու բոլորին կը տեսնիս:

Այդ բութիլկա ջուրը լցրի աչքերս, աչքերս քոռացան, ոչ մի բան էլ չը տեսա, բիձան ո՞ւր գնաց, ո՞ր կողմը գնամ... մնացի մենակ, [անօգնական]:

... Ես ագահություն արեցի ու ոսկի ուզեցա բոլորը ունենալ, ինչո՞ւս էր պետք ջուրը... մնացի անտեր-անտիրական, դրա համար երեխաները ինձ ծեծում են: Աստված ինձ չը կամեցավ: Այս է իմ գլխիս գալաճաղը, հիմա գնա՛, հասիր քու մուրազիդ:

Սերգոն գնաց, ձին քաշեց դուս, հեծավ ու շարունակեց իր ճանապարհը, գնաց հասավ այն երկիրը, որտեղ ապրում էր լվացք անող կինը:

Տարավ իր ձին իրա սովորական տեղը կապեց ու գնաց կնոջ մոտ ու ասաց.

—Մայրի՛կ, պատմիր քու գլխի գալաճաղը, թե ինչպե՞ս է անցե:

—Բալիկ ջան, պատմե կույրի գլխի գալաճաղը, որ ես պատմեմ իմ գլխի գալաճաղը:

Սկսում է Սերգոն պատմել կույրի գլխի գալաճաղը:

—Հիմա էլ լսե իմ գլխի գալաճաղը: *Ես մի փոքր աղջիկ էի, մորս օգնում էի, լվածք էի անում և շոր էի փռում:*

Մի օր առավոտ կանուխ մի ղուշ եկել էր մեր հայատի պատին վեր էր եկել: Նա շատ գեղեցիկ էր, վառվռուն դեմքը: Յուզեցա ես էդ ղշին բռնել: Մոտեցա գողեգող, որ ղշին բռնեի: Երկու ձեռքով բռնեցի ոտներից՝ մե ձեռով մի ոտից, մեկէլ ձեռով՝ մյուս ոտից: Այդ ղուշը հավալամիշ եղավ և ինձ հանեց դեպի երկինքը: Ինձ տանելով, տանելով՝ տարավ մի ժայռի գագաթին իջացրեց և այդ ղուշը անահտացավ: Երբ որ ղուշը հեռացավ, ես, նայելով այս կողմս, այն կողմս, տեսա մի ճանապար, որ քարափի գլխից գնում էր ցած: Էդ քարափի գլխից էդ ճանապարհով գնալով՝ դեմս դուս եկավ մի չայիր-չիման տեղ և էդ չայիր-չիմանի մեջ տեսա մի սիրուն շենք, որը ծածկված էր կանաչով, ծաղիկներով և պտուղներով: Ոչ ոք չկար շենքի միջում: Շատ նստելուց հետո շենքի մեջը, դուռը բացվեց, մի սիրուն երիտասարդ նես մտավ և էդ սիրուն տղան ասաց.—Աղջի, աստվածությունը քեզի ինձ համար է ուղարկել [արի իրար հետ ապրինք]: Իրեք պայման ունիմ: Առաջի պայմանը՝ Աստված ինչ կանի՝ կանի, Աստծու գործին չը խառնվես: Երկրորդ պայմանը՝ իմ գործիս չը խառնվես, ինչ կանեմ՝ կանեմ: Երրորդ պայմանը՝ առանց խնդրելու Աստծուն, ոչ մի պտուղ չը կտրես ու ուտես: Երբ այդ պայմանները չը խախտեցիր, մինչև մեր կյանքի վերջը իրար հետ կապրենք, եթե դու էդ պայմաններից զատվեցիր, մենք էլ իրարից կը հեռանանք:

[Ապրանք իրար հետ]: Ես ու նա ունեցանք հինգ տարեկան աղջիկ և երեք տարեկան տղա:

Մի օր տղեն՝ [մարդս] կարգադրեց, որ ելի լվացք արա, շորերը կեղտոտվել են:

Ես շարունակեցի իմ գործս, որ կարգադրված էր էդ [տղայի կողմից], լվացի, մաքրեցի ամեն ինչ, դուս հանեցի, սկսեցի լվացքս փռելը: Մի քամի դուս եկավ, սկսեց ամբողջ հողակալ թիփի անել, ամբողջ շորերը կեղտոտվեց:

Ես չըհամբերելու պատճառով, պայմանազանց եղա ու ըսի.—Աստված էս ինչ արավ, բոլոր շորերս կեղտոտվեց:

Եվ տղան վրա հասավ ու ասավ.—Առաջի պայմանը զատեցիր, ու մենք ջկնվում ենք իրարից:

Մի քանի օր անցնելուց յետև, տղան կարգադրեց, որ գնանք ման գալու: Ես կին մարդ էի, ըսի.—Երեխեքը առ, գնա դուս, հարի ես մի քիչ լվացվիմ, մաքրեմ, գամ յիրար հետ ման գալու:

Դուս ելա, ինչ տեսա, երեխեքս բոբլկացրեր է, աստղ փշերի մեջ ման է ածում երեխոցս: Ես չհամբերելով՝ ըսի.—Ա՛յ մարդ, էդ ինչ ես անում, երեխանցը սպանեցիր, բոբլիկ, փշերի վրա ման ես ածել տալում, դու խիղճ չունի՞ս:

Մարդը նորից ասեց.—Ա՛յ կին, դու պայմանազանց եղար, ես քեզ ասել եմ, որ իմ գործերիս չը խառնվես, հիմա ես քեզնեն հեռանում եմ երկար ամիսներով, ահա՛, ես գնացի: [Ասավ ու գնաց]:

Ես երկար մտածելով լալում ու ողբում էի. «Էս ինչ ես արեցի, պայմանները խաղդեցի»:

Օրեր անցան: Երկար տանջվելուց յետո ես ջղայնացա, երեխանցս առա դուս գնալու համար: Երեխեքս լալիս էին, ասում, բղավում. «Պապա՛ս, պապա՛ս, պապայիս գուզեմ»:

Ես, չհամբիրելով, ջղայնացա և, առանցի Աստծուն խնդրելու, մրքեղեն պոկի ծառերից ու փվի փղոցս ձեռը՝ ձայները կտրելու համար:

Այդ րոպեին երևաց իմ ամուսինը ու ասավ ինձ.—Դու երեք պայմանն էլ զատեցիր, այսուհետև յիրար հետ չենք կարող ապրել,—ասավ,—արի յիրար հետ գնանք:

Յիրար հետ գնացինք այն տեղը, որտեղ ղուշը իջացրել էր ինձի՝ էդ ժայռի գլուխը:

—Դե՛,—ըսավ,—դու էստեղ կայնի, ես հիմա գալու եմ,—և բռնեց մեծ աղջկաս ձեռքը և փոքր տղայիս ձեռքը և իրեն քցեց այդ ժայռիցը, երեխեքը հետը: Ես էլ երեխանցս կսկծուց, ես էլ քցեցի ինձ այդ ժայռից: Էլ չեմ յիմացել ինչ է եղել: Մեկ էլ յաչքերս բացեցի, որ հիվանդանոցում պարկած եմ:

Այս է իմ գլխիս գալաճաղը:

Եբոր հիմի միտքս է յընկնում երեխեքս և գնում եմ այդ ժայռի վրա և յաչքիս երևում են երեխեքս, այդ ժայռից թոլ եմ լինում երեխանցս բռնելու համար, բայց յաչքերս բաց եմ անում, որ հիվանդանոցում պարկած եմ լինում:

Այս է իմ գլխիս գալաճաղը, բալա՛ ջան, դուն էլ գնա քու մուրազիդ հասի:

Սերգոն պատասխանում է.—Շա՛տ, շա՛տ շնորհակալ եմ, մայրիկ ջան, որ դու քու գլխի գալաճաղը պատմեցիր:

Գնում է իր սովորական տեղից ձին քաշում, նստում է և շարունակում է իր ճանապարհը: Շատ է գնում, թե քիչ, Աստված գիտե, հասնում է իր հոր քաղաքը, տեսնում է էդտեղ հովիվներ ոչխար են արածում, մի բուռ ոսկի է տալիս և ասում է.—Խաբար տարեք թագավորին, որ քու մեկուճար տղեն՝ Սերգոն, գալիս է:

Թագավորը հրամայում է, իրա սինոտապետներին ուղարկում է, որ.—Գնացեք իմ տղայիս յառաջը:

Երբ հասնում է հոր պալատը, համբուրում է իր ծնողի ձեռքերը, ծնողն էլ փաթաթվում է ու համբուրում տղի աչքն ու երեսը:

Տղեն մեկ-մեկ մանրամասը պատմում է հորը իր գլխի գալածինը:

Թագավորն ասում է.—Գնացիր ամբողջ երկրներ ման եկար և հիմա հուսալի եմ, որ իմ մեռնելուց իմ թագավորությունս կը վայելես [կը կառավարես]:

Եվ սկսեց իր տղայի համար հարսանիքի թադարուկ տեսնել և սկսեց քաղաքից-քաղաք մարդ ուղարկել իր տղայի համար հարսնացու չարել: Փնտրեցին գտան մի չքնաղ օրիորդ, որը էնքան սիրուն էր, որ ասում էր արևին. «Դու մի՛ դուս գա, ես եմ դուս գալու»: Եվ սկսեցին հարսանիքը քառասուն օր կատարել: Կերան, խմեցին, ուրախացան ամբողջ քաղաքի սինոտապետները և ժողովուրդը:

Երկնքից իջավ հինգ հատ խնձոր, մեկը՝ ասողին, մեկը՝ հեքաթ պատմողին, մեկն էլ՝ շատ խոսողին, մնացածն էլ՝ բոլոր ականջ էնողներին և լսողներին:

Այս է իմ հեքաթիս վերջը:

15(15). ԻՇՈՒ ՔՈՒՌԱԿԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակոց քաղաքի՛մ մեջ կար մե թագավոր՛մ, ղեկավարըմ էր էն երկիրը, օր յիրան էր հըպատակվըմ: Քաղքի մեջ կար մե քյասիբ ու բլնգազ նախրջի՛մ, ըդուր ազգի ու ցեղի մեջ արու զավակ չէր էղնըմ: Յառավոտուն լուսն օր բացվըմ էր, բացվի ձեր վրա, էս նաչար նախըրջին ձեռները տընկըմ էր առ ասված, կանչըմ էր, աղաչըմ.—Ասված ջան, թող ընձի էրեխա էղնի, ախպեր, ռազի եմ, թող իշու քուռակ էղնի:

Ըդման յամեն օր:

Անցնըմ է վախտըմ էրկու, օրըմ էլ յառավոտուն յելնըմ շըվաքը, տեսնըմ, օր ահան, մե փոստըմ է քըցած, փոստի վրեն՝ մե իշու քուռակըմ:

—Կընիկ,—ըսըմ է,—էս ի՞նչ խաբար է:

Կընիկն ըսըմ է.—Հա՛լ, հեքյաթ, ըսման, ըսմա՛ն... պառկել եմ, գիշերը իշու քուռակ եմ բերե՛... սա՛ղ աշխըրով մեկ խայտառակ էղանք:

—Բան չըկա,—ըսըմ է մարդը, մեր խըսմաթըն էլ բալկի էդ էր, վերևեն ի՞նչ է իջե, օր գետինը ղաբուլ չի էրե: Թող յիրան հըմար մենձընա, բալքի մե ղըսմաթըմ էլ էդիկ կունենա:

Վախտըմ էդ քուռակին կերակըլըմ են, մենձընըմ, թափով քուռակ է դառնըմ, յիրան նախրին խառնըմ, հանդն է տանըմ: Իշու քուռակը նախրից ջըկնըվըմ է, նախրի չորս բոլորն է պըտըտվըմ, մուղաթ է կենըմ՝ մարդ-մուրդ, գազան նախրին չըդիպնի:

Ըսման վախտըմ անցնըմ է, մե յիրկուն էլ քուռակն էկավ նախըրջու քովը, մըռթով զար-

կեց, ըսավ.—Ընձի բըդի նըշանես, թագավորի աղջիկը հուզես:

Է՛, էման բան է ըսըմ, օր մարդ նա՛ էն է ծիծաղա, նա՛ էն է՝ լա՛:

Ըսման քանի օր յիրար վըրա Իշու Քուռակը հա՛ դըռտըմ է հորը, թե.—Ինչ ուզըմ ես՝ էրա՛, ընձի բըդի նշանես, թագավորի աղջկան ուզես:

—Ա՛յ քուռակ, թագավորը մեզի աղջիկ կուտա՞մ, էդ ի՞նչ ես ըսըմ:

—Չէ՛, օր չէ,—էրկու ոտը մե մաշիկ է դըրել, զըռըմ է քուռակը:

Նախըրջին ճարը կըտրավ, յելավ գնաց թագավորի պալատի խնամաքարին նըստավ: Լալա, ծառա թափան էկան, տեսան, օր նախըրջին է, գնացին թագավորին խաբար էրին:

Թագավորն ըսավ.—Քյասիբ մարդ է, էկել է օգնություն յուզելու, տարեք քանի՛մ կապեկ քըցեք յիրան, թող յելնի, ջայլամ էղնի էրթա:

Լալա, ծառա բերին ազըմ փարա տըվին, ըսին.—Դե յել գնա:

Նախըրջին ըսավ.—Ես էկել եմ պատգամ:

Կըպել է քարին, չի յելնըմ:

Թագավորն ըսավ.—Հըլը նես բերեք, տեսնինք՝ ի՞նչ է ըդուր փորի ցավը:

Նես բերին, գըլուխ տըվավ, ըսավ.—Թագավորն ապրած,—ըսավ.—քու աղջիկը բըդի տաս իմ Իշու Քուռկին:

Թագավորն ըսավ.—Խելառ ե՞ս, թե՞ նոր խելըռար, գլխեդ դուս ի՞նչ կը խոսաս:

Միջայլոց, թագավորը գլխու չի հընգնըմ, թե ինչ Իշու Քուռկի վըրա է խոսքը, կարծում է, թե նախըրջին իրան տըղին է Իշու Քուռակ ըսըմ (իսկական մարդ է):

Շատ օր զոռըմ է, թագավորն էման պայման է դընըմ, օր նախըրջին էրթա, մեկ էլ յիրան դուռը չը բանա:

Ըսավ.—Լա՛վ, ես բանըմ կըսեմ, կատարեցի՞ր, աղջըկաս կուտամ: Ըսավ.—Կը բերես յիրեք ձեռք կաստում, օր ո՞նչ ասեղ դիպած էղնի, ո՞նչ մաշինի տըկից անցած էղնի:

Նախըրջին պուպուջակը քերեց, էկավ տուն:

Իշու Քուռակն ըսավ.—Հորս կըսեք, կէրթա ընտեղ, հուրտեղ մալը պառկըցնըմ ենք ծառի տակը: Ծառեն յիրեք հատ չբուղ քաղե, չբղնեը թող գետնին զարկե, էրկուսը կը կոտրի, վըրա իրեքը կը մնա: Էդ չբղի տեղից վո՞ր օր դուս էկավ, ըսե, օր Իշու Քուռակը յիրեք հատ կաստում հուզեց:

Նախըրջին ըսավ. «Սուտ, օղորտ, յելնիմ էրթամ փորձեմ:

Գընա՞ց ծառեն յիրեք չբուղ քաղեց, մեկը զարկեց՝ ջարդավ, մեկելը զարկեց՝ ջարդավ, վըրա երորդին մե սև բանըմ դուս էկավ:

Ըսավ.—Իշու Քուռակը յիրեք հատ կաստում հուզեց:

—Էս ռոպեին,—ըսավ:

Գնացին բերին յիրեք հատ կակալ, ըսին.—Ա՛ն, տա՛ր:

Վերցըրավ էդ կակալները՝ դո՞ւզ թագավորի պալատը:

—Թագավոր,—ըսավ,—ա՞ն, բերի, պատրաստ է:

Թագավորն ըսավ.—Էս ի՞նչ է, ես քեզնից ի՞նչ եմ յուզե, դու ի՞նչ ես բերըմ, կակա՞լ,—ու քըթի տակ քընծխըրտաց:

Ըսավ.—Թագավորն ապրած կենա, հըլը ջարդի՞, ըդուր զորությունը գիմանաս:

Թագավորը կակլընները ջարդեց, օղորդ օր, յամեն մեկի միջեն թագավորի հուզած կաստումները դուս էկան: Գըլուխը տարավ-բերեց, ըսավ.—Հալալ է, օղորդ օր աղջիկըս տարա՞վ: Ըսավ.—Մե բան էլ կըսեմ՝ կէրթաս էման մե սինի՛մ կը բերես, օր օսկի էղնի, սինու մեջ հավերը պըտըտվին, ձագերն՝ յետևեն:

Էս մարդը գընաց թագավորի ըսածը զեկուցեց Իշու Քուռակին, Քուռակն էլի ղըրկեց ծառի քովը՝ չիբուղ պոկելու, խուլայսա:

Էս մարդը գընաց, էրկու չիբուղը ջարդավ, վըրա յերորդին մեկըմ հէլավ, ըսավ.—Ի՞նչ կա:

Ըսավ պահանջը:

Ըսին.—Էս ռոպեին:

Վերցրին մե հի՞ն չանաղըմ տըվին, ըսին.—Տա՛ր:

Նախըրջին էկավ թագավորի պալատը, նառդըվաններով վերև էր յելնըմ, մեկ էլ տեսավ՝ չանաղը օսկե սինի է դառե, հավերը մեջը պըտըտվըմ են, ձագերն՝ յետևեն: Տարա՞վ, սինին դըրավ թագավորի յառաջը, ըսավ.—Ա՛ն, հրամանքըդ ի կատար:

Թագավորը մըտքի մեջ ըսավ. «Ղուռումսաղը խոսքի տերն էր, տարավ աղջկաս»:

Ըսավ.—Ե՞ր ես հուզըմ հարսնիք էնենք:

Նախըրջին ըսավ.—Ուրբաթ օրը:

Թագավորն ըսավ.—Օր ըդման է, հարսնըքի օրը քու դըռնեն տեյմորի իմ պալատը, իմ պալատեն տեյմորի ժամը, չորս բոլորը բըդի խնձորի, աբելսինի, լիմոնի, հաղողի ծառ ու թուփ էղնի, անմահական հոտ ունեցող ծաղկներ բըդի էղնին չորս բոլորը, օր հասնըքվորը էդ հոտեն հարբի:

Նախըրջին էկավ Իշու Քուռակին ըսավ.—Իշու Քուռակ,—ըսավ,—կյանքըդ մեռնի, բեմուրազ էղնիս, էս ինչ օրի քըցիր դու մեզի: Հըմի էլ թագավորը ըսման-ըսման բան է պահանջըմ:

Իշու Քուռակն ըսավ.—Ըդուր հըմար էլ մտածըմ ես, գնա ծառի քովը...

Նախըրջին էկավ ծառի քովը, չիբղները զարկեց, վըրա յերորդին մե հըրեղեն աղջիկ դուս էկավ, ըսավ.—Իշու Քուռակի հեր, ինչ ես հուզըմ:

Ըսավ.—Ըսման, ըսման:

—Շատ բարի,—ըսավ, մեշոկ բերել ես:

Ըբը թե.—Չէ:

Բերին յիրանց մեշոկի մեջ փետի տաշեղ լըցրին, ըսին.—Ա՛ն, տար, հուրտեղ ցանես, հուզածըդ կը բուսնի:

Յելավ գնաց էդ մարդը, ըդման ցանելով գընաց: Ինչ... ծառ ու ծաղկունք բուրըմ են չորս դին: Թագավորը թախտից իջավ, էկավ բալկոնն աշեց, օր ինչ... չորս դին դըրախտ է դառե, բըրխըտըմ է հոտեն:

Թագավորն ըսավ,—Ռազի եմ, տըվել եմ, տվե, ան աղջիկը, ըսեք՝ գան տանին:

Հէլան հարսնըքվորը (դավաթվորը) Իշու Քուռկին վերցըրին՝ դըպա թագավորի պալատը: Հէլան քառսուն նադրովան, օր բըդի էրթան թագավորի թախտը, Իշու Քուռակն էլ խընդըլեն չիտե, ինչխ է բանձրանըմ նառդըվընները:

Լալա, ծառա գընացին թաթարի թագավորին դակլատ էրին, օր.—Ըսման, ըսման, էս մարդիկ Իշու Քուռակն էլ հետներն են բերե:

Թագավորն յէլավ տեսավ, ըսավ.—Հա՛յ, հա՛յ, ղուռումսաղներ, խո չե՞ք խելըռե, դուք էկա՛ք, էկա՛ք, վո՞վ է տեսե հասնըքին Իշու Քուռակին էլ դավաթվոր բերեն: Այ մարդ, էս Իշու Քուռակն հընչի՞ ես հետըդ բերե:

Նախըրջին ըսավ.—Թագավորն ապրած կենա, էս Իշու Քուռակն է փեսեն:

Թագավորը գուն տըվավ, գուն առավ, խելքը գընաց, բերին ջուր ցփնին գըլխուն, խելքը տեղը էկավ, ըսավ.—Ախմախ, խո չե՞ս ցընդե, ես Իշու Քուռակին աղջիկ տամ:

Աղջիկն ըսավ.—Հայրիկ, էշ կէղնի, ձի կէղնի, էսիկ իմ բախտն է, չըտաս էլ՝ ես կէրթամ:

Յելավ, թևը կոխեց իշու ոտին, պատռուշկա էղավ, յանգաջը դըրեց իշու յանգըջին, թե.—Գընացինք:

Ըսման դավուլ-զուռնով գընացին հասան իրանց տունը: Հասնիքը պըռծավ, դավաթվորը յամենքը յիրանց տուն գընացին: Ոտ ու ձեռ օր քաշվավ, Իշու Քուռակը դուս էկավ հայաթը, զըռռաց ու ըսկըսեց թափալ գալ մոխըրներու մեջ:

Հարսը (թագավորի աղջիկը) լուսամուտեն աշըմ է, օր Իշու Քուռակը ըդման զըռռըմ ու թափըլտվըմ է, ըսըմ է.—Պըռծանք, էլ էսի տուն գալողը չէ:

Շատ է նըստըմ, քիչ է նըստըմ, յինքը գիտե, հեռսը յելնըմ ըսըմ է. «Հողեմ իմ էշ անբախտ գլուխը, միլյարդավոր մարդու մեջ, տղե՛մ չկա՞ր, օր առնեյ, էկա Իշու Քուռկին դուշ էղա»:

Ըդման մըտածըմ էր, մեկ է գլխու վերևը աշեց, օր մե թուրվանդա տըղե՛մ է կայնե, ո՞նչ ուստես, ո՞նչ խըմես, գիշեր ու զօր ըդուր սեյր էնես:

Ըսավ.—Տըղա, դու վո՞վ ես, օր ըսման էկե գլխուս վիրևը կայնել ես:

Ըսավ.—Քու մարդըդ եմ՝ Իշու Քուռակը, տիյա՝ իմ ղուլաբը:

Օղորդ օր, դըռան հետևը ղուլաբն էր, իշու յամեն ինչը էնտեղ դըրած էր: Ըստոնք ինչ օր պետքն էր, գըշերը յիրար հետ քեֆ էրին, պառկան...

Բարիլուսը բացվի վըրներըդ, բարիլուսը բացվավ, տըղեն յելավ Իշու ղուլաբն հագավ, էլի գնաց իրան հըմար զըռռաց ու թափըլվա՛վ:

Թագավորը խըռովե, աղջըկա յերեսը բիլամ չի ուզըմ տեսնի, աղջըկա քուրերը բամբասըմ են, ըսըմ են.—Հողերը գլխուն, գնաց իշու սըփին առավ:

Քանի խոսանք, շատ կը խոսանք... խուլայսա: Առժամանակըմ ապրելուց յետքը էդոնցից էշու քուռակ ծնվավ:

Թագավորն յիրան մնացած իրեք աղջկան կարգել էր տվել նազըրներու տըղեքին:

Օրըմ էլ փեսեքն էկել են, մեյդան են բացե, խաղըմ են, ձիերով յիրար հետ են մըրցըմ, հեչ մեկը չի կըրըմ հաղթե:

Իշու Քուռակը գնաց յիրան տըղին ըսավ, հազըրվի, օր մեյդան ենք յելնըմ, մրցման ենք յելնըմ թագավորի փեսեքու դեմը:

Ըդոնք իրանց ղուլաբը քըցին, հեծան հրեղեն ձիանքը, մեյդան մըտան, մեյդանը դըրըմբըմ է, թագավորի պալատը թոզի մեջ կորել է: Հաղթեցին պըռծան, տեյ թագավորը գլխու է ընկնըմ, ըսըմ է.—Բռնեք, հա բռնեք:

Էլ հո՞ւր: Իշու Քուռակն իրան տըղի հետ իջնըմ են հրեղեն ձիանուց, իշու ղուլաբներն հագնըմ են, էշ են դառնըմ:

Թագավորն ըսըմ է.—Ո՛նչ մեր ձիանունց մեջը, ո՛նչ էլ մարդկության մեջը ըդման բան չէր կըռնա էղնի:

Թագավորն Իշու Քուռկի կընկան խաբար էրավ, ըսավ.—Մե բանըմ կա, դու էդ իշու քուռկներուն ի՞նչխ ես պայըմ:

Աղջիկն ըսավ.—Ծնողս ես, հըմը իշու քուռակը դու ես, իմ մարդը թուրվանդա տըղա է:

Թագավորն ըսավ.—Մե թըլիսմանըմ կա, արի կեղնի, դու ըդոնց թլիսմանը վառե:

Աղջիկն ըսավ.—Ես չեմ վառե:

Օրըմ էլ թագավորը միամտցրավ, թագուհու հետ յելան գնացին նախըրջու տունը:

Միամիտ էկան դուռը բացին, տեսան, օր ինչ, էրկու հուրնիկ հրեղեն տղամարդ, իսկն օր թուրվանդա տըղեք նըստած են, մեկը իրանց աղջկա մարդն է, մեկելը՝ իրանց թոռը:

Ըստոնք նես մտան թե չէ, էրկու տղամարդը յելան, հասան յիրանց ղուլաբներին: Ղուլաբներուն հասնելն ու հագնելը մեկ էղավ: Թագավորը մատը խածեց:

Ընդոնք հասան յիրանց մուրազին, աստված թող կատարե ձեր մուրազը:

16(16). ՓԵՏԵ ՁԻՆ

Լինում է մի թագավոր, թագավորը ունենում է մի մեկուճար տղա:

Օրեն մի օր էս թագավորը տեսնում է, որ իր տղան խաղում է հողի և ավազի հետ: Կանչում է վեզիրին ու հրամայում.—Կանչեք հայտնի արեստավորներին:

Երբ արեստավորները գալիս են, թագավորը ասում է.—Ես ունիմ մի մեկուճար տղա, որը խաղում է հողի և ավազների հետ, այդ լահեղ չի թագավորի տղի համար: Գնացեք հինարներդ ցույց տվեք, ամենը իրա արհեստին համապատասխան մի լավ խաղալիք շինեք: Որ լավ շինեցիք, ինչքան գուզեք՝ օսկի, արծաթ կուտամ:

Արեստավորները գնացին իրանց գործին: Վարպետները պատրաստեցին ամենը իրա արեստին համապատասխան խաղալիքներ: Քարտաշը բերեց քարից շինած փոքրիկ տուն՝ իրա հարմարություններով, երկաթագործը բերեց երկաթից շինած սիրուն ֆուրղուններ և ուրիշ շատ լավ խաղալիքներ, իսկ դիրգարը բերեց մի փետե ձի, որը սհաթի նման ղուրմիշ կարելի էր էնել:

Երեխան նայեց էս խաղալիքին, էն խաղալիքին, ոչ մեկը դուր չեկավ, բացի փետե ձիուց: Շատ սիրեց էդ փետե ձիուն: Խելքը տվեց էդ փետե ձիուն ու միշտ հետը կը խաղար: Քանի փոքր էր, ձիուն ղուրմիշ չէր անում, երբ դառավ յոթ-ութ տարեկան, ու խելքը հասավ, մի օր պտտում է ձիու ղուրմիշը ու թռնում է օդի մեջ: Շատ է գնում, քիչ է գնում, աստված գիտե, հասնում է մի երկիր և իջնում է մի հսկա շենքի պատի տակ:

Երեխեն նստում է, սոված-ծառավ դես-դեն է նայում և չգիտե՝ ինչ անի:

Հանկարծ պատուհանից խնձորի կլեպներ են վար գցում: Սոված երեխեն հավաքում է կլեպները և ուտում:

Դու մի ասի դա թագավորի պալատն է, և կլեպ գցողը թագավորի աղջիկն է:

Երբ աղջիկը տեսնում է, որ կլեպները երեխան կերավ, մի խնձոր է գցում պատուհանից: Երեխեն վազզում է ու խնձորը վերցնում, ագահաբար ուտում: Աղջիկը հագուստից հասկանում է, որ դա թագավորի երեխա կը լինի, հարցնում է.—Ի՞նչ երեխա ես, որտեղի՞ց ես եկել, ինչպե՞ս այստեղ ընկար:

Երեխան պատմում է, որ նա այսինչ թագավորի տղեն է, եկել է այստեղ իրա փետե ձիով:

—Կարո՞ղ ես գալ վերև՝ ինձ մոտ,—ասում է աղջիկը:

—Եթե թույլ տաս, կգամ վերև՝ ձիուս հետ:

Աղջիկը թույլ է տալիս և տղին իր ձիու հետ պատուհանից նես է բերում, կերակրում է,

հանգստացնում և հարցուփորձով իմանում, որ նա թագավորի տղա է:

Աղջիկը տղային ցերեկը պահում է իրա տոլաբի մեջ, իսկ գիշերը առնում է իրա ծոցը և միասին քնում:

Պալատում ոչ ոք չի իմանում, որ աղջկա մոտ երեխա կա:

Այդպես շարունակվում է յոթ տարի: Եվ երբ երեխեն դառնում է տասնուհինգ տարեկան ու խելքը սկսում է կտրել, դառնում են աղջկա հետ մարդ ու կնիկ:

Որոշ ժամանակից հետո աղջկա գոգնոցը բարձրանում է: Աղջիկը ասում է.—Էստեղից պետք է հեռանալ, թե չէ հերս որ նկատեց, ինձ կսպանե:

Տղեն կը պատասխանե.—Ցերեկը ինձ տոլաբումդ ես պահել, գիշերները՝ ծոցդ, ես ճար ու ճամփա չը գիտեմ:

Աղջիկը կը հարցնե.—Ձիդ որ ղուրմիշ էնես, կը կարողանա՞նք թռնել:

Տղեն թե.—Կը կարողանանք:

Այդ ժամանակ աղջիկը վերցնում է իրա հետ բավակնին ոսկի, փող, ուտելիք: Նստում են ձիուն, ղուրմիշ անում ու թռնում: Ճանապարհին շատ ուժեղ քամի է բարձրանում, ձիու ղուրմիշը փչանում է, իջնում են գետին մի անապատ տեղ: Էդտեղ կնոջ ցավը բռնում է, ազտվում է՝ մի մանչ տղայով: Ի՞նչ պիտի անեն, թռնել չեն կարող, ոչինչ չունին իրանց երեխին խնամելու համար: Տղան ասում է.

—Դու էստեղ նստի՛, ես գնամ տեսնեմ էնտեղ մի բարակ լուս է երևում, մի բան բերեմ, որ կարողանանք երեխին խնամել:

Գնում է, տեսնում է, որ ոչինչ չկա իրան օգնելու, շարունակում է գնալ, ճամբեն կորցնում է: Աղջիկը սպասում է, բայց տղեն չկա ու չկա:

Էդ ժամանակ գալիս է մի չոբան՝ սուրուն առաջը խառնած: Չոբանը որ տեսնում է ջահել, գեղեցիկ աղջկան, ուզում է փաթաթվի ու համբուրի:

Աղջիկը ասում է.—Ես նոր եմ ազատվե, երեխա ունիմ, գնա գյուղից ջուր բեր, աման բեր, շոր բեր, ես էլ, երեխեն էլ լողանանք մաքրվինք, հետո ես քուկդ եմ, դու իմս ես:

Չոբանը ուրախանում է, սուրուն թողնում է ու գնում գյուղը, որ այդ ամենը բերե, որ աղջիկը իր կինը դառնա:

Չոբանը որ հեռանում է, աղջիկը իրան հավաքում է, վերցնում է երեխին, մի ճամփա բռնում ու փախչում: Շատ է գնում, քիչ է գնում, աստված գիտե, հասնում է մի քաղաք: Աչքը ընկնում է մի հիանալի մեծ շենքի: Կա-չկա սա թագավորի պալատ է: Տեսնում է պալատի կողքը մի մեծ այգի կա: Մտնում է մոնձղոլից[58] այգին: Այգում շատ մրգի ծառեր են լինում, քաղում է ու նորից դուս գալիս: Տեսնում է ահա լիճ կա, վրեն էլ գամի է կայնում, մտնում է գամու մեջ: Երգյանը բաց թողեց ու ճանապարվեց, գնաց ծովի երեսեն:

Թող աղջիկը իրա երեխով ծովի երեսովը ման գա, մենք խաբար առնենք, թե տղեն ինչ եղավ:

Շատ ման գալուց հետո գալիս գտնում է տեղը [որտեղ իջել էին], բայց կինը, երեխեն չկան, փետե ձին էլ կոտրած, ընկած մի կողմ: Գնում է քաղաք, դերվիշի շորեր հագնում ու ճամփա ընկնում իրա կնոջը և երեխին գտնելու համար:

Հիմի խաբարը առնենք չոբանից: Չոբան՝ քի չոբան, ուրախացած, կուժով ջուրը, պղինձը, երեխայի շորերը ձեռին գալիս է, տեսնում է՝ ոչ աղջիկ կա, ոչ երեխա և ոչ էլ իրա սուրու օչխարը: Հեչ բան աչքին չի երևում [մտածում է]. «Ման գամ էդ գեղեցիկ աղջկանը գտնեմ, դարձնեմ ինձ կնիկ»:

Գնում է, հագնում է դերվիշի շորեր, ճամփա է ընկնում, որ գնա գտնի էն սիրուն աղջկան:

Թող էդտեղ չոբան-դերվիշը ման գա: Մե դերվիշը էրկու դերվիշ դառան:

Գամջին էլ գալիս է տեսնում, որ իրա գամին չկա, նա էլ դերվիշ դառած կէրթա իրա գամին գտնելու: Թող էտ էլ էդպես ման գա, մինչև իրան գամին գտնի:

Թագավորը՝ տղի հերը, առավոտը որ վեր է կենում, յայտնում են, տղան չկա, ձին էլ հետը: Ման են գալիս իրանց երկրում, ոչ երեխա կա, ոչ՝ ձի: Թագվորն էլ հագնում դերվիշի շորեր, ընկնում է քաղաքե քաղաք, որ իրան տղին գտնի: Թող դա ման գա մինչև իրա տղին գտնելը:

Խաբար առնենք աղջկա ծնողներից:

---

58 Մոնձղոլ – անցք, որից ջուր է գալիս (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Պալատում հայդեբուդուր են քցում, որ աղջիկը պալատից անհետացել է: Շատ են ման գալիս իրանց երկրում ու չեն գտնում: Աղջկա հերը՝ թագավորն էլ, պալատը թողնում է նազիր-վազիրին, հագնում է դերվիշի շորեր, գնում քաղքոց քաղաք՝ աղջկան գտնելու համար: Թող թագավորը ման գա իրա աղջկան գտնելու:

Խաբար առնինք էն թագավորի երկրից, որտեղ աղջիկը նստեց գամին ու ման էր գալիս ծովի երեսին: Էդ թագավորը հալիվոր էր, ուներ եռեսունըիննը կնիկ, ուզում էր մե ջահել կնիկ'մ էլ առներ, որ էղնեին քառասուն կնիկ: Ու հայտարարում է, թե. «Ով որ մի ջահիլ գեղեցիկ աղջիկ բերի, նրան մեծ պարգև կտամ»:

Թագավորի բաղբանջին լսում է, որ թագավորը սիրուն աղջիկ է ման գալիս:

Աղջիկը ամեն օր մտնում էր թագավորի բաղը, մրգեր հավաքում, տանում, որ տղայի հետ ապրեն: Էդպես մի քանի տարի:

Առաջ բաղբանջին ոչինչ չէր ասել. «Քասիբ աղջիկ է, թող տանի ապրի», բայց երբ որ իմանում է թագավորի հրամանը, միտքը փոխում է. «Որ մեկ էլ աղջիկը գա, շատ սիրուն լավ աղջիկ է, տանեմ թագավորի մոտ»:

Երբ որ աղջիկը գալիս է թագավորի բաղը՝ մրգեր հավաքելու, բաղբանջին մոտենում է ու ասում.—Ինչ աղջիկ ես դու, ո՞վ ես դու:

Աղջիկը թե.—Քասիբ, անտեր-անտիրական աղջիկ եմ:

Բաղբանջին թե.—Թե որ անտիրական ես, արի տանեմ քեզ պալատ:

Գնում են պալատ:

Մայրը տղին, որ դառել է յոթ տարեկան, ամեն անգամ հեռանալիս տղային պատվիրում էր. «Տղա ջան, եթե կուշանամ, չը վախենաս, [նստի գամին] ման արի ծովի երեսը, մինչև ես վերադառնամ»:

Երեխան տեսավ, որ մայրը ուշացավ, սկսում է ման գալ գամով ծովի վրա, բայց մայրը չը վերադարձավ...

Թագավորը որ տեսավ աղջկանը, խելքը գնաց, ասաց.—Ես ունիմ եռեսունըիննը կնիկ, դու կեղնիս նրանց սուլթանը:

Կինը ասում է.—Լավ, ինձ ժամանակ տուր մտածելու:

Թագավորը.—Համաձայն եմ, մտածիր:

—Դու քու կանանց հետ ինձ ծանոթացրու:

—Համաձայն եմ,—ասում է թագավորը:

Բերում են լավ, գեղեցիկ շոր են հագցնում, աղջիկը ավելի է գեղեցկանում:

Թագավորը իրա բոլոր կանանց հրավիրում է մեծ դահլիճը ու ծանոթացնում է բոլոր եռեսունիննը կանանց հետ: Նրանք բոլորն էլ տխրում են, որ նորեկը իրանցից բոլորից գեղեցիկ է, դրա համար թագավորը նրան շատ է սիրե:

Աղջիկը ասում է.—Թագավորն ապրած կենա, դու գնա պալատ [քու սենյակդ], հանգստացի, մենք իրար հետ մոտիկ ծանոթանանք:

Թագավորը համաձայնվում է, թողնում է կանանց, գնում է իր սենյակը՝ հանգստանալու:

Աղջիկը լեզվով-բերնով է լինում: Խոսում է: [Կանայք] տեսնում են, որ աղջիկը ըսկի ուրախ չէ, որ իրան բերել են թագավորին որպես կնիկ, բացվում են:

—Ուզո՞ւմ եք էստեղից ազատվել,—հարցնում է աղջիկը:

—Բա չե՞նք ուզում էդ հալիվորից ազատվել, երանի մի ճար էղներ էստեղից փախչել:

Համաձայնվեցան, որ նրանք բոլորը կը հպատակվին աղջկանը, որ նա իրանց ազատե հալիվորի ձեռքիցը: Բոլորն անցան իրանց առանձին սենյակները: Աղջիկն էլ գնաց իրա առանձին սենյակը:

Թագավորը գալիս է աղջկա մոտ:

—Թագավորն ապրած կենա,—ասում է աղջիկը,—ըստ մեր սովորության, մյուս կանանց հետ միասին առավոտը գնանք բաղնիք, մաքրվինք, գնանք մեջիթ աղոտք անենք, նոր գամ կամքդ կատարեմ:

Թագավորը ասում է.—Համաձայն եմ, իրավունքն քունն է:

Առավոտը քառասուն հոգին էլ հավաքվեցին ու դուս եկան գնացին բաղնիք, լողացան, գնացին աղոթք արին, բերեց բաղը, ասաց.—Ինչքան կրնաք՝ միրգ քաղեք, լցեք փեշերդ: Ահա դուս գանք, նստենք էդ գամին, մի քիչ ման գանք:

Քառսունն էլ լցվում են գամին:

—Ա՜յ տղա, մեզ տար ման ածե:

Երգանները բաց են անում ու գնում ծովի երեսը: Զարդերը հավաքում է.—Չվախենաք, ազատեցի:

Տեսնում են դեմը մի քաղաք: Զարդերը տալիս է տղին, որ [քաղաքում] ծախի:

—Որ ծախես քառասուն մե հատ միատեսակ տղամարդու շորեր կը բերես՝ փափաղներով, քառասուն մե հատ էլ ձի [կառնես]:

Գամին սկեցնում են, բոլորը հագնում են տղամարդու շորեր, մազերը դնում են փափաղների տակը ու դառնում են ջահել տղեք: Ձիանը նստում են ու գնում: Շատ են գնում, թե քիչ, թող գնան:

Խաբարը առնինք [հալիվոր] թագավորից: Թագավորը սպասում է, կնթիկը չկան: Ինքն էլ է հագնում դերվիշի շորեր, գնում իրա քառասուն կնթոցը գտնելու: Թող ման գա, մինչև գտնի:

Աղջիկները՝ [թագավորի կնթիկը] գնում են հասնում են մի քաղաքի ծայրը: Էդտեղ ժողովուրդը հավաքվել է, դովլաթ-տան ղուշ են բաց թողել՝ թագավոր ընտրելու համար: Ղուշը գալիս է թագավորի աղջկա գլխին կանգնում:

Աղջիկը ասում է.—Մենք ճամբորդ մարդ ենք, թողեք մեր ճանապարհը շարունակենք, դուք ձեզ համար գտեք:

Էլի են բաց թողնում, ղուշը էլի է գալիս էդ աղջկա գլխուն կանգնում:

Երբ երեք անգամ ղուշը կայնում է աղջկա գլխուն, ժողովուրդը գալիս է ու ասում.—Դու ես մեր թագավորը, որ դու ես, քեզ բաց չենք թողնում:

Երբ որ շատ խնդրում են, աղջիկը ասում է.—Լավ, համաձայն եմ, միայն իմ ընկերներն էլ պետք է գան ինձ հետ:

Համաձայնվում է ժողովուրդը: Աղջիկը դառնում է թագավոր:

Թագավորը հրամայում է.—Մի խեյրաթխանա բաց արեք, ղարիբ մարդիկ թող գան ուտեն-խմեն:

Բաց են անում խեյրաթխանեն: Իրա նկարը, աղջկա շորերով, կախում են խեյրաթխանի դռան վերևը, կողքին էլ մի աղբուր [շինում], պահակը կողքը նստացրեց ու ասաց.—Թող գան ձրի ուտեն-խմեն ու գնան: Ով որ նայեց նկարին ու «ախ քաշեց», պահակը բռնի ու տանի թագավորի մոտ:

Բոլոր դերվիշները հերթով գալիս են էդ քաղաքը, որը մեծ քաղաք է լինում, և ամեն կորած մարդու էդտեղ կը գտնեն:

Առաջ գալիս է դերվիշ՝ փետե ձիու տղի հայրը: Մտնում է խեյրաթխանեն ճաշ է ուտում, ջուր խմում, դուս գալիս: Երբ տեսնում է աղջկա նկարը, «ախ է քաշում»:

Դերվիշին տանում են թագավորի պալատը: Հետո գալիս է աղջկա հերը: Ուտում-խմում, նկարը տեսնելիս մի «ախ է քաշում»:

Պահակը դրան էլ է տանում պալատ: Որոշ ժամանակից հետո գալիս է ամուսինը՝ թագավորի տղան, «ախ է քաշում»:

Չորանն էլ դերվիշի ղըլըղով գալիս ուտում-խմում, տեսնում նկարը, «ախ է քաշում»:

Գամջին է գալիս [«ախ է քաշում»]: Հալիվոր թագավոր-դերվիշը, քառասուն կնոջ տերը...

Բոլորին էլ տանում են պալատ: Բոլորին էլ ուտացնում-խմացնում, հանգստացնում... Մյուս օրը հայտարարում են. «Պալատում դատ կա»:

Լավ է, գուցե մեր կորածներին գտնենք:

Բոլորը հավաքվում են պալատում: Նազիր-վեզիրը, սաղ սինոթը: Դատը սկսվում է: Թագավորը նոր կանչում է դերվիշին՝ փետե ձիու տղայի հորը [թագավորը հարցնում է].—Դերվիշ բաբա, էկար մեր խեյրաթխանեն, կերարխմիր, ինչի՞ նկարը տեսար «ախ քաշիր»:

Դերվիշը պատասխանեց.—Սիրուն աղջիկ էր, «ախ քաշեցի»:

—Դարդդ ի՞նչ էր:

—[Ես էլ թագավոր եմ], ես ունեի մի մեկուճար տղա, մի օր էկա տեսա տղես հողի հետ է խաղում, հրաման տվի, որ տղիս համար խաղալիք շինեն: Երբ խաղալիքները բերեցին, տղես հեչ մեկին չը հավնեց, բացի փետե ձիուց: Օրեն մի օր տղես ու ձին անհետացան: Էն օրվանից տղիս ման եմ գալիս, չեմ գտնում:

—Լավ, դու նստի ղրաղ:

Կանչում է իրա հորը՝ դերվիշ բաբային:

—Ես էլ եմ թագավոր, ունեի մի աղջիկ, օրեն մի օր անհետացավ: Էն օրվանից հագել եմ դիրվիշի շորեր, քաղքոց քաղաք ման եմ գալիս, չեմ գտնում, նկարը որ տեսա, իմ աղջկան շատ նման էր, «ախ քաշեցի»:

—Լավ, թագավորն ապրած կենա, դու էլ նստի ղրաղ:

Կանչում է իրա մարդուն.—Դերվիշ բաբա, դու ինչու «ախ քաշեցիր»:

—Ես էլ մի թագավորի որդի էի, հերս ինձ ընձայեց մի փետե ձի, որը ղուրմիշ անելուս թռչում էր երկինք: Մի օր [ձիս ղուռմիշ էրի], թռա գնացի մի թագավորի պալատ, ձիս իջավ,

թուլացավ ղուռմիշը, ես յոթ տարեկան էի, թագավորի աղջիկը ինձ խնձոր տվեց, տարավ իրա սենյակը: Յոթ տարի ինձ ցերեկը պահեց տոլաբում, գիշերները՝ ծոցը: Երբ երեխովցավ, փախանք անապատ, ձին կոտռատվեց, կինս ազատվեց մի տղա բերեց: Գնացի կրակ բերելու, բան չը գտա, էկա եդ ոչ կնիկ գտա, ոչ երեխա... Նկարը տեսա, կասես իմ կնիկս է, դրա համար «ախ քաշեցի»:

—Դե դու էլ նստի ղրաղ:

Կանչում է չոբան-դերվիշին:

—Դու յընչի «ախ քաշեցիր»:

—[Ես չոբան էի սուրու՛մ օչխար առած կանցնեի անապատից] տեսա մի սիրուն աղջիկ, ուզեցա փաթթվել համբուրել, աղջիկը ըսավ. «Դու խո վայրենի չես, ես նոր եմ ազատվե, գնա գեղից ջուր բեր, շոր բեր մաքրվենք, ես քուկդ եմ»: Գնացի գեղ, ջուր, պղինձ, շոր բերի, ոչ աղջիկ գտա, ոչ երեխա [ոչ օչխար]: Էն օրվանից դերվիշ դառած ման գուկամ էն գեղեցիկ աղջկան, գտնեմ դարձնեմ ինձ կնիկ: Տեսա նկարը նրան նման է՝ «ախ քաշեցի»:

—Դու էլ նստի ղրաղ:

Կանչում են դերվիշ-գամչուն:

—Դերվիշ բաբա, դու ինչի՞ «ախ քաշեցիր»:

—Ես գամջի մարդ եմ, մարդոց տանում էի ծովի էս ափից էն ափը: Մի օր տեսա մի գեղեցիկ կին՝ տղեն գրկած, էկավ մոտս, ուզեցա փաթաթվեմ համբուրեմ, ըսավ. «Ես անտեր կին եմ, էստեղ անհարմար է, գնա միշտարի հավաքե բեր, ես էստեղ կսպասեմ, յետև ես քուկդ եմ, դու՝ իմս»: Գնացի մարդ ճարեցի, տեսա, որ գամի չկա: Հագա դերվիշի շորը ընկա քաղքոց քաղաք՝ էդ աղջկան գտնելու: Տեսա նկարը շատ նման էր էդ աղջկան՝ «ախ քաշեցի»:

—Դու էլ նստի ղրաղ:

Կանչում է վերջի դերվիշին՝ հալիվոր թագավորին:

—Դու յընչի՞ ախ քաշեցիր:

—Ես այսինչ թագավորն եմ, ունեի եռեսունիննը կնիկ: Մի օր բաղբանջիս մի սիրուն, աննման աղջիկ առավ եկավ, ուզեցի դրան սուլթան դարձնել, ժամանակ ուզեց՝ տվեցի, մի օր էլ ըսավ. «Հրաման տուր աղջիկներիդ տանիմ բաղնիք, մեջեթ»: Տարավ ու գնացին ու գնացին: Էն օրվանեն դերվիշի ղլղ հագած փնտրում եմ քառասուն կնկաս, չեմ կարողանում գտնել: Տեսա, որ նկարը շատ նման էր էն սիրուն աղջկան, դրա համար «ախ քաշեցի»:

Էդտեղ աղջիկը թագը հանում է, մազերը փռվում են վրեն, ասում է.—Ես քո աղջիկն եմ, հա՛յր թագավոր, էս էլ իմ ամուսինն է.—ու թագը դնում է տղի գլխին:—Էս էլ քո տղեդ է, հայր թագավոր,—ասում է կեսրարին:—Ասեք արժանի ե՞նք միմյանց:

—Արժանի եք, որդիք, արժանի եք:

Աղջիկը հրաման է տալիս.—Չոբանին տվեք հարյուր ոչխար, թող գնա:

Գյամջուն ասում է.—Գյամիդ այսինչ տեղն է, գնա հանի:

Հալիվոր թագավորին ասում է.—[Քո] եռեսունիննը կինը այստեղ են, եթե նրանք ուզում են, տար:

Կանայք չեն ուզում ու մնում են պալատում:

Հետո դառնում է ժողովրդին.—Ժողովուրդ, ուզում ե՞ք, որ իմ մարդս էղնի ձեր թագավորը, եթե չէ, ինքը թագավորի տղա է՝ կէղնի թագավոր:

Ժողովուրդը, սինոդը միաձայն ուզում են, որ լինի թագավոր մարդը, ինքն էլ թագուհի:

Իրանք հասան իրանց մուրազին: Քեֆ, ուրախություն յոթ օր, յոթ գիշեր:

Ամենն էլ գնում են իրանց գործին:

Երկնքից ընկավ երեք խնձոր, մեկը՝ հեքաթ ասողին, մեկը՝ գրողին, մեկն էլ՝ լսողին (որը ուստա Աշոն էր՝ պատմողի ամուսինը):

17(17). ԹՈՒՐՈՒԹԱՄՔԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակոց մի լոռդ[59] է լինում, անունը՝ Գարեգին, կնկա անունը՝ Մետաքսի: Նա բոլորովին ժառանգ չի ունենում: Նա աղաչում է, որ իրան մի զավակ լինի: Բայց նա ունենում է մի հատ տոռի մադիան, նա էլ քուռակ չի ունենում: Գիշերը էդ մարդին երազ է գալում, որ. «քեզի մի հատ տղա և ձիուն էլ մի քուռակ պիտի լինի, բայց [տղի] անունը չը դնեք հարի ես գամ»,—ասում է երազի միջի հրեշը:

Եփոր երեխան ծնվում է և մադիանից էլ լինում է մի որձ քուռակ, ամբողջ մեծամարդիկ գալըմ են աչքի լուս տալու, բայց ժողովուրդը

[59] Հարուստ մարդ (ծանոթ. բանասաց Գ. Սարգիսյանի):

ասում են. «Դնենք անուն», բայց ծնողները չեն յօժարանում: Շատ վիճելուց հետև երևում է այն մարդը, որը երազում ասել էր. «Անուն չը դնեք, հարի ես գամ»:

Եփոր երևում է այդ մարդը,ասում է.—Ինչո՞ւ եք վիճում, տղայի անունը դրեք Թուրութամք, իսկ քուռակի անունը դրեք Ղամարթայ:

Եփոր էդոնք մեծանում են սկսում են ման գալ իրանց համար, ավղուշ են անում ու վերադառնում իրանց տունը:

Շուտ մեծանալուց հետո եղնում է տղան քսանմեկ տարեկան: Նորից գնում է ավղուշի, շատ ման գալուց յետո այնտեղ պառկում է ու քնում է: Երազում տեսնում է օսկի մազերով Գյուլիզար խանումին և սիրահարվում է նրա վրեն: Գալում է տուն և յընկնում է քիթուբերնին սկսում է չխոսել և տանջվում է: Հայրը՝ Գարեգինը, և մայրը՝ Մետաքսին, հարցնում են.—Բալիկ ջան, ի՞նչ է պատահե քեզի, որ էդպես ես էղե:

Նա ոչ մի բան չի պատասխանում:

Բերում են մարդիկ, հեքիմներ շատ են չարչարվում, ոչ մի մարդ չի կարող նրա սըռը իմանա: Մի ջադու պառավ գալում է, աշում է տղի երեսին և ասում է.—Ձեր տունը շինվի, սա սիրահարվել է, հիմա բերեք մի երիտասարդ աղջկա ծծերը քսեք երեսին՝ նա կառողջանա և գելնի կայնի:

Աղջկան բերին ծծերը քսին երեսին, տղեն ոտքի կանգնեց, լավացավ:

Թուրութվանք[60] լավացավ, պատմեց ծնողներին և ըսավ.—Պապա ջան, մամա ջան, ես պիտի գնամ Չինումաչինի երկրից Գյուլիզար խանումին՝ օսկի մազերով, ինքը՝ չքնահար, բերելու, որովհետև ես սիրահարվել եմ դրա վրա:

[Ծնողները] չեն թողնում, աղաչում են բոլորովին չը գնալ, հնարավորություն չեղավ: Նա սիրահարվել էր: Տղան վերցրավ խուրջին օսկի, մնաս բարով ասավ, նստեց իր Ղամարթային և գնաց Չինումաչին երկիր:

Շատ էր գնացե, քիչ էր գնացե, չգիտեր, թե ինչպես էր էրթում իր սիրահարի համար:

... Էդ մարդը գնաց մի ճամփի հասավ, [տեսավ] էն կողմից մի ծիավոր դեպի իրան էր գալիս: Էփոր հասան իրար՝ բարևեցին:

—Ո՞ւր ես գնում,—հարցրեց Թուրութամքը:

—Էրթում եմ Չինումաչինի երկիրը աշխատանքի ու սովորելու:

Էհ, ընկերացան, ախպրացան ու շարունակեցին իրենց ճանապարհը:

Շատ գնացին, թե քիչ գնացին, նրանց գնալը թե ինչքան տևեց, չգիտեին, հասան մի քոչքիսարայի, որը սարքված է իրեք հարկից: Շատ ման էկան էս կողմը էն կողմը, ոչ մի բան չը կրցան գտնել: Երբ եդ էկան ընդից մի դուրանի մեջ գիշերեցին:

Երբ լուսը բացվավ սրանց վրեն, տեսան էրկու հոգի իրար հետ դեպի իրանց են գալիս: Էկան հասան իրար, սկսեցին բարև տալ միմիանց և հարցուփորց անել:

Եփոր հարցրին. «Ո՞ւր պիտի էրթաք», նոր գալողները պատասխանեցին:

—Մենք հարցուփորձ ենք անում որ էստեղի պալատների ապրող կինը տանելու համար:

Թուրութամքը ու երիտասարդը հարցրին.—Դուք ի՞նչ պաշտոնի տեր եք, ասեք մեզի:

Պատասխանեցին.—Ես աստղադիտար եմ, ես էլ ռամ քցող եմ:

—Դուք ի՞նչ արհեստի տեր եք, երիտասարդներ, դուք էլ ասացեք մեզի:

Թուրութվանքը պատասխանեց.—Ես կտրիչ մարդ եմ, ոչ մի մարդ իրավունք չունի դեմս խոսալու, եթե ինձ էլ սպանեն էլի ես կենդանի կամ [ու կմնամ] :

Ռամ քցողն ու աստղադիտարարը սկսեցին իրար աշել ու ուրախացան:

Ռամն քցեցին տեսան, որ դա իրանց ուզած ուժեղ մարդն է և հարցրեցին մեկել ընկորը.—Երիտասարդ, դու ի՞նչ արեստ ունես, ասա՝ իմանանք:

—Ես էլ ոչինչ չգիտեմ ղայդով, մենակ ես լողջի եմ, կարամ լողալ ծովի մեջը և ինչ որ պետքութունն է կը կատարեմ:

—Շատ լավ արեստ է, ըթից լավ արեստ ո՞ր-տից կը գտիս:

Ախպրացան չորսն էլ: Եվ շարունակեցին իրենց ճանապարհը: Գնացին հասան էդ քոչկուսարայը: Պտտվեցին չորս կողմը, ոչ մի բան չկարողացան էնել: Բայց Թուրութվանքը իր Ղամարթայը օգանգելով՝ իր գյուրզը զարկեց պարիսպը քանդեց և չորս հոգով մտան այդ պարիսպի մեջը: Երբոր մտան, գացին տեսան

[60] Բանասացը հերոսի անունը երկու ձևով է ասում՝ **Թուրութամք** և **Թուրութվանք** (ծանոթ. կազմողների):

սենյակը մի չքնաղ օրիորդ նստած քարկա է բանըմ, և օրիորդը խոսեց.—Երիտասարդներ, հավքը իր թևով, օձը իր պորտով էս հողի մեջ ոտք չէր կոխե, հիմի իրեք գլխանի դևը գուկա ձեզի փարափարա կենե:

Թուրութվանքը հարց տվավ.—Ներողություն, օրիորդ, չքնահար, ձեր երեք գլխանի դևը յո՞ւրման է գնացե:

Աղջիկը ցույց է տալում. «Այս ինչ կողմն է գնացե, դուք գնացեք մեկել կողմից, ռաստ չը գաք:

—Ներողություն, չքնաղ օրիորդ,—ասավ Թուրութամքը,—իմ եխպարներս քեզի պահ եմ տալում, թող մնան այստեղ, ես գնամ նրա [դևի] ճանապարհին:

Հեծավ իր Ղամարթայը ու դևի գալած ճամփեն գնաց: Պարսպից դուրս գալած ժամանակը մի գոռոցի ձեն ընգավ յանկաջը և ինքը շտապով իր ճանապարհը շարունակեց գոռոցի կողմը: Եփոր գնաց, ի՞նչ տեսավ: Իրեք գլխանի դևը մի ծառ քոքահան է արել, ջին ու ջանավար հավաքե ծառի գլխուն և՝ մի ձիթհանքի քար վրեն դրած:

—Հա՜, հա՜, հողեղեն,—ճվում է դևը,—ի՞նչ բան ունիս իմ հողիս, սրեն ի՞մս է, թե քուկդ է:

Թուրութվանքը գոռում է.—Սրեն քունդ է, քու հողիդ մեջն եմ:

[Դևը]ծառը վրա է անում դիպա իրան, ջին ու ջանավարը թափում՝ փախնում և ձիթհանքի քարը գլորվում և թոզ է բարձրացնում և խնդալեն ծիծաղում.—Գնաց, էլ եդ չի գա, անցավ գետնի տակը:

Թոզը դադարելուց հետո Թուրութամքը ճվում է.—Պատրաստ կա՛ց, ես եկա, սրեն իմս է:

Եվ գուրզը մեկնում է, իրեք գլխանի դևին ոչնչացնում է, քաշում է թուրը, նրա յականջներ, քիթ ու մռութը կտրում լցնում է ջեբը և վերադառնում է դեպի պալատը: Եփոր հասնում է պալատը, հանում է դևի յականջները, քիթ ու մռութը ու ցույց է տալիս կնոջը՝ չքնաղ աղջկան: Նոր աղջիկը այդտեղ պատմում է իր կենսագրությունը և սկսում է ճաշ պատրաստել իր հյուրերի համար: Եփոր եղբայրները տեսնում են Թուրութվանքին, շատ ուրախանում են, որ նա էդքան շնորհքով և ուժեղ է:

Եփոր հացկերությունը վերջացնում են, Թուրութվանքը իր ընկեր լողջուն ասում է.—Ընկեր լողջի էսիկ [աղջիկը] քու ղուսմաթն է: Աղջկան տվավ լողջուն: Իրանք կերան խմեցին, հանգիստ քնեցին:

Լուսը բացվելու ժամանակ Թուրութվանքը ասաց ընկերներին.—Մենք պիտի գնանք մեր նպատակին հասնելու համար:

Լողջուն ասավ.—Առ էս փունջ ծաղիկը, եթե ինձ վտանք հասնի, ծաղիկս կը թոռոմի, գուկաս կը հասնիս իմ հավարին:

Մնաս բարով ասեցին, վե կացան և շարունակեցին իրենց ճանապարհը:

Շատ գնացին, քիչ գնացին, հասան մի քոշքուսարայի: Եվ Թուրութամքը պտտեց քոշքուսարայի չորս բոլորը, ոչ մի ճանապարհ չի գտնում նես մտնելու: Ձղայնանալով Ղամարթային օգանկեց և գուրզը վերցրավ շպռտեց, պարիսպը քարուքանդ արավ: Ձիանը քաշին մտան Սարայի մեջ: Պալատը շինած էր իրեք հարկից:

Թուրութամքը գնաց նես մտավ պալատ, ստուգելով սենյակները, մտավ սենյակները, տեսավ, որ մի սենյակի մեջ մի հատ չքնաղ օրիորդ նստած է և իր ձեռացագործն է գործում: Օրիորդին հարցրեց.—Այստեղ մենակ ի՞նչ ես անում:

Օրիորդը պատասխանեց.—Ես մենակ չեմ, ունեմ մի ընկեր, նա հինգ գլոխ ունի, էհ, երիտասարդ, նա որ էկավ, քեզ փարափարա կէնե: Հավքը իրեն թևով, օձը՝ իրեն այստեղ չէր գտնվում, ինչպե՞ս է, որ դու եկար: Նա յիմացել է իր երեք գլխանի ախպոր սպանվելը՝ կատաղել է, քեզի որ տեսավ փարափարա կէնե: Երիտասարդ, խնդրում եմ այստեղից հեռացի, գնա, ափսոս ես:

Թուրութամքը պատասխանում է.—Էդ գազանը ո՞րման է գնացե, ճամբեն ցույց տու, ես գնամ նրա դիմացը:

—Երիտասարդ, ես քեզ խնդրում եմ, որ նա քեզ կը վնասի, ի՞նչ կարող ես անել:

Թուրութամքը չի լսում ու ուզում է գնալ: Կանչում է ախպորտանցը ու ասում.—Օրիորդ, էս ախպորտանցս յանձնում եմ քեզի, եթե ես սաղ էկա, իմ ախպորտանցս կը վերցնեմ, թե սաղ չեկա՝ իմ ախպորտանցս ճամփու կը դնես, թող յետ էրթան:

Վերցրեց իր գուրզը, նստավ Ղամարթային և գնաց էն ճանապարհով, որ դևը գնացել էր

ավղուշի: Գնաց տեսավ, որ իրեք ճանապարհ կա, նստավ էդ իրեք ճանապարհի կենտրոն տեղը և սպասում էր դևի գալուն:

Շատ սպասելուց յետո մի ճչոց ընկավ յանկաջը, ինքն իրեն սարսափեց և սկսեց մտածել. «Ես կրնամ էս թշվառին հարվածել»: Այդ միջոցին յաչքին երևաց հինգ գլլոխ ունեցող մի հսկա առյուծ [? (բանահավաք)], եփոր մոտեցավ, գոռաց.—Հա՛յ, հա՛յ, հողածին, դու ախպորս սպանիր, հիմա եկել ես ի՛մ վրեն: Հիմա կը տեսնիս ինչպես քեզ բռնոթի անեմ, պինչս քաշեմ:

Թուրութամքը պատասխանում է.—Թուր կենդանի, եթե ինձ պաշտպանի, քեզի կտորկտոր կանեմ, վերև կը հանեմ:

Եվ այդ քաջ առյուծը ճչում է.—Սրեն ի՛մս է, թե՞ քուկդ, հողածին:

—Սրեն քուկդ է, առյուծ, որ քու հողիդ մեջն եմ գտնվում:

[Առյուծը] մի ծառ էր քոքահան հանե՝ փալուտից, որ հազար ու մին ճուխկ ուներ և ինչ աշխրի երեսին կենդանի կար ճխկերի վրա էր դրե ու գոռում էր:

Եվ հսկան ծառը զարկեց Թուրութվանքին: Թուրութվանքը մի կողմ փախավ, պրծավ: Ամբողջ թոզ ու դումանը երկիրը առավ, էլ բան չէր երևում: Ծիծաղելով հսկան խնդաց, գոռաց.—Իմ վրեժն էլ առա, իմ ախպորն էլ, գնաց կորավ:

Լսվեց ձայն.—Ես սաղ եմ, սրեն իմս է չէ՞:

Թուրութամքը գուրզը վերցրեց, նստեց Ղամարթային, ելավ գնաց Դիարբեկիր ու էկավ զարկեց հրեշին, մեջ տեղեն կիսեց: Հրեշը գոռաց.—Ես կենդանի եմ, մեկ էլ արի:

Թուրութամքը ասավ.—Մի քիչ քեզ թափ տուր:

Թափ տալուն պես [հրեշը] եղավ մեջ տեղեն կես ու վայր ընկավ գետին:

Թուրութվանքը մոտեցավ իրան.—Հրե՞շ, ո՞նց ես:

Տեսավ, որ հրեշ չկա, վերջացել է, և սկսեց էնոր քիթ ու մռութը կտռտել և լցնել ջեբերը և վերադարձավ դեպի քոշկիսարայը:

Ղամարթային օզանգեց ու գոռաց.—Եղպարներ, դուրս արեք:

Այդ ձենը ընկավ օրիորդի յականջը: Գալողը գիտեր, թե հրեշն է: Եխպարներին կլորեց խսիլի մեջ և տնկեց դռան ետևը: Թուրութամքը ձին քաշեց յիրա ախոռը կապեց և բարձրացավ քոշկուսարայ: Գնաց նես մտավ սենյակ, տեսավ, որ աղջիկը լալում է: Երբ տեսավ Թուրութամքին, արտասունքը սրբեց, ուրախացավ:

—Թուրութամք ջան, ես գիտեցա հրեշն է գալիս, դու ե՞ս: Դու ազատեցիր հրեշի ձեռքից, դու էլ ազատված ես: Ես չը կարողացա ախպորտանցդ ճամբա դնել, խսիլի մեջ կլորեցի, դրեցի դռան յետևը:

Հանեց ախպրտանցը ցույց տվեց: Ախպրտանքը և իրանք էլ ուրախացան: Օրիորդը ճաշի պատրաստություն տեսավ: Նստան իրար հետ, սկսեցին ուտել-խմել: Բայց Թուրութվանքը չգիտեր աղջկա միտքը, որ ուրախանում էր, գիտեր, թե Թուրութվանքը իրան կառնի: Երկար խոսելուց յետո սկսեց քնելու տեղ պատրաստել: Բոլորի համար իրեք տեղ էր քցել. էրկուսը տեքրերուն, մեկն էլ իրան ու Թուրութամքի համար: Թուրութամքը կանչեց աստղադիտարարին ու ասավ.—Սիրուն օրիորդ, էսիկ է քու ամուսինդ, խնդրում եմ, որ քու ամուսնուդ հետ լինես:

Աղջիկը մի քիչ տխրեց, բայց ասավ.—Թուրությամք ջան, ի՞նչ բան է, որ դու ինձ չը ցանկացար, ախպորդ տվիր:

—Ես մի նպատակ ունիմ, պիտի էրթամ իմ նպատակիս հասնեմ:

Աղջիկը խոսեց.—Քո նպատակդ ո՞րն է, ասա, խնդրում եմ:

—Գյուլփերին՝ ոսկեծամը, Չինումաչին քաղաքում է գտնվում, էդ է իմ նպատակը:

Աղջիկը համբուրում է, որպես տեքոր տեղ, Թուրութամքի ձեռքը ու ասում է.—Աստված կատարե քու նպատակը:

Հանգիստ քնում են: Լուսը բացվում է, հարսը ելնում է սկսում է ճաշ պատրաստել ախպորտանցը ճամփա դնելու, ուր որ պետքն է:

Ելավ Թուրութամքը մի դաստա ծաղիկ էլ կապեց տվավ աստղադիտարարին, ասավ.—Եթե էս ծաղիկները թառամին, գիտցի, օր նեղության մեջ եմ, արի՛ հավարիս:

Թուրութամքը ու ռամ քցող ախպերը շարունակում են իրենց ճանապարհը: Շատ գնացին, քիչ գնացին, Աստված գիտե էնոնց գնալը, հասան այն քոշկուսառային, որտեղ ապրում էր յոթ գլխանի հրեշը: Շատ զարկվան էս քով, էն քով, դուռը չը գտան:

—Էհ, ի՞նչ եմ ժուռ գալում,—նստավ Ղամարթային, ուժեղ օզանգեց ու գուրզը դեպի

պարիսպը քցեց, պարիսպը քանդուքարափ էղավ, մտան հայատը:

Ձին քաշեց տարավ հրեշի գոմը կապեց: Եփոր ման էին գալիս, ման գալով գնում են սենյակները, տեսնում են մի օրիորդ նստած քարկա է անում: Դա մի հրեշտակ էր, ամենագեղեցիկն էր, փոքր քուրն էր: Տեսնելով՝ ուրախանում են: Թուրութամքը մտածում է. «Իմ Գյուլփերին անպատճառ սրանից սիրուն կեղնի»: Երազով էր տեսել:

Էդ օրիորդը տեսնում է տղոցը, շատ տխրում է.—Էհ, հողածիններ, էս քաֆուրի ձեռը դռիք էլ յընկաք, եթե նա էկավ ձեզ տեսավ, լիմա-լիմա կենե ձեզի:

—Օրիորդ, յընչի՞ կը վախեցնես:

—Էհ, չեմ վախեցնե, իրեք ախպերը թագավոր հորս ամբողջ զորքը ջարդին,մեզ էլ՝ իրեք քրոջս, բերին կնության համար:

Թուրութամքը ասում է.—Էդ հրեշը յո՞ւր է գնացե:

—Շատ եմ խնդրում, երիտասարդներ, թողեք գնացեք ձեզի համար, դուք էդ հրեշի դեմը ի՞նչ կարող եք անել, նա յոթը գլոխ ունի, դժվար է նրան յախթելը: Նա յիմացել է, որ իրա էրկու ախպրտիքը զոհվել են, ոչ գիշերը քուն ունի, ոչ զօրը՝ դադար, շատ է տանջվում էդ մասին:

—Դու ինձ վախեցնում ես, ես բոլորովին չեմ վախենա, դրան էլ ախտ կանեմ, քեզ էլ կազատեմ էդ գերեզմանից:

—Մի՞թե դու էդքան ուժեղ ես, երիտասարդ:

—Դու ցույց տուր ճանապարհը, յո՞ւր է գնացե հրեշը, ես գնամ նրա հախիցը գամ:

—Նա որսի է գնացե:

—Ո՞ր ճանապարհով է գնացե, ցույց տուր:

Աղջիկը ցույց է տալում ճանապարհը:

—Ես ափսոսում եմ, երիտասարդ, այս երկրի վրա ոչ հավքը իր թևով, ոչ էլ օձը իր պորտով չեն էկե, իզուր տեղն ես գնում, ես խնդրում եմ...

—Ես իմ ախպորս էլ քեզի պահ եմ տալիս, թե չը վերադարձա ճանապարհ քցե թող գնա:

Թուրութամքը քաշում է Ղամարթային դուս, նստում է Ղամարթային, էրթում է էն ճանապարհով, որով հրեշն է գնացե: Իսկ Ղամարթայը լիզու է ելնում և Թուրութամքի հետը խոսում.—Թուրութամք ջան, էս ի՞նչ ես անում, նա յոթը գլուխ ունի, չենք կրնա նրա ձեռքից ազատվի:

—Ղամարթայ ջան, ի՞նչ պիտի անենք:

Ղամարթայը պատասխանում է.—Կամաց-կամաց գնանք գընկնենք մեշի մեջ և մեզ կարող ենք պաշտպանել. ես կը փախնիմ կէրթամ ղրաղ, դու գուրզը կառնիս գելնիս մի ծառի գլոխ, եթե գուրզով զարկիր հրեշին, ծֆ չէրավ՝ արի մոտս, հեծի փախնինք պրծնինք: Էնպես նշան պիտի բռնես օր յոթ գլխի մեջտեղի գլխուն տաս, որ ամենից ուժեղն է, որ հրեշը ուշաթափ լինի:

Եվ էդպես էլ միշավարա են անում ու սպասում հրեշի գալուն: Հրեշը շատ փնչալով ու ճչալով գալում էր դեպի իրա քոշքիսարայները: Էրկու ծառ քոքեհան է արե ու բերում է, մե ծառը մի ումուզին, մե ծառն էլ մյուս ումուզին, ջանավարները խառնած ծառների ճյուղերին՝ բերում է իր ապարանքները:

Եփոր Թուրութամքը տեսավ, որ հրեշը էկավ (էդ) ծառի գլխեն որ նստած էր, նկատեց որն է մեջտեղի գլոխը:

Կանչեց Թուրութվանքը իր աստվածը և բաց թողեց գուրզը հրեշի յոթ գլխի մեջտեղը: Եփ որ տվավ, հրեշը թուլացավ, ծառները վեր ընգան: Ղամարթայը էկավ Թուրութվանքի մոտը, ըսավ.—Թռի կռնակիս:

Թուրութամքը թռավ կռնակը և վերցրավ գուրզը նորից շարունակեց գլխի մեջտեղին տալը, մին էլ որ տվավ, մեջտեղեն կես արավ:

—Ա՜յ, հա՜յ, իսան օղլի, էկար մեր իրեք ախպոր սպանեցիր, հիմի քու մարմինդ քցեմ կը ատամներուս տակը, ձթի պես կը ծամեմ:

—Հրե՞շ,—ըսավ,—քեզի թափ տուր, մի գոռոզանա, թե ես հրեշ եմ, բայց տես իսանօղլու հրեշությունը[61]:

Հրեշը թափ է տալիս իրան, իր կտորները ընկնում են գետնին, ինքը վերջանում է: Թուրութամքը մոտենում է, թուրը հանըմ է յոթը գլոխը կտռում, քիթ ու մռութը լցնում է խուրճինը ու դնում է Ղամարթայի կռնակը և տանում է հրեշի պալատը: Եփոր մոտենում է պարիսպի դռանը, նա ջղալի ձայնով գոռում է.—Ռամ քցող եղբայր, դուս արի:

Եփոր ախպոր ձայնը լսում է ռամ քցողը դուս է վազում, բայց օրիորդն էլ է ռամ քցողի յետվեն վազում, ուրախությունից մռութը [պռունկները] ճեղքում և յարունը վազում է և մո-

[61] Ուժը (ծանոթ. բանասացի)

տենում է Թուրութվանքին: Եփոր մոտենում է, Թուրութվանքը հանում է հրեշի գլուխները, քիթ ու մռութը թափում է օրիորդի յառաջը: Օրիորդը սարսափեց, մտածեց. «Էսիկ հրեշից էլ է ուժեղ»,—մտքով ուրիշ տեսակներ անցավ:

Եփոր մտան նես օրիորդը սկսեց հացի պատրաստություն տեսնել և սեղանը պատրաստել: Շատ ուրախացավ, որ հրեշի ձեռքից պրծավ: Կերան, խմեցին, ուրախացան իրեք օր: Երկար խորաթից յետև աղջիկը հարցրավ.—Թուրութվանք ջան, աստվածությունը մեզ համար էր ղրկե քեզի մեզի գերությունից ազատելու:

Թուրութվանքը կըսե.—Որտեղացի՞ եք, ի՞նչ բան է, որ դուք յընկեր եք հրեշների ձեռը:

—Մենք այսինչ երկրի թագավորի աղջիկներն ենք, իրեք քուր ենք: Դևերը էկան մեր զորքը ջարդին մեզի գերի բերին՝ իրանց կնության համար:

Աղջիկը հարց է տալիս Թուրութվանքին.—Դու ո՞ւր ես գնում, ի՞նչ նպատակի ես ման գալում:

—Ես մուրազ ունիմ, ես քեզի հարց տամ. Չինումաչինի երկիրը ո՞րտեղ է գտնվում, դու մոտիկ ես ապրում: Հրեշը չի՞ ասե քեզ, թե Գյուլփերի, ոսկեմազ աղջիկը ո՞րտեղ է գտնվում, էդիկ է իմ մուրազս:

[Աղջիկը պատասխան կուտա].—Ես յիմացել եմ այդ երեք ախպեր հրեշները շատ են գնացե-էկե, չեն կարողացե դրան ձեռք բերել, նա սռի թուլլա ունի, ոչ մի մարդ չի կարող նրան մոտենալ:

—Դու ինձ վախեցնո՞ւմ ես, ի՞նչ է, ես իմ մուրազին չպիտի՞ էրթամ հասնիմ:

—Ինձ հրեշը մի մատնի է տվե, եթե ջրի մեջ զարկես, ջուրը կը սառի, էդքանը գիտեմ, ուրիշ բան չ'իդեմ, ուզում ես, ա՛ռ էս մատնին: Մատանին տվեց Թուրութամքին և խոսակցությունը վերջացավ և տեղերը սարքեց՝ հանգստանալու համար: Երկու տեղ սարքեց. մեկը ախպորը, մեկն էլ յիրանց համար:

Եփոր ելան քնելու Թուրութամքը կարգադրեց.—Սիրուն օրիորդ, դու իմ ախպորս՝ ռամ քցողի նշանած ես:

Օրիորդը շատ տխրեց, էկավ Թուրութվանքի ձեռը համբուրեց ու գնաց մտավ ռամ քցողի տեղը, և հանգիստ քնեցին:

Յառավոտը լուսը բացվելու պես, լուսը բացվի բոլոր հայ ազգի վրա, նոր հարսը ելավ սկսեց ճաշ պատրաստել: Կերան, խմեցին, ուրախացան, և Թուրութամքը մնաս բարով արավ, մի փունջ ծաղիկ էլ տվավ հարսին ու ռամ քցողին ասավ.—Եթե ես նեղության մեջ ընկա [էս փունջ ծաղիկը կը թառամի] գաք հասնեք իմ հավարին:

Եվ շարունակեց իր ճամփեն դեպի այն տեղ, որտեղ գտնվում էր Գյուլփերին՝ ոսկե մազերով:

Շատ գնաց, քիչ գնաց Աստված գիտե նրա գնացածը, հասավ մի փոքր լճի: Էնտեղ Ղամարթայը կանգ առավ, ասավ.—Ո՞ւր ես էրթում, յընձի ծածկե էս մեշի մեջը, որ չը նկատեն, իսկ դու կամաց-կամաց գնա և էդ լճի մոտը մի փոս փորե, մտի մեջը կանանչով ծածկե:

Շոքը որ զոռեց Գյուլփերին էկավ, շորերը հանեց, դրավ լճի կողքին և ինքը մտավ լճի մեջը սկսեց լողանալը: Եփոր լողացավ պրծավ, երեսը դենը արեց, ուզեց շորերը վերցնել (Թուրութամքը շորերը վերուցել պահել էր) աշեց բոլորը՝ շոր չկա: Ճչաց, որոտաց: Շատ ճչալուց, որոտալուց յետո սկսեց աղաչելը.—Շորերս տու հագնիմ, ինչ որ կամենաս էն էլ կէնեմ, խոսք տուր ոչ մի բան չըսեմ:

Թուրութամքը շորերը տալում է: Ղամարթայը ուզում է ասել. «Մի տա», բայց հեռու է:

Գյուլփերին փախնում է և ընկնում է իր պալատը : Բայց եփոր դուս է գալում և սկսում է լավ նայելը, մտածում է. «Երազիս տեսած տղան էր, որ ինձ հետ կայնած էր»: Փոշմանում է ու պալատից դուս է գալըմ: Եփոր Թուրութվանքը Գյուլփերուն տեսնում է՝ ուշքը անցնըմ է: Երկար մնալուց յետև Գյուլփերին գալում է իր շամամ ծծերը երեսին քսելով օյամիշ է անում Թուրութամքին: Աչքերը բանում տեսնում է, որ Գյուլփերին կայնած է գլխի վերևը:

—Էէ՛, ինչքան քնել եմ:

—Չէ, չես քնե, չես քնե, ել էրթանք իմ պալատը, տես՝ քեզ ինչ պիտի անեմ:

Տանում է պալատ մի կացին տալում է Թուրութամքի ձեռը. «Էս փետը ջարդե»:

Ղամարթայի ըսածը միտքն է յնկնում որ «Կացինը փետին չը զարկես, որ զարկեցիր՝ զորք կը թափի, քեզի կը փչացնե»:

Եվ սկսում է պոչը դառցնել ու փետին զար-

կել: Երբ որ [պոչով] զարկում է, ոչ մի բան չի պատահում: Թըլլսըմը վերանում է:

Գյուլփերին ասում է.—Թուրութամք, մի բան էլ ասեմ ու վերացնենք կը յամեն ինչ: Էս ջուրը առ, դիր գլխուդ, ելի բարձրացի էս ծառը ու յիջի օր ջուրը չը թափի:

Թուրութամքը.—Դու նես գնա, ես կանեմ:

Գյուլփերին նես է գնում: Թուրութամքը մատնիքը իրեք անգամ պտտցնում է ջրի մեջը, ջուրը սառում է,ամանը դնում է գլխուն ու վեր է ելնում ծառին: Ելնում յիջնում է, ոչ մի բան չի պատահում: Էդ թըլլսումն էլ վերանում է: Նորից մատնիքը քսում է՝ սառույցը ջուր է դառնում: Էստից յետև միանում են իրար [հետ]:

—Գյուլփերի,—ասում է Թուրութամքը,—չես հարցնում, ես պահուստ ունիմ էստեղ, մի քիչ էստեղ ըսպասի, ես գնամ իմ պահուստս բերեմ:

Էրթում է իր ձին բերելու: Գնում է Ղամարթային մի լավ թիմար է տալում, զենք ու զրահ հագնում, ձին խաղացնելով գալըմ է պալատի յառաջ: Որ տեսնում է՝ Գյուլփերին նոր զգաց ու հավատաց, որ իրա երազում տեսած տղան է: Նոր փաթաթվում են իրար, համբուրվում և դառնում են իրար հարազատ մարդ ու կին, ամուսիններ:

Երկար ապրելուց յետո Թուրութվանքը էրթում էր ավղուշի, իսկ Գյուլփերի խանումը նստած իր տանը մտածում էր. «Երբ պիտի գա, որ ուտենք, խմենք, խոսինք...»

Մի օր Թուրութամքը ասում է.—Գյուլփերի ջան, էրթանք լիճը լողանանք:

Էրթում են ծովի մեջը լողանալու: Լողանում վերրջացնում են: Գյուլփերին ոսկեզոց մազերը սանդրելով թնջուկը հավաքում է իր բուռը:

Թուրութամքը ասում է.—Գյուլփերի ջան, էդ ինչ ես անըմ:

—Սա ես համարում եմ, որ սրանից մեզի վնաս գուկա:

—Է,—ըսավ Թուրութամքը,—սա ինչ է, որ մեզի վնաս տա,—ձեռքեն առավ ու թաբլեց ծովը:

Էդ մազե թնջուկը սկսեց գնալ ու գնալ ու հասավ մի երկիր մի թագավորի պալատի տակ կայնավ: Թագավորն էլ յիրիկուն գնաց պալատի բոլորը պտտում էր: Տեսավ մի բան մթանը լուս է տալում, պալատի տակը պեծկըլտում: Կանչեց իր վազիրին ու կարգադրեց.—Լողջի բեր, որ աշե թե պատի տակին էս ինչ լուս է:

Լողջին մտնում է ջուրը, ման է գալում, տեսնում է օր մի տեսակ մազի թնջուկ: Նա ձեռը առավ դուս էկավ և բերավ թագավորի պալատը:

Թագավորը ասավ. «Էս ի՞նչ բան է, մազ է՞, թե օսկի»:

Հրաման տվավ ամբողջ ժողովրդյան, որ գան գտնին, էս ի՞նչ բան է:

Ամբողջ ժողովուրդը գալիս է. չի կարող գտնել, թե ինչ բան է: Թագավորը հարց է տալում.—Էլ մարդ չկա՞:

Մի մարդ ասում է.—Էս ինչ տեղը պառավ'մ կա՝ իննսուն տարեկան, թե գտնի նա կը գտնի, թե չէ ուրիշ մարդ չի գտնի:

Գնացին պառավին բերեցին թագավորի պալատը: Ցույց տվավ թագավորը.—Քուրս, էս ի՞նչ բան է, օր էսքան լուս կուտա:

—Թագավորը սաղ էղնի, էդքան էլ չ'իդե՞ս, թե ինչ բան է սա: Սա Գյուլփերու գլխու մազերն է, բա դրա տիրոջը տեսնի՞ս, թե ինչքան լուս է տալիս երեսը, գլուխը:

Թագավորը հիանում է. -Մի՞թե էսպես մարդիկ (կնթիկ) կան յաշխրի երեսը: Էէ՞, պառավ, էսքան բանը գիտենալով, կարա՞ս էսոր տիրոջը բերե ինձ մոտ, քու կշեռքնոցով մեկ օսկի կուտամ, եթե բերես հասցնես ինձ:

Պառավը ասում է.—Թագավորն ապրած կենա, ինձ համար կը շինես մե խնոցի. Մեջը՝ նշխուն, դուսը՝ նշխուն, մի չտեսնված բան, որ էրթամ նրան դնեմ խնոցու մեջ, բերեմ քեզ:

Թագավորը պատրաստում է խնոցին, տալում պառավին, ասում.—Արի գնա:

Պառավը նստում է խնոցու վրա, օձը ղամշի է անում, ծովի յերեսին էրթում է դեպի Չինումաչինի երկիրը: Գալում է, ծովիցը դուս է գալիս և խնոցին տանում է ղամիշների մեջը պահըմ, օձն էլ կոխում խնոցու մեջը ու բերանը փակում: Ինկը կամաց-կամաց շարունակում է էրթալ Գյուլփերու պալատները:

Խաբարը տանք Թուրութամքին: Նա Ղամարթային նստած ավղուշի տեղիցն էր գալիս: Տեսավ էդ պառավին կայնեցրավ ձիուն: Ղամարթայը խրխնջաց, չը թողեց մոտիկ գալու, ասավ.—Քեզի սրանից վնաս գուկա:

Թուրութամքը սկսեց ղամչով ձիուն մտրակել: Ձին ինատ էրավ ու բոլորովին չը խոսեց:

—Մայրիկ ջան, որտեղից գուկաս,—հարցրավ պառավին:

—Ղուրբանդ էղնիմ, բալիկ ջան, բոլոր յընկերներս հաջ գնացին, ձիս սատկեց, ես մնացի էստեղ:

—Լավ, մայրիկ, արի գնանք մեր տունը մնա հարի յընկերներդ ուխտեն գուկան՝ կէրթաս:

Եփոր պառվին տարավ տուն ըսավ.—Գյուլփերի ջան, քեզ համար ծառա եմ բերե, որ հետդ զբաղվի, էփոր ես տունը չեմ էղնի:

—Թուրութվանք ջան, գուցե սրանից վնաս գա...

—Ինքը ինչ է, որ վենց կնիկ է, յընկերտանքը գուքան՝ կէրթա:

Խաբար տանք պառվին:

Պառավը Գյուլփերու հետ սկսեց խոսել, ուտել-խմել, համոզել.—Էյ, Գյուլփերի ջան, իմ օրերս մոտեցան, ես կը գնամ, ինչխ պիտի մենակ մնաս, ինչով պիտի զբաղվիս տեյմոր Թուրութվանքը վերադառնա:

—Էհ, մամա ջան...

—Թուրութամքի հոգու տեղը յիմացի, որ մենակ մնաս հետը զբաղվիս, հարի ինքը գա:

Յիրկունը Թուրութամքը էկավ: Յամեն անգամ Գյուլփերին վազում էր դեմը, ձին տանում կապըմ էր, փաթվում էին իրար, խորաթա անելով գալըմ էին դեպի պալատը: Բայց էս անգամը Գյուլփերին բոլորովին չը շարժվեց, չեկավ յառաջը, որ ձին տաներ կապեր: Թուրութամքը ձին տարավ իրան ձեռքով կապեց, Ղամարթայի կռնակը տրորեց, ձին բոլորովին հետը չի խոսում՝ խռովել էր:

Թուրութամքը գալում տեսնում է, որ Գյուլփերին նիհաթը կախ նստած է:

—Գյուլփերի ջան, ինչ է պատահե, ըսա:

—Էգուց մեկելօր պառավը կէրթա, ես ինչ անեմ մենակ, յոմ հետ խոսիմ, քու հոգուտ տեղը ըսա, քու հոգուտ հետ զբաղվիմ, հարի դու տուն գաս:

—Գյուլփերի ջան, ես էլ կըսեմ՝ ինչ է պատահե, որ էդքան տխուր ես, իմ հոգիս էդ ավելի մեջն է:

Պառավը յանկաջ է դնում: Քնում են: Թուրութամքը յառավոտը յելնում է նորից շարունակում է իր ավղուշին էրթալը: Գյուլփերին բերում է սիրուն շորեր է հագցնում ավելին ու սկսում է հետը խաղալ: Էլի Թուրութվանքը գալում է, Գյուլփերին ուրախ-ուրախ տանում է ձին կապում է, ավելը բերում սկսում է խաղացնելը:

Թուրութամքը քթի տակը ծիծաղում է, մտածում է. «Մազերը էրկար, խելքը՝ կարճ, իմ հոգիս ավելի մեջը ինչ գործ ունի»:

Գյուլփերին ջղայնանում է.—Դու ընձի խափում ես:

Ավելը վերցնում կոխում է կրակը:

Յէկսի օրը լուսանում է, Թուրութամքը էլի գնում է աշխատանքի, և պառավը գալըմ է, սկսում է Գյուլփերուն համոզել.—Քեզի խափե կը, թեզ էրա հոգու տեղը յիմացի, յէսօր-յէկուց ես կէրթամ:

Յիրիկունը Թուրութամքը վերադառնում է, Գյուլփերին բոլորովին դուս չի գալում, նիհաթը կախել է: Էս անգամն էլ Թուրութվանքը ասում է, որ իրա հոգին ցախավելի մեջն է:

[Գյուլփերին էս անգամ էլ սկսում է ցախավելի հետ խաղալ, Թուրութամքը էլի ծիծաղում է: Գյուլփերին լալում է. «Դու չես ուզում հոգուտ տեղը յիմանամ»]:

Թուրութամքը թե.—Գնանք քնելու ես կասիմ իմ հոգու տեղը [իսկական]:

—Գյուլփերի ջան, իմ հոգիս որ կա իմ ումուզիս վրայի թուրն է, եթե հիմա դուս քաշես՝ ես կը մահանամ:

Պառավը յականջ է դնում, ուրախանում է ու վազզում գնում քնում:

Իսկ Գյուլփերին ասում է. «Հլը փորձեմ»:

Փորձ է անում. քաշում է թուրը, տեսնում է Թուրութամքը մեռած դրության դառավ, նորից թուրը դնում է տեղը, Թուրութվանքը արմիշ է էղնում, փաթաթվում է ու ասում է.—Տեսամ, որ հոգիս տամ, ես կը մեռնիմ, էլ ինչ պիտի խաղաս:

Եփոր էդոնք քնում են, գիշերվա կիսուն պառավը գալըմ է, ուսուլ դուռը բանըմ է, Թուրութամքի թուրը քաշըմ է ումուզից ու տանըմ, թաբլըմ է ծովը: Թուրութամքը մեռնում է տեղի մեջ:

Խաբարը տանք լողջի ախպորը, տեսնում է, որ ծաղիկը թոռոմել է:

—Էյ, կնիկ,—կըսե,—հաց էրա, ես էրթամ աղբորս [հավարին] հասնիմ, նեղ դրության մեջ է:

Աստղադիտարարը տեսնում է, որ ծաղիկները թոռմած է, Թուրութամքի աստղը խավար է, կըսե.—Կնիկ, հաց էրա, ես պիտի էրթամ հասնիմ ախպորս նեղությանը:

Խաբար տանք ռամ քցողին:

Ռամ քցողը տեսավ, որ Թուրութամքի դրությունը վատ է, ծաղիկներն էլ թոռմած.—Էյ, կնիկ, հաց էրա, իմ ախպորս վտանք է պատահե, ես պիտի էրթամ հասնիմ իմ ախպորս հավարին:

Էդոնք ճամփա թող գնան, որ հարցնելով հասնին Չինումաչինի քաղաքը:

Խաբարը տանք պառավից.

Պառավն էլ.—Էհ, օղուլ, մեռել է, ինչ կրնանք էնե, արի էրթանք ման գանք, սիրտդ բացվի, էլի գուկաս կը մաղկտաս:

Պառավը Գյուլփերուն տանըմ է ծովի քանարը, որտեղ ձցումը պահված էր:

—Գյուլփերի ջան, հլը ըստեղ ման գանք: Էս ինչ սիրուն բան է, հաջապ մեջն ինչ թավուր բան է, դսից օր էսքան սիրուն է,—բանում է բերանը:—Հլը գլոխդ կոխի մեջը, նայի՛:

Եփոր Գյուլփերին գլոխը մտցնում է ձցումի մեջը, թաքմուկով ետևին զարկում քցում խնոցու մեջը, բերանը ծածկում, քցում ջուրը, օձը ղամշի անում, ինքը նստում է վրեն, լող տալով տանըմ է: Թող պառավը տանի Գյուլփերուն հասցնի թագավորին: Առնըմ է իրա կշռքով մեկ օսկին ու գնում:

Թագավորը ուզում է Գյուլփերու հետ միանալ, բայց Գյուլփերին քառսուն օր սրոկ է խնդրում:

Խաբարը տանք ախպորտանցը: Ախպրտիքը էկան հասան Գյուլփերու պալատները: Իրար հետ նես մտան, տեսան, որ Թուրութամքը գողնքի մեջը պարկած մնացել է: Եվ գնացին տեսան, որ Ղամարթայը էնքան է քանդե գետինը ոտով, որ ինքը իջել է փոսը: Նրանք ձիուն վեր հանեցին, բերին լավ թիմրեցին, առաջը լցեցին քիշմիշով կերը և իրանք էկան պալատը Թուրութամքի մոտը նստեցին:

Աստղադիտարարը սկսեց աստղին նայել.—Ախպրտանք մեր ախպոր աստղի ղրաղը մի քիչմ պարզել է:

Ռամ քցողը քցեց ռամը, ըսավ, որ.—Մեր Թուրութամքի թուրը քցած է ծովը և ձուկը կուլ է տվե, այսինչ քարի տակն է ձուկը, թուրը կուլ տալուս դեմ է առե բկին, կուլ չէ գնացե, մնացել է դուսը:

Ախպրտիքը իրեքն էլ գնացին էն տեղը, որտեղ Թուրութվանքի թուր քցած էր, ձուկն էլ կուլ էր տվե:

Լողջին հագավ իր շորերը, յընկավ ծովը, իջավ ծովի տակը, շատ ման էկավ, բեզրավ, չը կրցավ գտնել, նորից դուս էկավ, ախպրտանց վրա նեղացավ.—Էդ ինչդ եք նայում, որ չեք կարող գտնել էն քարը, որի տակն է ձուկը:

Ռամը քցեց նորից և ասեց.—Էդ քարի տակը մի ղամիշ կա կայնած, էդ ղամիշի կողքն էլ էն քարը ու ձուկն են:

Լողջին նորից հագավ իր շորերը ու մտավ ջուրը և սկսեց շրջել ծովի հատակը, ման եկավ՝ ղամիշը գտավ, քարը գտավ, էրկուսի արանքը ձուկը մտել էր ավազի մեջ և ձեռը տանելով ափլփեց ու բռնեց Թուրութամքի թուրը, յուզեց ձկի փորից հանելու: Ձուկը յարունը բաց թողեց, ծովը սկսեց յարնոտել և լողջին ուժեղ դուրս թռչեց, թուրը ձեռքին: Եվ իրեք ախպերով վազեցին պալատը, թուրը սրբեցին, մաքրեցին ու թուրը դրին իրա տեղը: Թուրութամքը հինգ րոպեից յետև զարթնեց:

—Օ՜հ, Գյուլփերի ջան, էս ինչքան քնել եմ և աշեց, որ իրեք ախպրտիքը գլխի վերևին կայնել են, Գյուլփերի չկա:

—Ղամարթայը որ ըսավ. «Էդ պառվից վնաս գուքա», ես չը հավատացի, տեսա՞ր վնասը ինչխ էկավ:

Թուրութվանքը գնում է Ղամարթայի վիզը փաթաթվում է, ճակատը համբուրում ու ասում.—Էստից յետև, Ղամարթայ, ինչ օր ըսես, քեզի կը լսեմ: Ախպրտիքը մնացին հոտ, կերան, խմեցին և ուրախացան, որ ախպերը ազատվավ:

—Դե, ախպրտիք ջան,աշեք, Գյուլփերուն յո՞ւր են տարե, և որտե՞ղ է գտնվում:

Ախպրտիքը սկսեցին աշել, թե Գյուլփերին որտեղ է գտնվում [ասին].—Թուրութամք ջան, եթե դու տասէրկու լիզու գիտենաս գնաս ծովի քանարին, այնտեղ էրկու հրեղեն ձիանք գուքան, էդոնց գամը էդտեղ քարի մեջն է դրած, [քարի] վրեն որ կարդաս, քարը կը բացվի:

Թուրութամքը կըսե.—Ախպրտիք, դուք գնացեք ձեր գործին, ձեր ընտանիքի մոտ: Քառսուն օր յետև էկա՝ էկա, չէկա՝ դուք կէրթաք ձեր երկիրը:

Մնաս բարով էրավ, նստավ Ղամարթայը ու գնաց ծովի ղրաղը, էկավ քարի քովը կայնավ ըսկսեց կարդալը: Կարդաց, կարդաց տասէրկու լիզու կարդաց, քարը տրաքվավ էրկու հատ սիրուն գամեր դուս էկան:

—Դու էդոնց շնորքը գիտես,—ասում է Ղամարթայը:

—Ես ի՞նչ գիտեմ:

—Էդոնք հրեղեն ձիաններ են [ու գամերն են], մենք աշխատենք պիտի, որ թռնինք կռնկներին: Նրանք կասեն. «Հանենք արևի յերեսը կայրենք ձեզ», մենք կասենք. «Գիջնենք փորերուդ տակը», էնոնք կասեն. «Մենք զարկենք գիջնենք անդունդը», մենք կասենք, «Գելնինք կռնկներուդ», էնոնք կասեն. «Ի՞նչ եք հրամայում, մենք ձեր մուրազին կը հասցնենք, ի՞նչ եք ուզում»:

Գամը կախեցին ծովի մեջ: Հրեղեն ձիանները էկան: Նստեցին կռնկներին, ինչ որ պետքն էր, իրար ասեցին ու անցան ծովի մեկել ղրաղը՝ այն երկիրը, ուր գտնվում էր Գյուլփերին:

Էկան քաղաքի մեջը, մութն յընկավ, գնացին մի պառավի քով. «Էս գիշեր մեզի ղոնախ էրա»:

—Տեղ չունիմ, որտի՞ց տեղ անեմ, էս մի կտոր տեղն է:

Թուրութամքը մի բուռ օսկի տվեց, պառավը նրանց տեղավորեց: Բերեց հաց, ձիուն կեր: Գիշերեցին հոտ: Յիրիկունը մութն էր, քաղաքի մյուս ծայրը լուս էր տալիս: Ըսավ.—Մայրիկ ջան, էս ի՞նչ լուս է:

—Վա՛յ, բալա ջան, դու չգիտե՞ս ինչ լուս է, էդ Չինումաչին քաղաքի Գյուլփերիի լուսն է: Բերել են, ինքն էլ չի համաձայնվում, որ թագավորի հետ պսակվի, մի անգամ քառսուն օր սրոկ է առե, նորից չի համաձայնվում, քառսուն օր նորից սրոկ է առե: Դրա լուսն է:

—Է,մայրիկ ջան, մե բանը ըսեմ կրնա՞ս էնե, էրթաս պալատ թագավորին ասես, որ քեզի թույլ տա էրթաս Գյուլփերուն համոզես, որ իրա հետ պսակվի, էս մատնին էլ կուտաս իրան, որ մարդ չը տեսնի: Եթե Գյուլփերին քեզ չը թողնե նես էրեսը տեսնելու, դու ասա. «Գյուլփերի ջան, թող մենակ ձեռս կոխեմ նես»:

Պառավը գնաց թագավորի պալատը, ասում է.—Թողեք գնամ թագավորին ասեմ, որ յընձի թողա գնամ Գյուլփերուն համոզեմ, որ նրա հետ պսակվի:

Պառավը գնում է Գյուլփերու մոտ.—Գյուլփերի ջան, յընձի թող նես քեզ բան եմ ըսելու:

Գյուլփերին պառավից վախենում է, նես չի թողում: Պառավը թե.—Եթե նես չես թողում մենակ թող ձեռս նես բերեմ:

Նես է տանում ձեռը դեպի Գյուլփերին, տեսնում է իր մատնիքը, պառվին ասում է.—Մայրիկ ջան, արի նես:

Բոլոր ջառեքին դուս է անում:

—Էդ մատնիք տվողը մեր տանը ղոնախ է:

Գյուլփերին պառավին ղրկում է թագավորի մոտ [ասելու], որ. «Ես քեզ հետ համաձայն եմ պսակվելու: Հրաման տուր, որ գիշերը ոչ մի մարդ դուսը չը մնա, ես գնալու եմ ման գալու, որ գամ առավոտը պսակվեմ»:

Պառավին էլ ասում է, որ Թուրութամքը գա պալատի քովը՝ այսինչ տեղը կայնի, ինձի սպասե, հարի ես դուս գամ:

Պառավը աչք լուս է տալիս: Թուրութամքը մի բուռ ոսկի էլ է տալիս պառավին: Գնում կայնում են ըսած տեղը ու սպասում: Եփոր բոլորը քնում են, Գյուլփերին դուռը բաց է անըմ և սանդուխներից վար է գալիս, իջնում պալատի ներքին հարկը: Գտնում են իրար, փաթաթվում նստում են..... և շարունակում են դեպի ծովի ղրաղը գնալ: Լուսանում է, արևը դիպնում է ոչ մի մարդ չկա, Գյուլփերի էլ չկա: Թագավորը հավաքում է զորքը, գալում են ծովի եզերքը: Թուրութամքը տեսնում է, որ զորքը գալում է, գամերը հանըմ է մեջքիցը ու Գյուլփերուն ասըմ է.—Արի շալակս և ինձ պինդ բռնի:

Գամերը կախում է ծովը: Նստըմ են հրեղեն ձիանը և յընկնում են ծովը, լողալով գնում են:

Թագավորը հրամայում է.—Դրանց բռնեք:

Զորքը գալում է, յընկնում է ծովը, կոտորվում է, և շատերը գնում են իրանց տները:

Նրանք գնում են ծովի վրեն հեռանում, կորում են աչքից: Գալըմ են էն քարի քովը, որտեղ որ գամերը պահված էին: Թուրութվանքը շնորհակալություն է յատնում հրեղեններին, որ՝ ինչպես ինձ հասցուցիք իմ մուրազին, էնպես էլ դուք հասնիք ձեր մուրազին:

Նրանք շարունակեցին դեպի Գյուլփերու պալատները գնացին: Հինգ-տասը օր մնալուց յետո Թուրութամքը առաջարկեց.—Գյուլփերի, մենք էստեղ չենք կրնա ապրի, փորցանքները շատ են, արի գնանք մեր երկիրը:

Գնից ծանդռ, բեռից թեթև իրեր վերցրին իրանց հետ, ընկան ճամփա: Էկան հասան աստղադիդարարի պալատները, մնում են էնտեղ մի գիշեր ուտում-խմում, քեֆ են անըմ, իրար հետ գնում են դեպի իրանց երկիրը:

Հասան ռամ քցողի պալատը, ըստեղ էլ կերան, խմեցին, ուրախացան, քնեցին, լուսը օր բացվավ ռամ քցողի ու կնկա հետ շարունակեցին ճանապարհը, էկան լողճու մոտ: Ըստեղ էլ կերան, խմեցին, ուրախացան ու բոլորը էկան հասան էն տեղ, որ ռամ քցողը և աստղադիտարարը ռաստ էկան ու ախպրացան: Էսոնք մնաս բարով էրեցին, փարվեցին մնացին: Թուրութամքը ու լողջին գնացին, էկան էն տեղը որ իրեք ճանապարհ էր բացվում, որտեղ լողճուն պատահավ:

—Էհ, աղբեր ջան,—փաթաթվելով, շրթունքները համբուրելով [բաժանվան]:

Լողջին գնաց իրա երկիրը:

Թուրութամքը և Գյուլփերին շարունակեցին իրենց ճանապարհը՝ իր թագավորական երկիրը: Տեսավ քաղաքի ղրաղը չոբանը օչխար է արածացնում, մի բուռ'մ օսկի տվավ նրան, ասավ.—Խաբար տարեք թագավորին որ քո որդի Թուրութամքը եկավ, Գյուլփերին էլ հետը բերավ:

Թագավորն որ իմացավ, ուրախացավ նստան թագուհու հետ կառեթ, դոխովոյ մուզիքանը զարկելով հասան Թուրութամքի մոտ և ուրախանալով՝ բերին հասցրին թագավորի պալատը: Թագավորը ծերացել էր, ժամանակը լրացել էր, տեսավ Գյուլփերուն ուշքահան էղավ: Նոր որ խելքի էկավ, սկսեց հարսանիքի թատարուկ անել: Քառսուն օր կերան, խմեցին, ուրախացան:

Ժողովուրդը արեգակին ու լուսնին չէին ըսե. «Դուս արիք», իսկ Գյուլփերուն ասում էին. «Դուս արի օր նկարդ տեսնինք» :

Եվ քառասուն օրը թմմելուց հետո, երբ հարսնիքը վերջացավ, իրեք հատ ալմա խնձոր իջավ երկնքից. մեկը՝ պատմողին, մեկը՝ գրողին, մեկն էլ՝ ընթանուր ժողովուրդին:

18(18). ԴԻՎՈԿ-ՂՈՒԿԱՆՈՍ[62]

Ժամանակով կար ու չկար, մե թաքավորըմ կար: Էս թաքավորը յիրա կնկա ու Դիվոկ-Ղուկանոս տղի հետ ելավ գնաց խաս բախչեն՝ պտտվելու: Նստան մառմառ հավուզի վրեն՝ կերուխում էնելու, մեկ էլ տեսան՝ ծառի վրեն յիրեք հատ ղուշ է կայնած: Էս ծառի վրի ղշերը սկսին յիրար հետ վիճել: Թաքավորն յուզեց ղշերուն զարգյել, թաքույին չթողեց:

Ըսեց.—Ղշերը քու մյոտ բողոքի են էկե:

Ըսեց.—Ինչ բողոք:

Թաքույին ըսեց.—Յիրեք ղշերից մեկը հըմի կսատկեցնեն, ցած կքցյեն:

Թաքավորն ըսեց.—Ընչի՞ համար:

Ըսեց.—Ղշերից մեկը մարդն է, մեկը կնիկն է, մեկն է՝ տղեն: Մարդը կնկա մայից ետո խորթ կնիկ է առե: Կնիկը մարդուն ըստիպում է, օր՝ տղիդ բտի ըսպանես, օր ես քու խետ ապրիմ:

Չանցավ կես ժամ՝ ղշերից մեկը սատկըցուցին, ցած քցյին: Էս բանը օր տեսան թաքավորն ու թաքույին, ասսու յառեջ պայման կապեցին, օր մեկնումեկի մեռնելուց ետո էլ չկարգվին, տան մեջ խորթումորի չքցեն:

Ժամանակ անցնելուց ետո թաքույին մեռավ: Թաքավորը բավականի ժամանակ մնաց առանց կարգվելու: Տղեն մեծըցավ, թաքավորը տղին ճամփեց Ռոմ[63]՝ յոթը հայտնի վարժապետների քովը սորվելու: Դիվոկ-Ղուկանոսն թող էնտեղ սորվի, մենք խաբարը տանք թաքավորից: Սինոտի բոլլոր անտամները մե օր հավաքվան, թաքավորին, թե.—Թաքավորն ապրած կենա,—ըսին,—թաքավորուտունն յառանց թաքույու չի էղի: Պտի կարգվիս, մե կնիկ առնիս, օր թաքավոր էլ ունենանք, թաքույի էլ:

Թաքավորն ըսեց.—Ես էդ բանը չեմ էնե:

Սինոտի անտամները, թե.—Յընչի՞ չես էնե:

Ըսեց.—Ես օղորմածիկ թաքույու հետ յոսյաթ եմ էրե, օր մեկս մեռնելեն ետո, մեկելըս չկարգվի:

Սինոտի անտամները շատ ըստիպեցին, թաքավորի ճարը կտռավ, համաձայնըվավ: Գնաց թաքավորը, տասնըհինգ-տասնըվեց

---

62 Այս հեքիաթը թե տեղանուններով, թե՛ հերոսների անուններով ունի ընդգծված հունական (բյուզանդական) ծագում (ծանոթ, բանահավաք Ստ. Խաչատրյանի):

63 Հռոմ (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

տարեկան մե ախչիկ բերեց, կարգըվավ: Ախչիկ խո չէր, հուրի-մալաք էր: Չուտիր, չխմիր, էտոր մայ-ջամալին թամաշ էնիր:

Թաքավորին ըսեց.—Ելի էրթանք քու խազնեքըդ տեսնինք:

Ըսավ.—Էրթանք:

Քառասուն խազնեքը տեսան, վերջի դռան մոտ թաքավորը կայնավ:

Թաքույին, թե.—Բաց, էտ դուռն էլ, տեսնինք:

Թաքավորն ըսեց.—Պետք չէ, էտի մեր ուբոռնին ա:

Թաքույին յիրան-յիրան կածկածեց, թե ըստեղ մե գաղտնիքըմ կա, օր չի բանա: Շատ զոռելուց ետո թաքավորը դուռը բացեց: Թաքույին յընկավ յառեջ, իրիշկեց տեսավ, ինչ օր եթեմական դրախտն էղեր:

Թաքույին, թե.—Յըբա կսիր ուբոռնի ամ:

Թաքավորը ձեն չհանեց:

Թաքույին մանրամասը ըստուկեց, վերջի պատին տեսավ մեկ խատ նկար: Թե.—Թաքավոր, էս ինչ նկար ա:

Թաքավորը, թե.—Իմ ջայել ժամանակվա նկարն ա:

Թաքույին խորամանկ մտքով լավ զնընեց նկարը, հյազրի էկավ, օր էտի թաքավորի նկարը չէ: Թաքույին թե.—Էտի քու նկարը չէ, յոմ նկարն է, ըսա:

Շատ օր հոքուն հասուց, թաքավորն ըսեց.—Իմ տղի նկարն է:

—Բա,—ըսեց,—յուրտեղ ա տղեդ:

Թաքավորն ըսեց.—Ռոմ, յոթը վարժապետների քովը կսորվի, օր կրտուտուն ըստանա, իմ մեռնելուց ետո թաքավորե:

Էտտեղից վերադառցան, յամմենքը յիրան ննջարանը քնավ:

Լուսը բացվավ, լուսը բացվի ձեր վրեն, չբացվի թաքույու վրեն: Նստավ մե խատ նամակ գրեց Դիվոկ-Ղուկանոսին, թե. «Մերըդ մեռել ա, շուտ արի հասի»[64]:

Նամակը գնաց հասավ Ռոմ՝ Դիվոկ-Ղուկանոսին: Կառթաց, լալով տվավ յոթ վառժապետներուն: Վառժապետները որոշեցին Դիվոկ-Ղուկանոսին ճամփու դնելու, բայց էտյոնց մեծը ըսեց.—Մեր յոթից մեկը յըռամդար ա: Յըլը մեկ յըռամըմ քից:

Յըռամդար վարժապետը յըռամ քցեց: Յըռամը ցուց տվեց, օր Դիվոկ-Ղուկանոսի վիճակը շատ վատ ա: Որոշեցին յոթը վառժապետներով Դիվոկ-Ղուկանոսի հետ գնան էնոր հայրենիքը:

Ելան յընգան ճամփա: Հասան թաքավորի քաղքի մոտ, յըռամդարը նորից յըռամ քցեց: Նորից ցուց տվեց, օր Դիվոկ-Ղուկանոսի վիճակը շատ վատ կէղնի: Յոթը վառժապետներով որոշեցին, օր Դիվոկ-Ղուկանոսը յիրան լալ ու կեռի տեղ դնա: Ետո խաբար տվեցին թաքավորին, թե.—Դիվոկ-Ղուկանոսը յիրան յոթը վառժապետներու խետ էկել ա:

Թաքավորը, յիրան սինոտը մյեծ հանթեսով դիմավորեցին, առան տարան պալատ: Բերեց թաքավյորը ճաշկերուտուն տվեց: Թաքույին յիրա քառասուն ջառիեքով էնտեղ էր: Ճաշկերուտան ժամանակ յուզեցան խոսել Դիվոկ-Ղուկանոսի խետ, չպատասխանեց: Քնելու վախտն էկավ, թաքույին Դիվոկ-Ղուկանոսի խետ գացին թաքավորի խազնեքը իշկելու: Դիվոկ-Ղուկանոս չխոսաց:

Թաքույին ըսեց.—Ես քու հոր համար չեմ էկե, քու համար եմ էկե:

Տղեն տեսավ, օր թաքույու միտքը շուն ա, յիրան հեռու պայեց: Էսպեսուտունով՝ գիշերն յընցավ, էղավ սաբախտվա ժամը ինը: Թաքույին յիրան շորերը ճղեց, երեսները ճանկըռտեց, ուղի՛ղ գնաց թաքավորի դիվան: Թաքավորը սինոտի անտամներու խետ նստած էր, տեսան, զարմացան:

Թաքավորը թե.—Էտ ինչ ա էղե:

Թաքույին ըսեց.—Դու էլ չէղնիս, քու թաքավորուտունն էլ չէղնի, դիվանը գլխուդ քանդըվի: Ես էկել եմ քեզի կնի՛կ, թե՞ քու տղին: Տես՝ ինչ ա էրել ընձի: Կստիպա, օր ընձի խետ ապրի: Հըմի դուք գիտեք, կանչեք դիվան, դատն էրեք:

Թաքավորը դայիճին ճամփեց՝ Դիվոկ-Ղուկանոսին բերին դիվան: Էտտեղ հարց տվին, թե.—Իմա՞ն էղավ, օր դու քու մոր շորեր ճղիր, յուզեցիր էնոր խետ գլոխ մեկ էնե:

Դիվոկ-Ղուկանոս, չէ՞, վառժապետներ խրատ ին տվե՝ լալ ու կեռ էղի, էլի ձեն չխանեց:

Սինոտ որոշում խանեց, օր Դիվոկ-Ղուկանոսի գլոխ զարկյեն: Յոթը վառժապետներ

[64] Ասացողը չի նկատել փոքրիկ հակասությունը, Դիվոկ-Ղուկանոսի մայրը մեռել էր նրա՝ Հռոմ գնալուց առաջ, և որդին պետք է տեղյակ լիներ (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

խնթրվան, թե.—Թաքավորն ապրած կենա, թուլ տուր թաքույու խետ վիճաբանուտան մեջ մտնինք: Թե օր յինք ախտեց՝ Դիվոկ-Ղուկանոսի գլոխ զարկյեք, թե օր մենք ախտինք՝ տղին բտի ազատեք:

Թաքավորն ըսեց,—Լավ, յամեն վառժապետիդ մեկ-մեկ օր կուտամ, օր թաքույու խետ վեճ բռնվիք: Թե ախտեցիք՝ Դիվոկ-Ղուկանոսին կազատեմ:

Յոթը օր անցավ, թաքույին յոթ վառժապետին է ախտեց: Որոշումը՝ որոշում էր, Դիվոկ-Ղուկանոսին բտի գլխատեն: Յամենամեծ վառժապետը խնթրվավ, օր Դիվոկ-Ղուկանոսին թուլ տան՝ վերջի խոսքը խոսա:

Դիվոկ-Ղուկանոսը ըսեց.—Կանչեք թաքույուն ու ջառիեքին, սինոտի բոլոր անտամներին կանչեք:

Էդ բոլորն էկան ներկայացան թաքավորի դիվան: Դիվոկ-Ղուկանոսն ըսավ.—Մե խատ ձմերուկ բերեք:

Ձմերուկը բերեցին: Դիվոկ-Ղուկանոսը դիլիմըմ կիսեց, ըսկսեց պատմուտուն էնել: Տեսնինք, թե ինչ ըսեց.

—Ժամանակոց,—ըսեց,—կար մեկ խատ գեներալ: Էտ գեներալի կնիկ խորթ էր: Մեկ տղա էլ ուներ,՝ յիրան յառաջի կնկանից էր: Գեներալի շենքը շիքված էր ծովի ղրաղը: Չորս կողմը պատ էր, վրեն՝ չափառ: Մեկ օր գեներալը կնկա ու տղի խետ կէրթան խաս բախչեն՝ մառմառ հավուզի քովը հացկերուտուն էնելու: Տեսան, օր յիրեք խատ ղուշ էկան, յիջան ծառին: Ղշերը կսկսին ղալմաղալ էնել: Գեներալն յուզեցավ ղշերին սպանե, գեներալի տղեն չթողեց, ըսեց.—Յընչի՞ կըսըպանես, ղշերը կըսեն, օր վերջը դուք էրկուսով՝ մարդ ու կնիկ, բտի իմ ձեռներին ջուր լցնեք:

Գեներալը ջղայնացավ, քաշեց պիստալետն, օր տղին սըպաներ, խորթ մերը չթողեց: Տղեն փախավ: Գեներալն ինչքան պտոտվավ ետևից, չըկըրաց բռնե, բեզըրավ, գնաց քնի: «Լավ,—ըսավ,—դու մնա էտեղ, գիշերը գէլնիմ, քեզի կըսըպանեմ»: Գիշերը գեներալն ելավ, օր տղին սըպաներ, կնիկ էլի չթողեց: Լուսադեմին կնիկ տղին դրեց սնդուկի մեջ, մուշամբեց, քցեց ջուր:

Լուսն օր բացվավ, գեներալ ելավ տեսավ, օր տղեն չկա: Ըսեց, «Ախու յիրան քցել է ջուր: Գնա,—ըսավ,—քու տեղ գտար»:

Ծովի ջուրը տղի սնդուկը տալղա տվավ ու քշեց մե յուրիշ թաքավորի հողը խանեց: Էտեղ վաճառական յիրա ծառաներու խետ ման գուկար:

Ըսավ,—Էտ սնդուկ խանեք, թե օր օսկիառծաթ էղավ՝ ձեզի, ինս-ջինս էղավ՝ ընձի:

Ծառաները սնդուկը խանին, բացեցին, տեսան, օր մե խատ երիտասարտ տղա քնած, պտրուղ-պտրուղ քրտնուկ ա:

Վաճառականն ըսեց.—Էսիկ աստվածն ա ուղարկել ընձի:

Վաճառականն էրեխա չունիր, տղին վերցըրեց, էրեց յիրան հոգեկան զավակ: Վաճառականը թաքավորի սինոտի անդամ էր: Գնաց, նստան դիվան, էտ ժամանակ յիրեք խատ ղուշ սկսեցին ակուշկեն կտրցել: Թաքավորի նիստը խանգարեցին: Թաքավորը յուզեց ղշերին ըսպանել, սինոտի անդամներն ըսին.—Իրավունք չունիս ըսպանել: Էտոնք բողոք են էկե քու մոտ: Էտոնց պատասխան տու՝ էրթան:

Թաքավոր հրաման տվեց.—Ով օր ղշերի լիզուն խասկընա, թաքավորուտունը կուտամ էնոր:

Էտ խաբարը հասավ վաճառականի հոգեորդի Ալեքսանոսին: Ալեքսանոս հորն ըսեց.—Գնա թաքավորին ըսա, օր ես ղշերի լիզուն կհասկընամ:

Վաճառականը մեկել օրն էկավ դիվան, ըսեց.—Իմ տղես ղշերի լիզուն կհասկընա, յինք ձեզի պատասխան կուտա:

Թաքավորը վաճառականի տղին կանչեց պալատ:

Տղեն ըսեց.—Թաքավորն ապրած կենա, ղշերը քեզ մոտ բողոքի են էկե: Էն յիրեք ղշերից էրկուսը մարթուկնիկ են, էն էլ տղեն է: Լավ յիմացեք, օր կինը երկրորդ կնիկ է: Մարթը սովի ժամանակ չկըրաց պայե կնկան ու տղին, յիրա գլոխը առավ գնաց Ամիրքա: Խորթ մերը հաց հավաքեց, տղին պայեց, մեծըցրեց, դարձըրեց քսան տարեկան: Մեկ օր մարթը էկավ Ամիրքայից, կնկան ծեծեց, թե՝ ես իմ տղին կառնիմ կէրթամ: Կնիկն ըսեց. «Տանում ես՝ տար»: Տղեն չ'ամաձայնըվավ: Մոր դառ տանջանքը չմոռացավ: Շատ կռվելուց ետո էկել են քու մոտ, օր դու ըսես՝ տղեն հորը կհասնի՞, թե՞ մորը:

Թաքավորն ըսեց.—Յըլբըթ տղեն ք'ասնի մորը, ոչ թե՝ հորը:

—Դե,—ասեց,—հըմի դու գիտես, թաքավոր: Յիրանց ասա՝ թող հաշտվին:

Թաքավորն ասեց.—Անամոթ քյոփաղլի, ինչ ունիս, օր էկել ես տղա կտանիս: Տղեն ք'ասնի մորը:

Հերը գլոխը կախ թողեց հեռեցավ, մերն ու տղեն էլ թաքավորին գլոխ տվին, շնորակալուտուն ասին, էտոնք էլ թռան գնացին:

Դիվոկ-Ղուկանոսն թե.—Էնոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Սինոտը, թաքավորը թե.—Էտ գեներալի տղի վերջն ինչ կէղի: Հերն ու մերը ձեռերին ջուր բտի լցնեին, ասիր: Պատմե՝ յիմանանք:

Դիվոկ-Ղուկանոսն ասեց.—Թե օր շատ կզոռեք՝ կպատմեմ:

Ասավ.

—Թաքավորը երկրորդ օրը վաճառականի տղին կանչեց դիվան, ասեց.—Ես քեզնից խելոք մարթ թաքավորուտանըս մեջ չեմ կրա գտնի: Արի քեզի էնեմ տղա, ճամփեմ սորվի, արի թաքավորուտունըս տամ քեզի:

Տղին բերեց ախչկա խետ բեշքյարթմա էրեց, ղրկեց Բուզանդիա՝ սորվելու:

Խաբարը տանք Ֆըռանսայի թաքավորից: Էն էլ մե խատ տղա ունիր, անունը՝ Լուտվիկ: Ճամփեց Բուզանդիա՝ սորվելու: Ճամփին Ալեքսանոսն ու Լուտվիկ հանդիպան յիրար, ծանոթացան, յիրար էնքան նման էին, ինչ օր մե խնձորի կիսած: Էտ էրկըսի խետ կսորվիր Բուզանդիայի թաքավորի ախչիկ, անունը՝ Ֆլորա: Որոշ ժամանակ յընցավ, Լուտվիկը ծռավ Ֆլորայի վրեն: Յուսումը ավարտելուց ետո Ալեքսանոսը մնաս բարով ասեց ու էկավ Իսպանիա: Թաքավորը պատրաստուտուն տեսավ, օր խարսնիք էնեն:

Թող էսի էստեղ խարսնիքի պատրաստուտուն տեսնի, մենք խաբարը տանք Լուտվիկից ու Ֆլորայից: Ֆլորայի յուզողներ շատ են: Էտ քաղաքը սովորուտք կար՝ ով օր գյուզեր թաքավորի ախչկան առնիր, բդի գյուլաշ հասներ: Ով օր ախտեր, Ֆլորային կառնիր:

Ֆլորան Լուտվիկին կանչեց, ասավ.—Լուտվիկ ջան, գյուլաշով դու էսոնց չես կըրա ախտե: Գնա Ալեքսանոսին բեր, էնի ուժեղ է՝ կախտե:

Լուտվիկը թաքավորից ժամանակ խնթրվավ, օր յանի էրթա հորից թուլտվուտուն առնի, ելավ յընկավ ճամպա, յուրտեղ ես, Իսպանիա: Էկավ հասավ էն վախտ, օր Ալեքսանոս կնկա խետ պսակի տեղից գէլլեր: Յուրիշի միջոցով զապիսկա ղրկեց Ալեքսանոսին, թե. «Խնթրում եմ՝ գաս, մե էրկու խոսք ունիմ ասելու»: Ժամի մեջ թուխտը տվեցին Ալեքսանոսին: Ալեքսանոսը խարսնիքվորին խնթրվավ, թե մե տաս յըրոպեով մե տեղ էրթամ, գամ: Գնաց տեսավ, օր ախպերն է, փաթվան, համփուրվան:

Ալեքսանոս ասավ.—Է, ախպեր ջան, էս ինչ խաբար է, խո բան-ման չէ՞ պատայե:

—Ախպեր ջան,—ասավ,—էկել եմ քու օկնուտունը խնթրվիմ:

Ասավ.—Յընչի՞ կխնթրվիս, ախպեր ջան: Ասա՝ ինչ օր պետկ է, գյանքս է տուրը կուտամ, խաթրեդ չեմ յընցնի:

Լուտվիկ պատմեց յիրանց դյարդը:

Ալեքսանոս ասավ.—Լուտվիկ ջան,—ասավ,—արի մեր հաքուստ փոխենք, դու գնա կայնի խարսի կողք, ես քու տեղ կէրթամ գյուլաշ կկպիմ:

Ալեքսանոս Լուտվիկի շորեր խաքավ, ճամփա յընկավ, յուրտեղ ես Բուզանդիա: Լուտվիկ Ալեքսանոսի շորեր խաքավ, գնաց ժամ, կայնավ խարսի կողքը: Թըխ էնիկ կայնի խարսի կողքը, խաբարը տանք Ալեքսանոսից: Ալեքսանոսն էր, գնաց հասավ Բուզանդիա, տեսավ՝ յամեն երկրե Ֆլորային յուզողներ են էկե, բտի գյուլաշ կպին: Յինք էլ գնաց մեյդան, թևերը քշտեց, կայնավ: Ով էկավ՝ տփեց գետին: Վեռչ, Ֆլորայի յուզողներին ախտեց, գնաց Բուզանդիայի թաքավորին գլոխ տվեց, ձեռք համփուրեց: Էսպեսուտունով՝ Ալեքսանոս Ֆլորային յուզեց Լուտվիկին:

Թող էտոնք մնան Բուզանդիա, մենք խաբարը տանք Լուտվիկից: Հարսնիքից ետո օր գնացին քնելու, Լուտվիկ թուրը քաշեց, դրեց մեջտեղ, ասեց,—Ես մուրազ ունիմ, թաքավորի ախչիկ: Մուրազիս օր հասա, նոր մարթ ու կնիկ կդառնանք:

Թաքավորի ախչիկ խանդեց, թե. «Ասիկ քոռին ու սաղին կ'էնա: Թե սաղ էլավ՝ լավ, չէ՝ քոռ կա ու կա: Ասիկ վայտե յաչք քցած ունի Բուզանդիա»: Թաքավորի ախչկա սիրտ ծռավավ:

Էսոնք էսպեսուտունով մնացին էնքան ժամանակ, մինչևի Ալեքսանոս գար:

Խաբարը տանք Ալեքսանոսից: Էս տղեն Բուզանդիայի թաքավորից մենծ նվերներով,

զորքով ճամփա յընկավ Ֆռանսիա: Հասան քաղքին, նամակ ուղարկին թաքավորին, թե՝ պատրաստուտուն տես, օր հարսի հետ էկել ենք: Էտոնք պատրաստուտուն տեսան, Ալեքսանոսը գիշեր ժամանակով գաղտնի դուս էկավ, էկավ Իսպանիա: Օր հասավ տեղ, Լուտվիկին խաբար ղրկեց, էկան համփուրվան, Ալեքսանոս ըսավ.—Է,—ըսավ,—ախպեր ջան, մուրազդ կատարվավ: Ֆլորան ընտեղ քու ճամփիդ կիշկե:

Ալեքսանոս պատմեց գլխու անցածը, էտոնք յիրանց մատնիքներ փոխին, Լուտվիկ էլավ գնաց Ֆռանսիա, Ալեքսանոս գնաց յիրա կնկա քով:

Լուտվիկի խեր առքով-փառքով տղի խըմար խարսնիք էրեց, յիրան տեղը դրեց թաքավոր: Լուտվիկն էր, թաքավոր էղավ, թե չէ, խեյրաթխանա շինել տվեց, վրեն գրեց. «Ուտող-խմող ձրի ուտե-խմե, մենակ մե բան ըսա՝ աստված երկար կյանք տա Ալեքսանոսին»: Մե վախտ յընցավ, Լուտվիկն ու Ֆլորան ունեցան էրկու խատ տղա: Թըխ էսոնք էստեղ մնան, մենք խաբարը տանք Ալեքսանոսից:

Ալեքսանոսի կնիկ մարդուց զզվել էր: Գնաց կապնըվավ մե խատ արաբի խետ: Էտ կնիկ բերեց ճաշի մեջ դեղ քցեց, Ալեքսանոս կերավ, սաղ ջանը թարախոտավ: Ինչքան բժիշկ կանչեց, ճար չեղավ, յիրա գլոխն առավ Իսպանիայից գնաց: Գնաց հասավ Ֆռանսիա: Թաքավորի ախչիկն է արաբին էրեց թաքավոր, սկսեցին ապրել:

Ալեքսանոս յիրկուն հասավ Ֆռանսիա: Քաղքի դռներ փակ էր: Խնթրվավ, մտավ նես, ճարանկյալ յընկավ քաղքի մեջ: Անոթի էր, խաց տվող չէղավ:

Ըսեցին,—Չեմ ֆայմի, գնա խեյրաթխանեն, ձրի քեզի համար խաց կեր, ապրի:

Ելավ գնաց խեյրաթխանեն: Էտպես թարախոտ օր մտավ, ըսին.—Կայնի, կայնի, յառեջ մի գա:

Բերեցին էսոր մե քյոշե՛մ տարան, ճաշ, խաց տվին: Օր կերավ պրծավ, էտոր ամանն էլ, աթոռքն էլ, սեղանն էլ թափեցին դուս՝ որպես կըղտոտ: Ալեքսանոսն օր տեսավ յիրան անունով բան էր շինած՝ «Է,—ըսեց,—հըլը էրթամ տեսնիմ՝ էս վիճակով ընձի Լուտվիկը բարև-բարիլուս կուտամ»:

Ալեքսանոս ելավ գնաց պալատը: Դռնապանները չթողին նես մտնիր: Մե հատ թուխտ գրեց. «Թաքավորն ապռած կենա, թե Ալեքսանոսի գլոխը կսիրես, խնթրեմ՝ ընդունես»: Թաքավորն օր թուխտը կարթաց, հրամայեց, օր էտ մարթուն նես թողնին: Ալեքսանոսը գնաց նես, նստավ պալատ դիվանու վրա: Նույն յըրոպեին դիվանին թարախոտավ, դարձավ թարախ:

Ալեքսանոսն ըսեց.—Թաքավորն ապռած կենա, թե Ալեքսանոսի գլոխը կսիրես, էտ բաժակով, օր դու ջուր կխմես, մե ջուր լից, տու խմեմ:

Թաքավորը լցեց տվեց: Ալեքսանոսը կեսը խմեց, բաժակի մեջ գաղտընի յիրան մատնիքը քցեց, ըսեց.—Թաքվորն ապռած կենա, թե Ալեքսանոսի գլոխը կսիրես, առ էս կեսն էլ դու խմե:

Թաքավորն ըսեց.—Օր մեռնիմ էլ,—ըսեց,—Ալեքսանոսի անունն ես տվե, տուր,—ըսեց,—կը խմեմ:

Բաժակը վերցրեց, օր բտի խմեր, սինոտի անդամներն ըսին. «Թաքավորը խելըռել է, խմեց՝ կմեռնի»: Թաքավորը վերցրեց ու խմեց: Բաժակի միջից մատնիքը առավ ատմին: Տեսավ, օր յիրա մատնիքն է, ծըռի պես բոռաց.—Բացի էս մարդուց պալատը մարթ չմնա:

Յըմեն ախուց թողին դուս գացին: Թաքավորը հասավ, փաթթվավ: Սկսեցին բուժել: Ինչ էրեցին, չէրեցին, թարախը չպակսավ, յավելի շատըցավ: Թաքավորը էլ թաքավորական գործերով չէր ըզբաղվի, ուշք ու միտք Ալեքսանոսն էր:

Մեկ օր Ալեքսանոսն ըսեց.—Լուտվիկ ջան, էրազ եմ տեսե, լիզուս չի պտըտվի՝ ըսեմ:

Լուտվիկը թե.—Ըսա, ախպեր ջան, յընչի՞ ընձնից բան կպայես: Իմ կյանքս էլ կզոյեմ, մինակ քեզի փրկութուն էղի:

Ալեքսանոսն ըսեց.—Էրազ էկավ, օր քու էրկու տղին օր մորթես, յարնով ընձի լողկըցուս, կլավնամ, կէղիմ մորե մեկ:

Լուտվիկն ըսեց.—Ես էլ քեզի ղուրբան, իմ տղեքն էլ քեզի ղուրբան:

Գնաց թեշտը վերուց, էրկու տղին մորթեց, Ալեքսանոսին տարավ բաղնիք լողկըցուց, մորե մեկ դառցավ:

Ֆլորան բանից խաբար չէր: Լուտվիկը խաբար տվեց, թե Ալեքսանոսն էկել է, հալ-հեքիաթ,

էսման, էսման էրազ է տեսե, էսման բան էրին, Ալեքսանոս լավցավ, դառցավ մորե մեկ:

Ֆլորան ըսեց.—Անասպված,—ըսեց,—ընձի էլ յիմաց տայիր, օր գայի, մե տղի գլոխն էլ ես կտռեի իմ ձեռքով:

Բերեցին թազադան կերուխում էրին, կերուխումի վախտ Ֆլորան, դե մեր էր, ըսեց. «Էրթամ տեսնիմ՝ տղեքին իմաՀ է մորթե Լուտվիկ»: Կէրթա կտեսնի, օր ՀՀնչ, տղեքը էրկուսը փաթված յիրար, քնել են, պտՀուղ-պտՀուղ քրտնել են: Ետ էկավ, Լուտվիկի վրա ջղայնացավ, ըսեց.—Դպրոցն օր կսորվեինք, ես քեզնից յառաջ էի, դու ընձի ձեռ կառնիս: Էրեխեքը քնած են, պտՀուղ-պտՀուղ քրտնած են: ԻմաՀն թե մորթել իր:

Յիրանք էլ կէրթան կտեսնին, օր ճիշտ ա: Կուրախանան. յաշխարով մեկ կէղին: Էսոնք կնստին կորոշեն, օր էրթան Իսպանիա, Ալեքսանոսի կնկան ու արաբին սըպանեն, թաքավորուտունը վերցնեն:

Գէլլին, զորք կկապին կէրթան, Ալեքսանոսի կնկան ու արաբին կը սըպանեն, Ալեքսանոս կէղի թաքավոր:

Լուտվիկ ըսեց.—Ալեքսանոս ջան, ճիշտ ա, մենք ախպեր ենք, չի խանգարա, իմ քուր կուտամ քեզի:

Բերին, Լուտվիկի քուրոչն ու Ալեքսանոսին պսակեցին, յոթը զօր, յոթը գիշեր խարսնիք էրին:

Դիվոկ-Ղուկանոսն ըսեց.—Էնոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Թաքավոր, սինոտի անտամներ ըսին.—ՀՀ, գեներալ ու յիրան կնիկ ջուր բտի լցնեին տղի ձեռներին:

Դիվոկ-Ղուկանոս մե դիլիմ ձմերուկ կտռեց, դանակը գողտուց պայեց, ձմերուկը կերավ, ըսեց.—Լավ, օր շատ գյուզեք՝ պատմեմ:

Ըսեց.

—Մե ժամանակ կանցնի, գեներալի երկիր սով գընկնի: Էս մարթը յիրան կնկան կառնի էտ երկրեն կէրթա: Օրվա հացի կարոտ կէղին: Պըտրտվելով, պըտրտվելով՝ գուքան ք'ասնին Ալեքսանոսի թաքավորուտունը: Էտ ժամանակ Ալեքսանոս թաքավոր գէլլի դուռն, օր լվացվի, էտ մուրացկան մարթ ու կնիկն կըսեն.—Թաքավորն ապռած կենա, թուլ տու ձեռներուդ ջուր լցնենք:

Ալեքսանոս կիշկե, կտեսնի, օր յիրան հեր ու խորթ մերն ա:

Կըսե.—Առեք լցեք:

Էսոնք օր ջուր կլցնեն կպրծնին, թաքավորը կըսե.—Ես ձեզի չըսի՞, օր դուք՝ մարթ ու կնիկ, իմ ձեռներուն ջուր բտի լցնեք:

Էսոնք կճանչնան յիրանց տղուն, փաթվին, լաց կէղին, յիրանց էրած կփոշմընին: Կմնան յիրանց տղու քով, կապրին:

Դիվոկ-Ղուկանոսն ըսեց.—Թաքավորն ապռած կենա, իման օր գեներալ ու յիրան կնիկ փոշմընան, դու էլ կփոշմընիս, եթե իմ գլոխ զարգես:

Թաքավոր, սինոտի անտամներ ըսին.—Յընչի՞ կփոշմընի:

Դիվոկ-Ղուկանոսն ըսեց.—Կայնեք մե դիլիմըմ է ձմերուկ ուտեմ, մե էրկու խոսք է ըսեմ, գիմանաք:

Դանակ չկար: Իշկեցին էս կողմ, իշկեցին էն կողմ, դանակ չկար:

Դիվոկ-Ղուկանոսն ըսեց.—Բտի բոլորիտ ըստուկեմ:

Բոլորին ըստուկեց, չկար, հասան թաքույու ջառիեքին:

Դիվոկ-Ղուկանոս թե.—Ձեր շորեր բտի խանեք, ես իշկեմ:

Թաքույին ձեն քցեց գլոխ, թե կնիկմարդ իրավունք չունի տղամարդու քով չփլաղնա, թաքավոր հրաման տվեց, օր շորեր խանեն: Խանեցին, ՀՀնչ տեսնին, օր ջառիեքի շորերի տակ բոլորն է աթամորդի են:

Դիվոկ-Ղուկանոսն ըսեց.—Թաքավորն ապռած կենա, հըմի դու ըսա՝ չէիր փոշմընի՞, օր քու տղու գլոխ զարգեիր:

Բերեցին թաքույու գլոխն է, յիրան ջառիեքի գլոխն է կտռեցին:

Թաքավորն ըսեց.—Յէսօրվանից իմ թաքավորուտունը կուտամ իմ տղա Դիվոկ-Ղուկանոսին:

Դիվոկ-Ղուկանոս, օր Ռոմ կսորվիր, յաչք էր քցե Ռոմի թաքավորի ախչկան, գնացին յուզեցին, յոթը զօր, յոթը գիշեր խարսնիք էրին: Էնոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Երկնքուց յընկավ յիրեք խատ խնձոր...

19(19). ԼՈՒՏՎԻԿԻ ՀԵՔԻԱԹԸ

Գեղացու մեկը մի հատ՝մ տղա կունենա ու ինքը, իրա կնիկը: Տղի անունը Լուտվիկ կեղնի: Օրվա մեկը էդոր կնիկը մեռնի կը, թազա կնիկ կառնի: Էդ թազա կնիկը, տղին, օր անունը Լուտվիկ կեղնի, հեչ օր ու արև չէր տա: Տեղին, անտեղի քոռլուղ կուտար: Ծեծեր կը, քրֆեր կը, մարդուն էլ գանգտի կը, կսե.—Գիտե՞ս օր քու տղեն բերնեն գալածը ընձի կսե, քրֆե կը:

Հերը տղին ավտնար կը, մե՝մ չէր ավտնա, էդոնց օրերը էդման կանցներ կը: Մի օր՝մ տղեն հոր ձեռքերին ջուր լըլար կը հերն էլ լվացվիր կը, տեսավ՝ ծառի վրեն ղուշ՝մ նըստուկ էր: Ախր էդ տղեն ղուշերի լեզուն հասկնար կը, ղուշը կսե.—Գուգա էման վախթ, օր հերը տղի ձեռքերին ջուր բդի լցե:

Տղեն ծիծղա կը: Տղեն օր խնդաց, հերը կսե.—Ընչի՞ խնդացիր այ տղա:

Էն էլ կսե.—Ա՛յ հեր, ղշերը ըսեցին էման վախթ բդի էղնի, օր հերը տղի ձեռքերին ջուր բդի լցնե լվացվի, մերն էլ փեշկիրը բերե, օր տղեն սրպվի:

Հերը էդիկ օր գիմանա, հերսը գելնի: Գիշերը մնա կը հոդ, սապախտան մի քանի՝մ լավաշ վերուն կը, տղի հետ կէրթան, թե ուր՝ իրանք էլ չիտեն:

Շատ կէրթան, թե քիչ, մտնին կը, մի մեշե՝մ, հորը կսե.—Ես դատռա, արի հոս նստինք, քիչ՝մ դինջնանք: Էդտեղ դինջնան կը: Տղեն գլոխը դնում է գեդին, քնի կը: Հեր դու հեր, քնած տղին թողե կը հոն քնած, ինքը փախնի կը:

Սաբախտան լուսը օր բացվի կը, տղեն զարթի կը քնից, կաշե չորս թարաֆը, տեսնի կը, օր հերը չկար: Մեշեն օդքի տակ կառնի, ժուռ գուգա, էլի չի կոնա գդնի, մեշեցեն դուս գելնի, կըգնի ճամփա, հա կէրթա, ինքն էլ չիտե, թե ուր:

Կէրթա, կէրթա, մի ախբուրի՝մ դեմ կառնի կը: Էդ աղբրեն ջուր խմե կը, նստի կը, օր դինջնա, քունը գուգա, քնի կը:

Հիմի խաբարը տանք մի հեքիմից: Էդ հեքիմը գնացել է հանդը ծաղիկ քաղե, օր դեղ սարքե: Գուգա տղի քովը տեսնի կը, օր քնած էր, տղին զարթըցու կը: Էն էլ գելնի քնից, բաշլեց լաց էղնելը: Դողտուրը էդոր հարցու կը, կսե.—Տղա՛, դու ո՞ւրտեղացի ես:

Տղեն կսե.—Չիտեմ:

—Հորդ անունը ի՞նչ է:

—Չիտեմ:

Ինչ օր հարցու կը, կսե՝ չիտեմ:

Կսե.—Ինձի տղա կեղնի՞ս:

Կսե.—Հա՛, կեղնիմ:

Դոխտուրը էդոր տանում է իրանց տունը, կէնե իրեն տղա:

Խապարը տանք էդ քաղաքի թաքավորից: Թաքավորը սապախթան քնեն գելնի, տեսնի կը 3 լագլակ իրար հետ կռվին կը ու քիչ՝մ էդև թողեն կէրթան, էլի գուգան կռվին կը ու թողին կէրթան: Թաքավորը էդիկ օր տեսնի կը, իրանիրան կսե, թե. «Էդոնց դավին ինչ է, օր կռվին կը»:

Թոփ կէղնին էդ քաղքի միջի խելոք մարդիկ, թաքավորի հետ տեսնին՝ ընչի էդոնք իրարու հետ կռվին կը, կսեն՝ մեր քաղաքը մի հատ՝մ խելոք մարդ՝մ կա, էդոր կանչենք, ինքն էլ հեքիմ է, մենակ էնիկ կռնա հասկնա: Էդոր կանչին կը, գուգա տեսնի կը էդ ղշերը էլի կռվին կը, թաքավորը կսե.—Դու հեքիմ ես, ըսա՝ ընչի՞ էդոնք իրարու հետ կռվին կը, թե չհանեցիր գլոխդ զարկեմ կը:

Թաքավորը օր էդման կսե, հեքիմը մտածե կը, թե. «Վեվ է իրան մատնե, հըբը օր չկռցա հանեի, գլոխս պդի զարկե, էրեխեքս մնան կը անտեր»: Հեքիմը կսե.—Թաքավորը ապրած մնա, ընձի իրեք օր մաճալ տուր:

Էն էլ կսե.—Լավ կուտամ, բդի հանես:

Հեքիմը գուգա տուն նիաթը կախ ու ինքը կգնի մտքերի մեջը, մտածե կը: Իրեք օրը լմնա կը, կէրթա կնկան, էրեխեքուն ու դրկցիներին մնաս բարև կէնե, ինքն էլ լացեց, ընկավ ճամփա, գնաց: Տղեն էլ հոր հետևից գնաց թագավորի պալատը: Էդ հատաղին ղշերը էլի բաշլին կռվելը: Թագավորը կսե.—Հեքի՞մ, դէ ըսա՝ ընչի՞ կռվին կը:

Հեքիմը կսե.—Ես հեչ չեմ կոնա հասկնա, թե ընչի կռվին կը:

Տղեն էն թարաֆեն կայնած էր, ըսավ.—Յավաշ եք, ես ըսեմ՝ ինչի կռվին կը: Էն սև թևերովը էդոնց թաքավորն է, էդոր կոխքինը իրա կնիկն է, էն պիճիկը էդոնց էրեխեն է: Էդոնց երկիրը սով ընկավ, հերը կէրթա ավի, գնաց վեց ամիս ուշանա կը: Հիմի էկել է, հերը կսե՝ իմն է, մերը կսե՝ չէ, իմն է: Մարդ ու կնիկ շատ օր լիզվակ-

ռիվ կենեն գործը կուտան սինոտին: Հիմի մարդ ու կնկան կանչեն կը էդ դավի դառաբին (պարզեն), զուլըլեն: Սինո՛տ, ըսե՛ք հիմի էրեխեն ո՞ւմը կհասնի:

Սինոտը կաշե էդոնց կսե.—Էրեխեն մերն է ծնե, էն էլ գիշերները քունը կտռած պահե մեծացրել է, էրեխեն մորը կհասնի:

Էդման օր ըսավ, ղշերն էլ օր իմացան, տղին առան ու գնացին տուն: Թաքավորը օր տեսնի կը էրեխեն սիրուն է, համ էլ շատ խելոք, էրեխին կառնի, կէրթա տուն, իրան կէնե էրեխա, փարեն էլ կուտա:

Էդ էրեխեն ահագին մենծցել էր, դառել էր նշանլու տղա, մարդը կնգան կսե.—Ղրկենք համալսարան՝ սորվելու: Ուսում առնի: Էդոր ղրկեն կը Ֆրանսիա, էդ տղի անունն էլ Լուտվիկ կեղնի: Լուտվիկը կէրթա Ֆրանսիա: Էդ երկրի թաքավորի աղջիկն էլ հոն սորվիր կը: Էդոնք դառնան կը քուր ու ախպեր: Ռուսաստանի թաքավորի տղեն էլ հոդ սորվիր կը: Էդոնք չնայած քուր ու ախպեր եղան, էդև իրար վրա սիրահարվին կը, իրարու համար վառեին կը, էման օր տաքցել էին: Լուտվիկը սորվելը խլսի կը, կէրթա: Ռուսների թաքավորի տղա Ալեքսիանոսը մնա կը հոդ հըլը սորվիր կը:

Օրվա մեկը ուրիշ երկրի թաքավորը գուգա էդ աղջկան ուզելու: Ալեքսիանոսն էլ իրա հորը կանչե կը, օր աղջկան իրա համար ուզե: Աղջկա հերը միտք կէնե. Չիտե, թե վեր մեկին տա իրա աղջկան, կսե.—Օր հեչ մեկի սիրտը ընձեն չմնա, թող էրկուսն էլ գյուլաշ կպնին, վերը որ ղուվաթով է, աղջկաս էնոր կուտամ:

Աղջիկը հոր ըսածը կսե Ալեքսիանոսին: Ալեքսիանոսնը զաբուն կեղնի, կսե.—Դու քանիմ օր սրոք ուզե՝ քիչմ չաղանաս, էդև գյուլաշ կըպի:

Տեսնին կը, օր էն մեկելը ռազի չի էղնի, աղջիկը կսե.—Ալեքսիանո՛ս, կէրթաս ախպորս՝ Լուտվիկի քով, շորերտ փոխեք, էնիկ թող քու շորերը հակնի, դու էլ՝ էնոր շորերը, գիդենան, օր դու Լուտվիկն ես, էնոր էլ գիդենան՝ դու ես: Լուտվիկը ղուվաթով է, թող էնիկ դու դեի, գյուլաշ կպնի:

Ու էդման էլ կենին: Ալեքսիանոսը կգնի ճամփա, կէրթա Լուտվիկին գտնի կը: Լուտվիկը հարցու կը, կսե.—Ալեքսիանո՛ս, գալդ խե՞ր է:

Էն էլ կսե.—Ուրիշ տղա է մեջ ընկե, աղջկա հերը ըսել է թող գյուլաշ կպնին, վերը օր ղուվաթով է, էնոր կուտամ:

Էդոնք շորերը փոխեն կը, ինքը կէրթա, Ալեքսիանոսը մնա կը հոն: Հիմի քնելու վախթ է Ալեքսիանոսը թուրը չպլղցու կը դնե կը իրանց էրկուսի մեջտեղը, աղջիկը նեղենա կը, կսե.—Ընչի, ընձի չհավնմ՞ր:

Տղեն կսե.—Նպատակ կա, էդոր համար դրի:

Ալեքսիանոսը 40 օր քնավ աղջկա հետ, էլի թուրը չհանեց իրանց արանքից:

Խաբարը տանք Լուտվիկից: Սապախտան օր լուսնա կը, կէրթան մեյդանը, էդոնք գյուլաշ կպնին կը: Լուտվիկը էդոր 3 հեղ քցե կը գեդին, շելնիկը հոն կայնած՝ ծափ կուտային: Թաքավորը աղջիկը կուտա Ալեքսիանոսին: Ախար չգիդեր, թե Լուտվիկն էր, քանի օր շորերը փոխած էր: Գյուլաշը օր խլըսավ, էդոնք ամենքը իրա շորերը հագան ու ամենքը գնացին իրանց տները:

Ալեքսիանոսը պսակվի կը, աղջկան կառնի կէրթա իրանց երկիրը: Իրկունը Լուտվիկը իրա կնգա հետ քնելիս, էս հեղին թուր չդրավ իրանց մեջտեղը, աղջիկը կսե.—Էդ ի՞նչխ, օր էս հեղին թուրը չդրիր մեջտեղը:

Տղեն կսե.—Նպատակ ունեի, էդոր համար:

Աղջիկը էրկու շաբաթ էդև մի դոխտուրի վրեն սեր քցե կը, դոխտուրին կսե.—Էման դեղ՚մ չկա՞մ տաս, տամ Լուտվիկին համ չմեռնի, համ էլ չապրի:

Դոխտուրը դեղը կուտա, էդ կնիկն էլ տանի կուտա Լուտվիկին: Էդ մարդը հիվնդնա կը, վրեն, գլոխը յարա կեղնի ու ինքն էլ էման էր զաբնել, վրեն իլլաջ չէր մնացե:

Լուտվիկը օրեցօր, ժամեժամ վադնա կը, մնա կը պատերի տակ, կնգնի դռնեդուռ հաց ժողվե կը: Ախր կնիկը Լուտվիկից էրես էր դարցուցե, տեր չէր կայնի, էն էլ թողե տնեն կէրթա, հեռենա կը: Կէրթա, կէրթա, հասնի կը Ալեքսանոսի պալատը: Ախր թագավորների դռների առեջը այցի քար կունենան, վեվ օր գուզե թաքավորին տեսնի, բդի էդ քարի վրեն նստի: Թաքավորի ծառան տեսնի, հարցու կը՝ ինչի՞ ես նստե, ուզածդ ի՞նչ է, նոր էդ քարին նստողին ջուղապ տան, յա չէ նես կանչեն:

Թաքավորի ծառաները տեսնին կը էդ քարին հիվանդ, դեղնած, քոսոտ մարդ՚մ նստած էր, ծառայողներից մեկը կսե.—Էլի գնա, էսիկ քու տեղը չէ:

Հանեն փարա կուտան, էն էլ չի վերու, կսե.—Ընձի փարա հարկավոր չէ:

Ծառայողներին կսե.—Ինչ կեղնի, Ալեքսանդրոսին կանչեք հոս, թե Լուտվիկի արևը սիրե կը թող գա, իրա ֆինջանով էլ լիքը գինի բերե:

Ծառաները կէրթան թաքավորի քովը. Ըսին.—Թագավորը ապրած կենա, էդ հիվանդը ըսավ, թե Լուտվիկի արևը սիրե կը, իրա ֆինջանով էլ մե'մ գինի բերե:

Թաքավորը էդիկ օր իմացավ, իրա օսկի ֆինջանով լիքը գինի լցնե կը, կուտա ծառաներին: Էնոնք էլ բերեն կը կուտան Լուտվիկին: Լուտվիկը ֆինջանի կեսը խմե կը, մատնիքը մատեն հանե կը, քցե կը ֆինջանի մեջը[65]:

Ծառայողներին կսե.—Կէրթաք էդ հիվանդին բերեք:

Կէրթան բերեն կը: Ալեքսիանոսը փաթվի կը էդոր, էտև կնիկը փաթվի կը, իրարուց կարոտները կառնեն: Ինչ դեղ ու դարման էրին, օր սաղցնեն՝ իլաճ չեղավ:

Ալեքսիանոսը օրոցքի մեջը մի էրեխե'մ ուներ, իրա միակ ազիզ էրեխեն էր, ախր կնիկը հարի էդ չբեր էր, էրեխա չէր ունենա: Լուտվիկը մի օր'մ էրծին տեսնի կը, օր էդ էրեխեն օր մորթեն, էդոր արունով Լուտվիկը լողնա, կլավնա: Լուտվիկը իրա տեսած էրազը հեչ մարդու չէր ըսե: Ինչխ կեղնի էդ խորաթեն կըկնի Ալեքսանիոսի անկաճը:

Էրեխին մորթեն կը, արունը կառնեն լականի մեջը, արունը գոլ կեղնի, Լուտվիկին դնեն կը տաշտի մեջը, էդ արյունով լողնա կը: Կանցնի էրկու օր էդոր ջանը քոր գուգա ու կաշին կսկսե թափելը, թազա կաշի գուգա, կեղնի մորեն մեկ:

Հիմի խապարը տանք էրեխից: Էն էլ ըսենք, օր էրեխին մորթելուց մերը խապար չի էղնի, գուգա տեսնի կը էրեխան չկա, հարցու կը՝ ուրա էրեխեն, կսեն՝ հալ-հեքիաթ էսման, էսման, ինչխ օր ես ձեզի ըսէցի: Մերը հերսոտի կը, կսե.—Էդման բան օր կար ընչի՞ ընձի չսեցիք, գողդուկ բաներ կենեք, խոյ ես չէի խնայե Լուտվիկին երեխիս արունը:

Կաշե էրեխու օրոցքը, տեսնի կը՝ սաղ արուն էր: Տեսավ մերը, իրա էրեխու շորերը տարավ լվաց, ախր հերը օր էրեխին մորթե կը, գլուխը տանե կը, դնե կը էրեխուն, ճտին կպցնե կը, իրանք էլ նստուկ էին: Գեժդանգեժ էրեխու լացի ձեն գուգա, բերները բաց մնա կը, թե էս ինչ ձեն է: Չորս թարաֆը կաշէն, էրեխա չկա:

Ղորդ է, մերը ռազի էր Լուտվիկի խաթերին աղջկան մորթելը, ինչքան չեղնի մոր ջիկար է, մոմոար կը էրեխու համար: Կէրթա օրոցքի մեջը կաշե՝ իրա էրեխեն: Ծիծը դնե կը բերանը, էրեխեն ձենը կտռե կը, էլ լաց չի էղնի: Էդ ուղուրին իրկունը մենծ կերուխում էր: Կերան, խմին, լավ քեֆ էրին, պարկան քնան: Սաբախտան էլան քներեն[66]: Թաքավորը կէրթա լվացվելու, բիձեն ջուր տարավ, օր ձեռքերին ջուր լցներ, թաքավորը ձեռքը բռնեց: Բիձի կնիկն էլ փեշկիրը ձեռքին կայնուկ էր, թագավորին կսե.—Ընչի ձեռքս բռնիր:

Էն էլ ըսավ. «Մի՞տքտ է, օր ղշերը ըսին՝ գուգա էման վախտ՝ հերը տղի ձեռքերին ջուր բդի լցնե:

Լուտվիկը իրա ծնողներին լավ տեղ'մ տեղավորե կը, ինքն էլ կնիկ կառնի: Կերան, խմին, քեֆ էրին: Էնոնք հասան իրանց մուրազին: Վեվ օր մուրազ ունի, թող էնոնք էլ հասնին իրանց մուրազին:

20(20). ՏՈՒՏԻ ՂՈՒՇԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի մենծ քաղաքըմ կեղնի: Էդ քաղքի մեջը կապրեին էրկու ախպրտանք: Մի ախպոր անունը կեղնի Հասան-Չալասի, պզտկի անունը՝ Հուսեին-Չալասի: Մենծ ախպորը ուներ մի տղե'մ, անունը՝ Ալ-Հուսեին, պզտի ախպերը՝ մի աղջիկըմ, անունը՝ Ալ-Հուսեին կզի: Պզտի ախպերը բազարի քովը տուն շիքե կը, կէրթա իրա շիքած տունը, մենծ ախպերը՝ Հասան-Չալասին, շատ էր մենծցե, չէր կռնա աշխատի:

Տուն շիքող բանվորները կէրթան իրանց խազեինին քովը, գանգդին կը, կսեն.—Աշխատող չկա:

Էդ բանվորին կսեն.—Ընչի՞ չես գա աշխատանքի:

Կսե.—Մենծցել եմ, չեմ կռնա աշխատի:

Եվ ղորթ օր Հասան-Չալասին շատ էր մենծցե:

[65] Պատումը ընդհատումներով է (ծանոթ. կազմողների):

[66] Պատումը ընդհատումներով է (ծանոթ. կազմողների):

—Դուք գնացեք ինչ կէնեք՝ էրեք, հարի տղես նշանեմ, նոր ձեր հետ ղրկեմ կը աշխատանքի:

Էդոնց աշխատանքը առուտուրն էր:

Էղավ, օր օրվա մեկը տղին նշանեն կը, հարսին տուն բերեն կը: Հերը տղին թամբա կենէ, կսե.—Տես, որ աղջիկ չեղավ, ընձի կասես:

Սապախտան տղեն օր քնեն գելնի, հերը հարցու կը.—Աղջիկ է՞ր, թե՞ չէ:

Հերը աղջկան դուս կէնե, մի հատ՚մ ուրիշը գուզեն: Էդ էլ աղջիկ չի էղնի: Մի ուրիշ՚մ բերեն կը, էդ էլ աղջիկ չի էղնի: Էդման իրեք հարս բերեն կը, աղջիկ չի էղնի: Տղեն կսե.—Հերիք է, ամոթ է:

Էս հեղին հորը խափե կը, կսե.—Աղջիկ է:

Հերը քեֆ սարքե կը, ինչխոր հարսանիքին էր սարքե, էդման քեֆ՚մ էլ էդոր համար կէնեն:

Էլի վախթ՚մ կանցնի բանվորները գուգան տղի քովը, էդոր ղրկեն կը առուտուրի: Կեսարը հարսին կսե.—Ջրհորի չարխը թարս դառսու:

Էն էլ թարս դառու կը, տեսավ ջրհորի մեջը կաթիլ՚մ ջուր չմնաց:

—Էստեղ մի հալղե՚մ էլ կա, քաշե:

Էն էլ կսե.—Ձեռքես բռնե, հոս նարդվան՚մ կա, նարդըվանով իչնինք ցած:

Էդոնք գիչնին ցած՝ հորի մեջը, ի՞նչ տեսնին, օր լավ էղնի. մի թարաֆը օսկին, մի թարաֆն էլ արծաթը թեջ էրած: Կեսարը կսե.—Էս փարեկը վաստակել եմ տղիս համար, թե որ դու նրան չսեցիր, ավուր դատաստանին պարտական մնաս կը:

Կեսարի ձեռքը բռնած տուն էկան:

Մի քանի՚մ օրըմ էդև բիձեն մեռնի կը: Մի օր՚մ հարսը բալկոնը կայնած էր, տեսավ՝ 40 ձիավորներ իրանց դռնովը անցան: Աղջիկը տեսնելուն քիմի ցած իջավ և մի ձիավորի՚մ հարցու կը կսե.—Էս ի՞նչ ձիավորներ են:

Ձիավորներից մեկը կսե.—Չիտե՞ս՝ ինչ ձիավորներ են, Ղասապ Մուրատի զորքն է:

—Ղասապ Մուրատի տունը որտե՞ղ է:

Ձիավորներից մեկը կսե.—Էս ինչ քուչի վրեն է:

Աղջիկը իրկուն խաս շորերը հակավ, կապեց, իջավ ցած, ֆայտոն բռնեց, նստավ գնաց ղասապ Մուրատի տունը: Դռնապահին հարցու կը.—Ղասապ Մուրատի օթախը վե՞ր մեկն է:

Էդոր ցուց կուտան: Կէրթա կայնի կը դռան առջին կըսե.—Խապար էրեք, թող դուս գա:

Ղասապ Մուրադը կըսե.—Ասեք թող նես գա:

Նես մտնի կը ղասապ Մուրադի օթախը: Մուրադը հարցու կը.—Հա, ըսա՝ ի՞նչ է ուզածդ:

Աղջիկը կըսե.—Համեցեք մեր տուն միսաֆար:

Էդոնք էկան աղջկա տունը, կերան-խմին: Էդ հատաղին աղջկա էրեսները կարմրե, կարմիր լալա էր դառե: Էդոնք էլան գնացին խաս բախչեն: Էդման էդ Ղասապ Մուրատը ամեն օր կէրթար աղջկա քովը, գիշերը էդ աղջկա ծոցը լուսացուր կը, սապախթները գուգար իրա տունը: Աղջիկը հաներ մի բուռ՚մ օսկի կուտար տղին, կըսեր.—Ա՛ռ, քեզի համար պապիրոսի փարա կէնես:

Վախթ՚մ կանցնի, Ալ-Հուսեինը գուգա իրա տունը: Կնիկը հարցու կը, կըսե.—Քա, մա՛րդ, փարա բերե՞լ ես:

Էն էլ կըսե.—Չէ՛, դովլատ ղուշունուղ եմ էղե[67]: Բիթուն փարեքս բանվորները կերան:

—Օր էդման է, ես մի լավ մարդու՚մ տեղը գիտեմ, ա՛ռ էս փարեն, գնա բազար, ղոնախլղի համար ինչ որ պետք է առ, բեր էդ մարդուն ղոնախ կանչենք: Էդման մարդը մեզի պետք է:

Կառնի, բերե կը, կէրթա էդ մարդուն էլ կանչե կը տուն: Կըսե.—Շատ չխմես, իմ բաժինն էլ, քուգտ էլ կուտաս իրան, թող լավըմ սարխոշնա, էդոր հախիցը գանք, մենք մեր գործը կէնենք:

Էդոնք բաշլին ուտել-խմելը: Ինչքան խմիչք կար մարդուն խմցրին, էն էլ լավ՚մ քեֆովցավ, ընկավ վեր: Աղջիկը կսե.—Շունը սատկեց, էրթանք մեր գործին: Կէրթան խաս բախչեն, քնան էնտեղ, ինչեր էրին, ինչեր չէրին, էդ էլ իրանք գիտեն: Տասը գիշեր էդ կնիկը իրա մարդուն խմցնում, քնցնում էր, ինքը սիրողի հետ մնար կը խաս բախչեն:

Սապախտան թեզ տղեն էլավ քնեն, կնկան կըսե.—Ո՞ւր ա մեր միսաֆարեն:

Էն էլ կըսե.—Նա՛ դու էղնիս, նա՛ էլ քո միսաֆարը, հետը խորաթա էնող չեղավ, թողեց գնաց: Ա՛ռ էս տասը մանետը, գնա բազարը բան ու ման առ, ղոնախին լայաղ էսօր էլ կկանչենք:

---

67 Դովլատ ղուշունուղ եմ էղե – այսինքն՝ բախտից զրկվել եմ (ծանոթ. բանահավաք Ա. Գևորգյանի):

Էդման իրար հետևից 10 օր կանչում են: Կնկա մարդուն խմցնում, քնացնում էին, ինքը կնկա հետ քեֆ կէներ: «Ի՞նչ բդի էղնի իմ հալը, հարի ճբ էսման բդի էրթամ»,—կըսե էդ կնկա մարդը: Էդման ինքը իրա հետ խոսելեն տուն գալու վախթը ռաստ գուգա մի պառավ մարդու՛մ: Էդ պառավ մարդը հարցու կը.—Ա՛յ տղա, ու՞մ տղեն էս:

Տղեն կըսե.—Հասան Չալաբի տղեն եմ:

—Հերդ կա՞մ:

Էն էլ կըսե.—Չէ, մեռել է:

Բիձեն կըսե.—Ո՞ւր կէրթաս:

Տղեն կըսե.—Դովլատ ղուշգյունի եմ դառե: Մեկի՛մ ղոնախ եմ կանչե, գուզեմ պատիվ էնեմ, օր ընձի քյոմագ էնե:

Բիձեն կըսե.—Քեզի օր ռախի կուտան, բիթունքը դու չխմես:

Էն էլ կըսե.—Զաթի բիթունքը ինձի կուտան, ես էլ չեմ կռնա չխըմե:

Բիձեն կըսե.—Մեկ էլ օր կուտան, լից ծոցտ, յանի թե խմել ես:

Էդման էլ կենե ու ինքը կընգնի գեդին: Կնիկը կըսե.—Շունը սատկավ, էրթանք խաս բախչեն, մեր գործին անցնինք:

Էդոնք գնացին, էն տղեն էլ էդևներից: Տեսավ՝ լուկը բացին, ջուրը գնաց, էդոնք իրարու հետ պարկան: Միսաֆարեն քնավ: Սապախտան գելնի քնեն, տեսնի կը միսաֆարեն չկա: Մարդը հարցու կը, կսե.—Կնի՛կ, մեր միսաֆարեն ո՞ւր ա:

Կնիկն էլ կսե.—Դու էլ, քո ղոնախն էլ, ես ինչ գիդեմ ո՞ւր ա:

Տղեն քնեն էլավ վազեց բիձի քովը, ընկավ էնոր ոտքերը: Բիձեն կսե.—Ի՞նչ տեսար, օղո՛ւլ:

Տղեն իրա տեսածը նաղլ կէնէ, թե ինչխ մտան լուկը, ինչ կէնեին: Բիձեն հանե մանեթ՛մ կուտա, կսե.—Տար տուր թալալին: Թալալ կանչէ, օր Հասան Ղասապը իրա տները ծախե կը գինը տասհինգ հազար օսկով: Ծախողը օխթ օր իզին կառնի, օխթ օրվա մեջ տունը դարդկե:

Օխթ օրը թըմըմի կը, տղեն աղջկան կսե.—Դե քելե էրթանք թազա տունը:

Կնիկը կսե.—Չ՛է, ես չեմ գա, ես էս տան կնիկն եմ, խոյ քու կնիկը չեմ:

Տղեն էդիկ օր գիմանա, կնկան թողե, կէրթա հորոխպոր տունը: Իրկուն օր էղավ, աղջիկը կսե.—Խիլը դիպավ աչքիս:

Օր հոդ հեչ չոփի հաշիվ չկար: Ֆանառը վառին, աշին էստեղ-էնտեղ, օսկի թե դրել ես, գդի: Գիշերը էրկու ղաթրի բառցե տարել են:

Վէ՞վ տարած կեղնի: Ղասապը աղջկան կսե.—Դու ես տարե: Աղջիկն էլ էնոր կսե, թե.—Դու ես տարե:

Էդման լեզվակռիվ կէնեն, ղասապը խանչալը քշե կը աղջկա փորը, աղջիկը մեռնի կը: Էդ հատաղին ղասապը խելքը թռցու կը կընկնի չոլերը:

Տղեն հորոխպոր տունը կապրիր: Մի վախտ ապրելուց ետև հորոխպերը տղին կսե.—Արի քեզի նշանեմ:

—Յաման էդոր անունը մի՛ տա,—կսե տղեն,—իրեք հեղ նշանվա ի՞նչ խեր տեսա, օր էլի նշանվիմ:

Շատ օր զոռե կը տղեն հորոխպորը կսե.—Քու աղջիկը գուզեմ:

Հորոխպերը կսե.—Իմ աղջկա աչքը քոռ է, օդքերը՝ թոփալ, գլոխը՝ քաչալ:

Տղեն աղջկան տեսնի կը՝ նա՛ քոռ է, նա՛ քյաչալ, նա՛ էլ թոփալ, կէրթա հորոխպոր քովը, կսե.—Ը՞նչի խապես կը, աղջկատ էդման այիպ չկա:

Հորոխպերը կսե.—Իմ աղջիկը հարի հիմի ուրիշի ջահելներին չի տեսե, ձեռքը չի բռնե, ուրիշի շեմը չի շեքե, էդոր համար էլ ըսեցի:

Աղջկան առավ, էղան մարդ ու կնիկ: Մի վախթ՛մ անցավ, հոր բանվորները էկան ըսին.—Ալ-Հուսեին էրթանք առուտուր էնենք:

Տղեն չհոժարացավ: Հորոխպերը տղին կսե.—Գնա՛ փարեն բեր, գիտես օր փարեն փարա կբերե:

Տղեն էդոնց ըսածները իմացավ ռազի էղավ: Աղջիկը Ալ-Հուսեինին կսե.—Ախր ես մենակ մնամ կը, գնա մի հատ՛մ տուտի ղուշ՛մ բեր: Ալ-Հուսեինը տուզախի մեջը տուտի ղուշը բերե կը, կախե կը պատեն, աղջիկը նստած կար ու կարկտան կէներ, հետն էլ ղուշի երգին անկաճ կէներ:

Աղջկա տան դիմաց մի հատ՛մ պատվալ կար, լիքը ապրանք լցրե առուտուր կէներ: Էդ վաճառականը օրվա մեկը կաշե դիմացի շենքը, տեսնի կը բալկոնում մի աղջիկ՛մ կայնուկ էր, աչքը օր դիպավ, էդոր միտքը ծռվավ: Մտքին կսե. «Ի՞նչխ էնեմ, օր էդոր հետը սազվեմ»,—կսե տղեն: Էդ տղեն մի հատ՛մ փեզավանկ պա-

ռավ՝մ գդնի կը, կսե.-Պառավ, կոնամ ընձի էդ աղջկա հետ ծանոթացնես:

Պառավը կաշե էդ տղին, կսե.—Ինչի չեմ կոնա, էդմաներին ճմ հասցրե իրանց մուրազին:

Վաճառականը հանե քանի՝մ օսկի կուտա էդոր, էդ պառավը կէրթա իրա համար խաս շորեր կառնի, հակնի կը, կէրթա կը աղջկա տունը: Դուռը ծեծե կը, աղջիկը դուռը բանա կը, կսե կը.—Մայրիկ ջան, ինչ գուզես կը:

Էդ պառավը կսե.—Բալա՛ ջան, ես քո մորքուրտ եմ, ինչխոր մերդ մեռել է, հարի հիմի ձեր տունը չեմ էկե: Հիմի աղջկաս նշանել եմ, կուզե քեզի տեսնի՝ նոր էրթա մարթի: Հարսնվորները էկել, բանդ են էլե, էն էլ կսե՝ հարի մորքուրիս աղջկան չտեսնիմ, չեմ էրթա: Էն էլ կսե՝ մորքուրիս կանչեմ տուն:

Սուրֆեն հազրե կը, նստին կը կերանխմին, ելան էրթալու: Էդ հատաղին տուտին ըսավ.—Խանո՛ւմ ջան, կէրթաս, նաղլըմ էնեմ, էդև գնա, աստված քեզի հետ էղնի:—Տուտին կսե,—օր էդման է նստեք, ես նաղլը կէնեմ,—ու բաշլեց ըսելը:

Մի հարուստ գեղացի՝մ 3 տղա ունր, մի հատ՝մ էլ՝ աղջիկ: Տղի մեկը էդոնց քովը, աղջկա խաթեր էդոնց քովը չոբան կեղնի: Էն վախթերին հարուստը քյասիպին աղջիկ չէր տա: Աղջիկը տղին կսե.—Արի փախնինք:

Ու էդոնք իրարու հետ փախնին կը, հասնին կը մի պրիստընըմ, հիմի էդոնք գյամու փարա չունին: Ինչ էնեն, ինչ չէնեն: Աղջիկը տղին կսե.—Գնա՛ մեկեն փարա ուզե, հետև կուտանք:

Աղջիկը գյամու մեջը նստուկ է, տղեն կէրթա փարա գդնի, հարի գուգա, տեսնի կը գյամին չկա, գնացել է աղջիկն էլ մեջը, տղեն իրա էրածից փոշմնի կը[68]:

Էկսի օրը պառավը էլավ քիչ՝մ նստավ, էդև էլավ, օր էրթար: Տուտին կսե.—Խանո՛ւմ ջան, էրթո՞ւմ էս, հըբը չէս ըսէ 40 աղջիկները գյամու մեջը օր լցվան ո՞ւր գնացին: Տուտին ըսավ.—Դուք նստեք, ես կսեմ՝ ինչ եղան:

Ու բաշլեց ըսելը:

40 աղջիկները նստան գյամին հասան էն կղզին, գյամուց իջան դեմ տվին մի բանցր սարըմ: Գելնեն էդ սարի գլոխը: Տեսան օր սարի դոշր կար մի մաղարե՝մ, մտնին կը էդ մաղարի մեջը, տեսնին կը, օր 40 հարամու տեղ է: Աղջիկը կսե.—Էլնինք փախնինք, քանի հարամիները չեն էկե:

Հըլը մուղարից դուս չէին էկե հարամիները ձիերից ցած կիչնեին ու հասան աղջիկներին: Չոբնի քուրը կսե.—Ղորթ օր հարամիներ եք, դուք գիտե՞ք, օր 40 հոգի դուք էք, 40 հոգի մենք: Ձիերը տարեք թողեք արծին, մենք գուգանք դեմի ձեզի: Ձիերը օր տարան կապելու, չոբանի քուրը աղջիկներին կսե.—Աղջիկնե՛ր, ինչ օր ես կէնեմ, էն էլ դուք էրեք:

Աղջիկը հարամբաշուն ըսավ.—Հարամբաշի՛, մի թեթև հարսնիք օր էնեմ, ինչքա՞ն արաղ կգնա:

Հարամբաշին կսե.—Ամենաքիչ երեք վեդռո:

—Հըբը օր 40 հարսնիք էնե՞նք:

Էդ հատաղին ճվաց, հարամներից երկու հոգի էկան: Հարամբաշին էդոնց ըսավ.—Մտքե՞ղդ է, օր հինգ տարի առեջ բյազրկանից գոմշի տկով գինին խլեցինք, հըլը մնա կը, գնացե՛ք, բերե՛ք:

Ու կէրթան բերին: Չոբնի քուրը ֆինջանը լըցու կը, օդքի կայնի կը կսե.—Էս իմ ֆինջանը կուտամ Հարամբաշուն:

Էն էլ վերու խմե կը, մեկ՝մ էլ լցնե կը, Հարամբաշին էդիկ էլ խմե կը, բիթուն հարամիներին խմցու կը, էդման մի քանի՝մ հեղ բիթունքը գինովցան:

—Աղջիկնե՛ր,—ճվա կը չոբնի քուրը,—դե էսոնց սոյմիշ էրեք:

Էդոնց չպլոցուն կը, էդոնց շորերը հակնին կը, կսե.—Ձիերը դուս քաշեք:

Չոբանի քուրը հակնի կը Հարամբաշու շորերը, դառնա կը հարամբաշի, մեկելտոնք էլ՝ հարամիներ: Ձիանքը քշեցին գնացին, տեսան իսկական հարամբաշիները լաբ չբլաղ էին:

Տուտին կսե.—Էլան, տեսան չկաին աղջիկները փոշմնան, դուն էլ կփոշմնիս:

Աղջիկը ըսավ.—Մորքուր էսօր էլ չեմ կոնա գա, տեսամ՞, օր տուտին ինչ ըսավ:

Պառավը կէրթա: Կէրթա բյազրկյանի քովը, հարցու կը.—Ինչ եղավ:

Պառավը կսե.—Էկվան անպատճառ կբերեմ:

[68] Այստեղից պատումների շղթան կարծես ընդհատվել է և մի միջանկյալ պատում դուրս է մնացել (ծանոթ. կազմողների):

Էլան էրթլու, տուտին կսե.—Խանում կէրթաք, ախր չես ըսե՝ աղջիկը ձի հեծնել չիտե, օր գնացին ախր ինչ էղան, խոյ բան ու ման չի պատահե:

Աղջիկը կսե.—Տուտի՛ ջան, հըլը ըսա՝ տեսնինք:

—Դե նստեք, օր ըսեմ,—կսե տուտին:

Էդ 40 հարամիները կէրթան մի քաղաքըմ: Էդ քաղաքի թաքավորը մեռել էր: Հիմի էդոնց թաքավոր էր հարկավոր: Ում տանք, ում չտանք թաքավոր: Բերեն ղուշ'մ բաց թողնեն կը, ում գլխուն նստի, էնիկ կեղնի թաքավոր: Ղուշը բաց թողնեն կը, էդ էլ պտըտի, պտըտի, գուգա գիչնի Հարամբաշու գլխուն (չոբնի քրոջ գլխուն): Չորս թարաֆեն ճվան կը՝ էդ չեղավ, էդիկ սխալ է: Դե էլ ինչ ֆայտա, էդոր կէնեն թաքավոր, էն 39 հարամիները էղան թաքավորի ծառաները:

Թաքավորը իրա նկարը տանի կը, զարկե կը աղբրի վրեն, գրե կը. «Վեվ օր էս աղբրեն ջուր խմելուս ամ քաշեց, բռնեք բերեք քովս»:

Օրվա մեկը չոբնի սիրածը էկավ, աղբրի վրեն չարոխները չորցել էին, ոտքերը սխմին կը, հանեց դրավ ջրի մեջը, կակխցուց, ջուր խմեց: Ջրի մեջը տեսավ աղջկա'մ սուրյաթը, ամ քաշեց: Էդոր բռնին, բերին թաքավորի քովը: Թաքավորը տեսավ, ըսավ.—Տարեք թրաշե՛ք, լողցրե՛ք, տաք շոր հաքցրե՛ք, բերե՛ք էն լուսավոր սենյակը տեղավերեք, օրն էլ իրեք հեղ լավ կուտեցնեք:

Մի օր'մ էլ գյամջին էկավ ջուր խմեց, աղջկա սուրյաթը օր տեսավ՝ վա՛յ, ձեռքս ընկնիր ըսավ: Էդ գյամջուն էլ տանին կը թաքավորի քովը, թաքավորը կսե.—Տարե՛ք խոզանոցը նես էրեք, օրական կես հաց կուտաք, իրան էլ խոզ արձցնող կէնեք:

Էդորեն էդև գուգա քոսոտ թաքավորը, գուգա կսե.—էդոր էլ տարեք ղազերի հետ նես էրեք, էդոր էլ ղազ արձցնող կենեք:

Մի օր'մ էլ գուգան 40 հարամիները՝ չպլաղ: Ըսին.—Կէրթաիք՝ գնաիք, էլ ընչի՞ մեր շորերը տարաք:

Էդոնց էլ բռնին տարան թաքավորի քովը: Թաքավորը իրա մարդկանց կանչեց, նստան սինոտի: Բիթուն բռնավորներին կանչեց, բաշլեց էդոնց դատը:

Սվթաեն կանչե կը ախ քաշողին, կսե.—Ա՛յ տղա, դարդտ ինչ էր, օր ախ քաշեցիր:

Տղեն կսե.—Թաքավորը ապրած կենա, քեզեն վախենաի կը:

Թաքավորը կսե.—Մի՛ վախենա, հըմը ղորթ ըսա:

Չոբանը բաշլեց իրա պատմությունը, ըսավ.—Օխտ տարի ես էդոնց տունը չոբան եմ էղե, սիրեի կը էդ աղջկան, ինքն էլ ընձի սիրեր կը: Աղջիկը տեսավ, օր հերը ընձի չէր տա, ըսավ՝ ընձի փախցրու: Էլանք, փախանք: Հասանք մի պրիստին'մ, հիմի փարա չունինք, օր բիլեթ առնինք, նստեինք գյամին: Ես գնացի, օր մեկեն փարա բերեի, հարի էկա, գյամին գնաց, ինքն էլ՝ մեջը: Էդ վախթվանից հարի հիմի էդոր չէի տեսե: Սուրյաթը օր տեսա, ախ քաշեցի:

—Դե լավ, գնա՛ էնտեղ կայնի,—ըսավ հարցաքննողը:

—Գյամջի՛, դու ընչի՞ ախ քաշեցիր:

Գյամջին ըսավ.—Թաքավորը սաղ մնա, հիմի էլ օր էդ աղջիկը ձեռքս ընկնի կտոր-կտոր կէնեմ, սպանեմ կը, ընձի խապեց գյամիս փախցուց,:

—Սինոթ իմացա՞ք:

Էդոր էլ ըսավ.—Դու էլ էստեղ կայնի:

Կանչե կը չոբան ախպորը, ըսավ.—Դու ընչի՞ ամ քաշեցիր:

Էն էլ, թէ.—Մորս սպանել եմ, ման գուգայի անջախ էնտեղ նկարը տեսա:

Սինոթ իմացա՞ք,—կսե տղեն:

—Էն ջահել տղեն իմ նշանածն է, էն մեկելը՝ իմ ախպերը:

Թաքավորը գլուխը բացեց, երկար մազերը թափվան կռնակին, տեսան, օր տղա չէ, աղջիկ է: Էդ աղջիկը կսե.—Իմ մարդը էղնի թաքավոր, ես էլ էնոր քյոմակչին, էման էնենք օր երկիրը դառնա բիթունքեն լավը, օր բիթունքի բերանը բաց մնա:

Աղջիկը օր էդման կսե, ժողովուրդը ռազի կեղնի, չոբնին էլ էրավ իրա լալեն, 39 աղջիկներին տվավ հարամիներին, կսե.—Բիթունքըտ էլ մնա քը քովս, հեչ մի տեղ չեք էրթա:

Գյամջու, քոսոտ թաքավորի վզեն քար կապեն կը, քցեն կը ծովը:

Էդ հատաղին նես մտնի կը Ալ-Հուսեինը, պառավը էլավ փախավ: Բյազրկյանը կսե.—Պառա՛վ, ինչ էինք, ինչ էղանք:

Պառավը կսե.—Սուս էրա՛, ձենդ կտռե՛:

Բազրկյանը քարով զարկե կը, պառվին սպանե կը, օսկին տանի կը իրա քովը: Ալ-Հուսեինն էլ գուգա տուն կնկան անարատ տեսնի կը, կուրխնա ու էսմանով տուտին խլսի կը իրա նաղըլը:

21(21). ԹԱՔԱՎՈՐԻ ՏՂԵՆ ՄՈՒԹ ԱՇԽԱՐՔՈՒՄ

Թաքավորի մեկը կունենա մի հատ'մ մեկուճար տղա: Էտ տղեն զարսի ավճութենեն ուրիշ գործ չէր էնե: Մի օր կէրթա ավճութան, նետ ու աղեղը քցե կը ավի եդևից, կընկնի չամուռի մեջը: Շատ չարչրվի կը, չի կռնա չամուռի միջեն հանե, իրա էլ հերսը գելնի, թողի կը չամուռի մեջը կէրթա, ըսավ՝ էտև հանեմ կը: Ախար գեդին էլ սառել էր:

Էկսի օր գուգա, որ հաներ՝ տեսավ օձը փաթվել էր ու ինքն էլ էր սառե: Ըսավ. «Տանիմ տուն, թնդրի վրեն տաքցում, թող իրա համար ապրի»,—ու տանի կը տուն: Իրկունը մութ էր, պառկեց քնավ: Սապախտան թեզ էլավ քնից, գնաց իրա գործին: Իրկունը գործեն գուգա տուն, տեսնի կը սեղանի վրեն ուտելու ինչ ըսես, օր չկար, սեղանը՝ զուքված, զարթարված: «Էս վեվ էրած կէղնի»,-մտածե կը տղեն: Ախար իրենեն սավայի տունը մարդ ուրիշը չկար:

Էդ տղեն դուս կելնի ման գալու: Քաղքի ղրաղը տեսավ մի բիձե'մ, բարև տվավ բիձին ու նաղլ էրավ էդոր, հալ-հեքիաթ, էսման, էսման, ինչխ օր ես էրի: Բիձեն ըսավ.—Տունդ հեչ մարդ, յա էլ չէ ջանավար չկա՞ր:

—Հա՛, մի օձի'մ ձակ կար, սառած էր, բերի տաքցուցի՝ սաղցավ, հիմի չկա:

Բիձեն էդոր կսե.—Սապախտան մտնիս կը դռան էդևը կտեսնիս վեվ է տունը: Սապախտան էդ տղեն էլավ քնեն, տեսավ՝ օձը ծակից էլավ, դառավ սիրուն աղջիկըմ, թևերը վեր քշտած՝ տանը գործ կէնե: Տղեն օր էդոր տեսավ, հասավ փաթըթվեց, էդոր սխմե կը դոշին պաչպչե կը: Աղջիկը էդոր դոշին դողդողա կը, ու էդոնք դառնան կը մարդ ու կնիկ:

Մի քանի'մ օր էդև աղջիկը տղին ըսավ.—Գնա՛ մեր տունը, քրոջս կսես՝ պիճի քուրտ պիճի պալատը գուզե: Էնիկ օր կանչե կը նես, տունը չմտնիս:

Տղեն գնաց աղջկա քովը: Աղջիկն ըսավ.—Փեսա՛, արի նես:

Էն էլ կսե.-Չէ՛, պիճի քուրդ ըսավ՝ ըսա իրան, օր պիճի պալատը տա, գուզե կը:

Քուրը ըսավ.—Փեսա՛ ջան, հարի դու տուն հասնիս, պալատը հազր կեղնի:

Տղեն կէրթա տեսնի կը, օր հին տունը չկար, էդ հին տան տեղը պալատ'մ էր կայնած, էնքան սիրուն, որ թաքավորի պալատը էդոր դեմը հեչ էր: Տղեն նես մտնի կը, աղջկա հետ ապրան:

Մի օր'մ տղեն աղջկան ըսավ.—Իզին տուր, էրթամ հորս բերեմ, զաթի մեր էլ չունիմ:

Աղջիկը ըսավ.—Հորտ բերիր՝ փոշմնիս կը, հըմը գուզիս՝ գնա բեր, քու գործն է: Դու գնա պիճի քրոջս քովը, ըսա՝ պիճի քույրտ պիճի սուրֆեն գուզե:

Տղեն կէրթա:

—Ի՞նչ է, փեսա՛ ջան, քիչ'մ սապռ էրա, հիմի գուգամ,—կսե քենին:

Գնաց պիճի սնդուկ'մ բերավ, տվավ փեսին: Էն էլ տարավ, տվավ կնկան՝ Փերուն: Փերին բաց էրավ, տեսավ՝ ստոլի վրեն ինչ ըսես, օր չլցվավ, մի խոսքով՝ աշխարքի երեսին ինչ օր կար, թափավ ստոլի վրեն: Տղան կնկան ըսավ.—Դե հիմի կռնաս հորդ կանչե[69]:

Կանչեց: Թաքավորն ու վեզիրը էկան տղի տունը: Նստան հաց ուտելու: Կերան, թաքավորը սխ-սխ կաշեր տղի կնկան ու մտքին կսե. «Ես թաքավոր էղնիմ ու էսման սիրուն կնիկ չունենամ, աստված էլ ղաբուլ չի էնե, հըմը տղես ունի»:

Տղին կանչե կը իրա քովը՝ տուն, տղի կնիկ էդոր կսե.—Քեզի օր ղրկի կը ուրիշ տեղ, սֆթաեն գուգաս քովս, էդև կէրթաս:

—Ա՛յ տղա, օխթը տարի է մերդ մեռել է, բալնիքը հետն է տարե: Կէրթաս բերես կը, չբերիր գլուխտ կտռեմ կը,—կսե թաքավոր հերը:

Ախըրըմ էն վախթերը ինսնի գլոխը գին չուներ, ինչխ օր հիմիկվա հավի գլխու պես էր թաքավորների համար:

Տղեն տուն օր գուգա, կնիկը հարցու կը, թե թաքավորը ինչ ըսավ: Տղեն կսե.—Ընձի ղրկե կը մորս քովը: Մերս բալնիքը հետն է տարե, էրթամ բերեմ, թե չբերի՝ գլոխս կտռե կը»:

---

69 Բանասացը պատմելիս խառնել է, պետք է լինի՝ Կնիկը տղին ըսավ (ծանոթ. կազմողների)

Աղջիկը կսե.—Կէրթաս քրոջս քովը, քուրս դուս գելնի կսես՝ ղրո ձին իրա սարքով ու թամբքով տա քեզի:

Տղեն կէրթա ձին գուզե: Էնոնք էլ կուտան, նստի կը ձիուն, կսեն.—Ձիուն չչարչրես, թող ինքը իրա հոժար կամքով գնա, էդոր խասյաթն էլ էդման է:

Նստի ձիուն կէրթար, ինքն էլ չիտեր՝ ուր, ախր ձիու կամքով կէրթար: Հասնի կը մի մութ տեղ՝մ, կիջնի: Տեսավ տերտեր՝մ դժոխքի մեջը՝ մութ աշխհարքում, լույսի մեջը գլոխը կոտրած մի չոբանըմ նստած էր: Ձիուն կսե.—Էս ինչ է:

Կսե.—Դու քելե՛, քու գործը չէ:

Ձին քշեց: Քիչ՝մ գնաց, տեսավ՝ պառավ՝մ նստած: Էդ պառավը կսե.—Բալա՛ ջան, ես կուշտ եմ, դուք կերեք,—ու հացեր դրեց առաջներին:

Ձիուն հարցու կը, կսե.—Էս ինչ է:

Էն էլ կսե.—Դու քելե՛, քու գործը չէ:

Մի քիչ՝մ էլ օր գնաց, տեսնի կը կնիկ՝մ հաց թխեր կը, հետն էլ կսեր՝ անոթի մեռանք: Ձիուն կսե.—Էս ինչ է:

Էն էլ կսե.—Քու գործը չէ, դու քելե:

Ձին քշեց գնաց, գնաց հասավ մեշե՝մ, տեսավ մի ծառեն կրակ թափիր կը, մեկել ծառների վրեն վառին կը: Ձիուն ըսավ.—Էս ինչ է:

Էն էլ կսե.—Դու քելե, քու գործը չէ:

Քիչ՝մ էլ գնաց, ըսավ.—Իջի:

Էդիկ գիչնի ձիուց, կէրթա մորը դիմավորելու: Ձին ըսավ.—Այ էդիկ քու մերն է:

Տղեն էլ ճվաց.—Ա՜յ, մերիկ ջան:

Մերը կսե.—Ի՞նչ է, բալա՛ ջան:

Իրարուց իրեք ադում հեռու կայնան:

—Քեզի ղրկեցին քո՞վս,—կսե մերը:

—Մե՛ր ջան, մեր խազնի բալնիքը հետդ էս տարե, տո՛ւր տանիմ:

Մերը կսե.—Բալնիքը մուսլուղի մեջն է, հանես կուտաս իրան ու դու փախի, օր ազատվիս,—կսե ու դառնա ետ գուգա մեշեն:

Ձիուն հարցու կը, կսե.—Էս ինչ մեշա է:

—Էսիկ գեղի օդա է, մեշա չէ, Էն էլ քաղքի օդա է: Էստեղից խապար տանին կը, էնտեղից էլ խապար բերեն կը հոս, էդոր համար էլ կրակ թափի, վառի կը:

Էկան պառվի քովը, հաց թխեր կը ու կսեր՝ անոթի մեռա: Էկավ մի ուրիշ պառվի քովը, էդիկ էնքան խեր ու խեյրաթ էր էրե, կսեր՝ էս ինչխ շատ եմ կերե, օր էսման կուշտ եմ: Էկան չոբնի քովը, ըսավ՝ էս ինչ է: Աշեց տեսավ էնքան թոն էր էկե հողը տարե, օսկեքը դուս էր էլե, իրարու մեջ հալալ բաժնին կը, տերտերը նախանձի կը: Ախր էդոնք էլ անկուշտ են, քարով զարկե կը չոբնի գլխուն, մեռնի կը, չոբնի օսկեքը խլի կը: Էդոր համար էս աշխարհը էդոր լուս էր, էն աշխարհը՝ մութ, բոցը ընկե, վառեր կը:

Ձին կսե.—Բռնե յալիցս քեզի դուս հանեմ էս սև ու մութ աշխհրքից:

Ձիու պոչից մազ՝մ քաշեց, ձին գնաց իրա տեղը: Տղեն կէրթա թաքավորի քովը, թաքավորը հարցու կը կսե.—Բալնիքը բերի՞ր:

Հայրիկ, ընչի՞ խապես կը,—կսե տղեն:

Ձեռքը կոխե կը բարցի մեջը, հանե, կուտա հորը ու ինքը փախնի կը դուս: Բալնիքը դառնա կը կրակ, պալատը վառի կը, թաքավորն ու տերտերն էլ հետը: Տղին նստենցու կը թաքավորի թախտին, դառնա կը թաքավոր:

22(22). ՀԵՔԻՄԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Գեղացու մեկը լավ հեքիմ կէղնի: Կանաչից ու խոտերից էման դեղեր շիքեր կը, օր ինչղ հիվանդութեն էղնիր սաղցուր կը: Էդ մարդը իրա արհեստը սորվցու կը իրա տղին: Կէղնի, օր ինքը պառվնա կը, կանչե կը տղին խրատ կուտա, թե վեր կանանչից ինչ դեղ կարելի է սարքել, վեր դեղը ինչ հիվանդի սաղցու կը:

Հերը օր մեռնի կը, տղեն կէրթա ուրիշ տեղ: Ծանոթ, բարեկամ չուներ, գիչնի գերեզմները, գիշեր-ցերեկ հոն կապրի:

Գերեզմներում տեսնի կը մի հատ՝մ մեռել բերին թաղելու: Թաղեն կը ու կէրթան: Էդ մարդը գերեզմանը բանա կը, տեսնի կը՝ խանչալը փորի մեջը տնկված: Իրան-իրան միտք կենե, կըսե. «Խանչալը հանեմ արունը կէրթա, արնաքամ կեղնի, մեռնի կը»:

Տեսնի՝ չի էղնի շալկե բերե կը դնե մի պատվալ՝մ ու ինքը կէրթա իրա համբալութենը կէնե:

Կանցնի մի վախթ՝մ: Էդ համբալը մոտկնա կը պատվալին, տեսնի կը ձեն գուգա: Տեսնի կը էդ մեռելը սաղցել է: Էդոնք իրարու կառնին, դառնան կը մարդ ու կնիկ: Կնիկը հարցու կը մարդուն կըսե.—Դու ինչ կէնես:

Էն էլ կըսե.—Հեչ, ինչ, համբալութեն:

Աղջիկը հանե փարա կուտա տղին կըսե.—Կէրթաս քեզի լավ ղլղ կառնես, յորղան, դյոշակ, տան մեջ, բառնաս սելին, սելի, բանվորի, պահակի, դռնապահի փարեն դու կուտաս:

Տղեն էդ փարեն կառնե կէրթա ռեստորան, տեսնի կը իրեք հոգի նստած կուտեն, խմեն կը: Ինքն էլ իրա համար ամեն ինչ բերել կուտա: Էդ իրեք հոգին իրանցը կերե—խմե, խլսել են, գելնին, օր էրթան, կանչե կը իրա սեղանին, դառնան կը չորս հոգի: Էդ մի հոգին վեզիրի տղա կէղնի: Վեզիրի տղեն կըսե.—Էկուց գուգաք մեր տունը՝ ընձի ղոնախ[70]:

Ֆայտոն բռնե կը, էդոնց նստցու կը ֆայտոնին, կէրթան տուն: Աղջիկը օր փարդի էդևն էր նստած, խանչալը հանե մեջքին օր զարկի կը, ճոթը էն թարաֆեն դուս գելնի: Տղեն կըսե.—Էդ ի՞նչ էրիր:

Էն էլ կըսե.—Հեչ, ինձ տանում, թաղում էին:

Տղեն տեսնի կը՝ ամեն ինչ խարապ է եղե, աղջկան կըսե.—Արի կէղնի՝ էստեղից էրթանք:

Էղած-չեղածը ծախեն կը, կնգնին ճամփա: Կէրթան, կէրթան, հասնին կը մի ծառի՛մ, կնիկը կըսե.—Դադռա, արի նստինք, քիչ՛մ դինջնանք:

Էդոնք նստե, աղջիկը գլոխը դրե տղի չոքերին, նա էլ աղջկա մազերը շփե կը, աղջկա քունը տանի, քնի կը: Գլոխը շփելու վախթը տեսնի կը աղջկա մազերու մեջը մի կոշտ բան: Դու մի ըսե՝ ղուշի տուզախ կեղնի, էդ հատաղին երեք ղուշն էլ փախնին կը ու էդ տղեն կգնի ղուշերի հետևեն[71]: Հասնի կը մի հատ՛մ մենծ ծովի՛մ: Ջանդարմերը էդոր բռնեն կը, տանին կը իրանց թաքավորի քովը: Աղջիկը զարթի կը, օր տեսնի կը տղեն չկա ու մազերի միջի բոլյանտն էլ չկա.—Անաստվա՛ծ տղա, ընչի՞ տարար, ախր էդ բոլյանտը քեզի համար էի պահել,—կսե աղջիկը:

Աղջիկը օր էդման մեն-մենակ կէրթար, հասնի կը մի մենձ սուրույի՝ օչխրի, օր հոդ կարծեր, չոպանն էլ հոն կայնած կէղնի: Չոպանին փարա կուտա, մի հատ՛մ օչխար կառնի, մորթե կը, բուրթը, միսը կուտա չոբնին, ինքը թափանը տանի լվա կը, քաշե կը գլոխը, չոբնի էլ շորերը կառնի, հագնի կը, դառնա կը քյաչլուկ: Էլ չես ըսե, օր էս էն աղջիկն է: Մեկի՛մ քովը դառնա կը նյոքար:

Էդոր բռնեն կը (տղին), կսեն.—Դու լրտես ես, էկել ես հոս, օր մեր երկիրին զարար տաս, խորտակես նավը:

Թաքավորը էդոր կսե.—Դու իմ պալատի չորս թարաֆը պարիսպ բդի քաշես, թե չէ քեզի փրկութեն չկա: Էման պարիսպ, օր օձը իրա պորտով, ղուշն իրա թևով նես չկոնա մտնի:

Էն էլ կսե.—Լավ: Աղա՛ ջան, ըսա՛, էս ծառը կտրե՞մ, թե՞ մնա պատի մեջը: Ախր օր մնաց, ծառն էլ հետեն հաստնա կը, պատը քանդվի կը:

Խազեինը տեսնի կը պատշարը խելոք բան ըսավ, կսե.—Ծառը քոքեն հանե՛:

Հիմի գուզե ծառի ճուղերը կտրատե, կտրելու վախթ տեսնի կը մուշամբեն ծառի գլոխը, ղուշը օր տարել էր ինքը ման գուգար չէր կոնա գդնի: Կէրթա ծառի քոքի թարաֆը, հոն ծառի քոքի տակը՝ էրկու կճուճ օսկի, տանի կը թաքավորի քովը, կսե.—Էսոնք ի՞նչ էնեմ:

Էն էլ կսե.—Տա՛ր, ինչ կէնես՝ էրա, էդիկ քու գործն է:

Տղեն օր կէրթա թաքավորի պալատը, գուզե թաքավորին ու թաքուհուն մնաս բարով էնե: Մնաս բարև էնելուց էդև կէրթա պրիստնը, օր նստի գյամին: Իրա ունեցած-չունեցածը դնե կը գյամու վրեն, նավաստուն հարցու կը, կսե.—Գյամին ե՞ք կէրթա:

Էն էլ կսե.—2 սհաթ էդև:

—Լավ է,-կսե տղեն,—էրթամ թաքավորին ու թաքուհուն մնաս բարով էնեմ:

Հարի կէրթա, հետ դառնա կը, գյամին գնացել էր:

Կապիտանը կսե նավաստիներին.—Լավ մուղաթ էրեք, տերը գուգա, կուտաք իրան:

Կէրթան, կէրթան հասնին կը մի քաղաք՛մ, որտեղ քյաչլուկը խաշ կեփեր:

Տղեն կսե.—Էդ կճուճը տարեք խաշ էփելու տեղը:

Տանին կը հոն, խաշ էփողին կսե.—Առ, էսիկ պահե:

Էն էլ էման տեղ պահեց, օր պահողը ինքն էլ տեղ չիտեր: Էն էլ ըսեմ, օր խազեինն էլ տեղը չիտեր, ու չիտեին մեջինը ինչ էր, ախր վրեն աղ էին լցե, տակինն էլ օսկի էր:

---

70 Հեքիաթի պատումի որոշ հատվածներում սյուժեն հստակ չէ, պատճառահետևանքային կապն աղճատված է: Հավանաբար բանասացն ինչ-ինչ բաներ մոռացել է (ծանոթ. կազմողների):

71 Այստեղ պատումն աղճատված է. բանասացը չի պարզաբանում թռչունների և աղջկա մազերի մեջ թաքցրած ադամանդի կապը (ծանոթ. կազմողների)

Գյամին ետ դառնա կը իրանց քաղաքը, տղեն կէրթա կապիտանի քովը, կապիտանին կսե.—Գյուգյումները ո՞ւր ա:

Էն էլ կսե.—Պահ ենք տվե, մի՛ վախենա:

Գյամին գուգա էն քաղաքը, ուրտեղ քյաչլուկը խաշ կեփեր, կէրթա քյաչլուկի քովը, քյաչլուկին կսե.—Գյուգյումները ուրտե՞ղ է:

Էն էլ կսե.—Պահել եմ, մի՛ վախենա:

Քյաչլուկը օր տեսնի կը էդ տղին, ճանչեց, օր իրա նշանածն էր, հմը չճանչնալու տեղ դրեց: Էդ օրը ինչխ կեղնի, էրկու դարվիշ ղոնախ կէրթան: Դարվիշին ըսին.—Դուք շատ տեղեր ման էկողներ եք, դուք շատ բան կգիտենաք: Լավ, լավ հեքիաթներ ըսեք, ագլամիշ էղնինք:

Էդոնք չեմուչում էրին, քյաչլուկը կսե.—Լավ, էդոնք օր չեն ըսե, ես կըսեմ, հըմը դուռը փակեք, օր ըսելու վախթը հեչ մի մարդ դուս չելնի:

Դուռը փակեն կը, ու քյաչլուկը կըսկըսե.-

—Դավրի՛շ բաբա, քաղաքի մեջը մի թաքավոր՝մ կապրիր: Ունիր մի հատ՝մ աղջիկ, շատ սիրուն կեղնի: Էդոր վրեն սիրտ էր քցե իրենց վազիրի տղեն: Էդ տղեն ինչքան չարչրվավ, չկոցավ խոսք հասկցուր:

Էդման օր ըսավ, դարվիշը կսե.—Քյաչլո՛ւկ, լավ ես ըսկսե, ըսա՛, ըսա՛:

Վեզիրի տղեն ջադու պառավին ղրկե կը, էդ աղջկան բերե խաս բաղչեն: Վեզիրի տղեն բաշլեց էդ աղջկան խոսեցներ, հըմը աղջիկը հեչ բանի տեղ չդրավ: Տեսավ, օր չի էղնի, էդ տղեն խանչալը քաշեց, մեջը խրեց: Ճոթը սրտեն դուս էլավ, ու էտոր տարան գերեզմնեը՝ հորին:

Խապարը տանք մի գեղացու տղից: Էտ տղեն գեղից էկեր էր հոդ, ծանոթ-բարեկամ չունիր, կապրիր գերեզմանոցում: Էտ տղեն հորից հեքիմություն էր սորվե: Էդիկ օր տեսնի կը կուբին դրին փոսը ու հողով ծածկին, հմը չիտեր մեռել է՞ր, թե՞ ինչ-որ ուրիշ բանըմ: Քանդե կը գերեզմանը, տեսնի՝կ օր մի սիրուն աղջիկ՝մ: Խանչալը չհանած՝ դեղ լցնե կը խանչալի բացած ծակից, շալկե, տանի կը մի պատվալ՝մ, քրեհե կը, դնե կը հոդ ու ինքը համբալ կեղնի, կէրթա իրա համբալությանը:

Էս նաղլը օր կէնեին, էդոր սիրած տղեն էլ հոդ կեղնի, ուզեցավ դուս էրթար, չթողին: Թաքավորը ըսավ.—*Մի՛ք թողնե դուս էլնի, փախճի կը:*

Տղեն գուգա տուն,—կսե նաղլ էնողը,—նստած, թխքրտոց իմանա կը, մտնի կը պատվալը, կաշե, տեսնի կը՝ կուբու միջեն գուզե դուս էլնի, տեսնի կը, օր դանակ՝մ էլ մեջքը խրած, ճոթն էլ սրտեն դուս է էլե: Աղջկան հանե կը կուբու միջից, էդ աղջիկը աչքերը բանա կը, կաշե՝ մի սիրուն տղե՝մ կայնուկ է, տղին հարցու կը, կսե.—Դու ի՞նչ գործ կէնես:

Կսե.—Հեչ, ի՞նչ, համբալութեն:

Աղջիկը հանե էդոր փարա կուտա, կսե.—Քեզի համար լավ շոր կառնիս, կհագնիս: Յորղան, դյոշակ, ուրիշ լավ-լավ բաներ:

Ու էն էլ կառնի բերե կը տուն:

Տղեն գաստինիցայի կողքով անցնելու վախթը իրան-իրան կսե.—«Հըլը մտնիմ հոս տեսնիմ՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա»: Նես օր մտնի կը, իրեք հոգի նստե հաց կուտեն: Ինքն էլ իրեք հոգու բաժինք գուզե: Էդ տղեքն էլ կերե, խլսել են, վեր կենան օր էրթան, էդոնց նստցու կը, դառնան կը չորս հոգի ու իրարու հետ հաց կուտեն: Վեզիրի տղեն կսե.—Էկուց էլ իմ ղոնախն եք:

Էկսի օրը էդոնք կէրթան վեզիրի տղի տունը, ամենքը իրա տեղը նստի կը: Վեզիրի տղեն էլ ֆարդի թարաֆը նստի կը, ուրտեղ ֆարդի ետևը աղջիկը կեղնի: Աղջիկը փարդի հետևեն ճաշ կուտար, մարդն էլ հոն նստած կեղնի:

Էդ բիթունքը գիմանար էդ նաղլը, հմը ձեն չէր հանե:

Ուտել, խմելու էդ շամաթի վախթին ֆարդի էդևից խանչալը հանե, կոխե կը տղի մեջքը, ճոթը սրտի միջեն դուս գելնի, տղեն ճվա կը, կսե՝ վա՛յ մեռա, աղջիկը կսե՝ սո՛ւս, ձենտ կտրե, ուրտեղից օր հանել ես, տար տեղը դիր (հոն թաղե): Սապախտան թեզ քներեն գելնին կնգնին ճամփա, փախնին կը օր իրանց գլխուն գյալաջաղ չեղնի: Կէրթան, կէրթան, էնքան կէրթան օր աղջիկը դատրի կը, կսե.—Ես էլ չեմ կանա քելե:

Ու էդոնք նստին կը մի ծառի՝մ տակ՝ դինջնան:

Աղջկա քունը գուգա, գլոխը դնե կը տղի ծնգներին քնի կը: Աղջիկը զարթի կը, տեսնի կը, օր տղեն չկա ու ինքը կընկի ճամփա, թե ուր, ինքն էլ չիտեր: Ճամփին ռաստ գուգա օչխրի՝մ սյուրուի, չոբնին փարա կուտա, կսե.—մի հատ՝մ օչխար մորթե:

Էն էլ մորթի կը, միսը, բուրթը կուտա չոբնին, միայն օչխրի փորոտիքը կառնե, մեջինը

թափե կը, փորոտիկը լվա կը, թամզե կը, քաշի կը իրա գլոխը, դառնա կը քյաչլուկ:

Էդ օր էդման կէրթա հասնի կը խաշ էփողի քովը, զաթի ղլըղն էլ փոխե, չոբնի ղլղն է առե հակե, նյոքար կեղնի թաքավորի քովը: Վախթ'մ կանցնի:

Էդ քյաչլուկը գլխու փոստը պատռե, քցե կը, կայնի թաքավորի առեջը, կսե.—Թաքավորը ապրած կենա, ես քու աղջիկն եմ:—Տղին ցուց կուտա կսե.—Էս էլ քու փեսեն է:

Թաքավորը փեսին ու աղջկան գրկե կը, պաչպչե կը, կարոտը կառնե: Վեզիրը օր գիտեր էդ աղջկա գլխու գյալաջաղը, էդ վեզիրի ընտանիքը թաքավորի հրամանով սաղին սրի քաշին կը: Զատի թաքավորն էլ պառվցել էր, յաթաղի մեջը պառկած էր, էդիկ մեռնի կը, տանեն թաղեն կը: Էդոր փեսեն կեղնի թաքավոր, դե աղջիկն էլ՝ թաքուհի:

Փեսեն աներոջ վրեն քար քաշել կուտա ու աղբուր սարքել կուտա, մենծ քար'մ քաշե կը վրեն, գեղի խալղը քելեխը կուտեն, խլսին կը ու էդմանով ամեն ինչ խլսի կը: Հարի հիմի իրա թաքավորութենը կէնե:

23(23). ՋԻՎԱՆՇԱՀԻ ՀԵՔԻԱԹԸ

Թաքավորի մեկը մի տղե'մ կունենա: Անունը կեղնի Ջիվանշահ: Տղեն սորվիր կը մի մոլի'մ քովը: Էդ շենքի դուռ ու ակուշկա ներկած էր, արևը նես չէր մտնի: Նստե հաց կուտեն: Էդ տղի խասյաթը էման կեղնի, օր իրա ամանի մեջի միսը օսկոռ չբդի էղնի: Ուտելու վախթը ինչխ կեղնի մի հատ'մ օսկոռ կար, հանե թաբլե կը, դիբնի կը ակուշկին: Շուշեն ջարթի կը, արևը նես մտնի կը էդոնց կարթցած տունը:

Արևը օր նես մտնի կը, տղեն բաշլեց արևի հետ խաղալ, էնքան խաղցավ, օր տղեն քրտնավ: Էկան տեսան, օր տղեն քրտնած է, մոլեն կսե.—Ինչի՞ էս էսման քրտնե:

Տղեն կսե.—Մոլա էս ի՞նչ է, օր ակուշկեցեն նես է մտե:

Մոլեն կսե.—Արև է:

—Արևը ընչի՞ համար է:

—Արև օր չէղնի մարդիք չեն կռնա ապրի,—կսե մոլեն:

—Հըբը օր էդման է, ընչի մեզի չեն թողնե արևի տակը կարթանք:

Մոլեն կսե.—Էրթամ թաքավորեն իզին առնիմ:

Ու էդ օրվանից մոլեն բաշլե կը բալկոնում կարթացնելը:

Մի օրմ զորքը թալիմի տեղից էկան ակուշկի տկով անցնեին կը, տղեն տեսավ, մոլին հարցու կը, կսե.—Մոլա, էս ինչ է: Մոլեն կսե.—Հորդ զորքն է, թաքավորի տղա, թալիմի տեղից գուկան, սորվցուն կը, կռիվ օր էղավ ինչխ բդի կռվին:

Էքսի օրը էկան թոփչիքը, էլի էդ տղեն հարցու կը, կսե.—Հըբը ի՞նչ է:

Կսե.—Էսոնք թոփչիներ են, էսոնք էլ ձիավորներն են, դուշմանը փախնելու վախթը էրթան թեզ'մ հասնին դուշմնին ջարթեն:

—Մոլա, գնա հորս ըսա՝ տղեդ էլ չի ուզե կարթա, 39 հոգի, ես էլ հետները քառսուն, թող մեզի թվանք տա էրթանք կռիվ, ավի, էդև իրան տեսնինք:

Ձիեր, թուր ու թվանք հազրին, նստան ձիանքը, գնացին ավի, հըմը ավ չգդան, գիշերը մնացին չոլը: Սապախտան լուսը բացվավ, թաքավորի տղեն դյուրբին դրավ աչքերուն, սարի դոշին տեսավ մի հատ'մ մարալ, էդ մարալի չորս թարաֆը փաթին, կուզեին սաղ բռնեին, ում քովեն էլ անցավ չկոցավ բռներ, գլուխը զարկին կը: Էդ խեղճ հայվանը էստուն զարկվավ, էնտուն զարկվավ չեղավ, զարկե կը թաքավորի տղի դոշին ու փախավ: Էդտեղ 3 հոգի կեղնին, մեկը թաքավորի տղեն, մեկը վեզիրի, էն մեկն էլ վեզիրի պիճի տղեն, չեն կռնա բռնե, ջուր'մ ռաստ էկավ զարկե ջրեն կանցնի, ախր ինքն էլ քրտնած էր մրսի կը էդոր թևերը բռնվի կը ու կգնի գեդին, պարկավ:

Թաքավորի տղեն կսե.—Ձիերից իջե՛ք:

Իջան ձիերուց, ըսավ.—Տղանե՛ր, ուռ շատ կա, ուռ քաղեք, սալա գործենք, նստինք սալեն, էրթանք ջեյրանի քովը:

Ուռը բերեն կը, սալա գործեն կը, իրանք նստան սալին, գնացին ջեյրանի քովը: Թաքավորի տղեն թուրը քաշեց, ուզեցավ ջեյրանին մորթեր, ջեյրանը լեզու գելնի, կսե.—Ինսանօղլի, ընձի մի՛ մորթե, թե մորթես աստծուց կաղաչեմ՝ մուխթ մոլըրիս:

Մորթեն կը, միսն էլ դնեն կը սալի մեջը: Եդ դառան, էդ հատաղին էման քամի էլավ, աստված էդու, հեռու էնե, սալեքը հարի տասնհինգ

վերստ քշեց, տարավ ցած: Ջրի միջեն էլավ Շահմարը, լալի տղին կուլ տվավ: Էլի 10-20 վերստ տարավ, ախր քամին հըլը չէր կտռե: Շահմարը օր վեզիրի տղին կուլ տվավ, թաքավորի տղեն կսե.—Ջեյրանի անեցքն էր՝ բռնեց:

Կէրթան, կէրթան մի կղզու՛մ դեմ կառնին: Հոդ քաղաք՛մ կեղնի, էդ քաղաքում ֆոնջի՛մ շապիկ-թումբնով կայնած էր: Իրկունը տուն էկան ֆոնջին հարցու կը, կսե.-Քովս նյոքար չէ՞ս էղնի, վե՞վ ես, ո՞ւրտից է գալդ:

Էն էլ կսե.—Ինչի՞ չէմ էղնի:

Էդոր վերու կը նյոքար:

Օրվա մեկը թալալը ճվա կը՝ աչքի լուս ունեցողը, ծնկի ու ձեռքի ուժ ունեցողը, ընձեն իրան հազար օսկի, մի Գյուլիզար խանում, մի գիշերվա գործ էնե, գա էդ ապրանքին տեր էղնի: Տղեն կէրթա թալալջու քովը, ձեռքը բռնե կը: Թալալջին կսե.—Տղա՛, իմացա՞ր ձենս:

Տղեն կսե.—Հա՛, իմացա:

—Դե օր իմացար, օսկիքը համբրե:

Հազար օսկին համբրին, թողին քովը: Կսե.—Դե աղջիկը հոն է, գնա, տես:

Տղեն կէրթա աղջկա քովը: 5 րոպե չանցած կանչեցին դուս, տեսավ խազեինը ձին նստած, մի ձի էլ եդակ՝ քաշեր կը: Տղին կսե.—Դե արի նստի, էրթանք:

Կէրթան հասնին կը սարի՛մ դոշը, կսե.—Արի իջի:

Գիջնի, կսե.—Դե էդ քարը վերո՛ւ:

Քարը վերու կը, խազեինը քյանդրը կապե կը տղի մեջքը, տղին իջու կը մուղարեն, ըսավ.—Ինչքան քար ու ավազ կա, տուր վերև:

Էդոնք բառնան կը ձի ու ջորիներին, կսե.—Ընձել քաշեք դուս, էլնիմ:

Խազեինը կսե.—39 հոգի թողել եմ էդտեղ, դուն էլ դառնաս կը քառսունը:

Քարը դնե կը մուղարու բերնին, ինքը կէրթա, տղեն մնա կը մուղարու մեջը:

Էդ տղեն մնա կը հոն, կաշե՝ չորս թարաֆը ջանդակներ են: Էդոնցեն մեկը խլվլար կը, էդոր օդքը բռնեց, ջանդակը գնաց: Տղեն տեսավ վոդքից քաշողը արջ էր: Տղեն կսե. «Գրքերում կարթցել եմ, արջը ղալմաղալից վախենա կը, յավաշ, ղալմաղալ էնեմ բալքի փախնի»: Էդոնք օր ղալմաղալ էրին, արջը իրան ղալմաղալից քարափից քցե կը ցած, տղեն ծակեն դուս գէլնի: Տեսավ՝ վերևն էլ քարափ էր, տակն էլ ու ինքը իրան կսե. «Հըբը արջը ո՞ւրդից բիթմիշ էղավ»:

Տղեն կաշե, որ ցածը 40 մետր խորունկ է, վերևը՝ 2 մետր անջախ էղնիր: Գելնի վերև, տեսավ էլի քարափ է, 2 մետր բանցր է ու էդ 2 մետր քարափից իրան քցե կը ցած: Էդտեղից կգնի ճամփա, կէրթա: Թե ինչքան գնաց, էդիք ինքը գիտի, մի մեծ շենքի՛մ դեմ կառնե: Նես մտնի կը, տեսնի կը, օր թաքավորը նստուկ էր: Բարև կուտա թաքավորին, թաքավորը բարևը կառնի, կսե.—Հազար բարի Ջիվանշահի»:

Թաքավորը օր էդոր անունը կուտա, տղի բերանը բաց մնա կը, կսե. «Էս մարդը իմ անունը ո՞ւրտից գիտե»: Հարցու կը, թե.—Դու իմ անունը ո՞ւրտից գիտես, օր ես Ջիվանշահն եմ:

Թաքավորը կսե.—Սուլթան Սուլեյմանի վախթվանից օձը իրա պորտով, հավքը իրա թևով, ինսան օղլին էստեղ օդք չի դրե, դու էստեղ ես էդորով գիտեմ, օր դու Ջիվանշահն ես:

Ջիվանշահը մնա կը էդտեղ:

Էդ թաքավորի անունը Դեմիրշահ էր: Դեմիրշահը մի օր՛մ 40 բալնիք բերե կուտա Ջիվանշահին, կսե.—Ջիվանշահ, ես կէրթամ իմ էլի մեջը: 40 օր կուշանամ, էս 40 բալնքից 39-ը դռները բանաս կը, էս մի բալնիքով չես բանա, հարի ես գամ,—ու ինքը կէրթա:

Էդ տղեն օրական երկու, իրեք բալնիքով դռները բանար կը: 15 օրվա մեջ 39 բալնիքը խլսավ, կսե. «Ընձի ըսավ էս բալնիքով դուռը չբանաս, հարի ես գամ, հըլբըթ հոդ բան՛մ կա, բանամ տեսնիմ հոդ ի՞նչ կա»: Դուռը բանա կը, տեսնի կը խաս բաղչեն, հոդ ինչ ըսես, օր չկար: Ման գալով տեսավ՝ 3 աղունիկ գլխու վերևը ման գուգաին ինքն էլ չէր էրևա, ախր ծառի տակը նստուկ էր:

Աղավնու մեկը կսե.—Աղջիկներ էստեղ ինսան օղլու հոտ գուգա:

Էն մեկելն էլ կսե.—Դեմիրշահը գնաց, իրա էլի մեջ, էլ ուրտեղի՞ց բըդի հոտ գա:

Ու իրանք մտան ջուրը, լողնաին կը: Էդ վախթ Ջիվանշահին փորսուղ կէրթա մեկի բըմբուլը գողնա կը: Լողցան խլսան, էրկուսը իրանց բմբուլները հագան գնացին, մեկը՝ Գյուլփերին, մնաց:

—Ինսա՛ն օղլի, ընձեն քեզի ֆայտա չկա, բմբուլներս տուր, էրթամ,—կսե աղունիկը:

Ջիվանշահին կսե.—Մենակ մնալեն հոգիս դուս էլավ, անջախ քեզի բռնեցի:

Էդման օր ըսավ, աղջիկը կսե.—Օր էդման է, գնա՛ հագուստ բեր, մերկությունս ծածկեմ, էսման ամոթ է:

Ջիվանշահը կէրթա բերե կը, էն էլ հակնի կը, դառան մարդ ու կնիկ:

40 օրը էկավ անցավ: Դեմիրշահը էկավ տեսավ՝ տղեն, աղջիկը չկան:Կէրթա էն մեկել սենյակը տեսնի կը տղեն ու աղջիկը նստուկ էին: Դեմիրշահին օր տեսան, էլան օդքի կայնան: Դեմիրշահը կսե.—Նստեք, նստեք: 300 տարի դառավ հասակս ընձի արժան չէղավ, ձեզի եղավ, բարով վայելեք:

Ջիվանշահը էրկու ամիս մնաց Գյուլփերու հետ: Մի օր՝մ թաքավորը մտնի կը Ջիվանշահի քովը, տեսնի կը օր Ջիվանշահը միտք կէներ կը: Թաքավորը հարցու կը, կսե.—Ջիվանշահ ընչի՞ մտածես կը: Ախըր չես ըսե, արապները զորքով էկել են, թուխթ էն գրե, օր Գյուլփերին ինսան օղլու քովն է, էնորեն առեք, տվեք ընձի: Կուտաք՝ տվեք, թե չեք տա կռիվս՝ կռիվ է: Հըբը ես ինչխ էնորեն առնիմ, էնոր ձեռքեն, տամ ուրիշի:

Ջիվանշահը գուգա թաքավորի քովը հարցու կը, կսե.—Լավ ձի ունի՞ս:

Էն էլ կսե.-Ունիմ, հրեղեն ձի է:

Սապախտան թեզ Ջիվանշահը քնեն գելնի, թուրը կապե կը, նեդ ու աղեղը վերու կը, կէրթա կը, սկսե կը կռիվը, Էն էլ ի՞նչ կռիվ, արունը էլե ջանդակները քշեր կը: Էրկու շափաթ մնա կը հոդ, կէրթա թաքավորի քովը կսե.—Իզին տուր էրթամ իմ երկիրը, ախր ես էլ թաքավորի տղա եմ էղե:

Թաքավորը կսե.—Էկվան քեզի ճամփի քցեմ կը:

Ղորդ օր էդ մարդը թատարուկ տեսնի կը, ամեն ինչ հազրե կը, օր դարտակ չէրթա, կուտա Ջիվանշահին, ինքն ու աղջիկը բըմբուլները կառնին բերանները դառնան կը ղուշ, թռնին կը հասնին Ղուրղուշուն շահի պալատը: Էնտեղ էլ լավ հարսնիք՝մ սարքեն կը, քեֆ կէնեն: Էդտեղից էլ կէրթան Թեմուր շահի պալատը, հոդ էլ քեֆ կէնեն, քանի օր մնան կը հոդ:

Օրերից մեկը տղեն կէրթա Թեմուր շահին յալվար կնգնի, օր իրան թողե գնա իրանց աշխարհ: Թեմուր շահը կսե.—Ընձի մի հեղրմ ըսեր, ըսի՝ հա:

Ջեհեզը բառցան, ընկան ճամփա հասան իրենց երկիրը: Վերևից օր դյուրբով կաշե, տեսնի կը քաղքի չորս թարաֆ չատր էր զարկած: Էդ ի՞նչ չատր կեղնի: Ղշերից երկուսը գիչնին ցած, էդոնց ռաստ գուգա նախրջի՝մ, հարցուն կը.—Էդ ի՞նչ չատր է:

Նախրճին կսե.—Թաքավոր օր պառվցել է, տղեն էլ գնացել է Գյուլփերու հետևեն, քաղաքը մնացել է անտեր, կուզեն օր քաղաքը տիրեն: Եբ օր էդման կսեն Ջիվանշահին ճվա կը. «Ղըշեր, ղըշեր»: Էդ ղշերը քար, ավազ չթողին թափին էդոնց գլխուն: Դուշմները թողնին, փախնին կը: Գյուլփերին ու Ջիվանշահը կէրթան իրենց ծնողներին տեսնելու: Թաքավորը պառվցել էր, տղին կանչե կը քովը, կսե.—Օղո՛ւլ, ես պառվցել եմ, էկուց, մեկել օր կոնա, օր ես մեռնիմ, թաքավորութենս քեզի կուտամ:

Ու տղին օծե կը թաքավոր: Էսմանով Ջիվանշահը դառնա կը թաքավոր, Գյուլփերին՝ թաքուհի ու էդոնք հասնին կը իրենց մուրազին, վեվ էլ օր մուրազ ունի, թող էնոնք էլ հասնին իրանց մուրազին:

24(24). ՍԻՆԱՄԻ ՈՒ ԳՅՈՒԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Թաքավորի մեկը կունենա էրկու տղա, ինքը և իրա կնիկը: Մի տղի անունը կեղնի Սինամ, էն մեկելինը՝ Գյուլ: Էդոր պալատի առեջը մի հատ՝մ մենծ ծառ՝մ կեղնի, ամեն օր լակլակները գուգան էդոր վրեն թառին կը ու իրանց համար բուն էն դրե, բնի մեջը 2 հատ պիճի ձագեր: Ձագերը մեր ունեին, հըմը հեր չունեին:

Օրվա մեկը 2 հատ լակլակ էկան, էդոնցեն մեկը մերը կեղնի, էն մեկելն էլ ուրիշ լակլակ էր, էդոնք ծվծվացին ու թողին գնացին: Անցավ քանի՝մ օր էդևվուց լակլակը եդ դառնա գուգա ձագերուն սատկցու կը, ինքը փախնի, կէրթա: Էդ հատաղին թաքավորն ու թաքուհին իրանց պալատից սեյր կէնեին:

Էդոնք օր սեյր կէնեին, թաքուհին բաշլեց լացը: Թաքավորը կսե.—Ա՛յ կնիկ, ինչի՞ գուլաս:

Էն էլ կսե.—Հըբը ի՞նչ էնեմ, օր չլամ, մեզեն օր մեկս չէ մեկս մեռնինք, մեր երեխեքու գլխուն էլ էդման օյին բդի գա: Արի կեղնի պայման կապենք, թե օր մեկս չէ մեկը մեռնի, սաղ մնացողը չկարգվի:

Ու էդման էլ կէնեն: Պայման կապեն կը, կուտան վեզիրի քովը:

Երեք տարի էդև թաքուհին մեռնի կը, էրեխեքը մնան կը առանց մեր: Թաքավորը տեսնի կը, օր չի կռնա էրէխեքու դարդը քաշե, էրեխեքին կուտա վեզիրի քովը: Կանցնի 2 տարի, ժողովուրդը կսե. «Ընչի՞ թաքավորը չի կարգվի, հարի ճ՚ էրէխեքը մնան առանց մոր»:

Էդ խաբարը կգնի թաքավորի անկաճը կսե.—Ինձ համար աղջիկ՚մ գդեք:

Ման գուգան, ման, տեսնին կը նախրջու դռան մի աղջիկ՚մ էր նստած: Թաքավորը վեզիրին կսե.—Կէրթա՛ս էդ աղջկան կուզես ընձի համար:

Էդ նախրջու աղջիկը դառնա կը թաքուհի:

Էդիկ օր դառնա կը թաքուհի, էրկու ամիս էդև գիմանա, օր թաքավորը տղա ունի, թաքավորին կսե.—Դու օր տղա ունիս, ընձի ընչի՞ չէս ըսե, չես բերե տեսնիմ:

Թաքավորը կսե.—Էրթամ վեզիրին կսեմ բերե՝ տես:

Վազիրը կէրթա տղեքին բերե կը, նստին կը խորաթա կէնեն: Էդ տղեքը գելնին, օր էրթան, էդոնց մերը մենծ տղի յախեն բռնե կը կսե.—Ո՞ւր կէրթաս:

Տղեն կսե.—Դպրոց կէրթամ:

Մերը կսե.—Ես քու քյաֆթառ հորդ համար չեմ էկե ձեր տունը, քեզի համար եմ էկե: Տղեն մորը հրնդե քցե կը դուս ու ինքը փախնի կը: Էս հեղին բռնե կը պիճի տղի յախեն, էն էլ էդման հրնդե դուս կքցե մորը ու ինքը ախպոր հետ փախնի կը:

Տղեքը օր էդման կէնեն, մերը լռբանա կը, գլխու մազերը պոկե կը, շորերը պատռտե կը, երեսները չանկռոտե արունլվիկ կէնե, լաց էղնելով կէրթա մարթու քովը գանգդի կը, թե քու տղեքը ընձի ծեծին, շորերս պատռտեցին, ո՛չ դու էղնիս, ո՛չ էլ քու տղեքը:

Թաքավորը էդիկ օր գիմանա, ջալնաթ կանչե կը, նստցու կը ձին կսե.—Ուրտեղ օր տեսար, սպանես կը, արնոտ շորերը բերես կը քովս, ես տեսնիմ:

Ջանլաթը կգնի ճամփա, հասնի կը տղին, թաքավորի գրած թուխթը կուտա՝ կարթա կը, կսե.—Էկել եմ օր սպանեմ:

—Դե սպանե, էլ ընչի՞ ես կայնե,—կսե տղեն:

Ջալնաթը կսե.—Ձեր մոր թխած հացը շատ եմ կերե, չեմ սպանե, շապիկներտ տվեք ու գնացեք:

Ջալնաթը էդոնց շապիկները կառնի, իրանց բաց թողնե կէրթան: Ինքը գուգա ճամփին ղուշ՚մ սպանե կը, շապիկը թաթխե կը արունի մեջը, բերե ցուց կուտա թաքավորին, կսե.—Առ, տե՛ս, որ սպանել եմ:

Գալու վախթը ճամփին ռաստ գուգան մի ավճու: Կսե.—Թվանքը չե՞ս ծախե:

Ավճին կսե.—Ծախեմ կը: Հանե մի օսկու փոխարեն էրկու օսկի կուտա, թվանքը կառնե:

Էդոնք էկան, էկան, դեմ առան մի մեշի՚մ: Մութն էլ զաթի ընկել էր ըսին.—Գիշերը հոս մնանք:

Էդոնք մնացին մեշեն: Մեծ ախպերը կսե.—Դու քնի, ես ղարաուլ քաշեմ:

Գյուլը՝ այսինքն պիճի ախպերը, կսե.—Չէ՛, դու քնի, ես ղարաուլ քաշեմ:

Մենծ ախպերը քնի կը, պիճի ախպերը ղարաուլ կայնավ: Գիշերվա մի վախթ տեսավ՝ ղուշը ծառին էր կայնած, թվանքը քովն էր, ղշին նշան բռնեց կրակեց: Ղուշը ծառեն ընկավ: Բերեց եփեց, կեսը ինքը կերավ, կեսն էլ պահեց ախպոր համար: Ձեն տվավ, զարթնեցուց ախպորը կսե.—Ղուշ եմ զարկե, էփել եմ, կեսն էլ քեզի համար եմ պահե, էլի կեր:

Էն էլ քնեն զարթի կը իրա բաժինը կուտե: Ղորթ է, կերավ, հմը միտք կէներ, թե. «Պիճի ախպերս ընձի պատիվ էրավ, հբը ես ի՞նչխ էդոր լավության տակեն էլնիմ»:

Էդ տղեն էդման մտքերի հետ էր, մե՚մ էլ տեսավ ըհը, մի հատ՚մ ղուշ իջավ ծառին, կրակե կը: Ղուշը թռավ էդ ծառից, իջավ ուրիշ ծառի՚մ վրեն ու էդման մի քանի՚մ հեղ ղուշը թռնի կը, ինքը կգնե էդ ղուշի հետևեն: Մեշեյեն դուս գուգա, ուր կէրթար՝ ինքն էլ չիտեր, հասնի կը մի քաղաք՚մ: Էդտեղ ղոնախ կեղնի:

Հիմի խապարը տանք պիճի ախպորից: Էստուն կաշե, էնտուն կաշե՝ ախպերը չկա: Իլաճը օր կտրի կը, կգնի ճամփա, կէրթա թե ուր, ինքն էլ չիտեր: Դու մի ըսե, մենծ ախպորը ժուռ գուգար:

Խապարը տանք մեծ ախպորից:

Մենծ ախպերը կէրթա բազարը, տեսնի կը, օր հոդ շատ շելնիկ կար: Թոփ են էղե էդտեղ: Դու մի ըսե, էդ քաղաքի թաքավորն էր մեռե: Դովլաթ ղուշը բաց են թողե՝ տեսնին՝ ում

գլխուն բդի կայնի, էնոր էլ թաքավոր էնեն: Էդ ղուշը պտըտի, պտըտի, գուգա կայնի կը Սինամի գլխուն: Ժողովուրդը ճվա կը, կսեն.—Սխալվեվ է, էդ չէղավ:

Էդման 3 հեղ բաց թողեն կը, էլի գուգա կայնի կը Սինամի գլխուն: Իլաճը ինչ, էդոր կէնեն թաքավոր: Էն էլ ըսենք, օր ինչխոր էդիկ դառավ թաքավոր, խալխը բաշլեց լավ ապրելը:

Էդ թաքավորը հրաման կուտա իրա պալատի դռնից հարի ծովը, որ 3 կմ կեղնիր, բաղ, բաղջա շիքեն, հըմը էն էլ ըսենք, որ էդ քաղաքի մեջը մի հատ'մ ղովդ էր փետա էղել, օր չէր էղնի, օր մարդկանց կուլ չտար: Թաքավորի հրամանով գիշեր, ցերեկ դռները փակած պահեին կը:

Տեսնին կը, օր էդոր հախեն չեն կռնա գա, թաքավորը հրաման կուտա, կսե.—Վեվ օր էդոր սպանե, 1000 օսկի թաքավորի խազնից կստանա:

Խաբարը տանք պիճի ախպորից՝ Գյուլից: Էդիկ սոխաղները ման գալու վախթը մի հատ'մ թուր գդնի կը, վերու կը թուրը կէրթա մի քարի'մ վրեն նստի կը: Դադռել էր, գուզեր դինջնար, մեկ էլ տեսնի կը՝ ղովդը սլղ տալով՝ գուգա դեմի էդ տղեն, օր կուլ տա: Տղա, դու տղա, թուրը քաշե կը, ղովդին երկու կտոր կէնե , մի կտորը քաշե տանե կը քիչ'մ հեռու, մտնի կը էդոր տալդեն, ախր դադրել էր: Նստի կը, օր դինջնա, նստած տեղը քունը տանի կը, նստած տեղը քնի կը:

Թաքավորը հրաման էր տվե. «Վեվ օր վիշապին սպանե, էնոր հազար օսկի բաշլղ կտամ»:

Մեկը գիմանա, օր օձը սպանողը Գյուլն էր, էդոր բռնեն քցեն կը հորը, օր էդ հազար օսկին իրանք առնեն, յանի թե վիշապին ինքն է սպանե: Մոլի մեկը ֆալ բացող կեղնի: Ֆալ բանա կը, թե վեվ է վիշապին սպանե, տեսնի կը, օր օձ սպանողը հորի մեջն է, կնկան կսե.—Քյանդր'մ տուր, էրթամ հանեմ:

Ու քյանդրը կառնի կէրթա հորեն հանե կը տղին, կսե.—Ընձի տղա չե՞ս էղնի:

Էն էլ կսե.—Ընչի՞ չեմ էղնի:

Վազիրն ու լալեն գուգան կաշեն՝ տղա չկա, հորեն հանել են:

Էդ քաղաքը բյազրկյան'մ էր էկե: Եդ դառնալու վախթը փարով մի տղե'մ էր առե, տանի ծովը քցե, օր իրա առուտուրը բարաքյաթ ունենա. ախր էդոնց ադաթը էդման կեղնի: Շատ ժուռ գուգա, էդոր կսեն.—Մոլի քովը մի անտեր տղե'մ կա, գնա առ:

Բյազրկյանը կէրթա մոլի քովի տղի քովը, տղին հարցու կը.—Դու վո՞վ ես, ի՞նչ տղա ես, ուսում ունի՞ս:

Էն էլ կսե.—Ես ուսումով եմ:

Ու ինքն էլ շատ սիրուն կեղնի: Էդոր կառնի, տանի կը քովը, էդոր պահե կը, կէնե իրան տղա, կէրթա քյասիպի'մ տղա կառնի, բերե քցե կը ծովը, ու իրանք գալիս հասնում են Թեյրան: Տղին թողե կը վաճառականի քովը, ինքը կէրթա թաքավորին տեսության:

Էդ տղեն կսկսե առևտուր անելը, մախլուխը թոփ էղե, կաշի բոյին, փուսաթին: Կաշեն, էման օր սիրուն կեղնի՝ մի մանեթի ապրանքին երկու մանեթ կուտաին, թաքիլա էդոր երեսին աշեին, էման օր սիրուն կեղնի:

Էքսի օրը տղեն կպնի կը հոր յախին կսե.—Գնա՛, թաքավորի աղջիկը ուզե ընձի: Վաճառականը կէրթա թաքավորի քովը, թաքավորը կսե.—Հա՛, ի՞նչ կա, ընչի՞ էս էկե, ի՞նչ գուզես:

Էն էլ կսե.—Թաքավո՛ր, կուզեմ քեզի հետ խնամի էղնինք, աղջիկտ տուր տղիս:

Աղջկա հերը քիչ'մ միտք կէնե, կսե.—Գնա՛ տղիտ բեր, տեսնինք՝ ինչ տղա է:

Վաճառականը կէրթա տղին բերե կը: Թաքավորը որ տեսավ, էդոր սիրունեթեն, բերնի ջուրը վազե կը, էման օր սիրուն կեղնի, սաղ աշխարք օր ման գաս, էդման սիրունը չես կռնա գտնի: Աղջկա հերը կսե.—Լա՛վ, էրթամ աղջկաս հետ միշավարա էնեմ, տեսնիմ՝ էնիկ ինչ կսե, քեզի ջուղաբ կուտամ:

Հերը կանչե կը աղջկան իրա քովը, կսե.—Էսման մի տղե'մ հորը ղրկել է քովս՝ քեզի գուզե կնության, ի՞նչ կսես, ռազի՞ ես, տա՞մ, թե՞ չտամ:

Աղջիկը էդիկ օր գիմանա, հորը կսե.—Կուտաս՝ տուր, էդիկ դու գիտես, թե չես տա՝ ես ընձի քարեն քցեմ կը, մեռնիմ:

Էլ իլաջը՝ ի՞նչ: Հերը ռազի կեղնի, աղջկան կուտա, լավ մենծ հարսնիք կէնեն, շատ ջեհեզներ հազրե կը, գյամուն բառնան կը ջեհեզը, ճամփու դնե կը աղջկան:

Էդոնք գյամով կէրթան: Ճամփին վաճառականի միտքը փոխվի կը, կսե. «Տղին քցեմ ջուրը, հա՛մ ջեհեզը մնա կը ընձի, հա՛մ՝ աղջիկը»:

Աղջիկը հասկնա կը էդոր միտքը կսե.—Վաճառակա՛ն, գիտե՞ս ինչ կա, ես քու միտքը հասկցա, գիդեմ, օր տղին բդի քցես ջուրը: Գնա էս քաղաքը դակաղ՚մ շիքել տուր: Էման էղնի, օր ջուր չքաշե դնենք դակաղի մեջը, նոր քցենք ջուրը: Նոր ես ու դու դառնանք մարդ ու կնիկ:

Խապարը տանք դակաղից: Բաղբանջին բաղը ջրելու վախթը տեսնի կը՝ ջրի հետ մի դակաղ՚մ էկավ, բոստնին դեմ կառնի: Կնկան կանչե կը, կսե.—Արի հանենք, տեսնինք՝ էս ինչ դակաղ է:

Հանեն կը, տեսնեն կը՝ մեջը մի սիրուն տղե՚մ, ինքը քնած քրտնել էր ու էդոր կէնեն իրանց տղա: Օրվա մեկը էդ տղեն հարցու կը, կսե.—Մայրի՛կ, էս ինչ հինգ հարկանի շենք է:

Պառավը կսե.—Վաճառական՚մ էկավ սարքեց, հետն էլ մի աղջիկ՚մ կար:

Տղեն էդիկ օր գիմանա, պառվին կսե.—Մայրի՛կ, գնա՛ հանդեն տեսակ-տեսակ ծաղիկներ քաղե, բեր:

Մերը կէրթա ուզած ծաղիկները քաղե բերե կը, դնե կը սինու մեջը, տղեն էլ գողդուկ մատնիքը հանե կը մատից, քցու կը սինու մեջը, ծաղիկների հետը ղրկե կը աղջկան:

Աղջիկը բալկոնը կայնած կեղնի: Էդ կնկան տեսնի կը կսե.—Մայրի՛կ, էդ ի՞նչ է:

Էն էլ կսե.—Ծաղիկ է, ծախեմ կը:

Կսե.—Հըլը բե՛ր տեսնիմ:

Աղջիկը ծաղիկը վերու կը, ու էդ հատաղին մի բանըմ ճտկաց: Մատնիքը ծաղիկների վրայից կգնի սինու մեջը, տեսավ՝ իրա մատնիքը: Հարցու կը, կսե.—Մայրի՛կ, էդ վի՞վ է տվե քեզի:

Էն էլ կսե.—Տղես:

—Ծաղիկնե՞ը:

Էլի կսե.—Տղես:

Էդ կնկան բուռ՚մ օսկի կուտա, ճամփու դնե կը: Պառավին կսե.—Տղիտ ասա՝ արի էստեղ:

Պառավը կէրթա, տղին բերե կը աղջկա քովը:

Էդ օրը 40 օրը թմի կը, վաճառականը բդի էրթա աղջկա ծոցը քնի: Կէրթա կսե.—Աղջի՛, վադեն թմավ, էսօր բդի իրարու հետ քնինք:

Աղջիկը կսե.—Ղորթ է, կէրթաս թաքավորի քովը, էրկու խոսք կա, էդ երկու խոսքի ջուղաբը կբերես, նոր իրարու հետ քնին կը: Կսես՝ Սինամը Գյուլին ի՞նչ էրավ, Գյուլը Սինամին ի՞նչ էրավ:

Վաճառականը կէրթա թաքավորի քովը, բարև կուտա, կայնի կը: Թաքավորը կսե.—Հա՛, ըսա՝ ի՞նչ է ուզածտ, վաճառակա՛ն:

Վաճառականը կսե.—Թաքավո՛ր, Սինամը Գյուլին ի՞նչ էրավ, Գյուլը Սինամին ի՞նչ էրավ:

Թաքավորը որ էդիկ իմացավ, խելքը կէրթա, վեր կգնի: Ջուր լցնեն կը գլխուն, երեսին՝ խելքը գուգա գլոխը: Էդման իրեք հեղ կսեն՝ Սինամը Գյուլին ի՞նչ էրավ, Գյուլը Սինամին ի՞նչ էրավ, իրեք հեղին էլ խելքը կէրթա:

Թաքավորը կսե.—Էդիք քու խելքի բանը չէ, ըսա տեսնիմ՝ էդիկ քեզի վի՞վ է սորվըցրե:

Վաճառականը կսե.—Իմ ընդանիքն է սորվցրե:

Թաքավորը հրաման կուտա կսե.—Էսոր բռնեք, գցեք տուզախը:

Մարդ ղրկե կը Գյուլին ու կնկան բերեն կը պալատը: Էրկու ախպեր օր իրարու տեսնին կը,փաթթվին կը իրարու պաքեն կը: Էրկու ախպեր նստեն իրարու նաղլ կէնեն իրանց գլխով անցածը: Թաքավորը հրաման կուտա՝ վեզիրի, լալի, վաճառականի գլոխները կտրել կուտա: Գյուլին էրավ իրա օգնականը, թազա շենքն էլ՝ բաղբանջուն, ու էդմանով էլ խլսավ մեր հեքիաթը:

25(25). ԳԱՌՆԻԿ ԱԽՊՈՐ ՀԵՔՅԱՏԸ

Ժամանակոց կեղնի, չի էղնի, մե մառտ ու կնիգ՚մ կեղնին: Կունենան մե տղե՚մ, մե ախճիկ՚մ: Էդ մառտը տարին տասներկու ամիս կաշխատի՝ հալի չի հասնի: Ո՞նչ ցանկն է ծլմ, ո՞նչ մեկը էրկուս է էղնմ, համաշա կուշտ փորով հացի կարոտ: Օրերն ասնմ է խեղճ: Մառտը դես է հառծնմ, դեն է հառծնմ, թե ինչ էնեմ, օր իմ առտս բուսի, էրեխեկս սովամայ չեղնին: Մառտիկը ամեկը իրան գիտեծածն է ըսմ ու խրատ տալմ: Մեկն ըսմ է՝ հատիկ էրա տար ցանե, գբուսի: Խեղճ մառտը որն էլ էրավ չբուսավ ու չբուսավ: Մնածին մառտ ու կնիգ մուլուլ-մուշկուլ ման գալով: Մե օր՚մ էլ մե դառվեշ՚մ էկավ, տեսավ, օր մառտ ու կնիգը տխուր-տրտում նստել են, ըսավ.—Ախպեր ջան, ը՞նչ՚եք ըդման մոլորշիվար նստե:

Ըսին.—Ի՞նչ էնենկ, օր չնստինկ մոլոր-շիվար: Ինչ էրինկ, չերինկ մեր դառդին դարման չեղավ: Մենկ չշիվարինկ, բը ո՞վ շիվարի:

—Հը,—ըսավ դառվեշը,—չկա դառտ, օր դարման չեղնի: Ի՞նչ է ձեր դառտը, ըսեկ՝ տեսնիմ:

Ըսին.—Ըշտը, մեր դառդն էն է, օր քանի ցանմ ենկ, չի բուսմ, մենկ էլ դառն ախկատ ենկ, հալի չենկ հասնմ, չենկ ապրմ:

Դառվեշն ըսավ,—Գիտե՞ս ինչ կա, ախպե՛ր ջան, դառտ կա, օր դառտով գփարատվի, թե ուզմ եկ ձեր էդ դառտը փոխվի ուրիշ դառտի, ես հնարը կսեմ: Դուկ էրեկ՝ ձեր առտն էլ գծլի, դուկ էլ գհարստնակ:

—Վա՛յ, դառվեշ բաբա՛ ջան,—ըսին,—դու օր էդ լավուտենը էնես, մեր էրեխեկն էլ գուզես, չենկ խնայե, կուտանկ քեզի:

Ըսավ.—Օր ըդման է, կսեմ: Ձեր առտի տակը խազինա կա, էնդի էլ չի ծլմ ցանածը: Ունիկ մե տղա, մե ախճիկ: Տարեկ տղին առտի վիրի գլոխը մատղեկ, ախճկան ցածի գլոխը մատղեկ ու վարեկ, ցանեկ: Հա՛մ խազինեն գելնի, հա՛մ էլ առտը գծլի, դուկ էլ հալի գհասնիկ ու կապրիկ:

Մառտ ու կնիկ ըսին.—Էս ինչ լավ բան էղավ:

Էլան առավոտ, սերմը դրին սելին, դուր՝մ ճմուռ էրին, էրեխանծը դրին սելին: Չուտ, չբուխ վերցրին, գնածին առտը: Էրեխանց նստցրին առտի գլոխը, ճմուռը դրին առաջները, իրանկ տարան սերմը ցանին: Դանակ են սըրմ, օր գան էրեխանծը մոռտեն: Դառվեշն էլ հազար ֆել ու ֆանդ գիտեր: Ձեռած դառավ ճնջուղ՝մ: Ըսավ. «Ձայնմին ապրին մառտ ու կնիգ, էրեխեկը մեխկ են: Ես գիտեյ, թե չբտի օժարնայն: Ընդոնկ հարուստնան, էրեխանծ մեխկը ընկնի իմ շլինկս: Յավաշ, էրտամ էրեխանծն ըսեմ, թող իրանց գլխու ճարը տեսնին»:

Էղավ ճնճուղ, էկավ ըսավ.—Էրեխե՛կ, ընձի ճմուռ տվեկ, ձեզի բարի խապրիկ՝մ իտամ:

Էրեխեկը բուռ՝մ ճմուռ տվին, առավ գնաց, կերավ, էլի էկավ: Ըսավ.—Էրեխե՛կ, ընձի ճմուռ տվեկ, ձեզի բարի խապրիկ՝մ իտամ:

Էրեխեկը կտոր՝մ էլ տվին, էն էլ տարավ կերավ, էլի էկավ: Էլի տվին, էլի տարավ կերավ, էկավ: Էրեխեկը ըսին.—Դե ըսա, էլ ճմուռ չկա:

Ըսավ.—Էրեխե՛կ, հերդ ու մերդ առտի ներկևը դանակ են սրմ, օր գան մեկիդ առտի վերևը մատղեն, մեկիդ՝ ներկևը: Էլեկ դիով՝մ գնածեկ, մեղկ եկ:

Էրեխեկն էլան, բռնեծին իրար ձեռ, ընկան ճամպա, գնացին: Գնացին, հմը իրանկ էլ չիդեն, թե ուր են էրտմ: Քուրը մենձ է, ախպերը՝ պզտլիկ: Օրը տակ էր, ճամպեն հեռու, երկար, իրանկ էլ ճմուռ էին կերե, ճամպեն ծառվծան: Ուրման ման էկան, ջուր չգտան: Հա էրտմ էին, հա մալի ոտի տեղ էր ռաստ գալմ՝ լիկը ջրով: Ախպերն ըսմ էր.—Քուրի՛կ ջան, խմե՞մ էս ջուրը:

—Չէ, ախպե՛ր ջան,—ըսմ էր,—մալ գդառնաս՝ ձի կդառնաս:

Վեռճը ինճի ոտի տեղ ռաստ էկավ, ախպերն ուզմ էր, օր խմեր, քուրը չթողեց: Մեկ էլ քուրը ընկած մտկի տակ՝ էրտմ էր, խաբար չեղավ, թե ախպերը ծառավից վառված՝ ինճղ խմեց գառի ոտի տեղի ջուրն, օր ձեռած գառ դառած, բռբռալեն ետևեն գալմ էր: Դառավ, օր ախպերն է, գառ է դառե: Ձարգեց ծնկներին, զարգեց գլխուն, էլ ճար չգըտավ: Խառնեց առաջ, գնացին: Գնացին, գնացին հասան մե քաղկի՝մ մոտիկ բաղ՝մ տեսան: Տեսան, մտան էդ բաղը, դես ման էկան, դեն ման էկան, էկան ախպուր՝մ գտան: Էս ախպրից կուշտ ջուր խմին: Քուրը հանեց լաճակը, քցեց ախպոր բուկը, կապեց ծառից, ինքն էլ ելավ ծառի վրեն նստավ: Քանի՝մ օր մնան ըդեղ: Մնաց, տեսնմ է, օր թակավորի ձիապաները մե լավ ձի՝մ են բերմ ջրի: Ձին, ինչ իլաջ են էնմ, չի գալմ ախպրին մոտիկ: Առնմ ձին, էրտմ են: Մե օր, տաս օր, քսան օր, ճար չի էղնմ: Ախճիկն էլ ամեն առավոտ թեզ ծառից իջնմ է, կանաչ քաղմ, լցմ գառի առաջ: Իրան հմար էլ դես-դեն ման է գալմ, պտուղ է քաղմ, հացի թիկա է գտնմ, էլի էլնմ է ծառի վրեն: Ուտմ, ապրմ է: Տեսնմ է՝ էլի ձին բերին՝ ջրին: Ինչ իլաջ էրին, ձին մոտիկ չեկավ ախպրին: Դառծրին տարան: Ձին քանի գնաց մաշվավ, զաբնավ, հալվավ: Ո՛նչ խմմ է, ո՛նչ ուտմ է: Թակավորի տղեն տեսավ ձիուն, զարմացավ, ըսավ.—Էս ի՞նչ օրն եկ քցե էս ձիուն, սատկցրել եկ:

Ձիապանները ըսին.—Ախր, մենկ ի՞նչ էնենկ, ո՛նչ խմմ է, ո՛նչ ուտմ, հլբատ գզապնի:

Թակավորի տղեն էդ օրը ինկը բերավ ձիուն ջուրը: Բերավ, քանի քաշեց ախպուրի վրեն, ձին խրխնջած, եդ գնաց: Մե սիլե՝մ տվավ ձիու էրեսին ու տարավ ախպրի վրեն: Աշեց, տեսավ,

օր ինչ տեսնի, մե սիրուն պատկեր՝մ կա ջրի մեճն, օր չուտես, չխմես մենակ ըդուր թամաշա էնես: Ետ դառավ, աշեց տեսավ, օր ծառի վրեն է էդ պատկերի տերը: Ըսավ.—Ախճի, իջի՛ արի, տեսնիմ հլա, հայ ես, թուրկ ես, ջին ես, թե՝ ջանավար:

Էս ախճիկն ըսավ.—Ես էլ չիդեմ, թե ինչ եմ:

Խուլասա, իջավ ծառից ցած, էկավ: Թակավորի տղեն ձին քաշեց ջրին: Ձին խելոկ գնաց խմեց, էկավ: Վերցրին գառնուկին, ախճկան, էկան թակավորի պալատը: Ըդեղ մե վախտ՝մ էլ օր մնաց, լավ կերավ, լավ խմեծ, հակավ-կապեց, էղավ ջիլիզ աքլա խնձոր, գառն էլ հետը:

Թակավորի տղեն էդ վախտը օր տեսավ, ուշկը գնաց: Ըսավ. «Կա՝ էսի է իմը, չկա՝ էսի է իմը»:

Մտածեց թակավորի տղեն ու հորն ըսավ.—Մեզի պսագե:

Հերն էլ ուրխծավ, բերավ տղին ու ախճկան խոսըծրավ, ըսավ.—Ախճի՛ ջան, դու իմ տղին կառնի՞ս:

Ըսավ.—Քու տղեն օր ընձի առնի, ես յալվար էլ չեմ ընգնի՞:

Տղեն էլ զատի յալվար էր: Բերավ պսակեց: Օխտը զօր, օխտը գիշեր հառսնիկ էրավ: Քեֆ-ուրախուտեն, դավուլ-զուռնա, կերուխում: Ախճիկն էղավ թակույի: Թակավորի տղեն ըսավ.—Էդ գառը ղրկենք սուրուն, յա տանկ մեկ՝մ տանի պայե:

Քուրն ըսավ.—Չէ՛, տանիս պայեն, օր չիբուղ զարկե՞ն: Էդի խո գառ չէ, էդի իմ գառնուկ ախպերն է: Ըշտա, ճամպեն գառի ոտի տեղի ջուր խմեց, գառ դառավ: Էդի իմ քովես հեռենա, ես գխելռիմ:

Էդման անուշ ու սիրով ապրան: Թակավորի տղեն էնկան էր սիրում կնգան, օր մե սհատ՝մ չտեսներ, աշխարկը գլխուն դուման էր: Մե օր՝մ էլ, իրանց հացթուխ պառավը մե ախճիկ՝մ ուներ: Էնկան գեշ էր, օր տանող չկար, մնածե դախծել էր: Պառավը մտածեց, ըսավ. «Էսի չոլից գտած, բերածը գա էղնի թակավորին հառս, իմ ախճիկս մնա, դախնա՞: Յավաշ, իմ ըսածս էղնի: Ես էդ բանը ղաբուլ չեմ էնե: Ես մե հնարկով՝մ բտի իմ ախճկան էնեմ թակավորի հառս»,—մտածեց պառավը:

Գնաց թակավորի քովը, ըսավ.—Թակավորի տղա՛, ես շատ սռտով գուզեի, օր քու հառսին մե լավ փեշկաշ՝մ առնեի, հմը չեղավ: Հիմի փեշկեշի տեղ թող տանիմ ծովի ղրաղը թակույուն լողծնեմ, քիչ՝մ էլ ման գանկ, իրկունը գանկ տուն:

Քիչ՝մ չեմ ու չում էրավ թակավորի տղեն: Պառավ շատ յալվար ընկավ.—Ըշտա, իմ ախճկաս պես տանեմ լողծնեմ բերեմ, խո ես օտար չե՞մ,—ու ֆլան ֆստան:

—Լա՛վ,—ըսավ,—իրկուն թեզ գուկակ տուն:

—Հա՛,—ըսավ պառավը, առավ հառսին գնաց:

Տարավ ծովի ղրաղը: Չբլխծրավ լողծրավ: Դառավ մե քար՝մ էլ լավ սաբնեց, հառսին նստծրավ վրեն: Լանգե՝մ զարգեց, քցեց լժալեն ծովը: Բերավ շորերը հակծրավ իրան ախճկան, քողը քաշեց երեսը: Տարավ թակավորի պալատը, եղավ թակույի: Հմը, էդ օրվանից թակավորի տղեն երեսը աշել չուզեծ, սեր ու սավդեն քցեց գառնուկ ախպոր վրեն: Օր մե սհատ՝մ չէր տեսնմ, խելկը գլխեն էրտմ էր: Գառնուկ ախպերն էլ ինչ էնմ, չէին էնմ, ծովի ղրաղեն տուն չէր գալմ: Մտածեցին պառավն ու ախճիկը, թե. «Էսի մե օր՝մ շոռը գհանե: Բերենկ ըստուր գլոխն աղանկ: Ինչ էնենկ, ինչ չենենկ»: Աղճիկը էղավ սուտ հիվանտ, պարկավ:

—Վա՛յ մեռա, հավա՛ր մեռա:

Մերը հառծնմ էր.—Թակույի՛ ջան, ինչ կուտես:

—Մե թիկե՝մ, օր էն գառի մսից էղնի, կուտեմ:

Գալմ թակավորի տղին ըսմ է ըշտը.—Թակույին ըսմ է՝ մե թիկե՝մ գառի մսիծն էղնի, կուտեմ:

Ըսավ.—Վացուն իրան պես էղնի, գառին դիպնող չկա: Տիա սուրուներով գառները, թող մոռտե որն ուզմ է:

—Չ՛է,—ըսմ է,—էդի բտի էղնի:

Թակավորի տղեն գնաց ըսավ.—Ախճի՛, չէ՞, դու չէիր թողմ քովեդ հեռեցընեիկ, ըսմ իր՝ իմ գառնուկ ախպերն ա: Բա հիմի ինչխ ես ղմշմ, ըսմ ես, թե՝ մոռտեկ, միսն ուտեմ:

Պառավի ախճիկն հավարով էրեսն ծածկեց, ըսավ.—Զատի էդի իմ մատաղս է: Մերս ըդուրը խոստածել էր ընձի համար մատաղ, էնդի գառ դառավ: Հիմի ես էլ հիվանդ եմ, ես օր մեռա, էլ ո՞վ բտի ըդուր աշե: Քանի սաղ եմ, թող

մե դիու էղնի, օր մնաց անլիզու անասուն, ընչի՞ հմար է:

Էնկան ըսավ, ավտծրավ, օր թակավորի տղեն ըսավ.—Դուկ գիտեկ:

Ըդոնկ թող ըդեղ խոսան, մենկ խաբար տանկ գառնուկի քուրոջից: Սուռբ հոգուն այան է, թե ինչ է կատրվմ:

Առավոտ օր ժամկոճը երտմ է ժամ էնելու, տեսնմ է խորունկ ձեն՚մ է գալմ, լսմ է.—Ժամկո՞չ, ժամկո՞չ, քու ժամն օր գսիրես, քու անահուն աստվածն օր կսիրես, գնա՛ թակավորի տղին ըսա՝ իմ գառնուկ ախպորը չէնե իրան սուտ հիվնդին մատաղ:

Մե օր, երկու օր, տասը օր, ժամկոչը ըսմ է. «Ըսեմ, չսեմ, վայտե թակավորի տղեն բարկանա, գլոխս զարգե: Թե չըսեմ, էս ի՞նչ ձեն է ամեն օր»:

Մնաց: Վեռջի օրը բերին դանակ են սրմ, թնդիր են վառմ, օր գառնուկին մատղեն: Գառնուկ ախպերը ծովի քանարը, ուրտեղ օր քուրն է, ընդեղ թռնմ, ծուլի է էլնմ, ըսմ է.—Մկկա, մկկա, քուրի՞կ ջան, թակավորի տղեն հրամայմ է՝ այսպես ու այսպես. Թնդիր վառեծե՛ք, դանակ սրեծե՛կ, գառնուկ ախպորը մատղեցեկ, սուտ հիվնդին կերծրեկ: Արեկ ձկնորսներ թոռը քցեցեկ մեր լավ Մանուշին ծովից հանեծեկ:

Էդման մի քանի բերան օր ըսավ, թակավորի տղեն տեսավ, շատ զարմացավ: Ըսավ.—Էս ի՞նչ բան է:

Էն դիեն ժամկոչը էկավ, ըսավ.—Թակավորի տղա՛, հլը էսօր մի մատղեկ, էգուց առավոտ թեզ դու արի ժամը, դու գլսես մե ձեն՚մ, օր աղերսմ է, պաղատմ է, ըսմ է. «Ժամկո՞չ,ժամկո՞չ, քու ժամն օր գսիրես, քու անահուն աստվածն օր գսիրես, գնա՛ թակավորի տղին ըսա՝ իմ գառնուկ ախպորը չէնե իրան սուտ հիվնդին մատաղ»:

—Հա՛:

—Հա՛:

—Լավ,—ըսավ թակավորի տղեն ու էկավ:

Թնդիրը վառել, դանակ սրելը առկիլեց: Ըսավ.—Մնա էգուց, ընձի վռազ տեղ են կանճե, բտի էրտամ:

—Լա՛վ, թող մնա:

Առավոտ թեզ, թակավորի տղեն գնաց ժամը: Տեսավ՝ ծովից խորունկ ձեն՚մ է գալմ, ըսմ է. «Ժամկո՞չ, ժամկո՞չ, քու ժամն օր գսիրես, քու անահուն աստվածն օր գսիրես, գնա՛ թակավորի տղին ըսա՝ իմ գառնուկ ախպորը չէնե իրան սուտ հիվնդին մատաղ»:

Էս օր լսեց թակավորի տղեն, խելկը կործրածի պես վազավ տուն:

Գնաց կնգա երեսը բացեց, տեսավ, օր ի՞նչ տեսնի. Կնիկ չէ մե քյոռ թաթոշ՚մ է:

—Ահա՛, տես, թե ուրտեղ է թաղված շան գլոխը,—ըսավ,—էլի շորերդ հակի, տեղ ենկ էրտմ:

—Ես հիվանդ եմ, չեմ կռնա գա,—էս, էն:

Ըսավ.—Շատ լավ կռնաս, տանմ եմ լավծնելու:

Զոռովեն հանեց, շորերն հակծրավ: Գնածին ծովի ղրաղը, կանճեց թոռչիկին, ըսավ.—Թոռը քցեք, ծովեն հանեկ Մանիշին, օր չհանիկ, գլխներդ գզարգեմ:

Պառավի ախճիկն ըսավ.—Ըշտը, ես եմ Մանիշն էլի:

—Չէ՛,—ըսավ,—դու Մանիշը չես, դու հրեշն ես:

Թոռջիկը թոռն քցելուն պես՝ սիրուն Մանիշը ծովից էլավ: Գառնիկ ախպերը օր տեսավ քուրոջն, ուրախուտենեն լաղաբը պատռավ, դառավ մե սիրուն, հրեղեն տղե՚մ, կայնավ քուրոջ կողկը: Թակավորի տղեն պառվի ախճկան ըսավ.—Անի, ա՛յ Մանիշը:

Ըսավ, բերավ քար կապեց բկեն, քցեց ծովը; Պառավին էլ կապեց ջորու պոճը, ըսավ.—Տա՛ր, զարգ սարեսար, քարեքար, ղուռի ղաֆեն տուն բե:

Ջորին էր, տարավ զարկեց սարեսար, քարեքար, ղուռի ղաֆեն տուն բերավ:

Թակավորի տղեն նորից հառնիկ էրավ: Օխտը զօր, օխտը գիշեր քեֆ-ուրախուտեն էրավ:

Ընդոնկ հասան իրանց մուրազին, դուկ էլ հասեկ ձեր մուրազին: Երտկեն ընկներ իրեկ խնձոր, մեկն՝ ըսողին, մեկն՝ լսողին, մեկն էլ՝ հեքյատ կազմողին:

26(26). ԴԱԼԻ-ԱՅՄԱԴԸ

Ժամանակոց կեղնի, չի էղնի, մե թակավոր՚մ կեղնի: Էդ թակավորը կունենա հինգը տղա: Տղերանց անունները որին գդնե Ալի, որինը՝ Վալի, որինը՝ Բալի: Վեռճապես ամենապզ-

դի տղու անունը գդնե Այմադ: Էդ թակավորը շատ խղճով, պատվով, ամոտով թակավոր էր: Մեկը չէր էղե, օր էդ թակավորից գանգատ էներ: Իրան հպատակ ռյատին շատ լավ էր աշմ, մուղատ կենմ: Էղավ, օր պզդի տղեն՝ Այմադը, մենձացավ, եղավ վեց-օխտ տարեկան: Էլ չէր շայվմ: Հերն ու մերն էին էրես տվե: Ախպրտիկն էին էրես տվե: Երես առել, էղել էր խելռի պես: Այմադը քաղկի էրեխանծը որին ռաստ էր գալմ, զարկմ էր, քցմ էր, դիպնմ լացծնմ էր: Դրկծների էրեխանծը խո հեչ օր ու արև չէր տալմ:

Այմատին տվին Մատլաբխանեն ըսին. «Էրտա Մատլաբխանեն խելկի գա, խելոկնա»: Ընդեղ ջլիզ բետար էղավ: Մատլապխանի էրեխանծը քցմ, քտերից արուն էր բերմ, խածմ, մատներն էր կտռմ, հացերն էր խլմ, թապմ: Մե խոսկով՝ լազատ չէր տալմ: Ըդմանով՝ եղավ մե տասնըհինգ տարեկան: Էլի խելկի չեկավ:

Էս անկամ էրեխանց տիրվտանկը էկան թակավորի քովը ըսին.—Թակավորն ապրած կենա, չուրի հիմ մենկ քու խատեր հմար ձեն չէինկ հանմ, ըսմ էինկ էրեխա է, մենձնա՝ խելկի գուկա: Հմը քանի մենձծավ, խելռավ: Մեխկ են մեր էրեխեկը, ճարերը կտռել է, էլ ճար չի թողե: Մտածե՝ բան՝մ էրա, թե չէ, էդի մեր էրեխանծ հոգին կառնի:

Թակավորը շատ ամճցավ, շատ վռտովվավ, ըսավ.—Ես էղնիմ էս ինչ թակավորը, չուրի հիմի մե մառտ ընձեն դժգոյ չեղնի, հիմի ընչի՞ անտեղի բանով գան, գանգտվին,—ըսավ թակավորն ու վերծրավ հրաման գրեց՝ «Սուրգուն ղրկել»:

Մերը, ախպրտիկը յալվար ընկան. «Էրեխա է, մեխկ է, գմենձնա գխելոկնա, խելկի գուկա»: Սինոտապետերը մեջ ընկան, լալա-վազիր մեջ ընկան, չթողին:

—Լավ,—ըսավ թակավորը,—օր էդման է, գնացեկ քաղկից դուս խելի՝մ էլ հեռու, էրկու թեթև աշկ օտաղ շինեկ: Տարեկ թողեկ հոն:

Լսեցին թակավորին: Գնացին էրկու աշկ թեթև հոլիկ շինեցին, Այմադին տարան, թողին հոլիկը, էկան: Օրական անկամ՝մ կիրակուլ էին տանմ, էրկու հաց, գավ՝մ ջուր: Օղոռտ է, հերը վռնդեց տնեն, հմը ջիկարը մռմռմ էր: Մե օր՝մ հառծրավ ըսավ.—Էն դալի Այմադին ինչկա՞ն հաց ու ջուր էկ տանմ:

Ըսին.—Ըշտը, էսկան:

Ըսավ.—Քիչ է, շատ տարեկ:

Էս անկամ կիրակուլի ամանը մենձրին: Հացն էլ էրին իրեկ հաց: Էդ օրվանից Այմադն էղավ Դալի-Այմադ:

Դալի-Այմադն էր, առավոտ էլնմ էրտմ էր: Իրան հմար պտտվմ, ղուշ, ղշվորենկ բռնմ, զարկմ, թապմ իրկուն գալմ էր, հացն ու կիրակուլն ուտմ, պարկմ քնմ էր: Առավոտ էլի էլնմ ղուշ ու ղշվորենկի հետ ընկնմ: Օր՝մ էլ էլավ, առավոտ գնաց: Դես ման էկավ, դեն ման էկավ, հեչ բան ռաստ չեկավ: Թողեց էկավ, օր գա տուն, տեսավ, օր մե լապստրակ՝մ նստել է քարի վրեն ու վրա գլոխն է սղալմ: Դալի-Այմադը ադադորեց, լաբզտրակին բռնեց, բերավ տուն: Ըսավ. «Էսի լավ է ընձի անգլաջա է, թող մնա»:

Դրավ վեր, ինկը գնաց իրան հացը կերավ, ջուրը խմեց պարկավ քնավ: Առավոտ, էլի էլավ գնաց: Հաց ու ջուր բերողը բերավ փանջարից նես դրավ: Դառտակ ամանը առավ գնաց:

Լաբզդրակն էր, լաղաբն հանեց, էղավ սիրուն, հուրնի հրեղեն ախճիկ՝մ: Էկավ դրավ կիրակուլի ու հացի կեսը կերավ, կեսը դրավ տեղը: Դալի-Այմադի տեղ ու բառծը թափ տվավ, տեղը շինեց, սարկեց, ավլեց, իստկեց: Ամեն ինչ էրավ, պռծավ, էլի լաղաբն հակավ: Էղավ էլի էն լաբզդրակը, մտավ քոշեն: Իրկունը Դալի-Այմադը էկավ, տեսավ հացի ու կիրակուլի կեսը կերած է, ջրի կեսը խմած է: Իրան տեղ ու բարձը իստակ, թապ տված, սարկած է: Տուն ու դուռը էլի էման: «Լավ,—ըսավ Դալի-Այմադը,—ըստոնկ օր ըսենկ հաց բերողն է էրե, բը հացի ու ջրի կեսը ո՞վ է կերե, խմե: Էդ էլ խո հաց բերողը չի՞ կերե: Հոն չկա հաց, հո՞ս է գալմ ուտմ: Լավ, ի՞նչ, ի՞նչ էնենկ, կերե՝ կերել են»: Մնացածն էլ ինկը կերավ, էլավ քնավ:

Առավոտ էլի էլավ գնաց: Էլի հաց բերողն բերավ ուտելիկը, փանջարով դրավ նես: Առավ դառդակ ամանը, գնաց: Էլի լաբզդրակը հանեց լաղաբը, բերավ դրավ կիրակուլի ու հացի կեսը կերավ, ջրի կեսը խմեց: Դալի-Այմադի տեղ թափ տվավ, շինեց, ավլեց, իստկեց: Գոռծը պռծավ, էլի հակավ լաբզդրակի լաղաբը, մտավ քոշեն: Իրկուն, Դալի-Այմադը էկավ: Տեսավ էլի էն դրուտենն է, ձեն չ՝անեց: Անսաս իրան հացը կերավ, ջուրը խմեց, ելավ քնավ: Առավոտ, էլի էլավ գնաց, իրկունը էկավ տեսավ էլի էման է: Խուլասա, մե օր, էրկու օր, տաս օր: Դալի-

Այմադն ըսավ. «Ըսմանով չի էղնի: Ես մնմ եմ անոտի: Կեծի հլը ես բուսու պայեմ: Տեսնիմ, թե ո՞վ է գալմ էս հաց ու ջուրը ուտմ»,—մտածեց Դալի-Այմադը:

Առավոտ էլավ դես ֆռաց, դեն ֆռաց, տեսավ, օր հաց բերողը հացը բերավ, փանջարից նես դրավ, դառավ: Դալի-Այմադը էկավ փանջարից աշեց տեսավ, օր լաբզդրակն հանեց լաղաբն, էղավ սիրուն, հուրնի հրեղեն ախճիկ'մ: Դրավ կիրակուլն ու հացը կերավ, կեսը դրավ տեղը: Տեղ ու բառծը թափ տվավ: Ավլեց, իստակեց, ամեն ինչ պոծավ, գնաց լաղաբն հագնելու, հմը Դալի-Այմադը բիլակը բռնեց: Ըսավ.—Ես քեզ ղուրբան, դու ընձի՝ հեչ: Դու օր ըստեղ ես, բա ես ը՞նչ'եմ ընկե չոլերը գմանգամ՝ մինակուտենես:

—Լավ,—ըսավ,—թող մե էսօր իմ լաղաբս հակնիմ, ընդից եդև դու գիդես:

—Լավ, հակի:

Հակավ: Դալի-Այմադը բերավ թուղտ'մ գրեց, օր. «Հմի ես մենակ չեմ, էղել ենք էրկու հոկի: Ըստից ետև մեզի ինչ օր գբերեկ, էրկու հոկու ջիրա բերեկ»:

Էկսի օրը հաց բերողն թուխտը տարավ տվավ թակավորին: Թակավորն ըսավ.—Դալի-Այմադն է, ո՞վ գիտե ում հետ է հնգերածե: Տարեկ, իշկան օր հարկավոր է:

Մեկել օրը հաց բերողը էրկու հոկու ջիրա բերավ: Էդ օրվանից էրկու հոգու կիրակուլ, հաց ու ջուր էին բերմ: Դալի-Այմադը էլ չթողեց լաբզդրակն լաղաբն հակնի: Դալի-Այմադը ըսավ.—Նա՛ ես քեզեն լավին գգտնիմ, նա՛ էլ դու ընձեն լավին գգտնիս, լաղաբդ դիր ղրաղ, մենկ առնինկ իրար, պոծնինկ:

Էդ օրից, օր Դալի-Այմադն ու ախճիկն առան իրար, ախճիկն ըսավ.—Դալի-Այմադ, էն քարից, օր ընձի բռնիր էն քարը մի՞տկդ է, կռնա՞մ գտնիս:

—Հա, կռնամ գտնիմ, միտկս է:

Ախճիկն ըսավ.—Դե գնա կայնի էն քարի վրեն ձեն տուր, ըսա. «Հնդլիկ-փնջլիկ բաջի, դուս արի»: Դուս գուկան յա՛ մերս, յա՛ քուրս, քեզի շատ յալվար, յախար գընկնին, կսեն. «Վա՛յ փեսա ջան, ճամպեկիդ մատաղ, արի տուն, արի տուն: Ինչ կենեն, չեն էնե, չերտաս նես, հմը գնածիր էլ եդ չես գա: Փոռծանկ գբերեն գլխուտ, կսես. «Շատ վռազն եմ, Ձեր ախճիկը էրկնկները ուզմ է, տվեկ տանիմ»: Կուտան գբերես:

—Լավ,—ըսավ:

Գնաց կայնավ էն քարին, ուրտից, օր լաբզդրակին բռնել էր: Ձեն տվավ.—Հնդլիկ-փնջլիկ բաջի, դուս արի:

Իրեկ անկամ օր ձեն տվավ, տեսավ, տեսավ մե սիրուն, շեկ ջայել ախճիկ'մ ու կնիգ'մ դուս էկան: Էկան փատտվան ոտները, ըսին.—Վա՛յ, փեսա ջան, բարով ես էկե, բա ընճի՞ նես չես գալմ քու գալած ճամպեկին մատաղ:

Քաշկոնեծին՝ նես տանելու, չգնաց: Ըսավ.—Ձեր ախճիկը էրկնկները ուզմ է, տվեկ տանեմ:

Բերին էրկնկները տվին: Առավ էկավ, բերավ տվավ ախճկան: Ախճիկն առավ էրկնկները: Դրավ պտտեց, ըսավ.—Ըստեղ էման քոսկ ու սարայ'մ քցեկ, օր շուկն ընգնի քաղկի վրեն:

Առավոտ ելան տեսան, ի՞նչ տեսնին, շուկը ընկել է քաղկի վրեն: Տեսավ, օր իրանց քոսկ ու սարայի շուկն է, դրավ էրկնկները նորից պտտեց. Ըսավ.—Սուֆրա-սեղան բացվի, ուտելիք լցվե ուտենկ:

Սուպրա-սեղանը բացվավ, կերան: Էդմանով ապրան քանի'մ տարի: Ունեծան էրկու հատ լավ, սիրուն տղա: Հա, սուֆրա-սեղանն, օր բացվավ, կերան-խմին, Դալի-Այմադը տեսավ, օր էդման վախտ իրան համար կիրակուլ էին բերմ, մե օր'մ էդ տեսավ ուտելիկներ չէին բերի: Բերավ թուղտ'մ գրեց. ըսավ. «Ինչ օր նեղուտեն քաշեծիկ, ընծի էսկան վախտ հաց ու ջուր բերիկ, բոլ է, էլ մի՛կ բերե: Մենկ ըստեղ լավ ապրմ ենկ»: Էլ բան չբերին:

Մե օր'մ էլ հերը նամակ գրեց, թե. «Դալի-Այմադ, հլը առանց ընձի հառծնելու դու քեզ կարգվար, գոյնա արի ընձի տար, քու տուն ու տեղդ տեսնիմ»:

Տղեն կնգան ըսավ: Կնիկն ըսավ.—Օր ուզմ են, թող գան: Կէրթաս հորդ կսես, թող իրան քաղկի գըդալ բռնող սկսած, ընչուրի գտակ ծածկողը, իրան խոշունը, սաղ, մե խոսկով՝ քաղակը մառտ չմնա, սաղ գան:

Դալի-Այմադն էր, գնաց հոր տունը, վազան առաջը, ըսին.-Վա՛յ, Դալի-Այմադն է, մեր Այմադն է:

Մերն ու ախպրտիկը էկան փատտվան, համպուրեցին, նստան: Ըսին-խոսածին, հառցրին:

Դալի-Այմադն տեսավ, ուրտեղ իրան հոր պալատները, ուրտեղ իրան քոսկ ու սարայն: Հոր պալատը աշկին հոլիկ էր էրևմ:

Է՛, շատ խոսալուց եդև Դալի-Այմադն ըսավ.—Բաբա, ես էրտամ, դու վաղը գվերցնես քու քաղկիդ ժողովուռտը՝ գդալ բռնող, գտակ դնող, փեդ բռնող, ինչկան օր կան, քու սաղ ղոշունդ, սինոտդ, մե խոսկով՝ քաղակը մառտ չմնա, սաղ գան մեր տուն:

Ըսավ, թամպա էրավ, ինկը դառավ գնաց:

Էկսի առավոտ հերը թալալ քցեց, քաղկի մեջը: Թալալը ճված.—Քաղկցի՛կ, առեկ, ձեր գդալ բռնող, գտագ դնող էրեխեկը, փետ ու ճոգան բռնող հալիվորները, ծեր ու ջայելները, իշկան օր կան, գան թակավորի մեյդանը:

Էդ ըսելու հետ՝ մեյդանը լիկ լցվավ: Ղոշունն էկավ: Վեռջապես, քաղակը մառտ չմնաց: Էկան թոպ էղան:

Թակավորն ըսավ.—Դե քելեկ էրտանկ: Դալի-Այմադը մեզի միսաֆիր է կանճե:

Էլան գնածին: Որը ոտով, որը ձիով, որը սելով, որն էլ շալգով: Էրտմ են, հմը ծիծղմ են. «Ով գիտե՝ էլի ինչ խելառ խելքն է բռնե, աշես՝ ինչ է մտածե: Եսիմ կառտոլով ապուր է էպե, թե ավիլուկով»: Վեռճապես հասան քաղկից ղրաղ, տեսան, օր ի՞նչ տեսնին՝ Քոսկ ու Սարայի հովը ընկել է քաղկի վրեն: Գնացին, ամեկ իրան տեղավորվան:

Դալի-Այմադի կնիգը մտավ նես, դուս չեկավ: Մառտուն կանճեց. Ըսավ.—Ես ամեն ինչ գիազրեմ: Ծառաներ բերել կուդամ, դու ընդեղ վրահաս էղի, օր կուդեն պռծնին, դու ըսա, օր ամեկիդ կերածի թասն ու գտալն իրանն է, թող վերծնե:

—Լավ,—ըսավ մառտը:

Տղերանց մեկի անունը դրել է Տաղ-բաշի, մեկելինը՝ Դենիս-բաշի: Տղեկը գնացել էին իրանց թակավոր պապի քովը: Ընդեղ խաղմ էին ու ուրխնմ էին: Դալի-Այմադը էկավ ըսավ.—Ամեկդ ձեր տեղը տեղավորվեկ:

Տեղավորվան: Մեկ էլ կնիկը նեսից էրկնկները պտտեց, ըսավ.—Էն տեսակ ուտելիքներ հազրեկ, օր ո՞նչ էղել է, ո՞նչ տեսնվել է:

Կիրակուլները հազր դրվան ղազաններով: Մեկել պտտեց, ըսավ.—Էն տեսակ ամաններ ու գտալներ հազըրեկ, սաղ էղնին առծատից, մինակ թակավորինը էղնի օսկուց, օր ձեռները առնին, չղմշին վեր դնեն:

Մեկ էլ տեսավ աման, գտալ սաղ հազր են: Նորից մեկել պտտեց, ըսավ.—Հարուր հոկի ծառաներ, օր քելելուց ոտները գետին չհասնի, էնկան օր չապուկ ժաժ գան:

Մեկ էլ տեսան, օր հարուր հոկի էման ախճիկ էկան, օր կակավի պես կվկվալեն տարան սեղանները բաժեցին: Ամանները լցին, տարան ամենի տվին բավականին, բազում ժողովուռդ էր: Չքաշեց կես սհատ՝ բաժնին պռծան: Ժողովուրտն օր կերան պռծան, ամեն իրան թասն ու գտալը առել է ձեռը չի ուզմ վեր դնե: Էկավ Դալի-Այմադը ըսավ.—Ամեկիդ աման, գդալը իրան է հասնմ, վերծրեկ:

Ընդոնկ, օր ամեն իրան աման գդալ վերուց, թակավորն ամճնմ էր, օր վերծներ, հմը չէր էլ ղմշմ վեր դներ: Այմադն ըսավ.—Բաբա, սաբըր էրա:

Ու ինկը գնաց կնկան ըսավ.—Հորս հմար էլի մե բան՝մ ավելծրա թող շատ էղնի:

—Լավ, ըսավ կնիկը:

Դրավ էրկանկը, պդտեց, ըսավ.—Էն տեսակ մե ղայլոն՝մ հազրեկ, օր նա՛ էղել է, նա՛ էլ կա: Սաղ էղնի օսկուց, անկին քարերից:

Մեկ էլ տեսավ ղայլոնը ընդեղ դրած է:

—Ա՛ն,—ըսավ,—տար տուր:

Տարավ Դալի-Այմադը: Էդ ղայլոնը՝ օսկե թասի ու օսկե գդալի հետ տվավ հորը, ըսավ.—Ա՛ռ բաբա, ըստոնկ քու փեշկեշներն են:

Ժողովուռտն ու ղոշունը գնածել էին: Մնածել էին հերն ու մերը, ախպրտիկը, հառսները: Ընդոնցն էլ էր տվե փեշկեշներ: Հմը էլի ախպրտանծ աշկը բար չտվավ, օր Դալի-Այմադը էդման լավ փառկի է տիրածե, ըսին.—Ախպեր ջան, շնորհակալ ենկ պադվիծդ, դե բեր նշանածիդ էլ տեսնինկ, էրտանկ:

Այմադն էր, գնաց կնգան ըսավ.—Քեզի ուզմ են տեսնին:

Կնիկն ըսավ.—Հարկավոր չէ ընդոնց տեսնելը, ընդոնցեն քեզի վնաս գուկա:

Այմադն ըսավ.—Բան չի էղնի, դու արի:

Մառտն օր շատ դեմ ընկավ, կնիկն էլավ լաղաբը հակավ: Գնաց նայիսա ֆռաց, էկավ: Աղպրտիկն ըսին.—Էս ի՞նչ է, մենկ հեչ լաբզդրակ չենկ տեսե՞: Մենկ ուզմ ենկ իրան տեսնինկ:

Դալի-Այմադն էր, էկավ էնկան յալվար-յախար էղավ, աղաճանկ էրավ, օր չուրի կնկան կամկի բերավ: Կնիգն ըսավ.—Դալի Այմադ, գուկամ, հմը շատ գփոշմնիս:

Չէ, հանեց լաղաբը, հակավ խաս ու ղումաշ շորերը, տղի ձեռնից բռնեց, գնացին: Գլոխ իջծրավ, կեսարի ձեռը պակեց: Եդ դառավ վըռազ մտավ նես: Ընդոնց բերանները բաց մնաց, թե էսի աջաբ էրկնքից է՞ իջե, թե ծովիծն է ելե: Ախպրդիկը տեսան, օր էդկան լավն է ու էսկան հունարն էլ ըդուրն է ըսին. «Ի՞նչ էնենկ, ի՞նչ չենենկ, յավաշ, էսման խրատ տանկ Դալի Այմադին»:

Ըսին.—Դալի Այմա՛դ, լաղաբն օր գիանե գդառնա իսան, դու լաղաբը գողծի, քցե կրակը վառե, օր էլ չիակնի:

Ըսին, խրատ տվին, ելան գնածին:

Մնաց մե օր՚մ, Դալի Այմադը սամտ քցեց, շորերը գողծավ՝ տարավ կրակը քցելու, կնիկը շատ յալվար-յախար, աղաճանկ, ճար չեղավ, չտվավ: Տարավ վառեց: Կնիկն ըսավ.—Դալի Այմա՛դ, Սև ծովի, Սիվտակ ծովի արանկը մեզի տեսնիս:

Էդ ըսելուն աներևույտածան: Մեկ էլ Դալի-Այմադը տեսավ, օր էլի են իրան հին, պզդի հոլիկների մեջն է: Զարգեց չոկերին, զարգեց գլխուն. «Վա՛յ, էս ի՞նչ էրեծի, տունս քանդեծի, հողերը գլխուս բերեծի, կործրեցի տուն, գերդաստանս: Ուրտե՞ղ ման գամ, օր գտնիմ իմ կնգաս, իմ տղեկիս, վա՛յ, ձեր տունը քանդվի, ինչ իմ տունս քանդեծիկ: Գեռտաստանս ձեռնես հանեցիկ»:

Էսման ըսելով ու լալով Դալի-Այմադը ման է գալմ տան մեջը:

Մեկ էլ մտածեց, ըսավ. «Էրտամ կրակ տամ ախպըրտանծս տունուտեղը վառեմ, օր ընձի էս օրը չքցեին»: Դառավ ըսավ. «Չէ՛, բալկիմ ախպրտիկս դուզ էին»: Վեռճապես, շատ մտածելուց էրամիշ էղավ Դալի-Այմադն ու ըսկսեց խաղ կապել ու ըսել իրան վրեն ու ախպրտանծ շկին:

Խելռի տեղ դրիկ, սուրգուն էրեծիկ,
Ասված ղաբուլ չէնե ձեր էրածները,
Տուն ու տեղից, հնգերներից զրկեցիկ,
Ասված ղաբուլ չէնե ձեր էրածները:

Դուշմանի պես տնից հեռեծրեցիկ,
Չեկակ մե օր, հալս չհառծրեծիկ,
Վեռճն էլ էս փոռծանկը գլխիս բերեծիկ,
Ասված ղաբուլ չէնե ձեր էրածները:

Բերի տունս ես ձեզի պատիվ տալու,
Չիտեի թե էկել էիկ տունս քանդելու,
Չար խրատներ ունեիկ դուկ ընձի տալու,
Ասված ղաբուլ չէնե ձեր էրածները:

Դառնածրիկ կյանկս, հալս է յաման,
Գնաց գեռտաստանս, կորավ անգուման,
Աջաբ ախպեր էի՞կ, թե՞ ընձի դուշման,
Ասված ղաբուլ չէնե ձեր էրածները:

Խեղճ Դալի-Այմադն եմ, չունիմ օգնական,
Մնածել էմ մինակ, անտեր, անպաշտպան,
Գերտաստանիս տեղը ումի՞ց իմանամ,
Ասված ղաբուլ չէնե ձեր էրածները:

Դալի-Այմադը խաղը ըսավ պռծավ, թևը դրավ գլխու տակը, քնավ: Տեսավ, օր իրանց քոսկ ու Սարայի մեջն է: Կնիկը ջուխտ տղեն էլ քովը քաշեց, պզդի տղին պակեց: Ուզմ էր մենձ տղին էլ պակեր տեսավ՝ ախպրտինկը նես մտան: Ուզեծավ ախպրտանցը զարգեր: Տուրն օր վրա բերավ, զառտնավ: Տեսավ, օր էլի էն իրան հին, պզդի հոլկի մեջն է:

«Է՛,—ըսավ,—իմ կնիկն ընձի ըսավ, ես չլսեծի, ես մեղավոր եմ»:

Էլավ ընկավ ճամպա՝ դիպա Սև ծովի, Սիվտակ ծովի արանկն: Էրտմ էր, էրտմ, զօր ու գիշեր էրտըմ, չի կռնմ, օր ճամպա գտնի, էրտա: Հեչ չիդե թե ուր է էրտմ: Գնաց, գնաց, շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը ինկն էլ չիդեր: Վեռճապես, դուշ էլավ մե սարի՚մ: Տեսավ, օր էդ սարից ձեն է գալմ: Գնաց տեսավ, օր իրեկ հնգեր կռվմ են: Դալի-Այմադին օր տեսան, վազան առաջը, ըսին.—Էս ի՞նչ լավ եղավ, մեզի դատավոր էկավ:

—Ի՞նչ է հարկավոր ձեզի, ի՞նչ դատավոր եկ ուզմ:

Թե.—Բա մենկ իրեկ հնգեր ենկ: Իրար հետ աշխատել ենկ, առել ենկ էս խալին, էս քուլայը էս չիբուղը: Հիմի կռվմ ենկ, ուզմ ենք կիսենկ, յոլա չենկ էրտմ:

Ըսավ Դալի-Այմադը.—Ես ի՞նչ գիտեմ ըդոնց հունարն ի՞նչ է, օր ինչ բաժնեմ:

Ըսին.—Էս խալու հունարն էն է, օր նստիս վրեն, էս քուլայը դնես գլոխդ, քեզի մառտ չի տեսնի: Սռի քուլա է: Էս չիբուխն էլ առնիս ձեռդ, աշկերտ խպես, ուրտեղ ուզես՝ հոն գիջու խալին:

—Հա՛մ:

—Հա՛մ:

—Դե գնածեկ սարի եդևը. Ես փուշկ քցեմ, դուկ արեկ: Որը որիդ ընկավ, թող ընկնի:

—Շատ լավ,—օժարածան, գնածին սարի եդևը:

Դալի-Այմադն էր, քուլայը դրեց գլոխը, չիբուխը առավ ձեռը, նստավ խալու վրեն: Ասավ.—Խալի՛, ընձի իջուս Սև ծովի, Սիվտակ ծովի արանկը:

Մեկ էլ աշկերը բացեց, տեսավ՝ Սև ծովի, Սիվտակ ծովի արանկն է: Ընդոնկ մնան ըդեղ, մենկ խաբար տանկ իրեկ հնգերներից: Իրեկ ընկերները էկան տեսան՝ խալի-բան չկա, մառտն էլ չկա: Թողին գնածին՝ փոռ-փոշման:

Դալի-Այմադն էր, աշկերը քցեց դեսուդեն, տեսավ մե հոլիկ'մ կա ասավ.—Կա, չկա մերոնկ հոս էն, հլը աշեմ տեսնիմ:

Գնաց փանջարի տկեն անծավ: Մենձ տղեն ասավ.—Անա, հերս:

Մերը լածավ ասավ.—Էրեխեն հորը կարոտծել է, խայալով է տեսնմ: Աշկին էրևմ է:

Հեր մեկ էլ եդ դառավ, պզդի տղեն, տեսավ ասավ.—Անա, հերս:

—Ա՜խ,—ասավ,—բալեկներ ջան, հերդ ուրդեղ է, օր տեսնիկ: Պռծավ, էլ հեր չեկ տեսնի:

Անցավ մեկել փանջարի տկով, կնիգը տեսավ: Ասավ.—Վա՜յ, Դալի-Այմադ դու ըստեղ ինչղ ընգար: Գնա՛, գնա՛, թեզ գնա՛: Էսօր մեր վեռճի օրն է: Հիմի գուկան մեզ գքցեն ծովը: Գնա՛, օր գնա՛:

—Ո՞ւր էրտամ,—ասավ Դալի-Այմադը,—ես էկել եմ ձեզի տանիմ, ո՞ւր էրտամ:

—Ախր ո՞ման տանիս, մեր չորս դին ջուր է:

Այմադն ասավ.—Դուս արեկ, ես գիտեմ որման գտանիմ:

Ասավ, դուս բերավ, նստծրավ խալու վրեն ասավ.—Աշկերդ խպեկ:

Աշկերը խպեցին: Այմադն չիբուղով զարգեց խալուն ասավ.—Խալի, մեզի մեր տունը իջծնես:

Մեկ էլ աշկերը բածին, տեսան, օր իրանց տունն էն: Բերին նորից էլի էրկնկները դրին, պտտին, նորից էլի էն քոսկ ու Սարայն հազրվավ: Էլի էն փառկին տիրածան:

Ախպերտիկն էլ լսեծին, օր հիմի դհա լավ են ապրմ, էլ ավելի նախանձվան:

Ասմ եմ, օր դուկ նախանձ մի՛ էղեկ: Էղեկ բարի, ինչխոր ընդոնկ հասան իրանց մուրազին, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին:

27(27). ԽԸՐԱՏԸՆ ՓԱՐՈՎ ԲԸԴԻ ԷՂՆԵՐ

Խընամի ջան, հեքյաթ յ'օլլի բան մի ասիմ, էրթամ: Էէէֆ...Ասավ՝

Ժամանակն էն ժամանակն էր,
Խալը (խարաբ) ժամանակն էր,
Ուղտը թալանչի էր,
Աքլորը վարսավիր էր,
Փիսիկը լարախաղաց էր,
Մուկը ճանապարհ կտրող էր:
Կա՛ր, չկա՛ր...[72]:

Խընամասի ասի՛մ...

Կեղնի՛, չեղնի, ընձե բեթար մե խեղճ ու կըրակ, չփլախ մարդ մի կեղնի, իմ պառվու պես լե մե բըլընգազ պառավ մի կունենա: Սա՛ղ կյանքի մեջ դատի՛ն, դատին, բան մի չըն կըռնա յետ քըցի: Էդոնց ունեցած-չունեցած մե տղե'մ է ու յիրեք օսկի:

Ժամանակ գիգա, մարդ ու կընիկ մեռնին, ուրանց տըղի համար էդ յիրեք օսկին թորկին, մեկ լե բըլքոս տուն մի:

Գիգան գեղով, տըղին կ'օգնին, հորն ու մորն կերպ մի թաղին, կըսին.—Դու ողջ էղնիս,—ու ամեն մեկն ուր բանին կէրթան:

Տըղեն նըստի մըտածե, կիտա-կառնի, կըսե.—Յէ, ինչ էնիմ, ինչո՞վ բըդի ապրիմ, մալ, օչխար չըկա՛, օր ծախի՛մ, ամբար ցորեն ու ալուր չըկա՛, տուն լե վըրեն կը փըլվի:

Գելնա, չորս բոլոր կիշե, ջուլ ու փալասներու միջեն իրեք օսկի գըտնա: Կըսե. «Հըյդը, իմ բախտն է, բըդի փորձիմ: Էրթամ յերկըրե յերկիր ման գա՛մ, բըլկեմսի բախտս ի բացվի»:

Գելնա գիշերով ճամփա գընգնա: Կէրթա, կէրթա, ինչքա՛ն կէրթա՛, աստված գինա՛, լուսն օր բացվի, լուսըն բացվի ձեր վըրա, գ'ասնի մե մե՜ծ քաղաքի մի: Սա՛ղ գիշեր ճամփա ի էկի, անոթի, փորն վեց-վեց կէնե: Գընգնա փողոցից փողոց ման գիգա, տեխ մի գըտնա, բըրդուճ մի

---

72 Բանասացը հեքիաթի չափածո սկսվածքը մասամբ թուրքերեն է ասում.

Զամա՛ն, զամա՛ն ըտի (իտտի),
Խա՛լպ ու զամա՛ն ըտտի,
Դէվա թալան ըտի,
Խորոզ բառբառ իտտի,
Փիսիկ փայլէվան իտտի,
Սիչան յ'օլ քյասան իտտի

(ծանոթ. կազմողների):

հաց ուտե, հուր զարկըվի՝ խանութ չըկա: Գիգա քաղքից դուս յելնա, մեկ լե տեսնա՝ ահան, մի մե՛ծ զերուզամբի շենք մի, կըշեռներ, մետրեր դրուկ, ճերմակ խալաթներով գործակատարներ կայնուկ: Կիշե չորս բոլոր, ապրանք չըկա, մըտքի մեջ կըսե. «Հյդը, քյոփօղլիկ հորի ին կայնի, խեռալ ին, ինչ, ինչ»:

Մոտենա գործակատարին, կըսե.—Ախպեր ջան, ամոթ չեղնի հարցուցեցլըն, էս ինչ պատմություն է, բոլորս ի կիշիմ, բան-ման չըկա, էդ ինչ է ծախիք:

Գործակատար քըթի տակ ուրին-ուրին քընծխըրտա, կըսե.—Տըղա՛, կերևա դու խամ իս: Մենք ապրանք չընք ծախի, խելք է կը ծախինք, խե՛լք...

—Իմա՛լ թե խելք, խելք լե ծախի՞ն:

Կըսե.—Իդմա է, առնող կառնի, չառնող չ'առնի:

Տըղեն գլուխն քերե, մըտածե. «Յէ՛, իմա՛լ էնիմ... սատանեն կըսե՝ օսկի մի տուր, խելք առ»:

Գործակատարին կըսե.—Ջայլամ ու գոռ, առ հյդը օսկին, ընձիկ խելք մի տուր:

Գործակատար օսկին կառնե, կըսե.—Տըղա, կերևա՝ դու ճամփա կէրթաս, ճամփին գետ օր տեսնաս, ջը բոբլըկնաս հնցնա՛ս, կէրթաս հասնիս կարմընջին, նոր գընցնաս: Էմալ օր, փորձուկ թանըն կի, անփորձել մածուն մը՛ ուտի:

Տըղեն ըսեց.—Օսկիս ի ետ տուր, ես գինամ խելք գըլխուն խելք է խըրատ կիտաս, էդ ինչ օր ըսիր՝ հմն օր մըր մեծերուց գիմանանք:

Գործակատար տըղի վըրա հեռոստաց, ըսավ.—Դու չըս գինա՞մ, օր ծախուկ ապրանք ետ չընք վերցընի:

Տըղեն պուպուճակ քերեց, դուս էկավ, կայնավ խանութի դուռն, ուրին-ուրին միտք էրեց, ըսավ. «Ինչքան չեղնի, իդը մարդիկ ընձնե գրագետ ին, աշխար տեսուկ, ընձնե շատ բան գ'ասկընան, յէ, ինչ էնիմ, վայթե իմ բախտ լե էդոնց ձեռն է, չտանի՞մ օսկի՞'մ լե իդամ, տեսնամ՝ էս անգամընն ինչ կըսին»:

Տըղեն կէրթա նես, կըսե.—Ախպեր ջան, օր էդմա է, առ հյդը օսկին լե, օսկու մի խելք տուր:

Գործակատար կառնի, կըսե.—Տըղա՛, հուր տունն օր մըտնաս, ինչ օր աչքովդ ի տեսնաս, ինչ կէնի՞ն, ինչ չըն էնի, ձեն չ'նիս, չը խոսաս, քու գործ չէ:

Տըղեն կըսե.—հուրի՞շ...

Գործակատարն կըսե.—Փըրծավ, օսկու մի խելք իս հուզի, տըվեցի, ի՞նչ գուզիզ:

Տըղեն թե.—Էդ ինչ օր ըսիր հըմն օր մըր մեծեր կըսին՝ դամին մեկ խոսա, դըրամին՝ էրկու: Իմ փարեն ետ տու:

Գործակատար կըսե.—Տըղա ջան, խամ ի՞ս, ծախուկ ապրանքն ետ չըն վերու:

Տըղեն էլի պուպուճակն քերեց, դուրս էկավ դուքնից, կայնավ, ուրին-ուրին մըտածեց, միտք էրեց, տըվեց, առավ, ըսավ. «հուր օր բարակ է, թըղ էնտեղ լե կըտրե, կեցի հըյդը վերջին օսկին լե տամ, մե խելք'մ լե յավել առնիմ, ջանդըմուս տարան, թե անոթի մեռնիմ»:

Էլի՛ էկավ գործակատարի մոտըն, վերջին օսկին տըվեց, ըսավ.—Իմ վերջին օսկին է, խելք գըլխուն խելք մի տուր:

Գործակատար օսկին առավ, ըսավ.—Տըղա՛, օր կը նըշանվիս, էմալ աղջիկ մի առ, օր հորն ու մորն հըմն օր չը տեսնա: Էդքան մե բան մի:

Լուպ ու լըպուստ տըղեն դուս էկավ՝ գըլուխ կախ: Անոթի փորն վեց-վեց կէնե, ոտներ թախատ չըկա: Ըսավ. «Ի՞նչ էնիմ, հագս ի շոր լե չըկա, տանիմ ծախիմ, բըդուճ մի հաց առնիմ»:

Գործակատար տեսավ, օր տըղեն կայնե միտք կէնե, մեղք տըվեց, նես կանչեց տըղին, համոզեց, ըսավ.—Տըղա, ես գինամ՝ ինչ է մըտածիս, արխեյին գընա, որն օր խելքն փարով կառնի, ջանին դարդ կեղնի, խորուրդըն կը կատարե, էն խելքն օր առանց փարի է, յանգըջի յետևն կը քըցին, փոշմընին, ուշ կեղնի:

Տըղեն դուս գիգա քաղքից, ճամփա գընգնա, կէրթա: Կէրթա, մութեն վըրա կիտա, գ'ասնի մե ամայի դաշտ մի, դաշտի միջով մե հանդարդ, մարմանդ գետ մի, գետի էն կողմ, գեղ մի կա:

Մոտենա գետին, կըսե. «Հըյդը ի՞նչ ջուր է՞, օր ես չընցնամ, իդմա՞ ջըրեր իմ անցի՞... »:

Գ'անե ոտներն, օր հընցնա, մեկ լե գ'իշե, օր օսկի՞'մ է տըվի, խելք է առի, կըսե. «Կեցի փորձիմ, ճամփեն շարունակիմ»: Ոտներ գ'ագնի, օր էրթա, մեկ լե ի՞նչ տեսնի: Տեսնի, օր ահան, գետի մեկել խըրախըն մե ձիավոր մի էկավ, մտավ ջուրն: Ջըրի մեջտեխն չըր հասի, մեկ լե, ձին սըկավ, գըլուխ վեր-վեր գ'անե, խըրխընջա... քըչումի առաջ էկավ, ձիավորն յիրար խառվավ, ձիուց ընգավ ու էն հընգնելն էղավ...

Ձին կերպ մի լողգընալով գետը, ազատվավ, էս խըրախն յելավ: Տըղեն տեսավ, օր ձիու վըրա մե մեծ խուրջին՝մ է բարձուկ: Բացեց իշեց, օր ինչ, խուրջինի մե թայըն օսկի է լըցուկ, մեկել թայըն՝ արծաթ: Կայնավ իշեց, իշեց, օր ձիավորն դուրս գա, էլ հուր... ձիավոր է մացի: Ըսեց. «Հըյդը իմ խըսմաթն է, օղորմի խելք սովըրցուցողի հոր հոգուն, օսկի մի տըվի, խուրջինով օսկի գըտա»:

Խընդրըլման, հեծավ ձին ու ճամփա հընգավ, քչու մի գընաց, տեսավ, օր հանդե կամուրջ, կարմունջըն հընցավ... մութըն լավ վըրա էր կոխի: Ըսավ. «Գեղի խըրախի դուռըն ծեծիմ, գիշերն խոնախ էղնիմ»:

Ձին չորս ոտ ուներ, քառսուն լե փոխ առավ, յորղա գընաց: Գնաց հասավ գեղին, կայնավ մե բանձըր ապարանքի մի դեմըն: Ապարանքի դուռըն զանգեց, ծառաներ էկան բացին, մամենտալնի տըղին ու ձիուն նես տարան, մեկ լե յոթ հըսկա՝ մեկ-մեկից աժդահա, էկան փաթըռնեցին տըղի բոլորըն, ըսին.—Հուզե, ուզածըդ ի տանք, գըլխուտ ու յարևուտ մեռնինք:

Տըղեն ըսեց.—Օտարական մարդ իմ, գուզիմ գիշեր խոնախ ընդունիք:

Մեծ ախպեր ըսավ.—Մեր գըլխուն ու յարևուն, մըր ախպերն իս, մըր աչքի վըրա տեխ ունիս:

Տարան նես, իմալ օր մարդկության պահանջ էր, հարկ ու հըրավեր էրին, կերան, խըմեցին, մեկ լե դուռ բացվավ, մե պառավ կընիկ մի նես էկավ, ձեռներ հոռու յետև կապուկ: Պառավըն առանց բարև տալու էկավ նըստավ սեխնի վերի գըլուխըն: Տըղեկներ թաթարի յիրար խառվան, յելան գըլուխ տըվին, կայնան գըլխու վերևըն, ուտելիքներ թափին յառաջըն:

Պառավըն բերան կոխեց ճաշի ամնի մեջըն, հեռի լըսողաց, ըսկըսեց շան պես ուտելն: Մե ամանն պըրծավ, մեկելն դեմ էրին: Իդմա, անխոս, անձեն կերավ, կերավ: Տըղեկներ բերան սըրբեցին, լալա, ծառա դառուկ, կըսպասին պառվու յելնելուն:

Տըղեն մըտածեց, ըսավ. «Աստված,—ըսավ,—հըյդ ինչ պատմություն է կուտինք, ինչ է էդ պառվու մեղքն, օր ձեռներ հոռու յետևն է կապած, թե գերի է, տըղեկներ հորի իդմա ծառայություն կիտան, լալա ու ծառա լե դառած»:

Բերան բացեց, օր հարցու, մամենտալնի միտքն հընկավ, օր մե օսկի՝մ է տըվի, խելք է առի: Ուրին զըսպեց: Կերան, խմեցին, տըղիս լե մե լավ օթախ մի տարան, թագավորական տեխ մի պառկացին, քընան:

Սաբախտան լուս բացվավ, լուսըն բացվի ձըր վըրա, յելան հագան, էլի սեխնի սուրջըն քեֆ, ուրախություն, էլի պառավըն էկավ, ձեռներ հոռու յետև կապուկ, էլի տըղեկներ թանգիլմանգիլ ծառայություն կէնին:

Տըղին կերուցին, խըմուցին, ձին թամբեցին, խուրջին սաղ-սալամատ ձիու վըրա դըրին, յոթ ախպըրտանցով էկան տըղին ճամփա է գըցին: Ապարանքից քըչու մի հեռեցան, մեծ ախպեր կայնավ ըսեց.—Տըղա՛ քըզի բըդի ըսպանինք:

Տըղեն թե.—Ձըր գլխուն ու յարևուն մեռնիմ, ես ձըզի ինչ իմ էրի, օր կըսպանիքյ, թե օսկի ու արծաթ է պետք, հանդե խուրջին, թըղ ձըզիկ էղնի:—Տըղեն գուն տըվեց, գուն առավ:

Մեկել ախպեր ըսավ.—Մը վախենա, մըր մենձ ախպերն հանաք է կէնե, փութ մի օսկի լե, մենք ինք բերի՝ քըզի տանք: Մենակ բան մի բըդի հարցունք, ճիշտն ըսիս:

Ըսեց.—Ինչ է:

Ըսին.—Դու տեսա՞ր էն պառվուն, օր մըր հետ հացի նըստավ:

Ըսեց,—Տեսա:

Մեծ ախպեր թե.—Դու հորի՞ չ՚արցուցիր՝ պառվու ձեռներ ո՞րն է կապե՞, հընչի՞ ին կապա՞ծ, ինչ էր էդ պառվու մեղք:

Տըղեն դառավ ըսավ.—Գըլխուդ ու յարևուդ մեռնիմ, հորի՞, իմ ինչ չոռի մեջն էր կըպի, օր ձըր տան նիստուկացին խառնվենք: Դուք՝ ձըր տուն, ձեռներ եք կապուկ, աչքեր, թե քի՞թ, իմ ինչ գործն էր: Ընձիկ մարդկություն ինչ էր պահանջեր, շնորակալություն մի գ՚ասներ, ըսինք՝ դուս գինք:

—Հալալ է քու կերած կաթըն,—ըսեց մեկել ախպերն:—Դու մըզի էմալ լավություն՚մ իս էրի՞, օր աշխար ձեն տըվեց: Էդ օր տեսա՞ր... էդի մըր կախարդ մերն էր՝ խոնախ ուտող էր: Մըզի հըրամայեր, օր ձեռներ ուրին կապինք հոռու յետևն, որն օր հարցուցեր, թե էդ պառվու մեղքն ինչ է, մամենտալնի տաներ ուրին օթախն ու սաղ թիքեն յանգաջն կը թողներ, բըռներ սախսախ կուտեր, օսկըռներ պատվալըն լըցներ: Ըդ

ինչ խաչ էր քու գըլխուն, օր չը հարցուցիր: Դու քըզ լե, մըզի լե փըրկեցիր: Էդոր կախարդություն փլզավ: Դու օր բան չ'արցուցիր, ընի ուր հեռսեն տըրաքվավ, մեռավ: Մենք մըր ջադու մորեն փըրծանք, մորից մեկ էղանք:

Իդմա տըղին պատվով պագեցին, խուրջին մի օսկի լե ուրանց կողմից ձիու վըրա դըրին, ըսին.—Դե հըկա գնա, հուր օր կէրթաս, աստված քըզի հետ էղնի, քարն էրթաս՝ կանաչ դառնա:

Տըղեն խընդըլման ձին հեծավ ու թըղ էրթա...

Շատ գընաց, քիչ գընաց, հասավ մե թագավորանիստ քաղաք մի: Քաղքին անծանոթ, ինչ էնե, ինչ՝ չէ, ըսավ. «Էրթամ քաղքի խըրաղընն, մե պառվու'մ տըղա էղնիմ, պառվու հետ ապրիմ, տեսնանք՝ ինչ կեղնի»:

Է, օսկին ու արծաթըն սախ էղնին, մութ տեխ լե լուս կիտա: Ըսե պատիվ ու հարգանք ունենաս:

Գընաց, մե բըլքոս տուն մի գտավ, պառվուն ըսեց.—Մայրիկ, ընձիկ տղա բըդի էնիս, յիրար հետ ապրինք:

Պառավ քըչու մի չեմուչում էրեց, տըղեն քանի'մ օսկի հանեց, տըվեց պառվուն: Պառավ խընդըլման յելավ, հաց, չայ բերեց, տըղին պատիվ էրեց, ըսավ.—Ես քըզի լե մեռնիմ, քու գալած ճամփեքուն լե, ես քըզի՝ մե՞ր, դու ընձի՝ տղա:

Քանի'մ օր հընցավ, տըղեն քաղքի լենք ու յերկենք զըվըռնեց, ըսեց, «Հոգուցա լավ տեխ չըկա»: Էկավ պառվուն.—Մայրիկ,—ըսավ,—գուզիմ թագավորի պալատի դեմըն մե պալատ մի գըցիմ, կըռնամ բանվոր ճարի:

Պառավ ջայելցի, թըռվըռա, ջանին՝ մունաթ, հորի՞ չը ճարե:

Քաղաք ինչքան օր բանվոր կար, տըղեն քոմեց, ըսեց.—Մե շաբաթ մի ձըզի վադա կիտամ, թագավորի պալատի դեմըն էմալ պալատ մի կառուցիք, օր շուքն հընգնա թագավորի պալատի վըրա:

Օսկին գյուռ, ինչքան հուզիս...

Շաբաթ մի չընցավ, թագավոր յելավ ինչ տեսնի, հանդե հուր պալատի դեմն պալատ'մ է քըցած, քաղքի ժողովուրդ էկած է թամաշի...

Պառավ հագի՞, կապի՞, ուր պոչու հետ է խաղա: Խընամախոս գիգան պառվու մոտըն, յամեն մեկ ինք գուզե հաջողցու՝ ուր աղջիկ պառվու տըղին իդա:

Պառավ կըսե.—Բալա ջան, արի՞, քըզի նշանիմ էս ինչ հարուստ մարդու աղջկա հետ, հուրնիկ-հըրեղեն աղջիկ է, չուտիս, չը խըմիս, կայնիս ու իշիս...

Մեկ կէրթա, մեկել գիգա: Թագավորի պալատի մենձամենձներ լե ուրանց աղջիկ գ'առաջարկին տըղին: Ինչ էնյե պառավ հըմն օր գ'ամոզե տըղին՝ նըշանվի, հա՛ նըշանվի:

—Չէ՞ օր չէ՞,—կըսե տըղեն,—ես ուրիշ տեխե աղջիկ բերեմ:

Շատ օր կէրթան-գիգան, կը զոռին, կըսե. «Խյամտուս ու տարուն, կեցի փորձիմ, տեսնամ՝ էն խելք, օր ընձիկ խըրատ է տված, սուտ է՞, թե՞ դուզ: Համ լե աղջիկ՝ աղջիկ է, ինչ բըդի էղնի»:

Իդմա արխեյին գընգնա, կէրթա պառվուն կըսե.—Համաձայն իմ:

Նըշանվի քաղքի մե լա՛վ հարուստի մի աղջկա հետ, ջան կըսին, ջան լըսին, իդմա սիրով յիրար հետ կապրին: Կընիկըն էրկուհոգովցավ, մե լավ ղոչ տըղե մի բերեց, գործեր լավ պարյատկի, կուտին, խըմին, քեֆ քաշին:

Օր'մ լե սատանեն մըտավ մեջն, ուրին-ուրին ըսեց. «Ես օսկի'մ իմ տըվի, ընձիկ խելք է տըված, կեցի իմ կընգա հավատարմություն փորձիմ»:

Սաբախտան յելավ:

—Կընիկ,—ըսեց,—ես բըդի բազըրգյանության կէրթամ, ամիս'մ էրկու գուշանամ, քըզիկ լավ պայիս:

Վերուց ուրին ինչ օր պետքն էր, մնաս բարով էրեց, գընաց:

Գընաց քաղքից դուս ուր մորացու պառվու բըլքոզ տունն, ղըլըղն փոխեց, օր ուրին չը ճանչընան, իդմա քաղքի մեջ ման գիգա: Էկավ պառվուն համոզեց, տարավ ուր տունն, ինչ օր պետքն է՝ խըրատեց: Իդման անցավ տարի'մ էրկու...

Խաբար տանք կընկա՛ց: Կընիկն էրեխեն առավ, լացուկոծով գընաց ուր հերանց տունն:

—Ինչ բըդի էղնի իմ հալըն,—ըսեց:

Մերն թե.—Ինչ բըդի էղնի, քու մարդըն ըսպանվել է, արի քըզի նըշանինքյ, քու տան վըրա տընփեսա բերինք:

Բերին էդ կընկան կը նշանին, դավուլ-զուռնով հարսնիք կէնին:

Տղեն գիկա հայաթըն, ուրին էրեխին գողնա, տանի պառվու կուշտըն:

Քըչումի կանցնի, ուր ղըլըղ փոխե, իսկական շորեր գ'ագնի, ձին նըստուկ՝ կայնի ուր տան դուռըն:

Զոնքաջն տեսնա, իրար խառվի, ինչ էնե, օր իդը խայտառակություն չը բացվի... ձեռ ճար չըկա:

Տըղեն գելնա վերև, կըսե.—Հայ, հայ ու հայ, էդ դուք ինչ գինեք, թե ես հըսօր բըդի գենք, օր քեֆի սեղան իք բացի:

Խընամեստանան գ'ասկըցուն, գելնան կէրթան, հարսնիք կը փլզի...

Հըմկա նըստեր ին, դատ կէնին:

Տըղեն կըսե.—Լավ, նշանվեր իս՝ նըշանվի, ջանդըմուս ու տարան, իմ էրեխեն հուր է...

Կընիկ ձեն չ'անե:

Զոնկաջ վերու կըսե.—Դու օր գացիր բազըրգյանության, քու յետևից շաբաթ մի չըր անցի, էրեխեն բիրդան հիվընդցավ մեռավ:—Կըսե ու սուտ լացիկ կէնե:

Տըղեն կըսե.—Գ'ավատամ, լաց պետք չէ:

Կէրթա էրեխին բերե կայնըցու դեմերըն:

Կըսե.—Ճանչընամք... իմալ գետին չըք մըտնա՝ սուտ խոսաք: Էրեխին ես իմ գողցի տարի, դուք էկեր իք սատանի մայլեն քանդըրբազ խաղաք:

Բերին դատ կէնին, տըղի մերացու պառավըն կըսե.—Կընիկդ ի մեղք չունի, էնոր մը մեխտըրի: Մենձ մեղավորըն մերն է, բերեք մորըն դատենք:

Բերին զոնկըջին կը կապին սև ձիու պոչըն, ձին կը բրախին...

Տըղեն կըսե.—Օղորմի ընձիկ խելք-խըրատ տըվողի հարիկ-մարիկին, լուս կաթա ուրանց հոր ու մոր վըրեն:

Խրատ վերու, օր ոտդ ի քարին չը քիսնա, խըրատ լե փարով բըդի էղնի, օր տեխ հասնի: Էդմա է, մեծին չըլսողի ոտըն քարին գիգա:

28(28). ԷՐԱ ԼԱՎՈՒՏԵՆ ՔՑԵ ՁՈՒՐԸ, ԳՈՒԿԱ ԴԵՄԴ, ՉԻ ԿՈՐԻ

Մարկարեն շատ հարուստ էր: Մարգարեի հարստուտենը էլ չէր շայվմ: Մարկարեն, ինկը շատ խեր ու խեյրատով մառտ էր: Մարկարեն ամեն առավոտ էլնմ էր, լվածվմ էր: Երեսը խաճակնկում էր, իրան աղոտկը էնմ, պռծնմ էր, գալմ մե հաց'մ վերծնմ էր տնեն (տանը մոտիկ մե գետ'մ էր էրտմ), հացը քցմ էր էդ գետի ջուրը: Հացը էրտմ էր, ինկը դառնմ գալմ էր տուն: Ամեն օր, ամեն օր էդ էր մարկարեինը, օր բտի մե հաց'մ քցեր ջուրը: Էղավ, օր մարկարեն մենձծավ, ծերածավ, ինկը հասկծավ, օր գմեռնի: Կանճեց տղին ըսավ, օսյատ էրավ.—Ոռտի, ես ծերածել եմ, ահա գմեռնիմ, օսյատս էս էղնի քեզի, օր իշկան գելնիս առավոտ, գլվածվիս, քու աղոտկը կենես ու մե հաց'մ գքցես ջուրը: Հմը ետևեն չերտաս, ուր կերտա, թող էրտա: Դու լավուտեն էրա, քցե ջուրը, չի կորի, գուկա դեմդ:

Հերն էր, ըսավ, թամպա էրավ, հա խրատներ էր տալմ տղին՝ լավ կեղնիս, բարի կեղնիս:

Վերջապես, իրա վախտն էր, լրածել էր ումբրը, մեռավ: Տղեն բերավ հորը առկով-փառկով, եպիսկոպոսներով ու վառդապետներով, ժամով ու պատարակով թաղեց: Ամեն կարկը կատարեց, զատի օսյատն էլ կատարմ էր: Օրական մե հաց'մ քցմ էր ջուրը, ջուրը տանմ էր: Էդման, հա քցեց, հա քցեց: Անցավ էդման մե տարի'մ: Մե օր'մ էլ տարավ հացը քցեց ու ըսավ. «Ձանմ, էս ինչ բան է, օրական հաց'մ ընչի՞ քցեմ ջուրը: Գոյնա մե ախկատի'մ տամ, էլի բան է: Ախր ընչի՞ քցեմ ջուրը,—մտածեց տղեն ու ըսավ.—Հլը, յավաշ, ես էս հացի ետևեն բտի էրտամ, տեսնիմ՝ ուր է էրտմ:

Ըսավ ու ընկավ հացի ետևեն, գնաց: Գնաց, գնաց տեսավ մե ձուկ'մ ջրեն ելավ ու էդ հացը կուլ տվավ: «Ահա,—ըսավ տղեն,—ըսել գուզե հերս ըստուր հմար էր հաց քցմ»:

Ձուկն, օր հացը կերավ պռծավ, դառավ լիզու էլավ, մառտու պես խոսած, ըսավ.—Ա՛յ տղա, ձեր լավուտենն իմ վրես շատ է, լուսահոկի հերդ էլ, ամեն օր հաց էր ղրկմ ընձի: Ես ուտմ, ապրմ էի ու իրա հմար միշտ աղոտմ էի: Հիմ էլ դու ես ղրկմ իմ փայս, դու հիմի ըսա, ինչ էս ուզմ, ուզածդ տամ:

—Ինչ բտի ուզեմ,—ըսավ տղեն,—քու սաղուտենն եմ ուզմ:

Ըսավ ձուկը.—Իմ սաղուտենը քեզի օգուտ չի տա, քեզի օգտավետ բան ուզե: Մալ ու դոլվատ ես ուզմ, հարստուտեն, ջանսաղուտեն, թե օձի իմաստուտեն: Որն օր ուզմ ես, ըսա՝ տամ:

Տղեն մտածեց, ըսավ. «Մալ ու դոլվատ էն-

կան ունիմ, օր տեղ չկա: Ջանսաղուտեն ունիմ: Մնմ է, օր օձի իմաստուտեն ուզեմ»:

Ըսավ.—տուր ընձի օձի իմաստուտեն, օձի գիտունուտեն:

—Է՛,—ըսավ ձուկը,—օձի իմաստուտեն մի՛ ուզե, քեզի վնաս գբերե: Հերդ օր էղներ, օձի իմաստուտեն կուտայ: Հերդ համպերող, դիմանող մառտ էր: Դու օձի իմաստուտեն մի՛ ուզե, ուրիշ ինչ օր գուզես, ուզե՝ տամ:

—Չէ՛,-ըսավ տղեն,—հեչ բանի պակասուտեն չունիմ: Ընձի մե իմաստուտենն է պակաս:

—Լա՛վ,—ըսավ ձուկը,—տղա՛, կուտամ, հմը ամեն լըսածիդ ուշադրուտեն չդառուս:

Տղեն ըսավ.—Չեմ դառու:

Ձուկը հանեց վրայից մե փուշ՚մ տվավ, ըսավ.—Ա՛ռ, էսի թատխե ջուրն ու կուլ տուր:

Տղեն առավ փուշը, թատխեց ջուրը, կուլ տվավ: Շնորհակալ էղավ, էկավ:

Էկավ, էկավ, ճամպեն տեսավ ղուշ ու ղշորենկ խոսմ, ծլվլմ են, ինկը հասկնմ է: Ծառ ու ծաղիկ սվսվմ են, հասկնմ է: «Տո,—ըսավ,—էս ինչ լավ բան էղավ, ես ըստոնց ըսած-խոսածները քուլի, հասկնմ եմ»:

Խուլասա, էկավ տուն: Ըդման ուրախ-զվառտ ապրմ էր: Անծավ մե տարի՚մ: Դրկծի կատուն, օր՚մ էլ, էկավ իրանց տունը՝ իրանց կատվի հետ կռվավ: Ծեծեց, խեխտեց, գզեց, ըսավ.—Դու ընչի՞ ամեն օր լավ բաներ ես ուտմ, ընձի չես տալմ, ես անոտը օրս անցնմ եմ:

Իրանց կատուն ըսավ.—Ընձի մի՛ ծեծե, գիշերը մեր ձիանոցը գբլի, ձիանը գմնա տակը, գսատկին: Գտանին գթապեն, կաշիկը վեր կառնին, մենկ ամեն օր կերտանկ միս կուտենկ:

Տղեն հասկծավ ըսածները, մշակին ըսավ.—Թեզ ձյանը քաշեկ թաժա գոմը:

Մշկները ձիանը քաշեծին թաժա գոմը: Գիշերը գոմը բլավ: Առավոտ էլի կատուն էկավ կռվավ, կատվին ճանկռտեց, խեղտեց, ըսավ.—Բը ըսմ էիր՝ գոմը գբլի ձիանունց վրեն, մենկ ամեն օր միս կուտենկ, բա ո՞ւր ա, չբլավ: Ընճի՞ խապեցիր:

Իրանց կատուն ըսավ.—Չեմ խապեր, տերս ձիանները քաշել տվավ թաժա գոմը: Տիա, ձիանոնց գոմը բլել է: Էսօր բտի կովանոցը բլի: Կովերը գմնան տակը, գսատկին: Մենկ իրար հետ միս շատ կուտենկ, ընձի էլ մի ծեծե:

Տղեն ելավ գոմապաներին, նախրջոնծը ըսավ.—Թեզ էրեկ կովերը քաշեկ մեկել գոմը:

Նախրջիկը, գոմապայները կովերը տարան մեկել գոմը: Գիշերը գոմերը բլան, կովերն էլ պռծան:

Առավոտ էլի կատուն էկավ, կատվին գզեց: Ըսավ.—Բոլ չէ՞, ընձի խապես, բա ո՞ւր ա, կովերը չսատկան:

Ըսավ.—Տերս կովերն էլ տանել տվավ ուրիշ տեղ: Ընձի մի գզե, էս գիշեր օխճրնոծը բտի բլի, էնկան միս կուտենկ, օր:

Տղեն էլավ չոբններին ըսավ.—Թե՛զ, օխճարը քաշեկ աղլները:

Գիշերը օխճարնոծը բլավ: Էս անկամ չոբանները շատ զարմածան, ըսին.—Ա՛յ մառտ, մեր աղեն իմաստու՞ն է, ի՞նչ է: Ուրտի՞ց է գիտենմ, օր բտի գոմերը բլին, ձեռած մալ ու օխճար դուս է քաշմ:

Առավոտ էլի կատուն էկավ, կատվին գզեց, ըսավ.—Բոլ չէ՞ ընձի խապես, բա ո՞ւր ա՝ օխճրները չսատկան:

Կատուն ըսավ.—Տերս, օխճրներին էլ տարավ աղլները, պռծծրավ: Ընձի մի՛ գզե, էս քանի օրը տերս գմեռնի, մենկ էնկան հիրիսա կուտենկ իրար հետ, օր:

Էսի օր լսեց տղեն, խելկը բժժեց, լիզուն կպավ, ըսավ. «Հլը մալ ու օխճար հնարավոր էր, տարա ուրիշ տեղեր, պռծծրեծի: Հիմի ընձի ի՞նչ բտի էնեմ, ըդուր խո էլ ճար չկա, ես չեմ ազատվի մահից»:

Տղեն էր, ելավ, հացը գցեց ջուրը ու ետևից գնաց: Գնաց տեսավ ձուկը ելավ: Հացը կուլ տվավ, տղեն գալմ էր դեպի իրան: Կայնավ, չուրի տղեն էկավ: Բարև տվավ, բարև առավ:

—Հա՛, ի՞նչ կա, տղա,—ըսավ ձուկը:

Տղեն ըսավ.—Հալ ու հեքյատ, ըսման, ըսման:

—Հը՛,—ծիծաղած ձուկը, ըսավ,—ես չսի՞ իմաստուտեն մի ուզե, քեզի վնաս գբերե, դու չլսիր: Ես ըսի՝ գոյնե լսածիդ մի՛ հետևի, ինչ կեղնի՝ կեղնի: Էդ էլ չես էրե: Ես ի՞նչ էնեմ, ախր: Քու տան գլխուն փոռծանկ կար, բանով՚մ բտի անցներ: Դու, օր թողեյիր ձիանոցը, կովանոցը, օխճրնոցը օր բլեր, մեկն ու մեկը կերտար, դու կպռծնեիր: Ընդոնկ օր պռծծրել ես, հիմի փոռծանկն էկել է, կայնել է քու գլխուն, քեզի ճար չկա: Քու ճարն էն կեղներ, օր փոռծանկը, ընդոնծով անծներ: Հիմի գնա դու քու ձեռով քու պատարակդ էրա, հոգիտ լուսավորե:

Տղեն դառավ էկավ: Իրան ձեռով պատարակ էրավ, խեր ու խեյրատն էրավ, կյանկն ու արևը տվավ ձեզի, գնաց իրան ճամպեն: Աստված լուսավորե ձեր հորն ու մոր հոգին էլ, էն մառտու հոկին էլ:

29(29). ՄԵՌԵԼ ՇՈՒՌ ՏՎՈՂ ՄԱՐԴԸ

Մե քյասիբ մարթըմ մե հատ էրեխա է ունենում. քյասիբութան համար քավոր էղնող չի էղնում: Կընիկ կըսե.—Մա՛րթ, գնա մե քավորըմ գըտի, թըխ գա, էրեխեն կնքինք:

Մարթը կելնի ու կէրթա: Կելնի կէրթա, ճամփին մե մարթըմ ըռաստ կիգա: Կըսե—Ախպեր ջան, էդ դո՞ր կէրթաս:

Կըսե.—Քյասիբ եմ, քավոր էղնող չկա, կէրթամ քավոր ճարելու:

Էդ մարթը հրեշտակ կեղնի: Կըսե.—Ես քեզի քավոր կեղնիմ:

Կըսե.—Լավ:

Ու կիգան տուն: Էրեխեն կը կընքին: Էտ վախտ տուն հաց չ'եղնի, օր քավոր ուտե: Քավոր լե կը տեսնի օր օղորթ քյասիբ է, կըսե.—Սաներ, մոխիր բեր, ես քըզի մե դեղ շինիմ, օր դու հարուստնաս: Եփ օր կէրթաս հիվընդի վրա, էդ դեղեն կուտաս: Թե օր ես գլխու վերևն էղա՛մ, զըթի կը թողնիս կէրթաս, թե օր օտներու տակ կայնուկ էղա, էդ քու փոշին կը լնաս ջրի մեջ, կիտաս հիվանդ կը խմե, կը լավնա: Հիվընդի տեր քըզի շատ փող կիտա ու դու կհարուստնաս:

Էդ վախտերը մե հարուստի'մ տղեն մեռնելու հիվանդ կեղնի: Քյասիբ կէրթա օր լավցու: Կը տեսնա, օր քավորն օտներու տակն է կայնե: Դեղ կիտա, կը լավցու, շա՛տ փող կառնե ու կէրթա: Քանի'մ հեղ էտմալ կեղնի:

Մեկել հեղ լե օր կէրթա, կը տեսնա օր քավորը գլխու վերև կեղնի կայնուկ: «Օհո՛,—կըսե,—էլ իտա տեղ չիմ կռնա լավցու: Իմա՛ լ էնիմ, իմա՛ լ չէնիմ»:

Կսե.—Հիվընդի տերե՛ր, ձեր մեջ ո՞ր է ուժով:

Էրկու մարթ կիգան, կը կայնին էտտեղ, կըսե.—Հիվընդին պըտըտցուցեք, օտներն էրեք գլխու դեն, գլուխ լե՝ օտներու դեն:

Ուժվեր հիվընդին շուռ տվին: Հրեշտակ զարմացավ քյասիբի խիթրութան վրա:

Հիվընդին լավցուց:

Մեկել օր քավոր գնաց սաներոջ տուն, ասեց.—Սանե՛ր, ես քըզի ըսեցի, օր ես հիվընդի գլխու վերև կեղնիմ, դու թող ու դառի, դու օրի՞ ընձի չը լսիր: Մըկա դու հազըր կեցի, օր հոգիդ պըտի առնիմ:

Սաներ կըսե—Թող մե հատ հարմեր ըսիմ, նոր հոգիս առ:

Կսե.—Ըսա:

Էրկու բառ հարմեր ըսելեն էտև՝ էլ չ'ըսե: Քավոր կըսե.—Ըսե՛:

Սաներ կըսե.—Իմ քեֆն է, եփ ուզենամ էն վախտ լե կըսիմ:

Քավոր շատ կը չարչըրվի, հարմերըն ըմմեն չ'ըսե:

Քավոր կը թողե ու կէրթա: Կընցնի մե քանի'մ տարի, սաներ գեղի մեչեն ճամփա կէրթա, կը տեսնա, օր պատի'մ տակ էրեխե'մ կիլա: Կըսե.—Գյադա, օրի՞ կիլաս:

Կըսե.—Դասըս ի, չըմ գինա, վաժապետ ծեծի, դուս էրի ուսումարանից:

Կըսե.—Դասըդ ի ի՞նչ է:

Կըսե.—Հարմերն է:

Կըսե.—Ես օր ըսիմ դու կը սորվի՞ս:

Կըսե.—Հա՛:

Սաներ կըսկըսե հարմեր ըսել, օր կը պըրծընի, գյադեն կեղնի քավորն ու կըսե.—Հոգիդ տո՛ւր, հարմեր թըմմավ:

Էն վախտն սաներ օժար կամով հոգին կիտա:

30(30). ԿՈՒԶԻԿՆ ՈՒ ՀՈՒՐԻ ՓԱՐԵՔԸ

Մե կուզիկ բիձե'մ կեղնի քաղքի մեջը: Օրըմ էնի գելնի կէրթա բաղնիք: Օրը իրգըվապայ կեղնի: Հարի հա՛ն-հո՛ւն, էլօղլին դուս գելնի, բիձեն կուճուրուկ կմնա մե քյոշե'մ: Բաղնըքի դռները կփակվին: Գիշերվա մե վախտը կեղնի, մեկ էլ գը տեսնի, օր քյոշեքեն յէլան հուրի-փարեքն ու գը խաղան, գը երգին.

Հինգշաբթի ջան, հինգշաբթի...
Մեր օրն էս է, հինգշաբթի:

Բիձեն վախենալուն գը խառնըվի հուրի-փարեքուն ու ինքն է գը երգե.

Հինգշաբթի ջան, հինգշաբթի...

Հուրի-փարեքը կըսին.—Էս օր կա, մեզնեն է:

Գը թափին ընոր վրեն, ջանը գը տրորին, կուզը գը դըզին:

Առավոտ տուն էրթըլուց էսի գը հանդիպի իրան հարևան կուզիկին ու կըսե, օր հալ-հեքյաթ, յըսման-յըսման...

Մեկել կուզիկն էլ կէրթա ու ղաստու գը մընա նեսը: Էլի հուրի-փարեքը գելնին գը երգին.

Հինգշաբթի ջան, հինգշաբթի...

Էդ օրը կիրակի կեղնի: Կուզիկը կըսե, «Վայթե էսոնք ջիդա են ընկած, էսօր կիրակի է... յավաշ, դուզն ըսիմ, բալքի իմ կուզն էվելի լավ դըզին»,—ու գը երգե.

Կիրակի ջան, կիրակի:

Էդ գիմանա, գը թափին էնդոր վրեն, էնքան գը ծեծին ու գը հեծնան, հարի լուս, օր ընդոր կուզը դիա գը բանցրընա, գլոխը գը հասնի գեդնին...

Հիմի յընչի՞ ըդման էղավ, յօր ընդոնց չալը չչալեց...[73]

31(31). ԱՐԱԲՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Էդ Յարութը մեր կողմերեն հարուստ մարդըմ կեղնի, ային-ղայինի տեր, էրեխա չի ունենա: Էս մարդը գը վերու օրըմ մե խուրջինըմ օսկի, էրկու ձի գը թամքե, կընգան գը վերցնե ու յոլ-ռևան կեղնի հայդա դիբա Երուսաղեմ՝ Քրիստոսի գերեզմընին բդի էրթա:

Կէրթա էս մարտը մե օրըմ, երկօր, յիրեք օր, գը հասնի մե դաշտի՛մ, իրակվա պայ կեղնի: Գիչնան ձիանուց, չադր գը զարգե դաշտի մեջը, օր ըդեղ մնան ու յառավոտը յիրանց ճանփեն էրթան: Գիշերվա մե վախտը կեղնի, մարդ ու կնիկ քնած կեղնին, բիրդան մե քամի՛մ գելնի, շփրտոցըմ գուքա՝ մե արաբստան ազրայել ձիավորըմ քամու պես կֆռռա ըդոր չադրի յառաջը, կզարկե էդ մարդու կնիկը իրան տեղեն, խուրջինով օսկին չադրի միջեն, ու թե դրել իս, արի տես, քամու պես էլ կէրթա... Էս մարդը հարի օյամիշ կեղնի, բանըմ էլ չի հասկընա, թե ինչ պատայավ իրան հետ: Դափ-դատարկ գը շըշմի, գը կայնի մնա: Էլ ինչ էնե՝ գը վերու մե ձին, ճամփա գընգնի, կըսե, թե. «Կընգաս ետ բերի՝ բերի, չբերի՝ էլ ես իմ գեղացոնց էրեսը չիմ յէլնի:

Կէրթա էս մարդը, ախպեր ջան, գը հասնի արաբներու գեղին՝ տներու շատը գետնփոր: Գեղի ղրաղը մե յէրդգե՛մ մուխ կելներ, դեմ էրավ յըդոր՝ գնաց: Տունը մտավ, գլխով բարև տվեց, տեսավ, օր թաք մե բիձե՛մ է նստած, տունն է բան չքա, լալա քյուշմիշ, յուրդի բոշ[74], ինչղ օր քամու սրպած:

Ձեռով-ոտով ըդոր հասկցըրավ մե կերպըմ, թե ըսման, ըսման՝ ձիավորը կնիկս ու օսկիս տարավ: Ձիավորի մասին օր բիձեն հասկըցավ, մազերը գլխու վրեն փըշամըզան, լացավ ու ձեռով տեսուց իրան բոլորը ու Յարութին հասկըցրավ, օր դառնա էրթա իրան տունը, էնդոր հետ զոռ է: Էդ մարդը անգաճ չերավ, իրան ձին տվեց էդ խեղճ բիձին, մինակ խնդրեց, օր էդ ձիավորի ճամփեն յիրան ցույց տա: Բիձեն, վախենալով, գողտուկ տեսցըրավ ընդոր էդ ուղղությունն ու էտ մարտն էլի ճամփա ընկավ:

Կէրթա, կէրթա, մե օրըմ, երկու, դեմ կեղնի մե մեշի՛մ, կը մտնի մեշեն, մե արալըղըմ կը բռնե ու կէրթա: Օր մեշեն խըլըսելու կեղնի, կը տեսնի, օր դուրան արտերու մեջը մե բերտըմ՝ մենծ բադանը բոլորը: Ինչ բադան, օծըն իրան պորտով, ղուշը իրան թևով չի կըրա անցնի էնի:

Էս մարդը հարի իրըկվա դեմ գը նըստի, կաշե էդ բադնին ու ախ կքաշե: Բիրդանց գը տեսնի, օր յիրանից մե քիչըմ հեռու առջըմ է նստուկ ու սըխ-սըխ իսնի պես կաշե էնուր, չի հեռենա... Օր մութը կկոխե, էս առջը գելնի ու գը հասկըցու էդ մարդուն, օր իրան էդևեն էրթա: Առջը կը շիտկվի մեշի մեջը մե չորուկ ծառի՛մ, գըրգըլամիշ կեղնի ու առաջ գընգնի... Գը հասնին մինչի էդ բերդի բադանի տակը, էդ գերանը գերկընցու հարի բադանի վիրի պռունգը, մարդուն յարդում կենե, կը բանցրցու վերև ու կը նստի բադնի տակը:

Մարդը մե կերպըմ գիչնի ցած, անգաճ կը դնե՝ ո՛չ ձեն, ո՛չ ծուկ: Կէրտա առաջ, գը տեսնի օր

[73] Չալը չչալեց – համակարծիք չեղավ (ծանոթ. բանահավաք Հ. Մովսիսյանի):

[74] Լալա քյուշմիշ, յուրդի բոշ – թուրքերեն ասացվածք, այստեղ նշանակում է դափ-դատարկ (ծանոթ, բանահավաք Հ. Մովսիսյանի):

մե նարդիվանը գելնի էդ բերտի մեջը... Գողեգող, թաթերու վրեն գելնի վերև, ինչ կը տեսնի՝ ղուտնի յորղան-դոշկի մեջը մե ազրայել արաբըմ է պառկած, աշկերը մեկ-մեկ գոմշի աշկ, ձեռ ու ոտը՝ մե ծառի՛մ քյուտուկ, ինչղ օր էղնի մե գազանը, քնել է ու գը խռկա, էս մարդու կնիգն էլ կողքը պառկած: Ինչ ընե, կը սառի գը մընա: Էդև ուժ ու կող կէնե, գը մոտկնա կընգան, փեշեն ուսուլըմ, անձեն կքաշե, գը զարթընցու:

Օր գը զարթնի, մարտը կըսե.—Կնիկ, էկա հասա, շուտ էրա էլի, փախնինք ըստից, բալքի ազատվինք:

Էդ հարամի ծիծ ծծածը կըսե.—Ինչղ օր էկար, ըմբես էլ գնա ճամփետ, ես քու հետ գալողը չիմ:

—Կնիկ,—կըսե,—արի կեղնի՝ էդ քարը գոգեթ թափե, արի էրթանք, ախր ինչղ կեղնիս:

Յալվար, յախար, մուքյուն՝ չի օգնե: Կնիկը կըսե.—Ահան, ձեն տվի, ավայի կտորդ անգաջդ կթողնե, թող ռադ էղի:

Մարտն էլ ինչ էնե էդ շառեն էդև: Փոռ-փոշման օր իջնալու կեղնի, բիրդան գը տեսնի, օր իրան դեմ մե արաբ ջայել հարսըմ էլավ, ու ձեռը բերնին դրավ, յանի մի վախենա, ձեն մի հանե: Դու մի ըսի, էս հարսը էդ գազանի առջի կնիկն է, հասկըցել է՝ ինչն-ինչոց է, գողտուց տեսած կեղնի էս մարդուն: Ձեռով էս հարսը կհասկըցու, թե արի իրար հետ փախնինք:

Ախպեր ջան, կվերու էս կնիկը, էդ գազանի օսկեկուց ու բռլիանդ քարերուց մե բանըմ, դուս կը քաշե էրկու արաբստան ձի, գը բանա էրկըթե դառաբեքը ու հայդա՛, ղուշը յէդևներեն չի հասնի: Քանի ձիանը կթռնին, փռփռի մեջը գը կորին, էդ հարսը գվռազցու, դու մի ըսի, էդ գազանի զարթնելու վախտը մոտիկ կեղնի՝ էնի գիտե: Լուսու դեմ կեղնի, մեկ էլ մե քամի՛մ գելնի ու դղրդոցըմ գընգնի ըդոնց յէդևեն: Էդի Արաբստան դևի քամին ու ձենը կեղնի, էսոնք հա ջայթ կենին ձիու վրեն, մեկ էլ արևելքեն արևը դուս գելնի: Հըմը էդ վախտ դևը իրան հերսից էնբես կը ճըչա, օր էրկինք-գետինք կդղրդա... Դու մի ըսի էդի էն դևի թլիսմըն է: Արևը մեր մտնելու՛մ պես ընդոր ուժը գուքա տեղը, արևն էլնելու՛մ պես՝ փոզմիշ կեղնի:

ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

32(32). ՏԻԳՐԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Տիգրանակերտ քաղաքում կապրիր Տիգրան վաճառականը: Յինքը ունիր մե հատըմ ախչիկ՝ Շուշանիկ անունով: Նույն քաղաքում կապրիր մե հատըմ համալչի, անունը՝ Համբո: Էս Համբոն էլ մե տղե՛մ ունիր, անունը՝ Արտաշես: Էս մարդը օրական կէրթար բազարը, բեռ կտեղափոխեր յիրան հըմար: Օրվա վաստըկածը՝ կեսը կուտար տղի ուսման վարձ, կեսն էլ հացի փող կէնեին յիրանց: Էս մարդը յամեն յառավոտ գէլնիր, իրգունը գուքար, Արտաշեսին կհարցուր.—Յէսօր ինչ ես ստացե:

Արտաշեսն է, հորը կխաբեր.—«Չորս»:

Արտաշեսը, հին շորերը հագը, բոբիկ, չբլախ, կէրթար դպրոց: Անցավ Տիգրան վաճառականի պարտեզի կողքով, տեսավ Տիգրան վաճառականի ախչըկան՝ Շուշանիկին, յառանց ձեն հանելու գնաց Շուշանիկի քովը նստավ: Ո՛չ բարև տվավ, ո՛չ էլ ասսու բարին: Շուշանիկի քովն էլ նստած էին քառասուն ջառիա: Արտաշեսը յառավոտնից հարի յիրգուն նստավ, ո՛չ ձեն հանեց, ո՛չ էլ ձուգ, անոթի-ծարավ յիրկունն էլավ գնաց տուն:

Հերը ըսավ.—Արտաշես ջան, յէսօր ինչ ես ստացե:

Ըսավ.—Յէսօր «հինգ» եմ ստացե, հայրիկ ջան, «հինգ»:

Խաբեց հորը: Այնինչ, դպրոց հեչ չէր գնացե: Քնան հեր ու տղա: Յառավոտ էլան էդ մարդիկ, լվացվան, տունն, ինչ որ կգտնվիր՝ կերան: Համալչի Համբոն գնաց յիրա գործին, Արտաշեսն էլ՝ իբր թե դպրոց, այնինչ սիրահարվել էր Շուշանիկի վրա: Էդ երկրորդ օրն էլ գնաց նստավ պարտեզը՝ Շուշանիկի կողքը: Էլի բոլորովին չխոսավ: Բայց Շուշանիկի սիրտը կտրաքվիր:

Յիրա ծառաներուն ըսավ,—Ախչըկներ, էս մարդու դարդ ու ցավն ինչ է: Անոթի-ծարավ էրկու օր է գուքա, նստի գը:

Շուշանիկն ախչիկներուն ըսավ.—Ես բդի յէգուց էրթամ քաղաքի պարտեզը, տեսնիմ՝ էս տղեն գուքա՞:

Յառավոտ Շուշանիկն էլավ գնաց քաղաքի պարտեզը: Արտաշեսը քնեն զարթավ, շիտակ գնաց քաղաքի պարտեզը, հաց էլ չկերավ: Գնաց տեսավ, որ Շուշանիկը նստած է: Յինքն էլ գնաց, գրքերը դրեց կողքը, հանգիստ նստավ: Շուշանիկի սիրտը տրաքիր կը, շատ ջղայնացավ:

—Այ տղա,—ըսավ,—քու դարդ ու ցավըդ ինչ է, էս յիրեք օր է՝ վառիր, թողիր:

Յըբը.—Քու սերըդ ընձի ըստեղ բերեց, Շուշանիկ ջան:

Շուշանիկը հարցուց, թե.—Դու ինչ ունիս տունը:

Յըբը.—Շուշանիկ ջան, դրուտունըս տես, հալըս հարցու: Ոչ մի բան չունիմ, մեննակ ես ու հերըս ենք: Հերըս էլ բազարը համալչուտուն կէնե:

—Դե օր էդման է,—ըսավ,—առ քեզի յիրեք հարուր հատ օսկի: Քսան օսկին կուտաս՝ կաստում կարել կուտաս, օր Տիգրան վաճառականն էլ հագած չէղնի: Հարուր օսկին էլ կուտաս, ապուռով էրկու սենյակ շինել կուտաս, իրան հարմարուտունները կառնիս, մեջը կդնես: Յիցցուն օսկին էլ կուտաս, քեզի վաճառական հերըմ կը ճարես, օր հերըս ընձի տա քեզի, թե չէ՝ չի տա:

Արտաշեսը գնաց տուն, գնաց օր՝ հերն էկել էր: Յըբը.—Արտաշես ջան, էսօր ինչ ստացար:

Յըբը.—Էսօր իսկականից հինգ ստացա, հայրիկ ջան:

Արտաշեսն հորն ըսավ.—Շենք պտի շինենք:

Հերը, յըբը.—Այ շան տղա, ինչո՞վ շինենք: Օրական մեզի հազիվ հացի փարա կճարեմ, ինչո՞վ պտի շինես:

Ըսավ.—Քու գործդ չէ, ուստեքը բեր:

Հերը զարմացավ, թե՝ տղես խելըռել է: Ձղայնացավ ու ըսավ.—Տասը հատ ուստա կբերեմ, տեսնիմ՝ ինչ պատասխան կուտաս:

Արտաշեսն ըսավ.—Ես կուտամ պատասխան ու շինեմ կը:

Հերն յառավոտ գնաց բազար: Տասը հատ ուստա բերավ: Ուստեքն Արտաշեսին տեսան, մոլըրան: Հագը ո՞չ բլուզ կար, ո՞չ շալվար:

Մեկը յըբը.—Դու ինչո՞վ պտի շենք շինես:

Յըբը.—Փողով, ինչո՞վ:

Յըբը.—Մենք շենքի գինը գլխեն կառնինք,—յըբը,—հարուր օսկի գուզենք:

—Ա՛ն,—ըսավ,—քսան օսկի է, ես կավելցընեմ. Ամմեն ինչը դուք պտի էնեք, պատրաստ տաք ընձի:

Էս վարպետները օսկին օր տեսան, զարմացան, թե՝ էսոր էդքան օսկի յուրդի՞ց: Ըսկսեցին իրանց գործը: Տասը օրվա սարքին, տվին յիրան:

Համբոն թե.—Արտաշես ջան, էս օսկին յուրդի՞ց քեզի:

Ըսավ.—Քու գործըդ չէ:

Գնաց արտելը, ըսավ.—Ընձի էման կաստում բտի կարեք, օր Տիգրան վաճառականն էլ հագած չէղնի:

Թարզին զարմացավ. «Էս քրքրածին էդքան փարեն յուրդի՞ց, օր կարել կուտա»:

Թարզին ըսավ.—Տասնհինգ օսկի կառնիմ:

Ըսավ.—Կուտամ:

Հանեց, տվեց:

Թարզին էման մե կաստումըմ կարեց, դրեց գետին՝ պզի պես կայնիր կը:

Արտաշեսը հագավ, գնաց բազար: Հայ վաճառական չգտավ, ջհուդ վաճառականըմ ճարեց:

Ըսավ.—Յէսօր ընձի հետ կըրա՞ս էղնի:

Ջհուդ վաճառականը ըսավ.—Յո՞ւր բտի էրթանք:

Ըսավ.—Տիգրան վաճառականը ախչիկը բտի յուզես ընձի:

Ըսավ,—Տասը օսկի կառնիմ:

—Կուտամ,—ըսավ:

Յիրկունը գնացին Տիգրան վաճառականի պալատը:

—Բարիրգուն:

—Ասսու բարին,—ըսավ:

Տիգրան վաճառականը հարցուց.—Ինչ կա, ինչի՞ համար ես էկե:

Ըսավ.—Ախչիկըդ յուզեմ բդի տղիս:

— Ես ջհուդի ախչիկ չեմ տա,—ըսավ:

Ըսավ.—Ես ջհուդ եմ, տղես հայ է:

Տիգրան վաճառականն ըսավ.—Ես քյարդիրգյա մարդու էլ ախչիկ չեմ տա:

Շուշանիկը նես մտավ, տեսավ Արտաշեսին, խելքը թռավ: Ըսավ.—Հայրիկ, դու չես տա՝ ես կառնիմ էս տղին:

Ըսավ ու դուս էկավ: Շուշանիկն արդեն յիրա բոխչեն կապել էր: Վերցրին ու Արտաշեսի հետ գնացին:

Տիգրան վաճառականը հերսեն բտի տրաքիր: Ըսավ.—Ես մե ախչիկ՚մ ունենամ, տամ համալչի Համբոյի տղի՞ն (արդեն յիմացել էր բանը ինչում է):

Էդ օրվանից Տիգրան վաճառականը թշնամացավ Արտաշեսի հետ: Բոլոր քաղաքի հարուստներուն ու արհեստավորներին կանչեց, օր հանկարծ, չէղնի-չիմանա՝ Արտաշեսին աշխատանք տան: Տիգրան վաճառականի նպատակն էն էր, օր սովամահ էղնիր, ախչիկը ստիպված էղնիր թողնիր գար հոր տուն: Արտաշեսը յուրտեղ գնաց՝ աշխատանք չտվին:

Ըսավ.—Տեսնիս կը՞, այ կնիկ, հորդ բռնած գործը: Արի մե պայմանըմ կապենք:

Կնիկն ըսավ.—Ինչ պայման, Արտաշես ջան:

Ըսավ.—Քելե նկարվինք հըլը:

Գնացին նույն չափի էրկու հատ նկար նկարվան: Արտաշեսը յիրա նկարի ետևը գրեց. «Յոթը տարով ես կէրթամ ղարիբլուխ»: Նույն բանն էլ Շուշանիկը յիրան նկարի ետևը գրեց. «Յոթը տարի ես կսպասեմ կը քեզի»: Շուշանիկը յիրան նկարը տվավ Արտաշեսին, Արտաշեսն էլ՝ Շուշանիկին: Էս մարդը հաց ու ջուր վերցրեց ու գնաց: Շատ գնաց, թե քիչ, աստված գիտեր, գնաց հանդիպավ էրկու ճամփու: Մեկը կէրթար Դվին, մեկը՝ Երուսաղեմ: Էս մարդը Երուսաղեմի ճամփեն բռնեց ու գնաց: Գնաց հասավ Երուսաղեմ: Էնտեղ մարդու բազար կար, յում օր բանվոր պետք էր, գուքային հարուստ մարդիկ, վերցնեին, տանեին կը: Քուլլընցին տարան, մնաց Արտաշեսը մենակ, չտարան: Ըսավ. «Հեյ վախ, էստեղ էլ բյախտ չունիմ»: Յիրա չուխեն առավ գլխուն, բազարի պատի տակ քնավ:

Շատ էր քնել, թե քիչ, մեկ էլ հանկարծ մեկըմ դուրթմեց: Արտաշեսը վեր թռավ, սիրտը պատռավ: Տեսավ՝ յափունջին հագը, սև ձին տակը մե մարդըմ:

Էդիկ ըսավ.—Ի՞նչ մարդ ես:

Արտաշեսն ըսավ.—Բանվոր մարդ եմ, էկել եմ ըստեղ աշխատելու:

Վերցուց էս մարդը՝ Արտաշեսին, դրավ ձիու թամքն ու տարավ: Էդ մարդն օր կար՝ հարամիբաշի էր: Տարավ յիրա սարայը, ըսավ.—Քեզի ամսեկան տասը օսկի կուտամ, քու գործն էն է, օր էս էրկու ձիուն աշես: Տասը տարով էլ պայման կկապեմ հետը:

Արտաշեսը տասը օսկու ձենն օր յիմացավ, կնկա հետ էրած պայմանը մտեն էլավ: Յինքը՝ հարամիբաշին, կէրթար յիրա գործին, ամսընեռով տուն չէր գա: Նախքան էրթալը Արտաշեսին ըսավ.—Ինչ գուզես կեր, ինչ գուզես՝ հաքի, մեննակ ներսի սենյակները նես չմտնիս: Օր նես մտար՝ էդ կախարդական առյուծներուն տեսնի՞ս կը, ընձի խաբար կուտան՝ գլոխը դ կզարկեմ:

Արտաշեսը սկսեց յիրա աշխատանքը: Ձիու կերը կուտար, ջրեր ու յիրա քեֆին կքնիր: Յուրիշ գործ չունիր: Յոթը տարի ծառայեց: «Էստեղ ի՞նչ կա օր,—ըսավ,—ես էսոր շենքերը չեմ տեսնի»: Մտավ սենյակները: Մտավ, ի՞նչ տեսավ՝ սիրուն խանումըմ՝ տոչնի յիրան կնիկը:

—Վա՛յ,—ըսավ,—Շուշանիկ ջան, դու էստե՞ղ:

Խանումն ըսավ.—Ես քու Շուշանիկդ չեմ:

—Դու իմ Շուշանիկը չե՞ս, անաստված:

—Չէ,—ըսավ:

—Անաստված,—ըսավ,—էս նկարը քուկըդ չէ՞:

Նկարը խանումը տեսավ, ըսավ.-Իմ լմանը է, բայց ես չեմ:

Խանումն ըսավ.—Արտաշես, դու օր Շուշանիկին շատ կսիրես, դու յոթը տարով պայման ես կապե, հարամիբաշու հետ յընչի՞ տասը տարով պայման կապիր:

Էդտեղ նոր հիշեց, օր Շուշանիկի հետ պայմանավորվել է՝ յոթը տարի բտի մնա ղարիբ-լուխ:

Խանումն ըսավ.—Դու գնա քու օթևանը դ, հարամիբաշին գուքա գլոխը դ կզարկե:

Արտաշեսը գնաց յիրա տեղը: Հարամիբաշին յիրկունն էկավ, առյուծները խաբար տվին:

Ըսավ.—Շուն, շանորդի,—ըսավ,—ես քեզի չըսի՞, թե սենյակները չմտնիս:

Էդ հալլա-հալին խանումը դուս էկավ, ըսավ.—Հարամիբաշի, էդ տղին մի դիպնի:

Հարամիբաշին շատ կատղած մարդ էր, բայց ձեն չհանեց:

Խանումն ըսավ.—Հարամիբաշի, էս էրկու նկարից ո՞րն եմ ես:

Յըբը.—Էրկուսն էլ քուկդ է, այ կնիկ:

Յըբը, ըսավ.—Ա՛ռ կարդա էս նկարի ետևը:

Հարամի բաշին կարդաց, յինքն էլ խղճաց:

—Ես ի՞նչ էնեմ,—ըսավ,—յինքը համաձայնվավ տասը տարով:

Խանումն ըսավ.—Հարամիբաշի, էս մարդու հաշիվը տուր, թող էրթա յիրա ընտանիքին հասնի:

Հըմի խաբարը տանք Շուշանիկից, թե ինչ դրուտան է: Շուշանիկին հարուստի տղեքն ու վաճառականի տղեքը զզվըցրել էին: Թե. «Արտաշեսը չկա, օր սաղ էղնիր, հըմի էկել էր: Մեկս ու մեկիս բտի առնիս»:

Ըսավ.—Քաշվեք, ռադ էղեք:

Շուշանիկը զզվավ, գնաց քաղաքից դուս, յաչքըմ հասարակ շենք շինել տվավ, յիրա տղի հետ ապրավ: Տղի անունն է Վրուր էր: Թող էդոնք էդտեղ ապրին, խաբարը տանք Արտաշեսից:

Արտաշեսն էր, հարամբաշուն մնաս բարով ըսավ, յիրա կնոջ սերն ու կարոտը քաշելով՝ մոռացավ յիրա վարձը: Ըսավ.—Աղա ջան, մնաս բարով: Ընձի ճանապարհ դի, ես էրթամ:

Հարամիբաշին թարս աշեց երեսը, ըսավ.—Յո՞ւր կէրթաս, Արտաշես ջան:

Ըսավ.—Էրթամ հասնիմ իմ ընտանիքիս:

Հարամիբաշին ըսավ.—Կեցի.—ըսավ,—տղա ջան, քեզի յէգուց յառավոտ կճամփեմ:

Էդ օրն անցավ, յիրգունը քնան, բայց Արտաշեսի քունը հեչ չէր տանի, թե. «Տեսնիս՝ հարամիբաշին ընձի ճամփե գը՞, թե՞ չէ»:

Լուսացավ, ելան, շորերները հագան, յիրանց հմար հաց կերան, հարամիբաշին ըսավ.—Քելե, տղա ջան, քեզի ճամփեմ:

Էս մարդուն հարամիբաշին ձի՛մ նվիրեց, խուրջինըմ էլ՝ օսկի: Յինքն էլ յիրա ձին նստավ, շարունակեցին ճամփեն: Գնացին, շատ ու քիչն աստված գիտե, հասան էրկու ճամփի մեջտեղ:

Ըսավ.—Արտաշես ջան, էս աջակողմի ճամփով օր էրթաս, տասնհինգ օրվա կհասնիս,

ապահով ճամփա է, էս ձախակողմի ճամփեն՝ հինգ օրվա կհասնիս՝ շատ վտանգավոր ճամփա է:

Հարամիբաշու հետ մնաս բարով էրին, պռոշտի էրին, Արտաշեսը գնաց հարամիբաշու ըսած տասնհինգ օրվա ճանապարհով: Հարամիբաշին էր՝ տակին հրեղեն ձի, եսիմ յուր գնաց, աստված գիտե: Արտաշեսը ջայել, հուռ տղա, ետևն աշեց, օր հարամբաշին չկա, ձին ետ դառուց: Ըսավ. «Տասնհինգ օր էրթամ, ես ճոր բդի հասնիմ Շուշանիկիս: Յավաշ, էս հինգ օրվա ճամփով էրթամ, ընձի ի՞նչ բտի էնեն»: Գնաց: Գնաց, շատն ու քիչը աստված գիտե, դեմ առավ քյոշկ ու սարայի՛մ: Քյոշկ ու սարայից ղաչաղները դուս պոկվան:

—Ա՛յ տղա,—ըսին,—օձն յիրա պորտով, հավքն յիրա թևով էստեղ գոյություն չունին, դու՝ երիտասարտ մարդ, ըստեղ ի՞նչ գործ ունիս:

Էսոնք բռնեցին Արտաշեսին, բեռը աշեցին, տեսան՝ խուրջինըմ օսկի: Ըսին.—Հոս աչողուտան աշե յըլը: Մենք յուր էրթայինք, օր էսքան օսկի ճարեինք:

Ու ձին էլ, Արտաշեսին էլ, օսկին էլ վերցրին, տարան յիրանց քյոշկ ու սարայը: Մեկ յուզեցան Արտաշեսին գլխատեին, նորից փոշմընան: Ըսին.—Էրթանք հարամիբաշուն ըսենք, աշենք՝ ինչ կըսե:

Գնացին հարամիբաշու քովը, ըսին.—Հարամիբաշի, էսման մե ավըմ ենք գտե: Ջայել տղե՛մ խուրջինըմ օսկի, ձին էլ՝ հետը, ի՞նչ էնենք:

Հարամիբաշին վռազ մտածեց, ըսավ. «Էդիկ կա, չկա, Արտաշեսն է»:

—Բերեք քովս տեսնիմ,—ըսավ:

Արտաշեսին տարան քովը: Հարամիբաշին պառկել էր՝ բմբլե յորղան-դոշակը տակը, տեսավ Արտաշեսն է, ըսավ.—Նստեցրեք, հաց բերեք ուտե:

Նստեցրին, ղավուրմա բերեցին, Արտաշեսը այից-դողից չէր յուտե:

Հարամիբաշին ըսավ.—Կե, Արտաշես ջան, մի վախենա:

Ըսավ.—Աղա, դուն ընձի յուրտի՞ց կը ճանչես:

Ըսավ.—Շան որդի, ես քեզի չե՞մ ճանչե, քովը օխտը տարի աշխատար:

Արտաշեսը ճանչեց հարամիբաշուն, գույնը քցեց, էլ չիտեր՝ ինչ էներ:

Հարամիբաշին ըսավ.—Շան որդի, ես քեզի աբուռով ճամփու դրի, ճամփա-խրատ տվի, դու յընչի՞ փոշմընար, էս վտանգավոր ճամփով էկար: Ես է, ու ըստեղ չէի:

Ղաչաղները ձեն չհանին, չէին էլ կրա հանե:

Կարգադրեց, ըսավ.—Տղին աբուռով տեղ սարքեք, թող քնի:

Յառավոտ լուսացավ, յիրա ղաչաղներուն հարամիբաշին կարգադրեց, ըսավ.—Տանիք, ճամփու կդնեք, էսիկ իմ տղես է:

Ճանապար դրին, Արտաշեսը գնաց: Շատ գնաց, թե քիչ, աստված գիտե, գնաց հանդիպավ յուրիշ քոշկ ու սարայի՛մ: Մե ատըմ արաբ Արտաշեսի յառաջը կտրեց:

—Ի՞նչ մարդ ես,—ըսավ:

Արտաշեսն ըսավ.—Ճամփորդ մարդ եմ,—ըսավ:

Ըսավ.—Դու անպայման իմ պալատըս բտի գաս, չգաս՝ գլոխըդ կզարգեմ:

Տարավ, յիրեք արձան ցույց տվավ. Մեկը շան էր, մեկը՝ կնկա, մեկն է մե տղամարդ՛մ էր:

Արաբ վաճառականը Արտաշեսին ըսավ.—Եթե հանեցի՞ր՝ էսոնք ինչ են, դու սալամաթ, փեշքյաշով տուն կէրթաս, եթե չէ՝ գլոխըդ կկտռեմ:

Արտաշեսը յինքը խելացի տղա էր: Ըսավ.—Էսի քու շունըդ է, էս կնկա արձանը քու կնիկդ է, էս տղամարդու արձանն էլ օր կա, վաճառական մարդ է, քու կնկադ սիրողն է: Դու յուզեցել ես կնկադ սիրողին քարացնե, չես կրացե, յիրեքին է քարացրել ես: Էդմա՞ն է:

Արտաշեսն օր էդի ըսավ, արաբ վաճառականը չոքավ Արտաշեսի յառաջը, ըսավ.—Դու սուրբ էիր, դու ի՞նչ գիտեիր էս բանը:

Արտաշեսն ըսավ.—Ես գիտեի, հասկըցա:

Վաճառականը Արտաշեսին ըսավ.—Կըրա՞ս հնարըմ գտնի՝ շանըս ու կընկաս կենդանացնեմ:

Արտաշեսն ըսավ.—Կըրամ:

Արտաշեսը յինքը յոթը տարի օր ծառայել էր հարամիբաշու քովը, առյուծներից որոշ բան սորվել էր: Ղավալ ունիր քովը, ծոցեն հանեց, փչեց: Շունն է կենդանացուց, կնկան էլ:

Ըսավ.—Գուզե՞ս էս վաճառականին էլ կենդանացնեմ:

Ըսավ.—Չէ, ըդիկ իմ թշնամիս է:

Վաճառականը Արտաշեսին մեծ պատիվ ցույց տվավ, շատ փարա տվավ, ճամփու դրավ: Արտաշեսը գնաց, գնաց, հասավ իրա հայրենիքը: Տեսավ՝ ո՛չ յիրանց տունը կերևա, ո՛չ էլ հիմը:

—Է՛,—ասավ,—Տիգրան վաճառականը յիրան ասածն էրավ:—Ասավ.—Կայնի հըլը հարևանիս հարցնեմ, տեղը կգիտենա՝ կենդանի ե՞ն, թե՞ չէ:

Հարևանի դուռը ծեծեց: Կեսգիշեր էր: Ասավ.—Համալչի Համբոն օր ըստեղ կապրիր, ի՞նչ էղավ:

Հարևանն ասավ.—Արտաշես անունվոր տղե՛մ ունիր, գնաց ղարիբ ու չեկավ, հերը թասոտավ՝ մեռավ, կինն ու տղեն էլ քաղքեն դուս են էկե, սարի դոշի հետ շենք են շինե, կապրին:

Արտաշեսն ասավ.—Կըրա՞ք ցուց տա, թե յուրտեղ կապրի:

Հարևանը դուս էկավ:

—Է՛ն,—ասավ,—սարի դոշի աղոտ լուսն օր կա, յինքը՝ Շուշանիկն է ապրըմ:

Արտաշեսը շնորակալուտուն այտնեց, ձին հեծավ ու գնաց: Գնաց հասավ Շուշանիկի դուռը, դուռը զարկյեց, Շուշանիկը ներսից, ըբը.—Ո՞վ է:

Արտաշեսը թե.—Ես եմ, Շուշանիկ ջան:

Շուշանիկն ասավ.—Ռադ էղի, գնա, յէ, գալողը՞դ. «Արտաշեսն եմ, Արտաշեսն եմ»:

—Ես եմ, Արտաշեսն եմ, Շուշանիկ ջան:

—Դու օր Արտաշեսն ես՝ ի՞նչ պայման ունինք մենք,—ասավ:

—Ա՛ն,—ասավ,—Շուշանիկ ջան, մեր պայմանը:

Ու դռան ծակեն նկարը նես տվավ: Շուշանիկն օր նկարը տեսավ, ուրախուտունից չիտեր՝ ինչ էներ: Դուռը բացեց, համբուրվան:

Շուշանիկն ասավ.—Նես արի, շորերս հագնիմ:

Արտաշեսը մտավ մեկել սենյակը: Տեսավ՝ գողընքի մեջը գեղեցիկ երտասարտըմ քնել էր: Թուրը հանեց, օր վիզը կըտռեր, Շուշանիկը հազիվ Արտաշեսի ձեռը բռնեց: Ասավ.—Քու տղեդ է, ի՞նչ կէնես:

Արտաշեսն ասավ.—Ընձի ասման տղա յուրդի՞ց:

Շուշանիկն ասավ.—Մի զարմանա: Մենք յոթը տարի պսակվել ենք յիրար հետ: Յոթը տարի ղարիբլու գնացե՞լ էիր: Էլ յընչի՞ կզարմանաս:

Տղին զարթնեցրին, սկսեցին քեֆ-ուրախուտունը:

Շուշանիկը Արտաշեսին հարցուց.—Ի՞նչ ես բերե:

Ասավ.—Խուրջինըմ օսկի եմ բերե ու մենձ գումար:

Շուշանիկն ասավ.—Դե օր էդպես է, մենք կշինենք տասը հատ խանութ: Հերըս օր մե կիլո՛մ շաքյարը կուտա մանթի՛մ, մենք կուտանք յիցցուն կապեկի:

Էդպես էլ էրին: Տիգրան վաճառականն ապրանքը ինչ գնով օր ծախըմ էր, Արտաշեսը կես գնով կուտար: Տիգրան վաճառականի բոլոր ապրանքը փչացավ, առնող չկար: Խաբար էրավ հարամիբաշուն, թե էսպես թշնամի՛մ ունիմ, գիշերը գաս վերջացնես, էրթա:

Հարամիբաշին գիշերն էկավ, Արտաշեսի դուռը բացեց, ասավ.—Կայնի՝ լուսը վառեմ, տեսնիմ՝ պիտո՞ւ տղա է:

Տեսավ՝ Արտաշեսն էր քնած:

—Տո, զարթնի,—ասավ,—Արտաշե՛ս:

Արտաշեսը զարթնավ, տեսավ՝ հարամիբաշին:

—Վա՛յ,—ասավ,—աղա ջան, դու էստե՞ղ:

Յըբը.—Ես՝ էստեղ, հա: Տիգրան վաճառականն էր կանչե, օր գլոխըդ կըտռեի:

Արտաշեսն ասավ.—Իմ աներս է: Թշնամացել ենք յիրար հետ, գյուզե ընձի վերջացնե:

Հարամիբաշին ջղայնացավ, ասավ,—Դե օր էդպես է, ես էդոր հերը կանիծեմ:

Սեղան բաց էրին, սկսին քեֆ-ուրախուտունը:

Արտաշեսն ասավ.—Աղա ջան, էդ չոլերն ի՞նչ ման գուկաս: Արի էղնինք ախպեր, էստեղ ապրինք:

—Դե օր էդպես է,—ասավ,—Արտաշես ջան, գնա խանումիդ ու ախչկաս առ, արի:

Արտաշեսը յիրա աղի ձին հեծավ, գնաց աղի քյոշկ ու սարայը: Հարամիբաշու կնիկը դուս էկավ, տեսավ՝ յիրա մարդու ձին, ասավ.—Արտաշես, էս ձին յուրտի՞ց:

Արտաշեսն ասավ.—Աղես է ղրկե, օր ձեզի տանիմ:

Խանումի ուրախուտանը չափ չկար: Հավաքեց իրա վեշերը, քաշով՝ թեթև, գնով՝ ծանդրը, մնացածը թողին ու գնացին: Հասան յիրանց տունը, սկսեցին ավելի ուժեղ առուտուր

էնելը: Տիգրան վաճառականը քիչ մնար տրաքիր, յիրա ապրանքը փչացել էր խանութներու մեջը: Տիգրան վաճառականը երկար մտածելուց ետո հեչ մե բանըմ չկըրաց էնե:

Հարամիբաշին մտածեց. «Մենք ախպեր ենք էղե, մե մոր արկանդից չենք ծնվե: Իմ ախչիկըս յիրա տղին չի՞ հասնի»:

Հարամիբաշու ախչիկն է շատ սիրուն ախչիկ էր: Նույն բանն է Արտաշեսը կմտածեր:

Հարամիբաշին ըսավ.—Արտաշես, իմ ախչիկն օր քու տղիդ տամ, ի՞նչ կխանգարե:

Արտաշեսն ըսավ.—Ես էլ էդ կմտածեի, հեչ մե բանըմ էլ չի խանգարե:

Ու Վրուրին ու Գյուլլիզարին նշանին յիրար հետ:

Յոթը զօր ու գիշեր հարսնիք էրին: Տիգրան վաճառականին չկանչին: Տիգրան վաճառականը գիլիզ կատղավ: Խաբար էրավ Յարընխում շային: Ըսավ.—Էստեղ երիտասարտ հարսըմ կա, էդիկ օր քեզի կնիկ էղնի, յամենագեղեցիկն է քու քառասուն կնկա մյեջը:

Խաբարը հասավ Յարնըխում շային: Յիրա սուրանտակներից ղրգեց, գիշերն էկան, քնած տեղից Գյուլլիզարին գողցան ու տարան: Վրուրը՝ երիտասարտ տղա, քնե մնացել էր: Յառավոտ զարթավ՝ կնիկ չկա: Գնաց հոր ու աներոջ քով: Ըսավ.—Գյուլլիզարը չկա:

—Ի՞նչ էղավ, օր չկա, այ տղա,—ըսավ հարամիբաշին:

—Չիտեմ,—ըսավ,—խաբար չեմ:

Հարամիբաշին ըսավ.—Արտաշես, էսոնք քուլլի Տիգրան վաճառականի էրածն է: Դու կեցի էստեղ, ես ու Վրուրը կէրթանք:

Ու գնացին: Շատ թե քիչ, մեկը գնաց Դվին, մեկը՝ Երուսաղեմ: Վրուրն օր գնաց Դվինի ճանապարով, քաղաքի բոլորը պարըսպապատ էր, մութն օր գընկնիր, դռները կփակեին: Վրուրն օր չըկրաց քաղաք մտնի, պարիսպից դուրս յափունջին քցեց վրեն, քնավ: Հանկարծ քաղաքից մե հատ ղուտիկ դուս բերին:

—Հեյ վա՛խ,—ըսավ,—է՛ս ինչ էր:

Տարան գերեզմանը թաղին: Գերեզմանը մոտ էր: Թաղին ու գնացին: Վրուրը գնաց գերեզմանը քանդեց, ղուտիկը հանեց, տեսավ՝ մյեջը երիտասարտ հարսըմ: Տեսավ, օր կենտանուտուն կա: Դարբազի դռները ջարդեց, էդ հարսին դրավ ձիու վրա, մտավ քաղաքի մեջը: Մե անծանոթ դուռըմ զարգեց: Մե պառավըմ դուս էկավ:

Ըսավ.—Էս հարսին հնարը գտար, սաղցըրիր՝ սաղցըրիր, չէ՝ քեզի կվերջացնեմ:

Բանից դուս էկավ, օր էդ պառավը քաղքի հեքիմն էր: Էդ հարսին ձեռաց սաղցրեց: Վրուրը հարսին հարց տվավ.—Դու ո՞վ ես:

Ըսավ.—Ես Յարունխում շայի քառասունեորորդ կնիկն եմ: Յինքը մե հատ երիտասարտ ախչիկ բերավ, ընձի էլ էս օրին հասցրին:

Ըսավ.—Դու ընձի կըրա՞ս ըսե՝ Արունխում շայի պալատը ո՞րն է:

Ախչիկը տնից հանեց դուս, ցուց տվավ:

—Էն աղոտ լուսն օր կա,—ըսավ,—պահակներու տեղն է: Էն կարմիր լուսը՝ էդ ախչըկա տեղն է: Յէսօր հինգ օր է՝ բերել են, Յարունխում շային մոտ չի էրթա: Սիպտակ լուսն է Յարունխում շայի պալատի ակուշկեքն է:

Վրուրն ըսավ.—Շատ շնորակալ եմ,—ըսավ,—քուր ջան: Ընձի էդքանն էր հարկավոր:

Ու գնաց: Հասավ Յարունխում շայի պալատը: Յինքը խյաշիմ տղա, դուռը բացեց ու նես մտավ: Պահակները ետևից բռնին:

—Դու քանի՞ գլխու տեր ես, օր էս գիշերվա ժամին գաս մեր շայի պալատը:

Խաբար էրին Յարունխում շային.—Շայն ապռած կենա, թշնամի ենք բռնե:

Շայն ըսավ.—Պայեք, մինչև լուսանա:

Լուսացավ: Շայը հայտարարեց, օր կախարան դի բարձրացնենք: Օրենքն էն էր, օր ով օր դի կախարան հաներ, գավաթըմ գինի բտի խմեր ու կախարան հաներ:

Պալատականներից մեկը.—Շայն ապռած կենա,—ըսավ,—ես կրամ հանեմ:

Գավաթը վերցուց օր խմե, գավաթը ձեռի մեջ փշրվավ: Երկրորդ մարդը դուս էկավ, էլի երդում կերավ, գավաթն ուզեց վերցնե, ձեռի մեջ փշրվավ: Շայը կատղավ, ըսավ.—Ես բտի կախեմ:

Գավաթը վերուց օր խմե, նետ ու աղեղի գյուլլեն զարգյեց ճակտի մեջտեղը: Շայն ընգավ: Էդ զարգողը հարամիբաշին էր: Էկավ փեսին կախարանից ազատեց: Փեսեն տեսավ, օր յիրա աներն էր: Համփուրեցին յիրար, հարամիբաշին ըսավ.—Ես էղնիմ հարամիբաշին, իմ ախչըկաս շայը բերե, իմ փեսիս է կախարան

հանե՞: Ես մեռնիմ, լավ չէ՞: Քուլլընցիդ կվերջացնեմ:

Բոլոր պալատականները չոքեչոք, աղուհացով էկան հարամիբաշու յառաջը:

—Մենք մեղավոր չենք, շայն է բերե:

Գյուլլիզարին բերին, շայի բոլոր մնացած կնտիկանցը ազատեցին:

Վրուրը հարամիբաշուց խնդրեց, ըսավ.—Հայրիկ,—ըսավ,—թողնի՞ս կը իմ նպատակս կատարեմ:

—Ըսա,—ըսավ,—տղա ջան:

Վրուրը կանչեց շայի քառասուներորդ կնկան, օր ազատել էր, ըսավ.—Դու սիրած ունի՞ս:

Ըսավ.—Ունիմ:

Ըսավ.—Կանչեք գա:

Կանչեցին, էկավ: Նշանեցին յիրա սիրածի հետ: Սիրածին նշանակեցին շայի տեղը՝ որպես շայ: Յոթ օր յոթ գիշեր ուրախուտուն էրին, թողին գնացին յիրանց երկիրը: Հասան Տիգրանակերտ: Տիգրան վաճառականը օր լսեց՝ առոխչ ետ են դառցե, գժվեց: Յիրանք էլ քուլլի Տիգրանակերտը իշխեցին: Իրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

33(33). ՂԱՍԱԲԵ ՋՈՄԱՌԴ

Մե քաղքի մեջ կապրեր մեկ հարուստ իշխան մարթըմ: Էտ մարթն ունիր մեկ շատ խորոտ կնիկ, մեկ քյայլան ձի: Յամեն օր գուկար տուն, յառաջ կէրթար ձիուն կտեսներ, ետո գուկար կնկա կուշտ: Էտոր կնիկ, մեկ օր, էրկու օր սաբր էնելուց ետո, սկսեց նիաթ կախել, մարդու խետ թամամ չըզրցուց: Մարթը շշմավ, թե կնիկն յընչի՞ ա յիրան խասիաթ փոխե:

Մեկ օր կնկան խարցուց.—Յընչի՞ ա քու նիաթներ կախ, ինչ ա էղե քեզի, այ կնիկ:

Կնիկն ըսավ.—Ես ինչացո՞ւ եմ, դու յառեջ կէրթաս քու ձիուն կիշկես, ետո գուկաս իմ կուշտ: Դու էնոր յէվելի շատ գուզես, քան ընձի:

Մարթ ձեն չխանեց: Էն մեկել յառավոտ էս մարդ յիրա ծառային կանչեց, թամբխեց, ըսեց.—Ձիուն լավ զարթարա, տար բազար: Եթե ձին կծախվի տաս մանեթ, դու կըսես՝ իմ ձին արժի խարիր մանեթ: Թե օր գին տըվող էլ կէղի, չի՞իտա՛ս, իմ ձին կդառցուս կբերես:

Ծառան էթուր էլ էրեց: Ձին տարավ բազար, գալող գուքեր կխարցուցեր ձիու գին, էտ մարթ կըսեր.—Իմ ձին արժի խարիր մանեթ:

Շատ խարցուցող էղավ՝ էտ գին տվող չէղավ: Ծառան ձին դառցուց բերեց: Աղեն խառցուց.—Տղա, ի՞նչ էղավ:

Ծառան ըսավ.—Աղա, էտ գին տվող չէղավ, ես էլ ձին դառցուցի բերի:

Աղեն ըսավ.—Օր էտ թավուր ա, յէգուց էլ իմ կնկան զարթ ու զարթարանքով կտանիս բազար: Թե կնիկ կծախվի յիցցուն մանեթի, դու կըսես, օր էսոր գինն խինգ խարիր մանեթ ա: Թե գին տվող կէղի՝ հանկարծ չի՞յիտա՛ս, կդառցուս կբերես:

Էտ երկիր սովորուտք կար, օր կնկան էլ կծախին: Էն մեկել օր ծառան աղի կնկան տարավ բազար: Էկան խարցուցին.—Էտ կին ի՞նչ յարժի:

Ըսավ.—Խինգ խարիր մանեթ:

Էտ մարթիկ զարմացան, ըսին.—Ա՛յ մարթ,—ըսին,—յամենալավ կնիկ կծախվի քառասունխինգ-յիցցուն մանեթի, յընչի՞ էտոր գին խինգ խարիր մանեթ կըսես:

Ըսավ.—Էտթավուր ա, էտրից պակաս չէղի: Գ՚յուզեք՝ առեք, չեք յուզե՝ մի առեք:

Վեռչ՝ գին տվող չէղավ, կնկան էլ դառցուց ծառան, բերեց տուն: Մեկ ուլիցըմ էր մացե, օր խասներ աղի տուն, էրկու ձիավյոր ետևից խըխրթմիշ էրեցին: Ծառային կայնըցուցին, ըսին.—Տղա՛, էտ կնիկ ծախո՞ւ ա:

Ըսավ.—Խա՛:

Խարցուցին.—Ի՞նչ յաժի:

Ծառան ըսավ.—Խինգ խարիր մանեթ:

Էտ վյոխտն ձիավորներուց մեկն կխանա ջեբեն խինգ խարիր մանեթ, կհաշվա, կըսա.—Դե՛, կնիկ տուր:

Ծառան կըսա.—Չէ՛, էկեր խասեր եմ մեր տուն, կնիկ էլ չը՚ծախեմ:

Ձիավոր գ՚յիջի ձիուց, մեկ սիլլե՚մ կզարգա, ծառային տփա գետին, ձեռներ կկապա, խինգ խարիր մանեթ կհաշվա կդնա ծառայի կշտի խետ, կնկան կառնին կէրթան: Քաղքի մարթիկ գուկան, էտ ծառայի ձեռներ գառձկեն, ծառան փարեն կառնի, կէրթա աղի տուն:

Աղեն կխարցու.—Տղա, կնիկն յուր ա՞:

Կըսա.—Աղա ջան, էրկու ձիավոր էկան, ընձի տփին գետին, խինգ խարիր մանեթ տվին, կնիկ տարան:

Աղեն շատ կփոշմընի յիրա բռնած գործի վրեն: Էն մեկել օր յառավոտ կխեձի յիրա ձին, գընկնի երկրե երկիր, քաղքե քաղաք, օր յուրան կնկան գտնի: Մեկ ամիս պտոտելուց ետո կխասնի մեկ քաղաքըմ: Էտտեղ էլ կխարցու: Քաղքցիք սալըղ կուտան, թե.—Ամիսըմ յառեջ էտ քու կնիկ Ղասաբե Ջոմառդի ախպրտիք են բերե:

Էտ մարթ կըսա.—Շատ կխնթրվիմ՝ էտոր տուն ընձի նշանց տվեք:

Էտոնցից մեկ շատ կզարմանա, կըսա.—Դու ի՞նչ թավուր մարթ ես, օր Ղասաբե Ջոմառդի տուն չը գիտես: Էնի յաշխըրի յամենահարուստ մարթն ա: Յըմմեն կիրակի մատաղ կէնա յոթ գլյոխ եզ, տաս օչխար, էրկու գոմեշ, քաղքի ախքըտներուն ու ղարիբներուն կկերցու: Յէսօր էլ կիրակի ա: Հըմի էնոնց տուն մատաղ մորթած ա, գնա, կխարցուս՝ գիմնաս:

Էտ մարթուն նշանց կիտան Ղասաբե Ջոմառդի պալատներ, կէրթա: Կէրթա կտեսնա, օր օղորթմ ա, էտ մարթկանց ըսուկ օղորթ ա: Պղընձներ դրուկ, մատաղ ա կէփեն, ժողովուրթն է լիք լցվուկ ա: Յինք խեղճ-խեղճ կկայնի, կիրիշկա: Ղասաբե Ջոմառդ կթախմընա էտ մարթուն, կխասկընա, օր էտի յուրանց երկրից չէ՝ սեղներուն մոտիկ չի՛յիգա: Ծառաներուն կըսա.—Գացեք էտ մարթուն կանչեք թըխ գա՝ մատաղ ուտա:

Կէրթան էտ մարթուն կըսեն.—Մեր աղեն կկանչա՝ մատաղ ուտելու:

Էտ մարթ կպատասխանա.—Ես շատ շնորակալ իմ: Մատաղ չ՚ուտիմ, ձեր աղի խետ գործ ունիմ:

Ծառաներ կէրթան աղին կըսեն թե.—Աղա, էտ մարթ կըսա՝ մատաղ չ՚ուտիմ, ձեր աղի խետ գործ ունիմ:

Կըսա.—Գացեք կանչեք թըխ գա:

Ղասաբե Ջոմառդ զէտ մարթուն կտանի վերև՝ յուրան օթևան: Լավ կպատվա, կխարքա, վեռչ կխարցու.—Ի՞նչ գործ ունիս իմ խետ:

Էտ մարթ կըսա.—Աղա ջան,—կըսա,—մեկ խնթիրք ունիմ: Էստըրից ամիսըմ յառեջ քու ախպըրտիք մեր քաղքով յընցնելու վյոխտ իմ կնկան կառնին, գուքան: Կխնթրվիմ, օր իմ կնիկ տաս ընձի՝ տանիմ:

Ղասաբե Ջոմառդ կըսա.—Շատ լավ, յէսօր գիշեր ղոնախ կէղիս մեր տուն, յառավոտ քու կնկան կուտամ, կառնիս կէրթաս:

Մեկել օր յառավոտ Ղասաբե Ջոմառդ յիրա էրկու ախպոր վիզ կը թըռու, թե յընչի էթավուր անամոթ բան բտի էնին, էտ մարթու կնկան կուտա յիրան, կըսա.—Ա՛ռ տար:

Էտ մարթ փոռ-փոշման կնկան կառնի կտանի գյուր տուն:

Շատ տարիներ գ՚յընցնին, էտ Ղասաբե Ջոմառդ զուր ամփոխչ հարստութեն կծախսա, կը մսխա. էլ բան մը չը՚մնա, կդառնա ախկատ: Մեկ յիրկուն յիրա կնկան ըսավ.—Ելի, էս քաղքից քոչենք էրթանք:

Մեկ ջորի՚մ էր մացե, բառցան յուրանց այնօյին զէտ ջորու վրեն, գիշերը քաղքեն ելան: Շատ ճամբախ գացին, տաս օր, քսան օր, հասան վեռչ մե քաղաք: Էտեղ սկսեցին ապրել: Դու մի ըսե, էտ քաղքի քաղաքագլյոխըն էն մարթն ա դառցե, յորի կնիկըն Ղասաբե Ջոմառդն զուրա ախպըրտոնցն ըսպանելով՝ տվել էր յուրան: Մեկ օրըմ քաղաքագլյոխ ժողովրդական ժողով էր հրավիրե էտ քաղքի կենտռոն տեղը: Մեկ էլ ի՞նչ տեսավ՝ Ղասաբե Ջոմառդ ախքըտի ղըլլըղով կտյոր՚մ սոմի զարկուկ կոլթուղ, էտ ուլիցով կէրթա: Էտ մարթը ժողով չէրեց, ժողովուրթ ցրվան, յինքն ելավ յընկավ Ղասաբե Ջոմառդի ետև: Գնաց հասավ էսոր քորգալըխ: Ղասաբե Ջոմառդին էտ մարթ խնթրվավ, ըսավ.—Ախպեր ջան, չե՞ս ի՚գա իմ տուն կոնախ: Դու իմ կորիսուկ ախպոր շատ ես նման:

Ղասաբե Ջոմառդ ելավ, զէտ մարթու խետ գնաց: Էտ քաղաքագլյոխն Ղասաբե Ջոմառդին, յիրա կնկան ու էրեխուն ճամբխեց բաղնիք, լավ խաս շորեր խաքուց, յիրա տան մեջ յառանձին սենյակ տվեց, աղի պես պախեց:

Յընցավ ութ-ինը տարի, մեկ օր՚մ էլ Ղասաբե Ջամառդ մտավ տուն, տեսավ՝ յիրա կնկա թախտի վրեն մե ջայել տղե՚մ պառկուկ ա: Հըմա զուր թուր խանեց, թալեց զէտ տղու գլյոխ կտռեց: Կնիկ մտավ նես, զարկեց զուր չոքերուն, ըսավ.—Տո անխիղճ մարթ, յընչի քու ախպոր էրեխուն ըսպանիր:

Ըսավ.—Կնիկ, ես գիտի՝ յուրիշ մարթ էր: Ելի աղուխաց առինք, իմ թուր առինք, էրթանք իմ ախպոր խնթրենք՝ ինչ դատ կէնա, թըխ էնա:

Գացին ախպոր սենյակ, Ղասաբե Ջոմառդ օր չոքավ, խնթրվավ, ախպեր զարմացավ, ըսավ.—Էս ի՞նչ ա կէնես:

Յինքն ըսավ.—Հալ-հեքաթ, էսպես, տղին

ըսպանել եմ: Էս աղուհաց,—ըսավ,—էս իմ թուր, ինչ դատ կէնես՝ էրա:

Էտ յուրան աղա ախպերն ըսավ.—Ելի կայնի, ինչ ես չոքե, յոռց գառն էղե՝ մորթելու խմար:

Խանեց ախպոր կայնըցուց: Տարան տղին թաղին, էկան էլի նույն ձևի սկսին ապռել:

Ղասաբե Ջոմառդ շատ մտածեց, օր էտեղ էլ չ'կըռնա ապռի, էրես չը բռնա, մեկ օր զուր ախպոր ըսավ.—Կխնթրվիմ՝ թուլ տաս էրթամ մեր երկիր ապռիմ:

Ախպեր ըսավ.—Շատ լավ, էրկու օր'մ էլ համփերա, քեզի ճամխու կդնեմ, կէրթաս:

Էտ էրկօրվա մեջ հրաման տվեց՝ ինչքան անասուն ուներ, սարերից յիջուցին ցած: Հալալ ախպրաբաժի էրեց, բավականի կարողութուն բառցավ դէվեքներու վրեն, տաս խատ ծառա տվեց, մնաս բարով, էրթաս բարով՝ յիրան ախպոր ճամխու դրեց:

Ղասաբե Ջոմառդ բավականի եռենալուց ետո յուրան-յուրան միտք էրեց. «Այ մարթ, էս մարթ ընձի ինը տարի աղի պես պախեց, տղին ըսպանի՝ ձեն չէրեց, էս ամբոխչ մալ ու դոլվաթ, կարողութուն դրեց իմ խետ, ես էլ ինչ լավութուն էնեմ, օր էսոր պատվի տըկից դուս գամ»: Ձիու գլյոխ ետ դառցուց, թափով քշեց էկավ, ըսավ. «Էրթամ էտ մարթուն ըսպանեմ, օր իմ խոքին ազատվի»:

Մոտկըցավ, ձեն տվեց.—Ախպեր, կայնի՛:

Էտ քաղաքագլյոխ էտոր միտք խասկըցավ, ըսավ.—Ի՞նչ կա,—ըսավ,—քու բաժին քի՛չ եմ տվե: Արի իմ բաժին տար քեզի, քունուն թըխ մնա ընձի:

Էտ Ղասաբե Ջոմառդ ըսավ.—Չէ՛, ախպեր, ես յուրիշ մտքով եմ էկե: Էկել եմ, օր քեզի ըսպանեմ, դառնամ էրթամ:

Աղեն խարցուց, թե.—Յընչի՞ խմար կըսպանես:

Ըսեց.—Ես քու լավութան տըկեն չը'կըռնամ դուս գամ: Դու ընձի աղի պես պախիր: Տղիդ ըսպանի՝ ձեն չէրիր: Էս ամփոխչ մալ ու դոլվաթ տվել ես՝ ես կտանիմ: Էլ ես ինչ էնեմ, օր կռնանամ քու լավութան տըկեն դուս գամ:

Քաղաքագլյոխ ըսավ,—Շատ լավ, էտ իմ տղի գլյոխ քու մեկ ախպոր գլխու դեմ, յըպը քու մեկել ախպոր գլխու դեմ ես ինչ տամ, օր քեզնեն պրծիմ: Յըմալ ա, ես քեզի բտի ըսպանեմ:

Էտեղ Ղասաբե Ջոմառդ նոր խասկըցավ, թե «Էսի էն մարթն ա, որու կնիկն տվեցի տարավ, իմ ախպըրտոնցն էլ ըսպանի»:

Ըսավ.—Դու էտ մարթն ես, խմ: Դե օր էտ թավուր ա, մենք նոր դառնանք ախպեր, մեկտեղ կապռինք՝ մինչև մայ-գերեզման:

Էտպես էլ էրին:

Էնոնք խասան յուրանց մուրազին, դուք էլ խասնիք ձեր մուրազին:

34(34). ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՏՂԱՆ*

Մի հատ վաճառական մարդ ունենում է մի հատ տղա: Տղին մինչև Լյապցիգ անգամ ուղարկում է սովորելու՝ Գերմանյա, Ֆրանսյա: Ինքը հարուստ վաճառական մարդ է: Տղեն դբրոցը վերջացնելուց հետո վերադառնում է տուն: Գալիս է, հերն էլ վաճառական, մեծ կարողության տեր, բավագանի մեծ մագազիներ, խանութներ և այլը ունի, տղի շրջապատը փոխում է: Դե փողալի տղա է, գիմնազիան ավարտել եկել է, ինքն էլ բարձրագույն կրթություն ունի: Էն ժամանակ գիմնազյան էլ գիդես ինչ է, էլի: Շրջապատը բոլորովին փոխում է, սկսում է հոր ունեցվածքը վատնել, խմում է... շատ ներողություն, բոզի, գողի հետևից և այլը... Գլուխդ ինչ ցավացնեմ, շրջապատը հոր կարողությունը կուտե կը: Ուտել վերջացնելեն ետքը սնանկանում են և՛ հերը, և՛ ինքը: Փրկության ոչ մի միջոց չէ մնում:

Մտածում է, թե. «Այ մարդ, ես Գերմանիայում վերջացրի, Ֆրանսիայում վերջացրի, և հանկարծ ընգել ենք էս դրության մեջ՝ սնանկացած, մեր էստեղ մնալը քանի՞ կոպեկ արժե: Վերցնեմ հորս ու մորս տանեմ ծախեմ, գլուխս առնեմ, էս քաղաքեն թողնեմ հեռանամ»:

Բռնում է հորն ու մորը ձեռքը (ընդոնք էլ բավականի մեծ հասակ ունին), բերում է շուկա: Դե, շուկայում է բոլորը էդ վաճառականին ճանաչում են, ինչպես ասում են՝ իրենց ասնավն է, իրենց գործակից մարդ է էլի:

—Այ տղա, ո՞ւր ես տանում ծերերին:

Թե.—Բերել եմ ծախելու:

—Ինչպե՞ս, հի բա...

—Ծախեմ կը.—կըսե,—հորս տունը կերա պրծա, հիմա փրկություն չկա, մնան ինչ անին:

—Ինչ արժե,—կըսե,—հերդ:

—Հերս,—կըսե,—արժե մի ձի, մերս էլ արժե ձերքըմ շոր:

Տկլոր է արդեն:

Վաճառականն էլ՝ առնողը, ով որ հետը խոսում է, սրա մոտիգ հնգերն է, կըսե.—Թող բիձան մնա խանութը, պառվին էլ կ'տանիմ տունը, թող խանմիս հետ իրա համար յոլա էրթա:

Տղուն լավ, մի թամքած ձի է տալիս, մի ձերք էլ շոր է հասցնում, մի քանի կոպեկ էլ փող է տալիս, որ ճանապարհեն ծախս ընե: Սա էլ վեր է կենում հեծնում ձին, «մնաս բարով» ու գնում:

Բավական ճամբա գնալուց ետքը, արդեն ո՛չ գյուղ է էրևում, ո՛չ քաղաք, փլան դաշտի մեջ է: Կ'տեսնի, որ մի ձիավոր հետևից ուժեղ գալիս է: որ գալիս է հասնում էդ տղին.—Բարև:

—Բարև:

—Այ տղա, ո՞ւր ես գնում:

—Կ'էթամ Թիֆլիս:

—Տղա ջան,—կասե,—մի հատ նամակ կա մոդս, խնդրում եմ՝ էս նամակը տանիս տաս հասցեատիրոջը: Հա՛մ էնդեղ քեզ ղոնաղխանա կէղնի, հա՛մ էլ մի նամակի համար էրկու հոգիս էրթանք՝ արժեք չունի:

Թե.—Էդպես է, դե տուր:

Կ'վերցնե նամակը, կ'դնե գրպանը, էս մարդը՝ «Մնաս բարով», «Էրթաս բարով», կը վերադառնա:

Էս տղեն բավական ճամբա էրթալեն ետքը հոգնում է, կըսե. «Իջնիմ, թող ձիս քիչ մը հանգստանա, ես էլ քիչ մը հանգստանամ, ետքեն կ'շարունակեմ ճանապարհը»:

Կիջնե ձիուց, հաց կուտե, ձին էլ տեղ կըսկսե արածել, կ'մտածե տեղ. «Այ մարդ,—կըսե,—ես իմ հորս միլիոնները կերա, մի պատահական մարդ ինձի նամակըմ տվեց թե՝ տար հասցեատիրոջը տուր, էդ ինչի՞: Ես չպիտի գիտենամ, թե դրա մեջ ինչ կա»:

Նամակը հանում է ծոցից, պատռե կը, կը բանա ու նամակի մեջ էրկու բան է գրած. «Գրաբերս իրուկունն էկավ, իրիկունը կսպանես, առավոտը էկավ՝ առավոտը կսպանես»:

«Այ մարդ, էս ինչ բան է, ուրեմն ես իմ ձերքով իմ գերեզմանս պիտի փորեի՞»:

Կ'ծալե էդ նամակը, կ'շինե երեք անկյունանի, խփում է գյոլին... գյոլի վրա է չէ՞ ինքը նստած, դրանով էդ գյոլեն ջուր կ'խմե: Նամակը ետքը կպատռտե թափե, իրա ինչի՞ն է պետք: Վերջացնում է նամակը, էլնում ճամբան շարունակում:

Գալիս է հասնում է... առհասարակ, գալողները՝ ղոնաղ մարդը, գյուղի կամ քաղքի ծայրամասը տուն կ'հարցնե, չէ՞: Պատահական տուն մը կ'մտնե:

—Մայրիկ, հյուր չե՞ս վերցնի:

Հյուր կըսեմ, լավ չի ստացվե, ղոնաղ:

—Ղոնաղ չե՞ս վերցնի:

—Բալա ջան, ղոնաղը աստծունն է, բայց տեղ չունեմ.—կըսե:

—Տո, բան չկա, մայրիկ ջան,—կըսե,—թնդրի վրա՝ տեղըմ կուճուրիկ, ղարիբ մարդ եմ:

Էս մարդն, ուրեմն, տեղավորվում է, ձին էլ կապում է ձորը:

—Մայրիկ ջան,—կըսե,—ես էսպես, էսպես տղա եմ,—կըսե,—հիմա դու կ'ռնա՞ս որոշ բան ձեր քաղաքեն ինձի ծանոթացնես: Թե՝ ձեր քաղաքի անցյալն ինչպես է, ի՞նչ կա, ժողովուրդը ի՞նչ դրութան է:

—Բալա ջան,—կըսե,—ի՞նչ պատմեմ, մեր քաղաքագլուխը լիրբ աղջիկ մը ունի: եիտասարդ չմնաց, բոլորի գլխները կերավ:

—Բա, ինչո՞ւ համար, էդիկ ի՞նչ բանու պատճառ է:

—Պատճառն էն է,—կըսե,—որ աղջիկը հարցեր է տալիս, տղաները չեն կարա պատասխանել, դրա համար էլ տղաների գլուխները բոլորը խփում է, ախճիգները մնացել են բոլորը ազափ:

Տղեն կ'մտածի. «Այ մարդ, ես սաղ հորս ունեցվածքը կերա, հորս ու մորս էլ ծախի, ինձի էլ ի՞նչ կա կորցնելու: Էրթամ մի ճան մը էլ էդտեղ գցեմ, էլավ՝ էլավ, չեղավ՝ չեղավ»:

Հաջորդ առավոտ կելնի, կուգա: Տղին ներս կհրավիրեն:

Քաղաքագլուխը կ'հարցնե.—Ինչ տղա ես:

Թե.—Էսպես, էսպես տղա եմ, եկել եմ աղջկադ ձեռքը խնդրելու:

—Աղջկաս ձեռքը խնդրելու համար պետք է նախօրոք պայմանավորվենք, որից հետո:

—Ի՞նչխ պայման է:

—Աղջիկս,—կըսե,—հարցեր կ'տա, դու էլ կը պատասխանիս: Եթե չպատասխանիս՝ գլխներդ կը զարկիմ: Եթե պատասխանիր՝ աղջիկս իրա ամբողջ գեղով-գերանով քեզ էղնի:

—Խնդրեմ,—կըսե:

—Դե որ էդպես է, էսօր գնա, էքուծ ամբողջ սինոտը կ'հավքեմ, կուգաս էն ժամանակ՝ խնդրեմ,—կըսե:

Հաջորդ օրը՝ առվոտ, տղեն կելնի կուգա: Արդեն ժողովուրդը հավաքված է: Էդ կառավարության կազմը իրանց հետաքրքրություն կա: Հա: Նստած են բոլորը:

Կըսե.—Աղջիկ, պատրաստ ես հարցեր տալու:

Կըսե.—Պադրաստ եմ, հայրիկ:

Աղջիկն, ուրեմն, շիրմա է քաշած, էն էրեսն է կանգնած, իսկ ժողովուրդը՝ էս էրեսը՝ տղի հետ միասին: Տղեն աղջկան չի տեսնում:

—Տղա,—կըսե,—հերդ ո՞վ է:

Կըսե.—Հողն ու հուրը:

—Մերդ ո՞վ է:

—Ծովն ու ջուրը:

—Դայակտ ո՞վ է:

—Դայակս,—կըսե,—քեզ պես ղախպեն է, ձենը լսի, բայց իրեն չտեսա:

Չի տեսնում, չէ՞ իրան՝ շիրմի ետևն է:

Էդպես մի քանի հարցեր տալուց, պադասխանելուց ետո մի հարց է տալիս... ճիշտն ասած՝ մոռացել եմ այդ հարցը, տղեն էստեղ քիչ'մ կ'խեղճնա: Որ կ'խեղճնա, քաղաքագլուխը կասի.—Գիտես, մեր պայմանը պայման է:

—Դե որ էդպես է, թույլ տվեք մի հարց մը էլ ես տամ, թող էլի ձեր պայմանը լինի, հո անընդհատ ձեր աղջիկը պիտի հարցեր չտա, թողեք մի հարց էլ ես տամ:

Նստող ժողովուրդը.—Ճիշտ է,—կըսեն,—թող մի հարց էլ ինքը տա: Անընդհատ ինքը ինչի՞ հարցեր կիտա:

Կըսե.—Լսում ես, աղջիկ:

Կըսե.—Տվեք:

Կըսե.—Աղջիկ, էն ո՞վ է, որ հորը ծախեց՝ հեծավ, մորը ծախեց՝ հագավ, մահվան թասով ջուր խմեց՝ կենդանացավ:

Էդպես բան գրականութան մեջ չկա գրված, իրան գլխուն էր էղիր էտիկ:

Աղջիկը գրքերը էս կողմ, էն կողմ կ'թալի, կ'քրքրի՝ էս յան, էն յան, ոչ մի գրքի մեջ տենց բան չկա գրած:

—Հայրիկ:

—Ի՞նչ է, աղջիկ ջան:

Կըսե.—Ես արդեն հոգնա, թող գնա էսօր, վաղը կգա. Ես իրա հարցին կ'բադասխանիմ:

—Տղա, համաձայն ի՞մ:

Թե.—Համաձայն իմ: Թեկուզ վաղը էղնի: Վատ չէ, եթե մի օրով կյանքս երկարի,—կըսե:

Կելնի տղեն, կուգա, աղջիկը կ'կանչի իրա նաժիշտներից էրկսին, կըսե.—Հետապնդեք էդ տղին, իմանաք, թե որտեղ կապրի էդ տղեն: Կուգաք ինձի կհայտնեք:

Էդ տղեն խամ տղա է, ընկել է էդ քաղաք, ոչ մեկուն չի ճանաչի, չգիտե, թե իրան հետապնդող էղնե, իրան համար գլուխը կախած դեպի պառավի տունն է գնում: Երկու հատ աղջիկ կուգան հետևից կանցնին: Կուգա էդ տղեն, իր համար գլուխը կախ, ներս կ'մտնե դռնեն, աղջիկները կ'տեսնին՝ որտեղ մտավ, կ'վերադառնան, կուգան այդ աղջկան կըսեն, թե՝ այսինչ, այսինչ տեղը մտավ:

—Դե որ էդպես է,—կըսե,—մի չամադան լավ ուտելիք կլեցնեք, մի չամադան էլ խմիչք: Կ'պադրաստեք, գիշերվա ժամը տասնէրկսից հետո մենք պիտի էրթանք էդ տղի մոտ:

Պիտի գան տղի գաղտնիքը գտնին: Կելնին կուգան էդ ժամին: Պատուհանը կը ծեծեն: Արդեն տղեն ու պառավը քնած են: Չուլ-մուլ իրենց համար կուջուխ ըրել: Պատուհանը որ կ'խփեն, պառավը զարթուն էր, ձեն կուտա.—Ո՞վ է:

Տղեն կ'զարթնի, անմիջապես կասի.—Մայրիկ, լուսամուտը կծեծեն, հլա նայե:

Կելնի կաշի, որ էրկու հատ հագած-կապած սիրուն աղջիկներ՝ մեկը մյուսից լավ: Ինքն էլ ջահել տղա:

—Գիտե՞ք՝ ինչի ենք եկել,—կըսեն:

—Ես ի՞նչ գիտեմ, ինչ եք եկել:

—Դու էսօր թագավորի աղղջկան հարցեր ես տվել, չի կարողացել պատասխանե, մենք եկել ենք էդոր համար քեզի մեծ շնորհակալություն հայտնելու, որ էդ լրբի պատճառով մենք բոլորս մնացել ենք ամուրի: Չենք կարող ամուսնանալ: Ազատ ենք մնացել: Հիմիգ ադիգ եկել ենք քեզի հետ մեկ-մեկ բաժակ բան խմելու, քեզի հետ ժամանակ անցկացնելու:

Էդ տղեն էլ, որ աղջիկներուն կ'տեսնի, խելքը գլխեն կէրթա: Ջահել տղա... անմիջապես ներս կ'բերե, սեղան կ'բանան: Տղին չայու բաժակով լցնեն, կ'խմցնեն, կ'խմցնեն, տղի խելքը գլխից կառնեն:

—Դե,—կըսե,—արդեն ժամանակն է, էլեք գնացեք, մենք բդի հանգստանանք:

—Է՛,—կըսե,—հո՛ւր էրթանք էս ժամուն: Գնացինք, մեզի ղաչըղները կ՚բռնեն, մնանք լուսանա, նոր կ՚էրթանք:

Էս էրկու աղջիկները՝ նաժիշտները, կ՚պառկեն պառվի քովը, էս քաղաքագլուխի աղջիկը՝ մերկ բոլորովին, կչփլաղանա, կմտնի տղի ծոցը:

Ջահել տղա է: Բամբակն որ դնես կրակի ղրաղն, ի՞նչ կեղնի: Հա կբռնկվի՝ աղջիկը չի մոտենա, կըսե.—Տղա ջան, ես քուկդ եմ, տու իմս ես, միայն ասա՝ ինչ ըսիր էդ աղջկան, որ չկարողացավ քեզի պատասխանի, էդ էրկու բանն ըսա, ես՝ քեզի, դու՝ ինձի:

—Տո,—կըսե,—ի՞նչ է, հասարակ բան է: Էդիկ ես եմ էղե: Հորս ծախի մի ձի՚մ առա, մորս ծախի՝ մի էրկու շոր առա, մի հատ նամակ էին տվել ինձի, շինեցի ծրար, դարձրի երեք անկյունանի, ջուր խմեցի, կենդանացա: Եթե ոչ, ինձի պիտի սպանեին:

Էդ խոսքի վրա քիչ մը կ՚լկրտվեն-բան, տղեն կքնի, աղջիկը նաժիշտներուն ձեն կուտա՝ «Ելեք»: Կելնեն ու կէրթան:

Տղեն առավոտ կարթնանա... էն ժամանակ ախր... իհարկե ձեր օրով չի էղե, մեր օրով եղել է: Բոլոր՝ թե՛ գյուղացի, թե՛ քաղաքացի շորերը որ կհանեն, բարձի տակը կ՚դնեին: Որովհետև ո՛չ աթոռ կար, ո՛չ սեղան կար, ո՛չ բան, կ՚դնեն գլուխներու տակ, առավոտ կելնեին, կհագնեին: Էդպես էլ տղեն, աղջկա հետ որ շորերը հանել են, դրել էդտեղ, նույն դրությամբ իրար հետ քնել են:

Առավոտ տղեն կելնի, կաշի, որ աղջիկները չկան: «Վա՛յ,—կըսե,—պրծավ իմ հաշիվս, սրիգաները եկան գաղտնիքը առան, գնացին»: Շորերը հագնելու ժամանակ կաշե, որ աղջկա փոխանը մնացել է էդտեղ: Վռազնալուց թումբանը չի հագել: Էն վախտ տռուսիկ չկար, թումբան էր: Կվերցնե կըսե. «Էսօր իմ բաժին բախտը կա՝ էս է, չկա՝ էս է: Եթե ոչ՝ էսօր իմ կյանքի վերջն է»:

Կփաթթե թղտի մեջը, կզարկե մի կողքի տակը, կելնե կէրթա: Տղան կէրթա:

Թե.—Տղա, եկա՞ր:

—Եկա:

—Հաց կերել ե՞ս:

—Հացը ուստ ուտեմ, սաղ գիշեր թողել ե՞ն, որ հաց ուտեմ: Իրեք հատ աղջիկ էին էկել, չգիտեմ՝ ով էին, ով չէին, սաղ գիշեր զանիտ էրեցին,—կըսե, եկել եմ տեսնեմ՝ էսօր վերջս ինչ կեղնի:

—Ախճիկ ջան,—կըսե,—պադրաստ ե՞ս տղին պատասխանելու:

Թե.—Պադրաստ եմ:

—Դե,—կըսե,—ասա:

—Տղա,—կըսե,—էն դու չէի՞ր, որ հորդ ծախիր՝ հեծար:

Կըսե.—Ես էի:

—Դո՞ւն չէիր, որ մորդ ծախիր՝ հագար:

Կըսե,—Ես էի:

—Դո՞ւն չէիր, որ նամակ-թասով ջուր խմեցիր, կենդանացար:

—Ես էի:

—Ճիշտ է՞, տղա:

—Ճիշտ է,—կըսե:

—Հիմա կռնամ,—կըսե,—գլուխդ զարկեմ:

Թե.—Մի հարց՚մ էլ տամ, նոր գլուխս զարկի: Սիրելի ժողովուրդ, հավաքվածներ, մի որոպե լսեք: Ես որսորդութուն սիրող մարդ եմ, վաճառականի տղա եմ: Դուրս եմ եկե անտառը՝ որսոդութան: Իրեք հատ աղունիկ խփեցի (էդ իրեք աղջիկն են, գիտե՞ս): Իրեք հատ աղունիկ խփեցի, բերեցի փետուրները պոկի, դրի գալի մեջը, պիտի գալ մտցնեի, որ ուտեի, փետուրները մնաց, իրանք թռան:

Տռուսիկը պահած էր չէ՞, թումբանը: Թևի տկից հանեց, ըսավ.—Էսիկ քո աղջկա թումբանը չէ՞:

Աղջիկը փեշերը վեր քաշեց, տեսավ, որ չփլաղ է:

—Հա,—ըսավ,—էդիկ իմս է:

—Դե հիմա գնացեք, կյանքը իրար հետ վայելեցեք:

Քաղաքագլուխն է ասում:

35(35). ԶԱՐԳՅԱՐ ՄՈՒՐԱԴԸ

Ժամանակոց էղնմ, թե չի էղնմ մե մառտ՚մ ու մե կնիգ՚մ են էղնմ: Մառտը էղնմ է զարգյար: Կնիկն էլ շատ աննման, տեսկով կնիգ է էղնմ, օր տեսնողը մե անկամից բտի չաշեր: Ըսմ են, օր մե անկամից աշեր արևի պես աշկերի լուսը գպակսեր: Մառտը վախենալուծ օխտը աշկը նեսով նստծրել էր, օխտը դուռ վրեն փակել էր,

օր չեղնի թե դուշմնուտեն էնեն, կնկան տանին: Առավոտ օխտը դուռը վրեն փակմ էր, էրտմ էր, իրկուն օր գալմ էր բանալու, մեկ բան'մ էր, մեկ ձեն էր տալմ.—Կնիկ, կնիկ, կնիկ,—ըսելով հասնմ էր վեռճի դուռը:

Օր ըսմ էր՝ կնիկ, կնիկ, կնիկն ըսմ էր.—Մառտ գժվմ՛ր:

—Տո կնի՛կ, հեչ այ ու երկուղը սռտես չի էլնմ: Ինչղ օր գիլու այը օխճրի սիրտն է, էման էլ քու այը իմ սիրտս է: Վախենմ եմ դուշման մառտիկ գան տանին:

—Մի՛ վախենա,—ըսմ էր կնիկը,—ընձի տանող չկանի:

Էդման այով ու դողով ապրան մե վախտ'մ: Օրից օր'մ էլ խաբարը գնաց, հասավ Քաչալ թակավորին, թե.—Թակավոր, դու թակավոր ես, ֆլան զարգյարի պես սիրուն կնիկ չունիս:

Թակավորն ըսավ. «Ի՞նչ էնեմ, ի՞նչ չէնեմ, օր ես էդ կնկան բերեմ»:

Թալալը քցեց քաղկի մեճը.—Իշկան օր փափաղ բռնող, ծեր ու ջայել, փետ բռնող մառտ կա, թող գան թակավորի մեյդանը:

Էլան ծեր ու ջայել, սաղ ու հիվանդ, անկ ու տլանգ, սաղ թոփ էղան, էկան թակավորի մեյդանը: Թակավորն ըսավ.—Վով օր գնաց ֆլան զարգյարի կնկան բերավ, ես ընդուրը իրան քաշով, կշռով օսկի կուտամ: Վով օր կռնա, թող առաջ գա:

Մեկ էլ տեսավ մե ջայել, ղոչաղ տղե'մ էկավ առաջ: Ըսավ.—Ես կերտամ:

—Կերտա՞ս:

—Կերտամ:

—Լա՛վ:

Բավականին բերավ ընդուրը ճամպու ծախսլղ տվավ: Ընդեղ ինչ բտի էներ, ինչ բտի ծախսեր, էդ տվավ: Լավ ձի'մ էլ տվավ, դրավ ճամպու:

Գնաց: Գնաց, գնաց, զօր ու գիշեր գնած: Վեռճապես մե օր'մ հասավ զարգյար Մուրադի քաղակը: Որ զարգյարի քովը էրտմ էր, նստմ էր, չուրի անունը իմանմ էր: Տեսնմ էր, օր էդի չէ, սուսուփուս էլնմ, էրտմ էր: Խուլասա, էդ օր շատ ման էկավ, չգտավ: Փոր, փոշման թողեց գնաց:

Մե օտաղ'մ քիրայեց, մնաց ըդեղ: Առավոտ ելավ էլի ըսկսեց քաղակի մեջը ման գալ: Էս զարգարի քովեն՝ էն զարգյարի քով, էն զարգյարի քովեն՝ էս զարգյարի քով, չուր հասավ մե զարգյարի'մ քով: Նստավ: Էնկան նստավ, էնկան, չուրի մուշտարիկն էկան: Ըսին-խոսածին, անունը տվին: Ըսավ. «Էս է, գտա»:

Էլավ, ըսավ.—Ուստա ջան, մուշտարիկդ շատ էին, չէի ուզմ քեզի խանկառեի: Դե հիմի էլ ընձի ջուղաբ տուր, ես էրտամ:

—Ըսա, ախպեր ջան, ի՞նչ ես ուզմ,—ըսավ զարգյարը:

Ըսավ տղեն.—Ես մե հատ'մ բողմաղ եմ ուզմ: Ահան օսկին, ահան հախդ: Հմը թեզ բտի էղնի: Մեկ էլ էնկան սիրուն, էնկան ծաղկուն, օր պեսը հեչ մե տեղ'մ չճարվի:

—Աշկիս վրա,—ըսավ զարգյարը:

Օսկին վերուց, տղեն թողեց գնաց: Իրկուն զարգյարը գնաց տուն: Էլի ամեն գալու պես դռները բացմ է ու ձեն է տալմ. -Կնի՛կ, կնի՛կ, կնի՛կ,—չուրի հասնմ է վեռճի դուռը:

Կնիկը նեսիծը ըսմ է.—Իա՛, իա՛, մառտ, գժվմ՛ր:

—Տո՛ կնիկ, ընչուրի ձեն չեմ լսմ, չեմ հավատմ, օր նեսն ես:

Դռները բացեց, կնկան տեսավ, հավատած, օր տունն է: Բերավ հաց կերան, ելան քնան: Առավոտ ելավ դռները փակեց, գնաց իրան գոռծին: Ըսկսեց բողմաղը շինել: Բողմաղն օր շինեծ պռծավ, խոսկ տված օրը տղեն էկավ բողմաղը տանելու: Բողմաղը սինու մեճը դրած օր բերավ, տղի խելկը գնաց: Աշկերը ղժիբժի էղավ:

—Ահա՛ն,—ըսավ զարգյարը,—տես գհավնի՞ս:

Տղեն վերուց աշեց, շտրկեց, վեր դրավ: Ըսավ.—Ի՞նչ ես շինել, օր ինչ հավնիմ: Էս էլ՝ քեզի, հախն էլ՝ քեզի: Հմը ա՛ռ էս օսկիկը, ջուխտ'մ էման բիլազուկ շինես, օր պեսերը հեչ չեղնի:

—Լա՛վ,-ըսավ զարգյարը:

Տղեն գնաց: Զարգյարն էլ էկավ տուն: Դռները բացեց: Էլի ձեն տվավ, գնաց հասավ վեռճի դռանը: Վեռճապես էդ օրն անծավ: Մյուս օրը ըսկսեց բիլազուկները շինել: Շինեց, պռծավ, ըսած օրը տղեն էկավ: Ըսավ.—Հա՛, ուստա, հա՞զր են:

—Հազր են:

—Բեր տեսնիմ:

Բերավ բիլազուկները՝ սինու մեջ դրած: Տղեն օր տեսավ, բերանը բաց մնաց, թե աջապ ըստուծ ձեռ չի՞ դիպե: Էսման էլ հունար էղնի: Մե

խոսկով՝ շատ հավնավ: Հմը էլի ըսավ.—Իմ ուզածս չեն: Էնդոնկ էլ քեզի, հախն էլ քեզի: Ա՛ռ էս օսկին, մի քյամար՝մ թապե: Հմը էման թապես, օր ես հավնիմ:

—Լա՛վ,—ըսավ զարգյարը, բիլազուկները դրավ ղրաղ, օսկին վերծրավ: Ըսին-խոսածին, էլան գնածին:

Զարգարն էլ իրան սովորականի, դռները բանալուց ձեն է տալմ՝ կնի՛կ, կնի՛կ, չուրի հասնմ էր վեռճի դուռը: Կնիկը նեսից ձեն էր տալմ, նոր խեղճ զարգարը սունճ ու սոլուղ է առնմ: Չէ, էդման այով ու դողով զարգարը քամարն էլ շինեց: Նշանակած օրն էկավ տղեն:

—Հա՛, ուստա, քամարը հա՞զր է, թե՞ հազր չէ: Բեր տեսնիմ:

Բերավ քամարը՝ սինու մեճը դրած: Տղեն տեսավ, աշկերին չհավատած, թե էսի ձեռով շինված է՞, թե՞ երկնկից իջած է: Խելկը բժժած, քիչ՝մ աշեց, հավասն առավ ու էլի ըսավ.—Էլի իմ ըսածը չէ: Էդ էլ քեզի, առածդ հախն էլ քեզի: Ա՛ռ էս օսկին, մե լավ սհատ՝մ իրան ժնջլով շինե: Հմը էման էղնի, օր հավնիմ, տանիմ:

—Հա, լա՛վ,—ըսավ զարգարը, քամարը դրավ տեղը:

Օսկին վերուց, էլան գնածին: Հմը էդ օրը զարգարը վերցրավ բողմաղը, բիլազուկները, քամարը, տարավ տուն: Էլի դռները մեկ բանմ էր, մեկ ձեն էր տալմ՝ կնի՛կ, կնի՛կ, չուրի հասնմ էր վեռճի դուռը:Վեռճի դուռը բացեց.—Կնի՛կ, կնի՛կ:

—Իյա՛, իյա՛, մառտ, խելռա՞ր: Ես հոս եմ, քու տունը շեն, ո՞ւր բտի էղնիմ ես:

Մառտը հասավ փաթթվավ կնկան, համպուրեց: Հանեց բողմաղը, բիլազուկները, քամարը, ըսավ.—Կնիկ, ըստոնկ բերել եմ քեզի հմար:

Կնիկն ըսավ.—Ինչի՞ն են պետկ, օր բերել ես ընձի հմար: Ես ո՞ւր եմ էրտմ, օր ըտոնկ ընձի պետկ գան: Էնկան կա, ի՞նչ բտի էնեմ, քցե ղուտիկը՝ մնա, ումը պետկ գուկա, թող գա:

—Չ՞է,—ըսավ զարգարը,—կնիկ, հլը քցե բուկդ, դիր թևերդ, կապե մեչկդ, տեսնիմ՝ լավ գսա՞զե:

—Է՛,—ըսավ,—ես հավաս չունիմ:

Մառտը շատ ըսավ, կնիկը չլսեց: Ելան իրանց հմար հաց կերան, ելան քնան:

Առավոտ զարգարը գնաց, ըսկսեց սհատը շինել: Խուլասա, սհատն ու ժնջիլն էլ շինեց, պռծավ: Ըսած օրը տղեն էկավ տանելու: Էլի զարգարը դրավ սինու մեջ, բերավ: Տղեն տեսավ, բժժավ: Էլի ըսավ.—Լավ վարպետ ես, հմը իմ ուզածի պես չես դուս բերմ, թող էդ էլ մնա քեզի: Ա՛ռ այտ հախն էլ մնա քեզի: Ա՛ռ էս օսկին իրեկ հատ օսկի մատնիկ շինե: Հմը էման շինես, օր հավնիմ, տանիմ:

—Հա՛,—ըսավ,—լավ:

Տղեն գնաց: Զարգարը վերուց սհատը՝ ժնջլով, առավ, գնաց տուն: Էլի ձեն տալով, ղալաբալաղ էնելով՝ դռները բացեց: Հասավ կնկա օտաղը:Կնիկն ըսավ.

—Չէ՛, դու գցնդիս, քու վատուտենեն:

Ըսավ.—Կնիկ, հա բտի քեզի բան՝մ ըսեմ ու մտհան եմ էնմ: Գիտե՞ս, մե լավ տղե՝մ է էկե մեր քաղակը: Էկավ իմ քովը, բազում օսկի կար քովը: Էդ բողմաղը շինել տվավ: Տեսնմ ե՞ս՝ ինչկան լավն է: Չհավնավ, թողեց ընձի: Հախն էլ զատի տվել էր: Էլի թողեց ընձի նորից էդ բիլազուկները, էդ քամարը: Ահան, էսօր էլ սհատը, էլի չտարավ, ըսավ՝ մնա քեզի: Թաժադան էսօր մատնիկ տվավ շինելու: Ըստոնկ սաղ բերել եմ քեզի:

—Աա՞հ,—ըսավ կնիկը,—ինչի՞ս են պետկ: Ես ո՞ւր եմ էրտմ, օր զառտարանկն ընձի պետկ գա: Քցե ընտեղ թող մնա: Ում պետկ գուկա, թող գա:

Էդ օրն էլ անցավ: Զարգարը մատնիկներն էլ շինեց: Էկավ տղեն: Տեսավ, հավնավ ու ըսավ.—Չէ՛, ընձի պետկ չէ, մնա քեզի: Ա՛ռ էս օսկին մե ջուխտ՝մ էման անգջուղ շինես, օր հավնիմ տանիմ, հա՞: Չեղնի բառադիա բան շինես, հա՞:

Տղեն գնաց: Զարգարն առավ մատնկներն գնաց տուն: Հելաղմատով դռները բացեց, հասավ կնգան: Էլի կնիկը վրեն նեղեծավ:

Ըսավ.—Կնիկ, էլի էն տղեն էկավ մատնկները չտարավ: Տվավ ընձի: Ահա՞ն, բերել եմ քեզի:

—Ահա՞,—ըսավ կնիգը,—քցե ընդեղ մնան: Ընձի պետկ չեն:

Էդ օրն էլ անցավ: Զարգյարը անգջուղներն էլ շինեց, պռծավ: Տղեն էկավ, տեսավ էլ չէր ուզմ ձեռեն վերցներ: Ըսավ.—Չէ՛, վարպետ, վեռճը չկռծար ընձի հավնծնեիր: Էդոնկ էլ մնան քեզի,—ըսավ տղեն, ելավ գնաց: Զարգյարն առավ անգջուղները գնաց տունը: Բացեց, ձեն տալով ըսավ.—Կնի՛կ, կնի՛կ:

Կնիկն ըսավ.—Յա՛ դու բտի ցնդիս, յա՛ ընձի բտի ցնդծնես:

Ըսավ.—Կնիկ, հլը էս անգջուղներին տես, օր էդ շան ոռտին չհավնավ: Էլի թողեց ընձի գնաց: Ես էլ բերի քեզի հմար:

—Ինչի՞ս են պետկ, քցե ընտեղ մնան, հլբատ օր'մ պետկ գուկան:

Դառավ մառտին ըսավ.—Ա՛յ մառտ, էդ մառտն օր ղարիբ, անծանոտ մառտ է, էդկան լավուտեն էրել է քեզի, բա դու մե օր'մ ըսես՝ ա՛յ մառտ, էրտանկ տունս մե թիկե'մ հաց կտռես: Խո մե թիկե'մ հացը մառտու չի ավերե: Էնի քեզի միլոնի'մ ապրանկ է թողե:

Մառտն ըսավ.—Կնիկ, լավ ես ըսմ, հմը քեզնեն եմ վախենմ:

Ըսավ.—Ընձեն ը՞նչ'ես վախենմ, ընչի ես օժար չեմ էղնի՞:

—Չէ՛,—ըսավ զարգյարը,-վախենմ եմ քեզի տեսնի:

—Է՛,—ըսավ,—տեսավ՝ տեսավ, ի՞նչ էնենկ, համ էլ ընձի՞ ընչի բտի տեսնի: Ես ամեն բանը գհազրեմ, սեղանը գը բանամ, գմտնիմ իմ օտաղս: Ձեզի հմար կերեկ-խմեկ:

—Կե՞ղնի, կնիկ:

—Ընչի՞ չի էղնի, շատ էլ լավ կեղնի,—ըսավ կնիգը:

—Լա՛վ, էդման կենենկ, կնիկ, օր ըսմ ես:

Առավոտ գնաց գոռծի: Տղեն էկավ, բարև տվավ, բարև առավ: Ըսավ.—Վարպետ, սովրա գալն ու գնալը, խո չե՞ս նեղենա:

—Չէ՛,—ըսավ զարգյարը,—դհա ուրախ եմ, օր միշտ էլ գաս-գնաս:

—Շնորակալ եմ,—տղեն ըսավ,—հմը ուզմ եմ էրտամ:

Զարգյարն ըսավ.—Էգուց դու իմ ղոնախն ես, ընդից ետև դու գիտես, գուզես գնա, գուզես մնա:

—Հա՞:

—Հա՛:

—Լա՛վ,—ըսավ տղեն:

Մեկել օրը տղեն էկավ զարգյարի քովը, իրար հետ էկան տուն: Հմի խեղճ զարգյարը չիդե, թե ինչ էնե. ձեն տա կնգան տղեն է հետը, թե ձեն չտա, վախենմ է կնիկը տունը չեղնի: Չէ, մե կերպ'մ համպերեց: Դռները բացեց. Նես գնածին, տեսան սեղանը բածած: Ամեն ինչը դրած-հազրած: Կիրակուլի անուշ ֆոտն էլ աշխարկն է բռնե: Նես մտան: Նստան: Զարգյարը չդիմածավ, գնաց կնգան տեսավ, օր նեսն է, նոր արխեին էկավ նստավ:

—Դե՛, ախպեր ջան, հաց կեր,—ըսավ ղոնախին:

Ղոնախն ըսավ.—Ես քու հացդ չեմ ուտե:

—Ընչի՞, ախպեր ջան: Ի՞նչ եմ էրե քեզի:

Ըսավ.—Էլ ի՞նչ բտի էնես, խո ծեծելու էլ չես: Ընձի բերել ես, նստծրել ես սեղանիդ վրեն, ես էսման սեղան չեմ տեսե: Ո՞ւր ա քու գեռդաստանդ, ո՞ւր ա սեղան բացողը, կերակուլդ էպողը, ը՞նչ'ես թակծրե: Ես մառտ եմ, խո մառտ ուտող չեմ, օր քու գեռդաստանդ պայմ ես:

—Տո՛, ես իմ աստված, իմ արև, իմ հոգին, ես գեռդաստան չունիմ, էս գամ, էն էրտամ չունիմ:

—Չէ՛,—ըսավ,—օր չունիս ես էլ քու հացդ չեմ ուտե:

Զարգյարը տեսավ, օր չի էղնմ, գնաց կնգան ըսավ.—Կնիկ, դու քու աստված, հինմին շորեր հակի, արի մե քիչ'մ պտտվի, թող արի, բալկի էդ մառտը հաց ուտե, թե չէ ամոտ բան է, օր մեր հածը չուտե:

Կնիկն հակավ հասարակ շորեր: Առանց զառտարվելու էկավ բարևեց, հմը օրով առաջ տղին ըսել էին, օր գուկա մե անկամից չաշես երեսը: Էնկան սիրուն է, օր ետե մեկեն մեկ աշես էրեսը, ուշկդ կերտա, գմնաս տեղդ ընգած:

Կնիկն օր էկավ բարևելու, տղեն աշկը քցեց ոտերին: Ոտներից աշեց հարի գլոխը, օր աշկը քցեց երեսը, բժժավ, անջաղ իրան պայեց: Կնիկը գնաց: Ընդոնկ յանի հաց կերան-խմին, հմը ի՞նչ ուտել, ի՞նչ խմել: Տղեն իրան կոռծնմ էր: Էլան էրտլու:

—Ո՞ւր ա տիկինն, ո՞ւր ա, մնաս բարով ըսեմ:

Ճարը կտռած, զարգյարի, կանչեց բերավ կնգան: Տղեն աշկը քցեց կնգա երեսը, ձեռ տվավ՝ մնաս բարով ըսելու: Ձեռը սխմեց: Էլ չէր ուզմ ձեռը թողեր: Չէ, մե կերպ իրան զսպեց: Շնորակալ էղավ, գնաց: Էդ օրն էլ չհամպերեց տղեն: Քանքանջուն կանչեց, ըսավ.—Ի՞նչ կառնիս ու իշկան վախտվա կռնաս քանդես թոնել չուրի զարգյար Մուրադի տունը:

Ըսավ.—Էսկան կառնիմ, չուր կեսգիշեր գհասնիմ զարգյար Մուրադի տունը:

Ըդուր գլոխը կտռեց, կործրավ: Կանճեց ուրիշ փորող, ըսավ.—Իշկամն վախտվա կհասնիս չուրի զարգար Մուրադի տունը:

Ըսավ.—Իրեկ սհատվա:

Ըդուրն էլ կործրավ: Կանճեց մեկելին ըսավ.—Ինչկան կառնիս և իշկամն վախտվա գհասնիս զարգար Մուրադի տունը:

Ըսավ.—Տաս մանետ կառնիմ, սհատ ու կիսվա գհասնիմ:

Ըսավ.—Ա՛ռ տասնհինգ մանետ, թե՛զ էրա, քանդե:

Քանքանջին ըսկսեց փորել, ինկը հողը դուս կրել: Կատոլով կրմ էր, փեշով կրմ էր: Տեսնում էր, օր չի հասծնմ, շապխով էլ կրմ էր: Վեռճապես, չանծավ սհատ ու կես, հասան զարգյար Մուրադի տունը: Թխկթխկալեն օր զարգին, կնիգը վեր թռավ վախեծած:

Չէ, տախտը ծակին, դուս էլան տանը մեջը: Կնիգը խառվավ իրար: Տղեն ըսավ.—Մի՛ վախենա, ես եմ:

Լաղումջին ձեռած ղապանգը շինեց դրավ բերնին: Կնիգը խալին քցեց վրեն, նստավ: Իրա քարգան է էնմ: Իրկուն, էլի մառտն էկավ, ղալաբալղով: Կնիկը նեղեծավ, ըսավ.—Կնիկ, մի՛ նեղենա: Ես գիտեմ, թե քեզի ընձեն խլմ են:

Ըսավ.—Լավ չես էնմ մառտ, լավ չես էնմ: Դու էնկան վախկոտ ու շկբար ես, ես էլ ինչ կյանկ բտի ունենամ:

—Ինչ էնեմ կնի՛կ, դու օր էտկան սիրուն ես, ես բտի վախենամ ու վախենամ:

Առավոտ մառտը գնաց իրան գոռծին: Մեկ էլ թոնելից տղեն էկավ: Թխկթխկցրավ: Կնիկը էլավ, խալին վերուց, ղապանգը բացեց, տղեն էլավ: Էկան նստան, ըսին-խոսածին: Տղեն ըսավ.—Գիտե՞ս ես քեզի բտի տանիմ:

Կնիկն ըսավ.—Ինչղ թե տանիս:

—Տանիմ, ինչղ տանիմ:

—Բա իմ մառտը:

—Մառտդ թող մնա հոս, էղամ: Էս մե տարի՝ ես ըստեղ քաշ եմ գալմ քեզի համար, օր տանիմ: Ես էս շապտին բտի մառտիդ տանիմ իմ տունս, դու լավ գհակնիս, իշկան օր զառտարանկ եմ թողե մառտուդ, սաղ գլծես վրեդ, գուկաս իմ տունս: Մեզի համար ազատ հաց ու ջուր գբերես: Ահա, ըսմ եմ, չեղնի չեմ-չում էնես:

—Լա՛վ,—ըսավ կնիգը:

Տղեն գնաց, թատարուկը տեսավ, էկավ զարգարին ըսավ.—Էգուց դու ու տիկինդ իմ միսաֆիրն եկ:

—Չէ՛,—ըսավ զարգյարը,—ես գուկամ, ըմը տիկինը չի գա, պարապ չէ, գոռծ շատ ունի:

Տղեն մտկի մեճն ըսավ. «Զատի ես էլ էդ գուզեյ»:

—Լա՛վ,—ըսավ տղեն,—օր տիկինդ չի կռնա գա, դու մինակ արի:

—Գուկամ,—ըսավ զարկարը:

Խուլասա, նշանակած օրը էկավ տղեն, հակծրավ, կապծրավ, իշկան զուկս ու զինար կար լծեց վրեն: Կնիգը էղավ մի հուրի մալաք: Մտան թոնելը, գնացին տղի տունը: Կնիկն ըսկսեց էպ ու թապը: Տղեն գնաց զարգյարին կանճելու: Կնիգը առտեն ամեն ինճը հազրեց, պոռծավ: Սեղանը բաժեց, ինքը ընտեղ կայնավ: Մեկ էլ զարկարն ու տղեն էկան: Զարգյարը տեսավ՝ զարմածավ, ըսավ մտկի մեջ. «Էս իմ կնիկն է, ըստեղ ինչ բան ունի: Թե՞ իմ կնիգս չէ, ախր որ մեկին չհավատամ: Դրուֆն իմ կնգանն է, բողմաղն իմ շինածը, բիլազուկները, քամարը, մատնիկները, անկջուղները, մե խոսկով բոլորը իմ շինածներն են: Տեսնիմ ու չավտնամ: Որի՞ն չավտնամ, հա իմ կնիկն է՞, թե՞ իմ կնիկը չէ»:

Խուլասա, խեղճը հարամ-զարամ բռտուճը առավ, կերավ, էնել սրտին կայնավ, բտի խեխտվեր: Անջաղ էլավ, գնաց: Չուրի զարգյարը ճամպեն կես էղավ, կնիգն թոնելով գնաց: Վրեքեն հանեց շոր-մոր, օսկի-առծատ, դրավ տեղերը, խալին քցեց ղապանգի վրեն, նստավ արխեին իրան քարգան էր էնմ: Մառտը դռները բանալով, ձեն տալով՝ «Կնի՛կ, կնի՛կ, կնի՛կ», կնիկը նեսից ձեն տվավ.—Իյա՛, մառտ, ինչ էղավ քեզի, խո չխելռմ՞ր:

—Տո չխելռա, բա ինչ էրի: Ա՛յ կնիկ, էսօր են տղեն էկավ, ընձի ըսավ՝ էսօր դու ու քու խանմդ իմ խոնախս եկ: Ես վախեծա քեզի չտարա: Հմը տեսած տի էղնեի, օր քեզի տանեի, էտքան չէի վախենա: Կնիկ, մե քեզի պես սիրուն, նխշուն, աննման կնիկ՞մ կար, իսկը՝ դու: Էն իմ շինած բողմաղը, քամարը, բիլազուկ-անկջուղները, մատնիկները, սաղն էլ իմ բերածներն վրեն լծած էր: Ես ըսի սաղ դու էիր: Հա՛, կնի՛կ, դու չէի՞ր, չէ՞, ջա՛նմ, դու էիր, ես սխալ չեմ, դու էիր:

—Ա՛յ մառտ, խայալով ես էղե, յա աշկիդ է էրևածե: Ախր ես ընտեղ ինչ բան՞մ ունիմ, օխտը դուռ վրես փակմ ես քու ձեռով: Գալմ քու ձեռով

բանմ ես: Էս չոռս պատից դուս, բան չեմ լսմ ու տեսնմ:

Ավտծրավ մառտուն, օր ես չեմ: Մառտն էլ ավտծավ: Առավոտ էլավ գնաց աշխատանկին: Տղեն էկավ թոնելից, ըսավ.—Էլի հազրվի, օր էրտմ ենկ:

Կնիկն էլավ, հակավ, կայնեց: Զուկս ու զինարը լծեց վրեն: Ղապանգը դրավ, մտավ թոնելը, ղապանգը դրավ, խալին քաշեց ղապանկի վրեն հարմարծուծ: Ընկավ տղի ետևեն, գնաց տղի տունը: Տղեն գնաց ըսավ զարգարին.—Վարպետ, մենկ էրտմ ենկ, արի մեզ աղուհաց հալալ էրա, ճամպու դիր, մենկ էրտանկ:

Զարգյարը գնաց տեսավ, օր էլի իրան կնիգը հոդ է: «Ձանմ, իմ կնի՞կն է, իմ կնիկս չէ, իմ կնի՞կն է, իմ կնիկը չէ»,—ըսելով տարավ քաղկեն հանեց: Մնաս բարով, գնաս բարով ըսեցին, ընդոնկ գնածին:

Զարգյարը ետ դառավ տուն: Դռները բանմ է ու ձեն է տալմ.—Կնի՞կ, կնի՞կ:

Կնիկ չկա: Դես է զարկվմ, դեն է զարկվմ: Բացեց, քանդված տեղ չկա տան մեջ: «Ո՞ւրտից է գնածե, աջա՛բ»,—մտածմ է զարգյարը ու խալին եդ է տանմ, տեսնմ է ղապանգը: Էրտմ ղուտիկը աշմ, տեսնմ է՝ զուկսն էլ չկա: Մտնմ է թոնելը «Կնի՞կ, կնի՞կ» բոռալով, ճվալով վազմ է տղի տունը: Դուս է գալմ, մե էրկու անկամ վազմ է թոնելի էս գլոխ, վազմ է էն գլոխ, սիրտը պատռմ է, մնում է թոնելի մեջը: Թող էդի մնա թոնելի մեջը, մենկ խաբար տանկ գնածողներից:

Տղեն, օր երկան ժիրուտենով կնգան տարավ, կնիկը ըսավ. «Ձանմ, էսի էսկան ժիր տղա է ու էրևմ է, օր էսի ընձի իրան հմար չի տանմ, յավաշ, հլը հառծնեմ»: Ըսավ.—Տղա՛, դուզն ըսա, ընձիկ ո՞ւմ հմար ես տանմ:

Տղեն ըսավ.—Քեզի տանմ եմ մեր թակավորի հմար:

Ըսավ.—Չեմ գա, թե քեզի հմար ես տանմ, գուկամ, թե ուրիշի հմար ես տանմ, չեմ գա:

—Ախր, խոսկ եմ տվե:

—Խոսկ-մոսկ ես չիդեմ: Չեմ գա:

—Է՛,—տղեն ըսավ,—դհա լավ, դու օր ընձի գուզես, ես էլ քեզի գուզեմ: Չերտանկ մեր երկիրը, կերտանկ ուրիշ երկիր: Ըտեղ խոսկ տվին, առան, ձիանու գլոխ դառծրին դիպա ուրիշ երկիր, գնածին: Հոն ապրան ուրախ, զվառտ: Հլը ապրմ են ու էլի կապրին, քանի աշխարկը շեն է;

Ընդոնկ հասան իրանց մուրազին, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին: Տերտերի բաղից քանի՛մ հատ խնձոր գար, հա՛մ մենկ ուտեինկ, հա՛մ հեկյատ ըսողը, հա՛մ լսողը, հա՛մ էլ հեկյատ կապողը:

36(36). ԳՈՂՈՒՏԵՆ ԿԷՆԵՄ՝ ԽՂՃՈՎ ԷՐԱ*

Կեղնի, թե չի էղնի, մի ախկատ, քյասիբ գեղածի մառտ՛մ կեղնի: Էդ մառտը էնկան հալալ է, էնկան աստվածավախ է, օր պեսը չկա, հեչ հարամ ապրուստի աշկ ու թամայ չունի: Դրկծի մալին, ապրուստին չի նախանձվմ: Միշտ բարին է կամենմ, հմը քանի դատմ, աշխատմ, էնկան քյասիբնմ է: «Ձանմ,—ըսավ,—բոլ չէ՞ ես ընկնիմ էս հալալուտենի ու առտարուտենի եդևեն, ես բտի էրտամ գողուտեն էնեմ, թալան-թրաշուտեն էնեմ, բերեմ իմ էրեխեկս ու իմ գերտասստանս պայեմ: Բոլ է էսման նեղուտենով ապրինկ»:

Ելավ, օր բտի էրտա յանի գողուտեն էնե, ըսավ. «Յավաշ, էրտամ տերտերին հառծնեմ, տեսնիմ՝ ինչ կսե, նոր էրտամ»:

Գնաց տերտերին ըսավ.—Տերտեր, հլը բեր աստվածաշունճը, բեր կարտա, տեսնիմ՝ ի՞նչ է ըսմ:

Բերավ տերտերը աստվածաշունճը, կարտած, օր գրված է. «Հալալ դատի, հալալ կեր, գողուտեն մի՛ էրա, թալան-թրաշուտեն մի՛ էրա, մառտաբսպանուտեն մի՛ էրա՝ խսմատդ անպակաս կեղնի»:

Ինչ օր տերտերը կառտած ու ըսավ, էդ մառտն ըսավ՝ սուտ է: Ինչ օր ըսավ, ըսավ՝ սուտ է:

Տերտերն ըսավ.—Օռշնած, ասու կամկին մի՛ հակառակվի:

—Չէ՛,—ըսավ,—տերտեր, ես բտի էրտամ, հա՛մ գողուտեն բտի էնեմ, հա՛մ թալան-թրաշ բտի էնեմ, հա՛մ էլ մառտաբսբանուտեն բտի էնեմ:

—Ա՛յ օխնած,—ըսավ տերտերը,—սատանի ձին ես հեծե՞, չարի մի՛ անգաջ էնե: Ապսոս ես, մեխկ ես:

Ըսավ.—Տերտեր, դու գիտես, օր ընձեն էլ հալալ, առտար մառտ չի էղնի:

—Հա՛,—ըսավ տերտերը:

—Բա ընչի՞ հեչ հալի չեմ հասնմ: Ո՛նչ ցանածս է ծլմ, ո՛նչ աշխատանկս է բարաքատ տալմ: Ի՞նչ էնեմ, օր գողուտեն չենեմ: Բա ինչո՞վ պայեմ էրեխանծս:

Տեսավ տերտերն, օր էս մառտու ըսածը տեղին է, ըսավ.—Օխնած, առաճինն, օր ապսոս ես, քու դուզ ու առտար ճանապարհից մի՛ էլնի: Հմը օր ելնմ ես գոյնե գողուտուն, թալանուտեն կենես, խղճով էրա:

Ըսավ.—Գողուտենի խղճովը ո՞րն է:

—Գողուտենի խղճովն են է, օր իրան ճակտի քռտնկով թոպ էրած ապրուստը, իրանց հալալ դատումը իրանց ձեռնեն չխլես: Էդի կեղնի խղճով:

—Չէ՛,—ըսավ,—ես, օր գնածի, էլ խիղճ-միղճ չիդեմ, ռաստ գալածը գզարկեմ, գկտռեմ, գթալնեմ բերեմ:

—Է՛,—ըսավ տերտերը,—չար թշնամուն մի՛ զոյ գնա: Թքե չարին: Չար ճանապարից դառծ արի:

—Չէ՛, օր ըսել եմ՝ ըսել եմ, ես խիղճ, բան չիդեմ:

Եկավ տուն, մի ժանգոտ խանչալ՚մ կախեծ կողկեն, փեդ՚մ առավ ձեռն, հաց՚մ զարգեց ղոլտուղն ու գնաց: Գնաց, գնաց, տեսավ մե սարի՚մ դոշի հետ մի սուրն՚մ օխճար էն առծմ, ըսավ. «Էս ինչ լավ էղավ, ըստից կտռեմ՝ մե տասը հատ, տանիմ, ըշտը, երեխեկս կապրին էլի»:

Մտածեց մառտն ու մտավ էս քարի տալդեն, էն քարի տալդեն, տապետապ գնաց: Օխճարը տեսավ՝ բռ էղավ: Փախան լցվան ձորը: Չոբանը տեսավ, մտածեց. «Էս վախտ, էս օխճարը ընչի՞ խառնվավ», ու աշեց դես ու դեն տեսավ, օր մի մառտ տապետապ գալմ է դբա իրան օխճրին, վախենմ է, խառնվմ է իրար, լիզուն կապ է ընգնմ:

Գալմ է էդ մառտը սիրտ է տալմ ըսմ է.—Տեսնիմ գվախենմս, հանակ էրի.—ըսավ մառտը:

Չոբնին թողմ է ըդեղ, էրտմ է օխճարը թոպ է էնմ, բերմ է չոբնի քովը: Չոբանը ըսմ է. «Էս մառտը անոտի կեղնի, քիչ՚մ կատ կտեմ, բերեմ թող ուտե, մեխկ է»: Բերմ է կատ է կտմ, հացը բռտմ է, ըսմ է.—Ախպեր ջան, արի հաց կեր:

Էդ մառտն էլ մտածմ է, ըսմ է. «Լավ ըստեղ վախենմ է, թող տանի տուն, կերտամ գիշերը տնեն գտանիմ, բա էսի էսկան ունենա, ես հեչ չունենամ: Աստված ի՞նչդ է ղաբուլ էնմ:—Դառավ ըսավ,—յավաշ, հառծնեմ, տեսնիմ՝ էս քուլի իրանն ե՞ն, թե՞ ուրիշի է»:

Ըսմ է.—Ա՛յ մառտ, զարմանալի մառտ ես, դու օր էսկան օխճարը ունիս, ըստուր գյորա էլ ուրիշ ապրուստ, մալ, օխճար կունենաս, դու ը՞նչ՚ես չոբանուտեն էնմ, օր բան՚մ էղնմ է, վախենմ ես: Լեզուդ կապվմ է:

—Հը՞, հը՞,—ծիծաղած չոբանը, ըսավ,—ախպեր, էսկան օխճար ընձի ուրտի՞ց էղնի: Էսկանից հինգը մեկինն է, տաս-քսան-եռսունով մե ուրիշին՚մ է: Բերմ եմ գարնանից պայմ եմ, չուրի աշունկ, որը փող է տալմ, որը՝ ցորեն, գարի տալմ, որը գառ՚մ է տալմ, տանմ եմ երեխեկս պայմ էմ, չուրի գարուն: Էլ նորից թոպ էնմ, բերմ էդմանով գերտաստան եմ պայմ:

Էս օր լսեց, գողուտեն էնող մառտը, տեղեն էլավ, ըսավ.—Քու հացդ չի ուտվի, քու հաց ուտողը մեղկի միջ գկորի: Ես էրտամ հեռենամ: Ես ըսի մինակ քու օխճարն էր, կտռեի մե տաս, քսան հատ, տանեի էրեխեկս պայեի, նեղուտենեն պռծնեի:

—Չէ՛,—ըսավ չոբանը,—ախպեր ջան, իմը չէ, գեղինն է: Արի նստի հաց կեր, նոր գնա:

—Չէ՛,—ըսավ,—չեմ ուտե քու հացը,—ճամպեն տվավ առաջ ու գնաց:

Շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը ինկն էլ խաբար չեղավ: Մուտը տվավ վրա: Ինկը ճամպա ընկած՝ էրտմ էր: Մեկ էլ տեսավ ճամպու վրեն ղարալտուկ են էրևմ: Գնաց մոտեծավ ըսավ. «Ի՞նչ էնեմ բարև տամ, վայտե ավազակներ էղնին, ավազակ մառտուն բարևը ապսոս է տալը, թե չտամ, վայտե նեղենան, ընձի վնասեն: Ի՞նչ էնեմ, ի՞նչ չենեմ, էլի բարև տալն է խեր»: Մտածեց մառտն ու առաջ գնաց: Տեսավ հինգ հոկի ճամպու մե դինն են կայնե, վեց հոգի մե դինն էն կայնե: Ինկն էլ կայնավ միջտեղը: Բարև տվավ: Բարևն առան:

Հառծրին.—Ի՞նչ մառտ ես:

—Մառտ եմ էլի, ընձի համար:

—Մեզի հնգեր չե՞ս էղնի:

—Կեղնիմ:

—Դե օր կեղնիս, կայնի էն հինգ մառտու կոխկը, մե հնգեր՚մ պակսմ է, լավ է, օր դու էկար,

թմանկ: Կայնի, հիմի ֆլան բազրգյանը գուկա, շատ հարուստ բազրգան է: Իրան գսպանենկ, բեռները գտանինկ, կապրինկ:

«Էս լավ էղավ»,—մտածեց մառտը ու կայնավ հինգ մառտու կոխկը:

Աշեց ճամպա, մեկ էլ տեսան դավեկի զնգռտունն էկավ, ըտոնկ խառվան իրար, էլան ղրաղ: Եկավ բազրկյանի քարվանը՝ քառսուն դավա ծանդռ բեռներով բառծած: Դավճեկը վրեները նստած: Բազրկյանն էլ նստած նառ դավին, առաջ ընկած գալմ է: Ավազակները վազան առաջ: Բազրգյանին իջցրին դավի վրեճեն: Ձեռ, ոտ կապեցին, տվին էդ մառտուն, ըսին.—Տա՛ր էդ մոտիկ ձորը ըսպանե, շապիկն առ արի մեզի տուր:

Մառտը տարավ բազրգանին: Մոտիկ ձոր կար, տարավ էդ ձորը ըսավ.—Ա՛յ մառտ, դու ընձի ի՞նչ ես էրե, օր ես քեզի սպանեմ,—ըսավ,—տուր շաբիկտ, մատդ կտռեմ, շապիկդ արնոտեմ, տանիմ տամ իրանծը, թող էրտան հեռանան, նոր դու ելի գնա քու տունդ:

Էդման օր ըսավ, բազրկանն ընկավ մառտու ձեռ ու ոտը, ըսավ.—Բախտդ եմ ընկե: Մեխկ էին իմ էրեխեկը: Դու, օր էդ լավուտենը էնմ ես ընձի, ես էլ էս լավուտենն էնեմ քեզի:

Հանեց ջեպից քանի՞մ հատ շակարլամա: Ի՞նչ շակարլամա, օր տեսնողի ուշկը կերտա: Չի կռնա, օր չուտի: Տվավ էդ մառտուն, ըսավ.—Առ էս շակարլամեն ձեռդ, գնա: Էն պզդի իրեկ դավեկի բեռները զուտ ըստից է: Տար էն դավեկի բեռները բաց, ըսա՝ «Արեկ դուկ էլ կերեկ» (բազրկանի ջեպերը լիկն էր): Ես էնկան կերա օր սիռտս խառնմ է: Թող ընտոնկ ուտեն, էդի զիկանուրի է, աղու: Ընդոնկ, օր կերան ձեռած գտրակվեն: Էդ քառսուն դավեկի բեռները գմնա քեզի:

«Էս ինչ լավ եղավ»,—մտածեց մառտը ու հանեց բազրգանի շապիկը:

Մատը կտռեց, շապիկը արնոտեց: Շակարլամեն առավ ձեռը, գնաց ավազակների քովը: Տեսավ, օր բածել են շակարլամի բեռը, նստել են գլխուն, ուտմ են: Ձեն տվին.—Տո արի՛, արի՛ էդ քոպօղլին էս ի՞նչ տեսակ բան է բերե, անուշ, արի դու էլ կե:

—Տո,—ըսավ,—դուկ կերեկ շան ոռտու ջեպերը լիկն էր, ես կերա սիրտս խառնմ է, էնկան օր կերա: Ահա էսկան էլ մնաց ձեռս, էլ չեմ կանմ ուտե, դուկ կերեկ, թեզ էրեկ էրտանկ:

Ըդոնկ կերան, հա կերան: Մեկ էլ ամեն իրան տեղը փռվան, մնածին ընկած: Էդ սուտ գողն էլ տեսավ, օր դավաճիկին՝ քուլիկի ձեռ ու ոտները կապած քցել են առտերի մեջ, ըսավ. «Ըստոնց հառծկեմ վայտ էլնին ընձի սպանեն: Կայնի էրտամ բազրկանին ձեն տամ, գա, նոր ընդոնց ձեռ ու ոտը գհառցկենք»:

Գնաց ձեն տվավ.—Բազրկան ախպեր, բազրկան ախպեր, արի՛, արի՛:

Բազրկանն էլավ եկավ: Տեսավ, օր ի՞նչ տեսնի. տասնմեկ հոգին էլ փռվել են: Ուրխծավ, աշխարհով մեկ էղավ: Գնածին դավաճունծ ձեռ ու ոտ առծկին: Էկան, նորից դավեկը բառծան, սարկեծին, ընկան ճամպա՝ դեպի բազրկանի տունը: Գնածին, գնածին հասան բազրկանի տունը: Բեռները վեր առան, նես տարան, ամենը իրան տեղը տեղավորեցին:

Բազրկանը ըսկսեց թադարուկ տեսնել, օր սուտ գողին պատիվ տա: Սուտ գողն էլ, ման էկավ բազրկանի տան չոռս բոլորը: Մտավ բաղերը, տեսավ բիլբուլները անո՛ւշ երգմ են: Հավուզները, ախպուրները, ամեն ինչը շատ լավ է: Ըսկի պակաս-պռատ տեղ չունի: Բազրկանն էր, ելավ հաց, կերակուլ, բան, ամեն ինճը հազրեց, ղոնախին կանճեց, օր լավ պատիվ տա, իրան էտկան լավուտեն էր էրե: Մառտն էկավ նստավ: Բազրկանն ըսավ.—Ախպեր ջան, դու հաց կեր, դու գիշերվորե անոտի էս:

—Տո,—ըսավ,—ի՞նչ գիշերվորե, էս մի շապատ է, օր ես հաս չեմ կերե:

—Դե հմի քու տանդ պես, քու հածիտ պես կեր:

—Կուտեմ,—ըսավ,—կեծի բան՞մ հառծնեմ, նոր հաց կուտեմ:

Ըսավ.—Էրկուսն հառծրա ախպեր ջան:

—Բազրկան ախպեր, դու օր էդկան հարստուտեն ունիս էս քու դավեկի բեռները միլոնով գլոխ չի գա: Ա՛յ ջանմ, բազրկան, նստի տունդ կեր, ի՞նչ ունիս ընկնմ ես երկրները: Հարամիկը լազատ չեն տալմ: Ըշտա, ես ռաստ չգայ, քեզի բտի սպանեին, դավաճիկիդ էլ բեռների հետը տանեին: Էլ քու օկուտը ո՞րն է:

Ծիծաղած բազրկանը, ըսավ.—Ախպե՛ր ջան, լավ ես ըսմ, հմը ես ինճղ նստիմ տունս, օր էտկան բեռների մեճը, ես հեչ հիսա չունիմ: Հարուր մանետ մեկից եմ առնմ, երկու հարուր՝ մեկից, հինգ հարուր՝ մեկից, էրտմ եմ օտար երկր-

ները, ապրանկ եմ բերմ, ծախմ եմ, բան՝մ քար մնմ է, ըդով աբրմ ենկ:

Էս օր ըսեց, սուտ գողը ըսավ.—Վա՛յ, վա՛յ, վա՛յ, բա չես ըսմ մեղսակործ ա: Ես մեխկի մեճ կորա: Էս ինչ բան էրեծի: Ես էկա քու տունը: Քու հասն էլ չի ուտվի: Տվեկ, տվեկ իմ չարխներս, ես էրտամ:

—Ա՛յ մառտ, ճոտ՝մ հաց կեր, նոր գնա, ամոտ է: Ախր մեր տնեն անոտի, ծառավ եռտմա՛ս:

—Չէ՛, չէ՛, չէ՛, քու հացը չի ուտվի, քու էրեխանծ ռզոը ի՞նչդ կտռեմ, ուտեմ:

—Ա՛յ մառտ, ես խո էտկան անճար չեմ, օր իմ էրեխանքս քու կերածովդ ապրին:

—Չէ, օր չէ, քու հացդ չի ուտվի,—ըսավ, չարխները հակավ ընկավ ճամպա, գնաց:

Գնաց, գնաց հասավ մե մենձ քաղկի՝մ: Էդ քաղկի ղրաղը մե ջամի՝մ էր շինված: Վիրևը գրած է «Սակիե դղչամսի»՝ քու շինող, գլոխ բերողն էլ լավ մառտ չի էղե:

Իրկուն էր, մեկ էլ տեսավ՝ էդ քաղակն իշկան օր ախկատներ կան, հաց թոփ ենող, սաղ թոպ էղան հոդ ու սկսին իրար հետ կռվել, իրար ծեծել, քվրել, վեռճապես, անհամուտեններ: Էս մառտն ըսավ.—Էս ի՞նչ բան է:

Ըսին.—Էս քաղակը կար մե թուրկ՝մ, էդ թուրկը ո՞նչ կերավ, ո՞նչ խմեց առչի տղից եդ քցեց, շինեց էս ջամին, օր իրան անունը միշտ խոսվի:

—Բա ձեզի հաց, ջուր, շոր, բա հեչ բան էլ չկա՞մ:

—Ըշտը, էռտմ ենկ մեզի համար թոփ էնմ, բերմ ենք ըստեղ: Էնկան, օր դուսը չենկ մնմ՝ ձան, յա անձրևի տակ:

Թողեց ըդից գնաց, գողը: Գնաց մտավ քախկի մեջը, տեսավ, օր ամեն տեսակ միչետներ կան: «Է,—ըսավ,—ես ըստեղ տես ու ծանոտ չեմ ուրտեղ մնամ, ուրտեղ չմնամ»:

Էս դին, էն դին ման էկավ, տեսավ, մե դուկնի՝մ դուռ բաց է: Մե ջայել, լավ, սիրուն տղե՝մ էլ կայնած է: Իրան հաշիվներն է էնմ, օր պոծնի քնի: «Ահա, գտա,—ըսավ մառտը,—էս ի՞նչ լավ եղավ: Էրտամ գողտուկ մտնիմ, պայվիմ: Տղեն, օր քնավ, ելնիմ քանի՝մ թոպ կտոր առնիմ էրտամ, տանիմ էրեխանծս պայեմ, էլ ը՞նչ՝եմ իզուր տեղը ման գալմ»,—մտածեց մառտը:

Մտավ դուքանը, պայվավ: Տղեն իրան հաշիվների հետն էր, խաբար չեղավ: Իրան հաշիվն էրավ: Դուռը փակեց: Տեղը բածեց, ճրակը բտի մարեր, օր մտներ տեղը քներ, մեկ էլ սռտիցը խորունկից ախ՝մ քաշեց: Մառտը պայված տեղից ելավ ու տղի բիլագը բռնեց: Տղեն, վախլուտենից լիզուն կապ ընկավ: Մառտը խառնվավ իրար, մեխկմ էր, թե էս ի՞նչ էր՝ ես էրեցի: Ջայել մառտ էր վախեծավ, դառտի տեր կեղնի, ըսկսեց սիռտ տալ.—Մի՛ վախենա, մի՛ վախենա, ես քեզի բան չեմ էնե: Ես գող չեմ:

Դես, դեն, չէ տղի լիզուն բացվավ: Ըսինխոսածին, ծանոտածան: Տղեն բերավ հաց դրավ, ըսավ. «Ղարիբ մառտ է, անոտի կեղնի, թող թիկե՝մ հաց ուտե»:

Տղեն, օր հաց դրավ, գող մառտը մտածեց ըսավ. «Յավաշ, հառծնեմ տեսնիմ՝ էս դուքյանը իրանն է՞, նոր իմ ըսածս էնեմ, կտռեմ տանիմ»:

Ըսավ տղեն.—Ախպեր ջան, ղարիբ մառտ ես, անոտի կեղնիս, վերու հաց կեր:

Ըսավ.—Հլը քեզի մե բան՝մ հառծնեմ, նոր հաց կուտեմ:

—Ըսա:

Ըսավ գող մառտը.—Դու, օր էսկան ապրուստ ունիս, ը՞նչ՝ես դուկան դրե, մեջ քնմ, օր մե սուտ բանից՝մ էլ վախենմ ես, լիզուտ կապվմ է, գնա նստի տունդ քեզի համար արխեին կեր, խմե, քեֆ էրա: Ը՞նչ՝ես զուր տեղը քեզի էնմ դառտի տեր:

—Հը՛,—ծիծաղած տղեն, ըսավ,—ա՛յ ախպեր ջան, ընձի ուրտի՞ց էղնի էսկան ապրուստ, ես, ըշտա, էսինչ երկրեն եմ: Իրեկ տարի աշկ էի քցե մեր դրգծի ախճկա վրեն: Վեռճը աճողծրի՝ առա: Դեսից-դենից պառտկ ու փոխ էրեծի, հառսնիկ էրի, իրեկ ամիս մնածի տունը, տեսա, օր պառտկի տերերը դադար չեն տալիս: Նոր էր գարուն բացվե, թողեծի էկա հոս, օր աշխատիմ տանիմ պառտկ ու տալիկս տամ: Էսօր ուտ օր է, օր նամակ եմ ըստածե, օր նշանածս մեռել է: Կանչել էին, չկռծա էռտայի:

Էս խոսկերը, օր լսեց գող մառտը, տեղեն ելավ.—Վա՛յ, վա՛յ, վա՛յ,—ըսավ,—էս ի՞նչ եմ լսմ: Էս ի՞նչ էյ քաշե, կարկուտ գթապի գլխուս: Ես մեխկի մեջ կորա: Էլ իմ մեխկիս թողուտեն չի էղնի: Քու հացն էլ չի ուտվի: Էս ի՞նչ բան էրեծի, ես էկա, ըսեծի, քաշկամ չէի էկե,—ըսավ, ելավ փոշման-փոշման գնաց:

Գնաց, տեսավ մե ջիուդ՝մ, լավ թանկագին հակուստը հակը, օխտ օրվա մոռտած գոմշի ջի-

գարը ձեռը բռնած՝ տանմ է տուն: Սուտ գողը ըսավ. «Հլը բտի ըստուր ետևից էրտամ, տեսնիմ՝ ինչ մառտ է, օր էս տեսակ լավ հակնված ու էս թոռմշած հին ջիկարն է տանմ»:

Գողտուց ետևեն գնաց: Գնած տեսավ, օր մտավ մե տուն'մ: Ինկն էլ գողտուկ նես մտավ, պայվավ: Ջհուտը տարավ, օր ջիգարը վեր դրավ, կնիկը տեսավ, կռվավ, նեղեծավ, ըսավ.—Քու տունդ քանդվի, ինչ քանդել ես իմ տունը, հարի ճպ դու էդ օխտ օրվա հին, գոմշի քառտու ջիգարը բերես: Տիա, գուկում'մ օսկի հոն ես հորե, գուգում'մ՝ հոն, գուգում'մ էլ՝ հոն: Էդկանը ռիմ հմար է, օր դու էտ հին, փտած, հոտած լեշերն ես բերմ ուտելու:

Մառտ ու կնիկ կռվան: Էլան ամեկը մե տեղմ պառկան քնան: Կես սհատ անծավ, ջհուտը խռած: Ջհուդն օր խռած, մառտը՝ սուտ գողը, էլավ պայված տեղից: Էկավ ջհուտի ձեռ ու ոտը կապեց: Գնաց էրկու գուգում օկսին հանեց: Էկավ կնգան ձեն տվավ: Կնիկը վախեծավ, լիզուն կապ ընկավ:

—Մի՛ վախենա, քուր ջան, մի՛ վախենա, ես քու ախպերն եմ: Էկել եմ քու հոկին ազատելու: Ելի էրտանկ, վախտն է:

Չէ, կնկա լիզուն մի կերպ բացվավ, ըսավ.—Յաման, հմի ջհուդը գելնի: Էրկսիս էլ գսպանե, գնա ըստեղից:

—Թեզ, ըսմ եմ, ելի, ջհուդին մախկամեն եմ դրե, ելի:

Կնիկն ելավ հակավ: Մառտը վերծրավ էրկու գուգում օսկին, էդ կնգան ու գնածին դիպա, էն տղի դուքանը: Դուռը ծեծեց, դուկնջինը դուռը բածեց, նես գնածին: Նստան, ըսին-խոսածին: Դուկնչին ըսավ.—Էս ինչ բան է:

—Ինչ բան է, հալ ու հեքյատ էսպես-էսպես,—պատմեց եղելուտենը,—էսի էլ ջհուդի կնիգն է բերել եմ քեզի հմար:

—Ա՛յ մառտ, գլոխս բտի տուրը տմա, ինչ է:

—Չէ՛,—ըսավ,—դու մի վախենա: Իրեկ գուկում օսկի էր: Մեկը թողի ջհուդին: Առ էս մեկն էլ՝ կնգան, էս մեկն էլ՝ ընձի: Դե բարի գիշեր ձեզի, ես կերտամ:

Ըսավ մառտն, վերծրավ մե պուլիկ'մ օսկին, գնաց: Մե պատի'մ տակ կուչ էկավ, հարի լուսածավ: Էլավ գնած քաղկի մեջը: Խելի'մ պտտվավ, մեկ էլ տեսավ էն դիեն թևերը կապած դուկնջուն բերին: Տարան քաղկի մեյդանը, օր հանեն տարաղաջեն: Հմը ըդից հետ վազավ, տեսավ, օր տղին չբլղծնմ են: Հմը ինկը տղին դեն բռտեց ըսավ.—Ըստուր ընճ'եկ բերե, էսի ինչից է խաբար, ինչ էղել, ես եմ էրե: Տարաղաջեն ընձի գհասնի,—ըսավ, շորերը հանեց, ելավ ատոռի վրեն: Իրան ոտով ատոռը դեն բոտեց: Կախվավ թոկից: Գնաց-էկավ, գնաց-էկավ: Մե սհատ'մ ճլորտիկի պես գնաց-էկավ, չխեխտվավ:

Դատավորն էլ, ուրիշներն էլ ըսին.—Ա՛յ մառտ, էսի խաղ է էնմ, իճծրեք:

Իջծրին: Ըսին.—Էս ինչ բան է:

Ըսավ.—Ինչ բան է, լսեկ պատմեմ:

Մառտն էր, սկզբից իրան գլխու գալածը-անծածը նաղլ էրավ, չուր հասավ հոտ: Ըսավ.—Հիմի դուկ գիտեկ գուզեկ հմի նորից կախեկ, գուզեկ սպանեկ:

Ըսեցին.—Քեզ պես մառտուն էլ գկախեն:

Մառտուն, դուկնչուն, կնգան ազատին: Բերին ջհուդին հանին տարաղաջեն: Ջհուդի փայ օսկին էլ էրեցին թակավորական:

Տղեն առավ կնկան, օսկին վերուց, ուրախուրախ գնաց իրան էրկիրը: Մառտն էլ առավ իրա օսկին, էկավ իրան երկիրը: Էկավ, տեսավ՝ տունը գեռտաստանը նեղ դրուտենի մեջ են: Էրեխեկը մենձծել են, ուտելիկ հակնելիկ են ուզմ, չկանի: Բերավ էս մառտը բոլամադի գարի, ցորեն առավ: Նորից հակուստից, բանից առավ, էրեխանց վրա, գլոխը նորեց, թաժածրավ: Շինուտեններ քցեց: Մալ ու օխճար առավ: Մենձ ամբարներ առավ, գարի, ցորեն առավ ամբարները լցեց, նոր մե խեյրատխանե'մ շինեց: Իրանց երկիրը ինչկան, օր ախկատ, քյասիբ մառտ կար, անտեր, անտիրական մառտ կար, քոռ ու չոլախ կար, անաշխատանկ մառտ կար, սաղ թոպ էրավ, բերավ լծեց իրան խեյրատխանեն: Իրան չոտկից, համ ուտմ-խմմ էին, համ հակնմ էին, լվածվմ, իստկվմ: Ամեն նիստ ու կածը էդ մառտու չոտկից էր: Ընդոնկ էլ քնմ-էլնմ էին էդ մառտուն արևշատուտեն էին խնդրվմ ասուց, օռշնմ ու աղոտմ էին՝ տան ու տեղի, օճախի աճողուտենի հմար:

Էս մառտն էր, էլավ մենձ տղին նշանեց: Բերավ օխտը զօր, օխտը գիշեր հառնիկ էրավ, կեր ու խում քեֆ-ուրախուտեն: Երկիր երկրով, քաղակ քաղկովի, գեղ գեղովի, էկել էին էդ մառտու հառնիկին:

Հառսնկվորները կերան-խմեծին, ուրախուտեն էրիցին, էլան գնածին: Էդ ուրախուտենն ամենկի տունը էղնի: Էրտկեն ընկներ քանի՛մ հատ խնձոր՝ հեքյաթ ըսողին ու լսողներին:

37(37). ԱԼԻԽԱՆ ԹԱԿԱՎՈՐԸ

Կեղնի, չի էղնի, մե մառտ՛մ կեղնի, անունը՝ Սայադ: Էդ մառտը պզդի վախտը հորն ու մոր հետ կերտար հաջ:

Հլը քանի ջայել, հերն ու մերն էին էրտմ, հետներն էին տանմ: Եպ օր ինկը մենձծավ, կարկվավ, ինկը իրան կամկովվ էր էրտմ հաջ: Էդ մառտուն մե անկամ ըսին Հաջի Սայադ, սովորուտեն էղավ ըսեցին՝ «Հաջի Սայադ»: Հաջի Սայադը ամեն տարի՝ Ասվածածնան, կնկա հետ էրտմ էր հաջ: Հաջի Սայադը ունեծավ մե տղե՛մ, մե ախճիկ՛մ: Մնաց, օր գալող տարի էլան գնածին հաջ, ետ դառան, գալմ էին, ճամպեն ձին ու ջորին բեզրել էին, իրանկ էլ անոտծել էին: Ելան ղրաղ, ախպրի քովը նստան: Իրանց հմար հաց կերան, ջուր խմին: Մեկ էլ, մե էրեխի լածի ձեն ընկավ անգաջները: Մառտը գնաց դիպա ձենի սամտը: Տեսավ, օր մե պղդի բալուլ՛մ է դրած քարի քովը, լալմ է: Վերցնմ, առնմ էռտմ է: Տանմ տալմ է կնգան: Ըսմ է.—Կնիկ, էս լավ էղավ, մեր տղին ախպեր կեղնի:

Մառտ ու կնիկ ուրխնմ են: Էլնմ, ընկնմ ճամպա, գալմ են տուն: Էդ էրեխին լավ պայմ են, տիրմ են: Տղեն, էլ օրեցօր խոշռնմ է: Խոշռծավ, դառավ հասած տղա: Ախճիկն ու իրան տղեն զատի, դհա մենձ են: Էլի էկավ վախտն, օր բդի էրտան հաջ: «Ինչ էնենկ, ինչ չենենկ»: Տղի անունը դրել էին Թապտղ: «Բերենկ Թապտղին թողենք քուրոջ հետ տունը, մենկ առնինկ մենձ ախպորը էրտանկ: Լավ»,—ըսին:

Մե էրկու իրեք տարի էլ էդման գնածին: Հիմի նա՛ Թապտղը գիտե, թե ինկը ըդոնց տղեն չէ, նա՛ քուրը գիտե: Քուր ախպեր չիդեն, մինակ հերն ու մերը գիտեն, ու իրանց հացթուխ պառավը գիտե: Ինչ օր ա, մեկել տարին էլ էլան առան մենձ տղին գնածին: Թապտղին թողեծին քուրոջ քովը: Գնածին էդ մառտիկ, իրանց ուխտը էրեծին, եդ դառան էկան:

Ըդոնկ թող էրտալ ու գալու հետ էղնին, մենկ խաբարը տանկ Թապտղից ու քուրոջից: Հերն ու մերն օր գնածին, իրանց հացթուխ պառավը ընկավ ինադի, թե. «Ընձե ընչի՞, էսկան տարի ես իրանց հացթուխն եմ, ամեն տարի իրանկ կերտան, մե անկամ ընձի չի տանմ: Յավաշ, ես ըդոր հախեն գամ: Ինչ էնեմ, ինչ չենեմ, յավաշ, Թապտղին խրատ տամ, թող առնի ախճկան, նստի, չուրի իրանկ գան: Էկան տեսան, օր իրան է առե, էլ ինչ բտի էնեն»:

Մտածեց պառավն ու Թապղին կանճեց, խրատ տվավ: Ըսավ.—Թապտղ, քու տունտ շինվե, բաշարմազ, դու ջայել տղա, էդ ախճիկը սիրուն, լավ ախճիկ: Բա չես կռնա՞ առնի էդ ախճկան: Ո՞վ է քեզի բան ըսողը, Ո՞վ է քու թելին կապ դնողը: Ընդոնկ եսիմ եպ գան, եպ չգան:

—Իա՛, մամի, ինչ ես ըսմ, մառտ իրան քորուջը կառնի՞, խո աշխարկը չի անծե, էլ ախճիկ չկա, ես իմ քուրոջը կառնի՞մ:

—Ա՛յ բեյավա, հեչ բան չես հասկնմ, էդի խո քու քուրդ չէ: Հաջուց եդ դառնալուց քեզի գտել են ճամպեն, բերե պայել են: Հեչ մառտ չիդե՝ ընձեն սավայ: Ես էլ մառտու բան չեմ ըսե: Քեզի եմ ըսմ, թե գբաշարես, գնա առ ու նստի ապրուստը կեր, վայելե:

—Համ:

—Հա՛:

Թապտղն էր, խելկից թեթև, ինկն ուրածող, քավթառի էլ ռաստ էկավ: Քանդեց իրան տունը, կայնավ ղրաղ: Գնաց կպավ խեղճ, միամիտ ախճկա յախեն.—Չէ, օր չէ, դու իմ քուրը չես, մենկ քուր ու ախպեր չենկ, մենկ բտի առնինկ իրար, օր բտի առնինկ իրար:

Քուրն ըսավ.—Ա՛յ տղա՛, ո՞վ է ըսմ, խո դու խելառ չե՞ս, խելկդ խո չե՞ս կործրե: Մեր հերն ու մերը գան, ինչ կսեն մեզի:

—Չէ՛, հացթուկ պառավը ըսմ է՝ եսիմ գան, թե չգան: Գան էլ մեզի ինչ բտի էնեն: Մենկ կառնինկ իրար, գնստինկ:

Ախճիկը տեսավ, օր էդ խելռից չի կռնա յախա պոկե, ըսավ.—Թապտղ, ըսմ եմ՝ ինչղ օր չուրի հիմի խելոկ կեծել ես, էլ խելոկ մնաս: Հերս ու մերս, ախպերս գան, պառկս էղնի՝ հորս ըսեմ ուրտեղ օր լավ ախճիկ տեսնի, ուզե քեզի, թաքիլան դու սուս մնա: Էդի խելկ չէ, օր դու մտածել ես, կամ թե խրատ են տվե:

—Չէ,—ըսավ Թապտղը,—քեզեն էլ լավ ախճիկ ուրտեղ կա:

—Համ:

—Հա:

—Դե օր ըդման է,—ըսավ ախճիկը,—էսօր քանի օր է՝ չես լոխծե, գնա ջուր բեր տակծնեմ, քեզի լողծնեմ, առնինկ իրար: Տերտեր բերեմ պսակվինկ:

Ըդման, օր է ըսավ, Թապտողը ուրխծավ: Գնաց ջուր բերավ: Ախճիկը թնդիրը վառեց, պղինձը դրավ վրեն, ջուրը լցեց, կրակ էրեց տակը, ձեռաց ջուրը տակծրավ: Բերավ Թապտողին չբլոծրավ, թողեց մե վառդիկով, դրավ տաշտը, աբի գյառդանը առավ ձեռը: Տաք ջուրը հա լցեց, հա լծեց: Քանի Թապտողը ըսավ վա՛յ, մեռա, շատ տակ է, ախճիկը դհա տակծրավ ջուրը: Թապտողն էղավ կարմիր բազուկ:

Վեռճն էլ գլոխը, աշկերը, քիթ ու բերանը սապնեց, փռփռծրավ, վերուց քցեց դուս ու դուռը փակեց: Շորերը փանջարից դուս լոռդեց, էկավ նստավ: Թապտողն էր, էլավ ապլպեց, շորերը գտավ, հակավ: Դուռը ծեծեց, ծեծեց, դուռը չբացեց: Ըսավ.—Գնա խրատ տվողիդ տունը:

Թապտողը գնաց ըսավ.—Մամի, քու տունդ քանդվի, օր իմ տունը քանդեցիր, ընչի՞ թողեցիր քուչեկը՝ անոտի, ծառավ: Ես հիմի ի՞նչ էնեմ: Ըդոր հերն ու մերն օր էկան, ես ի՞նչ ըսեմ:

—Քա, հմը թող գան, ես գիտեմ, թե ինչ կենեմ, դու մի վախենա:

—Համ:

—Հա:

Ախճիկն էր, նստավ լածավ, լածավ, ինկ իրան գանգտվավ հորն ու մորից, թե. «Դուկ օր գիտեիք՝ էդի էլօղլի էր, ընչի՞ թողեծիկ իմ քովս, թող ըդուրը տանեիկ, իմ ախպորս թողեիկ իմ քովս»:

Խուլասա, օր՚մ լացավ, օր՚մ ծիծղած, օր՚մ կերավ, օր՚մ չկերավ, չուրի վախտն էկավ, հերն ու մերը գալմ են: Պառավն ընկավ քլքլան: Զարգվավ դես ու դեն: Իմծավ, թե որտեղ են հասե: Թապտողին ըսավ.—Թապտող, գլխուդ չարեն տես, ըշտա, հերն ու մերը գալմ են:

—Ի՞նչ չարա տեսնիմ: Մեկ տունս քանդիր, հիմի ի՞նչ էնեմ:

Պառավն ըսավ.—Գիտես ի՞նչ էրա, էլի գնա հորն ու մոր առաջը: Լաց, մախկտի, ըսա, թե ինչղ օր դուկ գնածել եկ, քուրս ընձի ծեծեց, դուս էրավ, ըսավ՝ դու իմ ախպերս չես, գնա, ռադ էղի: Ընձի դուս էրավ տունն էրել է մեյդան: Հազար էրտող, հազար գալող: Օրական, դուռը հեչ չէ մնմ տեղը: Ընդոնկ քեզի բան չեն ըսե գուկան, իրանց ախճկա, հախիծը գուկան:

—Համ:

—Համ:

—Լավ:

Թապտողն էր, խելկից թետև, ոտնից չապուկ: Անգաջ էրավ պառավին, էլավ գնաց հորն ու մոր առաջը: Լացավ, մաղկտած, ըսավ.—Հերն ու մեր, բա չե՞կ ըսմ, ինչխ օր դուկ գնածել եկ, քուրս ընձի դուս է էրե: Ընձի ծեծեց, ջառտեց, դուս էրավ: Հիմի տունն էրավ մեյդան: Հազար էրտող, հազար գալող: Դուռը տեղը դատար չի մնմ:

—Համ:

—Համ:

Հերն իրան տղին ըսավ.—Հեձի ձին գնա, էդ անպիտանին տար սպանե, կործրա, ես գամ, իմ աշկս ըդուր երեսը չառնի: Իմ հալալ օջախ, էտի հարմել է:

Տղեն էլ, նստավ ձին, գնաց տուն: Տեսավ, օր ինչ տեսնի, ոչ թե դուռը տեղը դատար չի մնածե, դուռը հեչ չի բացվե: Դուռը զարգեց: Քուրն էկավ դուռը բացեց, ուզեծավ փատտվալ ախպոր շլինկը, ախպերն ըսավ.—Հեռու գնա, քռտնած եմ:

Ըսավ ու աշկը քցեց բոլորը, աշեց, տեսավ, զարմածավ: Չիդեր աշկերին ավտնա՞ր, թե՞ անգջներին:

Ըսավ.—Քելե, նստի ձին, էրտանկ հորն ու մորս առաջը, գալմ են:

Քուրն էլավ ուրախ-ուրախ նստավ ախպոր թարկը, գնածին: Գնածին գնածին, գնածին, քուրն ըսավ.—Ախպեր ջան, էսկան հեռու ե՞ն:

—Հա,—ըսավ ախպերը:

Քուրը՝ խեղճը, հեչ դուս չէր էլե: Մե անկամից էլավ, էտկան հեռու գնաց: Էման բեզրավ, օր հալիծ, ճարից ընկավ: Չէ, հասան մե մեշի՚մ մեճ: Քուրն ըսավ.—Ախպեր ջան, ծառավ եմ, էս աներ ախպուր կեղնի, իջնինկ քիչ՚մ ջուր խմենկ, նոր էրտանկ:

—Լավ,—ըսավ ախպերը:

Ձիու գյամը քաշեց, ձին կայնավ: Իջան, ման էկան ջուր գտան, խմեծին, ջրի կոխկը նստան, հաց կերան: Քուրը, շատ էր խեղճծե: Գլոխը դրավ ախպոր չոկին, քնավ: Ախպերն,

օր տեսավ քուրը քնավ, ուշիկով քուրոջ գլոխը դրավ խուռջնի վրեն: Գլխու շալովին հանեց, նստավ ձին գնաց: Ճամպեն մե ղուշ՚մ զարգեց, արունը քսեց, շալովին արնոտեց, առավ գնաց տուն: Տեսավ, օր հերն ու մերը տունն են Թապտղի հետ: Էդ օրվանից Թապտղն էդ տղի աշկեն ընկավ, էղավ աշկին գրող: Հմը հերն ու մերը, էլի ուզմ, ունտունմ էին:

Թող ընդոնկ մնան ըդեղ, մենկ խաբարը տանկ ախճկած: Ախճիկն էր, քնավ, զարտնավ, տեսավ, օր աստղներն են պղպջմ, էղել է գիշեր: Երկինկը աշեց, բոլոր, նա՛ ախպեր կա, նա՛ ախպոր ձին կա, նա՛ մառտ կա:

Զարմացավ, ըսավ. «Էս ինչ տեսիլկ էր, ես տեսա: Ախպերս ընձի բերավ, ընձի կործրավ, գնաց: Ի՞նչ էի էրե: Է,—ըսավ,—էլի կա, չկա էն անիծածի էրածն է, ընդրա շառն է հասե»:

Ըսավ ախճիկը, վերցրավ խուռջինը, իրան վախենալուց էլավ ծառի գլոխը, նստավ: Մտածեց, լածավ, քնավ, զառտնավ, չուրի լուսածավ: Առավոտ արևը տակծավ, տեսավ՝ մե քանի՚մ ձիավոր գալմ են դիբա իրան թարաֆը: «Ի՞նչ էնեմ, ի՞նչ չենեմ, օր ըստոնկ ընձի չտեսնին»: Հա մտածմ ու տեղավորվմ էր: Չէ, էկան, մոտկծան: Ինչղ էղավ, օր ինկը մտավ ճուղի արանկը խուռջինը մտահան էր էրե, օր չթողեր խուռջինը՝ ընկնելու: Խուռճինը ընկավ ցած: Ձիավորներն աշին վիրև: Տեսան, օր ի՞նչ տեսնին, էման ախճիկ՚մ նստած ծառի գլոխն, օր չուդես-չխմես, մինակ ընդորը թամաշա էնես:

Դու մի տես, Ալիխան թակավորն է հետնեը: Օր ղլղները մեկ է, մառտ չի ճանճնմ: Ձիավորներից մեկը ըսավ.—Իջի ծառից ցած, արի տեսնիմ ինս ես, ջինս ես, ջանավոր ես:

Ախճիկն իճավ ծառից: Որն ըսին՝ արի թարկս, ախճիկը չօժարածավ, թակավորի ճարը կտռավ մեկին իջուց ձիուց: Ձին տվավ, ախճիկը նստավ: Գնացին տուն: Թակավորը ախճկան տարավ դուզ իրան պալատը: Ըսավ.—Ախճի, ես օր քեզի տեսա, շատ հավնա: Ինս ես, ջինս ես, ջանավոր ես, ինչ օր ես, ընձի ղաբուլ ես: Ես քեզի բտի առնիմ, օժար ե՞ս:

Ախճիկը գլխով նշան էրավ, թե՝ չէ:

Մե օր, էրկու օր, տաս օր, քանի թակավորն ըսավ, ախճիկն ըսավ՝ չէ:

Մե օր՚մ էլ ախճիկը մտածեց, ըսավ. «Լավ, ես ի՞նչ եմ մտածմ, օր թակավորին չեմ առնմ: Իմ հերն ու մերը ընձի դուս էն էրե տնեն: Ես ո՞ւր բտի էրտամ ըստից: Բալկի բարին էս էր: Բտի առնիմ թակավորին»:

Առավոտ, էլի թակավորը հառծրավ, ախճիկ գլխով նշան էրավ, օր՝ օժար եմ: Թակավորն ուրխծավ, աշխարով մեկ էղավ: Բերավ օխտը զօր, օխտը գիշեր հառսնիկ էրավ: Դավուլ-զուռնա զարգեց: Քեֆ-ուրախուտեն, ուտելխմել... Առան իրար: Ախճիկն էղավ թակույին, հմը ախճիկն հեչ չէր խոսածե: Էման էլ չխոսած, չուրի թմմավ օխտը տարի: Էրկու հատ էլ տղա էղավ: Հլը թակավորն լիզուն չի իմծե: Թակավորը մալուլ-մուշկուլ ման է գալմ, ձեռը՝ ծոծը: Մե օր՚մ էլ, դուս էկավ դարբազից, կայնած էր տխուր-տրտում: Մեկ էլ էս դիեն մե դառվեշ՚մ էկավ: Տեսավ՝ թակավորը կայնած է մոլոր-մոլոր:

Հառծրավ, ըսավ.—Թակավորն ապրած կենա, ընչի ես էտկան տխուր ու մոլոր: Դու օր թակավոր մառտ ես, էդկան տխուր ես, բա քու ռյատտ ինչ էնեն:

—Հը,—ըսավ թակավորը,—իմ դառտս է կապուտ, ռյատին ի՞նչ կա:

Դառվեշն ըսավ.—Ինչ է քու դառտը, ըսա՝ տեսնիմ:

Թակավորն ըսավ.—Էլ ի՞նչ բտի էղնի: Էս օխտը տարի կնիկ եմ առե, հլը լիզուն չեմ իմծե:

—Ընչի՞ չես իմծե:

Թակավորն ըսավ.—Չի խոսածե, չեմ իմծե:

Դառվեշն ըսավ.—Էրեխա ունի՞ս:

Թակավորն ըսավ.—Էրկու տղա ունիմ:

—Դե, օր էրկու տղա ունիս, գնա մե հատ՚մ օսկի խնձոր շինել տուր, բեր տուր մենձ տղիդ ձեռը: Պզդիկը գուլա: Իրար հետ գկռվին: Թե կնիգտ խոսկան էղնի, լալ չեղնի, անպատճառ գխոսա, դու գիմանաս, կնիկդ լալ է՞, թե՞ լիզու ունի:

Թակավորն ըսավ. «Էս ինչ լավ խելկ-խրատ տվավ: Էրտամ էդման բտի էնեմ»:

Գնաց մե հատ՚մ օսկի խնձոր ձեռած թապել տվավ զարգարներին: Վրեն հազար տեսակ հավկ ու անասուն նկարեցին, տվեծին թակավորին: Թակավորը բերավ տվավ մենձ տղին: Պզդի տղեն քնած էր: Զառտնավ, էլավ տեսավ, ախպոր ձեռը սիրուն խաղալիկ կա: Լացավ, ուզեց: Ախպերը չտվավ: Էն քաշեց

իրան, էն քաշեց իրան, կռվան, լածան: Մերն ասավ.—Ը՞նչ'եկ ծեծմ, իրար գզմ: Հորդ փարեն քիչ է՞ր, օր էրկու հատ շինել տար, չկռվեիկ:

Էդ լսելուն մառտը էլավ ու բիլակը բռնեց ասավ.—Ես քու լիզվիդ ու բերանիդ ղուրբան էղնիմ: Դու օր էդման անուշ լիզու ունիս, ընչի՞ չես խոսմ, ընձի քցել ես դառդի տակ:

Կնիկն ասավ.—Ի՞նչ խոսամ, էս քանի տարի ընձի բերել ես, դու եպ հառծրիր՝ ի՞նչ ունիս, ի՞նչ չունիս: Հեր, մեր, ախպեր, օր ես էլ խոսայ:

Թակավորն ասավ.—Էդ էլ է դրուստ: Դե օր էդման է: Գիտեմ, օր հեր էլ կունենաս, մեր էլ, քուր, ախպեր էլ: Թատարուկ տեսնինկ, գնա տես, արի:

Բերին պատռաստուտեն տեսան: Թակավորը մենձ վազիրին ու պզդի վազիրին ասավ.—Թակույուն ու էրկու տղիս գտանիկ իրան հոր երկիրը, հերանց գտեսնի, դառուկ գբերեկ:

—Աշկիս վրա,—ասավ վազիրը:

Ելան թակաույուն, էրկու տղին, օխտը դավաբեռ փեշկեշներ ու գնածին: Գնածին, գնածին հասան մե մեշե'մ, մուտը տվավ վրա: Իջան էդ մեշեն, չատրներ զարգին, կեծան հոդ: Էդ օրը մենձ վազիրն էր դարավուլը: Իրկվորե անծավ, ընդոնկ քնան: Մենձ վազիրն էկավ կնկա չադրի դուռը բացեց, մտավ նես: Ասավ.—Էս օխտը տարի ես վառվմ եմ քեզի համար: Հիմ էլ խու բդի չվառվե՞մ: Գլոխդ հեդս բդի մեկ էնես:

Կնիկն ասավ.—Օխտը տարի չէ, օր տասնըօխտ տարի էլ վառվիս, ես էդ մառտը չեմ: Էդ կատը չեմ կերե, օր քու կրակին ջուր լծեմ: Գնա տեղդ նստի:

Շատ ասավ վազիրը, կնիկը չլսեց: Ասավ վազիրը.—Տղեդ գը մոռտեմ:

Թակույին ասավ.—Ընձ էլ մոռտես, ես քու կամկին գալողը չեմ, գնա քու ճամպուն:

Վազիրը քաշեց պզդի տղին մոռտեց, գնաց դուս: Ելան առավոտ, ընկան ճանպա, գնածին: Կնիկը ձեն չէր հանմ, ասմ էր. «Իմ բախտս է, ի՞նչ էնեմ, հլը տեսնիմ՝ ուրտեղ գվեռճանա էս չարուտենը»: Գնածին, գնածին էլի հասան մե մեշե'մ: Արևը մեր մտավ: Չադրները զարգին, մտան նես: Հաց կերան, ջուր խմին, ամեկը իրան քնան:

Էդ օրը պղդի վազիրն էր ղարավուլ: Էկավ թակույի չադրի դուռը բացեց, նես մտավ: Ասկսեց խոսել, համոզել, թե.—Ես մենձ վազիրի հախեն գուկամ: Ը՞նճ'է ղդման անխղճորեն էրե:

Դես, դեն մեկել ինկը իրան միտկը այտնեց: Կնիկն ասավ.—Ես էդ կատը չեմ կերե:

Պզդի վազիրն ասավ.—Մենձ տղիդ էլ ես կմոռտեմ:

Թակույին ասավ.—Ընձ էլ մոռտես, ես չեմ ապսոսա, ես էդ կատի տերը չեմ:

Քաշեց մենձ տղին էլ էդ վազիրը մոռտեց, ելավ գնաց:

Առավոտ լուսածավ: Ելան գնածին: Էլի շատ գանծին հասան մե մենձ մեշի'մ: Հլը օրալույս էր: Մենձ վազիրը ասավ.—Մնա՞նկ աստեղ:

—Մնանկ:

Բերին չադրները զարգեցին: Ամեկ իրանց տեղավորվան: Կնիկը գիտեր, թե պռծավ, էլ ի՞նչ բտի էնեն: Էլ տղա չկա, բան չկա: Նստած մտածմ էր, ասմ էր. «Քանի օր իմ բախտս է, ես ումից բտի գանգատ էնեմ: Իմ ճակատագիրն է, ի՞նչ էնեմ: Իմ հալալ հերն ու մերն ընձի չխղճածին, օտարներն ի՞նչ բտի խղճան»: Էդ մտկերով տարված՝ նստած էր: Տեսավ չադրի դուռը բացվավ: Մենձ վազիրը նես մտավ: Էլի ասկսեց անդուրեկան ու անհամ խոսկերը խոսալ-ասել կնկան: Կնիգը երեսը ծածկմ էր, օր էդ անաստված մառտու էրեսը չտեսնի: Ճար չէր էղնմ, էլի խոսկերով նեղեծնմ էր:

Վեռճը ասավ.—Քեզի գմոռտեմ:

Թակույին ասավ.—Մոռտես էլ անկարելի բան է, չեղնելուծ է:

Կնիկը տեսավ, օր հանեց էն խանճալը, որով մոռտել էր իրան սիրած էրեխին: Ասավ. «Էսի, իմ տղին սպանեց չվախեծավ ո՞նչ ասուց, ո՞նչ թակավորից, ընձի օր սբանե, ումի՞ց բտի վախենա, դիա անպատիջ բտի մնա: Լավն էն է, օր ես ստուր խապեմ, սաղ պռծնիմ, գոյնա ոխս գիանեմ»:

Մտածեց կնիգն ու ասավ.—Խանճալդ դիր տեղը, ես սխալվա, որ էրեխանծես զրկվա, հիմի ես քեզի հառծնմ եմ, թե հիմնական բտի առնի՞ս ընձի, էս օրվանից լավը չկա, առնինկ իրար, ուրախ ապրինկ: Թե չես առնի, օր մոռտես էլ, ես քու խոսկերին չեմ օժարանա:

Էդ խոսկերը, օր վազիրը լսեց, ոտները գետնեն կտռավ: Ասավ.—Կառնիմ էլ, ղուրբանդ էլ կեղնիմ:

—Դե լուսանմ է, էրտամ իմ աղոտկս էնեմ, գամ:

—Չես գա,—ըսավ վազիրը:

Կնիգն ըսավ.—Ոտս թել կապե:

Ոտը թել կապեց: Էյրամն առավ գլխուն, վերծրավ յուբրուխ-լագանը, գնաց յանի լվածվի, աղոտկը էնե, գա: Գնաց, էյրամը քցեց կտռած ծառի՛մ վրա, թելն էլ կապեց կտռած ծառից, յուբրուղ-լագանը դրավ ծառի տակը ու ինկը գնաց մեշի մեջը կորավ, օր չգտնին: Վազիրն էլ հա աշմ է, օր գա: Տեսավ, օր լուսանմ է, չեկավ: Թելը հա քաշմ է: Գիտե, թե ոտիցն է կապած: Տեսավ չկա, ելավ գնաց: Տեսավ՝ էյրամով կայնած է: Վազիրն ըսավ.—Արի, ընչի՞ չես գալմ:

Տեսավ հեչ ժաժ չի գալմ, գնաց մոտիկ տեսավ, էյրամը կտռած ծառին է քցե, թելն էլ ծառից է կապե: Ըսավ. «Խապեց, գնաց»:

Վազիրը հավար քցեց չադրները, ըսավ.—Թակույին փախե, կորել է: Էլեկ էրտանկ թակավորին խաբար տանինկ:

Ելան բեռները բառծան, ընկան ճամպա, գնածին: Թակավորին խաբար տարան, թե.—Դու օր էդ կնգան մեշիծը բռնեծիր, էդի ջանավար էր, մառտ չէր: Սպանեց էրկու տղին, փախավ, ընկավ անտառը կորավ: Ինչ իլաջ էրեծինկ, չդառավ:

Թակավորը չիդեր ավտնար, թե չավտնար: Կնգան վայրենի գազան են ըսմ, սիռտը պատռմ է, հմը իլաջ չի գտնմ: Մնածել է մոլրված, ձեռը ծոծը՝ ման գալեն: Ինկը իրան կնգաց էդ բանը չի ավտնմ: Հմը չի կռնմ հասկնա, թե ը՞նչ՚է էդման էղե: Վեռճապես, թող թակավորը մնա մտածելեն, մենկ հլը տեսնինկ, թե կնիկն ինչ էղավ:

Կնիգն էր, առավոտ, օր լուսը բացվավ, ինկը տեսավ, օր ընդոնկ ընկան ճամպա, եդ գնածին՝ դիպա թակավորին: Էլ ո՞ւր բտի էրտայն: Ինկն էլ հա էկավ մեշի ղրաղները, տեսնի, թե ճամպոռտ-բան գուկա կանցնի, բալկիմ մե թուխտ՚մ գրե, ղրկե մառտուն, թե ինկը ուր է էրտմ: Ըդման լալով, լալ աշկով անդատար ման է գալմ:

Օր՚մ էլ, տեսնմ է, օր դավի զագուլակների զնգռտոց է գալմ: Կսե. «Կա, չկա, էս բազրկանի քարվանն է, յավաշ, մե թուղթ՚մ գրեմ դնեմ ճամպու վրեն, գվերծնե, տանի կուտա Ալիխան թակավորին»:

Բերավ ձեռած դրավ, գրեց, օր ըշտա. «Ալիխան ջան, ես էրտմ եմ իմ հորս երկիրը, անպաճառ գաս ընձի գտնիս: Հմը մտահան չենես, գալուց մտահան չենես՝ էրկու վազիրներին հետդ բերես»: Էդի գրմ է հմը չի գրմ, թե հերն ով է: Մառտուն օր թուխտը գրմ պոծնմ է, դառնմ է բազրկանին էլ խնտիրկ է գրմ.

Գլխուդ ղուրբան էղնիմ բազրկան բաշի,
Թուղտս տանիս Ալիխան թակավորին,
Նա՛ գիշերս գիշեր է, նա՛ զօրս զօր է,
Թուղտս տանիս Ալիխան թակավորին:

Աշխարկ ման էս էկե, դատռե, բեզարե.
Գեռտասպանիդ հմար, ապրուստ բերե,
Ես իմ գեռտասպանս եմ իզուր կործրե,
Թուղտս տանիս Ալիխան թակավորին:

Գալդ իմածա թեթևածավ ցավերս,
Թակավորին հայտնե ցավս, խոսկերս,
Ես էստեղից կերտամ էսօր գիշերս,
Թուղտս տանիս Ալիխան թակավորին:

Կսես չերևած, օր տեսնիմ ով էր,
Էրևմ էր սոտի դառտերը ծով էր,
Բաղեն թռած բլբուլի պես խոսող էր,
Թուխտս տանիս Ալիխան թակավորին:

Թուղտն օր գրեց պոծավ, սիրտը թետևածավ: Տարավ դրավ ճամպու վրեն, օր քամին չտանի: Ինկը էկավ էլի մտավ մեշի մեջ, պայվավ: Ու վրահաս տեսնելու, թե բազրգյանը թուղտը գվերծնե՞, թե՞ չէ: Տեսավ, օր բազրգանը էկավ մոտեցավ, իջավ դավի վրայից, թուխտը վերծրավ կառտած, ծալեց դրավ ծոծն: Աշեց չոռս բոլորը, տեսավ՝ մառտ չկա: Զարմածավ, ըսավ. «Է, ով որա է, տանիմ կուդամ, թակավորը հլբատ գիմանա՝ թուխտը ով է գրե»: Մտածեց բազրգյանը, նստավ դավեն, գնաց: Տարավ քարվանը իրան դուռը, հեչ բեռներն էլ վեր չդրավ: Տարավ թուխտը տվավ թակավորին:

Բազրկյանն ըսավ.—Թակավորն ապրած կենա, քու փեշկաշը գբերեմ, ըշտը, թուխտը բերի:

Թակավորն ըսավ.—Շնորակալ եմ բազրգյան քեզեն էլ, քու փեշկեշիցն էլ: Իշկան թանկ փեշկեշ բերիս, ըստից թանկ չէր էղնի: Հլը ես տի փեշկեշ տամ, օր դու էս աշկալուսը բերիր ընձի:

Ըսավ թակավորն ու ելավ կանչեց վազիրներին, ըսավ.—Ա՛յ մառտիկ, ես հլը ընձի կործրել եմ ղոլայ չէ, տուն՚մ գերտասատան կործնելը, բա դուկ էլա չե՞կ ըսմ գոյնա՝ էրտանկ ման

գանկ, էդ կնգան գտնինկ, դիվանն էնենկ: Էդի իմ ջուխտ տղին սպանե ու անդիվան պռծնի, թեզ էրեկ ձիան հեծեկ, էրտանկ ուրտեղ օր կորել է, ընդեղ ման գանկ, գտնինկ, գոյնե իրան էլ մենկ սբանենկ:

Թակավորն օր էդման ըսավ, վազիրներն արխեին ընկան, օր. «Թակավորը բռնե, ձեռած գսբանե, մեր էրած գեշուտենները էլ այան չեն էլնի»: Մտածեցին վազիրները, բերին, ամեկ իրան ձին նստան, ընկան ճամպա, գնածին:

Թող ըդոնկ էրտան, մենկ խաբարը տանկ կնգաց: Կնիկն էլ տեսավ, օր բազրգյանը թուխտը վերուց տարավ, ըսավ. «Տանի կուդա թակավորին, ես էլ մնամ ինչ էնեմ: Էրտամ հորս տունն, օր գան, ես հոն էղնիմ»: Ելավ գիշերը գնաց, զօրը պայվավ, չուրի հասավ հոր սինոռին: Գնաց տեսավ, օր հոր չոբանը հերանց օխճարն է առծծնմ:

Ըսավ.—Չոբան, առ իմ շորերս, քու շորերը տուր ընձի:

Չոբանն ըսավ.—Խանմ, ընճ'ես ծիծղմ վրես, ես էլ եմ մառտ, ինչ էնեմ, օր չոբան եմ:

Ախճիկն ըսավ.—Չեմ ծիծաղմ, չոբան, ընձի հարկավոր է քու շորերդ:

—Համ:

—Համ:

—Դե արի փոխենկ:

Հանեց իրան շորերը տվավ չոբանին, չոբանի շորերը ինկը հակավ: Հանեց մե օսկի'մ էլ տվավ չոբանին, ըսավ.—Ա՛ռ էս օսկին, էն թոխլին մոռտե, մինակ ղառինը տուր ընձի, մնածածը՝ քեզի:

Չոբանն առավ օսկին, օսկի չտեսած մառտ, ուրխծած քաշեց թոխլին մոռտեց: Թոխլու փորը թապեց, լված, բերավ տվավ էդ կնկան: Հմը ինկը չոբանը հեչ չի ճանճնմ՝ իրան աղի ախճիկն է: Կնիկն առավ ղառինը, իրան շեգ ու սիրուն մազի հուսակները փատեց գլոխը, ղառին թառսեց, քաշեց վրեն: Նստավ արևի տագը: Ձեռած չործավ, ինկը էլավ քաչլուկ: Էլավ գնաց հոր դուռը նստավ: Նեսեն դուս գալողները հառծրին.—Հա, ինչ մառտ ես:

Ըսավ.—Ախկատ մառտ եմ, էկել եմ, տեսնիմ գոռծ'մ չեկ տա՛մ, աշխատիմ ապրիմ:

Գնածին հորն ըսեծին, թե.—Ըշտա, ըսման մառտ'մ էկել է, գոռծ է ուզմ:

Հերն ըսավ.—Մեզի իշկան օր գոռծ կա, աշխատող էլ կա, ինչ էնեմ: Դե լավ, էն թոպալ ղազերը տվեկ, թող տանի առծծնե, իրան համար ճոտ'մ հաց ուտե, մեխկ է:

Բերին ղազերը տվին, ըսին.—Ահա, քեզի գոռծ, տար առծծրա, իրկուն բեր:

Քաչլուկն էր, ամեն առավոտ էլնմ էր իրան համար հաց-մաց կառներ, ղազերը գխառներ առաջը, կտաներ էն ճամպեկը, որ ճամպեկով, որ բտի գայն թակավորն ու վազիրները:

Էդման ամիս, երկուս քաշեց: Հա աշկը ճամպեկն էր: Չէ, մե օր'մ էլ տեսավ, օր ահա, իրեկ հոկի ձիավոր գալմ են: Ղազերն բերավ ճամպուն մոտիկ, ինկը կայնավ կոխկերը: Էկան, էկան մոտկծան, բարև տվին:

—Բարև, քաչլուկ ախպեր:

—Բարով, հազար բարի, ո՞վ եկ ո՞ւր եկ էրտմ:

Թե.—Ըշտա, ղարիբ մառտ էնկ: Էսի ո՞ր քաղակն է:

Թե.—Էսի էսինչ քաղակն է, օր էրտմ եկ տեղ:

—Խոնախխանա ունի՞կ:

—Չէ:

—էրտմ ենկ, օր խոնախխանա չունիկ:

—Գնացեկ Հաջի Սայադի տունը: Շատ լավ հացով, ղոնախասեր մառտ է: Էս էլ ընդուր ղազերն են, ես ընդուր ղազարածն եմ: Իրկուն, ես էլ գուկամ, թե խոսկ ու խաբար էլ հարկավոր է, ես գուցե գիտենամ:

—Լավ,—ըսավ քյաչլուկ ջան, շնորհակալ եմ, մենկ կերտանկ:

Ընդոնկ գնածին քաղկի կողմը:

Քյաչլուկի վրեն, օրը տարի դառավ.«Հա, ճ՞ պ բտի արևը մեր մտի, օր ես ղազերը տուն տանիմ»: Չէ զոռով-շառով արևը թեկվավ, ղազերն առավ, գնաց տուն:

—Յա,—ըսին, քյաչլուկ, էս վախտ ընչի՞ բերիր ղազերը:

—Ի՞նչ էնեմ, աղվեսները լազատ չտվին:

Տեսավ, օր ղոնախների ձիանը աղլն են, ուրխծավ: Իրկուն էր, նախրջիկը մալը բերին, չոբաններն էլ օխճարը բերին: Ամեկ իրանց բերածը, տեղավործրին: Ամեկ իրանց տեղավորվան: Քյաչլուկը գնաց հորը յալվար ընկավ, ըսավ.—Աղա ջան, ինչ կեղնի, էդ ձեր ղոնախներին ըսես մե բանմ նաղլ էնեն, անգաջ էնենկ:

Հերն ըսավ.—Քյաչլուկ ջան, դու գնա ըսա, օր բան գիդենան, քեզ էլ անգաջ կէնեն, կսեն:

—Համ:

—Համ:

Զատի քյաչլուկն էլ էդ էր ուզմ: Գնաց ղոնախներին նորից բարի իրկուն տվավ: Բարևն առան: Ասավ.—Թանկագին ղոնախներ, կարելի է՞ մե բան՝մ հնից է, թաժից է, նաղլ էնեկ, լսենկ:

Թակավորն ասավ.—Թե բան գիդենաս, դու գգիտենաս: Մենկ էս, էս չոռս, հինգ ամիս ձիանու վրեն բեզրել ենկ, բան՝մ գիտե՞ս ասա, անգաջ էնենկ:

—Է՛,—ասավ ախճիկը,—դուկ, օր չիդեկ, ես գիտեմ, ես կսեմ:

Նորից գնաց հոր քովը: Ասավ.—Աղա ջան, ի՞նչ կեղնի ընձի մե ղազ՝մ տաս:

Հերն ասավ.—Իա, քյաչլուկ ջան, մե ղազ՝մ չէ, էրկուս մոռտե:

Ասավ.—Չէ՛, մեկը բոլ է:

Բռնեց ղազը մոռտեց, իստկեց: Բերավ օջախը վառեց: Ղազը պղնձով դրավ օջախը՝ էպելու: Չոբնին ասավ.—Չոբան, հացթուխ պառավն էլ է՞ ստեղ, Թապտղն էլ է՞ ստեղ, զատի ղոնխներն էլ հոս էն ու հոս: Կառնիս դագինագդ գկայնիս դռան ետևը: Անուն մեկը տեղեն ժաժ էկավ, դագինակը գլխուն գիչնիս:

—Լավ,—ասավ չոբանը,—քյաչլուկ ջան:

Քյաչլուկն էր, առավ մե սազ՝մ ձեռը, կայնավ օդի ճարը:

Ասավ.—Գիտե՞կ ես բառադիա բան չբտի ասեմ: Ես շատ չլսված բան բտի ասեմ: Ով դուս էրտլու է, թող դուս էրտա: Ով նես գալու է նես գա:

Նա՛ դուս էրտող եղավ, նա՛ նես գալող: Քաչլուկս ասկսեց ասկզբից պատմել, չուրի վեռճը: Մեկ պատմմ էր, մեկ ասմ էր. «Ղազի ղավուր յանմասն սող դա խալավ օլմազն»:

Էպ օր հասավ էն տեղը, օր պառավը իրան տվավ Թապտղին, պառավը խառվավ իրար, ասավ.—Յաման իմ քունս տանմ է, թողեկ ես էրտամ:

Չոբանն ասավ.—Հեչ էրննա թապրամիշ:

Ու դակինակը թապ տվավ վրները:

Քաչլուկը էշխի էր էգե: Ոդը զարգմ էր գետին ու ասմ էր «Ղազի ղավուր յանմասն սուլտան խլավ օլմասն»:

Օր հասավ ընդեղ, օր թե Թապտղն էդ խեղճ ախճկան էսման նեղեծրավ, Թապտղն խառնվավ իրար ասավ.—Ես էսօր հիվանդ եմ, բտի թեզ քնիմ:

Չոբանը դագինակը թապ տվավ: Ասավ.—Հեչ տեղերեդ ժաժ չգակ:

Էլի քյաչլուկը էշխով նաղլը էնմ էր ու ոտը զարգմ էր գետին ու ասմ էր «Ղազի ղավուր յանմասն սուզդախազուֆ օլմասն»:

Եպ օր հասավ ընտեղ, օր ասավ՝ ախպերը տարավ կործրավ, ախպերն ասավ.—Տո էդի ես եմ:

Օր ասավ, ըշտա, թակավորն էկավ տարավ, թակավորն ասավ.—Քյաչլուկ ջան, ասա գլխուդ ղուրբան:

Քյաչլուկը ասմ էր ու ոդը զարգմ էր գեդին, ասմ. «Ղազի ղավուր յանմասն սուզդախազուֆ օլմասն»:

Պատմելեն էկավ հասավ օսկե խնձորին, ճամպա էլնելը, չուրի մեշեն հասնելը: Եպ օր ասավ, ըշտը, թակավորի հավատարիմ վազիրները տղեկը մոռտեծին, վազիրները փորացավ կպան.—Վա՛յ, մեռանկ, վա՛յ, հավար մեռանկ: Թողենկ էլնինկ դուս, էլի գանկ:

Չոբանը դագինակը թապ տվավ, ասավ.—Հեչ էրնա թապրամիշ:

Թակավորն ասավ.—Ասա քյաչլուկ ջան, ասա տեսնինկ՝ էդ ախճիկն ի՞նչ էղավ, ո՞ւր գնաց:

Քյաչլուկը էլի շարունակեց ասավ.—Էդ կնիգն էր, օր թուղտ ղրկեց մառտուն, ինկը արխեին ընկավ գնաց տուն, իրան հոր երկիրը:

Թակավորն ասմ էր.—Դե քյաչլուկ ջան, գլխուդ, արևուդ ղուրբան, դե ասա տեսնիմ՝ էդ կնիգը ի՞նչ էղավ, ո՞ւր գնաց:

Ասավ.—Էդ ախճիկը գնաց նստավ հոր դուռը: Հորից գոռծ ուզեց, հերն ասավ.—Գոռծ չունինկ, հմը օր խեղճ մառտ է, մեր կաղ ղազերը թող տանի առծծնե, հմը ախճիկան հերը չէր ճանճնմ: Ախճիկն ուրիշ ղլղով էր: Ախճիկն էլ դառավ ղազարած: Տանմ էր ամեն օր առծծնելու համ էլ բուսու էր պայմ, թե տեսներ՝ ով բդի գար իրանը ման գալու: Եպ օր տեսավ Ալիխան թակավորը իրան հավատարիմ վազիրների հետ գալմ էին, ախճիկն ասավ. «Գնացեկ Հաջի Սայադի տունը, ես էլ հիմի գուկամ»: Եպ օր ընդոնծը ղրկեց հոր տունը, իրան թբուտը չտարավ մնալու: Վախտիծը շուտ ղազերն առավ էկավ տուն, օր էս պատմուտենը էներ, համ մառտիկ ճանճնայն, թե քյաչլուկ ով է:

Ըսավ ու ղառինը գլխեն հանեց, օսկեթել մազերը թապավ թիկունկին Սաղ խառնվան իրար: Վազիրները ուզեծան, օր փախնեին: Չոբանը դագինակը թապ տվավ ըսավ.—Գլխներդ գջառտեմ, տեղերդ ժաժ չգակ:

Հա չոբանը էլնողներին չեր թողմ, օր դուս էլնեին ընդեղ էլ քյաչլուկին չէին թողմ օր խոսկը թմմեր: Հերն ու մերը մե կողմից էին փատտվմ պակմ, թակավորը՝ մե կողմից, ախպերն էլ մե կողմից էին փաթթվմ: Վեռճապես խախնդվան: Ախճիկն ըսավ հորն ու թակավորին.—Հայրիկ ահանի քու դուշմանները: Հիմի ընդոնց դիվանդատաստանը թողմ եմ ձեզի: Ինչղ գուզեկ դիվան էրեկ:

Հերը պառվին ու Թապտղին կապեց խամ ջորիկի պոճը, ըսավ.—Տարեկ սար ու քար պտդե, ղուռի ղաֆեկը տուն բերեկ:

Ջորիկը տարան զարգին քարեքար, սարեսար: Իրկուն ղուռի ղաֆեկը բերին: Թակավորը մնաց քանի՞մ օր: Ելավ, առավ կնկան գնաց իրան քաղակը: Մե վազիրին կապեց իրան ձիու եդևը, մե վազիրին էլ կնգա ձիու պոճիցը՝ էրկան թոգերով: Էդի վազիրների հմար սպանելուց գեշ էր ու անպատվորեն էր: Էդ տեսակ տարան իրանց երկիրը: Նոր ընդեղ թաժադան դիվան էրավ: Վազիրներին հանեց տարաղաջեն: Նոր ինկն իրան կնգա հետ ապրան ուրախ ու երջանիկ, չուրի հիմի ապրմ են: Ընդոնկ հասան իրանց մուրազին, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին: Վերևեն ընկներ հինգ գրվանկա խնձոր: Համ մենկ ուտեինկ, համ հեքյատ ըսողն ուտեր, համ լսողն ուտեր, համ էլ հեքյատ հնարողն ուդեր:

38(38). ՂԱՐԻԲՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԱԾ ՀԱՐՅՈՒՐ ՈՍԿԻՆ*

Մի մարդ գնում է ղարիբություն՝ աշխատելու: Մենք առաջ թուրքերեն լեզվով ասում ինք ղուրբաթ, չէ՞: Ինչպես հիմա կէրթան խամ ու խոպան, առաջ ղուրբաթ էին ասում: Ուրեմն, բավական ժամանակ մնալուց հետո, մի 4-5 տարի, մի հայրուր ոսկի փող է աշխատում: Մտածում է. «Այ մարդ, 4-5 տարին անցավ, գնամ տեսնեմ երեխաների դրությունը ինչպես է»:

Վեր է կենում, գալիս է, էն ժամանակ էլ չկար փոխադրական: Գալիս է ոտքով: Գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, հասնում է մի գյուղ, էդ ժամանակ ծարավում է: Մի դուռ կ'ծեծի, դուռը կ'բացվի, մի հոյակապ կին մը դուրս կուգա՝ թևերը վերև քաշած, փեշերը գոտին զարկած:

—Բարև, քույրիկ ջան:

—Բարև, ախպեր ջան:

—Ճամբորդ մարդ եմ, մի ջուր տու խմեմ, անցնեմ էրթամ:

Էս կինը ներս է մտնում, փոխանակ ջուր բերելու մարդուն, մի լավ ամանըմ՝ մազնի թան:

—Տիե, ճամբորդ մարդ ես, խմի գնա:

Էս մարդը մի հատըմ թանին կաշե, մի հատըմ կնկան կաշե: Մի հատըմ թանին կաշե, մի հատըմ կնկան կաշե:

—Ախպեր ջան, ծարավ ես, խմե գնա:

—Քեզի որ տեսա, կշտացա,—կըսե,—ծարավությունս արդեն կոտրավ: Էդ ի՞նչ կըսես, 4-5 տարի արդեն տանից դուրս եմ, ի՞նչխ անենք, որ ես ու դու մի հատըմ իրար տեսնինք:

—Ախպեր, ճամբորդ մարդ ես, թանդ խմե գնա, ինձ հետ ի՞նչ գործ ունես:

—Չէ, հայրուր ոսկի փող ունեմ, էդ գործը դզեցրու, հայրուր ոսկին քեզի փեշքեշ թողնիմ, էրթամ, ղուրբանդ էղնիմ:

—Որ էդպես է,—կըսե,—քիչըմ հետո մարդս ու տղես կուգան, եկան քեզի տունը տեսան, ի՞նչ պիդի ըսեն: Արի քեզի փաթթեմ խսիրը [խսիր գիտե՞ս, չէ՞][75]: Արի քեզի փաթթեմ խսիրը, կանգնեցնեմ դռան ետև: Իմ մարդը,—կըսե,—ինձի էնքան կ'սիրե, ինչքան Քրիստոսը՝ Միամեդին [որ հեչ չեն սիրի իրար, չէ՞]: Որ էկան, ես մարդուս կըսեմ, որ հիվանդ եմ, հեչ հնարավորություն չունիմ: Հեքիմ կանչեցի, ըսավ՝ մարդդ ու տղեդ չուր լուս պիտի դահուլ-զուռնա նվագեն [մարդը զուռնաչի է, տղեն էլ դահուլչի է], չուր լուս կչալեն մութը տեղը, դու կլավանաս: Էդի առանց փողի կեղնի, նվագը մեր տնից է:

—Է, կ'եղնի՞:

Կըսե.—Կեղնի:

—Դե որ կեղնի,—կըսե,—նստի հաց կեր, փաթթվի խսիրը, կաղնի դռան ետևը:

Էդ մարդուն հաց կուտեցնե, փաթթի խսիրը, կ'կանգնեցնե: Կնիկը յաթաղըմ, տեղն էլ կշինե թընդրի շուրթը, կլոխ-մլոխ կ'փաթթի, կ'պառկի:

75 Փակագծերում բանասաց Ռ. Վարդանյանի լուսաբանող խոսքն է (ծանոթ. կազմողների).

Կ'պառկի, մի կես ժամ, ժամըմ չանցած՝ մեկ էլ կտեսնի՝ սելը էկավ: Մարդն ու տղեն եկան արտից: Դե, կնիկը՝ ռանչպար մարդու, գյուղացու էլի... մարդը էկավ արտից, կինը պիտի էլնի դիմավորի, սելը տանի, օգնե մարդուն և այլն, և այլն: Կաշե՝ կնիկը դուրս չեկավ: Կնիկը որ դուրս չեկավ, մարդը կ'թողնի եզները, ներս կմտնի, տեսնի, որ կնիկը տեղով-բարձով պառկած է:

—Այ կնիկ, էս ինչ է...

—Սուս, կ'մեռնիմ, տաքության մեջ կ'եփիմ,—կըսե,—հնարավորութուն չկա:

—Բժիշկ, հեքիմ...

—Չէ: Եկան ըսեցին՝ չուր լուսին մարդդ ու տղեդ դահուլ-զուռնա պիտի նվագին, առավոտ դու կ'լավանաս: Բայց էն պայմանով, որ առանց ճրագ-լուսի, մութը տեղը:

—Էտի,—կըսեն,—ինչ է, էտի մեր փեշակն է: Կեղնի:

Ինչ որ է, կգան, էլ լուս-մուս չեն վառի...

—Դե էլի, գոնե կերակուր էփե, սոված կմեռնինք:

—Էլ ինչ կերակուր,—կըսե,—հիվանդ կ'մեռնիմ, ինչ կերակուր: Գնացեք էնտեղ՝ սինու մեջն էլ կարագ ու պանիր կա, բերեք կերեք, էսօր էլ էդպես յոլա գնացեք: Կերակուր չեմ էփե էսօր:

Ուրեմն, հաց կուտեն, կ'վերջացնեն, տղեն կ'վերցնե դահուլը, մարդը՝ զուռնեն, կ'սկսեն նվագելը: Սոնք որ կ'սկսեն նվագելը, էս դռան ետև խսրի մեջ փաթթված ճամբորթը, ինձմեն բեթար, խսրի միջից դուրս կգա, կմտնե էս կնգա ծոցը: Այ շավթալի, վեր շավթալի, շավթալի ջուխտը՝ բիր շահի... իմացա՞ր:

Լուս ու մութ, տղեն ու հերը կ'ելնին, սելը կ'լծին, կէրթան արտ: Կըսեն.—Թող մայրիկը հանգստանա, առավոտ կելնի:

Էսոնք որ կէթան արտ, մարդը կելնի տեղի միջից, կ'մտածի, որ. «Էս ինչ եղավ, մի գիշերվա մեջ հայրուր ոսկին ձեռքես առավ:—[Հայրուր ոսկի առավ, չէ՞].—Ես ինչխ տուն էրթամ»:

Էսպես, ճամբեն ընկած, առանց հաց ուտել կէրթա: Հայրուր ոսկին որ միտը կընգնի, իշու բնավորություն կուգա վրեն: Իսկ դահուլ-զուռնով կնգա մոտ պառկելը որ միտը կընգնի, ծուլի-ծուլի կ'թռնի, կուրախանա, կխնդա, կիրճվի, մի հոյակապ բանըմ:

Էդ ճանապարհը, ուրդից որ կէրթա, էդ ճանապարհի վրա էլ էն կնգա մարդու արտն է՝ զուռնաչու: Էրկու կողքերը արդերն են, մեջտեղն էլ սելի ճամբա է: Գյուղի ճանապարհ էլի: Հերը կտեսնի հեռվից կըսե. «Էս մարդ էս ինչ բան է, մեկ վեր-վեր կ'թռնի, մեկ հնգճները կ'կախի, էս ինչ բնություն է էկե վրեն»:

Տղին կըսե.—Մի գնա կանչե գա, էդ մարդուն:

Կէթա.—Հորեղբար,—կըսե,—արի էրթանք մեր արտը՝ հորս մոտը:

Կըսե.—Հերդ վո՞ւվ է:

Կըսե.—Մարդ է, ընդեղ նստած է իրա համար, քեզի կանչեց, գաս նստես պապիռոզ'մ քաշես, էլնաս էրթաս:

—Էրթանք,—կըսե:

Կելնին կուքան:

Կըսե.—Այ մարդ, ես քեզի մոտ մի կիլոմետրի վրա տեսա, դու, երբեմն ուրախ տրամադրություն կուգա վրեդ, երբեմն էլ իշու բնավորություն կուգա վրեդ, էլ չեմ պատկերացնի, դու հո հոգեկան հիվանդ չե՞ս:

—Չէ,—կըսե:

—Հիբա ինչ բան է, ասե,—կըսե:

—Իմ դարդիցս վազ արի, էն որ ես եմ քաշե, իմ թշնամիս չքաշե:

—Ախր, ինչ է իլել, ա՛յ մարդ:

Էսպես, էսպես, էսպես: Կ'պատմե ամբողջ բանը:

—Մի վախեցի,—կըսե,—հրեն էն կողքի արտը կը տեսնե՞ս, էդիկ էն կնգա արտն է,—կըսե,—քիչ հետո էդ կնիկը հաց կբերե արտը, կկանչենք, մեծ մարդ ես, բալքի փարեն ետ առնինք տանք, էրթաս քո ճամփեն:

Դե, էս կնիկը, հայրուր ոսկի աշխատած՝ մի գիշրվա մեջ, թևերը վեր քաշած, գոտիկը զարկեր է փեշերը, հերիք չէ, պուտուկը դրեր է ուսերը՝ շնգշնգալով կուգա: Էկա՜վ, էկավ, հասավ իրանց արտը, տեսավ, որ գիշերվա մարդը տեղ նստած է:

—Կնիկ, ինչ ես բերել:

Թե.—Հերիսա եմ բերել:

—Դե բաց մի, խոնչեն դի, հաց ուտենք:

Հացը կերան պրծան, վերջացրին:

—Կնիկ:

—Ինչ է, մարդ:

—Էս մարդուն կ'ճանչե՞ս

—Կ'ճանաչեմ

—Մարդ, դու էս կնգան կ'ճանչես:

—Հա,—կըսե,—էս կնիկն էր: Գիշերվա կնիկը էսիկ էր:

—Տո, քյոփօղլի,—կըսե,—իմ կնիկս է:

Մարդը ստեղ քիչ'մ ինչ կեղնի էլի:

—Կնիկ,—կըսե,—ինչքա՞ն ոսկի ես առել էս մարդուց:

Կըսե.—Հայրուր ոսկի:

—Տո, քյոփօղլի, դու որ ամեն քիշեր հայրուր ոսկի աշխադիս, մենք արտը ի՞նչ բիդի ընենք, եզն ի՞նչ բիդի ընենք, էս մեր չարչա՞ռանքն ինչ է, փարեքն ո՞ւր ա:

Թե.—Քովս է:

—Բեր տի, աշենք փարեքը:

Հայրուր ոսկին կնգա մոտից կառնի:

—Տղա ջան, էս մի ոսկին քեզի, որ չուր լուս դահուլ ես զարկե: Էս մի ոսկին էլ ինձի, որ չուր լուս զուռնա եմ չալել: Կնիկ, էս իրեք ոսկին էլ քո բոզութանդ հախը: Օղռաշ, էս խեղճ մարդուց հայրուր ոսկին ի՞նչխ կառնես, դու խիղճ չունի՞ս: Առ, էս ինսունհինգ ոսկին էլ քեզի, գնա, մեկ էլ տենց բան չանի՞ս:

Էստեղ էդ մարդուն ճամբու կ'դնեն, կէրթա:

39(39). ՀԱՎԱՏԱՐԻՄ ՎԱԶԻՐԻ ՊԱՏՄՈՒՏԵՆԸ

Վազիրը թակավորին շատ հավատարիմ էր: Էնքան հավատարիմ էր, օր հալալ ախպերը էդքան հավատարիմ չէր էղնի: Թակավորն էլ ուներ մեկուճար մե տղե'մ՝ քսանհինգ տարեկան, նոր է պսակե, ինքն էլ ծերածել է, գիտե, օր մահվան օրերը մոտեցել են, կանչեց վազիրին, ըսավ.—Վազի՛ր, ես ծերածել եմ: Կմեռնիմ, իմ տեղս իմ տղիս կտան թակավորութենը, թող տղես նստի իմ տեղ թակավոր, համա ջայել է, չի կռնա կառավարե, թող թակավորութենը տղես էնե, միայն դու բտի կառավարես: Դու ամեն գործին ծանոթ ես, դու լավ գը կառավարես, եթե ես տղա չունենայի, դու գը նստեիր իմ տեղս թակավոր, բայց օր տղա ունիմ իմ տեղս պտի նստի իմ տղես: Մինակ էման կառավարեք, օր ժողովուրդը դժգոյ չեղնի:

Թակավորն, օր ըսավ՝ ես, օր տղա չունենաի դու կնստեիր իմ տեղս թակավոր, էդ օրվանից վազիրի միտքը դառավ ղալբուտենի: Եղավ, օր թակավորը մեռավ, տղին նստըցրին տեղը թակավոր: Անունը եղավ թակավորուտենը տղինն է, համա խոսկը, իրավունկը, տուր ու առը, ամեն ինչը վազիրինն է: Համա էլի վազիրը չի հանգստանըմ, ըսմ է. «ինչպե՞ս էնեմ, օր էդ ջայել լագոդին վերջացնեմ, ես նստիմ տեղը թակավոր»: Մտածում էր ու երկրից-երկիր ման էր գալըմ՝ հնարը գտնելու, օր համ ուզըմ էր թակավորին վերջացներ, համ էլ ուզում էր չմեղավորնար: Ումը հանդիպում էր, հնարքը հարցնըմ էր, ընդուրը շատ օսկի, արծաթ էր խոստանըմ, պաշտոն էր խոստանըմ, ըսմ էր.—Ետե էդ թակավորին վերջածնեմ, ես գը նստիմ թակավոր, դու գնստիս իմ տեղը վազիր:

Վերջապես շատ ման էկավ, շատ հարց ու փորձ էրավ, վերջը գտավ մե դալակըմ, օր խոստացավ, ըսավ.—Ես իրեք թակավորի էս ածիլով թույնավորել եմ: Ա՛ռ էս ածելին, տա՛ր քո դալակին տուր, թող ըստրանով թրաշե էդ թակավորին: Տաս օրից եդ թակավորը կմեռնի, թախտը կմնա քեզի:

Վազիրն էր, հանեց բուռըմ օսկի տվավ էդ դալակին, ըսավ.—Որ օրը ես նստա թակավոր, դու էն օրը վազիրս ես:

Ըսավ, առավ ածելին, եկավ: Բերավ, կանչեց իրանցը թրաշող դալաքին, ըսավ.-Դալա՛ք, առ էս ածիլին պայե: Առավոտը, թակավորին թրաշելուց ըստով գը թրաշես: Էսի թույնավորած ածելի է, ըստով թրաշի, օր թակավորը թույնավորվի, մեռնի: Ես նստիմ տեղը թակավոր, քեզի նստցնեմ տեղս վազիր: Համա մուղատ կեցի մառտ չիմանա հա՛, թե չէ գլոխտ կզարկեմ:

Դալակն էր, որը վախենալուց, որն էլ ուրախնալուց, օր բտի եղնի վազիր հավատաց, համոզվավ, վերուց ածելին պայեց:

Թող, ըդոնք իրանց սև մտքերով, սև գործով պարապին, մենք խաբարը տանք թակավորից: Թակավորն էր, հինգ տարի թակավորելուց եդև մե օրըմ ըսավ.—Թակուի՛, նըստինք կառետը երտանք քաղքից դուրս, երթանք ծովի քյանարը, տեսնինք՝ հեչ ի՞նչ կա, ի՞նչ չկա: Մեր ժողովուրդը ի՞նչ կյանքի մեջ է, գոյ է, դժգոյ է: Տեսնինք, դառնանք գանք:

—Լավ,—ըսավ,—արքա՛, դու գիտես:

Թակավորն էր, ըսավ.—Կանչեք կառեթը:

Բերին կառեթը, նստան թակավորն ու թա-

կուհին, գնացին քաղքից դուրս, դիպա ծովի քյանարը: Տեսան, օր ինչ տեսնին, ժողովուրդը լիքն է, էման են, օր ասեղ քցես գետին չի ընկնի: Իրենք էլ իջան կառետից, ընկան իրար կողքի, գնացին տեսան՝ ժողովուրդը ուրախ-զվարտ, հագած-կապած, զարդարված, իրանց համար սեյրան են էնըմ, ուրախանըմ: Թակավորը շատ ուրախ եղավ, օր տեսավ՝ ժողովուրդը լավ վիճակի մեջ են:

—Թագուի՛, ինչ լավ եղավ, օր եկանք, տեսանք՝ մեր ժողովուրդը ըսման լավ վիճակի մեջ են: Դե արի երտանք մե քիչըմ առաջ, տեսնենք՝ էլ ինչ կա,—ըսավ:

Գնացին առաջ տեսան, օր մե տեղըմ, մե ծերունի՛մ նստած է ու չորս բոլորը կայնել են ու մեկ-մեկ դուս են գալըմ: Իրանկ էլ գնացին մոտիկ, տեսան, օր էդ ծերունին գրբաց է: Մառտկանց բախտն է ասըմ: Թակավորն ըսավ.—Թակույի՛, հլը կայնինկ տեսնինկ՝ էս մառտը բան՛մ գիտե՞, օր ժողովրուդին հավաքել է գլխուն:

Գնածին ղրաղ, նստան: Համպերին չուրի էդ մառտը աշեց, պռծավ: Դառավ ըսավ.—Թակավո՛ր, արի առաջ, սրեն քուկն է:

Օր ըսավ՝ թակավոր, արի, սրեն քուկն է, թակավորը ային-բեյին եղավ, ըսավ. «Այ մա՛ռտ, իմ շորերս փոխած, ես ջահել տղա, էսկան մառտը՝ ծանոտ-անծանոտ, ընձի չճանճծան, էս մառդը ինչպե՞ս գիտեծավ, օր ես թակավոր եմ: Ուրեմն էսի շատ բան գգիդենա: Ես բտի աշել տամ, տեսնիմ՝ ընձի ինչ կսե»,—մտածեց թակավորն:

Գնացին առաջ: Ըսավ.—Ծերո՛ւկ, ես թակավոր չեմ, դու ընձի ը՞նչ՛ես ըսըմ թակավոր:

—Հը՞, հը՞,—ծիծաղած ծերուկը,—վոռդի, դու ը՞նչ՛ես ընձի խապըմ, դու թակավորի տղա ես: Էս հինգ տարի է նստած թակավոր. Լավ թակավոր ես, բարի ես: Ժողովուռդիդ քաղծր աշկով կաշես: Համա դու աննով ես թակավոր: Գործով ու կառավարելով թակավորը դու չես: Թակավորը էնպես մառդ է, օր էրեսից հայլի է, տկանց ածելի է: Դու քեզի մուղաթ կաց, չվնասվես:

Թակավորն ըսավ.—Ես ինչ մուղատ կենամ, օր մառտիկ դուշմանուտեն էնեն տկանց: Ես ինչ բտի խաբար էղնիմ:

Գրպածն ըսավ.—Գիտե՞ս՝ ինչպես բտի խաբար էղնիս:

Թակավորն ըսավ.—Ինչ գիդեմ:

Գրպածն ըսավ.—Օր չիդես, ես քեզի մե խրատ՛մ կուդամ: Դու էդ խրատը միշտ միտկդ պայես, հեչ չմոռանաս: Ինչ կսես, ինչ գխոսաս, միշտ ըռաջ մտածե, նոր էրա: Մտածի նոր խոսա, մտածի նոր գնա, մե խոսկով՝ ամեն վախտ էդ մտածել խոսկը չմոռանաս: Էն վախտ դու գմնաս անվնաս,—ըսավ հալիվորն ու գիրկը ծալեց:

Թակավորն հանեց բուռ՛մ օսկի լցեց հալիվորի փեշը, շնորհակալ եղավ, գնաց: Գնաց իրան պալատը ու էդ օրվանից թակավորը էդ գրպաց հալիվորի խոսկը մտահան չերավ: Ինչ օր խոսմ էր տունը, դուսը, ամենկին էլ ըսում էր. «Մտածի նոր խոսա, մտածի նոր կեր, քնի, ելի և այլն»:

Էդման մի վախտ՛մ անծել էր: Դառծել էր թակավորի համար սովորական խոսկ: Ամեքի հետ էդման է խոսմ, մինչևի վազիրի գոռծը տեսնելը: Վազիրն օր բերավ ածլին տվավ դալակին, ըսավ.—Ըստով թակավորին գթրաշես:

Դալակը ելավ առավոտը լվացվավ, հաց կերավ, շորերը փոխեց: Վերծրավ իրան դալակի գործիքները, գնաց թակավորին թրաշելու: Գնաց, ամեն անկամվա պես մտավ թակավորի քովը: Իրեք անգամ գլոխ իջծրավ, բարև կապեց, կայնավ: Թակավոր ըսավ.—Մտածելով կայնի:

Դալաքը գիտեցավ՝ թակավորը հանաքով է խոսմ: Ձեն չհանեց: Բերավ փեժգիրը գցեց թակավորի դոշին, ջուր, սաբոն հազրեց, ածլին առավ ձեռն, օր բտի թակավորին թրաշեր թույնավոր ածլով: Թակավորն ըսավ.—Հա դալա՛կ, մտածելով գոռծ էրա:

Դալակը դողած, ըսավ. «Կա, չկա թակավորը ու վազիրը խոսկերը մեկ են էրե, օր ընձի դակի քաշեն, գլոխս զարգեն»:

Էլ դալակը տեղեն ժաժ չեկավ: Թակավորն ըսավ.—Հա դալա՛կ թրաշե, ընչի՞ չես թրաշմ:

Դալակն, օր թազա ածլին ուզում էր քսեր թակավորի էրեսին, թակավորը տեսավ ըսավ.—Էդ ինչ նոր ածլի է:

Դալակն ըսավ.—Ըստով բտի քեզի թրաշեմ:

Թակավորն ըսավ.—Դալա՛կ, լավ մտածե, նոր թրաշե:

Թակավորն օր էդման ըսավ, հմը ածլին դալակի ձեռնեն ընկավ: Թակավորն ըսավ.—Դա-

լա՛կ, էսօր ի՞նչ է պատայե քեզի, ընչի՞ լավ չես ժաժ գալմ:

Դալակն ըսավ.—Ի՞նչ ժաժ գամ, դու վազիրի հետ խոսկ մեկ եք էրե: Ուզում եք ընձի դաք էնեք:

Թակավորն ըսավ.—Դալա՛կ, մտածե նոր խոսա: Ի՞նչ դակ, ի՞նչ բան:

Դալակը ըսավ.—Դուք էս ածլին թույնավորել եք, տվել եք ընձի, օր ես մառտկանցը թրաշեմ մեռնին, ես էղնիմ մեղավոր, իմ գլոխը զարգեք:

Թակավորը բարկածավ, ըսավ.—Ա՛յ դալակ, խոսկդ պարզե, բան հասկնամ:

Դալակն ըսավ, օր.—Վազիրը բերել է էս ածլին, օր քեզի թրաշեմ դու մեռնիս 10 օրից եդ: Համ տվել եք, համ ըսմ եք. «Մտածե, նոր գոռծ էրա»:

Թակավորն օր իմծավ, պռունկը խածեց, ըսավ.—Վա՛յ, վա՛յ, ես էն գրբաց ծերուկին որտե՞ղ գտնիմ:

Մտածեց թակավորը, դառավ դալակին ըսավ.—Օր չսէի մտածելով գոռծդ էրա, դու բտի ընձի էդ թույնավոր ածլով թրաշեիր, օր ես վնասվեյի, հա՞:

—Հա՛,—ըսավ դալակը,—ի՞նչ էնեմ, վազիրը կարկադրել էր, օր անպայման բտի թրաշես: Ես էլ բտի թրաշեի, ուրիշ ելք չկար:

Թակավորն ըսավ.—Հլը լավ մտածե ուրիշ ելք չկա՞ր, ընչի՞ չկար: Բա դու չէիր կոնա՞ գա իմ քովս գանգատվեիր: Ես վազիրի դիվանը էնեի: Դե էլ ինձի մի թրաշե: Դու վնասավոր մառտ ես: Հիմի վազիրը գուկա, էդ ածլիով բտի վազիրին թրաշես: Չթրաշիր՝ գլոխդ կզարգեմ,—ըսավ թակավորն ու ելավ բալկոնը:

Ման էր գալմ, վազիրն էկավ թրաշվելու:

—Հառծլով,—ըսավ,—թակավորին թրաշի՞ր:

—Չէ՛,—ըսավ դալակը:

—Ընչի՞ չթրաշիր,—ըսկսեց բարկանա դալակի վրեն:

Դալակն ըսավ.—Թակավորն ըսմ է, թող էդ ածլիով վազիրն թրաշվի:

Վազիրն սկսեց բոռբռալ: Թակավորը ձեները իմծավ, էկավ նես, ըսավ.—Հա, ինչ խաբար է:

Դալակն ըսավ.—Էս ածլով չի թրաշվմ:

Թակավորն ըսավ.—Էլի, ես թրաշվիմ:

Թակավորն, օր ըսավ, վազիրն ուրխծավ ու տեղեն էլավ: Դալակը փեժգիրը քցեց, առավ ածլին, բտի թրաշեր: Թակավոր տեսավ, օր վազիրը հեչ չի ըսմ, թե էդ ածլիով մի թրաշե թակավորին: Թակավորն օր տեսավ վազիրն չի ըսմ մի թրաշե թակավորին, այլ դեռ ուրախ է, օր թրաշի: Հմը փեժկիրը դոշիծն պոկեց ու տեղեն ելավ ու վազիրին ըսավ.—Նստի թրաշվի էդ ածլով:

Վազիրը կմկմծրավ, ըսավ.—Ախր, ես քեզեն առաջ ո՞նց թրաշվիմ:

—Հը,—ըսավ թակավորը,—գուզես ընձեն եդ մեռնի՞ս, չե՞ս ուզե ընձեն առաջ թրաշվիս: Նստի՛, նստի՛, էս սհաթին թրաշվի,—կարգադրեց թակավորը:

Վազիրը նստավ: Դալակը փեժկիրը քցեց վազիրի դոշին: Վազիրը գողտուց քաշմ էր դալակի փեշից, ըսմ է.—Ուրիշ ածլով թրաշե ընձիգ:

Թակավորը կարգադրեց, օր էդ ածլով թրաշե:

Դալակը թրաշեց վազիրին: Չուրի թրաշեց պոծավ, վազիրի երեսը գոտեծավ: Յարեքն էղավ ծածկեց: Անչախ երեսը բռնեց, փախավ, գնաց տուն: 10 օր եդև մեռավ: Դալակի գլոխն էլ թակավորը զարգեց, ըսավ.—Հլա վազիրը ընձե վնասմ էր, օր նստեր իմ տեղս թակավոր, իմ թակավորուտենի համար էր ընձի վնասմ, հապա դու ի՞նչ շայ՚մ ունեիր, օր ընձ վնասմ էիր,—ըսավ, դալակի գլոխը զարկեց:

Գնաց իրան ձեռով իրան ածլի առավ, ինչ օր հարկավոր էր առավ բերավ, իրան քովն էլ պայեց: Ուրիշ դալակ էլ վերուց իրան միշտական թրաշող, օր վնաս չբերեն իրանը:

Լալեն մեղավոր էր՝ պատժվավ, թակավորն անմեղ էր՝ ազատվավ էդ մենձ փոռծանկից: Կյանկը փրկեց դուշմանից: Դուշմանը չօկտված՝ իրա փորած ֆորը ինկը ընկավ:

Ինչղ օր թակավորը պոծավ փոռծանկից, դուկ էլ պոծնիկ օրվա գալած փոռծանկից:

40(40). ԵՍ ՉԽՆԴԱՄ, ՎՈ՞Վ ԽՆԴԱ*

Թագավորը կանչե կը էրկու հատ զաբթյա [Զաբթյա գիտե՞ս ինչ է: Միլիցան էր չէ՞: Զաբթյա տաճկերեն կնշանակե միլիցաներ]: Կ՚կանչե, թե.—Գնացեք այսինչ գյուղը, էնդեղ

մի հատըմ մարդ կա, բերեք՝ կախարան պիտի հանինք:

Զաբթյեքը կելնին կուքան... Հինգ օր է, տաս օր է, վերջը կուքան կհասնին էդ գյուղը՝ ուշ ժամին: Արդեն գյուղը քնած է: Հարցնելով կ'քթնեն էդ տունը: Դուռը կծեծեն, մարդը կելնի դուռը կ'բանա, տեսնի՝ էրկու հատ զաբթյա՝ կառավարության մարդ, ուշ ժամին՝ իրանց տանը:

Թե.—Գիտե՞ս ինչի ենք եկե:

Թե.—Ես ի՞նչ գիտեմ, ինչի եք եկեր:

—Թագավորի հրամանով քեզի պիտ տանինք կախինք:

—Այ մարդ,—կըսե,—ի՞նչ հանցանքիս համար:

Թե.—Չգիտենք, թագավորի հրամանն է՝ պիտի տանինք կախինք:

Էդ խոսքի վրա կնիկը կ'զարթնի: Կնիկը որ կ'զարթնի, զ՚ՁՐթյեքուն կ'տեսնի... դե կնիկ մարդ է, կվախենա, չէ՞:

—Մարդ,—կըսե,—էս ի՞նչ բան է:

—Տո քյոփօղլու կնիկ,—կըսե թագավորը ղրկեր է զ՚ՁՐթյեքուն, որ ինձի տանի պալատ, բաշտոն տա:

—Մարդ ջան,—կըսե,—քեզի որ բաշտոն կուտա, գիտեմ, որ բիտի արձակուրդ գաս, ինձի մի ջուխտըմ կարմիր սոլ կբերես:

Մարդը լավ մը կ'խնդա.—Այ քյոփօղլի, ինձի կախարան կուտանին, ինձմեն սոլ կուզե՞ս:

Զ՚ՁՐքյեքը մարդուն կ'վերցնեն, կուգան: Օրը բավական կ'դառնա, հուլիս-օգոստոս ամիսներն է, շոգ է: Կուգան գյուղի մը միջից անցնելու ժամանակ զ՚ՁՐթյեքուն կըսե.—Ծարավ եմ, գնանք քիչ մը ջուր խմենք ախպրեն, անցնենք էրթանք:

Կուգան ջուրը: Ամռան ամիս, գեղի աղջիկներ, հարսներ, ալուալվան հագած, կարմիր ճտվտրիկ-պտվտրիկ, որը կժերով, որը մժերով եկեր են ջրի շուրջ կկայնին: Էս մարդը որ կուգա ջուրը խմելու, էս ախճիկներուն, հարսներուն կաշե, անհարմար է քիչըմ ասել, ճուճուլը կ'կայնի մարդու: Կ'կայնի, կ'խնդա. «Այ մարդ, իմ դարդ ու ցավս, ինձի հերիք չէ՞, կախարան կ'տանեն,—կըսե,—էս քյոփօղլու անտերը,—կըսե,—կայնե կը»: Մի հատ'մ էլ տեղ կ'խնդա: Մի հատ'մ էլ տեղ կ'խնդա, կանցնին, կուգան: Վերջը կուգան կ'հասնին, կանցնին թագավորին կ'զեկուցին, որ.—Ձեր հրամանը կատարված է, մարդուն բերել ենք:

Կասե.—Գնացեք ձեր մահլեն ըսեք, թող տարաղաջը սարքեն:

[Տարաղաջը գիտեք չէ, կախարանին կըսե թուրքերեն]

—Տարաղաջը,—կըսե,—թող սարքեն, վաղը առտուն ցուցադրական կախարան պիտի բարձրացնենք աս մարդուն:

Հաջորդ օրը թագավորն իրա շքախմբով, ամբողջ քաղաքին հայտարարված է, որ այսինչ, այսինչ մարդուն կախարան պիտի բարձրացնենք:

Կ'ելնին կուգան: Թագավորն ու թագուհին առաջին կարգում նստած են, ժողովուրդը՝ հետ: Կհանեն, որպեսզի կախեն: Աթոռն էնտեղ դրած է, չուվանն էլ կախած է: Էս մարդուն տակը կ'կանգնեցնեն, որ չուվանը գցեն վիզը, աթոռը տակից հանեն, էս մարդը կխնդա:

Որ կխնդա, թագավորը կըսե.—Այ մարդ,—կըսե,—դուն քու վերջին խոսքը խնդրե, հայհոյե, խնդրե, աղերսե, քեզ կախարան կ'բարձրացնենք, մի րոպե է քու ամբողջ կյանքդ:

Զ՚ՁՐքյայեն մեկը կուգա առաջ:

—Թագավորն ապրած կենա,—կըսե,—էս էլ իրեք անգամ է՝ կխնդա էս մարդը:

—Հբա ի՞նչպես, հլա բացատրե:

Կըսե.—Բացատրեմ, թագավոր ջան: Էսոնք որ էկան տունս, գիշերն ինձի ձեն տվին, էս մարդիկ ինձի կըսեն՝ քեզի կ'տանենք, կ'կախենք, կնիկս կարմիր սոլ կուզեր: Որ ես չխնդամ, վո՞վ խնդա: Եկեր ենք ախպրի գլուխ, իմ դարդ ու ցավս ինձի հերիք չէ, ախճիկ տեսավ, ճուճուլս էր կայնել: Ես չխնդամ, վո՞վ խնդա: Հմիկ բերեր ես էստեղ, ո՞չ դատ կա, ո՞չ դատարան կա, ինձի կախարան կ'հանիս... հա՛ կնգաս խելքը, հա՛ քու խելքը, հա՛ ճուճուլիս խելքը, մեկ են:

41(41). ԽՆԴԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սուլթանը էրկու զապտիա է կանչում մոտը ու ասում.—Գնացեք այս ինչ տեղեն, այս ինչ մարդուն բերեք, որ ես նրան կախաղան հանեմ:

Այդ մարդը ոչ մի մեղք չի գործե:

Զապտիեքը գնում են էդ մարդի տունը ու ասում են.—Ելի գնանք, սուլթանը քեզ կախաղան պիտի հանե:

—Ես չը գիտեմ, ի՞նչ մեղքիս համար սուլթանը ընձի կախաղան պիտի հանե, ես մեղք չեմ գործե:

—Էդ սուլթանի կամքն է:

Երբ զապտիեքը տանում են մարդուն, կինը ասում է նրան.—Ստամբոլ որ հասար, ընձի համար ջուխտ՚մ սոլ կառնիս:

Կնկա անխելքության վրա մարդու խնդալը գալիս է ու նա ծիծաղում է:

Ճանապարհին գալիս են մի աղբուրի մոտ ջուր խմելու: Մարդը երբ տեսնում է աղբրի մոտ ալ ու ալվան աղջիկներին ու հարսներին՝ նրա անդամը գլուխը բարձրացնում է: Մարդը խնդալը չի կարող պահել ու... ծիծաղում է: Մարդին տանում են սուլթանի մոտ: Հրաման է տալիս, որ նրան կախեն: Մարդուն տանում են տարաղաջի մոտ որ կախաղան բարձրացնեն՝ մարդը ծիծաղում է:

Սուլթանը զարմանում է մարդու վրա, որ նրան կախելու են, իսկ նա ծիծաղում է, ասում է.—Հետաքրքիր է ինչո՞ւ կը ծիծաղի:

Զապտիեքը ասում են սուլթանին.—Սուլթանն ապրած կենա, էդ մահվան դատապարտված մարդը էս է իրեք անգամ ծիծաղեց:

—Ա՜յ տղա,—հարցնում է սուլթանը,—ասա իրեք անգամ խնդալուդ պատճառները:

—Մեկ կնկաս խոսքերի վրա խնդացի, ընձի տանում են կախելու, ինքը ընձնից սոլ կուզե: Մեկել անգամը խնդացի էնոր համար, որ ընձի տանում են կախելու, աղբրի մոտ ջահել աղջիկներ ու հարսներ տեսնելուս անդամս կայնավ: Հիմի էլ ծիծաղում եմ նրա համար որ դու անմեղ մարդուն կախել կուտաս: Հա՞ կնկաս խելքը, հա՞ անդամիս խելքը, հա՞ քու խելքդ, սուլթան:

Սուլթանը ազատում է մարդուն:

42(42). ՍՈՒՏ ԳԻՏՈՒՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Մարդ ու կընիկ կեղնին, էդոնց ունեցածչունեցածը մե էշըմ կեղնի: Էդոնց գեղը մե հարուստըմ կընունք կէնե, մարդ ու կընիկ գելնին կէրթան: Էսոնց բանի տեղ չեն դընե: Սեղնի կողքերից հա կը քշեն դռան յէտևը, հա՞ կը քըշեն դուս: Էսոնք փոր ու փոշման գելնին գուգան իրանց տուն:

Կընիկը մարդուն կըսե.—Քյասիբ մարդու յէրեսին վո՞վ է աշողը, տեսնիս, օր մեզի բանի տեղ դնող չըկա, հարամ է էս գեղը ապրելը: Արի՞ յէլնինք, էշը վերցնենք, էս գեղից էրթանք, կորինք, բալքի մե հաջողությունըմ էլ մենք ունենանք:

Մարդը կըսե.—Այ կընիկ, ըսենք թե՝ էրթա՞նք, ես ո՛չ փեշակ ունիմ, ո՛չ էլ ձեռիցս մե բան գուգա, էրթանք ի՞նչ էնենք:

Կընիկը կըսե.—Հեչ մի վախենա, դու սուտ գըրբաց կեղնիս, հըլբըտ մե տեղըմ բախտերս կը բերե:

Էսպես մարդուն կը համոզե, գելնին գիշերը էշուն կը վերցնեն ու գիշերով ճամբա գընգնին:

Կէրթան, կէրթան. շատ ու քիչ աստված գիտե, լուսը կը բացվի, լուսը բացվի ձեր վըրա, ք՚ասնին մե թագավորի՚մ քաղաք, յաչքերուն չեն հավատա, թե ինչ բախչի կը հանդիպին: Դու մի ըսա՞, թագավորի խաս բախչեն է: Առավոտ շուտ թագավորի աղջիկը իրան նաժիշտներով յէլել է խաս բախչեն՝ ման գալու: Ջայել աղջիկ, իրան թայ աղջըկների հետ կըսե, կը խնդա, թռնին, իրար յէտևից կը վազեն: Ինչըղ կեղնի, թագավորի աղջըկա մատնիքը մատից գընգնի: Խաս բախչի ղազերից մեկը գուգա ու էս մատնիքը կուլ կուտա: Էսոնք՝ մարդ ու կընիկ, էշը կողքերը կայնել են ու պարըսպից սեյր կէնեն թագավորի աղջկան: Նեսը շատ օր կը խաղան, մեկ էլ թագավորի աղջիկը վարավուրդ կէնե, օր մատի բախչալի մատնիքը չկա, աղջըկներուն կըսե, ման գուգան էս կողմ, էն կողմ, թե մատնիք դըրել ես, արի գտի:

Կէրթան թագավորին կըսեն, թագավորը կը հրավիրե իրան գիտնականներին, կըսե.—Ինչ գուզե էղնի, աղջկաս մատնիքը բըդի գտնիք:

Էսոնք շատ կը մտածեն, կուտան, կառնին, գելնին կէրթան ման գուգան: Գուգան թագավորին կըսեն.—Թագավորն ապրած կենա, մենք չենք կըռնա քու կուրուստը գտնի:

Թագավորը կը նեղենա, կըսե.—Սա՞ղ քաղքով մեկ յիմաց տըվեք՝ վով օր իմ աղջկա բախչալու մատնիքը գըտնի, ես յիրան էսքան, էսքան օսկի կուտամ:

Քաղքով մեկ կը ձենձընեն... խաբարը գուգա կը հասնի էս քյասիբ մարդ ու կընկան:

Կընիկը մարդուն կըսե.—Մա՛րդ, մեր բախտը բացվել է, քելե էրթանք թագավորի քովը, դու նես մըտի, ըսա, օր աղջկատ մատնիքը ես կը գտնիմ:

Գելնեն կէրթան: Էս չլոտ մարդը ծառաներուն կըսե.—Թողեք էրթամ, ես մատնիքը կը գտնիմ:

Էս ծառաները չեմուչում կէնեն, թե էս չլոտն ուրտից էկավ: Դե թագավորի հըրաման է, ուզեն, չուզեն, բըդի նես թողնին:

Էս մարդը կէրթա թագավորին բարով կուտա, կըսե.—Թագավորն ապրած, թույլ տու քու խաս բախչեն մըտնիմ, ցույց տամ, թե որ ղազն է կուլ տըվե աղջկատ մատնիքը:

Թագավորը կըսե.—Խաս բախչեն քեզի, գընա՛, ինչ գուզես՝ էրա, մենակ մատնիքը գըտնիս:

Էս մարդը կէրթա խաս բաղչեն, թագավորի ծառաներին կըսե.—Էսինչ ղազը բըռնեք բերեք:

Բըռնեն կը բերեն, էս մարդը կը մորթե, մատնիքը փորեն կը հանե, բերե կուտա թագավորին: Պալատը, ինչքան օր մեծամեծ մարդիկ կան, սա՛ղ կը զարմանան, իրար յէրես կաշեն:

Թագավորն էս մարդուն կըսե.—Նըստի, կերևա՝ դու գիտուն մարդ ես, յէս քեզի գիտնականներիս շարքը բըդի նըստըցընեմ,—կըսե, դու բըդի իմ գիտունների հետ մըրցես: Թե կըռցա՛ր, լա՛վ, թե չէ, փասա-փուսեդ քաշե ու իմ քաղքից հեռեցի:

Բերե սա՛ղ գիտուններին կը հավաքե, կըսե.—Ես հըմի դուս կէրթամ, մե բանըմ կը պայեմ, նես գուգամ, դու բըդի ըսես, թե ինչ էր պայածը:

Էսպես... Թագավորը դուս գուգա, մե վարդըմ կը պայե, գուգա նես կըսե.—Հը՛, կըռնա՞ս ըսես՝ ինչ էր պայածը:

Էս մարդու փուսալեն կը կորի, գույն ու մույնը կը թըռնի, կը մտածե, թե էս ինչ խաթի մեջ ընկավ, կըսե.—Վա՛յ, Գյուլ, վա՛յ Գյուլ, էս ի՞նչ օրի ընձի քըցեցիր (դու մի ըսա, էս մարդու կընկա անունը Գյուլ կեղնի[76]: Էս մարդը իրան կընկան կը գըֆըտի, թագավորն էլ գիտե, թե էս մարդը իրան պայածի անունը կուտա՞:

Կըսե.—Ապրի՛ս, իմ հեչ մե գիտնականն էլ չէր հանե իմ պայածը, դու կը դառնաս էս գիտունների մեծը՞:

Բերի էսոր պալատ, տուն կուտա, ինչ օր պետքն է, էս մարդն էլ կնգան դըսեն նես կը բերե, էշու յէրեսին վո՞վ է աշողը, էշն էլ վըռընդեն, կէրթա:

Էսոնք՝ մարդ ու կընիկ թագավորի ապրուստի մեջ կը լողան: Էսպես վախտըմ կանցնի, մեկ էլ նոր փորձանքըմ գուգա թագավորի գըլխո՛ւն: Գիշերով հարամիները կը մտնին թաքավորի խազնեն, ի՞նչ կա, չըկա՛, թալնեն, կը տանին: Յառավոտ խաբարը կը տանին թագավորին, էսիկ կը կանչե իրան սինոտին ու գիտնականներին, կըսե.—Ի՞նչըղ էղնի, բըդի հարամիներին գըտնիք:

Գիտնականները կըսեն.—Թագավորն ապրած կենա, էդ բանը մենակ քու գիտունների գիտունը կըռնա գըտնի, մենք ի՞նչ կըռնանք:

Թագավորն էս սուտ գիտունին կըսե.—Հը՛, թե էսիկ էլ գտա՞ր, քեզի յավելի մեծ պաշտոնի կը դնեմ:

Էս մարդն էլի փուսալեն կը կորցնե, կը մտածե, թե. «Հըլը յառաջինը բախտըս բերեց, հըբը էսիկ ի՞նչըղ էնիմ...»:

Թագավորը կըսե.—Հը՛, ձեն հանե՛, Գտա՞ր՝ գտար, չը գտար՝ գըլուխըդ կը թըռցընեմ:

Էս մարդը կըսե.—Թագավորն ապրած կենա, ըսածըդ մե քիչըմ զոռ գործ է, դու ընձի քառսուն օր վադա տուր՝ կը գտնիմ: Գտա՞՝ գտա, չէ՞ թող քու ըսածը էղնի: Մենակ ընձի քաղքից դուս մե տունըմ տուր, օր նստիմ մըտածեմ:

Գուկա տուն կընկան կը պատմե, կընիկը կըսե.—Ի՞նչ էնենք, մեր բախտըն էլ էսպես է, բալքի աստված էլի մե դուռըմ կը բանա:

Թագավորն էսոնց քաղքից դուս մե տունըմ կուտա ու քառսուն օր ժամանակ:

Էս մարդը անգրագետ կեղնի, կընկան կըսե.—Այ կընիկ, բեր մե ջեբըս քառսուն հատ լոբի լից, օր ամեն իրկուն մե լոբի՛մ հանեմ, քըցեմ, տեսնինք՝ քառսուն օրը եփ կանցնի:

Կընիկը բերե էս մարդու ջեբը քառսուն հատ լոբի կը լըցնե: յառջի օրը՝ մութն օր գընգնի, էսոնք քնելու կեղնին, հարամիների գըլխավորը իրանցից մեկին կը ղրկե, թե.—Գնա՛, էս գիտունի յէրթիկից յանգաջ դիր, տես՝ կընկա հետ ինչ կը խոսա:

Հարամիներից մեկը գուգա էսոնց յէրթիկը պայ կը մտնի, յանգաջը ձենի կը պայե: Քնելու վախտ օր կեղնի, էս գիտունը ջեբից մե լոբի՛մ կը հանե, կըսե.—Կընիկ, քառսուն էր, մեկը գընաց, մնաց եռսուն ինը.—կըսե, լոբին կը քցե ու կը պառկին քընելու:

[76] Գյուլ թուրքերեն է, հայերեն՝ վարդ (ծանոթ. բանահավաք Հ. Մկրտչյանի):

Էս հարամին օր կը լըսե, յիրան ափալ-թափալ ցած կը քըցի, կէրթա հարամիներին կըսե.—Էսպես, էսպես, գըլխըներուդ ճարը տեսնինք: Ի՞նչ գիտեր, թե մենք քառսուն հոգով ենք կըտրե թագավորի խազնեն:

Եկրորդ օրը հարամիների մեծը էրկու հոգի կը ղրկե, կըսե.—Գնացեք էսօր էլի փորձեք, տեսնինք՝ ճիշտ կըսե՞, թե՞ չէ:

Ինչ օր է, գուգան էսոնք էլ կը սպասեն մինչև ուժ գիշեր, էս մարդը քնելու վախտը էլի լոբին կը հանի, կըսե.—Քառսուն էր, էրկուսը գնաց, մընաց յեռսունութը:

Էսոնք էլի կէրթան, իրանց մենձին կը զեկուցեն: Էսպես օրական մեկը գալիս ա, վերջին օրն էլ քառասուն հարամիներն էլ գուգան էս մարդու յէրթիկը գողտուկ կը սպասեն, յանգաճ կը դնեն: «Գիտունը» վերջին լոբին ջեբից կը հանե, կըսե.—Է՛, կընիկ, էլ ճար չըկա՞, քառսունն էր, քառսունն էլ գընաց, տակը բան չը մնա՞ց...

Էս հարամիները կը լսեն, տեսնին, օր էլ ճար չըկա, կը որոշեն՝ գան էս գիտնականի ոտը յընկնին, խընդրին, աղաչին, օր թագավորին չը մատնի՞, բերեն, ինչ օր տարել են, տա՞ն:

Գուգան քառսուն էլ էս մարդու ոտը գընկնին, կաղաչեն, գիշերով ի՞նչ օր տարել են, բերեն էս մարդու տանը կը դնե:

Խաբար տանք թագավորից: Յառավոտ թագավորը յիրան նազիր-վեզիրին հրաման կուտա, օր գան իմանան, թե գիտունը ինչ բանի է: Թե չի գտե, բերեն գըլուխը թըռցընեն:

Նազիր-վեզիրը գուկան, օր էս մարդը յիրան հըմար արխեյին քընել է: Դուռը կը զարկեն, կընիկը գելնի, նազուտուզով կը բանա: Կըսե.—Ի՞նչ կա,—տեսնի, օր թագավորի նազիր-վեզիրը:

—Է՛,—կըսեն,—ինչը՞ղ էղավ, գլուխըդ բըդի կտրե՞նք, թե՞ չէ:

Էս մարդը կըսե.—Ինչ օր կորել էր, գըտել եմ:

Գուգան կառեթներով, ֆայտոններով թագավորից գողցած օսկիները պալատ կը տանին: Էս մարդ ու կընկան էլ կառեթով, զուգած-զարդրած, առոք-փառոք թագավորի քովը կը տանին:

Թագավորը կըսե.—յէսօրվանից դու իմ տերության զորապետն ես, ի՞նչ զորք կա՝ քու ձեռիդ տակ:

Մարդ ու կընիկ թագավորական ապրուստի մեջ կը լողան: Կընիկը կըսե.—Տեսա՞ր, օր էլի բախտերս բերեց:

Կանցնի վախտը, հարևան թագավորը պատերազմ կը հայտարարի էս յերկրի թագավորին: Սինոտը կը նստի՝ խորհուրդ կէնե, թե ի՞նչ բըդի էղնի յերկրի դրությունը: Թագավորը կըսե.—Հեչ միք վախենա, սաղ էղնի մեր զորապետը, էնիկ յամեն ինչ կէնե:

Զորապետի թուքը բերնի մեջ չորցել է: Ի՞նչ էնե, շա՞ղ խելքը կը հասնի զորքից, կըռվից:

Գուգա տուն կընկան կըսե.—Այ կընիկ, հարամ էղներ էսպես թագավորական կյանքը, հըմի էլ կըռիվ է, զորք բըդի ղեկավրեմ, պատերազմ բըդի էրթամ,—կըսե,—կէրթամ, ու էլ իրար յերես չենք տեսնի: Յեսիմ, վո՞վ մեռնի, վո՞վ սաղ մընա: Արի կեղնի, մե քանի՞մ հատ բաղաջ սարքե, ծոցըս դընեմ, տանիմ հետը, քեզի օր կարոտցա, բաղաջը հանեմ, աշեմ, կարոտը առնիմ (նկար չի էղե):

Կընիկը լացուկոծով քանի՞մ հատ բաղաջ կը սարքի, մարդուն կը պագե ու ճամբա կը դնե: Էս զորապետս կէրթա զորքի յառաջ կը կայնի, կըսե.—Ես ձեր յառջից կէրթամ, ինչ օր ես կէնեմ, դուք էլ նույնը բըդի էնեք:

Էսիկ գընգնի զորքի առաջը, կէրթան: Կէրթան մե զըմբզըմբան գետիմ կը հանդիպին: Էս գետը անցնել չի էղնի: Զորապետը մե քարըմ կառնի կը քցի էս գետի մեջը: Կաշե՝ յետևեն, օր ի՞նչ... սաղ զորքը կըզացել է, քար կը վերցնե: Ամեն մեկը մեկ-մեկ քար առած՝ հա՛ կը բերեն ու կը լըցնեն էս ջըրի մեջը: Յանցնելու տեղ կը բանան, զորքը կանցնի: Էս կըռիվ էնող թագավորի սայմանը նըստին՝ քիչըմ կը դինջանան:

Օրերով ճամբա են էկե, դադրած-բեզրած զորք: Էս զորավարը վերևի շորերը կհանե, մեկ է կը տեսնի, օր սաղ զորքը մինչև գոտկատեղը չըբլըղցել է: Էսիկ շաբիկի վըրա օճիլ ման գուկա, մեկ է կաշե, օր սա՞ղ զորքը իրանց շաբիկների վրա օճիլ ման գուկան:

Գիտունի միտքը գընկնի իրան կընիկը, կըսե.—Հեյ, Գյուլ, տեսնիս՝ հըմի ի՞նչ կէնի, կը հանե բաղաջը, օր կընկա կարոտը առնի: Մեկ էլ յուրդից յուրդեղ էս թագավորի քաղքից մե գամփըռ շունըմ գուգա ու էս գիտունի ձեռից բաղաջը կը փախցընե: Բաղաջըն օր կը փախցընե՞, էս մարդը տեղից չբլաղ կը թռնի, մե քարըմ կը վերցնի ու գընգնի շան յետևից: Տեսնի, օր ի՞նչ,

սաղ զորքը, կիսից հետ չբլաղ, առանց զենքի, յամեն մեկը մեկ-մեկ հատ քար առած, քըրտընփըշած կը վազեն քաղքի վրա (բայց շան յետևից): Էս քաղքըցիք կը տեսնին ու լեղապատառ տընները կը փախնին: Դու մի՛ ըսա, էսիկ թագավորանիստ քաղաքն է: Խաբարը կը հասնի թագավորին, օր էսպես-էսպես:

Թագավորը գելնի բալկոն, կաշե, օր՝ հա՛յ-հա՛յ զորք էր գուգա, փողոցները տեղ ու դադար չըկա: Կը հանե ճերմակ բայրաղը թափ կուտա, կըսե.—Ախպեր, ես հաղթըված եմ:

Նոր էս գիտունը գըլխի գընկնի, օր հարևան թագավորի հողն է, կըսե.—Կայնեք:

Խաբարը կը հասնի իրան յերկրի թագավորին, օր, «Մեր զորքը հաղթել է, գիտունը առանց զենքի գրավել է դուշման թագավորի թագավորանիստ քաղաքը»:

Նոր գուկան, իրանց շորերը կը հագնեն, առոք-փառոք ետ գուգան: Կերուխում կեղնի օր ու գիշեր, էս էրկու տերության թագավորներն էլ իրանց թագավորությունը կուտան էս գիտունին, կըսեն.—Բարով վայելես ու միշտ տեր էղնիս մեր գըլխուն:

Էնոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Երկընքից ընգավ իրեք հատ խընձոր, մեկը՝ հեքյաթ ըսողին, մեկը՝ շատ խոսողին, մեկն էլ՝ ընձի:

43(43). ՆԱԽՐՉՈՒ ՏԵՐՏԵՐ ԴԱՌՆԱԼԸ

Մառտ ու կնիկ'մ կեղնի: Մառտը նախրչի կեղնի: Մեկել իրանց բարեկամին հառսնիկ կեղնի: Էդ մառտին էլ գկանճեն հառսնիկ: Գելնին մառտ ու կնիկ կէրթան հառսնիկ: Կերտան գմտնին նես: Գկայնին ոտի վրա, տեր եղնող չի էղնի: Գտեսնին, օր տերտերի, տիրածույի, գլավնու կնգտիկը էկան, կանչին վիրև: Տեղ տվին, նստեծրին, տեղավործրին, արաղ, գինի տվին: Կիրակուլ բերին: Մե խոսկով՝ պատիվ տվին: Նախրչու կնգան տեր չէղան:

Նախրչին ու կնիկը անբավական եդ դառան տուն: Էկան հասան տուն, կնիկը կպավ մառտու յախեն, ըսավ.—Մառտ, յա՛ բտի դու էլ օխնվիս տերտեր, յա՛ չէ, ես թողեմ, կերտամ, չեմ մնա: Դու տեսա՞ր, օր բոլորին կանճեծին վիրև, ընձի տեր չեղան: Նախրչու պատիվը ի՞նչ բտի էղնի: Չէ՛, օր չէ՛, գնա օխնվի տերտեր:

Մառտն ըսավ.—Ա՛յ կնիկ, աստված ունիս, ախր ես ի՞նչ, տերտերն ի՞նչ: Ախր ես «ա»-ն ու «բ»-ն չիդեմ, ի՞նչղ տերտեր եղնիմ:

—Չէ՛, օր չէ՛,—ըսավ կնիկը,—իմ գործս չէ: Գնաս բտի օխնվիս տերտեր:

Մառտը քանի ըսավ՝ ես տերտեր չեմ կռնա եղնիմ, կնիկն ըսավ՝ բդի էղնիս:

Մառտու ճարը կտռավ էլ չթրաշվավ: Միրուք թողեց, օր էղնի տերտեր: Մնաց վախտ'մ: Գնաց ջրի մեճն աշեց, օր միրուկն էկել է: Էկավ կնգան ըսավ.—Ա՛յ կնիկ, էլի էս գեղեն էրտանք: Էս գեղը մեզի ճանճնմ են: Էլի երթանք ուրիշ գեղ: Գոյնե չճանճնային:

Էլնմ են ունեցած-չունեցած թոփ էնմ, էրտմ են ուրիշ գեղ'մ: Հառծնմ են.—Հոս տերտեր կա՞մ:

Գեղածիկն ըսմ են.—Չէ՛, մեր տերտերն էս քանի օրը վախճանվավ: Տերտեր ենք ման գալմ, օր գա մեր գեղը հովե: Լավ է, օր դու քո ոդով ես էկե: Էղի մեզի տերտեր:

Կնիկն ըսավ.—Տեսա՞ր, մառտ, օր ըսում էի, դու ըսում էիր չի էղնի, բա ընչի՞ եղավ:

Ըդոնկ ըդեղ մե վախտ'մ մնացին: Էդ մառտը էլնմ էր ամեն առավոտ էրտմ էր ժամի դուռը բանալ էր տալմ, էլնմ էր բեմը: Ժամի գիրկը առնմ էր ձեռը, բեմի վրեն կայնմ էր ու յանի կառտմ էր, ըսմ էր.—Ես գնածի ջրի մեճն աշի՝ տերտեր էի, ես գնածի ջրի մեջը աշի՝ տերտեր էի:

Շելնիկը գալմ էն, կայնմ էն ժամը, տեսնմ են, օր տերտեր հեչ ժամի ասմունք չի ըսմ, թողմ էրտմ են:

Մեկ էլ հառսնիկ էղավ: Էկան տերտերին տարան, օր պսակե: Կնկան էլ տարան նստծրին ամենավիրևը: Կնիկն էլ գնաց գոռոզ-գոռոզ նստավ վիրևը ու աշմ էր շելնիկին՝ տեսներ հլը իրանը աշող, զարմանող կա՞մ: Հառսը պսակելուց էլի իրան գիդեցածն էր ըսմ... Մե մառտ'մ ըսավ.—Ա՛յ մառտիկ, էս նախրչի է, տերտեր չէ:

—Լա՛վ,—ըսին,—հառսնիկը պոծնինք, նոր խոսանք:

Հարսնիկը պոծավ, գնաց: Էն մառտը էկավ ըսավ.—Ա՛յ մառտիկ, ես կեղնիմ սուտ մեռել, տարեք դրեք ընձի ժամը: Ես էդ տերտերին լավ'մ հասկնամ:

Էդ մառտն էլ էղավ սուտ մեռել, բերին դրին ժամը, նաշի մեջ տարին դրին ժամը: Մնմ էր

հինկ օր: Օր տերտերը գալմ էր ամեն օր, յանի կարկը կատարմ էր: Առնմ էր ժամի գիրկը ձեռը, պտտվում էր նաշի բոլորը: Ըսմ էր.—Ես գնացի ջրի մեճ աշեծի, օր էղել էի տերտեր, ես գնացի ջրի մեջը աշեծի, օր եղել էի տերտեր:

Էդման շատ օր ըսավ, սուտ մեռելը ժաժ էկավ, յանի թե եդև հաստատվի, օր ինքն իմծել է, օր ինկը ոչ թե կառտմ է, ըսմ է, ինչ օր գիդե: Մեռելն օր ժաժ է գալմ, սուտ տերտերը փուռվարով սկսում է գլխուն տալ, խեղճ մառտը պատնված, կապած: Նա՛ կոնա էլնի, նա՛ կոնա փախնի: Քանի ճվմ, բոռմ է, ճար չի եղնմ: Էնկան է տալմ, օր սուդ մեռելը դառնմ է օղորտ մեռել: Տեսնմ է, օր մեռավ պռծավ, էլնմ է ժամի դուռը փակմ, էրտմ է տուն: Ճանպեն մեռելի տերերից ռաստ են գալմ, ըսմ են.—Տերտեր, մեր մեռելը ի՞նչղ է:

Ըսմ է.—Հայ անիծվի ձեր մեռելը, չուր մահածրի, հոկիս էլավ: Չէր մահանմ: Մի ավա ժաժ էր գալմ ու ճվմ, ճչմ էր:

—Վայ,—ըսին,—էս ի՞նչ է ըսըմ, քելեք հլը էրտանկ տեսնինկ:

Երտմ, տեսնմ են, օր օղորտ օր, սուդ մեռելը էղել է օղորտ մեռել: Բերմ են մեռելին թաղմ են, տերտերին էլ վռնդմ են, էրտմ է էլի իրանց գեղը, էղնմ է նախրչի: Հմը էդ օրից նախրչին ու կնիկը միշտ կռվմ են: Մառտը ըսմ է.—Քու էրեսեն, ես խեղճ մառտուն սպանեցի՝ եղա արնի տեր:

Կնիկն ըսմ է.—Անջաղ էղել էիր տերտեր, չբաշարեցիր գլոխ հանեիր:

44(44). ՆԱԽՐՋՈՒ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի օր թագավորն ու լալեն թաբդիր ղըլղ հագած ման են գալըմ իրանց երկիրը:

Ման գալով էկան մի նախրջու հանդիպան: Նախրջուն առաջարկեցին.—Կարելի է էսօր մեզի ղոնախ տանիս:

—Ղոնախը օր կա, Աստծունն է, համեցեք էրթանք մեր տունը:

Նախրճու հետ նրանք գալում են իրա տունը: Եփոր կինը տեսնում է, որ մարդ էկավ, սկսեց պատրաստություն տեսնել. կերցրավ-խմցրավ, տեղ շինեց էդ մարդիկներին՝ հանգստանալու համար: Ելան էդ մարդիկը հանգստացան: Շատ էին քնե, քիչ էին քնե՝ զարթեցին: Կինը տանջվում էր, չարչարվում եր տղոցկանիցավից: Եփ օր պարկավ ազատվավ, եղավ մի տղա: Բալուլեցին դրին տղոցկանի կողքը:

Լալեն քթի տակը ծիծաղեց: Լալեն իմաստուն էր:

—Հա, լալա, ինչո՞ւ ծիծաղեցիր:

—Քեզի փեսացու ծնվեց:

Թագավորը մտածեց. «Առավոտը որ կը լուսանա, ես էդ բալուլը կառնեմ կէրթամ, տեսնենք ընձի փեսա՞ կեղնի»:

Լուսը որ բացվում է հորն ու մորը առաջարկում է.—Շատ երեխա ունեք, էդ երեխեն էլ ընձի տվեք: Էնոր կշռքով մեկ օսկի կուտամ:

Բալուլը տալում են, օսկին վերցնում են: Թագավորը վերցնում է բալուլը: Գնաց սինոռից դուս էկավ մի քարափի գլխին դրեց բալուլը, ըսավ.—Էստեղ դնեմ բալուլը, թող ղշերը ուտեն:

Թողին գնացին:

Խոսքը տանք մեր չոբնին: Չոբանը տանըմ է օչխարը հանդը արածացնելու: Մի այծ ջկնվում է սուրույից և գնում է էդ քարափի գլխուն կայնում, որտեղ երեխան է, պտուկը դեմ է անըմ երեխային ու երեխին կուրծք տալիս:

Եփոր չոբանը սուրուն տուն է տանըմ կթելու համար, էծը գալըմ խառվում է սուրին և հետները գնըմ է տուն:

Եփոր օչխար նորից տանըմ է դաշտը արածելու,մի պառավ գալըմ է ու ասըմ.—Ա՛յ չոբան, էդ ամբողջ սուրին քուկդ է, դու իմ մե էծը ընչի՞ ես կթըմ:

Չոբանը պատասխանըմ է.—Ա՛յ մայրս, ես քու մե էծը ինչի՞ պիտի կթեմ:

—Իմ էծս էսօր կթած է,—ասըմ է պառավը:

Լուսը բացվավ չոբան սուրին տարավ էդ դաշտը արածացնելու: Էծը էլի գնաց ելավ էդ քարափի գլուխ, կուրծք տվեց, իրիկվան էկավ խառնվավ սուրուին, գնաց տուն:

Առավոտը էլի պառավը էկավ.—Չոբան, էս էրկու օր է էծս ընչի՞ ես կթըմ:

—Ա՛յ պառավ, ես քու էծդ չեմ կթե:

—Օր չես կթըմ, տես՝ էծս ով է կթըմ:

Չոբանը առավոտը էլի սուրուն տանըմ է դաշտը, տեսնըմ է որ էծը սուրուի մեջն է: Տեսնըմ է օր էծը ջկնվավ սուրուից ու գնաց դեպի քարափը: Չոբանը յետևեն գնաց: Տեսավ քարափի մի ճեղքվածքի մեջ կուլուլված շոր: Եփոր չոբանը մոտեցավ, էծը փախավ: Չոբանը վերցրավ շորը տեսավ մի էրեխա՝ շորի մեջ կուլուլված:

—Աստվածությունը ընձի տղա չէր տվե, էս իմ ղսմաթն է, էս էրեխեն տանիմ, ես կը պաշտպանեմ [խնամեմ]:

Սկսեց չոբանը երեխային կաթով կերակրել ու դարձավ իրան երեխա: Տղան սկսեց մեծանալ և ուրախանալ, խնդալ: Դառավ դպրոցական:

Գնանք թագավորի մոտ:

Թագավորը ու լալեն էդ երկիրը վերջացնելով, էկան ուրիշ երկիր, հանդիպան էդ չոբանին, ասացին.—Էսօր մեզ ղոնախ չե՞ս տանի:

—Ղոնախը օր կա, աստծունն է:

Չոբանը բերեց մարդկանց, հարգեց, պատվեց, մի գառ մորթեց: Եփ որ ճաշ էին ուտըմ երեխան նես մտավ: Լալեն քթի տակը ծիծաղեց:

—Հա, լալա, ի՞նչ կա:

—Հեչ, տեսնըմ եմ որ հերն ու մերը խորթ են երեխին...

Թագավորը հասկացել էր ամեն ինչ: Չոբանին հարց տվավ.—Ներողություն չոբան, էս երեխեն ոչ քեզ է նման, ոչ էլ կնոջդ, ճիշտ ասե, էս էրեխեն ո՞րտից է:

Չոբանը ասաց.—Ի՞նչ պահեմ քեզանե, աստված է ինձ տվե, դաշտից ես գտե, բերել եմ:

—Ճիշտ ըսա, չոբան, խոստովանի էս երեխեն որտեղի՞ց ես գտե:

—Ճիշտ որ ըսեմ, քարափի միջից եմ գտե:

Թագավորը մտածում է. «Իսիկ ընձի փեսա պիտի էղնի... Ինչ գուզե էղնի զոռով, շառով, խաթրով դրան պիտի տանեմ»:

Լուսը բացվավ, բարով բացվի մարդուս վրա: Թագավորը վեր ելավ: Ճաշ կերան վերջացրին, առաջարկեց չոբանին.—Էդ երեխան տվեք ընձի, ես այսքան օսկի կուտամ:

Հերն ու մերը չը համաձայնվան:

—Չե՞ք համաձայնվում, հա՛մ օսկին չեմ տա, հա՛մ կըսեմ թագավորին հրաման տա էրկուսիդ գլուխն էլ կը զարկե, երեխին էլ կը տանի:

Եփ այդ իմացան հերն ու մերը վճռեցին օսկին առնին, տղեն էլ տան: Թագավորը օսկին տվավ, տղային վերցրավ, լալայի հետ գնացին: Շատ գնացին, քիչ գնացին Աստված գիտե, հասան մի մեշայի մեջ:

Թագավորը կաղնու կլեպները թրով հանեց, իրար կապեց երեխային կապին այդ ծառից (թագավորը սուր վերցնելու, մարդ սպանելու իրավունք չուներ), լալան էլ չէր ուզում մարդ սպանել: Տղին կապին ծառից, իրանք թողին հեռացան:

Խաբարը տանք մի որսորդի: Էդ երեխան էրկու գիշեր դուսը ծառից կապած մնալուց յետո, լալում, մղկտում է: Որսորդը գալիս է, լսում է՝ երեխի ձայն կա, կարծում է թե իփիլ կոլոզն է երեխի պես լալում է, մղկտում է: Ման է գալում հետեն-հետեն գալում գտնում է երեխին: Ծառիցը կապած է, արձակում է, երեխեն սոված է. «Սոված եմ, սոված եմ»:

Համոզում է երեխին. «Տանիմ հորս-մորս մոտ որ ձենը կտրի»: Երեխին տանում է դեպի տուն: Իրանք էլ երեխա չեն ունենըմ: Երեխեն յոթութ տարեկան է, տալըմ են դպրոց: Ուսումը առնըմ է, մեծանըմ է, դպրոցը ավարտելու մոտիկ է:

Մի օր թագավորը ու լալեն ամբողջ երկիրը շրջեցին, գալըմ են հանդիպում են որսորդին, որը մեշի մեջ ավ է անըմ: Հարցնըմ են որսորդին.—Ի՞նչ մարդ ես:

—Որսորդ եմ, ինձ համար ավ եմ անըմ:

—Այսօր մեզի ղոնախ չե՞ս ընդունում:

—Ղոնախը օր կա ասծունն է:

Գնացին իրանց տունը:

—Է՛,—ըսավ,—ա՛յ կնիկ, բան-ման պատրաստե. հավերը ժարիտ արա:

Որսի մսից խորոված էրին բերին դրին յառաջները ու սկսին ուտելը:

Տղեն արդեն հասակը առել էր, դառել էր տասնըյոթ տարեկան սիրուն երիտասարդ, ուսումը ավարտել էր, գրքերը՝ ղոլթուղը նես մտավ: Իրանք ճաշե պրծել էին: Լալեն քթի տակը ծիծաղեց:

Թագավորը ըսավ.—Էդ տղային ճանաչո՞ւմ ես:

—Այդիկ քու փեսան պիտի էղնի,—պատասխանեց լալեն:

Երբ որ վերջացնում են ուտելը, լալեն ասըմ է.—Ա՜յ թագավոր, դու էսպես երիտասարդին, ինչպե՞ս էիր ուզում գլխին քալակ խաղալ:

—Որ էդպես է,—ասում է թագավորը,—քու խաթեր համար յառավոտը տես ի՞նչ պտի անեմ:

Եփ որ լուսը բացվում է, թող բացվի մարդկանց վրա, ժողովուրդի վրա, թագավորը մի թողթ է գրում ու տալում տղին.—Տանես կը դա թագավորական պալատը:

Թղթի մեջ գրում է. «Թագո՛ւհի, էս իմ գրաբերող տղի յիրկունը հասավ՝ յիրկունը գլուխը

կը զարկես, յառավոտը հասավ՝ յառավոտը կը զարկես»:

Փակում է փակեթը, փեչադը զարկում, ու տալը տղին.—Չը բանաս, տանիս թագավորին տաս, առ էս օսկին, ձի առ, նստի ու թեզ'մ գնա:

Հերն ու մերը սկսեցին լալ, թե.—Երեխա տղա, ինչ կրնա ձի նստի էրթա թագավորին նամակ տանի:

[Թագավորը հոր ու մոր ըսածը բանի տեղ չի դնըմ]:

Տղեն ձին նստում գնում է: Թող տղեն նամակը տանի: Թագավորը ու լալեն ելան ընգան ճամբա գեղից գեղ, քաղաքից քաղաք: Տղեն շատ գնաց, քիչ գնաց, գիտե Աստված, հասավ մի աղբրի, ջուր խմեց, յիրա համար հաց կերավ, հանգստացավ և ելավ շարունակեց իր ճամբան, հասավ թաքավորական երկիրը: Մթանը հասավ թագավորի քաղաքը, պալատի տակը ձին կապեց, այդտեղ ապրում էր թագավորի աղջիկը: Ինքն էլ բեզարած պարկավ քնեց: Լուսը բացվավ:

Թագավորի աղջիկը յառավոտը տեսավ տղին բալկոնի տակը պառկած, ըսավ.—Էս ինչ բան է զարմանալի, յավաշ էրթամ մոտը տեսնիմ էս ինչ խաբար է:

Յիջավ բալկոնից, տեսավ տղին, տեղն ու տեղը սիրահարվավ. «Էս ինչ գեղեցիկ տղա է»: Տեսավ, որ մի ծրար երևում է ջեբից դուս: Գողտուցիկ, կամաց, աղջիկը ծրարը հանեց, տեսավ ծրարի վրա հոր ստորագրությունը, ճանցվավ և սկսեց կամաց փակեթը բանալը, որ չը պատռվի ու կարդում է: Որ իմանում է գրածը, ուշքը գնըմ է.—Էս երիտասարդը ինչ է արե, որ գլուխը զարկե:

Մի թաժա թուխտ է հանըմ ու հոր պոչերքով գրըմ. «Այս տղան յիրիկունը եկավ՝ յիրիկունը աղջկաս հետ կը պսակես, յառավոտը եկավ՝ յառավոտը կը պսակես»:

Թագավորի աղջկան չկա՛ր զմո՛ւռ, չկա՛ր փեչատ: Գրեց պատրաստեց [փեչատեց] գողտուցիկ, տղեն հլը քնած է, բերավ սխմավ տղի ջեբին:

Աղջիկը վեր ելավ թխտխկալեն նարդվանեն ու ճվճվաց.—Էս վո՛վ է էկե ձին կապե թագավորի աղջկա պալատի բալկոնի տակին:

Տղեն վեր թռավ, շփեց իրա գլուխը [աչքերը] ըսավ.—Վա՛յ, ես ուշացա, ծրարը թագավորին տամ:

Ձին տանըմ գոմը կապըմ, գնըմ թագավորական պալատը:

Եփոր փակետը տալըմ են թագուհուն, տեսնում է, որ թագավորի ստորագրությունն է, կարդըմ է, ասըմ.—Էդ տղին կանչեք գա տեսնինք, ինչ մարդ է, որ թագավորը էդպես բան է գրե:

Տղին նես են բերում. տղեն թամալա է տալըմ, աթոռ են ցույց տալըմ, նստըմ է:

Թագուհին հարցնըմ է.—Էս փակեթը քեզ ո՞վ տվավ:

—Չիդեմ, չեմ ճանչնա, ըսավ՝ կէրթաս փակետը կուտաս թագավորին:

—Տղա ջան, հետդ ինչ ունիս:

—Մե ձիով եմ էկե, գոմը կապած է:

—Գնա ձին բեր, տար կապե թագավորական գոմը, դու էլ արի իմ քովը, ես քեզի բան պիտի ըսեմ:

Եփոր տղեն գալըմ է, թագուհին սինոդին կանչըմ է, թե էսպես բան կա: Սկսում են թադարուկ տեսնել: Աղջիկն ու տղեն միանում են: Տղին պսակեցին քեֆ էրին, վերջացավ:

Խաբարը տանք թագավորից; Օխտը ամիս տևեց դրանց [թագավորի և լալայի] գալը: Օխտը ամիս անցնելուց հետո աղջկա գոգնոցը բարձրացավ: Խաբար բերեցին, թե կառեթ ղրկեք թագավորը և լալեն գալըմ են: Լծին կառեթները, նստեցին, դոխ-մուզիկան չալելով, դոփ ու դմփոցով գնացին թագավորի յաղաքը:

Լալեն եփ որ տեսավ շամաթով գալըմ են՝ քթի տակը ծիծաղեց ու ասավ.—Թագավոր, տեսնի՞ս կը առաջի կառեթի գալողներին՝ փեսեդ ու աղջիկդ են:

Եփ գուկան հասնին կը թագավորը տեսնի կը, օր աղջկա գոգնոցը բանցռցել է:

Եկան հասան թոմառի պալատը: Աղջիկը տղի հետ գնացին իրանց տեղը: Թագավորը ջղայնանալով՝ կանչըմ է թագուհուն.—Էս ինչ բան է, ես թուխտ էի գրե, որ գլուխը զարկես... ո՞ւր է թուղթը:

Թագուհին բերում է թուղթը, տեսնում է, որ իրա ստորագրությունն էլ է իրանը, փեչադն էլ է իրանը, գրածը յընչի՞ է փոխվե, զարմանըմ է:

Թագավորը լալային ասըմ է.

—Լալա՛, էս անգամ էնպես բանըմ էնեմ, որ տղեն էլ չէրվա:

Լալեն թե.—Ինչ գուզես անել, ղսմա՛թ է, դու կը վերջանաս:

Թագավորը կանչըմ է իր բաղբանջուն, հրամայում.—Կէրթաս բաղի դռան առաջը փոս կը փորես, վառելիք կը պատրաստես, ես ում ղրկեմ առաջինը, քցե փոսը վառե: Յառավոտը թագավորը փեսին ասում է.—Գնա բաղից խնձոր բեր ուտենք:

Տղեն գնըմ է: Էդ ժամանակ ժամի զանկերը զարկեցին: Տղին ըսեր էին. «Որ զանկերը կուտան խաչակնքվի, յետո գործդ էրա»: Զանկերը որ կուտան, տղան մտածե կը. «Էրթամ մե հատ՚մ յառավոտը աղոթեմ, յետև էրթամ բաղը»:

Կէրթա կաղոթե, էստին-էնտին ժամանակ կանցնի:

Թագավորը մտածե կը. «Էրթամ տեսնիմ տղեն ինչպես վառավ, պրծավ»:

Թագավորը որ կէրթա, բաղբանջին էնոր հրնտե քցե կը փոսը, կրակը կը վառե, նաֆտը կը լցնե թագավորի վրեն:

—Ես թագավորն եմ...

Բաղբանջին յականջ չի անե: Թագավորը վառավ, վերջացավ:

Նոր տղին թագավոր կը նշանակեն: Հարսանիքի պատրաստություն կը տեսնին: Օխտը օր, օխտը գիշեր քեֆ ուրախություն:

Էնոնք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնինք մեր մուրազին:

45(45). ԵՐԱՋ ՄԵԿՆՈՂԸ

Մե քասիբ մարդ՚մ ու կնիկըմ յիրար հետ կապրին: Մարդը գործ չի ունենա, շատ խեղճ դրության կեղնին: Մե օր՚մ կնիկը կըսե մարդուն.—Ա՛յ մարդ, էսպես ապրել չի էղնի, մե գործ՚մ ճարե, թե չէ հետդ չեմ ապրի:

Մարդը մտածե կը. «Ինչ էնեմ, ինչ չենեմ, լավ է անունս տարածեմ երազ մեկնող»:

Էդպես էլ ձենը տարածվի կը՝ որպես երազ մեկնող: Մե քանի՚մ հոգու տեսած երազները դիզ-սխալ հանե կը ու տարածվի կը, թե ինքը երազ մեկնող է:

Մե օր՚մ, ինչղ կեղնի, էդ երկրի թագավորը մե երազ՚մ կը տեսնի, հմը հեչ մարդու չի ըսե թե ինչ է տեսե երազում: Պահանջե կը յիրա նազիր-վազիրից, որ.—Էրթան գտնեն էնպես մե մարդ՚մ, որ գա յընձի ըսե թե ինչ եմ տեսե երազս ու ինչ կը նշանակե տեսածս երազը:

Գուկան էդ նազիր-վեզիրը քաղաքները հարց ու փորց կէնեն, թե որտեղ կա երազ մեկնող մարդ: Սալը կուտան էդ մարդուն:

Գուկան նազիր-վեզիրը էդ մարդուն կը գտնին ու կըսեն, որ.—Դու պիտի էրթաս թագավորի քովը, թագավորը երազ է տեսե, դու պիտի պատմես թագավորին՝ ինչ երազ է տեսե ու ինչ կը նշանակե էնոր տեսած երազը:

Էդ մարդը մոլրի մնա կը. «Էրթամ թագավորին ինչ ըսեմ... ես բան չ՚իդեմ»:

Թագավորի հրաման է, պիտի էրթա: Մոլրած գընկնի ճամփա ու կէրթա... Ճամփեն բերզի կը ու նստի կը մե քարի՚մ վրա, օր հանգստանա:

Բիրդան քարի տկից մե օձ՚մ դուս գուկա ու կըսե.—Ա՛յ մարդ, յընչի՞ ես մոլրե:

Էնիկ էլ կըսե.—Ինչղ չը մոլրիմ, թագավորը յընձի կանչել է, օր ես էնոր երազը հանեմ, ես էլ չ՚իդեմ՝ ինչ երազ է, ինչ նշանակություն ունի:

—Ես օր քեզի խրատ տամ,—կըսե օձը,—օր էրթաս հանես երազը, էն դեպքում որ թագավորը քեզի փող տա, ընձի բերես բաժին կուտամ:

—Կուտամ, ինչխ չեմ տա:

Օձը կսկսե պատմել, օր.—Թագավորը տեսել է երազում օր երկնքից խոշոր ձան փաթիլներ կը թափի, գիտնին օր կը հասնին, գել կը դառնան, դու թագավորին զգուշացրու, որ օրենքները խստացնե, մարդիկ գիլու բնավորություն են ստացե, յիրար կուտեն, թե չէ երկիրը կը քայքայվի: Թագավորը զարմանա կը, որ դու յիրա երազը հանեցիր... քեզի պարգևներ կուտա:

Մարդը կէրթա թագավորի քովը, պատմե կը տեսած երազը, էնպես ինչպես օձն էր պատմե: Թագավորը ուրախությունից էդ մարդուն բավականին օսկի փեշքաշ կուտա:

Էդ մարդը կառնի օսկին, յետ գուկա էն ճամփով, որտեղ պատահել էր օձին ու մտածե կը. «Ափսոս չէ՞ օսկին տամ օձին, լավն էն է որ էնոր սպանեմ»: Մե քար՚մ կը պահե փեշի տակը ու գուկա օձի բնի քովը: Օձը գլոխը քարի տկեն դուս կը հանե քիչ՚մ: Էդ մարդը քարը զարկե կը օձի գլխուն՝ հմը չի դիպնի, օձը գլոխը նես կը քաշե:

Էդ մարդը գելնի գուկա յիրա տունը: Բավականին կը հարստանա էդ օսկով:

Մեկել տարին թագավորը էլի երազ՚մ տեսավ, հրամայեց էն մարդուն բերել: Էդ մարդուն

կանչեցին թագավորի քովը, որ երազը հանե:

Էս անգամ էլ մարդը կամա-ակամա էկավ օձի քովը: Օձը էլի դուս էկավ, ըսավ.—Ա՜յ բեղեյրաթ մարդ, հիմի օր չըսեմ, գլոխդ զարկե թագավորը, լա՞վ կեղնի, հմը կըսեմ, մենակ որ թագավորից փեշքաշ ստացար էս անգամը բերես կուտաս ընձի:

—Կուտամ, յըլբթ կուտամ,—կըսե մարդը:

Էդտեղ օձը կըսե.—Էս անգամին թագավորը երազը տեսել է, օր երկնքից ձան փաթիլների տեղը աղվեսներ կը թափին: Դու թագավորին զգուշացրու, օր յիրա երկրի մարդիկ աղվեսի (խորամանկ) բնություն կստանան, գիլու դեմ հանած օրենքներդ փոխե, աղվեսների դեմ օրենքներ ստեղծե՛. ուրեմն գուկաս,—կըսե օձը,—յընձի ստացածիցդ բաժին կը հասցնե՞ս:

Մարդը կէրթմնա, օր անպայման բաժին կուտա:

Էդ մարդը կէրթա թագավորի երազը կը հանե, պատվերները կըսե էնպես, ինչղ օձն էր ըսե: Թագավորը էդ մարդուն նորից բավականին օսկի փեշքաշ կուտա:

Էս մարդը գուկա էլի էն ճամփով ու կը մտածե. «Ինչղ ղմշիմ իսի օսկին տանիմ էնոր տամ, մե հնար՞մ գործ դնեմ խոստացածս չը տամ»:

Օսկիքը, փարեքը պահե կը ծառի՞մ տակը ու ինքը գուքա օձի քովը, կսկսե երթում ուտել, որ ոչինչ չը տվեց յընձի թագավորը:

Օձը ցույց կուտա, օր հավատաց: Մարդը գուքա տուն: Կանցնի մե տարի՞մ: Թագավորը էլի երազ կը տեսնի: Էլի կէրթան կը կանչեն էդ մարդուն: Էդ մարդը էլի գուկա օձի քովը:

Էս անգամ օձը խրատ կուտա մարդուն, օր.—Թագավորը երազ է տեսե, օր երկնքից ձան փաթիլների տեղը էս անգամը գառ է թափե, դու թագավորին ըսա, օր գառը խաղաղության նշան է, քու երկրիդ մարդիկ էլ յիրար չեն խաբե, հաշտ ու բարիշ կապրին:

Թագավորը շատ կուրախանա, էս անգամը ավելի շատ օսկի և փեշքաշներ կուտա: Մարդը ճամփա գընկնի օձի քովը: Ու մտածե կը (գառի բնավորություն ունի). «Էս բոլոր բարիքները ես օձից եմ ստացե, էնոր շնորքն է, արի կեղնի բիթուն ստացածս էնոր տամ»:

Մարդը գուկա օձի քովը: Էս անգամ օձը առանց վախենալու ազատ դուս գուկա, մարդը կըսե.—Բիթուն ստացածս կուտամ քեզի:

Օձը կը հրաժարվի ընդունելուց էդ հարստությունը ու կըսե.—Ես օձ չեմ, քու էդ հարստութունդ էլ յընձի պետք չէ, դու գնա վայլե: Ես օձ չեմ, Աստծու հրամանով օձի կերպարանք եմ ընդունե, օր քեզի փորձեմ:

46(46). ԹԱԿԱՎՈՐԻ ԷՐԱԶ ՏԵՍՆԵԼԸ

Թակավորը քնած էր: Տեսավ երազին, օր երկնկից աղվես էր թապմ: Ելավ առավոտ, թալալ քցեց, քաղկից քաղակ, գեղից գեղ, երկրից երկիր, թե՝ ով օր իմ էրազը բացատրե, ես ընդուրը բավականին հարստուտեն կուտամ: Ով օր կռնա բաձադրե, թող գա թակավորի քովը:

Հեռու, շատ հեռու գեղ՞մ կար: Էդ գեղը մե մարդ՞մ ու կնիկ ունեին օխտը-ութ էրեխա: Դառն ախկատ էին, օրվա հացի կարոտ: Էս խաբարն օր լսեց, ըսավ.—Կնիկ, ես բտի էրտամ թակավորի քովը, բան՞մ ըսեմ: Յա՛ ասված կուտա, յա՛ կառնե: Թե դրուստ եղավ, բան՞մ կուտա: Բերեմ կուտենկ, կապրինկ, թե սուտ դուս էկավ, թող գլոխս զարգե, հոկիս ազատի:

Կնիկն ըսավ.—Ա՛յ մառտ, էդիկ քո խելկի բանը չէ, թարկը տուր, նստի տեղդ, մեխկ ես:

—Չէ՛,—ըսավ,—ես բտի էրտամ, էսման ապրելը ու մեռնելը, մեռնելը լավ է ապրելուց: է՛, բտի էրտամ:

Ըսավ, փետ՞մ առավ ձեռը, ընկավ ճամփա, գնաց: Գնաց, գնաց, շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը ինկը գիտե: Գնաց մե չակլի՞մ կողկից ասնմ էր, տեսավ մե օձ՞մ գլոխն հանեց, ձեն տվավ, ըսավ.—Պապի ջան, ո՞ւր կեռտաս:

Ըսավ.—Իմ դառտիցս վազն արի, ես ի՞նչ գիտեմ՝ ո՞ւր կեռտամ:

Ըսավ.—Էրտմ էս թակավորի երազը հանելո՞ւ:

Գեղածին զարմածավ, ըսավ. «Էս անասունը ինչ գիտե, օր ես էրտմ եմ թակավորի էրազն ըսելու»,—դառավ օձին ըսավ.—Հա՛, ըշտը, էրտմ եմ թակավորի էրազն ըսելու:

Օձն ըսավ.—Գիտես՝ ի՞նչ բտի ըսես, օր էրտըմ էս:

—Չէ՛, ի՞նչ գիտեմ,—ըսավ,—յաբախտնա էրտմ եմ: Մե բան՞մ ըսեմ, թե օղորտ եղավ, բան՞մ տա բերեմ, էրէխանկս ապրին, թե օր օղորտ չեղավ, թող գլոխս զարգե, հոկիս ազատի, բոլ է տանջվիմ:

—Դե, օր ըդման է գնա, ըսա՝ թակավորն ապրած կենա, դու երազիտ տեսար, օր երկնկից աղվես էր թապմ: Թակավորը քեզի բավականին օսկի կուտա: Բերես ընձ էլ կուտաս:

—Վայ,-ըսավ գեղացին,—բա առանց քեզի տալու կերտամմ:

Ըսավ, շնորհակալ եղավ, ընկավ ճամպա, գնաց դիպա թակավորին: Գնաց, գնաց, վեռճապես հասավ թակավորի քաղակը: Գնաց, թակավորի դարբազից ուզմ էր անցներ: Դռնապան չթողեց:

Ըսավ.—Էկել եմ թակավորի երազը ըսելու, թողեկ էրտամ:

Չթողին, թե.—Դու ի՞նչ, քու էրազ ըսելն ինճ:

Գնացին ըսին թակավորին, թե.—Ըշտա, էսման մառտ՚մ է էկե, օր քու էրազդ պատմե:

Թակավորն ըսավ.—Տարեկ բաղնիկ, լողծրեք, շորերը փոխեկ, բերեկ հոս:

Գնածին: Տարան մառտուն բաղնիկ, լողծրին, շորերը փոխին, բերին թակավորի քովը: Իրան սովորականի պես բարև տվավ: Թակավորն իզին տվավ՝ նստելու: Նստավ:

Թակավորն ըսավ.—Ը՞նչ՚ես էկե:

—Էկէլ եմ էրազիդ հանելուկը ըսեմ:

Թակավորն ըսավ.—Կռնա՞ս ըսե:

Ըսավ.—Օր չկռնանայ, չէի գա:

—Դե ըսա, տեսնիմ,—ըսավ թակավորը:

Գեղածին ըսավ.—Թակավորն ապրած կենա, դու տեսար, օր էրկնքից աղվես էր թապմ:

—Դրուստ է,—ըսավ թակավորն,—տարեկ էս մառտուն բավագանի օսկի տվեկ, թող էրտա:

Տարան խուռջնի էրկու աշկը օսկի-առծաթ լծին: Մառտն առավ, գնաց: Գնաց, օր օձը չտեսնի, անցավ գնած տուն: Տարավ օսկի-առծատը: Քյասիբ մառտ էին, կերան, տուրկ ու տալիկ տվին, ռադ էրին գնաց: Հմը թակավորը ինկը գիտուն մառտ է, աշխարկ է կառավարմ: Մտածելով, թե՝ գուծե նորից էրազ տեսնիմ, մարտու անուն, ֆամիլը, ադռեսը, վերծրավ: Թակավորն էր, նորից էլի էրազ տեսավ: Նամագ գրեցին, ղրկեց էդ մառտուն, թե՝ թեզ արի, օր թակավորն էլի էրազ է տեսե:

Մառդն, օր իմածավ, լեղին ջուր կտռավ, ըսավ. «Օձին էլ խապեցի, օր էլի էրտայ քովը: Աղաճանկ, պաղատանք էնեի, էլի բան՚մ ըսեր: Ես էրտամ, իմ գլոխս գզարգե թակավորը: Չեմ էրտա»:

Կնիկն ըսավ.—Ա՛յ մառտ, էն անկամը քու կամկովը գնածիր, ես օժար չէի, հիմի թակավորն ինկն է կանճմ, չես էրտա: Գնա էլի օձին յալվար ընկի, բալկիմ բան՚մ խրատ տա, կետաս, բան բերես, էս էրեխեկը չը կոտորվին:

—Չէ, օր չէ, ես չեմ էրտա:

Թակավորն էլ հա կանճմ է: Չէ, գեղի գլավնին զոռով ղրկեց: Էլավ գնաց: Հասավ չագլին մոտիկ, ճամպեն ծռեց, հեռևից գնաց, օր օձը չտեսներ: Մեկ էլ օձը գլոխը հանեց չակլի միջեն, ըսավ.—Ա՛յ մառտ, ո՞ւր ես էրտմ:

Մարտը ամոտ-զամոտ ըսավ.—Թակավորը էրազ է տեսե, կանճել է: Էրտմ էմ էրազը բացատրելու:

Ըսավ.—Գիտե՞ս՝ ինչ էրազ է տեսե, օր էրտմ ես:

Ըսավ.—Չէ՛:

—Բա ո՞ւր էս էրտմ: Չէ, օր թակավորի էրազը դրուստ չպատմիր, թակավորը գլոխդ գզարգե:

—Ի՞նչ էնեմ, ես չէի էրտմ, ընձի զոռով ղրկեծին:

—Դե, օր ըդման կերտաս, կսես՝ թակավորն ապրած կենա, դու էրազիդ տեսար, օր էրկնկից սուր ու սանդերկ էր թապմ: Թակավորը քեզի բազում ապրուստ կուդա: Բերես՝ ընձել կուտաս, հա՞:

—Վա՛յ,—ըսավ գեղածին,—բա առանց քեզի տալ, գուզես սաղ տամ քեզի, թակիլան իմ գլոխս պռծծրիր էդ կրակից:

Ըսավ՝ մնաս բարով էրավ, ընկավ ճամպա, ուրախ-ուրախ գնաց դեպի թակավորին: Գնաց հասավ դարբասին: Էս անկամ դռները լեն բացին, էլ չառկելին: Մառտը խբառտ-խբառտ գնաց մտավ թակավորի պալատը: Ելավ վիրև, գնաց թակավորի քովը: Բարև տվավ, բարև առավ: Թակավորն ըսավ.—Հա, էկէ՛լ ես:

—Էկել եմ,—ըսավ գեղեծին:

—Դե պատմե տեսնիմ՝ ես ինչ էրազ եմ տեսե:

—Թակավորն ապրած կենա, դու տեսար, օր էրկնկից սուր ու սանդեր է թապըմ:

—Աֆարմ, շատ դրուստ է,—ըսավ թակավորը,—տարեկ էս մառտուն, բավականին ապրուստ տվեկ, թող էրտա:

Տարան, էլի խուռջին՚մ օսկի տվին, առավ գնաց: Գնաց, հասավ չագլին մոտիկ, քար՚մ

վերուց ձեռը: Օձն գլոխը չակլից հանեց թե չէ, քարն զարգեց օձին: Օձը գլոխը պայեց: Ինկն օսկին առավ էկավ տուն: Է՛, քոտնկով գալած մալ չէր, դես վատնեծին, դեն վատնեծին ծախսին-մխսին, գնաց: Էլի մնածին հին օրին: Մեկ էլ տեսան, գզիրն էկավ, բերավ թուխտը, ըսավ.—Ա՛ռ կառտա:

Առավ կառտալ տվավ: Իմածավ, օր էլի թակավորը կանճել է: Էրազ է տեսե: Կանճել է, օր երազը պատմե, հանե: Մառտու լիզուն լալկավ ըսավ. «Ես ինչ գիտեմ, օր էրտամ: Ինչ ըսեմ, օձին էլ զարգեցի: Հլը էն անկամ խապեցի, ըսավ՝ հլբատ քյասիբ մառտ է էլի, խղճած, օր էկսի անկամը իրան էլ տամ, բա էս անգամը օր զարկեցի, էդ էլ խո ղաբուլ չի էնե: Ես չեմ էրտա, օր չեմ էրտա»:

Էլի կնիկը զոռեց, ինկը անգաջ չէրավ.—Չեմ էրտա, պռծավ, գնաց:

Էլի գլավնի էկավ՝ ղրկեց, գնաց: Գնաց, գնաց հասավ չագլին մոտիկ, ճամպեն ծռեց, հեռևից գնաց: Էլի օձն գլոխն հանեց, ըսավ.—Ա՛յ մառտ, ո՞ւր էս էրտմ:

Ըսավ.—Թակավորն կանճել է, էրտմ էմ, օր էրազն ըսեմ:

—Գիտե՞ս, օր էրտմ ես:

—Չէ՛, ինչ գիտեմ:

Օձն ըսավ.—Չէ՞, ես քեզի ըսի, օր եթե թակավորի երազը չպատմես, գլոխդ գզարգե:

—Ինչ էնեմ,—ըսավ մառտը,—ընձի զոռով ղրկին:

—Դե օր ըդման է, կերտաս կսես՝ թակավորն ապրած կենա, դու էրազիտ տեսար, օր անեղնակ էր դիպե երկնկին, թակավորը կսե՝ էդ իրեկ էրազիս միտկը բաձադրե: Դու կսես, օր՝ թակավորն ապրած կենա, էրազների միտկը էս է, օր եպ օր տեսար՝ երկնկից աղվես գթապեր, էն վախտ մառտիկ դառել էին աղվես: Իրար գխապեին, աղվեսուտեն կենեին: Եպ օր տեսար՝ սուր ու սանդերկ գթապեր երկնկից, էն վախտ էլ մառտիկ սուր ու սանդերկ դառած՝ իրար էին սրի քաշմ: Հիմի էլ, օր անեղնակ է դիպե, հիմ էլ մառտիկ բարիծել են, իրար բարին էն կամենմ: Թակավորը, քեզի ըդոր հմար դիա շատ օսկի, առծաթ կուտա, հմը բերես, ընձ էլ կուտաս:

—Վա՛յ, բա առանց քեզի՞, սաղ կուդամ քեզի, օր դու իմ գլոխս ազատեցիր մայից,—ըսավ, շնորհակալ եղավ, ընկավ ճամպա, դիպա թակավորը:

Գնաց հասավ դարբասներին: Դարբասները բացին, էլի խբառտ-խբառտ ելավ գնաց թակավորի քովը: Բարև տվավ, բարև առավ: Թակավորը իզին տվավ՝ նստելու: Նստավ:

—Հա, պատմե տեսնիմ էրազս,—ըսավ թակավորը:

—Թակավորն ապրած կենա. էրազիտ տեսար, օր անեղնակ էր դիպե:

Ըսավ թակավորը.—Օղոռտ է, բա իմ էրազների միտկը ինչ է, բաձատրե:

Ըսավ.—Թակավորն ապրած կենա, եպ օր տեսար երկնկից աղվես էր թապմ, էն վախտ մառտիկ աղվեսուտեն էին էնմ, իրար էին խապմ: Եպ օր տեսար սուր ու սանդերկ էր թապմ, էն վախտ էլ մառտիկ սուր ու սանդերկի պես իրար էին սրատմ: Հիմի օր անեղնակ է դիպե, հիմ էլ մառտիկ բարեծել են, իրար բարին են կամենմ:

Թակավորը շատ հավանուտեն տվավ մառտու ըսածներին, ըսավ.—Տարեկ էս մառտուն բավականին ապրուստի միջոց տվեք, թող էրտա:

Տարան, էլի խուռջինը լիկը օսկի լծին, տվին մառտուն: Մառտն առավ գնաց: Գնաց հասավ չագլին: Տեսավ, օր օձը քնած է, արևը տալմ է վրեն: Նստավ կոխկը, ձեռներով հով բռնեց օձի վրեն, օր արևը զոռ չեներ, չուրի զառտներ օձը քնից: Զառտնավ օձը, տեսավ՝ գեղածին կոխկը նստած է, ըսավ.—Հա՛, ինչ կա:

Ըսավ.—Ահա՛ն, օսկին բերել եմ, առ քու բաժին: Գուզես սաղ քեզ առ, ես էրտամ:

—Հը,—ծիծաղած օձը, ըսավ,—ես չսեծի՞, օր աղվես թապելուց մառտիկ աղվեսներ էին, դու էլ աղվեսուտեն էրիր, ընձի խապիր: Սուր ու սանդերկ թապելուց մարդիկ իրար էին սրատմ, դու էլ ընձիկ զարկիր, հմը դու մեղավոր չէիր, դարանջեն էր մեղավոր: Հիմ էլ անեղնակ է դիպե, մառտիկ բարեծել են, իրար բարին են կամենմ: Դու էլ ես բարեծե, բերել ես ընձի օսկի-առծաթ ես տալմ: Իմ ինչի՞ն է պետկ օսկին ու առծաթը: Տար կեր ու ապրի:

47(47). ՄԱՐԴՆ ՈՒ ՆԱՄԱՐԴԸ

Մարդն ու նամարդը գելնին յիրար հետ կէրթան բախտ որոնելու: Ճամփու թաթարուկ կը տեսնին, յամեն մեկը յիրան հետ քըսան հատ լավաշ կը վերցընե, կը դնեն տավաջուղների մեջ, շալակները կառնին ու կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթան, աստված գիտե, կը սովածնան, մարդը նամարդին կըսե.—Արի նստինք հաց ուտենք,—ու յիրան լավաշները կը փըռե, կը սկըսեն ուտելը: Ու էսպես քանի կէրթան, մարդը յիրան ունեցած լավաշները կը հանե, էրկսով նըստին ու կուտին: Մարդու հացն օր կը վերջանա, ընկերոջը կըսե.—Բեր հըմի էլ քու հացը ուտենք, չէ՞ օր իմ հացը կերել պրծել ենք:

Նամարդը կըսե.—Ես իմ հացը չեմ հանե, ադեիս թըխած հացն է, հուրիշի չեմ տա:

Մարդը կըսե.—Օր էդպես է, քեզի հետ հընկերություն էնել չի էղնի: Գնա՛, դու քու ճամփեդ, ես էլ՝ իմը:

Մարդը կը բաժնվի նամարդից, կէրթա: Կէրթա, մութը գընգնի, մե ավերակ ջաղացըմ կը մըտնի, դըռան մոտ կը կուճուրի, մինչև լուսը բացվի: Կես գիշերին էդ ջաղացը գուգան աղվեսը, արջն ու գելը: Էսոնք ջաղացի օրթա տեղը կը նստին, յիրար հետ կը խոսան:

Յառաջ աղվեսին կը հարցնեն, թե.—Ի՞նչ կէնես:

Աղվեսը կըսե.—Հեչ, մըկների բների քովը կը նստիմ, յարևն օր կը զարկե, մկները բնից էրկու հատ օսկի կը հանեն, հետը կը խաղամ, իմ ըզբաղմունքըս էլ էդ է: Իրկուն օր կեղնի, կէրթամ գեղերը, հավ է՞, խորոզ է՞, թըռցընեմ ընձի համար յավաշըմ կապրիմ:

Յարջին կըսեն.—Դու ի՞նչ կէնես:

Յարջը կըսե.—Թագավորի պալատից քիչըմ հեռու մե թափո՛վ ծառըմ է կայնած, ըդուր տակը էրկու գյուգում օսկի ունիմ պայած, հենց արևը կը զարկե, կէրթամ խաղամ հետը, յիրիկվա թարաֆ կէրթամ կը հորեմ ծառի տակ ու կէրթամ ընձի համար որսի:

Գիլուն կըսեն.—Դու ի՞նչ հունարի տեր ես, օր սա՛ղ օրը թագավորի սուրույի յետևից հընկած ման գուգաս ու չես կըռնա օչխարըմ ուտե:

Գելը կըսե.—Է՞, իմ ցավը ուրիշ է, էդ յանտեր թագավորի սուրույի մեջը մե թոխլի՛մ կա, յաչքըս էդոր վըրա է, քանի գուզեմ թըռցընեմ տանիմ, չի հաջողվի: Յանտեր շընները վըրա գուգան, չեն թողնի: Թագավորի աղջիկը ծանդըռ հիվանդ է, ու հեչ մարդ էլ չիտե, օր էդ թոխլուն օր մորթեն, կերցընեն, տեղն ու տեղը կը լավանա՝ մորից մեկ կեղնի:

Էսպես աղվեսը յարջն ու գելը յիրար հետ կը խոսան, պառկեն կը քընին: Լուսը չը բացված՝ գելնին էս ավերակ ջաղացից կէրթան: Մարդը էս բոլոր խոսակցությունը կը լըսե, հըմը վախենալուց սիրտը կորեկի հատ է դառե:

Էս գազաններն օր կէրթան, յինքն էլ գելնի իրան ճամփեն էրտըլու: Կը մտածե, կըսե. «Կեցի հըլը էրթամ տեսնիմ՝ ինչ օր ըսին՝ ճիշտ է՞»:

Կէրթա աղվըսի ըսած տեղը, տեսնի, օր մկները էրկու հատ օսկի են հանել, հետը կը խաղան: Կըսյե «Էս էրկու օսկին հեչ, էրթամ տեսնիմ՝ յարջի ըսածը ճիշտ է՞ր»: Կէրթա քիչըմ հեռու մե մեծ ծառըմ կը տեսնի: Ծառի տըկի հոդը փորա՛ծ, վըրա է տըված: Կը քանդե՝

Յարջի ըսածը ճիշտ կեղնի, էրկու գյուգյում օսկի ք՚անի ըդտից, լըցնե գը խուրջինն ու գընգնի ճամփա, կհասնի թագավորի սուրույին: Չոբնին կըսե.—Քեզի օսկի կուտամ, մե օչխարըմ մորթե՝ ուտեմ:

Չոբանը գելնի մե լա՛վ օչխարըմ կը ջըկե՝ բերելու մորթելու: Մարդը կըսե.—Էդիկ թող, ես կը ջըկեմ իմ ուզած օչխարը:

Մարդը գելնի, օչխըրներու միջից կը ջըկե գիլու ըսած թոխլին, կը մորթեն, մե բրլըմ կուտեն, քիչըմ մըսից կը վերցընե՝ սիրտ ու թոք հետը, կէրթա ուղիղ թագավորի պալատը: Կէրթա նըստի խնամաքարին: Նազիր-վեզիրը ք՚արցընեն, թե.—հընչի՞ ես էկե:

Մարդը կըսե.—Ես հեքիմ եմ, էկել եմ թագավորի աղջկան բուժեմ:

Նազիր-վեզիրը մարդու գլխուն կը զարկեն, վըրեն կը խընդան, կըսեն.—Չլուտ յանտեր, դու ի՞նչ ես, օր հեքիմ էղնիս, էդքա՛ն գիտուն հեքիմներ գնացին-էկան, բանըմ չէրին, հըմի դո՛ւ գուզես թագավորի աղջըկան լավցընես:

Մարդն օր շատ դեմ գընգնի, նազիր-վեզիրը կէրթան թագավորին իմաց կուտան, օր էսպես մեկը գուզե աղչըկատ լավցընե:

Թագավորը կըսե.—Գնացեք էս որոպեիս վերև բերեք:

Մարդուն կը բերեն, աղջկան կաշե, հետը բերած մըսից կեփեն կուտան աղջիկը կուտե,

մորե մեկ կեղնի՜... Թագավորն յիրան թագավորության կեսը կուտա մարդուն, յիրան փեսա կը դարձնե:

Մարդը յարջի ըսած ծառի տեղը մե՜ծ պալատներ կը սարքե, օր թագավորի պալատը էդոր դեմ հեչ էր: Մարդը յիրան պալատը խեյրաթխանա կը դարձնե, անցնող—դարձող գուգա կուտե՜, խըմե, կէրթա:

Մարդը յիրան ծառաներին կըսե.—Օտարական մարդ օր գուգա, առանց յիրան մոտս բերելու չը թողնին էրթա:

Օրերից օրըմ, ինչըղ կեղնի, նամարդը յիմացած կեղնի, օր այսինչ տեղը խեյրաթխանա կա: Չլոտ շորերով, սոված փորով գուգա էդ խեյրաթխանեն, օր կուշտ փորով հաց ուտե: Ծառաները մարդուն խաբար կը տանին, օր մե հատըմ օտարական է էկե:

Մարդը կըսե.—Լա՜վ կերցըրեք, խըմցրեք, լողցըրեք, շորերը փոխեք, բերեք քովըս:

Էդպես է կէնեն: Մարդը օր կը տեսնի նամարդին, կը ճանչընա, օր էդիկ յիրան հընգերն էր, յիրար հետ էյին ճամփա հընգե:

Մարդը նամարդին կըսե.—Պատմե քու կյանքից, թե ինչըղ ես էկե յընգե ըստեղ:

Էսիկ կը պատմե: Մարդը տեսնի, օր սուտ կը խոսա, կըսե.—Ճիշտը պատմե:

Պատմելու վախտ մարդը կը հիշեցնե, թե.—Դու էն նամարդը չէյի՞ր, օր մարդու հետ ճամփա հընգար, քըսան հատ լավաշ ունեյիր, մարդու հացը կերար, քուկըդ պայեցիր, ըսիր՝ ադեյիս թըխածն է:

Նամարդը կը շըշմի՜, կըսե.—Դու հուրտից գիտես:

Թագավորը (մարդը) կըսե.—Դու ընձի չե՞ս ճանչընա, ես քու հետի հընգերն էյի է՜... էսինչ տեղը յիրարից բաժնըվա՜նք:

Նամարդը կըսե.—Հըբը, էդ ինչը՞ղ էղավ, օր դու թագավոր դարձար, հունարըն ընձի ըսա, ես է բանի՛մ տեր դառնամ, չէ՞ օր ինչ էլ էղել է, մենք վախտին յիրար հընգեր ենք էղյե:

Թագավորը մանդրամասը կը պատմե, օր ինչըղ ավերակ ջաղաջի մեջ է էղե, ինչըղ ամեն յիրկուն էդ ջաղաջի մեջ գիշերը կը հավաքվին աղվեսը, յարջը, գելը, ինչ կը խոսան... մե խոսքով՝ ի՞նչ օր գլխեն անցել է: Նամարդը մըտքի մեջ կըսե. «Էսի լավ էղա՜վ, կեցի ես էլ էրթամ էդ ավերակ ջաղացը»:

Քանի՛մ օր ըդեղ կը մնա, կուտե՜, խըմե, գելնի կէրթա էդ ավերակ ջաղաջը, դըռան յետևը պայ կը մըտնի: Գիշերվա կեսին գազանները գուգան, էլի իրանց տեղը կը նստին ու էլի յիրար հարց կուտան:

Աղվեսին կըսեն.—Ի՞նչ կէնես:

Աղվեսը կըսե.—Ի՞նչ բըդի էնեմ... էրկու հատ օսկի կար, մըկները կը հանեյին, կուրախանայի: Ըստից քանի՛մ վախտ յառաջ մըկներին սատկըցրել են, էդ օսկիքն էլ տարել ե՜ն...

Յարջին կըսեն, դու ի՞նչ կէնես:

Յարջը կըսե.—Ի՞նչ բըդի էնեմ, էն ծառի տակ, հուրտեղ օր էրկու գյուգում օսկի ունեյի թաղած, հըմի էդ ծառի տեղը թագավորի պալատըն է կայնա՜ծ, տեղն էլ չի էրևյա.

Գիլուն կը հարցուն, թե.—Դու ի՞նչ կէնես:

—Է՜,—կըսե,—մե թոխլի՛մ կար սուրոյի մեջ, էն էլ տարել են, չը կա՜: Կա՜, չըկա, մեր գաղտնիքը, մեր խորատեն մեկն ու մեկը յիմացել է, մե իսանօղլի՛մ մեզի լըսել է: Չէղնի՞՝ էս ջաղաջի մեջ իսան կա պայված:

Նամարդը էդ օր գիմանա, վախենալուց կը շըռե վըրեն:

Աղվեսը յարջին կըսե.—Յարջ ախբեր, հըլը մեջքըդ դեմ տուր ջաղացի դըռանը, ես ըստեղ իսանօղլու հոտ եմ առե, հըմի բըդի գըտնի՞նք:

Յարջը մեջքը դեմ կուտա դըռանը, աղվեսն ու գելը ման գուգան, տեսնին, օր նամարդը պատի տակ կուճուրած հընկած է: Գելը կըսե.—Գտա՜նք, կա՜, չըկա՜՝ էսիկ է մեր գաղտնիքը բացե:

Յիրեքով կը թափին նամարդի վըրա ու սաղ կըտորը յանգաջը կը թողնին:

48(48). ԽԵԼՔԻՑ ՊԱԿԱՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Կեղնի, չեղնի, էրկու հատ վաճառական կեղնին, էսոնք միշտ յիրար հետ առուտուր կէնեն, ախպոր պես կը բաժանեն յիրար մեջ:

Վաճառականներից մեծը կը հիվընդանա, քանի՛մ օր կը մընա, կը մեռնի: Հընգերը գուգա թաղմանը, ինչքան օր էս վաճառականի ընտանիքը կը ծախսե թաղման համար, էրկու ըդքան էլ էս վաճառականը կը ծախսե: Մեռնող վաճառականը կունենա մե մինուճար տըղե՛մ: Սաղ հարստությունը հերը կտակել է էդ տըղին:

Տըղեն վատ ընկերների սրջապատի մեջ կեղնի: Հոր փողերը, հարստությունը մսխե գը ու վերջն էլ կը հասնի էն օրին, օր կէրթա ընկերներից մուրացկանություն կէնե:

Հնգերները կըսեն.—Բլմա՛զ, հորդ հարստությունը քոռուփուչ էրիր, հըմի էլ մե՞րը գուզես...

Ըդպես կըսեն ու դուռը կը փակեն վըրեն: Տըղեն հույսը կորցըրած կէրթա հոր ընկերոջ մոտ՝ օգնություն խնդրելու, խորուրդ հարցընելու: Եփ օր էս մուրացկանը մըտնի գը վաճառականի մոտ, վաճառականը գիմանա տըղի պատմությունը:

Տըղեն յերկան-բարակ պատմելուց հետո կըսե.—Էկել եմ խընդրեմ աղջըկադ ձեռը՛...

Վաճառականը կըսե.—Հերըդ իմ լավ հընգերս է էղե, ես էլ խոստացել եմ՝ քանի սաղ եմ, ձեր ընտանիքին օգնեմ:

Կը համաձայնըվի աղջկան կուտա էս տըղին: Էրկու իշաբեռ օսկի, մեկել չորս հատ կով կուտա տըղուն, աղջըկան էլ հետը ճամփու կը դնե:

Քանի՛մ տարի հետո էրեխա կունենան, էրեխեն դըպրոց կէրթա՝ սովրելու: Հերը կը տեսնի, օր էրեխեն յիրանից ավելի շատ խելք ունի, յինքն էլ կը որոշե՝ էրթա սովրելու: Կընկան կըսե.—Կընիկ բըդի էրթամ օտարություն, տեսնիմ՝ ինչ կա, ինչ չըկա աշխար:

Մե քանի՛մ օրվա պաշարի թադարուկ կը տեսնին, յէկսի օրը՝ յառավոտ կանուխ, գելնի ճամփա՛...

Կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, յինքն էլ չիտե: Ճամփեն բոստընների մոտով օր կանցնի, տեսնի գը՝ մե բոստանջի՛մ նըստած հաց կուտե: Բարև կուտա, բարև կառնի, դառնա գը էս մարդու հույրը ու էդ գիշեր մնա գը էդ մարդու բալագանը:

Բոստընջին կըսե.—Գուզե՞ս ըսեմ՝ ինչի հըմար կէրթաս, հուր կէրթաս, Բըլմազ:

Էս մարդը կը զարմանա, թե հուրտի՞ց գիտե իրան անունը, կըսե.—Դե էդքան օր շնորք ունիս, խորուրդ տուր, թե հուր էրթամ սովրելու, օր էլ ընձի բըլմազ չըսեն:

Էս մարդը կըսե.—Կէրթաս Հալեբ քաղաքը, ընտեղ մե բանձր շենքըմ կա, էդ շենքի մեջ մոլլեն կապրի: Կէրթաս մոլլի քովը, մոլլեն քեզի խելք խըրատ կուտա:

Շնորակալ կէղնի ու էլի ճամփա գընգնի: Մըտնի գը Հալեբ քաղաքը ու կըսպասե մոլլին: Քիչըմ կանցնի, մոլլեն, սիպտակ մուրուքը տըմտըմբացընելով, գուգա կայնի գը Բըլմազի մոտ ու կըսե.—Դու էկել ես իմ մոտըս՝ սովրելու,—կըսե ու տանի գը մե հատըմ սենյակ, հուրտեղ օր աշխարի ամեն մե բարիքը կա:

Կուշտըմ կուտեցընե Բըլմազիս ու պայման կը դընե, հատուկ ուսուցիչներ կը նշանակե, վարձը մոլլեն կուտա, օր Բլմազի հետ պարապին:

Տասը տարի Բըլմազը ըդտեղ կը սովրի: Գուզե տուն էրթա, մոլլեն չի թողնի, սուտ նամակ կը գրե՝ յանի տընից է ըստացել: Նամակի մեջ կը գըրե, թե իբր մերը հիվանդ կը մեռնի ու կըսպասե մինուճար տըղին:

Մոլլեն ք՚ասկընա, օր էսիկ տըղի ձեռագիրն է, կըսե.—Մե տարի՚մ էլ բըդի սովրիս, էլի էն բըլմազն ես:

Մե տարի՚մ էլ կը սովրի էս Բըլմազը: Ժամանակն օր գուգա տուն էրթըլու, մե ուրիշի օգնությամբ, ուրիշ ձեռագրով մե նամակըմ կը գըրե, թե. «Մերըդ կուրացել է, կը մեռնի, շուտ արի»:

Նամակը կուտա մոլլին, մոլլեն տեսնի գը, օր նամակը հուրիշ մարդ է գըրե, յիրա հավատարիմ մարդկանց կը ղրկե տըղի հայրենիքը, կը ստուգեն, տեսնին գը, օր սուտ է: Որպես պատիժ՝ մոլլեն տըղին կըսե.—Մե տարի՚մ էլ բըդի սովրիս, էլի էն բըլմազն ես, էլի էն բըլմազն ես...

Էդ մի տարին էլ կանցնի, կէրթա, գուգա ժամանակն, օր տըղեն բըդի էրթա տուն, էս անգամ չի խաբե՝ վիզը ծըռած նայե գը մոլլի յերեսին: Մոլլեն խղճահարվի գը, տեսնի, օր արդեն ժամանակըն է, մե ձիաբեռ օսկով ճամփու կը դընե Բիլմազին յիրան հայրենիքը: Մոլլեն էս օսկեքու հետ մեկտեղ իրեք հատ մեծ օսկի կուտա՝ յիրա պատկերը վըրեն: Տըղեն, օր մե քիչըմ ճամփա կանցնի, մոլլեն ճըվա գը, թե.—Արի, կէղնի մե օսկի՚մ տուր, քեզի մե խըրատըմ տամ:

Բըլմազը հանե գը ու մե օսկի՚մ կուտա (մոլլի պատկերը վըրեն օսկեքուց): Մոլլեն կըսե.—Փորձած ճամփեն անփորձ ճամփուց լավ է, ինչքան գուզե յերկան էղնի:

Բըլմազը խըրատը ստանալուց հետո մընացած էրկու օսկին էլ կուտա, կըսե.—Արի, կէղնի, առ էս էրկու օսկին էլ ու էրկու հատ էլ խըրատ տուր:

Մոլլեն կառնի էրկու օսկին ու կըսե.—Աչքիդ տեսածին հավատա, յանգըջիդ լըսածին մի հավատա, համբերությունը կյանք է, վերջն էլ երջանկություն է:

Բըլմազը կը շարունակե յիրան ճամփեն: Մութըն օր գընգնի, գուզե մըտնի մե գեղըմ: Էս գեղը կունենա էրկու հատ ճամփա, մեկը՝ կարճ, մեկն էլ՝ յերկար: Ձիու գըլոխը թեքե գը, օր էտեխանց հետ կարճ անփորձ ճամփով մըտնի անտառը, ընտեղից քյասա հասնի գեղը: Հիշե գը մոլլի խըրատը, ձիու գլուխը թեքե գը դեպի յերկան ճանապարը: Օր կը մըտնի գեղ, գիմանա, օր վով օր կարճ ճամփով է էկե, ավազակները անտառի մեջ թալնել են ճամփորդներին:

Բըլմազը գուգա գեղ, էրկու հատ արաբ գուգան կը հրավիրեն յիրանց տունը: Ըսոնց տերը՝ աղեն, Բըլմազին լա՛վ կուտըցնե, կը խըմցընե, լա՛վ խաս ու ղումաշ տեղ կը բանա:

Արաբները գուգան Բըլմազին կըսեն, օր.—Մեր տերը խաբել է քեզի, մեր միջոցով կանչել է յիրան տունը, օր քեզի ըսպանե:

Էս Բըլմազը կըսե.—Ես իմ աչքիս տեսածին կը հավատամ, ոչ թե յանգըջով լըսածին: Էս մարդը ընձի կերցըրավ, խըմցըրավ, հընչի՞ բըդի ըսպանե:—Ու արաբներից ապացուց գուզե:

Արաբները տանին գը մե պատվալըմ ու ցուց կուտան մարդկանց ջանդակները, գլոխը՝ մե կողմ, ջանդակը՝ մե կողմ:

Բըլմազը կըսե.—Էսիկ ձեր էրած գործն է:

Էս օր կըսե, էտ տան տերը՝ աղեն, գուգա գընգնի Բըլմազի ոտըն ու շնորակալ կեղնի, կըսե.—Էս ջանդակներն օր կան, իմ ախպորս՝ մոլլի բըլմազ աշակերտներն են, էս գոմի ձիերն էլ օր կան, յիրանց ձիերն են:—Կըսե.—Հիմի ես քեզի մե լավ ձի՛մ կուտամ՝ յիրա բեռով, էս ձիդ թողենք թող էրթա էլի ախպորս քովը...

Յէքսի օրը ճամփա գընգնի ու գիշերով ք՛ասնի յիրանց քաղաքը: Մոտիկնա գը դըռանը, լուսամուտից նես կաշե ու տեսնի գը, օր չորս ոտ, էրկու գըլուխ, չորսը ձեռ՝ յիրար փաթըված քընած են կառավատի վըրա: Գուզե դուռը ջարդի նես մըտնի, սուրը հանե ըսպանե, էդ մոմենտին հիշե գը մոլլի խըրատը. «Համբերությունը կյանք է, վերջն էլ երջանկություն է»: Սուսուփուս մըտնի գը մե պառվի՛մ տուն ու քընի գը: Յառավոտ կանուխ մըտնի գը ճաշարան՝ հաց ուտելու: Տեսնի գը, օր իրան տանը գիշերը տեսած տըղի հետ մարդիկ նըստած խըմեն գը ու կը հարգեն էս տըղին:

Բըլմազը հարց կուտա միկիտանչուն, թե.—Էս տըղին հընչի՞ էդքան կը հարգեն ու պատիվ կուտան:

Միկիտանչին կըսե.—Որովհետև էդոր մերը նամուսով կընիկ է, տասէրկու տարի անընդհատ ըսպասե գը յիրան մարդուն ու չի նըշանվի:

Բըլմազը ք՛ասկընա, օր էսի յիրա տըղեն է, կը հրավիրե յիրան մոտ, կըսե.—Երիտասարդ, վո՞վ է քու հերըդ:—Հարցուփորձ կէնե ու կըսե, օր.—ես քու հոր տեղը գիտեմ:

Էս տըղեն վազե գը կէրթա մոր մոտը, մորը կըսե.—Մայրիկ, հայրիկից խաբար է էկել՝ մե օտարականի՛մ միջոցով:

Էս մերը կըսե.—Գընա բըռնե, բաց չը թողնի՞ս, մինչև գա՛մ...

Կընիկը գուկա ճաշարան, հարցուփորձ կէնե մարդուց:

Բըլմազը կըսե.—Ես քու մարդու տեղը կըսեմ էն պայմանով, օր վեցը անծին մոզի բերես մատաղ էնես:

Կընիկը կըսե.—Վեց հատ էլ կը բերեմ ու տասը հատ էլ, մենակ թե՝ ըսա՛:

Էս մոզիքը բերեն մորթեն գը, հըլը մատաղը չեփած՝ էս կընիկը անհամբեր կը հարցընե, թե.—հուրտե՞ղ է իմ մարդըս:

Բըլմազը քյաս կըսե, օր.—Քու մարդը ես եմ:

Կանչե գը տերտերին, օրշնել կուտա մատաղը, վերցընե գը մե վեդրո՛մ մատաղ ու կէրթան տո՛ւն...

Էսոնք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր նպատակին:

49(49). ԻՆՁ ԿԱՄԵՍ ԻՆՁ, ԱՍՏՎԱԾ ԿԱՄԵ ՔԵԶ

Մե մուրացկանըմ կեղնի՝ մուրալով օրը կանցընե՝ էսոր-էնոր դըռանը: Հա՛մ կը մուրա, հա՛մ էլ կըսե.—Վով ինչ կէնե՝ յիրան կէնե, ինչ կամես ինձ, աստված կամե քեզ:

Էս մուրացկանը յամեն անգամ էրթալ-գալով կը զըզվեցնե մարդկանց: Մուրացկանից ազատվելու հըմար մարդիկ յամեն հնար կը գործադրեն, հըմը հախլամիշ չեն էնե: Մե պառավըմ կը որոշե, օր էդոր թույնավորե: Գուգա

հաց ուզելու, էս պառավը մուրացկանին էրկու հատ բաղաջ կուտա, էրկու բաղաջն էլ թույնավորած կեղնի: Էս մուրացկանը կը վերցընե բաղաջները, կըսե.—Ինչ կամես ինձ, աստված քեզ կամի, վով ինչ կէնե, իրան կէնե,—կըսե ու կէրթա:

Կէրթա, ճամփուն երկու մարդու կը հանդիպի: Էս մարդիկ սոված կեղնին, կըսեն.—Բարով էկար:

Մուրացկանը կըսե.—Բարին բացվի ձեր վըրա:

Մեծ մարդը հաց գուզե մուրացկանից, կըսե.—Էսքան ժամանակ մենք ենք քեզի օգնե, հըմի էլ դու մեզի օգնե, շատ սոված ենք, քիչըմ հաց տուր՝ ուտենք:

—Ձեր ղըսմըթեն լավ բան ունիմ,—կըսե մուրացկանը:

Ք'անե բաղաջի թաքը կուտա մեկին, մեկելն էլ՝ մյուսին: Ինչ օր է, էսոնք մուրացկանին օրշնեն գը ու գուգան տուն, էս բաղաջները ճամփեն կերած կեղնին: Մինչև տուն հասնելը յիրանց վատ կը զգան: Տուն կը հասնին, թե չէ, մարդը կըսե.—Կընիկ, հասի՛, օր մեռա:

Կընիկը հարցնե գը.—Ի՞նչ է էղե:

Էս մարդը հա՛լ-հեքյաթ, պատմե գը, օր սոված էյինք, ճամփին աղքըտի բաղաջներն ենք կերյե:

Կընիկն օր գիմանա, գլուխը կը պորջըկե, էս պատին կը զարկե, էն պատին կը զարկե, իլլաջ չըկա: Մըտքի մեջ կըսե. «Էս ի՞նչ էրի, ընչի՞ ես թունավորած բաղաջները մուրացկանին տըվի, ինչ օր էղավ, ընձի էղավ»:

Դու մի ըսե, էս մարդը իրան մարդն է, տըղեն էլ՝ իրա տըղեն: Էրկուսն էլ թունավորին կը մեռնին:

Էրկու-յիրեք օրից հետո էլի էս մուրացկանը գուգա մուրացկանության: Էլի վով ինչ կուտա, կըսե.—Վով ինչ կէնե, իրան կէնե, ինչ կամես ինձ, աստված կամի քեզի:

Թագավորին իմաց կուտան, կը խնդրին, օր մե կերպըմ յիրանց ազատե էս մուրացկանի ձեռեն:

Թագավորի լալեն կըսե.—Թագավորն ապրած կենա, մե գրությունըմ գրե տուր էս մուրացկանի ձեռը, թող տանի ֆըռնջուն տա, ֆռնջին գրությունը կարթա, էսոր ոտ ու գըլուխ էնե, կոխե ֆուռը, վերջանա էրթա:

Գըրությունը կը գրեն, մուրացկանին կը կանչեն, կուտան, կըսեն.—Տար էս գրությունը ֆըռնջուն տուր, էդոր համար քեզի տասը օսկի կուտանք:

Մուրացկանը, տասը օսկու անունը լսելով, ահագին կուրախանա, խնդալեն թուղթը կը վերցընե, դուս գուգա պալատից: Ճամփու կիսուն լալի տըղեն էս մուրացկանի ձեռից թուղթը կը փախցընե, օր յինքը տանի տա, յետ գա, տասը օսկին յինքը ըստանա: Լալի տըղեն չիտե, թե ինչ է գրած թըղթի մեջ: Տանի կուտա ֆըռնջուն, ֆռընջին կը կարթա, էս խեղջ տըղին ոտ ու գըլուխ կէնե, կոխե գը ֆուռը:

Յէքսի օրը մուրացկանը գուգա՝ էլի մուրալու, էլի կըսե.—Վով ինչ էնե յիրան կէնե, ինչ կամես ինձ, աստված կամի քեզ:

Թագավորի ղուլը պալատ կը մըտնի, կըսե.—Թագավորն ապրած կենա, մուրացկանը էկել է յիրան հախը գուզե:

Թագավորը զարմանա գը, հրամայե գը, օր պալատ կանչեն ֆըռնջուն:

Ֆըռնջին կըսե.—Թագավորն ապրած կենա, դու հընչի՞ ես ընձի կանչե:

Թագավորը կըսե.—Տըվածըս հրամանը հընչի՞ չես կատարե:

Էն էլ կըսե.—Կատարել եմ, ան է շորերը:

Թագավորը տեսնի, օր էսի լալի տըղի շորերն է՞...

Թագավորը նոր գըլուխը քորե, կը մըտածե, թե հընչի մուրացկանը միշտ կըսե. «Վով ինչ էնե, յիրան կէնե, ինչ կամես ինձ, աստված կամե քեզ»:

50(50). ԻՄԱՍՏՈՒՆ ԾԵՐՈՒՆԻՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԸ

Մե ծերունի'մ նըստած կեղնի յիրան դըռան քարին ու կը մտածե:

Թագավորը կանցնի, բարև կուտա, կը մոտենա ու կը հարցընե.—Աշխատանքըդ ի՞նչ էրեցիր:

Բիձեն կըսե.—Էլօղլին տարավ:

—Ինչը՞ղ հասկընանք,—կըսե թագավորը:

—Է՛,—կըսե,—թագավորն ապրած կենա, ի՞նչ կա չ'ասկընալու, աղջիկ ունեցա, պայեցի, հըմի նըշանվավ գնաց:

Թագավորը ք'արցընե.—Առողջությունը՞դ ի՞նչը է:

Կըսե.—Էրկուս էր, յիրեք դառավ:

—Ի՞նչը հասկընանք:

Կըսե.—Յառաջ էրկու ոտով կըքելեյ, հըմի՝ դագյանակով, չեղա՞վ յիրեք:

—Է՛, ըբը հեռվից ինչը ե՞ս:

—Յառաջ,—կըսե,—հեռուն կը տեսնեյ, հըմի յաչքիս յառաջ էղածը կը տեսնիմ:

Թագավորը վերջի հարցը կուտա, կըսե.—Ղազըմ օր ղըրկեմ, կըրա՞ս պոպկես:

Կըսե.—Պոպկելու մեջ ես վարպետ եմ:

Թագավորը տեսնի գը, օր էս մարդը իմաստուն է, կըսե. «Կեցի, վեզիրիս ղըրկեմ քովը, թող էս մարդու խելքը մե լավը՞մ չափե»:

Թագավորը գուգա պալատ, վեզիրին կանչե, կըսե.—Քեզի տասը օր ժամանակ, է՛ս, է՛ս, է՛ս հարցերի պատասխանը գըտնիս: Գըտա՞ր՝ գտա՛ր, չը գտար՝ գլուխըդ կէրթա...

Վեզիրը գելնի գընգնի գեղերը՝ էդ հարցերի պատասխանը յիմանալու:

Կը հանդիպի էս գեղացուն, ու յառաջի հարցը՝ «Աշխատանքը՞դ ի՞նչ էղավ»:

Բիձեն կըսե.—Մե օսկի՞մ տուր՝ ըսեմ:

Կուտա՝ կըսե:

—Ինչը՞ղ հասկընանք՝ «Էրկուսն յիրեք է դառե»:

Կըսե.—Քիսիկըմ օսկի տո՛ւ, ըսեմ:

Օսկին կառնի՝ կըսե:

—Հեռևանց ինչը՞ղ ես:

Էս հարցի պատասխանին էլ քիսիկըմ օսկի կառնի...

Գըլուխըդ ինչ ցավըցնե՞մ, գուգա վերջի հարցը՞:

Կըսե.—Ըբը էդ ի՞նչ ղազ է, օր բըդի պոպկես:

Կըսե.—Էդոր էլ էրկու քիսիկ օսկի տուր, ըսեմ:

Վեզիրը էրկու քիսիկ օսկի էլ կուտա:

Բիձեն կըսե.—Էդ ղազն էլ դու էյր, օր պոպկեցի, դե հըմի՞ արխեյին գընա՛...

Ըշտը, ըստեղ է ըսած, օր աստված մեկին փող է տըվե, մեկին էլ՝ խելք ու շնորք:

51(51). ՄԱՅՐ ՕՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մե ծերունի՞մ կեղնի, կունենա յիրեք հատ տղա: Էս տըղեքը կաշխատին ու յիրանց աշխատած հալալ քրտինքով հացը կուտեն:

Մե տըղեն զբաղվի գը հող վարելով, մեկը՝ ճանճապայությամբ, մեկն էլ օչխար կը պայե: Յամեն տարի օր օչխրների քանակը կը շատանա, տանին գը քաղաք՝ ծախելու: Մե տարի՞մ էլ օչխըրները առաջ արած կէրթան, մեկ է գիշերն օր գընգնի, մնան գը դաշտի մեջը՝ գիշերելու: Յառավոտ էս ծերունին կը զարթնի, կտեսնի, օր մե օցըմ փաթըվել է յիրանց բոլորը: Բիձեն էս օր կը տեսնի, տղոնցը զարթնըցնե գը, օր յիմաց տա, թե օձը յիրանց բոլորն է փաթըվե: Տըղեքը կը զարթին, կըսկըսեն խորհրդակցել:

Ծերունին կըսե.—Ես մեծ մարդ եմ, շուտով կը մեռնիմ, յարևըս բախշեմ գը ձեզի: Թողեք ես էրթամ, կատարեմ իմ հայրական պարտքը, տեսնինք՝ օցը ինչ բըդի էնե:

Կէնե, օր տեղից յելնի, օցը կը ֆշշըցնե ու չի թողնի, օր բիձեն տեղից յելնի էրթա: Բիձեն ըստիպված նըստի գը տեղը:

Տըղեքը կըսեն.—Դու կատարեցիր քո հայրական պարտքը, մենք էլ կկատարենք մեր որդիական պարտքը, հերթը մերն է:

Կըսեն, գելնին ու թաք-թաք կանցնին: Օցը էսոնց ձեռ չի տա, հանգիստ կէրթան, կազատվին:

Օցը նեղցընե գը շրջանը ու կըսկըսե փաթթվել բիձու ոտներին ու ինչ օր բան կը հասկըցնե: Բայց բիձեն բան չի հասկընա: Օցը վիզը քըցե գը յառաջ ու ցուց կուտա ճանապարը: Բիձեն ք'ասկընա, օր օցը գուզե յիրան մե տեղըմ տանի: Ըստիպված գընգնի օցի յետևից ու ճամփա գելնին:

Շատ կէրթան, թե քիչ, հասնին գը մե քար ու քըռի՞մ: Հենց էդ քար ու քըռի մոտ օցը սուր ֆըշշոցըմ կը հանե, կը կըծկըվի ու կպատրաստվի մեկի՞մ դեմ կըռվելու: Էդ մոմենտին քարափից մե հսկա վիշապ օցըմ դուս գուգա:

Մայր օցը, գիտենալով, օր բիձեն յիրան բըդի օգնե, կհարձակվի յիրանից քանի՞մ անգամ ուժեղ օցի վըրա:

Բիձեն կը տեսնի, օր մայր օցը օժասպառ կեղնի, էլ չի կըռնա դիմադրի, ք'անե յիրան սուր

դանակը ու լիմա-լիմա կը կըտրտե վիշապին: Վիշապ օցը հըլըզած գընգնի ցա՛ծ:

Մայր օցը մտնի գը բունը ու ընդեղից կը հանե տաս հատ ջարդած, յիրեք հատ սաղլամ հավկիթ:

Մայր օցը յիրան շնորհակալությունը կհայնի ծերունուց ու կը փաթըթվի ոտները:

Բիձեն նըստի գը քարին, օր հանգստանա, օցը բարեկամաբար քովը գուգա ու էլի մե ճամփեմ ցուց կուտա:

Էս բիձեն կը վախենա, թե էս անգամ էլ ուրիշ օձի հետ բըդի կըռվին: Վախենա, առաջ չի էրթա: Օցը տեսնի, օր բիձեն տեղից չի շարժվի, պոչը քըցե գը բիձու ոտից ու քաշե գը: Բիձու ճարը ի՞նչ, ըստիպված կէրթա:

Շատ կէրթան, թե քիչ կէրթան, կը հանդիպին մե հսկա ժեռ քարի՛մ: Բիձեն կը տեսնի, օր օցը գլխով կը զարկե քարին ու ետ գուգա: Բիձեն կը վախենա, թե քարի տակը օց կա, վախենալով քարը կը հրե: Տըկեն դուս գուգա մե կճուճըմ: Մոտիկ չի էրթա, կարծելով, թե կըճուճի մեջ օց կա, համ էլ կը վախենա, թե օցը յիրան օցությունը բըդի էնե (մայր օցը):

Մայր օցը պոչը քըցե գը կըճուճի ունկին ու կուտա բիձուն: Բիձեն կը տեսնի, օր օսկով կըճուճ է, ուրախ-ուրախ դառնա գը տուն:

Կը պատմե օցի պատմությունը ու օսկին ցուց կուտա: Օսկին կը ծախեն, ինչքան կը ծախեն, չի պարպի: Կճուճը կախարդական էր:

Բիձու տղեքը կը նշանվին, ք՚ասնին յիրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

52(52). ՆԱԽՐՋՈՒ ՀԵՔԱԹԸ (ԲԱՐԻ ՄԱՐԴՈՒ ՀԵՔԱԹԸ)

Մի նախրջի կունենա իրեք տղա, իրեք աղջիկ: Շատ աղքատ կեղնի: Կնիկը օրական իրեք-չորս գարի հաց թխե կը: Էդ չորս գարի հացի ումուտին են, ոչ օչխար, ոչ կով ունին: Չբլախ էրեխեքը աղտի, օճիլի մեջ կորած:

Կանցնի տարիներն: Տղեքը մեծնան կը, դառնան կը տասնըհինգ-քսան տարեկան, ո՛չ հաքները շոր կա, ո՛չ էլ ոտները՝ չարոխ:

Նստին կը մե օր՚մ մարդ ու կնիկ միշավարա կենեն, թե էսպես ի՞նչխ պիտի ապրինք: Կնիկը կըսե մարդուն.—Իրեք տղին առ գնա քաղաք, բլքի մե բան՚մ էղնի... նոքարութան տուր, բլքի մենք էլ ապրինք, էրեխեքն էլ ապրին:

Գելնին մե յառավոտ՚մ. մարդը էրեխոցը [տղոցը] տանի կը քաղաք: Չորս հատ գարի հաց դնե կը խուրջինը, ու տղոցը բոբլիկ խառնե կը յառաջ կառնի, կէրթա:

Շատ կէրթան, քիչ, կէրթան մե գեղի՚մ քովը, գյոզի քովը նստին կը, բանան կը խուրջինը, գարի հացը թաթխեն կը գյոզի ջրի մեջ ու կուտեն: Կուտեն կը պրծնին, գելնին գընկնին ճամփա: Գիշերը տեյ լուս ճամփա կէրթան: Բարի լուսը բացվի կը, հասնին կը քաղաքը, կէրթան քաղաքի բազարը: Կառնի կը էրեխանցը կայնի կը բազարի պատի տակը. անոթի, չբլախ, ծառավ: Անցնող-դարձող զարմացած կաշեն:

Մե հարուստ մարդ՚մ գուքա տեսնի կը, օր մարդը մոլրած իրեք տղեն առե կայնել է: Հարուստ մարդը բարև կուտա, կըսե.—Յընչի՞ ես էդպես մոլրած կայնե:

—Ի՞նչ էնեմ, աղա՛ ջան, օր չը մոլրիմ, էրեխեքս անոթի, ծառավ, վեց էրեխա ունիմ, իրեք աղջիկս ու կնիկս թողել եմ տունը, էսոնց առե էկել եմ քաղաք, որ բան՚մ էնեմ, նոքար տամ, բլքի ես, էրեխեքս ապրին:

Հարուստ աղեն իրեք օսկի կուտա իրեք տղին կը վերրցնե: Ինքը էրեխա չի ունենա:

—Իրեք օսկի կուտամ, իրեք էրեխիդ կը վերցնեմ: Ես կը տանիմ ինչխ գիտեմ էրեխեքիդ էնպես կը պահեմ: Գուքա ժամանակ, օր քու էրեխեքդ քեզի պետք գուկան:

Էս քասիբ մարդը վերցնե կը իրեք օսկին, կէրթա բազար, կառնի էրկու մեշոք ալուր, աղջկներուն, կնգան չորս հագուստ, ուտելիք, բրինձ, ուրիշ մանդռ-մունդռ բաներ կառնի ու կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա, շատ ու քիչը Աստված գիտե, հասնի կը իրա գեղը:

Կնիկը տեսնի կը, օր իշուն բեռնավորած գուկա, ուրախությանը չափ չկա: «Փառք քեզ, Աստված, ապրանք»:

Մարդը գուկա տուն, բերածը գիչեցնե, կուրախանան, որ ապրան:

Գնանք աղի քովը:

Աղեն տղոցը վերցնե տանի կը տուն: Կնիկը տեսնի կը, որ տղեքը չլոտ, օճլոտ են, զարմանա կը.—Ա՛յ մարդ, էսոնց յընչի՞ ես բերե:

—Կնի՛կ, յուրիշները փող կը ծախսեն Երուսաղեմ կէրթան, էդոնք իմ Երուսաղեմս է:

Կնիկը վառե կը թնդիրը մայա պղնձով ջուր կը տաքցնե ու իրրեք տղին էլ լավ լողացնե կը, մազերը խուզե կը, կեղտերը յիստկե կը: Իրեքին էլ վարտիք-շապիկ կը հաքցնե, բաշմաքի, չուլքի, շալվար, վերնաշապիկ, մեկ-մեկ էլ պենճայ կը հագցնե: Յիրիկունը կնիկը ճաշը կեփե, սեղան կը բանա, տղոցը կառնի նստի կը սեղանի քովը կուտեցնե: Կուշտ կուտեն, սեղանը կը հավաքեն:

Հացը կուտին պրծնին կը, աղեն տղոցը առաջարկե կը.—Դուք իմ տղեքս եք... որդդ ինչ գործ գուզեք, ընձի էսեք:

Մեծ տղեն կըսե.—Ես գուզեմ ֆայտոնջի էղնիմ:

Օրթանջիլ տղեն կըսե.—Ես էլ գուզեմ յափջի էղնիմ:

Պզտիկն էլ կըսե.—Ես էլ գուզեմ դիրգար էղնել:

Աղեն գելնի յառավոտը մեծ տղին կուտա ֆայտոնջու քովը, օրթանջիլը կուտա յափջության, պզտի տղին էլ դիրգարության կուտա:

Գանցնի մե տարիմ ժամանակ: Լավով-գեշով տարին կը թմմի: Տղեքը իրանց արհեստները սորվին կը, տիրապետեն կը:

Մե օր՝մ իրեք ախպեր կէրթան գոմը, նստին կը գոմի յօդի սաքույի վրա: Պզդի տղեն մենձ ախպորը կըսե.—Չէ՞ որ մեր հերը բերեց մեզի քաղաք, լենը հանեց [հիմի] մենք չերթա՞նք մեր գեղը, հանդիպինք մեր հորը ու մորը:

Մենձ ախպերը.—Համբիրեք,—կըսե ախպորտոցը,—ես բան կառնիմ, կիրակի օրը կէրդամ հանդիպիմ կը, մեր հերը ու մերը կա՞ն, թե՞ չկան:

Գուքա կիրակի օրը: Ֆայտոնջի տղեն կէրթա բազար. ալուր, բրինձ, յուրիշ ուտելիքներ կառնի, դնե կը ֆայտոնի մեջը ու կէրթա յառավոտնից մինչև յիրիկուն: Յիրիկվա մթանը հասնի կը գեղ: Ֆայտոնեն գիչնի, տեսնի կը, որ յիրանց դռան յառաջը իրեք քուրն էլ քարի վրեն չբլախ, բոբլիկ կայնած են: Ձեռքով կէնե կանչե կը քուրերին: Քուրերը վազելեն գուքան ֆայտոնի քովը, ախպորը չեն ճանչե, ախպերը հագած կապած կեղնի: Քուրերուն կըսե.—Ես էս ալուրմալուրը դնեմ կը էստեղ, գնացեք հորդ կանչեք, թող գա տանի:

Քուրերը վազեն կը, հորը խաբար կէնեն: Գուքան տեսնին կը, որ ո՛չ մարդ կա, ո՛չ ֆայտոն, մթերքը քարի վրեն դրած, մթերք կա, բերողը չկա: Ուրախությանը սահման չկա: «Էս ի՞նչ տեսակ բախտ ունիմ,—[մտածե կը մարդը],—որ նստածս տեղը էդպես ուտելիք է էկե»:

Ախպերը հասնի կը յիրանց քաղաքը: Յիրիկունը [ախպերտինքը] թոփ կեղնին գոմի յերթիքը, ախպրտիքը հարցնեն կը, թե.—Գնացիր մեր հորն ու մորը տեսա՞ր, ի՞նչդ կապրին:

Էն էլ կըսե.—Ես հորս ու մորս չը տեսա, քուրերս բոբլիկ, չբլաղ պատի տակը կայնած էին:

Օրթանչիլ ախպերը կըսե.—Օր էդպես է, ես էլ էրթամ մե հատ՝մ տեսնիմ:

Կիրակի յառավոտ օրթանճիլ ախպերը կէրթա բազար բրինձ կը վերցնե, ուտելիք, քուրերուն ոտնաման կառնի, շոր կառնի: Հորեն գողտուց: Նստի(ն) կը ախպոր ֆայտոնը, կէրթա(ն) գեղ: Տեսնի(ն) կը, որ էրկու քուրն են կայնած քարի վրեն, մեկը չկա: Ձեռով կենեն, քուրերուն կը կանչեն էդ տարած ոտնամանները, շորերը, ուտելիքները քուրերուն կուտան ու յիրանք թողնեն կէրթան յետ: Քուրերը կէրթան հորն ու մորը հավար կենեն, թե էլի էն մարդը մեզի ուտելիք ու շոր է բերե: Ծնողները կուրախանան, թե օտարները մեզի բան կը ղրկեն,մենք կապրինք:

Ախպրտիքը եդ կը դառնան գուքան յիրանց տեղը: Յիրիկունը յիրեք ախպերը նստեն կը գոմի յօդեն: Պզտիկը հարց կուտա ախպրտոցը.—Գնացիք, ի՞նչ տեսաք:

—Բան չենք տեսե: Գնացինք մթերքները, շորերը, ոտնամանները տվեցինք ու եդ դառանք, ո՛չ հորս տեսանք, ո՛չ մորս...

Պզտի ախպերը կըսե.—Ես ձեր էրթալ-գալուն չեմ համաձայնվի, ես կէրթամ գեղ իմ հորս ու մորս, քուրերուս բերեմ կը քաղաք: Աղիս կը խնդրեմ գոմը թող ապրին, տեյմոր տուն՝մ սարքեմ գոմի քովը, իմ ծնողներիս, քուրերուս դնեմ մեջը իմ յաջքիս յառաջը:

Յիրիկունը աղեն գուքա տուն: Պզդի տղեն կէրթա աղի քովը, կըսե.—Էգեր եմ քովդ բան՝մ պիտի ըսեմ:

—Ի՞նչ պիտի ըսես,—կըսե աղեն:

—Էն պիտի ըսեմ, որ դու իրեք օսկի տվիր մեզի առար, հիմի ես քեզի մե բան՝մ կաղաչեմ... որ մենք գուզենք մեր հորն ու մորը, քուրերուս քաղաք բերենք [գոմը թող ապրին]:

Աղեն կըսե.—Ես քեզի տասը օսկի կուտամ, բերեք կը ծնողներիդ, գոմի քովը յօդեք

կը շինեք, ծնողներիդ դնեք կը մեջը՝ ապրելու:

Կանցնի կը հինգ-վեց ամիս: Օսկին կը խուրդեն: Յիրեք ախպերով սենյակը կը պատրաստեն: Յիրեք ախպերով կէրթան գեղ, գեղի քոխվին կըսեն թե. «Էկել ենք մեր ծնողներին տանելու, շատ կը խնդրենք 3 սել տաք քոչը բառնանք էրթանք քաղաք»:

Քոխվեն չի խնայե կուտա սելերը, ոչ էլ հախ կը վերցնե: [Քոչը կը բառնան կէրթան քաղաք]:

Ծնողները որ կը տեսնին տղոցը՝ խելքերը կէրթա, որ իրանց տղեքը ինչ փառքի են հասե: Մարդը կըսե կնկան.—Կնիկ, էդ դու էնքան խելացի մտածեցիր, որ տղոցս բոբլիկ-չբլախ տարա քաղաք: Էդ աղեն հանդիպավ, բարեխիղճ մարդ էր, իմ տղեքս բախտավորցան:

Քոչը կը բառնան սելերուն, գուքան քաղաք: Տղոց շինած յօդի մեջ նստին կը մարդ ու կնիկ:

—Էս ինչքա՜ն մենք բախտավոր մարդիք էինք, որ մեր յաչքը մեզի էրնակ կուտա:

53(53). ԳԱՐՍԵՎԱՆԸ՝ ԹԱԳԱՎՈՐ

Լինում է մի ծեր, խեղճ գեղացի: Էդ գեղացին ունենում է մի հատ տղա, որի անունը, ըսենք, Գարսևան է: Էս Գարսևանը շատ լոդռ է, աշխատանքից միշտ փախի կը:

Մի օր հոր ճարը օր կտռի կը, կըսե տղին.—Գարսևան, հերիք է վզիս յընկնիս, գնա՛ քեզ համար աշխատանք գտի...—և տնեն դուս է անում:

Գարսևանը գնում է: Շատ է գնում, թե քիչ, մի օր գնում հասնում է մի քաղաք, որտեղ ժողովուրդը հավաքվել թագավոր են ընդրում՝ ղշի միջոցով:

Ղուշը օր բաց են թողնըմ, ղուշը գալմ է ու կայնըմ է Գարսևանի գլխուն: Էս տեղի թոփ էղած մարդիկ չեն հավատըմ օր էս խեղճ գեղացին բդի իրենց կառավարե: Ղշին տանըմ են իրենց սենյակը, տղին տանըմ են մի շիշաբանդ շենքի մեջ [դնում]: Նորից ղուշը բաց են թողնըմ: Ղուշը գալըմ շուշեքը կոտռըմ է ու կանգնըմ է տղի գլխուն:

Թոփ էղած մարդիկ նորից չեն հավատըմ: Նորից ղշին տանըմ են իրեն(ց) սենյակը, տղին տանըմ են կոխըմ են մի հատ հոլիկի մեջ: Նորից ղշին բաց են թողնըմ: Ղուշը գալըմ կայնըմ է երթկի վրա և սկսում է ծղրտալը: Ուրեմն մարդիկ որոշըմ են, որ մեր թագավորը էս է, կա՝ էս է, չկա՝ էս է, և նշանակըմ են Գարսևանին թագավոր:

Անցնում է ժամանակ: Մի օր Գարսևանի միտքն է ընկնըմ իր հոր ընտանիքը: Կանչըմ է իր մեծամեծ մարդկանց և կարգադրըմ է.—Գնացեք այսինչ գեղը և ֆլան մարդու թևերը կապեք ու բերեք իմ մոտը:

Այդպես էլ անըմ են, հորը բերըմ են թևերը կապած, ներս որ բերըմ են թագավորի մոտ, թագավորը կարծըմ է, որ ինքը արդեն թագավոր է, իրեն չի ճանչնա իր հերը:

Բայց հերը միանգամից ճանչցավ, ասեց.—Թագավորն ապրած կենա, ինչի՞ համար ինձի բերիր ըստեղ, դու կարծըմ ես՝ ես քեզի չը ճանչցա, բայց ես քեզի ճանչցա: Դու պատկերացնում էիր թե. «Ես թագավոր եմ, իմ շորերը փոխած, ես լավ եմ ապրըմ, կարող է հերս ինձի չը ճանչնա», բայց ես ճանչցա: Դու էլի էն լոդռ տղեն ես, մարդ իրան կաշվից չի փախնի: Դու եթե լավ տղա էղնեիր և գլխուդ խելք լիներ, քու հարազատ հորդ թևերը կապած չէիր բերե ըստեղ, կըսեիր՝ այսինչ մարդուն առեք արեք, վերջը մարդ չես էղնի...

Հերը նորից գալըմ է իրա գեղը:

Անցնում է ժամանակ: Տղեն ասըմ է. «Մի հատ նամակ գրեմ գեղը հորս, գործերս վատ է»: [Գրում է հորը նամակ]:

Հերը նամակը ստանում է, կարդըմ է և պատասխանըմ է նամակին, թե. «Տղա ջան, ես մի հատ բոստան եմ դրե դուռը, ձմերուկ եմ ցանե, հասածը կտռըմ եմ, չհասը աճեցնըմ եմ, վերջ: Բարևներով, քո հայր»:

Գարսևանը ստանըմ է նամակը, կարդըմ է, ոչ մի բան չի հասկընում: Իրիկվան գնըմ է տուն ասըմ է կնկան: Ի միջի այլոց կնիկը շատ խելացի կնիկ է:

Կնիկը ասըմ է.—Դե՛ կարդա նամակը, Գարսևան:

Գարսևանը ասըմ է.—Կարդցել եմ, բայց հեչ բան չեմ հասկցե:

—Տուր ըստեղ նամակը,—ասըմ է կնիկը:

Առնըմ է նամակը և սկսըմ է կարդալը, երբ որ վերջացնըմ է նամակը, ասըմ է.—Քու հերը շատ խելացի նամակ է գրե, սրանից ավել էլ ի՞նչ գրե: Հըմի էլ դու հորդ գրածով շարժվի, այսինքն՝ էն թագավորական մարդիկ որ ուզում

են քեզի քցեն, հլը օրենքը քու ձեռդ է, թագավորը դու ես, էդ մարդկանց գլուխը կտռե նոր մարդ դիր տեղը, այսինքն հորդ գրածի համաձայն: Եթե էդ թազա մարդիկ, որ նշանակել ես նրանց տեղը, ժամանակին որ երես առան սկսին տակդ փորելը, նորից գլուխները կտռի ու նորից նոր մարդ նշանակե նրանց տեղը: Ա՛յ ըսման է նամակի բովանդակությունը:

Եվ Գարսևան թագավորը հասածի գլուխները կտռում է, թազեքը աճեցնում է և այդպես կառավարըմ է երկիրը մինչև ծեր հասակը:

54(54). ԹԱԳԱՎՈՐԻ ՓԵՍԻ ԵՐԱԶԸ

Մի տղա գիշերը քնած տեղը երազ տեսնի կը, քնեն գելնի հորը կսե.—Ա՛յ հեր, գիշերը երազ եմ տեսե:

Հերը կսե.—Աստված խերն էնե, հլը ըսա տեսնիմ՝ էդ ինչ երազ ես տեսե:

—Չեմ ըսե,—կսե տղեն:

Էդման օր կսե, հերը էդոր ծեծե կը, վեզիրը տեսնի կը, կսե.—Ընչի՞ ծեծես կը, պիճիկ է:—Դառնա էրեխին կսե.—Բալա՛ ջան, հորտ օր չես ըսե, ընձի ըսա:

—Յա, հորս օր չեմ ըսէ, ախմախ վեզիրին ընչի՞ բդի ըսեմ:

Վեզիրն էլ էդոր լավ՚մ ծեծե կը:

Էդ էրկուսը օր ծեծեն կը, կէրթա թաքավորի քովը՝ գանգատի: Էդ թաքավորն էլ կսե.—Լավ ես էրե, օր չես ըսե, ընձի ըսա, օղո՛ւլ:

—Հլը էդոր աշե, իրա ախմախ հալով կսե՝ ընձի ըսա: Հորս օր չեմ ըսե, ախմախ թաքավորին ընչի՞ բդի ըսեմ,—կսե տղեն:

Էդ թաքավորի հերսը գելնի, էդոր քծե կը տուզախը: Տղեն գուզե, օր փախնի տուզախից, կաշե էստուն, կաշե էնտուն, տեսնի կը օր իլաջ չկա, բաշլե կը փորելը:

Էդիկ փորե, փորե, տեսնի կը պիճի լուս՚մ էրևաց: Էլի փորե կը, ծակը լենցու կը, ինքը դուս գելնի, տեսնի կը մի հատ՚մ սենյակ, էդ սենյակում՝ մի հատ՚մ ստոլ, վրեն ամեն տեսակի ուտելեղեն: Ինքը նստի կը լավ՚մ կուտե, էլի մտնի կը ծակը: Դու մի ըսե, էդ սենյակը թաքավորի աղջկա սենյակն է: Աղջիկը զարտի կը, տեսնի կը սեղանի վրեն նա՛ հաց կա, նա՛ էլ ճաշ ու ինքը էլի պառկի քնի կը: Էկսի օրը տղեն էլի նես մտնի կը, հաց կուտեր, աղջիկը նես մտավ:

—Այ տղա՛, ինչ տղա ես,—հարցու կը աղջիկը:

Էն էլ կսե.—Հորդ բռնավորն եմ: Ինչ կեղնի քիչ՚մ հաց տաս ուտեմ,—կսե տղեն:

Աղջիկը հաց կուտա: Կուտե, բերանը սրպե կը, նստի կը ղրաղ: Տղեն տեսավ՝ աղջկա նիաթը կախ էր, հարցու կը, կսե.—Նիաթտ ընչի՞ ես կախե: Բրտունջ՚մ հացտ կերա, էդոր համա՞ր:

Աղջիկը կսե.—Իմ դարդեն վազն արի, հացտ կե՛ր, գնա տեղտ, նստի:

—Չէ դարտըդ ըսա՝ իմանամ:

Ու աղջիկը կսկսե.—Հորս դուշմանն ըսավ 5 մետր շլանկի մեջը շոլք թել անցու: Էհ, ես հորս տանը ասեղ չեմ առե ձեռքս, ուր մնաց շլանգի մեջը թել անցում:

Տղեն կսե.—Որ խրատ տամ, կթողե՞ս որ ձեր տան գետնին քնիմ:

Աղջիկը կսե.—Դե ըսա:

—Մի հատ՚մ մժեխ գդի, թելը կապե օդքը, էնիկ էս թարաֆեն մտնի կը, էն թարաֆեն դուս գելնի:

Էդման էլ կէնե: Էդոնց բերանը բաց մնա կը, կսե.—Էս ինչ խելոք մարդ են:

Էս հեղին էլ էրկու դանակ կուտան, կսե.—Ջոկե՛, էսոնցեն վե՞րն է խաս, վերն է խամ:

Չեն կռնա, ղրկեն կը էլի աղջկա քովը: Տղեն ծակից կաշեր, տեսնի կը աղջկա նիաթը էլի կախ էր: Հարցու կը տղեն, թե.—Ընչի՞ նիաթտ կախ է, պոլիտ վրեն քնա՝ էդոր համա՞ր:

Աղջիկը կսե.—Դարդիցս վազն արի, քնում ես՝ քնի:

—Հըբը ինչ է դարդտ,—կսե տղեն:

—Հորս դուշմանը իրա թուրը ղրգել է, կսե՝ ըսա՝ էս թուրը քանի՞ գլոխ է կտրե, չհանեցիր, կռիվս՝ կռիվ է:

Էլի կէրթան աղջկա քովը, իմանան՝ ինչ ջուղաբ տան: Աղջիկը կսե.—Էդոր բդի կանչել դոխտորների սինոթին էդոնք բդի ըսեն՝ էդ մարդը դալի փուրչուլող ինչքան է կերե:

Հետո ղրկեն կը 2 հատ ձի որ ջոկեն վերն է լավ, վերն է վատ: Էլի կէրթան աղջկա քովը, էն էլ կսե.—Մի հատ՚մ մենծ հոր փորեն՝ 3 մետր խորութենը, 3 մետր լենութենը, վեր ձին օր թռավ անցավ, էնիկ է լավը:

Էդ բիթունքի ջուղապը, խրատը կալանավորը կուտա: Թաքավորը էդիկ օր գիմանա, տղին կանչե կը իրա քովը, կսե.—Ա՛յ տղա, դու

էդման գիտուն ու խելացի ես, խրատ տալու օրվանից իմ փեսես ես:

Էդ տղին դառու կը իրան փեսա, աղջիկը կուտա էդ տղին:

Օրվա մեկը էդ դուշման թաքավորից նամակ գուգա: Էդ բարի թաքավորը կարթա կը, գրեր էր, թե իմ 40 ձին ձեր գոմն էր կապած, ձեր 40 մատակներն էլ հոն էին կապած, մեր ձիերը գիդենալով՝ ձեր ղսրաղները տալապի էին, կապերը կտռեն կը, ձեր մատիաների պահանջը զովացուն կը, 40 քուռակ ծնին կը: Էդ 40 քուռակները ղրկեք գա, թե չէ կռիվս՝ կռիվ է:

Էդիկ օր էլի էդման ահ կուտա, թաքավորը նստե միտք կէներ, թե ինչ ջուղապ տա, փեսեն կսե.—Ընձի 300 զորք տուր, ես էրթամ էդոր ջուղաբը տամ:

300 զորք կուտան, էման ջարդ կուտա, կռվելով հասնի կը դուշման թաքավորի քաղաքը: Էդ թաքավորը յալվար կեղնի, կսե.—Ժողովրդիս մի ջարթե, իմ աղջիկը կուտամ քեզի:

Ու էդման էլ կէնե: Հախտող թաքավորը կառնի էդոր աղջիկը, զաթի ինքն էլ առաջին կնկանից ուներ մի տղե՛մ, մի տղա էլ՝ էդ թազա կնկանից:

Օրվա մեկը էտ հախտող տղեն նստել էր, մի տղին առել էր մի ծնկին, էն մեկն էլ՝ մեկել ծնկին: Առաջի կնիկը նստել էր թաքավորի առաջի թարաֆը, հետի կնիկը՝ էդևի թարաֆը: Տղեն խնդաց: Թաքավորը հարցուց.—Ինչի՞ խնդացիր:

Տղեն ըսավ.—Հբը ինչ էնեմ, օր չխնդամ: Թաքավոր, էրծիս տեսա, ըսավ՝ էրազտ խեր էղնի: Էրազիս տեսա՝ արևը առաջս էր, լուսնյակը՝ էդևս, էրկու աստղերն էլ ծնկներիս, էլ ինչխ չխնդամ:

55(55). ԹԱՔԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆԸ

Մի երկիր՛մ կէղնի, կունենա թագավորըմ: Էդ թագավորը հրաման կուտա, կսե.—Ինչքան օր մենծ մարդ կա իմ երկրի մեջը, բիթունքին էլ բդի սպանել:

Վեզիրը էդոր հրամանը կատարում է: Էդ երկրի մեջը ինչքան մենծ մարդիկ կային սպանել կուտա: Իրա հորը չի սպանել տա, նկուղում պահե կը:

Էդ տարին շատ չորային կեղնի, հաց չի բուսնի: Գարունն էլ բացվել է, սերմացու էլ չկա, հըբը ինչ ցանեն, իրանք էլ չիտեն՝ ինչ էնեն: Օրվա մեկը տղեն նիաթը կախե նստե, միտք կէնե: Հերը կսե.—Տղա՛ս, ինչի՞ ես նիաթդ կախե, ինչ է էղե:

Էն էլ կսե.—Ա՛յ հեր, թագավորը հրաման է տվել, օր ցանքս էնինք, սերմացու էլ չկա, որտեղի՞ց սերմացու գդնիմ, օր ցանել տամ,—կսե վեզիրը:

Հերը կսե.—Հեչ դարդ մի էնե, գնա՛ հանդը, մժեղների բունը քանդե սերմացու կգդնիս:

Էն էլ էդման էլ կէնե: Մժեղների բունը կքանդե, երկու մեշոք սերմացու դրստե կը, կցանեն: Թաքավորը էդոր կսե.—Սերմացու չկար, հըբը ուրտի՞ց գդար:

—Թաքավորը ապրած կենա, քեզեն պահեմ, աստծուց ինչ պահեմ: Դու հրաման տվիր՝ բիթուն մենծ մարդկանց սպանել, ես էլ հրամանդ կատարեցի, հըմը հորս չսպանեցի, պահել էի նկուղում: Էնիկ խրատ տվավ՝ էրթամ մժեղների բունը քանդեմ: Քանդեցի երկու մեշոկ սերմացու հավաքեցի, ես էլ ցանեցի:

Թագավորը էդիկ օր գիմանա, իրա հրամանը փոխե կը, մեծերին էլ չեն սպանե:

56(56). ԳՏՆՎԱԾ ՕՍԿՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մե հատըմ մարդ ու կնիկ են եղնում: Էրկու հատ աղջիկ են ունենում սրանք: Էս մարդը առավոդը վեր ա կենում, գնում ա վար էնելու: Էսիկ օր վարում ա, մեկ էլ հանկարծ, ըհը, չութը դեմ առավ մե բանի՛մ ու չի էրթա առաջ, քշե, քշե առաջ, չի էրթա: Եզներըն կը քըշե, ք՛անե, հանկարծ դուս գուքա մեկ հատ կարաս ու մեջը լիքը օսկի: Էս մարդը կը շշմի, կը մըլուլվի ու չորս բոլորը կը նայե: Կտեսնի, օր էն կողմից էլ մե հատըմ ձիավոր է գալըմ: «Ահա,—կըսե,—Էս օսկին էս մարդի բախտից էր օր ելավ:—Կըսե,—թող գա, կկիսենք: Կեսը՝ իրան, կեսը՝ ընձի»:

Էս մարդն օր արդեն կտեսնի մոտեցավ իրան, կըսե. «Թող գա, գալում ա՝ գա, չեմ տա, իմն ա: Էս արտը՝ իմը, եզներն՝ իմը, չեմ տա»:

Գուքա ձիավորն ու կանցնի, կէրթա: Օր կիեռանա, կսե. «Ընչի՞ չտվեցի օր, էդ մարդն

օր չեղնիր, էս օսկին ո՞ւրդից բդի հանեի, էսի էդ մարդի բախտիցն էր, օր ես գտա»:

Էդտեղ մե մեծ քար կար: Գելնի, կկայնի ըդ մեծ քարի վրա՝ բարձըր ու կը ճըվա, կկանչե էդ մարդուն: Կը ճըվա.—Մա՛րդ, մա՛րդ:

Էս ձիավորը ետ կը նայե: Շլապկով կենե, կանչե կը.—Արի՛, արի՛, արի՛:

Էս մարդն օր ետ կդառցնե ձին, գուքա, կըսե. «Ընչի՞ տամ, չեմ տա, գուքա, թող գա, ես՝ իմ օսկին»:

Գուքա, կմոտենա, կըսե.—Ի՞նչ, ախպեր ջան:

Կըսե.—Հե՛չ, ախպեր ջան, գուզեմ ըսեմ էսօր եմ շատ վարե՞, թե՞ երեկ:

Էս մարդը գլոխը կը տանի-կը բերե ու կդառնա կէրթա: Նորից կը փոշմընի ինքը. «Ընչի չտվեցի, էդ մարդի բախտիցն էր, էդի օր չէղնիր, ես ուրտից բըդի հանեի օսկին»:

Նորից գելնի կկայնի նույն քարին ու կկանչե էդ մարդին: Էս մարդը նորից եդ դառնա գուքա, կսե.—Ի՞նչ, ախպեր ջան: Կտեսնի օր նորից էս մարդը ետ դառավ, եկավ, կփոշմընի, կսե. «Գուքաս, արի, ես՝ իմ օսկին»:

Ջղայնացած կսե.—ի՞նչ, այ ախպեր ջան:

—Հեչ, ախպեր ջան, գուզեի ըսես, թե էս եզըս է շատ վարե՞, թե՞ էս մեկելը:

Էս մարդը կըսե—Այ ախպեր ջան, ես շատ գիտե՞մ:

Գելնի կէրթա նորից: Կը փոշմընի, կսե. «Ընչի՞ չտվեցի, էդ մարդն օր չէղնիր, ես ինչ բըդի էնեի, ըշտը ըտոր բախտից էր էս օսկին ելավ»:

Նորից նույն քարի վրա գելնի, նորից կը ճըվա, կը կանչե էս մարդուն: Էս մարդն օր գուքա, նորից կփոշմընի, կըսե. «Չեմ տա: Իմ օսկին, իմ արտը, իմ եզները, ես»:

Գուքա, կսե.—Ի՞նչ, այ ախպեր ջան, ընչի չես թողնում՝ իմ ճամփես էրթամ:

Կսե, թե.—Ես գուզեմ ըսեմ, թե էս եզըս էս եզուս ի՞նչ գուքա:

Նորից էս մարդը ետ դառնա, կէրթա: Կտեսնի օր էս մարդը հեռեցավ, նորից գելնի նույն քարին, կը ճվա, ու կկանչե:

Էս մարդը կսե.—Ես էրթամ էդոր բըդի զարգեմ քարին՝ տրաքի: Էս չըթվորն էլ կտեսնի, օր էդ մարդն էկավ, էլ հնար չըկա, գուքա, կհասնի, կսե.—Ի՞նչ կըսես, այ մարդ, ընչի չես թողնի ես ճամփես էրթամ:

—Հեչ, հեչ,—կըսե,—ախպեր ջան, մի նեղենա,—կըսե,—դու օր էն կողմիցը ելար, ես ըս օսկին հանեցի, քու բախտիցն էր, արի կիսենք, կեսը՝ ընձի, կեսը՝ քեզի:

—Հա,—կըսե,—ախպեր ջան, դե ըսա, էլ ընչի ըսման կենես գըլոխըս:

Ըբը, կըսե.—ինչո՞վ կիսենք:

Կըսե.—ես մե հատըմ խուրջին ունիմ ձիուս վրա, կեսը լցնենք մե աշկը, կեսն էլ՝ մե: Ես կհեծնիմ ձին, կքշեմ, որ կողմն օր ծանդր եղավ, ցածր կեղնի, որ կողմը օր թեթև ելավ՝ բարձըր կեղնի: Դու ընձի ճըվա, ես գիշնիմ, կը հավասարցընենք:

Էս մարդըս օսկին կառնի ու կը փախնի: Էս մարդը ետևից կճվա.—Ըն կողմն է ծանդր, էն կողմն է ծանդր, ըն կողմն է ծանդըր:

Իսկ էն մարդը օսկին կը տանի: Էս օր օսկին կը տանի, կէրթա կը մտնի ճաշարան, կը խըմի: Թող էդի ճաշարանը խմե, մենք խաբար տանք էն մարդու տնիցը: Օր տուն ա էրթում արդեն: Սելը կը լծե ու տուն կէրթա, էլ չութ չի էնե: Տուն կէրթա կհասնի դուռը, կընիկը դուս գուքա: Կըսե.—Այ մարդ, էդ ի՞նչ ա եղել:

Մարդը ձեն չի հանում, լեզուն չի դառնում, օր խոսի:

—Այ մարդ,—ըսըմ ա,—դու չութ չես էրե՞լ, ընչի՞ ես թողել արտն անվարել, եկե:

Էս մարդուց ձեն, ծըպտուն չի ելնի: Կնիկը գալում ա, մարդուն շալկում, տանում թախտի վրա վար է գցում, եզներն էլ տանում, գոմը կապում ա:

—Շո՛ւտ էրա, ըսա տեսնիմ ինչ է էղել, օր եկել ես տուն ու չես խոսի:

—Այ կնիկ,—ըսըմ ա,—սուս կեցի, մե գյուգյում օսկի հանեցի, էն կողմիցը մե ձիավորըմ եկավ, ըտուր բախտից էր, ում բախտից էր՝ էդ օսկին ելավ: Լցեց խուրջինը, խաբեց ընձի, առավ ու տարավ:

Ելնըմ ա ըս կնիկը, իրա էրկու աղջկան առնըմ ա, էրթում ա դալլաքանոցը: Էս դալլաքանոցն ու ճաշարանը իրար մոտիկ են էղնըմ: Էրթում ա ու դալլաքին խընդրվում ա էս կնիկը.—Ախպեր ջան,—ըսըմ ա,—ի՞նչ կեղնի խալաթըդ ու գործիքներըդ մե ժամով հանձնես ընձի, ես քու վարձըդ կը վճարեմ:

Էս մարդն էլ, օր օսկին առել, գնացել էր, խմել էր, ճաշարանից դուս ա գալում ու մտնում

ա դալլաքանոց, օր թրաշվի: Խմած մարդ, նես ա մտնըմ ու չի հարցնում, թե դալլաքը օվ է:

—Քուր ջան,—ըսըմ ա,—չեք թրաշե՞ ընձիք:

Ձին էլ, օսկին խուրջինով վրեն, կապած ա էղնում դալլաքանոցի դռանը: Կսե.—Ընչի՞ չեմ թրաշե, ախպեր ջան, նըստի:

Պեխի կեսը թրաշում ա, կեսը թողնըմ ա, ունքի կեսը թրաշըմ, կեսը թողնում ա, երեսը խաչուփառ թրաշում, թողնում ա, մե այլանդակ բան ա շինում էս մարդուն: Մինչև թրաշվելը ուժեղ արաղը իրան բռնում է, էլ չի դիմանում, մոռանում է ձին էլ, խուրջինն էլ: Էրթում ճաշարանը նորից ընկնում ու քընըմ ա: Նախքան գնալը հարցընըմ ա էս կընկան.—Քուր ջան,—ըսըմ ա,—քու անունը ի՞նչ ա:

—Իմ անունս Դոր խաղամ է:

—Բա էն քուրոջըս անունը ի՞նչ ա:

Ասում է.—Նրա անունն էլ Ընձեն բեթար ա:

—Բա,—ասըմ է,—էն քուրոջըս անունն ի՞նչ ա:

—Նրա անունն էլ,—ասըմ ա,—Ինձ նման ա:

Ու նոր դուրս ա գալըմ, էրթում ճաշարանը, շընթրկվըմ ա գետնի վրա: Էդ կնիկը խալաթը, գործիքները տալըմ ա դալլաքին: Դուրս ա գալըմ, տեսնըմ ա, օր օսկով ձին դռնից կապած է: Վերցնում է խուրջինը, մե բուռ օսկի էլ տալիս ա դալլաքին, շնորհակալություն է հայտնում ու տուն են էրթում: Կնիկն օր օսկին տանում ա, մարթը տեսնում ա, նոր բռնված լեզուն բացվում ա, խոսում ա: Էս ձիավորը քնում է մինչև լուս: Առավոդը օր կզարթնի, կանչում ա էս կնկան ու աղջիկներին, ճաշարանը լիքը ժողովուրդ ա: Ելնում կայնում ու ճըվում ա.—Ինձ նըման, Ինձ նըման:

Ժողովուրդը ետ են դառնում ու պոլոզնում են, թե.—Քեզ նման էլ ո՞վ կա:

—Ընձեն բեթար, Ընձեն բեթար:

Ժողովուրդն ըսըմ ա.—Քեզնեն բեթար ո՞վ կա, դու ես էլի:

Ըսըմ ա.—Կեցի կանչեմ՝ Դոր խաղամ, Դոր խաղամ:

Մարդիկ եդ են դառնում ու ըսըմ են.—Էլ դոր կա, օր դոր խաղաս, կայնածըդ տեղն էլ խաղա, էլի:

57(57). ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՀԱՅԵԼԻՆ

Հեր ու տղա շատ իրար լման էին: Էնքան էին լման, օր ինչպես օր մի խնձորից կիսած էղնեին: Տղեն հասել էր: Հերը տղին կարգեց: Հառս բերավ: Մե առ ժամանակից եդև հերը մեռավ: Խեղճ տղեն մնաց կրակի մեջ: Էս հառսը տղին ըսկի օր ու արև չէր տալմ: Շատ նեղություն էր տալմ: Տղեն օրը մե անկամ էրտմ էր հոր գերեզմանի վրեն լալմ էր: Հորը գանգտվմ էր, գալմ էր տուն: Մե օր՝մ էլ, շատ օր ջանին հասուց կնիկ, տղեն էլավ հոր շորերը հակավ, փեդն առավ ձեռն, ընկավ ճանպա, գնաց: Ինկն էլ չիդեր, թե ուր էր էրտմ:

Շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը ինկը գիդեր: Ճամպու վրեն մի բան՝մ է պղբջմ: Գնաց վերծրավ աշեց, սռպեց, տեսավ, օր իրան հերը էդոր մեջն է: Ուզմ է ձեռը տա բռնե՝ չկա հերը: Էդ բանը դառծնում է, էդևն է աշմ՝ չկա, բերըմ է էրեսի դեմը, հերը գալմ է դեմ: Ինկն օր խոսում է, նոր հերը խոսում է, օր չի խոսմ, հերն էլ չի խոսմ: Ըսկսեց հորը գանգտվել, ըսել.—Ախր, հայրիկ ջան, դու օր բդի մեռնեիր, ընչի՞ ընձի կարկիր, թողիր կրակի մեջ, գնածիր: Դու խաբմ՞ ես, թե ինչ օրի, արևի մեճ եմ: Հառսդ ընձի դրել է կրակի մեջ վառմ է: Ես էլ գլոխս առել եմ, կորել եմ: Չիդեմ, թե ուր էրտամ:

Ինչ օր ինկը խոսում էր ու ձեռով պատմմ էր, էն էլ հերն էր էնմ, ինկը գիդեր, թե էն էլ է խոսմ: Չիդեր, թե էն էլ էլի ինկն է: Ինկը ընդունեց, օր էդի հերն է ու իրան ըսմ է. «Էլի համբերե, եդ դառի գնա տուն, ես գուկամ հառսին էլի գհամոզեմ, գհասկծնեմ, լավ կեղնի»:

Էդ հույսով տղեն եդ դառավ տուն: Գտած էդ չտեսնված հրաշկը սռպի տեղ՝ հոր տեղ, դրավ ծոծը գնաց: Օր հասավ տուն, տարավ հորը մե գաղտնի տեղ՝մ հանեց, նորից տեսավ, հետը խոսած, փաթթեց շորով, պայեց: Էդ օրից էդ տղի աշքը մնաց ճանպու, օր բդի հերը գա: Հմը ի՞նչ հեր, ի՞նչ գալ: Չկա ու չկա: Ինկն էլ օրական մեկ յա երկու անգամ երտմ է հանմ է, հորը տեսնմ է, հետը խոսմ է, նորից պայմ է, գալմ է տուն: Ճանպա է աշմ, օր հերը գա բտի:

Մե օր՝մ էլ շատ օր աշեց, հերը չեկավ, գնաց հանեց, հորը տեսավ, հետը խոսած, ըսավ.—Բա դու ըսմ էիր՝ ես գուկամ: Ընձի չթողիր ես էրտայ, մնացի վառման կրակի մեջ ու չեմ կռնմ ազատվիմ:

Լավ լացավ, գանգտվավ: Հոր հետ պռոշտի էղավ ու նորից փաթթեց, պայեց, էկավ տուն: Դու մի ըսա, էդ բոլորը կնիկը լսմ, տեսնմ է: Մառտն օր գալմ է տուն թե չէ, ինկն էրտմ է, հանմ է մառտու պահածը, տեսնի, թե ինչ է: Օր հանմ է տեսնելու, աշմ տեսնմ է, օր ինչ տեսնի՝ մե սիրուն հառս'մ է: Հառսն էլ իրան չի ճանճնե: Ըսմ է.—Ահա, էսի մառտուս սիրածն է: Բերել է ըստեղ պայել է: Ամեն օր գալմ է, տեսնմ են իրար, պռոշտի են էղնմ, նոր տուն է գալմ: Դե լավ, կեցի, ես ըդուր հախեն գամ,—ըսմ է ու նորից դնմ է տեղը, պայմ է:

Գալմ է տուն, սկսմ է մառտու հետ կռիվ, դավի, թե.—Դու սիրած ունիս, տունը չէս ըսմ: Կնկադ չես լսմ, լավ չես աշմ:

Կնիկն օր շատ է խոսմ ու ճվմ, բոռմ, մառտն ըսմ է .—Ա՛յ ջանմ, ես քո դառդեն ո՞ւր երտամ, ո՞ր ջուրն ընկնիմ, օր քու ձեռնեն պոծնիմ:

Կնիկն ըսմ է.—Ըշտա գնածել ես էլի՝ սիրածդ տեսնի:

Շատ վիճելուց եդև, կնիկը գնաց պայուստը հանեց, բերավ՝ աշելով, նեղենալով ու հետը խոսալով: Բերավ, մառտն ըսավ.—Ա՛յ կնիկ, ախր էդի՝ իմ հերս, ինչ սիրական, ինչ բան ես ըսմ:

Կնիկն ըսավ.—Ընչի՞ հերդ հառս է՞, թե՞ տղամառտ է: Արի ըստեղ հլը, լավ աշե:

Մառտ ու կնիկ էկան իրար քով, իրար հետ աշեծին էդ չտեսված զարմանալի ապրանկին: Տեսան, օր ինչ տեսնին, երկուսն էլ իրանկ են: Մառտը աշեց կնկան, աշեց էդ ապրանկի մեջը էրևողին, տեսավ օր էրևողը իրա կնիկն է, ըսավ.—Ա՛յ կնիկ, էդի դու ես, ինչ սիրական, ինչ բան:

Կնիկն էլ աշեց մառտու երեսը, աշեց էրևողին, տեսավ օր էրևողը իրա մառտն է, ըսավ.—Ա՛յ մառտ, էս դու էս: Ինչ հեր, ինչ բան:

Ուրեմն մառտ ու կնիկ էղել էին ամեկը 30 տարեկան, հլը ոչ իրանծը տեսել էին, ոչ էլ ճանճնում էին, էնդի էլ մնածել էին կարծիկի տակ:

Մառտը ըսավ.—Ինչ ենենք, ինչ չենենք, էս տեսակ չտեսնված ապրանկը ո՞ւմը տեսծնենք, օր իմանանկ, թե էսի ինչ բան է:

Շատ մտածեցին, գտան ճարը: Էդ չտեսնված ապրանկ տարան աշխարք տեսած ու ման գալած վարժաբետի'մ քով: Տեսծրեցին, վարժապետն ըսավ.—Էսի հայլի է: Տարեկ պայեք: Էդման կաշեք, դուք ձեզի կտեսնիք:

Առան, էկան տուն: Էդ օրից եդև, էդ գեղացիկը գալմ էին էդ հայլին տանմ էին, պտտմ էին, թե էս ինչ բան է: Երկնքիցն է ընկե, թե ծովիցն է էլե: Տանմ էին համ զարմանալով տեսնմ, համ էլ իրանկ իրանծն էին աշմ, տեսնմ ու ճանճնմ, լավ ու վատը գիդենմ:

58(58). ԱՍՎԱՏՈՒՐ ՔԵՌՈՒ ԽՐԱՏԸ ԵԿԱՆԻՆ

Քեռի Ասվատուրը շատ խելածի, խոնար մառտ էր: Էնկան խոնար ու խելածի էր, օր թակավորն առանծ Ասվատուրի հաց չէր ուտմ:

Մե օր'մ էլ, առավոտ նոր էր արևը ծաղկե, Ասվատուրը տեսավ՝ իրան եկանն էկավ: Բարև տվավ, բարև առավ, նստան, ըսին-խոսածին, կերան-խմեծին: Մեկ էլ թակավորի գզիրը էկավ, ըսավ.—Ասվատուր քեռի, թակավորը քեզի վռազ կանճմ է: Շատ մառտ են էկե, դու չկաս, ըսավ՝ գնա կանչե:

Ասվատուրն ըսավ.—Գնա թակավորին ըսա, թող ներող էղնի, էսօր չեմ կռնա գա, ղոնախ ունիմ:

Գզիրը գնաց, թակավորին ըսավ, օր, ըշտա, էսպես ըսավ: Թակավորն ըսավ.-Գնա ըսա, թե ինկն էլ, իրան ղոնախն էլ բարով, հազար բարի գան: Իմ տունս իրան էլ տեղ կա, իրան ղոնախին էլ տեղ կա, թող վռազ գան:

Գզիրը եդ դառավ, էկավ ըսավ.—Ինկն էլ, իրան ղոնախն էլ բարով, հազար բարի գան: Իմ տունս իրանծը տեղ շատ կա:

Ասվատուրն ըսավ.—Լա՛վ, դու գնա, մենկ հիմի գուկանկ:

Գզիրը գնաց: Քեռին եկանին ըսավ.—Գիտե՞ս, մեզի թակավորն է կանճել, օր կերտանկ դու գնստիս ամենացածը, օր գալողն քեզի բոտելով հանե վիրև: Չնստիս թեզ'մ վիրև, օր գալողն բոտելով իջու ցածը: Մեկ, մեկ էլ, օր քեզեն քանի օր ապրանկ, բան չեն ուզե, չտաս: Առանց ուզել չեղնի տաս:

Ըսավ, թամբա էրավ ու էլան, գնածին: Գնածին,օր թակավորը անհամբեր իրան ճամպեն է աշմ: Գնաց գլոխ տվավ, բարև կապեց, կայնավ:

—Դե,—ըսավ թակավորը,—տեղավորվե՛կ:

Քեռին, ամեն օրվա իրան տեղը գիտեր, գնաց նստավ: Էկանն էլավ ամենավիրևը

նստավ: Հա էկան, էլան վիրև, եկանին բոտին ցած, հա բոտին ցած: Էկավ իջավ ջիլիզ պոճը: Քեռին իրան է կտռտմ, ճար չկա, չէ: Ըսկսին ուտել-խմելը: Կերան-խմեծին, սեղանը սռպեծին, բերեծին ձմերուկ կտռելու: Դանակ չկա: Մախսուս դանակ չեն բերե, օր իրանց գողը գտնին: Ձմերուկը դրել են սեղանի վրեն: Դանակ ուզին. «Դանակ բերե՛կ, դանակ»: Եկանը հանեց ջեպեն օսկեկոտ դանակ տվավ: Թակավորը տեսավ թե չէ, ճանճծավ:

—Հայ-հա՛յ,—ըսավ,—քանի տարի է ման էի գալմ, անջաղ գտա գողս:

Խառնվան իրար: Ելան, ամեկն իրան գոռծին: Քեռի Ասվատուրը ըսավ թակավորին.—Թագավորն ապրած կենա, տուր իմ ղոնախս, էսօր է էկե: Էս գիշեր մնա մեր տունը, առավոտ բերեմ տամ քեզի:

—Չէ՛,—ըսավ թակավորը,—տանիս խելկխրատ տաս, բերես:

Ասվատուրը եռտում կերավ, օր ես ըդոր հետ լիզու չեմ թռճե, չեմ խոսա: Թե ես ըդոր հետ խոսամ, ես մառտ չեղնիմ:

—Լա՛վ,—ըսավ թակավորը,—քեզի ավտնմ եմ, տա՛ր:

Էլան քեռի, եկան էկան տուն: Քեռին գնաց գոմը, ըսավ կնգան.—Ըդուր ա՛ռ, արի գոմը:

Քեռեկինը ըսավ.—Ա՛յ տղա, քեռիդ գոմն է, քելե մենկ էլ էրտանկ:

Գնացին գոմը, նստան: Քեռին օր երտում էր կերե, օր հեդը չեմ խոսա: Ու չխոսած: Ու չխոսած էլ, հմը իշուն ինչ օր ըսմ էր, եկանին էր ըսմ: Ըսավ.—Է՛շ, դու էրեկ էկար մեր տունը, բախտդ բերավ թակավորին ղոնախ եղար, ընչի՞ չբաշարիր չուրի վեռճ պատվով նստեիր, վայելեյիր, էդ գոյնե մեկ օրվա փառկը, ընձ էլ քու հետ խայտառակ էրիր: Հմի ի՞նչ բտի էնես, օր ազատվիս: Է՛շ, քեզի հետ եմ: Գիտե՞ս ինչ կենես, է՛շ: Քիչ՚մ իշուտենեդ ջոկվե, ֆայմի վրեդ: Մենկ օր առավոտ գնացինկ, քեզ թակավորը գհառծնե, կսե՝ է՛շ, էդ դանակը ուրտի՞ց է, դու կսես՝ ըշտա, էս ինչ թվին, էս ինչ ամսին, էս ինչ տեղը հորս սպանել էին: Գնաձինկ, էս դանակը սռտի մեջը տեսանկ: Հմի ես էս դանակը ջեպս դրած պտտվմ եմ, ամեն տեղ այան եմ հանմ, օր բալկիմ հորս սպանողին գտնիմ: Տեսա՞ն, առանց ուզել ես հանի դանակը տվեծի: Ետե ես քու խազինեն կտռած, տարած էղնեի, դանակը այան գհանեի՞: Իմծա՞ր, է՛շ: Հասկցա՞ր, լավ միտկդ պայե, ինչ օր ըսի: Դու թակավորին էդման էլ կսես, օր ազատվիս, թե չէ գլոխդ գզարկե թակավորը,—ըսավ, թամբա էրավ:

Քնան: Էլան առավոտ առավ եկանին, գնաց թակավորի պալատը: Գլոխ տվին իրեկ անկամ, բարև կապին կայնան: Թակավորն հրաման տվավ: Ասվատուրը նստավ: Եկանը մնաց կայնած: Քեռին ըսավ.—Ահա՛, քու տուտսաղը, բերել եմ, առանծ հետը բառ՚մ խոսալու: Հիմի դու գիտես՝ ինչ կենես, ինչ դիվան կենես, դու գիտես:

Թակավորն էլ կանչեց սինոտին: Սինոտը էկավ, նստավ: Ըսկսին տղին հառց ու փոռծը.—Ըշտա, էդ դանակը քեզի որտեղի՞ց, եպվանի՞ց:

Էս դին, էն դին հառծրին, ամեկը իրանց հառծրին: Տղեն ըսավ.—Լա՛վ, թակավո՛ր, ապրած կենաս, դուկ խո ընձեն դանակ չուզիկ:

Թակավորն ըսավ.—Չէ՛:

—Օր չէ, բա ես հանի առանծ ուզել դանակս տվի, հլբատ ես էլ մե նպատակ՚մ ունեի,-ըսավ տղեն:

—Ի՞նչ նպատակ ունեիր,—ըսավ թակավորը:

Ըսավ.—Էն նպատակն ունիմ, օր, ըշտա, էսինչ թվին, էսինչ ամսին, ֆլան տեղը հորս սպանին: Մենկ գնաձինկ, սպանողին չգտանք: Էս դանակը հորս սռտից հանինկ: Հիմի էլ դանակը ջեպս դրած ման եմ գալմ: Ով տեր էղավ դանգին, էնի իմ հոր սպանողն է:

—Օհո՛,-ըսավ թակավորը,—շառի մեճ ընկանկ: Է՛հ, հիմի ի՞նչ էնենկ,—ըսավ թակավորը,—քեզի հիմի դատենք որպես գող, օր մեր խազինեն կտռին տարան, էս դանակն էլ հետը տարան, թե՞ մեզի դատենք որպես հորդ սպանողի: Որի՞ն էս օժար:

—Հեչ մեկին էլ օժար չեմ,—ըսավ տղեն,—նա՛ դու ես իմ հորն սպանե, օր քեզի դատես, նա՛ էլ քու խազինեն ես եմ կտռե, օր ընձի դատեկ: Իմ հերս օր մեռավ գնաց, հիմի հա սպանողին գտել եմ, հա չեմ գտե, էլ օգուտ չկա: Մե դանակ՚մ է ղուրբան էղնի քեզի:

—Դե օր էդման է, դե նստի՛,—ըսավ թակավորը,—էսօր դու իմ ղոնախն ես:

Տղեն նստավ: Քեռի Ասվատուրն ըսավ.—Ես էդ քուլի լավ գիտեի, հմը ես էրեկ չսեծի, մտածե-

ծի, օր իրան ըսելա դիա լավ է, օր մառտիկ հավատան: Օղոռտ է, օր էդ մառտու հորը էդ թվին, էդ ամսին սպանել են էդ դանակով,—քեռին էլ ջիլիզ հաստատեց:

Թակավորն ըսավ.—Ուրիշ կերպ չենկ կռնա վարվի: Բերեկ էս մառտու հոր արնկի գինը տանկ, թող էրտա:

Բերեծին սինոտով որոշեծին: Տվեծին հոր արնկի գինը տղին: Բերին նորից սեղան բացին: Կերան, խմին, խոսածին, ելան ամեկը իրանց գնածին:

Քեռին ու եկանն էլ էկան իրանց տուն: Եկան նստան: Քեռին ըսավ.—Ա՛յ եկան, դե հմի ըսա, ը՞նչ'ես էկե, ի՞նչ գոռծով ես էկե:

Եկանն ըսավ.—Քեռի՛ ջան, ըշտը, էկել եմ, օր քեզի տանիմ:

Թե.—Ընչի՞:

Թե.—Բա մերս ըսավ, օր գաս ընձի նշանես:

Քեռին ըսավ.—Չէ՛, բալա՛մ, դու հլը խրատով, խելկով ես յոլա էրտմ: Եպ օր եղար հիմնական խելկի տեր, նոր գուկամ քեզ գնշանեմ:

Քեռին ճամպու դրավ եկանին: Գնաց աշկը ճամպու աշելով, օր քեռին էրտա իրան նշանե: Խեղճ եկանի աշկը ջուր կտռավ, օր քեռին հլը բտի էրտա:

Էս էլ քեռի, եկանի հեքյատը:

Ընդոնկ հասնին իրանց մուրազին, դուկ էլ հասնիկ ձեր մուրազին: Էրդկեն ընգնի իրեկ խնձոր: Մեկը՝ կարտաձողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ հնարողին:

59(59). ՎԱԽԿՈՏ ՄԱՐԹԸ

Գըլլի, չի'լլի մե վախկոտ մարթ'մ գըլի: Ատիկ անքան վախկոտ գըլի, որ մեննակ ոտում'մ չի կրնը փոխե: Մե օր'մ ա օր կընկանը հետ դուս գելլե ջրվածքի, կնկա հոգուն հասած գլլի, ալ չի համբերե, վազզե կը նես ու դուռը զարնե կը վրա: Մարթը բոռալեն, ճվալեն կուգա, դուռը ծեծե կը,—Բա՛ց, Աստծու սիրուն, բա՛ց:

Կընիկը նեսեն ձեն կուտա կը, թը,—Քեզի պես վախկոտ մարթը ես չեմ ուզե, ուր կէրթաս՝ գընը:

Մարթը գուլա, կաղաչե, կընիկը հեչ օրալի չի'լլի: Մարթու չարան կը կտռի, կըսե.—Նես չես առնե, մի առնե, հեչ չէ, բուռ'մ ալուր ու մե հավկիթ'մ տու, էրթամ:

Կնիկը պատի ծակեն կերկընցնե անոր բուռ'մ ալուր ու հավկիթ'մ, ատիկ կառնե, կէրթա: Կէրթա, լուսնյակ գիշեր գըլլի, կաշե, օր մե ղոճա դև'մ գուգա: Ասոր սոլուղը փորը գընի, հըմը ի՞նչ պիտի էնե, մե անգամ ընկեր է: Ուժուկող կէնե, չափուկ-չափուկ կէրթա քովը, ծուռ-ծուռ կաշե էրեսին ու ճըվալով հարցնե կը, թը.—Դուն վե՞վ ես:

«Ա՞ս ինչ,—կըսե դևը ինքնիրեն,—աս քա՞նի գլոխ ունի, օր ինծեն չի վախենա»:

—Ես,—կըսե,—ան դևն եմ, օր քարը փշրեմ՝ ղում կէնեմ, դո՞ւն վեվ ես:

—Ես քու աչքտ հանողն եմ, ան եմ, օր քարը փշրեմ, ալուր դարձնեմ կը:

—Էրա, տեսնենք,—կըսե դևը:

—Հազըր, առաջ դուն էնես,—կըսե վախկոտը,—դուն ի՞նչ ես, որ ինծի հրամայես կը:

—Լա՛վ,—կըսե դևը, ես կէնեմ:

Կառնե մե ղոճա քար'մ ու բռի մեջ, օր չի սխմե՝ մանդռ ղում գըլլի, թափի կը:

—Ա՞տ է քու հունարտ,—կըսե վախկոտը,—կեցի, կեցի՞:

Սուտմնցա վերցնե կը քար'մ ու բուռը սխմե, ալուրը փչէ կը դևի աչքերուն: Դևը զարմանա կը:

—Դուն ղոչչաղ ես, ղոչչաղ,—կըսե դևը,—արի ախպար ըլլինք:

—Ըլլինք:

—Էղա՞նք:

—Էղա՛նք:

—Տե, քալե էրթանք մեր տուն իմ օխթը ախպրտոցս քովը:

Վախկոտի սիրտը կէնա, պաշլայե կը դողդողալ: Հըմը ի՞նչ պիտի էնե, ուզե, չուզե պիտի էրթա: Կէրթան ճամփան դևին մենծ ախպարը ռաստ գուգա:

—Ատ ի՞նչղ է էղե, օր աս մե թիքա՛ն փորետ ավելցեր է,—կըսե ատ դևը:

—Ի՞նչ, ի՞նչ ըսավ,—կըսե վախկոտը:—Կեցի, կեցի քեզի թիքա շինեմ,—կըսե ու վրա կը քշե, սա՛քի թե պիտի զարնե:

Պզտի դևը չի թողնե, կըսե.—Աս մեր ղոչչաղ ախպարն է, ասիկ քարը ալուր դարձնե կը, ո՞ւմ հետ կը խաղաս:

—Հունար թը ունի, ինձ ա թող ցըցընե,—կըսե մեծ դևը:

—Դուն ինչ հիւնար ունես, օր ես քեզի իմ հիւնարս ցըցընեմ,—կըսե վախկոտը:

—Տես իմ հիւնարս,—կըսե դևն ու բուռ'մ հող կառնե, անպես սխմե, կ'օր ջուրը կաթ-կաթ կաթե կը:

—Ա՞տ է ուժտ,—կըսե վախկոտն ու բուռ'մ հող կառնե, հավկիթն ա մեջը, սխմե կը օրա ճերմակ ու դեղին ջուրը աղբրի պես վազզե կը: Էրկու դևն ա մաթ մնան կը:

—Ախպեր ըլլենք, ախպեր,—կըսեն էրկուսն ա, ու ախպեր գըլլին, կէրթան տուն:

Կէրթան տուն, օր ասոնց հինգ ախպարն ա շարվեր նստեր են: Ան մարթուն վերի գլոխը նստեցընեն, լավ պատիվ կուտան: Ատտից էտև աս մարթը հեչ բան չի էնե, կան գուգա ու պուրիւրմիշ կէնե: Մեկ, էրկուս, աս օխթը ախպերը խոխուրդ կէնեն, թը.—Աս ինչ աղա էր, բերինք գլխներուս նստեցուցինք, մենք դատինք, ան ուտե: Արեք ատոր գլոխը ցանենք:

Ատոնք խոխուրդ կէնեն, օր շշերը տաքցընեն, գիշերը ատոր ջանը կոխեն, մեռցընեն: Աս մարթը ատոնց շուրութեն գիմանա, օր իրեն գլխուն ղազա'մ պիտի բերեն: Գիշերը քիւթիւկ'մ դնե կը իրեն տեղը, ինքը գէլլե ծառին գլոխը: Գիշերը աս օխթըն ախպերը գէլլեն, կրակ կը վառեն, շշերը կարմրցընեն, կառնեն կէրթան ատ մարթուն քովը: Կաշեն՝ յորղանը գլխուն քաշեր քներ է, շշերը կոխեն կը ջանն ու թողնեն փախչեն կը:

Ատ մարթը առավոտուն կանուխ գէլլե, քիւթիւկը կը պահե, կէրթա դևերուն կըսե կը թը,—Ո՜ւֆ, իրիկունըս լվերը հեչ չթողին օր քնիմ:

Դևերը զարմանան կը, թը.—Աս ինչղ բան է, օր կարմրցուցած շշերը ջանը կոխեցինք, կըսե՝ լվերը խածեցին:

Մեկալ օրը ատ մարթը կէրթա քիչ'մ պառկի, գէլլե, կենա քիւթիւկը դնե կը տեղերու մեջը՝ գէլլե ծառը: Օխթը դև ղոճա ղազան'մ ջուր տաքցընեն, բերեն շրջեն կը ատոր վրեն, «Խաշա, խաշա»,—կըսեն ու թողնեն կէրթան:

Առավոտուն՝ մութումութ, ատ մարթը գիչնի ծառեն, քիւթիւկը կը պահե, գուգա դևերուն քովը, կըսե.—Իրիկունս անպես քրտներ էի, օր հեչ չկրցի քնի:

Մեկալ օրը ախպրտիքը միամտտան կըսեն կը, թը.—Ասօր ա դու գնը ջուր բե, տիկը լից:

Տիկն ա մե ղոճա բան'մ էր, իրեք օր օխթը դևը ջուր բերեին, լըլեին կ'օր լցվի: Ասիկ գնաց ատ դառտակ տիկը շալկեց գնաց ջուրը, նստավ քիշան ու ուռեցուց, շալկեց, վազզեց տուն: Դևերն օր հեռվանց տեսան, վախեցան, նես մտան դուռը ախեցին: Ասոր ուզածն ա էտ էր: Կայնավ տկի վրա, իջեցուց: Էկավ ձեն տվեց, թը.—Բացեք դուռը, բացեք, աս ինչղ շոք է, ծառվըցա, բերածս ջուրը խմեցի:

Ատոնք դողդողալեն բանան կը դուռը, տեսնեն, կ'օր, ղորթ, տիկը դարդակ է, քաշվին կը ղրաղ, խոխուրդ կէնեն, թը՝ ինչղ էնեն, օր ատոր ձեռքեն ազատին, թը չը մե օր'մ հերսը գէլլե՝ զարկե բիտտունին ա սըպանե կը: Խոխուրդ կէնեն, օր սուտմանց կռվեն, բաժնվեն, բալքի ատիկ իրեն փայն առնե, քաշվի:

Ատոնք բան'մ մահանա կէնեն՝ կռվեն կը, էտև կայնեն կը, թը բաժնըվինք, անմենքս իրեն հմար ապրի:

Վախկոտ մարթու ուզածն ա ատ էր: Բաժնվին կը, աս մարթուն ամենքեն շատ փայ հանեն կը, կուտան կը պզտի ախպոր շալակը, օր տանի տուն:

Աս մարթը կառնե իրան փայը, կէրթան տուն: Դևը բեռը վար կը ցկե ու օֆ'մ կէնե, ատոր շնչեն աս մարթը առքին կը կպնի:

—Ատ ինչ կէնես ֆոտ,—հարցնե կը դևը:

—Հորըս խանչալը ֆոս պտի ըլլի, կալեմ, օր գլոխտ կտռեմ,—կըսե մարդը:

Դևն աս օր գիմանա, իզն ու թոզը կառնե փախչե կը:

Արթղ ատ վախկոտ մարթը նստի կամացկամաց ատ աշխրքին մալը կուտե:

60(60). ԻՄԱՍՏՈՒՆ ՋՈՒԼԱԿԸ

Թաքավորի մեկը ծերացած կէղնի: Օրվա մեկը հարևան թաքավորուտունից մե հատըմ դարվեշ գուկա էտ թաքավորի պալատի յառաջը մե կլոր գիծըմ կքաշե ու յինքը էտ ճզի մեջը կնստի՝ յառանց խոսելու: Թաքավորը գ'ելնի, կտեսնի, օր մե դարվեշըմ ճիզը քաշե ու մեջը նստել է: Կանչե կը յիրա լալա-վազիրին, կըսե.—Արեք, էսոր ջուղաբը տվեք, էս մարթը բան կըսե:

Թոփ կէղնին բոլոր գիտնականները, չեն կրնա ըսե, թե էդ մարդը ինչի հմար է ճիզը քաշե

ու ինչ կըսե: Թաքավորը կտեսնի, օր չեն կրնա էդոր պատասխանը տա, կըսե.—Յավաշ, ես ելնիմ քաղաքի մեջը, բալքի ես գտնիմ էման մարդըմ, օր կրանա գա, էսոր պատասխանը տա:

Ման գալով կէրթա, մե տունըմ կգտնի, օր տան երդիկը բնաղուն է փռած: Բնաղունի կողքի հետ մե հատ սրըղ է տնկած, սրըղի գլխուն շոր էր կապած: Սըրըղն էլ կէրթար ու գուքար, օր ճնճղները բնաղունը չուտեն: Թաքավորն օր էտ բանը կտեսնի, կըսե. «Էս տունը մե բանըմ կէղնի»: Նես կմտնի, օր՝ ջուլակը կտավ կգործե: Էն կողմն էլ օրոցքըմ կա: Էս մարդն օր դըբեն կզարկե, հա՛մ կտավը կգործե, հա՛մ օրոցքը կօրորվի, հա՛մ բնաղունի տոպրակը ժաժ գուկա:

Թաքավորը բարև տվեց, ըսավ.—Բարև քեզի,—ըսավ,—վարպետաց վարպետ:

Ջուլակը ետ կդառնա ու կըսե.—Բարև քեզի, թաքավորաց թաքավոր:

Կըսե.—Ինչ կէնես, ինչդ ես, վարպետ:

Վարպետը կպատասխանե, կըսե.—Ես աշխատա, հալը տարավ:—կըսե.—Յառաջ հեռու կտեսնեի, հըմի մոտիկ կտեսնիմ, չեմ կրնա: Հըմի էլ,—կըսե,—էրկուսըս յիրեք եմ էրե:

Թաքավորը կըսե.—Օր էդպես է, մե ղազըմ կա, օր ղրկեմ քովըդ, կրա՛ս պռկե:

Ըսավ.—Էդոր ուստեն եմ:

Թաքավորը մնաս բարով էրավ ու դուս էկավ: Ելավ գնաց պալատ, վազիրին ըսավ.—Վազիր, այսինչ տեղը մե ջուլակըմ կա: Գնա էնոր մոտը, էնիկ դարվիշի պատասխանը կուտա:

Վազիրն ելավ գնաց, ջուլակին գտավ, ըսավ.—Վարպետ, մե դարվիշըմ էկե, մեր հողի մեջ ճիզ է քաշե, մեջը նստել է ու ձեն չի հանե: Կրնա՛ս էդոր պատասխանը տա:

Կըսե.—Կրնամ, եթե մե օսկեցե սինի՛մ էղնի, օսկեցե ղազը մյեջը: Էդ օր էղնի, ես պատասխանը կուտամ:

Գէլնի վազիրը, կէրթա էդ օսկեցե սինին՝ օսկեցե ղազը մյեջը շինել կուտա ու բերե դնե կը ջուլակի յառաջը:

Ջուլակը կըսե, թե,—Դե, ել էրթանք:

Գէլնին, օր էրթան: Ջուլակը հետը կվերցընե մե ջուխտըմ վեգ, մե գլոխըմ սխտոր, դնե գը ջեբը, մեկե մե հավըմ կզարկե ղոլթուղն ու գէլնին կէրթան: Կէրթան, օրա կհասնին էնտեղ, էս մարդը վեգանը կհանե ու ճզի մեջը կսորե: Դարվեշն է մե սոխըմ կհանե ու դնե գը ճզի մյեջը: Վարպետը սխտորը ք՚անե դնե գը սոխի կողքի հետ: Դարվեշը ջեբեն մե բուռըմ կորեկ կը հանե ու փռե գը ճզի մեջ: Ջուլակը տեղոստեղ հավը բաց կթողնի: Հավը էդ կորեկը մաա՛քուր կջնդե: Դարվեշը գէլնի, գլոխը կառնի ու քաշվի կէրթա: Էդիկ օր կէրթա, թաքավորը ջուլակին կհարցնե.—Էդի ի՞նչ կնշանակեր:

Ջուլակը պատասխանե գը.—Էդ մարդուն յիրանց երկրի թաքավորն էր ղրկե, թե՝ ձեր երկիրը մենք բդի տիրենք, բտի հարկատու էղնիք: Ես էլ,—կըսե,—էկա ու վեգանը սորի, թե՝ դուք հըլը էրեխա եք, գնացեք վեգ խաղացեք: Դարվեշը սոխ դրեց ճզի մեջ, թե՝ մենք էս սոխի պես կծու ենք: Ես էլ հանի սխտորը, թե՝ մենք ավելի կծու ենք: Էնիկ հանեց կորեկը փռեց, թե՝ մենք զորք շատ ունինք, գուքանք՝ ձեզի կջարդենք: Ես էլ հավը բաց թողի, թե՝ մենք ձեզի էսման կջնջենք: Դարվեշն էլ ելավ, գլոխն առավ ու կորավ:

Թաքավորը հարցրավ.—Ինչ գուզես էդ բացատրությանդ համար:

Ջուլակն ըսավ.—Ոչինչ չեմ յուզե, ջուլակներին էլ հաշվի առ, օր մարդ են:

61(61). ՋՈՒԼՀԱԿԻ ՀՆԱՐԱԳԻՏՈՒՏԵՆԸ

Թակավորն էլավ իրան երգիրը ման էկավ: Ման էկավ պռծավ, եդ դառավ իրան քաղաքը: Ըսավ.—Հլա տեսնիմ իմ քաղաքիս դրուտենը, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Մտավ իրան քաղաքը: Ման էկավ մեջ, ման էկավ դուս: Մե տան մոտով անցնմ էր, տեսավ՝ էդ տան երդիկ ցորեն է փռած: Քովը մառտ չկա, հմը մառտու պես մի բան հա ժաժ է գալմ, ցորնին մուղաթ է կենմ, էլ հավ ու թռճուն մոտիկ չեն գալմ ցորնին: Թակավորն ըսավ. «Հլը բտի մտնիմ էս տուն, տեսնիմ՝ էս ի՞նչ մառթ է, օր էսման հնարկ է ստեղծե»:

Նես մտավ, տեսավ, օր ջուլիակը նստած է ֆորի մեջը, կտավ է գոռծմ: Էրեխի ճոճն էլ էն կոխկն է ինքն իրան օրրվում: Տեսավ թակավորը զարմածավ: Ըսավ. «Այ քեզի հնարագիտուտեն: Տեսեք, թե ի՞նչ է էրե ջուլիակը: Էն տեսակ բան է սարկե, օր հա՛մ ինքն է իրա գոռծն էնմ, հա՛մ էռտիկն ցորենն է մաղատ կենմ, հա՛մ էրե-

խին է օրրմ: Մի մառտ է, իրեք մառտու գործ է էնմ»:—Մտածեց թակավորը, իրան մտկի մեջ ըսավ. «Տասը մառտու գործ էլ օր էնե, ջուլակները մառտ չեն»,—ըսավ թակավորն ու թողեց գնաց:

Շարունակմ էր իրան աշխատանքը ջուլակն ու իրան հմար քթի տակը դնդնում էր ու խաղ էր ըսմ.

Ջուլիակների սիրտը հոկսով է լցվմ,
Չեն իմանմ կյանքը ինչպես է անցնմ,
Որկան էլ աշխատին, հալի չեն հասնմ,
Չարչարանկից սավայ, էլ բան չեն տեսնմ:

Ջուլիակները մորից բտի չծնվեին,
Աշխարկի դավտարում բտի չգրվեին,
Ուրախ օրից, արևից չզրկվեին,
Ջայելիկյան դառտ ու ցավով չլծվեին:

Մառտիկ չեն հասկանմ խեղճ ջուլիակներին,
Ջուլիակներն են՝ դառած փեշակի գերին,
Ծաղրանկ, ծիծաղանկ են դառծե շատերին,
Մեկին չէ, էրկուսին, բյուր հազարին:

Եթե մառտ են, մառտու փեշակ սովրեին,
Մառտու սրա խառվեին,
հետերն հարմարվեին,
Մեղավորի նման բանդը չդրվեին,
Մառտկանց իրավունկից չզրկվեին:

Սիրտս մաշվավ՝ էս հորի մեջ նստելով,
Բարակ, նազուկ էս կտավը գոռծելով,
Հազար ու մեկ ցավ, վատ խոսկեր լսելով,
Ծերածել եմ խոսկերին դիմանալով:

Ջուլակը փեշակին դառած սիրահար՝
Աշխարկը արև է, իսկ ինկը՝ խավար.
Ցերեկն էլ գիշեր է ջուլիակի համար.
Տարին անցնի, ինկը տարուց բեխաբար:

Սիրտս քար է դառծե, էլ չեմ դիմանա,
Պերվ դոխտուր բերեք, ցավս իմանա,
Էս աշխարքը հեչ մառտու էլ չի մնա,
Ու աշխարքից մառտ բան չի իմանա:

Ջուլիակը հա երգմ է: Յա՛ էլի էն երգն էր երգմ, յա՛ փոխմ էր՝ ուրիշ էր ըսմ: Օրն անցնմ էր:

Մե օր՝մ էլ թակավորին խաբար բերին, ըսին.—Թակավորն ապրած կենա, մե անծանոթ, օտար մառտ՝մ է եկե նստե մեր քաղկի քովը: Մե ճիզ՝մ է քաշե, քանի՝մ հատ ճան է դրե ճժի մեճն ու նստել է կոխկը: Ինչ լիզվով խոսմ ենք, ջուղաբ չի տալմ:

Թակավորը կանճեց իրան խորուրդատույներին, այլի-բիլուրներին[77], նազիր-վազիրներին, հառծրավ, ըսավ.—Ըսեք տեսնիմ, ո՞րդ բտի գիդենակ՝ էդ մառտու միտկը ի՞նչ է: Ուզածն ի՞նչ է:

Քուլի մե բերան ըսին.—Չիդեմք, չենք էլ կռնա գիտենա: Մառտն օր, ինկն օր չի խոսմ, մենկ ինչ գիտենանկ մառտու միտկն ու ուզածն ինչ է:

Ըսին մառտիկը ու սուս, փուս նստան տեղերը:

Թակավորն ըսավ.—Դուք գիտեք, օր նստելով բան դուս չի գա: Ելեք, գնացեք բան՝մ ըսեք, հասկծրեք: Դուք էլ բան՝մ հասկծեք, արեք, տեսնինք, թե ի՞նչ բտի էնենք, ի՞նչ է հարկավոր:

Թակավորն օր էդ խոսկը ըսավ, ելան մառտիկ գնացին էդ օտարականի քովը, բարև տվին, ձեն չհանեց: Բան հարցրին, ձեն չհանեց: Ինչ լիզվով խոսածին, ջուղաբ չտվավ: Մառտիկը թողեծին դառան էկան: Թակավորին ջուղաբ բերին, թե.—Թակավորն ապրած կենա, ըշտա հալ ու հեքյաթ, էսման, էսման... ինչ լիզվով էլ խոսածինք, ջուղաբ չտվավ: Բան չհասկծանք: Էդ մառտը կախարդ մառտ կեղնի:

Թակավորն ըսավ.—Ինչ էլ օր էղնի, բտի իմանանկ:

—Չէ՛,—ըսին,—չիմացանկ, շատ զոռ է իմանալ ու հասկանալը: Չի խոսմ:

Թակավորը շատ մտածեց ու ինկը իրան հառծրավ. «Ո՞վ գգիտենա, ով չի գիտենա»: Բիրդան միտքը ընկավ հնարագետ ջուլիակը: Ըսավ. «Կա, չկա էս ջուլիակը կռնա էդ մառտու միտկը հասկնա»: Մտածեց թակավորն ու մառտ ղրկեց ջուլիակին կանչեց: Եկավ ջուլիակը: Թակավորին գլոխ իջուց, բարև կապեց, կայնավ: Թակավորն իզին տվավ, ջուլիակը նստավ:

Թակավորն ըսավ.—Ջուլիա՛կ, ըշտա, մե մառտ է էկե, ճիժ է քաշե նստել է կողքը: Քանի՝մ հատ էլ ճան է քցե ճժի մեճն: Բտի գիտենաս էդ մառտու միտքը, ուզածը:

Թակավորն օր ջուլիակին կանճեց ու էդման ըսավ, քովի մառտիկը ծիծղածին: Ըսին.—Մենկ չկռծանք հասկնայինք, հորի միջի ջուլիակը բտի հասկնա՞:

---

[77] Այլի-բիլուրներ (ահլի-բիլուրներ) – այսինքն՝ թակավորը կանչեց ինչպես հասակավոր, կենսափորձ ունեցողներին (ահլի), այնպես էլ երիտասարդ կարճամիտներին (բիլուր) (ծանոթ. կազմողների):

Ջուլիակը ընդոնց ծիծաղը բանի տեղ չդրավ: Էլավ առավ մե փեդ'մ ու մե հավ'մ, գնաց քաղքից դուս՝ օտար մառտու քովը: Գնաց ինկն էլ անձեն նստավ: Տեսավ, օր մառտը ձեն չի հանմ, փեդով զարգմ, մե զարգելով ճաները թռծնմ կործնմ է: Օտարականը հանմ է ջեպից բուռ'մ կորեկ է ցանմ ճժի մեջը: Ջուլիակը հավը թողմ է էդ կորեկը իստակ ուտմ է, օտարականը դիա մենձ ճիժ է քաշմ: Ջուլիակը փեդը վերցնմ է, ճիժը ջնջմ է: Օտարականը օր տեսնմ է, էլնմ է սուսուփուս էրտմ է: Ջուլիակը վերցնմ է հավն ու փեդը, գալմ է թակավորի քովը:

Թակավորն ըսմ է.—Հա՛, ջուլիակ, ի՞նչ էրեծիր:

Ջուլիակը ըսմ է.—Ջուղաբ տվեցի գնաց:

—Ինչպե՞ս ջուղաբ տվեցիր:

Տեսնող մառտիկը ըսին՝ ըշտա ըսման, ըսման…

Թակավորն ըսավ.—Ըսա՛, ջուլիակ, ի՞նչ էր նշանակում ճիժն ու ճաները, կամ կորեկը:

Ջուլիակն ըսավ.—Ճիժը նշանակում է, օր իրանց ղոշունը գփատտե մեր երկրի բոլորը, ճաներն էլ իբր մենկ մանուկ ենք՝ ճան խաղացող: Կորեկն էլ, իբր իրանց ղոշունը կորեկի հատից շատ է: Ես ընդուր ջուղաբը տվի, օր մեր մե փեդը ձեր ղոշունին գջնջե: Մեր մե հավն էլ ձեր ղոշունին կուլ կուդա: Մառտը ջուղաբ առավ, էլավ գնաց:

Ջուլիակն օր էդման ըսավ, թակավորը շատ զարմածավ ու ջուլիակին շատ հավնավ ու ջուլիակին ըսավ.—Ջուլիակ, արի էղի իմ պալատականս:

—Չէ՛,—ըսավ ջուլիակը,—ես ջուլակ ծնվել եմ, ջուլիակ էլ գմեռնիմ: Հմը գիտեցեք, օր ջուլիակներն էլ մառտ են, ծաղրածուներ չեն,—ըսավ ջուլիակը, մնաս բարով ըսավ ու գնաց:

Գնաց մտավ իրա ֆորի մեջն ու սկսեց իրան կտավն գործել ու ասուն փառք տալ, օր թակավորն էլ ընձի հավջա էղավ:

Թակավորի թուրը ղնը չէր մտնմ, ջուլիակներին մառտատեղ չէր դնմ: Հիմի թող գիդենա, թե ով ինչ մառտ է:

62(62). ԹՈՒՐՔՄԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Թակավորի մեգ ուներ մե տղե մի, դբրոց խրգեր: Աշագերդնյեր յըմն օր ծեձեն, ջարտեն էդուր:

Թակվուորն ուսուծիճներուն թե.—Էս ինճպե՞ս ուսուծիճ իկ՝ էրեխին յըմնօր ծեձին-ջարտին:

Ուսուծիճնյեր թե.—Դըբրոծի մեճ մյենգ գ'եդևինկ, վուչ մի բան չկա: Գ'ելնեն դուրս, էրեխա ին, կըռվին, խո մյենկ չը՞նկ կըռնա դուրս լե արկիլի:

Թակավուոր մդաձյեծ, կանճյեծ վազիրին, ըսյեծ,—Կէրտաս յէրգըրե յէրգիր, իմ տղին հարմար յընգյեր մի ճարիս:

Վազիր լե հեձավ ձին, գնած ման էգավ: Շադ տյեղ փընդռյեծ չը կըրծավ գդներ: Մե օր պադահավ յախպրի քով մե պառվու մի, հորտըրած էր, հուորտ կարձեր՝ մե փուռքր տղա լե հյեդ: Տեսավ վազիրն, օր կենտանի թակավորի տղեն:

Պառվու հյեդ ծանոտածավ, թե.—Էլ տղա ունի՞ս, պառա՛վ:

—Չէ,—ըսավ,—իդը մեգ տղեն է:

Ըսավ.—Նա՛ յուսման կըդաս, նա՛ բա՞ն:

Թե.—Իմա՞լ յուսման տամ, գյեղի հորտյեր պայինկ, քանի'մ փուդ հած կառնիմ, էրեխիս պայիմ, էդ է ընձի օկնող:

—Տո՛,—ըսավ,—արի տղեդ տուր ընձի, յիես քըզի գումար փուող կիդամ, գնա՛ աբրի: Յիես էրեխին տանիմ յուսման կիդամ, կէնիմ մարտ, հա՛մ քզի պայե, հա՛մ ընձի՝ ժամանագին:

—Տո, չէղնի,—էսպես-էնբես:

Ըսյեծ.—Յիես քզի էնքան օսկի տամ, օր լի ու բոլ աբրիս: Յիես թակավորի վազիրն իմ, էրեխա չունիմ, իդը էրեխեն իմ յաճկ բռնյեր է:

Հանյեծ բռով օսկի տվյեծ, պառավն համաձայնավ: Առավ էգավ: Բերյեծ տղին ուր տունն յիճուծ, խրգյեծ բաղնիկ, լողգըցուծ մակուր: Բերեծ ինճ հակուստ օր թակավորի տղեն գ'ակներ՝ տվյեծ զակաս, բերին տղին հակուծին: Բռնյեծ ձեռնեն, առավ գնած թակավորին:

Թակավոր թե.—Բերեծի՞ր տղա:

Թե.—Բերյեր իմ:

—Յու՞ր է:

Ըսավ,—Հանդ է:

Ըսավ.—Էդ իմ Այմադն է:

Թե.—Չէ՛, իմ բերուգ տղեն է:

—Իմ վրեն խընդամ։

—Թակավորն աբրած մնա, կանճե գա քու Այմադին,—ըսավ։

Կանճեծին Այմադին՝ էգավ։ Թակավոր տեսավ, օր մեգ-մեգիծ չընչ ջոգնվի, ինճ օր մեգ խնձուոր կիսին։ Էղան Այմադն ու Թուրքմանն ախպեր։ Յէլան գնածին դըբրուոց։ Դըբրոծեն յէլան՝ աշագյերդնյերն էլի սկսին Այմադին խեղտյել։ Տո սրանկ ուրընծ խեղտելուծ են խաբար։ Այ մարտ, գազան Թուրկմանս ի, ինճկան էրեխա ու շայկա կար, ըսկըսյեծ ծըվըռդյել։ Լալով-օղպալով աշագյերդնյերը գածին ուրանծ տնյեր։ Օր մեգ էր՝ աշագերդներու բողոկ տասնըմեգ էր։ Ըմալ էրյեծ, օր հեճ մեգ չըր յիշխընե թակավորի տղին մոդիգ գե։

Էղավ Թուրկմանս ի տաս-տասնըյոտ տարեգան։ Մե օր՝մ էլ աշագերդներուն օր հեդմալ ծեծյեր-ջարտյեր էր, աշագերդներու մերյեր էգան տղի մոդ, ըսին.—Տո բի՛ջ, խո դու թակավորի տղա չի՛ս, օր էգյեր իս էրեխուոծ ծեձիս ու ջարտիս։ Յիեսիմ դու վի՛ր բիջն իս, յո՛ւրդիծ քզի բռնին բերին։

Էգավ Թուրկման թակավորին, թե.—Ընձի բիջ կըսին, յիես էլ իրավունկ չունիմ էստյեղ աբրելու, յիես կէրտամ։

Ինճ հնարք էրին՝ չը մնած։ «Կէրտամ, օր կէրտամ»։ Յէլավ գնաց։ Օր յէլավ գնած, թակավուորն ըսավ.—Գոնե ճամպու՝մ խարջըլըղ լե չը տվինկ, մյեր տղի վրա էրեխտիկ ուներ։

Թակավորի կնիգ բերյեծ բռով օսկի տվավ, ըսավ.—Տղիս պայպանյեր է, գոնե էրտա խյեղջ չաբրի։

Մեգ էլ Այմադն էգավ, թե.—Թուրկմանն յո՛ւր է։

Թե.—Գնած։

Ըսյեծ.—Օր էն գածյեր է, յիես լե կէրտամ։

Մինագ մնալուց վախենալով՝ յէլավ յընգավ ճամպա ու գնած։ Էդոր էլ բավագան օսկի տվին։ Գնած, ավուր մեգ հասավ Թուրկմանին։ Էրգուս միածան գնածին, շադ ու քիճ, աստված գիդե, հասան մե քաղակ մի։ Մե օր, էրգու օր, քաղկի մեճ հանրակածարան մածին։

Թուրկման թե.—Այ մա՛րտ, հանրակածարանով չ՝էղնի, մըզի մե շենկ մի վարծինկ, էրտանկ աբրինկ։

Տուն մի քիրայեծին, նստան։ Թուրկման թե.—Բի խանուտ մի բանանկ, ըսկըսինկ առուտուր էնյել, թե չէ՝ իդը օսկին պարբի։

Խանուտ բածին, սկըսին առուտուր էնյել։ Թուրկման կէրտեր աբրանկ բերեր, Այմադ լե կայներ դախըլն ու ծախեր։ Աբրանք բերելու ժամանագ, մե օր մի, Թուրկման մե գեղեցիկ ախճիգ մի տեսավ, չուտիս-չխմիս՝ մայ-ջամալին սեյր էնիս։

Էգավ Այմադին ըսավ.—Մեգն ու մեգս ի բդի կարկըվինկ, օր մըզի հած ու ջուր էնե։ Յիես քըզի համար մե ախճիգ մի՝մ գդի, օր չըտեսնված բան է, բդի բերիմ յուզիմ քզի։

Այմադին խրգյեծ, ըսյեծ.—Գնա ֆիլան քուճեն, ֆիլան պադեզդի մեճ ախճիգ մի կա, տյե՛ս, էդ ախճիգ բդի քզի յուզիմ։

Գնած Այմադ տեսավ, ա՛յ մարտ, էլ ինճ ըսիմ. «Օխտը տեղով շալվարի գոդին կդրավ»[78]։ Դու մի ըսի, էդ ախճիգ նշանլու է։

Ախճիգն օր տղին տեսավ, էն լե սիրդ բռնյեծ, ըսավ.—Յիես էդ տղին առնենկ՝ աստված թըղ հոկիս առներ։

Տղին հասկըծուց ախճիգն, գյուգյումի ջըրով իրյեք իզ քաշյեծ հայատի մեճն։ Է՛, Այմադն ի՞նճ հասկընա, թե էդ ինճ է։ Էգավ Թուրկմանին պադմյեծ։

Թուրկման թե.—Ախճիգ նշանլու է, էդ իզ լե օր կա, իրյեկ օր է, իրյեկ օր հեդո կը տանին։

Ըսավ.—Յէկուծ դու կը մնաս հոս, յիես կէրտամ ախճըգա քով։

Այմադ մնած խանուտ, Թուրկման գնած ախճըգու քով։ Ախճիգն էրգու իզ քաշյեծ։

Թուրկման թե.—Կարելի չէ՞ յիրար հյեդ խոսանկ։

Ախճիկ պադեզդի մեճն է, ինկ՝ դուս։ Բերեծ Թուրկման թուղտ մի լազատին գրյեծ, թալյեծ ախճըգան։

Ըսավ.—Յիես մենագ մեգ տղե՝մ իմ, կըռվով չյեմ կըռնա քեզի տանի։ Էն օրն օր դու կէրտաս, արխեյին յէլի կառետ, նըստի կեսրերիդ կուոխկ։ Կեսրերիդ կըսիս. «Թուլ տուր էրտամ իմ պաբագան գերեզմընյերն, իմ աղոթքն էնիմ իմ մնաս բարովն ըսիմ, էրտամ»։ Էն վախտ քու կեսրեր թուլ կիդա։

Յէլավ էգավ Այմադին ըսավ.—Էգուծ գ՝ակնիս քու շորյեր, յապունջին կառնիս վրեդ ի, կէրտաս թուրկի գերեզմընյեր, քումբետի՝մ մեճ

[78] Բանասացը սա թուրքերեն է ասում. «Յեդի յերդան ուչխուրի քյասըլդի» (ծանոթ. բանահավաքի)։

պառգիս: Ախճիգ գիկա, դու գ՚անիս յապունջեդ, շորյերդ ի գ՚ակուս ախճըգան ու կըսիս. «Գնա այսինճ համար խանուտ»:

Այմադ թե.—Յիես չըմ կըռնա:

Թուրկման թե.—Դու չըս կըռնա՞, կեցի խանուտ, յիես կէրտամ:

Այմադ մնած խանուտ, Թուրքմանն յէլավ լազատին հակավ ուրան շորյեր, առավ յապունջին վրեն, գնած մըդավ թակավորի քումբետով գերեզմընյեր, յապունջին քաշյեծ վրեն ու պարգավ: Մեգ էլ հարսնիկն էգավ՝ դավուլ-զուռնով, աստված կանճելով, մեռել քրվելով՝ էգան հասան գոռներու դեմ: Ախճիգն ըսավ կեսրարին թե.—Թուլ տուր էրտամ իմ ծնողներուն, պաբերուն հրաժեշտ տամ:

Կեսրար թե.—Գնա՛, օղո՛ւլ, գնա:

Յիճավ գնած լազատին մդավ գերեզմանատուն:

Թուրկման թե.—Հանե՛ շորյերդ ի:

Ախճիգն հանյեծ ուրան շորյեր, ինք լե՝ ուրան: Ախճըգա շորյեր հակավ Թուրկման, Թուրկմանի շորյեր հակավ ախճիգ:

—Ահա՛ն,—ըսավ,—յիես հարս կէրտամ, դու գելնիս կէրտաս ֆիլան քուճեն, ֆիլան տուն, ֆիլան համար՝ մինճի յիես գամ:

Էնիգ նստավ կառետ, գնած, յինկ լե գնած էդ տուն: Տեսավ, շիվարավ. Թուրկման նստուգ հոդի: Ըսավ,—Այ մա՛րտ, Թուրկման նստավ կառետ գնած, իդը յուրվի՞ էգավ հուդա:

Այմադն չըմկի շադ նման էր Թուրկմանին:

Խաբար տանկ Թուրկմանիծ: Թուրկմանին տարան Քյարըմ փաշի տուն: Գլխուն յափաղ կաբուգ թուրկընագ, յըմեն հավնան ըսին.—Հըմը հարսիկ յուզի, հա՛:

Էկուծ բըդի քեբին կըդրին, Թուրկմանն ըսյեծ.—Իրյեկ օր ընձի սրոկ տըվեկ, իրյեկ օր հեդո քեբին կըդրեկ՝ էրտանկ յիես ու տղեն հարամ-օթաղին:

Քյարամ փաշեն ըսավ.—Իրավունկ ունիս:

Քյարամ փաշեն իրյեկ ախճիգ ուներ: Մյեձ ախճիգն ըսավ.—Յըսօր թաժա հարսն իմ քով բդի քնի:

Օրթանջեն թե,—Չէ, իմ քով:

Ըսավ.—Չէ, օրենքով իմ քով բդի քնի, մյեձ յիես իմ:

Յիրգուն, օր խալֆատ էղավ, մյեձ ախճիգն ու Թուրկմանս ի առանձին սենյագ քնան:

Քնան, այ մա՛րտ, ի՞նճ քնյել... Կրագն ու բամբագն օր դնիս իրարու քով՝ իմա՛լ կեղնի: Վյերճ յէլան ախճիգ դեյի փատվան յիրար: Մեգ լե ախճիգն հասկըծավ, օր իդը տղա է:

Տղեն յէլավ, թե.—Պրձի:

Ախճիգ թե.—Սաբախտնե յիես թադարուքի հյեդն ենկ:

Յէլավ ախճըգան շինյեծ: Հարի լուս ինճ օր կատարվավ՝ կատարվավ. «Ալ շաֆտալի, վեր շաֆտալի»: Լուսծավ: Հիմը օրտանջու ախճըգա սըրեն է:

Մյնեճ ախչիգն ըսյեծ.—Ըսի՞մ... յիես էղյեր իմ խայդառակ, յորի ըսիմ օր:

Օրտանջա ախճիգ քնավ, էդուոր լե շինյեծ:

Ըսավ,—Հեչ լե չըմ ըսի, էդ յորի էրգու քուրս ի շինյեր է՝ էնդուոր չը շինե: Թըղ էնդուոր լե շինե, ջայնըմի տագ:

Հյերտն հասավ պզդի ախչըգան, պզդի ախճիգն էնքան սիրուն էր, օր չուդիս, չը խմիս, էդոր մայ-ջամալին նայիս:

—Ախճի,—ըսավ,—տեսնիմ, օր քու ախպեր տղա չէ: Քյաշկյա դու տղա էղներ՝ առնենկ յիրար:

Ըբը.—Յուրվի՞ էնինկ:

Ըսավ.—Արի չոկինկ աղոթկ էնինկ՝ մեգս ու մեգս տղա էղնինկ:

Յէլան չոկան, սկըսին աստված կանճյել՝ էն աղաճանկ կէնին աստըծուն, օր բըդի մեգն ու մեգ տղա դառնան: Մեգ լե Թուրկմանն ըսյեց.—Հըլը տյես, բան մի բայլու չէնե՞ քըզի:

Ախճիգ թե.—Հեչ բան բայլու չէնե, հըլը դու իշե:

Իշյեծ Թուրկման, թե.—Գինաս թե գողտյեր է, աղոտկին իշե, աղոտկին:

Ըսկսին էլի աղոտկ էնյել: Մեգ լե ախճիգ տարավ ուրին իշյեծ՝ բան բայլու չէնե:

Ըսյեծ.—Հըլը կեցի քուգդ իշիմ:

Իշյեծ, օր ի՞նճ իշե՝ խոջը գըրդընգաքաշ մի:

Ըսավ.—Տո՛, դու էղյեր իս տղա, մեռնիմ էն սուրպ զորքին, իմալ լե հասա՛վ:

Ըբը.—Իմա՛լ բդի էնինկ:

Թուրկմանն ըբը.—Յառավոդ հորդ ի ըսե, թըղ իրավունկ տա էրտանկ թակավորի խաս բախճեն պըդըդինկ: Հեճնինկ ձիան ու էրտանկ. յիես քըզի էմալ տանիմ, օր:

Գածին խաս բախճեն: Ախճիգ հրամայեծ.—Ձի՛:

Էրգու հադ էնբես նժուգ ձի բերին, օր էլ դու պրձար: Թակավորն ուրան դատավոր-բան քոմի բերյեր է, կերուխում կէնին՝ զուռնա-դըհոլով: Ձին բերին, լազաթին Թուրկմանն ու Քյարըմ փաշի ախճիգն հեձան ձիանն ու յալլա՝ գածին: Գիկան, օր քեբին էնին: Կիշին՝ հարս չկա: Ձիապան կըսե, օր ուրնե էրգու ձի յուզին, ախճըգա հյեդ յէլան գածին ֆիլան տյեղ: Գիկան կիշին, օր վուռ՛չ մարտ կա, վուռ՛չ՝ մադատ: Հա՛յ հավար գընգնի:

Ախճըգնյեր գիկան կըսին, օր. — Էդ հարս տղա էր, գիշյեր մըզի լե շինյեծ: Հա՛յ հավա՛ր գցեք, բռնեկ էդ շանորդուն:

Յէլան էստին զարգըվան, էնտին զարգըվան, չը կրցան բռնեն:

Գյոզունա գյորուն Թուրկմանս ի, գնած հասավ Այմադի քով: Էրգուս լե էնբես կնիգ առան, օր էլ դու պրձար: Բայծ հարսնիկ չըն էնի: Բերին ունեծած ուրանծ ծախին-ծըխին, վերծուցին կնգդիկ ուրանծ, էգան թակավորի քով, թե.—Ահան, քու Այմադ, ահան քու հարս, յիես կէրտամ:

Թակավուոր թե.—Չէ, էրտալ չըկա:

Վազիրին թե.—Կէրտաս, էս տղի մեր բերիս, ուր գուզե էղնի:

Գնած վազիրս ի պառվուն առավ էգավ: Պառվուն լազատին տարան բաղնիկ՝ լողգըծուցին, թակուհու խըլլըղին՝ խըլլըղ հակուծին:

Թակավուորն ըսավ.—Յըսօր էրգու տղին լե հարգ ու հարսնիկ կէնինկ:

Յոտը զօր, յոտը գիշյեր հարսնիկ էրին, դաուլ-զուռնա զարգին, կերան, խմեծին: Էդ էրգու տղեն հասան ուրանց մուրազին, լսողներ, դուկ լե հասնիկ ձյեր մուրազին:

63(63). ԷՁ ԾԱԽՈՂԻ ՀԵԿԱՏԸ*

Մարտու մեգն էձ՚մ ունի: Ընդանիկ խեղջուտյան մեճ կեղնի, կառնե էձ տանե ծախելու: Կէրտա մդնի մե գյեղ մի, տեսնի, օր կնիգ մի յէրտիգ կայնած՝ բոլո՛ր կիշե:

Կըսե.—Քուր ջան, կարելի չէ՞ խոնախ էնիս յըսօր ընձի, քըզնե վուռ՛չ հած գուզիմ, վուռ՛չ՝ ջուր:

—Տո,—կըսե,—մարտս հուդա չէ, շիվարի մանձյեր իմ, մարտուս ճանպեն կիշիմ, յիես քըզ իմա՞լ խոնախ առնիմ:

Կնիգ դառնա էլի բոլո՛ր կիշե, հարիֆ բռնե էձն ու կնգած թակուն գ՚մդնի տուն: Մդնի, տան մեճ դուռ՚մ էլ բածվի: Բանա, օր յախո՛ռն է, կէրտա մտնի գո՛ռմ: Յիրգըվորե խելի գընձնի, մեգ լե գեղի տերդեր գիկա: Դու մի ըսի, կաբ ունի կնգա հյեդ: Բերե խոնճա-բոխչեն դնե, նստին, օր ուտին, դուռ զարգին:

Տերդըրո՛ճ կըսե.—Յէլի մդի գուռմ, չէղնի՞ մարտս է գալող:

Տերդեր գելնի մդնի գուռմ: Կնիգ գելնի դուռ բանա՝ գլավխին է, էդուոր հյեդ լե կաբ ունի:

—Տո՛, յամա՛ն,—կըսե, կառնե նյերս:

Գիկա գլավխին, է՞յ, կանյակով, բանով: Խոնճեն բանա, օր էդե կերուխում բդի էնին՝ դուռ զարգին:

Գլավխին կըսե.—Էդ ո՞վ է գալող:

Կըսե.—Մարտս հեռու է գածի, չը՞մ գինա էդ ով կեղնի:

Գլավխուն լե գ՚ելնի քշե յախոռ: Գելնի դուռ բանա, օր ի՞նչ բան ա՝ քյոխվեն է: Քյոխվին լե կառնե նյերս: Քյոխվի խոնճա-բոխճեն լե կըսկըսին բանալ: Մեգ լե մարտ գիկա դուռ զարգե:

Դուռ զարգե, քյոխվեն կըսե.—Յաման, իդ վուո՞ն է:

Կըսե.—Արի՛, մդի գուռմ, մարտս ի կեղնի, քնծում, գիկամ քըզի յոլա տանիմ:

Գիկան կնիգ ու մարտ նստին ուրընծ թնդրա շրթի հյեդ, կսկսին խոսակցություն էնյել:

Ի՞ձու տեր բռնե ի՞ձու յանգաճ դնե կոդըշի վրա սխմե՝ էձ մըգմըգա:

Տերդեր կըսե.—Էդ ի՞նճ բան է:

Կըսե.—Հեչ, տերդեր, մրսի՛, բան մի չկա՞մ, թալիմ վրեն:

Տերդեր գ՚անե շուռճալ՝ թալե ի՞ձու վրեն: Խելի կենա, բռնե էլի սըխմե՝ էձ մըգմըգա:

Կըսե.—Օրինա՞ճ, էդ ինճու մըգմըգա:

Թե.—Հրյվան մրսի, տերդեր:

Տերդեր գ՚անե արխալուխ լե, շըլվար լե՝ թալե ի՞ձու վրեն, մնա շաբգով ու վարդըգով: Մարտ մեգ լե ի՞ձուն մըգմըգծու:

Գլավխին կըսե.—Զայլա տարար, ի՞նճ է պադայի:

Կըսե.—Մրսի:

Գլավխուն լե չիպլըխծու, թալե շորյերն ի՞ձու վրեն. էն լե մնա շաբգով, վարդըգով: Քյոխվին լե էդ ձևով, ի՞ձուն մըգմըգծուցելով չիպլըխծու, թողե շաբգով-վարդըգով: Էդունկ օր բիրադի

չիպլըխնան, բռնե իձու յանգաջն ու խրժրծու:

Մարտ կըսե.—Իդ ինճ ձեն է, մյենկ էձ չունինկ, իդ ինճ բան է:

Կնիգ թե.—Իսկապես, իդը ինճ ձեն է:

Մարտ թե.—Յէլի դուռ բաձ:

Կնիգ գելնի գոմու դուռն օր բանա, իրյեկ լե տըգլոզ թռնին դուս:

Մարտ ճրակ կբու, կըսե.—Այ մարտ, իդ վուռրն են, իդ ինճ բան են:

Ճրակ կըբուն, կէրտան յախոռն, օր էդ մարտն նստուգ մսուրկն, էձն՝ յառեճն:

Կըսին.—Դու վուռրն իս:

Թե.—Յիես ճամպուորդ իմ, էդա տյեխ չը տվյեց կնիգդ, յիես լե գողդու էգա մդա յախոռն:

Ըբը.—Էդունկ ինճ մարտ են:

Կըսե.—Յիեսիմ, սադանայ են, դև են, ինճ են, մդաձ են յախոռ՝ իձուն գ'չարչըրեն:

Կըսե.—Արի՛ նյերս, արի նյերս, օր խոնախ իս, յորի իս նստի մսուրկ:

Կըսե.—Կնի՛գ, հաց բիր:

Կնիգ բերե ցամակ հաձ՝ դնե յառեճ:

Մարտ կըսե.—Էդ յորի ցամակ հաձ բերիր:

Կնիգ թե.—Տուն բան չկա:

Խոնախ թե.—Բանն չկա... հլը յէլի սնդուկ բաց:

Կնիգ թե.—Սնդուկն ինճ կա, օր բանամ:

Խոնախ՝ մարտուն թե.—Հլը յէլի սնդուկ բաձ:

Մարտ կընգան կըսե.—Հլը բաց սնդուկ:

Կնիգ գ'ելնի բանա, բերե էրգու գատա, մարտու յանգըճեն կըսե,—Իդը էրգու գատեն պայեր ենկ քըզի համար, յորի՞ իդը շան յառեջ տվիր բերյել, մներ սաբախտան դու ուդեր:

Հաձ կուդին, մարտ հեճ բան չ'ասկնա: Յառավոդ լուս բաձվի, մարտ կէրտա ուրան գորձին, խոնախն հլը տունն է: Գ'ելնի էրտըլու, կըսե.—Յիրգուն չըսեձի մարտուդ: Ինճ կիդաս, օր էդ քու յիրգըվա արարմունկ մարտուդ չըսիմ:

Կըսե.—Ո՜ւյ, քու յուոդն իմ ընգի, ինճ օր ունիմ՝ կիդամ:

Կըսե.—Շադ բան չըմ յուզի, քյասիբուտյան մեճ իմ, էրգու փուդ ալուր տուր, հոխե'մ էրգուս լե՝ յիեղ:

Կառնե յիեղն, ալուրն ու էդ շորյերն, գիկա տուն:

Կնիգ կըսե.—Այ մարտ, էդ ինճո՞վ առար:

Թե.—Էձ ծախյեր իմ, առյեր իմ իդուոնկ:

Թե.—Էձն հա՛նդ է, յուրվի իս ծախի:

Թե.—Հա՛մ ծախյեր իմ, հա՛մ բերյեր իմ: Դու աբրընկի իշե, թե ինճ աբրանկ է:

Կերան էդ ալուր լե, յիեղ լե՝ խըլսավ:

Կնիգն ըբը.—Ալուր լե պրձավ, յիեղ լե, իմա՛լ էնինկ:

Ըբը.—Լուսուն տանիմ էձ ծախիմ:

Կնիգ թե.—Այ մարտ, էձ տանիս ծախիս՝ կատ կդրի բերնե մըզնե: Էշ տար ծախե:

Յէլան, լուսն օր բաձվավ, առավ էշն ու գնաձ: Մդավ մե գյեղ մի, բուոլորն իշյեց, տեսավ, օր մե կնիգ մի տանիք կայնուգ՝ ձեռնյեր դրե յաճկերուն՝ կիշե չուորս դյեն:

—Քուր ջա՛ն,—կըսե,—կարելի չէ՞ մի գիշյեր մի խոնախ էղնիմ:

—Թո՛ւ, վարամ թալուգ,—կըսե,—մարտս ի հուդա չէ, շիվարյեր իմ, մարտուս ճանպեն կիշիմ, դու գուզիս խոնախ էղնի՞ս:

Կնիգն էլի ըսկըսյեձ բոլուորն իշյել, մարտ քաշյեձ էշն ու մտավ նյերս: Բագի միճիձ դուռ մի բաձյեց, տեսավ, օր յախոռն է, քաշյեձ էշն յախոռն ու կաբյեձ մե տյեխ'մ, ինք լե նստավ մսուրկ: Յիրգըվորե խելի յընձավ, մեգ լե կնգա սիրողն էգավ: Գաձին սիրողն ու կնիգ տուն: Մե տաս ըրոբե չըր յընձյեր է՝ դուռ զարգին:

Կնիգն յէլավ ձեն տվյեձ.—Վուռրն է:

—Յիես եմ, կնի՛գ, դուռ բաձ:

Սիրողին բերյեձ թատարի յախոռն. պզդի հուոր մի կար, սիրողին յիճուձ հուորն, ըսյեձ.—Մարտս ի քնի՝ գիկամ քըզի գ'անիմ:

Գնաձ դուռ բաձյեց, մարտն էգավ, տեղավորվան ուրանք ուրընձով: Էգավ քնելու ժամանակ, մարտն յելավ քնավ: Կնիգն էգավ, օր սիրողին հորեն հանե: Տեսավ էդ իշու տերն հոդ, ըսյեձ.—Դու հուդը ինճ կենիս:

Ըսավ.—Քո՛ւր ջան, յիես քըզի չըսի՞ խոնախ էղնիմ, վուռչ հաձ գուզիմ, վուռչ՝ ջուր: Էշ բերյեր իմ կաբյեր իմ, լուսնա՝ կէրտամ:

Է՛հ, հիմա էդուր յառեճն հանե՝ մարտ գիմնա, տեսնա: Էլ չը հանե: Լուսնա, մարտ գ'ելնա կէրտա գորձի:

Կնիգ գիկա խոնխին կըսե,—Յո՞ւր իս մանձի, լուսձյեր ի, յէլի՛ գնա՛:

Կըսե.—Քիճ մի ջուր տակձու, բիր իշուս լողգըձում, էշս ի գռուոդ է:

Կըսե.—Խո յըս քըզի պարդագան չի՞մ, օր էշդ ի լողգըձում:

Կըսե.—Բիր էշս ի լողգըծում, թե չէ գելնիմ կենիմ սոսորաթ:

—Յաման,—կըսե,—արարգա մի՛ էնի, հան, կէրտամ ջուր դնիմ:

Ջուր դրյեծ կնիգն, յինք լե յէլավ հյեդն օկնյեծ. կրագ վառին, ջուր տակծավ:

Կնիկն ըսյեծ.—Հա՛ն, տակծավ:

Մարտ ձյեռ զարգյեծ մեճն, ըսավ.—Չէ՛, լավ չը տակծյեր է, էշս ի գռուոդ է, բդի լավ տակ էդնի:

Լավ տակծավ ջուր, կնիգն ու յինկ բերին յախուոռ:

Ըբը.—Այ մա՛րտ, էշ լողգըծուս իդը հորից քիչ մի հեռու, ցորյեն կա մեճ, ջուր չը թապի՝ նամծու:

Ըբը.—Հա՛, քուր ջա՛ն, գ'ասկընամ, յիես լե մարտ իմ:

Կնիգ գնած: Բռնյեծ մարտ պղնձի կանտեն, ջուրն՝ յալլա՛ հուորն : Լցվավ հըրիֆի գլխուն՝ չուոր մեռավ:

Կնիգն էգավ տեսավ, օր ջուր լծվյեր էր հուորն ու հըրիֆ լե մեռյեր է:

Ըսավ.—Իդ ի՞նչ իս էրի:

Ըսավ.—Ի՞նճ էնիմ, էշ զարգյեծ լանգով՝ ջուր թապյեծ հուորն:

Կնիգ տեսնա, օր հըրիֆ մեռյեր է, կըսե.—Արի, իդը ջանդագն հանինկ տանինկ տյեղ մի կորունք:

Ըսավ.—Իմ ի՞նճ գուորձն է, բերյեր իս, մարտ իս ըսպանի, գուզիս, օր ընձի լե մեճ քաշիս: Հիմը միլիծա կանճիմ թափին գիկան, սոսորաթ կիդամ էնյել:

—Տա՛ր,—ըսավ,—իդը հեռեծու, ինճ յուզիս՝ կիդամ:

Ըսավ.—Գլխուդ օսկին տու՝ տանիմ:

Ըբը.—Մարտս օր գա, ի՞նճ ըսիմ...

Մդաձյեծ, ըսավ.—Արի՛, 500 մանետ կա մոտս ի, ա՛ռ տար իդը ջանդակ կորու, թե չէ օսկին օր տամ, մարտս ի գլխու գընգնի:

Կըսե.—Տանի՛մ: Գնա՛ յիրգըվա խնձորնյերն օր բերած ին քըզի, բի քանի՛մ հադ տուր ընձի:

Բերե քանի՛մ հադ խնձուոր կիդա, մեռյել գ'անե հորեն, դնե իշու վրեն, գ'ելնի գեղեն դուս: Մեռյելն օր ջրով խեղտյեր է՝ բերան բած է մանծի: Բերե խնձուոր կիսե, կես դնե բերան, մեգյել կես լե դնե լըպի մեճ՝ բուռ սըխմե, մեգյել ձյեռ լե դանագ դընե, նըստըծու իշու վըրեն: Կէրտա մե հարուստ կալի մի մոդ, տեսնա, օր թեջն հանած է ցորյեն, ուրընկ լե գածած է տուն: Էշ տանե կաբե ցորնի թեջի վրեն ու յինկ լե կէրտա բըլըլի տագ տապի: Տան մյեճ, ադատ է, վռազնա բանվորներու վրա.—Յէլեկ, յէլեկ:

Յինկ գ'ելնի դուս, տեսնի, օր թեջի վրեն էշ մի կայնուգ՝ կուդե, տեր լե վրեն հեճուգ: Բոռա, կըսե.—Քոպագ, խոջը կալի մեճ դու յորի՞ ցորեն կուդըծուս իշուն:

Քաշե էղանն ու մե հադ մի կիդա: Տալուն քիմի՝ մեռյելն իշու վրայեն պադի ցած: Իշու տեր բըլըլի յէդևեն գելնի, վազելով գիկա, կըսե.—Յըս քու հեր ու մեր, դու յորի՞ զարգիր հորս ի ըսպանեծիր:

Հիմը էդ մարտու տղեգնյեր գիկան հոր վրեն նեղենան, թե. «Բուռ մի ցորյենն ի՞նճ է, օր զարգյեր իս, մարտ իս ըսպանի»:

Էդ զարգող լե փոշմընի, կըսե.—Լավ, ինճ էղյեր է՝ էղի, գանգատ մի էնի:

Կըսե.—Դու լե հորս ի չապ մարտ իս, արի զարգիմ քըզի լե ըսպանիմ, օր նուոր քվիտ էղնինկ, բարիշինկ:

Վերճ տեսնին, օր ճար չկա, տղեգնյեր կըսին.—Արի իդը թեջ ցորյեն քըզի տանկ, թակիլան գանգադ մի էնի:

Գ'ելնին ցորյեն գըլնան ուրընծ ջըվըլնյեր, բառնան դիվիստանուն, տանիյն գ'իճուն էդ մարտու տուն: Ու էդ իշով ու իձով էդ մարտն հարի յըսօր կաբրի:

64(64). ԹԱԿԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆԸ*

Թակավորի մեգը հրաման խրգյեծ իրան երգրի մեճ թե.—Երգրիս մեճ արագանն է շադ, թե՞ իկագանն: Ովքեր օր գիցան, ուրանց մե կուբերնի՛մ հուոդ կիդամ, եթե չգիցան՝ գլխընյեր զարգիմ: Բայծ մեձահասագ մարտիկ բդի էղնին, վուչ թե երիդասարտնյեր:

Այ մարտ, էնքան գնածին... Ըսին՝ արագանն է շադ՝ էլի գլխնյեր զարգին, իկագանն է շադ՝ էլի գլխնյեր զարգյեծ: Աշխըրքի յէրեսին շինուգն է շա՞դ, թե՞ քանդուգն... Մե խոսկով՝ ինճ ըսին՝ էդի գլխնյեր զարգյեծ:

Տասերգու տարեգան տղե մի առավ մե ճերմագ իձու մի մորտի, քցյեծ դէվի գլխուն, բռնյեծ յուլարն ու գնած թակավորի դուռ:

Դռնապայներ թե.—Ինճ մարտ իս, այ էրեխա՛:

Թե.—Էգյեր իմ թակավորի հրամանը լուծելու:

—Օղուլ,—ըսավ,—մեծահասագ մարտիկ բդի էղնին, դու փոկրահասագ իս, քզի օրենկ չէ:

Ըսավ.—Գնածեկ թակավորին ըսեկ՝ յիես էգյեր իմ, յա՛ իմ գլուխ զարգե, յա՛ ուրըն հարծին պադասխան տամ:

Գածին ըսին: Թակավուոր բարգածավ, ըսավ.—Ըռադ էրեկ՝ էրտա, յիես երդասարտ մարտու հյեդ հաշիվ չունիմ, ընձի ըսպիտագ մուրուք մարտ է պետք:

Էգան տղին ըսին, ըսավ.—Գնածեկ թակավորին ըսեկ, մյեձ մարտ գուզե, ահան դևեն, ըսպիդագ մուրուք գուզե, ահան ըսպիդագ մուրուկ:

Գնածին թակավորին ըսին, թակավուորն բարգածած յէլավ դուրս:

—Հա՛, երդասարտ,—ըսավ,—դու չըս կըռնա պադասխանի, ցավամ քու երդասարտության, գլուխդ ի զարգիմ:

Ըսավ.—Չէ, թակավուոր, մեծահասագ գուզիս, ահան մեծահասագ, ըսպիդագ մուրուկ գուզիս՝ ահան ըսպիդագ մուրուկ:

Ըսավ.—Արի նյերս, տղա:

Գնած նյերս, ըսավ.—Օղուլ, աշխըրքի էրյես արագանն է՞ շադ, թե՞ իկագանն:

—Թակավուոր,—ըսավ,—էնբես բան գիարցուս, օր, երբեմն արականն շադ կէղնի, երբեմն՝ իկագանն:

—Շինուգն է՞ շադ, թե՞ քանդուգ:

Ըսավ.—Հա՛, ճիշտ է: Եթե գ'հարծուս շինուգն ու քանդուգ, բավական է ըսյել, օր իկագան շադ է: Որովհեդյև ինչ մարտ գընգնի իրան կնգա տրամադրուտյան տագ, էն էլ դառնա կին, կանանց թիվը կը շադընա:

—Շինուգն է՞ շադ, թե՞ քանդուգ:

—Մարտ օր ընգավ կնգա հրամանի տագ, քանդուգ շադ է, ինճ բան շինուգ էղնի՝ քանդին: Որովհեդյև կանանց թիվն օր շադ էղնի, ինճ բան շինուգ էղնի, գը քանդին:

—Բարիքյալլա, օղուլ,—ըսավ:

65(65). ՇԱՌՈՅԻ ՀԵՔԻԱԹԸ

Տղի մեգ գ'նշանին: Բայց տղեն յայլա է: Հին ժամանագ վուռչ տղեն աղճգան տեսյեր է, վուռչ աղճիգ՝ տղին: Կէրտան հարն ու մեր էդ ախճիգ գուզին, նշան դնին գիկան: Տղին խաբար կէնեն, թե.—Արի, քզի նշանյեր ինկ:

Տղեն գիկա, մերը պադրաստություն գը տեսնի, թե.—Էրտաս բդի նշանլըվատյես:

Պադրաստություն տեսնին: Կիրագի գելնի, օր բդի էրտա նշանլըվատյես: Էդ գեղի միճեն Շառո անվով մեգ մի կար, շադ գյավազա շան որտի էր: Գիմանա, օր ուրենծ հարևանի տղեն բդի էրտա նշանլըվատյես, կըսե, «Հիմը էդուր հյեդ կարմըրուգ հավ կա, գատա-հալվա կա,—կըսե,—էրտամ էղնիմ ընգյեր՝ կուդիմ»:

Գելնի կէրտա: Տղի անուն Սակո է: Սակոն շարունագե ճամպեն, կէրտա: Էդի յեդևեն գ'ասնի, կըսե.—Բարև, Սակո՛:

—Հազար բարի,—կըսե,—Շառո:

—Էդ յո՞ւր կէրտաս:

Թե.—Նշանլըվատյես կէրտամ:

—Է՛,—կըսե,—հեճ գածյեր ի՞ս նշանլըվատյես, թե՞ յառաճին յանկամն է:

Կըսե.—Յիես նուոր իմ նշանվի, յառաճին յանկամն է:

Կըսե.—Է՛, դու խամ տղա, յառաճին յանկամ կէրտաս նշանլըվատյես, պակսուտյան մի տեսնան, ախճիգ չըբդի տան. զոնքաջ է, քենի է, գիկան գ'ավաքվին ուդելուց լե բան նգադին, խմելուծ լե: Բայծ քու հոր խատյեր համար գիկամ հյեդտի: Ինճ ձևի օր յիես ժաժ գուկամ, դու լե էդ ձևի բդի ժաժ գաս:

—Շադ լավ,—կըսե,—Շառո ջան, օր էդպես է արի:

Գելնին ճամպա կէրտան: Ուրանց գեղից էլ էդ գյեղ հեռու է:

Շառոն կըսե.—Սակո, հոգնար, բեզրար, էդ հաբիգեն տուր քիչ'մ էլ յիես շալգիմ:

—Առ,—կըսե:

Կառնե Շառոն շալգե, կէրտան: Է, նշանլըվատյես էրտող լե քիչըմ յոդնե ճապուգ կեղնի, թե քիչ մի շուդ հասնի նշանածիս քով: Էնի յառեճ կէրտա, գյոզունա գյոնդուգյուն, Շառոս ի, բանա հաբիգեն: Քելուգ տյեղ ինճ օր մտկեն կընցընի, էդոնք լե լավ պադրաստություն տեսած է, կուդե, լավ կշտանա: Գիկան գ'ասնին գյեղ՝ աներոչ տուն:

—Բարև, հազար բարի: Ծանոտածեկ,—կըսե Շառոն,—իդա ձյեր փեսեն է:

Ծանոտանան: Զոնքաջ, քենի, խամբաջիք գ'ավաքվին գիկան, խոշբեշ, վերջապես: Պադրաստություն տեսնին, է՛, փեսեն էգյեր է, ինճ օր կա, գպադրաստին, բերին դնին սեղնին: Շառոն ճամպեն կո՛ւշտ կերյեր է, ամեն ճաշից մե պադառ մի գ'վերծու, պեխյեր սրպե՝ քաշվի եդ: Էդ Սակոն լե էդոր կիշե, քաշվի եդ, բայծ սոված է:

—Փեսա ջան, հած կի:

Թե.—Շնորհագալ իմ:

Հածը գ'հավաքին: Սենյագ լե չունին էդոնց ընդանիք, տեղրանք քցին թնդրա բոլուոր՝ պառգին: Բերին Շառոյին ու թաժա փեսին մե տյեղ մի քցին, պառգին: Սակոն տեսնի, օր զոնքաջ, տոլմա կար, բերյեծ դրյեծ թնդիր: Գիշյերն, օր յոդ ու ձյեռ կդրավ, վերճապես, անոտի էր: Սաքոն ըսավ. «Զոնքաջս ի քուֆթեն բերյեծ դրեծ թունդիրն, յէլնիմ մտնիմ թունդիր, քուֆտեն ուդիմ»: Մդավ թունդիր, տեսավ, օր քուֆտեն թունդիրն է, սկսյեծ ուտյել: Էդ ժամանագ լուսնյագ զարգյեր էր տան մեճ: Խամբաջու յոռ լե բաճվյեր էր, գիծավ թե Շառոյի բերանն է: Քյուֆտեն վերուծ, դեմ էրյեծ էդուր յոռուն:

—Հա՛ն,—ըսավ, Շառո, կեր:

Էդի բարագ քամի մի թողյեծ:

—Տո կի՛ր,—ըսավ,—պաղ է, պաղ, յիես կերյեր իմ, պաղ է:

Էդի էլի քամի'մ թողյեծ: Թե.—Դու գինաս, յիես կըսիմ, օր պաղ է, թե դու չըս ուդի,—ըսավ,—ահան, յիես կուդիմ:

Էդի կերավ, յելավ պառգավ: Յէլավ պառգավ: Լուսու դեմ է:

Շառոն ըբը.—Սակո, յէլի:

Ըբը.—Ի՞նճ է:

Թե.—Յէլի, բդի ըսին, թե էգյեր է նշանաձի քով, հարի ցերեգվան քնած չէլնի, ամոտ է: Յէլի էրտանկ: Յէլի, յէլի:

Գելնին, զոնքաջ գիմնա, կըսե.—Յա՛, փեսա ջան, կեծեք հած էնիմ, կամ կեծեք յառավոդ հած կերեք չայ խմեկ՝ կէրտաք: Էթմա, էյլամա:

Թե.—Չէ՛, կէրտանկ, օր կէրտանկ:

Գելնին կէրտան, նա՛ հած կուդին, նա՛ բան: Գելնին գեղիծ խրաղ, Շառոն կըսե.—Այ մարտ, մյենք սխալանկ, հիմա օր անոտի-ծարավ գածինկ գյեղ, չըն ըսի՞ թե՝ էդ իմա՞լ աներուջ տնեն գիկա, օր անոտի է: Ուրեմըն քու յերես չիշած է:

—Է, ինչ էնինք, հըրիֆներն քսան անգամ ըսին՝ մացեք հաց կերեք, օր չը լսիր, վուո՞րն է մեղավուր:

Կըսե.—Դառի էրտանկ, թե յիմած ին, գոնե էրգու հած վերունկ, օր ճամպեն ուդինկ:

Էգան, օր դուռ փագ է:

Ըբը.—Արի էրթըգեն նյերս մդնինկ, գոնե էրգու'մ հած վերունկ, ուդելով էրտանկ, ամոթ է:

Էլան էրտիգ, Շառոն ուրան գոդին քանդյեց, կաբյեծ Սակոյի միջկեն, ըսավ.—Յիճի, գոնե մե էրգու հած կը բերիս:

Յիճավ, պըդըդվավ՝ հած գըդավ: Էգավ ըսավ.—Շառո, հած գյդեր իմ:

Ըսավ.—Լավ իս էրի: Ման արի տյես բան'մ էլ չյես ճարի, տանինկ, խոյ ցամակ հած ուտելու չի՞նկ:

Ման գիկա Սակոն, կըջըջով մաճուն գըդնի:

—Շառո,—կըսե,—մաճուն գդա:

—Բիր,—կըսե:

—Է՛, իմա՞լ բերիմ,—կըսե:

—Տո,—կըսե,—առ ճվերուտ արանկ, հած լե զարգ խոլտուղդ, յիես քաշիմ, գելնաս էրտիգ, կառնինկ կջուջն, հածյերն ու կէրտանկ:

Քյասիբ Սակոն կջուջ կառնե ճվերու արանկ, յոդնյեր խաճե յիրար, Շառոս ի, քաշե: Քաշե, հարի Սաքոյի գլոխ գելնի յէրտըգից դուրս, տանե գոդին կաբե քարե'մ , կէրտա:

Սաքոն կը ճվա.—Շառո, Շառո, քաշե:

Էլ Շառոն յո՞ւր է, օր քաշե:

Հանգարծ, զոնքաջ գիմնա: Մարտուն կըսե.—Այ մարտ, շըռիս՝ յէլի շըռե, «Շըռիմ, շըռիմ». Խո դու էրեխա չի՞ս:

—Այ կնիգ,—կըսե,—ի՞նչ «շըռիմ», խո յիես շռող չի՞մ:

Կըսե.—Ըբ, ի՞նճ էր ճըվեր:

Սաքոն միամծու էլի բոռա.—Շառո, Շառո, քաշե:

Կնիգ զարթնի մարտուն կըսե.—Տո՛, մարտ իս, ջուր թապիս, յէլի ջուր թապե:

Գիմնան, էրգուս լե գիմնան, ճրակ կբուն, մեգ լե տըեսնին, օր մեգ մի յէրտըգեն կախվուգ՝ կջուջ ճվերու արանկ:

—Վո՛ւյ,—կնիգ կըսե,—սադանա է իդը, հըմլը մյեճ պլուորանի լե սադանա էղնի, հըլը տաշխի իշեկ:

Ըբը.—Իմա՞լ էնինկ, չընկ կըռնա մյենկ յիճու:

Մարտ կըսե.—Տերդեր բերինկ, տերդեր կըռնա յիճու:

Մարտ գելնի, օր էրտա տերդըրո՛ճ յէդևեն, կնիգ կըսե.—Չէ, յիես վախենամ,—կըսե,—դու կեցի հուդա, յիես էրտամ տերդըրուռճ բերիմ:

Կնիգ գելնի կէրթա տերդրուռճ, մարտ մնա տուն: Էդ քյասիբ լե հոդ կախվուգ, նա՛ ձեն կռնա հանե, նա՛ բան: Տերդըրուջ յիմաց կիդա, կըսե.—Էսպես սադանա է փեյդա էղի մյեր տուն, էրտըգեն կախվյեր է, էնբես մյեձ տաշաղ ունի, օր էդպես մյենձ տաշաղ յըս ըսկի տեսած չունիմ:

—Յըս իմ սուրբ գրկով էդ սադանեն վյեր բերիմ, միայն էս գեղի մեճ իրյեք-չուրս հոկի կան խոճաղ տղյերկ: Էնունց լե ձեն տու գա, թըղ կոբալնյեր առնին ձյեռ ուրանծ, գան կայնին դռան քով, յիես լե էդ սադանին վեր բերիմ իմ սուրբ գրկով: Սյև գուկա՝ զարգին, ըսպիդագ գուկա՝ զարգին, չթողին. Օր մեգյել յանկամ էդ սադանեն էլ ուրիշ յէրթըգե չիշխընա մդնի:

Տերդեր գիկա, էդ Սրքե, Մրգե, Տոնոն լե գիկան՝ կոբալնյեր ձյեռկ ուրանծ, իմալ օր յըս պադմի, տերդերն էդմալ պադվիրե:

Կըսին.—Հա, սուրբ հայր, էդի յո՛րի մըր ձեռնեն պըրձընի:

Էդոնք լե մշեծի, սասունծի ին: Տերդեր գիկա կայնի Սակոյի տակ, կըսկըսե գիրկ կարտալ: Գիրկն օր կարտա, Սակոն կը դողծու: Դողծու, հանգարձ յոդներն յիրարուծ բաձվի, էդ կջուջ, յալլա՛, տերդըրուռճ գլխուն: Կջուջ ջարտի, մաձուն լցվի տերտըրուռճ գլխուն, տերդեր փախնի: Փախնի, Սրքե, Մրքե, Տոնոն հոդ ին, կըսին.—Սադանեն էր, էգավ:

Տուր թե կիդաս տերդըրուռճ էնքան զարգին, արընթըթախ կէրտա ուրանց տուն: Կէրտա դուռ զարգե, իրիցկին գելնի բանալու, տեսնի, կըսե.—Օ՛յ, տերդեր գնած էնոնց տուն, գիրք կարդըծավ, էնուռնց տան սադանեն է:—Ըսավ.—Կեցի դուռ փագիմ:

—Տո, այ կնիգ, դուռ բաց, յիես իմ, տերդերն իմ:

—Տո՛,—կըսե,—տերդեր հըմլա արընթըթախ, թե՞ սադանեն է:

Թե.—Չէ, յիես իմ:

Նուոր դուռ բանա, կիշե, օր ինճ իշե, տերտըրուռճ գլուխ ջառտուկ, մաձուն վրեն թափուգ, մե աջլաջեբ բան:

Տերդերն օր յէդմալ փախնի, աներն ու զոքանջ կիշեն վերևն, օր, այ մարտ, իդը ուրընց փեսա Սակոն է: Նուոր բերին էդուոր գիճուն, կըսին.—Այ փեսա, իդը ի՞նճ բան է:

Սակոն էդտյեղ յըմեն բան պադմե, օր ըշտը յէդմալ Շառոն օյին է խաղցի ուր գլոխ: Բերին էդուր լողգըծուն, կերցուն, խըմծուն, ճամպու դնին կէրտա:

66(66). ԹԱԳԱՎՈՐԻ ՅԻՐԵՔ ԿՆԻԿԸ

Թագավորը յիրա վեզիրի հետ, թապտիր ղըլըղով, կէրթան երկիրը ման գալու, օր տեսնին ժողովուրտը ինչ՞ղ կապրի, ի՞նչ կը խոսի:

Կէրթան մե քաղաք՚մ, ծեծեն կը մե տան՚մ դուռ:

Էդտեղ կապրին մե մարդ՚մ յիրա կնկա հետ:

—Ղոնախ չե՞ք ընդունե:

—Համեցեք նես, ղոնախը Աստծունն է [Տունը մերը չէ, ղոնախինն է]:

Նես կը տանին, լավ՚մ կը պատվեն:

Տան տիրոջ կնիկը թագավորին շատ դուր գուկա՝ սիրուն, համեստ, շնորքով կեղնի:

Հյուրասիրվելեն յետև ղոնախները շնորհակալություն կեղնին ու կէրթան: Հմը թագավորը չի մոռանա կնկան:

Պալատ օր կը հասնին, թագավորը կսե վեզիրին.—Գնա էդ մարդուն կանչե պալատ:

Մարդուն տանին կը պալատ:

Թագավորը կսե մարդուն.—Ես շատ հավնա կնկադ: Ես յիրեք կնիկ ունիմ, յիրեքն էլ քեզի կուտամ, կնիկդ տուր յընձի:

—Թագավորն ապրած կենա,—կսե մարդը,—ես մե կնկամ անջաղ կրնամ պահե, ես քու պալատում ապրած յիրեք կնկան ի՞նչղ պահեմ:

—Հեչ մի՛ մտածե,—կսե թագավորը,—ես էդոնց թանկագին զարթերը, իրանց ունեցվածք-չունեցվածքը քեզի կուտամ, բացի էդորից ես էլ շատ օսկի կուտամ, գնացե՞ք ապրեք:

Թագավորի կամքն է, մարդը ի՞նչ կրնա էնե: Յիրա կնկան բերեն կը պալատ: Բեռ-բարխանեն բառնան կը սելերու ու ֆուրղուններու վրեն, կառնի թագավորի յիրեք կնիկը ու գ՚նկնին ճամփա:

Ճամփեն մարդը հարցնե կը մե կնկան.—

Դու ինչ արատ ունիս, օր թագավորը քեզնեն հրաժարվավ ու տվեց յընձի:

—Ես գող եմ...

—Լավ,—կսե մարդը:

Մեկել կնկան կը հարցնե.—Դու սիրուն կնիկ, յընչի՞ թագավորը քեզնեն հրաժարվավ ու տվեց յընձի:

—Ես բոզ եմ:

—Լավ,—կսե մարդը:

Մեկել կնկան կը հարցնե.—Քու արատդ ինչ է, օր թագավորը քեզնեն ձեռք քաշեց:

—Ես անզգամ ու լիրբ եմ:

Մարդը մտածե կը. «Գողին, բոզին բժշկություն կա, հմը անզգամին ու լրբին բժշկություն չկա»: Էդոր համար գետը անցնելու ժամանակ, մարդը անզգամ կնկան հրնդե, քցե կը ջուրը: Կնիկը խեղդի կը, ջուրը տանի կը:

Մարդը գող կնկա համար շինե կը մե մենձ լավ յօդեմ: Մե պատի վրեն շինե կը թարաք, դարսե կը սիրուն թանկագին բաներ, մեկել պատի վրեն շինե կը դարտակ թարաքներ ու կսե կնկան.—Եփոր գողություն գուզես էնել էս թարաքեն գողցած բաները տեղավորի էն դարտակ թարաքներու վրեն:

Անհավատարիմ, դավաճանող կնկա համար մարդը շինել կուտա մե լավ յօտեմ էրկու դռնանի ու կսե կնկան.—Եփ սիրող գուքա քովդ գլխավոր դռնեն նես տար, մենակ դուս յելնելուս թող յետվի դռնեն էրթա, օր ես չը տեսնիմ:

Գանցնի խեյլ՚մ ժամանակ:

Թագավորը կսե վեզիրին.—Էրթանք մե հատ՚մ տեսնինք՝ ինչ հալի է մարդը, ինչղ յոլա կէրթա իմ յառաջվա կնթոցս հետ:

Գուքան մարդու քովը:

—Ինչ հալի ես,—հարցնե կը թագավորը մարդուն,—ինչղ յոլա կէրթաս կնթոցս հետ:

Մարդը պատմե կը, թե ինչ էրավ գող կնկա հետ, օր էնիկ էլ գողություն չի էնե: Յետև պատմե կը թե ինչ էրավ անհավատարիմ կնկա հետ, էդիկ էլ շատ հավատարիմ կնիկ է դառե ու էլ չի դավաճանե:

—Յբը անզգամ ու լիրբ կնկա հետ ինչ էրիր,—հարցնե կը թագավորը:

—Թագավորն ապրած կենա, գողին ու բոզին փրկություն կա, հմը լիրբ անզգամին փրկություն չկա, ես էնոր ջուրը քցի՝ ազատվա:

—Շատ խելացի բան ես էրե, քու հնարագիտությանդ համար քեզի կը պարգևատրեմ: Կնթոցս եդ տուր:

Հմը կնթիկը կսեն թագավորին.—Մենք իստեղ մեզի լավ կզգանք, էս մարդը խելացի ու լավ մարդ է, մենք կը մնանք էս մարդու քովը:

67(67). ԹԱԿԱՎՈՐՆ ՈՒ ԻՐԱՆ ԿՆԳՏԻԿԸ

Թակավորի մեկը ուներ իրեք կնիգ: Իրեքն էլ մեկը մեկից անպետք էին: Մեկը հարամ կաթնակեր էր, մեկը գող էր, մեկելը լաճառ էր: Խեղճ թակավորը չիդեր, թե ինչ էներ, մոլրե մնածել էր: Չիդեր ո՞ր մեկի պակասուտենը, ամոտանկը տաներ: Իրանց դրկեց մե մառտ՚մ էլ կար, մե կնիկ՚մ ուներ: Էնքան լավ, էնքան խելոք, աբուռով, օր գիդես, թե աշխարկը էդ մեկն է ծնվե, էդքան լավ:

Մառտն էլնմ է առավոտ, ըսմ, խոսում, խնդմ, ուտմ, խմմ, նոր երտմ է գոռծին: Իրկուն գալմ է գոռծից, էլի սկսում է չալել, պարել, խնդալ: Էս թակավորն օր տեսնմ է էս մառտի ուրախուտենը, զարմանմ է, ըսմ է. «Էս ինչ բան է, ես թակավոր եմ, երկրի տերն եմ, էսկան խավար կյանք եմ վայելմ: Էս մառտն էրտմ է հարի իրկուն աշխատմ է, տքմ է, իրկուն գալմ է քեֆ, ուրախուտեն է էնմ: Բտի կանչեմ, իմնամ, թե էդ մառտը ինչ՚է էդքան ուրախ ու պայծառ կյանք վայելում»:

Մառտ ղրկեց, կանչին էդ մառտին, էդ մառտուն ըսավ.—Ա՛յ մառտ, ինչից է, օր դու էդքան ուրախ ես: Ամեն օր քեֆ, ուրախուտեն էս էնմ:

—Հը՛,—ծիծաղեծ դրկիցը,—թակավորն ապրած կենա, իմ կնկաս պես ով էլ ունենա, խաղ ու պար կենե: Ես էն տեսակ կնիկ՚մ ունիմ, օր նա՛ գը տխրիմ, նա՛ գծերանամ:

Թակավորն ըսավ.—Ա՛յ մառտ, քու կնիկդ օր էդքան լավն է, արի ես իմ իրեք կնիկս կուդամ քեզի, դու քու մե կնիգտ տուր ընձի:

—Լա՛վ,—ըսավ դրկիցը,—կուդամ:

Օժարածավ: Էկավ կնկան տարավ թակավորի տունը, իրեք կնկան առավ էկավ իրան տունը: Բերավ հաց կերան, ջուր խմին: Ըսավ.—Ա՛յ կնգտիկ, էլեք էրտանք քիչ՚մ պտտվինք, գանք:

Էլան գնացին: Մառտը տարավ էման ճանապով, օր ջուր էղներ: Գնածին հասան մե գեդի՚մ:

Մառտն ըսավ.—Դուկ ըստեղ կայնեք, ես ձեզի սրով շալգեմ, տանիմ ջրի էն ղրաղը:

Ըսավ, հանեց ոտները, շալկեց կնգտանց մեկին, տարավ ջրի կեսը, կայնավ: Հառծրավ.—Ա՛յ կնիկ, ըսա ընձի ճշմարիտը, թակավորն ընչի՞ քեզի դուս էրավ:

—Ա՛յ մառտ, քեզնից պայեմ, ասուց ի՞նչ պայեմ, ըշտը ես հարամ կաթնակեր էի:

—Լա՛վ,—ըսավ մառտը,—էդի թարկը կենես կերտա:

Կնիկն ըսավ.—Աստված շհատ էղնի, օր ըստից եդև, թարկ էնեմ, էղնիմ նամուսով, աբուռով կնիկ:

Մառտը տարավ ջրի էն ղրաղը, իջուց: Էկավ մեկելին տարավ չուրի ջրի կեսը, կայնավ, ըսավ.—Ա՛յ կնիկ, ըսա ընձի ճշմարիտը, թակավորը քեզի ընչի՞ դուս էրավ:

Կնիկն ըսավ. «Վալա՛, մառտ, քեզնից պայեմ,ասուց ի՞նչ պայեմ: Ես գող եմ»:

—Լա՛վ,—ըսավ մառտը,—դու գիդես, ինչ գուզես էրա:

Կնիկն ըսավ.—Ա՛յ մառտ, խոսկ եմ տալմ, օր էսօրվանից թարկ էնեմ իմ անշնորկ խասյատը:

Մառտը տարավ ջրի էն ղրաղը իջուց, էկավ: Մեկել կնկան շալգեց տարավ չուրի ջրի կեսը, կայնավ, հառծրավ.—Ա՛յ կնիկ,—ըսավ,—ընձի ըսա քու մեխկը, թակավորն ընչի՞ քեզի դուս էրավ:

Կնիկն ըսավ.—Թակավորը ընձի ըսմ էր միշտ իմ խոսկս էղնի, քո խոսկը չեղնի:

«Ահա՛,—ըսավ մառտը,—էսի լաճառ է: Ըստուր հետ գլոխ դնել չի եղնի:—Կսե,—հլը յավաշ փոռծեմ»:

Կսե.—Ա՛յ կնիկ, էս առտերը ինչո՞վ են քաղմ:

Կնիկը կսե.—Բա դու ի՞նչ մառտ ես, օր չուրի հիմի, էդ էլ չիդես:

—Ես չիդեմ,—ըսավ մառտը:

Կնիկն ըսավ.—Մկռտով են քաղմ, ինչո՞վ են քաղմ:

Մառտը ըսավ.—Չէ՛, ա՛յ կնիկ, գերենդով են քաղմ:

Կնիկն ըսավ.—Չէ՛, մկրտով են քաղմ:

Շատ օր ըսավ ու կնիկը թակրրեց, ըսավ ու հաստատեց, թե մկրատով են քաղմ առտերը: Մառտը տեսավ, օր էսի իրան խոսկի տերն է, չի փոխվի, հմը շալգեն շուռ տվավ, քցեց շալգից ջուրը, ըսավ.—Գնա՛, անիծած, քու տեղն էսի է օր կա:

Գնաց, կնիկը ջրի մեջ ընկած, խեխտվմ էր, չէր կռնմ խոսա, ձեռ վիրև էր տնկե, մատներով ցույց էր տալմ, թե մկռտով են քաղմ, հա մկռտով են քաղմ: Ուրեմ մառտը մե կնգան ջուրը քցեց, երկու կնկան բերավ տուն: Էդ օրվանից, մառտը էլի սկսեց քեֆ ու ուրախուտեն էնել:

Հմը թակավորն էդ օրվանից դհա բետար մոլրավ: Ըսավ. «Հլը էնդոնք երեք հատ էին, ամեկը մե խայսաթ ունեին: Էսի մինակ իրեք խայսաթ ունի: Ես ի՞նչ էնեմ»: Շատ օր մտածեց թակավորը. «Յավաշ կանճեմ,—ըսավ,—էդ մառտուն իրան կնիկը տամ իրան, իմ կնգտիկը էլի առնեմ ընձի»:

Կանճեց էդ մառտուն, ըսավ.—Ա՛յ մառտ, առ քու կնիկը, տուր իմ կնգըտիկը:

—Ա՛ռ,—ըսավ,—էսի քու երկու կնիկը: Ամենաանտանելին էլ քցի ջուրը:

68(68). ԿՆԿԱ ՇԱՌԸ

Մե մարդ՚մ ճամփա կէրթա, ձիուն նստած: Հասնի կը մե յախպուրի՚մ: Ծառավ կեղնի, գիջնի ձիուց, օր ջուր խմե: Տեսնի կը յախպուրի քովը մե կնիկ՚մ կայնած: Ջուրը կը խմե, ձիուն էլ կը ջրե, լիանա կը, կաղոթե:

—Աստվա՛ծ, դու յամեն փորցանքեն ու շառեն ազատե:

Գուզե ձին նստել, օր էրթա, կնիկը բռնե կը ձիու գամեն ու կսե.—Յընչի՞ կը նստիս, ձին իմս է:

—Ինչղ թե քուկդ է, էս մեր քուռակն է, ես եմ պահե, վենձցրե:

—Չէ՛,—կսե կնիկը,—ձին իմս է:

Էստեղ վեճի կը բռնվին. մարդը կսե. «ձին իմս է», կնիկը կսե. «Չէ օր չէ, ձին իմս է»:

Կէրթան դատավորի քովը: Էստեղ էլ մարդը կսե. «Ձին իմս է», կնիկը թե. «Չէ՛, ձին իմս է»:

Դատավորը հարցնե կը մարդուն.—Ձին ի՞նչ նշան ունի:

—Ի՞նչ նշան պիտի ունենա, իդիկ մեր ձիու քուռակն է, ես եմ մենձուցե:

—Տեսար, դատավոր օր սուտ կը խոսի, ձին յիրանը չէ, նշանը չիդե, ձիու սոլաղ չանկի մե յառկեն չկա:

Բանա կը ձիու բերանը, տեսնին կը օր ձիու սոլաղ չանկի մի յառկեն չկա:

Ձին կուտան կնկան:

[—Ամչցի՛,—կսե դատավորը մարդուն:]

Մարդը փոր-փոշման ետ կը դառնա ու ոտքով կէրթա տուն էն ճամփով օր էկել էր: Կէրթա հասնի կը յախպուրին:

Ահա՜ կնիկը, ձիու գամը բռնած կայնած է էդտեղ:

—Այ՜ կնիկ, դու յո՞ւրդից գիտեիր օր ձիու մե յառկեն չկա:

—Ձին օր ջուր կը խմեր, ես տեսա,—կսե կնիկը,—Էն վախտը դու սխալ աղոթեցիր, մեկել անգամը օր Աստծուն կաղոթես ըսա. «Աստված դու կնկա շառեն ազատե»: Ձիդ ա՛ռ, գնա:

69(69). ԽՈՐԱՄԱՆԿ ՀԱՐՍԸ*

Ուրեմն էսպես կեղնի: Կեղնի, չեղնի, մի աղջիկ՚մ ու մի տղա կեղնի: Դրանք իրարու շատ կ՚սիրեն: Բայց աղջկա հերը վերցնում է ուրիշի է տալիս: Որ ուրիշի է տալիս, էս տղեն սամթն է քցում էս աղջկան ասում.—Տո, մուխանաթ,—ասում ա,—էդ քան ջուր՚մ ծեծիր ինձի հետ,—ասում ա,—գնացիր ուրիշին առա՛ր, բա եղա՛վ, բա ամոթ չէ՞: Ինչքա՛ն էի քեզի սիրում:

Ասում ա.—Ես հորս խոսքից չկարեցա դուրս գայի: Ես էլ էի քեզի սիրում, բայց որպեսզի հորս պատիվը գետին չգցեի, հորս խոսքով ամուսնացա, բայց խոսք եմ տալիս, որ առաջի գիշերները քեզ հետ լինեմ, հը՛ քեզի հետ էղնիմ, քեզի հետ կենակցեմ:

Էսքան բան: Հարսանիքը լինում է... էս կողմ, էն կողմ, աղջիկը էթում ա տղի տունը: Տղի սենյակը որ առանձնացնում են, սեղան են սարքում, բան, որ ուտեն, խմեն քնեն: Ուտում են, խմում են, տղեն որ սկսում է հարսին ձեռ-մեռ մեկնելը, աղջիկն ասում ա.—Էդ ի՞նչ ես անում:

—Ի՞նչ անեմ,—ասում ա,—հորդ տունը ձեռ էի տալում՝ վեր-վեր էիր թռնում, թե. «Հորս տունն ա, ամոթ ա»: Հիմի էկել ես մեր տունն,—ասում ա,—բա վերջի օրն է էլի,—ասում ա,—հարսնիքն էլ եղել պրծել ա,—ասում ա,—պսակվել ենք, հը՛բա, պիտի չեղնի՞:

—Տո, — ասում ա, — տունդ չքանդվի, — ասում ա,—ինձիգ,—ասում ա,—բան չկա:

Թե.—Ի՞նչ:

—Չկա էլի,—ասում ա,—ես որ մորիցս ծնվա,—ասում ա,—էդ աղջկա բանը վրես չկար:

—Հբա, ի՞նչըխ...

—Տո,—ասում ա,—հերս թամաքյահր էր,—ասում ա,—փող չտվավ, որ շինենք, էդպես էլ մնաց,—ասում ա:

— Հբա, ինչըխ բիդի էղնի՞:

—Ի՞նչըխ,—ասում ա,—երբ որ ուզում ես, որ հեչ մարդ չիմանա: Ես իմացել եմ, որ մեկը լավ սարքում ա: Գնա մոտը, թող սարքի:

Թե.—Որդե՛ղ ա, որդե՛ղ ա:

Հասցեն տալիս ա: Ելնում ա առավոտը էս տղեն, ճախեն կոտրած էլնում, էրթում ա էտ տղուն գտնում ա՝ աղջկա սիրած տղին (հո ինքը չգիտի):

—Բարև, ախպեր ջան:

—Բարև:

—Տո, վարպետ ջան, գիտե՞ս, մի բանի համար եմ եկել քովդ:

Տղեն իսկույն ևեթ գլխի է ընգնում, որ էստեղ բան՚մ կա: Էս էն աղջկա, այսինքն՝ էսոր կնկա առաջվա փեսացուն ա: Ասում ա. «Ստրան քյալգյըմ խաղցել ա, որ էկել ա քովս»:

Ասում ա.—Ի՞նչ կա:

—Տո,—ասում ա,—գիտես, որ ես ամուսնացել եմ:

—Գիտեմ,—ասում ա:

—Տո,—ասում ա,—էդ շան աղջիկը վրեն բան չունի: Հերն էլ,—ասում ա,—ախմախ շանորդի ա էլել, կապեյիշնիկ. Սարքել չի տվել: Հմիկ տարել եմ՝ չունի: Ես էլ իրան եմ սիրում, ինքն էլ ինձ ա սիրում, հիմա ինչխ բիդի էղնի՞:

—Գիդե՞ս ինչ, ասում ա,—որ էդպես տրորվում ես, քու խաթրու համար կսարքեմ: Բայց էդիկ էնպես բան չէ, որ սարքեմ, տանես դնես վրեն: Պիտի կնգադ բերես, շաբաթ՚մ էրկուս մնա մոտս, կաղապար բիդի տնեմ, չափ առնեմ, բան առնեմ, սարքեմ:

Թե.—Ի՞նչխ կեղնի, ախր, իմանամ, բան...

Թե, ասում ա.—Իրիգունը մթանը կնգադ առ արի: Ասա՝ ղրկել եմ դաչա, կամ՝ էսկողմ, էնկողմ... Շաբաթ՚մ էրկուս կ՚մնա, ես չափը կառնեմ, կաղապար կդնեմ՝ իրա չափով-բանով... էնպես կէնեմ,—ասում ա,—որ բնականից չտարբերվի:

Հբա.—Ի՞նչ տի տամ:

—Ինչ բիդի տաս,—ասում ա,—նախաբանը փութըմ եղ կբերես, փութըմ՝ մեղր... մեկ էլ,—ասում ա,—մի լավ ոչխարըմ կ'բերես,—ասում ա,—որ բուրդը սև էղնի:

Թե.—Լավ: Իսկ հախը՞:

Ասում է.—Բանըմ յոլա կէրթանք, տեսնում եմ, որ շատ ես տրորվում, բանըմ էժան կսարքեմ:

Էս տղան, մութն որ ընգնում ա, կնգան առնում, գալիս ա: Կնգան առնում գալիս ա, թափշուր անում էդ տղին ու ինքը էրթում: Էսիկ յուղ ուտում, մեղրն ուտում, ոչխարը մորթում, ղահուրմեն՝ հետը... էրկու շաբաթ լավ դրստում: Էրկու շաբաթեն ետքը մարդը գալիս ա: Մարդը գալիս ա, թե.—Ախպեր ջան, պադրաստ ա՞մ:

Թե.—Պադրաստ ա,—ասում ա,—քիչմ խակ ա,—աում ա,—մի իրեք օր էլ թող ամրանա, իրեք օրեն ետքը արի տար:

Էդ էրկու-իրեք օրն էլ ետ ա քցում, որ լավ կարոտն առնի: Վերջը տալիս, տանում ա կնգան, տանում տեսնում ա, որ...

—Հա, կնիկ ջան, լավ սարքել ա՞մ, բաց հլա տեսնեմ:

Տեսնում ա, սարքում ա՝ «Մեղրը որ ուզել ա քաղծր ա, քաղծրութունը տեղն ա, քաղծրութուն կա մեջը», բայց որ փոստին ա աշում...

—Տո,—ասում ա,—էդ շունշանորդին էս սաղ ոչխրի ջանդակից էս մի կտոր փոստի կտորը անջա՞խ ա կպցրել էդտեղ:

70(70). ԿԻՆԵՐՈՒ ԿՈՏՈՐՈՒՄԸ*

Թագավորը կանչում է իրան լալին [լալեն գիտեք չէ՞, վազիր էլի, վազիր], ասում է.—Էսօր հրաման արձակե, որ ամբողջ քաղաքի լուսավորությունը հանգցնեն, ես գիշերը դուրս պիտի է գամ՝ շրջագայելու: Թագավորի հրամանը կադարում են, լույսերը բոլորը մարում են: Ժամը տասնէրկուսից հետո թագավորը թափտիղըլըղ մտած [թափտիղըլըղ գիտեք չէ՞, ձևափոխած, դարվեշի շորեր հագած], դուրս են գալիս շրջագայելու: Որ դուրս կուգան, կուգան քաղաքի ծայրամասը, կ'տեսնին, որ մի աղոտ լույս'մ կերևա շատ հեռվից:

—Լալա,—կըսե,—էս իմ հրամանը ինչխ հրաման է, որ լույս'մ կերևա:

Կըսե.—Թագավորն ապրած մնա, հրամանը արձակված է, եթե առանձին մարդիկ չեն կատարել, ես դրա մեջ հո մեղք չունի՞մ:

—Հլա գնանք,—կըսե,—դեպի էդ լույսը:

Գալիս են դեպի լույսը, տեսնում՝ փոքրիկ'մ խըրճիթ'մ, փոքր պատուհան'մ: Պատուհանից ներս կը նայեն, որ մի երիտասարդ աղջիկ'մ, ջահել տղեն էնպես են փաթթվել իրար, կսիրվին, կպաքրտվին և այլն, և այլն [նու, երիտասարդներ են]:

Թագավորը լալին կըսե.—Լալա, բեր փորձենք, տեսնենք,—կըսե,—սրանցից որն է ազնիվ: Սրանց ազնվությունը փորձենք:

Դուրս կ'կանչեն տղին:

—Տղա,—կըսեն,—էդիկ քու ինչն է՝ էդ աղջիկը: Թագավորի հրամանը չե՞ս լսե, ինչի՞ է ձեր լույսը վառած:

Կըսե.—Թագավորի հրամանը ինձի ինչ պետք է,—կըսե,—թագավորս էլ էդ աղջիկն է, թագուհիս էլ էդ աղջիկն է: Ես ինչ գիտեմ թագավորի հրամանը:

—Դե որ էդպես է,—կըսե,—էդ լրբի մեկն է,—կըսե,—դու էդոր հետ քու երիտասարդ կյանքը մի փչացնե, արի քեզի տանեմ պալատ, թագավորի աղջկան տամ քեզի, էղնիս թագավորի փեսա, ունեցածն էլ վայելես:

—Չէ,—կըսե,—հազար հատ թագավորի աղջիկ էղնի, ես էդոր թարգը չեմ տա:

—Գնա ներս,—կըսե:

Տղին ներս կուղարկեն, աղջկան դուրս կը կանչեն:

—Աղջի, էդի քու ինչդ է:

—Սիրածս տղեն է:

—Էդ, դու որ լավ աղջիկ էղնիս, կամ էդիկ լավ տղա, էս խրճիթը՝ ծայրամաս, կգա՞մ քեզի հետ՝ ժամանակ անցունելու: Դու արի,.—կըսե,—էդ լակոտին վերջացրու, խուլիգանի մեկն է դա, քեզի տանեմ թագավորին հարս ընեմ, ոսկու ապարանքի մեջ ապրիս: Էդիկ ինչ է, որ կյանքդ էդոր հետ կապեր ես:

Աղջիկը ձեն չի հանի, ներս կ'մտնե խրճիթը, էսոնք կէրթան: Էսոնք որ կէրթան կես կիլոմետրի չափ, մեկ էլ թագավորը կ'մտածի:

—Այ լալա,—կըսե,—մենք էդոնք փորձել ուզեցինք, բայց լրիվ չփորձինք: Հլա ետ դառնանք, տեսնինք՝ էդ կնիկը՝ աղջիկը, հո օյին չ'հանե՞ տղի գլուխը:

Ետ կդառնան կուգան, որ աղջիկը տղին պարկեցուրեր է տակը, էրկու ձեռքով բուկը կխեղտե, լեզուն դուրս է ընգե, աչքերն էլ բնից կելնեն:

—Տեսա՞ր,—կըսե,—այ տղի հավադարմութունն ուրդեղ էր, աղջկանը ուրդեղ էր: Դե ետ դառի էրթանք:

Ետ կդառնան կուգան, թագավորն էքսի օրն հրաման կուտա, որ՝ հինգ տարեկանից բարձր՝ մինչև երեսուն տարեկանը ջահելներուն բիրադի կտրեն: Չթողնին մնան: Կանանց էլի՝ էքերուն:

Հրամանն է թագավորի, կ'սկսեն ջարդելը: Կջարդեն: Սրեն կուգա կ'հասնի վաՀզիրին: ՎաՀզիրն էլ էրկու աղջիկ ունի: Իրուգունը չայրեն կախած կուքա տուն, հերը կըսե.—Էդ ինչ է էղեր, օղուլ:

—Բա, հայրիկ,—կըսե,—էսքան վախտ քաղաքում կոտորում է կիներուն, աղջիկներուն, դուն տեղեկութուն չունիս:

—Ինչ կոտորում:

Թե՝ էսպես, էսպես:

—Դե որ էդպես է,—կըսե,—թագավորին խնդրե, մի ժամըմ թող ինձի ընդունե, ես մի բան ունեմ, կ'պատմեմ իրան:

Կուգա թագավորին քով:

—Թագավոր,—կըսե,—հերս ինձ խնդրեց, որ մի ժամով իրան ընդունես, ձեզի հետ ինչ-որ խոսակցութուն ունե:

Կըսե.—Ուղարկեք կարետը, թող գա, մեծ մարդ է ինքը:

Կարետը կուղարկեն, էս մարդը կ'նստի կուգա թագավորի պալատը:

—Բարև ձեզ:

—Բարև ձեզ:

Կըսե.—Ինչ կկամենայիր:

—Թագավորն ապրած մնա,—կըսե,—էսիկ իմ տղեն է՝ քուկ էլ լալեդ է: Ես էլ քո հորդ լալեն էի: Էսի փոխարինաբար գնում է: Ես քեզի մի բան'մ կպատմեմ, նոր քու հրամանդ, ինչպես որ արձակել ես, էդպես էլ շարունակե:

Կըսե.—Պադվալը՝ ձեր, մի հատ գուրզ կա [Գուրզ գիտես չէ՞: Գուրզին ինչխ կըսեն: Գուրզ էլի: Հա, անդերին ինչ կըսեն, տո: Վալղամ կըսեն էլի, էնի որ կբարձրացնեն, գուրզ կըսեն]: Հա,—կըսե,—մի քսան հոգի իջեցու պադվալ, էն գուրզը ձեր պադվալը դրած է, թող բերեն:

Իսկի չեն կռնա բերեին: Մի կերպ'մ քաշքշելով կառնին, կուգան:

—Դե,—կըսե,—տես, ես էսիկ մեննակ կվերցնիմ:—Ձեռը կքցե, կ'վերցնե:—*Ես,*—կըսե,—*հորդ վաՀզիրն էի, ինչպես իմ տղեն քու վազիրն է: Մի օր'մ,*—կըսե,—*ձիս հեծած, էս գուրզն էլ,*—կըսե,—*թևս քցած, ճանապարհով գնում էի: Ետ դառա տեսնիմ, որ հետևիս մի ձիավոր'մ էնպես լցված կուգա, որ չես պատկերացնի: Եկավ հասավ ինձի, ո՛չ բարև, ո՛չ ասծու բարին, մի ապտակ'մ ինձի զարկեց:*

Ապտակ'մ որ զարկեց, ըսավ.—Անունդ ինչ է:

Ըսի.—Ատարիթաղի:

Ըսավ.—Ատարիթաղի, ինձի լսե, հետևես արի:

Ինքը գնաց, ես գնացի: Ինքը գնաց, ես գնացի: Էդ ապտակը որ ես կերեր եմ էտ,—կըսե,—*ատեն փուսկուլներս կորցրեր եմ, չեմ կրնա, վախենում եմ դրանից: Ինչ մարդ է, ինչ մարդ չէ, ինքը գնաց,*—կըսե,—*ես էլ կանավոդի պես ետևից գնացի, մինչև հասանք մի քարայր'մ՝ ժայռի մեջ: Ձիուց իջավ, ես էլ իջա, ձին տվեց ինձ, ասաց.—Աթարիթաղի, ձին կբռնես էնքան կկայնես ստեղ, որ ես կ'վերադառնամ: Եթե չվերադառնամ, կառնես ձին ու կէրթաս:*

Կայնա.—կըսե,—հլու-հպատակ եմ, ինչ բիդի ընեմ: Էն ապտակը որ ես եմ կերել, հլա անգճնիս ղժժա կը: Անցավ մոտ քառացուն րոպե, մի ժամի չափ, մեկ էլ տեսնինք՝ թևերը էստեղիս հետ առնած, մի հատ'մ արաբի գլուխ թևի տակը, մարաղից դուրս եկավ՝ քարայրի միջից: Դուրս եկավ ելավ հեծավ ձին, ես էլ հեծա: Գլուխը,—կըսե,—*դրինք տեղ, ջարդեցինք, գցինք մի քով:*

—*Արի ետևես:*

Ինքը գնաց, ես գնացի: Եկանք հասանք.—կըսե,—*մի թարմ գերեզմանի: Իրեքչորս օրվա գերեզման է: Իջավ ձիուց, ես էլ իջա: Քանդինք գերեզմանը, ինքը ավելի շուտ, չոքավ, սկսեց քանդելը: Ես էլ օգնեցի իրան, բացեց, որ մի երիտասարդ տղա՝ ո՛չ ուտես, ո՛չ խմես, էդ տղին սեր ընես:*

—*Հբա, գիտես՝ տա ո՞վ է:*

—*Ես ինչ գիտեմ:*

—*Էդ արաբի գլուխը, որին ես կտրեցի, էդիկ կը պտտցներ, որ ինձի առներ: Ես աղջիկ եմ:*

Անմիջապես ինչը գցեց ետ, բացեց, որ կուրծքը աղջկա կուրծք, գլուխը, երեսը, դեմքը...

—Էդիկ էլ սիրահարված էր, կուզեր ամուսնուս ոչնչացներ: Ոչնչացրեց, որպեսզի ինձի առներ: Ես էլ ըսի՝ յա արաբի գլուխը պիտի կտրեմ, յա՛ էլ կէրթամ ամուսնուս կողքը նամուսով պարկիմ: Հիմի,—կըսե,—ասիկ իմ թուրս, էս էլ գերեզմանը, ինձի սպանե, դիր դրա կողքը:

Դե ես ապտակը կերեր եմ, վախենալուց չոքերս կ'դողա, ես էդոր ինչխ սպանեմ: Նոր,—կըսե,—ինքը սուրը դրեց ինչի վրա՝ գերեզմանի վրա, կրծքով ընգավ վրեն, մեռավ: Իրան դրեցի ամուսնու կողքը, թաղի:

—Թագավոր սաղ մնաս, էն էլ էր աղջիկ, էս էլ էր աղջիկ, դու մի լրբի համար ինչի՞ ամբողջ կին-արմատու կտրիր մեր երկրից:

Նոր էդ օրվանից հրաման արձակեց, որ դադարեն կոտորումը: Բավարարվեք էդքանով:

71(71). ՀԱՄԶԱ ՓԱՅԼԵՎԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Թագավորի մեկը կէրթա մե յուրիշ թագավորի վըրա կըռիվ: Յիրեք տարի կանցնի, հաղթանակով ետ գուգա: Զորքը կը բերե կայնըցնե քաղքի ղըրաղը, ժողովուրդը գուգա՝ ծաղկեփընջերով թագավորին դիմավորելու: Թագավորը չ՚որս բոլորը կաշե՝ թագուհուն չի գըտնի:

Նազիր-վեզիրին կը հարցընե, կըսեն.—Թագավորն ապրած կենա, թագուհին էրեխա է ունեցե, չի կռնա գա:

Էս օր գիմանա՞մ թագավորը, կը մտածե, զարմանա, կուտա-կառնի, թե՝ ինչ հանելուկ է: Ինքը յիրեք տարի է՝ բացակա է տընից, էդ էրեխեն յումի՞ց էղավ: Հեռսը գելնի, սպարապետին կըսե.—Էս ռոպեիս գնա՛ քաղաք, ինչքան օր կընիկարմատ կա՝ հա՛րս, աղջիկ, պառավ, բոլորին սըրի քաշե:

—Հրամանը՛դ ի կատար,—կըսե սպարապետը, ձին հեծած կը մըտնի քաղաք՝ թագավորի հրամանը կատարելու:

Առաջին հերթին գուզե յիրանց տընից ըսկըսե, օր մեկելները չը նեղենան: Կէրթա հոր քովը: Սպարապետի հերն էլ՝ Համզա փայլևանը, ծերացած մարդ է՞... վախտին էղել է էս թագավորի հոր սպարապետը:

Սպարապետը գուգա, հորը գըլուխ կուտա, կըսե.—Հայրիկ, թագավորն էսպես հրաման է տըվե, ինչ էնեմ...

Համզա փայլևանը կըսե.—Ես էդ բանը չեմ թողնի կատարես, դու հավաքե բոլորին, ինչքան օր կընիկարմատ կա, լըցրու մարաքները, դռները փակե, գնա՛ թագավորին զեկուցե, օր հըրամանը դ կատարված է, մեկելին ես պատասխան կուտամ:

Սպարապետը էդպես էլ կէնե: Ինչքան աղջիկ, կընիկ ու պառավ կա, բերե կը լցնե մե մե՞նձ տեղըմ, դուռը կը փակե վըրները, կէրթա թագավորին կը զեկուցե, օր հրամանը կատարված է:

Հա՛, մոռացա ըսե՛մ՝ թագուհուն էլ էրեխի հետ մե առանձին տեղըմ կը պայե:

Թագավորը տըխո՛ւր-տըրտում գուգա, պալատը արդեն կըզգա, թե ինչ հրաման է արձակե ու ինչ էղավ: Ըստեղ են ըսե՝ յէլնի հեռս, կըտրե գլուխ, իջնի՛ հեռս, չը գըտնի գըլո՛ւխ...

Սա՛ղ թողնին կէրթան, օր թագավորին չը խանգարեն, էս էլ մենակությունից չիտե՝ ինչ էնե, մարդ կը ղըրկե, օր Համզա փայլևանին կանչեն: Համզա փայլևանը նիյաթը կախ գուգա, կը նստի թագավորի կողքը:

—Մե բան պատմե՝ լըսե՛մ.—կըսե թագավորը:

—Թագավորն ապրած կենա, ի՞նչ պատմեմ,—կըսե փայլևանը, ի՞նչ ըսեմ, օր քեզի հետաքըրքիր էղնի:

Կըսե.—Պատմե քու անցած օրերից...

Ու փայլևանը կը պատմե.

—Ես օր ջայել էի,—կըսե, քու հոր մոտ կը ծառաեյի: Մե անգամ ձիով տեղ կէրթայի, մեկ էլ հանկա՛ծ մե ձիավորըմ էկավ, ճամփես կըտրեց, թուրը քաշեց, հրամայեց, օր ձիուց իջնիմ: Ի՞նչ բըդի էնեյ, իջա: Ընձի դըրեց յիրան ձիու թամբը ու տարավ: Տարա՛վ, տարավ մե բա՛րձր աշտարակի՚մ տակ կայնըցրեց: Ընձի հրամայեց ձիու վըրից խուրջինը իջեցընեմ: Իջեցըրի՛: Խուրջինը իջըցրեցի: Բացեց, մեջը լի՛քը մըխ ու մըսմար: Կարգադրեց, օր էս մըխ ու մըսմարը աշտարակի պատին հերթով խըփեմ ու վեր բարձրանամ: Ես վերցըրի՝ խըփելու, չը կըռնացի, յինքը իմ ձեռից չակուջը վերցըրեց, խըփեց, նառդըվան սարքեց՝ վեր յէլավ: Քիչըմ յետև տեսնիմ՝ յոթ հատ կըտրած գլուխ վերևից քըցեց ցած: Իջավ, ընձի հըրամայեց. էդ կըտրած գլխըները լըցրի խուրջին մեջ, ձի նըստանք, գընացինք: Հասանք քաղքից դուս՝ գերեզմըններին, կայնանք:

Խուրջինը իջեցրրեց, ընձի մե հողաթումբ ցույց տրվեց, հրամայեց՝ էդ գերեզմանը փորեմ: Ճարրս ինչ... փորեցի՛, փորեցի, մեկ էլ մե սիրուն երիտասարդ դուրս էկավ: Գիտես թե՝ քընած է: Էս տրղեն չոքավ գերեզմընին, գլուխը կախեց, հոնգուր-հոնգուր լաց էղավ: Բավականին ըսպասեց, հետո կայնավ, կողքից սուրը հանեց, տրվեց ընձի, խընդրեց, օր իրան էդ սրրով խըփեմ: Շատ խնդրեց, դառավ հըրամայեց, ես հըրաժարվա: Հանկարծ էս տրղեն սաղավարդը հանեց գլխուց: Մազերը յերկա՛ն, թափվան դոշին, դառավ մե հուրնիկ, հրեղեն աղջիկ: Ո՛չ ուտես, ո՛չ խըմես, կայնիս ու յերեսին աշես: Սուրը վերցրեց ձեռը.

—Քիչըմ յեթև ես կը մեռնեմ,—ըսավ,—դու ընձի կը թաղես էս տրղի կողքը, էն պայմանով, օր յիրան ձեռը էղնի իմ գլխու տակը, իմ ձեռը՝ յիրան: Էս յոթը գլխըներն էլ կը դնես մեր ոտներու տակը:

Էսպես օսյաթ էրավ ու... սուրը խըրեց սրտի մեջտեղը, ընկավ գերեզմընի կողքը: Ինչըղ օր խընդրել էր, էդպես էլ էրի: Էսոնց թաղեցի, մե դալար չինարի ծառ էլ տընկեցի էդ անմուրազ մեռած ջայելների վրա՛:

Է՛, թագավորն ապրած կենա, չե՞ս հարցընե, թե էդ ինչ գլուխներ էր, օր էդ աղջիկը կըտրեց: Ճամփեն օր էկանք, ընձի պատմեց, օր էդ յոթ գլխները իրան ախպըրտանց գլխներն էին: Էդ թաղված տղեն իրան սիրածն է էղե. Ախպըրտիքը ըսպանել են էդ տըղին, օր յիրանց քուրը էդոր հետ չը նշանվի: Աղջիկը նպատակ էր դրել իրան վըրեժը լուծելու ու մեռնելուց հետո իրան սիրած տըղի քովը թաղվելու:

Հըմի բանըմ ըսեմ, թագավոր, չը նեղենաս: Դու, օր թագուհու պատճառով հազարավոր կնիկարմատ սրի քաշեցիր, արդյո՞ք բոլորն էլ մեղավոր էին: Բոլորն էլ իրանց մարդկանց դավաճանե՞լ էին: Չէ՞ օր էդոնց մեջ, հազարից մեկը մեղավոր չէր: Էդպես բան կէնե՞ն... Մարդ կա, մարդ էլ կա, կընիկ կա, կընիկ էլ կա: Մե քանի՞մ վատ մարդու կամ վատ կընկա պատճառով կարելի է՞ բոլորին սըրի քաշել: Ճիշտն ըսա, դու հըմի չե՞ս փոշմընե:

—Ես մեղավոր եմ,—կըսե թագավորը,—ընձի հարկավոր է կախաղան հանել:

—Թագավորն ապրած կենա,—կըսե Համզա փայլևանը, ես էդքան խամ մարդ ե՞մ, խելքըդ ի՞նչ կը կըտրե: Ես կը թողնեյի՞, օր էդ անմեղ կընկըկտիք սըրի քաշվեյին՝ քու անմըտածված հըրամանով: Ա՛ն բալնըքները, հըրաման տուր, ազատություն տան էդ ժողովըրդին:

Թագավորի շունչը տեղը գուգա, գելնի փայլևընի յերեսները կը պագե, կուրախանա, հրաման կուտա, յերկըրով մեկ ուրախանան, փակված դրռները կը բանան, քեֆ, ուրախությո՛ւն:

72(72). ԿԸՆԿԱ ԼԱՎՆ ԷԼ ԿԱ՛, ԳԵՇՆ ԷԼ

Թագավորըմ կեղնի, հրամայե գը, օր քաղքի վրա գիշերվա իննից հետո լույս չը վառվի: Վեզիրներին կը հրամայե՝ վով օր կարգը խախտե, էնոր բերել պալատ ու գլխատել: Վեզիրները գելնին կէրթան քաղքի մեջը կը չափչըփեն, մեկ է տեսնին, օր հեռվից մե լուսըմ կը վառվի:

Կըսեն.—Էրթանք տեսնինք՝ էս ինչ անվախ մարդիկ են, օր թագավորի հըրամանին չեն ենթարկվի:

Կմոտենան տանը, լուսամուտից կաշեն, տեսնին, օր մարդ ու կընիկ նըստա՛ծ, յիրար հետ կուտե՞ն, կը խըմեն, խոսա՛ն, ծիծաղան, քեֆ կէնեն: Կէրթան թագավորի մոտ, կըսեն, օր.—Մենակ մե մարդըմ քու հրամանը չի կատարե:

Թագավորը հրամայե կը, օր բերեն պալատ ու պատժեն էդ մարդուն՝ յիրան խելքի չափով: Տըղին կը բերեն, թագավորը կըսե.—Քանի օր դու իմ հըրամանը չես կատարե, բըդի նշանվիս իմ աղջկաս հետ ու իմ տեղը թագավոր էղնիս:

Տըղեն կըսե.—Թագավորն ապրած կենա, ինչի՞ս է պետք քու հարստությունը, քու թագը կամ աղջիկըդ, իմ կընիկը ամեն ինչ է ընձի հըմար: Գուզես՝ գլխատե, ես էդ բանը չեմ էնե:

Թագավորը կուտա-կառնի, տեսնի, օր պատասխանը ճիշտ է, հրամայե կը՝ տըղին տանին մե լավ տեղըմ պայեն:

Յէքսի օրը էս տըղի կընկան կը կանչե:

Թագավորը կըսե,—Դու բըդի նշանվիս իմ տըղի հետ, հարստություն, թագ, կառավարություն ձեզի կուտամ:

Էս կընիկը ուրախությունից վեր-վեր կը թռնի, կըսե.—Համաձայն եմ:

Թագավորը կըսե.—Օր էդպես է, դու քու մարդուն բըդի ըսպանես:

Կընիկը կըսե.—Էդ էլ կէնեմ:

Պայմանավորված օրը կընիկը մտնի գը ամուսնու տեղը, օր ըսպանե, թագավորը յիրան հարուրապետին առաջուց ըսել էր, օր տըղին հետևին ու պաշտպանեն, ըսել էր.—Աշեք, օր էդ ղանջըղը տըղին ձեռ չը տա՛, չըսպանե:

Հարուրապետը յիրան մարդկանցով գուգա, օր տըղին հետևի, արդեն ուշ կեղնի, տեյ կը հասնին օգնության, կընիկը մարդուն կըսպանե:

Թագավորն էս օր գիմանա, կիրամայե կախեն էդ կնգան ու յիրան քաղաքից վերացնեն բոլոր կնիկարմատներին:

Վեզիրներին կըսե.—Ձեզի յեռսուն օր ժամանակ՝ ջարդեք, կախեք բոլոր կընկըտոնց:—Կըսե.—Յառաջինը իմ կընկան ըսպանեք, յետո կսպանեք ձեր կընկըտանց ու մեկելներին:

Կանցնին օրերը մեկը մեկելի յետևից, նազիր-վեզիրը հալումաշ կեղնին: Մե օր՝մ էլ վեզիրի հերը կը հարցնե, կըսե.—Ինչ է էղե, ինչ ցավ ունիս, օր էդպես կը տանջվիս, ըսա՝ ճարըմ էնեմ:

Վեզիրը կը պատմե, օր.—Ըսպես-ըսպես, թագավորը հըրամայել է, օր ըսպանենք սաղ կընկըտանց, մերն էլ հետը: Թե հրամանը չը կատարենք, սաղիս գլուխը կը կտրե:

Հերը կըսե.—Օրն օր էկամ, բարին էլ հետը գուգա: Հըլբըտ աստված մե դուռըմ կը բանա, մենձերը կըսեն. «Աստված մե դուռն օր փակե, մեկելը կը բանա»:

Գուգա օրը, թագավորը քաղքի դարպըսներու մոտ կըսպասե վեզիրի պատասխանին, թե վեզիրը կատարել է՞ հրամանը:

Վեզիրը թագավորի կնկա հետ, ժողովրդի հետ կդիմավորե թագավորին:

Թագավորը կը հրամայե.—Կտրել հանդուգն վեզիրի վիզը:

Վեզիրը կըսե.—Թագավորն ապրած կենա, թող վերջին անգամ էրթամ հորս տեսության, մեռնելուց առաջ թող հերս կարոտս առնի:

Թագավորը կըսե.—Գնա՛:

Կես ժամ կանցնի, վեզիրը հորը կը բերի, օր վախտին էղել էր թագավորի առաջվա ավագ վեզիրը:

Էս ծերունին գուգա կըսե.—Թագավորն ապրած կենա, դու իրավունք ունիս իմ տըղի գլուխը կըտրես, քանի օր քու հրամանը չի կատարե, հըմը թող մե էրկու խոսք էլ ես ըսեմ: Վեզիրի հերը՝ Ավչի Այմադը, կըսե.

Թագավորն ապրած կենա, մե օրըմ հերդ ըսավ, թե.—Եղնիկի միս գուզեմ ուտեմ, Ավչի Այմադ,—ըսավ,—գնա՛ որսի:

Յելա գնացի սարերը, բայց բախտիցս եղնիկ չըկար, եկտ դառա: Եկտ դառա, օր բըդի գամ, մեկել տեսնեմ՝ մե տղա գուգա:

Տըղեն հագել է սև շորեր, նստել սև ձիու վըրա: Անցավ գնաց, բարև՝մ էլ չը տվավ: Հեռսըս յելավ, գուրզըս թաբլի, կպավ ուզանգուն, փըստ անցավ: Մի յատ՝մ էլ թաբլի, էլի փըստ անցավ, երրորդ անգամ յինքը թաբլեց: Օր թաբլեց, կպավ ընձի ու... ուշքըս անցած հընգա ցած: Ուշքըս օր էկավ տեղը, սև շորով տղեն ընձի տարավ մե պալատ՝մ ու ձիուն թողավ քովս: Քիչըմ անցավ, յիրեք գլուխ առած, էկավ ու ըսավ, օր՝ էս գլխները ախպըրտանցս գլխներն են: Շարունակինք ճամփեն, մեկ էլ ըսավ, թե՝ արի մտնինք գերեզմանոցը: Վախվըխելով՝ ես էլ մտա գերեզմանոցը, մե պատյած քարի՝մ մոտ կայնըցրեց ու հրամայեց, օր ես քանդեմ էդ գերեզմանը: Ըստիպված քանդեցի ու ընդեղից դուս բերի մե տըղու մարմին, սիրուն, սիրուն, ինչխ օր որց առյուծը՝ տապալված անհավասար կռվի մեջ՝ յիրան ձագերի հըմար: Ձիավորն էլ քիչըմ հեռու գնաց, հանեց շորերը, տըկից դուս էկավ մե աղջիկըմ, օր ո՛չ ուտես, ո՛չ խմես, ըդուր յերեսին աշես, ինչխ օր յարևը յերկընքի էրեսը փըսպըղա:

Ըսավ.—Ընձի ըսպանե, Ավչի Այմատ, ըսպանե ու գնա, ես սիրել եմ էս տըղին ու կը սիրեմ հուր հավիտյան, էն աշխարը էրթելուց: Ըսպանե, քեզի կը հրամայեմ՝ ըսպանե՛, թե չէ...

Ինչ արած, ըսպանեցի, էրկըսին մի տեղ թաղեցի:

Տեսա՛ր, թագավորն ապրած կենա, էդ ինչ օր պատմեցի, էդ էլ էր կընիկ, իրան սիրած տըղի հըմար ըսպանել էր իրան իրեք ախպորը, քանի օր ախպըրտիքը չէյն տվել իրանց քուրոջը ու ըսպանել էին էն սիրուն տըղին:

Էսոր ի՞նչ կըսես... լավն էլ կա, գեշն էլ կա:

Թագավորն իրան ըսածից կը փոշմանի[79]:

[79] Էս հեքյաթը լսել եմ մեր մենձերից, չեմ հիշե՝ քանի տարեկան էյ, ըսման թեթև տղա էյ... Էս օր կըսեմ, տըղա

73(73). ԲԱՐԻ ՎԱՁԻՐԸ ՈՒ ԹԱԿԱՎՈՐԸ

Ժամանակոց մե թակավոր՝մ կար: Էդ թակավորը շատ բարի էր: Իրան հպատակ ժողովուռտին լավ էր աշմ, մուղատ կենմ:

Տարեն մե անկամ դուս էր գալմ ժողովուրտի մեճը՝ էս քաղկեն են քաղակ, էս գեղեն էն գեղը: Ըսման ղլղը փոխած ման է գալմ: Ոչ մի մառտ չէր ճանճնմ: Եղավ, օր վախտն է, օր բտի էրտայն ման գայն լալի հետ: Ելան ղլղները փոխեծին: Լալի հետ գնացին ման էկան իրան երկրի չոռս կողմը՝ քոշա-քանար ման գալով տեսնելու: Իմանալով՝ եկան հասան իրանց քաղակը: Թակավորն ըսավ.—Լալա, մե անկամ դուս ենք էկե, արի հլը մեր քաղակն էլ ման գանկ տեսնինք՝ հլը ի՞նչ կա, ի՞նչ չկա, նոր էրտանք արխեին նստինկ:

—Լա՛վ,—ըսավ լալեն:

Ու սկսեցին քախքի լենկ ու էրկենքը ման գալ: Չուրի ման էկան, պռծան թե չպռցան, մուտը տվավ վրա: Քաղակը զատի լուս չկար: Խավարի մեջ շատ ման գալուց ետև, տեսան մե պզդի լուս՝մ երևաց քաղակի ծերը: Թակավորն ըսավ.—Լալա, քելե էրտանկ, տեսնինկ՝ էդ ի՞նչ լուս է, օր սաղ քաղակը մուտն է, էդ մի լուսը վառմ է:

Թակավորն ու լալեն դուշ էրին էտ լուսն ու գնածին: Գնածին տեսան, օր մե պզդի պատուհան՝մ: Մե պզդի ճրագ՝մ դրած վառմ է, ջուլակն ու իրան կնիկն էլ իրար ջան ըսելով, ջան լսելով աշխատմ էին: Դուռը զարկին, ջուլակն էկավ դուռը բացեց: Թակավորն ըսավ.—Ըշտը, ղարիբ մառտ ենք, ճամպոռտ ենք, տեղ՝մ տաք ստրվորինկ, առավոտ ելնինկ, էրտանկ:

—Լա՛վ,—ըսավ ջուլակը.—ղոնախն օր կա, ասունն է: Արեք մե գիշեր՝մ չէ, հինգ գիշեր կեծեք:

Գնածին նես տեսան, օր էդ մառտ ու կնկաց սավայ էլ ուրիշ մառտ չկա: Երեխա, բան, հեչ բան չկա: Զարմացավ թակավորը ըսավ. «Ուրեմն ըստոնկ էնկան դառն ախկատ են, օր չեն կռնմ ապրին: Մե մառտ ու կնիկ օր էս կես գիշերին էլ էս նվազ լսի տակ աշխատմ են»:

Թակավորն ըսավ.—Ա՛յ մառտ, դուկ էնկան շատ գերդաստանի տեր ե՞ք, օր չեք կռնմ ապրի, օր էս կես գիշերին քնից ու հանկստից դառդահար եք եղե, աշխատմ եք, օր երեխա պայե՞կ, թե՞ էտկան դառը քյասիբ եկ: Բա ձեր թակավորն ի՞նչ է ըսմ, ի՞նչ է մտածմ, օր ձեզի չի օկնմ: Մեխկ չե՞կ դուկ, օր էս կես գիշերին չարչրվմ եկ:

—Հը՛,—ծիծաղեց ջուլիակը,—թակավորն ո՞ւմ աշխատանքը տա ընձի: Ամեն մառտ աշխատի, իրան աշխատանքով ինկն ապրի: Մենկ մառտ ու կնիկ ըսման սերով ու բարիշ կաշխատինկ, կուտենկ, կապրինկ, չուրի մայը-գերեզման իրար հետ կաշխատինկ, իրար հետ կապրինկ, իրար հետ կմեռնինկ:

Ջուլիակն օր ըդման ըսավ, թակավորը մտկի մեջը ըսավ. «Ես բտի ըստոնցը փոռծեմ»,—ըսավ ու անհամպեր աշմ էր լուսը բացվելուն:

Առավոտը լուսը բացվավ, չբաժվավ, թակավորը լալին ձեն տվավ, ըսավ.—Լալա՛, ելի էրտանկ:

Ելան գնածին թակավորի պալատը: Թակավորը մառտ ղրկեց ջուլակին կանչեց իրան դիվանխանեն: Ջուլիակն էլ գնաց թակավորի դիվանխանեն, նես մտավ: Իրեկ անկամ գլոխ իջուց, բարև կապեց, կայնավ:

Թակավորն ըսավ.—Ջուլիակ, գիդե՞ս ընչի եմ կանչե քեզի:

Թե.—Չէ՛, թակավորն ապրած կենա,—ըսավ ջուլիակը:

Թակավորը թե.—Կանչել եմ, օր քեզի բտի բերեմ պալատ, էնեմ պալատիս կառավարիչ: Հմը կնկածդ բտի բաժնվիս: Ըստեղ պալատում շատ սիրուն գեղեծիկներ կան, կառտցողներ՝ քեզի լայեղ: Քու կնիկդ քու լայեղդ չէ, իզուր տանջվմ ես հետը:

—Չէ՛,—ըսավ ջուլիակը,—իմ կնիկըս շատ լավն է, շատ էլ ընձի հարմար է: Ես ու իմ կնիգը մե գերեզման բտի մտնինկ: Մենկ իրարուց չենկ բաժանվի:

Թակավորը շատ զոռեց, շատ ոշվատներ խոստածավ, օսկի, առձատ, էլ գոռծարան: Ճար ու իլաջ չեղավ, ջուլիակը չհամոզվավ, կամկի չեկավ:

ջան, լավ ընտանիք ունի՞ս, յամեն օր հարսնիք ու դերնակ է, վա՞մ ընտանիք ունիս՝ յամեն օր մեռելատուն կէրթաս: Յամեն հեքյաթ մե խրատ՝մ կուտա: Լավ կընիկ էլ կա, գեշն էլ կա, բան չունեմ ըսելու,—հավելում է բանասացը:

Թակավորն ըսավ.—Ըստուրը տարեկ, կնկան բերեկ, թող ասե՝ որկանով է հավատարիմ իրան մառտուն:

Ջուլիակին թողին գնաց տուն: Գնածին կնգան բերին: Կնիկն էլ էկավ, օր մտավ թակավորի դիվանխանեն, իրեկ անգամ գլոխ իջծրավ, բարև կապեց, կայնավ: Թակավորն ըսավ.—Գիտե՞ս քեզի ընչ'ենկ կանչե:

—Չէ՛,—ըսավ կնիկը:

Ըսավ.—Քեզի կանչել եմ, օր դու ապսոս ես էդ մառտու հետ կյանկ մաշես: Քեզի առժան է, օր դու ունենաս պալատական լավ մառտ, ջուլակն ի՞նչ է, օր քեզի պես կնկան սազե:

Կնիկը սկզբից քիչ'մ չեմ ու չում էրավ, հմը թեզ համոզվավ, ըսավ.—Բա մառտուս ի՞նչ էնեմ:

Թակավորն ըսավ.—Բտի մառտուտ վեռճածնես:

Ըսավ.—Շատ լավ, ես էս գիշեր ամեն ինչ գկատարեմ:

—Դե ազատ ես,—ըսավ թակավորը:

Ջուլիակի կնիկը գնաց տուն ու ըսկսեց իրան սև գոռծը, օր չէր էլ թողնմ օր չուրի մուտն ընկնի: Իրիկուն, հայհարեն դրավ, վռասցրավ մառտին, չթողեց մառտը գոռծը պոծներ, «Հա յաման քունս տանմ է, վայ յաման քունս տանմ է»: Էնկան հայ հարեն դրավ, չուրի խեղճ մառտը ելավ, պառկավ քնավ: Մառտը օր պարկավ քնավ, ինկ ելավ, շորերը հակավ, բերավ փեժկիրը սապնեց, օձկապ էրավ, քցեց մառտու բուկը: Քանի օր ուժին ուժ կար, քաշեց: Էնկան քաշեց, օր մառտու շունչ ու սոլուղը կտռավ: Էդ վախտ թակավորի միտկն ընկավ, օր էդ կնիկը խոսկ է տվել մառտուն վերջածնելու:

—Հա՛յ, հա՛,—ըսավ թակավորը,—գնածե՛ք հավարին հասեկ, օր ապսոս է էն մառտը, քանի էն անիծած կնիկը չի վնասե: Գնացեկ ըսեկ, օր էլ չի էղնի, թող խաղաղվեն ու ապրին իրար հետ:

Թակավորի ղրկած մառտիկ չուրի գնացին, քաֆուր կնիկը խեղճ մառտի գլխուն էդ օյինը հանել էր ու պինդ ու պառզ ըսավ թակավորի մառտկանծը.—Ես իմ խոստումս կատարել եմ: Դե արեկ ընձի առոք-փառոկ տարեկ:

Թակավորի մառտիկն օր իմացան, թե ջուլիակն էլ չկա, փոր-փոշման ետ դառան: Գնածին ջուղապ տարան թակավորին, թե հա՛լ, հեքիա՛թ, էսման բան: Թակավորը լսեց, բարկացավ: Կանչել տվավ ջուլիակի կնկան ըսավ.—Ուրա՞ն է մառտդ:

Ըսավ.—Վեռճածրի:

—Ընճի՞ վեռճածրեցիր,—հառցրավ թակավորը:

Ըսավ.—Դու ըսիր:

Ըսավ.—Շատ էլ ես ըսի, բալկ ես քեզի էի փոռծմ: Դու ընչի՞ քո անմեղ մառտուն զուր տեղը խեխտամայ էրեծիր: Ապսոս չէ՞ր, մեղք չէ՞ր էն թավուր ազնիվ մառտուն էլ գվեռճածնե՞ն: Մենկ համարյա մե կես օր'մ քու մառտուն համոզեծինք, չհամոզվավ քեզնե գոյնե բաժնվելու, իսկ դու մինչև անկամ խեխտամայ ես էրե: Իշկան օր քու իսկական մառտուդ էղար հավատարիմ, էնկան էլ մեր պալատին և նոր մառտուն կեղնիս հավատարիմ,—ըսավ թակավորն ու ձեն տվավ.—Ջանլա՛ռ:

Ջանլատները էկան, երկու մառտ ոտից, չուրի գլոխ կարմիր հակած, իրեկ անկամ գլոխ տվին, բարև բռնին, կայնան: Թակավորը հրամայեց, օր տանին ու էդ կնկան նալեն: Ջանլատները տարան կնկան ոտները նալեցին: Կնիկը ուշկանցած՝ տարան քցին զերզամբին: Թակավորը շատ բարկուտենից սկսեց գլոխը պտտել ու ցավալ: Էկան սինոտապետները սիրտ տվին հանկստացրին: Թակավորը հրաման տվավ, օր սաղ աշխարկի օղլուշաղ ըսած բառը բտի կտռեն վերածնեն, օրոծկի էրէխից բռնաց, չուրի ոտը գերեզման պառավ՞ները: Հազրմ են խոշունը մե դիեն, դահիճները՝ մե դիեն, օր էդ օրը բտի ըսկսեն կտռել, ընչուրի եպ օր վեռճածնեն: Հրաման է տվե բիլա ճամպեկը փակել, օր չեղնի թե փախնին, էլնին սարերը, լեռները, ազատվին: Սաղ աշխարկը ընկել է սոտում գորում[80]: Մերը մանուկն ուրածել է: Առտասունկները գետ է դառե: Տասնյակ մառտիկ մտնմ են թակավորի քովն ու դուս էն գալմ, խնդրմ, աղաճմ, պաղատմ, ճար, իլաջ չի էղնմ: Ըսմ է.—Բտի կտռեկ օր, բտի կտռեկ:

Վեռճը խաբարը գնաց հասավ Մոսի վազիրին, որը եղել էր թակավորի հոր վազիրը: Հմի կուրածել է, կուր նստած է : Ըսին.—Մոսի վազի՞ր, ի՞նչ էս էնմ, օր սաղ աշխարկի օղլուշաղ թախումը կտռմ են թակավորի հրամանով:

---

80 Սոդոմ և Գոմոր – հնագույն քաղաքներ, որոնք ըստ Հին Կտակարանի՝ կործանվել են՝ ի պատիժ իրենց բնակիչների գործած մեղքերի (ծանոթ. կազմողների):

Թե.—Ընչի՞:

Ըսին.—Հալ, հեքյաթ, ըսման, ըսման:

—Դե ընձի մե ձի՛մ բերեկ,—ըսավ վազիրը:

Ձին բերին: Ըսավ.—Ընձի նստցրեկ վրեն, տարեկ թակավորի քովը:

Վազիրին նստցրին ձին, տարան թակավորի պալատը իջցրին: Ձեռնեն բռնեցին, տարան թակավորի դիվանխանեն: Վազիրը, օղորտ է, չէր տեսնմ, հմը կարգ ու կանոնները շատ լավ գիտեր: Իրեկ անկամ գլոխ իջցրավ: Բարև կապեց կայնավ: Թակավորը տեղ նշանց տվավ, տարան նստցրին: Ըսավ.—Մոսի խոջա, ինչ խնտիրք ունիս, օր էկել ես իմ քովս:

Վազիրն ըսավ.—Թակավո՛ր, ապրած կենաս, քու ազիզ կյանքն ու ումբրդ էրկար էղնի, էկել եմ օր քեզի աղաճեմ՝ էդ քու տված հրամանը մե քանի՛մ սհատ դատար տաս: Մե պատմուտեն՛մ ունիմ: Պատմեմ դու իմանաս, ետև գուզես ընձ էլ ընդոնց հետ կտռես, դառտ չէ:

—Չէ՛,—ըսավ թակավորը,—էսօր բտի ըդոնց քոքը բերեն: Ըդոնկ էլ իրավունկ չունին ապրելու, քանի ապրին էնքան գեշ բաներ բտի էնեն:

Ընդեղ եղած մառտիկը հասկցան, օր վազիրը էկել է բարեխոսուտյան հմար: Թակավորին ըսին.—Թակավորն ապրած կենա, էդ մառտը կուր հալով էկել է քու քովդ, ինչղ կեղնի, օր առանց խոսալու էրտա: Իզին տուր, թող խոսա, տեսնինք՝ ինչ բտի ըսե:

—Լա՛վ,—ըսավ թակավորը,—ըսա տեսնիմ, Մոսի՛ խոջա, ինչ բտի ըսես:

Մոսի վազիրը սկսեց պատմել գլխովը անցած պատմուտենը: Ըսավ.

—Թակավորն ապրած կենա: *Ես քու հորդ ամենահավատարիմ վազիրն էի: Առանց ընձի, ոչ հաց կուտեր, ոչ ջուր գխմեր, ոչ էլ դիվան կեներ: Մենկ իրար հետ շատ ման էկանկ: Շատ տեղ էղանկ: Շատ բան տեսանկ ու լսեծինկ: Տեսանկ, օր ոչ մի տեղ կարգ ու կանոն չի մտնմ: Մեր ըսածը, մենկ ենք լսմ: Էլի լավը լավ է, վատն էլ վատ է: Ոչ ըսելն է քյար էնմ, ոչ կարգ ու կանոնը:*

—Է՛հ,—ըսավ հերդ,—իզուր է մեր ջավայիր ղառջելը: Աշխարհը ըսման էկել է, ըսման էլ կեռտա: Բոլ է ման գանք, վազիր: Երթանք, թող իրանկ իրանց ուղղվեն:

Էկանք: Հերդ գնաց իրա տունը: Ես էլ իմ տունը: Էս պալատի մեջ մենկ ամեկս էլ տուն ունեինք: Տեղավորված էինկ: Մնածինկ ըդման: Անցավ մե վախտ՛մ: Մե օր՛մ էլ նոր քնիցս զառտնա, օր բտի ելնիմ հակնիմ: Մե ձեն՛մ ընկավ անգաջս, ըսավ. «Վազի՛ր, ես էրտմ եմ, արի՛»: Ես էլ էլա վռազ-մռազ, կիսատ-պռատ հակա, սիլայս կապի, դուս էլա: Աշեցի չորս դին՝ մառտ չկա: Որ ճամպով գնածի ման էկա, մառտ չտեսա: «Է՛,—ըսի,—էս չեղավ»: Մյուս օրը թեզ զառտնա, ելա, հակա, լվածվմ էի: Ձեն տվավ, ըսավ. «Վազի՛ր, ես գնածի, արի»: Ես դուս թռա, աշի չոռս դին մառտ, մադատ չկա: «Տե՛ր աստված, էս ինչ բան է,—ըսեցի,—յարաբ, մառտ է՞, թե՞ սատանա: Էս ինչ խաղ է խաղմ իմ հետ»: Մեկել օր, իրկվորե չքնա: Շորերս հակա, սիլայա վրես, ձին ձեռս բռնած կայնա, չուրի գալուն մոտիկ: Ձին հեծա, հազր կայնա: Մեկել տեսա էտ տապողը գալմ է:

Էկավ ըսավ.—Վազի՛ր ես գնածի, արի:

Ըսավ ու քովես էման թռավ, օր ես ըսի՝ քամի էր թռավ: Ես էլ ձին լծի, քանի օր ուժ ունեի ձին վռնտեցի: Չէի կռնմ հասցնե, անջախ իզը տեսնմ էի ու ետևեն էրտմ էի: Գնածինք, գնածինք մե ամայի չոլի՛մ մեջ, մե մենձ շենկ՛մ կար, օխտը ատաշանի, օր նա՛ տակ կար, նա՛ ծեր: Մե քիչ՛մ հեռու կայնավ, ձիուց իջավ, գնածի հասա: Ես էլ իջա, ընձի ըսավ.—Խուռջինը իջու ձիուս վրեջից, բեր հոս:

Ես իջցրի դրի վեր: Ըսավ.—Բաց:

Բացեցի: Մեջը խոշոռ մխեր էին: Ձիանը հոդ կապեց, իսկ խուռջինը տվավ իմ շալակը, գնածինկ էդ շենկի քովը:

—Թակավոր, լսմ ե՞ս:

—Լսմ եմ,—ըսավ թակավորը,—դու պատմե:

Վազիրն ըսավ.—*Ընձի ըսավ՝ մեխերը շարե էս պատի երեսը: Ելի չուրի ամենավերճի պատուհանը:*

Ես էլ, դես ման էկա, դեն ման էկա, մե քար՛մ գտա: Դրի մեխը, զարգի: Էկավ քարն ու մխը ձեռնես առավ, ըսավ.—Էդ ինչ ես էնմ, մենք բառադի տեղը չենկ էկե ըստեղ: Էկել ենկ, օր գոռծ հոկանք, դու էդ քար ու մխի չխկռտունը օր քցիր, մենք ինչ կռնանկ էնենկ:

Ըսավ ու մեխը դրավ պատի երեսին ու դրնդով մե զարգելոն՝ մեխը կիսեն հետ էրտմ էր պատի մեջը: Ըման շարելով ելավ, մինչի

վեռճի պատուհանը: Ընձի ըսավ.—Գնա՛, դու ձիանունց քովը կեծի: Մե սհատմ աշե իմ ճամպես: Մի սհատից եդև էկա՝ էկա, թե օր չէկա դու քու գլոխդ պռծըցնելուն աշե: Կեղնիս ձիանն ու կփախնիս:

Ըսավ ու ինկը մտավ պատուհանիցը նես: Նես մտավ թե չէ, մե ղժվռդուն'մ ու գոռգռուն'մ ընկավ էդ շենկի մեջը, օր մե Սոդում, Գորում: Հլը սհատը չթմմած՝ մեկ էլ տեսա՝ ելավ պատուհանից, էկավ: Մե արնոտ գլոխ'մ ձեռը բռնած՝ բերավ դրավ խուռջինի մեջը, դրավ ձիու վրեն: Ըսավ.—Դէ հեձի ձինդ, էրտանք:

Ես էլ հեձա ձին, ինկն էլ հեձավ, ընկանք ճամպա, էկանկ: Էկանք չամպու կիսից ճամպեն դառուց դիպա ուրիշ կողմով: Ընձի ըսավ.—Վազի՛ր, ես ուրման կերտամ, դու չը դժգոյես: Իմ ետևից արի:

Դուզն ըսած, ես օր տեսա էդ արնոտ գլոխը բերելը, սիրտս չդիմածավ, հա ադադորմ էի, օր զարգեի, հմը ձեռս չէր բռնմ, էդ տեսակ գամալ-ջամալի տեր ջայել-ջիվանին էլ մառտ գվնասե, օր աշմ ես տեսկին ու դեմկին, խելկդ գլխեդ էրտմ է: Ես ընձի ըսմ եմ՝ իմ ձեռս չի բռնե, էս տեսակ իգիտին սպանեմ: Հլը յավաշ տեսնինկ ըստուր վեռճը ուրտեղ գկայնի:

—Լսմ ե՞ս, թակավոր:

—Լսմ եմ,—ըսավ թակավորը,—դու ըսա ըսելիկդ:

Գնացինկ, շատ գնացինկ, հասանկ օխտը ճամպու բաժան մե տեղ'մ: Տեսա, օր մե գերեզման'մ կա, օր կսես թե իրեկ մառտ մե տեղ էին թաղե: Ընձի ըսավ.—Բա՛ց էս գերեզմանը:

Բացեցի:

—*Վերցրա՛,—ըսավ,—տախտակը:*

Վերցրեցի տախտակը, տեսա, օր էն տեսակ մե երիտասարդ'մ է պարկած, օր դու կսեիր աշխարկը էս մեկն է էղե: Օր կիսամուրազ ըստեղ պարկած է: Էն տեսակ, օր ջիվան էր: Ըդուր աննման տեսկից ես ընձի կործրեձի: Ըսի՝ էդ ի՞նչ տեսակ անխիղճ մառտ է էղե, օր էս տեսակ թառլանին ղմշել է դիպնել: Ես իմ մտկին տարված, դու մի տես էն ջայել մառտու ուշկն էլ ընդեղ է գնածե: Մեկ էլ աշեձի, օր փռված է հողի վրեն: Ձեն տվի, ձեն տվի, օյամիշ չեղավ: Դես, դեն ընկա նառվուզ[81] *գտա, բերի դեմ էրի քթին: Նառվուզի ոտը զատի անմահական է: Ոտն օր առավ թե չէ, զարտնավ ու աշկերեն թապեց: Ես զարմանկից տեղս քար էի դառցե: Չիդեի, թե ի՞նչ է-նեի: Յարաբ ըսմ էի, ըստոնկ իրար ախպեր ե՞ն, թե՞ ընկերներ են: Ի՞նչ են իրար: Մեկ էլ, էս մառտը շատ լալուց ետև սիրտը իջավ: Տեղից էլավ, ընձի ըսավ.—Տեսնմ ե՞ս, էս ջայել ջիվանին:*

Ըսի.—Տեսնմ եմ:

Օր ըսի՝ տեսնմ եմ, էդ մառտը վրայի շորերը հանեց, գլոխը բաժեց: Օսկեթել մազերն փռեց թիկունկին՝ մե հուրնի հրեղեն, մե հուրի մալաք, մե դրախտային հրեշտակ: Մե խոսկով, լիզվով ըսել ու պատմել չի էղնի ըդուր գամալ-ջամալը: Ըսավ.—Էդիկ իմ նշանածն է, էս գլոխն էլ իմ մենձ ախպորս գլոխն է: Իրանկ սպանին իմ նշանածին, թողեցին անմուրազ: Ես էլ պտտեցի, ընչուրի ոխերս հանեցի: Հիմի առ էս ղամեն, զարգ իմ սիրտս: Ընձ էլ դու սպանե: Դիր ըստուր կոխքի հետ: Էս գլոխն էլ դիր մեր ոտների տակը ու դու ուր կերտաս, գնա:

—*Չէ՛, -ըսի,—ես էդման բան չեմ էնե: Դու ընձի ի՞նչ ես էրե, օր ես քեզի սպանեմ:*

—*Է,—ըսավ,—դու չսպանես, ես կսպանեմ, մեկ է, ըստից եդև ընձի հմար կյանկ չկա: Արևս խավար է, օրս մուտն է: Էսի պարկի սև հողի տակ, ես ման գամ կարմիր արևի տա՞կ: Ի՞նչ տեսակ խիղճ ու թասիպ, իմ խիղճ ու թասիպը, Աստված էլ ղաբուլ չի էնե:*

Ըսավ ու ղամեն թառսլամա զարգեց հողի մեջն: Ես ուզեծա, օր ղամեն հանեի, իրան ազատեի, ըսավ.—Վազի՛ր, մի՛ էնե, քեզ էլ գսպանեմ:

—Լսմ ե՞ս, թակավոր:

—Լսմ եմ,—ըսավ թակավորը:

Էդ դույնա գոզալ հառսը, գնաց, էկավ թափով ընկավ ղամի վրեն: Ղամեն դոշից մտավ, թիկունքից դուս էկավ, ոչ տվավ, ոչ առավ էնկանը ըսավ, օր ըսավ.—Վազի՛ր, մեզի իրար միացրե:

Ես էլ էնքան լացա, օր չէի լացե իմ հարազատ քուրոջ վրեն: Լածա, սիրտս իջավ, վերցրի էդ բարի հառսի մեյիդը, դրեցի մառտու կողքին՝ քիպ: Մառտի ձեռը քցի կնկա վզովը, կնկա ձեռը քցի մառտու վզովը: Ախպոր գլոխն էլ դրի ջխտի ոտների տակը, նորից գերեզման շինի: Հեձա ձին, էկա տուն:

---

[81] Նառվուզ (նավրոս) – շուշանազգիների խոտաբույս, վայրի քրքում (ծանոթ.կազմողների):

Հիմ, թակավորն ապրած կենա, էնի էդ տեսակ կնիկ էր, էդ էլ էդ տեսակ կնիկ է: Դու ընչի՞ ես թացն էլ չորի հետ վառմ, աշխարկը մարմ: Առանց օղլուշաղ, կամ առանց տղամառտ չի յոլա էրտա: Դու մե անիծածի՛մ հմար մեղ ու անմեղ սուրը մի քաշե, վիրև ասուն աշե, ներքև քու ժողովուռտին բաշխե: Քու պատվի, քու աննի հմար էլ լավ չէ:

Վազիրի էսկան ըսել-խոսալը, թակավորին կամքի բերավ: Թակավորը դառծ էկավ, փոխեց հրամանը ըսավ.—Վազի՛ր, ես ետ եմ առնմ որոշումս, ես քեզի եմ բաշխմ, օր դու հոգս տարար, էկար դուռս, օրինակ բերեցիր, ես քու խատերը չեղյալ չեմ համարե: Դրուստ է, օր աշխարը ամեն տեսակ մառտիկ կան: Չի էղնի, օր ամեկին մե կապով խեխտել:

Ըսավ թակավորը ու շնորհակալ էղավ վազիրից, օր վազիրը փրկեց իրան, էդքան ժողովուրռտը, համ էլ պատիվը, օր աշխարով մեկ ամոթանք բտի կրեր: Կսեին՝ թակավորը մե կնգա՛մ էրեսե, սաղ աշխարկը մարեց: Վազիրը տեսավ, օր թակավորը իրան սխալը ուղղեց, իրանից էլ գոյ եղավ, ինկը արխեին եղավ, թակավորին ըսավ.—Թակավորն ապրած կենա, մեծանած խոսկ է, ըսմ է «Ելնի սիրտ, կտռե գլոխ, իջնի սիրտ, չի գտնի գլոխ»: Քու հեռսդ էլել էր, սաղ աշխարքը բտի կտռեիր, օր հեռսդ իջներ, էլ ձեռդ չէր ընկնի ժողովուռտդ:

—Հա՛,—ըսավ թակավորը,—դե ես էլ մեղավոր չեմ: Անխիղճ գոռծ էր էտի,—ըսավ թակավորը:

Նորից գոյ մնաց թակավորը: Ըդից եդև, թակավորը ինչ գործ օր էնելու էր էղնմ, առաջ հառցնմ էր վազիրին, նոր վազիրի խորուրտովը գոռծ էր էնմ:

74(74). ՅԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԳԱՂՏՆԻՔՆ ՅԻՐԱՆ ՄՈՏ ԲԸԴԻ ՄԸՆԱ

Մե հատ տըղա դուս գուգա յիրան բախտը փընտրելու: Կէրթա, կէրթա, ք՚ասնի մե մեծ ճամփի՛մ: Ճամփու մեջտեղը մե ծերացած մարդըմ կեղնի նըստած: Էս մարդուն կը խնդրե, օր յիրան խորուրդ տա:

Էս ծերացած մարդը կըսե.—Գիշերը օր ճամփա կէրթաս, հընկերով ես, թե՝ մենակ, ջուրը չանցնիս: Մե տեղըմ օր ղոնախ կէրթաս, հուրիշի ընտանիքի գործին չը խառնըվիս: Ժամերի զանգ օր լըսիր, ինչ ունիս-չունիս թափե ու գիշերը առաջ մի՛ էրթա, էդտեղ էլ քընի: Քու գաղտնիքըդ քու մեջ պայե,—կըսե,—դե գնա՛, տըղա, խորուրդներըս լսեցի՛ր... օգուտ կունենաս:

Էս տըղեն շնորակալ կեղնի, մընաս բարով կըսե բիձին ու յիրան ճամփեն կը շարունակե: Կէրթա, կէրթա, ճամփին մե տըղի՛մ ռաստ գուգա, հարցուփորձ կէնե: Էդ տըղեն էլ կէրթա բախտ որոնելու, կըսե.—Մեկ չեղնինք, էրկուս էղնինք:

Յիրար հետ կէրթան շատ, թե քիչ, կը հասնին մեծ գետի՛մ, մութն էլ գընգնի՛:

Էս տըղեն կըսե.—Արի լոտկեն նըստինք, գետը անցնինք:

Մեկելը կըսե.—Չէ, ընձի խելք են խրատ տըվե:

Էսիկ լոտկեն կը նստի, կանցնի: Առավոտ լուսը կը բացվի, խաբար գուգա, օր էդ մե տըղեն խեղդըվել է:

Տըղեն ճամբեն կը շարունակե, կէրթա մե տունըմ ղոնախ կեղնի:

Տանտերը կըսե.—Խընդրեմ, յաչքիս վըրա, օրըմ չէ, տաս օր մընա, ղոնախն աստըծունն է:

Նես կը մընտնի հայաթ, տեսնի, օր կընիկը կապած է շան բունը, շունն էլ տունն է:

Էդ մարդուն պատիվ կէնե, գիշերը կը քընըցնե, առավոտ ճամփու կը դնե, կըսե.—Տըղա, էդ հընչի՞ դու չը հարցըրիր, թե հընչի էր իմ կընիկըս շան տեղը կապած, շունը տունն էր:

Տըղեն կըսե,—Էդիկ ձեր ընտանիքի գաղտնիքն է, ընձի ինչ:

Էսիկ կէրթա, ճամփին ռաստ գուգա մե հարուստ վաճառականի՛մ: Վաճառականը տըղին կըսե.—Արի կեղնի, դու ծառայության մընտի մոտըս՝ էրկու տարով: Էրկու տարուց հետո քեզի էրկու տոպրակ օսկի կուտամ:

Տըղեն ք՚ամաձայնվի: Էսոնք կէրթան, շատ առուտուր կէնեն, էրկու տարին կը թըմմի, յետ կը դառնան, էսոնց հետ էլ շա՛տ ուրիշ վաճառականներ կեղնին: Գուգան ք՚ասնին մե քաղքի՛մ մոտ, մեկ է քաղքի զանգերը կուտան: Քաղքին մընտնելուն մնացել է չորս վերստ ճամփա: Ժամի զանգերի ձենը լըսելու պես՝ տըղեն կը կայնի, կըսե.—Ես տեղից ժաժ գալողը չեմ, գուզե՞ք դուք գնացեք:

Մեկել վաճառականները կը ծիծաղան, կըսեն.—Դու է՞լ ջայելի խելքին բըդի լըսես:

Էս վաճառականը կըսե.—Էս տըղեն էրկու տարի է քովըս կը ծառայե, շատ խելքով տըղա է, մե բանըմ գիտի, օր չի գա:

Էսոնք կը մնան, իրանց բեռը կը թափին ու գիշերը էդտեղ էլ կը քընին:

Յառավոտ խաբար գուգա, օր էս վաճառականները մըտել են քաղաք, ու հարամինեը էդոնց թալնել են: Ինչ օր ա, տըղեն յիրան վարձը կըստանա, մե մեծ քաղքի՛մ մեջ տուն կը շինի, կամուսնանա:

Կանցնին տարիներ, հանկարծ կը հիշե յիրեն խելք-խըրատ տըվող բիձու չորորդ խելքը՞... Կըսե. «Կեցի, էդ մեկն էլ փորձեմ, գոռ ու ջայլամ»:

Էդ օրը կընկա հետ կը վիճե, քանի՛մ ամանչաման կը ջարդե: Էսպես էրկու օր վեճի մեջ կեղնին, երորդ օրը շորերը կը պատըռտե, ձեռները գ՚յարնոտե գուգա տուն:

Կընիկը կըսե.—Էդ ի՞նչ էրե:

Մարդը թե.—Մեկի՛մ ըսպանել եմ, ըստեղ մոտիկ ծառի՛մ տակ էլ հորել, էնպես էրա՝ մարդ չիմանա:

Կընկա ջանին մուննաթ, թաթարի կը վազե թագավորի քովը, թե.—Մարդըս էսպես-էսպես հանցանք է կատարե:

Թագավորը մարդ կուղարկե, կըստուգեն, հաստատ օր ծառի տակ գերեզման կա: Փորե՞ն, փորեն, մե յաշիկըմ դուս գուկա: Կէրթան թագավորին զեկուցեն, օր կընկա ըսածը ճիշտ է, օր էս մարդուն բըդի գնդակահարեն:

Թագավորը կըսե.—Գնացեք էդ յաշիկը բացեք, լավ ըստուգեք, հետո:

Գուգան յաշիկը բանան, տեսնին, օր մե օչխարըմ, լավ խորոված, դըրել է յաշիկի մեջը: Թագավորը էս տըղին կը կանչե յիրան մոտ, հարց կուտա, թե էդ ինչ խաղ է խաղցե:

Տըղեն կըսե.—Թագավորն ապրած կենա, ես իմ կընկան եմ փորձե, մեկ է ընձի խելք-խըրատ տըվողի խորուրդը: Հըմի նոր համոզվա, օր ամեն մարդ յիրան գաղտնիքը յիրան մեջ բըդի պայե:

Թագավորը կըսե.—Ապրիս, էդպես էլ յամեն պետություն յիրան գաղտնիքը յիրան մեջ բըդի պայե:

75(75). ՀՈՐԻ ԲԵՐԱՆԸ ԲԱՑՎԵ՝ ԿԸՆԻԿՍ ԴՈՒՍ Է ԷԿԵ

Մե մարդու՚մ կընիկը շատ լիրբ կեղնի, մարդու հոգին կերել էր: Ձըմըռնոցով կըսեր՝ գնա՛ վար էրա, օր ինչ է, տունը ազտվի, յինքը լրբություն էնե, տունը սիրող պայե: Էդ մարդու իլլաջը կը կըտրի, կէրթա վար էնելու: Բախտի բերմամբ վար էնելու վախտը սալըմ ըռաստ գուգա: Բանա, օր... հոր է մեջը: Կըսե. «Էս լավ էղա՛վ»: Կեսօրին թողնի վարը, տուն գուգա:

Կընիկը գելնի տեսնի, օր մարդը էկել է էսքան շուտ, կըսկըսե քըրվել, մազերը քաշել, պոկըռտել.—Ումուտդ մեռնի՞, հոտդ կըտըռվի,—կըսե,—էս վախտ էլ չըթվորը տո՞ւն գա:

Մարդը կըսե.—Սուս կեցի, հարևան բան չիմանան, քելե նես, քեզի բան բըդի ըսեմ:

Կընիկը մարդուն բոթոլեն բերե տուն կը քըցե, կըսե.—Ըսա՛, ի՞նչ է էղե:

Կըսե.—Կընիկ, մեշոկը հազըրե, օսկու հոր եմ գըտե, շուտ էրա՛, մեշոկ տո՛ւր, էրթամ բերեմ:

Կընիկը մե հատըմ մարդու գըլխուն կը դըմբըստե, թե.—Գյարդանըդ խուրդ էղնի, դու անբաշար ես, քիչ կը լըցնես, ես է գուգամ:

Կըսե.—Օր գուզես, քելե էրթանք:

Կընիկը մեշոկը կառնի, գընգնի մարդու յետևից՝ վազելով կէրթա:

Կը հասնին, հորի բերանը կը բանա, կընիկը չի թողնի մարդուն մըտնելու: Կըսե.—Յավաշ, ես մըտնիմ, դու անգյալ ես, քիչ կը լցնես:

Մարդը կուրախանա, մըտքի մեջ կըսե. «Քոռն ինչ գուզեր՝ ջուխտըմ աչք»:

Կըսե.—Մըտի՛, կընիկ ջան, ինչքան օր կըրաս, լի՛ց, ես կը քաշեմ, գուզես՝ ջեբ ու ծոցըդ էլ լից:

Կընկան կը կախե հորը, սալը կը քըցե հորի բերնին, թողնի գուգա:

Քանի՚մ օր հետո էլի կէրթա վար էնելու, գ՚իշե, կըսե. «Էրթամ սալը վերցընեմ, տեսնիմ՝ ինչ էղավ»:

Մոտենա հորի բերնին, տեսնի, օր ի՞նչ... ինչ ջանավարի ձեն ըսես, օր չի գա, է՛լ շան, է՛լ գիլու, օձի՛, գորտի՛, հուշաբի... Սալը կը վերցնե, մե հուշաբըմ դուս կը թըռնի հորի միջեն: Հուշաբն օր դուս կը թռնի, էս մարդը վախենալուց սալը էլի կը քըցե հորի բերնին, օր մեկելները դուս չգան:

Էս յուշաբը լիզու գելնի, կըսե.—Գեղացի ջան, էդ լավությունն օր դու ընձի էրիր, ես էլ քեզի լավություն կէնեմ, օր ընձի ազատեցիր էդ լիրբ կընկա ձեռեն:—Յուշաբը կըսե.—Ես կէրթամ կը փաթըթվիմ թագավորի աղջըկա մեջքին, դու գուգաս կըսես՝ ազատե, ես կազատեմ:

Էդպես էլ կէնե:

Թագավորը յերկըրով մեկ հայտարարություն կուտա, թե.—Վով կըռնա աղջըկաս հուշաբի ձեռեն ազատե, էսքան, էսքան օսկի...

Էս մարդը գելնի կէրթա, թագավորը կըսե.—Եթե չազատեցիր, գըլուխըդ կը կըտրեմ, թե ազատեցիր, կըշեռքի մե թաթը քեզի կը դընեմ, մեկելը՝ օսկի, քեզի հալալ է:

Կըսե.—Շատ լավ:

Էս տըղին կը տանին թագավորի աղջկա սենյակը, նես կէրթա, դուռը հըլը կիսաբաց չի էնե, հուշաբը փաթըված տեղեն կազատվի, գելնի կը փախնի: Խաբարը կը տանին թագավորին, օր աղջիկը ազատվել է:

Թագավորը կը բերե, լավ պատիվ կէնե էդ մարդուն, դընե կը կըշեռքը, էս մարդու կըշըռնոցով մեկ օսկի կուտա, բանըմ էլ ծանդըռ: Կըսե.—Քանի՞մ հատ էլ թող յավել էղնի:

Վախտըմ կանցնի, հուշաբը կէրթա կը փաթըթվի արևմտյան թագավորի տըղի մեջքը: Էս թագավորը յավելի շատ հարուստ կեղնի: Էս թագավորը խաբար կէնե արևելքի թագավորին, կըսե.—Էն մարդը՝ էն բժիշկը, օր քու աղջըկան ազատել է, կը ղրկես գա, իմ տըղին ազատե: Ղըկի՛ր՝ ղըրկի՛ր, չը ղըրկիր՝ պատերազմ կը հայտարարեմ, էղած-չեղածըդ քամուն կուտամ, կը վառեմ:

Արևմտյան թագավորը[82] էս հեռագիրն օր կըստանա, ղուդումը կը կոտրի: Կանչե յիրան նազիր-վեզիրին, ինչքան օր քաղաք կա, գեղ կա, կըսե.—Ծակուծուկ ման էկեք, գըտեք էդ մարդուն, բերեք, օր էրթա արևմտյան թագավորի տըղին փըրկի: Գտա՞ք՝ գըտա՞ք... չըգըտաք՝ գըլուխներըդ կըտռեմ դընեմ յետևներըդ:

Կէրթան սա՞ղ երկիրը ման գուգան, էդ մարդուն գըտնին, կը բերին:

Թագավորը կըսե.—Բախտըդ հընգնիմ, իլլըջին աշե, քեզի մե խընդրանքըմ կա, գընա՛ էդ թագավորի տըղին ազատե, թե չազատեցիր, իմ ամբողջ ժողովուրդը, քեզ էլ հետը կը վառյե.

Բերե էս մարդուն բոլըմ օսկի կուտա, դավուլ-զուռնով ճամփու կը դընե:

Ճամփեն տըղեն կը մըտածե, կըսե. «Հուշաբն ընձի բան չի ըսե, էրթամ ի՞նչ էնեմ»:

Էս արսըս թագավորը կանչե կըսե.—Տըղա, բըդի ազատես... ազատեցի՞ր ախչիկըս կուտամ, թագավորությանս գանձերի կեսը: Չազատեցի՞ր... գըլուխըդ կը զարկեմ...

Էս խեղճ մարդը մըտածե, կէրթա թագավորի տըղի սենյակը:

Նես օր կը մըտնի, հուշաբը կըսե.—Հընչի՞ էկար...

Կըսե.—Ի սեր ասսո՛ւ, հորի բերանը բացվել է, կընիկս է էկե:

Հուշաբը հըմը թողնի ու կը փախնի[83]:

76(76). ՋԱՎՈՆ ԷԿԱՎ

Մե մարդըմ կընիկ կունենա, անունը Ջավո կեղնի: Էս կընիկը շատ լիրբ կեղնի: Էս մարդը գուզե էդ լիրբ կընկանից ազատվի: Կէրթա դաշտ, ման գուգա, ջրհորըմ կը տեսնի: Գուգա տուն մըտքի մեջ կըսե. «Ես իմա՞լ էնիմ, օր էս լիրբ կընկա ձեռից ազատվիմ»:

Կընկան կըսե.—Արի էրթանք պըտըտվինք:

Բերե դաշտ, միամըտցու... ու կընկան թալե հոր, սալ լե դընե հորու բերնին, գիգա ուր տուն:

Օխտը օրից հետո կէրթա տեսնի՝ կընիկն ինչ էղա՞վ, ինչ չեղավ, մեռա՞վ, թե՞ սաղ է...

Սալն օր կը վերցու, օձ գելնա հորու միջից, կըսե.—Ախպեր ջան, ըստեղ օխտ օր առաջ կընիկըմ բերին թալին, իմ հոգին կերավ, սալն օր հանեցիր, ես ազատվա: Գուզեմ քեզի մե լա՞վ լավություն էնեմ, ես կէրթամ մըտնիմ թագավորի աղջկա փոր, դու գիգաս, ես գելնամ կէրթամ:

Քանի՞մ օր յետո թագավորն հայտարարություն կուտա. «Աղջըկաս փորն օձն է մըտե, վով կըռնա ազատե, էսքան, էսքան օսկի կուտամ»:

Էս մարդը գելնի կէրթա, նես կը մըտնի, օձը թագավորի աղջկա փորեն դուս գուգա: Կը-

[82] Բանասացը արևելքը և արևմուտքը խառնել է (ծանոթ, կազմողների):

[83] Իսկական գուզեք յիմանաք, էս հեքիաթը էս տեսակ է, յամենքը մե ֆասոնի՛մ կը պատմեն: Ես էսիկ լըսել եմ մեր մենձերից, հըլը օր չէյնք գաղթե (ծանոթ. բանասաց Կ. Մխիթարյանի):

սե.—Ախպեր ջան, դու ընձի ջրհորի լիրբ կընկանից՝ Ջավոյից ազատեցիր, ես էլ քեզի լավություն էրեցի, հըմի՝ քըվիտ...

Թագավորն յիրան աղջկան կուտա էդ տըղին: Վախտըմ կանցնի, օձը կէրթա կը մըտնի մե ուրիշ թագավորի աղջկա փոր:

Էսոնք էս թագավորին խաբար կէնեն, թե.—Ձեր փեսին ըսեք գա, մեր թագավորի աղջկա փորից օձը հանե:

Տըղին շատ օր կըստիպեն, գելնի կէրթա: Կէրթա նես կը մըտնի, օձն օր էս տըղին կը տեսնի, կըսե,—Տըղա, ես քեզի չըսի՞՝ քըվիտ, չըսի՞, օր էլ չգաս, հորի՞ էկար:

Էդ տըղեն լե կըսե.—Օձ, էկա քըզի ըսիմ՝ փախի՞, Ջավոն էկավ...

77(77). ԿԸՆԻԿՍ ՋՐՀՈՐԵՆ ԴՈՒՍ Է ԷԿԵ

Մե մարդըմ լաչառ կընիկ կունենա, էսոր հեչ օր ու յարև չի տա: Մարդը կը մտածե՝ ի՞նչ էնե, օր էս կընկա ձեռեն կերպըմ ազատվի: Շատ կը մըտածե, կըսե. «Էսոր բըդի կորցընեմ»:

Գիշերը կընկան կըսե.—Կընիկ, արի մեզի հըմար քանի՛մ օրվա պաշար վերցընենք, դուս գանք գեղից, էրթանք դա՛շտ, անտառ ման գանք, յէրկիր տեսնինք, դառնանք գանք:

Կընիկը կըսե.—Լավ, վո՞վ էդպես բանի դեմ կէղնի:

Մարդ ու կընիկ էրկու օրվա պաշար կը վերցընեն, դուս գուգան գեղից, հա՛ կը հեռենան, հա՛ կէրթան, կէրթան: Կէրթա՛ն կը հասնին մե ամայի դաշտըմ: Լա՛վ ծառավ կեղնին, չորս դին ման գուգան, ջըրի կըտոր չեն գըտնի:

Կընիկը մարդուն կըսե.—Դու նըստի՛, ես էրթամ ջուր ման գամ:

Կընիկը կէրթա, մարդը կըսե. «Էս ի՞նչ լավ էղավ, էրթալն էղնի, գալը չեղնի»:

Մեկ էլ էն թարֆեն կընիկը կը ճըվա.—Մա՛րդ, արի՛, շուտ էրա, ջըրի հոր եմ գըտե:

Մարդը գելնի կէրթա, տեսնի, օր հաստատ մե ջըրհորըմ, մե ղոջա ծանդըր ղափաղ՚մ էլ վըրեն դըրած: Մարդը մե կերպըմ ղափաղը վըրից կը վերցնե, տեսնին, օր մե խորունկ ջրհոր: Հըմի թոկ չըկա, վեդռո չըկա, օր կախեն ջուր քաշեն:

Մարդը կըսե.—Կընիկ, արի՛ մեր շորերը հանենք, յիրար կապենք, ես քեզի իջեցընեմ ջըրհորը, դու ջուր կը խըմես, թասով ջուր էլ ընձի համար կը վերցնես, ես քեզի քաշեմ, դուս հանեմ, թե չէ, ես օր իջնիմ, դու էդքան ուժ չես ունենա՝ ընձի հանես:

Կընիկը կըսե. Լավ, օր էդպես է, ընձի կախե:

Կընկան կը կախե, մե լա՛վըմ ջուր կը խըմե, թասով ջուր էլ կը վերցնե, ջըրհորեն ձեն կուտա.—Մարդ, դե վեր քաշե:

Մարդ, դու մա՛րդ, բերե էս ծանդըռ ղափաղը հորի բերանը կը դընե, կըսե. «Օ՜ֆ, ես պըրծա՛մ էդ լաչառ կընկա ձեռե՛ն, թող հագիս շապիկը շալ էղնի, ըստից յետև թոփն էլ ընձի քյար չի էնե[84]...»:

Գուգա տուն: Վախտըմ կանցնի, կը փոշմընի, կըսե, «Վերջապես, էդիկ լավ, թե վատ, իմ կընիկն է էղե, հըլը էրթամ հանդիպիմ, կա՛, չըկա՛... թե մեռած է, քաշե՛մ հանեմ, բերեմ գերեզման էնեմ...»:

Կէրթա, ջըրհորի բերանը կը բանա, մեկ է ի՞նչ... բոլուկով սատանեքը դուս գուգան ու էս մարդուն կալմեջ կէնե՛ն... էս մարդը մո՛ղըրի, կը մընա՛:

Սատանեքից մեկը կըսե.—Դու օր մեզի էս նեղ տեղից ազատեցիր, քու լավությունը չենք մոռնա, հուզե՛, հուզածըդ տանք:

Էս մարդու լիզուն վախենալուց կապ է հընկյե.

—Գուզե՛ս լավ տուն-տեղ, հարստություն ունենաս,—կը հարցնե էս սատանեքի մեծը:

Էս մարդը կըմկըմալով կըսե.—Հա, վո՞վ չի ուզե:

—Օր էդպես է,—կըսե սատանեն,—ես կէրթամ կը մըտնիմ թագավորի աղջըկա փորը, թագավորի աղջիկը ծա՛նդըռ կը հիվընդնա, կը պարկի, թագավորը յիրան տերության մեջ ի՞նչ բըժիշկ օր կա, կը կանչե, հեչ մեկը աղջըկա ցավը չի հասկընա... դու գուգաս թագավորին կըսես, նես գուգաս, դըռները փակես, կըսես. «Սատանա՛, դուս արի աղջկա փորեն»: Ես դուս գուգամ, աղջիկը կը լավնա, թագավորն էլ քեզի ի՞նչ ուզես, կուտա: Հըմը, լա՛վ իմացի՞, էդիկ կեղնի յառաջինն ու վերջինը, հուրիշ տեղ օր քեզի

[84] Վնաս չի տա (ծանոթ. բանահավաք Հ. Մկրտչյանի):

կանչեցին, չէրթաս, էդ անգամ կը տուժես: Թե բան է՝ էս պայմանը չը կատարեցիր, էս անգամ ում փորն օր մըտած էղնիմ, գելնիմ կը մըտնիմ քու փո՛րը:

Էսպես յիրար հետ պայման կը կապեն: Սատանեն կէրթա կը մըտնի թագավորի աղջկա փորը, աղջիկը, մե ձենը՝ յէրկինք, մեկը՝ գետին, կը ճըվա.—Մեռա՛, հա մեռա՛...

Թագավորը յիմաց գուտա յէրկրի բըժիշկներուն, գիտնականներուն,,, գուգան թափվին էս դին, էն դին... ի՞նչ կէնեն, փըրկություն չըկա:

Կըսեն.—Թագավորն ապրած կենա, մենք էսպես հիվընդություն հըլը չենք տեսե՛, չենք յիմացի... աղջըկադ փըրկություն չըկա՛...

Նես կը մըտնի էս մարդը.—Թագավոր ապրած կենա,—կըսե,—ես քու աղջըկադ լավցընեմ:

Նես կը մըտնի աղջկա սենյակը, սաղին դուս կէնե, դուռը կը փակե, կըսե.—Սատանա՛, դուս արի՛ աղջըկա փորեն:

Սատսանեն դուս գուգա, աղջիկը տեղն ու տեղը կը լավնա, գելնի նըստի տեղը:

Քեֆ, ուրախությո՛ւն, թագավորը էս մարդուն էլ տո՛ւն, հարստություն, օսկի, արծաթ, ոտից գըլուխ կը լիացնե: Յիրան պալատի կողքին էլ տուն կուտա, էսպես լի ու բոլ կապրի, պատվով, հարգանքով:

Վախտըմ կանցնի, հարևան երկրի թագավորի աղջիկը ծանդըռ կը հիվանդընա, էլի աշխըրի գիտունները կը թափին, հեչ իլլաջ չի էղնի...

Կըսեն.—Էսիկ էնպես հիվանդություն է, օր մենակ էսինչ յերկրի բըժիշկը կը հասկընա:

Թագավորը մարդ կը ղրկե էս հարևան յերկիրը, կըսե.—Ինչ գընով էլ էղնի, թագավորությունս էլ յիրան կուտամ, մենակ բերե՛ք, թող աղջըկաս փըրկե:

Գուգան էս մարդուն խընդրեն, կաղաչեն, ոտները գընգնին, էս մարդը.—Չէ՛, օր չէ,—կըսե,—չեմ կըռնա գա:

Կէրթան-գուկան, էս փըրկված աղջկա թագավոր հերն էլ գուգա, կըսե.—Ես կը խնդրեմ, օր էրթաս:

Ստիպված գելնի կէրթա՛...

Կէրթա, հըմը սաղ ճամփեն կը հիշե սատանի դըրած պայմանը...

Կէրթա նես կը մըտնի էս հիվանդ աղջըկա քովը, սաղին դուս կէնե, կըսե.—Սատանա, դուս արի աղջըկա փորեն:

Սատանեն կըսե.—Հիշե մեր պայմանը, դուս գուգամ, կը մըտնիմ քու փորը...

Էս մարդը քիչըմ կը մըտածե, կըսե.—Դու գիտես, գուզես՝ մըտի՛, հըմը լավ իմացի, օր կընիկս դուս է էկե ջըրհորի՞ց...

Սատանեն էս օր գիմանա, ափալ-թափալ դուս գուգա աղջըկա փորեն, թե էրկու ոտ ունե՞ր, մե քըսանն էլ փոխ կառնի ու պուկ... կը փախնի:

Հըմի դու էկել ես, կըսես թե՝ չէ՞... տեսա՞ր օր կընիկը սատանից քանի՞մ օր առաջ է ծընվե, սատանեն բիլա կընկանից կը վախենա:

78(78). ԱՆՍԿԱՄ ԿՆԻԿ

Մե մարդ ու կնիկ՞մ կեղնին: Կունենան հինգ էրեխա. չորս աղջիկ ու մե տղե՞մ: Տղեն ինը տարեկան է, աղջիկները պզդիկ են: Կնիկը մեռնի կը: Էս մարդը մոլրի մնա կը: Կէրթա յարտը կաշխատի, յիրիկունը գուքա տուն շվարածի պես նստի կը:

Մե մարդ՞մ էլ կեղնի յուրիշ գեղից, կունենա մե կնիկ՞մ: Կնիկը շատ սիրուն կեղնի հըմը շատ անսկամ, անսկամների թագավորը կեղնի:

Մարդը մտածե կը. «Ինչխ էնեմ, որ էդոր գլոխը կորցնեմ, ազատվիմ»:

Կնիկը թեթևենց թարաֆը կեղնի, այսինքն՝ թեթևսոլիկ կեղնի: Մե օր՞մ մարդը գելնի կնկան կըսե.—Մե քանի՞մ հատ հաց թխե, որ ես քեզի քաղաք պիտի տանիմ, լավ շորեր պիտի առնիմ քեզի:

Կնիկը հացը թխե կը: Մարդը գելնի յառավոտը կանուխ, չորս հատ հաց կը վերցնե, կնկան կառնի կէրթա: Հասնին կը մե մեծ ձորի՞մ քով, սարի քալին մե մեծ ծառ՞մ կեղնի, կնկան կըսե.—Արի՛ նստի, քիչմ հաց ուտենք, հանգստանանք նոր էրթանք քաղաք:

Հացը որ կուտեն պրծնին կը, մարդը սուտ քնել կէնե: Կնիկը գլոխը դնե կը քարին, քնի կը ճիշտ: Մարդը տեսնի կը որ կնիկը քնավ, գելնի բոթե կը կնկան, քցե կը ձորը: Ինքը գելնի ու կը փախնի: Կնիկը քնդլ-մնդլ կէրթա յարնլվիկ յառվի պռկի հետ գընկնի՝ ուշքը անցած: Էն կողմից էրկու մարդ խորաթա էնելով քաղքեն գուկան

կէրթան գեղ: Տեսնին կը, որ մարդը մեկի՛մ բոթեց քցեց ձորը:

Յընկերոչ մեկը մեկելին կըսե.—Էրթանք տեսնինք սաղ է, մեռած է, մարդը յընչի՞ համար բոթեց քցեց ձորը:

Էրկուսն էլ գուքան ջրի ղրաղը տեսնին կը կնիկը ուշքը անցած յարնլվիկ յառվի բերանը յընկած: Քաշեն կը յառվին մոտիկ, յարաները կը լվան, ջուր կը լցնեն յերեսին, կնիկը արմիշ կեղնի, հարցնեն կը.—Յընչի՞ մարդը քեզի էդպես էրավ:

Կնիկը խաբե կը ու կըսե.—Չբեր էի, երեխա չունեի, էդոր համար [մարդս] յընձի էդպես էրավ:

Գալողներից մեկը եղել է հինգ երեխանց հերը, կնկան կըսե.—Հեչ մի մտածե, ես քեզի կտանիմ մեր տուն, հմը ես հինգ էրեխա ունիմ, կուզե՞ս ընձի կնիկ էղնիս:

—Ես սրտով գուզեմ, գուքամ,—կըսե կնիկը:

Գելնին կառնին կնկան գուքան գեղ: Սաղ գեղացիկ զարմանան կը, թե էդ սիրուն կնիկը ո՞րտեղից բերեց: Կնկան որ տուն կը բերե մարդու բարեկամները հավաքվին կը, որ հինգ էրեխին մեր է բերե: Նստին կուտեն-խմեն գելնին կէրթան:

Մարդը յառավոտը փոցխը ումուզին կը դնե, տնեն դուս գուքա, կնկան կըսե.—Էրեխոցը լավ աշե:

Շատ օր չէ՝ հինգ օր էրեխոցը լավ կաշե: Հինգ օրից յետև՝ թնդիրը կը վառե, լավ ճաշ կեփե, թնդիրը վառե գիչնի՝ հաց կը թխե, որ հացը թխե պրծնի կը (էդ հինգ էրեխեն թնդրի բոլորը անոթի նստած են), խսիլը փռե կը գետնին, էրեխոցը բերե անոթի պառկեցնե կը խսլի վրեն, մազե կարպետն էլ քաշե կը վրեքը: Էնոնք անոթի սկրտան կը, գուլան կը, ինքը կուշտ կուռ կուտե, գելնի կայնե կը: Ութը օր էրեխանցը էդ դրության պահե կը:

Մարդը կալեն յիրկունը տուն գուկա տեսնե կը, որ էրեխեքը անոթի են, կծկված նստած են: Կանցնի կը չորս-հինգ օր: Մարդը կանչե կը ինը տարեկան տղին, տանի կը կալը, հարցնե կը.—Ես որ յարդը կէրթամ, մերդ ձեզի ապուր կուտա՞մ, հաց կուտա՞մ:

Տղեն կըսե թե.—Դու որ կէրթաս յարտը, մերս թնդիրը վառե կը, ապուր կէփե, հացը կը թխե, յիրա համար ճաշ կէփե [կուտե], մեզի ծեծե լցնե կը խսիլի վրա, կարպետն էլ քաշե կը վրեքս, որ մեր ձենը չելնի:

—Որ էդպես է,—կըսե մարդը տղին,—կէրթաս տուն, մարդու բան չըսես, թե ես ամուս բան ըսի:

Տունը կնիկը հարցնե կը.—Ամիդ որ քեզ տարավ կալը, ի՞նչ ըսավ:

—Հեչ, բան չըսավ, մենակ ըսավ, որ մորդ յականջ էրեք:

Յէքսի յառավոտը մարդը փոցխը դրեց յարտը, գառմշտի չիբուխը առավ ձեռը էկավ գեղ, գողտուց յելավ յերթիկը պառկավ, տեսավ, որ կնիկը թնդիրը վառե, յիջեցրե, հացը թխե վերջացրել է, յիրա համար լավ ճաշ է էփե, որ պիտի ուտե: Ուտելուց յառաջ էրեխանցը լցել է խսիլի վրա, մազե կարպետը քաշել է վրեքը, էրեխեքը կարպետի տակը սնկրտան կը: Մարդը չիբուխը ձեռը գիջնի յերթկեն, դուռը կը բանա նես կը մտնի, տեսնի կը, որ կնիկը եղը լցել է խաշիլի վրեն կուտե: Էրեխեքն էլ կարպետի տակը գուլան: Մարդը չիբուխով կնկան էնպես կը ծեծե որ ջանը վրեն կապտեցնե կը: Կէրթա բերե կը չվանը, կապե կը կնկա էրկու ձեռները, էրկու ոտքն էլ ջոկ կը կապե յիրար, չվնի օրթղլից կը բռնե քաշե տանի կը գեղի միջեն: Սաղ գեղացիք կը զարմանան, որ էդիկ խելոք մարդ էր, յընչի՞ էդպես բան կենե: Տանի կը էն ձորը, որտեղից որ բերել էր, քցե կը էնտեղ [ոտ ու ձեռը կապած]: Ինքը գուքա տուն: Էրեխոցը կուշտ հաց կը կերցնե: Քնին կը:

Յառավոտը գելնին, կըսե.—Էրթամ աշեմ՝ սաթկել է՞, թե՞ սաղ է:

Կէրթա տեսնի կը, որ գիլանները ծծերը կերել են, փորն էլ ցրել են: Ջանդակը կոխե կը յառի տակը, քար, խիբար, քռա լցնե կը վրեն ու գուքա տուն:

Էն ազատվելն էր, որ կազատվի անսկամ կնկանից:

79(79). ԿՈՒՌԿՈՒՌԻ ՓԱՉԵՆ

Մե կնիկ՝մ խելքեն թեթև կեղնի: Յամեն օր մարդու հետ կռիվ էր: Մե օր՝մ կըսե մարդուն.—Բուրդ բեր էրկու գրվանքա, օր քեզի չուխացու էնեմ:

Մարդը կէրթա էրկու գրվանքա բուրդ կը բերե: Էդ բուրդը կնիկը մանե կը, էրկու կծիկ թել

կեղնի: Գելնի մե յառավոտմ էդ կծիկները կառնի կէրթա մե յառվի՛մ քով: Ջրի յերեսը գորտնխալի կեղնի, գորտերը կռան կը: Էդ կնիկը գիտե թե էդոնք են չուխա գործողը, կըսե.—Չուխա՞մ կը գործեք:

Գորտերը կռռան կը:

Կնիկ կծիկները քցե կը յառուն, ջուրը կառնի կէրթա: Գորտերը կռռան կը, կնիկը հարցնե կը.—Ջուլակ ախպեր, ե՞փ գամ մարդուս չուխեն տանիմ:

Գորտերը էլի կռռան կը:

Կնիկը ինքը յիրան կըսե.—Ջուլա՛կ ախպեր, լավ, ուրբաթ օրը գուկամ մարդուս չուխեն տանիմ կը:

Թողնե գուքա տուն: Մարդը կըսե.—Չուխա գործել տվի՞ր:

—Հա,—կըսե մարդուն,—ուրբաթ օրը, ըսավ՝ արի տար:

Ութը օրը օր կը թմմի. մարդը կըսե.—Գնա՛, չուխես բեր:

Կնիկը գելնի կէրթա յառվի քովը: Գորտերը կռռան կը:

—Ջուլա՛կ ախպե՞ր, մարդուս չուխեն գործե՞լ եք:

Գորտերը յիրանց համար կռռան կը:

—Մարդուս չուխեն չեք տա հա՛,—կըսե ու գուլբեքը կը հանե, մտնի կը յառուն, ձեռքը կը տանի յառվի մեջը, խառնե կը ջուրը...

[Բիրդան] գտնի կը մե բոլիանդ քար՝մ, կառնի դուս գուքա ու կըսե.—Դուք իմ մարդուս չուխեն չեք տա, հա՛, ա՛յ ձեր «հոխեն» [մոտ երեք գրվանքա ծանրություն] գողցա, տանիմ կը, մարդուս չուխեն չեք տա հա՛:

Կառնի «հոխեն» դուս գուքա ճանապարհի վրեն ճվալով.—Մարդուս չուխեն չեն տա, ա՛յ «հոխեն» գողցա, տանիմ կը:

Չարչին էնդիեն գուքա կը, տեսնի կը, օր էդ մարդու ձեռքինը բոլիանդ քար է: Գուքա մոտիկ, տեսնի կը, օր էդ կնիկը խելքեն թեթև է, ձեռքինն էլ իսկական բոլիանդ քար է: Բան չի ըսե, կէրթա: Յէքսի օրը չարչին յիցուն հատ ճաշի պլպլան չանախ կառնի:

Կնիկը տանի կը էդ բոլիանդ քարը տուն: Մարդը տեսնի կը, օր բոլիանդ քար է, բան՝մ էլ չի ըսե, կառնե ձեռքեն, սնդուկը կը պահե: Յէքսի օրը չարչին ճվալեն գուքա:

—Չանախ առե՞ք, չանախ առե՞ք:

Կնիկը դուսը կայնած կեղնի, կըսե.—Ախպեր ջան, փարա չունիմ, ջուլակ ախպոր «հոխով» կուտա՞ս:

—Հա, քուր ջան, յընչի՞ չեմ տա, բե՞ր:

Չարչին քթոցը, չանախները մեջը, բերե կը դռան յառաջը կը դնե:

Կնիկը կէրթա, սնդուկի զոզեն ջարդե կը, բոլիանդ քարը հանե կը, բերե կուտա չարչուն: Չարչին խնդլով բոլիանդ քարը կոխե կը ծոցը, սաղ քթոցի յիցուն չանախը դարդկե ու կէրթա: Էս կնիկը ի՞նչ կէնե: Չանախները տանի կը տուն, սրով շարե կը յիրար քով ու ինքը մարմեն վերցնե կը ու պար կը խաղա: Մարդը բիրդան վրա գուքա, տեսնի կը, օր կնիկը չանախները շարեր է, մարմեն առեր է ձեռը ու պար կը խաղա: Մտածե կը. «Վայ, ես քու հերդ անիծեմ, անպատճառ քարը տված կեղնի չարչուն», կնկան կը հարցնե .—Էս ի՞նչ է, ի՞նչ բան է, կնիկ:

—Լավ չէրեցի՞, «հոխեն» տվեցի յիցուն հատ պլպլան չանախ առա:

Մարդը կնկան ծեծե, տնեն վռնդե կը (գիշերը): Կնիկը գելնի ճամբա: Գեղի մեջեն յընկե կէրթա: Շները կը հաչան, կնիկը կըսե.—Տանտնի մոլլա, վալա չեմ գա, բիլա չեմ գա, մարդս ծեծել է, ջորեր եմ, վալա չեմ գա, բիլա չեմ գա...

Հասնի կը գեղի ղրաղը, խորոզները կանչեն կը.—Կուռկուռի փաչա, վալա չեմ գա, բիլա չեմ գա, մարդս ծեծել է, ջորեր եմ, վալա չեմ գա, բիլա չեմ գա:

Լուսը լուսանա կը, կէրթա մե խորունկ ձորի՝մ մոտենա կը, տեսնի կը, օր բարխանաջին՝ դավեքին բեռները բարցած գուկան: Մե դավեն բեզրած կեղնի, բեռը վրեն ձորի մեջը նստած մնացած կեղնի: Կնիկը մոտենա կը դավին: Դավեն ճիտը կը պտտցնե, կնիկը դավին.—Քավոր ջան, շատ կը խնդրես, հըմը չեմ գա, մարդս յընձի ծեծեր, տնեն դուս է էրե:

[Դավեն նորից ճիտը կը պտտցնե]:

—Քավո՛ր ջան, շատ օր կաղաչես, քու խաթեր գուքամ:

Գելնի դավի բեռի վրեն կը նստի, «Եխխ» կենե, դավեն գելնի կայնի կը: Դավին նստած տորտոզալեն կէրթա տեյմոր յիրանց գեղ, յիրանց դուռը կայնի կը, դուռը զարկե կը:

—Մա՛րդ, դուռը բաց, ես էկա:

Մարդը մտածե կը. «Քոփոզլու խելառը էլի էկավ, բան՝մ բերած կեղնի, յավաշ դուռը բանամ»:

Մարդը դուռը բանա տեսնի կը, ինչ տեսնի. դավեն բարխանեն բարցած, դուսը կայնած է: Դավեն քաշե կը գոմը, դուռը կը փակե, կնկան կըսե.

—Գիտե՞ս, կնիկ, յէսօր քարե կարկուտ պիտի գա, արի քեզի կոխեմ թնդիր, որ կարկուտը չը դիպնի քեզի, որ դիպավ, յաչքդ կը քոռնա:

Կնկան կոխե կը թնդիր, մե մենձ ժեշտ'մ քաշե կը թնդրի վրեն, ժեշտի վրեն կես կոտ գարի կը լցնե, հավերուն կէնե վրեն:

Հավերը կտկտացնեն կը: Կնիկը ճվա կը.—Քարե կարկուտը կտրա՞վ:

—Չէ,—կըսե մարդը:

Մարդը դավին մորթե կը, դավի միսը, կաշին, ապրանքը գոմի քարերու տակը պարտկե կը, յիստակ մաքրե կը: Կնիկը ճվա կը.—Մարդ, քարե կարկուտը կտրա՞վ:

Մարդը կըսե.—Հա [կտրավ, դուս արի]:

Կնիկը գուքա, տեսնի կը, որ ո՛չ քավոր կա, ո՛չ բան կա: Լուսանա կը, մարդը կէրթա գործի: Կնիկը գելնի դուռը կայնի կը: Մեկել տեսնի կը, օր թալալը ճվալեն գուքա:

—Վով որ թագավորի դավեն բարցած բարխանեն գտել է՝ բերե տա, տասը օսկի միժդա կուտանք:

Էս կնիկը ճվա կը.—Էդիկ իմ քավորս էր, յիրիկվանը բերեցի մեր տուն, չ'իդիմ՝ ինչ էղավ:

Կնկան բռնեն տանին կը թաքավորի քովը: Թագավորի յաչքի մեկը քոռ [կապած] կեղնի: Կնիկը օր տեսնի կը թագավորին կըսե.—Թագավորն ապրած կենա, յիրիկունը կարկուտ օր էկավ, քու յաչքիդ էլ դիպա՞վ, որ յաչքդ քոռցել է:

—Էսոր տարեք,—կսե թագավորը,—խելառ է, բան չի հասկնա [դուս կուտա]:

[Կնգան վոնդեն կը, կէրթա տուն]:

80(80). ԽԵԼՔԻՑ ՊԱԿԱՍ ԿՆԻԿԸ

Կեղնի, չի էղնի մե մարդ'մ ու կընիկըմ կեղնին, կնիկը խելքից պակաս կեղնի: Մե օրըմ մարդը գիշերը կըծառվընա կնկան կղրկե առուն՝ ջրի: Էս կնիկը կուժը կառնի, կէրթա ջրի: Լուսնյակ գիշեր կեղնի, ջուրը էման կըփայփըլա , գորտերն էլ ըտտեղ կկռկռան: Ըտիկ կսե.—Կռկռան ախպերներ, ես ջեջիմի թելեր ունիմ, բերեմ չեք գործի՞:

Թողնի կը կուժը ընդեղ, վազելեն գուկա, թելերը կառնի ու կէրթա: Մարդը կսե.—Ա՜յ կնիկ, ջուր բերեցի՞ր, ես ծառավ եմ, մեռա՞ է:

Էդ էլ կսե.—Տնաշեն, կայնի թելերը տանիմ տամ ջուլակներին, բըդի ընձի ջեջիմ գործեն, ջուրն էլ կառնիմ գուքամ:

Գելնի երկուշաբթի կէրթա իրա ջեջիմներն ուզելու: Կսե.—Ջուլակ ախպերներ, իմ ջեջիմըս չեք գործե՞, բերեք տվեք (թե ում ա ըսըմ, ես չիդեմ, գորտ են, խոմ բան չեն գործե):

Կտեսնի, օր ոչ ձեն կա, ոչ ձուն, ոչ էլ ջեջիմ տվող կա: Ոտքերը կը քըշտե, կմտնի ջուրը: Ափ-չալափ, ձեռքերը էս կողմ, էն կողմ կքցե, ման գուքա, էհ, գիշեր է, ինչխ բըդի գտնի, ջուրը տարել ա թելերը: Կտեսնի օր չկա, թելն էլ, ջեջիմն էլ: Ձեռքերը էրկու հատ անգին քար գընկնի: Էնիգ չիդե օր էդի անգին քար է: Էս անգին քարերը կվերցնե, կսե.—Դե կայնի, ես ձեր կշեռքի քարերը տանիմ, տեսնիմ, էլ ինչով տի դուք թել կշռեք:

Վերցնե ու տուն կբերե: Էս մարդը, օր կտեսնի, կսե.—Էդ ուրտեղի՞ց բերեցիր, այ կնիկ, էս քարերը:

Հըպը, կսե.—Ջուլակների քարերն ա, գողցել եմ, տեսնիմ էլ ինչով բդի թել կշռեն:

—Դե, այ կնիկ,—կսե,—էս քարերը լավ կպահես:

Հին տուն կունենան, մե հատ էլ պատըրհան, էս քարերը կդնեն էս պըտըրհանը, ու լուսը գընկնի տան մեջ: Առավոտ օր կլուսանա, մարթը կէրթա գործի: Մեկ էլ մե չարչի'մ գուքա: Կանչում ա.—Լավ թել, լավ ասեղ, մատնոց, ծամոն, արեք, առեք:

Էս կնիկը վազելով էրթում ա չարչու դեմ:

—Ախպեր ջան,—ըսըմ ա,—էրկու հատ քար ունիմ, օր տամ, չես տա՞մ թել, ասեղ, մատնոց:

—Կուտամ,—ըսըմ ա,—քուր ջան: Չարչին մտածելով, ըսըմ ա. «Հլա, ըսեմ՝ հա, տեսնիմ՝ ինչ քարեր են, թող բերե»:

Էս կնիկը վազելով էրթում, քարերը բերում ա: Քարերը օր չարչին տեսնում ա, հա ասում ա.—Քուր ջան, կտամ, ընչի՞ չեմ տա:

Էլ առուտուր չի անում: Նրա ասեղը, ձութը, թելը, մատնոցը տալիս ա ու ափալ-թափալ էրթում ա: Ամբողջ օրը էս կնիկը նստում ա իրա դռան շեմին, ձութը քցում ա բերանը, մատնոցն էլ դնում մատը, իրա փեշը շուլալում ա ու քան-

դում (իբր թե կար ա էնում): Իրիկունը մարդը տուն ա գալըմ:

—Այ կնիկ,—ասըմ ա,—ո՞ւր են էն քարերը:

Ըսըմ ա.—Էն քարերը ես տվեցի չարչուն ու առա ասեղ, մատնոց, ծամոն ու ամբողջ օրը կար եմ արել ու ճաշ էփելու ժամանակ չի մնացել:

—Ես քեզ չսեցի՞, օր էդ քարերը մարդու չտաս:

Կնկան ծեծում ու տնից դուրս ա էնում: Էս կնիկը լալեն դուրս ա գալիս տնից: Խորոզը կանչում ա:

—Էհ,—ասըմ ա,—կանչան ախպեր, կանչես, չկանչես, ետ չեմ դառնա, էդ չքոտ մարդն ա ղրկե, բդի էրթամ:

Շունը հաչըմ ա:

—Էհ, հաչան ախպեր, հաչաս, չհաչաս, ետ չեմ գա դառնա, էդ չքոտ մարդն ա ղրկե, բդի էրթամ:

Էրթում ա հեռու—հեռու, եսիմ որ դաշտերը, որ չոլերը: Էս թագավորի ուղտը կորած ա ըլնում, վրեն օխտը խաթնաբեռ օսկի: Ման են գալում, չեն գտնըմ: Հանկարծ հանդիպում ա էս կնկան:

—Հա,—ըսըմ ա,—թոփլիկ քավոր ջան, կանչան ախպերը կանչեց, ետ չդառա, հաչան ախպերը կանչեց, ետ չդառա, օր դու էս եկել, քու խաթրու բդի գամ, ի՞նչ էնեմ:

Բռնում ա դըվի չըմբուլը ու տանըմ ա տուն: Մարդը դուս ա գալըմ, տեսնըմ ա, օր կնիկը օխտը խաթնաբեռ օսկին վրեն, ուղտն էլ հետը, էկել է դուռը:

—Այ կնիկ,—ըսըմ ա,—էս որտեղի՞ց եկար:

—Հա,—ասում ա,—հաչան ախպերը հաչաց, ետ չեկա, կանչան ախպերը կանչեց, ետ չդառա, թոփլիկ քավորը ռաստ էկավ, իրա խաթրու ետ եմ դառե:

Ըսըմ ա.—Այ կնիկ, արի մտի թնդիր, հըմի,—կսե,—կարկուտ գուքա, ջրհեղեղ կեղնի, գոյնե քեզի չքշե տանի:

Խաբըմ ա կնկան ու մտցնում թընդիրը: Փոստը քցըմ ա թնդրի բերնին, կուտը լցնում վրան ու հավերին կանչում ա, վրեն ուտըմ են: Հավերն օր կկտկտացնեն, կնիկն էլ գիտըմ ա, թե կարկուտ ա գալըմ: Էս մարդը օսկին պահըմ ա գոմի սալերի տակը, ուղտին էլ տանըմ, կորցընըմ ա ու գալըմ ա տուն:

—Այ կնիկ,—ըսըմ ա,—ելի տես ինչ էղավ, կարկուտն էկավ, ջրհեղեղ էկավ, թոփլիկ քավորին քշեց, տարավ:

Էս կնիկը ելնում ա, նստում ա դռան ու լաց ա էլնում՝ ձեռն երեսին դրած: Հանկարծ են կողմից թագավորի ծառաները անցնելիս են լինում, էս կնկան տեսնում են:

—Քուր ջան,—ըսում են,—թագավորի ուղտը, վրեն օխտը ղատնաբեռ օսկին, տեսած չե՞ս էղնի՝ էս կողմից անցնելով:

Ըսըմ ա.—Դուք էլ մեռնիք, թագավորի ուղտն էլ մեռնի, կարկուտը ելավ, ջրհեղեղն ելավ, թոփլիկ քավորին քշեց տարավ, դուք էկել եք ընձնից թագավորի ուղտն ե՞ք հարցնում:

Ծառաներից մեկն ըսըմ ա, թե.—Էդիկ խելառ է:

Իսկ էն մյուսը ըսըմ ա, թե.—Հարցրեք, էդիկ խորհրդավոր խոսքեր ա խոսըմ:

Մի քանի անգամ հարցնում են: Կսե.—Մարդս ընձի ծեծե դուրս էր էրե, թոփլիկ քավորը հանդըպավ չըմբուլը բռնեցի բերեցի տուն:

Էս օր կըսե, հասկընում են: Էս խեղճ մարդուն բռնում, տանում են բանտ: Էս մարդն օր էրթում ա,

—Այ կնիկ,—ըսըմ ա,—դռանն ու կտրին լավ մուղաթ կեցի:

Էսիկ էլ էրկու անգամ բանտի դուռը էրթալ-գալով, զըզվըմ ա, ըսըմ ա. «Կայն երթիկն էլ, դուռն էլ քցեմ վիզըս էրթամ»:

Երթիկի ռամկան քցըմ ա վիզը, դռան շմին էլ քըցըմ ա ուսը, տանում բանտի դուռը նստում: Մարդին օր դուրս են բերում պրագուլկի, մարդը տեսնըմ ա:

—Այ կնիկ,—ըսըմ ա,—էս ի՞նչ էս էրե:

Ըբը.—Ի՞նչ ենեմ,—ըսըմ ա,—ըստեղ հա՛մ քեզի կաշեմ, հա՛մ դռանն ու կտրին:

Տեսնըմ են, օր կնիկը խելառ ա, մարդին բաց են թողնում:

81(81). ՁԳՆԵՐԻ ԾԻԾԱՂԸ

Թակավորի ախճիկը չէր նշանվմ, որպես կույս մնմ էր հոր տունը, հմը հոր վազիրի տղին հակծրել էր ախճկա շոր, պայմ էր իբր ջայրա իրեն քովը, հմը կապված էր տղի հետը:

Էդման հա շարունակվմ էր: Մե օր՝մ էլ ձուկ ծախողն էկավ. «Լա՛վ ձուկը, լա՛վ ձուկը, թազա ձուկը» կանչելով սալով դրած գլխուն, պտտմ է ու ծախմ էր:

Էկավ թակավորի աղջկա փանջարի տկեն անցավ: Ըսավ.—Լա՛վ ձուկ, հա՛յ լավ ձուկը:

Թակավորի ախճիկը գլոխը փանջարից դուրս հանեց ըսավ.—Ձուկ ծախող, ձկներդ ի՞նչ են, թե՞ ոռծ: Թե էկ են կառնիմ, թե ոռծ են, չեմ առնի:

Ձուկ ծախողն ըսավ.—Ընչի՞ չէս առնի ձկի ոռծը:

Ըսավ.—Ես կույս եմ, իմ շեմը, բտի ոռձ չմտնի:

Թակավորի ախճիկն էդման օր ըսավ, ձկները գլխները տնկեցին ու ծիծաղածին: Ձկներն օր ծիծաղածին, խաբարը տարան թակավորին, թե.—Թակավոր, ըշտա հալ ու հեքյաթ էսման, էսման... ձկները ծիծաղածին:

Թակավորը կանճեց ձուկ ծախողին ըսավ.—Ձուկ ծախող, ձկներիդ ծիծաղը ի՞նչ բան է:

Ձուկ ծախողն ըսավ.—Ես ի՞նչ գիդեմ՝ ի՞նչ բան է: Անլեզու, անբերան անասուն են, ես ի՞նչ գիդենամ, թե ընչի՞ ծիծաղածին:

Թակավորն ըսավ.—Յա բտի ձկներիդ ծիծաղը ըսես, յա բտի գլոխդ զարգեմ:

Ձուկ ծախողը փործված մառտ էր, ըսավ.—Թակավո՛ր, դու՝ քու աստված, երեխատեր եմ, գլոխս մի զարգե, միայն բեր ընձի մե օսկե սինի՝մ, օսկե դանակ՝մ, մե ձմերուկ՝մ: Ես իմ ձկներիս ծիծաղը բացատրեմ:

—Լա՛վ,—ըսավ թակավորը,—էս սհատը:

Հրամայեց, բերեծին օսկե սինի, ձմերուկը, դանակը: Տվեծին ձուկ ծախողին: Ձուկ ծախողն ըսավ.—Թակավո՛ր, քու սաղ սինոտդ բեր, քու ընդանիկդ, քու ախճիկդ իրան ջայռեքով, թող իմանան, թե ձկները ընչի ծիծաղածին:

Թակավորն ըսավ.—Էդ էլ կենեմ:

Կանչել տվավ սինոտը, ախճկան իրան ջայռեկով: Եկան, նստան: Ձուկ ծախողն ձմերուկը կտռեց, կիսակտռել դանակը կործուծ ղասիդ: Շատ ման էկավ, դանակը չգտավ: Ըսավ.—Թակավորն ապրած կենա, թույլ տուր ես էս մառտկանծը մեկ առ մեկ չիբլխծնեմ, վրեները աշեմ, դանակը գտնիմ, ձմերուկը մնաց կիսակտռել:

Թակավորն ըսավ.—Թույլ եմ տալմ, չբլխծրա աշե:

Թակավորը օր էդման ըսավ, ախճիկը ուզեց օր առներ իրան ջայռեկին, էրտար: Ձուկ ծախողը ըսավ.—Օր վռազնմ եք, արեք առեջ ձեզի չբլխծնեմ, աշեմ ձեզի, դուք գնացեք, նոր ես էս մառտկանցը կաշեմ:

Է՛, ճարն ինչ, ակամայայից բտի օժարանա թակավորի ախճիկը: Ձուկ ծախողը աշեց ախճկների երեսը ճանճծավ, օր որը կեղնի տղա: Ռոպեական չբլխծրավ վազիրի տղին: Տեսան օր, օհո՛, տղա է, հակել է ախճկա շորեր: Ձուկ ծախողն ըսավ.—Թակավորն ապրած կենա, այ թե ընչի ծիծաղածին ձկները:

Թակավորն օր իմածավ ախճկա էդ անշնորկուտենը, ախճկա գլոխն էլ զարգեց, վազիրի տղի գլոխն էլ զարգեց: Ձուկ ծախողին էլ էրավ պալատական խորրտատու:

82(82). ԹԱԿԱՎՈՐԻ ԹԱՄԲԱԼ ԱԽՃԻԿԸ

Թակավորի մեկ կելնի կհակնի թաբդր ղլղի ման գուկա՝ իրան երկրի դրուտենը իմանալու: Կերտա մի գեղի՝մ կոխկից կանցնի, գտեսնի, օր մե լավ ջայել, սիրուն տղե՝մ վար է էնմ: Ջուխտ՝մ եզ է լծե: Մե դաստե՝մ կանանչ խոտ է կախե լծից՝ եզներից հեռու ու վար է էնմ: Եզները էման էն էրտմ,օր տղեն չի կռնմ եդևներեն հասնի: Թակավորն օր տեսնմ է, ըսմ է. «Ըստեղ մե միտք՝մ կա, մե բան՝մ կա, օր էս տղեն էս խոտը եզներից հեռու զարգել է լծին: Հլը յավաշ, էրտամ հառծնեմ, իմնամ: Տեսնիմ՝ ինչի՞ համար է էդման էրե»:

Էրտմ է, բարև է տալմ: Տղեն բարև է առնմ: Տղեն օր տեսավ էդ ղարիբ մառտիկ էկան, բարև տվան իրան, հարկավոր է կայնել, տեսնել թե ի՞նչ մառտիկ են, օր բարև տվին, բարև առան: Տղեն փեդի ծերը լծից հանեց, խոտը եզների աշկից կտռավ թե չէ, եզները քռտ կայնան: Թակավորը զարմածավ: Ըսավ. «էս ի՞նչ սարկ ու սարվաց է»:

Ու տղին հառծրավ, ըսավ.—Տղա ջան, էդ խոտը օր եզները չբտի հասնին ուտեն, ընչ՝ե՞ս զարգե եզների առաջը:

Տղեն ըսավ.—Հայրիկ ջան, էս եզները շատ թամբալ են: Հեչ չեն էրտմ: Էդ խոտը օր զարգմ

եմ լծից, էրտմ են, օր հասնին խոտն ուտեն: Ըդուր հմար եմ զարգե լծին:

Թակավորն էլ ախճիկ'մ ունի, օր շատ թամբալ է, իրան հմար ջուր չի առնմ խմմ:

Թակավորն ըսավ. «Վալա, ես իմ ախճկաս բտի տամ էս տղին: Էս տղեն իմ ախճկան աշխատանքի գհանե: Ուրիշ մառտ չի հանե»:—Գմտածե թակավորն ու էդ տղի ֆամիլը գեղը, ուրտեղ է ապրմ գիմնա ու կէրթա:

Տղեն էլի խոտը գզարկե լծին ու գվարե: Թակավորն էլ ման էկավ էս դին, ման էկավ էն դին, իրան երկրի ահյալը իմածավ պռծավ, նորից եդ դառավ իրա քաղակը: Գնաց իրան տունը: Մնաց վախտ'մ, դինջածավ պռծավ, բերավ նամակ գրեց տղին, կանչեց տղին: Տղեն գնաց, թակավորն ըսավ.—Ա՛յ տղա, ես քեզի կանճել եմ, օր իմ ախճկաս տամ քեզի:

Տղեն չճանճծավ թակավորին: Ըսավ.—Թակավորն ապրած կենա, վրես ճս խնդմ: Ես գեղածի քյասիբ մառտ եմ: Դու թակավոր մառտ ես: Քո ախճկան, ընձի ընչ'ճս տալմ:

Թակավորն ըսավ.—Օր թակավոր մառտ եմ, մառտավարի էլ քեզի բան եմ ըսմ: Իմ ախճկաս բտի տամ քեզի: Քեզ էլ բազում ապրուստ կուտամ: Կէրթակ ձեզի հմար կապրիք:

Տղեն տեսավ, օր թակավորը հաստատ է ըսմ, ըսավ.—Թակավորն ապրած կենա, դու օր տաս, ես էլ կառնիմ:

—Համ:

—Հա՛:

Բերեցին ձեռած բավականի օսկի, արծաթ, ապրուստ դրին: Բառծան դավեկին: Ձիան դուս քաշեծին, հառս ու փեսեն նստան: Մնաս բարով, գնաս բարով ըսելուց եդև, թակավորն ըսավ.—Ա՛յ տղա, գիդճս իմ ախճիկս շատ թամպալ է, բտի ղայդեն գիդենաս:

—Լավ,—ըսավ տղեն,—ղոլայ է,—ըսավ ու ձիու գլոխները դառծրավ դիպա իրանց տուն, գնացին հասան տուն:

Հառսին իջծրին տարան տուն: Տեսան հառսին, ապրուստին, ուրխծան: Բերին էդ օր թազա հառսին քիչմ հաց տվեծին, կերավ, պռծավ, էլան քնան: Լուսծավ: Արևն էղավ մարտըբոյ, հառսը չի ելնմ տեղեն: Տան գործը չի էնմ: Չէ, տեսավ օր շատ անոտծավ, տեղեն էլավ հառսը, շորերը հակավ ու նստավ: Հեչ գոռծ չէրավ: Տղեն մե պառավ մեր ուներ: Մեր ու տղա տան գոռծն էլ էրեծին, դսի գոռծն էլ էրեծին պրծան, էկան նստան: Տղեն ըսավ.—Նանե՛:

Մերն ըսավ.—Ջանե:

Տղեն ըսավ.—Գոռծն ո՞վ է էնե:

Մերը ըսավ.—Ես ու դու:

Տղեն ըսավ.—Հաց ո՞վ ուտե:

Մերն ըսավ.—Ես ու դու:

Տղեն ըսավ.—Դե էլի բեր հաց ուտենք:

Մերը բերավ դրավ հացը, մեր ու տղա կերան: Հառսը մնաց անոտի, մտածեց ըսավ. «Վայտե ըստոնց ադատը էսման է, ով օր գոռծ էնե, հաց կուդան, ով օր գոռծ չէնե, հաց չեն տա: Էգուց ես էլ գոռծ կէնեմ, օր ընձ էլ հաց տան»:

Էդ գիշերն անցավ: Էկսի օրը էլավ տեղրանկը թոպ էրավ, ծալք դրավ, էգավ նստավ: Էլի մեր ու տղա գոռծը էրեծին պռծան, էկան նստան: Տղեն ըսավ.—Նանե, գոռծ ո՞վ է էրե:

Մերն ըսավ.—Ես ու դու:

Տղեն ըսավ.—Հաց ո՞վ ուտե:

Մերն ըսավ.—Ես ու դու:

Բերին, դրին մեր ու տղա հաց ուտելու: Մերն ըսավ.—Տղա ջան, հառսը էսօր տեղաշորը վերծրել է:

Տղեն ըսավ.—Համ:

-Հա՛:

Տղեն ըսավ .—Դե կտոր'մ հաց տուր:

Հառսին մե կտոր'մ հաց տվին: Հառսը կերավ: Ըսավ. «Էկուց դհա շատ գործ կէնեմ, օր հաց շատ տան»,—մտածեց հառսը:

Էկսի օրը հառսը հա՛մ գողինկը լվաց, համ տունը ավլեց: Իրկուն նորից մեր ու տղա նստան հաց ուտելու: Տղեն ըսավ.—Նանե:

Մերն ըսավ.—Ջանե:

Տղեն ըսավ.—Գոռծ ո՞վ էրավ:

Մերն ըսավ.—Ես ու դու:

—Հացն ո՞վ ուդի:

—Ես ու դու:

Մերն ըսավ.—Տղա ջան, էսօր հառսը համ տեղրանն է վերծրել, համ տունն է ավլե:

Տղեն ըսավ.—Էսօր սաղ հաց'մ տուր:

Էդ օրը սաղ հաց'մ տվին հառսին: Հառսը ըսավ. «Էս ինչ լավ էղավ, էգուց դհա շատ գործ կէնեմ, օր կերակուլ էլ տան»:

Էկսի օրը ջուրն էլ բերավ: Էդ օրը քիչ'մ էլ կերակուլ տվեծին: Վեռճապես քանի հառսը գործ էնելը շատծրավ, իրանկ ուտելիքը ավելծրին, չուրի հառսն էղավ ամենաղոչաղ հառսը:

էս անգամ ինկ ընդոնծեն շատ գործ էր էնմ ու հացն էլ դնում էին, իրար հետ ուտմ էին:

Մեկ էլ մե օր՚մ թակավորն ըսավ. «Հը, էրտամ տեսնիմ՝ իմ թամբալ ախճիկս ի՞նչ էղավ»,—մտածեց թակավորը, էլավ էկավ դիպա ախճկան: Հասավ ախճկա տունը, տեսավ, օր ահա ախճիկը քշտաբնդվե, չապուկ-չապուկ գոռծ է էնմ:

«Էս ինչ լավ է էղե»,—մտածեց հերը:

Իրկուն էկան նստան հաց ուտելու, ախճիկը բերավ չանաղմ սխտոր դրավ հոր չոկին ըսավ.—Հայրիկ ջան, ա՛ռ էս սխտորն էլ դու ծեծե, օր քեզ էլ հաց տան, թե չե հաց տան գոռծ էնողին:

Հերն ըսավ.—Ա՛յ, լավ է վախեծրե:

83(83). ՆՌԱՆ ՀԱՏԸ

Մե մառտ ու կնիգ՚մ են էղնմ, ունենմ են մե տղե՚մ, մե ախճիկ՚մ: Ախճկան կարկմ են, տալմ են գեղեն դուս՝ ուրիշ գեղ հառս: Դառծի վախտ ախպորն ըսմ են.—Նստի ձին, գնա քուրոջդ բեր:

Տղեն նստմ է ձին, էրտմ քուրոջը դնմ է ձիուն, ձիու գյամը քաշելով գալմ են գեղ: Ճամպեն քուրը ձիու վրայից տենմ է, օր մե նռան հատ՚մ է ընկած, ըսմ է.—Ախպեր ջան, ախպեր, ձին կայնծու իջնիմ:

Ախպերը ձին կայնծնմ է, քուրը իջնմ է ձիուց, էդ մե նռան հատը վերցնմ է, դնմ է բերանը, էլի նստմ է ձին երթմ են: Ախպերն ըսմ է. «Ջանմ, իմ քույրը օր մե նռան հատի՚մ հմար ձիուն կայնծրավ, ձիուց իջավ, ուրեմն իմ քուրս կամկից թուլ է: Շատ անդուր բաներ կէնե: Յավաշ, ես ըստուր հախեն գամ»:

Կսե, գքաշե խանճալն, կանցնի քուրոջ եդևն ու քուրոջ թիգունկից կուդա, սռտից գելնի: Քուրը ձիուց գընկնի ցած: Ախպերը, օր գտեսնի քուրոջ ընկնելը, սիրտը գցավա, կսե. «Յավաշ, ես ըստուր սիրտը բանամ, տեսնիմ ի՞նչ կա, օր մե նռան հատի՚մ հմար կյանկը դուս տվավ»:

Մտածեց ախպերը ու քուրոջ սիրտ ու փորը բացեց: Տեսավ, օր էն մե նռան հատը նոր հասել էր էրեխի բերանը: Ախպերն ըսավ.

—Հեյ վա՛խ, հեյ վա՛խ, ուրեմն էս երեխեն ստիպեց իմ քուրոջը, օր ձիուց իջավ նռան հատը կերավ: Ես էլ չհասկծա: Մե արունկի տեղը էրկու արունկ էրեցի: Էլ իմ սաղ մնալս ինչի՞ հմար է,—ըսավ ախպերն ու խանջալը դառուց իրանը: Ձարկեց սոտից՝ թիկունքից էլավ: Ընկն էլ ընկավ քուրոջ կոխկի հետ:

84(84). ՀՈՒՆԱՐՈՎ ՏՂԵՆ

Ժամանակով էղնում է մե թաքավոր՚մ, ունենում է մե ախչիկ: Ախչկան նշանելու համար թալալ է քըցըմ աշխարքի էս ծերեն էն ծերը, թե՝ վով օր իմ հանելուկները հանեց, ախչիկըս ընդուր կուտամ:

Շատ թաքավորների տղաներ չեն կըրնըմ հանե, վերչը մե թաքավորի տղա էրազով տեսնըմ է, օր էդ ախչիկը իրեն հայտնե կը հանելուկներու հունարը: Էքսի օրը թաքավորը պատգամ է ղըրկըմ ախչիկն ուզելու: Թաքավորը տալըմ է պատգամավորին էրկու ածըլի, մեկը՝ էրկըթից, մեկը՝ պողպատից ու թամբայ է էնըմ, օրա էդ տղեն հանե, թե վե՞րն է պողպատը, վե՞րն է էրկաթը:

Տըղեն վերցընըմ է ածըլեքն ու դընըմ է ջրի մեչը: Էրկըթե ածըլու վրեն ջուր է բըռնըմ, իսկ պողպատե ածըլու վրեն՝ չի կայնըմ: Ըդեղ տղեն հանըմ է պողպատ ածըլին:

Թաքավորը էս անքամ ուղարկում է էրկու պըզտի, իրար պես, մե չափի ու մե գույնի քուռակ ու ասըմ է.—Գտի՛, վե՞րն է մենձը, վե՞րը պիճիկը:

Տղեն էրկու քուռկին էլ լա՛վ քիշմիշ ու գարի կը կերցընե, օրա լա՛վ ծառվընան, ջիգըրները վառի: Էտև տանի կը ջուրը, պըզտի քուռակը շատ չի դիմանա ծառվին ու զիլ վազզե կը ջրին:

Թաքավորը իմանըմ է, օր ըտիկ էլ է գըտնըմ, վերջի դրեթ ղըրկըմ է մե չըբուղըմ, էման օր չըբղի էրկու գլոխն էլ իրար հավասար են էղնըմ, հաստ ու բարակ չեն էղնըմ: Ըսըմ է.—Հանե, թե վե՞րն է ծառի քոքեն քաղած, վերը՝ ճուղը:

Տղեն չըբուղը քըցըմ է ջրի մեչը: Քոքեն կտռած գլոխը իշնըմ է ջրի տակը: Ըդով էլ որոշըմ է չըբղի քոքն ու ճուղը:

Ըստեղ թաքավորն աշում է, օրա տղեն հունարով տղա է, ախչիկը բաշխում է էդ տղին:

85(85). ՏԵՐՏԵՐԸ, ԴՈՒՐԳՅԱՐԸ, ԹԱՐԶԻՆ

Տերտերը, դուրգյարն ու թարզին մե օրըմ կընկնին ճամփա, շատ կէրթան, քիչ կէրթան, էտ է աստված գիտե, կէրթան կհասնին մե քո՛ սկ ու սարայի՛մ[85]: Բիրտանց գիշերը վրա կուտա: Տերտերն ու թարզին կը քնին, դուրգյարը ղարաուլ կը կայնի: Տեսնի կ՚օր գործ չկա, ուրաքը կառնե ծառը կը տաշոտե: Շինե կը մե սիրու՞ն ախչիկըմ, կայնցնե կը ու կէրթա ձեն կուտա թարզուն, թե.—Էլի, հմի էլ դու ղարաուլ կայնի,—կըսե ու կը քընի:

Թարզին կը պըտըտի էսթին, էնթին, տեսնի կ՚օր մե չըփլաղ ախչիկըմ կայնել է: Ձեռք կուտա, կընկնի կը ցած: «Օհո՛հ,—կըսե,—էսի դուրգյարի հունար է: Յավաշ, մե՛մ ես էլ իմ հունարը ցուց տամ»:

Թարզին կարե կը մե լավ ձեռքըմ շոր, հաքցընե կը ախչըկան ու կէրթա, ձեն կուտա տերտերին: Տերտերը կելնի չորս բոլորը կաշե, տեսնի կը՝ մե հուրի-փերի ախչիկըմ կայնած, օր խելքը կէրթա: Էրթըմ ձեռ է տալըմ, տեսնըմ է՝ փետ: «Ըհը՛, էսի ըտոնց հունարն է,—կըսե,—յավա՛շ, ես է իմ հունարը տեսում»:

Վերցընըմ է ավետրանը, ըսկըսըմ է տեյ լուս կարթալ: Լուսը բացվելուն պես ախչիկը հոքի կառնե:

Հըմի դուրգյարը կը կըռվի՝ իմս է, թարզին կը կըռվի՝ իմս է, տերտերը կըսե՝ իմս է:

Հիմի դուք ըսեք՝ ո՞ւմն է:

Պատասխան.—Ըստ պատմողի՝ տերտերինն է:

86(86). ՀԱՆԵԼՈՒԿ

Էրկու ախպեր կեղնին: Մեկ կապրեր մեկ գեղ, մեկել կապրեր մեկել գեղ: Մեծ ախպեր նշանած կարքած կեղնի, պզտիկ՝ ազապ: Մեկ օր պզտի ախպեր կիգա մեծ ախպոր կընկանը տուն կը տանե, օր հինգ օրեն էտև ետ դառցընե:

Հինգ օրն օր կը լռանա, ախպերը կը տեսնա, օր ուր կընկան չբերեց: Կելնի կէրթա ախպոր գեղը: Էդ օրը պզտի ախպերը մեծ ախպոր կնկան կառնե կիգա, օր տանի տուն: Ճամփին ջուր կեղնի, հարսին կըսե.—Դու վիրև լողացի, ես լե՝ ցած. էտև էլլինք էրթանք:

Լողկընալեն էտև, շորեր կը հաքնին օր էրթան, մեկ լե մեծ ախպեր էն դիուց կելլա, կըսե.—Դու իմ կնկան ձեռք տվեցիր:

Պզտիկն կսե, թե.—Դու իմ ախպերն իս, էս լե իմ հարսն ի, ես ի՞մալ էնոր ձեռ թալի:

Մենձն ըսեց.—Չէ՛, դու ձեռ թալիր ու խանչալըն հանեց: Պըզտիկը տեսավ, օր ախպերը իրան կը զարկեր, ինք լե խանչալ հանեց, ու իրար հետ խանչալներ վրա բերեցին: Էրկուսի գլոխ լե կտրավ:

Ախչիկ լա՛ց, լաց, խառնըվավ իրար: Չիմնալով՝ մարթու գլոխ դրեց տեքրոջ ջանդըքին, տեքրոջ գլոխ լե՝ մարթու ջանդըկին: Էդ վախտ էրկուս լե սաղցան:

Էնի ըսեց՝ իմ կնիկն է, մեկել լե ըսեց՝ իմ կնիկն է:

Հըմկա հարս ո՞րին կը հասնի, գլխու՞ն, թե ջանդըկին:

Պատասխան.—Ըստ պատմողի՝ գլխին:

87(87). ԹԱԳԱՎՈՐԻ ԳԼՈՒԽԸ ԿՈՏՈՇ ԿԱ

Թագավորը կէրթա գլոխը սարքել տալու, վարսավիրը կը տեսնի, օր թագավորի գլխուն կոտոշ կա:

Թագավորը կըսե.—Ինչ օր տեսար, բըդի մնա քու մեջըդ՝ որպես գաղտնիք... թե իմացա, օր էս գաղտնիքը մեկըմ յիմացել է, յիմացած էղնիս՝ գլուխըդ կը թռցնեմ:

Վարսավիրը կըսե.—Թագավորն ապրած կենա, քա՛նի սաղ ու կենդան եմ, էդ գաղտնիքը իմ մեջ կը մնա, թե օր մեռա՛, եսի՞մ:

Էսպես պայման կը կապեն, թագավորը կէրթա: Էս մարդը գուգա յիրան-յիրան կը մտածե. «Ինչը՞ղ էնե, օր էդ գաղտնիքը յիրենից դուս չը գա»: Հըմը սիրտը կը տրաքի, գուզե մեկն ու մեկին ըսե, օր դինջանա:

Կանցնի քանի՚մ վախտ, էս մարդը կուռցվորի: Էնքան կուռի՞, օր փորը բերնին կը հասնի: Կանչեն բըժըշկներուն, հեչ մեկը հիվանդության պատճառը չեն կըռնա գըտնի: Վերջը մե գիտուն բժշկի՚մ կը կանչեն:

---

85 Պատմողի կարծիքով՝ մութ-մոլոր, անտառային տեղ (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

Էսիկ կըսե.—Կա՛, չըկա, դու մե գաղտնիքըմ ունի՛ս, փորիդ մեջ ես պայե՛, մարդու չե՛ս ըսե: Էսպես գընա՞ց, դու կը մեռնիս: Թե գուզես լավնա՞ս, մեկի՛մ բըդի ըսես:

Էս մարդը կըսե.—Ախըր էնպես գաղտնիք է, օր հեչ մարդ չբդի յիմանա:

Բըժիշկը կըսե.—Օր էդպես է, գնա քաղքից դուս մե չո՛ղ տեղըմ, օր հեչ մարդ չեղնի, ի՞նչ օր գիտես՝ ըսա՛, սիրտըդ դարդըկե, հանգըստացի՛, արի՛, փորըդ էլ գիջնի, կը լավնաս:

Էսիկ գելնի կէրթա քաղքից դուս, շատ կէրթա, թե քիչ, յինքը գիտե, ք՚ասնի մե դաշտըմ, կը կայնի ղամիշներու մեջ, կըսե.—Թագավորի գլոխը կոտոշ կա:

Քանի՛մ անգամ կըսե, փորը գիջնի, կը լավնա, գուգա տուն:

Կանցնի քանի՛մ օր, թե շաբաթ, էս վարսավիրը քաղքի մեջ ման գուգա, մեկ է կը տեսնի, օր էրեխեքը ղամիշը շըվի են սարքել, կը նվագեն, ո՛ր կողմը կանցնի, նույն երգը. «Թագավորի գլոխը կոտոշ կա՛, թագավորի գլոխը կոտոշ կա՛», էլ ուրիշ բա՛ն չըկա:

Քաղքով մեկ էս երգը կը տարածվի, խաբարը կը հասնի թագավորին, թե.—Թագավորն ապրած կենա, էսպես, էսպես:

Մե օրըմ էլ թագավորը յինքը գելնի քաղքի մեջ ման գալու, կը տեսնի, օր հաստատ ո՛ր էրեխեն շվին կչալե, դուս գուգա. «Թագավորի գլոխը կոտոշ կա»:

Հեռսն յելած գուգա պալատ, կը հրամայե՝ հո՛ւրտից էղնի, գտնին ու բերին էս վարսավիրին:

Ման գուգան, գտնին կը բերեն էս խեղճ մարդուն, կներկայացնեն թագավորին:

Կըսե.—Ա՛յ մարդ, դու օր գաղտնիք չբըդի պայեյիր, հընչի՞ երդում կերա՞ր, պայման կապեցիր, մեղք չե՞ս, օր քիչըմ հետև գլուխըդ բըդի թըռնի:

Վարսավիրը կըսե.—Թագավորն ապրած կենա, ես իմ խոսքի տերն էյի, հեչ մեկի՛մ չեմ ըսել քու գաղտնիքը, բայց էսպես, էսպես հիվընդցա.—ու կը պատմե՛:—Թագավո՛ր,—կըսե,—շատ կը խնդրեմ հրաման տուր, թող էրթան էդ շվիներից մեկը բերեն, դու էլ փորձե, թե ըսածըս էղա՞վ, ընձի ներե, թե օր չէ, դու ու քու խիղճը:

Թագավորը մարդ կը ղրկե, մե էրեխի՛մ ձեռռե շվին կառնին գուգան: Էրեխին էլ հետը կը բերեն:

Թագավորը շվին բերնին կը դնե, օր նվագե, շվու միջից էլի կը կրկնվի. «Թագավորի գլոխը կոտոշ կա»:

Էրեխին կը կանչեն, հարցուփորձ կէնեն: Էրեխեն կը պատմե, թե այսինչ տեղից ենք բերե էդ շվին:

Թագավորը հըրաման կուտա, ինչքան օր էրեխա կա, ըստուգեն, շըվիները ձեռներից առնին, վառեն: Վարսավիրին էլ կըսե.—Քեզի կը ներեմ էն պայմանով, օր դու էլ էրթաս քու էդ շվիների տեղը, ինչքան օր ղամիշ կա՛, մեկ-մեկ քաղես, դարսես յիրար վըրա, վառես, օր հետքը չը մնա: Թե չէ՛, շաբաթըմ յետև յիմացա, օր էդպես բան կա, քու գլուխն էլ կըտրել կուտամ, իմ մարդկանց էլ հետը, յիմացա՞ք:

88(88). ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆ

Կըսեն՝ Ալեքսանդր Մակեդոնացին աշխարի երեք կողմը կգրավի, կը մնա հարավը: Ասում է.—Էս ինձ բոլ է, էլ ի՞նչ պիտի անեմ, էսօր-վաղը կը մեռնեմ:

Մեկ օր էլ երազ կտեսնի, որ աստված ասում է. «Մինչև ոտքերիդ տակը չլնի էրկաթ, կլխուտ վերևը՝ պղինձ, դու չես մեռնի»:

Քնից կարթնանա, կասի.—Օ՜, ուրեմն դեռ շատ կապրեմ:

Սկսում է նորից կռվել ու քաղաք-քաղաքի հետև գրավել: Կէրթա կհասնի մի քաղաք, կասեն, որ.—Քու փիլիսոփա ընկեր Զենոնը էստեղ է, ո՛չ տուն ունի, ո՛չ՝ տեղ, մի մեծ կարասի մեջ է ապրում:

Գնում է, շատ ման է գալիս, էտ կարասը գթնում է, բերանը բացում է ու ասում.—Ողջույն քեզ, Զենոն փիլիսոփա, կարասըտ լի շնորհ լինի:

Զենոնը ասում է.—Մի լիցի կարասս լի շնորհ, այլ մի կաթիլի չափ բախտ լիցի:

Ալեքսանդրը ասում է.—Այն դեպքում դուրս արի, տանեմ ինձ սեղանի ընկեր դարձնեմ, դու կբախտավորվես:

Զենոնը ասում է.—Սպասի քեզ մի պատմություն պատմեմ:

Ասում է.—Պատմի:

Զենոնը դուրս է գալիս նստում է Ալեքսանդրի մոտ և սկսում է պատմել: Ասում է.—Ժամանակով լինում է մի փշաքաղ, սա գնում է ամեն օր դաշտից փուշ է քաղում, տանում բազարում ծախում, ապրում: Մեկ օր էլ Սերոփ մարքարեն սրան տեսնում է, ասում է. «Էս ինչ ես անում»: Ասում է. «Աղքատ մարթ եմ, փուշ եմ քաղում ծախում, ապրում»: Սերոփ մարքարեն սրան խղճում է, հանում է իր հսկա անգին քարով մատանին, ասում է. «Ա՛ռ տար ծախի, ապրի»:

Էս փշաքաղը քրջերի մեջ է լինում, տեղ չի ունենում մատանին պահի, քցում է բերանը, որ չկորցնի: Փուշը քաղում է, բարձում էշին, գալիս են տուն: Գետը անցնելուց էշը կանգնում է ջրի մեջ, էլ չի գնում: Էս աղքատը ինչքան ծեծում է էշին, էշը չի գնում: Մեկ էլ ջղայնանում է, ասում է. «Չոշ է՛, քու տիրու հերը...»: Մատանին բերանից ընկնում է գետը, խեղճ աղքատը որքան ման է գալիս չի գթնում: Մյուս օրը Մովսես մարքարեն տեսնում է աղքատը էլի է փուշ քաղելու գնում: Ասում է. «Բա ես քեզի օսկեցե մատնի տվեցի, որ դու ծախեիր ապրեիր, ընչի՞ էլի կէրթաս փուշ քաղելու»: Ասում է. «Էսպես, էսպես կորսուցի»:

Էս անքամ էլ իրեն անգին թզբեհն է տալիս, ասում է. «Առ տար ապրի»: Փշաքաղը թզբեհը փաթաթում է էշի կեխին ու ինքը սկսում է փուշ քաղել: Մեկ էլ բիրդ՝ան կտեսնի չալաղան ղուշը զ՝արկեց տարավ: Խեխճ փշաքաղը էլի քոռ ու փոշման գալիս է տուն: Մի քանի օր հետո էլի Մովսես մարքարեն սրան տեսնում է փուշ քաղելիս, ասում է. «Հիմա՞ ընչի փուշ կքաղես, չէ՞ օր քեզի անգին թզբեհ տվեցի»: Ասում է. «Էն թզբեհն էլ չալաղան ղուշը տարավ»:

Էս անքամն էլ մի անգյին իբրուխ է տալիս: Էս մարթը էտ իբրուխը տանում է ծախում, բայց խափում են, շատ էժան գին են տալիս: Բերում է, մի քանի օր ապրում են, էլի գնում է փուշ քաղելու: Մովսես մարքարեն գալիս է աստծու մոտ, ասում է. «Տեր իմ, դուք գիտե՞ք փշաքաղին»: Աստված ասում է. «Գիտեմ, ինչպե՞ս չգիտեմ»: Ասում է. «Ես մի քանի անքամ նրան օգնեցի, մատանիս տվի, թզբեհս տվի, իբրուխս տվի, օր լավ ապրի, բայց էլի օքուտ չեղավ»: Աստըվածծ ասում է. «Մովսես, Մովսես, եթե իմ մատը մեչը չլինի, քեզ նման հարյուր Մովսես էլ լինի, չի կրնա գործը յոլա տանի»: Աստված ասում է. «Վերցրու էս նշխարքի կտորը, տար տուր էտ փշաքաղին, թող ուտի, տես ոնց կբախտավորվի»: Մովսեսը նշխարքը վերցնում բերում է տալիս փշաքաղին, ասում է. «Ա՛ռ կեր, բախտավորվի, թող յախես էլ քեզանից ազատվի»: Փշաքաղը վերցնում է և ուտելով գնում է փուշ քաղելու: Էտ փուշ քաղելու ժամանակը աղեղնակը կապում է և հետն էլ կամաց անձրև է գալիս, փշերի քոքը թուլանում է, նա մեկ փթի տեղ հինգ փութ է քաղում և բերում է բազար: Էտ օրը ուրիշ մարթ փուշ չի բերի բազար, մենակ ինքը կեղնի: Շատ թանգ ծախում է և գալիս է տուն: Տեսնում է ճանապարին ձուկ են ծախում, էտօրից էրկու կիլո ձուկ կառնե, մեկ լիտրմ էլ ռախի կառնե, կուգա տուն կասե. «Կնիկ, ա՛ռ էս ձուկը խաշի ուտենք»: Կնիկը փորը կբացի, օր լվա, իստկի, մեկ էլ կտեսնի մե հատ մենձ բռլյանտ քարով մատանի էլավ: Վազեվազ կբերի մարթուն կտա, մարթը կճանաչի, կըսե. «Էս էն մատանին է, օր Մովսես մարքարեն տվեց»: Մատանին կվերցնի կտանի թաքավորի ոսկերիչի խանութը, ասում է. «Ծախում եմ»: Ոսկերիչը նայում է մատանուն, նայում իր արհեստանոցին, փշաքաղը ասում է. «Ի՞նչ ես նայում»: Ոսկերիչը ասում է. «Իմ խանութի կեսը տամ, էս մատանուն հերիք է»: Ասում է. «Դու գիտես, թե դու համաձայն ես, ես էլ եմ համաձայն»: Փշաքաղը ոսկերիչի խանութի կեսը բերում է, սկսում է առևտրով զբաղվել: Կարճ ժամանակում դառնում է հայտնի վաճառական: Ոսկերիչը էս մատանին տանում է թաքավորին նվեր, թաքավորը և թաքուհին վիճում են, թե ով պետք է էտ մատանին տնի մատը: Վերջը ասում են. «Թող մնա տանը, մեզնից ով հրավեր գնա, նա էլ կդնի մատը»: Միառժամանակից հետո փշաքաղ վաճառականի համբավը հասնում է թաքավորին: Թաքավորը սրան հրավիրում է իր տուն՝ ղոնաղ: Փշաքաղ վաճառականը գալիս է թաքավորի տուն, մի երկու օր ուտում-խմում, քեֆ են անում: Մի օր էլ սրանք միասին գնում են որսի, էն ժամանակ սովորություն է եղել. ամեն մարթ հետը որսի ղուշ էր տանում: Որ հասնում էին որսի տեղը, ղուշը բաց էին թողնում, սրանք գնում էին աղավնիներ բռնում բերում: Սրանք էլ որ հասնում են որսի դաշտ, բոլորն էլ իրենց ղշերը բաց են թողնում: Կարճ ժամանակից հետո բոլորի ղշերն էլ գալիս են, բան են բերում, բայց փշաքաղ վաճառականի ղուշը չի գալիս:

Բավականին ժամանակ անցնելուց հետո գալիս է, չալաղան ղշի տարած թզբեհն էլ բերում է: Երեկոյան վերադառնում են տուն: Մյուս օրը փշաքաղ վաճառականը ասում է, «Թաքավորը ապրած կենա, ես պետք է գնամ»: Թաքավորը և թաքուհին որոշում են էն մատանին նվիրել փշաքաղ վաճառականին: Թաքավորը ձեռքը բռնում է, թաքուհին էլ մատն է անց կացնում: Էս փշաքաղ վաճառականը թաքավորի տված նվերներով, զորքով, ծառաներով գալիս է իր երգիրը: Ճանապարհին իբրուխ առնողը լսում է փշաքաղ վաճառականի մասին: Նա էլ էտ իբրուխն է բերում նվեր տալիս, փշաքաղը չի վերցնում, բայց որ նա շատ խնթրում է, վերցնում է:

Զենոնը ասում է.—Եվ էսպես, շնորհիվ աստծու, նա և հարուստ վաճառական է դառնում և իր կորցրած բաները հետ է ստանում, բայց քանի աստծու մատը մեչը չէր, նա ախքատ էր:

Մակեդոնացին ասում է.—Արի՛, արի՛, Զենով: Արի քեզ տանեմ ինձ հետ, դու երբեք նեղություն չես կրի:

Եվ այսպես Մակեդոնացին Զենովին վերցնում է հետը տանում է: Սրանք կէրթան կհասնին մե շոք երգիր՝ն: Մակեդոնացին կասե.—Էս ինչ շոք երգիր է, շունչս կկտրի, շատ վատ կզգամ:

Բժիշկները կմտածեն՝ ինչ էնենք էսօր, կպերեն գետինը կփորեն, տակը էրկաթ կփռեն, վերևն էլ պղինձ կձգեն ու հողով կծածկեն, որ հով լինի: Օր կսարքեն կպրծնեն, Մակեդոնացուն կպերեն էստեղ, կըսե.—Ուխա՛յ, ինչ հով է, քիչմ հովցա:

Հենց էս վախտը հրիշտակը գալիս է, ասում է.—Հոգիտ տո՛ւր:

Մակեդոնացին ասում է.—Ինչպե՞ս,—ասում է,—աստված ասել է՝ մինչև գլխուտ վերը չլինի պղինձ, ոտքերիտ տակը՝ էրկաթ, դուն չես մեռնի:

Հրիշտակը ասում է.—Մի վեր նայի:

Մակեդոնացին նայում է տեսնում է՝ պղինձ է:

Ասում է.—Մի վարն էլ նայի:

Նայում է տեսնում է՝ էրկաթ է: Հրիշտակը ասում է.—Հիմա ինչ կըսես:

Մակեդոնացին ասում է.—Երբ այսպես է, սպասեք կանչեմ պալատականներիս, իմ վերջին խոսկը ասեմ, նոր հոքիս առ:

Մակեդոնացին կանչում է բոլոր պալատականներին, վեզիրներին ասում է.—Ես կմեռնեմ և մահիցս առաջ ձեզնից խնդրում եմ հետևյալը, որ իմ դագաղի հետևից կտանեք իմ ամբողջ զորքը, ամեն մեկը իր տեսակ զենք ու սարքով պատրաստ: Նրանց հետևից կբացեք իմ բոլոր գանձարանները և նրանց հետևից ոսկին անվերջ ցրելով կգնան մինչև գերեզման: Եվ վերջապես վերջին խնդիրքս. իմ երկրի մեջ որքան սիրուն, գեղեցիկ, ջահել կին և ախչիկներ կան, բոլորին կհավաքեք սև կհաքցնեք, և լաց լինելով կգան մինչև գերեզման: Թևս էլ դագաղից կկախեք, որ տանելիս գնա ու գա:

Շատ չանցած հրեշտակը գալիս է և արքայի հոգին առնում է: Արքան մեռնում է, պալատականները հավաքվում և խորհրդակցում են, թե արքայի միտքը ինչ էր, այդ խոսքերով ինչ էր ուզել մեզ հասկացնի: Ամեն մեկը մի բան է ասում, բայց իմաստուններից մեկը ասում է.—Ո՛չ, ճիշտ չէ: Մակեդոնացին ուզել է հասկացնել տա, եթե հնար լիներ մահին զենքով հաղթել, այսքան զենք ու զորք ունեի, ես կը հաղթեի, եթե փողով, ոսկով կարելի է մահին հաղթել, ես այսքան փող ու ոսկի ունեմ՝ կհաղթեի: Եթե լալով, ողբալով կարելի է կյանքը հետ բերել, ինձ վրա այսքան լացող ու ողբացող կա, թող հետ բերեն: Կախ ընկած ձեռքն էլ ասում է. «Ո՛չ, մահին ոչնչով չի կարելի հաղթել, աշխարը էսպես էկե, էսպես էլ կէրթա»:

Եվ այսպես, լավ դագաղ են սարքել տալիս, արքային դնում մեջը ու բերում են իրենց քաղաքը, որ թաղեն: Մայրը գոռում է, մազերը փետտում է և չի թողնում, որ տանեն թաղեն: Երեք օր անընդհատ լաց լինելուց հետո մարդիք ասում են.—Բերեք մի հնար գթնենք, տանենք թաղենք, թե չէ դիակը կհոտի:

Բերում են մի սենյակ ազատում են, պատերի տակ մի քանի փոքրիկ շկաֆներ են թողում դատարկ, առաստաղից քիչ ցածր ուտելիքներ են կախում, էնպես են անում, որ եթե դագաղը սեղանին դրված լինի, մինչև դագաղին չկանգնեն, ձեռը չի հասնի էտ ուտելիքներին: Էսպես ամեն բան սարքելուց հետո գալիս են մորը ասում են.—Օր չես ուզե քո թաքավոր տղուտ թաղենք, դե թող տանենք ուրիշ սենյակ, արի դուն էլ էնդեղ քովը նստի, լաց եղի:

Էտ սենյակի մեջտեղը ստոլ՝մ կդնեն, դա-

գաղն էլ կտնեն ստոլին: Մայրն էլ գալիս է մոտը սկսում լաց լինել: Մեկ օր է լաց լինում, էրկու օր է լաց լինում, երեք օր է լաց լինում, վերջապես մեկ օր էլ շատ քաղց է զգում: Բացում է էս շկաֆը՝ բան չկա, էն շկաֆը՝ բան չկա, չորս կողմը դատարկ է: Մեկ էլ նայում է վերև, տեսնում է՝ առաստաղից ամեն բան կա կախած: Բարձրանում է սեղանին կանգնում, ձեռը չի հասնում, ոտքը դնում է դագաղին, որ կանգնի վրան, դռան մոտից պահակը կանչում է, ասում է.—Էյ, ինչ ես անում, չի կարելի բարձրանալ արքայի դագաղին:

Մայրը ասում է.—Արեք տարեք թաղեք, ես ուտել եմ ուզում:

Նոր կանչում են բոլորին և արքայի վերջին խնդրանքի պես տանում են թաղում: Հետևյալ օրը, երբ գնում են էքնահող, մայրը դեռ գերեզմանին չհասած՝ գոռում է.—Ալեքսանդր, Ալեքսանդր, ո՞ւր ես, դուրս արի:

Մի ձայն գետնի տակից ասում է.—Էտ ո՞ր մեկ Ալեքսանդրին ես կանչում, այս հողը հարյուր հազարավոր Ալեքսանդրներ է կուլ տվել, թող մեկն էլ քո Ալեքսանդրը լինի:

89(89). ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆԸ

Մե օրըմ իմաստուն Սողոմոնըն ու իրեն տըղեն նստած կեղնին: Մե քյասիբ մարթըմ կուգա կըսե.—Իմաստուն Սողոմոն, հինգ կոտ ցորեն ունիմ, ցանե՞մ, թե՞ ուտեմ:

Իմաստուն Սողոմոնը կըսե.—Տար ցանե:

Հըմը տղեն կըսե.—Հայրիկ, մարթը մեռնելու վրա է, թո՛ղ չցանե, թող ուտե:

Մարթը Սողոմոն Իմաստունին կը լսե, տանի կը ցանե: Կանցնի մե վախտըմ: Էդ մարթը կէրթա ցորնին աշելու: Կը մտնի արտին մեչը, դե անոթի մարթ, էլ չի կըրնա դուս գա արտեն, մնա կը մեչն ու մեռնի կը:

Իմաստուն Սողոմոնի տղեն հորը կըսե.—Հայրիկ, քելե էրթանք ման գալու:

Հերըն կըսե.—Քելե:

Կէրթան ման գալու, կը հասնին էդ մարթու արտին, կը մըտնին մեչը, ֆո՛ւտ կառնեն: Իմաստուն Սողոմոնը կըսե.—Էս ի՞նչ ֆոտ է:

Տղեն կըսե.—Հայրիկ, էսիկ քու բերնի ֆո՛ւտն է, ըսիր՝ ցանե: Ցանեց՝ մեռավ, հոտավ:

Իմաստուն Սողոմոնն իմացավ, օր տղի իմաստութունը իրենեն շատ էր:

90(90). ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՊԱՏՄՎԱԾՔԸ

Սողոմոնը՝ իմաստունը, Դավիթ մարգարեի տղեն էր: Դավիթ մարգարեն [թագավոր էր] քառսուն կնիկ ուներ: Դավիթ Մարգարեն իր զորապետ Ուլիայի կնգան սիրեց:

Դավիթ Մարգարեն կըսե Ուլիային.—Գնա տուն, հանգստացի:

—Տեր իմ, մինչի պատերազմը չը վերջացնեմ, չեմ էրթա տուն:

Դավիթ Մարգարեն տեսավ, որ Ուլիան չի էրթա տուն, իրա գլխավոր հրամանատարին կարգադրեց, որ Ուլիային պատերազմում մե վտանգավոր տեղ՚մ դնե, որ զարկվի:

Ուլիային զարկեցին պատերազմում: Ուլիայի կնիկը բերավ իրան քովը:

Հրեշտակը յիջավ ըսավ.—Վով հազար օխչար ունենա, մեկը չը ղմըշի մորթե ուտե, մեկելն էլ մե գառմ ունենա՝ մորթե ուտե, էդոր պատիվը ի՞նչ է: Քարկոծելով սպանել վով որ մեղավոր է,—ըսավ:

—Դու ես էդ մեղավորը:

—Մեղա Աստծու, մեղավոր եմ,—ըսավ Դավիթ Մարգարեն,—յետև շաճը կարմրցավ, կայնավ վրեն, օխտը գլոխ Սաղմոս էրավ, զղճաց:

Աստված ներեց հանցանքը, դառավ Դավիթ Մարգարե:

Դավիթ Մարգարեն որ մեռավ, Սողոմոնը հազար անծին էրինջ, հազար գառ մատաղ էրավ, որ Աստված իրան էնքան իմաստություն տա, որ իր ազգը կառավարե, ինչղ որ իրա հերն էր կառավարե:

Մատաղ որ էրավ, հրեշտակը յիջավ ու ըսավ.—Մատաղդ ընդունելի է, յերգան կյա՞նք գուզես, հարստությո՞ւն գուզես, թե՞ յիմաստություն:

—Ես յիմաստություն գուզեմ,—ըսավ Սողոմոնը,—որ իմ հոր տեղը երկիրը կառավարեմ:

—Դու որ ընտրիր յիմաստությունը, հա՛մ քեզի երգար կյանք կուտամ, հա՛մ էլ յիմաստություն կուտամ, բայց Աստծու պատվիրանքը պահես էնպես, ինչպես որ պահեց հերդ:

Մնաց ժամանակ՚մ: Սողոմոնը նստավ թագավոր, պալատ շինեց, ես ինչ գիտեմ, ինչ քարով, ինչ զարդարանքով՝ Սողոմոնի տաճարը: (Քրիստոս, որ էկավ տեսավ պալատը, ըսավ. «Քարը քարին չի մնա», յաշխարքին վերջ կա, կանգուն բան չկա յաշխարը):

Սողոմոն իմաստունը հայտարարեց.—Վով որ գա պալատը գնահատե, ես էնոր պարգևատրեմ կը:

Մեկը էկավ ըսավ. «Միլիոն՚մ աժե», մեկելը ըսավ. «Տասը միլիոն աժե»: Յամեն մեկը մե գին դրեց, բոլորի գլոխը զարկեց: Ինքը գիտեր, թե ինչքան է խարճե:

Վերջը էկավ մե հասարակ մարդ՚մ, ըսավ.—Եղիապաշտ պասին[86] յանձրևը ինչքան յեկամուտ կուտա, էդքան արժողություն ունի պալատը [տաճարը]:

Սողոմոնը ըսավ.—Դու նախրճի մարդ, ինչքա՚ն յիմաստություն ունեցար, որ գնահատեցիր տաճարը: Եթե էդքան յիմաստուն ես, էս կովի փորի հորթի ճակատը ղաշխա է՞, թե՞ չէ:

[Սողոմ իմաստունը կըսե.—«Ճակատը ղաշխա է»]:

—Չէ,—կըսե նախրջին, ճակաթը չէ, պոչն է ղաշխա, դրել է ճակտին, գիտես, թե ճակատն է ղաշխա:

Բերին կովը մորթեցին, տեսան, որ պոչն է ղաշխա:

—Տե՞սար:

—Էդ ինչ բան է,—կըսե Սողոմոն Իմաստունը,—դու յընձնեն յիմաստուն ե՞ս, դու՝ նախրջի, ես՝ թագավոր, քու ծնած օրը ղոչը դմակը քերեց, իմ ծնած օրը ղոչը կոտոշը քերեց:

Նախրջին յիմաստուն էր:

Սողոմոն Իմաստունը պարգևեց նրան: Նախրճին գնաց:

91(91). ԱՍՏԾՈ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ ՉՊԱՀՈՂ ՍՈՂՈՄՈՆԸ

Սողոմոն Իմաստունը քառսուն կնիկ ուներ: Կռապաշտ աղջկա վրա յաչք քցեց:

Աղջիկը ըսավ.—Սողոմոն Իմաստուն, արի կռքերուն երկրպագություն տուր, օր քեզի առնիմ:

Սողոմոն Իմաստունը ըսավ.—Ես Աստվածապաշտ եմ, ես չեմ կրնա գա կռքատունը: Դու գելնիս կռքատան յերթիքը, ես քաղքից դուս կէրթամ, էն քովեն ձիով գուքամ, գլխով կէնեմ քեզի, յիմացի, որ ես կռքերուն երկրպագություն տվի:

Կուռքերուն որ երկրպագություն տվավ, էկավ տուն [պալատ], ձիուց իջավ, թագը գլխեն վերցրավ:

Հրեշտակը ըսավ.—Հա՛մ քու իմաստությունդ առա, հարստությունդ էլ առա, երգար կյանքդ էլ առա, մենակ մե գավազանըմ կը թողնեմ հորդ խաթրի համար: Աստծու պատվիրանները չը պահեցիր: Սողոմոն Իմաստունը դառավ աննշան մարդ:

86 Եղիա Մարգարեի պասը օգոստոս ամսին է գալիս (ծանոթ. բանասաց Տեռփո քեռու):

ԿԵՆԴԱՆԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

92(92). ԷԴՊԵՍ ԷԼ ԵՄ ԹԸՌԵԼ

Մե աղվեսըմ վազելով գուգա, ինչըղ կեղ-նի, գընգնի մե խորունկ փոսի՚մ մեջ: Էս կողմ կը զարկըվի, էն կողմ կը զարկվի, բան դուս չի գա: Կը կայնի փոսի օրթա տեղը յէտևի ոտների վրա ծուլի-ծուլի կեղնի, օր դուս գա: Թաթիկները կը զարկե պատերուն, կը ճանկըռե, էլի կը թըռնի, բան դուս չի գա: Աղվըսի թըռնելու վախտը մե սոված գելըմ կանցնի էդ փոսի կողքեն, ձեն կը լըսե կը, կայնի, տեսնի, օր աղվեսն ինքն իրան պար գուգա, կթըռնի հա՛ էս, հա՛ էն պատին:

Գելը կը հարցնե.—Աղվես քույրիկ, էս ինչ ես իմացե՞...

Աղվեսը թե.—Էնքան եմ կերե օ՛ր, հըմի էլ կթըռնիմ, օր կերածըս ցած իջնի:

Կըսե.—Ինչըղ թե:

Հըբը.—Էսպես, էսպես, ի՞նչ ուզես՝ կա, գու-զես՝ դու է՛լ արի:

Էս ախմախ գելը մեկն էրկու չի էնե, իրան կը քըցի փոսը: Աղվեսը շուտըմ կը թռնի գիլու մեջքին, կը կայնի, թաթերը կը հասցնե փոսի բերնին, բըռնե ու դուս կը թռնի: Գելը չորս բոլ-որը կաշե, բան չըկա, ու աղվեսն էլ դուս թըռա՚վ... նոր կուտա գըլխուն, թե՝ էս ինչ զուլումի ըռաստ էկավ: Հմի աղվեսը կայնե փոսի վերևը՝ գիլուն կաշե: Գելը թաթերը փոսի էս պատին կը քըցի, օր դուս յէլնի (կը թըռնի):

Աղվեսը կըսե.—Էդ տեսակ ես էլ եմ թըռե:

Մեկել պատի մոտ կը կայնի, թըռնի:

Կըսե.—Էդ ձևի էլ եմ թըռե:

Փոսի օրթեն կը կայնի, ինչքան ուժ ունի, թոփ կէնե՝ կը թըռնի: Էլի բան դուս չի գա:

Աղվեսը կըսե.—Էդպես էլ եմ թըռե, բան դուս չի գա, բըդի ըսպասես, օր քեզի պես մե ախմախըմ անցնի, խաբես, թե ուտելիք կա, համոզես՝ քովդ գա, թըռնիս մեջքին՝ դուս գաս: Է՛,—կըսե,—ես գնացի:

93(93). ՄԱՍԱԼ ԳԵՂԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Օրեն մե օր մե գեղացի՚մ կէրթա հանդը՝ վար էնելու: Եփ օր յիրա պետքությունը գուկա, կէրթա, օր մե փոսի՚մ մեջ պպզի: Տեսնի կը, օր յառջը պարկած յիրա ամորձիների հետը կը խաղա:

Եփ յառջը տեսնի կը գեղացուն շատ խնդրվի կը.—Գեղացի ախպեր, շատ կը խնդրեմ, օր իմ այիբս հեչ մեկին չըսես, չըսեցիր՝ ես քեզի շատ լավություն կենեմ, ըսեցիր՝ անպատճառ քեզի կը վնասեմ,—կըսե ու թողնե կէրթա:

Մութը օր գընկնի, ռանչպարը սելը լծե, կէրթա յիրա տուն: Յառջն էլ կամաց-կամաց ռանչպրի յետևեն կէրթա, հասնի կը գեղ: Եփոր մութը լավ գընկնի, յառջը, ռանչպարից գող-տուց, գելնի տան յերթիկը ու յանկանջ կէնե: Տե-սավ, օր գեղացին հեչ մի խորաթա չի ըսե յիրա մասին: Յամեն օր յառջը մե օչխրի՚մ ջանդակ յերթկից քցե կը ցած:

Մե օր՚մ էլ յառջը գուքա, տեսնի կը, օր մարդ ու կնիկ յիրար հետ վիճեն կը.—Ա՛յ մարդ,—կը-սե կնիկը,—էդ ջանդակը վո՞վ կը բերե, օր չը-սես՝ ես քեզի բռնել կուտամ;

—Վով բերե՝ կը բերե, քու ի՞նչ գործն է, դու զխտվի...

—Թե չըսես,—կըսե կնիկը,—ես էս տունը չեմ մնա, կէրթա՛մ...

—Սու՛ս ըսեմ,—ու պատմե կը յառջի մասին:

Յառջը գիմանա, ջանդակը կառնի ու յետ կէրթա: Էլ ջանդակ չի բերե: Մարդը վախենա կը, օր յառջը իրան վնաս կուտա, էլ չի էրթա յարտի քովը:

Յարտը հասնի կը, չորնա կը, հասկը սկսե կը թափել: Մարդիկ նեղենան կը.—Ա՛յ մարդ, յընչի՞ չես էրթա յարտդ քաղելու:

Յիրա յամոթուն գեղացին լծե կը սելը, գերնդին ու փոցխը դնե կը սելի վրեն, տխուր ու տրտում քշե կը դպա յարտը:

Աղվեսը ռաստ գուքա:

—Ա՛յ մարդ, յընչի՞ էդպես տխուր կէրթաս:

—Քու ի՞նչ գործն է:

—Ըսա, գուցե քեզի ճար՚մ էնեմ:

Գեղացին պատմե կը յառջի մասին.—Էնիկ անպատճառ յընձի կը վնասե:

Աղվեսը կըսե.—Ի՞նչ կուտաս, օր քեզի ազատեմ յառջի ճանկերեն:

—Ինչ օր յուզես կուտամ:

—Շատ բան չեմ յուզե քեզնից՝ քու ձվերից մեկը:

—Լավ, ռազի եմ, մենակ յընձի ազատե յառջից:

—Լավ քեզի կազատեմ,—կըսե աղվեսը,—ցախ թոփ էրա, պոչես կապե, ես կէրթամ հեռու, թոզ էնելեն գուքամ, յառջը հիմի գուքա քովդ կըսե. «Էդ ի՞նչ թոզ է», դու ըսա, օր թագավորի ձիանները քոսոտել են, յառջի եղի ման գուքան: Յառջը քեզի կըսե. «Յընձի պահե»: Դու էնոր կոխես կը ջվլի մեջը ու բերանը յամուր կը կապես ու վերցնես կը թառը լավ կը ծեծես, էնքան օր յառջը սատկի, դու կը պրծնիս:

Ինչղ օր ըսել էր աղվեսը, յամեն ինչ կատարվավ: Յառջը սատկավ:

Գեղացին սելը բարձավ գերնդին ու փոցխը, օր էրթար գեղ, աղվեսը էկավ քովը, ըսավ.—Դե՛, գեղացի ախպեր, պրծի իմ պահանջս տուր:

Եփոր գեղացին շալվարը վար կը քցե՝ աղվեսը յիրա թաթիկներով կշռե կը էնոր ձվանները՝ ո՛րն է ծանդռ, ո՛րը՝ թեթև: Վախենալուց գեղացու յետևեն սկսում է քամի էրթալ:

Աղվեսը հարցնե կը.—Էս ի՞նչ ճզվզտոց է:

—Աղվե՛ս ախպեր, ի՞նչ ըսեմ քեզի, անոթի վախտս թազի ու թուլա եմ կուլ տվե, հիմի թազին կըսե. «Թող ես աղվեսին բռնեմ», թուլեն կըսե. «Չէ, ես բռնեմ», էդ պատճառով էլ ձեն գուքա:

—Գեղացի ախպեր, ղայիմ պահե, թող դուս չգան... ես թողնիմ փախնիմ:

94(94). ԳԵԼԻՆ ԴԱՏԵՆ ԿԸ

Գելը, աղվեսը իրարու հետ խոսվռդեին կը: Գելը աղվեսին կսե.—Դու սատանա ես, շատ էլ խառնակչի, հըմը քեզի էման պահես կը, ինչխոր Աստծու ամենաարդարն ես, ինչ խարթաղութեն ըսես օր ձեռքիցտ չկա, հա՛մ կէնես, հա՛մ էլ քեզի միամիտի տեղ դնես կը: Քեզի կսեմ քու էդ խորամանկությանը վերջ տուր:

Աղվեսը կսե.—Ընչի դու քու անունը չիտե՞ս: Դու օր լավ էղնեիր, քու անունը գել չէին դնե, մտնիս՚կ խալխի օղչըրնոցը, սաղին ջարթես կը, մենակ էնոնց արունը խմես կը, միսը թողես կը, օր էդև ուտես: Հըլը էդիկ հերիք չէ, գելնիս սարը չոբնին սավսալաթմիշ կէնես, օչխրին կառնես շալակտ, փախնիս կը: Ընչի՞ քու էրածը չես ըսե:

Գելը հասնի կը, օր աղվեսին բռնե, պոչը կգնի բերանը: Քաշե՝ պոչը կտռի կը, մնա կը ղոլիկ:

Աղվեսը ցավից մի հատ՚մ չափալը կուտա գիլու էրեսին, գիլու էրեսը կարմրի կը, գիլուն օր տեսնիք, էրեսին աշեք, հարի հիմի էլ կարմիր է: Էնել ըսեմ, օր էդ հատաղին հոն կայնած կեղնին փիղը, արջը, լապստրակը: Ուրուրը վերևեն գուգար, էն էլ տեսնի կը: Ու իրանց անկճով գիմանան կը, հեչ տերը չեն էղնի:

Հիմի գործը հասնի կը դատարան: Դատավորը Աղվեսին, Գիլուն կանչե կը՝ էդոնց գործը լսելու համար: Սվթաեն կանչե կը Գիլուն, կսե.—Հըլը ըսա՛, ընչի՞ համար աղվեսի պոչը կտռիր:

Էն էլ կսե.—Էնոր համար, օր շատ ստախոս, խապեպայի մեկն է: Մտնի կը էսոր, էնոր հավնոցները, սաղին ջարթե կը, կուտե: Էդոր համար,—կսե գելը:

Սրեն հասնի կը Աղվեսին: Աղվեսը կսե.—Սաղ աշխրքի գող ու ավազակը ինքն է, ընձի կսե գող ու ավազակ ես: Օչխարը կէրթա հանդը արծելու, էդևներեն գողդուկ կէրթա, սավսալաթմիշ կէնե չոբնի աչքը, օչխարը գողնա քցե կը շալակը, փախնե կը, տանի գողդուկ կուտե: Ես օր էդման ըսի, ընկավ էդևես, չկոցավ հասներ, պոչս ընկավ բերանը, քաշեց, պոչս կտռեց: Թե չեք ավտնա, կանչեք ուրուրին, էնիկ տեսե, գիտե էդոր:

Դատավոր փիղը էդոնց մեկ-մեկ կանչե կը հարց ու փորձ կէնե, բիթունքն էլ ինքար գուգան: Ուրուրին հարցուն կը, էնիկ էլ կսե.—Ես չիտեմ ինչի համար կռվան, ես վերևեն գուգայի, հարի իջա քարի վրեն էդոնք կռվե, խլսել էին: Թե ընչի կռվեին կը էդիկ չիտեմ:

Կանչեն կը արջին, կսեն.—Դու ի՞նչ գիտես:

—Դուզ օր ըսեմ, հեչ բան չհասկցա,—կսե արջը: Անոթի էի, նստե թաթս լիզեի կը, ղալմաղալ ընկավ անկաջս, մոտկցա էդոնց, տեսա՝

աղվեսի պոչը չկար, պոչեն էլ արուն կէրթար, գիլու բերանն էլ արնոտ էր:

Էդման սրով, սրով, սրով հարցուին կը, սրեն հասնի կը լապստրակին:

Դատավորը հարցու կը.—Դու ինչ ունիս ըսելու, դու էդոնց քովը կայնուկ էիր, դիա լավ բդի գիտենաս:

—Ղորթ է, հոն կայնուկ էի, հըմը բան չտեսա,—կսե լապստրակը:

Դատավորը կսե.—Ինքյար գալու համար լապստրակի չորս օդքն էլ նալել:

Ու էդման էլ կէնեն:

95(95). ԷՇՆ ՈՒ ԴԱՎԵՆ

Մի օր քարվանի մեչ էշն ու դավեն միշավարա կանեն:

Էշը դավին կասի.—Դավա ախպեր, արի փախնենք էս քարվանի մեչից:

Էշն ու դավեն կը փախնեն մի ձորի մեչ: Քարվանը կէլնի, իշուն ու դավին ման կուգան, չեն կրնա գտնի: Էշն ու դավեն էդ ձորի մեչ կուտին, կը խմին ու կը գիրանան:

Մի օր էշն ասում է դավին.—Դավա ախպեր, կանչս էկեր է, պիտի կանչիմ:

Դավեն կասե.—Էշ ախպեր, մի՛ կանչե, կուգան, բռնեն կը մեզի՝ քու ձենից ու մեկին էրկու բեռ զարկին կը:

Էշը կըսե.—Չէ, պիտի կանչիմ, կանչս էկիր է:

Էշը, որ զռոցը կը դնե, ձորի գլխին մե ուրիշ քարավան է վեր էկի:

Քարվանբաշին կասե կը.—Տղա՛ք, աս ինչ է, հայվնի ձեն կուգա կը:

Իտոնք քամանտները կառնին, ձորը կիչնին: Կը տեսնին, որ էշն ու մի դավա, լավ, լավ չաղացած, ու, սիրուն, քամանտները կը ձգեն կը ու բռնեն կը, բերեն ու մեկին էրկուս բեռ կը զարկեն ու կընկնին ճանապար: Քնացին, քնացին, մի մենձ ջրի ռաստ էկան, տեսան, որ էշը ջրից չի կարա անցնի, էշը վերցուցին դավի վրա դրին, որ ջրիցը անցկացնեն: Դավեն քնաց ջրի օրթալըղը ու ըսավ էշին.—Էշ ախպեր, ինչ որ քու կանչդ էկել էր, իմս ալ հիմա պար խաղալս է էկեր, պար պիտի խաղամ:

Էշը կըսե.—Դավա ախպեր, մի խաղա, վար կընկնեմ, կը խեխտվեմ, աստծու խաթր:

Դավեն սկսեց պար խաղալ և իշուն գցեց ջուրը, խեխտեց ու ըսավ էշին.—Գնա՛,—ըսավ,—դու իմ գլխին շատ ղազա կը բերես,—ըսավ:

ԱՌԱԿՆԵՐ

96(96). ԱՆԻԾԱԾ ԹԱԿԱՎՈՐԸ

Ժամանակոց կեղնի, չի էղնի, մե թակավոր՝մ կեղնի: Էդ թակավորը պապերից պապ՝ չուրի ինկը, էնկան գեշ է էղե: Իրանց ժողովուտին միշտ նեղուտեն են տվե: Ճնշել են, ունեծածները խլե, տարել են: Ժողովուռտը խեղճ ու ախկատ են ապրե: Ամեն օր աստված են կանճե, օր էդ թակավորը մեռնի, ուրիշ թակավոր գա, բալկիմ լավ էղնի, իրանկ օր ու արև տեսնին: Էն խո քանի թակավոր փոխվել է, էնկան գեշծրել է ժողովռտի դրուտենը: Հիմի էդ վեռճի թակավորը անցած թակավորներից գեշն է:

Ամեն օր, ամեն առավոտ, էլի ժողովուռտը էլնմ ասված էին կանճմ, օր էդ թակավորը մեռնի, բալկիմ լավը գա:

Հմը մե պառավ՝մ էրտմ է բանձր սարի գլոխ կայնմ ու ասված է կանճմ.—Ասվա՛ծ, մեր թակավորին երկան արև պայես: Գյանկը շատ էնես, չմեռնի:

Ամեն օր պառավը էրտմ էր բանձր սարի գլոխ, աստված էր կանճմ, թակավորին էրկար գյանկ ու արևշատուտեն էր ուզմ:

Մե օր՝մ էլ պառավը գնաց կայնավ օխտը ճամպու վրեն ու ասված կանճեց ըսավ.—Ասված, իշկան օր ապրել է մեր թակավորը, էտկան էլ ապրի:

Էն դիեն ճամպոռտները էկան, աշին պառվին, զարմացան, ըսին.—Պառավ, ախր ձեր ժողովուռտը ամեն օր ասված է կանչմ, օր ձեր թակավորը մեռնի, իրանց հոկին ազատվի, դու ը՞նճ՝ես աստված կանչմ, օր շատ ապրի:

Պառավն ըսավ.—Ի՞նչ էնեմ, օր շատ ապրելը չուզեմ, քանի ասուն աղաճեծինկ, թակավորին մեռնել ուզեծինկ, մեռան, թակավորի տեղը դիա բետարը էկավ: Ըդուր հմար ուզմ եմ, օր չմեռնի:

Ճամփորդներից մեկը ըսավ.—Բա ընճի՞ ես էլնմ սարի գլոխը, նոր ասված կանճմ:

Պառավն ըսավ.—Էլնմ եմ բանձր սարի գլոխն, օր ասված թեզ ձենս լսեր:

Ծիծաղածին ճամպոռտները, գնածին իրանծ ճամպեն: Պառավն էր, էկավ տուն: Դրկծները թոպ էղան պառվին տվին դռպի տակ, տուր թե կուտաս մեղավորին, քոտակ տվին պառվին, ջանը կապտծրին:

—Դու ը՞նչ՝ես աստված կանճմ, օր թակավորը էրկար ապրի, չմեռնի, բոլ չէ՞ մեզի ճնշե ու տանջե: Գնա աստված կանճե, թող մեռնի:

Պառավն էլավ գնաց էլի բանձր սարի գլոխը, ըսկսեց աստված կանճել… ըսավ.—Աստվա՛ծ ջան, էս թակավորը մեռնի, ուրիշը գա ըստից դիա բետար:

Հակառակը լսեց, թե օղոռտը, աստված պառվի ձենը լսեց: Թակավոը մեռավ: Ընդից օխտ ու մեկ բետարն էկավ տեղը:

Էս անկամ սաղ ժողովուռտը մեկ եղած՝ աստված էին կանճմ, օր թակավորը չմեռնի, շատ աբրի, օր իրանից բետարը չգա տեղը:

Էդ էլ գեշ թակավորի պատմուտենը: Դուկ լավ եղեկ, օր ձեր լավը խոսան:

97(97). ՎԱՐՊԵՏՆ ՈՒ ԷՐԵԽԵՔԸ

Թաքավորի մեկը կսե.—Մե ոսկերիչ՝մ կանչեցեք ընձի մե իբրուխ՝մ թափել կուտամ:

Կէրթան մե վարպետի կբերեն թաքավորի քովը, թաքավորը կսե.—Ընձի մե լավ իբրուխ՝մ թափե, որ նմանը ըսկի չ՝էղե, քեզի օսկի կտամ:

Կսե,—Աչքիս վրա, թաքավոր ջան:

Էս վարպետը կէրթա տուն, իրեք ամիս կչաչրչարվի, լա՛վ նախշերով մե հատ քու ըսած իբրուխ կթափե, որ նմանը հեչ չ՝էղե: Մե քանի՝մ օր հետո կքանդե կտեսնե՝ փորը ծակ է տուս էկե, կսե.—Վա՛յ, քու տիրու հերն անիծած, իրեք ամիս չարչրվա, անդերի ղալիբը թափեցի, հիմի էլ փորը ծակ է տուս էկե:

Էդ ժամանակ դպրոցական էրեխեքը կտեսնեն էսոր՝ իբրուխը ձեռը կայնած, մեկը կսե.—Ինչ գեղեցիկ իբրուխ է, ափսոս փորը ծակ է:

Էն մեկ էրեխեն էլ կսե.—Ծո ինչ կսես, չես հասկնա՝ էտ պուլպուլի տեղն է:

Էս վարպետը ուրախութունից քիչ կմնա խելքը կլխեն թռցնի: Կսե.—Ծո, ես քանի տարվան վարպետ եմ, մոռցեր էի, որ էս իբրուխին պուլպուլի տեղ է հարկավոր, մե չափեմ, տեսնեմ:

Կչափե, կտեսնե դռուզ էս իր տեղն է, կսե.—Տեր աստված, էտոր համար են ըսե՝ հարուր տարի ապրի, հարուր տարի սովրի, էլի էրեխուց բան հարցրու:

98(98). ԽԻՆ ԺԱՄԱՆԱԿ ԽԱՆԵԼՈՒԿ

Թաքավորն, ուրան լալա-վազիր կէրթան քաղաք պտտվելու: Բիրտան մեկ խատ խեղճ կնիկ ուրան դռան վրա կայներ էր, թեշիկ կը մաներ: Թաքավորն ընցավ, տեսավ, օր խորոտ կնիկ՚մ կայներ էր: Խարցուց, ըսեց—Ա՛յ կնիկ, մարթը դ՚ռտեղ ա:

Ըսեց.—Մարթը գացեր ա ջաղաչ:

Իրկուն թաքավորն էդ կնկա մարթուն կանչեց, ըսեց, օր՝ պըտի քու կնիկն տաս ընձի: Էտ մարթն զարմացավ ու գնաց տուն: Կնիկն խարցուց.—Մ՚ռթ, ընչի՞ էր խանչե քեզի թաքավորն:

Ըսեց.—Կնիկ, քեզի գուզե, օր էղնիս իրան կնիկ:

Կնիկն ըսեց.—Մի՛ վախեցի, ես կէրթամ, պատասխան կուտամ թաքավորին:

Խրամկախ կնկան խանչին թաքավորի կուշտն:

Թաքավորին ըսեց.—Ընչի՞ ես կանչե ընձի, թաքավոր:

Թաքավորն ըսեց.—Քըզի կանչեր եմ, օր էղնիս ընձի կնիկ:

Կնիկն ըսեց.—Ես մեկ խատ խանելուկ կըսեմ, թե կըռցար խանելուկն խանե՞լ, կառնիմ քեզի, թե չը կըռցար՝ ընձի պըտի տաս մե կոտըմ օսկի:

Թաքավորն ըսեց.—Դե՛, ըսա:

Ըսեց.—Թաքավորը ապրած կենա, եթե հըմմե՞ն բան խոտի, աղն կը ցանենք վըրեն, խոտն կը քաշվի, ըպը օր ա՛ղն խոտի, ի՞նչ պըտի էնենք, օր խոտըն քաշվի:

Թաքավորը մտածե՞ց, մտածեց չը կըռցավ խանե:

Ըսեց.—Դռ՚ ըսա:

Կնիկն ըսեց.—մենք հըմմենքըս օր խոտի՞նք, դու մեր աղն ես, մեր խոտը կվերցուս, մըկա դռ՚ ես խոտե, քու խոտն ինչո՞վ վերչացունք:

Թաքավորը լիզուն կծեց ու կոտըմ օսկին տվեց, կնկան ճամփու դրեց:

99(99). ԵԶՆ ՈՒ ՁԻՆ

Եզն ու ձին իրար հետ խոսում են: Ձին ըսըմ է.—Իշկան օր մենձ իշխաններ կան, իմ վրա են նըստըմ, ես աղի պես ման եմ գալիս:

Եզն ըսըմ է.—Ես օր չաշխատիմ, էլ մեծավոր իշխաններ չեն ապրի ու քու վրա էլ չեն նստի: Էն վախտը դու էլ չես ապրի:

100(100). ՈՒՆԵՑՎԱԾՔԻՑ ԶՐԿՎԱԾ

Մե վենձ գեղ՚մ կեղնի: Մե ունևոր մարդ՚մ կունենա էրկու տղա ու էրկու հարս ու էրկու հատ էլ պզտի տղա, մեկը՝ տասնըհինգ տարեկան, մեկը՝ տասը տարեկան: Մարդու անուն կեղնի Պողոս:

Առաջի հերթին մեռնի կը կնիկը, յետո էլ հիվանդությունից՝ էրկու հասած տղեն ու էրկու հարսը: Մնա կը ինքը ու էրկու պզդի տղեն:

Էս մարդու կարողությունը վատընա կը. Ո՛չ ցանելու կունենա, ո՛չ էլ ուտելու: Գեղացիք հաց կուտան տղոցը, կապրին շատ քասիբ: Պողոսի ճարը կը կտրի, երեխանցից տասնըհինգ տարեկանին կուտա հորթարած, մեկելին՝ տասը տարեկանին կուտա գառնարած: [Սաղ կարողությունը ձեռքեն կէրթա] Էդ մարդուն մնում է մե լավ հաքնելու հալավ, մե սիպտակ այղռ ձի:

Էս մարդը գելնի յերթիկը, թիթին-չիբուխը բերնին ծխե կը, մեկել ձեռը դրած մտածե կը. «Ես ի՞նչ էի, ի՞նչ էղա»:

Գեղացի էրկու հարս էդոր դռնից, կժերը ումուզներին, կէրթան ջուրը, տեսնին կը մարդուն, կսեն.—Այ ֆողը գլխուդ, քեպա՛կ, տռեն գընկնի, տռտկեն չի յընկնի... չիբուղը քաշե կը:

Պողոսը գիմանա:

—Հեյ վախ, գեղի հարսները վրես կը խնդան, լավ է գլոխս առնիմ էրթամ էս գեղեն:

Գիջնի յերթկեն վար, լավ հալավը կը հագնի, ձին դուս կը քաշե, թիթին-չիբուխը բերանը, ձին նստի կէրթա:

Կէրթա մե անծանոթ գեղ՚մ: Տեսնի կը մե վենձ հարուստ տուն, դսի դռանը մի վենձ սալ քար դրած: [Ձիուց գիջնի], նստի կը միամիտ վրեն, օր քիչ՚մ դինջանա: Դու մի ըսե, ըտիկ էդոնց խնամաքարն է: Էդոնց տան ծառան դուս գուկա, տեսնի կը մարդուն, կէրթա աղին կըսե թե մե հասակով մարդ՚մ էկել է, խնամաքարին նստել է [մե լավ ձի՚մ էլ կողքը կայնած է]:

Տան տերը կսե.—Գնացեք ձին նես քաշեք, իրան էլ բերեք գոմի յօտեն, օջախի քովը թող նստի:

Բերեցին, էկավ, նստավ:

Էդ տունը քառսուն ջան կար: Բիթուքը գուկան կըսեն.—Բարև՛, խնամի:

Չ՚իդեն, թե էդ մարդը խնամաքարին միամիտ է նստե: Աղջիկը հարս կենեն, բերեն գլխու վերև կայնեցնեն կը: Հավ կը մորթեն, ձվաձեղ կէնեն, րախի կը բերեն [պատվեն կը]: Հեչ մարդ չ՚իդե, թե խնամու ջեբը դարտակ է: Աղջիկը, բարև բռնած, գլխու վերևը կայնած է: Բաժակ բաժակի խփում են, մարդը արձանի պես նստած է, մտածմունքի մեջ է, ո՛չ կը խոսի [ո՛չ կը խնդա]:

Տնեցիք մտածեն կը. «Խնամին ճամբուց է էկել, բեզրած է, ընդուր համար լիզուն չի դառնա...»:

Մարդը աղջկան ո՛չ կըսե նստի, ո՛չ կըսե կայնի, ո՛չ կըսե գնա: Խեղճ աղջիկը բարև բռնած՝ կայնած է:

Ուտել-խմելուց յետև տանտերը կսե.—Խնամին բեզրած է, բերեք տեղ քցեք:

Բերեն տեղ կը քցեն «սադրի» վրա: Մարդը չի պառկի, մտածե կը, [թիթին-չիբուխը բերնին հա քաշե կը]:

Աղջիկը տեսնի կը, որ յիրա կեսարը միշտ մտածմունքի մեջ է, պաքե կը մարդու ձեռը ու կըսե.—Ես քու աղջիկդ եմ, դու իմ հերս ես, էս էրկու սհաթ է, դու յընչի՞ ո՛չ կըսես՝ նստի, ո՛չ՝ գնա, ոչինչ չես խոսի, դու մի դարդ ունիս, դարդդ ըսա, գուզեմ քեզի օգնել...

Էդտեղ Պողոսը կըսե յիրա անցածը, վո՛ւվ է ինքը, պատմում է գլխու գալիքը.—Ջեբս կապեկ չկա, ես գլոխս առնել կորել գուզեի, էկա միամիտ ձեր քարին նստա. Էրկու տղա ունիմ, մեկը հորթարած է, մեկն էլ՝ գառնարած, ջեբս մե կապեկ չունիմ...

Աղջիկը կըսե.—[Ինչ որ կսեմ, էնպես էլ էրա]: Ահա քեզի կուտամ իրեք օսկի, յառավոտը որ բարի լուս կըսեն, ըսա, որ ճամբուց էկած էի, բեզրած էի, հիմի արիք քեֆ էնենք, օսկու մեկը կուտաս ու կըսես. «Ռախի առե՛ք, բան բերեք, քեֆ էնենք», յետև կըսես. «Ես հարսիս առնիմ էրթամ մեր գեղը»: Ճամբու դնողներին, չաղլջոցը չես թողնե ձեր գեղը, սինոռի գլոխը որ հասանք, ըսա. «Ես իմ հարսին կառնիմ կէրթամ [դուք էլ գնացեք ձեր գործին]:

Յառավոտը ֆուրղունին բառնան կը հարսի ջհեզը, մակարս սնդուկը. հագուստը, շորերը, գողինքը, ջեջիմ-խսիլը, չուլը-չուլքը... Գընկնին ճամփա:

Եփ որ կը հասնին սինոռի գլոխը, Պողոսը կըսե.—Շնորհակալ եմ ձեր պատվեն, եդ դառցեք գնացեք ձեր գործին, ես իմ հարսին կառնեմ կէրթամ: [Խնամիքը յետ կը դառնան]:

Հարս ու կեսրար կէրթան տուն՝ մթանը: Հարսը տեսնի կը, որ հեչ բան չկա. թափթփված, աղտոտ, սալանդոստները կախ: Ավելը կը վերցնե կավլե, պատ-յառիքի սալանդոստները կը յիջեցնե, ջուր կը ցանե, աթար կը բերե, թնդիրը կը վառե. յիրա պաշար՝ հաց, պանիր, հավ, բողջեն բաց կէնե: Յիրիկունը տղեքը գուքան տեսնին կը յերթքեն մուխ գելնի, նես կը մտնին [տեսնին կը, որ] ջահել, սիրուն աղջիկ՚մ վենձ պղինձը դրեր է, ջուր է տաքցուցե: Էրկու տղին էլ տաշտը կը դնե կը լողացնե, հաց կը դնե, կուշտ կուտեն, պառկին կը, ինքն էլ կը մտնի վենձ տղի ծոցը:

Յառավոտը, որ լուսը կը բացվի, բարի լուսը թող բացվի յանկաջ էնողների վրեն, հարսը կըսե տղոցը.—Չոլը ինչ ռաստ գուքա, լցնեք կը տավարճուղներդ բերեք կը տուն՝ թիթեն, չալու, գազ, էդոնք բերեք կը:

Յիրիկունը, ձիթու ճրագը վառած, հարսը թել կը մանե, յաչքին կերևա, որ մե հալիվոր մարդմ նես կը մտնի (մեկելոնք քնած են): Հալիվորը կսե.—Էգել եմ քեզի ըսեմ՝ քու գլխուդ դովլաթ պիտի գա, ջահելո՞ւց գա, թե՞ այելուց:

—Ջահելուց,—կըսե հարսը: Յաչքը կը թերտե, բիձեն էլ չի էրվա:

Յառավոտը գելնին լվացվին [հաց կուտեն]: Տղեքը կէրթան հանդ: Տեսնին կը՝ մե սև սատկած օձ: Դագինակի պոչին դրած տուն կը բերեն:

Հարսը կըսե.—Էս ինչ եք բերե, անիծված է:

Տանի թաբլե կը յերթիկը՝ մոխրի վրա: Կէրթան գործի:

Թագավորի աղջիկը կէրթա յիրան խաս բաղջեն՝ լողանալու, անգին քար մատնիքը հանե դնե կը քարի վրա: Ղառղառը գուքա կտուցը կառնի ու կը տանի, օձին որ կը տեսնի, անգին քար մատնիքը քցե, օձին կառնի կէրթա:

Յառավոտը հարսը քթոցով մոխիրը տանի կը յերթիքը, տեսնի կը պեծին տվող անգին քար մատնիքը, բերե կը տուն, պահե կը, մարդու բան չի ըսե:

Էրկու օր յետև, թալալը յընկած գեղերը, կըսե.—Վով որ թագավորի աղջկա անգին մատանին գտնի [բերե տա, թագավորը] մի կոտ օսկի կուտա:

Կեսարը գուքա տուն, հարսին կըսե.—Հեյ վա՛խ, քաշկա էդ մատնիքը մենք գտած էղնեինք:

Նոր հարսը կըսե.—Յուզածդ ես գտել եմ մեր յերթքեն:

Կուտան անգին քար մատանին, օսկին կառնին: Ինչ որ եղել էր յառաջ, նույնը կէղնի:

Հեքաթիս միտքը էն է, որ մե տան մեջ լիզու որ գտնին, խանդոտ բան չունենա՝ յամեն բանը լավ կեղնի: Տունը էդպես բան է:

101(101). ՇԱՆ ՈՒ ԽՈՐՈԶԻ ԱՌԱԿԸ

Մե մարդ՚մ կունենա մե շուն՚մ ու խորոզ՚մ: Կանցնի ժամանակ: Շունն էլ, խորոզն էլ ծերանան կը: Տերը ըդոնց էլ լավ չի աշե՝ կեր չի տա:

Շունն ու խորոզը միշավարա կէնեն.—Մեր տերը մեզի լավ չի աշե. լավ է՝ գլխներս առնինք փախնինք:

Գընկնին ճամփա: Շատ կէրթան, թե քիչ, գիչնին մե ձոր՚մ, տեսնին կը մե կիսավերակ վանք՚մ՝ դարտակ, դռան յառաջը մե վենձ ծառ՚մ: Խորոզը կըսե.—Շուն ախպեր, արի՛ էստեղ մնանք, ես ժամկոչ կեղնիմ, դու՝ տերտեր: Էստեղ համ ուխտավոր գուքա, համ ժամվոր:

Մութը օր գընկնի, խորոզը գելնի ծառի ծերին կը թառի, շունն էլ ժամի դռան յետևը կը պառկի:

Մեկել օրը, երբ բարի լուսը կը բացվի (բարի լուսը ձեր լսողաց վրա), սարի վրեցեն աղվեսը էդոնց կը տեսնի կըսե.—Լավ է, յէսօր ճաշս էղավ, կէրթամ խորոզին կուտեմ, յետև շանը քնած տեղը կը խեղդեմ:

Խորոզը յիմաստուն է. տեսնի կը, որ աղվեսը էկավ յիրան պիտի ուտե, կանչե կը:

Շունը զարթնի կը, աղվեսի պոչեն բռնե կը, աղվեսը յիրան թափ կուտա, պոչը կտրի կը, մնա կը շան բերանը, ինքը փախնի կը, հեռու կայնի կը ու կըսե.—Էն ժամը, որ էդպես ժամկոչ ունենա ու էդ տեսակի տերտեր ունենա՝ ոչ ըխտավոր կը տեսնի, ոչ էլ ժամվոր:

Առակիս միտքը էն է, որ մե տան մեջ համերաշխություն ու սեր էղնի, յիրար հասկնան՝ լավ կեղնի:

102(102). ԹԱԿԱՎՈՐՆ ՈՒ ՄՈԼԵՆ

Թուրկի թակավորը շատ էր սիրմ լսել ղուռանից, աստվածաբաներից: Էնդ էլ ըսել էր մենձ մոլին, օր ամեն օր գա իրան քովը, պատմե աստվածաբանե, մատաղներից, ղուռաններից ու կուռկերից: Մենձ մոլեն էր, էլնմ էր առավոտ հակնմ էր, լվանվմ էր, իրան նամազն էնմ էր, հաց, մաց ուտմ, չէր ուտմ, էրտմ էր թակավորի քով: Նստմ հարի իրիկուն խորաթա էր էնմ՝ հեքյատներ, հնուտեններ, անցած-գնացած պատմուտեններ, կամ խոսմ: Իրկուն էլնմ, գալմ էր տուն, հասնմ էր իրկվա մինարետին: Էլի իրան իրկվա նամազն էնմ էր: Թակավորն էլ օրական մե օսկի՚մ տալմ էր մոլին:

Էղավ, օր մե օր՚մ մոլեն ուշածել էր: Ուշանալու համար շատ վռազ-վռազ էրտմ էր: Մեկ էլ պզդի մոլեն էն դիեն էկավ հարցրավ, ըսավ.—Հա՛, մենձ մոլա, էդ ինչ խաբար է, ինչ է էղե՝ ըդման վռազ էրտմ ես:

Մոլեն ըսավ.—Ըշտը, հալ ու հեքյատ, ըսման, ըսման: Էսօր էլ ուշածել եմ, լավ չեղավ, էնդի էլ չապուկ-չապուկ էրտմ եմ, օր հասնիմ վախտին: Պզդի մոլեն ըսավ.—Ես էլ գամ:

Ըսավ.—Արի, ընձի ինչ վնաս կուդաս քու գալովդ:

Ընկան իրար հետ խորաթա էնելով՝ գնածին թակավորի քովը, դռնեն մտան: Հարի թակավորին հասնելը իրեք անգամ գլոխ տվին:

Ձեռները դոշերին դրին, կայնան: Թակավորն իզին տվավ, տեղ նշանց տվավ, նստան: Ըսին, խոսածին, էլի ամեն օրվա վախտին էլան էրտ-լու, թակավորը մեկ-մեկ օսկի տվավ, առան գնածին:

Էս պզդի մոլեն տեսավ, օր օսկի կա մեջ-տեղը, ըսկսեց ամեն օր գալ ու ինքն էլ իրան գի-տեցածներն էր պատմմ ու ըսմ: Էդման գնաց մե վախտ'մ: Էս պզդի մոլեն տեսավ,օր թակավորը մենձ մոլին դիա շատ ուշկ է դառձնմ, քանց թե իրան, ըսավ. «Ի՞նչ էնեմ, ի՞նչ չենեմ,օր էս մոլին ղազաբի բերեմ, ես մտնիմ թակավորի աշկը: Թակավորն ընձի միշտ կանչե, երկու օսկի էլ ընձի տա»:

Պզդի մոլեն էդ մտքով հա տանջվմ էր: Մե օր'մ էլ մենձ մոլեն առավոտ թեզ իրան նամազ, բանը պռձնմ է, կնիգը խաշ է էպած էղնմ, նստմ է խաշը սխտորմ ուտմ պռձնմ է, նոր ֆայմմ է,օր թակավորի քովը բտի էրտա: Էլ սրեն անցել է, ի՞նչ էնե: Էլնմ է մոլոր-մոլոր էրթմ է, նես մտնմ, գլոխ է իջցնմ, նստմ է: Խոսմ են, հմը ձեռը հեչ բերնի վրեճեն դեն չի տանմ: Մեկ էլ պզդի մո-լեն էլ է գալմ: Գլոխ է տալմ, նստմ է, ըսմ-խոսմ են հնից-նորից: Էլնմ են վախտին օր էրտան, թակավորը էլի մեկ-մեկ օսկի է տալմ: Էրտմ են ամենկը իրենց ճամպեն: Օր իրարուց հեռենմ են, պզդի մոլեն եդ է դառնմ, գալմ է թակավո-րի քովը, ըսմ է.—Թակավորն ապրած կենա, գիդե՞ս, էդ մենձ մոլեն հեչ չի ուզմ գալը: Ըսմ է՝ թակավորի բերնեն էման ֆոտ է գալմ, օր ես զզվմ եմ, հմը ճար չկա: Տեսա՞ր օր ձեռը հեչ քիթ ու բերնից ետ չէր տանմ: Ըսմ է՝ ֆոդին չեմ դի-մանմ:

Թակավորը թե.—Հա՞:

Թե.—Հա:

—Լավ,—ըսավ,—ես ըդուրը ֆոդ խրատ կուդամ, թող էգուց գա:

Պզդի մոլեն էր, ըսավ, պատասխան առավ, արխեին ընգավ ու գնաց, օր ըդից եդև, ինկը բտի եղնի թակավորի սիրելի մոլեն:

Առավոտ մենձ մոլեն էլավ, իրան էնելիկը պռձավ ու վռազ-վռազ գնաց թակավորի քովը: Գլոխ տվավ, բարի լուս ըսավ, թակավորը բա-ռևն առավ ու հեչ չթողեց, օր նստեր: Մի փակե-տած, պեճատած թուխտ'մ տվավ, ըսավ.—Մո-լա՛, էս փակետը տար տուր ֆոնջուն, ջուղաբը բեր ընձի, նոր նստինկ խորատա կէնենկ:

Մոլեն առավ փակետը եդ դառավ, տանմ էր տար ֆոնջուն: Ճամպեն պզդի մոլեն ռաստ էկավ, ըսավ.—Էդ ո՞ւր էս էրտմ:

Ըսավ.—Էս թուխտը թակավորը տվավ, օր տանիմ տամ ֆոնջուն, գամ:

Ըսավ.—Դու մենձ մառտ ես, մեխկ ես, դուր ես տանիմ:

Պզդի մոլեն հա առաջ էր ընկնմ, օր մենձ մոլին աշկե քցեր: Խուլասա, պզդի մոլեն առավ թուխտը գնաց: Մենձ մոլեն էդ դառավ թակա-վորի քովը: Թակավորը զարմացավ ըսավ.—Էս ի՞նչ բան է, բա ջուղաբը ուր ա՞:

Թակավորը ոչ թե ջուղաբ չեղնելուն զարմա-ծավ, մոլի սաղ մնալուն զարմածավ: Թող ըդոնկ զարմանան, մենք խաբարը տանկ պզդի մոլից: Պզդի մոլեն էր, տարավ թուխտը տվավ ֆոնջուն: Ֆոնջին բացեց թուխտը, կառտած, օր գրած է. «Ֆոնջի, էս գրաբերս որ ռոպեյին գհասնի քովդ, էն ռոպեյին գչբլխծնես, գկոխես ֆուռը»:

Ֆոնջին ըսավ մոլին.—Շորերդ հա՛ն, թա-կավորին լավ ուտելիք տամ տանիս:

Մոլեն ավտցավ, շորերը հանեց: Հանելու բաշտան՝ վերծրին ու կոխին ֆուռը: Մոլեն ֆռի մե-ջը ճենճռտաց: Թող մոլեն ըդեղ ճենջռտա, մենկ խաբար առնինկ թակավորից ու մենձ մոլից:

Մենձ մոլեն օր սաղ-սալամատ եդ դառավ, թակավորն զարմածավ իրան գրածի վրեն: Ըսավ.«Չէղնի՞, օր սխալ եմ գրե»:

Օր իմածավ ամեն ինճը ըսավ.—Մոլա, դրուստն ըսա, դու էրեկ ը՞նչ'էիր ձեռդ քիթ ու բերնիդ վրեն պայմ, չէիր հեռցնմ:

Ըսավ.—Թակավորն ապրած կենա, էրեկ մեր անիծած պառավը խաշ էր դրե: Սխտորեցի կերա, պռձա նոր ֆայմա, օր բտի գայի հոս: Օր էկա, ձեռս պայմ էի բերնիս վրա, օր ֆոդը չընգ-ներ քու քիթը:

—Հա՞:

—Հա՛:

—Է՛,—ըսավ թակավորը,—ֆոր փորողը փորած ֆորը ինկը գընգնի:

Թակավորը պատմեց պզդի մոլի ըսածը մենձ մոլին: Մենձ մոլեն ծիծաղած, ըսավ.—Թա-կավորն ապրած կենա, ես էս քանի տարի է քու քովը էրտմ-գալմ եմ, որ օրն ես տեսե ձեռս բեր-նիս, օր ես էդ խոսկը ըսեմ:

Էսմանով վեռջածավ թակավորի ու մոլի պատմուտենը:

103(103). ԱՆՄԵՂ ՅԱՐՈՒՆԸ ՉԻ ԿՈՐԻ[87]

Թուրքական շայրմ կեղնի, ըստուր պալատի մեջ մե հայ իմաստունըմ կեղնի: Շայը շատ կը սիրե էս հային ու կը դարձնե իրան պալատի խորհրդական:

Էս վեզիրները կը տեսնին, օր էս հայը շատ է սիրված, կը վախենան, թե չեղնի՞ էս մարդը յելնի մեր վեզիրությունն էլ ձեռներես առնի: Կըսեն.—Արեք, քանի թեզ է, ըստուր գլխուն օյին բերենք, թե չէ էսի մեր տունը կը քանդե:

Մե անգամ ման գալու կէրթան քաղքից դուս, էս վեզիրները կը հանեն խանչլները ու գուզեն սպանեն էս իմաստունին:

Իմաստունը կըսե.—Ես մեղավոր չեմ, ընձի կըսպանեք, մենակ թող էս թռնող կըռնկները վըկա էղնին:

Կըսեն.—Չէ՛, օր չէ՛, քեզի բըդի ըսպանենք:

Ու կըսպանեն: Գուգան պալատ, թագավորին խաբեն գը ու կըսեն օր.—Քու սիրածդ հայ իմաստունը փախավ յիրան հայրենիքը:

Օրեր կանցնին, տարիներ, մե օրըմ շայը նազիր-վեզիրներով գելնին շրջագայելու: Ք'ասնին էն տեղն օր, հուրտեղ ըսպանվել է հայ իմաստունը: Կըռնկները գուգան շային գողտուկ կըսեն, օր.—Էս օդով անցնող սաղ կըռնկներս ֆլանքյասանի վկաներն ենք:

Թագավորը գիմանա ու ձեն-ծըպտու չի հանե: Օր ման գուգան կը պըրծընին, գուգան պալատ, շայը կըսե.—Ջալադներ, էս վեզիրների գլուխները կըտրեք:

Վեզիրները կըսեն.—յիրանք բան չեն էրե, ո՞ր մեղքերի հըմար գուզե յիրանց գլխատեն:

Շայը կըսե.—Էդ ի՞նչ ֆլանքյաս է, վո՞վ է, օր քանի'մ տարի յառաջ վկաներ է ունեցե՞, կըռնկներն են վկա էղե, օր դուք ըձի չեք ըսե, ըսե՞ք, թե չէ կը գլխատեմ:

Էսոնք տենին, օր ազատում չը կա, հա՛լ, հեքյաթ, կը պատմեն, օր ըսպես-ըսպես, իմաստունին մենք ենք ըսպանե:

Շայը հրամայե կը.—Կըտրեք վըզերը:

Տղա ջան, էս հեքյաթով գուզեմ ըսեմ, օր անմեղ յարունը չի կորի: Մեծանակ խոսք է՝ մախաթը ջըվլի մեջ չես կըռնա պայե, օրըմ դուս գուգա:

[87] Վերնագիրը բանահավաք Հրաչ Մկրտչյանինն է:

ՍԻՐԱՎԵՊ

104(104). ՂԱՐԻԲԻ ՀԵՔԻԱԹԸ

Ղարիբը Վրաստանու դառավ, Թիֆլիս էկավ, սիրահարվավ Սանամին: Օսկե թասը էրազի մեջ տվավ Սանամին: Մորը պատվիրեց, օր գնա Սինամքյազի աղջկան ուզի: Մերը ելավ, գնաց Սանամի հոր քով, նստավ խնամախոսի աթոռին:

Հերը տեսավ ըսավ.—Վօ՞վ է, նես կանչեք, թող գա:

Կանչեցին, ըսավ.—Էկել եմ խնամի դառնամ:

Ըսավ.—Հե՛, վօվ պարկըմ օսկի տվավ, ես իմ աղջըկաս ընտոր կուտամ:

Մերը ելավ, էկավ, տղին ըսավ, թե ինչ առաջարկեց, ըսավ օր.—Վօվ պարկըմ օսկի տվավ, աղջիկըս ընտոր կուտամ:

Ըսավ.—Գնա ըսա, օր պարկըմ օսկի կուտամ պայմանագրով, էրթամ, աշխատիմ, բերեմ, կուտամ:

Տեղոցտեղ, աղջկաս մեռնիմ, ըտիկ գնաց մորն ըսավ.—Գնա պայման էրա, օր էրթամ, աշխատիմ, պարկըմ օսկի տամ, աղջկան առնիմ:

Պայմանը կապեցին: Էտիկ ելավ օր էրտալու, էրազի միջի օսկե թասը տվավ Սանամին ու գնաց Հալեպ քաղաք: Օխտը տարի մնաց: Օխտը տարին օր լրացավ, չեկավ: Շայվալատը շորը արընոտեց, տվավ Սանամի հորը, օր իպր Ղարիբին սբանել են: Հերը խոստացավ աղջիկը էնօր տալ: Քառսուն օր վադա կտռին ու եպօր քառսուն օրը թըմմավ՝ չեկավ, նոր տան Շայվալադին: Ղարիբը մե մերըմ ու քուրըմ ուներ: Քուրոջ անունը Նարգիզ էր:

Սանամը էկավ ըտոնց ըսավ.—Քելեք էրթանք օխտը գյատայի արանքը նստինք, էրթողդարձողի խաբար էնենք:

Էկան, նստան: Էն քօվեն մեյ հարուստ մարդըմ գուքա, սաղ օսկին ջորին բարձած գուկա, էլվաթ-դոլվաթ չունի, իշխան է, կէրթա, օր մտնի մկիտանեքը, ճաշարանները աշուղներու քովը՝ ուտե-խմե: Ըտոնց բարև տվավ, ըսավ թե.—Ընչի՞ գուլաք, կը մըղկտաք:

Ըսին.—մենք օր չլանք, վօվ լա, մե մեկուճար տղե՛մ ունինք, օխտը տարի է գնացել է ղարիպութեն, խաբար չկա: Ըսօր հերն էլ քառսուն օր վադա է էրել, օր չեկավ, տան Շայվալադին:

Հանին օսկե թասը տվին էտոր, ըսին.—Ուր օր կմտնիս, ցուց տուր, օվ օր տեր կայնավ, էնիկ մեր տղան է:

Կառնի, կէրթա: Կէրթա, կէրթա, շատ կէրթա, թե քիչ կէրթա, կհասնի Հալեպ քաղաք՝ թուրքի հողը: Կէրթա փաշի դարբասի մոտ, կզարկե, դուռը կբանան, նես կմտնի: Տեսնի կը, օր ընդեղ էրկու տղա ճան կխաղան: Մեկը էրկու հոգու կկրե:

Կսե.—Ըտ ի՞նչըղ ուժեղ տղա ես:

Կսե.—Ընձի ես տեսե, գնա աշուղներու քով, տես, թե Ղարիբը ինչըղ սաղի սազերը ձեռներեն առել է:

Կսե.—Առ ըս օսկին, ընձի տար աշուղներու քով:

Կէրթա, կսե.—ես իմ փողովըս, օսկովըս էկել եմ ըստեղ ուտել-խմելու:

Կսե.—Առաջի բաժակը սաղըտ իմ բաժակովըս տի խմեք, հետո՝ ձերով:

Ք՚անե բաժակը կուտա: Օր կը խմեն, բաժակը կհասնի Ղարիբի ձեռքը, կխմե չի տա: Իշխանը կըսե.—Հեյ, օրը ցերեկով ըստեղ գողութուն չըտի էղնի:

Ղարիբը կհանե, խաղով կըսե.

Ասա տեսնեմ՝ ինչպե՞ս տեսար
սիրուն Սանամիս,
Հագին ապլաս է՞ր, թե՞ խաս,
Երեսը տխուր է՞ր, թե՞ ծիծաղ,
Ասա՝ ինչպե՞ս տեսար սիրուն Սանամիս:

Էդ մարդը վերցընե կը կսե.—Մայրըդ է կու-

ռացել, քույրը դ է սև հագել, մի մնա ղարիբ, գնա երկիրը դ:

Ըտոր էլ կըսե.—Ինչը՞ղ էնեմ, օր փաշեն իմ գլօխը չզարկե, ես աղքատ տղա եմ, եկել եմ քօվը մնալու:

Ընկերտիքը կսեն.—Մենք կէրթանք, կհասկըցընենք, օր սիրահարութան բան է:

Բան չի ըսե: Ընկերտիքը կէրթան, փաշին կըսեն, օր սիրահարության բան է, թող ճամփու դնե, ըս տղեն էրթա:

Փաշեն էլ կըսե.—Օր սիրահարութան բան է, բեռը թեթև, գինը ծանդր, պարկըմ օսկի կուտամ:

Գելնին խաղով-սազով տղուն Հալեպա ք'անեն, ճամփա կքցեն: Օր Հալեպա գելնեն, Ղարիբը խաղով կըսե.

Քար ու փեփրդ օսկով զարդարված,
Հալեպ քաղաք,
Ես քեզնեն գոհ կէրթամ,
Հաստատ մնաս, Հալեպ քաղաք:

Ելավ, սազն առավ, ընկավ ճամփա: Շատ էկավ, քիչ էկավ, ձին տրաքավ: Էկավ Ղարսա ջուրն հասավ ու կայնավ: Ջուրն էլած էր, գնացէկավ ու երգեց: Էն քովեն մե բոզ ձիավոր՝ Սուրբ Սարգիսը, էկավ (մեռնիմ իրան, ով նպատակ ունի, թող կատարի): Էկավ հասավ, ըսավ.—Ըսա, ինչ տղա ես, ինչի՞ ես կայնել ճամփին՝ մոլորված:

Ղարիբն օր տեսավ ըստոր, պարկը պայեց, ըսավ. «Ձեռնես կառնի»:

Ըսավ.—Հեռու երկրե եմ էկել:

Ձիավորն ըսավ.—Աչքերը դ խփե: Ըսիկ դեմ առնելով՝ խփեց:

Ըսավ.—Օր ըտման է, գնա պարկը դ բեր:

—Վա՜խ.—ըսավ.—աբես պըտի առնի, օր ըսավ գնա պարկդ բեր:

Գնաց պարկը բերավ:

Ըսավ.—Ճիշտ տեղը դ ըսա:

Ըսավ Հալեպա գուքամ, պըտի էրթամ Ղարս քաղաք:

Գնաց Ղարսա քաղաքի ճաշարանը հաց կերավ ու դուս էկավ: Օր դուս էկավ, Սուրբ Սարգիսը գլխուն կայնավ, ըսավ.—Ճիշտը ըսա, ըշկերը դ ք'անեմ:

Ըսավ.—Կէրթամ Թիֆլիս քաղաք, Օճոռի գլոխը: Տեղոցտեղ Օճոռու գլոխը իջավ, տեսավ՝ դավուլ-զուռնեն: Իջավ օր աղբրի վրեն, տեսավ քուրը էն կողմեն գուքա, սև հագած, ձեռը ծոցը, կուժը ուսին:

Ըսավ.—Բարև, եղբայր ջան (չ'իտէ օր ախպերն է):

Բարևն առավ, ըսավ.—Քուր ջան, էս ինչ բան է, քուլլի լավ հագնվել են, դու սև ես հագել:

Ըսավ.—Ախպեր ջան, ես օր սև չհագնիմ, օվ հագնի, ախպերս օխտը տարի է գնացել է ղարիպութեն, չէ էկել, սիրած աղջկա՝ Սանամի հարսնիքն է իրիկունը:

Ըստեղ Ղարիբը կսե.—Կարելի է՞, օր ընձի տանես ձեր տունը ղոնախ, ղոնախանա չունիմ:

Նարգիզը կսե.—Ախպեր ջան, տանը տղամարդ չկա, մերը էլ կուրացել է, էրթամ մորը հարցնեմ՝ նոր:

Աղջկա սիրտը ըտ տղու վրա մըռմըռա կը: Գուքա մորը կսե.—Այ մեր ջան, ըտեղ աղբրի վրա մե տղա'մ կա, Ղարիբիս շատ նըման է, տեղ չունի, բերեմ մեր տուն, սաղ հարսնիք են, ըտի մեզի մխիթարանք կեղնի:

Մերը կսե.—Էյ գիդի, շան ղանջըխ, աշկերը դ կուրացել են, դու էլ գուզես տղա տուն բերե՞ս:

Կսե.—Չէ, մա ջան, կբերեմ, կտեսնիս:

Կսե.—Գնա, բեր:

Գուքա, կսե.—Բարև մայրիկ ջան:

Կսե.—Բարև, հազար բարի, բալա ջան:

Տեսնի կը, օր իրա սազը ինչըխ օր գնացել է, օխտը տարի պատեն կախած է, թիզըմ թոզը վրան դրել է: Կսե.—Մայրիկ ջան, կարելի է՞, օր ըտ սազը իջեցնեք, ես նվագեմ:

Կսե.—Չէ, բալա ջան, ըտիկ իմ տղուս սազն է, թելը կկըտրվի, ես կմեռնիմ:

Կվերցնե ու կերգե.

Կամ տունն է, կամ դուսն է Ղարիբը,
Կամ նստած է, կամ կայնած է Ղարիբը:

Ըտ երկու բերանն օր կերգե, դավուլ-զուռնի ձենը անկանջը գընկնի, կսե.—Մայրիկ, կարելի է՞, օր ընձի տանիք ըտ հարսնիքտունը:

Նարգիզն օր ըտոր կբերե, կնստըցնե, վազե, կէրթա Սանամին կսե, օր.—Ըսման տղա'մ է եկե՝ իսկական Ղաիրբս:

Սանամը կսե.—Գնա բեր հարսնիքտունը:

Կառնի ու կէրթան հարսնիքտուն: Ըտոր մե ընկերըմ կեղնի՝ Գիժ Դանելը, իրա սեփական

ընկերն է, կը ճանչե, կէրթա ու կը փաթըթվի Ղարիբին: Ընկերը սազը կառնի ու կերգե.

Իմացել եմ՝ հարս ես եղել,
Հարսնիք անելու եկա,
Նորից թաժա յար ես ճարել,
Հաստատ իմանալու եկա:

Ըտեղ գիմացվի, օր Ղարիբն է: Սանամին կուտան Ղարիբին, Նարգիզին էլ՝ Շայվալադին: Ընոնք իրանց մուրազին հասնին, աղջիկ ջան, դու էլ հասնիս քո մուրազին:

Բ. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐ

1(105). ՄԱՐԱԼԻԿ

Էն վախտերը սարի մարալը գալիս էր, գլուխը վեր կը դներ Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի դռան շեմին, օր մատաղ էղներ: Մատաղ էնողը կերթար էնոր մատաղ կեներ:

Մի ավճի մարթ կեղնի: Էտ մարթը կէրթա թըվանքով կը զարկե: Ըտից մարալը կը խրտնի, էլ չի գա:

Էս մարալի անունով էլ գյուղի անունը դրին Մարալիկ:

2(106). ՄՈՒՍԼՈՒՂԼԻ

Մեր գեղի վերև կա մի սար, անունը՝ Զայրատ[88]: Էդ Զայրատի տակ էղել է մեկ ախպուր: Էս գեղի տեղ ապրել են քրդեր: Եփ օր հայեր խըռիկ կուտան էդոնց, էնոնք Զայրատի ախպուր քըցում են հինա-ճիվա[89] ու անլվա բուրթ, օր էդ ախպուր չորնա, էկող հայեր ջուր չունենան: Էտմալով ախպուր կը չորնա:

Ախպըրի քովը էղել է շատ մսուրներ, օր ջուր լցվի, մալեր խմեն: Եփ օր հայեր կիգան հուտա, տեսնան կ'օր ախպըրի կուշտ էդ մսուրներ դարդակ կը մնան:

Գեղ կը շիքեն, անունը կը դնեն Մսուրլի, հետեն-հետեն էդ կը դառնա Մուսլուղլի, հա՛, էտմալ լե կը մնա Մուսլուղլի[90]:

3(107). ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Սա գտնվում է Սառնաղբյուր և Մարալիկ գյուղերի միջին տարածության վրա՝ մի ձորում:

Ըստ գյուղացիների պատմածի՝ Կարմիր վանքը օժտված է ամեն տեսակի հրաշագործություններ կատարելու ընդունակությամբ:

Սելջուկների արշավանքի ժամանակ սա էլ է կրել այն բոլոր աղետները, ինչ որ բաժին է ընկել Անիի եկեղեցիներին ու վանքերին, որովհետև սա էլ Անիի հազար ու մի եկեղեցիների թվին է պատկանում: Այդ տխուր օրերին վանքի երեք միաբանները փախչում են դեպի հարավ և մեկը մյուսից մեկ կիլոմետր հեռավորության վրա սպանվում: Հետագայում նրանց վրա կանգնում են խաչքարեր, որ մինչև այսօր էլ կան:

Այդ խաչքարերից մեկը, որ գտնվում է Սառնաղբյուրի Ղռաճներ կոչված տեղամասում, իրենից ներկայացնում է մի հսկա, բազալտյա կիսահողկած հուշարձան:

Սրա մասին պատմում են, որ քարը տնկողը վրան արձանագրել է, թե. «Խելքը բոյինը չէ, խելքը գլխինն է»:

Շատ տարիներ հետո սրա մոտն է գալիս մի գյուղացի, կարդում է արձանագրությունը և իսկույն բարձրանում քարի գլուխը: Նա գլխի վրա գտնում է մի փոս, փոսում՝ լիքը ոսկի ու ասում է. «Իսկապես, որ խելքը բոյինը չէ, խելքը գլխինն է»:

4(108). ԱՂՋԻԿ ՓԱԽՑՆՈՂ ՔՈՒՐԴԸ

Ժամանակով մի քուրդ մի աղջիկ է փախցնում և տանում պահում է Սառնաղբյուրի Կարմիր վանքի ձորի այրերի մեջ:

Կես գիշերին դուրս է գալիս այդ այրերի տերը՝ օձերի խմբապետ վիշապ օձը և աղջկանը քրդի ձեռից առնում, սկսում է կուլ տալ: Քուրդը ուշագնաց է լինում և օգնություն չի կարողանում հասցնել աղջկանը: Աղջիկը կուլ է գնում:

---

88 Զայրատ կամ զիարատ քրդերեն նշանակում է սրբավայր (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

89 Հինաճիվա – ոմանք էլ հավա-ժիվա են ասում, որ, ըստ մի քանիսի, անլվա բրդի և քարաքոսի խառնուրդ է, և, ըստ ոմանց, սնդիկի, անլվա բրդի ու այլ նյութերի խառնուրդ, որն ընդունակ է իսպառ փակելու ջրի ակը (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

90 Մուսլուղլի – գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ Լանջիկ (ծանոթ. կաղմողների):

Օձը փաթաթվում է քարին, որպեսզի աղջկա մարմինը ջարդի և հեշտացնի մարսողությունը: Այդ ժամանակ արթնանում է քուրդը, բայց օձը բռնում է նրա ոտները և սկսում է նրան էլ կուլ տալ: Քուրդը երկու ձեռով պահում է թուրը և կուլ տալու պահին միջից կես անում վիշապին:

5(109). ՔԱՎՈՐ-ՍԱՆԱՄԵՐ

Խին վախտ Սոկըթլու գեղի մեջ կապրին մեկ խատ քավ՝որ, մեկ խատ սանամեր: Ավուր մեկին քավ՝որն ու սանամեր կերթան Ջ՝ոչ ձոր: Քավ՝որ Սանամոր խետ սիրող կենա: Էտ վախտն աստված կը բարկանա ընոնց վրեն ու էրկուսին էլ իրար գրկած վախտն քար կը դարցու: Չուրի մըկա էլ էտ քարն կա, անուն՝ Քավ՝որ-Սանամեր:

6(110). ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՃՐԱԳՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

Ջրառատ գյուղը նախկինում եղել է Չրախլի, բայց իսկական անունը եղել է Ճրագվան: 1963 թվականին Ես 13 տարեկան տղա էի, 63 թվի դեկտեմբերի 31-ին, մենք երեխեքով սլիկ կխաղայինք, եղավ ժամը 7-ին մոտիկ, ժողովուրդն էլ իրա անասունը բերել կջրեր, էդ ժամանակ ղանտալ կար, ջուրը կտանեյինք ղանտալով՝ վեդրոյով, վերջացրինք եկանք տուն, ձյունն էլ բարակ գուկար, լավ իրիկուն էր, ամենը իրա տունը փակվել էր: Ըսի՝ էրթամ սլիկ խաղամ երեխեքի հետ, կնայեմ մարդ չկա, ընկերներս էլ չկան: Մեկ էլ տեսնիմ՝ ծառների հետևից կլոր հրե գունդ եկավ դամբարանի դաշտի վրա, ճրագը մեջը լամպը կվառեր: Կողք բոլորս կնայեմ, որ ընկերներիցս էղնի ըսեմ՝ եկեք նայենք՝ էդ ի՞նչ է, մեկ՚մ չկար, որ ցույց տայի:

Էդ հրե գունդը ժայռերի արանքով իջավ, ու կորավ: Կորավ, վազի եկա ախպորս ըսեցի՝ արի նայենք, չեկավ, քուրս փոքր էր չեկավ, հերս տունը չէր, մերս էլ տոլմա բդի փաթեր, ժամանակ չուներ՝ չեկավ: Մե րոպե՚մ հետո էլի էդ ճրագի պես հրաշքը ելավ ու կորավ: Էդ հրաշքը ում կպատմեմ չեն հավատա, կսեն կամ սուտ կխոսաս, կամ գլուխ կգովաս:

66 թվին գնացի Թիֆլիս: Լույսի պատմությունը միտքս ընգավ և պապիս ըսի՝ սպես բան է եղե: Ըսեց՝ բալա ջան, բը ընչի է մեր գեղի անունը Չրախլի՝ Ճրագ վառ: Համ թուրքեր են ապրել, համ հայեր: Սուրբ լույսն է եղել, թուրքերը տեսել վախեցել են: Վախեցել են թե չարքերի լույսն է, գնացել են: Գուզեմ, որ մեր գյուղի անունը փոխվի, հին անունը պահենք՝ Ճրագվան:

7(111). ՀՈՌՈՄԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԸ

Մեր գյուղի մատուռը կոչվում է Թուխ Մանուկ: Թուխմանուկները շարված են պոզաքարերով: Թուխ Մանուկի դեմը փորված պուճուր տեղ կա, էդ փոսի միջից հավատացյալները հող են հանում (էդ հողը զորեղ էր), տանում են տուն, սրբի զորությունն են տանում տուն: Թուխ Մանուկի մատուռում մատաղ էին անում, պտղաբերության, հիվանդության համար, ինչպես նաև ջուր չունենալու ժամանակ: Պտղաբերության համար ներսը քար կա դրած, կարմիր քար կա դրած, մի քիչ էլ փոսիկ է, կողքը քար է դրված, անպտուղ կանայք քարը շփում են ու ասում: Եթե կանգնավ, ուրեմն կհղիանա, եթե չէ՝ չի հղիանա:

8(112). ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀՈՌՈՄ ՏԵՂԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ-1

Պատմում են, որ պատերազմի ժամանակ երբ թուրքը գյուղ է մտել, բոլոր տղամարդիկ փախել են սարերը, մի հատ կին, Հոռոմ անունով, դուրս է էկել տղամարդկանց դիմաց ու ասել է՝ գլխաշորս վերցրեք կապեք նոր փախեք, իսկ ինքը կանգնել է մյուս կանանց հետ բայով, եղանով, փոցխով գյուղը պաշտպանել է: Դրանից հետո, ասում են, որ գյուղի անունը մնացել է Հոռոմ:

9(113). ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀՈՌՈՄ ՏԵՂԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ-2

Ասում են՝ 7-8-րդ դարերում էս բերդաքաղաքում հանգստացել է Հռիփսիմե թագուհին, դրանից էլ մնացել է Հոռոմ անունը՝ Հռիփսիմեն Հոռոմ է դարձել:

10(114). ԿԱՊՍ ՏԵՂԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

Կապսում ապրել են ուռումներ՝ հույներ: Թարգմանաբար Կապսը նշանակում է «հումք»: Մի խումբ հույներ, գաղթելով դեպի Կապս, եկել տեսել են, որ կավը կա, քարը կա, ջուրը կա, ասել են՝ հումք ու կանգնել են, ու մինչև օրս պահպանվել է «Կապս» անունը, իսկ տեղի հին հայ բնակիչների ասելով՝ Կապսը իբր առաջացել է «կապ» բառից, երկու կողմերը ձոր է, տեղանքը կապված է, իբր պաշտպանված է, բայց շատ սխալ է, որովհետև մինչև մեր գյուղացիների Կապս գաղթելը, այստեղ ապրել են ուռումներ:

11(115). ԱՍՏՎԱԾ ԷԴՊԵՍ ԲԱՆ ՉԻ ԱՍԻ

Աստված ստեղծեց երկինք ու գետին, ծով ու ցամաք, անասուն, թռչուն, դրախտ ու մարդ մը: Մարդուն ըսեց՝ Ադամ:

Ադամի կողից ստեղծեց կնիկ մը ու անոր ըսեց Եվա:

Աստված Ադամին դրավ դրախտի մեջ ու ըսավ.—Ապրի՛ դրախտում, կե՛ր, խմե զմեն, մենակ էդ ծառի պտուղ չուտես,—թողեց ու գնաց:

Եվան անիծված էր, ըսավ Ադամին.—Ադա՛մ, ինչո՞ւ մենք էդ ծառի պտուղ չուտենք: Էդ պտուղ Աստված պախեց իր համար, էդ պտուղ աղվոր պիտի ըլլա, ուտե՛նք էդ պտուղ:

Ադամ կերավ էդ պտուղ:

Աստված իմացավ, էկավ կանգնավ դրախտի դռան ու կանչեց.—Տղա, Ադա՛մ:

Ադամ վախեց, փակվեց ծառի հետև, ձեն չի տա:

Աստված մեկ էլ կանչեց.—Տղա, Ադա՛մ:

Ադամ էլի ձեն չի տա:

Աստված վրա երրորդ անգամ ձեն տվեց.—Տո՛, տղա Ադա՛մ, չլնի՞ դու էն ծառի պտուղ կերար:

—Հա, Աստված, կերա:

—Դու իմ կ... ուտեիր լա՛վ չէր:

Լսողը կասի. «Աստված էդպես բան չի ասի», մեղա քեզ...

—Իմա՞լ չի ասի, վալլա Աստծու սիրտն որ ելավ, քու մերն էլ կը մլե:

Գ. ԶՐՈՒՅՑՆԵՐ

1(116). ԱՆԴԱՐՏ ՄԱՐԴՈՒ ԴԱՐՏԸ

Մե թագավոր՝մ գուզե էնպես մարդ՝մ տեսնի, օր դարդ չունենա: Կանչե կը յիրա մարդոց ու կսե.—Գնացե՛ք յընձի համար մե անդարտ մարդ՝մ գտեք ու բերեք:

Թագավորի մարդիկ կերթան շատ ման գուքան, հմը անդարդ մարդ չեն գտնի:

Մարդիկը գուքան յետ, կերթան թագավորի քովը, թամալա կուտան ու կսեն.—Թագավորն ապրած կենա, գնացինք շատ տեղ, էնքան ման էկանք, անդարտ մարդ՝մ չը գտանք, չունքի յամեն մարդ էլ մե դարտ՝մ ունի, անդարտ մարդ հնարք չկա գտնելու...

Թագավորը հերսոտի կը, կսե.—Անկարելի է, գնացեք յուրդից գուզեք ըսածս մարդը գտեք բերեք, չբերեցիք՝ գլխներդ կտռել կուտամ:

Մարդիկը կերթան էստին-էնդին, գ՝նկնին ման գուքան քաղաք, գեղ, սար-չոլ՝ անդարտ մարդ չեն գտնի:

Օրեն մեկ օր կանցնին մե տեղե՝մ, օր չոբանը յերկան կոպալը ձեռը, օչխար կարծեցնե:

—Բարև քիրվա:

—Ա՛յ, Աստծու բարին:

—Քիրվա, քեֆդ հալդ ինչղ է:

—Փա՛ռք Աստծու, լավ է, յընչի՞ պիտի լավ չեղնի:

—Էսել գուզե՝ դու դարդ չունի՞ս:

—Յընչի պիտի դարդ ունենամ, օչխարը կը կթեմ, թաժա կաթը կը խմեմ, պառկիմ քնիմ կը, էլ դարդս ո՞րն է:

—Օր էդպես է, էրթանք մեր թաքավորի քովը, քեզի պես մարդ գուզե տեսնի:

Վերցնեն կը չոբնին տանին կը հետները:

Թագավորին թամալա կուտան, պատմեն կը գործի եղելությունը, թե՝ մենք վերջապես գտանք ու բերինք դարդ չունեցող մարդ:

—Բերեք նես՝ տեսնիմ,—կսե թագավորը:

Չոբանը թագավորին էլ կսե, օր ինքը դարդ չունի:

Թագավորը տեսնի կը օր չոբնի յախեն պատռել է, կսե—Քիրվա, յախեդ պատռել է:

—Հի՛ը, ըշտը էդիկ էղավ յընձի համար դա՞րդ,—կսե չոբանը:

2(117). ԾՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՏՂԱՆ

Մի մարդ ու կնիկ ունենան կը մեկուճար տղե՝մ: Եփոր տղեն հասակը կառնի, վերցնե կը տնեն ինչ օր յիրան կը հասնի, բաժնվի կը ծնողներից ու առանձին կապրի: Կանցնի ժամանակ:

Մե օր՝մ հերը ու մերը մտածեն կը. «Էրթանք մեր տղին տեսնինք ի՞նչ հալի է, ի՞նչ կենե»:

Կերթան տղի դուռը կը ծեծեն:

Տղեն դուռը բաց կենե, շատ սառը հանդիպի կը ծնողներին, նես էլ չի կանչե:

—Ի՞նչ գուզեք,—հարցնե կը տղեն:

—Բան ունինք ըսելու,—կսեն ծնողներն ու նես կը մտնին:

—Մենք վաղուց յիրարից բաժնվել ենք, առանձին կապրինք, յամեն բան պարզ է, էլ ի՞նչ ունիք ըսելու:

Հերը պատասխանե կը.—Պզդի վախտդ ես պաքեի կը քու ճուճուլը, մերդ էլ՝ տուտուզդ, հիմի գուզենք օր քու պարտքդ եդ տաս:

3(118). ԱՍՏՎԱԾ ՄԵՂՔ ՉՈՒՆԻ, ԽԱՌՆԱԿԻՉՆ Ա ՄԵՂԱՎՈՐ*

Գեղացիք աստծո հետ պայման կ՝դնեն, որ անձրև տա, արտը վարեն: Վեր կ՝կենան կէրթան արտը վարելու:

Էս վախտ աստծու հաշվապան կիջնի ցաց.—Այ մարդ, ի՞նչ կէնես էս:

Թե, պա.—Հեչ, վար կէնեմ, ցան կէնեմ, հպե ի՞նչ էնեմ, գեղացի մարդ եմ:

—Պա,—ասում է,—այ մարդ, էս տարի անձրև չի գա, էս ինչի՞ էսպես կ՝վարես՝ առանց ասելու:

Թե.—Ինչխ չի տա, աստված ինձի խոստացել է: Ես էլ կ'վարեմ:

Թե կըսե.—Վարե, որ ինձի անգաճ չես ընե, վարե:

Էս հաշվապան կէրթա, թե.—Աստված, դու հողածիններին անձրև ես խոստացե՞լ:

Հբա.—Հա՛:

—Չէ,—կըսե,—անձրև պիտի չտաս,—կըսե,—եթե անձրև տաս, ես սուտ դուրս կիկամ: Քեզ կ'ներեն, ինձի չեն ների:

—Դե որ էդպես է,—կըսե,—ինչ անեմ, չեմ տա:

Օգոստոս ամիսն է, հաշվապան էլի կիջնի, կ'տեսնի՝ արտը դեղնած, շոգին, կրակին կ'վառի, գեղացին էլ վիզը ծռած՝ կողքին կայնած է:

Հբա.—Բարև:

—Բարև:

—Ինչխ ես:

—Ինչխ պիտի լինեմ, աստված անձրև խոստացավ՝ չտվեց, հիմա վիզս ծռած արդի գլուխ կայնած եմ:

—Հբա, քեզ ինչ ըսի: Չըսի՞ անձրև չի տալու:

—Էհ,—կըսե,—աստված էստեղ ինչ մեղք ունի, աստված մեղք չունի, մեր մեջ խառնողի տունը աստված քանդե, մեր միջի խառնակիչն ա մեղավոր, թե չէ աստված անձրև կիտար, լավ կիտար, լավ էլ կեղներ:

4(119). ԳՈՄՇԻ ՆԱՂԼԸ

Մի չքավոր գեղացու ուներ մի հատ գոմեշ: Էդ գոմեշը շատ կովարար է լինում. եթե աչքերը բաց էր լինում, ամեն բան քարուքանդ կէներ: Տերը գոմեշի աչքերը կապած էր պահում:

Օրվա մի օր գնում է չութ անելու: Հեռվից մի ձիավոր է գալիս: Գեղացին վազ է տալիս ու բղավում.—Մի՛ գա, մի՛ գա, գոմեշս քեզ կխփի:

Էդ մարդը գեղացուն չի լսում, ձին քշում է, մոտենում է գոմեշին: Գոմեշը կապը կտրում է, վրա է հասնում ձիանը, խփում փորը թափում: Ձին սատկում է: Ձիավորը վիճաբանում է.—Տես քու գլուխը ինչ օյին կը հանեմ:

Էրկու օր անցկանալուց հետո դատավորը թուղթ է գրում, գեղացուն կանչում իրա մոտ:

Գեղացին մտածմունքի մեջ գնում է [քաղաք] ճանապարին տեսնում է մի մարդ նստած քարին հանգստանում է, պապիրոսը փաթաթած, կրակ չունի վառելու:

—Արի տեսնեմ ո՞վ ես,—կանչում է գեղացուն:

Ծխում են իրար հետ:

Գեղացին պատմում է, թե ինչ է եղել, դատավորը կանչել է:

—Չգիտեմ ինչ կանի դատավորը:

Մարդը ասում է գեղացուն.—Քեզ մի բան ասեմ ես, լսի՛: Երբ դատավորը հարց կուտա քեզ չը պատասխանես, վրա չորորդին կը պատասխանես:

Գեղացին գնում է դատավորի մոտ, գլուխ է տալիս, կայնում է, տեսնում է ձիան տերը էնտեղ կանգնած:

Դատավորը հարց է տալիս.

—Ինչ է պատահե:

[Ձիատերը պատմում է:

Դատավորը դառնում է գեղացուն].—Որտեղացի՞ ես:

Չի պատասխանում:

—Անունդ ի՞նչ է:

Չի պատասխանում:

—Ինչ գործով ես պարապում:

Էլի չի պատասխանում:

Դատավորը դառնում է ձիան տիրոջը.

—Ա՜յ մարդ, էս լալ ու քառին ինչի՞ ես բերել [տվել] էստեղ:

Ձիան տերը պատասխանում է.—Սո՛ւտ է, լա՛վ լալ ու քառ ես գտել [էն ժամանակ] եկել էր ճանապարին բղավում էր. «Ձին մի՛ քշի, մի՛ գա, գոմեշը կը խփի»:

Նոր գեղացին բացվում է.—Համ գանգատ է արել, համ էլ վկայում է, էլ ես ի՞նչ ասեմ:

Դատավորը ձիան տիրոջից տասը ռուբլի է վերցնում տալիս գեղացուն, որ աշխատանքից ետ է ընկել, նրան տուգանում ու հեռացնում:

5(120). ԳԵԾ ԽԱՍԻԱԹՈՎ ՁԻՆ

Շատ հին ժամանակները երկրի մեջը էման սովորուտուն կար, օր եթե ապրանք տանեիր մեյդանը՝ ծախելու, անպայման բտի անասունի այիբը ըսեիր: Եթե չըսեիր, ետո էտ այիբը դուս գար, անասուն ծախողին դատեին կը:

Մարդու մեկը մե ձի՛մ բտի առնիր: Մեկուճար մե տղե՛մ ունիր: Գնաց մալի մեյդան: Մե մարդըմ մե ղրսաղ ձի՛մ՝ շատ լավ ձի, գյամը բռնե կայնել էր:

Ձի առնողը հարցրեց.—Ախպեր ջան, խո ձիդ այիբ չունի՞:

Ձի ծախողն ըսավ.—Այիբ չունի, հըմը ձիս գյոթվերան է:

Առնողն ըսավ.—Թող գյոթվերան էղնի, ես մեկ է, օր որց ձի չունիմ:

Առավ ձին, տուն տարավ:

Հին ժամանակները կիրակոց կիրակի գէլլեին ջիլիդ խաղալու: Կիրակի յառավոտ էս մարդ տղեն ելավ գնաց գոմը: Ձին այարեց, անցավ ետևը՝ պոչը կապելու: Ձին ոտքը վերուց ու մե՛ չուֆտե՛մ՝ տղի դոշին: Տղեն վեր յընկավ գոմի սալերու վրեն ու մեռավ: Գործը տվին դատարան: էրկուսն էլ գնացին դատարան՝ ձի ծախողն էլ, առնողն էլ:

Դատավորը հարց տվավ ձի ծախողին՝ որպես մեղավոր.—Դու էտ չիֆտալի ձին յընչի՞ տվիր էդ մարդուն, օր քացի քցեց, տղին սըպանեց:

Ձի ծախողն ըսավ.—Պարոն դատավոր, էդ առնողին հարցու՝ ես ի՞նչ ըսեցի ձին առնելու ժամանակ:

Դատավորը ձի առնողին հարցուց.—Ի՞նչ ըսավ:

Ձի առնողն ըսավ.—Պարոն դատավոր, ըսավ. «Ձիս այիբ չունի, հըմը գյոթվերան է»:

Ձի ծախողն ըսավ.—Պարոն դատավոր. Գյոթվերանի տըկեն ինչ ըսես՝ դուս գուքա՞, թե՞ չէ...

6(121). ՏԵՐՏԵՐԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Մի մարդ, որը միշտ գողությամբ էր զբաղվում, եկել էր եկեղեցի՝ տերտերին «խոստովանվելու»:

Նա չոքել էր տերտերի առաջ, խոնարհել գլուխը ու թվարկում էր՝ երբ և որտեղ ինչ է գողացել, իսկ տերտերը ամեն անգամ նրա մեղքը քավում էր ասելով. «Աստված թողություն շնորհե»:

Խոստովանելու ժամանակ մարդը տերտերի գրպանից հանում է նրա ժամացույցը:

Երբ վերջանում է խոստովանելը, գողը ասում է.—Տեր հայր, ես մի մեղք էլ եմ գործե, քեզ չասացի, այսօր մեկի գրպանից մի ժամացույց եմ գողացե, ուզում եմ քեզ նվիրել: Ահա՛, վերցրու:

—Ինչ ես ասում, այ մարդ, ես ոչ մի անգամ գողացած ժամացույց չեմ վերցնի:

—Խնդրում եմ վերցնես:

—Ոչ, ոչ մի դեպքում չեմ վերցնի:

—Ապա ես ի՞նչ անեմ:

—Տար ժամացույցը տիրոջը տուր:

—Տալիս եմ, բայց տերը չի վերցնում:

—Եթե տերը չի վերցնում, այն ժամանակ դու ինքդ վայելիր:

—Շնորհակալ եմ,—ասում է գողը և հանգիստ սրտով հեռանում՝ տերտերի ժամացույցը գրպանում:

7(122). ՏԵՐՏԵՐԻՆ ԽՈՍՏՈՎԱՆԵԼԸ

Մի մարդ գալիս է տերտերի մոտ խոստովանվելու:

—Տեր հայր, մի մեղք եմ գործե:

—Ի՞նչ է, որդի, ասա:

—Մի թոկ եմ գողցե:

—Հինգ կոպեկի մոմ վառե՝ մեղքերիդ թողություն:

—Թոկի ծայրին մի հորթ էլ կար:

—Ի՞նչ արիր հորթին:

—Մորթեցի կերա:

—Ոչինչ, քսան կոպեկի մոմ վառե, խունկ արա, մեղքերիդ թողություն տամ:

—Հորթին որ բերեցի՝ մայեց, կովն էլ յետևեն էկավ:

—Կովին ի՞նչ արիր:

—Կովը ծախեցի:

—Մի մանեթի խունկ ու մոմ արա, Աստծուց խնդրեմ՝ մեղքերիդ թողություն տա:

—Բայց կովին փնտրելու նպատակով՝ տերն էլ էկավ:

—Տիրոջ հետ ի՞նչ արիր:

—Տիրոջը կացնով սպանեցի:

—Չէէ՛, հիմի էլ թողություն չկա՛մ:

8(123). ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՄՈՆՏԸ

Վարդապետի օգնական մոնտը շատ «քյուֆուրկան» կեղնի: Երբ որ նա գնում է գյուղերը վանքի հարկը հավաքելու, անխնա հայոյում է գյուղացիներին: Գյուղացիք գալիս գանգատվում են վարդապետին, որ մոնտը նրանց միշտ հայոյում է:

Վարդապետը կանչում է մոնտին ու կարգադրում որ սրանից հետո էլ չը համարձակվի այլևս հայոյելու գյուղացիներին և քանի որ դժվար է ազատվել հին սովորություններից խորհուրդ է տալիս նրան որ, երբ որ նա գնա գյուղերը, լեզվի տակը մի քար դնի. երբ որ հայոյանքը գա, քարը հիշեցնի՝ չը հայոյել:

Մոնտը այդպես էլ անում է, մի փոքրիկ քար է դնում լեզվի տակը և այլևս չի հայոյում: Անցնում է մի որոշ ժամանակ: Մի անգամ վարդապետը և մոնտը գնում են գյուղերը շրջելու: Ճանապարհին հանկարծ սկսվում է մի հորդառատ անձրև և սաստիկ քամի: Նրանք շտապում են մտնել մոտակա գյուղը և ծեծում են առաջին պատահած դուռը:

Դուրս է գալիս մի կին, տեսնելով նրանց, կինը ասում է.—Դուք էստեղ քիչ՛մ սպասեք, ես թեզ՛մ գուքամ:

Վարդապետը ու մոնտը սպասում են նրան անձրևի տակ: Մի քիչ հետո կինը դուրս է գալիս և ասում.—Նոր ես թուխս կը դնեի,—դիմում է վարդապետին,—աշեցի քեզի օր հավիս ձագերն էլ քեզի պես փունփուշիկ էղնին, հիմի Աստված ձեզի հետ, ïուր օր էրթաիկ պիտի՝ գնացեք:

Մոնտը դառնում է վարդապետին.—Հայր սուրբ, քարը լիզվիս տկեն հա՞նեմ:

—Հանե՛ որդի ջան, հանե՛:

9(124). ՍՐԲԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջներում սրպերը շատ էին, որ քարի, փետի վրա խաչ տենային կսեին՝ սուրբ է ու աղոթք կէնեին, խաչհամբուր կուտային, յա չէ իրանց շորից կտրեին կապեին կը էս ծառից, քոլից դարձնեին կը սուրբ: Էդման սրբերը Հովպերան գեղը[91] շատ կար:

Գեղցիկ հանդեն խոտ, յա քյալաշ գեղը տեղափոխելու վախթը գուգային, էդ սրբի տեղը, օր հասնեին կը հոդ, սելը կայնցուն կը, երեսները դառուին կը դեմի սուրբը, երեսները խաչ հանեին կը, մի փեշկյաշ՛մ խոսք կուտային, որ անզավալ տեղ հասնեին:

Հիմի սելը բարձած գուգան, օր էդ մատուռին հասնին կը, երեսները դառուին էդ մատուռը կսեին. «Դու քյոմակ էնես՝ սաղ, սալամաթ տեղ հասնինք»:

Քասա, զատի էդ ճամփեն էլ թեք ու քարքարոտ էր, մի հոգի՛մ ել բդի սելեն բռներ, օր չը շռչեր:

Էղավ օր սելը շրչի կը, մատուռին կսե.—«Հա, հըբը ճրակ լուս կուտամ, հըբը չեմ տա, ա՞ռ քեզի ճրակ, լուս, եզներս քիչ մնաց թալաֆ էղնեին»:

10(125). ՀԱՋԻՆ ՈՒ ԻՐԱ ԿՆԻԿԸ

Մեկըմ կերթա Երուսաղեմ, հաջի կդառնա ու գուգա իրանց գեղը: Մի օր՛մ հաջ գացող մարդը կնկա հետ կերթա բազար՝ կնկա համար հալավ առնե: Կնիկը նստել էր իշուն, ինքն էլ առաջ ընկած՝ իշու գյամն էր բռնե: Էրեխեքը նեղ քյուչեքում խաղ կէնեին՝ շամաթա էնելեն: Դուս կպրծնի էշը, խրտնի կը, հաջուն քցե կը տակը, զռալեն էման փախներ կը: Էդ խեղճ կնիկը փաթվել էր իշու վիզը, օր չընկներ: Տարավ, տարավ, զարկեց պատին, կնիկը վեր ընկավ իշուց: Կող ու կուշտ ջարթել էր: Էրկան հավարի կանչե կը:

Հաջին կայնե, կաշեր կնկան ու խնդալեն քիչ մնար կը, օր ուշքը էրթար: Կնիկը գանգտի կը կսե.—Դու ինչ անխիղճ ու անաստվածն ես, ես մեռնիմ կը, դու կայնե խնդաս կը, չես գա հավարիս:

—Ես որ անաստված էղնեի, հաջ չէի էրթա՝ հաջի դառնաի: Ի՞նչ գաի քովդ, էռսուն տարվա մարդ ու կնիկ ենք, հեչ մե օրըմ էդման չես փաթվե վիզս, ինչխոր իշու վզին ես փաթվե:

11(126). ԱՍՏԾՈՒ ՀՐԵՇՏԱԿԸ

Շատ աստվածավախ տերտեր՛մ կեղնի: Սաղ աշխարհը էդոր բասը կենեն, կսեն՝ էդոր անեծքը անեծք է, օրհնանքը՝ օրհնանք:

[91] Հոպվերան–գյուղ Կարսի մարզում (ծանոթ. կազմողների)

Մի գեղ՚մ էլ տերտեր չեն ունենա, գուգան էդոր քովը կսեն.—Տերտեր ջան, մեր գեղը տերտեր չունինք, մի հատ՚մ հարամի է փետա էղե, ամեն աշուն մտնի կը գեղը օչխրներին կուտե, ինչ կենենք՝ չենք կռնա էդոր բռնե: Կսեն՝ քու անեծքը անեծք է, օրհնանքն էլ օրհնանք է: Լիզուտ ինչ որ պտտե կը, կուտանք: Էրկու տարով արի մեր գեղը, բալքի էդ անտերին բռնենք:

Տերտերը ռազի կեղնի, գելնի կերթա էդ գեղը, կնկանը թողնե կը տանը: Զաթի ինքն էլ էրեխա չի ունենա:

Կանցնի էրկու տարի, ինչխ կէղնի, ինչխ չի էղնի, էդիկ չեմ կռնա ըսե, հըմը գեղը խոսեին կը՝ էդ հարամին գեղը էլ չէր մտնի, օչխրներին էլ ձեռք տվող չէր էղնի: Վերը կսեր՝ տերտերի անեծքով սատկել է, վերն էլ, թե ավջիներն են սատկցրե: Էդոր էրկու տարին թմի կը, հախը կառնի, գուգա կը իրանց գեղը՝ կնկա քովը: Բեռը կիջու դուռը, ինքը ուրախ-ուրախ դուռը բանա, նես մտնի կը տուն, տեսնի կը ջահել տղե՚մ տերտերի կնկան գրկե, պաչպչորե կը, ու իրան էլ հեչ բանի տեղ չեն դնե:

—Ա՛յ կնիկ, էդիկ վէ՞վ է,—հարցու կը կնկան:

—Յա,՛ ինչխ թե վէվ է, անունը Գաբրել է, թևեր ունի, թռնել գիդե, քելել գիտե, կնկա ծոց մտնել գիդե, Աստծու հրեշտակ է, ինչխոր մեր տունը գուգա-կերթա, բարաքյաթով լցվել է,—կսե կնիկը:

12(127). ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՀԱՌՍԸ

Տերտերն էրտում էր ճամպովը տեսավ, օր մե մարալ հառս՚մ տակն ումուզին էկավ, ընկավ առաջ ու շուխով էրտմ է: Հմի տերտերն օր էդ տեսակ հառսին տեսավ, բերնի ջուրը գնաց: Ասավ. «Ա՜խ, էս հառսին ըսեի՝ հառս ջան, անունդ ինչ է, ըսեր՝ Գյուլ Հեյրան: Ասեի՝ մառտդ ուրտեղ է, ըսեր՝ Հնդստան: Ասեի էս գիշեր ընձի տուն չէիր առնի: Ասեր՝ գլխուս վրեն տեղ ունիս»:

Տերտերն ինչ օր ասավ, հառսը իմծավ, ըսկսեց ուշիգ-ուշիգ քելել: Տերտերը գնաց հասավ: Ասավ.—Ա՛յ հառս ջան, անունդ ինչ է:

Հառսը ասավ.—Գյուլ Հեյրան:

Տերտերն ասավ. «Հիսուս Քրիստոս, Հիսուս Քրիստոս ոտներս գետնեն կտռավ»:

Տերտերը նորից ասավ.—Մառտդ որտեղ է:

Հառսը ասավ.—Հնդստան:

Տերտերը էլի ասավ. «Հիսուս Քրիստոս, Հիսուս Քրիստոս, ջանս փշամզավ»:

Ասավ.—Էս գիշեր ընձի տուն չեմ առնի:

Հառսն ասավ.—Աչքիս վրեն տեղ ունիս:

Տերտերը ասավ. «Հիսուս Քրիստոս, Հիսուս Քրիստոս: Ընձի քաշին երկինկը»:

Ասավ տերտերն ու գնաց տուն: Բոխճա կապեց, օր իրկուն էրտա հառսի տունը: Հմը հառսը օր գալմ է տուն, մառտին ասմ է.—Այ մա՛ռտ, հալ ու հեքյաթ էսման էսման բան… ասավ, ես էլ իպր թե օժարածա ասի՝ աչքիս վրա տեղ ունիս: Հիմի տերտերը գուկա: Դու գնա յոդեն քիչ՚մ նստի, արի դուռը զարկ, ես քեզի գիառծնեմ, կսեմ՝ ուրտիֆ ես էգե, ասա՝ Հնդստանու: Էն վախտ ես իմ դիվան-դատաստանը կենեմ տերտերի հետ:

Ասավ, թամպա էրավ մառտուն: Մառտը գնաց յոդեն, ինկը ճրագը վառեց նստավ, յանի թե տերտերի ճանպեն է աշմ: Մեկել տեսավ տերտերը էկավ ձնթաթաղ, ասավ.—Բարի իրկուն օշնած:

—Բարով էկար,—ասավ հառսը՝ քիթ ու բերանը ծածկելով:

Տերտերը բոխճեն տվավ հառսին, նստավ հառսի կոխկը: Ուզմ էր փաթթվե, հանաք էներ: Հառսը ասմ է.—Համպերե, վախտը չէ: Բերենք քիչ՚մ հաց ուտենք, դես-դեն, էրտամ գոմը՝ մալին աշեմ: Էսօր մեր մադակը բտի ծնի վեռճապես:

Էնկան մլուլ տվավ, օր չուրի մառտը դուռը զարգեց: Հառսը ձեն տվավ, ասավ.—Էդ ո՞վ ես:

Մառտն ասավ.—Ես եմ, քու մառտն եմ:

Հառսն ասավ.—Օր դու իմ մառտն ես, էդ ուրտիֆ ես գալմ:

Մառտն ասավ.—Հնդստանու:

Մառտն օր ասավ՝ Հնդստանու հարսն ասավ.—Օհո՛, տերտե՛ր, էկավ տեսավ դու ըստեղ ես, քեզ գսպանե, ընձ էլ:

—Ա՛յ օշնած, բա ինչ էնենք, ինչ չէնենք—ասավ տերտերը:

Հառսն ասավ.—Քելե քեզի տանիմ գոմը: Ես գիդեմ՝ ինչ կենեմ,—ասավ հառսն, ու տերտերի հետ գնացին գոմը: Հառսը տերտերին նստծրավ մատկի առաճը ու բերավ կճճով մացունը լցրեց տերտերի գլխուն, ասավ.—Ձեն չհանես: Ես մառտուս կսեմ, օր մադագը ծնել է: Չալ գյադակ է բերե:

—Լավ,—ասավ տերտերը ու նստավ սուս ու փուս:

Հառսը գնաց դուռը բացեց: Մառտն էկավ նես: Ասավ.—Ինչ էրեծիր:

Հառսն ասավ.—Քելե գոմը, կսեմ, թե ինչ էրեծի:

Մտան գոմը, հառսը ասավ.—Մառտ ջան, գիդեմ մեր մադակը ծնել է, չալ գադակ է բերե: Տիա նստած է մադգի առաջը:

Մառտը կսե.—Յավաշ, ես բտի էդ գադկին մոռտեմ:

Հառսը կսե.—Վա՛յ, քա մառտ, մեխք է, քոռպա գադակը ինչ է էրե:

Մառտը կսե.—Ես չալ գադգից հազ չեմ էնմ:

Մառտն օր դանակ գհանե, տերտերը կելնի ճրակը գը փչե ու գփախնի: Էման գփախնի, օր էդևը էլ չի աշե: Գլոխը պրծնցնելուն կաշե:

13(128). ԿՈՐԿՈՏ ՈՒՆԻՍ ԾԵԾԵԼՈՒ

Տերտերի աշկը ընկել էր Նիգարին: Նիգարը շատ սիրուն էր: Ամեն օր տերտերը էլնմ էր եռտիկը կայնում էր, Նիգյարն օր գալմ էր կամ էլնմ էր դուս, տերտերն ասմ էր. «Հի՛, հի՛, հի՛, հի՛»:

Նիգյարն ամոտու էլ դուս չէր էլնում: Շատ օր էդման տերտերը Նիգյարի զայլեն տարավ, Նիգյարը մառտուն ասավ.—Ա՛յ տղա, ըշտը հալ ու հեքյաթ էսման-էսման... Քանի ես դուս գելնիմ, տերտերը կենե. «Հի, հի, հի, հի, հի»:

Մառտը կսե.—Ա՛յ ախճի, տերտերն օր կենե «Հի, հի, հի, հի», դու էրա. «Հա, հա, հա», օր կսե՝ որտեղ, դու ասա՝ մեր ջաղաջը: Դու իրկուն տերտերին բեր ջաղաճը: Մենկ ընդուր հախեն գուգանք:

Էդման խրատ կուդան Նիգյարին ու իրանկ՝ մառտն ու տեկրը, գվերցնեն մեշոկ'մ ցորեն, գնացին ջաղաչ: Մեշոկը դրին դնգի կոխկը ու իրանկ տապան:

Մեկ էլ տեսան Նիգյարը էկավ, քիչ'մ էդև էլ տերտերն էկավ, բարև տվավ Նիգյարին: Նիգյարը բարևն առավ: Տերտերը բերած բոխճեն վեր դրավ, Նիգյարին ասավ.—Արի նստի կոխկս, մարալ ջան:

Տերտերը նորից օր ասավ. «Արի՛, արի՛», Նիգյարի մառտն ու տեկրն էլան պայված տեղեն, էկան կայնան առաջ, ասին.—Ա՛ն, էկանք, դե հիմի ելի, տեսնինք:

Հանին տերտերի շորերը, չիբլոծրին: Ցորենը լցին դինկը ու տերտերին լծեծին դինգ ու ձավար ծեծեցին: Ծեծին, պրծան տերտերին հառծրին, ասին.—Դե գնա հիմի «հի, հի, հի» էրա:

Տերտերն անջաղ օր փախավ գնաց: Ընդից եդև Նիգյարը իշկան օր տեսնմ էր տերտերին ասմ էր. «Հա, հա, հա»:

Տերտերն ասում էր.—Չո՛ռ, չո՛ռ, չո՛ռ, էլի կորգոտ ունի՛ս ծեծելու:

—Չէ,—ասմ էր Նիգյարը,—կորկոդը պռծանք, հիմ բլղուրն է մնածե ծեծելու: Մեկել օր «հի, հի, հի» էնես, բլղուրն էլ կծեծենք, պռծնինք:

Տերտերը տեսավ, օր Նիգյարը ամեն վախտ իրան ձեռ է առնմ, լազատ չի տալմ, ճարը կտռավ, գլոխն առավ էդ գեղից գնաց ուրիշ գեղ:

Մե վախտ մնաց, Նիգյարը գնաց, ասավ.—Էն փախստական տերտերը ըստեղ է՞, գա մեր ձավարը ծեծե, մնացել է առանց ծեծելու:

Տերտերը տեսավ օր ըդեղ էլ դադար չի թողմ, ըդից էլ էլավ փախավ:

14(129). ԾԱԾԿԵ, Ա՛Ռ ՀԵՐ*

Տաճկաստանում պատահում է գյուղեր, որ էդ մեկ գյուղում կա քրիստոնյա և մահմեդական ժողովուրդ, այսինքն՝ իսլամները:

Էդպիսի գյուղերից մեկում կապրի, թե չի ապրի, ես ինչ գիտեմ, մի մարդ ու յուր տղան: Երբ էդ տղան մեծացավ, սկսեց մեծերի հետ խաղալ: Էդ տղային միշտ, ուրեմն, անարգում էին, տնազ էին անում, թե դու մոլլի տղա ես: Քանի էդ տղան մեծացավ, էդ խոսքը ավելի շատ բանձրացավ և տղու սրտին ծանդր նստավ: Երբ մեծացավ դարձավ տասնին-քսան տարեկան, խոսաց իր հոր հետ, թե.—Հայրիկ, քանի փոքր էի, ճան էի խաղում, թուղթ էի խաղում, մանկական խաղեր էր լինում, ինձ փոքրերն էին ձեռ առնում, թե՝ ես մոլլի տղա եմ, մեծացա՝ մեծերը: Ուրեմն իմ մայրս մոլլի հետ կամ է ունեցել:

—Չէ՛,—ասում է:

—Էդպիսի խոսք ականջդ չի՞ անցել:

Հբա ասում է.—Անցել է:

Հբա.—Ինչ ես արել:

Հբա.—Էդ դատը հանձնել եմ աստծուն: Դու գործ չունես: Էդ դատը աստված կանի:

Շատ է անցնում, քիչ է անցնում, տղան էլի ջուր էր անում, բան էր ջրում, մեկը գալիս է իր ջուրը կտրում: Խոսք, խորաթա է լինում, իրար են ծեծում:

Էլի էդ տղին անպատվում է.—Քեզ ի՞նչ պիտի ըլի, դու մոլլի տղա ես, ի՞նչ երեսով... ինչ, ինչ երես քեզ պիտի լինի:

Վերջ, տղան մտածում է, ասում է. «Ես մի անգամ դիմեցի հորս, հերս անտես ըրավ, ես պիտի ինչ ընեմ, ընչ ընեմ»: Դե տղուն հոգուն է հասել, դիմանալ չի լինի: Առնում է մի շիշ օղի, ժամանակը գտնում, բարձրանում մինարա: Ոնց որ հայերի համար հայկական եկեղեցին էղնի, իսլամների համար էլ մինարան է: Մինարեն էլ գտնվում է թուրքերի, քրդերի ամենակենտրոն թաղում: Դրանց մոլլեն ելնում, ոնց որ մեր եկեղեցին զանգեր է տալիս, դրանց մոլլան էլ բանձրանում է, ազան է կանչում: Մոտավորապես տաս-տասներկու մետր բանձր մինարա են սարքել, բանձրանում է մոլլան էդ բանձրության վրա, ազան է կանչում: Դե էդ մինարեն որ բանձրանում ես՝ չլուսացած, լամպուչկա չի լինում, ոնց որ հիմի, մութն է լինում: Տղան լուսադեմին մի շիշ օղին առնում բանձրանում է, շատ է սպասում: Շատ որ սպասում է, մրսում է, ինքն էլ լավ հագված չի էղնում, ստիպված է լինում օղու կեսը խմել: Կեսը խմում է, կեսն էլ դնում է լուսամուտի հակառակ կողմը: Էդ, էդ մինարի վերջը լուսամուտներ է էղնում չորս կողմը: Մի կողմը մոլլեն ազան է տալիս, էն մի կողմը դատարկ է՝ մութն է: Մոլլեն գալիս է, հակառակ կողմեն լուսամուտը բանում, որ ազան տա: Էդ ազան տալու ժամանակ տղան բռնում է մոլլի ոտքերից, վերևից քցում է ցած: Վար է ընգնում, ուրեմն, տղան շտապում է, ուրեմն, օղին թողնում ըդեղ: Իջնում է, փախնում գնում: Մտնում է տուն, որպեսզի թուրք հարևաններ, թեկուզ հայ հարևաններ, չտեսնին:

Տաճկահայի բնավորութուն դու ինքդ գիդես, մինչը չտկլոզնան, չեն կարող քնին: Գամ է, իսկույն շորեր հանում, տկլոզնում է, մտնում տեղ ու կարպետի մի ճոթը քաշում է գլխին: Քաշում է գլխին, նորից եմ կրկնում, որ տղան էնպես թագստոց տեղերով է գալիս, որ էնպես, ուրեմն, չտեսնեն: Մութն է, գալիս է տկլոզնում, քնում: Ախար մարդասպան մարդ չի կարող քնի: Արդեն լուս բացվել է, թուրքեր, քրդեր գնում են իրենց մեջիթ՝ աղոթք էնելու, հայերը կգնան իրենց եկեղեցի՝ աղոթք էնելու: Իսլամներ կտեսնին ՝ մոլլեն միներեից ընկած: Կհետաքրքրվին, թե մոլլան ինչո՞ւ իրան-իրան պիտի ընկնի: Ուրեմն քսան-երսուն տարի էղավ՝ էդ մոլլեն ազան կկանչե, չի ընգնի, էսօր պիտի ընգնի՞: Հետախուզին, թե մոլի ընկնելու պատճառն ի՞նչ է:

Գնում են խելոք մարդիկ, բանձրանում են մինարեն, որտեղ տղան է բանձրացել, ուսումնասիրեն, թե մոլլեն ինչպես է ընկել:

Իսլամներ կտեսնին, որ լուսամուտի մի անկյուն կես շիշ օղի կա:

—Ահա,—ասում են,—մեր մոլլեն ու անխղջություն: Ինքը մեզի կքարոզի, թե էդիկ իրավունք չունենք խմել, բայց ինքը մեզնից գողտուկ կխմե: Նշանակում է՝ դրա ընկնելը շատ լավ է էղե:

Մոլլի ընգնելը տարածվում է, բոլոր ժողովուրդ իմանում են: Էս տղի հայր որ իմանում է, աղոթքը կիսատ կթողնի, կվազի տուն՝ ուրախ-ուրախ: Գալիս է, գիդի, թե տղան միամիտ քնած է:

—Վեր կաց, վեր կաց,—ասում է,—Աբգար ջան, վեր կաց: Ես որ քեզի կ'սեմ՝ մոլլին ձեռ մի տա, աստված դատ կէնե, դու չէիր հավատում: Ասում են, որ մոլլեն, ուրեմն, մինարից խմած ընգել է: Դե խմած մարդ ի՞նչ գիտի՝ դուռ ո՞րն է, լուսամուտ ո՞րն է...

—Ծածկե, ա՛ հեր, ծածկե: Եթե ես չլինեի, մինչև հիմա մոլլեն իմ մոր... ծածկե, ա՛ հեր, ծածկե:

15(130). ԱՍՏԸՁՈՒՑ ԳԴՆԻ

Թուրքի մեգի կնիգ մոլլեն սիրե: Էդ կնիգ կունենա տասերկու տարեկան տղե՞մ:

Տղեն գիկա հոր կըսե թե.—Հայրիկ, մոլլեն մորս ի սիրե:

Հեր կըսե.—Աստըձուց գդնի, ի՞նչ էնիմ, ձեռնես ի՞նչ գիկա:

Մեգ օր, էրգու օր, տղեն կսպասե, տեսնի՝ հեր միջոց ձեռ չ'առնե: Մե օր մի մոլլեն գիկա գելնի մեջիտի գլոխն, օր էլնի ազան էնե: Տղեն կառնե բութուրկե՞մ ըրաղ՝ էրգու ըստական ինք խմե, մեգյելն կառնե գելնի մեջիտի գլուխ, մոլլին գ'հոլե, թալե ցած՝ սադգի, ինք ըրաղն ու բա-

ժագ դնե հոն, գիկա հոր կըսե.—Հայրիգ, մոլլեն յընգավ մեջիտի գլխուց, սադգավ:

Հեր կըսե.—Ըբը յիես օր կըսենք՝ աստըծուց գդնի:

Տղեն թե,—Աստըծուն օր մներ, մոլլեն հըլը շատ սիրեր մորս ի:

16(131). ԷՐԵԽԵՆ ՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Մի գյումրեցի էրեխա գտնի կը մե ալմաստ քար՚մ: Էդ բանը տեսնի կը մե հարուստ վաճառական՚մ: Մտածե կը. «Տղին համոզեմ, մակարիչ՚մ տամ, թանկագին քարը ձեռքեն առնիմ»:

Մոտենա կը տղին կսկսե համոզել, որ էդ քարը յիրան տա:

Տղեն համաձայնվի կը քարը տալ, մենակ եթե հարուստը յիրեք անգամ իշու պես զռռա:

Հարուստը չորս թարաֆը կաշե, տեսնի կը օր մարդ չկա, յիրեք անգամ իշու պես կը զռռա:

—Տղա ջան, տո՛ւր քարը:

—Դու քու էշ հալովդ գուզես յընձի խաբե՛ն, քար չկա... գնա գործիդ:

17(132). ՅՈ՞ՒՄ ՀԵՏ ԽՈՍԻՄ

Նշանեն կը տղին: Տղեն աղջկան չէ տեսե: Աղջիկը աստծու գեշն է. սև, չեչոտ, գեշ:

Յառաջ սովորություն կար, որ հերը յում հետ յուզենար, տղին կը նշաներ: Տղեն իրավունք չուներ, որ հորը ըսեր՝ էդ աղջկան չեմ առնի [կամ էն աղջկան գուզեմ]: Հերը յում յուզենար, կառնիր:

Հարսնիք կէնեն, հարսը կը բերեն: Ժամ տարած ժամանակը տղեն տեսնի կը, օր աղջիկը աստծու գեշն է: Ժամեն գուկան տուն:

Գեղացոնց քովը մի սովորություն կար: Ֆարդա կը կապեն, հարսին դնեն կը ֆարդի յետևը: Յիրեք օր հարսնիք կէնեն, յիրեք օրից յետև հարսնիքն օր կը վերջանա, ժողովուրդը ցրվին կը [նոր հարսը դուս կը բերեն ֆարդի յետևիցը]:

Փեսեն տան մեջ պզտիկը կեղնի: Հարսը ֆարդի տկեն տեսնի կը օր իդիկ իրան առած տղեն է, ֆարդի պոչը եդ կը տանի ու կըսե.—Էս տան մեջը ես յո՛ւմ հետ պիտի խոսիմ:

Տղեն կըսե.—Ընձի հետ մի խոսի, յում հետ խոսիս կը՝ խոսի:

18(133). ԷՐԿՈՒ ՔՈՒՐ

Էրկու քուր կեղնին: Մե քուրը հարուստ կեղնի, մեկել քուրը՝ աղքատ:

Թանկության ժամանակ կեղնի; Աղքատ քուրը մտածե կը. «Էրթամ քուրոջս տունը, էնիկ հիմի հաց կը թխե, բլքի քուրս հաց տա, բերեմ էրեխեքս ուտեն»:

Կերթա քուրոջ դուռը կը զարկե:

Հարուստ քուրը էդ ժամանակ հաց կը թխե, գլխու գընկնի օր քուրը էկավ, տաք հաց(եր)ը վռազ կը դնե տակը, օր քուրը հացը չը տեսնի, հմը աղքատ քուրը տեսնի կը, օր քուրը հացը տակը դրեց, կըսե.—Քուր ջան, կէրթա թանկությունը, կուգա էժնությունը, վառվի կը տուտուզդ, սև կեղնի երեսդ, յաշխարհքը միշտ էսպես չի մնա:

19(134). ՄՐՍԿԱՆ ՀԱՐՍԸ

Հարս ու կեսուր նստել են թնդրի կուշտը՝ հաց կը թխեն: Կեսուրը գրտընակ կենե, հարսը կը թխե:

Աղքատը գուքա տուն օղորմություն յուզելու: Տունը մութ է, մուխ է, յաչք-յաչքի չի էրվա: Աղքատը կայնի կը, ձեն չի հանե:

Հարսը եփոր կզի կը հացը թխելու՝ մե հատմ փորի քամի բաց կը թողնե, կըսե.—Աշես՝ եփ եմ մրսե:

Մե հաց՚մ էլ կը զարկե՝ փորեն էլի քամի կերթա:

—Կերվա շատ եմ մրսե,—կըսե:

Մե հատ՚մ էլ հաց զարկելուս որ քամի բաց կը թողնե, կըսե.—Քա, ամա՛ն, էս ինչքա՛ն եմ մրսե:

—Օղորմություն՚մ տվեք,—խոսի կը աղքատը:

Հարսը աղքատի ձենն օր գիմանա, շշկռվի կը, դառնա կը աղքտին.—Վաղո՛ւց ես էկե:

—Յառաջվա մրսելուդ ես էստեղ էի:

20(135). ՓԻԼԻՊՈՍՆ ՈՒ ՊՈՂՈՍԸ

Փիլիպոսն ու Պողոսը իրարու հետ շատ մոտիկ կէղնին, էդոնց քնելն էր ջոկ: Պողոսը գիմանա, որ Փիլիպոսը իրա օրում համով ճաշ չի

կերե: Կնիկը ինչքան տակ բան կէղներ իրա սիրողին կուտացներ:

Մի օր՝մ Պողոսը Փիլիպոսին տանի կը իրանց տունը, լավ-լավ բաներ կուտացնե, համը մնա կը բերանը: Հիմի Փիլիպոսը միտք կէնե, թե ինչխ էնե, օր ինքն էլ էդման համով բաներով ղոնախլը էնե Պողոսին, հըմը կնկան մավա չի էնե, ախար կնիկը իրան հեչ լավ բան չի կերցրե՝ սավայի ցամաք հացից:

Մի օր Փիլիպոսը լավ միս կառնի, ուրիշ լավ-լավ բաներ, կնկան կսե.—Լավ խորակ էփե, որ Պողոսը մեր տունը բդի գա, էման էղնի, օր իրա կնկա էփածից էլ լավ էղնի, էնոր էփած խորակի համը հըլը բերանս է:

Ալահվաքիլ, Փիլիպոսի կնիկը էման խորակ կէփեր, օր վայթե աշխրքի էրեսին էդման էփող չեղնիր: Մարդուն կսե.—Խորակը հազր է, գնա բախչեն խիար, պամիդոր բեր, դնենք ստոլին:

Մարդը կէրթա բախչեն: Հարի խիար ու պամիդոր քաղե կը գուգա տուն, կնիկը ամանով խորակը պահե կը ու ինքն էլ էրկաթե գոպալը դրե եղի մեջը: Ղոնախը կաշե էդ կնկան, կսե.—Քո՛ւր ջան, գոպալը ընչի՞ էս դրե եղի մեջը:

—Քա, դե եսիմ: Ղորթ է, մարդս շատ լավ մարդ է, հըմը էնոր խայսաթն էլ էման է, օր իրա հազ էրած ղոնախի քամակը էս գոպալը չկոխե, հաց չի ուտացնե, ես էլ դրի եղի մեջը, օր քեզի նեղութեն չեղնի ղոլայ մտնի:

Փիլիպոսը նես մտնի կը տունը, տեսնի կը՝ ղոնախը չկա: Հարցու կը կնկան կսե.—Ո՞ւր է ղոնախը:

Կնիկը կսե.—Հըբը դու էլ մարդ ես, փափխիտ տակը մարդ չկա, ախմախ ես, էդ սրիկան խորակը առավ ու փախավ:

Մարդը գլխու կգնի, ախար ավճին ասել էր, օր կնիկը փեշեն ծուռ է: Մարդը քաղած խիարները կնկան ցուց կուտա, կսե.—Կնի՛կ, էս խիարներեն վերի՞ն հավխիս կը:

Էն էլ կսե.—Էսոր, էսիկ լավ է, համ երկար է, համ էլ շշվա:

—Դե լավ, էսիկ քեզի թող էղնի:

Կնկան պարկցու, կոխե քամակը: Կնիկն էլ վա՛յ-վա՛յ էնելեն ճվճվա կը: Մարդը կսե.—Էսոր որ չես դիմանա, հըբը գոպալը ինչխ կուզեիր Պողոսի քամակը կոխեիր:

Պողոսը հարի հիմի էլ փախնի կը, Փիլիպոսի կնիկն էլ խիարը գուզե քամակեն հանե, հըմը չի կոնա:

21(136). ԻՆՉԿԱՆ ԿՈՒԶԵՍ՝ ԽՄԵ

Մառտը շատ էր խմմ, հառպմ: Կնիկը միշտ խոսմ ու նեղենմ էր: Ըսում էր.—Ա՛յ մառտ, մենկ մեխկ ենք, մեր էրեխեկը մեխկ են: Մի՛ խմե, թարկը տո՛ւր:

Կնիկը շատ ըսավ, մառտը չլսեց: Մեջները շարունակ վեճ էր եղնմ: Օր՝մ էլ մառտը ընկերներով գալմ է տուն: Նստմ են, սկսմ են խմել: Կնիկն էլի սկսում է խոսալ, վիճել.—Ա՛յ մառտ, բոլ ա խմես, թարկը տուր, էդմանով մենկ քյասիբծանք, հալի չենք հասնի: Դոստ ու դուշման մեր վրեն գծիծաղան:

Շատ օր խոսմ է, վեռճապես մառտն ըսմ է.—Առ, էս մե ստականը դու խմե, բալքիմ չխոսաս:

Կնիկը շատ չեմ ու չեմ է էղնմ, ճար չի եղնմ: Մառտը զոռով խմծնմ է: Կնիկն օր խմմ է, արաղը շատ սառտ է էղնմ, կնկա բերանը մռմռմ է: Բուգը, սիռտը մռմռում է: Գլոխը թապ է տալմ, աշկերեն առտասունկը վազմ է: Մառտը խեղճնալով ըսմ է.—Բա դու գիդես թե լավ բան ե՞մ խմմ, օր ամեն օր վրես խոսմ ես: Էս է խմածս էլի, խո մե լավ բան՝մ չէ՞: Դու օր էդ մե ստականին չես դիմանմ, բա ես ամեն օր ինչպե՞ս եմ բուտուլկեկով խմմ ու քու խոսալուն էլ դիմանմ:

—Վա՛յ,—կնիկն ըսավ,—էլ ըստից եդև էլ չեմ խոսա, ինչկան գուզես խմե, չուրի խորովվիս:

22(137). ՈՒՍՏԱ ՄԱԿԱՐ

Ուստա Մակարը ապրմ էր թակավորի քաղաքը: Ուստա Մակարի կնիգը շատ սիրուն, պիտվական էր: Ինչղ է էղնմ, թակավորը տեսնում է ուստա Մակարի կնգան: Մարդ է ղրկմ, կանճմ են ուստա Մակարին, ըսմ է.—Ուստա Մակար, էս գիշերը, պտի վացուն խալվար թեպ հանես խզարի, առավոտ թեզ տաս ընձի:

—Թակավորն ապրած կենա,—ըսմ է ուստեն,—ես վացուն խալվար խզարի թեպը ին՞ճղ քաշեմ տամ: Վացուն խալվար թեպը, վացուն տարվա անջաղ էղնի, ես մե գիշերվում ի՞նչղ քաշեմ տամ քեզի:

—Չիդեմ,—ըսմ է թակավորը,—տվիր՝ տվիր, չտվիր՝ գլոխդ գզարգեմ:

Ուստա Մակարը թողմ գալմ է տուն: Տխուր, մոլոր նստմ է: Կնիկն ըսմ է.—Ուստա Մակար, ինչ է հանդիպե քեզի: Ը՞նչ'ես տխուր, մոլոր նստե: Արի հաս կեր, ջուր խմե, ելի քնի՝ բեզրած մառտ ես:

Ուստեն ըսմ է.—Ինչ հաց, ինչ ջուր, թակավորն ըսմ է, չուրի լուս վացուն խալվար խզարի թեպ բտի տաս: Տվիր՝ տվիր, չտվիր՝ գլոխդ գզարգեմ:

—Է՛, ըդուր դառտը թեպը չէ: Տեսնիս ինչ փորացավ ունի: Աստված ըդոր սռտով չ'ենե: Ընձի անգաջ էրա, ելի հաս կեր, ջուր խմե, ելի քնի:

—Է՛, աշկերս քուն չի գալմ, ինչ քնիմ:

Կնիկն ըսմ է.—Ուստա Մակար, ուստա նաճար, խոտե էկա, դարգայ՝ հազար: Աստված մենձ է,—ըսմ է,—դարգայը հազար, ելի հաս կեր, ջուր խմե, ելի քնի: Աստված մե լուս'մ կենե:

—Տո, ինչ լուս էնե—ըսմ է ուստեն,—վացուն խալվար թեպը, օր փռած էլ էղնի, ես չեմ կռնա ավլե, թոպ էնե, տամ իրան: Էլ ինչ լուս ու ճար էնե, է՛:

Կնիկն ըսավ.—Ավլելով, օր չես կըռնա թոպ էնե, բա մտածելով կռնաս թոպ էնես: Ընձի լսե, ելի քնի:

Շատ, օր կնիկը զոռեց, ուստեն ելավ քնավ: Լուսը նոր էր բացվմ, դուռը զարգին, ըսին.—Ուստա՛, ուստա՛:

Ուստի լիզուն կապ ընգավ: Կնիգն ըսավ.—Ուստա Մակա՛ր, ուստա նաճար, խոտե էկու, դարգայ՝ հազար:

Ուստեն ըսավ.—Էլ ինչ խոտե, էլ ինչ դարգայ: Տանմ են գլոխս զարգեն, դու ըսմ ես՝ խոտե էկա, դարկայ՝ հազար:

Կնիկը էլի թարկրեց իրա ըսածը:

Մարդ ու կնիկ վիճաբանմ էին դռնեն ձեն տվին.

—Ուստա, քելե թեզ արի, օր Սուլտանը մեռել է: Կուբի բտի շինես:

Կնիգն ըսավ.—Տեսա՛ր, օր ես ըսմ էի Աստված մենձ է, զորուտենը շատ է, չէիր հավատմ: Տեսա՛ր իմ ըսածը եղավ:

23(138). ՄԱՐԹ ՈՒ ԿՆԻԿԸ

Մե մարթըմ ու մե կնիկըմ են էղնըմ: Էդ մարթ ու կնիկը ունենըմ են մե հատըմ կով: Բեզարըմ են կովի ձեռը, պայման են կապըմ, թե՝ վերն օր խոսա, էնիկ տանի համ ջրե, համ էլ ալաֆ տա:

Բիրտան դրկիցներեն մեկը գալըմ է դրկըցութեն էնելու, տենըմ է, օր հեչ մեկը չի խոսըմ: Էս կնիկը կովը դուս է էնըմ, տանըմ է իրան: Կնիկը մարթուն ըսըմ է.—Ա՛յ մարթ, կովը տարան:

Մարթն ըսըմ է—Ըհը՛, խոսացի՛ր, դե գնա կովին հա՛մ ալաֆ տուր, հա՛մ էլ ջրե:

24(139). ՍԱՐԻ ՏՈՒՏՈՒՆ*

Կնգա մեգ գուզե սիրողուտյուն էնե՝ չը կռնա, հարմարուտյուն չկա[92]: Միջո՛ց մդաձե: Մե օր մի մարտ բդի դաշտ վար էնե, բայծ սարե տյեղ:

Սիրողին կըսե.—Մարտս ի վար կէնե: Դու կեսօրին գիկաս ժայռի մեջ պայվիս: Յիես հաց բերիմ, դու կէնիս. «Տո՛ւ, տո՛ւ, տո՛ւ»:

Հաձ բերե կնիգ: Սիրող մդյեր է քարի մեճ, կըսե.—Տո՛ւ, տո՛ւ, տո՛ւ...

Կնիգ կըսե.—Մարտ, իդը ինչ ձեն է:

Թե.—Չըս գինա՞՝ իդ ինչ տու, տու է՝ թռչուն է:

Կնիգ կըսե.—Յավա՛շ, էրտամ տեսնիմ՝ էտ ինչ թռչուն է:

Կնիգ գելնի կէրտա քարերու մեճ: Սիրողի հյեդ վերճապես խոշբեշ կեղնի, պառկին քնին:

Մարտ կըսե.—Իդը կնիգս ինչ էղավ, չեղնի՞ կնիգս ի վախեծավ տուտույից, ձեն կդրավ:

Գելնի կէրտա քարերու մեճ, տեսնի, օր սիրող կնգա վրեն է, քաշե չբուխն ու տո՛ւր թե կիդաս...

Կնիգ տգեն կանճե.—Զարգ, զա՛րգ, սուտ տուտու էղաձ է, մարտ գը ք...ն:

Սիրող գյումրա է, գորձիծ գ'ելնա մարտուն կոխե գետին, կսկսե զարգյել:

Կնիգն հախսի կըսե.—Զա՛րգ, զա՛րգ, սարի տուտուն լե գուզին կդրին:

92 Կնգդիք խո նո՛ր չըն բացված, հին ժամանակ լե բաց են (ծանոթ. բանասաց Ն. Մխիթարյանի):

25(140). ԹԱԿԱՎՈՐԻ ՎԱԶԻՐԻ ՓՈՐՁԸ*

Թակավորի վազիրը, թակավորին իրյեք հադ խոչ կար, էդունց պայեստաբյեդն էր: Ավուր մեգը կնգան փորձելու խատյեր, խոճու մեգը տարավ պայեծ: Գնաց իրյեք կիլո միս առավ, բերեծ կնգան: Ըսավ.—Իդը ի՞նճ միս է:

Ըսավ.—Թակավորի խոճերու մեգ մորտյեր իմ, չեղնի՝ մարտու ըսիս:

Թակավոր լե կիրագի էգավ՝ խոչու մեգ չը-կա:

—Վազիր, խոչն յո՞ւր է:

—Չգիդյեմ, դուռ կողբաձ էր, գողծուձ է:

—Պրձի ճարե: Քզի իրյեկ օր սրոկ, խոչ ճարիր՝ ճարիր, չը ճարիր՝ գլուխդ ի զարգիմ:

Վազիրն շիվարավ մնաձ: Մեգ էլ, այ մարտ, կնիգն հարևանի կնգդուցն ըսեր է, թե.—Թակավորի խոճը վազիրն էր մորտի, բերյեր էր էնբես միս՝մ օր: Գաձին հայդնեցին թակավորի մոդիգ մարդկանց:

Թակավուորն կանճյեծ էդ մարտուն, կըսե թե.—Խոճ մորտյե՞ր իս:

Որոշում հանեծին, օր վազիրին կախաղան հանին: Որոշում հանին, էգան տուն: Վազիրին կանճին, թե.—Քելե, քըզի կախաղան բդի հանին:

Վազիրն յէլավ էրտլու, կնիգ թե.—Ո՞ւր կէրտաս, ընձի ջուխտ մի կոշիգ բերիս:

—Հա, լավ,—ըսավ:

Նայիսա, էլան գաձին: Էլան գաձին, տեսան՝ կախաղան պադրաստաձ է, հանին վազիրին, օր բդի կախին:

Ըսավ.—Թակավուոր, էրգու խոսկ ունիմ ըսելու: Թուլ տուր ըսիմ ու կաբ թալեկ վիզս ի, խեղտեկ:

Ըսին,—Իրավունկ ունիս, ըսե:

Ըսավ.—Ընձի բերաձ է կախաղան գ'հանին, կնիգս ընձնե կոշիգ գուզե, յէլյեր իմ կախվելու՝ կ...ս է կայնի, թակավոր լե առանձ քննելու բերյեր է կախե: Ինճ կնգաս խյելկ, ինճ թակաուորի խյելկ, ինճ կ...ս խյելկ: Խնդրիմ, քելեք տեսեք՝ խոճն յուր է:

Նուոր գաձին խոճ գդան, վազիրին լե կախաղանից հանեծին: Վերջապես կնգա փուորձն էլ էն էղավ, օր կնգան երբեք մարդիկ պետք է իրանձ սեգրեդ չը-տան:

26(141). ՔՐԹԻ ԿՆԻԿԸ

Մե քուրթ չոբան՝մ յամեն օր յիրա կնկան ծեծե կը: Էդ կնիկը, որ կողմն կանցնի մարդը, էրկու ձեռով գրող կը չափե մարդուն: Մե օր՝մ էլ մարդը տեսնի կը, որ կնիկը յիրան գրող կը չափե:

—Վա՛յ,—կըսե,—ի՞նչխ ես իմ կնկաս սիրտը առնիմ:

Մե յառավոտ՝մ որ լուսանա կը, մարդը տեղեն վեր չի յելնի, սուտ մեռնել կէնե: Կնիկը կէրթա-գուքա, նես ու դուս կէնե, տեսնի կը, որ մարդը տեղեն չի յելնի, կըսե. «Հլը էրթամ տեսնիմ, թե յընչի՞ տեղեն չի յելնի, գեղի օչխարը մնացել է, ինքը տեղեն ժաժ չի գա»:

Գուքա մոտենա կը տեղին տեսնի կը, որ մարդը ձեռները խաչե մեռել է: Մարդը մեռել է, հմը էնքան սիրտ չի թողե, որ մոտենա, ձեռք տա տեսնի, թե ղորթ է մեռե՞լ, թե՞ սուտ է:

Կնիկը տեսնի կը, որ տեղեն ժաժ չի գա, մոտենա ժշխե կը, հետն էլ գուլա ու հետեն «Դլո» կկանչե.

«Վառեր ես իդա փեղ (սիրտը),
Էրթայի քրթու գեղ,
Բերեի քու դեղ,
Դնեի քու փեղ»:

Ջուխտ ձեռով մարդու գլխուն կը զարկե ու քրֆե կը:

Մարդը խղճա կը, մտաձե կը. «Ինչ օրի եմ քցե, որ էդպես կըսե»:

Ձղճա կը, բիրդան վեր կը թռնի տեղեն ու կըսե.—Կնիկ ջա՛ն, էդ ի՞նչ օրն եմ քեզի քցե, օխտը պորտիս թոբա էղնի, որ քեզի զարկեմ էստից յետև:

Էդից յետև մարդը կնկան կը սիրե ու էլ չի ծեծե:

27(142). ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՔՐԴՈՒ ԿՆԻԿԸ

Մե գիտնականըմ կերթա քրդու տուն ղոնաղ: Կը պատայի, օր պապիլոս պիտի վառե, քրթու կնկաց կրակ գուզե: Քրթու կնիկ կերթա փշուրըմ փոշի[93] կըլնա բռան մեջ, կրակն լե կը

[93] Փոշի – այստեղ՝ մոխիր (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

դնե վրեն, բերե ձեռք դեմ կենե պապիլոս քաշողին:

Գիտնական կըսե.—Էս էսքան բան գինենք, հըմա իտա չընք գինե:

28(143). ՀԸՆԴԸՍՏԱՆԻ ԳՈՒԶԸ

Քըրթու կնիկ միտք ունի սիրողութուն էնե, մարթը տունն է, չ'իշխընա: Ավուր մեկ սուտ հիվանդ կեղնի, մարթուն կը կանչե, կըսե.—Մա՛րթ, արի քովս ի, ես կը մեռնիմ:

Կըսե.—Կնի՛կ, օրի՞ կը մեռնիս, դո՞ր կը ցավա:

Կըսե.—Վալլա, պորտիս տակ կը ցավա:

Կըսե.—Ի՞նչ էնենք, օր լավնա:

Կըսե.—Քուրըս սալըղ տվեր է, օր Հընդըստանու գուզ ուտիս, կը սաղնաս:

Մարթ էրկու գարե կլոճ կը վերու ու կընկնի ճամփա: Կերթա կը տեսնա, օր վաճառական ճամփու հետ կիգա: Կըսե.—Քու՛րթ, դո՞ր կերթաս:

Կըսե.—կերթամ իմ ֆաթին Հընդըստանի գուզ բերիմ:

Կըսե.—Ընչի՞, մեր քաղքի գուզ չ'օ՞քնե, օր կերթաս կելնիս Հընդըստան: Դառցի ետ,—կըսե,—քու կնիկ սուտ հիվանդ է, սիրող կենե:

Քուրթ դառնա կիգա, կէլնի էրթըքին, կը տեսնա օր սիրող նըստեր է կընկա կողքը, ձեռք կը զարկե գոգին, կըսե.—Ը՞վ չի է[94]:

Կըսե.—Շամամե դոստա՛ն է:

Ֆաթեն կը զարկե սիրողի գոգին, կըսե.—Ը՞վ չի է:

—Խիարե բոստա՛ն է:

Վերուց ուր մարթ պլորներ կը կախե ու կըսե.—Ահա՛ն քըզի գուզե Հընդըստա՛ն է:

29(144). ԲԱՐԵՍԻՐՏ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Գյուղի ծայրամասում երկու գյուղացի իրար մոտ տուն են շինում ու դառնում դրացիներ: Տան մոտ ամեն մեկը խոտի դեզեր է ունենում: Գյուղացիներից մեկը նկատում է, որ իրա խոտի դեզը քանի գնում պակասում է, թեպետ ինքը չի օգտագործում: Մտածում է. «Գիշերը պահակ կանգնեմ, տեսնեմ՝ ինչ է կատարվում»:

Գիշերը տեսնում է, որ իրա հարևանը եկավ կանգնեց իրա դեզի առջև և ասաց.

«Բարև ձեզ, բարձր դիզան,
Խորց մը խոտ տաս մեր եզան»:

Ասում է ու խուրցը շալակում է, որ տանի:

—Էդ ի՞նչ ես անում, ինչո՞ւ ես տանում իմ խոտը:

—Չը տեսա՞ր որ հարցրի,—պատասխանում է հարևանը,—առանց հարցնելու խո չեմ տանում:

—Հա՛, որ հարցրել ես, ուրիշ բան, կարող ես խուրցը տանել:

30(145). ԹԹՈՒՆ՝ ԱՂԻ ԼՃՈՒՄ

Գեղ'մ կեղնի, աղ չեն ունենա: Հիմի թթու բտի դնեն շիվարե մնացել են, չիտեն, թե ինչ էնեն: Էդման օր շատ մտածեն կը, բիրդան մտքերը կնգնի, օր իրանց սինոռի մեջ մի հատ'մ աղի լիջ կէղնի, կսեն.—Վեդրով ջուր բերելը չաթին կեղնի, լավն էն է, օր սելով քյալամը տանինք լիջը, հոն ջարդենք, լցնենք լճի մեջ՝ թթվի, մենք էլ կուտենք:

Էդման էլ կէնեն:

Կանցնի վախթ'մ: Իրարու կսեն՝ հիմի թթված կէղնի, էրթանք ուտինք, էդման էլ կէնեն: Կերթան լիճը, շորերը հանեն կը, մտնեն կը լճի մեջը: Մտնողը դուս չի էլնի ու իրանք խեխտվում են:

31(146). ՀԱԼԱԲՈՒ ՔՈՍԵԿԸ

Մե մառտ'մ իրան եզը տանմ է ծախելու: Տանմ կայնմ է մեյդանը, տեսնմ է, օր երկու մառտ էկան եզան մուշտարի: Աշին, տեսան, հավնան, ըսին.—Շատ լավ եզ է, ապսոս օր պոչ ունի: Պոչն օր չեղներ, շատ լավ էր:

Ըսում են ու թողմ էրտմ են: Էս մառտը սամտ է քցմ, եզան պոչը կտռմ է: Տեսնմ է երկու հոգի էլ ուրիշ մուշտարի էկան: Աշեծին, տեսան, եզան հավնան ըսին.—Շատ լավ եզ է, ապսոս կոդոշ ունի: Կոդոշներն օր չեղնի, շատ լավ կեղնի,—ըսմ են ու թողմ էրտմ են:

Էս մառտը՝ եզատերը, թայնա գցմ, եզան կոդոշներն էլ է հանմ: Տեսնմ է՝ երկու հոգի էլ էկան: Աշին, տեսան, եզան հավնան, ըսին.—Շատ լավ

[94] Ի՞նչ է (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

եզ է, ապսոս անգաջ ունի: Անգջներն էլ որ չեղ-նեին շատ լավ էր,—ասին ու գնացին:

Խեղճ մառտը բռնեց եզան անգջներն էլ կտռեց:

Եզն արնաքամ էղավ, մնաց մի հոռտի՛մ չապ: Մեկ էլ տեսավ եզան տերն, օր հինգ-վեց հոգի ղլղները փոխած, լավ հակած-կապած ձեռ-ներն եղևները դրած, շվշվածնելեն էկան եղան եզան մուշտարի: Ասին.—Ա՛յ ախպեր, ի՞նչ աժե եզդ:

Եզատերն ասավ.—Հարուր մանետ:

Էդ մառտիկը շախու էրին, ծիծղածին, ասին.—Ա՛յ մառտ, էլ ի՞նչ ես թողել եզանդ վրեն, օր հարուր մանեթ էլ ուզմ ես: Եզդ օր եզան նման եղնի, արժեր 200 մանեթ, հմը էլ բան չես թողե եզանդ վրեն : Նա՛ պոչ ունի, նա՛ կոդոշ ունի, նա՛ էլ անգաջ ունի: Մնածել է մինակ կաշին: Կաշին էլ վեր առ ու պռծի:

Ասին, 10 մանեթ տվին եզան տիրոջը, առան եզը գնացին: Ադոնք Հալեբու քյոսեկն էին: Խեղճ մառտուն դակի քաշին:

32(147). ՄԱՏԿԻ ԾԱԽԵԼԸ

Ժամանակոց կային մե մառտ՛մ ու կնիգ՛մ: Ունեին մե մադագ՛մ: Էդ մադակը ամեն ինչով անպետք էր: Երկու տարին մե անկամ՛մ էր ծնմ: Սադա ոռծ էր բերմ: Կաթը քիչ էր, յուղայնուտենը պակաս էր, ինկը խույսզ էր, տուն չէր գալմ: Մե խոսկով՝ անպետկ էր: Մի օր՛մ էլ ելավ էդ մառ-տը, թոկ դրավ մատկի վիզը, տարավ մեյդանը, օր ծախե: Կայնավ, կայնավ, չուրի իրկուն, հեչ մառտ մոտիկ չեկավ մատկին, չհառծրավ լավ ու վատը: Մեկել դալալն էկավ, ասավ.—Ախպեր ջան, էդ մադակը ծախու՞է:

—Հա՛,-ասավ մատկի տերը:

—Բա ընչի՞ չես ծախմ,—ասավ դալալը:

Ծախողն ասավ.—Մուշտարի չկա :

—Ի՞նչ կուդաս, օր մադակդ ծախեմ:

Տերն ասավ.—Տասը մանեթ կուդամ քեզի, մադակս ծախե:

Դալալը մադակի թոկն առավ տիրոջ ձեռ-նեն ու մատագն առավ ընկավ մեյդանի մեջն ու ձեն տվավ, ասավ.—Արեք, լավ մադակ եմ ծախմ: Շատ լավ մադակ է: Ամեն տարի ծնմ է, ինչքան ծնմ է, էգ է բերմ, հեչ ոռծ չի բերմ: Մե կաթոլմ կաթ է կթվմ, կեսը եղ է: Վով օր առնի, չի փոշմնի: Արեք, առեք տարեք:

Դալալն օր էդքան գոված մադկին, մադկի տերը թոկը առավ դալալի ձեռից, ասավ.—Ախ-պեր ջան, էլ չեմ ծախե:

Դալալը ասավ.—Ընչի՞ չես ծախե, ա՛յ ախ-պեր:

Տերն ասավ.—Ես գեշուտենի համար էի ծախմ իմ մադակը, իմ մադակն օր էդքան լավն է, էլ ընչ՛եմ ծախմ:

Առավ մադակը, իրկուն եդ դառավ տուն: Կնիկն ասավ.—Էլի էդ անպետքին բերեցիր տո՞ւն:

Մառտն ասավ.—Ա՛յ կնիկ, անպետք չէ: Շատ լավն է,—ինչ օր դալալն էր ասե խեղճ մառ-տուն, էն էլ ինկը ասավ կնկան:

33(148). ԷՐԿՈՒ ԱԽՔԱՏԸ

Էրկու ախքատ նստում են կամուրճի գլխին, մեկը՝ մեկ գլխին, մեկն էլ՝ մյուս: Երփ թաքավո-րը կնոջ հետ կէրթա մեջիթ, մեկը կը կանչե՝ յա Մանխպուպ, մյուսը՝ յա Մահմուդ: Մահմուդ թա-քավորի անունն է, Մանխպուպ՝ իրենց աստծու:

Թաքավորը կը կանչե վանզիրին, կա-սե.—Վանզիր, որ կէրթանք պալատ խմոր՛մ էնել կուտաս, մե մենձ գունդ կէնես մեչը լիք օսկի կլցնես, կտաս ֆուռը՝ էփի, կբերես էն իմ անու-նը տվող ախքտին կտաս:

Վեզիրը էտպես էլ կանի, մի մենձ հաց թխել կտա՝ մեչը լիք օսկի, կբերի էտ ախքտին կտա, որ թաքավորի անունն է տալիս: Էս ախքատին էրեխա չունի, բայց Մանխպուպի անունը տվողին շատ էրեխա ունի: Էսի հացը կտա էտոր, կա-սի.—Առ, տար, թող էրեխեքտ ուտեն:

Էս ախքատը հացը կառնի կբերի տուն: Տանակը կտնեն կկտրեն, կտեսնեն կխռխռա, խըռ, խըռ կկտրեն՝ մեչը լիքը օսկի: Էտ ախքա-տը մեկէլ օրը էլ չի գնա կարմնջի վրեն: Կուտեն, կխմեն, լավ կապրեն:

Մյուս օրը թաքավորը էլի կէրթա մեջիթ, կտեսնի իր անունը տվող ախքատը էլի էկել է նստել է կարմնջի գլոխը, Մանխպուպի անունը տվողը չի էկեր:

Վանզիրին կը կանչե, կասե.—Վանզիր, էրեկ-վա օսկին՝ հացով էսոր տվի՞ր, թե էն Մանխպու-պի անունը տվողին:

Կասե.—Թաքավորը ապրած, էսոր տվի:

Թաքավորը կը կանչի էտ ախքատին, կասե.—Ծո, ես քեզի մեծ հաց'մ ղրգեցի, մեչը լիքը օսկի, ի՞նչ էրիր:

Կսե.—Թաքավոր ջան, չեմ գիտցե, տվի էն մեկէլ ախքատին, էնի շատ էրեխա ունի:

Նոր էստեղ թաքավորը կսե.—Վերմա՛միշ Մա՛խպուպ, նեյնասըմ Մահմուդ՝ որ չի տվել Մա՛խպուպը, ի՞նչ անի Մահմուդը:

34(149). ՄԵ ՖՈՒՆՏ ՄԻՍ

Մե քաղաքում կէղնի մե հարուստ վաճառականըմ, էսիկ կըսկսե քյասիբնալ: Էդ վախտը էրթըմ դիմըմ է մե ուրուշ վաճառականի'մ, օրա իրեն հազար մանեթ փոխ տա: Էս վաճառականը պայման կը կապե, օրա տա, օրա էն պայմանով, օր դոշից մե ֆունտըմ միս կտրե, եթե փողը ուշացընե: Գըրըմ են պայման: Ընսնըմ է մե ժամանակըմ: Վաճառականը ուզըմ է իրա տված փողը: Ըսըմ է՝ չեմ կրա տա:

Վաճառականը էրթըմ է գանգատ:

Կայնըմ են դատի: Դատավորը որոշում է հանըմ, օրա մե ֆունտ միս կտրեն քյասըբի դոշից: Համաձայնվըմ են, օրա կտրեն: Հըմը ըստեղ գանգատում էղնըմ է մե հատ փաստաբան: Ըսըմ է.—պայմանում կա, օրա մե ֆունտ միս կտրեն, բայց դատավոր, լա՛վ լսե, ըստեղ չէ գրած, թե մե ֆունտըմ միս դոշեն կտրելու վախտը արուն դուս գա, կամ ավել պակաս էղնի: Եթե օրա ավել պակաս էղնի, կամ արուն թափի, սաղ կարողութուն պըտի տա:

Էս վաճառականը թողնըմ է գանգատը, ըսըմ է.—Թող քեզի էղնի, թաքիլա էդ շառեն ազատվիմ:

35(150). ՀԱԽԱԼԻՆ ՈՒ ՀԱԽՎԵՐՄԱԶԸ

Էրկու ախպեր՝ Հախալին ու Հախվերմազը, էրթըմ են աշխատելու: Աշխատանքի տեղը մեկ ախպերը մեկելից առնըմ է էրկու կապեք, որ աշխատանքը պրծնին, ընդուր էրկու կապեքը տա:

Աշխատանքը պըրծընըմ են, էնի էրկու կապեքը չի տալըմ: Ախպերը մտածըմ է՝ ինչըղ էնեմ, օր պըրծընիմ: Վերջը կըսկըծուն սուտ մեռել է էղնըմ: Էն ախպերը ղաստու ջուր է տաքացնըմ, օր լողցընե: Տաք ջուրը լըցնըմ է ախպոր գլխուն, ախպերն աչկերը բանըմ է: Բանըմ է թե չէ, ըսըմ է.—Տուր էրկու կապեքըս: Ախպերը թարքար աչկերը խըփըմ է:

Լողցընըմ պըրծընըմ է, պատանքը կարըմ է, տանըմ դընըմ է ժամը: Սաղ ախպերն էլ կենըմ է ժամը, օր ախպերը թե սաղնա, էրկու կապեքը ուզե:

Էտ գըշերը թաքավորի խազնան գողերը գողնըմ են, բերըմ ժամը՝ փայ էնելու: Փայ էրած վախտը խազնի միչեն դուս է գալըմ մե թուրըմ: Թուրն օր դուս կուգա, գողերեն մեկը կըսե.—Վեվ օր էս թրով զարկեց էդ մեռլին էրկու կտոր էրավ, էս թուրը կուտամ ընդուր:

Մեկը թե.—Հա՛, տո՛ւր ես զարկեմ:

Թուրը առնըմ, էրթըմ է օր զարկե, մեռելը սաղնըմ է:

Ըսըմ է.—Իշկան օր հին ու թաժա մեռելներ կան, էլեք, օր մեռել սըպանող է էկե:

Էրկու ախպերը խառնըվըմ են իրար, ու գողերը թողնըմ են խազնեն, փախնըմ:

Հախալին ու Հախվերմազը խազնեն փայ են էնըմ: Փայ էրած տեղը Հախվերմազը թուրը վերցընըմ տալըմ է Հախալուն, էրկու կապեքի տեղը: Տալըմ է, հըմը չի ասըմ, թե էսիկ քու էրկու կապեքիդ տեղն է: Խազնեն փայ էնելե ետև, Հախալին ըսըմ է.—Տո՛ւր էրկու կապեքս:

Ըսըմ է թե.—Չե՛մ տա:

Կըռիվ կընկնի: Էդ վախտը գողերը մեկի'մ ղըրկըմ են, թե.—Գնա տես՝ քանի մարթ էին, օր թողինք փախանք:

Գողն օր էկավ, աքուշկից աշեց, Հախվերմազը գողի փափախը վերցրավ, զարկեց գետին, ըսավ.—Հախա՛լի, էս էլ քու էրկու կապեքի տեղը:

Գողը փախավ, հասսավ իրա հընգերներուն ըսավ.—Էնքան շատ էին, օր ամենքին էրկու կապեք էր հասե, մեկին էլ չէր հասե, իմ փափաղըս խլին տվին:

36(151). ԺԱՄՆ ՈՒ ՋԱՂԱՉԸ

Ժամն ու ջաղաչը իրար հետ կը պարզենան: Ժամը կըսե.—Դու ի՞նչ ես օր, մեծավոր իշխանները կուգան իմ քովը, համբուրեն կը ինձի:

Ջաղաչը պատասխանըմ է.—Ա՛յ ,ձունը քու գլխուդ, դու ի՞նչ ես օր, ես օր չէղնիմ, մենձ իշ-

խանները անոթի կը մեռնին, չեն գա քու դուռը՝ աղոթք էնելու:

Ջաղաչը կը հաղթե:

37(152). ՀՆԱՐԱԳԵՏ ՊՐՈՖԵՍՈՐԸ

Պատերազմի ժամանակ Լոնդոնի մի շատ հարուստ մարդու տղային կանչում են զինվորական ծառայության: Տղան չի ուզում գնալ բանակ: Ծնողների համաձայնությամբ, նա գնում է զորակոչիկների հանձնաժողովի նախագահի մոտ, որը մի հայտնի պրոֆեսոր էր ու առանձին խոստովանում է նրան, որ ինքը միանգամայն առողջ է, և եթե պրոֆեսորը կարողանա իրան ազատել զորակոչից, նա կարող է պրոֆեսորին վարձադրել մինչև հինգ հազար ֆունտ ստերլինգ:

Պրոֆեսորը մտածում է ու ասում.—Առաջիկա երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 6-ին, ես կը լինեմ Հայդ պարկի այսինչ ծառուղում, այսինչ նստարանի մոտ: Խոստացած գումարը կը բերեք կտաք ինձ, այն ժամանակ ես ձեզ կազատեմ զինվորական ծառայությունից:

Նշանակված օրին և ժամին երիտասարդը, վերցնելով թղթադրամների փաթեթը, գնում է Հայդ-պարկի որոշված տեղը: Տեսնում է, որ պրոֆեսորը բարձրացել նստել է մի ծառի վրա ու... ջութակ է նվագում: Պրոֆեսորը ընթատում է նվագը ու ասում.—Երիտասարդ, ձեր բերած փողը դրեք ծառից կախված պայուսակի մեջ ու ինքներդ իսկույն հեռացեք:

Նշանակված օրը երիտասարդը ներկայանում է զինվորական հանձնաժողովին: Նախագահում է պրոֆեսորը: Քննում են երիտասարդին և գտնում, որ նա առողջ է: Պրաֆեսորը դիմում է երիտասարդին.—Հանձնաժողովը գտնում է, որ դուք «պիտանի եք»:

—Ինչպե՞ս թե պիտանի եմ, բայց, պրոֆեսոր, դուք ինձ խոստացել էիք, որ ես «պիտանի չեմ»:

—Ես ձեզ չեմ ճանաչում, առաջի անգամն եմ տեսնում, ինչպե՞ս ես կարող եմ ձեզ բան խոստանալ:

—Իսկ չե՞ք հիշում Հայդ-պարքը:

—Կրկնում եմ, ես ձեզ առաջի անգամն եմ տեսնում և Հայդ-պարքի հետ գործ չունեմ:

Տղան տաքանում է.—Այն դուք չէի՞ք, պրոֆեսոր, որ սրանից 3 օր առաջ ես եկա ձեզ մոտ, դուք բարձրացել նստել էիք ծառի վրա ու ջութակ էիք նվագում:

Բոլորը ծիծաղում են.—Այս երիտասարդը ցնորված է,—ասում է հանձնաժողովի անդամներից մեկը,—թույլ տվեք, պրոֆեսոր, նրան գրել «անպետք»:

38(153). ՍԱԼԴԱՏՆ ՈՒ ԼՈՐԴԻ ԱՂՋԻԿԸ

Ձորքը շարքով կայնած էր: Էրկու հրամանատարներ էդոնց քովը կայնած խոսեին կը: Սալդտի մեկն էլ էդոնց քովը կայնած՝ էդոնց խորատեքը անկաճ կէներ, թե էդոնք ինչ խոսեին կը: Մեկը հարցու կը, թե.—Դու ուրտե՞ղ էիր, օր էսքան վախթ չէիր էրևա:

Էն էլ կսե.—Գնացել էի Անգլիա՝ լորդ Ջորջի աղջկան տեսնելու, հըմը 10 հազար դոլար ծախսեցի, էրեսն էլ չկռցա տեսնեի:

Սալդատը էդիկ օր գիմանա, կսե.—Դուք՝ օֆիցերներդ, բիթունքդ էլ ախմախ եք:

Էդիկ օր էդման կսե, էդոր բռնին կը, տանին կը հրամանատարի քովը: Հրամանատարը կսե թե.—Դու ի՞նչ իրավունք ունիս, օր օֆիցերին ախմախ կսես:

—Ղորդ է, պարո՛ն պալկովնիկ, սալդատը իրավունք չունի օֆիցերի անունը տա, իրա չինով բդի հետը խոսի: Ախարըմ գացե Անգլիա՝ լորդի աղջկան տեսնելու, չի կրցե տեսնի, հբը ախմախ չէ՞: Ես օր էրթաի, էնոր ես զարսի տեսնելը, հետս բերեի կը ընձի կնիկ:

Հրամանատարը հանե 10 հազար դոլար կուտա, կսե.—Դե գնա բեր, օր չբերիր գլոխդ կտրեմ կը:

Էդ սալդատը կըգնի ճամբա: Օրվա մեկը հասնի կը Անգլիա: Մի պառավի՛մ տուն ղոնախ կեղնի, պառավին կսե.—Ճաշ բեր ուտինք:

Պառավը կսե.—Փարա չունիմ, ճաշ ուրտի՞ց բերեմ:

Տղեն հանե 10 դոլար կուտա, կսե.—Ճաշի համար ինչ որ հարկավոր է, ա՛ռ, բեր:

Էդ պառավ կերթա կառնի, բերե կը, 5 դոլար ավելնա կը: Ավելցածը կուտա տղին, տղեն չի վերու, կսե.—Թող մնա քեզի:

Էդման իրեք օր իրար վրա ղրկե կը ճաշի համար մթերք բերե: Էդ իրեք անգամին էլ հնգական դոլար կավելնա, ավելցածը կուտա տիրոջը, էն էլ չի վերու, մնար կը պառվին: Պառվին կսե.—Պառավ, հբը ես ճբ կռնամ տեսնիմ աղջկան, համ էլ ուրտեղ կռնամ տեսնիմ:

Պառավը էդոր կսե.—Գնա՛ խաս բախչեն, էս ժամերին հոն կեղնի, էնտեղ կռնաս տեսնի:

Տղեն կերթա, տեսնի կը պահակը հոն կայնած է, բարև կուտա կսե.—Պահա՛կ, պապիրոս չունի՞ս, բեր ծխենք:

Էն էլ կսե.—Չունիմ: Լորդը տարեկան 12 մանեթ կուտա, էն էլ անջախ քյուլֆատիս չոր հացի հերիք տա, ինձի փարա ուրտեղի՞ց բդի էղնի:

Էդման 3 օր կերթա, փարա կուտա, պապիրոս բերել կուտա, զդաչին մնա կը էդ պառվի տղի քովը: Տղեն կսե.—Հըբը աղջկան ուրտեղ կռնամ տեսնիմ:

—Ա՛յ տղա, զահլեքս տարար: Ես ի՞նչ գիտեմ, ուրտեղ կռնաս տեսնի լորդի աղջկան: Աղջկա կոխքին մի տղե՛մ էր կայնած, էնիկ ըսավ՝ ժամի 8-ին սիրածի հետ կերթա թատրոն, կռնաս գնա, հոն կտեսնիս:

Տղեն կերթա բիլետ ծախողի քովը կսե.—Բիլեթ՛մ տուր:

Էն էլ կուտա: Կսե.—Ես գուզեմ առաջի տեղը:

Էն կսե.—Չկա:

—Հբը առաջին տեղի բիլետը ի՞նչ կարժենա:

Կսե.—2 դոլար:

Հանե 5 դոլար կուտա, առաջի տեղի տոմս կառնե:

Հիմի էդոնք նստած են, աղջկա սիրածը՝ մի թարաֆը, տղեն էլ՝ մեկել թարաֆը, աղջիկը՝ մեջտեղը: Աղջիկը տղին կսե.—Էս սալդատը մեզի խանկարի կը, չեմ կռնա էրեսս բանա: Դու գիտես, օր Գերմանիայից 2 ժամացույց են բերե, կռնաս առ մեկը քեզ, մեկն էլ ինձ համար, գիշերը գուգաս քովս՝ ընձի ղոնախ:

Տղեն գիշերը կերթա աղջկա քովը, դուռը ծեծե կը, աղջիկը բանա կը, տղեն նես մտնի կը տուն, շորերը հանե, մտնի կը աղջկա ծոցը: Աղջիկը տեսնի կը, օր տղի շապիկը կոշտ է՝ սալդատի շապիկ է հակինը, աղջիկը հարցու կը, կսե.—Ընչի շապիկդ կոշտ է:

Էն էլ կսե.—Նոր կրախմալած է՝ էդոր համար:

Էդ հատաղին դուռը ծեծեն կը: Աղջիկը կսե.—Էս էն սալդատն է, քյանդր բերեք, կախվիմ վերևից, մեզեմ էդոր գլխուն, ի՞նչ գուզե ինձեն, քանի-քանի հեղ ըսել եմ՝ չէ, էդ բանը օր չի էղնի, էլի յախա չեմ կռնա պրծցու:

Էքսի օրը տղեն կերթա լորդ Ջորջի քովը: Գուզե կոստյում առնի, քանի կոստյում ցույց կուտան, չի հավնի: Էդտեղ օֆիցեր՛մ կայնած կեղնի, կսե.—Էդ մարդը կոստյում առնող չէ, էդոր փարա ուրտից՞ օր կոստյում առնի:

Տղեն էդիկ օր գիմանա սրտին կառնի, խազեիինին կսե.—Քու խանութը ապրանքով քանի՞ս կարժենա:

Էն էլ կսե.—9 հազար դոլար:

Տղեն 10 հազար կուտա, կսե.—Ա՛ռ, դու միջեն դուս արի:

Օֆիցերին էլ խանութից դուս կէնե, դուռը փակե կը, ինքը կերթա հանրակացարանը, լորդն էլ կերթա իրա տունը:

Լորդը մնա կը պարապ: Սիրտը թպուտ չի տանի, փոշմնի կը, օր խանութը ծախել է, կսե. «Էթամ հետ առնիմ»:

Գուգա կսե.—պահակին.—Հոս հանրակացարանում էսման մարդ՛մ կա՞:

Էն էլ կսե.—Կա:

—Դե կանչե դուս գա:

Էն էլ կսե.—Քնել է, 2 ժամ հետև:

Էդ էրկու ժամը էդոր համար դառնա կը էրկու տարի, էդման էրկար թվաց: Էրկու ժամը կանցնի, կերթա քովը: Էն էլ կսե.—Ըսեք թող նես գա:

Էդ մարդը օր նես մտնի կը, սալդատը կսե.—Խեր է, ինչի՞ ես էկե:

Էն էլ կսե.—Խանութս ծախի, հըմը փոշմնել եմ: Քեզ 9 հազարով տվի, առ 10 հազարը, հետ տուր:

Սալդատը կսե.—Աղջիկդ տո՛ւր, նոր հետ կուտամ:

Էն էլ, թե.—Էդ իմ գործը չէ, աղջկաս գործն է, կայնի էրթամ հարցում:

Աղջկան օր խապար կուտա, աղջիկը հարցու կը.—Վե՞վ է էդ մարդը:

Հերը կսե.—Սալդատ՛մ:

«Վա՛յ, ինձ հետ ապրողը հորս էլ է դաքի բերե»: Կսե.—Հե՞ր ջան, դու օր կուտաս, ես էլ կառնիմ:

Լորդը կսե տղին.—Գնա՛, շորերտ փոխե, պիտի պսակվիս:

Տղեն կսե.—Չէ, ես էս շորերով պտի պսակվիմ, չես ուզե՝ քու գործն է:

Ու պսակվեց: Պսակվելե 5 օր էդև կնկնի ճամփա, կերթա իրանց երկիրը:

Հեռագիրը կուտա իրա նաչալնիկին, օր պսակվել է, նաչալնիկը չալղչին կառնի, կերթա դիմավորելու: Տեսնի կը լորդի աղջիկը սալդտի թևը ընկած՝ դուս էլան: Նաչալնիկը աղջկան կսե.—Դու վե՞վ էս:

Աղջիկը կսե.—Լորդ Ջորջի աղջիկն եմ, էս սալդատն էլ իմ ամուսինն է:

Նաչալնիկը էդոնք օր իմացավ, ձեռքով նշան էրավ, չալղչիները բաշլին չալելը, թուրը քաշեց, դրեց ճակտին, ընկավ առեջ, էտևից էլ հարս ու փեսեն կերթան շտապը: Կերուխում էրին, ուրախացան: 3 օր էդման քեֆ էրին, նոր հարս ու փեսին միացրին: Դե թազա պսակված ջահել աղջիկ ու տղա, տղեն էլ սալդատ: Բախտավոր աղջիկ էր, օր ընկել էր սալդտի ձեռքը:

39(154). ԲՈԼՈՃՆԵՐԻ ԵՎ ՉԱՄԻՉԻ ՈՒՏԵԼԸ

Հայ հայդուկները ընկնում են սուլթանի ձեռքը: Նրանք գիտեն, որ իրանց սպասում է մահապատիժ, դրա համար նրանք հայտարարում են, որ.—Իրանց սխալվել ուրիշի տեղ են բռնել, բանտարկել, իրականում մենք գժեր ենք:

Սուլթանը կանչում է իր գիտնականներին ու կարգադրում, որ քննեն և պարզաբանեն բռնվածները առողջ ե՞ն, թե՞ գիժ:

Գիտնականներից մեկը խորհուրդ է տալիս.—Խառնենք Պարսկաստանի խոշոր սև չամիչը սև բոլոճների հետ ու տանք բռնվածներին՝ ուտելու, թե խելոք են՝ չամիչը կուտեն, թե գիժ են՝ բոլոճները կուտեն:

Բոլորն էլ համաձայնվում են: Ներկա եղողներից մեկը այդ վճիռը հայտնում է բանտարկված հայդուկներին: Ամանով բերում են բոլոճները ու չամիչը իրար հետ խառնված ու տալիս են հայդուկներին՝ ուտելու, և իրանք թաքուստի տեղից հետևում են:

Հայդուկներից մեկը ասում է.—Տղեք, թեզ անենք էս ոտավորներին ուտենք, նրանք փախչում են, էն անոտները մերն են ու մերը:

Բոլորը սկսում են ուտել բոլոճներին և այդպիսով հաստատում, որ իրանք գիժ են:

Նրանք ազատվում են մահապատժից:

40(155). ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պարսիկների հետ պատերազմելիս մի ճակատամարտում Սուլթան-Մուրադը պարտություն է կրում: Խուճապի է մատնվում նաև սուլթանական շքախումբը և հետապնդվում պարսիկներից: Շքախումբը գերի ընկնելու պահին, զինվորներից մեկը շուտափույթ փոխանակում է իր հագուստը Սուլթանի հետ՝ նրան տալով իր զինվորական վերնազգեստը: Հասարակ զինվորին տեղնուտեղը սպանում են որպես Սուլթան Մուրադի, իսկ ծպտված Սուլթանը գերիվարվում է շահի մայրաքաղաքը՝ որպես բանող ձեռք: Շահի թույլտվությամբ պարսիկ վաճառականները գերիներից վերցնում են իրենց մոտ ծառայության: Ծպտյալ Ս. Մուրադին ծառայության է վերցնում կտորեղենի մի վաճառական: Նրա ցուցաբերած վարքն ու համեստությունը արժանանում է գովասանքի: Այնուհետև նա մուտք է գործում վաճառականի տունը՝ որպես ծառա:

Շուտով մեռնում է ծերացած պարսիկ վաճառականը՝ հարստությունը թողնելով ջահել կնոջը, որը մուտք ուներ Շահի պալատը: Երիտասարդ կինը թույլտվություն ստանալով՝ ամուսնանում է իր գերու (ծառայի) հետ:

Ամուսնությունից առաջ վաճառականուհին հաստատ խոսք է վերցնում իր ապագա ամուսնուց, որ մինչև վերջ սա խոնարհաբար լսի իրեն:

Շուտով Ս. Մուրադը կնոջ շնորհիվ մուտք է գործում պալատ և իր պատշաճին վերաբերմունքի շնորհիվ արժանանում Շահի ուշադրությանը և հետո դառնում Շահի խորհրդատուն: Իր ծառայությունների համար Շահը նրան նվեր է խոստանում: Վերջինս խնդրում է Պարսկաստանում գտնվող իր կենդանի մնացած հայրենակիցներին ազատել գերությունից: Շահը խոստանում է: Հայրենիք վերադարձող գերիների հետ Ս. Մուրադը հաջողացնում է իր կնոջ հետ դուրս գալ Պարսկաստանից: Հայտնի է դառնում Սուլթանական քաղաքում Մուրադի

վերադարձը: Նրան պետական դրոշակով ընդառաջ է գալիս արքունիքը և հարեմը: Այդպիսի մի հանդիսավոր մոմենտի Ս. Մուրադի վերջին կինը նրանից (Ս. Մուրադից) ջուր է խնդրում: Սուլթանն առանց հապաղելու ջուր է հրամցնում կնոջը: Արքունիքը և հարեմը զարմանքից քար են կտրվում: Իմանալով (նոր միայն) իր ամուսնու ով լինելը՝ պարսիկ կինը սահմկռում է:

Սակայն Սուլթան Մուրադը հանդիսավոր ասում է.—Ես խոստացել եմ քեզ լսել ու խոնարհ լինել մինչև իմ կյանքի վերջը: Խոսք եմ տվել որպես գերի և այն չեմ դրժելու որպես Սուլթան:

Դ. ԻՐԱՊԱՏՈՒՄ ԶՐՈՒՅՑՆԵՐ

1(156). ԴԵՊՈՒՏԱՏ ՍԱՖԱՐՈՎԻ ՃԱՌԸ[95]

Ռուս-տաճկական պատերազմին 1877-1878 թթ. Ալեքսանդրապոլ են գալիս իրանց շքախմբով մի խումբ բարձրաստիճան զինվորականներ՝ գեներալ Դրազդովիչը, կնյազ Շերեմետևը, բարոն Զալցան և ուրիշներ:

Գյումրեցիք իրանց ասնաֆների դրոշակներով հավաքվում են քաղաքի ծայրամասում գտնվող «Ձիթողցոնց զաբոռ» կոչվող հրապարակում՝ բարձրաստիճան հյուրերին դիմավորելու:

Երբ հյուրերը գալիս հասնում են, իջնում ձիաններից դեպուտատ Ավետիս Սաֆարովը մատուցում է նրանց տրադիցիոն աղ ու հացը և արտասանում է հետևյալ ճառը.—Ներալ Դրազդովիչ՝ ադին ցվետոկ, կնյազ Շերեմետով՝ դրուգոյ ցվետոկ, պարոն Զալցև (հասկացիր բարոն Զալցա)՝ տրետի ցվետոկ, ույսո վմեստե՝ դաստա բուդետ, նետ, նետ, նե դաստա, ա բուկեդ բուդետ, դաբրո պաշալվայտ[96]:

2(157). ԱՌԱՋԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Գյումրեցիք տասական թվականներին իրանց քաղաքագլուխ են ընտրում Գանձակեցի Կամսարականին, որը մի թափթփված, մտամոլոր մարդ էր:

Նորընտրյալ քաղաքագլուխը առաջի անգամ է, որ պիտի գա Ալեքսանդրապոլ: Քաղաքացիք նվագախմբով, պաշտոնյա մարդիկ պատրաստի ճառերով գնում են կայարան՝ դիմավորելու իրանց նոր քաղաքագլխին:

Թիֆլիզ-Ղարս գնացքը գալիս կանգնում է կայարանում, բայց այս ի՞նչ բան է, քաղաքագլուխը չկա: Քաղաքացիք փոր-փոշման վերադառնում են տուն:

Իսկ գնացքը շարունակում է իր երթը դեպի Ղարս, իր հետ տանելով վագոնում քնած Կամսարականին, որը զարթնում է միայն Ղարսում:

3(158). ԿԱՄՍԱՐԱԿԱՆԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒՄ Է ԻՐ ՈՐԴՈՒ ՀԵՏ

Գանձակեցի Կամսարականի տղան սովորելիս է լինում Թիֆլիզի գիմնազիայում:

Կամսարականը իր որդուն տանում է Թիֆլիզ փոստուղու ձիակառքով (այն ժամանակ դեռ այդ ուղղությամբ երկաթուղի չկար): Փոստուղու կայարաններից մեկում մինչև բեզարած հին ձիերը թարմ ձիերով փոխելը, Կամսարականը և որդին մտնում են սենյակ՝ հանգստանալու ու երկուսն էլ քնում են: Քիչ անց Կամսարականին զարթնեցնում են և շտապեցնում, որ կառքը պատրաստ նրան է սպասում:

Կամսարականը նստում է, ու կառքը շարժվում է:

Քիչ տեղ գնալուց հետո Կամսարականի միտքն է ընկնում, որ որդուն թողել է սենյակում քնած:

Վերադառնում են և որդուն գտնում դեռ քնած:

---

95 Մինչև 1897 թվականը, այսինքն մինչև քաղաքային ինքնավարության ստեղծվելը Ալեքսանդրապոլ քաղաքի գործերը վարում էին բնակչության կողմից ընտրված 2-3 դեպուտատներ: Անցած դարի յոթանասունական թվերին այդ դեպուտատներից մեկն էր գյումրեցի ճարպիկ և լեզվանի ունևոր Ավետիս Սաֆարովը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

96 Գեներալ Դրոզդովիչ՝ մի ծաղիկ, իշխան Շերեմետև՝ երկրորդ ծաղիկ, բարոն Զալցա՝ երրորդ ծաղիկ, բոլորը միասին կլինի փունջ, ոչ, ոչ ոչ թե փունջ, այլ՝ ծաղկեփունջ, բարի գալուստ (Генерал Дроздович- один цветок, князь Шереметев – другой цветок, барон Зальца – третий цветок, все вместе пучок будет, нет, нет, не пучок а букет будет, добро пожаловать).

4(159). ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ ԵՎ «ԿԵՆԴԱՆԻ ԳԱԶԵԹԸ»

Մի անգամ Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունը երկու պատկամավոր է ուղարկում Էջմիածին՝ իրանց հաշվետվությունը հաստատելու համար: Մեկը լինում է կլայեկչի «Կենդանի գազեթը», չքավոր, փոքր-մոքր մարդ, բայց ամեն բանով հետաքրքրվող, տեղյակ, լեզվանի, խոսքի վարպետ:

Մյուսը՝ գյումրեցի հայտնի հարուստ Դրմբենց աղա Միլիտոսը՝ «Կենդանի արձանը» առաջինի հակապատկերը՝ խոշոր, սահմանափակ մարդ, ծանրացամաղ, բայց հայտնի նրանով, որ նա մեծ գումարներ էր տրամադրում «Փրկիչ» եկեղեցուն:

Երկուսով գնում են Էջմիածին: Երբ հայտնում են Խրիմյան Հայրիկին նրանց մասին՝ վեհափառը կարգադրում է.—Ադոնց ներս կանչեցեք:

Երբ ներս են մտնում խոշոր սոլիդ Միլիտոս աղան և անբարետես փոքրամարմին կլայեկչին՝ վեհափառը կատակում է ու ասում «Կենդանի գազեթին».—Ալ մարդ չկար, քեզի՞ ղրկեցին:

—Վեհափառ,—պատասխանում է «Կենդանի գազեթը»,—մարդ գուզես՝ ես, արձան գուզես՝ յընկերս:

Վեհափառին դուր է գալիս:

Ծախսերը նայելիս վեհափառը նկատում է մի արտակարգ ծախս. «Վասն մարմնի հանգստության՝ 3 ռուբլի»:

—Աս ի՞նչ 3 մանեթ է:

«Կենդանի գազեթը» խոստովանում է, որ ինքը մեղք է գործել... ծախսել է պոռնիկ կնոջ վրա:

«Կենդանի գազեթի» անկեղծ խոստովանությունը ոչ միայն դուր է գալիս վեհափառին այլ և հասկանալի է լինում. նա ընդունում է այդ անօրինական ծախսած 3 ռուբլին ալ և տալիս է նրան ևս 5 ռուբլի:

5(160). ԱՆՑԱ՛, ՀԻՄԱ ԳՆԱ

Ամիրովը[97] ոտքով գնալիս է եղել Բեբության փողոցով և ուզեցել է անցնել փողոցի մյուս կողմը: Այդ ժամանակ այդ փողոցի զառիվայրով ընթանում է մի կառք:

Ամիրովը բարձրացնում է իր ձեռնափայտը ու հրամայում,—Ֆայտո՛ն, կանգնի՛ր:

Կառապանը իսկույն կանգնեցնում է լծված ձիաններին:

Ամիրովը հանդարտորեն անցնում է փողոցի մի մայթից դիմացի մայթը և կարգադրում.—Անցա՛, հիմա կարող ես գնալ:

6(161). ԱՂՋԻԿ ՓԱԽՑՆԵ՞ՆՔ

Ամիրովը միշտ կառքով էր ման գալիս քաղաքում, նա շատ պահանջկոտ էր: Երբ կառքը չափից դանդաղ էր գնում, նա ասում էր.—Լրագիր կարթա՞նք:

Իսկ երբ կառքը շարժվում էր չափից ավելի արագ, նա ասում էր.—Աղջիկ փախցնե՞նք:

7(162). Ա՛Ռ ԱՅՍ 5 ԿՈՊԵԿԸ

Մի ցեխոտ օր ինչպես է լինում, Ամիրովը անցնում է գլխավոր փողոցի Ալեքսանդրովսկի մայթով: Հանկարծ նրա ձեռնափայտը ընկնում է մայթին:

—Ա՜յ տղա,—դիմում է փողոցով անցնող մի փոքր տղայի,—արի այստեղ:

Տղան մոտենում է:

—Ահա քեզ հինգ կոպեկ, ձեռնափայտս մայթից բարձրացրու տուր ինձ:

8(163). ԱՄԻՐՈՎԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Ամիրովը ունենում է մի թանկարժեք արտասահմանյան ոսկի ժամացույց: Նա գնում է Թիֆլիզ, որտեղ նրա ժիլետի գրպանից գողանում են ժամացույցը: Ամիրովը կատարում է մի անսովոր բան. գնում է Հավլաբարում գտնվող

---

[97] Աղաբեկ Եգորովիչ Ամիրովը վերջերում Քաղաքային Ինքնավարության վարչության անդամ էր: Ինքնակրթությամբ նա քաղաքի ամենակրթված պատվավոր և ավտարիտետ մարդկանցից էր: Արտաքինով առաքինի, բնավորությամբ գոռոզ, կարգապահ, պահանջկոտ, խրոխտ մարդ էր: Քաղաքացիք նրան հարգում էին, բայց նրա անսովոր չափազանց մաքրասիրությունը, կարգապահությունը, գոռոզությունը, պահանջկոտությունը վերածեցին անեկդոտների (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

գյումրեցի Դառչոյի մկիտանը ու խնդրում նրան աջակցել՝ ժամացույցը գտնելու:

—Աղաբեկ Եգորովիչ, խաթերդ համար ձեռքես ինչ որ գուկա կէնեմ, յէսօր սհաթը յիրիկվա 6-ին արի, տեսնինք:

Երեկոյան ժամը 6-ին Ամիրովը գնում է Դառչոյի մկիտանը: Վերջինս ցույց է տալիս մի ոսկե ժամացույց:

—Իսի՞կ է քու սհաթդ:

—Այո՛, դա է իմ ժամացույցը,—ուրախացած ասում է Ամիրովը,—ինչպե՞ս քեզ հաջողվեց գտնել ժամացույցը:

—Ահա էս մարդը բերեց,—Դառչոն ցույց է տալիս այդտեղ կանգնած մի մարդու,—վերու սհատդ:

Ամիրովը շնորհակալություն է հայտնում Դառչոյին, իսկ ժամացույցը բերողին ոչ միայն չի վարձատրում, այլ լինելով կարգապահ, օրենքի մարդ, սկսում է քարոզել մարդուն, որ գողությունը վատ հետևանքներ կունենա:

Մյուս օրը նա նստում է գնացք և երբ հասնում է Ալեքսանդրապոլի կայարանը, ծանոթները հետաքրքրվում են ի՞նչ կա, ի՞նչ չկա Թիֆլիզում:

—Թիֆլիզում գրպանիցս հանեցին ահա այս ժամացույցը,—ձեռքը տանում է ժիլետի գրպանը... ժամացույցը նորից չկա...

9(164). ՅԻՍՈՒՍԸ ՓԱԽԱՎ

Մի կիրակի օր յափջի Մխիկի Աղան, Չորնամորենց Թաթոսը, Կլեճը—գլուխները տաք ֆայտոնով անցնում են ֆրանգներու ժամի մոտից:

Այդ ժամանակ ֆրանգներու ժամը նորոգություն անելու պատճառով ժամի սպասավոր Սիմոն բիձեն դուրս է բերած լինում Յիսուսի արձանը, որ «Քիչ՚մ յարևոտի»:

Տղեկը երբ տեսնում են, որ բակում մարդ չկա, վերցնում են Յիսուսի արձանը, դնում ֆայտոնին ու տանում: Սիմոն բիձեն գալիս է տեսնում արձան չկա, դես է ընկնում, դեն է ընկնում, փնտրում, արձանը չկա ու չկա:

—Տեր Աստված, արձանը իստեղ էր, յո՞ւր գնաց, իդիկ խո ասեղ չէր, սաղ տակն ու վրա եմ էրե, չկա՛,—նորից է ընկնում դես ու դեն, բայց իհարկե ոչինչ չի գտնում:—Հողոց-մոխրոց կորա, ես Աստծուն ի՞նչ ջուղապ տամ:

Խեղճ ծերունին գլխին է խփում, մազերն է փետում: Տղեքը ֆայտոնով նորից յետ են դառնում, գնում են Սիմոն բիձի մոտ:

—Սիմոն բիձա, դիլխոր կերևաս, էդ ի՞նչ է պատահե, օր ձեռքերդ գլխուդ կը զարկես, մնացած մազերդ էլ կը փետես:

—Լիզուս պապանձվի չըսեմ, ախր Յիսուսի արձանը իստեղ էր, հիմի կաշեմ՝ չկա՛: Էս ի՞նչ փորձանք էր՝ օր ծերության գլխուս էկավ... հիմի ես ի՞նչ էնեմ, դժոխքի օխտը ղաթը գնացի՛, պրծա՛:

—Լա՛վ—լա՛վ, Սիմոն բիձա, շատ դարդ մի էնե, արձանը յո՞ւր էրթծած կէղնի, քաղքեն դուս էրթծած չի էղնի, իստեղանք կեղնի, արի նստի ֆայտոնը էրթանք ման գանք, գտնինք:

Տղեքը ողբացող Սիմոն բիձին մի քանի մկիտան, գաստինցա տանելուց հետո վերջը ֆայտոնը կանգնեցնում են մեծ Եղսաբեթի տան առաջը: Մեծ Եղիսաբեթը անառակ աղջիկներ էր պահում:

Սիմոն բիձին տանում են նես, ի՞նչ տեսնի: Յիսուսի արձանը պառկեցրել են անկողնու մեջ մի անառակ աղջկա կողքին:

—Սիմոն բիձա, ահա քու Յիսուսդ: Տո՛ տնաշեն, Յիսուսին էնքան չոր ու ցամաք ես պահե, օր փախե էկե Մարուսի ծոցն է մտե:

10(165). ՏՈՒՌԱԿ

Ալեքսանդրապոլում ապրում էր մի չքավոր ծերունի՝ իր պառավի հետ: Ծերունին աշխատում էր որպես փասպանդ:

Մի անգամ առավոտյան շատ շուտ, աշխատանքից տուն գնալու ժամանակ, փողոցում գտնում է մի փոքր փոստային արկղ, թելերով կապած և կնիքներով ամրացրած, որը գիշերը փոստը տանելու ժամանակ, ընկած է եղել կառքից ցած:

Ծերունին փոստային արկղը բերում է տուն, բաց է անում և ի՞նչ, իրար վրա դարսած նոր քսանուհինգ ռուբլիանոց թղթադրամներ: Առանց ձեռք տալու փողերին, ազնիվ ծերունին նորից փակում է արկղը ու տանում հանձնում պոլիցիայի բաժանմունքին:

Երբ այդ դեպքի մասին իմանում են քաղաքացիք, խոսեցնում են ծերունուն.—Բիձա ջան, եփոր պասիլքեն տարար տվիր պոլիցին, քեզ ի՞նչ ըսին:

—Ռուսվար կը խոսեին, ես չը հասկցա:

—Ախր հեչ մե խոսք՚մ էլ միտքդ չը մնա՞ց, անպատճառ մե բան՚մ ըսած կեղնին, հլը միտքդ բե՛:

—Գիտես թե ըսին՝ «Տուռակ»:

11(166). ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՖԱՅՏՈՆՉԻ ԿԱՊԵՏԸ

Ղազարապատցի Ավոն, այդպես կոչում էին գյումրեցիք Ավետիք Իսահակյանին, ջահել ժամանակ սովորություն ուներ իր ծանոթ աղջկա հետ նստել գիտեցած Կապետի ֆայտոնը ու «կատաց» անել քաղաքի շրջապատ գեղեցիկ վայրերը:

Ֆայտոնչի Կապետն էլ սովորություն ուներ մի հարմար տեղ վայր գցել մտրակը և մի քիչ հետո ասել:

—Վա՛յ, կնութս յընկել է վար, էրթամ ման գամ բլքի գտնիմ... ու գնում էր՝ «կնութը» ման գալու...

Անցնում են տարիներ:

Պատահում է, որ Ավետիք Իսահակյանը նորից է նստում մի կնոջ հետ Կապետի ֆայտոնը և ըստ իր հին սովորության, գնում է քաղաքի շրջակայքը նայելու:

Ֆայտոնչի Կապետը որոշ տեղ հասնելիս ուզում է կնութը վար գցել, որ գնա գտնի, բայց Ավետիքը ասում է.—Կապետ ջան, զուր տեղը կնութդ մի կորցնի, սա իմ կինն է:

12(167). ԳՅՈՒՄՐՎԱ ՆԱՖՏԸ

1912 թվականի ամռանն էր:

Մի գեղեցիկ օր գյումրեցի կառապանները տարածեցին մի «սենսացիոն» լուր.—Հե՛յ քաղքցիք, հեչ բանե խաբմ՚ եք, չեք ըսե, օր Արփաչայի ջրի միջեն՝ յերկթե կարմունջի քովեն, նաֆտ դուս գուկա, իսկական նա՞ֆտ, նա՞ֆտ, վով օր չի հավատա, թող էրթա սեփական յաչքովը տեսնի ու գա...

Այդ արտակարգ նորությունը կայծակի արագությամբ տարածվում է քաղաքում: Լինում են գնացողներ, որոնք շտապ կերպով վերադառնում են քաղաք, որպիսզի ավետեն քաղաքացիներին, որ. «ֆայտոնջոց ըսածը ղորթ է... Արփաչայի ջրի միջեն նաֆտ դուս գուկա, գնացե՛ք, տեսեք...»:

«Արփաչայի ջրի միջին նա՞ֆտ,—խորհում է գյումրեցին,—ախր ի՞նչ գործ ունի նաֆտը ջրի մեջ, կա-չկա էստեղ մե բան՚մ կա... ըսել գուզե Արփաչայի քովի հողերի մեջ նաֆտի հանքեր պիտի էղնին, ա՛յ քեզ ղաշանք բան, էրթանք տեսնինք...»:

Արդյոք կարելի՞ է պատկերացնել՝ ի՞նչ է կատարվում քաղաքում. ուրախություն, իրարանցում և բոլորի կողմից բուռն ցանկություն՝ ինչքան կարելի է շուտ գնալ Արփաչայ ու տեսնել նաֆտը:

Բոլորը՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, թե՛ մեծ, թե՛ փոքր, թե՛ հարուստ, թե՛ աղքատ խոյանում են դեպի Արփաչայ: Գնում են ոտով[98], հեծանիվով, և իհարկե, շատերը ցանկանում են գնալ կառքով:

«Ֆայտոն, ֆայտո՛ն»,—լսվում է փողոցներում, բայց ոչ բոլորին է հաջողվում գտնել այդպիսին, քանի որ քաղաքի թեկուզ և բազմաքանակ երկձիանի կառքերը, որոնք նորմալ պայմաններում շատ ժամանակ կանգնած էին իրանց սահմանված տեղերում՝ ֆայտոնի «բիրժաներում», այդ օրը ի վիճակի չէին բավարարել քաղաքացիների կողմից հանկարծակի բերված պահանջը: Իսկ ում հաջողվում էր գտնել կառք, նստում էր ինքը, երբեմն նստացնում ծանոթին և ուրախացած բացականչում.—Մկո՛ ջան (կամ Ալեք, կամ Տիգո) թեզ՚մ հասու Արփաչայ[99], ինչ գուզես ա՛ռ, յէսօր թա՛վն է, քշե՛, ես՝ քեզի ղուբան, դու յընձի՝ հեչ:

Հասնելով տեղ՝ կառապանը ստանում էր երախտապարտ ուղևորից ոչ թե սահմանված «կանեցը» (սակագինը), այլ ավելին, նայած նրա առատաձեռնությունից: Իսկ կառապանը

---

98 Ոտքով գնացողներից մեկն էլ եղել է բանահավաք Պարույր Բարսեղյանը:

99 Արփաչայը գտնվում էր քաղաքից 5 վերստ հեռավորության վրա (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

ասելով. «Աստված ձեզի տա, դուք էլ մեզի» և չը գայթակղվելով նաֆտի տեսարանը դիտելուց, ձիանների գլուխները դարձնում էր դեպի քաղաքի կողմը: Այս դեպքում էլ նա կարող էր ճանկել միշտարի՝ նաֆտ դիտելուց հագեցած քաղաքացիներից, բայց նրանցից «կանեցից» ավելի վարձատրություն ստանալն արդեն կասկածելի էր:

Խեղճ ձիաններ, սկզբում նրանք էլ ոգևորված, ինչպես իրանց տերերը, վազզում էին կայտառ, գլուխները բարձր, բայց հիմա երկար վազզելուց հոգնած, հալից ընկած, նորից էին վազում, քաջ գիտենալով իրանց տերերի «խասիաթը», երբ նրանք «բերեգիս» կամ «խաբարդա» գոռալով ճոճացնում էին իրանց «կնութները» և, ավաղ, ոչ միայն ճոճացնում այլ նաև... գործի դնում:

Մի խոսքով ինչ իմանային խեղճ անասունները որ «փարա վաստակելը» հեշտ բան չէ, նույնպես չը գիտեին թե քանի անգամ պիտի գնային քաղաք–Արփաչայ, Արփաչայ–քաղաք:

Հասնելով «երկաթե» կամուրջի մոտ՝ գյումրեցին տեսնում էր, թե ինչպես ջրի տակից բարձրանում էր մակերեսին նաֆտը և հատուկ երանգներով տարածվում գետի երեսին և հոսանքով տարվում:

Գյումրեցին չի հավատում աչքերին. «Իսիկ խո էրած չէ,—նորից է նայում.—Տիան, նորեն նաֆտ, չէ՛, իսկական է, նաֆտ է»:

Բոլորը գոհ նայում են, նայում:

—Գիտե՞ք ինչ է նաֆտը,—բացադրում է իր մոտ կանգնածներին մի գիտուն մարդ,—նաֆտը սև օսկի է, նաֆտը հարստություն է, հարգանք, պատիվ, իստից յետև մեծբերան էրևնցիք կամ տուտուց թիֆլիզցիք կրնան ըսե. «Բագու աշխատիս, Թիֆլիզ ապրիս, Գյումրի մեռնիս»: Գյումրին Աստված դարձուց երկրորդ Բագու, հիմի թող էդոնք նախանձից տրաքին:

Մի այլ տեղ մի ալեհեր գյումրեցի աչքերը բարձրացնելով երկինք ասում է.—Փառքդ շատ Արարիչ, ա՛խր ես գիտեի, օր դու հեչ ղաբուլ կէնեիր, որ մեր քաղաքը քասիբ մնար, քու դաֆտարիդ մեջը էլ գրած է օր «Գիմրին անուշ քաղաք է»: Յըլբթ անուշ է: Ես էնոր հողին-ջրին մատաղ:

—Ես Աստծու հոր հոգուն մատաղ,—ասում է մի ղարաչուխալի երիտասարդ,—էրթամ քաղաք օր դմբլդունը երկինք հասցնեմ:

Քաղաքում կերուխում էր, ուրախություն, գրկախառնություն:

Մի տեղ թնդում էր դավուլ-զուռնեն, մի այլ տեղ նվագում սազանդարը, այնտեղ դուդուկը, ղավալը, այստեղ պարկապզուկը: Ամեն տեղ պար ու երգ: Հոսում էր խմիչքը: Այն շշերը, որոնք փոշոտված կանգնած էին թարաքներում կամաց-կամաց իջնում էին ցած՝ անհետանում:

Բայց ոչ բոլորն էին տարված քեֆերով կամ վերացական հայրենասիրական բերկրանքներով: Հեռատես և գործունյա մարդիկ, իհարկե հարուստներից, մտածում էին գործի մասին: Նրանցից ոմանք վխտում էին Արփաչայի շրջակայքում, աղմկելով, վիճելով, սպառնալով իրար, աշխատում էին փայտե պիկետների միջոցով սահմանագծել որոշ հողամասեր, որտեղ ապագայում պետք է կանգնեին նրանց նաֆտի վիշկաները: Նրանցից ոմանք անքան էին տարվել սահմանագծման գործով որ մտել էին «Սևերսկի» զորագնդի տերիտորյան և նահանջել են միայն այն ժամանակ, երբ ժամապահները սպառնացել են կրակ բաց անել:

Նույն երեկոյան հրավիրվում է Ալեքսանդրապոլի քաղաքային Դումայի արտակարգ նիստը՝ նվիրված Արփաչայի շրջակայքի նաֆտատար հողերի հարցին:

Առաջի ելույթն է ունեցե դումայի դեպուտատ հարուստ վաճառական Թորգոմ Գրիգորովը, որին քաղաքացիք, ըստ իրանց սովորության կնքել են «Թրքեմ աղա» մականունով (լաղաբով):

«Թրքեմ աղեն» վեր է կացել իր տեղից հուզված, սեղանին խփելով Գելխոյենց Կարոյի կարած թանկարժեք կապուտ կաստորից «շապխեն» (գլխարկը) ու արտասանել հետևյալ կարճ բայց ազդու ճառը.—Արի կեղնի չը վիճենք, ես հեչ մե բան'մ չիդեմ, մենակ մե բան'մ գիտեմ, օր Արփաչայի հողերու նաֆտը իմս պիտի էղնի, չունքի ես նաֆտի գործը կը սիրեմ, նաֆտի գործը գիտեմ, էդով էլ կը պարապիմ: Ինչքան գուզեկ կուտամ, հազար կըսեք, հինգ հազար կըսեք, ինչքան օր պետք է կուտամ, մենակ նաֆտը իմս պիտի էղնի, ես պրծա...

«Թրքեմ աղայի» այդ որոշիչ ճառը ազդեցություն է թողե բոլորի վրա, բայց ամենից

շատ, հասկանալի է, «Ժաժան գլոխ Թաթոսի» վրա, որը նույնպես նաֆտավաճառ էր, բայց ավելի փոքր մաշտաբի, որի ախորժակը դեպի նաֆտատար հողերը վերացավ իր հարուստ հակառակորդի ճառից հետո, և ասում են, որ նրա անընթատ թափահարվող գլխի շարժումը ուժեղացավ:

Վերջապես գինուց և նաֆտային հեռանկարների բերկրանքից արբած գիմրեցիք քուն են մտնում: Հավանական է, որ ոմանք իրանց երազներում տեսնում են ապագա նաֆտի վիշկաները ու շատրվանները:

Սակայն մյուս օրը նույն կառապանները հայտարարում են, որ Արփաչայում էլ նաֆտ չկա: Ուրիշ խոսքով Գյումրին նորից դառնում է սովորական քասիբ, աննաֆտ Գյումրին:

Բայց այդ ինչ նաֆտային հրաշք էր:

Պարզաբանվում է:

Մի քանի հնարագետ գյումրեցի կառապաններ, անգործությունից և ձանձրույթից ելնելով, մի տկճորի մեջ լցնում են նաֆտ ու մազութ, բերանը կապում, մախաթով ծակծկում ու տկճորը ամրացնում Արփաչայի հատակին: Ժամանակ առ ժամանակ նաֆտի կաթիլները դուրս են գալիս տկճորի ծակերից ու խելքահան անում հայրենասեր գյումրեցուն և միաժամանակ մի պատկառելի գումար նրա գրպանից փոխադրվում է կառապանների վտիտացած գրպանները:

13(168). ԿՈՒՆՋՈՒԼՈՎԸ ԵՎ ՀԱՅԿՅԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

1915 թվին Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցը ավարտելուց հետո կատակասեր Կունջուլով Մարտինը և Հայկյան Արամը ընդունվում են Մոսկվայի Առևտրական ինստիտուտը: Նրանք առաջի անգամը գնում են Մոսկվա ուսանելու:

Մի անգամ նրանք նստում են տրամվայ, տեսնում են իրանց առջևում կանգնած մի սիրունատես թուխ կնոջ:

—Ինչ լավ վոռ ունի,—ասում է Կունջուլովը,—քու կարծիքով հայի ոռ է՞, թե՞ ջֆտի…

—Ջֆտի կեղնի,—հեղինակորեն ասում է Հայկյանը:

—Չէ՛, հայի ոռ գլմանի,—առարկում է Կունջուլովը:

—Չէ՛, կսեմ ջֆտի է:

«Ջֆտի կեղնի, հայի կեղնի», առանց քաշվելու որ իրանց կը հասկանան, վիճում են տղաները, այնքան որ կինը հետ է դառնում ու հայերեն ասում.

—Չեք ամաչում, ուսանողներ եք, ինչպես անպատկառ եք ձեզ պահում:

Կունջուլովը մի հատ դմբացնում է Հայկյանի գլխին ու ասում.—Իշու ձագ, չըսի՞, օր հայի ոռ կեղնի:

14(169). ԿՈՒՆՋՈՒԼՈՎԸ ՎԱԽԵՆՈՒՄ Է

Կունջուլով Մարտինը արդեն Առևտրական դպրոցի բարձր դասարանների աշակերտ աշխույժ ու կատակասեր էր: Նա կրոնի դասատու՝ Խանջուկ տերտերի դասին առանձնապես իրան ազատ էր զգում:

Մի անգամ երբ Կունջուլովը խոսում ու ծիծաղում էր ու խանգարում դասը, Խանջուկ տերտերը ջղայնանում է ու ասում.—Ձայնդ կտրի՛ր, անպիտա՛ն, թե չէ դուս կը քցեմ:

—Տերտեր ջան,—խնդրում է Կունջուլովը,—դուս մի քցե, ես դուս քցածից կը վախենամ:

15(170). ԲՈՒԽԱՐԱՆՑՈՑ ԱՎԵՏԻԿԸ ՈՒ ԾԱՆՈԹ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Բուխարանցոց Ավետիկը Ալեքսանդրապոլում վակզալի դիմացը ուներ խանութ:

Մի անգամ նրա մոտ գալիս է մի գյուղացի, որի հետ նա քավոր-սանահեր էին:

—Քավոր ջան,—ասում է գյուղացին,—էկել եմ, օր Թիֆլիզ էրթամ, էրտակ գերնդի գուզեմ առնիմ, վակզլին մոտիկ կապրիս, ճի՞ պոեզդ կա, օր էրթամ Թիֆլիզ:

—Սանահեր, գիշերը մեր տանը կը քնիս, յառավոտը Թիֆլիզ պոեզդ կա, նստեցնեմ գնա:

Նստում են հաց ուտելու: Ավետիկը թավա է պատրաստում, գինի դնում:

Հաց ուտելու ժամանակ Ավետիկը նկատում է, որ սանահոր թևի վրայից օջիլ է գնում,

մտածում է. «Իսոր օր տանիմ տուն, օջիլները կը թողնե մեր տունը: Կնիկս յիստակ սիրող մարդ է, ինչքա՞ն պիտի չարչրվի օր էդոնք յիստկե, ինչքա՞ն պիտի վրես խոսի...»: Միտքը փոխում է:

—Սանահեր, մախսո՛ւզ գուզես էրթալ:

—Հա, քավոր, մախզուզ գուզեմ էրթամ, վռազիմ կը, տես ծանոթ մաշինիստ չկա՞, ճամփե՝ էրթամ:

—Օր էդպես է, յաչքիս վրա, սանահեր, դուս գանք դու քիչ'մ իստեղ կայնի, ես էրթամ գործդ սարքեմ:

Ավետիկը գնում է մանեվրենի պարավոզի ծանոթ մաշինիստի մոտ:

—Ծո, մե գեղացի'մ կա, էկեր է քովս, ախպոր պես էդոր սաղ գիշերը ման ածե, յառավոտը ղրկեմ Թիվլիզ:

—Բեր՝ տեսնիմ:

Ավետիկը սանահոր համար պատրաստում է հաց ու պանիր:

—Ճամփեն ուտելեն կէրթաս:

Մաշինիստը մանեվրենի պարավոզին կցում է մի «տավարնի» վագոն: Վագոնի չանգալը բաց են անում, սանահորը նես մտցնում:

—Մնաք բարով,—ասում է սանահերը,—քավորկնկաս բարև կէնես, ըսա՝ ներողություն էս անգամը վախտ չունեցա տուն գալու, եդ դառնալուս գուքամ յիրան տեսության:

Վագոնի դուռը փակում են, չանգալը քցում:

Ամբողջ գիշերը մաշինիստը սանահորը ման կածե: Կանգնած ժամանակ, կամ գծերը փոխելու ժամանակ, սանահերը կարծում է թե ստանցի է:

Առավոտը վաղ մաշինիստը կանգնեցնում է պարավոզը, եդ է տանում վագոնի չանգալը, դուռը բաց է անում ու ասում.—Բարի լուս, ախպեր ջան, հասանք, յիջի:

—Շատ շնորհակալ եմ, քավորիս շատ բարև կենես, կըսես օր սաղ-սալամաթ հասանք:

Սանահերը իջնում է վագոնից, նայում է չորս բոլորը:

—Տո, Թիֆլիզի վակզալն էլ նմանե Գյումրվա վակզալին: Ըսել գուզե բիթուն կազոնի շինությունները յիրար նման են:

Գնում է դեպի քաղաք...

Տեսնում է ահա՛, քավորը ճերմակ ֆարտուկը կապած, խանութի առաջը ջուր է ցանում:

—Բարի լուս, քավոր, իստե՞ղ էլ թիքան ունիս:

—Յա՛, խո չե՞ս խելռե, իմ թիքանս յո՞ւրտեղ պիտի էղնի օր իստեղ (Գյումրում) չեղնի:

—Յա՛, քավոր, թիքանդ օր իստեղ է, յըբը սաղ գիշերը յո՞ւր կերթաինք:

16(171). ՇԱՆ ԲԱԶԱՐ ԱՆԵԼԸ

Մի գյուղացի իրա գամփռ (չոբանի) շան հետ գալիս է քաղաք:

Ծուռվզենց Տիգոն մոտենում է գյուղացուն ու ասում.—Ախպեր, շունդ չե՞ս ծախե, էրկու տարի է էդպես շան ման գուքամ չեմ գտնի, ինչ գուզես կուտամ:

Գյուղացին ուրախացած, որ եղոտ միշտարի է գտե, ասում է.—Եռսուն մանեթ օր տաս, կը ծախեմ (30 մանեթի կարելի էր առնել մի ձի):

—Շատ լա՛վ, հմը ես շնեն չեմ հասկնա, տար շանդ ախպորս քովը, էնիկ շնեն լավ կը հասկնա, ըսա օր Տիգոն ղրկեց, տիան, ինտեղ բառբառխանեն է, անունը Ավո է:

Գյուղացին գնում է Տիգոյի ցույց տված տեղը, գլուխը դռնից նես է անում ու ասում.—Շունը բերի, Տիգո ախպերը ղրկեց:

Ավոն իսկույն գլխի է ընկնում:

—Շատ լավ ես էրե օր բերեր ես, շունդ քա՞նի տարեկան է, բաց բերանը տեսնիմ:

—Ախպե՛ր, էդիկ խո ձի չէ՞:

—Ձի չէ, հմը ձիու գին գուզես, ես պիտի յիմանամ թե շունդ քանի տարեկան է, էդոր մերը հիվանդ խո չի՞ էղե: Շանդ յաչքերեն կերևա օր էդոր թոքերը հիվանդ պիտի էղնին:

—Ի՞նչ կըսե, սաղ գիշերը կը հաչա:

—Չէ, ախպրացու, թե գուզես շունդ յուզածդ գնով առնիմ, շունդ տանիս պիտի բժշկի քովը, մե թուղթ'մ բերես, օր շունդ յամեն կողմեն առողջ է: Էն վախտը եռսուն մանեթը կստանաս: Բժիշկն էլ, տիան, էնտեղ կապրի:

—Ախպեր, էսքան տարի ապրել եմ, չեմ յիմացե օր շունը տանին մարդու բժշկի քովը,—փնթփնթում է գյուղացին, բայց եռեսուն մանեթի խաթրին գնում է դեպի բժշկի տունը:

Բժիշկը որ կիմանա շան պատմությունը, մի լավ կը ծիծաղի:

17(172). ԳՅՈՒՂԱՑՈՒ ՖԱՅՏՈՆ ՆՍՏԵԼԸ

Վակզալում մի գյուղացի, ծանր խուրճինը ուսին, մոտենում է Ծուռվզենց Տիգոյի կառքին:

—Ախպեր, տեմոր բազար քանիսո՞վ կը տանիս:

—Աշած՝ ի՞նչդ գուզես. ֆայտոնի մեջը նստած էրկու աբասի, խուրճինը ումուզիդ ֆայտոնի մեջը կայնած մե աբասի:

«Ձայլամ,—մտածում է գեղացին,—կայնած՝ մե աբասի՛մ քար կունենամ»:

Ու կանգնում է կառքի մեջը՝ ծանր խուրճինը ուսին: Տիգոն մի լավ պտտացնում է քաղաքի միջով և հետո տանում է շուկա: Ծիծաղ:

18(173). ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ՉՈՒԽԱ ԿԱՐԵԼԸ

Մի գյուղյացի տնայնագործված հաստ ու կոպիտ շալը բերում է թարզի Ավոյի արեստանոցը:

—Ուստա ջան, մե չուխե՛մ չես կարե՞ յընձի համար էս կտորեն:

—Յընչի չէ, էդիկ իմ գործս է: Կարեմ կը, հմը կտորդ քիչ՛մ սարթ է, տար տուն շալդ անքիզը մե շաբաթ՛մ ջուրը դիր, կակխնա, մե բուռ՛մ էլ աղ քից ջրի մեջը, հա՛մ կը փափկի, հա՛մ էլ ռանկը տեղը գուկա:

Խեղճ ու կրակ միամիտ գյուղացին հավատում է ուստի ասածին և իրոք հաստ շալը մի շաբաթ թրջվածք է դնում աղաջրի մեջ: Գալիս է քաղաք:

—Ուստա ջան, շալը բերի:

—Լավ էրիր, արի պառկի, չափդ առնիմ:

Պառկեցնում է գյուղացուն բերքսվար՝ կռնակը չափելու, կռնակին՝ առաջը չափելու, մեկ մի կողքին, մեկ մյուս կողքին... բավականին չափչփելուց հետո ասում է.—Չէ, ախպեր, չուխա դուս չի գա, նեղ կտոր է, շատ ես նստցրե:

Գյուղացին Ավոյի օխտը պորտը հայոյելով հեռանում է:

19(174). ԹՈՓԱԼ ԿՆՈՋ ՀԱՄԱՐ ՊԱԼՏՈ ԿԱՐԵԼԸ

Մի կաղ կին մտնում է Ծուռվզենց Ավոյի դերձակի արեստանոցը:

—Ուստա, գուզեմ, օր յընձի համար մե պալտո՛մ կարես:

—Քուր ջան, մենք քու չափդ չենք կրնա առնի:

—Յընչի՞, եղբար:

—Աջ չափենք երկան կեղնի, ձախ չափենք կարջ կեղնի:

—Ըսել գուզե ես շոր չպիտի՞ հագնիմ:

—Առանց շոր ի՞նչխ կեղնի, թե գուզես կրնանք կարե, հմը վրեդ թանկ կը նստի: Յերկան պիտի ձևենք, յետև օր հագնիս հա պիտի կտրենք փեշերեն, օր կարճ ու յերկան չեղնի:

—Չէ, էդպես չեղավ:

—Թե գուզես օր թանկ չը նստի, գնա էրկու հատ կաստիլ, կամ թե չէ տախտակ բե, դնենք ումուզներուդ տակը չափդ առնինք, օր պալտոդ ոչ երկան էղնի ոչ էլ կարջ:

Կնիկը կը հավատա, գնում է երկու ռանդած տախտակ է բերում: Ավոն չափը կը վերցնե, բայց չի կարե:

Խեղճ կինը գնում-գալիս է, գնում-գալիս է:

—Երկուշաբթի արի, չորեքշաբթի արի, շաբաթ օրը արի, իրեքշաբթի արի, մեծ պասին արի... այնքան է չարչարում որ կինը մի լավ անիծում է Ավոյին, նրա իծու միրուքը ու էլ չի գալիս:

20(175). ՆԱԼԲԱՆԴ ՅԱՐՈՒԹԻԿԻ ԵՐԴՈՒՄԸ

Նալբանդ Յարութիկի գործերը լավ են գնում, բայց շատ խմող է լինում: Աշխատանքից հետո միշտ հարբած է տուն գալիս:

Նրա կինը՝ Սոֆոն, որ մի լեզվանի կին էր, հաճախ հանդիմանում էր ամուսնուն:

—Քա՛, վերջ տու խմելուդ, յամեն շուն ու շանկալի հետ նստիս խմես կը, հերիք է, վերջ տու, ա՛յ մարդ:

—Սոֆո ջան, մեկ-մեկ կը խմեմ:

Ու շարունակում է խմելը:

Մի անգամ էլ նա այնքան է խմում, որ թևը ընկած տուն են բերում:

Սոֆոն մի լավ լեզվով թիմարում է մարդուն, անիծում բախտը: Նալբանդ Յարութիկը երբ ահեղանում է ասում է կնոջը.—Սոֆո ջա՛ն, ես քեզի թաղեմ, թե էստից յետև բաժակ ձեռս առնիմ, հավատա, Աստված, երկինք, գետին:

Կինը, իհարկե, կուրախանա:

Մյուս օրը Յարութիկը աշխատանքը վերջացնելուց հետո, ըստ իր սովորության, գնում է իր ընկերների մոտը:

—Տո, տնաշեն, յո՞ւր ես մնացե,—ասում է տան տեր թարգի Միդոն,—քեզի կաշեինք, վերու բաժակը մե հատ՝մ թաբլե:

—Չէ, ախպրտիք, չեմ կրնա, ես երդում եմ կերե կնկաս, օր բաժակ ձեռս չպիտի վերցնեմ:

—Վնաս չունի,—ասում է թարգի Միտոն,—դու իստեղ պառկի մենք մեր ձեռքով գինին բերանդ կը լցնենք:

Այդպես էլ անում են: Նալբանդ Յարութիկը տուն է գալիս էլի հարբած:

—Անաստված ուրացող,—վրա է պրծնում Սոֆոն,—իդի՞կ էր քու երդումը, յամոթ քեզի:

—Սոֆո ջան, հեչ մի՛ նեղանա, ես երդումս չեմ խախտե, պառկել եմ, իշկին բերանս են լցե յուրիշները:

—Վո՛ւյ, ամա՛ն, ֆողը գլխուս, բերանդ օր լցնեն մե օր՝մ էլ կը խեղդիս: Լավ է, էլի յառաջվա պես խմես:

21(176). ԹԻՔՉԻ ԱԼԵՔՍԱՆԻ ՊԻՎՈՆ

Չինակչոնց Ալեքսանը թիքչի էր շուկայի մոտ:

Նստած բացօդիա իր դազգայի մոտ՝ ոտնամաններ էր կարկատում, իսկ կողքին դրված էր լինում վեդրով ջուր, որի մեջ թաթախում էր՝ ոտնամանների կոշկատակերը փափկացնելու համար:

Մի անգամ Ալեքսանը ինչ-ինչ նպատակների համար վեդրոյի ջուրը, որը կաշիներից ստացել էր «բարխաթի» գարեջրի գույն, լցնում է մի շշի մեջ:

Նա իր մոտ է կանչում շուկա գնացող մի գյուղացու, շշի ջրից մի բաժակի մեջ է լցնում ու ասում.—Շատ կը խնդրվիմ, օր խմես էս պիվոն, իմ պատիվս է:

—Շնորհակալ եմ, ես էկել եմ բազար, բան պիտի առնիմ, ես պիվո չեմ խմե:

—Չէ, պիտի խմես, օր չը խմես յընձի անպատված կեղնիս, յէսօր քեֆս լավ է, գուզեմ քեզի պատված էղնիմ, տեյմոր չը խմես, բաց չեմ թողնե:

Գյուղացին խմում է բաժակի միջի ըմպելիքը, բաժակը վերադարձնում է տիրոջը և հեգնանքով և ինքնավստա ասում.—Ի՞նչ, գիտես թե չը հասկցա՞մ, պիվոդ թթված էր:

22(177). ՃԻՃԻԼ ՅԱԿՈՅԻ[100] ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ Ճիճիլ Յակոն, խիստ հարբած, փողոցով գնում է և անխնա հայոյում է բոլորին՝ մեծից փոքրը: Խելքը փչում է և հայոյում նույնիսկ թագավորին:

Թարսի պես այդ ժամանակ փողոցով անց է կենում ռուս պոլիցմեյստերը և լսում է, որ Ճիճիլ Յակոն հայոյեց թագավորին (նա հայերեն հասկանում էր): Իսկույն նա կարգադրում է գառադավոյին, որ Ճիճիլ Յակոյին ձերբակալեն և տանին բանդ:

Մյուս առավոտ, երբ Ճիճիլ Յակոն ահեղանում է, նրա ծանոթ բանդի սպասավորը ասում է նրան.—Տո՛, ախմա՛խ, յերեկ թագավորին յընչի՞ ես քֆրտե, պոլիցմեստերը յիմացել է՝ քեզի ծակն է կոխե, բանդ բուրդ է, քեզի կարտեչ կը ղրկեն...

—Տո. ի՞նչ կսե, ք...ը յընկանք:

Քիչ՝մ մտածելուց հետո Ճիճիլ Յակոն դառնում է սպասավորին.—Ահա քեզի մե աբասի՝մ, իստից որ դուս գամ, մե բութիլկա Սմիրնովի ռախի՝ վրես: Կէրթաս ղասապ Թաթավոյի քովը իմ կողմեն կըսես, որ իրան իմ մասին հարցնեն թող ըսե, որ ինքը յընձի փարա է տալիք:

Սպասավորը վերցնում է մի աբասին, գնում է ղասապ Թաթավոյի մոտ. պատմում է Ճիճիլ Յակոյի դրությունը ու նրա խնդրանքը:

Թաթավոն ասում է.—Լավ:

Ճիճիլ Յակոյին տանում են դատելու, որ նա հայոյել է Նորին կայսրության մեծությանը:

—Ես մեր թագավորի հլու-հպատակն եմ, հեչ էնոր կը քֆրտե՞մ:

—Эх ты, мерзавец, я собственными ушами слышал, как ты ругал Его императорское величество[101].

—Չէ, պարոն պրիստավ, սխալ ես հսկցե, ես ոչ թե թագավորին, բերանս կոտռի, քֆրտե,

[100] Ճիճիլ Յակոն՝ Քեյմանջոնց Պետրոսի տղան, սալլաղ էր, հարբեցող, ափռ-ցփռ խոսող, կռվարար, հայոյող (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[101] Էխ դու, սրիկա, ես սեփական ականջներովս եմ լսել, թե ինչպես ես հայհոյել Նորին կայսրության մեծությանը:

ես ղասապ Թաթավոյին եմ քֆրտե, չունքի էնոր հետ խումար եմ խաղցե, կրվել է՝ փարեն չէ տվե, չեք հավատա կանչեք յիրան՝ Թաթավոյին:

Կանչում են ղասապ Թաթավոյին, և նա հաստատում է, որ ինքը փարա է պարտք Յակոյին, էնիկ էլ յուրտեղ պատահավ՝ յիրան կը քֆրտե:

Ճիճիլ Յակոյին ազատում են բանդից:

23(178). ՃԵՆՃՈՏ ՆԱԶԱՐԸ ՎԱՌՎՈՒՄ Է

Ղասապ Նազարը շատ փինթի (կեղտոտ) մարդ է լինում: Նրա հագած շորերը միշտ կեղտոտ ու յուղոտ լինելու պատճառով նրան «Ճենճոտ» մականուն են տալիս:

Մի օր երկու հարևաններ՝ Բախալ Եկանենց Յակոբը ու Բախալ Եղոյենց Սուքասը վճռում են մի կատակ սարքել Նազարի գլխին: Վերցնում են «Բրոդսկի» գլուխ շաքարի հաստ թուղթը, թաթախում են նաֆտի մեջ և երկաթաթելով աննկատելիորեն ամրացնում են «Ճենճոտի» հետվից և վառում: Թուղթը բռնկվում է, բոցը անցնում է յուղոտ շորերին, որոնք սկսում են վառվել: Ներկա եղողները վրա են պրծնում որ կրակը մարեն, սակայն Նազարը բողոքում է.

—Չը մարե՛ք... թող ես վառվիմ, թաքիլա էդ գ..... կարտեճ էրթան...

24(179). ԲՈՍՏՆՋԻ ԵՂՈՆ ԵՎ ԳԱՌԱԴԱՎՈՅ ՋԱՔԱՐԸ

Բոստնջի Եղոն գարնանից սկսած մինչև խոր աշուն աշխատում էր իրա բոստանում: Քաղաքից կտրված, անտեղյակ աշխարհի խերից ու շառից, ապրում էր իր բոստանի հոլիկում:

Գառադավոյ Զաքարը մտածում է. «Եղոն տուրկ չի տա, էրթամ քովը տեսնիմ՝ բան՝մ դուս գուքա թե չէ»:

Գնում է Եղոյի բոստանը:

Եղոն ուրախությամբ ընդունում է Զաքարին, տանում նրան իրա հոլիկը նստեցնում է թաղթին, հյուրասիրում է բոզբաշով, արաղով, գինով, բոստանի բարիքներով:

Լավ ուտել խմելուց հետո Զաքարը ասում է.—Թագավորից հրաման կա, օր յամեն մարդ վով բոստան ունի՝ տուրք պիտի տա:

Եղոն գլուխը կախ մտածում է, ոչ մի բան չի ասում:

—Յը՛, Եղո աղբեր,—ասում է գառադավոյ Զաքարը,—ինչ կը մտածես:

—Մտածեմ կը, օր քեզի պես օղռաշները օր չեղնին, թագավորը ինչ գիտենա, օր Եղոն բոստնում կապրի ու տուրք չի տա:

25(180). ԴԱՎԱՅՈՎ ՔԵՖ ԱՆԵԼԸ

Մի անգամ Օհաննեսը տեսնում է, որ մի դավաճի երեք դավաբեռ ածուխ է ծախում:

Ածուխի փողը վճարում է, ածուխից ազատում դավաներին: Դավաճուն նորից տալիս է հինգ ռուբլի ու ասում.—Դավեքդ յուր կըսեմ, տար:

Մի դավին նստում է ինքը, մյուս դավի խուրճինի մեջ նստացնում է չալղչի Պզդի Սերկոյին ու նրա նվագի ընկերոջը: Կարգադրում է տանել դավաներին Բոբոլ Սերկոյի մկիտանի դուռը:

—Սերկո, գինի բեր:

Գինով հյուրասիրում է դավաչուն, ներկա եղողներին:

Բոլորն էլ ուրախանում են ու մնում գոհ:

Բայց յուրահատուկ է ու հետաքրքիր Օհաննեսի վերաբերմունքը դեպի էշին:

Իրա հերթական քեֆի ժամանակ տեսնում է, որ մի գյուղացի իրա էշի հետ անցնում է փողոցով: Օհաննեսը կանգնացնում է գյուղացուն:

—Էշդ էրկու սհաթով տուր ընձի:

—Չէ, չեմ կրնա,—ասում է գյուղացին,—բան-ման պիտի առնիմ, բառնամ իշուս տանիմ գեղ...

—Ահա քեզի յիրեք մանեթ, էշդ էրկու սհաթով տուր ընձի, դու էլ էստեղանքը էղի:

Գյուղացին էշը տալիս է Օհաննեսին:

Օհաննեսը կանչում է «Ցենտրալնի» բաղնիքի դալլաքներին, փող է խաղացնում և պատվերներ է տալիս: Դալլաքները էշին տանում են քաղաքի կենտրոնում գտնվող «Ցենտրալնի» բաղնիքի համարը, լողացնում մազահան ցեխը քսում ու շատ չանցած դուս բերում բոլորովին անմազ իշին[102]:

[102] Ասում են, որ դալլաքները ցեխը իշի վրա չափից ավել են պահել և իբր էշը զռացել է, և նրա զռոցը խառնվել է չալղոց «Սլիկ» եղանակի հետ, որը և զվարճացրել է

Գյուղացին, իհարկե, այդտեղ է լինում:

—Առ քու էշդ, գնա,—ասում է Օհաննեսը:

—Իդիկ իմ էշս չէ, իմ էշս մազոտ էր, անմազ էլ է՞շ էղնի:

—Տո՛, տնաշե՛ն, իշուդ չես ճանչնա՞, յանկջներուն աշե, ոտներուն աշե, քու էշդ է:

—Իմ էշս իսկական էշ էր, չբլաղ չէր, իշուս գինը տասը մանեթ է...

—Էշդ էլ քեզի, յիրեք մանեթն էլ քեզի,—ասում է Օհաննեսը,—վերու էշդ գնա...

Երեք ռուբլի փողը և ներկա եղեղների պահանջը կոտրում են գյուղացու համառությունը, և նա անմազ էշը քշելով՝ անցնում է քաղաքի կենտրոնական փողոցներով՝ բուռն ծիծաղ առաջացնելով տեսնողներին:

Նրանք գիտեին, որ դա Կալբասնիկ Օհաննեսի հերթական «շուլուխներից» է:

26(181). ՏՌԱՆ ՄԱՐՏՈՅԵՆՑ ԳՐԻՇԻ[103] ԹԱՍԻԲԸ

Մի անգամ Գրիշը գնում է Թիֆլիզ: Նստում է տրամվայ ու տեսնում է որ մի գյումրեցի գիմնազիայի աղջիկ, որը քիթ քթի տված խոսում է մի թիֆլիզեցի տղայի հետ: Գրիշին դա դուր չի գալիս, դիմում է աղջկան.—Աղջի, հլը արի իստեղ;

Աղջիկը մոտենում է Գրիշին:

—Իդիկ վո՞վ է, քու ի՞նչդ է:

—Հե՛չ, ծանոթ տղա է:

—Յո՞ւր կերթաք:

—Հե՛չ, Մուշտաիդ կերթանք:

—Մուշտա՞իդ, Մուշտաիդ ի՞նչ գործ ունիս, Մուշտաիդը յընձի պես մարդու տեղ է: Չէրթաս Մուշտաիդ, օր էրթաս գեշ կեղնի:

Աղջիկը թե վախից, թե ուրիշ զգացումից, մնաս բարև է ասում տղային իջնում տրամվայից ու գնում տուն:

Մի քանի ժամանակից հետոյ Գրիշը այդ աղջկան հանդիպում է Ալեքսանդրապոլի փողոցում, ինքը մոտենում է աղջկան ու ասում.—Կերևա օր դու նամուսով աղջիկ ես: Ես էն վախտը Թիֆլիզում վարավուրդ էրի, օր դու յընձի յանկաջ էրիր Մուշտաիդ չը գնացիր: Էստից յետև դու իմ քուրն ես: Գնա քաղքում ազատ ման արի, վով քեզի ծուռ յաչքով աշեց՝ անունս տուր, վով խաթրիդ դիպավ, արի յընձի ըսա:

Դրանից հետո ով էր գլխից անցե, որ Գրիշի հովանավորող աղջկան ծուռ աչքով նայեր, կամ խաթրին կպչեր:

27(182). ԼՈԲԻ ՕՆԻԿԸ ԵՎ ԻՐԱ ՍԻՐԵԿԱՆԸ

Լոբի Օնիկը իրա սրեկանի հետ գնում է թատրոն: Նրան հաճույք պատճառելու համար, Օնիկը գնում է երկու ֆունտ շոկոլադի կանֆետ:

Ներկայացման ժամանակ Օնիկը անընթատ իրա սիրականին հյուրասիրում է կանֆետով, որը սիրուհին ախորժակով ուտում է: Օնիկը նրա ականջին կամաց հարցնում է.—Հեչ բան'մ կըզգա՞ս:

Սիրուհին բացասաբար թափահարում է գլուխը:

Օնիկը շարունակկում է ուտեցնել կանֆետ և քիչ անց նորից հարցնում.—Հիմի՞ էլ բան չես զգա:

Սիրուհին կրկին անխոս թափահարում է գլուխը:

Օնիկը ավելացնում է կանֆետի դոզան մինչև վերջանում է այն և ավելի համարձակ դառնում է նրան.—Հիմի գիտեմ, անպատճառ բան'մ պիտի օր զգաս, ի՞նչ կըսես, խոսի՛:

—Նուժնիկ գուզեմ,—պատասխանում է սիրուհին:

28(183). ՉՈ՛ՈՇԾ, ԱՂԱ ՋԱՆ

Գյումրեցի հարուստ մանուֆակտուրիստ Ղունկի աղեն (Տեր Հարությունյան) տեսնում է, որ իրանց փողոցում մի գյուղացի իշաբեռով բան է ծախում:

—Կայնի տեսնիմ՝ էդ ի՞նչ կը ծախես:

Գյուղացին ցանկանալով երկու գործ միասին կատարել, թե՛ էշին կանգնացնել, թե՛ աղային պատասխանել՝ ասում է.—Չո՛ոշշշ, աղա ջան, մածուն կը ծախեմ:

ներկա էղողներին (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[103] Տռան Մարտոյենց Գրիշը Գիմրվա հայտնի լոթիներից էր: Գեղեցիկ, հպարտ, ազդեցիկ: Վարում էր զեխ կյանք, սակայն լի գյումրեցոց թասիբով (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

29(184). ԼՈՏՏՈ ԿԱՐՈՅԻ ՆՎԱԳԸ ԵՎ ՔԱՄԻՆ

Գյումրեցի հայտնի լոթի Մխչոնց Նիկոլը՝ «Золотой лев» հյուրանոցի բանեցնող, ուտողխմող շախով մարդ էր, միշտ լավ կոկիկ հագնված, ոսկեզօց քամարը մեջքին: Մի հաջող գործարքից հետո, նա լավ փող է վաստակում ու վճռում է գնալ Ղարս՝ իր սիրեցյալ Մարոյի մոտ:

Նստում է Տլլղենց Յարշակի շքեղ լանդոն[104], վերցնում է ճանապարհի համար ուտելիք-խմելիք և իրա երաժեշտական հաճույքը բավարարելու համար զուռնաչի Լոտտո Կարոյին:

Լոտտո Կարոն մի գեր, խոշոր, «լապառոշ», հարբեցող մարդ էր, որի համար էլ ստացել էր իր մականունը: Նա զուռնաչու դան բռնող էր—անշնորք:

Ճանապարհին Նիկոլը ասում է.—Կարո ջան, բանըմ չալե, յիմանանք:

—Նիկոլ ջան, քամին դեմեն է, բան դուս չի գա:

30(185). ՁԻԱՆՆԵՐԻ ՀԸ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

Ֆայտոնչի Սարի Մանուկը ապրում էր «թուրքերի յոխուշի» բարձունքում, դրա համար էլ ստացել էր իր մականունը: Նա բարձրահասակ, փոքր մորուքով մարդ էր, բնավորությամբ ուրախ, հումորով:

Մի անգամ երկու ուղևոր են նստում Սարի Մանուկի ֆայտոնին: Բայց ինչ-ինչ պատճառներից ձիանները «նապաֆիստ» են լինում[105]:

Նստողներից մեկը իջնում է կառքից ու դիմում մյուսին.

—Պողոս, յընչի՞ ես նստե, յիջի:

Սարի Մանուկը դառնում է նստողին.—Տո, անունդ Պողո՞ս է, տո Պողոս էլ անուն էղնի՞, յիջի՞, յիջի՞, յիջի՞ ֆայտոնից... ես էլ կսեմ յընչի ձիանները չեն էրթա...

Մարդը իջնում է ֆայտոնից, քայլում: Ձիանները հանգստանում են, շարժվում:

Մանուկը դառնում է հեռացողին.—Արի՞, արի՞ նստի՞, յէսօր էլ Պողոս տանինք...

[104] Կատարելագործված, դյուրակացիկ, ընդարձակ ֆայտոն (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[105] Այսինքն՝ ջղայնանում են, քացի քցում, չեն շարժվում (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

31(186). ԿԱԼԲԱՍՆԻԿ ՕՀԱՆՆԵՍ ՍԱՆՈՅԱՆԻ ՔԵՖԵՐԸ

Գյումրեցիք հայտնի քեֆչի էին, ուտողխմող: Ֆայտոններով ու դուդուկներով քեֆ անողներից պետք է հիշել հայտնի լոթիներ Դառչոյին, Թոփալ Մատոյենց Նաբոյին (բոստանջի), Փիլոսենց Մկոյին (բոստնջի) Թղրիենց Լիպոնին, Հռիկ Կարոյին և շատ ուրիշների:

Բայց բոլորից էշխով, տարօրինակ քեֆեր անում էր Բախալ Մկոյենց Օհաննեսը, կամ ինչպես ասում էին Կալբասնիկ Օհաննեսը (Սանոյանը):

Նա գրագետ մարդ էր, լավ մասնագետ, աշխատասեր, ուներ լավ կալբասեղենի խանութ, պատվավոր, շռայլության հասնող առատաձեռն, հայտնի քեֆ անող, տարօրինակություն սիրող:

Նրա քեֆերը «շախին» էին: Նա, ինչպես ասում են, «օխտը ֆայտոնով» էր քեֆ անում «չաղլիով», հյուրասիրում շատերին, աջ ու ձախ ցփնում իր աշխատած փողերը:

Նա քեֆեր էր կազմակերպում ձիու կամ նույնիսկ իշի կաճկաներով: Բացի դուդուկով քեֆերից օգտվում էր նաև տկի (պարկապզուկ) նվագով:

32(187). ՉՐԱԽԼԵՑԻ ՓԱՅԼԵՎԱՆԻ[106] ԳԻԼԱՇԸ

Մե ուրիշ հայտնի փայլևան, որը շատ էր լսե Չարխլեցի փայլևանի մասին, վճռում է գնալ նրա մոտ և փորձել իրանց ուժերը:

Գնում է Չրախլի գյուղը, տեսնում է, որ մի քանի տղամարդ նստել են մի տան առաջ և զրուցում են: Մոտենում է բարև տալիս ու հարցնում.—Ոտեղ է փայլևան Յարությունի տունը:

Նրանցից մի հաղդանդամ մարդ վեր է կենում տեղից, բարձրացնում է արաբայի թափքը ուղղում մի կողմ ու ասում.—Ա՛յ, էնտեղ է փայլևան Յարությունի տունը:

[106] Չրախլեցի փայլևանը, որի անունը Յարություն էր, ժողովրդի մեջ մեծ հռչակ էր վայելում իրա չտեսնված ուժի համար: Բայց ինչպես երևում է ներքո բերված երկու իրական պատմությունից, նա շատ մարդասեր և հյուրասեր մարդ է եղել: Չրախլի գյուղը գտնվում էր Ալեքսանդրապոլից մոտ 15 վերստ հեռավորության վրա (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Եկվորը գնում է ցույց տված տունը, ծեծում է դուռը:

—Փայլևան Յարությունին գուզեմ տեսնել, տո՞ւնն է:

—Փայլևանը տունը չէ, համեցեք նես, հիմի գուկա:

Մի քիչ հետո գալիս է փայլևանը, և ի՞նչ, բանից դուս է գալիս, որ փայլևան Յարությունը այն մարդն էր որ բարձրացրել էր արաբայի թափքը, բայց չէր ասել, թե ինքը ով է:

—Եկել եմ տունդ ղոնախ:

—Շատ լավ ես էրե: Ղոնախը որ կա Աստծունն է: Դու իմ գլխու վրա տեղ ունիս:

—Իմ գալուս նպատակն է հետդ...

—Դու իմ ղոնախն ես... առաջ հաց՝ յետև հարց,—ընթատում է հյուրին տանտերը,—յիրեք օր չեմ հարցնե թե ի՞նչ նպատակով եք էկե:

Երեք օր հյուրին լավ պատվում են: Երեք օրից հետո հյուրը ասում է, որ ինքն էլ այսինչ հայտնի փայլևանն է:

—Էկել եմ օր քեզի հետ գիլաշ բռնեմ:

—Է՛յ, ախպեր ջան, ես քեզի հետ ի՞նչղ գիլաշ բռնեմ, ա՛խր դու իմ ղոնախն ես: Չեմ յուզե հետդ գիլաշ բռնել, հմը դու օր շատ կը զոռես, բռնենք:

Գնում են ոչխարների գոմը, դուռը ներսից փակում, որ ոչ ոք չը խանգարի:

Սկսում են... երկու զորեղ փայլևանների մենամարտից գետինը դողում է, աղմուկ բարձրանում: Սկզբում Յարությունը ուզում է միայն պաշտպանվել, բայց կամաց-կամաց երկուսն էլ տաքանում են. իրար ջարդում են: Ոչ ոք դրսից չի կարող նրանց միջամտել:

Փայլվան Յարությունի հարսը, որին միայն լսում էր փայլևանը, դրսից աղաչում է դուռը թակելով.—Հայրիկ, հերիք է, ջարդվաք, դուռը բաց:

Տաքանալով՝ փայլևան Յարությունը հյուրին տալիս է գետնով: Բայց բարձրացնելով նրան բարեկամաբար ասում է.—Էդ չեղավ, ոտդ պլստաց էդոր համար յընկար, հաշվենք չեղյալ: Վերջացնենք... Զաթի հարսս էլ կաղաչե որ վերջացնենք:

33(188). ՉՐԱԽԼԵՑԻ ՓԱՅԼԵՎԱՆԻ ՅԱՂԼԻ ՈՒՏԵԼԸ

Մի օր Ալեքսանդրապոլում ֆոնչի Սիրականի փուռն է գալիս մի անծանոթ հաղդանդամ կեցվածքով մարդ:

—Ախպեր, տաք յաղլի ունի՞ս,—հարցնում է անծանոթը:

—Ունիմ, փռի մեջն է:

—Հանե բեր:

Սիրականը փռից հանում է թավան յաղլիով լիքը:

Անծանոթը պահանջում է յաղլոց վրա եղ ու շաքար ավելացնել, որից հետո նա ախորժակով ուտում է 12 հատ:

—Շնորհակալ եմ,—ասում է անծանոթը,—քովս փարա չկա,—ասում է ու հեռանում:

«Աշես՝ վո՞վ էր,—մտածում է Սիրականը,—արքով կերավ, փարեն էլ չը տվեց, տեսնինք՝ կուտա՞»:

Մյուս օրը մի բարցած գյուղացու արաբա կանգնում է փռի դուռը:

—Իսի՞կ է Փռնջի Սիրականի ֆուռը:

—Հա իսիկ է:

—Սելի վրեջեն ալուրն ու եղը դարտկե:

—Սխալ կեղնիս, էդոնք իմս չեն:

—Չէ, քուկդ է, Չրախլեցի փայլևանն է ղրկե, յերեկ էնիկ իստեղ յաղլի է կերե, փարա չէ ունեցե քովը. հիմի ղրկել է կես մեշոք ալուր, փառչ՚մ եղ:

—Ախպեր, էնոր կերածը ի՞նչ էր օր...

—Չրախլեցի փայլվանը լավության տակը մնացող չէ, էդպես մարդ է... Դարտկե...

34(189). ՃԻՉԸ

Գյումրեցի Էլիֆտերի Կալերովը ազգությամբ հույն, բայց ինչպես քաղաքի այլազգիները, անթերի տիրապետում էր գյումրեցոնց բարբառին:

Նա արդեն բեղ-միրուքով երիտասարդ, մոտ 20 տարեկան, սովորում էր առևտրական դպրոցի վերջի՝ VIII դասարանում (ընդամենը 12 դասարան): Նա խելացի, ազնիվ լավ սովորող, ընդունակ, քաղաքավարի, կրթված տղա էր, բայց պարզ և միամիտ: Արտաքինով նա վայելչակազմ էր, բարձրահասակ և բարակ, որը և դառավ նրա ողբերգության պատճառը:

«Ճզի» պատմությունը սկսվեց նրանից, որ մի անգամ բնագիտության դասից հետո գրատախտակի վրա մնաց մի ինչ-որ երկարավուն միջատի նկար: Դասամիջոցին նրա դասընկերներից մեկը, կատակի համար գրեց. «Երկար է, նման է Կալերովին»: Վերջինիս դուր չեկավ կատակը և նա ջղայնացած բոլորը ջնջեց: Բայց հնարագետը չը զլացավ մի ավելի պարզ երկարավուն ֆիգուրա նկարել և տակը գրել միայն «Կալերով»:

Կալերովը ավելի ջղայնացած այս ֆիգուրան էլ ջնջեց:

Նորից նկարվեց ավելի բարակ ֆիգուրաներ առանց նրա ազգանունի, և ամեն անգամ հայոյանքների տարափ ուղղելով անհայտ նկարչի հասցեին՝ Կալերովը ջնջում էր ֆիգուրաները մինչև որ երկարավուն ու բարակ ֆիգուրաները դառան մի հասարակ ուղղահայաց գիծ, առանց մի գրության, մի սովորական «ճիզ», որը աճող մոլեգնությամբ և հայոյանքներով Կալերովը ջնջում էր, հա ջնջում էր:

35(190). ԽՄԲԱՊԵՏ ՀԱՋԻ ՆԱԶԻԿԻ ՄԱՍԻՆ

Խմբապետ հաջի Նազիկը մի հաղդանդամ պնդակազմ երկար ու փարթամ բեղերով մարդ էր:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական ֆրոնտում իր աչքի ընկնող գործողությունների համար նա արժանացել էր ռուսական հրամանատարության կողմից գրավոր գովասանքի և նրան շնորվել էր կրտսեր աֆիցերի աստիճան:

Որովհետև նա ռուսերեն բոլորովին չը գիտեր և աֆիցերական աստիճաններից լավ չէր հասկանում, ուստի նրա «բանիմաց» ծանոթները նրան բացատրում են, որ նա ստացել է «զինվորական «ջոջ» աստիճան:

Հաջի Նազիկը գնում է Թիֆլիս, փողը գյուռ է լինում: Մտնում է «Офицерское общество»-ի[107] ունիվերմակը և պահանջում է «զմենեն ջոջ» աֆիցերի պատրաստի շորեր: Նրան տալիս են գեներալի հագուստ՝ համապատասխան ուսադիրներով: Նա հագնում է գեներալի փայլուն զգեստը, շատ դուր է գալիս, ու դուրս է գալիս փողոց:

Փողոցում մի ռուս գեներալ նկատում է այդ անծանոթ գեներալին, հետաքրքրվում է, մոտենում է Հաջի Նազիկին, պատիվ է տալիս ու ասում.—Простите, Ваше превосходительство, скажите пожалуйста, в какой части вы состоите[108]?

—Չաստ-մաստ չըմ գինա,—ցույց տալով իր ուսադիրները, շարունակում է,—յըմեն յուդա գրուկ է:

Ռուս գեներալը, տեսնելով որ այս տարօրինակ գեներալի հագուստով մարդը ռուսերեն նույնիսկ չգիտե, ներկա եղողների միջոցով պահանջում է փաստաթղթեր:

Հաջի Նազիկը ներկայացնում է իր գովասանական թղթերը և ասում՝ ինչ կերպ է ձեռք բերե գեներալի հագուստը:

Ռուս գեներալը ծիծաղում է, Հաջի Նազիկի հետ գնում է այն ունիվերմակը, որտեղից վերջինս գնել է գեներալի շորերը, խնդրում է նրանք հետ վերցնել ու տալ կրտսեր աֆիցերի հագուստ, համապատասխան ուսադիրներով:

Կրտսեր աֆիցերի հագուստը նույնպես դուր է գալիս Հաջի Նազիկին:

36(191). ԱՆԴՐԱՆԻԿԸ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ Է ԽՄԲԱՊԵՏ ՔԵՌՈՒ ՁԵՌՔԸ

1915 թ. Ալեքսանդրապոլ են գալիս զորավար Անդրանիկը և խմբապտ Քեռին:

Սպլ Համոն Անդրանիկի ու Քեռու պատվին մի քեֆ է կազմակերպում իր մկիտանում: Բացի մեծարվածներից հրավիրված են լինում մի քանի ընկերներ և ծանոթներ, որոնց մեջն է լինում տվյալ դեպքը պատմող ուտող-խմող ակմակչի Մամիկոն Մամիկոնյանը:

Առաջինը գալիս է իրա մի քանի թիկնապահներով Անդրանիկը: Հետո գալիս է նույնպես իրա մի քանի զինվորներով խմբապետ Քեռին: Երբ Քեռին նես է մտնում, Անդրանիկը վեր է կենում տեղից ու համբուրում Քեռու ձեռքը: Ներկա եղողները «խլշկոտում են», բայց ոչինչ չեն ասում:

[107] Սպայական ընկերություն

[108] Ներեցեք, Ձերդ գերազանցություն, ասացեք խնդրեմ, ո՞ր զորամասում եք ծառայում:

Թամադա են ընտրում ինչակ, լավ ճառախոս ակմակչի Գևորգ Աղաջանյանին: Վերջինս առաջի կենացը առաջարկում է Անդրանիկինը, որին ինչպես հարկն է փառաբանում են:

Երկրորդ հերթին խմում են Քեռու կենացը: Անդրանիկը խոսք է վերցնում.—Ես նկատեցի որ դուք զարմացաք, որ ես համբուրեցի Քեռու ձեռքը... Մի ժամանակ,—շարունակում է Անդրանիկը,—ես շարքային զինվոր էի Քեռու խմբում: Մի անգամ գիշերը քրդերը մեզ շրջապատեցին: Քեռին հրամայեց, որ իր ձին բերեն: Ձին բերեցի ես... Քեռին ինձ մի ապտակ տվեց և ասաց. «Հայ յեղափոխական զինվորը այդպե՞ս կը լինի, ուշացար»: Այդ ապտակը ինձ շատ բան սովորեցրեց... և ես դառա Անդրանիկ:

37(192). ԳՅՈՐԳԵՎՍԿԻ ԿԱՎԱԼԵՐԸ

Մի ալեքսանդրապոլցի հինգ տարի ցարական բանակում կավալերիստ կեղնի, տուն կուգա ու իրեն տանը ինչղ օր բանակում սովրած է, կամանդներ կուտա՝ կնիկ էս էրա, կնիկ էն էրա:

Կնիկն էլ իրմեն լաչառ կեղնի, կսե.—Քելե, ջանմ, հո ես քո սալդաթը չեղմ, հեչ բան էլ չեմ էնե, ինչ կուզես էրա...

Մարթը մինչև կեսօր կերթա-կուգա, կերթա-կուգա, իրան կուդե: Կտեսնի, օր կնիգը նստե արխին սեմուշկա կչթե, մարթը կբոռա.—Կնիկ, սմի՛ռնը, հերիք է շալթայ-բալտայ էնես, որ ջղայնացա՝ մի հադմ նեաչերեդնի նարյադ՚մ կուդամ, որ խելքտ գլուխտ ժողվես, ափսոս, որ բոչկե՚մ կարտոշկա չկա, օր նստեցնիմ, կպչես, օր լեզուտ կարճ էղնի...

Կնիկ կսե.—Մորս քովը պտի էրթամ:

Մարթը կսե.—Ինչ, զավտրկ, աբեդ պրազիվատ էրիր, տեսնիմ՝ ուժինն ինչղ կեղնի, զոռով գալադովկա կենես, որ քյոթկեմ, քյաֆտառ մորտ կանչես: Էնիկ ինչղ օր ռոտնի ֆեթֆեբել էղնի, համ տունս կուգա, համ էլ ընձի թափ կուդա: Էդիկ էլ չի էղնի՛, ես, վաշի բլագարոդի սվերխսրոչկե Գյորգևսկի կավալեր եմ, ընձի սաղ պոլկը կճանչնար, հասկցմ՚ր, օղուլ...

38(193). ՀՊԱՐՏ ԳՅՈՒՄՐԵՑԻՆ

Հաստադը չեմ հիշե, որ թիվն էր, իսիկ օր կպատմեմ, շատ վաղուց է էղե՝ Նիկոլի վախտը:

Ես ու Ձիթղցովենց Օնիկը, օղորմի էնոր, էլանք գնացինք Էրևան: Ձմռվա թարաֆն էր, մի էրկու թաս ռախի վագզալը խմեցինք, օր չմրսինք, նստանք պոեզդ: Բութիլկե՚մ ռախի էլ պրավադնիկ Գևոն խմցրեց, դե ըշտը դու էնոր կճանչնաս[109], ինիկ Արագազովենց Հագոյի վենձ մանչն էր, հա էկանք հասանք Էրևան: Ֆայտոն կանչեցի, է՛, ֆայտոն, ըշտը, Գյումրվա ֆայտոնն էր, թաքռները՝ կարմիր, ինքը՝ սև, ձիերը յորղա երիշ, ֆայտոնչուն օր կաշեիր, ըսես պերվի կլաս ռսի կուպեց էղներ:

Հա ըսի.—Քշե Օրյանդ գաստինցեն:

Էկանք հասանք գաստինցեն, մտանք ռեստորան:

—Օնի՛կ,—ըսի,—քիչ՚մ հաց ուդենք:

Օնիկը թե.—Ուդենք:

Աֆիցիանտին կանչի, ըսի.—Օղուլ, էրկու թաս ռախի բե՝ իրեն թաշախուստով:

Օր սեղան նստանք, ընձի թվաց, թե Օնիկը ընձի ըսավ.—Իշու ձաք, հերիք է էլի:

Էլա կայնա Օնիկին աշեցի, աշեցի, մի հատ օր չզարգի, ինիկ հէրգեն էրգնցավ...

Ըշտը, էնիկ էլ կերած-խմաց էլավ կայնեց, ուշը գլուխն էկավ, ընձի աշեց, մի հադ՚մ օր չզարգեց՝ հէրգեն էրգնցա...

Ըշտը ես էլ էյի կերած-խմած տղա, ընձի թափ տվի, էլա կանգնա Օնիկին աշեցի, աշեցի, մի հադ օր չզագի, Օնիկս հէրգեն էրգնցավ...

Ըշտը, էնիկ էլ կերած-խմած... (և այսպես շարունակ):

39(194). ՄԵԾ ՔԵԹԵՑԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1918 թվին թուրքն էգավ Հայաստան. Շորագյալն իստակ ավիրյեց, թալնյեց: Մյեձ Քետեցի Մարդիրոս մի կար՝ աշըղ էր: Փախնի կէրտա Ծալգա. հարի թուրք քաշվի, գ՚ելնի ընգերոչ կառնե, կըսե.—Էրտանկ տեսնինկ՝ ի՞նչ կա, մեր տուն-տյեղն իմալ ին:

[109] Բանասաց Վելիխան Հովակիմյանը դիմում է բանահավաք Խաչիկ Դաբաղյանին:

Գ'ելնին գ'իկան: Գ'իկան, ճամպուն գյեղ մի գ'անդիբին, աշկերտին կըսե.—Մդի իդը տուն, քիչ մի հաց յուզե, ճամպու պաշար էղնի:

Աշկյերդ մդնի տուն, տեսնի, օր էրգու խանըմ նստուգ հաց թխին, կըսե.—Խանըմ ջան, ճամպո՛ռտ մարտ ինկ, քիչ մի հած տակ՝ տանինկ մյեր հյեդ:

Խանըմ թե,—Աշուղ ի՞ս:

Թե.—Հա՛:

—Օր աշուղ իս, բան մի կըսիմ, թե կըրցար պադասխանիր, դապո՛ն մի հած կիտամ, թե չէ՝ սազդ ի կառնիմ, բան լե չըմ իդա:

Աշկյերդ կըսե.—Ըսե, խանըմ:

Կըսե.—Յուրդի՞ց իս:

—Շորագյըլցի,—կըսե:

Կըսե.—Դու էգար Շորագլու հյեդ,
Առջևես կէրտա ջախճի'մ գյեդ,
Զարգե պեխերուդ՝ դառնա եդ:

Աշկյերդ կըսե.—Չըմ կռնա պադասխանի, խանըմ:

Կըսե.—Դը սազդ իտուր:

Սազ կառնե ձեռնեն, աշկյերդ փոր-փոշման գ'ելնի դուս:

Մարդիրո՛ս թե.—Ո՞ւր է հացն:

Աշկյերդ թե.—Հաց չը տվին, խանըմն հըմլա բան մի ըսյեծ, չը կրցա պադասխանենք, հա՛մ հած չը տվյեց, հա՛մ լե սազ ձեռկես առավ:

Մարդիրո՛ս թե.—Գնա նյերս, ըսե. «Ես աշկյերդն իմ, ուստես դուռն է, թըղ գա էնի պադասխան»:

Կէրտա նյերս կըսե, խանըմ թե.—Աճկիս վրա՝ թըղ գա:

Մարդիրո՛ս գիկյա նյերս:

Խանըմ կըսե.—Դու էգար Շորագլու հյեդ,
Առջևես կէրտա ջախճի'մ գյեդ,
Զարգե պեխերուդ՝ դառնա եդ:

Մարդիրո՛ս կըսե.—Խանը՛մ,
Ձիես էլա Շորագլու հյեդ,
Առեճս ի կար մի չարխիքաշ նյեդ,
Էրգու զանգուլագ լե հյեդ,
Զարգե յոռիդ՝ դառնա եդ:

Վերու խանըմ կըսե.
—Ա՛ռ, վարբյեդ, սազ լե, հածյեր լե:
Հալալ էղնի քզի:

40(195). ՀԱՋԻ ԶԱՐՂԱԼԱՄԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԽՈՍԵԼԸ

Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ (1877–78թթ.) գյումրեցոնց տանը տեղավորված զինվորականները իրենց կարիքների համար ունենում էին պետական վառելափայտ:

Հաջի Զարղալամը այնքան էլ տարբերություն չէր դնում սեփական և զինվորական վառելիքի օգտագործման մեջ: Մի օր ռուս դենչիկը ասում է հաջի Զարղալամին.- Нехорошо, мама-ша, трогать чужие дрова[110].

Հաջի Զարղալամը, ուզենալով հերքել դենչիկի ասածը, որ այդպես բան չի կարող պատահել, ցույց է տալիս իր վառելիքը ու բացականչում.

—Ահա՛ մայա փատ, ահա մայա աթար, զաչե՛մ քուկտ վառեմ:

41(196). ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԱՄԸ

Մենք դեռ փոքր երեխաներ էինք, խաղում էինք մեր փողոցում, երբ երբեմն երվում էր Մայրաքաղաք մամը:

Դա մի պառավ էր չափազանց մաքուր, կարմիր թշերով, սև շորերով, սև շալը գլխին, բարի, ժպտացող աչքերով:

Տեսնելով մեզ փոքրիկներս խաղալիս (մանթակ, ճան, պայմտոցիկ և այլն) անպատճառ պիտի մոտենար մեզ, շոհեր մեր գլուխները, ջերմորեն սեղմեր իր թառամած կրծքին, համբուրեր թշներս, ասելով.—Բալա ջան, անունդ ինչ է, ի՞նչ լավ անուն է, աննիդ մեռնիմ, յո՛ւմ տղեն ես, մորդ անունը ի՞նչ է, հորով-մորով էղնիս, բալա ջան, քանի տարեկան ես, ծլիսծաղկիս, Աստծու աչն ու խաչը վրեդ միշտ անպակաս էղնի:—Նա նորից շոյում էր գլուխներս, համբուրում ու ասում.—Հիմի գնացեք ձեր խաղը խաղցեք: Մայրաքաղաքը ձեր ցավը տանի:

Մենք չէինք դժգոհում, որ նա մեր խաղը ընթատեց, ինչպես մյուս մեծերից էինք դժգոհում, ընթիակառակը մենք էինք վազում դեպի նա, փաթաթվում նրան, այնքան ջերմ ու անկեղծ էին նրա գուրգուրանքները նման հարազատ մոր գուրգուրանքներին:

[110] Լավ չէ, մայրիկ ձեռք տալ ուրիշի փայտը:

Անցել են շատ ու շատ տարիներ: Մայրաքաղաք մամը վաղուց է մեր «չարը տարե»:

Եվ հիմա կյանքնիս մայրամուտի շեմին, երբ մտաբերում եմ իմ հեռու անցիալը, ճիշտ է, բավականին մշուշապատված շերտավորված տարիներից, չեմ կարող ակնածանքով չը հիշել քեզ՝ մաքրասեր գյումրեցի պառավ, քո հոյակապ սերը դեպի մարդը:

Որքա՜ն ինքնաբուխ, որքա՜ն անշահախնդիր, որքա՜ն պարզ ու անկեղծ էր քո այդ զգացունքը՝ որպես արգասիք մարդասիրական մաքուր սրտից բխած բնական մի պահանջ:

42(197). ՄՈՐ ԱՂՈԹՔԸ

Մի անգամ մի կին մտնում է Աստվածածին եկեղեցու խորանը՝ այն բաժանմունքը, որտեղ գտնվում էր հավատացիալների կողմից մեծ հռչակ վայելող Մարիամ Աստվածածնի պատկերը:

Նա մոտենում է խորանի քահանա Տեր Բարթեղմոսին, աջը առնում ու ասում.—Տերտեր ջան, տղես սալդտության ժերեբ քաշելու է գնացե, գուզեմ տղիս համար մե հա՜տ աղոթեմ:

Տերտերը, իհարկե, սիրով թույլ է տալիս: Կինը կանգնում է Աստվածածնի պատկերի առաջ ու աղոթում.—Մայրամ մայրիկ Ասպածածին, գրկանոցիդ ճուղը ուտեմ, տղես ժերեբի չափը օր չը լցեց՝ ազատվավ, կանցելարեն դիզ տուն ղրկե, չէրթա մկիտան...

43(198). ԻՍԻԿ ԷԼ ԽԱԲԱՐ ՏՎԵՔ

Այն օրը երբ սովետական XI կարմիր բանակը առաջի անգամը մտնում է Ալեքսանդրապոլ (1921 թ.) աղ ծախող Ղանթարճոնց Վասիլը մի քանի ընկերների հետ Խոնարհենց Մանուկի մկիտանում քեֆ էր անում:

Լավ խմելուց հետո Վասիլը ասում է միկիտանչուն.—Մանուկ ախպեր, սրե՛մ էլ լից:

—Կենացները պրծել են,—ասում են ընկերները:

—Չէ, կայնեք, կենաց՛մ էլ կա:

Մանուկը լցնում է բաժակները:

—Էս էլ խմենք Նիկոլայ թագավորի կենացը,—առաջարկում է Վասիլը:

Ներկա եղողներից մեկը յայտնում է Չեկային, որ Ղանթարճոնց Վասիլը խմեց Նիկալայ թագավորի կենացը:

Գիշերը Վասիլի դուռը ծեծում են:

—Վո՞վ է:

—Չեկայից ենք, դուռը բաց:

—Չեկան վո՞վ է:

Վասիլին տանում են և սկսում.—Մենք գիտենք, որ դուք ոչ մի կուսակցության չեք պատկանում, բայց խմում եք թագավորի կենացը, չը գիտե՞ք որ թագավոր չկա:

—Ես ինչ գիտենամ,—պատասխանում է Վասիլը,—ցերեկը՝ գործի, գիշերը՝ հարբած, էդքան թեզ թագավոր կը փոխվի՞, յըբը հիմի վո՞վ կա:

—Հիմա Լենի՞ն կա... Լենի՞ն:

Վասիլին բաց են թողնում, մյուս օրը նա գալիս է էլի նույն մկիտանը, հանդիպում է նույն ընկերներին, ասում է.—Մանուկ ախպեր մե սրե՛մ լից:

Լցնում են բաժակները, Վասիլը թե.—Խմենք նոր թագավոր Լենինի կենացը: Օռաշ-նե՛ր, էնիկ խաբար տվիք, էս կենացն էլ գնացեք խաբար տվեք:

44(199). ՀԼՈՅԻ ՕՅԻՆԸ*

Մեր գյուղացի հարյուրտաս տարեկան մի մարդ, անունը Հլո էր... մենք տաճկաստանցի ենք, իմիջայլոց: Էս Հլոն, ուրեմն, մի էրկու-իրեք փութ գարի գցում է իշու վրա, բերում ջաղաց՝ աղալու: Որ կբերի ջաղաց՝ աղալու, ջաղաց կայնած կեղնի, դան չի էղնի էլի: Կաղնած կեղնի, ջաղացպանը կելնի Հլոյի էշուն բաց կթողնի, որպեսզի գա աղացած ալյուրեն քիչ մը գողանա:

Կայնե, կըսե.—Հլո:

—Ի՞նչ է,—կըսե:

—Էդ ի՞նչխ ես կապե իշուդ, որ փախավ:

—Այ մարդ, ես կապել եմ, ինչի՞ պիտի փախներ:

Թե.—Փախավ:

«Այ,—կըսե,—ուրեմն, ես գող Հլոն էղնիմ, Սուլթան Համիդը չկրցավ ինձի բռնել, տու ստեղ ինձնից գողութուն բիդի կատարե՞ս»:

Արդեն ալուրն էլ իջել է, ջաղացպանին

կ'կանգնեցնե կը ալրի ամբարի մոտ, որտեղ որ ալուրն է թափվում, կըսե.—Ձերքդ բռնե:

Ձերքը կ'բռնե, ալուրը կլցնե բռի մեջն ու խաչը կ'դնե վրեն, կըսե.—Էդպես կ'կայնես, մինչև իշուն գտնիմ, գամ:

Էս ջաղացպանը, ուրեմն, էսպես կայնած կ'մնա, Հլոն կգնա իշու ետևեն, իշուն ման գալու:

Մեկ էլ կոլխոզի նախագահը, բրիգադիրները, ես ինչ գիտեմ, գյուղատնտեսը ման են գալիս դաշտերը, ըսել են, «Հլա մի հատըմ միտնինք ջաղաց»: Կ'մտնին ջաղաց, կաշեն, որ ջաղացպանը, ձերքերը բռնած, կայնած է:

—Էս ի՞նչ բան է:

Թե.—Հլոն էսպես, էսպես օյին հանեց գլուխս:

Թե.—Որ էդպես է, մենք Հլոյի գործերին չենք խառնվի, կ'սպասենք մինչև ինքը վերադառնա, գա:

Հլոն, էշը գտնելով, ետ կդառնա, կուգա: Կուգա տեսնի, որ ձի է կապած դռան առաջը. «Ուրեմն մարդ կա ներսը»:

Կմտնի կաշի՝ կոլխոզի նախագահը, բանն են:

—Հլո, ի՞նչ բան է:

—Տո, էս քյոփօղլին,—կըսե,—մտքումը դրել է ալրի կեսը գողնա, էդպես որ չընեի, տուն ի՞նչ պիտի տանեի:

45(200). ՀԼՈՆ ՈՒ ՋՐԱՂԱՑՊԱՆԸ

Հլոն ապրում էր Ախուրյան շրջանի Զրախլի գյուղում: Նա գաղթվել էր Բուլանըխից: 1933 թվին, հացի պակասության ժամանակ Հլոն երկու փութ գարի իշուն բարձած տանում է ջրաղաց՝ աղալու: Այդ ժամանակ բնաղոն չլինելու պատճառով ջրաղացը կանգնած է լինում: Հլոն իշուն կապում է ջրաղացի դռանը ու գարին բերում ներս:

—Հլո՛,—ասում է ջրաղացպանը,—գնա ջուրը կապե, գարիդ աղամ:

Հլոն գնում է ջուրը կապելու: Այդ ժամանակ ջրաղացպանը իշու թոկը արձակում է ու քշում: Էշը հեռանում է:

Երբ Հլոն վերադառնում է, ջրաղացպանը ասում է.—Հլո, էշդ փախավ:

Հլոն մտածում է. «Էշը կապած տեղից յընչի՞ պտի փախնի, էդիկ ջրաղացպանի գործն է»: Ալրցից գուզե գողանալ:

Հլոն ջրաղացպանին կանգնեցնում է ամբարի դիմաց, նրա երկու ձեռքերի բռի մեջ լցնում է ալյուր ու վրեն խաչ քաշում ու ասում.—Սապռ էրա էսպես կայնած տեյ ես էշս գտնիմ գամ, տե՛ս, ալյուրը չը խառնես:

Ջրաղացպանը մնում է կանգնած:

Այդ ժամանակ կոլխոզի նախագահը իրա բրիգադիրներով ման է գալիս դաշտը, մտնում են ջրաղաց, տեսնում են ջրաղացպանը ամբարի առաջ կանգնած, երկու ձեռների մեջ ալյուրը լցված՝ խաչը վրեն քաշած:

—Էս ի՞նչ բան է:

—Սպասեմ կը տեյ մեր Հլոն էշը գտնի:

46(201). ՏԻԳՐԱՆԻ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Թորոսգյուղացի Տիգրանը մի կատակչի մարդ է: Նա օլինպիադաներում էլ է մասնակցություն ունեցել, ելույթ ունեցել: Գյուղացիներին շատ էր ուրախացնում իր կատակներով: Նա իր մասին ինձ պատմել է հետևյալը:

Ասում է.—Զոհրաբ ջան, դժվար ապրուստի տարիներ էին, ընկերոջս վերցրի, գնացինք Ախլքալաք՝ քիչ-միչ գարի ճարելու: Էնտեղ ես շատ եմ եղել, ծանոթներ ունեի՝ Արագովան, Բարալեթ, էդ գյուղերը:

Գնացինք,—կըսե,—Արագովան՝ ծանոթիս տունը: Ներս մտանք: Ինձ որ տեսան (գիտեին, որ կատակչի մարդ եմ), շատ ուրախացան: «Բարև», էս, էն, ընդունեցին, որից հետո տան մեծը ասաց, որ.—Տիգրան ջան, մեր հարսը էսօր ոտաց է, պիտի ազատվի, մենք էլ հեչ տղա չունենք, երեխա չունենք, չե՞ս կրնա ասել՝ տղա բիդի լինի՞, թե՞ աղջիկ:

Ասում է.—Մոլորվա, մնացի: Ասեմ՝ տղա, գուցե՞ աղջիկ լինի, ասեմ աղջիկ՝ գուցե՞ տղա լինի:

Ըսի.—Դուք բոլորդ սենյակից դուրս գնացեք, թող հարսը գա:

Բոլորը դուրս գնացին, հարսը եկավ:

—Հարս ջան, գնա էն պատի մոտը, արի ինձ մոտ: Գնա էնտեղ, արի ինձ մոտ:

Հարսը էդպես էլ ըրավ: Մի չորս-հինգ անգամ գնալ-գալուց հետո ասի՝ գնա:

Որ գնաց, տանեցիք ամբողջը թափան ներս, ուզում են իմ կարծիքը իմանալ: Հիմա ես մտածեցի, մտածեցի, հնարը գտա:

Ասի,—Երբոր հարսը գնում է դեպի էն պատը՝ հետևից տղա է երևում: Երբոր դեպի ինձ է գալիս՝ աղջիկ է երևում:

Ասում է՝ երկու ժամ չքաշած՝ հարսը ազադվեց, մի հատ տղա բերեց, մի հատ աղջիկ:

Բոլորն էլ ուրախացան, բերին էրկու հատ ոչխար մորթեցին... կեր, խում: Չորս-հինգ օր ինձ,—ասում է,—ու ընկերոջս ոչ մի տեղ չեն թողնում, վերջն էլ,—ասում է,—մեշոկները լիքը գարի լեցրեցին ու մեզի ճանապարհ գցեցին՝ ուրախ-զվարթ: Իրենք էլ ուրախացան, մենք էլ գարու համար ուրախացանք:

47(202). ՄՈՍՈՅԻ «ՔԻՇՄԻՇԸ»

Ղուկասյան շրջանի Ախքիլիսա գյուղի բնակիչ Մոսոն զուռնաչի էր: Նա առակախոս «շուլուխչի» մարդ էր:

Չաղլճոց գործերը լավ չի լինի, դրա համար Մոսոն իր խաղակից ընկերների հետ (մեկը դան բռնող, մյուսը դավուլճի) գնում են Կախեթ՝ փող վաստակելու: Այստեղ էլ հաջողություն չեն ունենում: Դատարկ գրպանով ետ են գալիս: Երբ հասնում են Շուլավեր գյուղը, մութը ընկնում է: Ո՛չ փող ունին, ո՛չ գյուղում ծանոթ: Մտնում են գյուղի ծայրամասում գտնվող մի խոտի մարագ՝ գիշերելու: Տեղավորվում են խոտի դեզի վրա:

Մութը որ լավ ընկնում է, տեսնում են, որ գյուղի տերտերը ու մի հարս մտան մարագ... մոմ վառեցին: Մոսոն ձեռքով հասկացնում է, որ ընկերները սուս անեն: Հարսը բաց է անում հետը բերած ուտելիքների բոխչեն—էլ հաց, պանիր, ձու, տապակած հավի միս... Սկսում են ուտել ու զրուցել:

Հարսը հարցնում է տերտերին.—Դու ե՞փ ընձի սիրեցիր:

—Ես էն անգամը քեզի սիրեցի, եփոր հարսնիքին ես «Քիշմիշ» զակազ տվի, դու յելար պար խաղցար: Յըբը դու ե՞փ ընձի սիրեցիր:

—Ես էլ քեզի էն վախտ սիրեցի,—ասում է հարսը,—եփ դու շուրջառը վրեդ, բուրվառը ծխելով, երգելով էկար քովես անցար... ու էնպես աշիր ընձի, որ քեզի սիրեցի:

Ուտելուց ու քաղցր խոսքեր իրար ասելուց հետո, բնականաբար, սկսվում է ավելի էական բաներ (մարմնի պահանջ): Ամենանվիրական մոմենտին հանկարծ դավուլ զուռնայի մի այնպիսի հրեշային, ականջ ծակող նվագ է լսվում, որ մեր սիրահարները լեղապատառ տեղից վեր են թռչում պուկ գալիս, ամեն բան մոռացած դուրս են թռչում մարագից... Էլ մարդ կը հասնի՞ հետևներից:

Նոր տղաները վար կիջնին դեզի վրայից, պնտացնում են քաղցած փորերը թողած բարիքներով, փառք տալով Աստծուն և քնում:

Առավոտը խաղընկերները ասում են.—Արիք փախնինք, տերտերը մեր գլխուն կրնա խաղ խաղա:

—Հլը յո՞ւր ես,—ասում է Մոսոն,—հլը ինչե՞ր պիտի էղնի:

Մոսոն առավոտը կանուխ գնում է տերտերի դուռը ծեծում:

—Տերտերը տո՞ւնն է:

—Տունն է, հմը քնած է, գիշերը քեֆի էր:

—Ըսեք թող գա:

Երբ տերտերը քնաթաթախ գալիս է, Մոսոն թե.—Տերտեր ջան, էս գիշեր քեֆի էիր, քու զակազով «Քիշմիշը» չալեցինք, հարսն էլ յելավ պար էկավ, մոռացար փարեն չը տվ(եց)իր:

Տերտերը մատը կը կծե, գնում է քսանհինգանոց՝մ բերում տալիս Մոսոյին:

—Չէ, տերտեր, մեր չալած «Քիշմիշը» աժե 100 մանեթ:

Տերտերը իր հոգեպահուստ գումարից մի 100-անոց բերում տալիս է «անիծվածներին»:

Դրանից հետո Մոսոն գնում է հարսի դուռն է ծեծում: Հարսը դուրս է գալիս:

—Էս գիշեր տերտերի զակազով «Քիշմիշ» չալեցինք, դու էլ պար խաղցար, վարձը տուր:

Հարսն էլ կը հասկանա դրա ով եղնելը, ասում է.—Ախր ես փարա չունիմ, յուրտի՞ց տամ:

—Վնաս չունի կերթանք կեսարեդ գուզենք:

Հարսն էլ է սոսկալի անիծում, բայց վախենալուց գլխի ոսկիներից երկու հատ կտրում է ու տալիս Մոսոյին:

48(203). ՇԱՀԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ

1927 թիվ, Երևանի ձեթ-օճառի գործարան: Գլխավոր ինժիներ Գեգելյան Գևորգը և բամբակի տեսակավորող հայրենադարձ Աբրահամը աշխատանքի ընթմիջման ժամին անցնում են գործարանի բակից: Այդտեղ մի քանի պարսիկ բանվորներ նստել են նախաճաշելու ու հանգստանալու: Նրանք տաք-տաք խոսում են պարսկերեն:

Գեգելյանը դիմում է Աբրահամին.—Ես պարսկերեն չեմ հասկանում, ինչի՞ մասին են նրանք տաք-տաք զրուցում:

—Նրանք վիճում են Պարսկաստանի շահի ռոճիկի չափի մասին: Ա՝յ ան մեկը ասում է, որ պարսից շահի ռոճիկը կը լինի 5 հազար թուման ամսական, այն մյուսը առարկում է որ նրա ռոճիկը ամսական կլինի ոչ պակաս 10 հազար թումանից, մյուսն էլ հակաճառում է, որ շահի ռոճիկը 20-25 հազար թուման կը լինի… իսկ հրեն անկյունում նստածը (զարմացած) բացականչեց. «Էդքան ռոճիկն որ կստանա ի՞նչ կանե, ուրեմն շահը ամեն օր կրնա տժվժիկ ուտե»:

49(204). ՀՈՐՍ ԾԱՆՈԹ ԴՈՒՔՆՉԻՆ

Հերս Նախչվան լ՚ավ դուքյ՚ան է ունեցե, ինքը լավ ուտող-խմող է էղե, անունը կհասնի մե ջահել շատ հարուստ դուքնչի տղի: Էս տղեն կուգա հորս հետ կծանոթանա, մեկ-էրկու կէրթան-կուգան: Մեկ օր էլ հորս կսե.—Քեռի, կնոչս ջեբը դըսեն է՝ այսինքն՝ կինս սրա-նրա հետ է լինում:

Հերս կսե.—Ծո, ի՞նչ կսես, քեզ պես լավ տղի կնիկը էտման էղնի՞: Էքվան կուգամ ձեր տուն, առակ՚մ կսեմ, թե մարթկություն ունի, կհասկնա՝ թարկ կանի, թե չէ՝ թքի հեռացի:

Էս տղեն լավ պատրաստություն կտեսնի, հորս կկանչի, հերս կուգա էսոնց տուն: Կնստեն կուտեն-կխմեն, զրուց կէնեն, խոսկ կբացվի, հերս մի առակ կսե: Կսե.

Մե մարթ, մե կին կունենա, էս կինը կուզե սիրող պահե, կսե. «Կեցի մեյ՚մ մարթուս փորցեմ, տեսնեմ՝ ինչ կէնե, նոր սիրող կպահեմ»:

Մեկ օր էս կինը կվերցնի մարթու ամենալավ, թանգնոց սամուր քյ՚ուրքը կմաքրի ու էտ մաքրելու ժամանակ քիչ՚մ տեղ կվառի կկախի: Իրիկվան տխուր-տրտում կնստի, մարթը տուն կուգա, կսե.—Բարի իրիկուն, կնիկ:

Կնիկը կամաց կսե.—Աստծու բարին:

Կսե.—Էդ ի՞նչ է էղե, ընչի՞ ես տխուր:

Կսե.—Ի՞նչդ տխուր չէղնիմ, էն սամուր քյ՚ուրքտ հարթուկելու ժամանակ կրակ ընգավ, քիչ՚մ տեղ վառվավ:

Կսե.—Ոչինչ, բան չկա, զգուշ էղի, էլ չվառես:

Կնիկը կսե. «Էս ինչ լավ էր, բան չսավ»:

Մեկ օր էլ կվերցնի մարթի ամենալավ, հախճապակե թանգանոց նարգիլեն կլվա, կմաքրի և կզարկե կջարթե: Էլի տխուր-տրտում կնստի: Իրիգունը մարթը կիգա կասի.—Կնիկ, էսօր ինչի՞ ես տխուր:

Կասե.—Մարթ ջան, նարգիլետ լվալու ժամանակ ջարթվավ:

Կսե.—Բան չկա, տու սաղ էղնիս, զգուշ կաց, էլ չկոտրի

Կնիկը կսե. «Էս ինչ լավ է, ինչ ջարդեմ, ձեն չի հանե»:

Էսոնց մե հատ լավ իբրուխ-ջրաման ունեն, էն մյուս օրն էլ իբրուխը կը զարկե քարին, կկոտրե: Իրիգունը մարթը տուն կգա կտեսնի՝ կնիկը տխուր-տրտում նստե, կսե.—Կնիկ, ինչի՞ կտրորվիս, էտ ի՞նչ է էղե:

Կսե.—Իբրուխը տարա լվալու, ձեռնես ընգավ, կոտրվավ:

Մարթը որ կլսե, էրկու ձեռնով ծնգներուն կզ՚արկե, հոնգուր-հոնգուր կուլա:

Կնիկը կսե.—Այ մարթ, ինչի՞ կուլաս չորս հարիր մանեթնոց սամուր քյուրքտ վառավ, բան չասիր, հարիր մանեթնոց նարգիլետ վառավ, բան չսիր, էտ էրկու մանեթնոց իբրուխի համար ընչի՞ կուլաս: Կուզես, էքվան տաս հատ առնեմ բերեմ, էլ մի տրորվի:

Մարթը կսե.—Սուս, կնիկ, սուս, իմ դարդես վազն արի, իմ դարդս անբուժելի է:

Կսե.—Ի՞նչ է էղե, ընչի քու դարդտ ի՞նչ դարդ ի, որ անբուժելի է:

Կսե.—Կնիկ, իմ նամուս, իմ տղամարթությունս մենակ էտ իբրուխն էր տեսել, ես ի՞նչխ էքվան էրթամ մեկ ուրիշ իբրուխի ցույց տամ:

Կնիկը կչոքե մարթի առաչ, կսե.—Այ մարթ, ընձի ներե, ես իմ կնիկ հալովս պետք է գնայի սիրող պռնեյի, իսկ դու քու տղամարթ հալովտ չէիր ուզե քու տղամարթությունտ պղնձի՚մ կտորի ցույց տալ:

Էստեղ էտ ջահել տղի կնիկը կհասկնա էտ առակի միտքը ու իրեն սիրող պռնելու արհեստը թարկ կէնե:

Էտորեն էտև էտ տղեն հորս սրփի տեղ կպաշտեր:

50(205). ՈՎ Է ՄԵՂԱՎՈՐԸ

Ձմեռվա մեկը էման էրկան կեղնի, մալի ալաֆը խըլըսել է, գարունն էլ լավ չի բացվել, կանանչ չկա, հըմը իլաջը ինչ. մալը դուս թողնին կը չաիրները, իրկունը մութը կնկնի, բերեն նես կէնեն գոմը: Էլի էդման հարի կանանչը լավ'մ բուսնի:

Պառվի'մ մեկը զաբուն կով'մ կունենա, գեղի բուղեքը էդ կովին օր տեսնին կը, մեկը կերթա թռնի կը կովի վրեն, մի բուղե'մ էլ էդ բուղի վրեն, զաբուն կովի ոդքը կոտրի կը: Կովի տերը կուտա դատարան: Հիմի բուղի տիրոջից պահանջում են բացատրություն, նա էլ պատմե կը:

—Աղա դատավոր, էդ մարդու գանգատը տեղին է, ա՛յ ըսենք՝ էս կնիկը կովն է (ցույց կտա մոտը նստած պառավ կնոջը), դու էլ բուղեն ես, թռար վրեն, ես էլ էկա թռա քու վրեն, էս կնիկն էլ զապուն, կնիկ ընկավ ոտքը ջարթվեց դու ի՞նչ մեխք ունիս,—ասում է բուղի տերը:

51(206). ԱՆԱՐԱՏ ԱՂՋԿԱ ՄԱՍԻՆ

Աքուլ տերտերին[111] հարցնում են.

—Տերտեր ջա՛ն, ըսա, հեչ անարատ աղջիկ պսակել ե՞ս:

—Օրհնվա՛ծ, յընչի չես ըսե՝ տերտե՛ր հեչ անարատ աղջիկ կնքել ե՞ս:

52(207). ՄԵՌԵԼԻ ԴԱԳԱՂԸ

Մեռել տանելու ժամանակ, ինչպես է լինում դագաղը դիպչում է Աքուլ տերտերին:

—Այ օղուլնե՛ր, կամա՛ց՝ մեռելը ոռս կոխիք:

[111] Աքուլ տերտերը մեծ ժողովրդականություն էր վայելում Ալեքսանդրապոլում: Նա մարդասեր, չքավորներին օգնող, շիտակ բնավորության մարդ էր: Բայց ուտողխմող, ստախոս, իրա խոսքերը և դարձվածքները երբեմն համեմում էր տերտերին անվայել, բայց ցայտուն խոսքերով ու հայոյանքներով (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

53(208). ՏՈԼՄԱ ՏԵՐՏԵՐԸ ՈՒ ԿՈՄՍՈՄՈԼՆԵՐԸ

Տոլմա տերտերը մի խեղճ, անճարակ մարդ կլինի:

Կոմսոմոլները միշտ դրան «ձեռք կառնին»:

Մի անգամ էլ նրան հետապնդում են ու ասում.—Կորչի՛ կրոնը, կորչի՛ տերտերը:

Տոլմա տերտերը նրանցից փախչում է, մտնում է եկեղեցին ու սկսում է լաց լինել:

Աքուլ տերտերը հետաքրքրվում է, թե ինչու է լաց լինում:

Տոլմա տերտերը գանգատվում է, որ կոմսոմոլները իրան դադար չեն տալիս, հիմա էլ ասում են. «Կորչի՛ կրոնը, կորչի՛ տերտերը»:

Աքուլը իսկույն դուրս է գալիս, հասնում է կոմսոմոլներին ու ասում.

—Կեցցե՛ տերտերը

... ձեր մերը:

54(209). ՏԵՐ ՄՈՎՍԵՍԸ

Լենինական բոլորից հարգված տերտերը Տեր Մովսեսն էր: Էնոր պես գրագետ, խելացի տերտեր չկար: Մեկ անգամ Տեր Մովսեսը մե տուն'մ կմտնի, կտեսնե՝ գաթա կէնեն, պատրաստություն կէնեն:

Կսե.—Էս ի՞նչ կէնեք:

Կսե.—Տերտեր ջան, պատրաստություն կտեսնենք, կէրթանք Տեր Օհանես՝ ուխտ, որ հարսիս տղա էղնի:

Տեր Մովսեսը կսե.—Ծո, բանիտ կեցի, բանիտ, ոչ մե սուրփ տղամարթի կիշերվան կործը չի կրնա էնի: Էտ սրփի բան չէ, տղամարթու բան է: Հիմա ես ինչքան լավ կործ էնեմ, կնիկ մարթի պես կործ չեմ կրնա էնեմ:

55(210). ՄԱՏՈՌԸ ՎԿԼՈՒՉԻՏ ԷՐԻ

«Արմէներգո»-ի կառավարիչ Գեորգի Նիկիտիչ Փերիխանյանը գնում է Լենինական: Ուզում է անձամբ ստուգել «Լենտեկստիլ» կոմբինատի էլեկտրական ցեխը: Պահանջում է հերթապահ մանտյորից օրամատյանը:

Օրամատյանի մեջ Փերիխանյանը կարդում է հերթապահ մանտյորի գրածը.

«Մատոռը վկլուչիտ էրի՝ յոռեն մուխ դուս էկավ»:

56(211). ՄԻԼԻՑԻԱՊԵՏ ԱՇՈՅԻ ԴԱՏԸ

Միլիցիապետ Աշոն ուզեցել է մի կոմերիտական ջահել աղջկա բռնաբարել, բայց աղջիկը դիմադրել է և բան դուս չի եկել:

Աղջիկը այդ մասին գանգատվում է քաղկոմում: Քաղկոմ են կանչում աղջկան և Աշոյին: Աշոն քաղկոմ է գնում ոչ թե մենակ, այլ իր կնոջ հետ, որը լինում է չափազանց տգեղ:

Աշոն կնոջը կարգադրում է միջանցքում սպասել, իսկ ինքը գնում է ներս:

Աղջիկը պատմում է թե ինչպես միլիցիապետ Աշոն իրան չարչարեց, բայց ինչ որ ուզում էր, տեղի չունեցավ:

Խոսքը տալիս են միլիցապետ Աշոյին, և նա ասում է, որ ինչ որ պատմեց աղջիկը միանգամայն ճիշտ է:

—Իսկ ի՞նչ կարող ես ասել քո արդարացման համար,—հարցնում են Աշոյին:

—Էս սհաթիս ըսեմ, մի ռոպեով ներողություն,—ասում է Աշոն ու կարիդորից նես է կանչում իրա կնոջը:—Ահա, աշեկ, իսիկ իմ կնիկս է, դուք խղճով ըսեք, կարելի՞ է էս տեսակ կնկա հետ գործ ունենալ:

Ներկա եղողները չեն կարող զսպել իրանց ծիծաղը և Աշոյին ենթարկում են թեթև տուժի:

57(212). ԲԺԻՇԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՀԻՎԱՆԴԸ

Ղուկասյանի շրջանի Բավրա գյուղի գյուղացին տառապում է մեզասեռային հիվանդությամբ: Իր կնոջ հետ միասին նա գալիս է Լենինական ու գնում է վեներոլոգ Ղուկասյանի մոտ ընդունելության:

—Ի՞նչ կա,—հարցնում է Ղուկասյանը:

—Բժիշկ ջան, անդամս ցավի կը:

—Բաց արա, տեսնեմ:

Գյուղացին քաշվում է, դժվարանում է բաց անել, ցույց տալ: Կինը քաջալերում է.—Յընչի՞ կը քաշվիս, բաց էրա, հանե, բժիշկ է խո չի ուտե:

58(213). ԳՅՈՒՄՐԵՑՈՒ ՎՐԵՆ ԴԱՆԱԿ ՉԻ ԲԱՆԻ

Երևանում «Ալյումշին» շինվարչության բանվորներից մեկին վեճակռվի ժամանակ դանակով վիրավորում են: Նրան իսկույն տանում են 3-րդ հիվանդանոց: Շինկոմի նախագահը մի բանվորի հետ գնում են հիվանդանոց՝ հիվանդին տեսնելու:

Հիվանդանոցի դռնապահը լինում է մի գյումրեցի ծերունի: Նրանց ներս չի թողնում, մինչև որ չիմանա, ո՞ւմ են եկել տեսնելու:

Տեսության գնացողները ասում են, որ նա նոր է վիրավորված, բանվոր է, ինքն էլ գյումրեցի:

—Մեր հիվանդանոցը գյումրեցի չկա, օր էղներ ես գիմանայի:

—Բնիկ գյումրեցի չէ,—պարզաբանում է բանվորը, հմը վաղուց կապրի Լենինականում:

—Տնաշեն, ըսա օր գեղացի է,—ասում է ծերունի գյումրեցին,—ախր գիտեմ օր գյումրեցու վրեն դանակ չի բանի:

59(214). ԳԵՂՋՈՒԿ ԿՆՈՋ ԲԺՇԿԻ ԳՆԱԼԸ*

Մե կին ա ըլնում, գնում ա Երևան՝ բժիշկի (շատ հին վախտերի բան է): Գնում ա կայարան իրա յոթը-ութը տարեկան թոռի հետ, հանկարծ նկատում ա, օր միլիցան գնում ա, վազում ա միլիցի ետևից, վոր միլիցուն հեծնի: Ուզում ա, օր միլիցուն հեծնի, էս միլիցեն հետ ա նայում:

—Մայրիկ, ի՞նչ էս ուզում ընձանից:

—Պըտի հեծնեմ քըզի, օր ընձիկ տանիս իմ քուր Հայկանուշի տուն:

Հանկարծ միլպետն է անցնում: Մելիցեն ասում ա.—Մայրիկ, մելիցուն չեն հեծնի, հենա միլպետը, գնա միլպետին հեծնի:

Վազում, գնում ա միլպետի ետևից և հեծնում է նրան:

Միլպետը ետ նայեց.—Մայրիկ, չի կարելի, էդ ինչ ես անում:

—Միլիցուն խեծա չթորկեց, ընձի ըսավ օր՝ գնա խեծնի միլպետին, մկա դու պըտի տանիս իմ քուր Հայկանուշի տուն:

Ըպը.—Մայրիկ, ոչ միլիցուն կհեծնին, ոչ էլ միլպետին, հենա տրանվան, գնա տրանվեն հեծի:

Մկա ես վազեցի, վազեցի, վազեցի հազիվ հասա էդա տրանվին ու կճրվամ.—Տրանվաճի, տրանվաճի:

Տրանվեն ի մխեց: Շոֆերն ի տեսավ՝ ես շիշկրուկ եմ, խուրջինս ի թալեց նես: Մկա գացինք: Գացինք, գացինք, տրանվեն ի մխեց (նորից կայնավ): Տրանվաճին ընձի ըսավ.—Մարե, իջի:

—Քու կյանք մեռնի, քու արև մեռնի, սևավոր ծուռ ամ, քշե իմ քուր Հայկանուշի դու՛ռ:

Ըպը.—Մարե, տրանվեն գծիցը չի ընկնի:

Շոֆերն ի տեսավ ես շիշկրուկ եմ, խուրջինս ի թալեց դուրս: Մկա գացի, գացի, հասա իմ քուր Հայկանուշի տուն: Փշուր մի պագտըվանք, փաթըթվանք, փշուր մի շաքար խմինք, չայ կերանք: Իմ քուրը, թե.—Հիմա բաղնիս կամ:

Ըսի.—Հը՞, օղո՛րթ: Փշուր մը առ՝ ուտինք, ի՞նչ կեղնի:

Իմ քուրը թե.—Քուր, բաղնիս չի ուտիր, կլոգնան:

Ըսի.—Հը՞, օղո՛րթ:

Գացինք, ըմա լողգըցանք, ըմա լողգըցանք, կարմրետակ եմ եղե:

—Բժիշկ ջան, ան, մըկա էկեր իմ, իմալ օր գինաս, ըմալ էլ էրա:

Ըպը.—Մայրիկ ջան, մենք քեզ ոչինչ չենք անի: Որտեղդ ա ցավում:

—Մեկ իմ սիրտ, մեկ իմ գլխուս գաղափար, մեկ իմ սիրտ, մեկ իմ գլխուս գաղափար (ձեռքով գլխի փոխարեն սիրտն է ցույց տալիս, սրտի փոխարեն՝ գլուխը):

Ըպը.—Մայրիկ, պառկի նայեմ:

—Քու կյանք մեռնի, քու կնիկ մեռնի, սևավոր ծուռ ամ, քառասուն տարի իմ մարդ իմ ջան չը տեսեր ա, մկա դուն պըտի տենամ:

Ըպը.—Մայրիկ, օր չընայեմ, ի՞նչ գիտեմ, թե որտեղդ ա ցավում: Քեզ պետք է սրսկենք:

—Ընձի սրսկում-մրսկում հարկավոր չէ:

—Մայրիկ ազգդ ի՞նչ է:

—Խոյ եմ, խա՛յ քրիստոնյա եմ, բժիշկ ջան, հանուն հոր և որդուվո և սրբո, ամեն: (Խաչակնքում է):

Էս յոթը տարեկան թոռը, հասկանալով, ըսմ ա.—Մարե, մենք ինչյան կը գրվինք:

—Ի՜, սևավոր ծուռ ամ, տիֆ էկավ՝ տարավ Օնոյ, Մնոյ, մնաց Խըչո՞ն: (Յանի թե Խչոյան կգրվին):

Հետո բժիշկն ըսըմ ա.—Մայրիկ, ձեր ձվերը մրսած են:

—Քու կյանք մեռնի, քու կնիկ մեռնի, սևավոր ծուռ ամ, օրի քունը դըքըվան[112] չի՛ մրսե, իմ նեքսևան մրսել ամ, քու կնիկ մեռնի, քու կյանք մեռնի, բժիշկ:

60(215). ՄԵ ԷՐԿՈՒ ԽՈՍՔ ԸՍԵՄ ՄԵԼԻՔԻՑ

Մեկ օր՝ առատունը, էլա դուրս, տեսա՝ մեր հարևան Մելիքը կայնած փողոցը, ըսավ.—Բարև, կալոթկաջի:

Ըսի.—Աստծու բարին:

Ըսավ.—Մոտ արի, բան պիտի ըսեմ:

Մոտեցա, ըսավ.—Էն բութկեն կտեսնի՞ս:

Ըսի.—Քոռ չեմ, ընչի՞ չեմ տեսնի:

Ըսավ.—Էնտեղ լավ ռախի կա, ռախի՛մ չե՞ս առնի:

Ըսի.—Չէ:

Ըսավ.—Պիտի առնիս:

Ըսի.—Չեմ առնի:

Բիրդա՛ն փաթթվավ թուշս պաչեց,—Կալոթկաջի ջան, հոքուտ մեռնիմ, գլուխս կոտրե, խաթրս մի կոտրե:

Տեսա՝ չեմ կրնա յախես թափե, ըսի.—արի առնեմ:

Գնացինք բուտկեն, ըսի.—Մամիկոն ջան, էսոր մե ռախի՛մ տուր:

Էս ռախին լցեց, էն խմեց: Տեսա՝ Ապրհամը էկավ, ըսի.—Ո՞ւր կէրթաս:

Ըսավ.—Վար կէրթամ:

Ըսի.—Արի, մե ռախի՛մ էլ դու խմի:

Ըսավ.—Չեմ խմի ու գնաց:

Մելիքը ընգավ հետևից ու սկսեց կանչել. Արի՛, արի՛:

Ըսի.—Ընչի՞ կը կանչես, էն չ՚ուզի խմի:

Ըսավ.—Կուզի:

Ասի.—Մելիք, կայնի, էսոր վրա մե առակ ըսեմ:

Ըսավ.—Ըսա:

Ըսի.—Ախչկա մեկին նշանեն կը, հարսնիք կէնեն: Հիմի հարսին հարսնախպեր է հարկավոր, հարսն էլ ախպեր չունի: Կը կանչեն հա-

[112] Դըքըվան - դուրսն է (ծանոթ. բանահավաք Վ. Առակյանի):

ռևանի տղին, կասեն՝ էսոր հարսնախպեր կէրթա՞ս: Կսե՝ ինչի՞ չեմ էրթա: Էսոնք հարսանիք կէնեն, էտ տղին էլ կը տնեն հարսնախպեր ու կէրթան: Ճանապարհի կեսին էսի կամաց հարսի անգճին կսե՝ խոմ դուրս-մուրս գնալ չե՞ս ուզե: Կսի՝ կուզեմ: Էսի կսե՝ Է՛յ, հարսնվորներ, կայնեք: Շենլիգը կը կայնցնե, հարսին կառնե կը տանե ձորի՛մ մեջ, կսե՝ ծո, էսի լավ թայնա տեղ է, էսոր մեյ՛մ դրստեմ: Էսոր լավ կդրստե, կբերե: Ճանապարին իր ախպեր տղին կսե՝ ծո հարսին տարա մեյ՛մ տեղը դրի, մեյ՛մ էլ չէրթա՞նք, տամ՝ դու տանես: Կսե՝ ինչի՞ չէ, լավութեն կուզես, էրե: Կսե՝ ինչի՞ չէմ ուզե հարսի հաշվին մեկ չէ, տաս լավութեն կէնեմ: Մե 6 կիլոմետր կէրթան, էսի հարսին կսե՝ գլոխս կցավի, սիրտս կնեղվի, իմ ախպեր տղին կանչեմ, թող մտնի քու թևտ, ես քիչ՛մ կուզեմ նստեմ: Ընգերին կկանչե, կմտցնե հարսի թևը, ինքը հետ կմնա: Էսոնք մի քիչ կէրթան, էս ընկերը հարսին կհարցնե, կսե՝ խոմ դուրս-մուրս էրթալու կարիք չունի՞ս: Հարսը կսե՝ չէ, չէ, էնբես կմռմռա, որ էլ հինգ օր չեմ կրնա դուրս էթա: Թե կուզես, դու առանց ընձի գնա: Հիմա դու ես, Մելիք, թե կուզես դու առանց էնոր խմի, ընչի՞ էնոր կզոռես:

61(216). ՊՈԼՈԶ ՄՈՒԿՈՒՉԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Պոլոզ Մուկուչի գերեզմանը գտնվում է իր հայրենի Լենինական քաղաքի կենտրոնական գերեզմանատան կենտրոնում: Շիրմաքարը ունի հետևյալ տեսքը. ցածը երեք շարք աստիճաններ՝ սև տուֆից, որոնց բարձրությունը գետնից մոտավորապես մի մետր է: Աստիճանների քարե պատվանդանի վրա տեղավորված է կարմրավուն տուֆից շինված սրբատաշ կոնաձև մի քար՝ մոտ 1,5 բարձրությամբ: Առջևից կոնաձև քարը զարդարված է (քանդակված է) ցածը համաթևանի փոքրիկ մի խաչով, նրանից վերև՝ մի պարզ ձևի ծաղիկով: Քարի մեջտեղում քանդակված է.

«Մելքոնյան Մկրտիչ Ղազարի (Պոլոզ Մուկուչ), ծնվեց 1881 թ., վախճանվեց 1931 թ.»

Արձանի հակառակ կողմում քանդակված է.

«Հիշատակ բանաստեղծ Ավետիք Իսահակյանից»:

Ե. ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(217). ԵՐԲ ԸՆԿԱՎ*

Հայրը լսում է, որ երեխան լաց է լինում:
—Ինչո՞ւ ես լալիս:
—Աթոռից ընկա վար:
—Ե՞րբ ընկար:
—Երեկ՝ երեկոյան:
—Ինչո՞ւ չը լացեցիր այն ժամանակ:
—Մարդ չկար:

2(218). ՊԱՊԻՐՈՍ ՔԱՇՈՂԸ*

—Պապիրոս՚մ տա՞ս:
—Համեցեք:
—Սպիչքե՚մ է՞լ տաս:
—Մեկեն ըսա՝ քու տեղդ պապիրոսը ես քաշեմ:

3(219). ՀԱՐԵՎԱՆՆԵՐՆ ԷՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ*

Էրկու մոտիկ հարևաններ են էղնում էլի, իրար շատ մոտիկ տղամարդիկ: Բանից դուրս է գալում, որ էդ հարևանից մեկը մեկելի կնգան ձեռ ա բերել: Ձեռ ա բերել, կնգան մարդն էլ կասկածում ա, բայց չի կարողանում բռնի:

Մեկ օրըմ ասում ա.—Այ կնիկ,—ասում ա,—ես տեղ՚մ պիտի էրթամ,—ասում ա,—հացմաց սարքի,—ասում ա,—էրթամ, մի էրկու օր,—ասում ա,—կարող ա ուշանամ:

Կնիկն էլ հաց-բան սարքում ա, մարդն առնում գնում ա: Որ գնում ա, էս կնիկն արխային ա լինում, ասում ա. «Հըմ, ֆողս՝ գլխիդ,—ասում ա,—դու գնա,—ասում ա,—ավելի լավ էղավ, էղավ,—ասում ա,—քեֆս տեղը կգա»:

Մարդը գնալու պես՝ ինքը էդ հարևանին աչքով է անում, էս հարևանը ներս ա ընգնում: Որ ներս ա ընգնում, մարդն էլ բուսու ա պահում, թե. «Հլա տեսնամ՝ ինչ ա», ետևեն ետ ներս ա ընգնում: Ներս ա ընգնում, գալիս աշում ա՝ կնիկը չկա: Էս կողմը՝ կնիկ՝ էն կողմը՝ կնիկ, ո՛չ կնիկը կա, ո՛չ մարդը կա, էս կողմ, էն կողմ, վերջը ներս ա մտնում ջիլիզ, խորունկ չինարը, որ կնիկը նստած գուլպա է շինում, չուլկի, շտոպ ա անում էլի: Չուլկի ա կարկատում: «Տո,—ասում ա,—այ մարդ, իմ կնիկը տանն է, նստած չուլկի ա շինում... Ես, էս. Էս ինչ հիմար մարդ եմ,—ասում ա,—էս, էս՝ կնկաս վրա կասկած դնել, հիմարություն եմ անում, մի բան էղնի, բան, էն կողմ, էն կողմ...» Էդպես մտածմունքի մեջ՝ թասեն տալում գլուխը, մարդը ըտեղ մեռնում ա... կաթված ա լինում էլի: Կնիկը՝ էս կողմ, էն կողմ... իսկ էն մեկն էլ, կնիկը, դու մի ասա, կոխել է խալադիլնիկի մեջ, խալադիլնիկի մեջ ա մեռել:

Վերջը էս էրկուսը որ գնում են էն աշխարհը, իրար տեսնում են:

—Տո,—ասում ա,—հարևան ջան, ես հլա կնգաս վրա էսպես բան կասկածեցի, թասեն տվավ գլուխս,—ասում ա,—կաթվածք ստացա, մեռա: Էս դու ե՞րբ ես մեռե, որ ես խաբար չեմ:

—Տո,—ասում ա,—քու տունը չքանդվի, ի՞նչ պիտի խաբար էղնիս, դու որ էդ վախտ ընգար մեռար, ես ձեր խալադիլնիկի մեջը սառել էի:

4(220). ԷԴ ԲՐՆՁԻՑ ԷՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՓԼԱՎ ԵՄ ԳՑԵ*

Մի մարդ կապրի, կապրի, կապրի ինձի, քեզի, նրան պես կապրի, կգա մեռնելու ժամանակը:

Կնգան ըսում է.—Կնիկ,—ըսում է,—ես աստվածապաշտ մարդ եմ, չեմ կարողանում մեռնի, որովհետև մինչև չխոստովանվիմ տերտերին իմ հանցանքներս, սիրտս թեթևանա, նոր մեռնիմ, էլի, տանջվում եմ: Գնա տերտերին կանչի,—ըսավ,—իմ հանցանքները խոստովանիմ: Տերտերին լավ է էլի ասելը:

Կնիկն էրթում է տերտերին բերում է:

—Տեր հայր,—ըսում է,—էսիկ իմ կինս է, շատ ազնիվ ինձի եղել է կին, հավատարիմ, բայց ես՝ հիմարս, չեմ հասկցե, չեմ գնահատե իմ կնոջը, իրեք անքամ դավաճանել եմ իմ կնոջս (կյանքի մեջ էլի): Հիմի,—ըսում է,—սիրտս լավ չէ, էլի, վատ եմ ինձ զգում, մեղքերիս թողություն ըրա, թող հանգիստ մեռնիմ:

Տերտերը տրան թողություն ընում, փողն առնում է, ուզում է, որ գնա, էս անգամ կինն է անհանգստանում: Ասում է. «Իմ մարդս իրեք անգամ ինձի դավաճանել է, չէր կրում մեռնի, բա էքուծ ես ի՞նչխ պիտի մեռնիմ»:

—Տեր հայր, ինձի մտիկ, ես էլ խոստավանվիմ:

Տերտերն ի՞նչ, տերտերն էլի պիտի փող պոկի:

Կըսե.—Տեր հայր,—կըսե,—ես,—կըսե,—ժամանակին,—կըսե,—շատ անգամ եմ դավաճանել իմ մարդուս: Մարդս որ իրեք անգամ է դավաճանե, չէր կրում մեռնի, բա ես ինչքա՞ն անպետք կին եմ եղե իրան:

—Դու ի՞նչ ես ըրե:

Մի աման է բերում, դնում է էդտեղ, բերանը փակ, մեջը՝ բրինձ: Ասում է.—Ես էսպես կարգ ի սահմանե՝ ով ինձի գար գործի, պիտի բրինձ մը էդիկ ամանի մեջը գցեր, նոր:

Մարդը շշմում է. «Յա, էս ի՞նչ բան է, ուրեմն, իմ կնի՞կ էլ է դավաճանե ինձի...»:

Ըսում է.—Բռնե ձեռդ,—մարդուն:

Էդ փարչի միջի բրինձը լցնում է էսպես մարդու բուռի մեջը՝ լիքը բրինձ: Հետո ըսում է.—Տեր հայր, էդ բրինձից էլ էրկու անգամ,—ըսում է,—փլավ եմ գցե:

5(221). ՍԵՎ ՕՐՎԱ ԳՈՒՄԱՐԸ*

Մի ջհուդ, ասիկա ուրիշ բան է, էնիկ պրծավ[113]:

Հարուստ ջհուդ՚մ է էղնում՝ հրյա, կնոջն հետ ապրում է, կինն ըսում է.—Այ մարդ,—ըսում է,—սև օրի համար, մեր սև օրի համար փող շինենք, ետ գցենք էլի, կասա սարքենք...

Թե.—Հա, կնիկ, լավ է:

—Ինչքան,—կըսե,—դու ինձի մոտենաս,—կըսե,—մի բանըմ քցե դախլի մեջ: Էդիկ չի էրևա, բայց ժամանակին՝ սև օրվա համար, մի գումար՚մ կհավաքվե:

Մարդը կ՚համաձայնի՝ հարուստ վախտն է: Ինչքան կ՚մոտենա, իրեք-իրեք ռուբլին կ՚քցե կասեն: Իրեք մանեթեն ավել չի քցե:

Բայց կանցնի տարիներ, ըտոնք կքյասիբանան, կըսե.—Կնիկ,—կըսե,—բեր ղալլեն բանանք,—կըսե.—հիմի ահագին փող է հավաքվե, փող չունենք:

—Հա՛,—կըսե,—բաց:

Ղալլեն որ կ՚բանա՝ քսանհինգնոց, հիսունընոց, հարյուրընոց՝ ղալլի մեջը, մարդը կ՚շշմե, կըսե.—Այ կնիկ,—կըսե,—էս հանելուկ է, բա ի՞նչ է...—կըսե,—ես,—կըսե,—իրեք մանեթից ավել չեմ քցե,—կըսե,—էս ի՞նչ բան է:

—Հողեմ գլուխդ,—կըսե,—հո բոլորը քեզի պես ցիգան չե՞ն:

6(222). ՋԵԲԿԻՐԸ ՏՐԱՄՎԱՅՈՒՄ

Տրամվայի մեջ մի մարդ կնոջ շրջազգեստի տակի գրպանից հանում է փողը: Գողին բռնում են: Տուժվածի հետ գողին տանում են միլիցիա: Հերթապահը հարցնում է կնոջը.—Քույրիկ, պատմիր գործի եղելությունը:

—Ինչ պատմեմ, բալա, տեսա որ էս մարդը կամաց-կամաց ձեռքը տարավ փեշերիս տակը...

—Բա, ինչի՞ ձայն չը հանեցիր:

—Ես գիտեի թե բարի նպատակով է:

7(223). ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ԱՌԱՎ

Մի գյուղացու կնոջ մի մարդ հանդում բռնաբարում է:

Գործը տալիս են դատարան:

Դատավորը հարցնում է կնոջը.—Պատմիր մանրամասը, թե ինչ հանգամանքներում մարդը քեզ բռնաբարեց:

—Չը գինամ, մենակ գինամ որ մարդը հանգամանքը առավ յետևս ընկավ...

[113] Բանասացը նկատի ունի նախորդ պատմությունը (ծանոթ. կազմողների):

8(224). ՄԵ ՃԱՐ'Մ ԿՐՆԱ՞Ս ԷՆԵ

Ղայֆետան թաբի Ադայենց Սիմոնը թունդ հարբած գալիս է տուն: Այդ ժամանակ նրա դրկիցը մեռած կլինի ու նրա կուբին հայաթում դրած: Իրան կորցրած Սիմոնը մտնում է դագաղի մեջ և քնում:

Սիմոնի կինը գալիս տեսնում է մարդու վիճակը ասում է.—Յավաշ, դու իմ վայը տաս, տես գլուխդ ինչ խաղ խաղամ,—ասում է դագաղի ծածկիչքով ծածկում է ու ինքը նստում է մոտը:

Երբ որ Սիմոնը կը զարթնի, կըսե.—Տո, էս ես յուրտեղ եմ:

Կինը.—Յուրտեղ ես, գերեզմաններն ես:

Սիմոնը.—Յըբը դու, իստեղ ինչ կենես:

Կինը.—Ես էլ եմ մեռե:

Սիմոնը.—Եփ ես մեռե:

Կինը.—Միտքդ չէ՞, մե տարիմ յառաջ:

Սիմոնը.—Դու հին մեռել ես, էստեղ ծանոթություն կունենաս, չե՞ս կրնա մե բութիլքե'մ ռախու ճար էնե:

9(225). ՀԻՎԱՆԴԸ ՔՐՏՆԱ՞Վ

Բժիշկը գալիս է իրա հիվանդին այցելելու:

—Բժի՛շկ, հիվանդը մեռավ:

—Մեռա՞վ,—ասում է բժիշկը,—բայց մեռնելուց առաջ հիվանդը քրտնա՞վ, թե՞ ոչ:

—Այո, քրտնավ:

—Էդ լավ է, որ քրտնել է,—պատասխանում է բժիշկը:

10(226). ԲԺԻՇԿԸ ԱՍԱՎ՝ ՄԵՌԱՎ, ՈՒՐԵՄՆ...

Նավի վրա մի մարդ հիվանդանում է, երկար ժամանակ անըզգա դրության մեջ է լինում: Կանչում են բժշկին, որը հաստատում է, որ մարդը մահացել է:

Ըստ ծովայինների օրենքի, վերցնում են մարդու դիակը, որ գցեն ծովը: Բանից դուրս է գալիս, որ մարդը մահացած չի լինում, ուշքի է գալիս ու արտասանում.—Ես չեմ մեռե, ես կենդանի եմ:

—Բժիշկը ասաց, որ մեռել է, ուրեմն մեռել է,—ասում են ու ջուրը գցում մարդուն:

11(227). ՄԻ ՊՈՒՏՈՎԿԱՅՈՎ

Մեկը պատահում է իր ծանոթին փողոցում, բարևում են իրար, խոսում, ի միջի այլոց մարդը հարցնում է ծանոթին.—Ինչպե՞ս է կնոջդ առողջությունը:

—Կինս այստեղ չէ:

—Բա որտե՞ղ է:

—Հաջողվեց մի սանատորիայի պուտովկա ճարեցինք, գնաց հանգստանալու:

—Ինչ լավ,—պատասխանում է մարդը,—մի պուտովկայով երկուսդ էլ կը հանգստանաք:

12(228). ՀԱՐՍՍ ՈՐ ԵԿԱՎ...

Մայրը վճռում է ամուսնացնել իր որդուն: Գտնում են հարսնացու: Նշանակում են օրը՝ երբ պիտի հարսանիք անեն: Մայրը պատրաստվում է հարսանիքին, որից հետո հարսին բերելու են իրանց տունը:

Մայրը մաքրում, լվանում է բնակարանը, քոշա-պուճաղը, դասավորում է տան իրերը, կահ-կարասիքը: Բայց իրերը իրա տեղը չի դնում, շկաֆը, դիվանը և այլն հակառակ կողմն է դարձնում:

Հարևանները տեսնում են ու հետաքրքրվում.—Այդ ինչո՞ւ կահ-կարասիքը իրանց տեղը չես դնում, շուռ ես տալիս:

—Ես գիտեմ,—պատասխանում է մայրը,—հարսս որ եկավ, իմ արածին չի հավանի, ամեն բան թարս կը դառցնե:

13(229). ԿՆՈՋ ՍԻՐԱՇԱՀԵԼԸ ԻՆՉ Է

Մի օֆիցեր ամբողջ գիշերը անցկացնում է մի կնոջ հետ: Առավոտյան կինը հեռանում է:

Օֆիցերը դադրած բեզարած, հալից ընկած կանչում է իր դենչիկին ու հարցնում.—Իվա՛ն, կարո՞ղ ես ասել կնոջ սիրաշահելը բավականությո՞ւն է, թե՞ չարչարանք:

—Իհարկե բավականություն է, ձերդ բարեծննդություն,—առանց տատանման պատասխանում է Իվանը:

—Ինչո՞վ կարող ես ապացուցանել, որ դա բավականություն է, այլ՝ ոչ չարչարանք:

—Եթե դա չարչարանք լիներ, ձերդ բարեծննդությունը ինձ կը հանձնարարեր:

14(230). ԳԻՏԵՍ ՎՈՎ Է ՊԵՏՐՈՍԸ

Մի մարդու քննում են պարտիա ընդունելու համար:

Հարց.—Գիտե՞ս ով է Մաո-ցե-Դունը:

Պատասխան.—Յիմացել եմ, հմը չ'իդեմ վով է:

Քննող.—Ցավալի է, որ չգիտես ով է Մաո-ցե-Դունը: Լրագիր որ կարդայիր, ռադիո որ լսեիր, կիմանայիր ով է Մաո-ցե-Դունը: Քննությունդ չբռնեցիր:

—Լավ, հիմի էլ ես քեզի հարցնեմ,—ասում է քննվողը,—գիտե՞ս վով է Պետրոսը:

—Ի՞նչ Պետրոս:

—Սահակյան Պետրոսը:

—Ո՛չ, չը գիտեմ:

—Ափսոս, որ չ'իդես: Լրագիր որ քիչ կարդայիր, ռադիո որ քիչ'մ քիչ յականջ էնեիր... Գիմանայիր վով է Պետրոսը: Պետրոսը քու կնկատ սիրողն է:

15(231). ԻՆՉ ՀԱՄԱՐՆԵՐ ԿԱՆՑՆԻՆ

Մի երիտասարդ փողոցում տեսնում է մի շատ գեղեցիկ դեռահաս, ճաշակով հագնված տիկնոջ: Երիտասարդին չափազանց դուր է գալիս այդ նրբագեղ կինը և նա վճռում է ինչ գնով էլ լինի ծանոթանալ նրա հետ: Հետևում է կնոջը, ուր նա է գնում, ինքն էլ է գնում, մտնում խանութներ: Վերջապես կինը կանգ է առնում կենտրոնական փողոցներից մեկի տրամվայտրոլեյբուսի կանգառում:

Երիտասարդն էլ է գնում կանգնում կնոջ մոտ ու հարցնում նրան.—Ասացեք խնդրեմ, տիկին, այստեղ ի՞նչ համարներ են անցնում:

—Այստեղ շատ համարներ են անցնում,—պատասխանում է կինը,—բայց ձեր համարը չի անցնի:

16(232). ԲԱԼԱ ՋԱՆ, ՓՇԱՏ ԿԵՐ

Հայրը նստեցրել է իր փոքրիկ տղային թաղթին, գոգը լցել է փշատ, հետը խաղում է, կճպում փշատը տալիս տղին ու ասում.—Բալիկ ջան, փշատ կեր, փշատ կեր, որ քու փշատդ էլ մեծանա:

Մայրը սենյակում գործ է անում, ականջի տակով լսում է ամուսնու խոսքերը և, կարծես, ի միջի այլոց դիմում ամուսնուն.—Քա՛, էղնի, օր մի քանի'մ հատ էլ էդ փշատից դու քցես բերանդ:

17(233). ՔՅԱՍՏԱՆԱՆ

Մարդ ու կնիկ խռով կեղնին: Օրըմ մարդը մե բեռըմ քյաստանա բերե գը լցնե էրեխի յառաջ, կըսե.—Կե, բալա՛, կե, պուբուլըդ մենձընա:

Կնիգն էն կողմից կը չանչե ու կըսե.—Ը՛հ, գլոխըդ հողիմ, չի ֆայմե, օր էրգու հատ էլ ինքն ուդե:

18(234). ԹԱՅՈ՛Ւ, ԹԱՅՈ՛Ւ

Մի աղջկա պսակում են, նրա հարսանիքն է, հավաքվել են շատ հյուրեր: Բայց արի ու տես, որ հարսը մի «արատ» (պակասություն) ունի, հաճախ, իրանից անկախ, փորի քամի է բաց թողնում: Ինչպե՞ս ծածկել հարսանիքի ժամանակ հարսի «արատը»: Պառավ մորքուրը գտնում է ելքը: Գնում կանգնում է հարսի կողքին: Սկսվում է կերուխումը: Հանկարծ լսվում է հարսի փորի խանգարման ձայնավոր գործողություն:

Անձնազոհ մորքուրը իսկույն արձագանքում է.—Ամա՛ն, գրողը իմ պառավ յերեսիս, չեմ կրնա փորս պահե:

Հյուրերը ուշադրություն չեն դարձնում կատարվածին, շարունակում են իրանց կերուխումը: Բայց հարսի փորի խանգարման գործողությունները կրկնվում են ևս մի քանի անգամ, և ամեն անգամ մորքուրը իրա վրա է վերցնում հարսի «արատը»:

Երբ լավ ուտել-խմելուց հետոյ բոլորի տրամադրությունը բարձրանում է, հանկարծ տեղից վեր է բարձրանում քավորը, մի դատարկ ափսեի մեջ քցում է քսանհինգ ռուբլիանոց թղթադրամը ու ասում.—Այս սեղանի ճոխ պատրաստությունը մեր մորքուրի շնորքն է, բայց ափսոս նա հասակն առել է ու փորի «արատ» ունի, ահա ես տալիս եմ 25 ռուբլի, ով ինչքան կարող

է, թող տա՝ մեր մորքուրին ուղարկենք սանատորիա:

Գլուխները տաք հյուրերը քսակները բաց են անում և առատորեն թղթադրամներ գցում ափսեի մեջ: Ափսեն դիզվում է թղթադրամներով:

Քավորը թղթադրամներով լիքը ափսեն ձեռքին մոտենում է մորքուրին, որ նրան հանձնե փողերը... բայց հարսը չանչը գցում է փողերին, ասելով.—Թայրւ, թայրւ, վով տռե, վով փարեն առնի, բիթուն իմս է:

19(235). ԻՇՈՒ ԽԱՍԻԱԹԸ ԹԱՐԿ ՉԷ ԷՐԵ

Մի գյուղացի, էշը առաջը գցած, բարձրանում է Աբովյան փողոցով: Հասնում է համալսարանի շենքին: Տեսնում է, որ հեռախոսի սյան մոտ մի երիտասարդ է կանգնած:

—Տղա ջան, էս ինչ շինություն է:

—Համալսարանի շենքն է:

—Ինչ բան է համալսարանը:

—Համալսարանը այնպիսի մի տեղ է, որ մարդիկ էշ գալիս են, սովորում են ու դառնում մարդ:

—Ինչ լավ բան է,—ասում է գյուղացին,—էշս որ թողեմ, մարդ կը դարձնե՞ն:

—Անպատճառ կը դարձնեն: Կուզես էշդ թող դու գնա գեղ, մի տարի հետո էշդ մարդ կը դառնա, արի տար:

Գյուղացին էշը կապում է հեռախոսի սյունից ու ինքը գնում գյուղ:

Մի տարի անցնելուց հետո, գյուղացին գալիս է քաղաք, գնում է այն տեղը, որտեղ մի տարի առաջ թողել էր իր էշը: Տեսնում է, որ հեռախոսի սյան մոտ ահա եկավ կանգնեց մի երիտասարդ:

Գյուղացին մոտենում է.—Բարև տեսանք:

—Բարև, պատասխանում է երիտասարդը:

—Դու իմ էշն էիր, մարդ ես դառցե, էրթանք տուն:

—Ինչ ես դուրս տալիս:

—Քեզի ասըմ եմ՝ էրթանք տուն, չը գաս զոռովեն կը տանիմ, դու իմ էշն ես, ես քու տերն եմ:

—Խելքդ կորցրել ես, ինչ,—զայրանում է երիտասարդը,—ինձ հանգիստ թող, կորի՛ գնա:

—Չես գա հա՞, զոռով կը տանիմ...—Բռնում է երիտասարդի ձեռքից ու ուժեղ քաշում է դեպի իրա կողմը:

Համբերությունը կտրած, տղան մի քացի է տալիս գյուղացուն:

—Հըլը տեսե՛ք, մարդ է դառե, հըմը իշու խասիաթը թարկ չէ տվե:

20(236). ՁԻՈՒ ԵՎ «ՄՈՍԿՎԻՉԻ» ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Մի մարդ ու մի շոֆեր ծանոթանում են իրար հետ: Մարդը ունենում է մի պառավ ձի, շոֆերն էլ մի հին անպետք «Մոսկվիչ» ավտոմեքենա: Երկուսի մտքերում էլ կա ազատվել իրանց ապրանքներից, բայց այնպես «սաղացնեն», որ վնաս չունենան:

Շոֆերը ասում է իրա ծանոթին.—Արի «Մասկվիչս» տամ քեզ, ձիդ տուր ինձ:

—Համաձայն եմ,—ասում է ձիու տերը:

Երկուսն էլ գոհ մնալով իրանց գործարքից, գրավոր կերպով ձևակերպում են ձիու և «Մոսկվիչի» փոխանակումը:

Շոֆերը հարցնում է ձիատիրոջը.

—Ձիդ ի՞նչ այիբ ունի:

—Ախպեր, ձիս լծես՝ չի էրթա, նստիս՝ կը պարկի, ջուր ու խոտ տեսավ՝ ջիգրով կերթա: Իսկ քու մաշինեդ այիբ չունի՞:

—Իմ մաշինես դիզ տեղը զոռովեն կերթա, յոխուշը չի ելնի, հըմը դարիվարին իրան կտռտե կը:

21(237). ԿՈՐԱԾ ՄԱՆԵԹԸ

Երեխան կայնե լաց կեղնի: Էդոր հարցուն կը.—Ա՛յ էրեխա, ընչի՞ գուլաս, ի՞նչ է էղե:

Էրեխեն հեկեկալեն կսե, թե.—Մի մանեթս եմ կորցրե:

Տեսնում են՝ էրեխեն ձենը չի կտռե, հանում, մի մանեթ կուտան, որ լաց չեղնի, հմը ձենը չի կտռե, հա գուլա:

—Ա՛յ տղա, մանեթտ տվինք էլ ընչի՞ գուլաս:

—Հըբը, որ չը կորցնեի կդառնար երկու մանեթ, էդոր համար գուլամ:

22(238). ԴՈՒ ԱՐԽԵԻՆ ՄԵՌԻ

Մարդու մեկը ծանդռ հիվանդ կեղնի: Կնկան կանչե կը քովը, կսե.—Կնի՛կ ջան, դու ջահել, սիրուն կնիկ ես, ես օր մեռնիմ, ինձանե էդև գիտեմ, օր թազա մարդ բդի առնիս, հմը Գասպարին չառնիս, գիտես, օր ես էդորեն հազ չեմ էնե:

—Չէ, մա՛րդ ջան, հեչ թալաշ մի էնե, արխեին մեռի, ես ուրիշի եմ խոսք տվե,—պատասխանում է կնիկը:

23(239). ՏԱՏԻԿԻ ԵՐԳԸ

Պառավ տատիկը թոռան գրկե, ձեռքի վրա թոցնում էր ու հետը երգում.

«Թան, թան-թանա,
Պապիկը ուտե զվարջանա:
—Գրող ուտե պապիկը,
Տղեն ուտե, գրգե ընձի՝ զվարճանա»,—պատասխանում է հարսը:

24(240). ՄԵՌՆՈՂԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Թոշակառուներից մեկը ծանդռ հիվնդնա կը: Գիդե, օր բդի մեռնի, կնկան կանչե կը քովը կսե.—Կնի՛կ ջան, ես գիտեմ, օր բդի մեռնիմ, գնա՛ թոշակս ըստացի մի հատ'մ սհատ առ, մեռնելուս վախթը կապե թևս, օր էնտեղ գիդենամ սիրտս կաշխատի՞, թե՞ չէ:

25(241). ՈՐՏԵՂ Է ՓՂԻ ԲՈՒՆԸ

Էրկու ընկեր ճամփով կերթան, հասնին կը մեշեն: Մեկը կսե ընկերոջը.—Տե՛ս, տե՛ս փիղը ծառի վրեն գելնի:

—Յա՜, ա՛յ տղա, փիղը ծառի վրա կռնա՞ էլնի, օր էդման կսես:

—Ընչի՞ չի կռնա, էդ պիճի ճնճուղները իրանց պիճի հալով գելնին թառին կը, ղոճա փիղը ընչի՞ չի կռնա: Համ էլ էնոր բունը հոն է:

26(242). ԱՐԵՎ Է՞, ԹԵ՞ ԼՈՒՍՆՅԱԿ

Ամառվա զով լուսնյակ գիշեր էր: Մեկը հանդիպում է խմած մի մարդու հարցու կը, կսե.—Ախպեր ջան, էսիկ արև է՞, թե՞ լուսնյակ:

Էդ մարդը միտք կէնե իրան, իրան կսե.—«Թե ըսէմ՝ արև է, վայթե կռվի, թե ըսեմ՝ լուսնյակ է, էլի կռվի»:

—Ախպեր ջան, ղորդ ըսած ես էստեղացի չեմ, հարցուցեք այ էն մարդուց,—ասում է նա:

27(243). ՈՒՄ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Մարդ ու կնիկ իրարուց բաժնվին կը: Ամեն ինչ բաժնել խլսել են, մնա կը էրեխեքը: Դատավորը կսե.—Էրեխեքը մորը հասնի կը, էնոր համար, օր էնիկ է ծնե, էնիկ է պաե, մեծըցրել է:

Կնկա մարդը ռազի չի եղնի, կսե.—Տասը կապեկ քցեմ կը ավտոմատ կասան՝ բուլկի կառնիմ կը: Հիմի ըսէք՝ էդ բուլկին ո՞ւմը կէղնի, ավտոմատի՞ն, թե՞ իմը կեղնի:

28(244). ԴԱԳԱՂԱԳՈՐԾԸ

Դյուրկարը մեռելի համար կուպի շիներ կը: Տախտկները էման էր մըխե, օր արանքները բաց էր մնացե: Մեկը կսե.—Ա՛յ մարդ, ղայդին շիքե, արանքները շատ բաց է մնացե:

—Տախտկները բիթունքը գողցած,
Վերը՝ ժիտկոտ, վերը՝ թաց,
Ուստեն օր ուտե զոխ ու հաց,
Հըբը արանքները չի մնա՞ բաց:

29(245). ԻՆՉԻ Է ՊԵՏՔ ՊԱՐԱՆԸ

Օխթ հոգով քյուչով անցնելու վախթը տեսնին կը՝ ֆայթոն'մ կայնած էր, լցվին,կը ֆայտոնի մեջը: Ֆայտոնջին շշմած էդոնց կաշեր, հմը ձեն չի հանե:

—Դե, ախպե՛ր ջան, ֆայտոնդ քշե,—կսեն նստողները:

—Տղե՛ք ջան, պարան չունի՞ք,—հարցու կը ֆայտոնջին:

—Պարանը ինչի՞տ է պետք,—կսեն նստողները:

—Ձեզի կապեմ, օր չընկնի՞ք,—պատասխանում է ֆայտոնջին:

30(246). ՀՆՁՎՈՐԻ ՊԱՐԳԵՎԸ

Ռանջպարի մեկը գերնդով էման քաղ կէ-նե, որ կոմբայնին հավասար: Հարցուն կը, թե.—Ի՞նչխ կենես, օր էդքան քաղել ես:

Կսե.—Գերնդուս էրկու թարաֆն էլ սրեմ կը, օր համ տանելու, համ բերելու վախթը քաղե կը, էդոր համար:

Էդոր կսեն.—Արի՛, գնանք գեղի մեծավորի քովը քեզի պարկևադրեն:

Էդ մարդը ռազի չի եղնի, կսե-. Պարկե-վադրեն, առաջիցս լամպուշկա կախեն, էս հե-ղին էլ գիշերն էլ քաղել կուտան:

31(247). ՏՈ Բ... ՏՂԱ

Տո բ... տղա, դու ի՞նչ ես օր, քու հերդ օր կար, մեծապատիվ մարդ էր, օղորմի էնոր հո-գուն: Կըսեն՝ մե օր՝մ չէրթար աշխատանքի՝ դե-պոն կը կայներ: Էնոր պասլուժնոյ գիրքը օր բաց էնեիր, բիթուն բլագադարնստ էր, յեռսունըհինգ տարի ժելեզնի դարոգում աշխատել էր... օղոր-մի հոգուն...

32(248). ՋԱՋՈՒՌՑԻ ՊՐԱՎԱԴՆԻԿԸ

Ջաջուռցի պրավադնիկը տեսնում է, որ վագոնի լուսամուտի ապակին ջարդված է, ու մի ուղևոր կանգնած է լուսամուտի մոտ: Պրա-վադնիկը մոտենում է նրան և ասում.

—Բ... տղա, ստեկլոն լամաթ ես էրե, քովը կայնել ես, բուտո-բի բանից խաբար չե՞ս...

33(249). ՄԻՐՈՒ ՄԻՐ[114]

Էրկու ընկերներով պոեզով տեղ կերթան: Հասնին կը մի վակզալ՝մ, հոդ կայնին կը, կա-շեն՝ ցուցափեղկի վրեն գրված կեղնի, էն էլ ռու-սերեն, կարթա կը՝ Миру-мир.

Ընկերը հարցու կը, կսե.—Էս ի՞նչ վակզալ է օր հասանք:

Էն էլ կսե.—Միրու միր:

[114] Խորհրդային տարիների տարածված լոզունգներից մեկը՝ «Խաղաղություն՝ աշխարհին», որով զարդարում էին պետական նշանակության շենքերի ճակատամասը (ծանոթ. կազմողների):

34(250). ԶՈՆԿԱՃԻ ՆԿԱՐԸ

Մի քանի ամուսնացած ջահելներ կայնե խոսեին կը, իրարու կսեն.—Վէվ օր զոնկաճի նկարը քովը ունի, էնիկ պարկևադրվի կը:

Էդքանի միջեն մեկը ծոցից զոնկճի նկարը հանե, ցուց կուտա:

—Յա՛, այ տղա, զոնկճիտ նկարը մի՞շտ է քովդ:

—Չէ՛ ջանըմ, գերեզմնեն նոր գուգամ, տա-րանք թաղելու,—պատասխանում է փեսան:

35(251). ԶՈՆՔԱՀԱՍԵՐ ՓԵՍԱՆ

Փեսա ու զոնկաճ պատշկամպում կայնե՝ խորաթ կէնեն: Զոնկաճը փեսին հարցու կը, կսե.—Էդ ընչի՞ փեսեքը զոնկաճներին հեչ հազ չեն էնե: Իսկ դու էդ փեսեքից չես,—հարցու կը զոնկաճը իրա փեսից:

—Հա՛, զոնկա՛չ ջան, ես քեզի շատ հազ կէ-նեմ:

Գրգում է զոնկաճին, կսե.—Կուզե՞ս ամեն օր առնեմ թևերիս, էսման թռցնեմ,—ու պատշ-կամպից գլորում է ցած:

36(252). ԿԷՂՆԻ, ՕՐ ՏԱ

Ռանչպարի խոպը կոտրել է, ասում են.—Գնա ֆիլանքյասի քովը էնիկ զապաս խոպ ունի, ուզե՝ կուտա:

—Չէ՛, ախպե՛ր, ես էնոր քովը չեմ էրթա, էնիկ էման մարդ է, օր հոգին կուտա, ուրիշի բան չի տա:

—Չէ՛, չէ՛, գնա, գուցե աստված խելքը գլխեն առել է, կէղնի, օր տա:

37(253). ՈՒՄ ՀԱՄԱՐ Է ՀԱՉՈՒՄ ՇՈՒՆԸ

Գեղ՝մ կէղնի, սաղ գեղով մի հատ՝մ շուն կունենան, տիրոջը կսեն.—Էդ ընչի՞ էս պահե, ո՞ւմ է հարկավոր, կոլխոզի դեզերը գողանում են՝ ձեն չի հանե, մենակ անհատների խոտը գողնալու համար հաչե կը:

38(254). ՀՆԱՑԱԾ ԼՈՒՍԻՆԸ

Երկիր՝մ կէղնի՝ իշու, ձիու նալ տեսած չեն էղնի: Մարդու մեկը մի հատ՝մ ձիու նալ գտնի կը, հմը ինքը չիտե ինչ է, իրան, իրան կսե.—«Տանիմ իմ տերտերին ցուց տամ, անիկ գիդենա կը»:

Տանի կը տերտերուն քովը: Էն էլ նալը կառնի ձեռքը, դառու էստուն, դառու էնտուն, կսե.—Օրհնա՛ծ, էսիկ լուսնյակ է, օր հնցել է, երկնքեն ցած է ընկե:

39(255). ՄԻՇՈՆ ԸՆՉԻ ԳՈՒԼԱ

Խիստ հարբեցողի մեկը մի օր նստե հա գուլա, էման գուլա, օր քիչ մնա կը սիրտը պատռի:

—Արա՛ Միշո, ընչի՞ էդման գուլաս, ի՞նչ է էղե,—հարցու կը մեկը:

Միշոն վերջ կուտա.—Մզես, թամուզ սպիրտ եմ:

40(256). ՓՈՒՇԸ

Աշխատելու վախտը, ինչխ կեղնի տղայի մատը փուշ մտնի կը, նստի կը օր հանե: Հերը զայրացած կսե տղին, որ չնստի՝ գործ էնե:

—Հերա՛ ջան, մատիս փուշը հանեմ, կաշխատիմ,—կսե տղեն:

—Յա՛, վռազ է՞, սաղ ձմեռը ի՞նչ էս անելու, էդ վախթ կհանես,—կսե հերը:

41(257). ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ՝ ԸՍՏ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ

Հանձնաժողովը նստե, մեկ-մեկ մալերին կանչեն կը նես՝ էդոնց կատիկորիյան որոշեն կը, թե էդոնցեն վեր մեկը մարդկանց համար ավելի քյարով են: Էդման բիթունքին կանչեն կը կատիկորիյա կուտան, դուս կէնեն: Կովը, էշը, ձին կայնե դռան, սրտերը կորեկի հատ է դառե: Կսեն՝ յարապ, մեզի ի՞նչ կատեկորյա բդի տան:

Կանչեն կը կովին հարցուն կը, կըսեն.—Դու ի՞նչ օգուտ կուտաս տիրոջդ:

Էն էլ կըսե.—Միս, կաթ, եղ, պանիր, հորթ, կաշի տվողը ես եմ:

—Դե լավ, քեզի երկրորդ կատեկորյա:

Ձին կըսե.—Ես տիրոջս մուրազատուն եմ, թեզ տեղ կհասցնեմ, կամին, սելին լ՝ծվիմ կը:

Էդոր կուտան երրորդ կարգ:

Հիմի սրեն հասնի կը իշուն: Նես մտնի կը, բարև կուտա, կայնի կը, հմը հեչ հարց չեն տա, կըսեն.—Գնա՛, քեզի՝ առաջին կարգ:

Էշը ուրախ-ուրախ դուս գելնի: Կովը, ձին զարմանան կը, թե ի՞նչխ կռնա էղնի առաջին կարգ տան: Էշը կըսե.—Հեչ մի՛ք զարմանա, նստածները մերոնք են:

42(258). ԲԱ ԻՄ ԳԼՈԽ ԴՅՈ՞Ր Է

Մարինոսն ու իրա մարդը շատ պառավ կէղնին, տղա, աղջիկ չեն ունենա: Էդոնց հաց ջուր տվողները դրկիցներն են: Էրկունը, օր մութը կընկնի, պարկին քնին կը: Մարինոսը մի խասյաթ՝մ ունի. օր պարկի կը քնելու, գլոխը էնքան պտի քորե, օր հարի դադոի, աչքերը փակվին:

Մի օր՝մ էլի էդման գլոխը քորե կը, մարդը կսե.—Մարինո՛ս, էդ ի՞նչ է կէնես:

—Յա՛, քա մարդ, չե՞ս տեսնի՝ ինչ կենեմ, գլոխս քորիմ կը:

—Աղջի՛, էդիկ իմ գլոխն է,—կսե մարդը:

—Յա՛, քա մարդ, էդ ի՞նչ է կսես, բա իմ գլոխ դյո՞ր է.—կսե Մարինոսը:

43(259). ՄԿՆՈՐՍԸ

Մարդու մեկի տանը լիքը մուկ կար: Ինչ էնե, օր էդոնց քոքը տար, կերթա հարևանի տուն, կսե.—Ի՞նչ կեղնի՝ կատուն մի քանի օրով տաք, մեր տանը մկները մեզի խեխտեն կը, բալքի ռադ էնենք՝ էդոնցեն խլսինք:

Կատվի տերը կսե.—Հարևա՛ն ջան, կատուն կուտամ, օր էկել ես քեզի դարդակ ճամփու չեմ դնե, հըմը էման էրա օր անոթի չմնա՝ զաբնի:

—Չէ՛, հարևա՛ն ջան, էդքան մկների մեջը անոթի չի մնա:

Կատուն բերե կը տունը, ինքը պառկի քնի կը, մկներն էլ իրանց համար տաշիկ կուտան: Էդ մարդն էլ կատվին դուս կէնե, մկներին ինքը բռնե, կուտա կատվին:

—Անտե՛ր, քեզի բերի մեր տունը՝ մկներին դու բռնես, ես բռնեմ տամ քեզի՝ դու էլ ուտե՞ս, էռնեկ տիրոջտ,—կսե տանտերը:

44(260). ՀԸԲԸ ՉԵՆ ՈՒՏԵ

Ղազը մտնի կը բոստնի մեջը լախանեքը զայ կէնե: Ինչ կէնե, չի էնե՝ էդ ղազը թարկը չի տա, ամեն օր բոստնի մեջը իրա ձաքերի հետ չեն թողե, օր լախանեն մենձնա, էդման փչացուն կը:

Մի օր՚մ տիրոջ հերսը կելնի, կսե.—Յավաշ, քու հախից գամ:

Ու ինքը ղազին մորթե կը, կտուցը վերու կերթա բոստանը, կոխե կը լախանի մեջը, հերսոտ-հերսոտ կսե.—Դե կեր, անդեր էնեմ քեզի, հըբը չեն ուտե:

45(261). ԲԵԴԵՎԼԱՏ ՏՂԵՆ

Հերը տղին ցույց կուտա մի հատ՚մ նկար: Վրեն նկարված կեղնի խաղողի մենծ ճութ՚մ, կոխկին էլ՝ մի հատ՚մ բութիլկա, տղին կսե.—Հանե՛ս, Հանե՛ս, էս ի՞նչ ըսել գուզե:

—Յա՛, էման բան հարցուս կը. ապուռով հորը՝ բեդեվլատ տղա, էլ ի՞նչ բդի ուզե,—կսե տղեն:

46(262). ՀՈՐ ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Մեկի՚մ տղեն գործակատար կեղնի, հըմը շատ խարտախ կեղնի, ինչխ գնորդ էլ որ էղնի, խապե կը: Գործեն էտև գուգա տունը, փափախ էրած փարեքը համբրեր կը ու ցուց կուտար հորը:

Հերը տղին կսե.—Ա՛յ որդի, էդման բաներ մի՛ էնե, լավ չէ, մի օր՚մ էլ քյալիդ գուգաս, ինչխ օր մեր մոզին արծելու վախթ քարափից քյալին էկավ, սատկավ:

47(263). ԵՐԳԱՆ ԱՐԱՄԸ

Աբոն, ես, Սերոբը թատրոն կէրթայինք: Տեսանք Երգան Արամին:

Սերոբն ըսավ.—Երգան Արամը դու ե՞ս:

Հըբը.—Հա՛, ես եմ, ի՞նչ կա:

—Հեչ, երգնքեն ի՞նչ խաբար:

Ըսավ, թե.—Ա՛յ օղուլ, ընչի՞ կը չարչրվեք, բարոմետրի սլաքին աշե,—կըսե ու ձեռքը կդնե առաջին:

48(264). ԷՇԻ ԼՈՂԸ

Էշը օխտը լող կգիտենա: Մեկ անգամ էլ ջուրը կմտնե, կվախենա լողա, վախից կը փթրե: Կտեսնե փթիրները ջրի վրեն կլողան, կսե.—Ծո, էսոր աշե, օռես էլե՝ ընձի լողալ կսովորեցնե:

49(265). ՄՆՈՆ ՊԱՅԵՍ

—Մնոն[115] պայես, Մնոն պայես...

—Մնոյի մերը..., պայող էղնիմ իմ էրեխեքը կպայեմ:

50(266). ՍԱՆԱՄԵՐՆ ՈՒ ՔԱՎՈՐԸ

Մե անգամ սանամերը՝ ջրի ղանթարը ուսին կէրթա ջրի: Ճանբին քավորը կը տեսնի, օր սանամերը ուսով է ջուրը տանում, կըսե.—Սանամեր ջան, մեր էշը քուռկով է, օր ցկնավ, քուռակը կուտամ ձեզի: Կը մենձնա, ջուր կը կրե, էլ ուսով չես կրե:

Սանամերը կըսե.—Քավորս սաղ էղնի, մեզի հմար էշ էլ է, քուռակ էլ:

51(267). ՄԱԽԱԹԸ

Մե տղե՚մ էրթըմ է դըրկըցի կընկան ըսըմ է.—Մորքուր, մե ձեր մախաթը տա՛ս՝ ջվալները կարենք:

Կնիկը կըսե.—Սևավորի տղա, մախաթի մեջ էսօր մածուն եմ մերե:

—Է՛, մորքուր, ըսա, օր չե՛մ տա էլի:

52(268). ՉԱՄՌԻ ՄԵՋ

Մարթու մեկը ճամփով կընցնի, կը տեսնա, օր մե մարթ չամռի մեչ ընկուկ՝ կը թապըլտի:

Կսե.—Արի ընձի քյոմագ էրե՝ իտա չամռի միչեն դուս էլնիմ:

Ճամփորթ կպատասխանե.—Էդ չամռի մեչ քեզի քյոմագ չըմ էնի: Դուս արի, էտև ուրիշ տեղ քյոմագ կենիմ:

---

[115] Լենինականցիները Մնոն ծածկաբար ու ծաղրական ձևով կոչում են տղամարդու սեռական անդամը (ծանոթ. բանահավաք Ա. Նազինյանի):

53(269). ՋՈՒՐ ՊՆԴԱՑՆՈՂ ՄՈՍՈՆ*

Մոսոն կէրտա Թիվլիզ: Ջուխտ մի փռչուոդ չարուխ՝ յոդնյեր, կարճ քուրկ մի՝ վրեն՝ գարնան շոկուն:

Թիվլիզցի մե խանուտպայ մի տեսնի, կըսե.—Իսկական կռո է: Կռո, ինճ տամ, օր մի բոճկա ջուր ունյեմ, պընդածնյես:

—Աղա,—կըսե,—ինճ կըդաս՝ տուր:

—Առ քըզի,—կըսե,—հինգ մանետ, քըզի՝ ինը ժամ սրոկ, էս բոճկի ջուրը պընդածրու:

—Աղա,—կըսե,—հինգ մանետ քիճ է:

—Էղնի,—կըսե,—վյեծ մանետ:

—Շադ լավ,—կըսե:

Խանուտի մեճ բոճկով ջուր դրուգ է, խանուտի մեջ լե լիք աբրանք լըցուգ: Գելնի Մոսոյին թողնե խանուտ, յինք գելնի, խանութի դուռ փագե, կէրտա հարևան խանուտպայներուն թե.—Արեկ, տեսեկ, մի կռո իմ ճարյել, ջուր իմ տվյել պնդածնյել: Էսպես կռո էլ կեղնի՞, որ ջուր պընդածնի:

Գելնին, հինգ-տաս հոկի գիկան: Մոսոն գելնի էդուոր թարկընյեր ինճկան օր բան կա՝ պապիլոզից, թուտունից բերե գըլնա, հնարք չեղնի, չը պնդի: Վյերճ հոկուն գ՚ասնի՝ լողագ կա, էդ լողգընյեր լե կը բերե, տո կոճագ գըլնա, յեսիմ հազար տեսակ բան՝ բրինձ գըլնա, փշադ գըլնա:

Մեգ լե հարևաննյեր գիկան, դուռ բանա, կըսե.—Արեք տեսեք, հըլը ջուր է պնդածնում:

Գիկան տեսնին, օր խանուտ բան չը մածյեր է, բիրադի լծյեր է բոճկեն: Էդ խանութպան կեղնի իշու պես:

Հարևաննյեր կըսին.—Հալալ էղնի, կռո՛, քեզի: Առ քու փողըդ:

—Պրձի,—կըսե,—փարեն տուր:

—Վյեծ մանետ տվյեր իմ,—կըսե:

—Դե արի,—կըսի,—կռո:

Ամեն մեգ հինգ մանետ լե կիտա, կըսին.—Հալալ է քըզի, Կռո, ջուր լավ պնդացրյեր իս: Կռոյի վրա խնդա՞ս:

54(270). ԻՆՁ ՎՐԱ ՀՈՒՅՍ ՉԸ ԴՆԵՔ*

Մե հիմնարկի՚մ հաշվապահն մեռնի գը: Հայդարարություն կուդան, թե. «Մեզ գլխավոր հաշվապահ է պետկ, օր հա՛մ չորս լեզու գիտենա, հա՛մ էլ՝ հաշվապահություն»:

Էհ, յուստի՞ց էդման մարդ: Մարդ կա՝ չորս լեզու գիդե, հաշվապահություն չիդե, մարդ էլ կա՝ հաշվապահություն գիդե, չորս լեզու չիդե:

Օրըմ մեգըմ գլուխկոնձի տալով գուկա դիրեկտորի դռնեն ներս կը մտնե:

—Բարև ձեզ,—կըսե,—հաշվապահ չե՞ք ուզե:

Թե.—Հայտարարությունն ե՞ս կարդըցե:

Թե.—Հա՛:

—Մեգ յանկամ մեգ՝ գիդես ի՞նչ է:

Թե.—Չէ՛:

—Գերմաներեն, անգլերեն գիդե՞ս:

Թե.—Հայերեն շադ ղայդի գիդե՞մ, օր անգլերեն ու գերմաներեն իմանամ:

Թե.—Իշու ձագ, էլ ընչի՞ ես էգե:

—Էգել եմ ըսեմ, օր ինձ վրա հույս չը դնե՞ք:

55(271). ՏՈՒԶԻԳԸ

Մեգըմ շատ սիրուն շուն կունենա, անունը՝ Տուզիգ: Էգ շուն կեղնի, տերը չի ուզենա, օր լագոդ ունենա: Շան էդևը ամեն օր բենզին գը քսե, օր ուրիշ շներ չմոտենան: Ինչըղ կեղնի, օրըմ բենզինը գը չորնա, շները գուկան կը կցվին ու քաշքըշելով գուկան տան կողմը:

Հարևանի տղեն տեսնի գը, պադուհանից կը ճվա.—Մարուս տոտա, Մարուս տոտա, Տուզիգի բենզինը պարբել է, շները բուքսիրով տուն գը բերեն:

56(272). ՀԱՐԵՎԱՆԻ ԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ*

Մեգըմ հարևանին գ՚անդիպի, կըսե.—Մե խորուրդըմ տուր:

Թե.—Ի՞նչ է էղե:

Թե.—Աղջիկս կակազ է, ի՞նչ էնեմ, օր սաղնա:

Էս հարևանը գլխեն ռադ էնելու համար կըսե.—Գնա՛, մինըմ ճարե, ախճըգադ մոդ պայթեցրու, կը սաղնա:

Վախտըմ գ՚ընցնի, էս մարդը նորեն կը հանդիպի էդ կակազ աղջկա հորը: Աղջկա հեորը հեռվից ձեռը բարձրացնե գը՝ կակազելով գը կանչե.—Կկկայնի, ախպպպեր ջջջան, կկկայնի:

Կըսե.—Օհո՛, ք..ն յէլավ:

Էդ մարդը մոտենա գը, կակազելով կըսե.—Ախպպպեր ջջջան, դդդու ընձի չչչորս լլլավություն էրիր:

Թե.—Ի՞նչ լավություն:

—Առռռաջջինն՝ օր,—կըսե,—ախճիգըս իսկապես լլավցավ: Երկկկրորդը՝ օր մմին պպպայթթավ՝ զզոնքաջըս մմեռավ, երրորդն՝ օր կկկնգաս լլլիզուն բբբռվավ: Չչչորրորդն՝ օր ընձձի քքքաղպարապմունքեն ազատեցին:

57(273). ԿԱՏՈՒ ԿԸ ԼՎԱՆԱՆՔ*

Մեկի հարևանը միշտ կը խանգարե մյուսին:

Օրըմ կէրթա հարևանի մոտ, կը հարցընե.—Էդ ի՞նչ կէնեք, օր ղալմաղալ գուկա:

Թե.—Կատու կը լվանանք:

Կըսե.—Մենք էլ կը լվանանք, բայց չենք քամե:

58(274). ՋԵԲՍ ԽՈ ՍԱՆԱՏՈՐԻԱ ՉԷ՞*

Մեգըմ օչերի մեջ ջեբ կը մտնի: Տերը ձեռը կը բռնե, կը սըխմե:

Գյադեն թե.—Ձյաձյա՛, կամաց սխմե, ձեռըս յըռամատիզմ է:

Կըսե.—Ո.ի լակոտ, ջեբս խո սանատորիա չէ՞:

59(275). ԺԻԼԵՏԸ

Մի մարդ ըսկի բաղնիք գնալ չի սիրում: Գալիս է Նոր տարին, կինն ստիպում է, որ գնա բաղնիք: Շատ որ ստիպում է, էս մարդը գնում է: Լողանում պրծնում, գալիս է գազազած կպչում է կնգա գլուխը.—Ես քու մերը... ես քու ծնողը... ես օր բաղնիք չէի էրթա, դու ընչի՞ ընձի զոռով ղրգեցիր:

Կնիգը թե,—Ի՞նչ է էղե, այ մա՛րդ, ի՞նչ ես գազըզնոտե:

—Էլ ի՞նչ բդի էղնի, ժիլետս բաղնիքում կորցրի:

Անցնում է մի տարի, էս մարդը էլի բաղնիք չի գնում: Նոր տարվա մոտերքը կնիկն էլի ստիպում է մարդուն, թե.—Ա՛յ մարդ, դեմը Նոր տարի է, մարդիկ գուկան-կէրթան, ամոթ է, գնա բաղնիք լողցի, քիչըմ յիստըկվի, մարդկանց յառեջ խայտառակ չէղնինք:

Շատ որ ստիպում է, մարդը ճարահատված, կնգան հայհոյելով, վեր է կենում գնում է բաղնիք: Բաղնիքից ուրախ վերադառնում է տուն, փաթաթվում կնգան, համբուրում, թե.—Ղուրբանըդ էղնիմ, ի՞նչ լավ էրիր, օր բաղնիք ղրգիր:

Թե.—Ի՞նչ է էղե, այ մա՛րդ:

Թե.—Ժիլետըս գդա:

—Է՛, յուրդեղ էիր թողե, օր գդար:

—Տըգեն էի հաքե:

60(276). ԷԿԱՆՈՄԻԱ

Մի մարդ միշտ աշխատանքից ուշանում է: Ամեն առավոտ, ինչքան տանից դուրս է գալիս, տրամվայը կանգառից շարժվում է. ստիպված ոտով է գնում գործի ու միշտ ուշացած: Մի օր էլ տնից դուրս գալիս տեսնում է տրամվայը կանգնած, վազում է, որ նստի՝ տրամվայը շարժվում է: Ընկնում է տրամվայի հետևից, հաջորդ կանգառում հասցնում է, էդ է պըտի նստի, էլի տրամվայը գնում է: Նորից է վազում տրամվայի հետևից մինչև հաջորդ կանգառը, նորից չի հասցնում նստել, մինչև որ էդպես հասնում է գործի տեղը: Գործի տեղն էլ իրեք կանգառ է իրենց տնից հեռու լինում: Էդ օրը ուղիղ ժամանակին հասնում է աշխատանքի և շնորհակալություն է ստանում՝ ճիշտ ժամանակին աշխատանքի ներկայանալու համար: Ուրախ, զվարթ գալիս է տուն:

Կնիգն հարցնում է պատճառը, ասում է.—Էսօր տրամվայ պիտի նստեի, տրամվեն գնաց, վազելով ընգա հետևից հասա մինչև գործարան: Հա՛մ շնորհակալություն ստացա՝ ժամանակին աշխատանքի ներկայանալու համար, հա՛մ էլ իրեք կապեկ էկանոմիա արի:

Կնիգն ասում է.—Ավելի լավ չէ՞ր լինի, որ ավտոբուսի հետևից վազեիր, հա՛մ հինգ կապեկ էկանոմիա կանեիր, հա՛մ էլ ավելի շուտ աշխատանքի կհասնեիր:

61(277). ՊՈՂՈՍՆ ՈՒ ՊԵՏՐՈՍԸ

Պողոսին ու Պեդրոսին տանին գը բանակ: Պալիտատդելի նաչալնիգը օրըմ կը կանչե Պո-

ղոսին ու Պեդրոսին կը հարցնե.—Պողո՛ս, դուք հայրենիք ըսելով ի՞նչ կը հասկընաք:

Թե.—Հայրենիք ըսելով կը հասկընամ՝ հեր, մեր, ախպեր:

—Բավագան է:

Կանչե գը Պետրոսին, կըսե.—Պեդրո՛ս, դու հայրենիք ըսելով ի՞նչ կը հասկընաս:

Թե.—Պողոսի հերն ու մերը:

62(278). ԴԱՏԱՐԿ ՋԵԲԸ*

Ջեբգիրը մդնի գը մեգի՛մ ջեբը, տերը ձեռը բռնե գը, կըսե.—Չե՞ս ամչընա, եքա մարդ ես, ջեբ կը մդնիս:

Կըսե.—Դու ամչըցի, օր հաքած-կաբած մարդ ես, ջեբըդ կապեգըմ չըկա:

63(279). ԳԵՎՈՐ, ԴՈՒՍ ՉԵԼՆԻՍ ...*

Հղի կնիգըմ դադավորի մոդ գուկա՝ բողոքի: Բողոքի ժամանագ ցավը բռնե գը: Ճըվա գը «Վա՛յ» ու գընգնի:

Դադավորը ճվա. «Շտապ օգնություն»:

Էլ չի հասվեցնե, միլիցեն գրգե գը կնգան, օր դնե մաշինի մեջ՝ տանե հիվանդանոց: Կնիգը տեղնոցտեղ կազադվի՝ ջևիգ կը բերե: Յառճի էրեխեն գընգնի միլիցի գիրգը:

Էսիկ ճվա գը ախպորը.—Գևո՛ր, դուս չելնիս, աբլավ է, բռնին գը:

64(280). ՇԱՏԱԽՈՍԸ

Էրգու ընգեր կէրթան խմելու: Խմին գը ու բան չեն խոսի: Մեգը խմե, կըսե.—Դա՛:

Մեգելը խմե, կըսե.—Դա՛, դա՛:

Ու էլ բան չեն խոսի: Էդման ամեն օր կէրթան սուս-փուս կը խմին ու «դա» ու «դադայից» էվելի բան չեն ըսե:

Մե օրըմ մե ուրիշ մարդըմ գուկա նստի գը սրանց սեղանին: Տեսնի, օր հեչ մեկը չեն խոսի, յինքն էլ չի խոսի:

Էս մեկը խմե գը, կըսե.—Դա՛:

Մեկելը խըմե գը, կըսե.—Դա՛, դա՛:

Էս երրորդն էլ էսոնց կաշե, խմե գը ու կըսե.—Դա՛, դա՛, դա՛:

Դուրս օր գուկան, մեկը մեկին կըսե.—Ծո՛, էս մարդն ի՞նչ զ՚ավզ՚ագ էր:

65(281). ԼԱՎ ԴԵՐԱՍԱՆԸ*

Ընգերոչս հետ կինո էինք գնացե, մեկ էլ օր գրվավ в ролях-ը, ընկերս թե.—Օրթա՛ղ, էս в ролях-ը լավ դերասան կերևա, յըմմեն կինոներու մեջ կը խաղա:

66(282). ՀԱՐԲԱԾ ԽՈՐՈԶԸ

Առավոտ կանուխ մարդը քեֆը լավ հարսնըքից տուն գուկա: Գուկա դուռը կը ջարդե: Կնիգը հարի դուռը գը բացե, մարդը մեգըմ գը փխսե: Առավոտ աքլորը դուս գուկա, էդ փխսածը կուդե, հարփի գը, գընկնի:

Տանտիգինը դուս գուկա, կաշե՝ խորոզը յընգած, կըսե.—Վա՛յ, քոռանամ ես, խորոզըս չոմալագ է ընգե:

Վերցնե գը թաբլե ախպի յաշիգը, հըմը կը փոշմընի, կըսե.—Յավաշ, բմբլահան էնեմ, բարձի համար պետք գուկա:

Վերցնե գը բմբլահան կէնե, նորից գը քցե սոռնի յաշիգը: Յիրգունը խորոզիս քեֆը թողնի գը, գելնի իրան թափ կուդա, կուկլուկու կը կանչե:

Հավերը գը հավաքվին, թե.—Խորոզ ախպեր, էս ի՞նչ է պադահե, ընչի՞ ես չըպլաղ:

—Գիշերը քեֆըս լավ էր, գողերը բռնին «հոպըստոպ» արին:

67(283). ԱՆԱԼԻԶԻ ՇԻՇԸ*

Պառավը կէրթա բժշկի, թե.—Լյարդս ցավա գը:

Բժիշկը կըսե.—Մամա ջան, էգուց մեզըդ բե աշենք, տեսնենք՝ լյարդըդ է՞, թե՞ պոչկեքըդ:

Պառավը գուկա տուն, շռե գը կես լիտրանոց բուտուրգի մեջ, դնե գը շիֆաներկի կողքը: Յէքսի օրը բուտուրգեն առած կէրթա անալիզի:

Լաբորատորի աշխատողը կաշե, կըսե.—Մամ ջան, էս ի՞նչ ես բերե, էսի սեմուշկի ձեթ է:

Կըսե.—Վա՛յ, լուսըս քոռնա, յէրեգ թոռիս ընգերները տանն էին, յէնդի՞ կառտոլ ժարիտ էնելիս վառավ:

68(284). ՈՒՂԵՂԻ ՕՊԵՐԱՑԻԱՆ

Մե զիլ գիտական աշխատողի՝մ ուղեղը գը խանգարվի, կը տանին օպերացիայի: Պրաֆեսորը գլուխը կը բանա, սաղ ուղեղը կը հանե, զգուշ կը դնե մաքուր ամանի՝մ մեջ, հետո լավ կը մաքրե, ինչղ օր պետք է ու նորեն ուղեղը տեղը գը դնե, կը կարե:

Մեկ էլ կաշե, օր կտորըմ ուղեղ մնացել է ամանի մեջ, կըսե.—Վա՛յ, ի՞նչ էնեմ, նորե՞ն կարը քանդեմ:

Հետո մտածե, կըսե.—Լա՛վ, թող մնա, թող էրթա միլիցա աշխատի:

69(285). ԽԵԼԱՌՆԵՐԻ ՊԱՐԱԴԸ*

Չորս հադ խելառ յիրար կըսեն.—Էգեք պարադ-պարադ խաղանք:

Իրեքը գելնին տրիբունին՝ ղեգավար կդառնան, մեգը մասսա կդառնա, տրիբունի բոլորը գը ֆըռռա ու ճվա գը.—Կեցցե մայիսի մեգը, կեցցե՛ Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Էնքան գը ֆըռռա, գը ֆըռռա, օր խելքը կը բժըժի, գընգնի վար: Քիչըմ օր ուշկի գուկա, վերու քարն ու զարգե գը ղեկավարներից մեգի գլուխը կը ջարդե:

Կըսե.—Վա՛յ, քու ծննողը, էդի վո՞վ էր:

Ներքևից թե.—Չիդեմ, մասսայի միջից էր:

70(286). ԽԵԼԱՌԸ՝ ՓՐԿԱՐԱՐ*

Պատերազմի վախտ գժանոցի դիրեկցիան բերե խելառներին ջրի ափը՝ խելոքներին խելառներից ջոգելու, օր ֆրոնտ ղրգին: Բոլոր խելառներին լցնեն գը ջուրը: Սաղը գելնին գը փախնին, կը մնա մեկը, օր սըգի ու գելնի: Մեկ էլ խելառըմ վազելեն գուկա, իրեն գը թաբլե ջուրը, էդ խեղդըվողին հանե գը, շալգե ու վազե գժանոց: Մեգել խնդալեն շենքից դուրս գուկա: Բոլորը կըսեն, օր ամենախելոքն էդ է: Վազեն գը ներս, օր տեսնան ինչ էրավ խեղդըվողին: Կաշեն, օր ինչ, խեղդվողի վիզը կապըմ քցած կախած է, լեզուն էլ դուրս ցըգած:

Կը բռնին էդ խելառին, թե.—Ծո՛, էս ի՞նչ էրիր, ընչի՞ խեղդեցիր մարդուն:

Թե.—Չեմ խեղդե, կախել եմ, օր չորնա:

71(287). ԽԵԼԱՌՆԵՐԻ ԲԱՄԲԱՌԱԿ ԱՌԱԿԸ*

Վեց-յոթ խելառ յիրար գլխի գը հավաքվին, յիրար առակ կը պատմին: Էդ առակներու մեջ քյուֆուր կեղնի, գը պայմանավորվին, օր յըմեն առակին համարըմ դնեն ու առակի տեղակ համարը ըսեն, որ հա՛մ երգար չեղնի, հա՛մ էլ՝ անհարմար:

Օրըմ կամպանիայի՝մ մեջ նստած կեղնին, ըդեղ էլ կնիգ ու ախճիգ կեղնին, կըսեն.—Արեք առակ պատմինք:

Մեգը կըսե.—Յառաջին:

Կը խնդան, կըսեն.—Շատ լավ է:

Մեգելը կըսե.—Երկրորդ:

Կըսեն.—Լավ է:

Մեգը կըսե.—Վեցերորդ:

Գելնեն կսկսեն էդոր ծեծել.—Փեզա՛վանք, էդ վեցերորդի մեջ քյուֆուր կա, դու ինչը՞ղ էս կնգաց ու աղջկներաց չես ամչընա:

72(288). ՈՒՇԱՑԱԾ ՈՒՂԵՎՈՐԸ*

Մեգը պոեզից գուշանա, վազելով գուկա կըսե.—Տեսա՛ր՝ ընչը՞ղ ուշացա...

Մեգ ուրիշըմ հարցնե գը.—Ինչքա՞ն ուշացար:

Թե.—Ռոպե՝մ:

—Էհ, ես էլ գիդեմ ժամըմ ես ուշացե:

73(289). ԿԱՐ՝ ՉԷՐ ՈՒԴԵ*

Մեգըմ մեգի հետ կկռվի գը, կըսե.—Քու հերն էն մարդը չէ՞ր, օր անոթությունից մեռավ:

—Է՛,—կըսե,—կար՝ չէ՞ր ուդե:

74(290). ՊՈՂՈՍԸ ՎՈ՞Վ Է*

Քանի՝մ տղա գելնեն լցվեն գը ավտոբուս, հարցնեն գը.—Պողոսը վո՞վ է:

Տղե՝մ գելնի կըսե.—Ես եմ:

Կսկսեն էդ տղին զարգել, քիթ ու բերանը արընլըվիգ կէնեն:

Նստողները կըսեն.—Ծո, ընչի՞ անունդ ըսիր, օր ծեծին:

Թե.—Իմ անունը Պողոս չէր, լա՛վ խաբեցի:

75(291). ՋՀՈՒԴԻ ԱՐՅՈՒՆԸ

Հիվանդանոցում հիվանդները պարկած, ուրտեղ կեղնի մի հայ՚մ ու մի հատ՚մ ջհուտ: Էման կեղնի, օր էդ հայի ու ջհուդի արունը մի տեսակ կեղնի: Հայ հիվանդի արունը պակաս կեղնի, գուզեն, օր ջհուտից արուն վերուն՝ հային սրսկելու համար, ջհուտը ռազի չի եղնի:

—Ա՚յ մարդ, ընչի՞ ռազի չես էղնի, էդ մարդը մեռնի կը, քեզ էլ շատ փարա կուտանք,—կըսեն էդ ջհուդին:

—Չեմ տա էնօր համար, օր ես գիտեմ իմ արունը որ էդոր արունին խառնվավ էդօրեն փարա դուս չի գա,—կըսե ջհուդը:

76(292). ՀԵՏՍ ԲԱՐԱԲԱՐ ԷԿԵԼ ԵՍ

Ռուբենը տաքսի բռնե կը, նստի կը տաքսին, կէրթա իրանց տուն: Ռուբենը կիչնի տաքսուց, կսե վարորդին.—Ինչքա՞ն բդի տամ:

Վարորդը կսե.—Մի մանեթ՚մ:

Ռուբենը հանե 50 կոպեկ կուտա:

—Յա, ընչի՞ 50 կոպեկ կուտաս,—կսե վարորդը:

—Հետս բարաբար էկել ես, կուզես մանեթ՚մ տամ,—պատասխանում է Ռուբենը:

77(293). ԳՈՂԱՑԱԾ ԹՈԿԸ

Ընկերները Ռուբենին հարցուն կը կսեն.—Ա՚յ Ռուբեն, քեզի ընչի՞ են բանդարկե:

Ռուբենը պատասխանե կը, կսե.—Մի թոկ՚մ էի գողացե:

—Ա՚յ մարդ, մի թոկ՚մ գողացողին չեն նստացնե, հըլբըթ բան՚մ կա:

—Ի՞նչ բան բդի էղնի, թոկի ծերից մի հատ՚մ խոզ կար,—կսե Ռուբենը:

78(294). ԱՆՏԵՂՅԱԿ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ

Ռուբենը հանե քսան կոպեկ կուտա գործակատարին, կսե.—Ա՚ռ, մի հատ՚մ Արին-Բերդ տուր:

Գործակատարը կսե.—Հըբը մնացածին ի՞նչ տամ:

—Գործակատար ես, էդքան բանն էլ չիտե՞ս, հինգ մետր կտոր տուր, յա չէ մի կիլո շոկոլաթ:

79(295). ՏԵՐՏԵՐԻ ՈՒ ՏԻՐԱՑՈՒԻ ԿՆՈՒՆՔ ԱՆԵԼԸ

Տերտերն ու տիրացուն գլուխները տաք՝ եկեղեցում երեխա են կնքում: Ավազանի ջուրը շատ տաք է լինում: Տերտերը խաշում է երեխային, դառնում է տիրացուին.—Իսիկ խաշավ, մեկելը բեր...

—Յուրտի՞ց... էլ չկա:

80(296). ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՀԱՐՍԸ

Հարսը եկել էր եկեղեցի: Տերտերը հարսի վրա աչք ուներ: Ժամերգության ժամանակ, երբ տերտերը, բուրվառը շարժելով, հարսի մոտից անցնում է, երգում է.

«Էսօր-էգուց կուգամ ձերը, էսօր-էգուց կուգամ ձերը»:

Հարսը կամացուկ պատասխանում է.

«Կըսես-կըսես ու չես գա»:

Ժամերգությունը որ վերջանում է, տերտերը տիրացուին ուղարկում է հարսի մոտ, իմանալու մենակ է՞, թե՞ ոչ: Հարսը համաձայնվում է տերտերին ընդունելու, բայց այդ ժամանակ հարսի մոտ է գալիս մի այլ տղամարդ:

Տիրացուն վերադառնում է տերտերի մոտ ու երգում.

«Գնացի, օր գար,
Ըսեցի՝չեկավ,
Էկավ, որ չեկավ,
Որ չգար՝ կուգար»:

81(297). ՏԵՐՏԵՐԸ, ԳՈՂԸ ԵՎ ԿԻՆԸ

Տերտերը առավոտը կանուխ գնում է եկեղեցի: Տերտերից առաջ գողն է մտած լինում եկեղեցի: Երբ տերտերը անսպասելիորեն նես է մտնում, գողը թագնվում է սրբերի պատկերների հետևը:

Տերտերը ուզում է նախքան ժամասացությունը, եկեղեցին օրհնե, խաչակնքում է երեսը և աղոթում.—Տեր ողորմիա, տեր ողորմիա:

—Չեմ ողորմում, չեմ ողորմում,—թաքուստի տեղից կամացուկ ասում է գողը:

Տերտերը սարսափում է, կարծելով որ սրբերից մեկն ու մեկը բարկացած է իր վրա, աղերսում է.—Ինչո՞ւ չես ողորմում:

—Վերարկուդ հանե՛, ողորմիմ:

Տերտերը հանում է վերարկուն, մի կողմ դնում ու նորից ողորմություն աղերսում, բայց «սուրբը» չի բավարարվում միայն վերարկույով, այլ ստիպում է տերտերին հանել «անթարին», դրանից հետո շալվարը և այլնը մինչև որ տերտերին թողնում է միայն վարտիք-շապիկով:

Այդ ժամանակ եկեղեցի է մտնում մի պառավ ու բարձրաձայն հարցնում է.—Տերտեր ջան, էսօր ամսի քանիսն է:

Տերտերը բարկացած.—Ամիս, ամիս, ոռս ծամիս, սրբերը հանբարձել [բարկացել] մարդ կը չբլոցնեն, դու եկել ես ամսի քանիսն ես հարցնում:

Գողը հավաքում է տերտերի շորերը ու փախչում:

82(298). ԳԱՐԻ Է՞, ԹԵ՞ ՑՈՐԵՆ

Մի մարդ գալիս է մոլլին ասում է.—Մոլլա, արի գնանք դատարանը, վկայություն տու, որ էս մարդը ինձի տաս փութ ցորեն է տալիք:

Թե.—Այ մարդ, ես գիտեմ, որ էդպիսի բան չկա, ինչխ...:

Թե.—Այ մարդ, քեզի բան՝մ կ՝տամ, ձրի յա չեմ տանի, ձրի խո չե՞ս, ըսի: Ոտքերիդ բան չկա, նախ ջուխտ՝մ չստեր բերիմ հագնիս, էրթանք դատարան:

Կուգան դատարան, կողմերի քննելուց հետո, դատարանումն է չէ՞ մոլլան: Կըսե, մոլլային կըսե.—Մոլլա, ի՞նչ գիտես էս գործեն:

Թե.—Ես գիտեմ, որ էս մարդը քեզի տաս փութ գարի է տալիք:

Թե.—Մոլլա, ախր գարի չէ, ցորեն է:

Թե.—Ախպեր, սուտ վկայություն է, քեզի համար մեկ չէ՞, գարի է՞, թե՞ ցորեն:

83(299). ԱՊՏԱԿԻ ՏՈՒԳԱՆՔԸ*

Մեկ՝մ վեճի ժամանակ մոլլին մի ապտակ կ՝խփե: Ապտակ որ կխփե, մոլլեն գործը կուտա դատարան, թե.—Ես հոգևորական մարդ եմ, քաղաքացին ինձի ապտակե՞:

Դատավորը կզայրանա, կանչե կը խփողին ու կ՝տեսնի, որ քաղաքացին հոգևորականեն ավելի պատվավոր մարդ է, բայց մոլլին ապտակ է տվել: Գործը կ՝քննեն ու կ՝տեսնեն, որ քաղաքացին մեղավոր է ու մի ոսկի պիտի տա մոլլին՝ ապտակի համար: Ու էս խփողին դատավորը աչքով կընե, թե՝ գնա, գնա ոսկին բեր:

Էս ապտակողը գլխի կընկնե, որ դատավորը իրեն կ՝հասկացնե, որ՝ գնա, էլ չգաս:

Վեր կ՝կենա դատարանի շենքեն կթողնի, կհեռանա: Մոլլեն կաշի, կաշի, մեկ ժամ, էրկու... կ՝մոտենա մոլլեն, տանի-բերի, մի հատ՝մ կուտա դատավորին:

Թե.—Էն մարդը որ եկավ, ոսկին դուն կառնիս՝ որպես տուգանք ապտակի համար: Ես գացի:

ՊՈԼՈԶ ՄՈՒԿՈՒՉ

84(300). ԲԻԹՈՒՆ ԻՄ ՉՈԹՔԵՆ

1918 թվականին Ալեքսանդրապոլ է գալիս հայազգի վիրտուոզ ջութակահար:

Քաղաքի ինտելիգենցիան և զինվորական հրամկազմը գնում են համերգը լսելու: Պոլոզ Մուկուչի ընկերներն էլ ասում են նրան.—Մուկուչ ջան, արի կեղնի դու էլ գնա էդ չալղճու ներկայացումը, յետև գուքաս մեզի կը պատմես էղած-չեղածը:

Պոլոզ Մուկուչը լավ հագնված, հանդիսավոր կերպով գալիս է համերգ և ուզում է ուղակի ներս գնա, բայց նրանից հարցնում են տոմս:

Պոլոզ Մուկուչը մի խաս հայոյանք է տալիս ուզողին և առանց տոմսի մտնում ներս: Էլ չեն հանդգնում նրանից տոմս պահանջել:

Երբ համերգը վերջանում է քաղաքացիներից և աֆիցերներից ոմանք անցնում են թատրոնի շենքին կից «Կաաաка կաю», իրանց «դամոչկաների» հետ նստում են սեղանների մոտ՝ ընթրելու:

Պոլոզ Մուկուչն էլ գնում է նստում սեղանի մոտ, կանչում է բուֆետապանին, ինչ որ պետքն է պատվիրում ու հարցնում.—Էս բիթունս օր կուտենք կը խմենք, ինչքա՞ն կաժենա, թոմառի:

—Չեմ կրնա ըսե, Մուկուչ ջան, չե՞մ հաշվե:

—Հլը մոտավորապես հաշվե:

—Մոտավորապես որ ըսեմ, մե 20-25 մանեթ:

—Բիթուն իմ չոթքեն,—ասում է Պոլոզ Մուկուչը սեղանին քցելով քսանըհինգ ռուբլիանոց թղթադրամը:

Ով գալիս է վճարելու բուֆետապանն ասում է.—Ձեր փարեն վճարված է:

85(301). ԷԴ ՄԱՐԴԸ ՖԱՅՄ ՉՈՒՆԻ

Թուրքերից Ալեքսանդրապոլը ազատելուց հետո մի քանի ընտանիքներ փախուստից ընթանուր վագոնով (Վրաստանից) վերադառնում են Ալեքսանդրապոլ: Վերադարձողների մեջն են լինում Պոլոզ Մուկուչը և մանուֆակտուրիստ Տեր Ավետիկենց Ենոքը: Բոլորն էլ այս կամ այն չափի չարչարված և լղարած տեսք են ունենում, բացի Տեր Ավետիկենց Ենոքից, որը մի լիքը, գեր, լավասուն մարդ է լինում:

Հանկարծ Պոլոզ Մուկուչը սկսում է Ենոքին հայոյել:

Ներկա եղողները դառնում են Պոլոզ Մուկուչին:

—Յընչի՞ կեցած տեղը մարդուն կը քֆրտես, քեզի ի՞նչ էրավ:

—Տո էդ փեզավանկը ֆայմ չունի, մարդ չէ... յըբը յընչի՞ չէ զաբնե.

86(302). ՏՈ՛ ԺԵՇՏ ՅԸՆԿԱՆՔ

Պոլոզ Մուկուչը, Ծիտրոն, Քեսենց Միխակը ու Ափանը՝ Գյումրվա լոթիները, գնում են «Վարդանանց պատերազմ» ներկայացումը:

Երբ Ղևոնդ Երեցը դուս է գալիս բեմ, ոսկեզօցված եկեղեցական հագուստով, փայլուն խաչ ու խաչվառով՝ տղայոց բերանի ջուրը գնում է: Սկզբում իրար են նայում, հետո փսփսում:

Երբ ներկայացումը վերջանում է, նրանք «Գորկա»-յի կողմի փոքր լուսամուտից մտնում են բեմի հետևը և սկսում են փնտրել ոսկեզօծված հագուստները և զարդարանքները:

—Ահա՜, գտանք,—ասում են և վրա են պրծնում գտածի վրա և սկսում են ագահորեն պոկոտել ոսկեզօծված զարդարանքները:

Երբ խելքերը գլուխներն են գալիս, տեսնում են որ այդ բոլորը հասարակ ներկ է:

—Տո՛, սուսեկ, ձեր հոր Ասպած, ժեշտ յընկանք,—ասում է Պոլոզ Մուկուչը ու փոր փոշման հեռանում են:

87(303). ՋԱՅԼԱՄ ՈՏՔՍ

Բեբության փողոցի վրա, քաղաքի էլեկտրակայանի մոտ Պոլոզ Մուկուչը, Ծիտրոն ու Անբախտ Քռոն ունեին միկիտան:

Մի օր՝ կեսգիշերին, երբ միկիտանը փակ էր ու տղեքը քնած, կոննո-գոռնի գնդի վեց զինվորներ ուզում են մտնել միկիտան: Դուռը ծեծում են, բայց տղեքը դուռը բաց չեն անում: Զինվորները պահանջում են դուռը բաց անել, հակառակ դեպքում դուռը կը ջարդեն:

Անբախտ Քռոն, վախենալով զինվորների սպառնալիքներից, բղավում է.

—Մուկուչ ջան, հասի, դուռը ջարթեն կը:

Պոլոզ Մուկուչը, որ լավ կոպլակռիվ գիտեր, վեր է թռչում տեղից, կոպալը առած դուս է գալիս ու սկսվում է կռիվը, մի կողմից՝ կոպալներով, մյուս կողմից՝ սրերով:

Զինվորներից մեկը սրով վիրավորում է Պոլոզ Մուկուչի ազդրը, ու իրանք փախչում են:

Տեսնելով Պոլոզ Մուկուչի արյունոտված ազդրը՝ Ծիտրոն ասում է.—Մուկուչ ջա՛ն, էդ ի՞նչ է, յարո՞ւն է, ոտիդ զարկին:

—Ջայլամ ոտքս,—պատասխանում է Պոլոզ Մուկուչը,—գուզալ՛մ փանթուլ շալվարս կտրեցին:

88(304). ԱՆՏՈՄՍ ՈՒՂԵՎՈՐԸ

Գնացքի կուպեյում, որտեղ նստած են լինում Ղարաբուրուն կայարանի պետ Գայուշ Շաքարյանը և երկու թիֆլիզեցի հայ ռևիզորներ, ներս է մտնում վագոններից մեկի պրավադնիկը ու գանգատվում.—Վագոնիս մեջ մե զոզոփ մարդ՛մ նիժնի պոլքեն զանիթ է էրե, յերկան յերկնցել է, բլեթ գուզեմ՝ քֆրտե կը, ձեր անունը կուտամ՝ ձեզի էլ, ձեր կնթոցն էլ քֆրտե կը:

Ջահել, կորովի ռեվիզորները, զինված նագաններով, վեր են թռչում տեղերից, որ գնան պատժեն անտոմս, անպատկառ խոսքերով իրանց կանանց անպատված ուղևորին:

Քիչ անց նրանք քաշ-քաշ տալով բերում են Պոլոզ Մուկուչին, որի մասին նրանք շատ են լսել, բայց արտաքինով չեն ճանաչում:

—Դու քանի՞ գլուխ ունիս, որ բիլեթ չունիս հերիք չէ, մեզ էլ քֆրտում, անպատվում ես, տեսնինք բաշպորտդ:

—Բաշպորտս ո՛րն է, ես բաշպորտ չունիմ, ես Պոլոզ Մուկուչն եմ:

Այդ անունը լսելուն պես, վճռականությամբ լեցուն ռեվիզորները զինաթափ են լինում:

—Ինչի՞ առաջուց չասեցիր, որ դու Պոլոզ Մուկուչն ես, հազար անգամ ներողություն կը խնդրենք:

Իրանց մեղքերը քավելու համար ռեվիզորներից մեկը դառնում է պրավադնիկին.—Գևոր, գնա բուֆետից տասը բութիլկա պիվո բեր:

—Գևոր ջան, կայնի,—ասում է Պոլոզ Մուկուչը,—էս ախպորս ըսածը «հեչ» էրա: Գնա բուֆետչիկին ըսա, օր Պոլոզ Մուկուչի չոթքեն էրկու դուժին պիվա ղրկե:

89(305). ՊՈԼՈԶ ՄՈՒԿՈՒՉԻ ԱՉՔԱԼՈՒՅՍԸ

Ինչքան Պոլոզ Մուկուչը աշխույժ, շփվող, հանաքչի մարդ էր, այնքան էլ նրա միակ, իրանից մեծ եղբայր Ալեքը քչախոս ու մռայլ մարդ էր, որի համար Պոլոզ Մուկուչը իր եղբորը «Ամպ» մականունն էր դրել:

Մի օր՝ առավոտյան վաղ, Պոլոզ Մուկուչը համբերությամբ թակում է իր հորեղբոր տղայի՝ «շախպաջի» Գրիգորի դուռը:

Քնաթաթախ Գրիգորը ներսից.—Էդ վո՞վ է յառավոտ կանուխ դուռը կը ջարդե:

—Ես եմ, Մուկուչն եմ, թեզ էրա բա՛ց:

Երբ դուռը բացում է, Պոլոզ Մուկուչը բացականչում է.—Յաչքերս լո՛ւս, գիտես ի՞նչ է էղե, յէսօր յառավոտը Ալեքը խնդաց:

Ասում է ու իսկույն հեռանում:

90(306). ԱԽՊԵՐՍ ՅԸՆԿՆԻ ԵՍ ՄՆԱ՞Մ

Պոլոզ Մուկուչը կապված էր իր եղբոր՝ Ալեքի հետ, լսում ու հարգում էր նրան որպես իրանից մեծի:

Պոլոզ Մուկուչը իր եղբոր՝ Ալեքի հետ գնում է Տաշկենդ, որտեղ նրանք հյուրասիրվում են իրենց հայրենակից Բոշենց Զավենի կողմից: Երբ գլուխները տաք դուս են գալիս փողոց, որը անձրևից թաց է լինում, Ալեքը սայթաքում է ու ընկնում կանաֆը:

—Վա՛յ իմ աղբերս յընկնի ես մնամ,—ասում է Պոլոզ Մուկուչը,—ու ինքն էլ է իրան գցում կանաֆը ու պառկում եղբոր կողքին՝ ջրի մեջ:

91(307). ՊԱԼՏՈՆ ԿԱՐՃ Է

Պոլոզ Մուկուչը պատրաստի շորերի խանութում իր վրա վերարկու է չափում:

Ներկա եղողները ասում են.—Ծո՛ Մուկո՛ւչ, պալտոն կարճ է:

—Պալտոն կարճ չէ,—ասում է Պոլոզ Մուկուչը,—ես եմ յերկան:

92(308). ՀՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Թիֆլիզ եղած ժամանակ Պոլոզ Մուկուչը փողի կարիք է զգում, իր հորից փող է պահանջում:

Հայրը ջղայնացած.—Տո՛, բոյեդ շունը յընկնի սատկի կը, յամոթ չէ՞, փարա գուզես:

93(309). ՊՈԼՈԶ ՄՈՒԿՈՒՉԸ

Պոլոզ Մուկուչը կը լսա, օր Թիվլիզի բացանները պիտի գան իրան գլխուն օյին խաղալու: Ինքը կերթա քաղքի ճաշարանները, մե վեց-օխտը տեղ զանիթ կենե, ըմընու առեչ փարեն կիտա ու կըսա.—Ուստա՛, օր ես կուգամ ճաշ գուզեմ, դու կը բերես, կուտենք առանց փարա տալու:

Կըսե ու կերթա կայարան: Կը տեսնի, օր պոյեզեն իջան մե քանի՛մ բացան: Բարև կուտան, բարև կառնեն, կիջնեն քաղաք:

—Տղե՛ք, անոթի չե՞ք, արեք էրթանք ճաշարան,—կըսե Պոլոզ Մուկուչը:

Կերթան Ճաշարան: Կուտե՞ն, կը խմե՞ն, էտև Պոլոզ Մուկուչը շախպեն կը ծռե, կըսե խըզմաթքյարին.—Օտա՞շ:

Կըսե.—Օտաշ:

Կընցնին կերթան: Օր կընցնին կերթան, ըմմեն տեղ Մուկուչը հըդման կենե: Էստեղ

Թիվլիզի բացանները կը ծռին Պոլոզ Մուկուչի շապկի վրա ու կըսեն.—Մուկուչ, ինչ տանք, օր շապկըդ տաս մեզի:

Կըսե.—Ա՛յ մարթիք, ինչ եք ըսըմ, ինչ ծախել, ինչ բան, դուք ըստուր գինը եփ կըռնաք տաք:

—Բան չկա, Մուկուչ, կը ճարենք, կիտանք, տո՛ւր մեզի:

Պոլոզ Մուկուչը դարդաժարով ըռազի կեղնի ու շախպըն կը ծախա կինտոներուն: Կինտոները բանկը կը թանլեն, հախը կիտան, շախպը կառնին ու դուզ Թիվլիզ:

Օր կիշնին Թիվլիզ, կերթան ճաշարան: Կուտեն, կը խըմե՞ն ու խըզմաթքյարին առաչ շախպը կը ծռեն, կըսեն.—Ուստա, օտա՞շ:

—Ա՛յ օղռաշ, ինչ օտաշ, ինչ բան, ճաշարանըս բիտտուն կերաք ու հիմիկ էլ շախպ ծըռելով՝ օտա՞շ:

Կինտոները գլխու կընկնին, օր Պոլոզ Մուկուչը իրենց քյալակի է բերել:

94(310). ՊՈԼՈԶ ՄՈՒԿՈՒՉԸ՝ ՆԿԱՐԻՉ*

Նկարչի կոնկուրս կեղնի: Պոլոզ Մուկուչը կէրթա որպես Հայաստանի ներկայացուցիչ: Ժյուրին նըստած գ՚ հարցընե, թե վով յուրդից է էգե: Հերթը գ՚հասնի Հայաստանին:

Թե.—Հայաստանից վո՞վ է էգե:

Պոլոզը թե.—Ես:

Կըսեն թե.—Ըբը յուրդեղ է նգարըդ:

Պոլոզը ձեռին կարդոնըմ բռնած կեղնի՝ վրեն սև ներկ քսած:

Կըսե.—Իսիկ է:

Կըսեն.—Ծո՛, ո.ի մա՛րդ, ըստեղ յուրդեղ է նգար:

Թե.—Ծո, այ օղուլներ, հըբը չեք տեսնի էս ղոջա նգարը:

Թե.—Է՛, նըգարաձըդ ինչ է:

Թե.—Նեգրը գիշերով կռիվ կէնե:

95(311). ԸԲԸ ԻՍԻԿ ԵՐԲ ԿԵՐԱ

—Է, կսես էլի, ադաշ ջան, ընկերութենը վենձ հունար է, շիդակ ընկերոջը հոգիտ էլ տաս, շատ քիչ է: Կսեն՝ ժամանակին Գյումրվա պատիվը լավ ընկերներն են վեր հանե, օղորմի էնոնց:

Կսեն՝ Գոնգոռ Հագոն, Պոլոզ Մուգուչը ու Ծիդրոն լավ ընկերներ են էղե, օր՚մ քիչ՚մ խոսկ ու խորաթա կենեն կգզվրթին, գելնեն ու կերթան իրանց տները:

Կանցնի մի երկու շաբաթ Ծիդրոն ինքն իրան կսե. «Ջանմ, իսիկ շատ էրգեն էղավ, պզդիկը ես եմ»: Կառնի բութիլ՚մ ռախի, կերթա Մուգուչենց տուն՝ բարշելու:

Պոլոզը օր կտեսնի Ծիդրոյին, կհասնի, կփաթթվին, լաց կեղնին: Պոլոզն էլ, տանը՝ խորոված սարքին, ռախին ըստոլին դրե, էսոնց կսպասեր: Կուդեն, կխմեն, ամենքը բութիլ՚մ ռախի կառնին, կերթան Գոնգոռ Հագոյի քովը: Գոնգոռը օր կտեսնի ինոնց, առաջ կվազե, կսե.—Ձեր հոգուն ղուբան էղնիմ, պստիկ ախպերներ, հալալ է ձեր կերած կաթը,—կսե ու կփաթթվին, կսկսեն պաչ ու պռոշտին:

Կերթան Հագոյի տուն, դու մի ըսե, էնիկ էլ սեղան բացե, քյալլեն ու ռախին ըստոլին դրե, էսոնց կսպասեր: Կուդեն-կխմեն, Պոլոզը կտեսնի, օր Գոնգոռը կդանթե, կսե.—Ծիդրո, էլ էրթանք՝ վենձ ախպերը թող քիչ՚մ հանգստանա:

Կէլնին կուգան, Պոլոզը կաշե, օր Ծիդրոն հարբած է՝ վասմորկա կգրե, ֆայտոնչի՚մ կկանչե, Ծիդրոյին մեջը կառնե, շապխեն ու քյամարն էլ քովը կդնե ու ֆայտոնչուն կսե.—Աստված սիրես, իսոր ղայդով տուն հասցրե:

Ինքն էլ կելնի կուգա Ալեքսանդրովսկին[116]:

Քիչ՚մ կերթա, կերթա, կզգա, օր ինքն էլ հարբած է, սիրտ կխառնե, կմտնի Հագոների բաղնիքի քյոշեն, ետ կուդա, քիչ՚մ կօյաղնա, կաշե, օր շան լագոտ՚մ իր թափածը զավտրկ կենե: Կաշե, կաշե, իրան կսե. «Լավ, էս քյաբաբը Ծիդրոյենց տունը կերանք, էս քյալլեն էլ Գոնգոռ Ագոյի քովը կերանք, ըբը էս շան լագոտ ե՞րբ կերա...»:—Կսե ու քացով կուդա թուլային, կսե.—Բախտիտ աշե, օր սաղ-սաղ ես դուրս պրծե, դե գնա աբրի...

—Այ, իսիկ իսկական ընկերություն է էղե,—շարունակեց զրուցակիցս:

96(312). ՁԻԹՈՂՑՈՆՑ ԲԱՂՆԻՔԸ

Պոլոզ Մուկուչը ու իրա ընկեր Ծիտրոն, որը Մուկուչից տարիքով մեծ էր, իրար հետ խոսում են: Պոլոզ Մուկուչը հարցնում է.—Էդ ինչխ կեղնի օր պարավոզը ինքնյարան կերթա:

[116] Փողոցի անուն է (ծանոթ. բանահավաք Խ. Դաբաղյանի):

—Յընչի չիտեմ, բղով կերթա,—պատասխանում է Ծիտրոն

—Ինչ կը խոսի,—զարմանում է Պոլոզ Մուկուչը,—բղով օր էրթլու էղնիր, Ձիթողցոնց բաղնիքը վաղուց Լոնդոն հասած կեղնիր:

97(313). ՎԵՆՁ ԱԽՊԵՐԴ Է

Մի շուն պարկած կը լինի Լենինականի հրապարակի մեջ տեղում: Միլիցիոները հեռացնում է շանը: Շունը գնում է պառկում մայթի վրա: Միլիցիոները ջղայնացած մոտենում է շանը ու ոտքով խփում: Շունը վնկստալով փախչում է:

Պոլոզ Մուկուչը, որ այդտեղ է լինում, շան հետևից բղավում է.

—Լա՜վ, լա՜վ, մի՛ վնկստա, սեպենք, թե վենձ ախպերդ է, էղնի օր մե հատ՚մ էլ զարկե:

98(314). ԴԻՊԱՎ ՈՒ ԴԱՌԱՎ

Պոլոզ Մուկուչը վերադարձել էր Երևանից:

Ընկերները խնդրում են նրան պատմել՝ ինչ կար, ինչ չկար Էրևանում:

—Ինչ պիտի էղնի,—պատմում է Պոլոզ Մուկուչը,—յիջա վակզալը, յընձի համար ռելսներու միջեն կէրթամ, մեկ էլ տեսնիմ՝ դեմես պարավոզ՚մ գուկա ու սվիստոկ կուտա: Ես կէրթամ, էնիկ գուկա ու սվիստոկ կուտա, ես կէրթամ, էնիկ գուկա ու սվիստոկ օր կուտա... ես կէրթամ...

—Վերջը ինչ էղավ,—հարցնում են ընկերները:—Դու էնի՛կ ըսա...

—Ինչ պիտի էղներ... էկավ դիպավ, եդ դառավ գնաց:

99(315). 99 ՀԱՏ ԽՆԿԱԼԻ

Պոլոզ Մուկուչը իրա ընկերների հետ մտնում են ճաշարան: Պոլոզ Մուկուչը դառնում է մատակարարին.

—Ախպեր ջան, կրնա՞ս մեզի թեզ՚մ ինսընը ինը հատ խնկալի հրամցնե:

—Ըսա մեկեն՝ հարուր հատ,—պատասխանում է մատուցողը:

—Յա՜, ի՛նչ կըսե, խո պատռելու չենք:

100(316). ՄԵՐ ՁԵՄԼԱԿԸ

Պոլոզ Մուկուչը ու իրա մտերիմ ընկեր Ծիտրոն գնում են Մասկվա: Իհարկե առաջին հերթին գնում են Մոսկվայի հայտնի կենդանաբանական այգին: Տեսնում են, որ մի ցանկապատված կենդանու առաջ հավաքվել են մի քանի մարդ ու հետաքրքրությամբ նայում են կենդանուն:

Առաջինը մոտենում է Պոլոզ Մուկուչը, տեսնում է, որ իշին են նայում, ուրախացած ասում է Ծիտրոյին.—Արի՛, արի՛ մեր զեմլյակն է:

Տեսնելով, որ ներկա եղողներից ոմանք առաջի անգամն են տեսնում իշին, Պոլոզ Մուկուչը հանկարծ ասում է.—Ես զեմլակիս երգել պիտի տամ, չեղավ-չեղավ, թող էս գերմամիշների համար մե հատ՚մ զռռա:

—Բա՜ն չունիս,—ասում է Ծիտրոն,—թուլցու:

—Անկարելի է,—ասում է Պոլոզ Մուկուչը ու ձեռները բերանին դնելով այնպես հմտորեն է իշի պես զռռում, որ զարմացած կենդանին խլշտում է ականջները և այլևս չդիմանալով հարազատ մոտիվներին, շուտով ինքն էլ է սկսում իսկական իշու զռռոցը, որով մեծ հաճույք և հիացմունք է պատճառում ունկնդիրներին և Պոլոզ Մուկուչին:

101(317). ԸՍԻՆՔ, ԽՈ ՉԵՐԻՆՔ

Ղանդիլենց Ենոքի կինը իր երեխի հետ նստած կը լինի քաղաքի այգում: Երեխան չարություն է անում, մոր սպառնալիքները բանի տեղ չի դնում:

Այդ ժամանակ Պոլոզ Մուկուչը կանցնի կնոջ մոտեն:

Կինը դառնում է Պոլոզ Մուկուչին:

—Մուկո՛ւչ եղբայր, ինչ կեղնի էրեխին մե հատ՚մ սաստես, յընձի յանկաջ չի էնե:

Պոլոզ Մուկուչը դառնում է էրեխին ու ասում.—Մորդ յընչի՞ յանկաջ չես էնե, խելոք չես մնա: Ես էնոր ծոցը պառկիմ...

—Չես ամչնա, յամոթ չունի՞ս, էդ ի՞նչ կըսես...

—Ըսինք, խո չէրինք,—հանգստացնում է կնոջը Պոլոզ Մուկուչը:

102(318). ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՈԼՈԶ ՄՈՒԿՈՒՉԸ

Երևանի ուսանողները գնում են Լենինական՝ էկսկուրսիա, վճռում են անպատճառ տեսնել հռչակավոր Պոլոզ Մուկուչին:

Գտնում են նրան իրա խանութի առաջ կանգնած, մոտենում են ու հարցնում.

—Դռ՞ւք եք Պոլոզ Մուկուչը:

—Հա՛, ես եմ, ի՞նչ է էղե:

—Ուզում ենք ձեզ հետ ծանոթանալ ու զրուցել, ասում են դուք շատ հետաքրքիր ու զվարճախոս մարդ եք... մի բան ասեք, լսենք:

—Ա՛յ, տնաշեններ, Պոլոզ Մուկուչ է՞ մնացե, բերնեն մտել եք, յո....ն դուս եք յելե.

ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐ

103(319). ՍԵՐԸ ԽՈՐԱՆՈՒՄ

Մի գյումրեցու տղա սիրահարվում է մի գյումրեցի աղջկա վրա: Զանազան պատճառներով տղան չի կարող մոտենալ աղջկան և իրա սերը բացատրել:

Վերջապես մի գեղեցիկ օր տղային հաջողվում է եկեղեցու խորանում մենակ բռնեցնել աղջկան ու ասել.—Աղջի՛, ես քեզի սիրեմ կը...

Աղջիկը որ ոչ մի բանի տեղյակ չէր, պատասխանում է.—Սուտ կը խոսիս, չեմ հավատա:

Տղան.—Ստի հոր հոգին:

104(320). ԱՐԱ՛, ԽԻ՞ ԵՍ ԲՐԹՈՒՄ

Մի գյումրեցի տղա պատմում է իրա ընկերին.—Նոր եմ էկե Էրևնուց, տո, ի՞նչղ էղավ մեկի՛մ դիպա, դառավ ու ըսավ. «Արա՛, խի՞ ես բրթում», յետև գլխի յընկա, գուզեր ըսել. «Տո, յընչի՞ կը հրնդես»:

Մյուս ընկերը զայրացած.—Տո՛, տնաշեն, չկրցա՞ր ըսել, որ մենք «արա» պատի ծակին կսենք, վրեն էլ կշռենք:

105(321). ԹԵԼԸՄ ԿԱԲԵ ՄԱՏԸ*

Ավետիք Իսահակյանն օր կը մեռնի, Դերենիկ Դեմիրճյանի կնիգը գընգնի Իսահակյանի դիակի վրա, գուլա ու կըսե.—Ավո ջան, կէրթաս Դերենիկիս կըսես, օր կնիգդ, էրեխեքդ, բիթուն շատ լավ են, որ ես կաշխատիմ, տուն-տեղ, ամեն բան լավ է:

Էդ վախտը գյումրեցի՛մ նստած աչքի տակով կաշե, կըսե.—Քուր ջան, էդման միտքը չի մնա, թելըմ կաբե մատը:

106(322). ԿԱՐՊԸՑԻՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Կարպըցին գալըմ է գեղի մեչը, հարցընըմ Բտեյենց Օհանին.—Կյա՛, էտ չարխըները ո՞րտից ես առե:

—Ա՛հ,—ասըմ է,—գյումրեցի մեկը բերեց, առա:

Ասըմ է.—Կյա՛, քանի՞ ես առե:

Ասըմ է.—Առեր եմ վեց շայու:

—Լավ է,—ասըմ է,—ես էլ էքուց էրթամ Գյումրի, մե ջուխտ չարուխ առնիմ՝ Քյավառ էթալուն ո՞տներս պինդ ըլի:

Էտ ասելուց առավոտը էն բաշտեն էթում ա դռ՞ւզ Գյումրի:

Կաշի առնելու վախտը գյումրեցին հարցնըմ է.—Ծո՛, ո՞ւրտից ես:

Ասըմ է.—Կարպըցի եմ:

—Բա,—ասըմ է,—անունդ ի՞նչ է:

—Զոյրաբ:

—Անընիդ մեռնիմ, Զոյրաբ ջան, էդքան կաշիքը աշեցիր, մեկին չավնա՞ր:

Ասըմ է.—Ախպեր, իմ ուզած կաշին չկա:

Ասում, էթում է մի ուրիշ տեղ: Էտտեղ էլ չէ ըլնում: Էթում է լա՛փ էն գլխի խանութը: Ասըմ է.—Ախպեր, կաշի ունի՞ս, բեր առնեմ:

Գյումրեցին կաշիքը բերում թափում է կարպըցու դեմը: Թամաշա է անում, թամաշում, էլի չի հավնում: Գյումրեցին մտքում ասում է. «Էսքան գյումրեցիներին, կաշըքուն չը հավնեց, յավաշ, ես էսո՞ր գլոխը մե էման քյա՛լակըմ փերեմ, օր օխտը տարի մտքեն չելլե»:

Ասըմ է.—Կարպըցի ախպեր, վերի էթաժին էլ կաշի կա, ել էնտեղ, աշե՝ չե՞ս հավնի:

Գյումրեցին նա՛ռդըվանը դընում է ու կտուրի ծակից հանում կտուրը: Կարպըցին թամաշ է անում, տեսնում է՝ կաշի չկա:

Գյումրեցին էդ վախտը նաՙրդըվՙանը քաշում է, դընում ցած: Կարպըցին շիվար է մընում կըտրանը: Գյումրեցին ձեն է տալիս.—Ծո՛, խանութպաննեՙր, արՙիք, արՙիք, սատանա խափող կարփեցուն երթիկն եմ հանեՙ:

Կաշի ծախող գյումրեցիք գալըմ են տեսնում, որ էտ մարթը էն իրենց կաշին չավնող կարպըցին է, ասում են.—Դե գնա՛, կարփեցի, պատմե՛ ձեր գեղը: Ինչըղ օր դուք սատանին եք խափե, էման է մենք ձեզի խափեցինք:

107(323). ԿԱՐՊԵՑԻՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՋՈՒՐ Է ՊՆԴԱՑՆՈՒՄ

Կարփեցին կէրթա Գյումրի՝ բան առնելու: Կէրթա կը մըտնի մե թիքՙան, կըսե.—Ախպեր, թի ունՙիս:

Կըսե.—Ունիմ:

Կըսե.—Մե բան հարցընեմ:

Կըսե.—Հարցու:

Կըսե.—Կըրնա՞ս ջուր պընդըսնես:

Կըսե.—Կըրամ:

—Դե,—կըսե,—հոս կայնե, ես էրթամ մե տեղըմ, գամ:

Թիքնՙին օր կէրթա դրկըցնուն քովը, կըսե.—Տղե՛ք, արե՛ք, սատանա խափող կարփեցի՚մ եմ ձեռք ցգե, ջուր պիտի պընդըսնե, արեք քիչըմ խընդանք:

Մինչև գյումրեցին գըլխուն կը հավաքե, թՙուքՙանը կը բերե, կարպըցին թՙուքՙանի միչի էղած-չեղած կանֆետը, չամիչը, թութունը, պընդուկը քՙուլլի թոփ կէնե կը լըսնե բոշկի ջրի մեչն ու կըսկըսե խառնելը: Գյումրեցիք թոփ կըլլին, օր խընդան կարպըցու վրեն, կաշեն, օր թին ձեռը բոշկեն կը խառնե:

—Ծո՛,—կըսեն,—էտ ՙինչ կէնես:

Կըսե.—Ջուր կը պընդըսնեմ:

108(324). ԷԴԻ ՀԸԼԸ ՁԵՆԸ...*

Ախճիգըմ վագոնով տեղ կէրթա, պադուհանից դուրս կաշե: Մեգ էլ ինչղ կեղնի՝ մե հադըմ բաց կթողնե: Տաք ու պաղ քրդինքը վրեն կուդա, ամոթուց մադով պադուհանի շուշեն կը ճըռռացնե:

Էդտեղ գյումրեցի՚մ նստած կեղնի, կըսե.—Աղջիկ ջան, դառի՝ մե աշենք, էդի հըլը ձեՙնը, ըբը հՙոտը...

109(325). ՔԻՇՄԻՇԸ ՀԱՎԵՐՈՒՆ ԿՈՒՏԱՆՔ

Երկու գյումրեցի ամառը, քաղաքի զբոսայգում նստած, խոսում են:

Նրանցից մեկը հանդիմանում է մյուսին.—Տո, աննա՛մուս, ջեբեդ գռոշ՚մ դուս չի գա, յուրիշի վրա կը խոսՙիս:

Մյուսը զայրացած պատասխանում է.—Հլը իսոր աշե՛, ՙինչ կը խոսիս, զատկվա փլաֆը տեյմոր հիմի մնացել է, հավերուն կուտանք, էն էլ քիշմիշը կը ջոկեն...

110(326). ԴՈՒՌԸ ԿԸ ՄՆԱ ԿԻՍԱԲԱՑ

Գիմրեցի դիրգարը քաղաքում շինում է մի մարդու դուռը, բայց այնքան անհաջող, որ տան տերը կտրում է դիրգարի վարձը: Դիրգարը գործը տալիս է դատարան: Դատավորը դիմում է դիրգարին, որ նա պատմե գործի վերաբերյալ:

Դիրգարը պատմում է.—Քաղաքացի դատավորներ, փետը թաց, վակզալեն գողցած, ուստին՝ մենակ պանիր հաց, յըլբթ դուռը կը մնա կիսաբաց:

Դատավորը գործը որոշում է դիրգարի օգտին:

111(327). ԲՙԺԻ-ԲՙԺԻ

Երկու գյումրեցի գնում են Արփաչայի քանարը՝ ժամանակ անցկացնելու: Հետները վերցնում են արաղ, պանիր,հաց, կանաչեղեն ու մի հատ էլ եփած ոչխարի գլուխ:

Սկսում են գլխավորից՝ արաղից: Մի քանի կենաց գնալուց հետո, ուզում են ոչխարի կարմցրած քալլեն ուտել, բայց անիրավ քալլեն ձեռից սլլում է ու ընկնում ջուրը: Ում ձեռքից որ քալլեն սլլացել էր, վերցնում է մի փունջ կանաչ, երկարացնում է քալլի ուղղությամբ ու կանչում.—Բՙիժի, բՙիժի, բՙիժի:

Մյուս, ավելի խելացի ընկերը, ուզենալով ուղղել ընկերոջ սխալը,ասում է.—Տո, այօղուլ, «բիժի-բիժի» էփածին չեն ըսե, հումին կըսեն:

112(328). ԽԱՆՈՒՄ ԱՊԼԱՅԻ ԲԱՂՆԻՔԸ

—Աղջի՛, դու չափե, քանի ըսեմ՝ մի՛ լցնե, դու լի՛ց:

—Ախր, խանում ապլա, ջուրը տաք է... ուշքդ կերթա:

—Բան չունիս, դու չափե, ուշք է, կերթա էլ, գուքա էլ... դու չափե:

Աղջիկը չափում է:

—Յեֆֆ, ամա՜ն, չա՜փե:

Քիչ հետո լսվում է խանում ապլայի կմկմոցը.—Գնա, տղին ղրկե ուստի քովը... յա՛ տանձ, յա՛ խնձոր, յա՛... յա՛ հասնի, յա՛ չը հասնի:

113(329). ԻՄ ՄԱՐԴՍ ՎԵՆՁ Է

Երկու գյումրեցի կին իրար հետ խոսելով ճանապարհ են գնում:

Նրանցից մեկը պարզենում է.—Իմ մարդս յեռսուն տարի է վակզալը կաշխատի, վենձ է, վենձ է:

Մյուսը հարցնում է.—Հլը ըսա տեսնինք, ի՞նչ գործ կէնե, օր կըսես՝ վենձ է:

—Ըշտը ըսի՝ վենձ է, էնիկ տեյմոր զանգը չտա՝ պոեզը չի էրթա:

ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻՆԵՐ

114(330). ԱՆՀԱՋՈՂ ՀԱՅՀՈՅԱՆՔ

Մի քոլեցի Լենինականում ջղայնանում է ու, ուզենալով տեղացիների տարածված հայհոյանքով արտահայտվել, ասում է.—Ես քու ֆոր ֆոգին:

Այդտեղ գտնվող լենինականցին դառնում է քոլեցուն.—Տո, աննամուս, գիզալըմ քիֆիրը բերանդ ես առե՝ մունտռես կը, չե՞ս կրնա մարդավարի, ջիգրով ըսե՝ ես քու հորդ հոգին...

115(331). ՅՈ՞ՒՐՏԵՂ ԿԱՇԽԱՏԻՍ

—Յո՞ւրտեղ կաշխատիս:

—Դեպոն:

—Ի՞նչ կենես:

—Եղեմ կը:

—Ինչքա՞ն կուտան:

—Հազարեն վեց հարուր մանեթ պակաս:

—Ըսա մեկեն՝ չորս հարուր մանեթ:

—Մենք հազարով կը խոսինք[117]:

116(332). ՌՈՒՍԵՐԵՆ ԳԻՏԵ՞Ս

—Օնի՛կ, ռուսերեն գիտե՞ս:

—Գիտեմ:

—Ի՞նչխ կըսես՝ «Արի իստեղ»:

—Իդտեղ վով կա օր, կըսեմ ՝ «Իդի սուդա»:

—Յըբը ի՞նչխ կսես՝ «Իստեղից գնա»:

—Կերթամ մեկել թարաֆը ու կըսեմ՝ «Իդի սուդա»:

117(333). ՉԱԼՓԱՇՈՒԿ ԿԱՐՈՅԻ ՀԱՐԲԵԼԸ

Սվաղչի Կարոն բացի նրանից, որ լինում է շատ հարբեցող, լինում է միաժամանակ այնքան թափթփված, կեղտոտ, «փինթի» մարդ, որ նրան կցում են «չալփաշուկ» (կեղտոտ, ցեխոտ) մականունը:

Մի անգամ Չալփաշուկ Կարոն այնքան է խմում, որ փողոցում վայր է ընկնում ու մնում պարկած:

Միլիցիոները երբ տեսնում է փողոցում ընկած մարդ, մոտենում է նրան ու ասում.—Վեր կա՛ց, գնանք քաղաքամաս:

Չալփաշուկ Կարոն պատասխանում է.—Վեր յելնել որ կրնըամ, ըշտը կէրթամ տուն:

---

[117] Տարբերակ՝ «Վո՞վ է խելոռ որ չորս հարուր մանեթով աշխատի» (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի)):

118(334). ԷՐԹԱՆՔ ՔԱՂԱՔԱՄԱՍ[118] (Տարբերակ)

Մի հարբած մարդ պարկած է լինում Լենինականի փողոցներից մեկում:

Միլիցիոնները մոտենում է ու ասում.—Վեր յել, էրթանք քաղաքամաս:

—Վեր յելնելու օր էղնիմ, ըշտը կերթամ տուն:

119(335). ԵՍ ԻՄ ԿԱԴՐԵՐԸ ԳԻՏԵՄ

Միլիցիայի աշխատողների ժողով է:

Հանկարծ մի անտանելի հոտ է ընկնում:

—Կիրակոսյան,—կարգադրում է նախագահը, գեշ հոտ հանելու համար գնա՛ դուս:

Ժողովականներից մեկը տեղից բողոքում է.—Ընկեր նախագահ, ի՞նչ գիտես թե Կիրակոսյանն է գեշ հոտ հանողը:

—Յընչի՞, ես իմ կադրերը չ'ի՞դեմ:

120(336). ԴԱՎՈՒԼ-ԶՈՒՌՆՈՎ ՀԱՍԱՆՔ ՏՈՒՆ

Տեկստիլի մի բանվորուհի գիշերվա հերթափոխից հետո վերադառնում է տուն: Վախենալով գիշերվա մթությունից, նա հետևում է մի անծանոթ տղամարդու, որը գնում է նույն փողոցով: Այդ տղամարդը իրան շատ ազատ է զգում, ու մերթ ընդ մերթ փորի քամի է բաց թողնում:

Կինը ավելի շուտ է հասնում իրենց տուն ու, կանգնելով դռան առաջը, դիմում է անծանոթին.—Շնորհակալ եմ, աղբեր ջան, դավուլ-զուռնով հասցուցիր տուն:

Տղամարդը հետ է դառնում ու պատասխանում.—Քուր ջա՛ն, թե վախտ ունիս մե ղայդե՛մ էլ չալեմ:

121(337). ՕՆԻԿԸ ՇՈՔԵՆ ՄԵՌԱՎ

Լենինականցի Օնիկը գնում է խամ ու խոպան հողերը, աշխատելու:

Ձմեռվա սառնամանիքին, առանց վերարկու և վալենկաների, միայն կաստումով դուրսը կաշխատի:

—Ցո՛ւրտ է, կը մրսիս,—ասում են ընկերները:

—Ես մրսի՞մ, ահա, պինջակս էլ կը հանեմ:

Հանում է պինջակը, մրսում է ու հիվանդանում: Օնիկին տանում են հիվանդանոց: Տաքությունը բարձր է, դրությունը լուրջ:

Ընկերները գալիս են նրան տեսության.—Տո, Օնիկ, յընչի՞ ես հիվնդցե...

—Լենինական նամակ գրեք,—հազիվ ասում է նա,—օր Օնիկը շոքեն մեռավ:

122(338). ԻՆԺԻՆԵՐ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՄԱՅՐԸ

Ինժիներ Ատոմ Անտոնյանը դիմում է դատարանին, որ իր հոր կողմից թողած միլքերը հաստատեն իր մոր վրա:

Դատավորը հարցնում է մորը.—Մայրի՞կ, ո՞ր թվին եք ծնվե:

—Որդի, էն ժամանակ թիվ չկար:

123(339). ԴԵՊՈՆ ՓԱԿԵ՞ՆՔ

Լենինական կայարանի դեպոյի կուսկոմիտեի քարտուղարը մտնում է դեպոյի շենքը այն ժամանակ, երբ հերթապահ մաշինիստ Խուրշուտենց Ավոն զայրացած սաստիկ հայոյանքներ է թափում:

—Ընկեր Խուրշուտյան,—ասում է քարտուղարը,—որոշված է վերջ տալ քյուֆուրներին:

—Տո ի՞նչ կըսեք, մեկեն ըսա՝ դեպոն փակենք:

124(340). ՕՆՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

1963 թ. շախմատի համաշխարհային չեմփիոն դառնալու հավակնորդներ՝ Բոտվինիկի և Տիգրան Պետրոսյանի մատչի ժամանակ գյումրեցի Օնոն նամակ է գրում Մասկվա՝ Տիգրան Պետրոսյանին.

«Ծո այօղուլ, հորդ թայն է, հետը հանաք յընչի՞ կենես, կրես պիտի՝ մեկեն կրե»:

---

[118] Պարզվեց որ «Էրթանք քաղաքամաս» անեկդոտ չէ, այլ՝ եղելություն: Միլիցիոները դիմել է հարբած Չալփաշուկ Կարոյին, որ ընկած տեղից վեր կենա (ծանոթ. Պ. Բարսեղյանի):

125(341). ԵՐԳՉՈՒՀԻ ԹՈՒՇԻԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Թուշիկ Խաչատրյանը,
Հաստ էր ու փարթամ:
Մեկ անգամ գարնանը
Գնաց Լենինական:
Տղեքը երգչուհուն որ տեսան,
Իսկույն տվին գնահատական.
«Տո էդոր մերը չը մեռնի,
Չփխած դեշակ գլմանի»:

126(342). ԹԱԶԱ ԲԱՆ ԸՍԵՔ

Ջահելները թոփ են էղե մարջ էն բռնե, թե էդոնցեն վեր մեկը շատ կռնա հանելուկ ըսե: Էդոնց քովն էլ մի հատ'մ լենինականցի կէղնի կայնած, անկաջ կէներ էդոնց, հըմը իրան դուր չի գա:

—Յա՛, էդ ի՞նչ է, օր կսեք, թազա բան ըսեք, էդիկ ինչխ օր նաֆտալինի մեջը պահած էղնի,—կսե լենինականցին:

127(343). ԱՇՏԱՐԱԿՑԻՆ ԵՎ ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻՆ

Աշտարակցի բիձան էշին նստած գալիս հանդիպեց մի ինքնաթափ աֆտոմեքենայի, վերջինս կանգնեց, և վարորդը իջավ ու դիմեց բիձային.—Բարև, հայրիկ, քեզի ղուրբան էղնիմ, Ոսկեվազ կէրթամ, բենզինս հերիք չի էնե, շատ կխնդրեմ քիչ'մ բենզին տու: Քո էրած լավությունը հեչ չեմ մոռնա...

Բիձան իշուց իջավ, մոտեցավ էշի պոչը բարձրացրեց և ասաց.—Վուրդի ջան, արի նայի, ես էլ զրոյի վրա եմ քշում, ափսոս, որ չեմ կարա քեզ օգնեմ, դե ողջ ըլես...—ասաց բիձան, հեծավ իշին ու շարունակեց ճանապարհը:

128(344). ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիից Երևան գնացքով գալիս մի լենինականցի ուղևոր պրավադնիկին խնդրեց Ջաջուռ կայարանում իրեն զգուշացնել՝ իջնելու համար և ինքը պառկեց քնելու:

Մոռացկոտ պրավադնիկը արթնացրեց ուղևորին միայն, երբ գնացքը կանգնել էր Ջաջուռ կայարանում: Ուղևորը վեր թռավ, վերցրեց պատից կախված մի գլխարկ և մի վերնազգեստ գցեց ուսին և մի կերպ դուրս պրծավ գնացքից: Երբ նա հանկարծ անձրևաջրերից գոյացած հայելու մեջ ինքն իրեն տեսավ, զարմացած բացականչեց.

—Ըլը էս իշու ձաք պրավադնիկին աշե, ինձի զարթնեցնելու տեղը հարևանիս է քնից հանե...

129(345). ՀԱՐԵՎԱՆ ՍԱՀԱԿԸ*

Լենինականցի մի քանի տղա գալիս են Երևան, նստում «Արմենիա» ռեստորանում, խմում են: Խմելու թեժ պահին մի քաչալ մարդ գալիս է դիմացի սեղանին նստում:

Տղերքից մեկը մեկին ասում է.—Ծո՛, Գևոր, կրնա՞ս էրթաս էդ քաչալ մարդու գլխին մե հադըմ զա՞րգիս:

Կըսե.—Բութուրգե'մ կանյակ առ, էրթամ:

Կըսե.—Առա:

Տղան գնում է, թքում ափի մեջ ու «չը՞թ»՝ մի հատ էդ քաչալ մարդու գլխին:

Էս մարդը վեր է թռչում, թե.—Ի՞նչ ես անում, խուլիգան, ի՞նչ գործ ունես ինձ հետ, հիմա միլիցիոներ կը կանչեմ:

Տղան թե.—Վա՛յ, ներող կեղնես, հորեղբայր, ես կարծեցի թե դու մեր հարևան Սահակն ես:

Մարդը, տեսնելով, որ տղան իսկապես թյուրիմացությամբ է արել, ասում է.—Ոչինչ, ոչինչ, սխալմունք է, կպատահի:

Սկսում են խմել, քեֆերը լավանում է, ընկերը նորից դիմում է Գևորին.—Ծո՛, կրնա՞ս մե հադըմ էլ զա՞րգիս:

—Յիրեք բութուրգա կանյակ ա՛ռ...

—Առա՛:

Գևորը նորից է մոտենում քաչալին ու մի հատ գլխին շրխկացնում: Սա նորից վեր է թռնում տեղից, աղմկում:

Գևորը թե.—Դուզն ըսե, ինձի կը թվա, թե դու մեր Սահակն ես, դիտմամբ չես ըսե:

Էս մարդը երդում-պատռտում, վերջը հանգստանում են, հաշտվում: Նորից շարունակվում է կերուխումը:

Քիչ անց ընկերը դիմում է Գևորին.—Ծո՛, Գևոր:

Թե.—Ի՞նչ է:

—Կրնա՞ս մե հադըմ էլ զարգե:

—Հինգ բութուրկա կանյակ ա՛ռ:

—Առա:

Գևորը վեր է կենում, մոտենում քաչալին, էս մարդը ինքն է տեղից վեր թռնում էս անգամ ու ասում,—Հա՛, ախպեր, ես ձեր հարևան Սահակն եմ:

—Ծո՛, քու ծնողը...., հըբը ես օր էսքան գուկամ ու հարցնեմ գը, դու ընչի՞ ընձի կը խափես:

Ասում է ու մի հատ էլ շրխկացնում գլխին:

130(346). ԱԽՊԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ*

Երևանցի իրեք ուսանող գուզեն իրենց կուրսեցի լենինականցու՛մ ձեռ առնեն: Ամեն օր գելնեն կկեղտոտեն էս տղի կոշիկների մեջ: Էս լենինականցին էլ ամեն օր գելնի սուս-փուս կը լվա, կը հաքնի ու կէրթա: Մե տաս օր օր գընցընի, էս տղերքը կը զարմանան էդ տղի համբերության վրա, կըսեն.—Այ տղա, դու հոյակապ մարդ ես էղե, մենք քեզ էսքան բան արեցինք, դու ձեն չհանեցիր: Արի՛, սրանից հետո դառնանք մոտիկ ախպեր-տղերք: Ով որ սրանից հետո քու կոշիկների մեջ կեղտոտի, ես նրա մերը...

Լենինականցին թե.—Շա՛տ լավ, ով որ սրանից հետո ձեր չայնիկի մեջ շռի, ես նրա մերը...

131(347). ՏՐԱՄՎԱՅԻ ԳԾԵՐԸ

Երևանցին ուշ գիշերով գուկա կիջնի Լենինական, չորս բոլորը կաշե, բան չի գտնի, օր նստի էրթա: Հարբած մարդու՛մ կը հանդիպի, կըսե.—Ներողություն, ախպեր ջան, տրամվայը որտե՞ղ է, որ նստեմ գնամ հրապարակ:

Կըսե.—Գիշերը գծերը հավաքեն գը:

132(348). ԸՆՉԻ՞ ՏՐՈԼԵԲՈՒՍ ՆՍՏԱՆՔ*

Լենինականցին տրոլեյբուսի վերջին դռան մոտ կանգնած ա ըլում, բարձրացողը ճամփա յա խնդրում: Էնքան են ճամփա խնդրում, որ էս մարդուն հրընդելով հասցնում են մինչև առաջին դռան մոտ:

Ասում ա.—Է՛, օր յոդով բդի գայինք, էլ ընչի՞ տրոլեբուս նստանք:

133(349). ԼԵՆԻՆԱԿԱՆՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ*

Յերևընցիք գուզեն լենինականցուն ձեռ առնեն, կըսեն.—Ծո, Լևոն Հայկազունին տեսա՞ք՝ ինչ մարդ էր, սաղ աշխարհը ֆռռաց, ֆռռաց, էգավ վերջը Լենինական ընկավ մեռավ:

Լենինականցին թե.—Իրեն վո՞վ ըսավ՝ գնա՛ սադանի մայլեն քյանդըրբազ խաղա օր...

134(350). ԼԵՆԻՆԱԿԱՆՑՈՒ ՏՈՐՏԸ

Լենինականցի՛մ կէրթա հրուշակի գործարան, կըսե.—Վարպետ, էնպես տորտըմ սարքե, օր վրայեն Արփաչայն էրթա, կողքին ծառներ բուսած էղնին, ծառի վրա ճնճուղ էղնի, ծառի տակն էլ Մարգոն ու Օնիկը նստած էղնին:

—Շատ լավ,—կըսե վարպետը,—էգուց համեցեք տարեք:

Էքսի օրը գուկա տորտի, վարպետը ցույց կուդա տորտը:

Կաշե, կըսե.—Շատ լավ է, վարպետ, հըմը ճընճըղի կտուցը քիչըմ ծուռ է:

Կըսե.—Ծուռ է՝ դրստեմ:

Կվերցնե, կդրստե, կըսե.—Փաթըթեմ՝ տանի՞ս, թե առանց փաթըթելու՝ բռնած տանես:

—Չէ,—կըսե,—հոս բդի ուտեմ:

ՎԱՐԴԱՆԻԿ ԵՎ ԸՆԿԵՐ ՄԱՐԳՈ

135(351). ԻՆԻԿ ՅԻՐԵ՞ՔԻ ԲԱՆ ԷՐ

Վարդանիկը իրանց տան պադեզդում տեսնում է, որ իրա վարժուհի Մարգոն համբուրվում է մի տղամարդի հետ: Վարդանիկին նկատելով, իսկույն բաժանվում են, և տղամարդը հեռանում է: Վարժուհի Մարգոն մոտենում է Վարդանիկին ու հարցնում.—Դու այստեղ ի՞նչ ես անում:

—Ես էս տան մեջը կապրիմ:

—Գիտես, Վարդանիկ ջան, այստեղ ինչ որ տեսար ոչ ոքի չասես, լավ:

—Խո խելառ չեմ, օր ըսեմ:

Մյուս օրը վարժուհին դաս է հարցնում Վարդանիկին, սա դասը չի գիտենում: Դասից հետո վարժուհին մոտանում է Վարդանիկին ու ասում.—Տեսա՞ր,Վարդանիկ, դու դասդ չգիտեիր, բայց ես քեզ երեք դրեցի:

—Յա՛,—զայրանում է Վարդանիկը,—ինիկ յիրեքի բան էր:

136(352). ԴՈՒՍ ՉԵՆ ԳԱ

Վարդանիկը էլի դասը չի գիտենա: Վարժուհի Մարգոն զայրացած.—Էլի դասդ չես սովորե, վաղը կանչե այստեղ ծնողներիդ:

—Հերիք չեղա՛վ՝ կանչեմ, չէ՛, էլ չեմ կանչե:

—Չես կանչե՞, այդ դեպքում վաղը ես ինքս կը գամ ծնողներիդ մոտ:

Վարդանիկը, իհարկե, չի ուզում որ վարժուհին պատահի ծնողներին ու գանգատվի: Ի՞նչ անի: Խաբում է ծնողներին, որ ինքը այսօր տեսել է հորեղբորը, որը վաղը հրավեր ունի, ձեզ էլ կանչեց, ու ըսավ. «Թող անպատճառ գան»:

Մյուս օրը, նախքան հրավեր գնալը ծնողները վճռում են տանը լողանալ: Ամուսինները մտնում են լողարանը: Մի քիչ հետո հայրը կանչում է.—Վարդանիկ ջան, վազելինը տաս:

Վարդանիկը տալիս է հոր ուզածը: Քիչ հետո գալիս է վարժուհի Մարգոն:

—Ո՞ւր են ծնողներդ:

—Լողանան կը:

—Լա՛վ,կսպասեմ մինչև վերջացնեն:

—Մի՛ ըսպասե, մարդ ու կնիկ բաղնիք օր էրթան, էլ ե՞ֆ դուս գուկան:

—Երբ որ դուս էկան, ես կսպասեմ:

—Կըսեմ մի ըսպասե, դուս չեն գա:

—Բայց ինչո՞ւ դուս չպիտի գան:

—Վազելինի տեղը ես էնոնց ՎՓ-2 կլեյ եմ տվե:

137(353). ՎԱՐԴԱՆԻԿԸ ԴԱՍԸ ՉԳԻՏԻ

—Վարդանի՛կ:

—Հաջա՛ն:

—Դասդ գիտե՞ս:

—Հոգուտ մեռնիմ, չէ՛:

138(354). ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Վարժուհի Մարգոն բնագիտության դասին հարց է տալիս.—Ահա այստեղ երկու մորթի կա, մեկը էգինն է, մյուսը որձինը, կարելի՞ է արդյոք շոշափելով որոշել ո՞րն է էգինը, ո՞րը՝ որձինը:

Աշակերտները ձեռք են տալիս մորթիներին, շփում են, բայց չեն կարողանում տարբերել:

Վարդանիկը շփելով մորթիները ասում է.—Ահա՛ իսի մորթին էգինն է:

—Որտեղի՞ց հասկացար, որ էգինն է:

—Իսոր օր ձեռքով շփեցի, մե տեսակ՚մ եղա:

139(355). ՎԱՐԴԱՆԻԿԸ ՈՒ ՏՌՈՒՍԻԿԸ

Վարժուհի Մարգոն հարցնում է Վարդանիկին.—Վարդանի՛կ, երեկ ինչո՞ւ չէիր եկել դասի:

—Մերս տռուսիկս լվացել էր:

Մյուս օրը Վարդանիկը էլի չի գալիս դպրոց:

Վարժուհի Մարգոն զայրացած.—Ինչո՞ւ նորից չեկար դպրոց:

—Երեկ ձեր տան քովեն անցա, տեսա, օր ձեր տռուսիկը կախած էր լվացքի չվնին:

140(356). ԿՈՎԸ ՄԵԶ Ի՞ՆՉ Է ՏԱԼԻՍ

Վարժուհի Մարգոն դասարանին հարց է տալիս.—Կովը մեզ ի՞նչ է տալիս:

Վարդանիկը ձեռքը բարձրացնում է:

—Ասա,Վարդանիկ:

—Կովը մեզի կուտա թրիք:

—Էլ ի՞նչ է տալիս:

—Թրի՛ք,—կրկնում է Վարդանիկը:

—Լա՛վ, թրիք, իսկ կաթ չի՞ տալիս:

—Կաթը վերցնե կը պետությունը, մեզի մնա կը թրիքը:

141(357). ՎԱՐԴԱՆԻԿԻ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍԸ

Վարդանիկի ծուլության և անկարգության համար վարժուհի Մարգոն հաճախ ասում էր.—Վարդանի՛կ, քեզնից Պողոս-Պետրոս դուս չի գա:

Վարդանիկը այդ խոսքերը հաշվի է առնում: Անցնում են տարիներ:

Մի օր նա փողոցում հանդիպում է իրա նախքին վարժուհի Մարգոյին:

Վարդանիկը գնում էր իր երկու փոքր տղաների ձեռքը բռնած, տեսնելով վարժուհուն՝ նա ասում է.—Ընկեր Մարգո, դուք կսեիք, թե յընձնեն Պողոս-Պետրոս դուս չի գա, յըբը յընչի՞ դուս էկավ, խնդրեմ ծանոթանաս, իսիկ Պողոսն է, ինիկ Պետրոսն է:

142(358). ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ* (Տարբերակ)

Վարդանիկը շատ վատ սովորելիս կլի:

Ընգեր Մարգոն միշտ ասում է.—Վարդանիկ, քեզնից Պողոս-Պետրոս չի դուրս գա:

Դպրոցը ավարտելուց հետո մի քանի տարի անց ընկեր Մարգոն այգում զբոսնելիս հանդիպում է Վարդանիկին՝ երկու երեխայի ձեռից բռնած:

Ասում է.—Բարև, Վարդանիկ, ո՞նց ես, էս քու ճուտիկներն ե՞ն:

Թե.—Հա՛, ընգեր Մարգո:

Թե.—Անուններն ի՞նչ են:

Թե.—Մեգի անունը Պողոս է, մյուսինը՝ Պետրոս:

—Վա՛հ,—զարմանում է ընկեր Մարգոն:

—Ըբը,—ասում է Վարդանիկը,—դու ինձի կըսեիր, թե քեզնից Պետրոս, Պողոս չի դուս գա:

143(359). ՎԱՐԴԱՆԻԿԸ՝ ԲԺԻՇԿ*

Մարգոյի էրեխեն գը հիվանդանա, կէրթա ամբլատորիան, կաշե, օր Վարդանիկը բժիշկ է դառե:

Կըսե.—Էս ի՞նչ բան է, Վարդանիկ:

Թե.—Ըբը, ընկեր Մարգո, էնքան լավ աշակերտ էի, օր բժիշկ դառա:

Թե.—Լավ է, էրեխեն հիվանդ է, աշե:

Վարդանիկը կաշե, կըսե.—Ընկեր Մարգո, յանցի շիրմի յեդևը, պառգի:

—Իյա,—կըսե,—հիվանդը ես չեմ, Վարդանիկ:

Թե.—Ավելի լավ է թաժա էրեխե՛մ շինենք, ընկեր Մարգո, քան էսուր պաճինկա էնենք:

144(360). ՎԱՐԴԱՆԻԿՆ ՈՒ ԸՆԿԵՐ ՄԱՐԳՈՆ*

Վարդանիկը էրկու օր դպրոց չի էրթա, երրորդ օրն օր կէրթա, ընգեր Մարգոն կը հարցնե.—Վարդանիկ, ուրտե՞ղ ես, դասի չես գալիս:

Թե.—Ընգեր Մարգո, էրեգ չէ յառճի օրը խաղալիս տռուսիգս պադռավ, մերս կարգդնեց, լվաց՝ չըկրցա գալ:

—Ըբը յէրեգ ուրդե՞ղ էիր:

—Յէրեգ էլ ձեր դռնով կանցնեի, տեսա՝ ձեր տռուսիգն էր կախած, էլ դպրոց չեկա:

145(361). ՎԱՐԴԱՆԻԿԸ ՓՈՂ Է ԱՇԽԱՏՈՒՄ*

Վարդանիկի պապան պիտի բոզ բերե տունը:

Վարդանիկին կըսե.—Նստի պատուհանի գոգը, վով օր փողոցով անցնի, ըսե, մանեթըմ կուդամ:

Վարդանիկը կը նստի պատուհանը: Հերը Մարուսին կբերե և այլն:

Վարդանիկը կըսե.—Պաբա՛, մարդըմ յընցավ:

Հերը կըսե.—Հա, մանոթըմ քեզի, բալամ:

Մեկ էլ կըսե.—Պաբա՛, մարդըմ յընցավ:

Թե.—Էրգու մանեթ, Վարդանիկ:

Վերջը Վարդանիկը գլխի կընգնի, կըսե.—Պաբա, մեռել ընցավ, վրեդ թանգ կը նստի:

146(362). ՎԱՐԴԱՆԻԿԸ՝ ԱԿԱՆԱՏԵՍ*

Վարդանիկի պաբան բոզ կբերե տուն: Յիրգուն Վարդանիկի մաման գուկա տուն, հերն էլ ըստեղ կեղնի:

Վարդանիկը կըսե.—Մամա ջան, գիտե՞ս ինչ էղավ էսօր:

Կըսե.—Ի՞նչ էղավ:

Կըսե.—Պաբան Մարուս տոտային բերեց տուն...

Հերը գողդուց ոտով կը զարգե Վարդանիկին:

Մերը թե.—Հետո՞, հետո՞...

Վարդանիկը թե.—Հետո պաբան Մարուս տոտային տարավ ներսի օթաղը:

—Հետո՞, հետո՞,—կըսե մերը:

—Հետո,—կըսե,—ինչ օր քեզ Հրաչ ձյա-ձյան էրավ, էն էլ Մարուս տոտային պաբան էրավ:

147(363). ՎԱՐԴԱՆԻԿԻ ՌՈՒՍԵՐԵՆԸ*

Ընգեր Մարգոն տրոլեյբուս կը նստի, տեսնի, օր Վարդանիկը ռուս աղջկա'մ հետ նստած կէրթա:

Կըսե.—Ախպեր, էս Վարդանիկը ռըսերեն բառըմ չիդեր, էս ինչըղ էս ռուս ախճկա հետ կէրթա:

Ռսերեն կը հարցնե.—Вартаник, куда?

Կըսե,—Ընգեր Մարգո, կուդա, թե չի տա, չիդեմ, հըմը կը տանիմ, տեսնիմ...

148(364). ՎԱՐԴԱՆԻԿԻ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ*

Ընկեր Մարգոն կը հարցնե դասարանին.—Ո՞վ կարող է գոյական անուն ըսել:

Վարդանիկը ձեռը կը տնգե: Մարգոյի ռանգ-ռունգը յէրեսեն կէրթա: Դասը լսող տեսուչ նստած կեղնի, կըսե. «Հիմի Վարդանիկը բդի խայտառագ էնե ընձի»:

Տեսնի, օր ուրիշ իմացող չկա, կըսե.—Ասա, Վարդանիկ:

Կըսե.—Ձուգ:

Կըսե.—Ապրիս, ճիշտ է: Նստի: Էլ ո՞վ կարող է գոյական անուն ասել:

Նորեն Վարդանիկը ձեռը կը տնգե:

Կըսե.—Ասա, Վարդանիկ:

—Ձուգ:

Կըսե.—Մի անգամ արդեն ասացիր, ուրիշ բան ասա:

Կըսե.—Էնիկ իշխան էր, իսիգ ալաբալաղ է:

149(365). ՄԱՏԻՏ*

Ընկեր Մարգոն կըսե.—Վարդանիկ, ըսե մատիտ:

Վարդանիկը չի ըսե:

Նորեն կըսե.—Վարչդանիկ, ըսե՝ մատիտ:

—Ընչի՞ ըսեմ՝ մատիտ, օր ըսես՝ «տ..մ ճակատի՞դ»:

150(366). ԸՆԳԵՐ ՄԱՐԳՈՅԻ ՄՈՒՇՏԱԿԸ*

Ընգեր Մարգոն թազա շուբ կը հագնի, գուկա դասի:

Վարդանիկը կաշե շուբին, ձեռով կը շըփե, կըսե.—Ընկեր Մարգո, իսիկ էգ է:

Կըսե.—Յուրդի՞ց գիտես, Վարդանիկ:

—Օր կը շփեմ, ջանըս կը սրսըփա:

Կըսե.—Շո՛ւն ես, Վարդանիկ, շո՛ւն:

Կըսե.—Դու էլ ես շուն, ընգեր Մարգո, հըմը քեզի իշու տեղ կը դնիս:

151(367). ԸՆԿԵՐ ՄԱՐԳՈՆ Ո՞ՒՐԴԵՂ Է ԳՆԱՑԵ*

Ընգեր Մարգոն դասի ժամանակ կմեռնի:

Դիրեկտորը Վարդանիկին կանչե գը, կըսե.—Վարդանիկ ջան, դու ընգեր Մարգոյենց տունը գիտես, գնա նախապատրաստիր, որ հանկարծակիի չգան:

Վարդանիկը կէրթա ընգեր Մարգոյենց տան բոլորը մեգըմ գը ֆըռռա, հետո բարձրանա գը վերև, կըսե.—Էս ընգեր Մարգոյենց տունն է՞:

Թե.—Հա՛:

Թե,—Ընգեր Մարգոն ուրդե՞ղ է գնացե:

Թե.—Դպրոց:

—Է՞, պտի գա՞:

—Իհարկե:

—Առը հա՛՝ գուկա,—կըսե ու բիթ մատը էրգու մատներու մեջ դրած ցույց կուդա:

152(368)

—Ջղեր, ի՞նչ ըսել է բուլվարային վեպեր:

—Շատ պարզ է, իդի վեպերը մարդիկ մենակ կրնան սադի մեջը կարդան:

153(369)

—Կուժի՛կ, կրնա՞ս ըսե՝ երկրագունդը ընչի՞ իսպես զիլ կը ֆռռա:

—Պարզ չէ՞, որ հարփած մարդիկ վար չը թափին:

—Ջղեր, կրնա՞ս ըսե՝ երկրագունդը ընչի՞ իսպես զիլ կը ֆռռա:

—Որ խանութների ռախու շշերը վար չթափին: (Տարբերակ)

154(370)

—Կուժի՛կ, քանիսի՞ առար գլխարկդ:

—Քառսուն մանեթի,

—Իմ, սարսաղ, մե գլխարկը քառսուն մանեթ:

—Գլխարկը արժեր հինգ մանեթ, երեսունհինգ մանեթն էլ ջեբիցս հանեցին:

155(371)

—Ջղեր, դու իդպես էլ խալադիլնիկ չառա՞ր:

—Չէ՛, հարևաններս գիշեր ու զոր էնպես զիլ կը փչեն՝ մեր տունը ինչխոր Սիբիր եղնի:

156(372)

—Կուժի՛կ, դու ֆռոնտից եկար, ուրտեղ անցար աշխատանքի:

—«Վահան Տերյանի անվան նալ ու մըխ» արտելը:

—Իմ, խեղճ Տերյանը ինչ կապ ունի նալ ու մըխի հետ:

—Չիտեմ, արտելի դիրեկտորը կսեր, որ Տերյանի հերը, զիլ դամրճի է եղե:

157(373)

—Ջղեր, էդ ի՞նչ բան է ռոբոտը:

—Երկթից շինած մարդ, որը ինչքան խմե չի հարփի ու ամմեն դարդ ու ցավի էլ կդիմանա:

—Հա՞յ է:

—Չէ՛, գյումրեցի է:

158(374)

—Կուժի՛կ, էս ի՞նչ են իմացե մեր քաղքի կընկըտիք, որ գորմամիշի պես գոգերով լվացքի փոշի կտանին:

—Կսեն՝ լավ խմորեղեն կեղնի:

159(375)

—Ջղեր ջա՛ն, դուք ողջ եղնիք, հողը թեթև եղնի:

—Կուժի՛կ, մի երկնցնե, դու եկրորդ փաթն է կը ֆռռաս ու թողապիս կուտաս:

160(376)

—Կուժի՛կ ջան, էս ոռի աշխարհը սուտ է, քան գեշ մարդիկ:

— Ներվերդ խնայե, վերջը լավ կեղնի:

—Ձեռ քաշե, ես վերջեն գուքամ, ինտեղ էլ բանըմ չէ:

161(377)

—Ջղեր, խեղճ Ֆոնջիբաշյանը մեռնելուց ետև ինչղ թեթևցել է:

—Բիտուն ոռաբնակները դուս են փախե, օղուլ:

162(378)

—Կուժի՛կ, ինչխո՞ր՝ քեզի ծննդատան քովը տուն տվին:

—Որովհետև կնիկս բազմազավակ օղլուշաղ է:

163(379)

—Ջղեր, լավ է ըսե Սայաթ-Նովեն, որ «Աշխարհը մե փանջարա է»:

—Է, դարտակ ըսելու մեջը ինչ կա, մինչև հիմի արի տես, որ հայերս մե ֆորտչկե՛մ էլ չունինք:

164(380)

Հաճախորդը դիմում է վարսավեր Ջղերին:

—Վարպետ, կրնա՞ս ըսե՝ ռակը ինչից կեղնի:

—Տունը թրաշվելուց, ղուրբան:

165(381)

—Կուժիկ, դու իմացա՞ր ճրագու Վաղոյի թաժա ռեկորդը:

—Չէ՛, թազա բան է:

—Աշխատավարձի բարձրացման դիմումը վերջապես հաջողցրե, գերեզմանոցում է ստորագրել տվե:

166(382)

Հարփած, հազիվ ոտքերի վրա օրորվելով, Ջղերը մտնում է գրախանութ և դիմում գրավաճառին.

—Քուրո ջա՛ն, ընձի վռազ իրեք կիլո գիրք քաշես:

—Մեզ մոտ գիրքը մետրով է վաճառվում:

167(383)

Մի կին դիմում է գործակատար Կուժիկին.

—Ներեցեք, տուալետի թուղթ չեք ունենա:

—Չէ՛, շուշաթղթից բացի ուրիշ թուղթ չունինք, փաթթե՛մ:

168(384)

Հաճախորդը դիմում է գործակատար Ջղերին.

—Ինձ տվեք մի տուփ ձկան պահածո:

—Պաժալուստա վիշի սորտ է;

—Խնդրում եմ թղթով փաթաթեք:

—Իա՛, ռիսկով տար, ա՛պ ջան, գողուծուրիկ ապրանք չէ:

169(385)

Հաճախորդը դիմում է կրպակավաճառ Ջղերին.

—Ներեցեք, «Տեատրալնի ժիզն»[119] կամ «Մուզիկալնի ժիզն»[120] ամսագիր չեք ունենա:

—Չէ, ա՛պ ջան:

—Շա՛տ ափսոս:

—Է՛, շատ որ կափսոսաս, ահան քեզի «Պարտիյնի ժիզն»[121], մեկ չէ՞...

170(386)

Կուժիկը դիմում է կինոյի մոտ հավաքված երիտասարդներին:

—Ծո՛, իդի լիշնի բիլետը ինչ արժե:

—Երկու մանեթ:

—Իա՛, փիչխեք, խո խոպան չեք եկե:

171(387)

—Ջղեր, երեկ ուրտեղ էիր, իրկվա թարաֆը վար չիջար:

—Հեչ, մե ծանոթ քաջըմ կար, տարա գորկա ու թաթարի ռեզբա հանեցի:

172(388)

—Կուժիկ, քիչ՛մ առաջ իմացա, որ քրեհով տուն ես գտե, լա՛վն է:

—Շատ լավն է, ու ջուրն էլ պաստայաննի մեջն է:

—Ինչդ թե ջուրն էլ պաստայաննի մեջն է:

—Կկաթե:

173(389)

Ջղերը հարբած մտնում է երկաթեղենի խանութ:

---

[119] «Տեատրալնի ժիզն» («Театральная жизнь») – Թատերական կյանք (ծանոթ. կազմողմների):

[120] «Մուզիկալնի ժիզն» («Музыкальная жизнь») – Երաժշտական կյանք (ծանոթ. կազմողների)

[121] «Պարտիյնի ժիզն» («Партийная жизнь») – Կուսակցական կյանք (ծանոթ. կազմողների)

—Գործակատար ախպեր, թթու դրած խիարի սերմ չեք ունենա:

—Սերմ չէ, հըմը խիարի փոշի ինչքան ուզես կրնամ քաշե:

174(390)

—Խաշ, ճաշ, լավաշ... զավիվկա... զադվիժկա... պադերժկա...

—Իմ, Կուժիկ ինչ է քեզի-քեզի կզառանցես, չըհասկցա...

—Է, Ջղեր ջան, մինչև գլխի ընկնիս, ես իրեք սենյականոց կվարտիր կը թռնիմ:

175(391)

Ջղերը գնում է քաղցկեղով հիվանդ Կուժիկի մոտ:

—Շատ շնորահակալ եմ, Ջղեր, ախպերս, որ եկել ես ընձի տեսության: Հետդ պիվա բերել ես:

—Պիվա՞:

—Հա՛, զակուսկին ընձեն է:

176(392)

—Կուժի՛կ, դու իդպես էլ շախմատ խաղալ չը սորվար չէ՞:

—Ձեռ քաշե ծո՛, մե խաղի մեջ որ ֆուկ չեղնի, էլ ինչ:

177(393)

—Ջղե՛ր, ձեր տնից գիշեր-ցերեկ էդ ինչ կատվի ձեն գուքա:

—Կատվին կլողցունք:

—Է՛, շատերը կատու կլողցուն, հըբը ընչի իդպես ձեներ չեն հանե:

—Է՛, կրնա պատահի էդ մարդիկ կատվին չեն քամե:

178(394)

—Կուժի՛կ, դու ո՞ր ժամերին կսիրես ռադիոն միացնես:

—Գիշերվա:

—Գիշերվա ժամերին հաղորդում չը կա:

—Ըշտը ես էլ էդ ժամերին կսիրեմ լսել:

179(395)

—Ջղե՛ր, ի՞նչ ըսել է Դոն-Ժուան:

—Ախպորս ըսեմ, բիտուն ինի տղամարդիկ, որ կընկտանց կը բռնեն, տեղըմ կկոխեն ու թաթարի խըխըրթմիշ կենեն՝ իդոնց կսեն Դոն-Ժուան:

180(396)

—Կուժի՛կ, ատոմային ցնցումներից որ երկրագունդը իրա օսից պոկվի, ո՞ւր կընկնի:

—Արփաչայը:

181(397)

—Ջղե՛ր, իսպես փորձանք կեղնի՞, մե հարևանըմ ունինք օրական եռսուն անգամ ընձի բարև կուտա, խեղճ մարդը սկլերոզ ունի...

—Հա՛յ, իդպես հարևանըմ էլ ես ունենայի, մեննակ թե բարևի փոխարեն փարա տար:

182(398)

—Կուժի՛կ ջան, կը հավատա՞մ՝ ես հեչ մեռնելուց չեմ վախենա...

—Հըբը ինչից կը վախենաս:

—Կը վախենամ՝ մեռնիմ՝ գյուզալըմ Գյումրին ֆասոնից ընկնի...

183(399)

—Ջղե՛ր, իմացա ձեր ռոճիկները ավելցավ հա՞...

—Ավելցավը ավելցավ, վատ չէ, հըմը արի տես, որ անտեր ամիսն է երկան:

184(400)

—Կուժի՛կ, կըրնա՞ս ըսե՝ գեշ մարդկանց ի՞նչը կը փրկե...

—Էն, որ մե օրըմ դաստով երթան գերեզմանները, իրար թողապիս տան, ֆայմին ու էլ քաղաք չիջնին:

185(401)

—Ձղեր, ես կարծեմ ֆուտբոլի դաշտի մեջ...

—Շատ ուրախ եմ, Կուժիկ ջան...

—Ծո՛, ինչի՞ համար ես ուրախ, ես հըմը միտքս չվերջացրի...

—Զատո ես վերջացրի...

186(402)

—Ձղեր, ի՞նչ բան է համեստությունը:

—Կնշանակե՝ կամավոր էշություն:

187(403)

—Կուժի՛կ, ինչ եղավ «Ֆիատ»-իդ հարցը:

—Ի՞նչ պիտի եղնի, պիտի առնիմ՝ հիմգ մանեթ կը պակսի, էս է քանի օր է, հեչ մեկից՝մ չեմ ճարե, դու չունի՞ս:

—Վա՛յ, կհավատա՞ս, ախպե՛րս, որ ստոյկա տամ, ջեբիցս մե կապեկըմ չի ընկնի:

188(404)

—Ձղեր, ես բնության դրվածքից մե բանըմ շատ կը հավանիմ:

—Ի՞նչը:

—Էն որ ամմեն մարդ իրա մեջ կը մեռնի, թե չէ... է՛, է՛, է՛:

189(405)

—Կուժիկ ջա՛ն, շատ կը խնդրեմ՝ ես որ կըմեռնիմ, մեր դռան առաջը, իրեք փաթ մի ֆըռռըցնեք...

—Ի՞նչ կխոսիս, ծո՛, ադաթ է:

—Կը վախենամ գըլոխս ֆըռռա:

190(406)

—Ձղեր, դու իդպես էլ չըսիր, թե ընչի տելեվիզոր չես առնի:

—Իա՛, ես խո միամիտ մարդ չեմ, ծո՛, ում սֆաթը ըսես մեր տելեվիզորներով ցույց կուտան: Ես, ախպե՛րս, չեմ ուզե, որ ամմեն մարդ իմ տանս քյոշա-պուճախը տեսնի, թե ինչ կա:

191(407)

—Ձղեր, էսօր էնպես վըրես քոր գուքա, որ...

—Ընչի, երեկ ու՞ր էս եղե:

—Հե՛չ, մի ժամով՝մ մեր բարեկամենց տունը գնացի:

—Պետական շենք կապրի՞ն:

—Հա՛:

—Վըրեդ մուկ քաշված կեղնի:

192(408)

—Կուժի՛կ, քու կույր աղիքդ հանած է՞:

—Չէ՛, ընչի՞ կը հարցնես որ:

—Հե՛չ, պարապությունից:

193(409)

—Ձղեր, հըլը աշես՝ դուզ խոսող, խոսքը ճակտին ըսող մարդուն ի՞նչը կը փրկե:

—Քաղշինում աշխատելը:

194(410)

—Կուժի՛կ, ես նկատել եմ, որ դու շատ մարդկանց բարև կուտաս:

—Է՛, գե՞շ է, քանի սաղ եմ, թաղմանս զըբոռը կապահովեմ:

195(411)

—Կուժի՛կ ջան, հաստատ որ կյանքը հեքիաթ է:

—Էն ել ի՞նչդ դարտակ հեքիաթ:

—Ծո՛, էսօր մենք կուտենք անասունների միսը, էգուց էլ անասունները կարծեն ու կուտեն գերեզմնների վարդը ու փուշը:

196(412)

—Ձղեր, կըրնա՞ս ըսե՝ երջանիկ կընկտինք որոնք կը հաշվվին:

—Իա՛, հավես ունի՞մ թվելու:

—Բիտուն ինոնք, որոնց սիրասուն ամուսնյակները տան զիբիլը կը թափեն:

197(413)

—Ձղեր, կըրնաս ըսե՝ մեր հիմիկվա մարդկանց առավելությունը ինչի մեջ է:

—Էն, որ բացի ուտել-խմելուց, երկրե երկիր ման գալուց, լյուբոյ մարդը կըրնա աշխատի էն գործին, որից որ խելքը չի հասնի:

198(414)

—Կուժիկ, քու վերջդ ինչ պիտի եղնի, ուր որ կերթաս աշխատանքի, շուտըմ կը կրճատվիս:

—Ծո՛, ես ինչ էնեմ, ուր որ կընդունվիմ աշխաանքի, կամ դիրեկտորի արյան ճնշումը բարձր կեղնի կամ՝ զամինը:

199(415)

—Ձղեր, կհավատաս՝ մեկ-մեկ էնպես գրելու ցանկություն կուգա մեջս, մեր ես բիտուն ըսած-խոսածները գուզիմ նստիմ ու գրեմ, հըմը արի տես, որ մեր տնեցիք կխանգարեն ու չիտեմ, թե ուրտեղ հարմարվիմ:

—Գարդիրոբից հարմար տեղ չըկա:

200(416)

—Կուժիկ, կըրնաս ըսե՝ ձեթ ու նամռութ մարդը եբ կընկնի ծիծաղելի դրության մեջ:

—Եբ որ կը խնդա:

201(417)

—Ձղեր, իսպես էլ փորձանք կեղնի՞, աղջկաս ուզողները վառան մեր դռները ջարդելով:

—Երկըթից զակաս տու, եր-կը-թից:

202(418)

—Կուժիկ, կըրնաս ըսե՝ ընչի հիմիկվա մարդկանց գիտնականները չեն կըրնա զըմռսե:

—Է՛, հիմիկվա մարդիկ ենքան պարարտանյութով սընունդ կուլ կուտան, որ ոչ մեզի զըմրսելը կը փրկե, ոչ էլ կուպրի մեջ դնելը: Մենք հըլը չըմեռած փթած ենք:

203(419)

—Ձղեր, դու որ տունը կնկադ վըրա կը լրբանաս, ի՞նչ կէնես:

— Ինչ պիտի էնեմ, լրբությունից գլոխս կըռավատներին կը զարկեմ:

—Չէ՛, ախպեր ջա՛ն, ես որ կընկաս վըրա կը լրբընամ, հանգիստ կը մոտենամ սերվանտին, մե խրուստալե վազըմ կհանիմ, շըրխկալով կը զարկեմ պոլին ու դուս կը պրծնիմ:

204(420)

—Ա՛յ Կուժիկ, էս ինչքան հիվանդություններով կը հիվնդնա մարդը:

—Սու՛ս, էլ մի ըսա:

—Ա՛յ մարդ, փոխանակ մարդու ոռին ծաղիկ բուսնելու, գեմառո դուս գուքա:

205(421)

—Ձղեր, դու պաժառնին երկան կաշխատիս, թե՞ Ղոռադեն:

—Իա՛, ես որ պաժառնին կաշխատեյի, Ղոռադի շենքերի արանքը պուդրի կը զարկեյին:

206(422)

—Կուժիկ, դու էս տարիքիդ հեչ սոսկայով կաթ ծծած կա՞ս:

—Իա՛, ամոթ չէ՞:

—Ախպոր պես, հըլը օրըմ փորձե, ինչխոր իսի աշխրիքից չեղնիս ու դարդ ու ցավ էլ հեչ չունենաս:

207(423)

—Ձղեր, դու մեյվի մեջ բիդուքից շատ ը՞նչը կսիրես:

—Ձուկը:

208(424)

—Կուժիկ, հըլը աշես՝ ընչի՞ մարդիկ կը ծնվին ու կապրին:

—Հեչ, որ մեկը միյուսին հողին հանձնե:

209(425)

—Ջղեր, էս քանի օր է կը զգամ, որ գլխիս մեջ բանըմ ընկե կը ֆռռա ու նեղություն կուտա:

—Ըսպուտնիկ կեղնի:

210(426)

—Կուժիկ, կը հավատամ՝ տեխնիկայի իսպես զարգանալը ընձի հեչ չի զարմացնե:

—Հըբը ի՞նչը կը զարմացնե:

—Էն, թե պադուշկա կանֆետի մեջ ինչղ պավիդլո կլցնեն:

211(427)

—Ջղեր, դու նկատե՞լ ես՝ ջրմուղը շուտ-շուտ ջուրը կկտրե:

—Որովհետև ժողովուրդը ռախու է կապվե:

212(428)

—Կուժիկ, հըլը աշես՝ Ամերիկան չի կըրնա՞ էնպես էնե, որ նեգրի երեխեքը մորուց ճերմակ ծընվին:

—Իա՛, որ ուզենան, ընչի չէ: Անցած տարի իմ աչքովըս տեսա, թե ինչղ մեր հարևընի սև կատուն ընկավ ժավելով լիքը դապոյի մեջ ու թաթարի ճերմըկած դուս փախավ:

213(429)

—Ջղեր, տեսար, մեր գյումրեցիք «Գործարար Ամերիկան» կարդալուց, թաթարի ինչըղ գործնական դարձան:

—Ծո՛, ինչո՞վ:

—Մեռածներին վազքով կը տանին գերեզմընները:

214(430)

—Կուժիկ, դու տեսա՞ր քյալլա ըսածդ իսկական դառավ ռակի դեղ... առաջ ո՞վ էր բանի տեղ դնող:

—Է՛, բալամ, հիմի էնպես մարդիկ քյալլաներ կուտեն՝ որ հեչ հավատալդ չի գա:

215(431)

—Ջղեր, ես որ շատ կը խմեմ, գլխիս վերի մասը կը ցավի:

—Իդպես է, Կուժո ջա՛ն, ռախին միշտ դարտակ տեղեր կը զարկե:

216(432)

—Է՛, Կուժիկ ջա՛ն, ճաղատ ծնվար ու իդպես էլ մընացիր:

—Իա՛, չիտե՞ս որ ոսկու հանքի վըրա մազ չի բուսնի... Մազը կը բուսնի չոփլուկի վրա:

217(433)

—Կուժի՛կ, կը հավատաս շատ խըմելուց լիզուս քըրքըրվել է:

—Կըլայեկել տու:

218(434)

—Ջղեր, տեսար՝ ինչ նշանվա, չնշանվա մեր տունը դիզանի եկավ:

—Այսինքս:

—Հիմի ախպեր ջան, մեր պոլի չոտկը առանձին է, կոշիկները՝ առանձին, զուբնոյն էլ՝ առանձին:

219(435)

—Կուժի՛կ, դու բոլորից շատ ո՞ր գրողներին ես սիրում:

—Բոլոր այն գրողներին, որոնք դեռ չեն հրատարակվել և հրատարակվելու հույս էլ չունեն:

220(436)

—Ջղեր, էս ընչի խեղճ Ջիգարին գերեզմընի դարի վըրա չորս անգամ ֆըռռըցրին:

—Վայթեմ Ջիգարը քաղքից խորովածի հոտ առավ:

221(437)

—Կուժիկ, բարի լու՛ս, իմացա՞ր ով է մեռե:

—Չէ:

—Շափալաղենց Օնիկը:

—Վա՛յ, ինչղ անուշ, ազիզ տղա էր: Հա՛, ես երթամ խանութ, իսի ռախու դարտակ շշերը հանձնեմ:

222(438)

—Ջղեր, տանդ դռանը գլազոկ դրի՞ր:

—Իա՛, ես խոմ գող չեմ:

223(439)

—Կուժիկ, դու աշխըրհքիս մեջ ամենից շատ ի՞նչ կսիրես...

—Խնդալ:

—Խնդա՞լ:

—Հա՛, գուզե քամի եղնի, գուզե արև չեղնի, գուզե օչերեդ եղնի, գուզե հաց չեղնի: Ծո՛, գուզե հեչ բան չեղնի, գուզեմ բերանս բանամ ու խընդա՛մ:

—Է՛, դարտակ խընդըլու մեջ ի՞նչ կա:

—Ծո՛, հասկըցի: Գուզեմ շատ խընդամ, որ չըխելըռիմ, հի՛, հի՛, հի՛:

224(440)

—Ջղեր, կը հավատա՞ս ներվերս քայքայվավ մեր հեռախոսի ձեռքը:

—Ընչի՞:

—Ծո՛, մե լաբառոշ կուկլա հարևանուհի՛մ ունինք, էնքան կը ջըրխնի հեռախոսով, որ կայնած տեղը սալանդոստիկ կը բռնե:

225(441)

—Կուժիկ, հըլը աշես, ես շուտ կը մեռնի՞մ թե՝ դու:

—Իա՛, իդիկ ըսելու բան է՞, Ջղեր ախպեր:

—Է՛, ընձի կը թվա, որ ես ավելի շուտ պիտի մեռնիմ, քան դու: Սուր մարդիկ ավելի շուտ կմեռնին:

Զ. ՍՏԱՊԱՏՈՒՄՆԵՐ

1(442). ԱՐՓԱՉԱՅԻ ԴԹՈՒՄՆ ՈՒ ՊՂԻՆՁԸ*

—Էս Օջախուլի[122] գյուղացիք Արփաչայի բերանը դթում կցանեն: Գիտես չէ՞ դթումն ինչ է: Դթում, ուրեմն, էնքան կզարկանա՝ թուրեն կհաստանա... Էն թուրեն որ կա, Արփաչայի էն ափից կանցնի էս ափը, գյուղացիք կէնեն կարմուջ, վրայից կանցնեն, կդառնան:

Մի ուրիշ ընկեր'մ էլ կըսե.—Յոթ հատ պղնձագործ նստել էին մի պղնձի մեջ՝ պղինձը կծեծեին, մեկն մեկու չաքջի ձենը չէին իմանա:

—Ինչքա՞ն մեծ պղինձ կեղնի: Այ մարդ, էդպես էլ պղի՞նձ, էդպես էլ սո՞ւտ:

Կըսե.—Իշու ձագ, էդ պղինձը որ չեղնի, էդ դթումը ինչի՞ մեջ կեփեիր:

2(443). ՕՃԱԽՈՒԼԵՑՈՒ ԴԴՈՒՄԸ

Երկու գյուղացի խոսում են իրար հետ:

Մեկը պատմում է.—Օճախուլեցիք[123] դդում ցանեցին Արփաչայի ափին: Դդում էնքան մեծըցավ օր էնոր թուռեն մե ափից հասավ մեկել ափը: Օճախուլեցիք թուռի վրեցեն կանցնեին Արփաչայի մեկել ափը:

—Էդիկ ի՞նչ է,—պատասխանում է մյուսը,—էնպես ղազան կար, օր էրկու ղազանչի մեջը կաշխատեին՝ յիրար չէին յիմանա:

—Յալլա՛, էդպե՞ս էլ ղազան էղնի:

—Յըբը քու դդումը յո՞ւրտեղ պիտի էփեին:

[122] Այժմ՝ Առափի գյուղ Շիրակի մարզի Ախուրյանի շրջանում:

[123] Օճախուլի գյուղը գտնվում է Լենինականի մոտ՝ Արփաչայ գետի «Յերկթե կարմունջի» մյուս կողմը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

ԳՅՈՒՄՐԵՑԻ ՂԱԶԱՐ ԱՂԱ[124]

3(444). ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՏԱՆԵԼԸ

Օսմանցու կռվին էր[125]: Լորիսը էկավ Գյումրի ընձի հետ ծանոթացավ ու շատ սիրեց, չունքի յիմացել էր իմ քաջագործությունների մասին:

Լորիսը մի գաղտնի նամակ'մ գրեց կնյազ Լազարովին, հըմը յո՞ւմ հետ ղրկե, որ ապահով էղնի ու թեզ'մ հասնի: Կանչեց ընծի ձեռքով զարկեց կոնկիս ըսավ.—Էս նամակը թեզ'մ հասցու կնազ Լազարովին, ընձնից էլ բարով կենես, ըսա, օր Ղարսն էլ թեզ'մ առնի...

Նամակը առա, վազզի տուն թամքը զարկի մեր կարմիր կովի կռնկին, ի՞նչ կով (հրեղեն ձին էլ յիրա համար է ըսե), դուս քաշի յախոռեն, յաչքերը տրորի ու ըսի.—Նանամ կովիկ, ծիծիկդ մամամ, թեզ ինձի հասու Լազորովին: Հայվանը հասկցավ:

Ոտս նոր էի դրե իզանգուն, էլ չը հասկցա ինչ էղավ: Մեկ էլ տեսնիմ՝ հայվանը կայնավ Լազարովի չադրի յառաջը:

Նամակը տվի Լազորովին, կարդաց, փաթվավ ընձի պաքեց: Մե նամակ'մ էլ ինքը գրեց

[124] Գյումրեցի Ղազար աղան անկասկած նույն հետաքրքիր անձնավորությունն էր, որին նկարագրել էր Ավետիք Իսահակյանը իր չավարտված «Ուստա Կարո» վեպում: Կապիտան Լազար Մալխազովը՝ Ղազար աղան, զինվորական թոշակառու էր, առույգ ծերունի՝ մի շարք շքանշաններ և մեդալներ կրծքին:

Գյումրեցիք սիրում են Ղազար աղին ղայֆայում հանդիպելիս պատմել տալ իրա հերոսական անցյալից: Ղազար աղան տարիներ շարունակ պատմելիս է եղել դրվակներ իր հերոսական անցյալից և անցած-գնացած դեպքերի վրա նոր-նոր մտացածին բաներ ու չափազանցություններ այնքան ավելացրել, որ նրա պատմվածքները դառել էին առասպելային, զավեշտական: Բայց ինչպես բոլոր մեծագույն ստախոսները նա հավատում էր իրա ասածներին և զայրանում էր, երբ լսողը կասկածում էր կամ չէր կարող պահել իր ծիծաղը, այդ դեպքում նա ընթատում էր պատմությունը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[125] 1855 թ. ռուս-թուրքական կռվին (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Լորիսին, տվեց ընձի, օր տանիմ Լորիսին: Նամակը դրի փափախիս մեջը, նստա կովիս, յետ գուկամ: Յուրտից յուրտեղ անհավատները յիմացել էին, օր ես նամակ կը տանիմ Լորիսին, յընկան յետևս... գիլիլա, օր գուկա... Հեչ կը հասնի՞ն:

Տուն օր հասա, հայվանը մոտեցավ մեր տան դռանը, յառաջի ոտքով զարկեց դուռը ու բոռաց. «Մա՜-մա՜-մա՜», յանի թե. «Մայրա՜մ, Մայրա՜մ, դուռը բաց»: Զարմանք բան, հայվանը ո՞րտից գիտեր թե քուրոջս անունը Մայրամ է:

Տուն օր մտա, յափունջես հանի թափ տվի, ես կըսեմ փութ՝մ, դու ըսա՝ էրկու փութ, ղուրղուշուն թափավ գետնին, անհավատները գիլիլա չէին խնայե:

4(445). ՆԱՍԼԵԴՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Ռուս-օսմանցու կռվին Գյումրի էին էկե շատ ռըսի շեկ զորք: Էդոնց ապրելու համար յամեն գերդաստանին տվել էին մեկ-էրկու հոգի: Նասլեդնիկն էլ էդոնց հետ էր էկե, յո՞ւմ տունը պիտի ապրեր, էլ յո՞ւր պիտի էրթար: Էկավ մեր տունը: Սաղ ձմեռը ապրավ մեզի հետ: Շատ խելոք, յոլա գնացող տղա էր: Մեզի քոմակ կեներ. ջուր կը բերեր, աթար կը բերեր, փետ կը ջարթեր:

Շատ սիրեցինք, մեր տղի պես կաշեինք: Քուրոջդ հետ շատ դոստ էր, միշտ յիրար հետ էին... Մեզի հետ քուրսու տակը կը մտնիր: Եփոր կանոթնար, կերթար յիրա ձեռքով տոլաբեն հաներ կը հացը թռչեր ու կուտեր, թռչեր ու կուտեր:

Լսելով նասլեդնիկի պատմությունը՝ ներկա եղեղներից շատերը չէին կարող զսպել իրանց ծիծաղը և զայրացած Ղազար աղան ընթատում է իր խոսքը:

5(446). ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔՈՎԻՆ ԹԵՅՈՎ ՀՅՈՒՐԱՍԻՐԵԼԸ

Պետերբուրգից Լորիսը մե հեռագիր՝մ տվեց ընձի, թե. «Մենք օսմանցու հետ գուզենք կռիվ էնել, խորհուրդ կուտա՞ս, թե՞ չէ»:

Ես էլ ձեռաց մե դեպեշ՝մ ղրկի Լորիսին, թե. «Ըսկսեք, հեչ միք վախենա, ես էստեղ եմ»:

Կռիվը օր ըսկսվավ, Լորիսը էկավ Գյումրի, ընձի առավ, առավ գնացինք Ղարսա կողմը: Ցուրտ, ձմեռ, սարերու մեջ՝ ձուն: Լորիսը ըսավ.—Մե չայ՝մ տվեք:

Ո՞չ սամավար կա, ո՞չ գործելի, տեսա, օր չի էղնի, մտա Լորիսի չադրը, էնոր խուրճինեն հանեցի դաստե՝մ հարնոց, վառեցի: Էրկու դախա չանցավ, չայը էղավ, տվի Լորիսին, խմեց: Էս իմ լավ ծառայության համար Լորիսը ընձի մե «Եգոռի»[126] խաչ՝մ տվեց:

6(447). ՅԵՐԹԻԿԸ ՃԵՐՄԿԵԼ ԷՐ

Ղազար աղան մի անգամ գնում է Ղանլիճա սուրբ Յովաննես ուխտ:

Երբ վերադառնում է, քաղաքին մոտենալիս հեռվից տեսնում է, որ իրանց տան երթիքը սպիտակացել է:

«Տեր Աստված,—մտածում է Ղազար աղան,—աշես՝ մեր յերթիկը ի՞նչ պատճառով է ճերմկե»: Օր մոտեցա քաղքին, հասա տուն, ի՞նչ տեսնիմ, օր լավ էղնի, մեր ղոչաղ հավերը յերթիկի վրա էնքան հավկիթ են ածե, որ սաղ յերթիկը ճերմակ-ճերմկել է:

7(448). ԹԱԳՈՒՆ ՄՈՐՔՈՒՐԸ

Թագուն մորքուրը գյումրեցի կապիտան Ղազարի՝ այդ հռչակավոր մեծախոսի դուստրն էր: Ուղիղ է ասում հայկական առածը. «գազ՝մ չունենա, մազ՝մ կունենա»: Թագուն մորքուրն էլ «մազ՝մ» ժառանգել էր հորից:

Երբ ծանոթացանք, Թագուն մորքուրը արդեն քառասունը անց, երեխաների տեր տանտիրուհի էր: Նա շատ տգեղ էր, և երվում էր, որ նա տգեղ է եղել և առաջներում: Շատ կարճահասակ, հաստ անբարեկազմ մարմնով, կոպիտ դիմագծերով, ոչինչ չը արտայտող դուս ընկած աչքերով, խռպոտ ձայնով: Նրա կլորավուն, սև մազերով գլուխը, առանց վզի հետքերի, կպած էր մարմնին, և եթե նա ուզում էր տեսնել կողքի կանգնած մարդուն, պետք է դառնար դեպի նա ամբողջ մարմնով: Մի խոսքով չէր կարելի նախանձել նրա ամուսնուն:

[126] Եգոռի խաչ – Ռուսական կայսրության Գեորգիևյան խաչ ոսկե կամ արծաթե շքանշան՝ նախատեսված զինվորների և ենթասպաների կատարած սխրանքների համար: Եգորի խաչ է կոչվել մինչև 1913 թ. (ծանոթ. կազմողների):

Թագուն մորքուրը լավ մայր էր և ամուսին, բայց տառապում էր շատախոսությամբ. առանձնապես այն ժամանակ, երբ նա պատմում էր իր առաջվա շշմեցուցիչ գեղեցկության մասին:

—Թագուն մորքուր,—դիմում էինք նրան,—հլը պատմե քու ջահելության մասին, սիրուն ես էղե, չէ՞:

—Սիրուն ըսիր՝ պրծա՛ր, սիրուն, էն էլ ի՞նչղ սիրուն, Գյումրվա մեջը յառաջինն էի, հատս չկար: Քաղքի ջահել տղոց խելքը ընձի համար կէրթար: Բան ու գործերը թողած, մեր տան չորս բոլորը ման գուկային, ինչ է, թե մե հատ՚մ յընձի տեսնեին: Ախու վախով օրերը կանցնեին: Հաջի աղիս ահն օր չեղնիր, յընձի քսան անգամ փախցուցած կեղնեին:

—Ուրիշ քաղաքներից էլ չէ՞ին գալիս քեզի տեսության,—ջուր էինք լցնում մորքուրի առանց այն էլ անխափան աշխատող պերճախոսության վրա:

—Յըլբթ, Թիֆլիզի, Բաքվա, Էրեվանի ջահիլները գուկային յընձի համար Գյումրի: Վառեին ու կը թափեին, հմը ես ե՞նդր կենեի... գլխներդ ի՞նչ ցավցնեմ, համբավս հասել էր տեյմոր Մոսկով: Էնտեղի ամենահարուստ Մուրուզովի տղեն յատուկ էկավ Գյումրի՝ յընձի տեսնելու: Յընձի օր տեսել է, խելքահան է էղե, ինքը յիրա կորցուցեր է, ու ըսեր է. «Իսկական իմ յուզածս է՝ կարճ ու կլոր, ծոցի լոր»:

—Մորքուր ջան, բա ինչո՞ւ չառավ:

—Հաջի աղես չը տվեց, ըսավ՝ հեռու կապրի:

8(449). ՂԱԶԱՆՆ ՈՒ ԲԱԶՈՒԿԸ

Էրկու հատ տղա կեղնին, ըստոնք ըսկըսըմ են սուտ խոսալ: Մե տղեն վերցընըմ է իտոր ըսըմ է—գիտե՞ս, իմ հերրս ըման ղազանըմ է սարքե, օր ղազանին մեջը կաշխատին հազար մարթ, ամենքը իրարմե հազար մեթըր հեռու ու չագուճի ձենը չի՛ գալըմ իրանց:

—Հա՛յ, հա՛յ,—ըսըմ է,—ըտմանե սուտ էղնի: Հմի դու անգաճ դի, ես ըսեմ:—Ըսըմ է.—Հերրս ըման մե բազուկ՚մ է ցանե, օրա մե փուռը կառնե Առփաչային ջուրը, մեկը Զանգուին ջուրը, մեկն է Թիվլիզու Քռի ջուրը:

—Իյա՛,—կենե,—էդ բազուկն ո՞ւրտեղ պիտի էփեք:

—Հորըդ սարքած ղազանին մեջը,—ըսըմ է մեկելը:

9(450). ԿԱՐԹՈԼԵ ՓԱՓԱՂԸ

Ավալ ժամանակ մեր գեղացի Ափրեյի Բուլոն, նըստուկ գեղի մեչ, ղրս կեներ, թե.—Մե տարի Քուսականներ[127] ցանի կարթոլ: Էտ անտեր էնքան էր ջոջըցե, օր մկներն կերել ին մեչը, թողել ին սատա ղաֆասը: Աչքըս ընկավ ղարտըկած կարթոլի վրա, ընձի-ընձի ըսի. «Ի՛մալ լավ քոլոզ կեղնի: Վերցուցի փեշովըս սըրփի: Մեր մատկու կարքից քըչու՚մ էլ քըսի ու ըտմալ թամամ իրեք տարի դրի գլոխըս, գեղացիք չը խասկըցան՝ փափաղ է՞ր, թե՞ կարթոլ»:

10(451). ԳՈՄԵՇԸ

Մե հատ ցուլ գոմեշ դուս կը թողեն, կերթա կանափի քոլի հետ քեքոլ կենա[128]: Գոմեշը կընկնի կանափի հատի մեչ ու կը կորի: Դես ման կուգան, դեն ման կուգան, գոմեշ չկա: Կը մնա, Կաղընդի օրը ատեն քուֆտա կեփա, պապեն կուգա կուտա: Պապեն օր քուֆտան կուտա, գոմեշը բիրտան կընկնի առկի տակ: Պապը կը կործըկտա, գոմեշը բերնից դուս կուգա:

11(452). ՓԱԽՍՏԱԿԱՆ ԳԱՐԻՆ

Պատմողը եղել է տատիս տղեն: Դե էն ժամանակ երդիկ է եղել ամեն սենյակին՝ լուսամուտի փոխարեն: Ասում է.—Գարու մեշոկը դրած էր սյան կողքի հետ: Մեկ էլ տեսա գարին շարվա՛վ, հելավ երթկից դուս:

Էնդեղ որ հարց են տալիս, թե էդպես բան հնարավո՞ր է, կնիկը, կողքը նստած, ասում է.—Ցորյա՛ն, մի հատըմ երգե՛:

Ցորյան որ երգում է, հարց տվողը մոռանում է էդ հարցի մասին:

Հետո կը շարունակե.—Գնացինք կարթացվորի[129] մոտ:

Կարթաց՝ գարին էկավ ետ լցվավ մեշոկը:

---

[127] Բանահավաք Վարդ Բդոյանն այս բառի վրա աստղանիշ է դրել, բայց բացատրությունը հավանաբար մոռացել է դնել: Ենթադրվում է, որ Քուսականները հանդի տեղանուն է (ծանոթ. կազմողների):

[128] Կանեփի մացառի հետ գլխով կխաղա (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

[129] Կարդացվոր – հմայող, կախարդ (ծանոթ. կազմողների)

Է. ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄ

1(453). ՏԵՍԻԼՔ

Երկրաշարժին Ստրոմմաշում երեք սենյականոց տուն ունեի, երկրաշարժը որ եղավ, տունս փլվեց կինս ու աղջիկս մնացին փլատակների տակ: Չորս աղջիկ ունեի, կինս ու աղջիկս մնացին, երեք աղջիկներս փրկվեցին: Ըդորից հետո ես տեղափոխվեցի գյուղ, ձորի մոտի հողամասը կարտոշկա կցանեի, 1994 թվին ականատես էի էդ մարդուն: Գիշերը մեկ անց կես էր, ջուր կէնեի, տեսա ձորից էդ մարդը էկավ դեմս կանգնավ, մոտավորապես քսան մետր հեռավորության վրա: Լուսնյակ գիշեր էր: Կենդանի մարդ էր: Ջուրը ընձի էր հասել, իրեք երեխա բդի պահեի, կարտոշկա բդի ցանեի ապրեինք, նեղ ժամանակաշրջան էր: Էս պատմությունն օր կպատմեմ, 94 թվականին էր, ջուր կէնեի, մե մարգը ջրեցի, երրորդ մարգին արդեն գիշեր էր, ժամ էլ չկար մոտս: Ես որ տուն եկա, նոր զգացի որ ժամը երկուսն էր: Երրորդ մարգը որ հասա, պատի տակը լուսատիտիկների ճռճռոցը գուկար, հուլիս-օգոստոս ամիսն էր, լապատկեն ձեռս նստա պատի տակը, ըսի՝ տունս ըստեղ էղներ հանգիստ աշխատեի: Էդ ժամանակ ձորից մի մարդ, սպիտակ մորուքով, գլուխը բաց, գավազանը ձեռը, կառիչնիվի պալտոն հագը ուղիղ իմ դիմացս եկավ, լապատկեն ձեռս՝ ելա կանգնա, ըսի՝ մոտենամ նայեմ՝ ո՞վ է: Ես կմոտենամ իրան, ինքը հետ-հետ կէրթա: Ինքը որտեղից որ եկել էր, ըստեղ Զառիթափ կիրճ էր: Ես որ մոտեցա, ընձի ըսեց. «Տղա ջան, էս ժամին ի՞նչ կէնես ստեղ»: Ըսեցի. «Կարտոշկա կջրեմ»: Մոտեցավ, որ խորատա էնենք, ըսավ. «Տղա ջան, էս ժամին մի մնա, գնա, էկուց գուկաս կէնես»: Ըսի. «Էկուց ջուրը իմս չի էղնի»: «Էկուց գուկաս ջուրդ կէնես»: Խորատա կէնեմ հետը ու կմոտենամ, ինքը ետ ետ կերթա, ինքը գնաց ժայռի քարերի վրա կայնավ կռնակով դառավ ընձի, բայց լուսնյակը լիալուսին էր: Ամպերը, որ լուսինը փակեց ինքը մթնեց, որ կբացեր կերևար ըդեղ էլ Սատկածի Քյարամի[130] գյոլն է: Ըսի՝ կընկնի գյոլի մեջ, ինչխոր անդունդ եղներ: Որ դառավ կռնակ էրեց ընձի, ըսի՝ էս մարդը ներքև բդի ընկնի: Դարձավ Սուրբ Հակոբին ձախ ձեռքով թե ինչ ըսեց, չիդեմ ու դառավ ընձի ըսեց. «Գնա, գնա տղա ջան, էս ժամին ստեղ մի մնա»: Լուսնյակը լուսավորեր գը, իրա ֆիզանոմյան ես տեսա, ուղիղ գնաց քարանձավի դուռը[131], որ տեսա օդի միջով քարանձավ էր գնում, ծնկներովս սարսուռ անցավ, ինչխոր թուլնար ու ես ընձնից էլ խաբար չեմ էղե, թե լապատկեն ձեռս ինչխ եմ հասե տուն ժամը մեկ անց կես, թե դռներով ոնց եմ անցե, շները ընձի վրա են տվե: Աչքերս բացեցի, որ հայաթի մեջը կանգնած եմ: Էնտեղ որ սարսուռ անցավ ջանովս կանգնածս տեղը, ես քնել եմ, ինչխ եմ եկե տունը, հադե խաբար չեմ եղե: Թիֆլիսից էլ ղոնախներ ունեի ախպերս էր եկե (հիմի չկա մահացել է), իջա դոմիկ նոր մերոնք սաղ հավաքված են երեխեքս էլ, կինս էլ (երկրրոդ), պապաս կար, միշտ որ ուշ գուկայի, պապաս կջղայնանար՝ ուշ ժամի մի արի: Որ պապային ըսի՝ եկել եմ, էլ բան չըսեց, ընձի էլ ժողովուրդը ուշադրություն չդարձրեց: Հայաստանին ըսեցի՝ սոված եմ, նստա հաց ուտեմ, Հայաստանին պատմեցի, Հայաստանը գնաց հորս պատմեց, հերս էլ եկավ վրես նեղեցավ թե էս ուշ ժամին մի մնա կարող է նախանձ են, կարող է թշնամի են քեզի, տանին ձորից քցեն ցած:

94 թիվը անցավ 95 թիվն է, քնած եմ, գիշերն երազիս էս մարդն եկավ դեմս կանգնավ,

---

130 Սատկածի Քյարամի գյոլ – տեղավայր Զրառատ գյուղի տարածքում: Ըստ բանասացի՝ Քյարամը «բոյով փոքր-մոքր է, սատկած են ըսե» (ծանոթ. կազմողների):

131 Քարանձավի դռան լուսանկարը տես աշխատանքային խմբի լուսանկարների մեջ:

ըսավ. «Տղա ջան, դու ընձի կհիշես»: Ըսի. «Ինչխ չեմ հիշե, դու են մարդն ես, որ գնացիր»: Ըսեց. «Դու իմ տեղս կհիշես, գուկաս պատը կքանդես, տանս խաչը կքանդես կհանես ու ամեն տարի տունս, երթիկս կմաքրես»: Զարթնա, Հայաստանին պատմեցի, ըսի. «Անցած տարվա մարդուն եմ տեսե, բդի երթամ քանդեմ քարանձավը»: «Վայ մի էրթա կվախենաս»: Ըսի. «Չեմ վախենա, բդի էրթամ»: Գնացի, որ ընդեղ խոտ գերընդով մաքրեցի, հասա պատին, մե սերեն քանդեցի, կուզեկուզ կնայեի, թե ներսը ինչ կա: Էդ օրը ներս չմտա վախեցա, ըսի՝ էդ մարդը էդ կողմից գելնի դուրս: Երկրորդ օրը, որ քարանձավ բդի մտնեի, էդ ռոպեյին երեսիս խբեցին, ըմբես խբեցին որ աչքերս փակվավ՝ ես չկռնացի նայեի, թե էդ ով խբեց երեսիս՝ քարանձավի միջից, ու ընկել եմ ներքև: Աչքերս բացեցի, որ չղջիկները քարանձավի միջից երամով կփախնին, ներսը կրակ վառեցի, չղջիկները հեռեցան, ու մտել եմ քարանձավի մեջը՝ ինչ եմ հայտնաբերե սաղ Աստծու տված համաձուլվածքներ են Հիսուսի խորանը, Մարիամ Աստվածածնի խորանը, Սուրբ հոգու սիրտը՝ քարանձավի մեջը կախված, երկինքն ու երկիրը կապել է իրար, Սուրբ Սարգիսը հենց Սուրբ հոգու տակն է: Իսկ Մարիամ Աստվածածնի ու Հիսուս Քրիստոսի խորանին Աստծու պատկերն է՝ համաձուլվածք: Աստծու պատկերը մարդու ու կենդանու պատկերով է: «Հիսուս Քրիստոսի չարչարանքները», տեսել եք կինոն, մի աչքը այլայլված գառի մռութը ճակատը ու աչքերը մազերը դեպի երկինք՝ էդ պատկերը երկու որդիների թիկունքին: Քարանձավի մեջը այսինքն Սուրբ Երրորդությունն էր՝ հայրը, Որդին, մսուրքը, օրոցքը բնական: Խաչը քարի վրա, բնական խաչը, Աջը խաչի վրա իսկ ձախ ոտքը՝ մաքրելիս քաշեցի հանեցի մի շաբաթ թողեցի խորանում հետո զգացի որ կարող է պատահի ժողովուրդը տեսնեն հետո բերեցի տուն քարից ոտք է: Սրա մեջ էնքան զորություն կա, որ, խոսքի, կարկուտ գուկա, կհանենք կդնենք դուրս կամ անձրև կդառնա, կամ կկտրի:

II. ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ԽԱՂԻԿՆԵՐ, ՄԱՆԻՆԵՐ

1(454)
Ա՛յ տղա, սև չուխավոր,
Սաղմոսը ծոցիդ սավոր,
Սաղմոսդ գյուլ է դառե,
Լիզուդ բիլբիլ է դառե:

2(455)
Աղջի՛, մազերդ հուսեր ես,
Թուշդ երեսիս քսեր ես,
էրնակ քեզի առնողին,
Շամամ ծծերդ գրկողին:

3(456)
Գալն Ղալեն յարտ ունիմ,
Հալողը գիտե՝ դարդ չունիմ,
Դարդը ընձի առել է,
Ջահիլ եմ՝ խաբար չունիմ:

4(457)
Հերկ եմ արե պտերով,
Կը թռցնեմ ճտերով,
Ընձնեն քեզի ջոկողը
Չանգալ ընկնի ծծերը:

5(458)
Կաղզվան ձորի մեջ է,
Ձեռներս ներկի մեջ է,
Քուրը ղուրբան էն ախպոր,
«Լագոդա» պոլքի մեջ է:

6(459)
Ջաղջի դուռը տաշած է,
Սուրմեն ղալմով քաշած է,
Ինչ անեմ, որ քաշած է,
Սիրտս հալած մաշած է:

7(460)
Ղարսա բերդը բլել է,
Յարս տակը քնել է,
Ձեն տվի ձենս չառավ,
Մակար ընձնեն ջորեր է:

8(461)
Երևան բաղ եմ արել,
Ջիգարս դաղ եմ արել,
Դոստ ու դուշմանի մեջը,
Լացս ծիծաղ եմ արել:

9(462)
Կանաչ յարտը հաց տարա,
Յարիս տեսա, եդ դառա,
Խնձոր թալեց, ես չառա,
Էս ինչ բեբախտ յար դառա:

10(463)
Աղջի անունդ ասա,
Ֆասիդ փուսկուլը խաս ա,
Դեսն արա, թուշդ պաքեմ,
Գնա մայրիկիդ ասա:

11(464)
Ո՞ւստի կուգաս, ղարիբ բլբուլ.
Որ չես տեսե ջիկրի մըռմուռ,
Որ կը տեսնես ջիկրի մռմուռ,
Կը թափես նաշխուն փետուր:

12(465)
Ծաղիկ քաղի տաղերով,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Վեր եմ տվե շյուղերով,
Ջան, վիճակ, ջան, ջան:

13(466)
Թիֆլիզու մկրատ բերեք,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Համլետիս կաստում ձևեք,
Ջան, վիճակ, ջան, ջան:

14(467)
Ընքյուլ, մընքյուլ Լաերտըս,
Ջան, ծաղիկ, ջան, ջան
Դրստը քընքյուլ Լաերտըս,
Ջան, վիճակ, ջան ջան:

15(468)
Դավիթիս ձին փախել է,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Սասմա սարեն անցել է,
Ջան, վիճակ, ջան, ջան:

16(469)
Համլետըս ընձեն ջորել է,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Գլուխն առե, կորել է,
Ջան, վիճակ, ջան, ջան:

17(470)
Ջաղաչիս դուռը չիման,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Ախպորըս չկա գիման,
Ջան, վիճակ, ջան, ջան:

18(471)
Եկան, քրոջը տարան,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Մեկ բերան չասավ՝ յաման,
Ջան, վիճակ, ջան, ջան:

19(472)
Համլետս նստե ծառի տակ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Սիրածն առե թևի տակ,
Ջան, վիճակ, ջան, ջան:

20(473)
Գովենք, գովենք, ո՞ւմ գովենք,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Գովենք, Դավիթիս գովենք,
Ջան, վիճակ, ջան, ջան:

21(474)
Թոն է գալիս վերևից,
Ձուն է գալիս վերևից,
Գլուխս առնեմ ու կորչեմ,
Բեբախտ յարի երեսից:

22(475)
Ամբել է, թոն չի գալիս,
Մթնել է, տուն չի գալիս,
Էս անտեր բարձի վրա,
Առանց յար քուն չի գալիս:

23(476)
Խաղ կասեմ խանա-խանա,
Չես կարա բերան բանա:

24(477)
Ամբել է քուլա-քուլա,
Տըրտմել է, նստե գուլա,
Հարցրեք՝ ընչի գուլա,
Սիրուհու համար գուլա:

25(478)
Ծառի տակին էլ ունիմ,
Ռանգ-ռանգ թել ունիմ,
Թելիկ-մելիկ շան աղջիկ,
Ես քու վրեն սեր ունիմ:

26(479)
Հարավ քամին կը շնկա,
Խաղ կասեմ, կը զընգա,
Գյադա, սիրածդ տարան,
Մըշկոյի պես վընգվընգա:

27(480)
Հարավ քամին գալիս է,
Դուռը շըխ-շըխ տալիս է,
Նանի, ելի դուռը բաց,
Ղարիբ յարըս գալիս է:

28(481)
Խանա կասեմ մեկ բերան,
Մեր տանը ջուխտըմ գերան,
Լավը գեշին արժան է,
Հայ վախ ու հազար բերան:

29(482)
Գընա, գընա գալիս եմ,
Ետևիցդ լալիս եմ:

30(483)
Ելա կտուրն աշեցի,
Ջահել կյանքըս մաշեցի:

31(484)
Ուռ ես, կռանալ մի,
Արևիդ մեռնիմ,
Մեր դռնեն հեռանալ մի,
Բարևըդ կառնեմ:

32(485)
Երթիկը կայնող տղա,
Մասիս մըտածող տղա,
Եկան յարիդ տանելու,
Քեզնեն բեխաբար տըղա:

33(486)
Այ տղա, իր անել տուր,
Մատնաչափ գիր անել տուր,
Ինձնե քեզ գյուման չկա,
Քյանքուլդ վեր առնել տուր:

34(487)
Մեռա բաղը քնելեն,
Ջրերի հետ խաղալեն,
Ծառներին թուփ չմնաց,
Դարդիս դարման էնելեն:

35(488)
Քելես կը՝ ախա-բախա,
Լըչըկիդ տուտը կախ ա,
Սև տղա, սիպտակ աղջիկ,
Բռնել են իրար յախա:

36(489)
Մանի ասեմ ու շարեմ,
Տոպրակ լցնեմ ու կարեմ,
Քաղքե-քաղաք ման ածեմ,
Սրտով սիրած յար ճարեմ:

37(490)
Ելնիմ սարը հունձ անեմ,
Քարը գլխիս բարձ անեմ,
Էրթող գալողն հատել ա,
Ղարիբ յարես հարցնեմ:

38(491)
Գդալը՝ եղի մեջը,
Իմ յարը՝ գեղի մեջը,
Գդալը եղեն ելավ,
Իմ յարը գեղեն ելավ:

39(492)
Ալագյազը ձնել է,
Յարըս տակը քնել է,
Ձեն տըվի, ձենըս չառավ,
Մագյար ընձեն ջորել է:

40(493)
Կայնա քարին ղուշ եղա,
Եթում գյադին դուշ եղա,
Տիրան, տիրան է յարըս,
Հասած ծիրան է յարըս:

41(494)
Մազերըդ թափ ես տալիս,
Ձեռներըդ ծափ ես տալիս,
Էսօր-էքուց ես ասում,
Ամեն օր խափ ես տալիս:

42(495)
Կռուշկեն՝ արևին,
Կռուշկեն՝ արևին,
Սպասում եմ, յարո ջան,
Քո ղրկած բարևին:

43(496)
Հանդի ղուշ է քո յարը,
Յար ջան,
Շատ անուշ է քո յարը,
Յար ջան,
Բաղի նուշ է քո յարը,
Յար ջան:

44(497)
Չինարի ծառ էղնեի,
Ճամփիդ վրեն բուսնեի,
Ամեն անցնել-դառնալուն
Կայնեի հետդ խոսեի:

45(498)
Ելել եմ Ալագյազը,
Կողքես կախել եմ սազը,
Կերթամ գընկնիմ Արազը,
Չեմ առնի մալամազը:

46(499)
Ախպեր բաղրդ անուշ է,
Բաղիդ մեյվեն եմիշ է,
Ախպեր խատրրդ չրմնա,
Յարրս քեզնեն անուշ է:

47(500)
Սարեն իջան ձիավոր,
Մինը՝ փնջած, մինը՝ ոչ:

48(501)
Լամբի շուշեն կը ճընգա,
Գլորվա՝ ծոծրդ ընգա:

49(502)
Դաղստան բաղ եմ արել,
Ջիգյարրս դաղ եմ արել,
Դոստ ու դուշմանիս միջին
Լացրս ծիծաղ եմ արել:

50(503)
Ամանը դնեմ պատին,
Տղնոցը կանչեմ բակեն:

51(504)
Այ տղա, քո յարին տանում են,
Ճար ունես, ճար արա,
Շան տղա, քո յարին տանում են,
Թե կարող ես, փախցըրա:

52(505)
Ծառ եմ տնկել գիլազի,
Քամի գա բազի-բազի,
Մեր մայլի սիրուն աղջիկ,
Գիշերն արի երազի:

53(506)
Ալագյազը բարձր սար է,
Տակը ժընջըլա քար է,
Տեղրս մի քցե՝ դար է,
Առածս մեկուճար է:

54(507)
Սարիցը փչեց քամին,
Դու չես մնա էդ համին,
Ամեն արժող, չարժողին
Մի թողնի միսրս ծամին:

55(508)
Սարի գլխուն՝ պաղ աղբուր,
Մեջը՝ երկու բաժակ ջուր,
Մեկը ես խմեմ, մեկը՝ դու,
Սիրով ապրինք ես ու դու:

56(509)
Սև է չոբանի շունը,
Չի տանի յարիս քունը:

57(510)
Լուսամուտը կարմիր խնձոր,
Շարել եմ, շարել եմ,
Այ շան տղա, քեզնից լավը
Ճարել եմ, ճարել եմ:

58(511)
Մեր երթիկը թըպըրտաց,
Բիրդան սիրտը լպրտաց,
Եկան ասին յարդ էկավ,
Ելա, վազի գլխաբաց:

59(512)
Անցա ջրի էն գեջեն,
Քաղի թութունի միջեն,
Տեսա յարս գալիս էր,
Փռի խալի, խալիչեն:

60(513)
Քարափի տակեն ճըվաց,
Քուր ջան, որտեղդ ցավաց,
Կապուտ կապոցիտ տըգեն
Շամամ ծծերդ էրեվաց:

61(514)
Ղարսա բերդը բլել է,
Յարրս տակը քնել է,
Ձեն տըվի, ձենս չառավ,
Վայթեմ ընձեն խռովավ:

62(515)
Յարա էլ կա՝ յարա էր,
Իմըս ափաշքյարա էր,
Յարիս քաշեցին, տարան,
Մեկ բերան չըսի՝ յաման:

63(516)
Մերըս ընձի բերել է,
Սիպտակ բալուլ էրել է,
Քյըշքըմ բալուլ էղնեի,
Մորըս մըտեն ելնեի:

64(517)
Առվընները համամ է,
Ենգյաբիրա շամամ է,
Ես կառնիմ էն աղջկան,
Ում ուսումը թամամ է:

65(518)
Էս կալը երես-երես,
Բազըրգյան աստված սիրես,
Թե գնաս Շորագյալ,
Սալդըթցու յարիս բերես:

66(519)
Ծառի տակը էլ ունեմ,
Ռանգ-ռանգ թել ունեմ,
Ես նշանած յար ունեմ,
Էլ ուզածըդ ինչի՞ս է:

67(520)
Էրեվան բաղ եմ արե,
Ջիգյարըս դաղ եմ արե,
Դոստ ու դուշմանի միջին,
Լացըս ծիծաղ եմ արե:

68(521)
Սարերի կապուտ ծաղիկ,
Ոչխարի երկար աղիք,
Ով որ չառնի, ախ մայրիկ,
Նրա սրտին՝ սև ծաղիկ:

69(522)
Արազ ո՞ւստ ա, պուզ ո՞ւստ ա,
Քյանքուլ ուստ ա, թոզըս տա,
Արազի պուզը ջարդեք,
Քընքյուլիս թոզը թափեք:

70(523)
Կողպա ելավ սելերը,
Կտրավ հոգուս թելերը,
Կամաց քշեք սելերը,
Կապեմ չուլկուս թելերը:

71(524)
Էլի էկավ օրերը,
Կտրեմ, կարեմ շորերը:

72(525)
Աշխըրի երեսին ի՞նչն է լավ բան,
Մեկ սրտով սիրած յարը,
մեկ կաթնատու մայրը,
Աշխըրի երեսին ի՞նչն է վատ բան,
Մեկ անալըղ մայրը, մեկ բեբախտ յարը:

73(526)
Աղջի անունըդ Նինա,
Դրել ես կարմիր հինա,
Գնա մայրիկիդ ասա՝
Անե ընձի իրան փեսա:

74(527)
Թավեն ծակ է, եղ չկա,
Թաժա փեսին տեղ չկա,
Փեսին շատ երես միք տա,
Նրան էյտիբար չկա:

75(528)
Խնձոր քցի՝ ֆոֆռաց,
Թուշըդ կծի՝ մոմռաց,
Խնձոր քցողը ես եմ,
Թուշըդ կծողը ես եմ:

76(529)
Կարմիր քարը տաշած էր,
Բոյդ ղալամով քաշած էր,
Ի՞նչ անեմ ղալամ բոյըդ,
Սիրտս հալած, մաշած է:

77(530)
Ղարիբ եմ, Ղարս եմ էրթում,
Անմարիկ հարս եմ էրթում,
Ղարսա դուրանը խաղցա,
Ղարիբ էի, նստա լացա:

78(531)
Ղըրիբ եմ, ղըրիբ ղուշ եմ,
Օտար երկըրի դուշ եմ:

79(532)
Աղջիկըմ ունին նազան է,
Չեմ տա հազար թումանով,
Կտամ մի բազրգյանի,
Դնե ղութիկը ու տանի:

80(533)
Կանաչ արտը էրակ է,
Աղջիկ մորը կրակ է:

81(534)
Գյալան ղայի արևը,
Ո՞ւմ հետ ղրկեմ բարևը,
Բարևս բերող աղջիկ,
Թաշկինակդ ղրկե ինձ:

82(535)
Սարեն էկան ջուխտըմ ղոչ,
Մեկը՝ փնջած, մեկը ՝ ոչ:

83(536)
Ալագյազ բարձր սար է,
Տակը ժնջլե քար է,
Սիրով սիրածին չեն տա,
Էս ինչ անօրա տեղ է:

84(537)
Սիրել եմ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չտա,
Աստծու կրակն երեսին:

85(538)
Ալաջեն ամպել է,
Յարըս ձին թամբել է,
Ընձեն խռովել, կերթա,
Բոխչեն կապել, տուն կերթա:

86(539)
Նա հասիբ է, հասիբ է,
Տուն չունի քյասիբ է,
Գուզի ասի, գուզի՝ ոչ,
Էդ տղեն ինձ նասիբ է:

87(540)
Հավքը վերևեն անցավ,
Սինին խնձորով լցվավ,
Սինու միջի թասն էղնեի,
Թագավորի հարսն էղնեի:

88(541)
Քյախան կանեի դեմ սարին,
Մատաղ լինեի իմ յարին,
Մեջքին՝ արծաթե քյամար,
Մեռնեի ունք-կամարին:

89(542)
Վանքի ձորը խաղ ասի,
Խաղիս մեջ քեզ բան ասի,
Էգուց ընձի տանում են,
Սուրբ Սարգսի պես հասի:

90(543)
Տեղ եմ քցե, փոթ կուգա,
Միջեն խնկահոտ կուգա,
Տեսնեմ միջի քնողին,
Քյանքուլից խնկահոտ կուգա:

91(544)
Մեր սրահը ավլած է,
Թոնիրը մեջը թաղած է,
Թեզ արեք, բրնձով փլավ գցեք,
Քանի յարս կայնած է:

92(545)
Բոյը՝ թել-թել,
Բեղը՝ ծիլ-ծիլ էն տղեն,
Ինչ դարդ ունեմ,
Քանի նա կա աշխրեն:

93(546)
Երդիկ-երդիկ անցել ես,
Երդիկա ծերին կայնել ես,
Նանս քեզ աղջիկ չի տա,
Իզուր քունդ կտրել ես:

94(547)
Նստա օդեն՝ կար արի,
Կար արի, կանվա արի,
Տեսա յարըս գալիս էր՝
Կանվեքըս խավար արի:

95(548)
Արազին մոտացել եմ,
Դարդերըս թազացել են,
Արազ, ընձի ճամփա տուր՝
Էրթամ հասնիմ իմ յարին:

96(549)
Ալագյազ բարձր տեղ է,
Ջուրն հիվանդին դեղ է,
Սիրած, սիրածին չեն տա,
Էս ինչ անօրա տեղ է:

97(550)
Մանր-մանր աբասի,
Մարդ էլ յարին բան ասի,
Ով բան ասի՝ քոռանա,
Զույգ աչքերով կուրանա:

98(551)
Գդալը՝ յուղի մեջը,
Սիրածըս՝ գյուղի մեջը,
Գդալը տեղից հանեցին,
Սիրածիս գյուղից հանեցին:

99(552)
Խաղ կասեմ խանա-խանա,
Չես կարող բերան բանա,
Խաղից խանեքը ես եմ,
Քեզի սիրողը ես եմ:

100(553)
Մազերըս համպա-համպա,
Ֆիդան յարիս ղրկի ճամփա,
Ֆիդան յարըս ինձ տվեք,
Չքաշեմ ահ ու զարը:

101(554)
Կապույտ թայը հեծել եմ,
Արազին մոտացել եմ,
Արազ, ընձի ճամփա տուր,
Շեկ յարիս կարոտցել եմ:

102(555)
Ալ էղնիմ, ալ էղնիմ,
Թշիդ վրա խալ էղնիմ,
Թուշըդ պաչեմ զօր-գիշեր,
Ես քո սիրած յարն եմ:

103(556)
Էս ֆայտոնը մերն էղնիր,
Ակները կանաչ էղնիր,
Նստեյի գնայի յարիս մոտ,
Կարճ գիշեր երկար էղնի:

104(557)
Ծիրանի ծառ բար մի տա,
Ճըղներըդ իրար մի տա,
Ես մի սիրուն աղջիկ եմ,
Դարդերըս իրար մի տա:

105(558)
Արևի հովին մեռնիմ,
Շեկ յարի բոյին մեռնիմ,
Քանի տարի է չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնիմ:

106(559)
Էլի երկինքն ամպել ա,
Յարըս ալ ձին թամբել ա,
Ընձնեն խռովել կերթա,
Բոխչեն կապել ճամփա կերթամ:

107(560)
Արազն էկավ ափին տալով,
Էրկու- օրիորդ ծափին տալով,
Դարդըս որտեղ թաքցնեմ,
Որ չիմանան լացել եմ:

108(561)
Խնձոր՝մ ունիմ կծած է,
Չորս բոլորն արծըթած է,
Ախպերս ուզեց՝ չտվի,
Ասի՝ յարիս ղրկածն է:

109(562)
Վանա ձորեն անցա ես,
Անձրև եկավ՝ թրջա ես,
Արև դըբավ՝ չորցա ես,
Վարդի նման բացվա ես:

110(563)
Մեռա բաղը գնալեն,
Թփերի հետ խաղալեն,
Ծառերին թուփ չմնաց,
Դարդիս դարման էնելեն:

111(564)
Էս տարի ալ է դառել,
Լեզուս բլբուլ է դառել,
Ուր ա իմ հերվա լեզուն,
Էս տարի լալ է դառել:

112(565)
Դեմ արել աջին՝ քնել ես,
Պըտող-պըտող քրտնել ես,
Զարթնիր, սիրած
Յարդ էկավ:

113(566)
Տեղ եմ քցել փրփրի,
Վատ խոսողը քրքրի,
Ես եմ սիրել, ես կառնիմ,
Ձեր խաղն էլ ինչ է:

114(567)
Էլի երկինքը ամպել ա,
Յարըս սև ձին թամբել ա,
Սև ձին ինչ կանե նալը,
Սիրածս ինչ կանե խալը:

115(568)
Կանցիլարի դուռը կը վառի ֆառը,
Սալդաթ տըղի սըրտեն չելավ մըռմուռը,
Շինելը հագցըրին, թըվանքը տըվին,
Պատերազմի դեմը մեզ չբերեին:

116(569)
Ալագյազը ձընել է,
Յարըս տակը քընել է,
Ձեն տըվի, ձենս չառավ,
Աջաբ ընձեն ջորեվ է:

117(570)
Ջորել ես, խռովել ես,
Գլուխդ առե, կորել ես,
Ընձի անտեր թողել ես:

118(571)
Երկինքըն ամպել է,
Գետինը թաց է,
Սիրուհիս պառկել է,
Յերեսը բաց է:

119(572)
Կանչե կըռունկ, կանչե,
Թող ղարիբըս գա,
Սաղնա սըրտիս յարեն,
Աչքերըս կու լա:

120(573)
Ղարիբըս պառկել է,
Ծանտըր կը տըքա,
Չորս բոլորը կաշե՝
Ազգական չը կա:

121(574)
Ջուխտ գութան սար կը բանի,
Շեկ աղջիկ հաց կը տանի,
Մեկ կերթա, մեկ կը կայնի,
Խելք ու իման կը տանի:

122(575)
Քելե գնանք Ուրալը,
Աշխատենք օսկու հանքը,
Սև օձը բուն է դրե
Իմ ու յարիս արանքը:

123(576)
Ջաղաչիս ետի դուռը,
Բացվել է միջի գյուլը,
Ախ իմ սիրած բըլբուլը
Քաշել են խանի դուռը:

124(577)
Սարը բուսել է սոգոն,
Նանըս թխել է բոքոն,
Մեռնիմ շամամ ծծերին,
Գըլմանի վարդի կոկոն:

125(578)
Համբարձման ձորի մեջը,
Պաղ աղպուր հորի մեջը,
Մեռնիմ շամամ ծծերիդ,
Կապուտ կապոտիտ մեջը:

126(579)
Ալագյազ բարձր սար է,
Տակը ջընջըլած քար է,
Տեղըս մի քցե՝ դար է,
Սիրածըս մեկուճար է:

127(580)
Պուճուր աղջիկ համ ունիս,
Չոլիկ դիմաց ծամ ունիս,
Խունջիկ-մունջիկ մի անի,
Ինձ առնլու կամ ունիս:

128(581)
Արազի վերի գյոլը
Ծով արի քցի թոռը,
Ես ձեր տղին հավան չեմ,
Քցել եք օսկու զոռը:

129(582)
Այ տղա, այիրն արա,
Ոչխարը չայիրն արա,
Գըքամ մոտիցդ կանցնեմ,
Թուխ գառը մատաղ արա:

130(583)
Սարերը սնձոտել է,
Ոչխարը բրդոտել է,
Չոբան, մերըդ մեռել է,
Շորերըդ կեղտոտել է:

131(584)
Բոզ ձին հեձնի՝ բոզ կեղնի,
Ձին քելելան թոզ կեղնի,
Յայլուղս ընկավ՝ դու վերցա,
Ես վերցընեմ՝ խոսք կեղնի:

132(585)
Կալը ցորեն մաղող չեմ,
Դաշտը բանջար քաղող չեմ,
Ես բարակ եմ ու ֆիլիզ եմ,
Ես էդ կոնդին լայեղ չեմ:

133(586)
Ծառի տակը էլ ունիմ,
Ռանգ-մըռանգ թել ունիմ,
Թելիկ-մելիկ դու աղջիկ,
Ես քու վրա սեր ունիմ:

134(587)
Էս գիշեր լուսըմ տեսա,
Իմ յարին դուսը տեսա,
Ելեր էր, կերթար մեշեն,
Կացինը ուսը տեսա:

135(588)
Գութանը հաց եմ տարե,
Բերանը բաց եմ տարե,
Ով գիտե՝ ինչ եմ տարե,
Ձուկը տապկած եմ տարե:

136(589)
Գութանը վարա փոսին,
Շեկ գոմեշն է ակոսին,
Գութան քշողը՝ հերըս,
Գլավնի է կերսարըս:

137(590)
Բոզ ձիավոր սուրբ Սարգիս,
Դու հասնիս մեզ երկուսիս,
Ջիվան ջաներըս պայես,
Թըշնամու աչքը հանես:

138(591)
Կապուտ է մանուշակը,
Բուսել է քարի տակը,
Ես իմ յարիս գտել եմ,
Խնձորի ծառի տակը:

139(592)
Սարի ետև՝ քառսուն կարաս,
Քառասուն կարսի գինին՝ խաս,
Ոսկե գյուգյում, արծաթ թաս,
Ամեն թասին պագըմ տաս:

140(593)
Ըսպիտակ ձին նալն ինչ կենե,
Սիրունը խալն ինչ կենե,
Քեզի առնող իգիթը
Աշխարհի մալն ինչ կենե:

141(594)
Հով այվանը մտել եմ,
Ամբոհանին քցել եմ,
Ամբոհանին քեզ փեշքյաշ,
Եղնին է յարալու, յոլդաշ:

142(595)
Մընի ըսեմ՝ մեկ բերան,
Ձեր դուռը՝ ջուխտ'մ բերան,
Գեշը սիրունի ծոցը
Հայ վախ ու հազար բերան:

143(596)
Յոթը տարի քարշ տվի,
Կողքերեդ յանաջ տվի,
Բերես մատաղըմ կենես,
Էլ հետըտ չեմ հաշտըվի:

144(597)
Լինեի, հով լինեի,
Արևի շող լինեի,
Մընթըշում քնած յարիս
Երեսին քող լինեի:

145(598)
Ղշեր թևերդ բացեք,
Իմ յարիս քյոլ մի արեք,
Բարակ քամին թող փչի,
Դուք էլ ինձ նանիկ ասեք:

146(599)
Հաց եմ թխե մշակի,
Ելեր եմ նստե դոշակի,
Իմ յարիս կարոտցեր եմ
Ոնց որ վարդ, մանուշակի:

147(600)
Հաց եմ թխե՝ լավաշ է,
Տղա երեսըդ աշե,
Դու սիրիր՝ հաղլը տարավ,
Հողերը գլուխըդ քաշե:

148(601)
Հաց եմ թխե փրփրի,
Գեշ կեսուրը քրքրի,
Անեմ, չանեմ՝ չիմանա,
Ամեն բանին կխոսա:

149(602)
Հաց եմ թխե՝ գարի է,
Իմ յարը սաֆարի է,
Մեռնիմ սաֆարի բոյին,
Խոսքերը գարազի է:

150(603)
Ամպեր, մի քիչ հով արեք,
Անձրև թափեք, ծով արեք,
Գեշ մարդու էլն ու գյուման,
Սև հողի տակովն արեք:

151(604)
Երթիկը կայնող տղա,
Մասիս մտածող տղա,
Էկան ինձի տանելու,
Թըսիբըդ մեռնի, տղա:

152(605)
Վարդևորին վարդեր փնջեմ,
Վարդի բուրմունքը շնչեմ,
Էդ քո քաղցր անունը
Ես իմ մտքից ոնց ջնջեմ:

153(606)
Այս սարերին հով չկա,
Դարդըս իմացող չկա,
Ես կասեի, ես կուլայի,
Աչքերս սրբող չկա:

154(607)
Գնացի չայը՝ լվացք,
Տաշտըս կոտրռվավ, ջուր գնաց,
Ինչ անեն հերն ու մերըս,
Ճակատիս այդ է գրած:

155(608)
Արևը դիպավ պատին,
Ոչ ողորմի քու տատին,
Էս լեն ու բոլ աշխարհին,
Քեզի տվավ աղքատին:

156(609)
Փոցխըս գերանի կոթ է,
Սիրտըս յարալու խոց է,
Սըրտինըս սիրտըդ ընկնի,
Նոր իմանաս սվտեն ոնց է:

157(610)
Ախչի, անունդ Թաքուն,
Նստել ես հորըդ սըքուն,
Արի շորերըդ հաքում,
Օղորմի պապիս հոգուն:

158(611)
Վերևեն քոչըմ անցավ,
Բողջե՛մ տվավ, մեջ անցավ,
Ախչի, սրտեդ ինչ անցավ,
Աչքըդ արցունքով լցվավ:

159(612)
Կուժն առա ելա ախպուր,
Թասով քաշեցի պաղ ջուր,
Հերն ու մեր աչքերը՝ կույր,
Ում օր գուզեմ, էնոր տուր:

160(613)
Կուժն առա ելա դարը,
Չտեսա Ֆիդան յարը,
Ֆիդան յարըս ինձ տվեք,
Չքաշեմ ահ ու զարը:

161(614)
Նստա, խնոցի հարի,
Յար ջան, մեր դռնովն արի,
Մեկ աչքըս բոյիդ առնի,
Նոր աստված հոգիս առնի:

162(615)
Ձորի մեջը ղաչախ է,
Գառի ոտներ շաչաղ են,
Հրեղեն ձին հեծնել իս,
Աստված բանըդ հաջողե:

163(616)
Ջուրը յուր ճամփեն կերթա,
Ցողունը վարդին կերթա,
Իմ սիրած կտրիճ տղեն
Հազարի մեջ մի բերդ ա:

164(617)
Կայնել ես քարի վրա,
Չինարի ծառի վրա,
Քիչըմ սարերովն արի,
Ես քո յարըն եմ, տղա:

165(618)
Համբարձումը գալիս է,
Ծաղիկը ցնծալիս է,
Այ գյուլում կանչող աղջիկ,
Ձենըդ ծլվլալիս է:

166(619)
Ծաղիկները ջամով է,
Սիրած յարը համով է,
Էստեղ զոռի բան չկա,
Սըվտեն իրա գյամով ա:

167(620)
Ջաղաչըս կաղա ալուր,
Դուշման քո սիրտը մալուր,
Իմ սիրածըս ինձ տվեք,
Թող հետը բերե բալուր:

168(621)
Սիրուն աղջկա մերը,
Խոսքը տվել է հերը,
Խոսքը տված գիշերը
Խաբար բերին ղըշերը:

169(622)
Վարդ է բուսե,
Վարդևոր է, կիրակի,
Ես չեմ ելնի սարը
Շոգուն՝ կրակին:

170(623)
Բուսնել ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին,
Գիշեր-ցերեկ միալար
Դու ես իմ խաղի միջին:

171(624)
Տղա մալըդ մի՛ տանի,
Մեր սինոռից մի՛ հանի,
Սիրել ենք, իրար առենք,
Բեբախտություն մի՛ անի:

172(625)
Ախչի, անունդ ըսեիր,
Թուշըդ երեսիս քսեիր,
Ելնեիր բարձիս վրա,
Թուշըդ երեսիս քսեիր:

173(626)
Ա՛յ աղջի, ծամով աղջի,
Շըքըրից համով աղջի,
Բերանըդ՝ նաբաթ պիտի,
Պըռոշներըդ՝ մարքըրիտ:

174(627)
Լուսնյակի լույսը ես եմ,
Ծովերի ձուկը ես եմ,
Գիշերվա փախչող աղջիկ,
Հետիտ ընկերը ես եմ:

175(628)
Լուսնյակ գիշեր դուս ելա,
Թուխոն անուշ կը ցոլլա,
Թող ցոլա հոլվան սարին,
Շատ բարև նազլու յարին:

176(629)
Բախչե՛մ ունեմ՝ դրախտ է,
Ծաղիկ ծաղկունքի վախտ է,
Գեշ տղա, սիրուն աղջիկ,
Էդ էլ մի ուրիշ բախտ է:

177(630)
Բաղ եմ տնկե նորենոր,
Հասցրել եմ մի խնձոր,
Յարիս տեսնելու համար
Առա, ընկա սար ու ձոր:

178(631)
Թել եմ ներկե նարնջի,
Տղա, վեր արի փնջի,
Նանըս քեզ աղջիկ չի տա,
Հերիք ման գաս յավընջի:

179(632)
Երթիկ-երթիկ բռնել ես,
Երթկա տակին կոնել ես,
Նանըս քեզ աղջիկ չի տա,
Անուշ քունըդ կտրել ես:

180(633)
Ձու դնիմ թավեն՝ խաշեմ,
Ելնեմ կտուրը՝ աշեմ,
Տեսնեմ յարըս գալիս է,
Չոքեմ չեքմեքը քաշեմ:

181(634)
Վարդ քնքուշ է տերևը
Փշեր շատ կա վերևը,
Մարդիկ շատ ապերախտ են,
Աստված լինի մեր տերը:

182(635)
Ամպել է, թոն չի գալիս,
Մթնել է, տուն չի գալիս,
Հեռու ճանապարհի է,
Աչքերիս քուն չի գալիս:

183(636)
Տապկած հավի ճուտը բերեմ,
Ոչխարի մածունը բերեմ,
Որ գիտենաս, յարո ջան,
Թե քեզ որքան կսիրեմ:

184(637)
Ալագյազը ձնել է,
Յարըս տակը քնել է,
Ձեն տըվի, ձենըս չառավ,
Յարըս ընձեն ջորել է:

185(638)
Ալագյազը քարոտ է,
Բարձր ծիրանն արոտ է,
Ուղիղ յոթը տարի է,
Յարը յարին կարոտ է:

186(639)
Վարդի թիրով է թուշըդ,
Բացված կոկոմ՝ պըռոշըդ
Ընձի հալեց ու մաշեց
Սիպտակ ու փափուկ դոշըդ:

187(640)
Սիպտակեց գետինը ձնից,
Աղջի, դուս արի տնից,
Ձեռնովըդ էրված սրտիս,
Կամ դեղ արա, կամ ջուր լից:

188(641)
Ճամփորդ ես, ճամփիդ մեռնիմ,
Մի գնա, ղուրբանըդ էղնիմ,
Որտեղ որ ղոնախ էղնիս,
Բերնիդ լեզուն ես եղնիմ:

189(642)
Վարդ քցեմ, ձեռքով բռնեմ,
Յարալի սրտիդ մեռնիմ,
Դե մե էտ դռնեն նես մտի
Տեսնեմ, կարոտըս առնեմ:

190(643)
Սարերը ման եմ տվե,
Սիրել եմ ջան եմ տվե,
Յոթը տարի սիրել եմ,
Մեկ օր պայման չեմ տվե:

191(644)
Սարի թրթրրկիչ թազա,
Մեղր ու շրքրը՝ քեզ մազա,
Ինձ պես նազան աղջիկը
Քեզ պես տղին ոնց սազա:

192(645)
Նստել ես դընգի հովին,
Սեր կենես Վարանցովին,
Էռնեկ ծոցրդ քնողին,
Շամամ ծիծրդ բռնողին:

193(646)
Ջաղաչի դուռը չիման,
Ախպորը չկա իման,
Եկան քուրոջը տարան,
Մի բերան չրսավ յաման:

194(647)
Խնձորը գլորել եմ,
Ճամփիցրս մոլորվել եմ,
Յոթը տարի միալար
Քեզ վրա սովորել եմ:

195(648)
Ծիրան էի ծառի ծերին,
Կերևար դիմացներին,
Էկան պոկեցին տարան,
Ծախեցին ախմախներին:

196(649)
Աչերրդ բիլոռ, բիլոռ,
Ինչ ման գուքաս իմ բոլոր,
Մեռնիմ բիլոռ աչերիդ,
Մի նայի խոլոռ-մոլոռ:

197(650)
Սարերի սինձն ինչ կանեմ,
Կաթն ու բրինձն ինչ կանեմ,
Ես եմ սիրե, ես կառնեմ,
Խոսք ու զրիցն ինչ կանեմ:

198(651)
Ձեր տան տակին վար կանեմ,
Չար պառավին քար կանեմ,
Իմ սիրածրս ինձ տըվեք,
Գրժությանրս թարկ կանեմ:

199(652)
Իջա դեզա գադարեն,
Ընկա կրակն ու բըլեն,
Այ տղա, էսման մի՛ գա,
Թաժացավ սրտիս յարեն:

200(653)
Ագիշի ծերը կեռ ա,
Քո սերը ընձի բեռ ա,
Ցածի մայլի շան տղա,
Ճամփեդ աշելով մեռա:

201(654)
Յայլի դարը բարձր է,
Յարրս ձի կը խաղցնե,
Ընձնից գյուման ունենաս,
Կառնի թարք, կփախցնե:

202(655)
Լամպը վառեք՝ լուսացու,
Կարմիր կովը՝ մըսացու,
Ես քո նանին՝ հարսնացու,
Դու իմ մորրս՝ փեսացու:

203(656)
Քար եմ քցե՝ կը սոսա,
Գեշ կնկա տեր, մի՛ խոսա,
Գեշ կնիկը նազ կենե,
Գիտե մարդը հրզ կենե:

204(657)
Կաքավի պես պտտվեմ,
Մաղարեքը բուն դնեմ,
Ցավերրս շատ անթիվ է,
Ես որ մեկին հետևեմ:

205(658)
Մեր տան ետևը՝ մառան,
Տղեքն եկան, ետ դառան
Ձեռրս քրցի, օր բռնեի,
Դիփ թազի, թուլա դառան:

206(659)
Աղջի, դու հուր ես, մուր ես,
Ես ծառավ եմ, դու ջուր ես,
Էս համբարձման գիշերը
Քեզ ման գուքամ, դու ուր ես:

207(660)
Գնա ման արի, արի,
Էսօրվա օրը վրես դարձել է տարի,
Բարձ կդնեմ, յան արի,
Ասի՝ յարո ջան, գիշերվա գնացքով արի:

208(661)
Ոչխարն արել եմ բակը,
Դեմ արի սելի ակը,
Ով իմ սիրածըս առնի,
Չչվայելե գլխի թագը:

209(662)
Հերըս ղոչերը ծախեց,
Յաթմեքը ճըտես կախեց,
Յաթմեկը ճըտովս չէ,
Առել եմ, սրտովըս չէ:

210(663)
Ոսկին բուկըս թուջ արի,
Ջայել կյանքը փուջ արի,
Ոսկուն թամայող աղջիկ,
Դու չես ապրի երջանիկ:

211(664)
Ջախչի դռնեն անցա ես,
Թոնը էկավ՝ թրջա ես,
Արև դիպավ՝ չորցա ես,
Վարդի նըման բացվա ես:

212(665)
Պանիրը քցի մայեն,
Ընձի էրին իմ յարեն,
Թող անողին չը մնա,
Կանչեմ աստված իմանա:

213(666)
Գեղի տակը կծղել է,
Գեղը մարդով լցվել է,
Էն քուրն օր ախպեր չունի,
Սիրտը դարդով լցվել է:

214(667)
Ես ծառավ եմ՝ ջուր չկա,
Սարերում ախպուր չկա,
Վախենամ ղարիբ մեռնիմ,
Վրես մեր ու քուր չկա:

215(668)
Մեծ Մանթաշի գեղեն եմ,
Մեծ բաղի խնձորեն եմ,
Քամին զարկեց, վեր քցեց,
Վաթանըս մոլորվել եմ:

216(669)
Գելնեի յայլի դուռը,
Եդևես քցիր քարըմ,
Ինչո՞ւ քցիր էդ քարը,
Վայթե կեղնեի քո յարը:

217(670)
Ախջի, անունըդ ասա,
Ֆըսիդ փիսքյուլը խաս ա,
Գնա քու նանիդ ասա՝
Ինձ անի իրեն փեսա:

218(671)
Կորի գնա շան տղա,
Նանըս քեզ աղջիկ չի տա,
Ես եմ սիրել, ես կառնիմ,
Ձեր կռիվն ինչ ա:

219(672)
Ելեմ ես սարը սնձի,
Ոտքըս դիպավ մի գնձի,
Ախչի քու մերըդ մեռնի,
Քեզի չտվեց ընձի:

220(673)
Սարի ջուր, սարի ախպուր,
Թե կտանիս, ջուղապ տուր,
Համ դու սիրուն ես, գըլմանիս մարջան
Ճամփեդ կը սպասեմ, ազիզ ախպեր ջան:

221(674)
Բարակ ես, բարդի ծառ ես,
Կրակ ես, սիրտդ կվառես,
Մեկ կքելես, մեկ կկայնես,
Խելք ու իման կտանես:

222(675)
Պատի տակին վար կանեմ
Չար ագռավին քար կանեմ,
Իմ սիրածը ինձ տվեք,
Գժությունըս թարգ կանեմ:

223(676)
Արևը կեռ ու կամար,
Ես կմեռնիմ քեզ համար,
Յոթը տարի դիմացա,
Մենակ քու խաթեր համար:

224(677)
Բաղըմ ունիմ նոներով,
Մեջը լիքը գառներով,
Գառները մատաղ կանեմ
Անուշ յարիս ձեռներով:

225(678)
Պուճախի փոսի սինձը,
Սոխակ լիզուս կըցնծա,
Վարդագույն էլակ կարեմ,
Ղրկեմ յարոյիս ընծա:

226(679)
Բոստանը՝ ռեդուշկա,
Ես ու յարըս պադռուշկա,
Հագնիմ դեյրա կրտուշկա,
Բոյըս բոյին ուրիշ գա:

227(680)
Աղջի անունըդ Ինտիզար,
Մտի տնեն սինի առ,
Հորեդ, մորեդ իզին առ,
Թև-թևի տանք, ելնինք սար:

228(681)
Դանի-դանի, դան կանեմ,
Էրևան մեյդան կանեմ,
Ջանգի[132] առևտուր կանեմ,
Թիֆլիս կերուխում կանեմ:

229(682)
Քամին եկավ օֆ էրավ
Քեզի ըստեղ ծվ բերավ,
Էդ նամարդի աղջիկը
Ում տեսավ՝ աչքով էրավ:

230(683)
Գելնիմ սարը՝ հունձ անեմ,
Քարը գլխիս բարձ անեմ,
Էրթող-գալող ճամփորդին
Ղարիբ յարես հարցնեմ:

231(684)
Ծիրան եմ ծառի ծերին,
Հեյ վախ, ընձի քաղեցին,
Հեյ վախ, ընձի քաղեցին,
Ծախեցին ախմախներին:

232(685)
Ամպել է, թոն չի գալիս,
Մթնել է, տուն չի գալիս,
Էս անտեր բարձի վրա
Առանց յար քուն չի գալիս:

233(686)
Էկան արտէ բռնին լոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Գըլմաներ կարմիր խընձոր:

234(687)
Ականջողըս զուտ օսկի,
Հերըս չի գալիս խոսքի,
Մինչև հերս եկավ խոսքի,
Կերսարըս բերավ օսկի:

235(688)
Տըղա, անունըդ՝ Հովանես,
Սարերը սեյրան կանես,
Առ ու ապուռ ունենաս,
Գուքաս յարիդ կը տանես:

236(689)
Տըղա, անունըդ՝ Վարազ,
Ձեռըդ առել ես թաբազ,
Սրբերեն գուզես մուրազ,
Գնա էղի քյանդրբազ:

237(690)
Մե կալը երես-երես,
Բյազըրգան, աստված սիրես,
Բաշ Շյորագալ էրթալուց
Իմ յարին հետըդ բերես:

[132] Գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ Վարդաբլուր (ծանոթ. կազմողների):

238(691)
Իմ յարըս հաց չի կերել,
Թազա մածուն եմ բերել,
Հեռու տեղից է եկել,
Ընձի նվեր է բերել:

239(692)
Շըվքի թընդիրը հով է,
Վրինը դարդակ բով է,
Տունը տասներկու ջան ենք,
Կթածը ղըսըր կով է:

240(693)
Սիրեցի, դառավ սավդա,
Քյաֆուր մերըս չի հավտա,
—Քյաֆուր դառնա քո մերը,
Որ չիմացավ քո սերը:

241(694)
Յարըս ձին նստավ գնաց,
Յայլուղըս մոտը մնաց,
Ինչ անեմ ալ կարմիր է,
Իմ սիրտը հետը գնաց:

242(695)
Ջաղչի դուռը կարմիր քար,
Ես չեմ առնի օտար յար,
Օտար յարը աչքի փուշ է,
Գեղի մեջինը անուշ է:

243(696)
Մանդըր քարը խիբար է,
Վըզինըս քյարուբար է,
Քյարուբարի տերն էկավ,
Մեկուճարի հերն էկավ:

244(697)
Բաղի բոլորը պատ է,
Տղեն հորիցը յադ է,
Սիրել ենք, իրար կառնենք,
Վերև աստված շահադ է:

245(698)
Փոցխըս ծիրանի կոթ է,
Սիրտըս յարալու խոց է,
Սրտինըս սիրտդ ընկնի,
Իմանաս սավդեն ոնց է:

246(699)
Տեղ եմ քցել, փոթ գուքա,
Միչեն խնկահոտ գուքա,
Մեռնիմ մեջի պառկողին,
Բերնեն անուշ հոտ գուքա:

247(700)
Ելել եմ սարը՝ ղիրջ է,
Առածըս քյորփա բիջ է,
Դնեմ օրոցք՝ օրորեմ,
Պահեմ, ընձի յար էնեմ:

248(701)
Իմ յարն ընձի յար պիտի,
Ձեռումը ֆանառ պիտի,
Իմ յարի կայնած տեղը
Մեկ չինարի ծառ պիտի:

249(702)
Ես ղուշ եմ, թևըս՝ դեղին,
Ման գուքար նանիս գեղին,
Նանըս ընձի ղոնախ չառավ,
Ետ դառնամ քամբախ գեղին:

250(703)
Կարմնջի տակը հով է,
Այ տըղա, ընձի գովե,
Էսօր տաս օր չեմ տեսե,
Սիրտըս արյունով ծով է:

251(704)
Սարը բուսնել է սոգոն,
Նանըս թխել է բոքոն,
Մեռնիմ ծոցիդ նըռներուն,
Գըլմանի վարդի կոկոն:

252(705)
Մանի ասեմ ու շարեմ,
Էցնեմ տոպրակը, կարեմ,
Քաղքե քաղաք ման ածեմ,
Սրտիս սիրածը ճարեմ:

253(706)
Մանի ասելու եկա,
Հում սեր ուտելու եկա,
Խոմ հում սերը դարդըս չէր,
Յարիս տեսնելու եկա:

254(707)
Մանի ասեմ մի բերան,
Մե տանը ջուխտըմ գերան,
Սիրունը գեշի ծոցին,
Այ վախ ու հազար բերան:

255(708)
Կարմիր կովը մըսացու,
Էրի, էրի, յանդըր, մոյ, մոյ,
Ես քու հորը փեսացու,
Յանդըմ, շեկո ջան:

256(709)
Ալագյազ բարձր սար է,
Տակը ժընջըլած քար,
Ձեն տըվի, ձենըս չառավ,
Մըգըր ընձեն ջորե՞լ է:

257(710)
Անցա պատի օլորը,
Բռնեցի նախշուն լորը,
Իմ բռնած նախշուն լորը
Տարեք իմ յարի մորը:

258(711)
Նըստա օդեն կար արի,
Կար արի, կանվա հանի,
Էկան ասին՝ յարդ էկավ,
Կանվեքըս խարաբ արի:

259(712)
Չայիրները խոտ կեղնի,
Յարաբ յարըս հոտ կեղնի,
Շատ ման էկա, չըգըտա,
Չըգտնելը դարդ կեղնի:

260(713)
Խնձորը գլորել եմ,
Ճամփիցըս մոլորվել եմ,
Երեք տարի միալար
Քեզ վրա սովորել եմ:

261(714)
Հանդի լալա է յարս,
Ծոցի բալա է յարս,
Տնկոզ-տնկոզ ման արի,
Մութը յնկավ տուն արի:

262(715)
Բուխար փափախ դրել ես,
Միտքդ վրես ծռել ես,
Բուխար փափախիդ մեռնիմ,
Հեչ անունըս տըվե՞լ ես:

263(716)
Խաց եմ թըխե բոյովըս,
Կուշտ չկերա փորովըս,
Ես ինչ ասեմ իմ մորըս,
Յար չգըտավ բոյովըս:

264(717)
Մեր յարտը երես-երես,
Կանդըխտոր, աստված սիրես,
Խոպանի կողմ էրթալուս՝
Իմ յարին հետըդ բերես:

265(718)
Նստել ես դնգի հովին,
Կնայես Վարանցովին,
Էրնեկ հետդ քնողին,
Խնձոր թուշըդ պակողին:

266(719)
Հանդումը նստա քարին,
Նամակ գրի իմ յարին,
Թող կարդա, յիմանա,
Վերջը կատարվի բարին:

267(720)
Սարի տակը սարին էր,
Գլոխըս չոր քարին էր,
Հըմիկվա լակոտների
Ուշք ու միտքը յարին է:

268(721)
Իմ յարը ֆուռ կդնե,
Փափախը ծուռ կդնե,
Նշանվելու օրերը
Ջեբերը նուռ կդնե:

269(722)
Մեր տան ետև էրկու ծառ,
Որից մեկը ընկյուզ ա,
Քու ի՞նչ գործն է, այ պառավ,
Քու տղեն ընձի գուզա:

270(723)
Ըստացել եմ նամակըդ,
Ընչի՞ս է պետք հանաքըդ,
Աստըծմից դիլաք կէնեմ՝
Խավարի յարեգակըդ:

271(724)
Սամավար տարեք յօդեն,
Նոր էկա յարիս մոտեն,
Նոր էկա յարիս մոտեն՝
Կշտացա համեն-հոտեն:

272(725)
Ախչըկները հունիսին
Փոցըխ կերթան միասին,
Գյադա-գյուդեք մեր մասին
Յավել-պակաս չխոսին:

273(726)
Օչխարն էրել եմ բակը,
Դեմ տվել սելի յակը,
Ով օր սիրածըս չտա՝
Չվայլե թագ-պսակը:

274(727)
Սարերը սնձոտել են,
Օչխարը բրդոտել է,
Սարեր, ա՛խ, ճամփա տվեք՝
Էրթամ յարիս տեսնելու:

275(728)
Ախչի, ախչի, անաստված,
Անուշ քնով ես քնած,
Հերիք խունջիկ-մունջիկ գաս՝
Քեզ ընձի կուտա աստված:

276(729)
Ալագյազը բարձր է,
Յարըս ձի կխաղցընե,
Գնացեք՝ յիմաց էրեք,
Թող գա, ընձի փախցնե:

277(730)
Ախչի, յըլը տիտիկ տու,
Յաչքի պոչով մտիկ տու,
Դուշմընի փուչ խոսքերը
Քըցե ոտիդ տակը դու:

278(731)
Ժամի դուռը քեչած ա,
Խաս բալիչը դրած ա,
Խաս բալիչը դրած ա,
Յարըս վրեն քնած ա:

279(732)
Ջաղաչի դուռը չիման,
Ախպորը չկա գյուման,
Էկան, քուրոչը տարան,
Մե բերան չ՚ըսավ՝ յաման:

280(733)
Սարիցը ջուր է գնում,
Յիմացեք յուր է գնում,
Մըհանա աներ էրե՝
Նշանածտես է գնում:

281(734)
Մեր մայլեն դուրան-դուզ է,
Ջրերը պաղ ու պուզ է,
Իմ գինը տաս հազար է,
Ո՞վ կըրա ընձի ուզե:

282(735)
Չափարները չափ կանեմ,
Կոտով օսկին թափ կանեմ,
Ես իմ ախչիկ հալովըս՝
Քեզ պես տղին խաբ կանեմ:

283(736)
Լամպուչկեն երկան յաղիք,
Լամպուչկի պոչը ծաղիկ,
Սև էղնիր էդման յարը,
Ընձի դարձուց խաղալիք:

284(737)
Մանի ըսեմ ու շարեմ,
Լցնեմ տոպրակը, կարեմ,
Քաղքե-քաղաք պտըտեմ,
Սրտով սիրած յար ճարեմ:

285(738)
Ես ախչիկ եմ՝ ալ գուզեմ,
Նազուկ մեջքիս շալ գուզեմ,
Թե օր տանիս ձեր տունը՝
Օսկի-քյայրուբար գուզեմ:

286(739)
Մանի ըսելու էկա,
Ծաղիկ քաղելու էկա,
Ծաղիկը խո դարդըս չէր՝
Յարիս տեսնելու էկա:

287(740)
Ելնեմ սարերը իստա,
Սիրել եմ՝ մաշինիստ ա,
Սիրել եմ՝ մաշինիստ ա՝
Ջայնամ թե հագին չուստ ա:

288(741)
Սարեն յիջան էրկու ղոչ,
Մեկը՝ փնջած, մեկը՝ ոչ,
Դիվանիդ մեռնիմ, աստված,
Մեկին կուտաս, մեկին՝ ոչ:

289(742)
Ելել եմ վերի յայլեն,
Քաղել եմ դաստով լալեն,
Ինչ էնեմ դաստով լալեն,
Խորունկ է սրտիս յարեն:

290(743)
Բոստան ունիմ՝ դդում է,
Յարըմ ունիմ՝ էթում է,
Էն էլ իմ սև բախտիցը
Սիբիրումը փտում է:

291(744)
Սարի պես դարդ եմ քաշե,
Ջայել եմ՝ կյանք եմ մաշե,
Հեռու ես, չես յիմանա՝
Կարոտըդ ոնց եմ քաշե:

292(745)
Արազն եկավ ափ տալեն,
Էրկու օրիորդ ծափ տալեն,
Հենա յարըս գալիս ա՝
Սև շլապկեն թափ տալեն:

293(746)
Ցորնի յարտը կծղել է,
Գեղը մարդով լցվել է,
Էն ախչիկն օր յար չունի,
Սիրտը լացով լցվել է:

294(747)
Մածուն մերել եմ՝ կորթ ա,
Յարիս մայրիկը խորթ ա,
Յարիս մայրիկը խորթ ա,
Վախենամ՝ ընձի մորթա:

295(748)
Քեխ կերած՝ քեխիդ մեռնիմ,
Նոր ծլած պեխիդ մեռնիմ,
Յարեդ ջորել, գնացել՝
Գնացած տեղիդ մեռնիմ:

296(749)
Յարիս ղրկի իպիշկի,
Գնաց նստավ խմիչքի,
Կապեկի՛մ օգուտ չի տա,
Տունը գլխուն բրըշկի:

297(750)
Երդիկը կայնող տղա,
Մասիս մտածող տղա,
Էկել են, օր ինձ տան,
Թասիբըդ մեռնի, տղա:

298(751)
Յառվընները համամ ա,
Գյուլի բաղը շամամ ա,
Ես էն տղին կսիրեմ՝
Խելքը գլխին թամամ ա:

299(752)
Անցա պատի օլորը,
Բռնեցի նըխշուն լորը,
Բռնածըս նըխշուն լորը
Ղրկեմ իմ յարի մորը:

300(753)
Նստա քարին՝ եղ կերա,
Եղ կերա, երդում կերա,
Թող անիծվի քու մերը,
Որ չանջատեր մեր սերը:

301(754)
Օսկին վրեդ թուջ արիր,
Ջայել կյանքըդ փուչ արիր,
Օսկուն թամայող ախչիկ,
Դու չես էղնի երջանիկ;

302(755)
Կուժն առա՝ ելա սարը,
Չգտա ֆիդան յարը,
Ինձ տվեք ֆիդան յարը՝
Չքաշեմ ախուզարը[133]:

303(756)
Թոն է էկե՝ էրակ է,
Ախչիկ մորը կրակ է,
Ախչիկ մորը կրակ է,
Հըմը խալխի ճրագ է;

304(757)
Նամակ, նամակ, տուն արի,
Նըխշուն նամակ, տուն արի:
Տեսնիմ յարիս գրածն է՝
Կպահեմ հարուր տարի:

305(758)
Բաղի մեջը վարդ կէղնի,
Բաղի շունը սարթ կէղնի,
Ուսուլ խոսա, շան տղա,
Պատի տակը մարդ կէղնի:

306(759)
Էրևան բաղ եմ արե,
Ջիգյարըս դաղ եմ արե,
Դոստ ու դուշմանիս մեջը
Լացըս ծիծաղ եմ արե:

307(760)
Ելա երդիկն՝ աշեցի,
Ջուխտըմ կոշիկ մաշեցի,
Ես էն տղից խաբար չեմ՝
Գեղով մեղքըս քաշեցին:

308(761)
Բոստընի ճամփեն օլոր-մոլոր,
Սաթոյին բերին արընկոլոլ,
Հարևընները թափան բոլոր,
Յաման զուլում է, զուլում է[134]:

309(762)
Բեր, բլուզդ կարեմ,
Սադաֆ չկա,
Ախ, յարո ջան,
Վարդը դոշիդ շարեմ:

310(763)
Յարիս մի տանի յայլեն,
Յարիս մի տանի յայլեն,
Մարալ,
Խավար կմընա մայլեն:

311(764)
Մուկուչի ախչիկ,
Սերըդ Օնիկին վառել ա,
Ուզեցա առնեի՝
Աթաբեկը տարել ա:

312(765)
Ավաղ, հերվա կիրակին,
Քավորակին, սաներկին,
Քավոր, թույլ տուր հասնիմ
Իմ նպատակին:

313(766)
Օջախըդ լիքն է ցորեն հացով,
Ինձ պահում ես գարի հացով,
Էլ ի՞նչ յընկեր, ի՞նչ բարեկամ,
Որ խոսում ես յամեն անգամ:

314(767)
Մանթաշի ձորումը
Քնել ա յարըս,
Վարդի բուրմունքովը
Հարբել ա յարըս:

315(768)
Յիջա չայիրները՝
Շատ կային ճիլ ու խոտ,
Բիլբուլի բաղիցը
Գուքար անուշ հոտ:

316(769)
Սարիցը քոչ է գնում,
Քոչ-քոչի մեջ է գնում,
Երանի էն աղջկան՝
Յոթ ախպոր մեջ է մնում:

---

[133] Անեծք (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):
[134] Սա հավանաբար տեղական ինչ-որ երգի կտոր է (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

317(770)
Ջաղչի դռնով անցա ես,
Թոնը էկավ՝ թացվա ես,
Արև դիպավ աշխարքին,
Վարդի լըման բացվա ես:

318(771)
Իմ մեջքինը քյամար է,
Քո ունքերը կամար է,
Դարդ մի անի, ազիզ ջան,
Սերս քեզի համար է:

319(772)
Մանի ասեմ ու շարեմ,
Լցնեմ տոպրակն ու կարեմ,
Քաղքե-քաղաք ման ածեմ,
Սրտով սիրածս ճարեմ: (Տրբ)

320(773)
Նստա այվան կար արի,
Կար արի, կանվա արի,
Յարս դռնեն անց կացավ,
Կանվեքը խարաբ արի: (Տրբ)

321(774)
Անցա ջրի էն վաթան,
Փռեցի թոփ'մ քյաթան,
Ով որ իմ սիրածն առնե,
Ես կարեմ էնոր պատան:

322(775)
Քարփի գլխին տուն ունեմ,
Միջին էրկու սուն ունեմ,
Յար ջան, սիրուդ կարոտից
Գիշերները քուն չունեմ:

323(776)
Մեռնեմ էն ջահել տղին,
Բոյին ու ծլած բեղին,
Ուրիշներու շարբաթից
Քաղցր է յընոր լեղին:

324(777)
Անձրև կուգա շաղալեն,
Վարդի թփեր դողալեն,
Ճամփա տվեք, յարս էկավ՝
Ալ-այլուղը թափ տալեն:

325(778)
Ջաղչի դռները տաշած,
Ունքերդ ղալմով քաշած,
Թուղթն ի՞նչ է, ղալամն ի՞նչ է,
Լուսնու շողով է նախշած:

326(779)
Ես մի մարալ, դու ջեյրան,
Էրթանք սարերը սեյրան,
Ինչ ուզում են, թող ասեն,
Ջանս լինի քեզ ղուրբան:

327(780)
Արի, արի, իմ Լուսին,
Էրթանք հանդը միասին,
Ուրիշները մեր մասին
Ավել-պակաս չխոսին:

328(781)
Հագել ես ջովդան,
Կայնել ես մեյդան,
Թառ դոշիդ մատաղ,
Նշանլու յար ջան:

329(782)
Սարիցը գուքա քամի,
Դու չես մնում մի համի,
Ամեն աժող-չաժողին
Մի թողնի միսս ծամի:

330(783)
Էրթիկ-էրթիկ բռնել ես,
Մեր դռանը կայնել ես,
Մերս քեզ աղջիկ չի տա,
Անուշ քունդ կտրել ես:

331(784)
Ալ-բլուզդ հագել ես,
Գյուղամիջին կայնել ես,
Մեռնիմ բոյ ու բուսաթիդ,
Խելք ու միտքս տարել ես:

332(785)
Ծաղիկ ես անուշ հոտով,
Ով անց կենա քո մոտով,
Աչքը կընկնի երեսիդ,
Ու կըմնա կարոտով:

333(786)
Ինչի՞ս՝ էն մատանիքը,
Որին անգին քար չկա,
Հազար էրնեկ էն մարտուն՝
Սրտում սիրած յար չկա:

334(787)
Դու իմ արև, իմ լուսին,
Մեռնեմ քու բոյ ու բուսին,
Դարդիս դեղ-դարման արա,
Էլ չխոսեն մեր մասին:

335(788)
Երկինքն ամպ է, չի պարզում,
Թևիս սհաթ չի սազում,
Հինգ հազար ղաթ էլ հագնիմ,
Սիրտս սև է, չի վազում:

336(789)
Բախչի վարդը անուշ է,
Խնձորից նուռն անուշ է,
Քուր ունեմ, ախպեր ունեմ,
Բիթըքից յարն անուշ է:

337(790)
Թազա հացի հոտ կուքա,
Յարը յարի մոտ կուքա,
Մեռնեմ դաստա քյանքուլիդ,
Միջից դախձի հոտ կուքա:

338(791)
Մի ղուշ եմ, թևս՝ դեղին,
Ման գուքամ մեջ մեր գեղին,
Գլխովս մատաղ լինեմ
Իմ յարի ոտնատեղին:

339(792)
Հերիք հաչաս, գյավազա,
Ջուրը բերնեդ կըվազա,
Ինձ պես նազանի ախչիկ
Քու պես տղին ո՞նց սազա:

340(793)
Ես մի փուփուշի դոխ եմ,
Շաբթուն մէ յար կփոխեմ,
Հազար էրնեկ էն տղին,
Յոր իրանց շեմ կկոխեմ:

341(794)
Բողչեն բանանք,
Մեջը խորված հավ էղնի,
Յարս, ասեք,
Մեջք բարակ, ձեռքը հունարով լինի:

342(795)
Այ նանար, գյուլ Նանար,
Մարգարա,
Շան տղա յարիդ տարան,
Ճար ունես՝ ճար արա:

343(796)
Կուժը առնեմ
Էլնեմ վերի աղբուրը,
Ջուրը կրեմ,
Լցնեմ հերանցս գուռը:

344(797)
Ալագյազը բարձր է,
Սիրած յարը քաղցր է,
Հարվածային բրիգադի
Պլանը բարձր է:

345(798)
Մանուշակ թփի տակին,
Ձվաձեղ խփի տակին,
Սերդ կպավ իմ սրտին
Խնձորի ծառի տակին:

346(799)
Արև էլավ՝
Աշխարհի համար է,
Ախպեր ունեմ, աչքերը թուխ,
Ունքերը կամար է:

347(800)
Էլի աչքս ընկավ Ախտայի յանը,
Կրակն ընկնի վառի սաբիբի ջանը:

348(801)
Արևը դիպավ պատին,
Ոչ օղորմի իմ տատին,
Էս լեն ու բոլ աշխարքում
Ինձ տվավ խուժան գյադին:

349(802)
Կոխպա բերին շողա աղ,
Քու ջան չէղնի ըսկի սաղ,
Բոլոր մեզնից կցավեն,
Կսկծու են կապել խաղ:

350(803)
Կայնա քարին, կուշ ելա,
Էթում գյադին թուշ ելա,
Էթում գյադեն տուն չունի,
Գիշերն աչքին քուն չունի:

351(804)
Էրևան բաղ եմ արե,
Ջիգյարըս դաղ եմ արե,
Դոշտ ու դուշմանիս մեջը
Լալըս ծիծաղ եմ արե:

352(805)
Խնձոր, խնձոր տուն արի,
Ճամփի խնձոր տուն արի,
Իմանամ յարս ա խըրկե,
Կպահեմ հազար տարի:

353(806)
Հելել եմ վերի յայլեն,
Քաղել եմ վարդ ու լալեն,
Ինչ անեմ դաստով լալեն,
Խորունկ ա սրտիս յարեն:

354(807)
Նստա, խնոցին հարի,
Յար ջան, մեր դռնեն արի,
Մեկ աշկը բոյիդ առնի,
Աստված նոր հոգիս առնի:

355(808)
Սարեն իջավ ձիավոր,
Յար չեղավ, կանեմ քավոր:

356(809)
Հոպ տար, ելնենք քարափը,
Իջնենք ջրերի ափը,
Սիրել եմ Սիրանուշին,
Հավնել եմ աչքին, ունքին:

357(810)
Անցա ջրի էն գեջեն,
Քաղի թութունի միջեն,
Տեսա յարըս գալիս է,
Փռեցի խալի, քեչեն:

358(811)
Յայլեցեն էկար բարով,
Սրտիս զարկեցիր սև քարով,
Ընձի զարկեցիր քարով,
Բըլկի կեղնեի քո յարոն:

359(812)
Դու վերևից գուքայիր,
Շալակինդ ժախ է,
Օսկե թել մազերըդ
Թիկունքեդ կախ է:

360(813)
Սիրելը լավ բան է,
Սիրելը լավ բան է,
Բանի, գործի վախտը
Մարդ շիվար կանե:

361(814)
Դու վերեն գուքայիր,
Շալակինըդ բուրդ էր,
Քեզի ըսպանողը
Անիրավ թուրք էր:

362(815)
Գութանը հոլա-հոլա,
Գութանի տակը քոլ ա,
Գութան քըշողն իմ յարն ա,
Շունչը զարկեց ակոսին:

363(816)
Էլի երկինքն ամպել է,
Յարըս ալ ձին թամբել է,
Ընձեն խռովել կերթա,
Բոխչեն կապել ու կերթա:

364(817)
Ես վերեն գուգայի,
Դու դուռը բացիր,
Ձեռըդ ծոցըդ դրիր,
Ախ արիր, լացիր,

Դու որ ընձի չառար
Դիշիկ մնացիր,
Գնա խալ բուխարի,
Յար չեղար ընձի:

365(818)
Արի յար ջան, արի, մեր կալի դոշը,
Մերել եմ կարագը, փաթել եմ լոշը:

366(819)
Քելե յար ջան, քելե լեռները,
Ես խմեմ արաղը, դու կանչե խաղը:

367(820)
Ցորեն եմ ցանել,
Ծիլը կանաչ է,
Հեռու տեղ յարըմ ունիմ,
Ականջը կանչե:

368(821)
Ախչի գնանք մեր բախչեն,
Բացեմ քու սրտի բոխչեն:

369(822)
Քելե, յար ջան, քելե,
Երթանք լեռները,
Մե տուն օչխար կարծեն,
Մե տուն՝ գառները:

370(823)
Նպատակիս գեթ մի մասը կատարեք,
Յարալու բլբուլ եմ,
Ցավի ձեռից որ ծովն ընկնիմ, սպանվիմ,
Յարալու բլբուլ եմ:

371(824)
Սիրուցըս բաժնըվա,
Թաք մնաց բարձըս,
Գուլամ, կը մղկըտամ,
Թե ոչ ոք չունիմ:

372(825)
Կանչե, կռունկ, կանչե,
Թող յարըս տուն գա,
Սրտիս յարեն լավնա
Աչքերըս քուն գա:

373(826)
Կռունկ իջած տեղըդ
Չայիր, չիման է,
Աշխարհին արև էր,
Մեզի դարման էր:

374(827)
Աղբուր ծաղիկն ու լալը,
Շատ սիրուն է լալվարը,
Բայց իմ սիրած մարալը
Արժե ալամ աշխարհը:

375(828)
Էս տարի կանեփ ունեմ,
Կանեփս մանող չունեմ,
Ես որ գուզեմ նշանվիմ,
Հերս կըսե փող չունեմ:

376(829)
Նստա օդեն կար արի,
Կար արի, կանվա արի,
Էկան, ասին յարդ էկավ,
Կանվեկս խարաբ արի: (Տրբ)

377(830)
Ծառի տակին ջուխտըմ ղոչ,
Մինը փնջած, մինը՝ ոչ,
Մեռնեմ Աստված դիվանիդ,
Մեկին կտաս, մեկին՝ ոչ:

378(831)
Կանչե, կըռունկ, կանչե, քանի գարուն է,
Աշխարհին արև է, օրըս խավար է,
Կըռունկ, թե կըսիրես արդարությունը,
Գնա գյուղը՝ պատմի իմ դրությունը:

379(832)
Անտանելի ցավ է բանտարկությունը,
Ավաղ, հազար ավաղ, բանտումն եմ այսօր,
Բանտիցը դուրս եկա, մոլոր մնացի,
Ընտանիքըս շատ էր, գերի գնացի:

380(833)
Բաղի բոլորը դըդում,
Մե յարըմ ունեմ՝ եթում,
Այդ է իմ ղարա բախտեն,
Գրե՝ սալդաթ է էթում:

381(834)
Մընի հեջել ի յարըս,
Ջեբի քեջել ի յարըս,
Ջեբես հանեմ կերցնեմ,
Հալդ ու քեֆըդ հարցընեմ:

382(835)
Մընի ասելու եկա,
Հում սեր ուտելու եկա,
Մըլըմըս հում սերը չէր,
Յարիս տեսնելու եկա:

383(836)
Մընի ասեմ մի բերան,
Մի տանըմ՝ ջուխտըմ գերան,
Սիրունը՝ գեշի ծոցը,
Հեյ վախ, ու հազար բերան:

384(837)
Ջախչի դըռնեն անցա ես,
Թոնը էրավ՝ թըռչա ես,
Թոնը էրավ՝ թըռչա ես,
Արև դիպավ՝ չորցա ես:

385(838)
Կանաչել են արտերըս,
Թաժացել են դարդերըս,
Դարդերըս իրար միք տա,
Խավարել են վարդերըս:

386(839)
Մընի եմ, մընըջի եմ,
Աշխարհին բոյաճի եմ,
Էս մոմենտին, Գրեֆ ջան,
Բարով էկար:

387(840)
Բարով էկար, բարեկամ,
Ուրախ, բերածըդ բարի,
Էս մոմենտին, Գրեֆ ջան,
Բարով էկար:

388(841)
Կըտռել է գեղի առուն,
Աչքիս է թառե թոռուն,
Ինքը մատայ բանըմ չէ,
Սավդել է, սիրտըս վառել:

389(842)
Կանանչ արտի միջակը,
Սաբաբն էղավ Չիչակը,
Հաց տուր ելնինք քարափը,
Իշնինք ջրերի ափը:

390(843)
Կարմընջի քարը թուխ է,
Յարիս աչերը թուխ է,
Անուշ, դու բարով էկար,
Կանանչ կալերով էկար:

391(844)
Ջաղաչըս մանի, մանի,
Վերի բանդը կը բանի,
Ես սիրուն եմ, յարըս՝ գեշ,
Իմ քունը ո՞նց կտանի:

392(845)
Երանի քեզ բաղի բիլբուլ,
Որ չես տեսել ջիգռի մռմուռ,
Որ կը տեսնես ջիգռի մռմուռ,
Կթափի քու նըշխուն թեպուր:

393(846)
Ելել եմ սարը, նիստ է,
Սիրել եմ, մաշինիստ է,
Ջայլամ թե հագը չուստ է:

394(847)
Մեշից փետը բերեցին,
Ընձի կուբի սարքեցին,
Յարիս դռնով անցուցին,
Սև-սև աչքեր լացուցին:

395(848)
Ախչի, ի՞նչ է, սևավոր,
Հաղլի դռներին սովոր:

396(849)
Սիրուն աղջիկ, համ ունես,
Ինձ առնելու կամ ունես:

397(850)
Ով օր սիրե ու չառնի,
Պսակը հողը մտնի,
Համ լավն ես, յարո ջան,
Համ էլ իմ յարն ես:

398(851)
Հարավ քամին գալիս է,
Դուռը շըխ-շըխ տալիս է,
Նանի, նանի, դուռը բաց,
Ղարիբ բալեդ գալիս է:

399(852)
Գյալն Խայու արևը,
Ո՞ւմ հետ ղրկեմ բարևը,
Բարևս տանող տղա,
Կանաչի քո արևը:

400(853)
Աղչի, ի՞նչ ես իմացել,
Սիպտակ դոշտ ես բացել,
Սիրուն լիպչիկիտ նայե՞ն,
Շամամ ծծերդ ես բացել:

401(854)
Մազեր ունեմ իլվանի,
Չեմ տա հազար թումանի,
Կտամ մի բյազրգանի,
Դնե ղուտիկն ու տանի:

402(855)
Բաղըմ ունեմ ծառներով,
Մեջը լիքը գառներով,
Գառներս մատաղ կանեմ
Սիրած յարիս ձեռքերով:

403(856)
Հանդումը նստիմ քարին,
Նամակ գրեմ իմ յարին,
Որ կարդա, ուրախանա,
Մինչև կատարվի բարին:

404(857)
Տարին տասերկու ամիս,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Խռովել է խնամիս,
Սևի սիրուն, յարո ջան:

405(858)
Բարի քցի՝ դառավ սավդա,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Քյաֆուր մերդ չըհավնավ,
Սևի սիրուն յարո ջան:

406(859)
Ջուր գուկա վերի սարեն,
Մարմար քարերի տակեն,
Ով որ ելնի մեր պատեն,
Թող հանե գոթուն յարեն:

407(860)
Բարակ առու, զուլալ ջուր,
Յար, բլբուլի վարդը տուր,
Յոթ սիրահար ես ունեմ,
Յոթն էլ՝ Արթիկի մեջեն:

408(861)
Յարիս մերիկը խորթ է,
Վախենամ ընձի մորթե,
Յարիս մերիկը հալալ է,
Ընձի կպահե դալար:

409(862)
Աղջիկ, գլուխդ կոս է,
Ուզածդ տղեն հոս է,
Աղջիկ, ինչքան գեժան ես,
Իշու գնից էժան ես:

410(863)
Մենծ կալը երես-երես,
Բյազրգան, Աստված սիրես,
Թե որ գնաս օտար տեղ,
Իմ յարին հետդ բերես:

411(864)
Աղջիկ կայնե դուքնի դուռ,
Աչքով կանե՝ յայլուղ տուր,
Թե կսիրես՝ խոսքըմ տուր,
Թե չես սիրե՝ թարկը տուր:

412(865)
Հագել եմ լաստիկ դեյրեն,
Խոսք տվել եմ իմ բերնեն,
Սարի մարալ էլ դառնաս,
Չես պրծնի իմ ձեռնեն:

413(866)
Ջաղաչի դուռը փոս է,
Արդյո՞ք սիրածս հոս է,
Ձեն տվի ձենս չառավ,
Արդյո՞ք ինձնեն ջորել է:

414(867)
Մընի ըսեմ մի բերան,
Մի տանը՝ ջուխտըմ գերան,
Ռանտը՝ գեշի ծոցին,
Հեյ վախ ու հազար բերան:

415(868)
Ելա ղալախ ծեփելու,
Յարիս տարան ծեծելու,
Հարի հասա հավարին,
Արունն էղավ էփելու:

416(869)
Ջըխչի դուռը հինած է,
Հինած է, ձնձնած է,
Ալ յայլուղը փռած է,
Յարըս վրան քնած է:

417(890)
Հավքը վերևեն անցավ,
Մատնուս վրեն խաչվեցավ,
Ես կարծեցի պղինձ էր,
Բախտիցս ջավահիր դարձավ:

418(891)
Փետե-փետե մարդիկը,
Երկաթե կնանիքը,
Լալա-լալա հարսները,
Վարդի թուփ աղջիկները:

419(892)
Մընի ասելու էկա,
Ղայմաղ ուտելու էկա,
Հոմ ղայմաղը դարդս չէր,
Աղջիկ տեսնելու էկա:

420(893)
Քարփեն փախավ նապաստակ,
Աշուղ է եկել մեր մայլեն,
Ինքդ սիրողի վաստակ,
Աշուղ է եկել մեր մայլեն:

421(894)
Ղռի քարը տափակ է,
Աշուղ է եկել մեր մայլեն,
Շան աղջիկը քյոփակ է,
Առնեմ յարիս, ելնեմ լեռը:

422(895)
Էն ում արտն է՝ հարոս է,
Բամբոստ իմ յարը հոս է,
Առնեմ յարիս, ելնեմ յայլեն:

423(896)
Արև, արև ես եկել,
Ծիրանի թև ես եկել,
Լալեցեն կարմիր չիս,
Բաց արեք, սև է սիրտս:

424(897)
Աղջի, դու ու՞ր ես գնում,
Կապուտ վալինկով տղա,
Աղջի, դու ուր ես գնում,
Յարիս վիրավոր տղա:

425(898)
Աշուն էկավ, թափավ ծառերի բարը,
Ո՞ւր ա, չի էրևում իմ սիրած յարը,
Ման է գալիս Աբովյանի բուլվարը:

426(899)
Սիրել եմ ու առել եմ,
Մեր մայլի տղա,
Վաճառական դառել եմ,
Ազգով սրիկա:

427(900)
Մեր դռանը գիլազի,
Գիշերն էկավ երազիս,
Աղջիկներ, Աստված կանչեք,
Բալքի հասնեք մուրազի:

428(901)
Սիրել եմ, արի դեսը, լոզայլու,
Կերար իմ կյանքի կեսը, լոզայլու,
Լոզայլու, լոզայլու, լոզայլու,
Քելե յար ջան բուլվարը ման գանք:

429(902)
Գյադա պիլոտկեդ ծռե,
Գյումանըդ ընձնեն կտռե,
Աղջի, պասմեն կոխել մի,
Միտքդ վրես փոխել մի:

430(903)
Աղչի, ի՞նչ է քո մեղը,
Հալեցիր սրտիս եղը,
Երկու կրծքիս մեջտեղը,
Հալեմ ու լցնեմ եղը:

431(904)
Արի ելնենք փիլական,
Դառնանք սրտով սիրական:

432(905)
Կապած կամուրջ կամար է,
Շան տղա սիրտդ քար է,
Ես որ քեզի սիրեցի,
Սերն Աստծուն հալալ է:

433(906)
Ելել եմ Ալագյազը,
Կողքես կապել եմ սազը,
Կէթամ կընգնիմ Արազը,
Չեմ առնի գյոմամազը:

434(907)
Ելնիմ սարը, ո՞նց անեմ
Քնիմ, քարը վարդ անեմ,
Էրթող գալողը կդրա՞վ,
Ղարիբ բալես/տրբ. իմ բալեքես /
հարց անեմ:

435(908)
Էս սարերուն հով չկա,
Դարդս իմացող չկա,
Ես կըսեմ, ես գուլամ,
Աչքերս սրբող չկա:

436(909)
Ալագյազը ձնել է,
Բալես տակը քնել է,
Ձեն կառնիմ, ձեն կուդամ,
Ձենս չի առնի,
Վայթե՞ ընձեն ջորել է:

437(910)
Փոցխս ծիրանի կոթ է,
Սիրտս յարա մի խոցե,
Սրտինս սիրտդ ընգնի,
Իմանաս սավդեն ո՞նց է:

438(911)
Արև, դու կամաց գնա,
Կապ տուր ու կամաց գնա
Տղերքս ղարիբ տեղ են,
Բարև տուր՝ անցի գնա:

439(912)
Ընգա արտեն բռնի լոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Հագած-կապած ման գուգար,
Գըլմաներ ծոցի խնձոր:

440(913)
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ա՛յ սարի սիրուն աղջիկ,
Էռնեկ ծոցդ քնողին,
Շամամ կուրծքդ բռնողին:

441(914)
Նստել ես ծառի հովին,
Սեր կէնես Վանա ծովին,
Էռնեկ ծոցդ քնողին,
Շամամ ծիծդ բռնողին:

442(915)
Աղջի, դու հուր ես, մուր ես,
Ես ծառավ եմ, դու ջուր ես,
Ձեռքիդ թասով ջուրըմ տուր,
Իմանամ՝ դու ով ես:

443(916)
Հագե ու ալ եմ էղե,
Սրտեցե յար եմ էղե,
Էն առաջվա բլբուլ լեզուս,
Հիմի լալ է էղե:

444(917)
Ելա երթի՛կն աշեցի,
Ջայել կյանքս մաշեցի
Հա՛մ դու վառար, յարո ջան,
Համ ինձ վառիր:

445(918)
Արև, դու կամաց գնա,
Կանգ տուր ու կամաց գնա,
Հեռու տեղ բալեք ունիմ,
Բարև տար, անցի, գնա: (Տրբ)

446(919)
Ձունը էկել, առել է,
Փոսը լցվել, սառել է,
Ուրիշի վատ խոսքերը
Ինձ մոմի պես հալել են:

447(920)
Ելնիմ սարը գործ անեմ,
Քնիմ քարը բարձ անեմ,
Էրթող գալողը կտրավ,
Ղարիբ բալեքես հարց անեմ:

448(921)
Յոթը տարի կերցրեցի
Գալետ ու կոնֆետ,
Սիրուն բալա ջան,
Կսպասեմ ճամփեդ:

449(922)
Յոթը տարի կերցրեցի
Բաղդրդա խարմա,
Սիրուն բալեք ջան ձեր դարդից
Նստել եմ տարմա (тюрьма):

450(923)
Փոցխս ծիրանի կոթ է,
Սիրտս յարալի խոց է,
Սրտինս սիրտդ ընկնի,
Իմանաս սավդեն ոնց է: (Տրբ)

451(924)
Հանդերում պտըտվիմ,
Մաղարեքը բնակվիմ,
Դարդերս շատ անթիվ են,
Ես ո՞ր մեկին հետևիմ:

452(925)
Մանի ըսեմ մեկ բերան,
Ձեր տանը՝ ջուխտմ գերան,
Գեշը սիրունի ծոցը
Այ, վախ, ու հազար բերան:

453(926)
Հերս հավնավ այվնին,
Ընձի տվավ հայվանին,
Ի՞նչ անեմ ճերմակ այվան,
Ծոցս քնողն է հայվան:

454(927)
Սպիտակել է գետինը ձնից,
Աղջի, դուրս արի տնից,
Սիրովդ վառված սրտիս
Կամ դեղ արա, կամ ջուր լից:

455(928)
Ճամփա կա ծով է տանում,
Ճամփա կա՝ այգի,
Ճամփա կա ափ է հանում
Նավակն իմ կյանքի:

456(929)
Կանչե կռունկ, կանչե,
Բալեքս տուն գան,
Սաղնա սրտիս յարեն,
Աչքերիս քուն գա:

457(930)
Ելնիմ սարը՝ ո՞նց անեմ,
Քնիմ՝ քարը բարձ անեմ,
Էրթող-գալողը կտրավ,
Սիրած յարես հարցնեմ:

458(931)
Աման, Թելլո, Թելլո ջան, Թելլո
Սիրուն Թելլո, Թելլո ջան, Թելլո:
Էս ծաղկունցը ցող կտաս, Թելլո,
Կոտրած սրտիս սյուն կուտաս, Թելլո,
Աման, Թելլո, Թելլո ջան,
Սիրուն Թելլո, Թելլո ջան, Թելլո:

459(932)
Ես նուռ եմ, սիրո հուր եմ,
Ջահել տղին մրմուռ եմ:

460(933)
Թազա Վոլգան քշում ես,
Սիրտս ու հոգիս մաշում ես:

461(934)
Դու ակտիվ կոմսոմոլ ես,
Սիրով ու սուփրով բոլ ես:

462(935)
Այգու միջին քաղ կանեմ,
Աղջիկներին դաղ կանեմ,
Բայց մեկին շատ եմ սիրում,
Թաքուն ախ ու վախ կանեմ:

463(936)
Սարերը ման եմ տվել,
Սիրել եմ, ջան եմ տվել,
Յոթը տարին մեկ անգամ
Ուխտ ու պայման եմ տվել:

464(937)
Յայլի դռնով անցա ես,
Անձրևն եկավ թրջա ես,
Արև կպավ չորցա ես,
Վարդի նման բացվա ես: (Տրբ)

465(938)
Ջաղացի դռան գուռը,
Ցնծում է միջի նուռը,
Վայ, սիրած բլբուլը
Քաշեցին խանի դուռը:

466(939)
Յար մովերը ման գամ,
Յայլի հովերը ման գամ,
Յայլի առուն լողանամ,
Յայլից աղջիկ գողանամ:

467(940)
Ախչի, անունդ ասա,
Վզիդ Բաղդադի խասա,
Գնա մամայիդ ասա՝
Ինձի անի իր փեսան:

468(941)
Բոստան'մ ունեմ՝ դդում է,
Յարմ ունեմ՝ եթում է,
Էն էլ իմ չար բախտիցը
Բանտերումը փտում է:

Բ. ՊԱՐԵՐԳԵՐ

1(942)
Յեսօր նորը նորել է,
Յարիս էշը կորել է,
Նարե, նարե:

Սոխի փառը մռու է,
Յարս ընձնից հեռու է.
Նարե, նարե:

Ստոլի վրայի վաքսը,
Հարսները էրթան զագսը:
Նարե, նարե:

Ջեբիս բերանը՝ պուտ-պուտ,
Քեզի կանչեմ կուտ-կուտ:
Նարե, նարե:

Ջեբիս բերանը նեղ է,
Քեզի թաղելու տեղ է:
Նարե, նարե:

Սարի յետևը ղութիկ,
Բոյիդ մեռնեմ, Յարութիկ:
Նարե, նարե:

Լամպի շիշեն կը ճնկա,
Գլորա ծոցդ յնկա:
Նարե, նարե:

Սիբեխը զոխ է դառե,
Իմ յարս դոխ է դառե:
Նարե, նարե:

Հանդեն գաս գեղը մտնիս,
Իմ քցած տեղը մտնիս:
Նարե, նարե:

2(943)
Յերկան գոմը սալած է,
Ալ ձին մեջը նալած է:
Տիրո՛ւն, արի մեր յոդեն,
Տիրունի դեյրի քոբեն:

Դուն էլ գիտես աղջիկ ես,
Ձմեռվա վառելիք ես:
Տիրո՛ւն, արի մեր յոդեն,
Տիրունի դեյրի քոբեն:

Էստեղ ֆիշո չի բանի,
Քամին ելնի կը տանի:
Տիրո՛ւն, արի մեր յոդեն,
Տիրունի դեյրի քոբեն:

Կանանչ յարտը հաց տարա,
Յարիս տեսա եդ դառա:
Տիրո՛ւն, արի մեր յոդեն,
Տիրունի դեյրի քոբեն:

3(944). ԼԵՅԼԻ ՋԱՆ[135]

Ասող.
Կանանչ յարտը հաց տարա,
Լեյլի ջան,
Յարիս տեսա՝ ետ դառա,
Լեյլի ջան:
Լեյլի, իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Սիրով ապրենք ես ու դու,
Լեյլի ջան:

Պատասխանող.
Հովը հովին է հասել,
Լեյլի ջան,
Լոտկեն ծովին է հասել,
Լեյլի ջան,
Լեյլի, իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Սիրով ապրենք ես ու դու,
Լեյլի ջան[136]:

Ասող.
Ձունն էկավ գետին առավ,
Լեյլի ջան,
Կերսարըս պարտքով մեռավ,
Լեյլի ջան,
Լեյլի իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Սիրով ապրինք ես ու դու,
Լեյլի ջան:

Պատասխանող.
Գնացի չայը՝ լվացք,
Լեյլի ջան,
Սապոնն էր օսկեջրած,
Լեյլի ջան:
Լեյլի, իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Սիրով ապրենք ես ու դու,
Լեյլի ջան;

Ասող.
Ինչ անեն հերն ու մերըս,
Լեյլի ջան,
Ճակատիս էս էր գրած,
Լեյլի ջան:
Լեյլի իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Սիրով ապրենք ես ու դու,
Լեյլի ջան:

4(945)
Իգդիրա սարերը
Վայնա է, յար,
Հերանցըդ գոմը
Թայնա է, յար:

5(946)
Հերանցըս կալը դուզ է,
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Ջրերը պաղ ու պուզ է,
Ես մի թառլան՝ դարդեդ յընկա չոլերը[137]:

6(947)
Քելե գնանք, յուր գնանք,
Օր-օր-օրորըդ էղնիմ,
Ֆանառ վառենք, տուն գնանք,
Յարո, ջանո, մատաղըդ էղնիմ[138]:

7(948)
Կապուտ է մանուշակը,
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Բուսել է քարի տակը,
Ես մի թառլան՝ դարդեդ յընկա չոլերը[139]:

8(949)
Ալիման, ալիման,
Ալ այլուղըս քո ջեբդ է,
Ալիբու գեջան,
Դոստըմբու գեջան,
Դոստ ղոնախըս՝ ախպեր ջան[140]:

---

135 Այս ծիսական պարերգերը կատարվել են Համբարձում, Վարդավառ և ժողովրդական այլ տոնախմբությունների ժամանակ վանքերի ու մաուռների գավիթներում: Նաև ձայնագրված են (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

136 «Լեյլի, իմ յարևն ու քու...» կրկներգը ասողն ու պատասխանողը երգում են միասին (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

137 Այս և հետագա պարերգերը ասել է Դուշիկ Պետրոսյանը, ձայնագրված են (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

138 «Սաքմե» ծանր պար (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):

139 Ծանր պար (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):

140 Շորոր (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):

9(950)
Ջեբիս պուճուր դանակը,
Եկա ձեր դռնովն անցա, մոլորվեցա,
Կեցցե Կարմիր բանակը,
Քեզ որ տեսա՝ դարդ ու ցավըս մոռացա:

10(951)
Էս սարերուն հով չկա,
Դուզքընդի դուրանը խաղցա ես,
Դարդըս իմացող չկա,
Հիվանդ եմ, ղարիբ եմ,
Ախպեր ջան, արի, տես:

Ես կըսեի, ես գուլայի,
Դուզքընդի դուրանը խաղցա ես,
Աշկերըս սրբող չկար,
Հիվանդ եմ, ղարիբ եմ,
Ախպեր ջան, արի, տես:

11(952)
Մանիշակ թփի տակին,
Էս տնեն ելա, գացի էն տունը՝ մուխ էր,
Ձվածեղ խփի տակին,
Յարիս բոյը բարձըր, աչքերը թուխ էր:

12(953)
Չայնիկ դուրգյար ալընա,
Տղա, մերըդ զալըմ ա,
Նոր էի սիրե՝ լավըն ա,
Հինգ օր անցավ՝ գը հըննա,
Տասն օր անցավ՝ գը շըննա:

13(954)
Գնացի կալը՝ կավի,
Նեյնիմ յար,
Ֆատես կտրի ու կարի,
Նեյնիմ յար,
Օրով-զորով յար ճարի,
Նեյնիմ յար, նեյնիմ յար,
Գեղովի կայնան դավի,
Նեյնիմ յար, նեյնիմ յար:
Նինըմ-նինըմ նինար էր,
Հոյ աման, հոյ աման,
Բոյըդ սալվի չինար էր,
Տո յաման:

14(955)
Արի գնանք, յո՞ւր գնանք,
Նեյնիմ յար,
Ֆանառ վառենք, տուն գնանք,
Նեյնիմ յար, նեյնիմ յար,
Հանդի ղուշ է, ղշլարին է իմ յարը,
Աշնան դեմին գյուլիզար է, սիրուն յար:

15(956)
Սիրել եմ՝ սերն երեսիս,
Տուր մատանիս, մարմանդ է,
Անթառամ թերն երեսիս,
Մատնուս յակը կանաչ է:

16(957)
Թանթանա թասով,
Գյուլֆանա ֆասով,
Տնկոզն էր շախով,
Բռնել էի ձեռքը:

17(958)
Յիջա չայիրները,
Շատ կար ճիլ ու խոտ,
Բիլբուլի բաղիցը
Գուքար անուշ հոտ:

18(959)
Գնացի կալը՝ գառին,
Հանդըմ լոյ-լոյ-լոյ,
Ես կքելեմ՝ դու վառի,
Հանդըմ լոյ, մարալոյ[141]:

19(960)
Մազերս արել եմ խսիլ,
Ախիդի-մախիդի կոճկըներս,
Տըղոցն արել եմ եսիր,
Ախիդի ձեռքովըս եմ կարել:
Ախիդի դույնալ, դույնալ, դույնալ,
Ախիդի եսսալըմ, եսսալըմ, եսսալ[142]:

---

[141] Մշո «Քոչարի» (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):
[142] Ծանր պար (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):

20(961)
Ելնիմ սարը՝ ինչ անեմ,
Լեյլի ջան,
Քնեմ՝ քարը բարձ անեմ,
Լեյլի ջան,
Էրթող-գալողը կըտռավ,
Լեյլի ջան,
Ղարիբ յարես հարց անեմ,
Լեյլի ջան:
Լեյլի, իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Բարով մենք յիրար հասնինք,
Լեյլի ջան:

21(962)
Տղա, դու ղայրումար ես,
Սեռի բլուզով յարո ջան,
Արի մեր տունը,
Կանանչ խոտերին խառնես,
Քեզ օր տեսա՝ կտըրվել ա
Յաչքերիս քունը:

22(963)
Հո՛ յար,
Ով որ կասե դու դառն ես,
Հո՛ յար ջան,
Կանաչ խոտերին խառնես,
Հո՛ յար:

23(964)
Բաղդըդու խուրմա,
Տո, շան տղա,
Քո դարդիցը
Յընկել եմ տուրմա:

24(965)
Ախչիկ՚մ ունիմ հունարի,
Յանդըմա խեյաման, յանդըմա խեյ,
Կտամ մեկ բազըրգյանի,
Յանդըմա խեյաման, յանդըմա խեյ,
Դնե ղութին ու տանի,
Շայսանամ գեթմադամ տալինա տոլմազ,
Բուսավդալու յարո ջան:

25(966)
Դու նիհարվել ես,
Յար ջան,
Դու չինարվել ես,
Յար ջան,
Օսկուն թամայել ես,
Յար ջան,
Սիրահարվել ես,
Ջանե ջան:

26(967)
Քեզի կըսեմ, դու յիմաց,
Ծիրանը շեկել ա,
Ինձանից դու հեռու կաց,
Իմ յարը գալու ա:
Գեղի լոթի տըղոց մեջ,
Ծիրանը շեկել ա,
Էրևում ես քոլլիկ էծ,
Իմ յարը գալու ա:

27(968)
Յարևը մեր է մտել,
Հո՛փ գյուլա,
Սիրած սիրածի գտել,
Ջան գյուլա:
Պակըմ առել, հովացել,
Հո՛փ գյուլա,
Դարդ ու ցավը մոռացել,
Ջան գյուլա:

28(969)
Դու է գիտես՝ ախչիկ ես,
Ծիրանը շեկել ա,
Չլե շինած պուրպիկ ես,
Իմ յարը գալու ա:

29(970)
Դու է գիտես՝ ախչիկ ես,
Ջանըմ, յընչի՞ չէրիր յար,
Մեր թընդըրի քռչիկն ես,
Տարար քցիր սար ու քար:

30(971)
Էրկան գոմը սալել եմ,
Թոն գուքա վերևից,
Կաթում ա տերևից,
Ղրռ ձին մեջը կապել եմ,
Նստեմ պրախոտը գնամ
Բեբախտ յարիս ետևից:

31(972)
Չուլկին գործել եմ ճաղով,
Վարատնիկըս վարատնիկիդ կարկըտան,
Քեզի կապել եմ խաղով,
Զինկոմն էղավ մեր հարսներուն
պարտական:

32(973)
Խնձոր՝մ ունիմ խածած է,
Արթիկի վայենկոմը
Հավաքեց եռսուն թիվը,
Չորս բոլորն արծըթած է,
Բոլորին ազատ էրավ՝
Բա՞ իմ ջեյրան յարը:

33(974)
Բաղովը ջուր է գնում
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Յարիս դռնով է գնում,
Ես մի թառլան՝ դարդեդ յընկա չոլերը:

34(975)
Իպիշկյեն կալոտ-կալոտ,
Թափի մաղարի բոլորը լուլա,
Ախպորըս անունն է Վալոդ,
Բոլորն էկան, բա իմ յարըս ու՞ր ա:

35(976)
Կանաչ յարտի միջակը,
Էս յանը սար, էն յանը սար,
Յար, յար,
Սաբաբն էղավ չիչակը,
Յայլուղով կանեմ, արի տար,
Յար, յար[143]:

36(977)
Յայլի դռներն ավլել եմ,
Իգդիրա կալերը, Իգդիրա կալերը,
Կիսատ թողե կայնել եմ,
Դուխին, պուդրին շաղ տամ
Կաստումիդ ծալերը:

37(978)
Արազի ջրեն անցնիս,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Տղա, մուրազիդ չհասնիս,
Հո՛փ, յար ջան, բիլակըդ:
Ինձնից բացի յար ճարես,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Կոսպանտըդ[144] բուկըդ մեռնիս,
Հո՛փ, յար ջան, բիլակըդ:

38(979)
Ելա խոտնոց, խոտ թափի,
Արազն ադա է, պուզը տալդա է,
Կիսատ խնձորով խաբի,
Ճշմարիտը կասեմ՝
Յարըս գյադա է:

39(980)
Կանանչ ու կարմիր քիսա,
Նազլու,
Քնա՝ երազիս տեսա,
Նազլու,
Քնա, երազիս տեսա,
Նազլու,
Ես հարս էի, դու՝ փեսա,
Նազլու:

40(981)
Սինու միջի թասըն եմ,
Սոնա լար,
Արմենակի հարսըն եմ,
Սոնա լար:
Իզբելլա, քիշմիշ բելլա,
Սոնա լար,
Յոթ-յոթանասուն բելլա,
Սոնա լար:

41(982)
Էս սարը մեզի-մեզի,
Հո՛փ-գյուլա,
Ձիավոր, մեռնիմ քեզի,
Ջան-գյուլա,
Օսկե թասով ջուրըմ տուր,
Հո՛փ-գյուլա,
Մենձնամ, կառնիմ քեզի,
Ջան-գյուլա:

---

[143] «Դուրան» վերվերի (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոս-յանի):

[144] Նորափեսայի կարմիր ժապավեն (ծ.բ.):

42(983)
Քաղաք կծախեն քյաթան,
Էս յանը՝ սար, էն յանը՝ սար,
Յար, յար,
Ախչիկը չունի վաթան,
Յիմաց կէնեմ, արի տար,
Յար, յար:

43(984)
Քաղաք կծախեն բուլկի,
Էս յանը՝ սար, էն յանը՝ սար,
Յար, յար,
Թել բերեք՝ գործեմ չուլկի,
Յիմաց կէնեմ, արի տար,
Յար, յար:

44(985)
Մեռա բաղը գնալեն,
Լեյլի ջան,
Ջրերի հետ խաղալեն,
Լեյլի ջան,
Ծառներին թուփ չըմնաց,
Լեյլի ջան,
Դարդիս դարման էնելեն,
Լեյլի ջան:

45(986)
Նստա՝ խնոցի հարի,
Յար-յարո,
Արի, մեր դռնով անցի,
Ջան-յարո,
Մեկ յաչքըս բոյիդ առնի,
Յար-յարո,
Նոր՝ աստված հոգիս առնի,
Ջան-ջանո:

46(987)
Խնձոր քցեմ ֆռֆռա,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Թուշըդ խաձեմ՝ մռմռա,
Հո՛փ, յար ջան, բիլակըդ:

47(988)
Լամպը յօդեն,
Վանքը յօդեն,
Յոդալլա,
Լամպը վառեք,
Գամ ձեր յօդեն,
Յօդալլա[145]:

48(989)
Կանանչ օրը, կարմիր լորը,
Նազլու,
Խըրտըզու կարմիր խնձորը,
Նազլու:

49(990)
Ջորջու տղա, ջորջու տղա,
Քյաշկյա դու չծերանաս,
Օլուլ դառնաս, ըխտիարնաս,
Մեծի ղադր յիմանաս[146]:

50(991)
Ախչի, ի՞նչ ես յիմացե,
Ղարա բիբար է, յաման,
Ճերմակ դոշըդ ես բացե,
Ջան ու ջիգյար է, յաման:

51(992)
Ջալ-զալո ջան,
Թել յարո ջան,
Թխի սիրուն,
Ջան, յարո ջան[147]:

52(993)
Յայլի դռները նեղ է,
Ջան, ջայել տղա,
Թաշկինակդ, տուր գնա,
Ախչիկ փախնելու տեղ է,
Դու կարմիր բանակ կէրթաս՝
Քեզ չեմ մոռանա:

53(994)
Գնացի Թալին,
Թամայա մալին,
Ի՞նչ էրի նանին՝
Տվավ ինձ լալին:

---

[145] Վերվերի (ծանոթ. բանասաց Դուշիկ Պետրոսյանի):
[146] Այս երգը «Վերվերի» է (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):
[147] Այս և նախորդ բոլոր պարերգերի ասացողը Դուշիկ Պետրոսյանն է: Շարունակությունը ուրիշներինն է (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

54(995)
Անա յար չկա,
Անա յար չկա,
Էլօղլու տղին
Էյթիբար չկա:

55(996)
Բախչե՛մ ունիմ ծառներով
Մեջը լիքը գառներով,
Գառները մատաղ կանեմ
Հորոխպորրս ձեռքերով:

56(997)
Երդըկա երդիկն ելել եմ,
Երդկա փետեր բռնել եմ,
Մեռնիմ կամար ունքերիդ՝
Սրտիս սիրած ճարել եմ:

57(998)
Յարփաչայի քյանարը
Վառավ սրտիս ֆանառը,
Նեյնիմու-նեյնիմու-նեյնիմու յար,
Նեյնիմու-մարալու-խանումու յար:

58(999)
Էլածըս սարը ղիժ է,
Նեյնիմու-նեյնիմու-նեյնիմու յար,
Առածըս քյոռփա ճիժ է,
Նեյնիմու-նեյնիմու- ջեյրանու յար:

Դնեմ բարձը կուլուլեմ,
Նեյնիմու-նեյնիմու-նեյնիմու յար,
Ասեղն առնիմ, շուլուլեմ,
Նեյնիմու-մարալու-ջեյրանու յար:

59(1000)
Մայրիկ, էս ի՞նչ լավ է Բաքըվա ծովը,
Նստա պրախոտը, յիջա քու մոտը,
Ա՛յ, Թամուր աղա,
Ջա՛ն, Թամուր աղա:

Այլենիմ ունիմ տասէրկու լիզու,
Պսակիս փարեն գուքա Թիլվիզու,
Ա՛յ, Թամուր աղա,
Ջա՛ն, Թամուր աղա:

60(1001)
Հովեն ռանդ է տան վերի սունը,
Քաշեք նագանները, մտնինք էս տունը,
Վերցնենք Սաթոյին, տանենք մեր տունը,
Ա՛յ, Թամուր աղա,
Ջա՛ն, Թամուր աղա:

61(1002)
Քուրդան ղզի
Բուրդ կգզի,
Լեյլի, աշե,
Քուրդան ղզի
Թեշիկ մանեց,
Լեյլի, աշե,
Քուրդան ղզի
Օսկի քցեց,
Լեյլի, աշե,
Օսկին բըկին
Թուջ է էրե,
Լեյլի, աշե,
Ջայել կյանքը
Սև է էրե,
Լեյլի, աշե:

62(1003)
Ես ու քուրըս քույրիկ ենք,
Չայնիկ դուրգյար ալընա,
Պարի միջի ժուլիկ ենք,
Յարիս մերը խանըմ ա:

63(1004)
Կանչում եմ՝ արի՛, արի,՛
Դա նաներ, նաներ ջա՛ն,
Չես գալիս՝ մուխըդ մարի,
Մատներըդ մարջան, ախպեր ջան:

64(1005)
Թելի կծիկ է յարըս,
Մեր կալերի, ձեր կալերի
Թմբերը հոդա, հոդա,
Յիրեքի մեծ է յարըս,
Իմ յարինը, քու յարինը
Կաստումը կավըրկոտ ա:

65(1006)
Սարից յիջավ ձիավոր,
Կլոր գյունաբախան, կլոր գյունաբախան,
Յար չէղավ՝ կէնեմ քավոր,
Հարսը մնա տունը, կեսուրն էրթա քյախան:

66(1007)
Լամպի շուշեն կըճընգա,
Յօդալլա ջան, յօդալա,
Գլորա՝ ծոցդ յընկա,
Մարալ, ջեյրան, իմ յարն ա:

67(1008)
Ա՛յ սինի Սաթո,
Մեռա բաղը գնալեն,
Սիրելի յար ջան,
Ջրերի հետ խաղալեն:

68(1009)
Ոչխարն արել եմ յոզը,
Էս յանը՝ սար, էն յանը՝ սար,
Յար, յար,
Ջոկել եմ կարագյոզը,
Յիմաց կենեմ՝ արի տար,
Յար, յար:

69(1010)
Նստա քարին՝ կուշ էղա,
Սիրուն չէ՝ սիրեմ կը,
Բոյով չէ՝ ներեմ կը,
Էթում գյադին թուշ էղա,
Վայ, իմ լոթի յարը:

70(1011)
Կանչում եմ՝ արի՛, արի՛,
Հո՛փ-գյուլա,
Չես գա՝ քու մուխըդ մարի,
Ջա՛ն-գյուլա,
Հո՛փ-գյուլա, գյուլիս անունը Մարջան,
Տուն արի, տուն, շաքրից անուշ յար ջան:

71(1012)
Կանչում եմ՝ արի՛, արի՛,
Հո՛փ-գյուլա,
Չես գա՝ քու մուխըդ մարի,
Ջա՛ն-գյուլա,
Հո՛փ-գյուլա, գյուլիս անունը Մարջան,
Տուն արի, տուն, շաքրից անուշ
Վարուժ ջան: (Տրբ)

72(1013)
Սարեն, ձորեն ձեն գուքա,
Հո՛փ-գյուլա,
Հարս ու ախչիկ տուն գուքա,
Ջա՛ն-գյուլա,
Հո՛փ-գյուլա,
Գյուլին կասեմ՝ չէ՛, չէ՛,
Ես հիվանդ եմ՝ յարըս քեֆի մեջ է,
Ես տխուր եմ՝ յարըս քեֆի մեջ է:

73(1014)
Թոն է էկե, հալել է,
Լեյլի-Մարո,
Փոսը լցվե, սառել է,
Անուշ յարո,
Էլօղլու գեշ խոսքերը,
Լեյլի-Մարո,
Ընձի վառել, մաշել է,
Անուշ յարո:

74(1015)
Սարի դոշը սարին է,
Դուզքընդի դուրանը խաղցա ես,
Գլոխըս չոր քարին է,
Ղարիբ եմ, հիվանդ եմ,
Ախպեր ջան, արի տես:
Կէրթամ, կընկնեմ Արազը,
Դուզքընդի դուրանը խաղցա ես,
Չեմ առնի մալամազը,
Հիվանդ եմ, մեռնում եմ,
Ախպեր ջան, արի տես:

75(1016)
Ուռել ես յամպի բարա,
Այ դու լացի, դու լացի,
Չաժես կապեկըմ փարա,
Գնա, վառի, էրեցի:

76(1017)
Ախչիկներ, արեք պարենք,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Սրտակից յընգյեր ճարենք,
Հո՛փ, յար ջան, բիլակդ:

77(1018)
Սիրել եմ Սիրանուշին,
Այ դու Մկրե, դու Մկրե,
Խաբնըվա կարմիր թշին,
Բուկե մալա, կիզե սալա,
Դըշկե ռընդա, դու Մկրե[148]:

[148] Այ դու լացի, դու լացի, չեմ սիրի քեզ, չեմ առնի քեզ, Գնա, վառի, էրեցի (քրդ., ծանոթ. բաանասացի):

78(1019)
Տերտերի դռան պեշկը,
Լե կտե, լե, լե,
Իմ յարի բարակ մեշկը,
Լե կտե, լե, լե,
Իմ յարը մարալ է,
Լե կտե, լե, լե,
Ընձի շատ հարմար է,
Լե կտե, լե,լե:

79(1020)
Ելել եմ Ալագյազը,
Դուզքընդի դուրանը խաղցա ես,
Կողքես կախել ես սազը,
Հիվանդ եմ, ղարիբ եմ, ախպեր ջան,
Արի տես:
Կէրթամ գընկնիմ Արազը,
Դուզքընդի դուրանը խաղցա ես,
Չեմ առնի մալամազը
Հիվանդ եմ, մեռնում եմ, ախպեր ջան,
Արի տես:

80(1021)
Արազը հեշտացել է,
Նեյնիմ յար,
Ճամփեքը կոշտացել է,
Նեյնիմ յար, նեյնիմ յար:
Արազ ընձի ճամփա տու,
Նեյնիմ յար,
Էրթամ յարիս տեսնելու,
Նեյնիմ յար, նեյնիմ յար:

81(1022)
Ալագյազը ձնել է,
Նինար է, նինար է,
Յարըս տակը քնել է,
Հոյ նարե, նինար է:
Ձեն տվի՝ ձենըս չառավ,
Նինար է, նինար է,
Չէղնի թե խըռովել է,
Նինար է, հոյ-նարե:
Նինըմ, նինըմ նինար է,
Նինար է, նինար է,
Բոյըդ սալվի-չինար է,
Նինար է, հոյ-նարե:

82(1023)
Թղթի միջի թուրընն եմ,
Բժդելար, բժդելար, բժնակ է,
Ես Ֆռունզի քուրընն եմ,
Հոյ նինըմ, դըլոլո,
Զարինո կընանակ է:

83(1024)
Յար, սիրել եմ, էղե սավդա,
Ալագյոզլի նազլու-դիլբար,
Անօրեն էն, չեն ավատա,
Ալագյոզլի նազլու-դիլբար,
Բերող մորըդ միշկին ղուրբան,
Ալագյոզլի, նազլու-դիլբար[149]:

84(1025)
Նստա յոդեն՝ կար էրի,
Լեյլի ջան,
Կար էրի, կանվա էրի,
Լեյլի ջան,
Էկան ըսին՝ յարդ էկավ,
Լեյլի ջան, կանվեքը խարաբ էրի,
Լեյլի ջան,
Լեյլի, իմ յարևն ու քու,
Լեյլի ջան,
Սիրով ապրենք ես ու դու,
Լեյլի ջան:

85(1026)
Սիրուն ախչիկ, համ ունիս,
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Չորեք դիմաց ծամ ունիս,
Ես մի թառլան՝ դարդեդ յընկա չոլերը:
Հերիք խունջիկ-մունջիկ գաս,
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Ինձ յուզելու կամ ունիս,
Ես մի թառլան՝ դարդեդ յընկա չոլերը:

86(1027)
Նամակ գրեմ գրերով,
Ծիրանը շեկել ա,
Ղրկեմ կշի թևերով,
Իմ յարը գալու ա:

[149] Ծանր պար է (ծանոթ. բանասաց Ստ. Խաչատրյանի):

87(1028)
Հավը թռել է մսուր,
Մադիստկի կարած բըլըզիդ մեռնեմ,
Հարսը քաշել է կեսուր,
Հագավ գնաց յայլաները,
Յայլաներին մեռնեմ:

88(1029)
Յարիս անունը՝ Վալոդ,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Մնացի յարիս կարոտ,
Հո՛փ, յար ջան, բիլակըդ:

89(1030)
Ես ու յարըս ջայել ենք,
Մայլի տղեն վար է անում,
Վար է անում, վար, վար,
Բարով յիրար վայելենք,
Ընձի յիրան յար է անում,
Յար է անում, յար, յար:

90(1031)
Ես ու յարըս մեկ բոյի,
Զորավոր զորքիդ մեռնիմ,
Քարերը մառմառ է,
Բանակից նոր եմ էկե,
Կատարե մուրազըս:

91(1032)
Մեր թարեքը սազերով,
Հո՛փ, գյուլա,
Մկներն ուտես մազերով,
Ջա՛ն, գյուլա:

92(1033)
Քելե, ճամփեն կես էղավ,
Հո՛փ, գյուլա,
Լավ տղեն ղուրբանս էղավ
Ջա՛ն, գյուլա:

93(1034)
Քելե, ճամփեն կես էղավ,
Հո՛փ գյուլա,
Լավ ախչիկը ղուրբանս էղավ,
Ջա՛ն գյուլա: (Տրբ.)

94(1035)
Թոնը էկավ՝ էրակ է,
Էս յանը՝ սար, էն յանը՝ սար,
Յար, յար,
Ախչիկ մորը կրակ է,
Յաչքով կէնեմ՝ արի տար,
Յար, յար:

95(1036)
Ջաղճի դռնեն անցա ես,
Թոն կուգա վերևից,
Թոնը էկավ՝ թռչա ես,
Կաթում ա տերևից,
Յարև դիպավ՝ չորցա ես,
Թոն կուգա վերևից,
Վարդի նման բացվա ես,
Կաթում ա տերևից:

96(1037)
Ջուր կրի, լցի գուռը,
Նազլու,
Յաչքըս մնաց ձեր դուռը,
Նազլու,
Վա՛յ, իմ սիրած բլբուլը,
Նազլու,
Տարել են խալխի դուռը,
Նազլու,
Չեմ տանի էս մըռմուռը,
Նազլու,
Ընձի կըքըցեմ Քուռը,
Նազլու,
Նազլու, անուշ, նազլու,
Նազլու,
Նազլու յարըս, նազլու,
Նազլու:

97(1038)
Աղ ու նա՛վթը՝ օրդերով,
Ղըրմըզի,
Գորտերն ուտես պորտերով,
Ղըրմըզի:

98(1039)
Բոստան դրի հայի հող,
Մուրադ գետի չայիրների գյոլերը,
Յանտեր մնար շայի հող,
Ես մի թառլան՝ դարդեդ յընկա չոլերը:

99(1040)
Ճերմակ ամպ՝ սարի գըլխուն,
Յարըս յարալու ա,
Կաքավը՝ քարի գըլխուն,
Գըրել է՝ գալու ա:

100(1041)
Կանչում եմ՝ արի՛, արի՛,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Չես գալիս՝ մուխըդ մարի,
Օղեմ, կոճկեմ,
Սադաֆ շարեմ,
Կանվա անեմ,
Ձեռըս քցեմ,
Ձեռըդ բռնեմ,
Հո՛փ, յար ջան, բիլակըդ:

101(1042)
Ելա սարը՝ սար տեսա,
Ճերմակ գուլպով յար տեսա,
Խնձոր, խնձոր, տուն արի,
Ճամփի խնձոր, տուն արի,
Յիմանամ յարս է ղրկե՝
Կպայեմ հարուր տարի:

102(1043)
Ջեբերըս լիք աճառ ա,
Ա՛յ, դու լացի, դու լացի,
Էդ էլ խոսքի պատճառ ա,
Չեմ սիրի քեզ, չեմ առնի քեզ,
Գնա, վառի, էրեցի:

103(1044)
Ծիրանը չալու ա,
Ծիրանը չալու ա,
Յարիս նամակը էկել ա,
Գրել ա՝ գալու ա:

104(1045)
Յարըս յարալու ա,
Յարըս յարալու ա,
Յարիս նամակը էկել ա,
Գրել ա՝ գալու ա:

105(1046)
Լամպը օթախը վառի,
Ալ բըլըզիդ մեռնիմ,
Տղա, երդիկը սառի,
Շալ բըլըզիդ մեռնիմ,
Տղա, երդիկը սառի,
Ալ բըլըզիդ մեռնիմ,
Թե սիրտ ունիս՝ նես արի,
Շալ բըլըզիդ մեռնիմ:

106(1047)
Ջուխտ գութան արտ կը բանի,
Աշուղ է էկել մեր մայլեն,
Շեկ ախչիկ հաց կտանի,
Յարիս առնիմ-էրթամ յայլեն:
Շեկ ախչըկա մազերը,
Աշուղ է էկել մեր մայլեն,
Խելք ու իման կըտանի,
Յարիս առնիմ-էրթամ յայլեն:

107(1048)
Լամպը վառի, լուսացու,
Աշուղ է էկել մեր մայլեն,
Կարմիր կովը՝ մըսացու
Յարիս առնիմ էրթամ յայլեն:
Դու իմ մորը՝ հարսնացու
Աշուղ է էկել մեր մայլեն,
Ես քու մորը՝ փեսացու,
Յարիս առնիմ էրթամ յայլեն[150]:

108(1049)
Գութանը հաց եմ տարե,
Հո՛փ, գյուլա,
Բերանը բաց եմ տարե,
Ջա՛ն գյուլա:
Վո՞վ գիտե ինչ եմ տարե,
Հո՛փ, գյուլա,
Մուկը տապկած եմ տարե,
Ջա՛ն, գյուլա:

109(1050)
Տղա, դու հունարի ես,
Հո՛փ, յար ջան, էլակըդ,
Տղա, դու չինարի ես,
Հո՛փ, յար ջան, բիլակըդ:

110(1051)
Կայնա քարին՝ ղուշ եղա,
Վայ, իմ նազանի յարը,
Բեբախտ յարին դուշ եղա,
Ո՞ւր ա, չեկավ իմ յարը:

---

[150] Այս և նախորդ պարերգերի ասացողը տղամարդ է՝ Ջանիբեկ Հովհաննիսյանը (Լեռնակերտ) (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

111(1052)
Ղուշ եղա, ելա երկինք,
Վայ, իմ նազանի յարը,
Ո՞ւր ա չեկավ իմ թևիկ,
Ո՞ւր ա չեկավ իմ յարը:

112(1053)
Արի արևուդ մեռնիմ,
Վայ, իմ նազանի յարը,
Ղրկած բարևիդ մեռնիմ,
Ո՞ւր ա չեկավ իմ յարը:

113(1054)
Ելա խոտնոց՝ խոտ թափի,
Քեզ մի խնձորով խաբի,
Լավ աղջիկ ես, մի խաբվի,
Խաբել կար, առնել չկար:

114(1055)
Ընկա ջուրն ու գնացի,
Հայ, իմ նազանի յարը,
Խեղդվա ու մնացի,
Ո՞ւր ա, չեկավ իմ յարը:

115(1056)
Անցա պատի օլորը,
Բռնեցի նաշխուն լորը,
Իմ բռնած նաշխուն լորը
Տարեք իմ յարի մորը:

116(1057)
Ջուր կուգար արբին-արբին,
Սեռի բլուզով յարո ջան, արի մեր տունը,
Հա՛մ տիրացու, հա՛մ դարբին,
Սիրենք, իրար առնինք, երջանիկ կապրինք:

117(1058)
Ջուր կրի լցի փոսը,
Սեռի բլուզով յարո ջան արի մեր տունը,
Աչքըս մնաց ձեր դուռը,
Սիրենք, իրար առնինք, երջանիկ կապրինք:

118(1059)
Ես ղուշ եմ, թևըս՝ դեղին,
Սեռի բլուզով յարո ջան արի մեր տունը,
Ման կուգամ յարիս գեղին,
Սիրենք, իրար առնինք,
բախտավոր կապրինք:

119(1060)
Կանչե, կանանչն եկել է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Յարիս ճանանչն եկել է,
Ձունըդ ուտեմ, ջուրըդ խմեմ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

120(1061)
Ղռի գորտը տափակ է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Շան աղջիկը քյոփակ է,
Ձունըդ ուտեմ, ջուրըդ խմեմ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

121(1062)
Սարերի հովին մեռնիմ,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Իմ յարի բոյին մեռնիմ,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

122(1063)
Նանըս ընձի նես չառավ,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Հետ դառա յարիս գեղին,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

123(1064)
Արազը հեշտացել ա,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Ճամփեքը խշտացել ա,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

124(1065)
Խաբար արեք յարըս գա,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Մուշտարիս շատացել ա,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

125(1066)
Կարմընջի քարը փուխ է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Յարիս աչքերը թուխ է,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

126(1067)
Կայնել եմ, գալ չեմ կարող,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Լցվել եմ, լալ չեմ կարող,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

127(1068)
Ընկել եմ խորունկ հորը,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Խաբար տարեք իմ մորը,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրդ,
Ծաղիկըդ քաղեմ, իջնիմ ցած:

128(1069)
Էրեվան ասի յարըս,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը, տանիմ մեր տունը,
ասի իմ յարըս,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնըս, տանիմ մեր տունը:

129(1070)
Լամպը տակը լույս չի տա,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը, տանիմ մեր տունը,
Ես կառնիմ, նանըս չի տա,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը, տանիմ մեր տունը:

130(1071)
Ջեբիս բերանը նեղ է,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը, տանիմ մեր տունը:
Խնձոր դնելու տեղ է,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը, տանիմ մեր տունը:

131(1072)
Մերըս կերավ մռու սոխ,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը, տանիմ մեր տունը:
Ընձի բերավ խաղ ըսող,
Համ դու սիրուն ես,
Բոխախըդ՝ մարջան,
Քցեմ ֆայտոնը,տանիմ մեր տունը:

132(1073)
Հով քամի, հարավ քամի,
Էլի բիբար է յարըս,
Քամին յայլուղըտ տանի,
Ջան ու ջիգյարդ է յաման:

133(1074)
Արազը պուզ է բռնել,
Քյանքուլըս թոզ է բռնել,
Տուր, գա ձեռքիդ յայլուղը,
Թափ տամ քյանքուլիս թոզը:

134(1075)
Ելել եմ Գյալա Ղալեն,
Քաղել եմ դաստով լալեն,
Ինչ անեմ դաստով լալեն,
Խորունկ է սրտիս յարեն:

135(1076)
Կանանչել են արտերը,
Էլի բիբար է յարըս,
Թաժացել են դարդերըս,
Ջան ու ջիգյար է յաման:

136(1077)
Կանանչ արտը էրակ է,
Էլի բիբար է յարըս,
Աղջիկ մորը կրակ է,
Ջան ու ջիգյար է յաման:

137(1078)
Ելա գնացի Թալին,
Էլի բիբար է յարըս,
Բերեցի բոյով հայլին,
Ջան ու ջիգյար է յաման:

138(1079)
Աղչի, ինչ է քու մեղը,
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Հալեցավ սրտիս եղը,
Գյադա, արի քու սիրածին տար:

139(1080)
Երկու կրծքիդ մեջտեղը
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Բախչա ու բաղ եմ արե,
Գյադա, արի քու սիրածին տար:

140(1081)
Արևը մեր է մտե,
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Գառն ու ոչխար անտեր է,
Գյադա, արի քու սիրածին տար:

141(1082)
Հոտաղ, քո մերը մեռնի,
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Շորերդ կեղտոտել է,
Գյադա, արի քու սիրածին տար:

142(1083)
Ես ասեմ յարըս խաղա,
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Քանի որ ջանըս սաղ ա,
Գյադա, արի քու սիրածին տար:

143(1084)
Առնիմ, ելնիմ Ալագյազ,
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Բոյդ տեսնիմ, հետ դառնամ,
Գյադա, արի քո սիրածին տար:

144(1085)
Կապուտ էր մանուշակը,
Փշատի ծառ, ուռի բար մի՛ տա,
Բուսել է քարի տակը,
Գյադա, արի քո սիրածին տար:

145(1086)
Յար, յար, յար, յար,
Արևը՝ ամպի տակին,
Ջան, ջան, ջան, ջան,
Լուսինը՝ ծառի տակին:

146(1087)
Յար, յար, յար, յար,
Ծառի տակի ավելը,
Ջան, ջան, ջան, ջան,
Ջոգին տարան լավերը:

147(1088)
Յար, յար, յար, յար,
Ուր օր գնաս՝ հետիտ եմ
Ջան, ջան, ջան, ջան,
Ալ խնձոր եմ, գոգիտ եմ:

148(1089)
Յար, յար, յար, յար,
Ուռի ես,կռանալ մի,
Ջան, ջան, ջան, ջան,
Մեր դռնեն հեռանալ մի:

149(1090)
Յար, յար, յար, յար,
Թե մեր դռնեն հեռանաս,
Ջան, ջան, ջան, ջան,
Ջույգ աչքերով կուրանաս:

150(1091)
Կանաչ արտը հաց տարա,
Ելնինք սարը, բռնենք բոլորի պարը,
Յարիս տըվի ետ դառա,
Սարեր ետ գնացեք, տեսնիմ իմ յարը:

151(1092)
Ջուր կուգա վերի սարեն,
Ելնիք սարը, բռնենք բոլորի պարը,
Կըթափի մառմառ քարեն,
Սարեր ետ գնացեք, տեսնիմ իմ յարը:

152(1093)
Աղջի, արի բան ասեմ,
Ելնինք սարը, բռնենք բոլորի պարը,
Մազերըդ մանդըռ հուսեմ,
Սարեր ետ գնացեք, տեսնիմ իմ յարը:

153(1094)
Աղջի, հուր ես ու մուր ես,
Ելնինք սարը, բռնենք բոլորի պարը,
Ես ծառավ եմ, դու ջուր ես,
Սարեր ետ գնացեք, տեսնիմ իմ յարը:

154(1095)
Յար, Էրեվան բաղ եմ արե,
Ալագյազլի, նազլու դիլբար,
Յար, ջիգյարըս դաղ եմ արե,
Շեկ բոխախիտ խալին ղուրբան:

155(1096)
Յար, դոստ ու դուշմանիս մեջը,
Ալագյոզլու, նազլու դիլբար,
Յար, լացըս ծիծաղ եմ էրե,
Շեկ բոխախիդ խալին ղուրբան:

156(1097)
Յար, մտա բաղը կոկեցի,
Ալագյոզլու, նազլու դիլբար,
Յար, կարմիր վարդը պոկեցի,
Շեկ բոխախիդ խալին մեռնիմ:

157(1098)
Ով օր սիրե ու չառնի,
Ալինու յար,
Պըսակի տակը մեռնի,
Թալինու յար:

158(1099)
Ծառեր, դուք ծիրան միք տա,
Ալինու յար,
Ճըղքերըդ իրար մի՛ք տա,
Թալինու յար:

159(1100)
Ամեն յարիս տեսնելուս,
Ալինու յար,
Դարդերըս իրար մ՛իք տա,
Թալինու յար:

160(1101)
Մերըս կերավ եղեղեն,
Նանար, նանար, նանար,
Ընձի բերավ հըրեղեն,
Դերոյ նանար, նանար:

161(1102)
Դուն էլ գիտես աղջիկ ես,
Նանար, նանար, նանար,
Էրկու խանա խաղ չիտես,
Դերոյ նանար, նանար:

162(1103)
Էլի էկավ մեծ պասը,
Նանար, նանար, նանար,
Բացեց զոխի կարասը,
Դերոյ նանար,նանար:

163(1104)
Էլի էկավ Վարդեվոր,
Նանար, նանար, նանար,
Աղջիկները բախտավոր
Դերոյ նանար, նանար:

164(1105)
Երկու կըրծքիդ մեջտեղը,
Քամի յանա, քամի յանա յարըս,
Բաղչա ու բաղ եմ արե,
Քամին զարկե, վերնոյ դոշըդ բանա:

165(1106)
Մազերդ էրել ես խըսիր,
Քամի յանա, քամի յանա յարըս,
Ընձի էրել ես եսիր,
Քամին զարկե, վերնոյ դոշըդ բանա:

166(1107)
Լամպը տակը լույս չի տա,
Քամի յանա, քամի յանա յարըս,
Ես կառնիմ՝ նանըս չի տա,
Քամին զարգե, վերնոյ դոշըդ բանա:

167(1108)
Երկինքըն ամպել է, գետինը թաց է,
Յարըս քնած է, երեսը բաց է:

168(1109)
Երկինքըն ամպել է, ինչ անուշ թոն է,
Յարըս քընել է, բոլորըն հով է:

169(1110)
Ես ինչ արի՝ դուն չարիր,
Տայ-լայ, լայ, հոգուդ մեռնիմ,
Զոռով սերի տեր արիր,
Սիրել եմ, յար, քեզի կառնեմ:

170(1111)
Ես՝ պուճուր, յարըս՝ պուճուր,
Տայ-լայ, լայ, հոգուդ մեռնիմ,
Ո՞վ կուտա մեզ հաց ու ջուր,
Սիրել եմ, յար, քեզի կառնեմ:

171(1112)
Մատնիքիս կապուտ ակը,
Տայ-լայ, լայ, հոգուդ մեռնիմ,

Սըլլաց, ընկավ ձեր բակը,
Սիրել եմ, յար, քեզի կառնեմ:

172(1113)
Գընա, գընա, գալիս եմ,
Տայ-լայ, լայ, հոգուդ մեռնիմ,
Հետևիցըդ լալիս եմ,
Սիրել եմ, յար, քեզի կառնեմ:

173(1114)
Լախանի մարգը փուշ է,
Տայ-լայ, լայ, հոգուդ մեռնիմ,
Մայլի սիրածն անուշ է,
Սիրել եմ, յար, քեզի կառնեմ:

174(1115)
Մարգը մի փոխե՝ փուշ է,
Տայ-լայ, լայ, հոգուդ մեռնիմ,
Ես եմ սիրե, անուշ է,
Սիրել եմ, յար, քեզի կառնեմ:

175(1116)
Դարդո՛, հ'էլանք գացինք Ղըզլևան,
Հ'էլանք գացինք Ղըզլևան,
Քա, տընավերի Դարդո ջան,
Միջնորդիս անունն է՝ Գյարան,
յաման ու Դարդո:

176(1117)
Դարդո՛, մեր տուն, ձեր տուն իրար դիմաց
Մեր տուն, ձեր տուն իրար դիմաց,
Քա, տընավերի, Դարդո ջան,
Աչքով կենեմ, ել, դուռն ի բաց,
յաման ու Դարդո:

177(1118)
Դարդո՛, գեղի բոլոր մանդըր փուշ է,
Գեղի բոլոր մանդըր փուշ է,
Քա, տընավերի, Դարդո ջան,
Գեղով կըսեն՝ յարն անուշ է,
յաման ու Դարդո:

178(1119)
Դարդո՛, լըվացք անես, ջուր մի՛ թափե,
Լըվացք անես, ջուր մի՛ թափե,
Քա, տընավերի, Դարդո ջան,
Ես ջայել եմ, ինձ մի՛ խաբե,
յաման ու Դարդո:

179(1120)
Կըլոր գյունաբախան,
կըլոր գյունաբախան,
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան,
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան,
Գընա, գընա, գալիս եմ,
կըլոր գյունաբախան,
Գընա, գընա, գալիս եմ,
կըլոր գյունաբախան,
Հարսը ետէվեդ լալիս է,
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան:

180(1121)
Ա՛յ, բան ասեմ,
Կըլոր գինաբախան,
կըլոր գինաբախան,
Չալ աչերիդ ջան ասեմ,
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան:

181(1122)
Ես լոբի, յարս լոբի,
Կլոր գինաբախան,
կըլոր գինաբախան,
Ձայլամ թե տունն անոթի,
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան:

182(1123)
Մանի ասեմ ու շարեմ,
Կըլոր գինաբախան,
կըլոր գինաբախան,
Լըցնեմ տոպրակն ու կարեմ
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան:

183(1124)
Սիրել եմ, սերն էրեսին,
Կըլոր գինաբախան,
կըլոր գինաբախան,
Անթառամ թերն էրեսին:
Հարսը նըստի տանը,
կեսուրն էրթա քյախան:

184(1125)
Մութն ընկավ,տուն արի, անջիգյար յար
Գընացիր ու մընացիր,
Կանչում եմ, յար արի, յար արի, յար,
Իմ մասին չըմտածիր,
Մութն ընկել է՝ տուն արի:

185(1126)
Էս ու՞ր ես գնում, արեք խաղանք,
Ալագյոզլի, նազլու դիլբար,
Յար, ընձի տըխուր ես թողնում,
Ալագյոզլի նազլու դիլբար,
Յար, քու բերող մորըդ ղուրբան:

186(1127)
Կանաչ արտը հաց տարա,
Ալագյոզլի, նազլու դիլբար,
Յարիս տեսա, ետ դառա,
Ես քո բերող մորըդ ղուրբան:

187(1128)
Կանաչ արտը հաց տարա,
Վայ գյուլա, գյուլա, գյուլա,
Յարիս տեսա, ետ դառա,
Յար չունի, նստե գուլա:

188(1129)
Ժամի դռան ղըշերը,
Վայ գուլա, գյուլա, գյուլա
Քեզի տարան գիշերը,
Յար չունի, նստե գուլա:

189(1130)
Քեզի տարան գիշերը,
Խաբար բերին ղըշերը:

190(1131)
Արի, արի, իմ յարն ես,
Ծոցիս կանաչ խիարն ես:

191(1132)
Սարից իջա, ես տեսա,
Չեղավ յար, կանեմ փեսա:

192(1133)
Սիրուն աղջիկ՝ ծամավոր,
Քեզի տանող՝ բախտավոր:

193(1134)
Սարերի հովին մեռնիմ,
Ջան գյուլում, ջան, ջան,
Շեկ յարիս բոյին մեռնիմ,
Ջան վիճակ, ջան, ջան:

194(1135)
Ընքուլ-մընքուլ մեր վիճակ
Ջան գյուլում, ջան, ջան,
Դաստա քընքյուլ մեր վիճակ,
Ջան վիճակ, ջան, ջան:

195(1136)
Կանաչել են արտերըս,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Թաժացել են դարդերըս,
Ջուրդ խմեմ, ձունըդ ուտեմ, իջնեմ ցած:

196(1137)
Հոպա, հոպա ծաղիկ եմ,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Թագավորի սանիկ եմ,
Ջուրըդ խմեմ, ձունըդ ուտեմ, իջնեմ ցած:

197(1138)
Յայլի դըռները նեղ է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Աղջիկ տանելու տեղ է,
Խմեմ ջուրըդ, ուտեմ ձունըդ, իջնեմ ցած:

198(1139).
Ալագյազը ձնել է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Յարըս տակին քնել ա,
Խըմեմ ջուրըդ, ուտեմ ձունըդ, իջնեմ ցած:

199(1140)
Անձրև էկավ՝ թրջա ես,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Արև կըպավ՝ չորցա ես,
Խըմեմ ջուրըդ, ուտեմ ձունըդ, իջնեմ ցած:

200(1141)
Էկանք հասանք պասմեկը,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ
Բարով մաշես նասկեքըդ,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրըդ,
Սարերըդ ման գամ, իջնեմ ցած:

201(1142)
Առվընները համամ է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Էն գուբուրը շամամ է,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրըդ,
Սարերըդ ման գամ, իջնեմ ցած:

202(1143)
Ես լոթի, յարըս լոթի,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ
Ջայնամ թե տանն անոթի,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրըդ,
Սարերըդ ման գամ, իջնեմ ցած:

203(1144)
Յար, յանարըդ էղնիմ,
գուզես մատաղըդ էղնիմ,
Գնացել ես, եկել ես, յար յանարըդ էղնիմ:
Ման եկել ես, գտել ես,
գուզես՝ մատաղըդ էղնիմ:

204(1145)
Էկել են ու կը տանին,
Յար յանարըդ էղնիմ,
Ջոկել են ու կը տանին,
Գուզեմ մատաղըդ էղնիմ:

205(1146)
Հովը հովին է հասել,
Յար յանարըդ էղնիմ,
Լոտկեն ծովին է հասել,
Գուզեմ մատաղըդ էղնիմ:

206(1147)
Մարգը հոռովել է, մարգը հոռովել է
Հինը հեչ եմ արե, թազա յար եմ ճարե,
Էս խըլվըլիկ Ջալոն, էն խըլվըլիկ Ջալոն
Ընձի կսե՝ աղջի, արի թող քո յարոն:
Նստիմ Նիկոյ քարին,
նըստիմ Նիկոյ քարին,
Ապերացի էնեն Նիկոյ ազիզ բալին:

207(1148)
Գընացել ես, էգել ես,
Սեռի բլուզով յարո ջան,
արի մեր տունը,
Ման էգել ես, գտել ես,
Մենք օր իրար առնինք,
բախտավոր կապրինք:

208(1149)
Հով քամի ջան, տար ու բեր,
Սեռի բլուզով յարո ջան,
արի մեր տունը,
Յարիս յայլուղընն առ ու բեր,
Մենք օր իրար առնինք,
բախտավոր կապրինք:

209(1150)
Ղարաբուռուն ըստանցի[151],
Ելի քելե, յար ջան,
Աչքով կենեմ, հասկացի
Բոյով չէ՝ սիրեմ գը, սիրուն չէ՝ ներեմ գը,
Վայ, իմ նեժնի յարըս:

210(1151)
Էրթամ արտե բռնիմ լոր,
Ելի, քելե, յար ջան,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Բոյով չէ՝ սիրեմ գը, սիրուն չէ՝ ներեմ գը,
Վայ, իմ նեժնի յարըս:

211(1152)
Քամին էգավ, հով էրավ, մայլում է,
Անձրև էկավ, ծով էրավ, մայլում է,
Էս նամարդի շան տղեն, մայլում է,
Ում տեսավ՝ աչքով էրավ, մայլում է:

212(1153).
Չայիրի դեղին ծաղիկ, մայլում է,
Ոչխարի երգան աղիք, մայլում է,
Բեթար-բեթար է, մայլում է, մայլում է,
Չոլիկ բեթար է, մայլում է, մայլում է:

213(1154).
Ով վոտ չունի, ախ մայրիկ, մայլում է,
Սըրտին բուսնի սև ծաղիկ, մայլում է,
Բեթար, բեթար է, մայլում է, մայլում է,
Չոլիկ բեթար է, մայլում է, զուլում է:

---

[151] Գյուղ և երկաթուղային կայարան Երևանի նահանգի Էջմիածնի գվառում, այժմ՝ Քարակերտ՝ ավան Թալինի շրջանում (ծանոթ. կազմողների):

214(1155).
Ախչի արի էս պարը, մայլում է,
Հիմի գուքա քո յարը, մայլում է,
Բեթար, բեթար է, մայլում է, մայլում է
Չոլիկ բեթար է, մայլում է, զուլում է:

215(1156)
Ես ու քուրքս քուրիկ ենք, մայլում է,
Պարի մեջը ժուլիկ ենք, մայլում է,
Բեթար, բեթար է, մայլում է, մայլում է,
Չոլիկ բեթար է, մայլում է, զուլում է:

216(1157)
Յար, յար, յար, յար,
Հերքս գարի ծախող է,
Յար, յար, ջան, ջան,
Վզես օսկի կախող է:

217(1158)
Յար, յար, յար, յար,
Ջաղաչի աջի գուռը,
Յար, յար, ջան, ջան,
Կցընծա միջին ուռը:

218(1159)
Յար,յար,յար, յար,
Շերեփը եղի մեջ է,
Յար, յար, ջան, ջան,
Սիրածքս գեղի մեջ է:

219(1160)
Յար, յար, յար, յար,
Շերեփը եղեն ելավ,
Յար, յար, ջան, ջան,
Իմ յարը գեղեն ելավ:

220(1161)
Աղջի հարսնառդ էկավ վերի կալերեն,
Քեզի հինա բերավ թղթի ծալերեն:

221(1162)
Փընջրի ուրագը, փնջրի ուրագը,
Աղջի մազերդ թափի, մնա մե փորակըմ:

222(1163)
Մարգը մեջ եմ արե, մարգը մեջ եմ արե,
Հինը հեչ եմ արե, թազա յար եմ ճարե:

223(1164)
Ուղտերի երիշը, ուղտերի երիշը,
Սըվդլու է յարքս, կորցրավ ղայիշը:

224(1165)
Գնա, արի, ման արի,
Մեր մայլի տըղա,
Ես ման գուկամ, դու վառի,
Ազնիվ ես տըղա:

225(1166)
Ես ինչ արի, դու արիր,
Մեր մայլի տըղա,
Զոռով սավդի տեր արիր,
Ազնիվ ես տըղա:

226(1167)
Կանչեմ, կանչեմ, գարուն է,
Մեր մայլի տըղա,
Սիրուն, սիրուն յար ունե,
Ազնիվ ես տըղա:

227(1168)
Քարափի տըկեն ճըվաց,
Մեր մայլի տըղա,
Քուր ջան որտեղդ ցավաց,
Ազնիվ ես տըղա:

228(1169)
Վանքի տակը ավազ է,
Մեր մայլի տըղա,
Վանքը մեզի մուրազ է,
Ազնիվ ես տըղա:

229(1170)
Գնա, գնա, գալիս եմ, գարուն է,
Հետևիցդ լալիս եմ, գարուն է,
Ամա՛ն-ամա՛ն, գարուն, գարուն է,
Համ գարուն է, համ ձուն է, ձմեռ է:

230(1171)
Աղըլները շամի է,գարուն է,
Քանի կանչեմ, անուշ է, գարուն է,
Ամա՛ն-ամա՛ն, գարուն է, գարուն է,
Համ գարուն է, համ ձուն է, ձմեռ է:

231(1172)
Սարերը սրռսրռում է, գարուն է,
Ամպերը գրռգրռում է,գարուն է ,
Աման-աման, գարուն է, գարուն է,
Համ գարուն է, համ ձուն է, ձմեռ է:

232(1173)
Վանքի տակը ավազ է, գարուն է,
Ուստա, չուխեդ ջուվազ է, գարուն է,
Աման-աման, գարուն, գարուն է,
Համ գարուն է, համ ձուն է, ձմեռ է:

233(1174)
Ցոլակ ջան, ցոլ տու գնա,
Առել ես, յոլա գնա,
Առել եմ ու վառել եմ, Ցոլակ ջան,
Վաճառական դառել եմ, Ցոլակ ջան:

234(1175)
Կայնա քարին՝ ղուշ էղա, Ցոլակ ջան,
Բեբախտ յարիս թուշ էղա, Ցոլակ ջան,
Ցոլակ ջան, ցոլ տու գնա,
Առել ես, յոլա գնա:

235(1176)
Ո՞ւր գնացիր, ո՞ւր էկար, Ցոլակ ջան,
Դուն իմ սըրտին դուր էկար, Ցոլակ ջան,
Ցոլակ ջան, ցոլ տու գնա,
Առել ես, յոլա գնա:

236(1177)
Սիրել եմ ու առել եմ, հո՛պ գլուլա,
Վաճառական դառել եմ, ջան գյուլա,
Հո՛պ գյուլա, Գյուլես ասաց՝ չէ, չէ,
Ես հիվանդ եմ, յարըս քեֆի մեջ է:

237(1178)
Արի գրե մի նամակ, հո՛պ գյուլա,
Չունեմ երկար ժամանակ, ջան գյուլա,
Հո՛պ գյուլա, Գյուլեն ասաց՝ չէ,չէ,
Ես հիվանդ եմ, յարըս քեֆի մեջ է:

238(1179)
Սիրել եմ սերն էրեսին, հո՛պ գյուլա,
Անթառամ թերն էրեսին, ջան գյուլա,
Հո՛պ գյուլա, գյուլեն ասաց՝ չէ, չէ,
Ես հիվանդ եմ, յարըս քեֆի մեջ է:

239(1180)
Ա՛յ սինի Սաթո,
Ընկա ջուրն ու գնացի,
Սիրելի յար ջան,
Ընկա ջուրն ու մնացի:

240(1181)
Ա՛յ սինի Սաթո,
Ես եմ սիրել, ես կառնեմ,
Սիրելի յար ջան,
Չեմ թողնի խալխը տանեն:

241(1182)
Ա՛յ սինի Սաթո,
Ես սիրի խըլղեր տարան,
Սիրելի յար ջան,
Քանդին ջիգյարըս տարան:

242(1183)
Կանչում եմ արի, արի, մուլելի,
Չես գալի, յուվեդ մաշի մուլելի,
Այ մուլելի, մուլելի, մուլելի,
Խազար խավեսով սիրի, ջազելի:

243(1184)
Հո-հո, հովն ընկավ,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռնես թռավ, ջուրն ընկավ,
Հալալո-հալալո, հալալո ջան,
Հալալո-հալալո, հալալո ջան,
Սարի սովոր իմ յար ջան,
Սարի սովոր իմ յար ջան:

244(1185)
Կըտռել է գեղի առուն,
Հո-հո, հովն ընկավ,
Աչքիս է թառե թռռուն,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռնես թռավ, ջուրն ընկավ:

245(1186)
Արփա չայրի քյանարը,
Հո-հո, հովն ընկավ,
Վառավ սրտիս ֆանառը,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռնես թռավ, ջուրն ընկավ:

246(1187)
Հո՛պ տուր՝ ելնինք քարափը,
Առ դանակը, բաց խուրջինը,
Խնձոր կիսեմ, տամ յարիս դուլում,
Դուլում, դուլում, դուլում:
Իջնենք ջրերի ափը,
Առ դանակը, բաց խուրջինը,
Խնձոր կիսեմ, տամ յարիս դուլում,
Դուլում, դուլում, դուլում:

247(1188)
Սև է չոբանի շունը
Առ դանակը, բաց խուրջինը,
Խնձոր կիսեմ, տամ յարիս դուլում,
Դուլում, դուլում, դուլում:
Չի տանի յարիս քունը,
Առ դանակը, բաց խուրջինը,
Խնձոր կիսեմ, տամ յարիս դուլում,
Դուլում, դուլում, դուլում:

248(1189)
Կտռել է գեղի առուն,
Համ գյուլ, համ վարդ, համ նըրգիզ,
Աչքիս է թառռ թոռուն,
Չոլի կաքավ, երկար վիզ:

249(1190)
Ելա երթիկն, աշեցի,
Համ գյուլ, համ վարդ, համ նըրգիզ
Ջուխտըմ կոշիկ մաշեցի,
Չոլի կաքավ, երկար վիզ:

250(1191)
Ջեբիս բերանը նեղ է,
Համ գյուլ, համ վարդ, համ նըրգիզ,
Խընձոր պահելու տեղ է,
Չոլի կըռունկ, երկար վիզ:

251(1192)
Խընձոր թալի՝ ֆռֆռաց,
Համ գյուլ, համ վարդ, համ նըրգիզ,
Թուշըդ պաքի՝ մըռմըռաց,
Չոլի ջեյրան, երկար վիզ:

252(1193)
Յայլի դուրանը խաղցա,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Յար չունեյ, նստա լացա,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրըդ, իջնեմ ցած:

253(1194)
Ալագյազ բարձր սար է,
Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Տակը ժընջըլած քար է,
Ուտեմ ձունըդ, խմեմ ջուրըդ, իջնիմ ցած:

254(1195)
Հոպա, հոպա ծաղիկ եմ,
Բատոլա ջան, բատոլա,
Թաքավորի սանիկ եմ,
Ախ, էլի սալդաթ էղա:

255(1196)
Կամաց քըշեք սելերը, յար ջան,
Կապեմ չուլկուս թելերը, յար ջան,
Աման, աման, աման է, յար ջան,
Սարեր բոլոր դուման է, յար ջան:

256(1197)
Առել եմ ու վառել եմ, յար ջան,
Վաճառական դառել եմ, յար ջան,
Աման, աման, աման է, յար ջան,
Սարեր բոլոր դուման է, յար ջան:

ՋԱՆԳՅՈՒԼՈՒՄՆԵՐ

257(1198)
Սարերը սոով գնաց,
Ջա՛ն գյուլում, ջա՛ն, ջա՛ն:
Իմ յարը խռով գնաց,
Ջան վիճակ, ջա՛ն, ջան:

258(1199)
Ես աղջիկ եմ, էլու եմ
Ջա՛ն գյուլում, ջա՛ն, ջա՛ն,
Բելու եմ, նշանլու եմ,
Ջան վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

259(1200)
Էս դուրանը քար չկա,
Ջան գյուլում, ջա՛ն, ջա՛ն,
Իմ յարի պես յար չկա,
Ջան թազա վիճակ ջա՛ն:

260(1201)
Աղջի՛, արի՛ բան ասեմ,
Ջան գյուլում, ջան, ջան,
Մազերդ մանդր հուսեմ,
Ջան վիճակ, ջան, ջան:

261(1202)
Կանչում եմ արի, արի,
Ջան գյուլում, ջան, ջան,
Չես գալիս մուխդ մարի,
Ջան վիճակ, ջան, ջան:

262(1203)
Արի գնանք մեր հնձան,
Ջան գյուլում, ջան, ջան,
Գլուխդ դիր իմ ծնկան,
Ջան վիճակ, ջան, ջան:

263(1204)
Ախչի դու հուր էս, մուր էս,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Ես ծարավ եմ, դու ջուր էս,
Ջան վիճակ, ջան, ջան:

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

264(1205)
Սարեն, ձորեն ձեն գուկա,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Ծաղիկ քաղող տուն գուկա,
Ջան, գյուլում, ջան, ջան:

Մարոն կայնե կարմընջին,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Խալ-խալ օղեր յանգըճին
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Մարոն կայնե կարմընջին,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Օսկե գնդեր յանգըճին,
Ջան, ծաղիկ, ջան, ջան: (տրբ)

Կարոն կայնե կարմընջին,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Ձեռն է դրե յանգըճին,
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Խաբար տարեք Լիդային,
Ջան, ծաղիկ, ջան, ջան,
Ախչիկը տա Կարոյին,
Ջան, գյուլում, ջան, ջան:

265(1206)
Վիճակ ըսեմ ու շարեմ,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Լցնեմ տոպրակն ու կարեմ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Թիլվիզա մկրատ բերեք,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Իմ յարին կաստում կարեք,
Ջան, գյուլում, ջան, ջան:

Գ.ՎԻՊԱԿԱՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ՌԱԶՄԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

1(1207). ԱՆԻ ՔԱՂԱՔ

Անի քաղաք նստե կուլար,
Չկար ըսող՝ մի՛ լա, մի՛ լա,
Կըսես՝ քիչ է, թող մնա լա,
Ա՜խ, երբ կըսեմ՝ մի՛ լա, մի՛ լա:

Շատ ցավերով կորիմ, տապիմ,
Չունիմ մեկ մարդ հավատարիմ,
Որ խղճալույս գա մոտենա,
Հե չէ ըսե՝ մի՛ լա, մի՛ լա:

Ախ, տղա, խղճա ինձի,
Տես, թե քո Անին ինչպես է,
Հերիք ես լամ դուն չ[տխրիս],
Չէ, քո Անին շատ աբսոս է:

Ախ ու վախով օրերս անցավ,
Լալեն աչքերս կուրացավ,
Որբ մնալն ինձ վիճակեցավ,
Բախտս բնավ զիս մոռացավ:

Կորուցել եմ թագավորներ,
Ժողովել եմ գլխիս բուհեր [?][152],
Որ միշտ կրկին Անին անցավ,
Անին անտեր ավերեցավ:

[152] Բուհեր - բվեր (բու):

Անին իմ շատ մարդաբնակ,
Մնացել եմ դառն ավերակ,
Իմ լացն, իմ կոծ, իմ աղաղակը՝
Անտեր որբերու նմանակ:

Երբեմն էի շատ աննման,
Հայոց քաղաք յարևելյան,
Աներեր եմ սեփահտակ,
Նստեր կուլամ ես միանակ:

Եկար, տեսար, դարձեր կէրթաս,
Լալով կըսես՝ բարյավ մնաս,
Աստված սիրես, սիրես, չմոռնաս
Մասիսի սարին երբ մոտենաս:

Ըսես իմ քաջ Արարատին,
Նստեր կու լա քո խեղջ'մ Անին,
Կըսես՝ երբ ավետիկ կու տաս,
Թե՝ իմ Անի, հերիք է լաս:

2(1208). ԱՆԻԻ ՈՂԲԸ

Է [Ան լե][153] քո վառ պատկերդ,
Ո՞ւրա, չի էրևում վանքերըդ,
Անի ջան, Անի:
Պապիս ոսկորները գըդա,
կորցուցի ու լացի,
Անի ջան, Անի:
Քեզի տեսնողը ինչպես ոխպա ու չըլա,
Անի ջան, Անի:
Վար ընկանք պատերիցը,
Ետ մնացինք շատերիցը,
Օրը քանի-քանի քար էր ընկած
քո պատերիցը,
Անի ջան, Անի:

3(1209). ՄՄԵ-ԶԻՆԵ

Լուսը բացվավ՝ շուտ վեր կացա,
Գացի-տեսա՝ հարս քնուկ էր,
Հարս քնուկ էր, քրտնուկ էր,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Ըսի՝ էրթամ, կովեր կթեմ,
Կովեր կթեմ, նախիր տանիմ,
Նոր իմ հարսին քնիցն հանիմ,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Ալուր մաղի, խմոր շաղի,
Խմոր շաղի, հաց թըխեցի,
Գացի-տեսա՝ հարս քնուկ էր,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Գացի օթախ-լուսըս քոռնար,
Էրկու գլոխ, չորս ոտ տեսա,
Յաման, էդ ի՞նչ կրակ տեսա,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Ըսի՝ էրթամ, մոսին բերեմ,
Մոսին բերեմ՝ ձեն կիանե,
Իմ՝ հարսի անուն կավիրե,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Մոսին տարա-խանչալ բերի,
Իմ Մըմեի սիրտը խըրի,
Ղարիբ բալիս յարև խըլի,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Տունըդ ավրի, անխիղճ կիսուր,
Էդ ի՞նչ զուլում էրեցիր դու,
Օխտը տարվա քու ղարիբդ էր,
Դլո-լո-լո, վա՛յ, դլո-լո-լո:

Ծոցիս քնող քու Մըմեն էր,
Օխտը տարվա քու ղարիբն էր,
Տունըդ ավրի, անխիղճ կիսուր,
Դլո-լո-լո, վայ, դլո-լո-լո:

4(1210). ՔԱՋ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ[154]

Ավազակապետըմ կեղնի. շատ հարուստ մարդ կեղնի: Թալնե գը ժողովրդին, կըսպանե, անտառներ կը գրավե ու կը դառնա էդ անտառներու տերը:

Յամեն իրկուն ավազակապետը յիրան ղուռուխչոցը ղըրկե գը յիրան սայմանները հըսկելու: Օրըմ ղուռուղչին օր կը մտնի անտառ, տեսնի գը մե հըսկա՛ մարդըմ, քյութուկի պես պառկել է հովին, ձին կապե ծառին ու խորունկ քընել է:

Ղուռուղչին գուզե՝ էդ մարդուն տանի ավազակապետի քովը, էսիկ տեղից ժաշ չի գա: Տես-

[153] Հավանաբար ձայնագրությունից է վերծանվել և լավ չի լսվել (ծանոթ. կազմողների):

[154] Վերնագիրը՝ ըստ բանասացի:

նի գը, օր բան դուս չի գա, կէրթա ավազակապետին կըսե, օր.- Քու սայմանը մե մարդըմ է մըտե, դուս չի գա, հուզեցի բերեմ՝ հընար չկա:

Ավազակապետը գելնի, ըստիպված ղուռուխչուն կառնի, կէրթան անտառ՝ էդ մարդուն գտնելու:

Ավազակապետը մոտենա գը, կըսե.
—Օվ անպիտան, ըսա՛, տեսնիմ,
Ի՞նչ մարդ ես, օր հպարտ-հպարտ,
Էկար հընկար սայմանը:
Կերևա, թե մըտադիր ես,
Գլուխըդ պոկեմ
Տանիմ հըմի օթևանը:

Հըսկան կըսե.
—Ըսպահան քաղքից է գալը,
Կորցըրել եմ ճանապարհը,
Պարսկաստան կէրթամ,
Ու հեչ չիտեմ՝ ո՞ւր ման գուգամ:

Ավազակապետը կը կակըղնա, գուզե խաբե.
—Անունը որսորդ Վահան է,
Խոսվածքըդ խելքը կտանե
Թեյրան էրթալը՞դ ինչ բան է:

Տըղեն կըսե.
—Գերի է իմ սիրեկանը,
Մոռացել եմ իմ վաթանը,
Կորցրել եմ ճանապարհը:

Ավազակը դառնա կըսե.
—Ես ավազակապետն եմ,
Գործս հաջող ու հըպարտ,
Գուզեմ դեմս կայնող մարդ,
Կաշին տիկ հանեմ,
Տեղը լըցնեմ հարդ:
Ըսպասե մե փոքըր
Ու դու գիմանաս:

Հըսկան կըսե.
—Ես Վարազդատն եմ քաջ
Ըսպահանցի
Դու չե՞ս իմացե:

Ավազակապետը էս օր գիմանա, կոյմըռի, գընգնի ձեռ ու ոտ, կըսե.
—Ով առյուծ տըղա՛.
Քու արարքներից
Ոտ ու ձեռըս կը դողար,
Ես՝ ավազակապետս,
Քեզ կասեմ՝ մեղա,
Ազատ էրա գյանքըս,
Ով ասլան բալա:

5(1211). ԵՍ ԽԱՉՈՆ ԵՄ ԱՐՄՈՒՏԼԵՑԻ

Ես Խաչոն եմ Արմուտլեցի,
Ոչ բարով արտը գնացի,
Ինձ խեղտելիս բազում լացի:

Երևանու գուգար նուռը,
Սապապ էղավ էն ճմուռը,
Էգածս ինչ էր քաֆիր Հակո:

Խաչոս կորավ ամեն կալին,
Խապար էրեք մորը՝ Թալին,
Հակոյին օրթաղ չէներ մալին:

6(1212). ԵՍ ՍԱԹՈՆ ԵՄ

Ես Սաթոն եմ էվճիլարցի[155],
Ոչ բարով բոստան գնացի,
Բոստան ցանելը սավդա է,
Գյունաբախանը տալտա է:

Բոստնի ճամփեն օլոր-մոլոր,
Սաթոն դարձավ արնակոլոլ:
Զուլում է մայրիկ, զուլում է,
Զուլում է քույրիկ, զուլում է:

7(1213). ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Թիփի, բորան, մութ գիշերին,
Մի խումբ կէրթեր արագ-արագ,
Տեսանք, որ քաջ Խանի խումբն էր,
Զինված էին մուսիններով:

Նժույգ ձիանք նստած էին,
Մերկ սուրերը քաշել էին,
Գնում էին Տաճկա սայման,
Երգում էին ազատուտան:

Երբ քաջ Խանը հասավ Բասեն,
Թնդանոթներ յարձակվեցին,
Յուռա՛-յուռա՛,
Անդրանիկի թուր շողոշողա:

---

[155] Էվճիլար – գյուղ Երևանի նահանգի Սուրմալուի գավառում (ծանոթ. կազմողների)

8(1214). ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

Հայ կամավորներ,
Ազատ որդիներ,
Կայնած թուրքի դեմ,
Առյուծի նման:

Մենք պետք է կռվենք՝
Ի սեր ազգության,
Էղնինք հայ զինվոր՝
Սուրբ ազատության:

Այսքան դառ լացինք,
Ո՞վ է լսողը
Մեզ ի՞նչ շահ բերեց
Արցունքի ցողը:

Մենք պետք է կռվենք՝
Ի սեր ազգության,
Էղնինք հայ զինվոր՝
Սուրբ ազատության:

9(1215). ՀԱՍԱՆ ՂԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գյուլլեն եկավ սարի դոշեն,
Փախանք մտանք յառի քյոշեն,
Հասան Ղալի ջուրն էր աղի,
Հացն ու կերակուրը՝ լեղի,
Մենք կարոտ էինք ցորեն լոշին,
Կյանքի ճամփա՝ Հասան Ղալա:

10(1216). ՇՈՒՆ ՏԱՃԻԿԸ ԱՐՓԱՉԱՅԸ ԱՆՑԿԱՑԱՎ

Շուն տաճիկը Արփաչայը անցկացավ,
Գերի բռնեց, մարդ չը մնաց Շորակալ:
Քանդեց բոլոր այգի, պարտեզ, բուրաստան,
Թալանեցին բան չը թողին Շորակալ:

Եկավ գարուն, վարին ցանին արտերը,
Հացի տեղակ ջուր չը մնաց տները,
Ժամը քանդին մեջ տեղ մնաց սները,
Գարի, ցորեն բան չը մնաց Շորակյալ:

11(1217). ՎԱ՛Յ ԷՆ ՄԱՐԻԿԻՆ

Վա՛յ էն մարիկին, որ ինձի բերեր է,
Գիշեր-ցերեկ քունը կտրեր, պահեր է,
Արխալուղը դրեր ծնկին կարեր է,
Սև-սև կոճկներ գոգսին շարեր է:
Մայրիկ, ես գնում եմ, դուն կեցիր բարով,
Իմ ընտանին պահես ալ քողկով, զարով:

Ուրբաթ օրը տարան սուդիի դուռը,
Իմ սիրուհի վիզը թողեցին ծուռը,
Շաբաթ օրը տարան պոլիցի դուռը,
Շուտով տվին զինվորական շորերը,
Մայրիկ, ես գնում եմ, դուն կեցիր բարով,
Իմ ընտանին պահե ալ քողքով, զարով:

Վախում եմ, թե գնամ գուլուլի քարով,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ,
Քահանեքը տվին մեթրիքականս,
Գիշեր-ցերեկ կրակն ընկավ իմ ջանս,
Մնաց մորմոքալով իմ խղճով նանս,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ:

Այսօր ինձի տվին զինվորաց շորը,
Ավա՜ղ, ինչպե՞ս պիտի անցնի իմ օրը,
Երանի մեռնիմ ծնվածս օրը,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ:

Այսօր տվին պետության թուրը,
Լացավ իմ սիրուհին և էլ իմ քույրը,
Վախում եմ այլոց դեմ մեզ քաշեն սուրը,
Մայրիկ օտար երկիր գնալու ես եմ:

Մայրիկ, հալալ արա տվածդ կաթը,
Խնդրինք՝ աջողվի բանս օխտ չաթրը,
Այսօր իմ սիրուն հագավ սև լաթը,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ:

Այստեղից ազտվիլը շատ մեծ համբավ է,
Զինվորություն գնալը կրակ ու ցավ է,
Յարից բաժանվիլը մահից շատ լավ է,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ:

12(1218)

Մտա եկեղեցի, վառի մոմերը,
Ձեռս տարա քաշի պերվի նոմերը:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Կանցիլարի դուռը կացնով տաշած է,
Սալդատ տղոց բոյը ղալմով քաշած է:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Մտա կանցիլարը՝ աչքերը շողաց,
Նաչալնիկը բոռաց, չոքերս դողաց:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Նստանք մաշինեն, ճվաց ու գնաց,

Մայրիկ ասելով, սրտումս մնաց:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Մաշինեն գնըմ է, տակը՝ ջուխտ ղազան,
Գերմանեն էս տարի դառել է գազան:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Մաշինիստ աղբեր, չափուկ մի բանի,
Իմ սիրած յարին կռիվ մի տանի:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Գերման թագավոր, թախտդ ավիրի,
Էկել յնկել եմ ձեզ մոտը գերի:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:
Գերմանացու թոփը դիպավ մեծ քարին
Էնդից դառավ դիպավ իմ սիրած յարին:
Յար դու յար չեղար:
Դարդ ու ցավ եղար:

13(1219)

Ադե՛, գաթա թխե, դի, տանիմ հետս,
Յամեն ուտելեն՝ քեզ բերեմ միտս:

14(1220)

Նաչալնիկը նստած է,
Չարխը քովը դրած է
Դե, տղեք, թևերդ վեր քաշեք,
Բանցռ նոմերներ հանեցեք:

Շինել, սապոք հաքուցին,
Հեռու երկիր ճամբեցին,
Դե, տղեք, թևերդ վեր քաշեք
Կապուտ բլեթ հանեցեք:
Հորս ու մորս լացուցին:

15(1221). ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳ

Բեռլինիցը գալող քաջեր,
Բարով հազար բարի էկաք,
Քանդեցիք Հիտլերի յաշխարհ,
Շատ թանկագին տաղով էկաք:

Զորքի ղեկավար Բաղրամյանը,
Կամանդիր էր Սաֆարյանը,
Առաջ շարժվեց Թամանյանը[156],
Զորավոր զորքով ետ էկաք:

16(1222). ՖԻԼԱՆԴԻԱ

Ֆիլանդիան էր մեր դեմ փոքր խաղալիք,
Կեղծավոր Գերմանին էր մեջը դասալիք,
Կարմիր բանակներն էին
պողպատե բալնիք,
Բաց արին դռները ժայռ ու անառիկ:

Կարմիր բանակներն էին
լուսատու աստղեր,
Մեր ծոցից դուրս գալած
քաջ լեյտենանտներ,
Երկար կյանք ունենան,
լուս տան յամեն տեղ,
Թող ծլին ու ծաղկին անվախ հերոսներ:

Արթիկս շրջան էր, գյուղըս՝ Ղազանչի,
Իլիջյան Ապինս այսքան գրեցի,
Ֆիլանդիայի մասին բավ է խոսեցի,
Այս էր իմ գովեստը քաջ հերոսներին:

Դ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ԾԻՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1(1223). ՀՈՐՈՎԵԼ

Լուսը բացվեցավ,
Արևը տաքացավ,
Յոդաղն ուրախացավ,
Հորովել, հո՛:
Կապեցինք կտավատի խուրձը,
Ալաշկերտցու կ…ը, ղարսեցու պ..ը.
Հորովել, հո՛:

2(1224). ՀՈՐՈՎԵԼ

Հորովել, առ հորովել,
Քշի, քշի, խոփիդ մատաղ,
Առ, հորովել,
Առ, հորովել:

[156] Թամանյանի դիվիզիան – 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիա, որը Թաման թերակղզին ազատագրելու համար արժանացել է «Թամանյան» անվանմանը (ծանոթ. կազմողների):

3(1225). ՀՈՐՈՎԵԼԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Մաճը՝ մաճին,
Գութանն՝ անգճին,
Բոթեմ մաճ բռնողի
Խամբաջին:

Վարենք՝ սևանա,
Տերն ուրախանա,
Դուշման քոռանա,
Հոռովվել, է հոռոռ:

4(1226). ԳՈՒԹԱՆՆ ԸՍԱՎ

Գութանն ըսավ՝
Անգին քար եմ,
Կոկլիկ-մոկլիկ
Ակոս շարեմ:
Փուխըր հող էղնի՝
Լավ կը վարեմ:
—Ես գութանի
Խերին ղուրբան:

Արտըն ըսավ՝
Տեղով քար եմ,
Մաճկալն ըսավ՝
Լավ կը վարեմ,
Տարոց տարի
Եղըն շարեմ
—Ես գութանի
Խերին ղուրբան:

Եզըն ըսավ՝
Այլեմ, մաշեմ,
Ճիպոտ տալուց
Լավ կքաշեմ,
Պառավ գոմշին
Թեզ կը մաշեմ:
—Ես գութանի
Խերին ղուրբան:

Գոմեշն ըսավ՝
Կոշտաբան եմ,
Հրոռվել տալուց,
Լավ կը քաշեմ:
Ղաբալ միջակ[157]
Ես կը բերեմ:
—Ես գութանի
Խերին ղուրբան:

Ձևիչն ըսավ՝
Ձևեմ, դրզեմ
Գութնին չանգալ,
Գոմեշ գուզեմ.
Սիրուն հարսեն
Քեյվանի գուզեմ:
—Ես գութանի
Խերին ղուրբան:

Ժընջիլն ըսավ՝
Ուզանվել եմ,
Լծկանի հետ
Դուզանվել եմ.
Նոր հարսի պես
Բեզարել եմ:
—Ես գութանի
Խերին ղուրբան:

Մաճկալն ըսավ՝
Խաշիլ բերեք,
Խտո՛ր, Գարու՛շ,
Արեք, կերեք,
Օրվա վարը
Տեղը բերեք,
—Ես գութանի
Խերին ղուրբան:

5(1227). ՇԻՆԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳ

.....[158]
Ու բնության հետ խոսում,
Օ՜ բնություն,
դու իմ ցանքը պաշտպանես,
Առատ անձրև, կարմիր արև չխնայես:
Էս մե բուռը
ես տալիս եմ ագռավներին,
Էս մե բուռն էլ՝ ծտերին,
Բայց մառեխը գոյ չի մնա մի բռով,
Էրկուս կուդամ, թող կշտանա սրանով:

---

[157] Ղաբալ միջակ – թումբ (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

[158] Այս տողը հնարավոր չէր ձայնագրությունից վերծանել (ծանոթ. կազմողների):

6(1228)

Խնոծի, հարոծի,
Կարակն՝ ընձի,
Թանը՝ քեզի:

7(1229). ԱՇԽՕՐ ՈՒՆԵՄ

Եկեք էս պարը խաղանք,
Աշխօր ունեմ, աշխօր ունեմ, յար ջան,
Եկեք պարենք ու խնդանք,
Արտերու մեջ քաղվոր ունեմ, յար ջան:

Թռեք թող ելնի թոզը,
Աշխօր ունեմ, աշխօր ունեմ, յար ջան,
Էրկար ապրի կոլխոզը,
Կոլխոզի մեջ հնձվոր ունեմ, յար ջան:

8(1230). ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ[159]

Ծեռ-ծեռ ծիծեռնակ,
Աստծու հալալ բիբեռնակ,
Խունկ առեք, մոմ առեք,
տասերկու պատարաք երեք;
Վով որ շատ տա՝ թող շեն մնա,
Վով չտա՝ սև հավի ո...ն դեմ մնա:
Փայ հատիկս, հավկիթս դուս բերեք:

9(1231). ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԶԷՐԿՈՒՇԱԲԹԻ

Համբարձման զէրկուշաբթի
Կըռվան զէրկու տեքերկին,
Վերցրին փոցըխ, գերանդի,
Գացին յարտը հնձեցին,
Մանրիկ-մանրիկ խորմեցին,
Սայլիկ չէղավ՝ բարձեցին,
Հանդըմ լոյ,
Հանդըմ լոյ-լոյ, զըխկ-զըխկոյ:

10(1232). ՄԵՆԾ ՊԱՍԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Մենծ Պասի երկուշաբթի
Վերցրի փոցխն ու գերանդին,
Գնացի ձորի ափին
Ձորեցի, ձորձըփեցի,
Մանտրիկ-մանտրիկ խորմեցի,
Խորոմները թամամեցի,
Ջուխտըմ կաքավ լծեցի,
Յարիս խոտերը կրեցի:

11(1233). ՃՈՒՃՈՒՆԵՐՍ

Թուխսը դրինք, մտանք ջոջ պասը,
Տասնըվեց հատ էր, մնաց տասսը,
Կեսն էլ կերավ Գորոյի հարսը,
Սիվտակ, բալաք ճուճուներս:

Էս անտեր բալաք փուփուշն,
Քըճըճում էր փողցի փըլուշըն,
Կեսն էլ բըռնեց էն Անուշն,
Վառեք, աքլոր, ճուճուներս:

12(1234). ԿԸՆԻԿԸՍ

Կընիկըս էկավ դեղին խաքուկ,
Վրեն կանաչ միզար կապուկ,
Աչկի տըկով վրես իշկեց,
Մըռթմըռթալով՝ տունը նստեց:

Քիթը կը լմանի զուռնա,
Մեշկին ունի յոթը դուռնա,
Ոտների ջուխտն էլ ծուռն ա,
Ինձ մի տանջի, տո լիրբ կընիկ:

13(1235). ՊՈՏՈԼ ԱՉԱՌԸ

Բեռ բառցանք, Խընուս գնացինք,
Աչառըս դաթռավ մընացինք,
Ճամփու կիսուն կայնանք լացինք,
Լուսըտ քոռնար, Պոտոլ աչառ:

Ջուր է խմում յուդում, յուդում,
Խոտ ու դարման էլ չի ուտում,
Յոթ օր բըզինք առանց ղոդում,
Կորավ փարեքըս, փարեքըս:

14(1236). ՑՈԼՈՆ

Ուրբաթ օրվա իրեն օրը,
Ցոլոյին տարան, քըցին հորը,
Վայ, վայ, վայ, վայ, Ցոլո ջան,
Բըռնե խաղցի, Ցոլո ջան:

Վանքի բոլորի ղըշերը,
Ցոլոյին տարան էս գըշերը.

[159] Երգել են Ծառզարդարին (ծանոթ. կազմողների):

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Ցոլո ջան,
Մերըդ մեռնի, Ցոլո ջան:

Էս չայնիկին ղափաղ չկա,
Ցոլոյի գլխին փափաղ չկա,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Ցոլո ջան,
Բըռնե խաղցի, Ցոլո ջան:

Էս ֆայթոնի ակը՝ լուլա,
Ցոլոն իրեն դարդը կուլա,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Ցոլո ջան,
Մերըդ մեռնի, Ցոլո ջան:

15(1237). ԿԵՐԱՆ ԳԱԹԵՔՆ ՈՒ ՀԱՎԵՐ

Թաթոսի Ափետ նստել սանքին,
Ձեռըն է ձըգել իր կընութին,
Աչը մընաց ծալծուն գաթին,
Կերան գաթեքն ու հավերը:

Գլոն էլի փոշին թափե,
Սիսակ, Միսակին կը խափե,
Հավերու գլոխ Զանգիին[160] կը թալե,
Կերան գաթեքն ու հավերը:

Եփ օր հասանք Արթիկ կայարան,
Մենք բացինք ղուտկի բերան,
Հավեր մեչը կը Ճըռճըռան,
Կերան գաթեքն ու հավերը:

Ջաջուռու պոեզն էկավ Արթիկ,
Պատռավ գաթա թխողի վարտիկ,
.....[161]
Կերան գաթեքն ու հավերը:

16(1238). ՄԿՆԻԿ ԱՂԵՆ

Գացի արտըս, խասա, չըտեսա կըռութ,
Դառա տունըս, էկա՝ չըփաղ ու ըռութ,
Կընկացս խաց ուզի, կախեց քիթ մըռութ,
Դորվա՞մ էթամ գանգատ մկների ձեռքից:

Մըկնիկ աղեն իրեն զորքը քաշեց էկավ,
Էկավ, Սըվանվերդվա[162] դուրանը չոքավ,
Ուրտու ափըն քաղեց, ցորեն չը մնաց,
Դորվա՞մ էթամ գանգատ մըկների ձեռքից:

Մըկները հավաքվան, էրեցին ժողով,
Որոշին կըտրել արտերը բոլոր,
Դուրս էկան Սըվանվերդվա արտերեն,
Դորվա՞մ էթամ գանգատ մկնիկի ձեռքից:

Մըկնիկ աղեն իր զորք քաշեց
ընգավ Սոնկուրլու[163],
Կըտրեց Սարիբաշը[164], ընգավ Սոկըթլու[165],
Լուսն օր բացվավ, էլ արտը չկար Սոկըթլու,
Դորվա՞մ էթամ գանգատ մկների ձեռքից:

Արտըմ ունի, ցանի գարի,
Մկնիկ աղին բողոք արի,
Ասի խղճա, ինձ խընայի,
Տուն ու տեղըս մի ավերի:

Ե. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՎ ՍԻՐՈ ԵՐԳԵՐ

1(1239). ԹԱՔՎՈՐԻ ԳՈՎՔԸ[166]

Ասող.
Թաքվոր, բարով, հազար բարի,
Մեր թաքվորն էր խաչ,
Խաչոց խաչուվաչ,
Կոսպանդն էր կարմիր,
Հոգի ջան,
Յարևն էր կանաչ:
Այսօր մեզ էրնեկ,
Մեր թաքվորն էր խաչ,
Խաչոց խաչուվաչ,
Բինիշն էր կարմիր,
Հոգի ջան,
Յարևն էր կանաչ:

---

[160] Շան անունն է (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

[161] Հավանաբար այս տողը բամբառակ է եղել, և բանահավաքը չի գրել (ծանոթ. կազմողների):

[162] Սվանվերդի – գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ Լուսաղբյուր գյուղ Անիի շրջանում (ծանոթ. կազմողների):

[163] Սոնկուրլու – գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ Հայրենյաց գյուղ Արթիկի շրջանում (ծանոթ. կազմողների:

[164] Սարիբաշ – գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ Հայկասար գյուղ Արթիկի շրջանում (ծանոթ. կազմողների:

[165] Սոկթլու – գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ Սառնաղբյուր գյուղ Անիի շրջանում (ծանոթ. կազմողների):

[166] Այսպիսի հարսանեկան երգեր մինչև այժմ կատարում են Արթիկի շրջանի լեռնային գյուղերում (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

Պատասխանող.
Ծաղիկն ի՞նչ է,
Ի՞նչ ծաղիկ է ծաղկորանց,
Քաղեք, բերեք՝
Մեր թաքվորին բարունաց:
Ծաղիկն անթառամ
Ծաղիկ է ծաղկորաց,
Քաղեք, բերեք՝
Մեր թաքվորին բարունաց:
Ծաղիկ գյոլերու
Ծաղիկն է ծաղկունաց,
Քաղեք, բերեք՝
Մեր թաքվորին բարունաց:
Ծաղիկ նունուֆար
Ծաղիկ է ծաղկորաց,
Քաղեք, բերեք՝
Մեր թաքվորին բարունաց:

Ասող.
Թաքվորամեր, դուս արի,
Տե քե ինչեր ենք բերե,
Թաքվորամեր, դուս արի,
Քե թազա հարս ենք բերե:

Պատասխանող.
Թաքվորամեր, դուս արի,
Տես ինչ ու ինչ եմ բերե,
Թաքվորամեր, դուս արի՝
Մազըդ փետող եմ բերե:

Ասող.
Թաքվորամեր, դուս արի,
Տե քե ինչեր եմ բերե,
Թաքվորամեր, դուս արի՝
Խմոր շաղող եմ բերե:

Պատասխանող.
Թաքվորամեր, դուս արի,
Տես ինչ ու ինչ եմ բերե,
Թաքմորամեր, դուս արի՝
Վարդ-մանուշակ եմ բերե[167]:

2(1240)

Թագվորի մեր դուրս արի,
Տես քեզ ինչեր եմ բերել,
Գլուխդ դմբող եմ բերել,
Բոքոն ճղող եմ բերել:

Թագվորի մեր դուրս արի,
Լվացք էնող եմ բերել,
Տներն ավլող եմ բերել,
Մոխիր թափող եմ բերել:
Թագավորի մեր դուրս արի,
Մազերդ պոկող եմ բերել:

3(1241)

Մի լար մերիկ, մի լար
Լացողը ես եմ,
Ճամփա գնացողը ես եմ:

Մի դընտա շեմիկ, մի դնտա,
Գնացողը ես եմ,
Ասլան թոփի դեմը կանգնողը ես եմ:

4(1242)

Հարս եմ գնում, տանից հեռանում,
Տասնյոթ տարեկան սիրո տիրանում:

5(1243)

Ինձ բերել ես, սիրել, գուրգուրել,
Ամակդ ծով արել, նանի ջան,
իմ յարին տվել:

6(1244)

Անուշ կաթդ հալալ ինձ արել,
Ամակդ ծով արել, նանի ջան,
Միշտ էլ ինձ վրա:

7(1245). ՀԱՐՍ ՈՒ ՓԵՍԻ ԳՈՎՔԸ

Ճոխ սեղան ունենք, անհատնելի հաց,
Անթառամ ծաղիկներ՝ զույգ, բարով եկաք,
Գոհ, բախտավոր ապրեք մինչև ծերություն,
Անթառամ ծաղիկներ, դուք բարով եկաք:

Պիտի գովենք սեղաններդ թանկագին,
Մատաղ լինիմ ձեր էրկուսի հասակին,
Շատ երանի կտանք ձեր ծնողներին,
Անթառամ ծաղիկներ՝ զույգ, բարով եկաք:

Բաժակներ լցրած խմում են գինին,
Բոլոր բարեկամներ, քավոր, խնամին:
Աչքի լույսը տուր, գուսան,
հարս ու կերսարին,
Անթառամ ծաղիկներ, դուք բարով եկաք:

[167] Այս երգը կատարողները մայր ու դուստր են: Ձայնագրված է (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

8(1246). ՎԱՐԴ ԿՈՇԻԿՍ

Մեր տան մեջը քնող տղա,
Կարմիր խնձոր ծախող տղա,
Վարդ կոշիկս գտնող տղա,
Տղա, ղրկե վարդ կոշիկս:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Ձեր տան մեջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կոշիկդ գտել չեմ ես,
Իմ մոտս չէ վարդ կոշիկդ:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Մեր պարտեզը մտնող տղա,
Աղունիկներ զարկող տղա,
Վարդ կոշիկս տեսնող տղա,
Տղա, ղրկե վարդ կոշիկս:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Ձեր պարտեզը մտել չեմ ես,
Աղունիկներ զարկել չեմ ես,
Վարդ կոշիկդ տեսել չեմ ես,
Իմ մոտս չէ վարդ կոշիկդ:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Չայի ներքև չիման կեղնի,
Չայի վերև դուման կեղնի,
Մուշտուլուղը թամամ կեղնի,
Տղա, ղրկե, վարդ կոշիկս:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Չայի ներքև չիման չկա,
Չայի վերա դուման չկա,
Մուշտուլուղը թամամ չկա,
Իմ մոտս չէ վարդ կոշիկդ:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Լավ օրերս անցավ ախ ու վախով,
Իմ կոշիկս կորավ, ավաղ,
Հայ տղա, հոգուդ մատաղ,
Տղա, ղրկե վարդ կոշիկս:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Որ մոտս չէ, ես ի՞նչ անեմ,
Ըլի խոսկդ, կկատարեմ,
Ազնիվ աղջիկ հոքիտ սիրես,
Իմ մոտս չէ վարդ կոշիկդ:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Մի մնար ինծի պարտական,
Ես աղջիկ եմ ..... [տարե]կան[168],
Ես քեզ կը լինեմ սիրական,
Տղա, ղրկե վարդ կոշիկս:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Ինչի՞ մնամ քեզ պարտական,
Կուտամ հազար դահեկան,
Եթե լինես ինձ սիրեկան,
Ճարելու եմ վարդ կոշիկդ:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Մնացել եմ ու ....[169]
[Կամքուս] չեղածը ես փառավոր,
Խեղճ Ֆիզունի եմ ես քավոր,
Տղա, ղրկե վարդ կոշիկս:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

Մի մնար դուն ինձ սիրահար,
[Վարքուց լուր] իշխիր թաքավոր,
Եթե քեզ անես քավոր,
Իմ մոտս չէ վարդ կոշիկդ:
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

9(1247). ՂԱՇԱՆՔ Է

Ղաշանք է, ղաշանք է,
Մայլի տղեն ղաշանք է,
Շատ լավն է մայլի տղեն,
Տնկոզ է մայլի փեսեն:

Տնկոզ-տնկոզ ման արի,
Դուդուկներով տուն արի,
Ղաշանք է մայլի տղեն,
Շատ լավն է մայլի փեսեն:

---

[168] Անընթեռնելի է (ծանոթ. բանահավաք Ա. Նազինյանի):
[169] Անընթեռնելի է (ծանոթ. բանահավաք Ա. Նազինյանի):

Ֆայտոն նստի, ման արի,
Դարդակ ջեբով տուն արի,
Ղաշանք է մայլի տղեն,
Շատ լավն է մայլի փեսեն:

Յիրիկունը տուն արի,
Բարձը դնեմ, յան արի,
Ղաշանք է, ղաշանք է,
Մայլի տղեն ղաշանք է:

10(1248). ՍՈՖԻԿԻ ԵՐԳԸ[170]

Յաջքով էրի, ունքով էրի,
Դուս կանչեցի Սոֆիկին,
Լա՛յ-լա՛յ, Սոֆիկ լա՛յ,
Լա՛յ-լա՛յ, անուշ լա՛յ:

Դուս կանչեցի Սոֆիկին,
Թուշը պաքի Սոֆիկի,
Լա՛յ-լա՛յ, Սոֆիկ լա՛յ,
Լա՛յ-լա՛յ, անուշ լա՛յ:

Յիրեք մանեթ տվեցի,
Մե ֆայտոն'մ բռնեցի,
Լա՛յ-լա՛յ, Սոֆիկ լա՛յ,
Լա՛յ-լա՛յ, անուշ լա՛յ:

Օրթա Քիլիսա հասցուցի,
Տերտերի տունը քնցուցի,
Լա՛յ-լա՛յ, Սոֆիկ լա՛յ,
Լա՛յ-լա՛յ, անուշ լա՛յ:

Պատի քյոշեն սխմեցի,
Չուխես վրեն քցեցի
Լա՛յ-լա՛յ, Սոֆիկ լա՛յ,
Լա՛յ-լա՛յ, անուշ լա՛յ:

11(1249). ԵՍ ՄԵԿ ՏՂԱ ԵՄ

Ես մեկ թաք տղա եմ,
Աստծուն՝ ծառա,
Աստվանից խնդրեցի,
Մուրազս չառա:
Յա՛ն տուր, յա՛ն տուր
Ջահել եմ, ջան տուր:

Ծիրանի ծառ էղնեի,
Ճամփեդ բուսնեի,
Էնքան չը մեռնեի,
Հետդ խոսեի:

Յար ջան, յար ջան,
Կապել ես մարջան,
Յա՛րս, յա՛րս,
Վառիր ջիգարս:

12(1250). ԲԱՏՈԼԱ

Գնացի կալը կառի,
Բատոլա, օլա, օլա,
Ես կքելեմ՝ դու վառի,
Շաքյար ծախող շան տղա:

Ելել եմ՝ ղալախ ծեփեմ,
Բատոլա, օլա, օլա,
Յարիս տարել են՝ ծեծեն,
Էն լավ տղեն կցոլա:

Ճանապարհը պահապան,
Բատոլա, օլա, օլա,
Սըբ Կարապետ օգնական,
Գյազար ծախող շան տղա:

13(1251). ՂԸՌ ՁԻՆ

Ղըռ ձին նալը ի՞նչ կանե,
Թոփառլըվա դուզը,
Պոլլի է գըրուզը,
Սիրունը խալն ի՞նչ կանե,
Հոյ աման, յար ջան,
Ոտեդ գըլոխ մարջան,
Առնըմ էի մամա ջան,
Չլինեիր դավաճան:

14(1252). ՄԵՐ ՏՈՒՆ, ՁԵՐ ՏՈՒՆ...

Մեր տուն, ձեր տուն իրար դիմաց՝
Վայլե, վա՛յ, տնավեր,
Յաչքով կէնեմ, ունքով՝ իմաց,
Տնավեր Դարդո:

Լվացք կէնես՝ ջուր մի թափե,
Ջայել եմ ես, ինձ մի խաբե,
Վայլե, վա՛յ, տնավեր, ինձ մի խաբե,
Տնավեր Դարդո:

[170] Այս երգը նվիրված է քաղաքի մեծահարուստ Ձիթողցոնց աղջկան՝ Սոֆիկին (գեղեցիկ էր ու փարթամ) որին դերասան Ստեփանյանը «փաղցրեց» քաղաքից: Ապագայում Սոֆիկը ամուսնացավ ուրիշի հետ և եղավ լավ ամուսին ու մայր (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Գեղով կըսեն՝ քու յար շեկ է,
Վայլե, վա՛յ, տնավեր,
Ինձի հըմար մորե մեկ է,
Տնավեր Դարդո:

Ձոր խորունկ է՝ ձեն չի գալիս,
Վայլե, վա՛յ, տնավեր,
Ես կանչում եմ՝ տուն չես գալիս,
Տնավեր Դարդո:

Դարդ եմ արել դուգյուն-դուգյուն,
Վայլե, վա՛յ, տնավեր,
Քու դարդիցը գընկնիմ սուրգյուն,
Տնավեր Դարդո:

Զ. ԶԱՎԵՇՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՏԱԿԵՐԳԵՐ

1(1253). ԼՎԵՐ

Էլա գացի պարկա մառան,
Լվերն էկան վրես թափան,
Թամկով տըվին հոգիս առան,
Հավար լվեր, մադաթ լվեր,
Սուր մըռթըներ, բարակ ճվեր:

Էլա գացի պարկա տունը,
Լվեր էկան, դրին խըփըրտունը,
Կոտրին մեր խարաղաճի սունը,
Հավար լվեր, մադաթ լվեր,
Սուր մըռթըներ, բարակ ճվեր:

Էլա գացի պարկա տանիս
Վրես առա քառսուն թաղիս,
Լվեր ծակին իչան ջանիս,
Հավար լվեր, մադաթ լվեր,
Սուր մըռթըներ, բարակ ճվեր:

Էլա գացի պարկա թմբան
Լվեր էկած՝ կը տընգտընգան,
Ընծի լարին, դուրս հանեցին,
Էկան թափան իմ խեղճ կնկան:

Էլա գացի պառկա խամշին
Վրես առա գոմշու կաշին,
Լվեր ծակին, իջան ջանիս,
Հավար լվեր, մադաթ լվեր,
Սուր մըռթըներ բարակ ճվեր:
Լվեր էկան կառան-կառան,
Բարև տվի, բարև չառան,
Մըկկե՛մ ունեն, անուն՝ Թառան,
Պոչեն բռնին, գըլխեն տարան,
Հավար լվեր, մադաթ լվեր:
Սուր մըռթըներ, չեկլատ ճվեր,

Էկավ լվերու սուրաբաշին,
Պատռեցին գոմշու կաշին,
Էկան իջան մըչ իմ լաշին,
Հավար լվեր, մադաթ լվեր,
Սուր մըռթըներ, բարակ ճվեր:

2(1254). ՏԱՇՂԱԼԱ[171]

Տաշղալեն գոլի բերան,
Էշը մորթին, միսը կերան,
Իշի փշկուլ մազնի մերան,
Ուրբաթ մերին, շաբաթ կերան:

3(1255)

Կեղնի, չի էղնի, մե աղվես՝մ կեղնի[172],
Էդ աղվեսը բոլոր աղվեսների մեջ
աղվես կեղնի,
Էդ աղվեսը պատեպատ կը դիպնի
կը հասնի յիրա մուրազին,
Մեր արտելի նախագահն էլ
հասնի յիրա մուրազին:

4(1256). ԳԵՇ ԿՆԻԿ

Գեշ կնիկ, քու խոր խեր անիծած,
Ալրմաղով ցան կը բերես,
Մածուն կուզեմ՝ թան կը բերես,
Թիզ՝մ բորբոս, մուկն լե երես:
Թնդիր վառես, գեշ մուխ կանես,
Պատեր բիթուն բմբուլ կանես[173]:
. . . . . .
Գեշ կնիկ, ալուր մաղե,
Օջիլ ջարթե, հետը խառնե:

---

[171] Տաշղալա - գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, այժմ՝ գյուղ Քարաբերդ Շիրակի մարզում (ծանոթ. կազմողների):

[172] Հեքիաթի սկսվածքային և եզրափակիչ բանաձևերի նմանողությամբ հորինված կատակերգ (ծանոթ. կազմողների):

[173] Հաջորդ տողը բաց է թողնվել բանահավաքի կողմից՝ հավանաբար անպարկեշտ բնույթի պատճառով (ծանոթ. կազմողների):

5(1257). ԿԱՏԱԿԵՐԳ

Գացինք Մշու գեղ,
Բերինք փութըմ եղ,
Նանեին ասա՝
Անե ձվածեղ՝
Ես ու իմ յարըս
Ուտենք թաքուն տեղ:
Հայլո, հեյրան է,
Հայլո, ջեյրան է:
Գացինք Ստամբոլ,
Էնտեղ՝ գինին բոլ,
Ես ու իմ յարըս
Խմեցինք բոլ-բոլ:
Հայլո, հեյրան է,
Հայլո, ջեյրան է:

6(1258). Ա՛Խ, ՋԱՆԻՄԱՆ, ՋԱՆԻՄԱՆ

Ելա երթիք տփին-տփին,
Կոնտը կոտրավ - ես վար ընկա,
Օխտը պուտուկ տոլմա կերա,
Ա՛խ ջանիման, ջանիման:

Ելա երթիկ քեզի տեսա,
Ես էղնեի մորդ փեսա,
Ա՛խ, ջանիման, ջանիման,
Ես էղնեի մորդ փեսա:

7(1259). ԿԱՏԱԿԵՐԳ

Յամեն տարի խոպան կէրթաս,
Հո՛փ, մերիկըդ մեռնի,
Լիքը կէրթաս, դարդակ գուկաս,
Գյարդանըդ խուրդ էղնի:

Յուրիշները «Վոլգա» բերին,
Հո՛փ, մերիկդ մեռնի,
«Վոլգայի» տեղ Օլգա[174] բերիր,
Գյարդանըդ խուրդ էղնի:

[174] Ռուս կին (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

Է. ՋԱՆԱՋԱՆ ԵՐԳԵՐ

1(1260). ԺԱԺՔԻ ԵՐԳԸ[175]

Ժամը օխտին ժաժքը յելավ,
Գյումրին ավիրավ:
Աղաներին Բոշի սադը
Նես հրավիրավ:

Չբլախ-չբլախ (կնթիք) դուս կը փախնին
Բաղնիքներիցը,
Կիսաթրաշ դուս կը վազզեն
Բառբառխանիցը:

Փախե՛ք, փախե՛ք ժաժքն է գալիս
Գետնի տկիցը,
Դու մի ըսե կեանքը թանգ է
Յամեն բանիցը:

Մեկ էլ տեսանք մեկը թռավ
Պատուհանիցը,
Լեղապատառ նա էլ փախավ
Կնկա ծոցիցը:

Հլը աշե՛ք, Գորկում կայնած է
Բուֆետնի շկաֆը,
Շկաֆի մեջ պպզած է
Մեր Վանեցյանը:

Երևանից մեկ՚մ[176] էկավ՝
Զեկուցում տալու,
Կնիկը[177] ասավ ու յեդ փախավ՝
Էդ էր մազալու:

Փախե՛ք, փախե՛ք, ժաժքն է զարկում
Գետնի տկիցը,
Դու մի ըսե կեանքը թանգ է
Յամեն բանիցը:

2(1261). ԺԱԺՔԸ

Ժաժքեն փախար, քաղքի տղա
Սրտիդ վախիցը,
Յբը միշտ կսեիր. «Չեմ վախենա
Հեչ մի բանիցը»:

[175] Երգը վերաբերվում է 1926 թ. Լենինականի մեծ երկրաշարժի աղետին (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[176] Արզումանյան Ա. (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[177] Շախկամյան Գինո (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Ախր ի՞նչդ մարդ չը վախենա
Էդ յանդեր ժաժքեն,
Տղամարդու պես դեմեդ չի գա,
Զարկե կը տկեն:

3(1262). ՔՈՌ ՄԿՈՅԻ ՈՏԱՆԱՎՈՐԸ

Քաղքի մեջը մենակ ես եմ,
Ուտող-խմող քեֆչի տղա:
Վնաս չեմ տա յուրիշ մարդու,
Հալալ դատած փարես կուտեմ:

Ֆայտոնները զանիտ կենեմ,
Դավուլ զուռնեն մեջը դրած,
Աղբոր տղոց ղոնախ կենեմ,
Ղուրբան էղնիմ ես լավերուն:

Վով օր գուզե յնկեր դառնա,
Յնձի պես քեֆչի տղին,
Բաժակ բռնել թող գիտենա,
Աղ ու հացը չը մոռանա:

4(1263). ՂԱՅՂՈՒԼՈՒ ՇՐՋԱՆԻ ԵՐԳԸ

Ղայղուլին[178] տասէրկու գեղ էր,
Կերածները գարի հաց ու եղ էր,
Ցորեն հացը փորի դեղ էր:
Նալաթ Ղայղուլի, Ղայղուլի:

Ղայղուլին էր շատ մալատեր,
Չունեին իրար վրա սեր,
Չէին բարշի էրկու տերտեր:
Նալաթ Ղայղուլին, Ղայղուլին:

Ղայղուլվա ճամփեն էր բարակ,
Ոչ ժամ ունի, ոչ պատարաք,
Մնացել են խայտառակ:
Թեփոտ Ղայղուլի, Ղայղուլի:

5(1264). ԲԵՆՈՆ՝ ՆԱԽԱԳԱՀ[179]

Բենոն՝ նախագահ,
Նագան կը կախա,
Վո՛ւյ-վո՛ւյ նագանս,
Յոթ կրականս:

Գացինք Ալափարս,
Տեսանք սիրուն հարս:
Վո՛ւյ-վո՛ւյ նագանս,
Յոթ կրականս:

Գացինք Ալափարս,
Կերանք թաժա խաց:
Վո՛ւյ-վո՛ւյ նագանս,
Ընձի պաշտպանս:

6(1265). ՋԱ՛Ն, ՋԱ՛Ն ՎԱՐԴԱՆՈՒՇ

Օրմե կնիկս խենթացավ,
Բողչեն շալակը առավ,
Պարտեզեն դուս նետվեցավ:

Կրկներգ.
Ջա՛ն, ջա՛ն Վարդանուշ,
Վարդանո՛ւշ, պաքդ է անուշ,
Էդ քո պզտիկ բերանի մեջ,
Պիտի դնեմ շաքար, նուշ:

Օր մե աներոջս կանչեցա,
Մի լավ ապտակ զարկեցա,
Պարտեզեն դուս նետեցա:

Կրկներգ.

Սադի միջի պալատը
Իմ պալատին կը նմանի,
Միջի քնող օրիորդն էլ,
Իմ սիրածին կը նմանի:

Կրկներգ.

Ես մի շոֆեր տղա եմ,
«Ուրալ Զիս»-ի վրա եմ,
«Ուրալ Զիս»-ը ման կուտամ
Պիվի փողը կուլ կտամ:

Կրկներգ.

Ջան, ջան, շոֆեր ջան,
Ինձի տար Դիլիջան,
Այնտեղ խուժան արաղ կա,
Խոզի սալն էլ զակուսկա:

Կրկներգ.

Արտ՚մ ունիմ գարի է,
Այս ինչ աղվոր տարի է,
Շտապեցեք օրիորդներ,
Ամուսնանալու տարի է:

---

[178] Ղայղուլի - գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ գավառում: Այժմ՝ Ղազանչի (ծանոթ. կազմողների):

[179] Ալափարսցի Դամրջի Բենոն կը մտնի պարտիա, առաջ կը քաշվի և կը դառնա հացի V արտելի վարիչ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Կրկներգ.

Տունդ էր սարի վրա,
Ձիրանի ծառի կողքին
Ես քեզ համբուրեցի,
Ջրի կուժը՝ ուսիդ վրա:

Կրկներգ.

7(1266). ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Զեյթուն քաղաքից եմ գալիս,
Դիպա Պարսկաստան եմ գնում,
Կորուցել եմ ճանապարհը,
Չըգիտեմ՝ վորման եմ գընում:

Ես գիտեմ, որ մոլորվել եմ,
Աշխարհից ելե, կորել եմ,
Անմխիթար ցնորվել եմ,
Մտքովը Թեյրան եմ գնում:

Միթե սիրուհիդ Թեյրան է,
Այդպես վառված ես գնում:

8(1267). ԽԱՆՈՒՄ ԵՎԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս էլա,
Ալագյազ տեսա,
Խանում Եվա ջան:
Աբարանը աչքերիս
Դուման ա դառել,
Դուն կեցիր բարով,
Ես կէրթամ լալով,
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով:
Սարեր ման գալով:
Էս դին ոչխարը կորած է,
Էն դին գառները:
Կանչեցեր են ծաղիկները, ծառները:
Խանում Եվա ջան:
Դուն կեցիր բարով,
Ես կէրթամ լալով,
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով:
Արի գնանք քո ման գալած արտերը,
Քեզի տեսա, թազացավ իմ դարդերը:
Խանում Եվա ջան:
Դուն կեցիր բարով,
Ես կէրթամ լալով,
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով:
Խանում Եվա ջան:
Ձեռ ու ոտս կապեցին, բերդը դրեցին,
Չուխաս, շալվարս լալով տուն բերեցին:
Ես Աղեկն եմ Չամռլեցի, մեկ ջիվան,
Տութսաղ էղա ըստուց չուրի Երևան:

Ը. ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԵՐԳԵՐ

1(1268)

Հազար ութհարուր եթմիշը օխտին[180]
Լուր դուս ընկավ, կովի ձենը իմացան,
Բոլորը ուրախացան
Լոռեցու[181] յախթին
Կարդացին ճիշտ «այբ»,
«բեն»-ը իմացան:

Որոնք չէին տեսե՝ էղան ձիու տեր,
Հարսնացուի տեսակ-տեսակ
տար ու բեր,
Բաշլըղը[182] հինգ հարուր էր,
որը հազար էր,
Փոխանակ հազարը մինը իմացան:

Հագան լաստիկներ, մահուդ չուխեքը,
Իսկույն կլաբիդոն[183] դրին յախեքը,
Խիստ բարձրացան վերև,
ինչպես Նամռութը,
Խառնվան, զակոնի բանը իմացան:

Էկավ եթմիշը ութը չիք տարեմուտը,
Խիստ բազմացավ մուկը,
էկավ կարկուտը,
Կտրեց գարի, ցորեն ու հավի կուտը,
Ելավ միաժումը, բռնեցին ծումը:

Չը պտղացավ էծ, օչխար,
մինչև հավերը,
Ալաֆ չկար, ֆորտ չը տվին կովերը,
Ղսըր մնաց չիմ կթանը, իմացան,
Հաց ուզեցին միաժումը իմացան:

---

[180] Քեթեցի Ասատուրի երգերից (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[181] Լորիս Մելիքով (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[182] Հարսնացուի գինը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[183] Ոսկեգույն երիզակ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

Մինչև տասը տարեկանը
հանդիպավ սովի,
Կարոտ փափակել են եղի ու պանրի,
Այժմս փարա չկա, որ տանք մատաղի,
Միժմանակ ապրում, ինչպես թե աղի:

Տերը բարկությունը շարժեց
սակսանին,
Հինգ մանեթ մեկ կոտ
ցորնին գին դրին,
Յիրեք մանեթ հոտած ալրի փթին:
Որոշեցին, թանկությունը իմացան:

Դարմանի գրվանքեն էղավ մի շահի,
Երանի քթոցին հինգ մանեթ տայի,
Քանի գտնվում էր շուտով առնեի:
Խոտ ուզեցին, թանկությունը իմացան:

Ասատուրն է(ր) խոսաց
Մեծ Քեթի գեղեն[184],
Առան չինի, չբանցրին կավեղեն,
Հիմա ձեռք չի բռնե, որ բերեն տեղեն,
Դարտակ մնաց չին ամանը իմացան:

2(1269). ԱՆԲԱԽՏ ԱՐԱՐԱՏԻ ՆՄԱՆ

Բաց արեք, կարդացեք նամակիս սևը,
Ինձի երևում է օտարի նման,
Ըսկսեց թառամել կյանքիս տերևը,
Ձմեռ ժամանակին՝ հունվարի նման:

Այս անիրավ բախտը
ընձի հույս տալեն,
Մնացել եմ մորմոքալեն ու լալեն,
Ցավովը տապկըված՝
աշխարհ ժուռ գալեն,
Անհովիվ մոլորված ոչխարի նման:

Ես Զայրին եմ, ծովը աչքես պակաս չէ,
Կրակված սրտիցը բովը պակաս չէ,
Գիշեր-ցերեկ հովը գլխես պակաս չէ,
Անբախտ Արարատի մեծ սարի նման[185]:

[184] Մեծ Քեթի – գյուղ Շիրակի մարզում (Ախուրյանի շրջան)՝ Գյումրիից 7 կմ դեպի հյուսիս, 1946 թ. վերանվանվել է Քեթի (ծանոթ. կազմողների):

[185] Այս երգը երգում են «Հիրժանի» եղանակով (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի)::

3(1270). ՄԱՐԱՔՅԱ-ԴԻՎԱՆԻ

Շատ մի բացվի, նազլու-դիլբար,
Դիպնի կը նազար քեզի,
Էն խիտար կայնար դիմացը,
Արի, գինով տար ինձի;

Մազերը դ սև, գյոքսը դ ճերմակ,
Ձեռքերդ հինայել ես,
Ասսու դարգյայի դռնից,
Յար, շնորհքդ առել ես,
Ման եկա արարոց աշխարհ,
Չգտա, օ՛ յար, քեզի:

Քյամալիս մտավ զամաղլու,
Չգտավ դարդին դարման,
Ելնիմ-էրթամ Լոխմանի մոտ,
Ոտքեր չունեմ գյուման,
Քըցել ես վառման կրակը,
Գուզես՝ հոգիս առ քեզի:

4(1271). ՀԱՆԵԼՈՒԿ ՄԵՌՈՆԻ ՈՒ ՄԵՌՈՆԱՄԱՆԻ ՄԱՍԻՆ[186]

Մեկ բան ունիմ ձեզ ասելու՝
Անհայր, անմայր, ծին չունի,
Երկյընքուցը սերմ կստանա,
Յուր հագուստին հին չունի,
Յոթը մորից ծիծ կը ծծե,
Մեկ արգանդում բնակված,
Ինքն այնքան գովական է,
Աշխարհիս մեջ գին չունի:

Տարուն մեկ հեղ ծնունդ կառնի
Ու կլցվի մեջ թասին,
Կամ շաբաթ է, կամ կիրակի,
Մարդ թող չասե մեծ պասին:
Աշխարհիս մեջ անգին բան է
Ու գլուխը շատ խասին,
Ոչ հեր ունի, ոչ մեր ունի,
Մինչև անգամ ծին չունի:

Այն արգանդում բնակվում է՝
Ոչ շատ լայն է, ոչ շատ նեղ,
Գեղեցկաձև շինվածք ունի
Ու կբնակվի օվկիան,
Չէին կարող լցնել նրա
Գինը պոլսկայ ու ըռուս:

[186] Երգվում է «Մարաքյա-դիվանի» եղանակով (ծանոթ. բանասացի):

5(1272). ՄՐՑՈՒԹՅԱՆ ԵՐԳ

Ի՞նչ ասացիր՝ եկար, ասպարեզ մտար,
Դու չգիտեիր, որ այստեղ
կարգ ու կանոն կար,
Մի՞թե այս քաղաքը դու անտեր գտար,
Ինձ չէի՞ր իմացե, ո՛վ անգետ տղա:

Արի, վարպետ, քեզի դադար պաշտպանե,
Չլինի թե զղջաս, շուտ ասես «մեղա»,
Բանաստեղծությունը մեծ, ծանր բան է,
Ով տակիցը դուրս գա՝ տղամարդ է նա:

Արի, վարպետ, քաշվի-գնա խրճիթը,
Քանի որ չես կախել երկար կնճիթը,
Գլուխդ շարժելով մի՛ քորիր քիթը,
Ինձ չէի՞ր իմացե, ո՛վ անգետ տղա:

6(1273). ՄՐՑՄԱՆ ԵՐԳ

Առանց մեկին նախանձելու՝
Իմ այրեստին մշակ եմ ես,
Եթե ինձ գան խանգարելու,
Այն ժամանակ՝ գնդակ եմ ես:

Կատվի սարսափն ինձ չի ազդում,
Քաջ առյուծի զավակ եմ ես,
Մրցման ամեն ասպարեզում
Հաղթանակի պսակ եմ ես:

Հերիք է փչես մեծ սուտ,
Ինչպես քամին անեկամուտ,
Ստով շինված տունդ է խախուտ,
Կործանելու կայծակ եմ ես:

Սեյրանը խոսում է շատ պարզ,
Ինչպես ծովը մրրկատար,
Մրցակիցս ես ինչպես փտած ծառ,
Տաշելու սուր ուրագ եմ ես:

7(1274). ԱԶԱՊ ՏՂԱ, ԱԶԱՊ ԱՂՋԿԱ ՎԵՃԸ

Ազապ տղա, ազապ աղջիկ վիճում են,
Մեկը մեկին անվանում են խելագար
Խոսակցության միջին վատ համարում են,
Գիտեմ՝ յիրար կառնեք,
ի՞նչ կասես խելագար:

Աղջիկն ըսավ՝ տղա, հարմար չես խոսում,
Քեզ պես հազար հորը դռան ըսպասում,
Գլխիդ ճար արա՝ լավ գաղափար,
լավ ուսում,
Ի՞նչ կասես, ի՞նչ կասես խելագար:

Տղեն ասավ՝ աղջի, գաղափարդ բաց,
Կարդալ, ուսում ունենք, չենք մնա քաղցած,
Քեզի ես եմ պայողը վերջում անկասկած,
Մազդդ երկար, խելքդ կարճ,
Ի՞նչ կասես, ի՞նչ կասես խելագար[187]:

8(1275). ԴՈՒ ԵՍ ԿԵՆԱՑ ԾԱՂԻԿ[188]

Դու ես կենաց ծաղիկ,
Սիրելի աղջիկ,
Ինձ համար անդրանիկ
Սիրեկան ես դու:

Երեսդ ըսպիտակ էր,
Սիրտը սոխակ էր,
Ա՛յ իմ սրտի սոխակ,
Վարդարան ես դու:

Կաթընտիր մաքուր է,
Ֆիրզային լուր է,
Հոտով քաղցր բույր է,
Պահապան ես դու:

9(1276). ԿԱՅՆԻ, ՄԱՅԲՈՒԲ, ՍԻՐՏՍ ԵՂԱՎ ԱՎԵՐԱԿ

Կայնի, Մայբուբ, սիրտս եղավ ավերակ,
Երբ որ տեսա իմ ծննդավայրը,
Միտքս ընկավ ման գալածքս տեղանը,
Հայրենիքիս ազգ ու էրամ, հայ Գյանջա:

Առավոտյան սոխակներդ կխոսան,
Այգում զուլալ, պաղ ջրերդ կհոսան,
Հոտավետ ես, մարդիկ
կուգան, կզբոսնան.
Հարս ու աղջիկ կանցնեն
շարվեշար, Գյանջա:

Գյանջա, չորեք կողմը ծաղիկ, վարդ լինի,
Ունենաս շատ խմիչքներ և անուշ գինի,
Մայբուբն եմ, Մայմուդիս կյանքը ողջ լինի,
Հայրենիքիս ազգ ու էրամ, հայ Գյանջա:

---

[187] Երգվում է ժողովրդական պարերգի եղանակով (ծանոթ. բանահավաք Ստ. Խաչատրյանի):

[188] Երգվում է «Շարքի» և հին Բինգյոլի եղանակներով (ծանոթ. բանասացի):

10(1277). ԳԵՇ ԿՆԿԱ ԹԱՐԻՖԸ

Գեշ կնկան որ խոսացնես,
Լիզուն թամամ մի գազ կանի,
Նրան մի ջոկ տուն դնես,
Ցեթի վրեն ու տազ կանի:

Ուտում է խոգոլակի խակը,
Չի իմանում բուրթն ու բամբակը,
Կեղտոտում, թալըմ է բակը,
Մարդու փաչեն բաց է թողնըմ:

Յաչքերը քաշըմ է դեղը,
Քշերով ման է գալըմ գեղը,
Թողնում է իրան տերը,
Մարդը դարդ ու մուրազ կենե:

Յառավոտը կանուխ խմոր կենե,
Աղ որ քցե՝ շոռ կենե:
Մարդ գալուս վոռ կենե,
Մարդը դարդ ու մուրազ կենե:

11(1278). ՀՈԳԻՆ ՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Եփ Աստվածը երկինք ու գետինը ստեղծեց,
Հոգին ու մարմինը մեջ տեղը բերեց,
Իրար մոտ դրեց ու դաստիարակեց:
Դրանց մեջը վեճ առաջացավ;
Հոգին մարմնին ասաց.
—Ա՛յ մարմին, արի իմ յետևես,
Քեզ բան ասեմ, որ ընծի լսես.
Արի ծունկ չոքենք, Աստծուն աղաչենք,
Աբրահամու սեղանեն մենք չը զրկվենք:
Մարմինը հոգուն պատասխան տվավ.
Ա՛յ մարդ, յիմար-յիմար ի՞նչ ես խոսըմ,
Աշխարհումը մեզ համար լույս է ծագըմ:
Մեզի փառք է տվե մենք ուրախանանք,
Ջահիլ աղջկների հետ մենք միանանք,
Գրկվենք ու ման գանք:
Հոգին մարմնին ասավ.
Ա՛յ յիմար մարմին, ես քեզ եմ ասըմ.
Ինձի ինչո՞ւ խելքից ես հանըմ
Արի մենք չոքենք, ծունդռ առնենք,
Դրախտի բաժինից մենք չը զրկվենք:
Մարմինը հոգուն պատասխան տվավ.
Ա՛յ յիմար, ինձի ես անպատվըմ,
Աստվածությունը ինձի ձեռ-ոտ է տվե,
Որ ես չարչարվիմ, աշխատիմ,
Իմ քրտինքով հալալ հաց ուտեմ:
Կնիկ առնիմ ու հետը ման գամ,
Աշխարհի մեջը մարդկություն ունենամ:
Հոգին մարմնին ասավ.
Դու ինձի շատ մի չարչարի.
Այդ երկու ոտդ Աստված կառնի,
Ուժդ պակսեցնե, միսդ կը թափե,
Քեզի կենդանի մեռել կը դարձնե,
Ու յեդ կը դնե:

Այդ միջոցին երկուսը վիճելիս,
Մի ճչոց իմացան վերևից
Վազին վերև ու խնդրեցին
Ի՞նչ ես հրամայում մեզի, ասացին:

Բարձրացավ Աստված, վերցրեց
Հոգին մարմնի մեջ թաղեց,
Կավվի մուշամբով վրեն ծածկեց
Ու հոգուն կարգադրեց.
«Այս է քու տեղը մինչև գերեզման»
«Ապրեք իրար հետ հաշտ ու անբաժան»[189]:

12(1279). ՄՈՒԿՈՒՉ, ԲԵՆԻԱՄԻՆ, ԵՐԵՔ ՍԱՍՈՒՆՑԻՆ

Ալագյազի վրա փաթթել է փուսը,
Քոռնա Փեփելի ջուխտ լուսը,
Ջուխտ ջիվանները թողել է դուսը,
Քեզանից գանգատ եմ, անգութ Ալագյազ:

Ախ, Ալագյազ, դու մեզ համար
վատ սար ես,
Շատերուն բժիշկ ես, դեղ,
դարման, ճար ես,
Քյասիբ մարդ կգտնիս՝ օջախը մարես,
Մեր կենաց անխնամ, անգութ Ալագյազ:

Երվանդըս խղճալով ասի քանի՛մ բան,
Խնդրեմ՝ յիմացողը թող օղորմի տան,
Հինգ հատ ջիվան էին՝
մեկ-մեկ տան իշխան,
Մուկուչ, Բենիամին, երեք սասունցի:

13(1280). ԳԵՐՄԱՆԻԱՆ ԴՈՒՐՍ ԵԼԱՎ

Գերմանիան դուրս ելավ մեր դեմ պայքարի,
Ոտքերը դեմ առան ապառաժ քարի,
Հանեցիր նորա դեմ քո բանակներին,

[189] Վերջին տողն ավելացրել է բանահավաք Պարույր Բարսեղյանը (ծանոթ. կազմողների):

Ով դու մեծ զորավար, յընկեր Ստալին:

Դեպ առաջ շարժվեցին հսկա տանկերը,
Դեպ երկինք սլացան սավառնակները,
Դեպի ծով լող տվին ռազմանավերը,
Զորավոր զորավար յընկեր Ստալին:

14(1281). ՅՈՒՇԱՊ

Տիրունը քաղում էր ձորի մեջ մանդակ,
Յայլեցեն բերին Լևոնիս ջանդակ,
Մաթան մոռացի,
Տիրուն քոռացի:

Յուշապը յիջավ Բաշգեղու յայլեն,
Լևոնիս զարկեց Զարղարու մայլեն,
Մատան մոռացի,
Տիրուն քոռացի:

15(1282). ԿԱՐՏՈԼԻ ԵՐԳԸ

Բարակ կճեպդ հանում ենք,
Վրեդ մի լավ աղ ցանում ենք,
Ախորժակով նես տանում ենք,
Օրշնվի բարի պտուղը:

Երեխայիս ձեռքն եմ տալիս՝
Ձայնն եմ կտրում լացող բալիս,
Անժուր ապրին համ ես տալիս,
Օրշնվի բարի պտուղը:

Այս պատերազմների տարին,
Թանկացել է ցորեն-գարին,
Դուն ես մեր հույսն ու բարին,
Օրշնվի բարի պտուղը:

Հաջյանըս քեզ կգովեմ,
Բուկը դ վեր տամ, ջրեմ, զովեմ
Մագալ անեմ, քեզ թոթովեմ,
Օրշնվի բարի պտուղը:

16(1283). ԵՐԳ ԽՆԱՄԻՆԵՐԻՆ

Դուք մեր տունը բարով եկաք, բարեկամ
Աչքիս լուսն ես, ծնկիս թաղաթ,
բերնիս համ,
Մտադիր եմ ութ օր՝ էսօր ձեր տուն գամ,
Դուք մեր տունը բարով եկաք, բարեկամ:

Երկինքը ամպել է, տակը կառնի նամ,
Զարբաբ-ղումաշ բերեմ, կուզեք՝ աբրեշում
Բարեկամիս չեմ կամենում վատ անգամ,
Դուք մեր տունը բարով եկաք, բարեկամ:

Տեր-Խաչատուր, ըսած բառը դ բոլոր խամ,
Ուղիղ սրտով խոստովանվեք, ճաշակ տամ,
Աստվածածին լսեր ձենը դ մեկ անգամ,
Դուք մեր տունը բարով եկաք, բարեկամ:

17(1284). ԱՊՈՅԻ ԵՐԳԸ

Ես Ապոն եմ՝ թղթից նկար,
Շատ հզոր էի, դարձա տկար՝
Լիրբ կնոջս զավթելու համար,
Կերավ գյանքըս, գնաց գյանքըս:

Շատ եմ տեսե հազար-հազար,
Բայց չեմ տեսե քեզ պես գյոզալ,
Դու իմ սրտին շատ դուր էկար,
Ջրաշենցի սիրուն ախչիկ:

Բոյ ու տեսքդ է հարմարի,
Հագիդ շորերն են ղումաշի,
Քեզեն էղած ինձ կպահի,
Ջրաշենցի սիրուն ախչիկ:

18(1285). ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳՈՎՔԸ

Որքան գովեմ՝ գովելու ես դու արժան,
Անխոցելի քարափ մեր լեռ, Պետրոսյան,
Չես ընկճվի պայքարի մեջ դու դաժան,
Հաղթանակի հոգով սնված, Պետրոսյան:

Քո նժույգի սանձը ձեռքիդ մեջ պահած՝
Ման եկար աշխարհը դուն լայնատարած,
Նավակդ ալեկոծ ջրերում լողաց,
Նավի հմուտ մեծ նավավար, Պետրոսյան:

Ըմբոստացար թագակիրին ահավոր,
Որը իրեն կարծում էր ամենազոր,
Պայքարի մեջ խղճացած, դարձավ անզոր,
Կամավոր թագը քեզ հանձնեց,
Պետրոսյան:

Հայերըս վաղուց կարոտ էինք մեծ թագի,
Երազում էինք արժանանայիր պսակի,
Երազանքը դարձավ վառ իրողություն,
Տիգրան Մեծի հիշատակ, հայ Տիգրան ջան:

Գրոսմայստերների այդ մեծ քանակը,
Չըփրկեցիր Սպասսկու վատ վիճակը,

Միշտ վառ, պայծառ մնա քո արեգակը,
Հաղթանակը միշտ քեզ մնա, Պետրոսյան:

Երվանդը քեզ համար երգով ման կուգամ,
Երկնային նժույգը քեզ նվեր կուտամ,
Չթառամի սրտիդ վարդը ոչ մի ժամ,
Հաղթանակը քեզ պսակվի, Պետրոսյան:

19(1286). ԽՈՊԱՆ ԳՆԱՑՈՂԻ ԿՆԿԱ ԽԱՂԸ

Գլխիս խոպան էրթող դառար,
Ինչքան ասի՝ հաշվի չառար,
Յըռըսների համար վառար,
Չգաս այլևըս, ինչու՞ս ես պետք:

Յըռըսները խապին, տարան,
Մեջքըդ կապին ամուր պարան,
Կարդա, կյանքըդ էղնի լարան,
Չգաս սավսեմ, ինձի պետք չես:

Ամեն հոգսը որ ես քաշեմ,
Ու իմ ջահել կյանքը մաշեմ,
Կացինով իմ սիրտը տաշեմ,
Չգաս սավսեմ, ինչու՞ս ես պետք:

Երեխեքըս մոլորած են,
Իմ չորս կողմը բոլորած են,
Գիշեր-ցերեկ «ախ» կքաշեն,
Էլ ինչու՞ գաս, ինչի՞ս ես պետք:

Զարիկն եմ՝ այսքան գրեցի,
Մեկ ծրարի մեջ դրեցի,
Գյուղից խոպան ուղարկեցի,
Չգաս, այլևըս ինձ պետք չես:

20(1287)

Նստածդ տեղը քունդ գուկա,
Հարսդ ու կինդ մոտիկ չեն գա,
Վայ ծերություն, ծերություն,
Հոգով մարմնով գերություն,
Ման ես գալիս տանդ մոտիկ,
Խելքդ չի գա քեզի մոտիկ,
Կապիկն է քեզնից խորոտիկ,
Վայ ծերություն, ծերություն,
Հողի տակը՝ քո փրկություն:

Գիդային եմ մեղքով ծնված,
Հողովդ ջրովդ սնված,
Մե քեզ եմ ճանչցե Աստված,
Աստված քեզ ինչ բան ասեմ,
Դարդերիս դարման անեմ,
Մեղքով ծնվա, մեղքով եկա,
մեղքով կերտամ,
Էհ, Աստված:

21(1288)

Անկնիկ մարդու թնդիրը հով է,
Լվացքը միշտ պաղ ջրով է,
Լվացք եմ անում կուզեկուզ,
Ջուրս պաղավ, դառավ խուս:

Թ. ՍԳԵՐԳԵՐ

1(1289). ԶՈՀՎԱԾ ՀԵՐՈՍԻ ԳՈՎՔԸ

Մնացն էր յինքը՝ կապիտան,
Կամանդ կաներ՝ դեպի յառաջ,
Չխնայելով ճիգ ու ջանք,
Մնաց Սիմոնյանն յիմացեք,
Հայ, Գետափ գյուղացի, յիմացեք:

Աշուղ Երվանդ, բավ է խոսես,
Սրեն գալուց դուն էլ կօգնես,
Դու թիկունքային հերոս ես,
Կարմիր բանակին օգնող ես,
Հայ, Կարմիր բանակին օգնող ես:

2(1290). ՈՂԲ ԾՆՈՂԻ

Ո՜վ արեգակ, ողջ երկրին լուսատու,
Տաքացրու հողաթումբըս այսուհետ,
Բազում եղբայրներով հավերժ կենսատու,
Չկորցնեք հիշատակըս այսուհետ:

Ջրեր ելման, գետեր հեռու պահեք ձեզ,
Թողեք հողակույտըս մնա իմ այսպես,
Չէ՞ որ մեկ ժամանակ նման էի ձեզ,
Օրերն անցան, էլ ետ չեմ գա այսուհետ:

Անպետք հողմեր վրես չհանեք ոռնոց,
Ձեր դեմ չի դիմանա պողպատե ամրոց,
Փոքր հիշատակիս եղեք օրորոց,
Մի խանգարեք հավերժ քունըս այսուհետ:

Մահն անխիղճ է և ոչ ոքի չի ներում,
Ամեն անգամ մայրը տղա չի բերում,
Երվանդ, ձեռքդ այդ օր տխուր էր գրում,
Մոր գուրգուրանք էլ չես տեսնի այսուհետ:

3(1291). ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինձ համար անչակերտ ես, Գեղեցիկ,
Ծնված օրից էս անվանի, Գեղեցիկ,
Ոչ թե միայն տեսքով էիր գեղեցիկ,
Եղար գործով ու քո վարքով գեղեցիկ:

Քաղցր էիր դու մեզ համար, Գեղեցիկ,
Սիրելի դարձար դու կեսրարենց,
Գեղեցիկ,
Քեզ ճանաչողին հոգի դառած, Գեղեցիկ,
Բոլոր հարազատներին անմոռաց ես,
Գեղեցիկ:

Դեռ երիտասարդ էիր՝ մեզնից հեռացար
Տղան նոր էր ծնվել՝ ինքդ մահացար,
Շատ կյանք ունեիր դու,
բայց շուտ մահացար,
Ու քո հարազատին անմոռաց դարձար:

Հարազատ, քեզ համար վշտում են բոլոր
Տղան, որ ծնեցար, կասեիր օրոր,
Ընտանիքդ այսօր մնացին մոլոր,
Իսկ Լալան էլ միշտ հիշում է իրեն մոր:

Մտածմունքդ՝ տղա չունեիր՝ ունեցար,
Շատ չարչարվեց բժիշկ,
անբուժելի դարձար,
Չկարողացան բուժել, ինքդ մահացար,
Անժամանակ մահին դու արժանացար:

Քեզ համար ես էլ սրտից եմ լացել,
Երբ որ քո մահդ հանկարծ իմացել,
Սրտիս կամեցածը քեզ չեմ մատուցել,
Այս հիշատակությունը քեզ եմ հատուցել:

Ժ. ՕՐՈՐՈՑԱՅԻՆՆԵՐ, ՄԱՆԿԱԽԱՂԱՑ ԵՐԳԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ, ՀԱՇՎԵՐԳԵՐ ԵՎ ԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1(1292). ՕՐՈՐՈՑԻ ՄՈՏ

Ո՞ւմն է, ո՞ւմն է իմ բալես,
Հարիկի սունն է բալես,
Սարի սմբուլն է բալես,
Հավքի բնբուլն է բալես,
Բաղի բլբուլն է բալես:

2(1293). ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳ (ՆԱՆԻԿ)

Նընը՛ր եմ ասում, նընը, բալես, նընը,
Նընը՛ր եմ ասում,
Անուշ քունը՛ս խանգարել եմ
օրորոցիդ տակին,
Նընը, բալես, նընը,
Նընը՛ր եմ ասում:

Քաղցը՛ր կաթով պայել, մեծացը՛ր եմ,
Նընիկ բալես, նընիկ, նընիկ, նընիկ,
Ախ, գիշերը քուն չունիմ, զորը՝ դադարում,
Նընը, նընը, բալես, նընը,
Նընը՛ր եմ ասում:

Դառել եմ անթև թռչուն՝ սարերի գլխուն,
Նընիկ, բալես, նընիկ, բալես,
Նընը՛ր եմ ասում:
Նընիկ էնեմ, քունը՛դ տանի,
Նընը, բալա ջան,
Անուշ գառնիկ ջան, նընիկ,
Նընիկ էնեմ Համլետիս,
Նընը՛ր անուշ բալա:

3(1294)

Նանիկ ըսեմ, քնցնեմ,
Շաքրով մեղրով կերցնեմ,
Պապիդ դոշին քնցնեմ...
Ա՜յիկ, ա՛յիկ,
Համով բալիկ:

4(1295)

Օրոր ասեմ, բալա՛ ջան,
Իմ սրտի ծաղի՛կ ջան,
Բալա ըսիմ, յանա քաշիմ,
Վա՛յ էնեմ, բալա՛ ջան, անո՛ւշ ջան,
Ինչքան ըսիմ, բալա՛ ջան
Չեմ կշտանա, Արտա՛կ ջան,
Ա՜խ, ո՞ւր երթամ,
Երթա՛մ, երթա՛մ Ալագյազ,
Ուտեմ ձյունդ, խմեմ ջուրդ,
Սրտիս մուռն ու մրմուռն էլ,
Ու գամ մոտդ, բալա՛ ջան:

5(1296)

Կապույտ երկինք, կանաչ սար,
Առնեմ, առնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ.
Ջա՛ն եմ ասել, ջան լսել,
Ծաղիկդ քաղեմ,
Ջուրդ խմեմ,
Պար գամ լանջիդ, Ալագյա՛զ:
Նայենք մեր շեն աշխարհին,
Ձյունդ բարձրիկ,
Ջուրդ քաղցրիկ:
Անուշ բալիկ,
Քունդ անուշ,
Նանիկ էրա,
Անուշ բալա:

6(1297)

Գովենք, գովենք, էլի ու՞մ գովենք,
Էսինչը նստած ծառի տակ,
Կնգան առած թևի տակ,
Թռի՛, թռի՛, իմ բալա:

7(1298)

Անձրև, անձրև, մի՛ք էկեք,
Պապը գնաց խիարի,
Խիար չկար, ծիտ կար,
Ծտի տակը խոտ կար,
Ծիտիկը թռավ գերանին,
Կանաչ խոտը բերանին:

8(1299)

Թռի՛, թռի՛, թռցնեմ,
Սև հավի միս կերցնեմ,
Պաբայիդ թևին հասցնեմ,
Մամայիդ գլխուն ...,
Քեռին գուկա տեսցնեմ,
Պաբան գուգա չեմ տեսցնե:

9(1300)

Կանգնել ես թախտին,
Կոխել ես թղթին,
Աշխարհը կթամայե քո բարի բախտին:
Թռի՛, թռի՛, այ բալա...

10(1301)

Ջան, ծաղիգ, ջան, ջան,
Թիլվիզու մըրգադ բերեք,
Ջան, ծաղիգ, ջան, ջան,
Ախպորըս կաստում ձևեք,
Ջան, ծաղիգ, ջան, ջան:

11(1302)

Թե խոսքով չեք կարող,
Նամակով գրեք,
Իմ դարդս շատ է,
Ինձ մի խոսցրեք:
Սարեր գնացեք,
Գնում եմ բալիս,
Մի ճամփա բացեք:
Ճամփես մի փակեք,
Կայնիմ քարին,
Կարոտել եմ ես իմ անուշ բալին:

12(1303). ՀԵՔԻԱԹ-ՀԵՔԻԱԹ

Հեքիաթ-հեքիաթ պապս,
Ղաշխա քուռակ տակս,
Թռնիմ-էրթամ Էրեվան,
Էրեվնա չալթուկ բերիմ,
Չալթուկը տամ հավերիս,
Հավերն ընձի հավկիտ ածեն,
Հավկիտները տամ չարչուն,
Չարչին ընձի դանակ տա,
Դանակը տամ չոբնին,
Չոբանն ընձի գառըմ տա,
Գառը կուտամ աստծուն,
Աստված ընձի ախպեր տա,
Ախպեր-ախպեր, ջան ախպեր,
Շաքար ու շարբաթ ախպեր,
Շաքար մաղեմ կեր, ախպեր:

13(1304)

Հեքիաթ, հեքիաթ պապս,
Քայլան քուռակ տակըս,
Ելնիմ երթամ Էրեվան,
Էրեվանից չալթուկ բերեմ:

14(1305). ԳԵԼՆ ԷԿԱՎ

Հասակավոր մարդը ցույց է տալիս մատները՝ սկսած բութ մատից ու ասում է.

Իսիկ կսե՝ գելն էկավ,
Ցուցամատը՝ յուրտի՞ց էկավ,
Միջին մատը՝ սարեն էկավ,
Մատնեմատը՝ ելեք, փախնինք,
Ճկութը՝ ճստիկ եմ, պստլիկ եմ,
Չամփա չիդեմ, յո՞ւր փախնիմ:

15(1306). ԷՇԸ ՋՈՒՐԸ ՏԱՐԵ՞Լ ԵՍ

Հասակավոր մարդը երեխի ականջը քաշում է ու ասում.

—Էշը ջուրը տարե՞լ ես:
—Տարել եմ:
—Տա՞ք էր, թե՞ պաղ:
—Տաք էր:
—Վա՛յ իշու բերանը վառավ, սառցու:
—Սառցուցի:
—Տաքցու, իշու բերանը սառավ:
—Տաքցուցի:
—Չեղավ... սառցու...

Այդպես մի քանի անգամ ականջը շարունակ քաշում է, մինչև որ ականջը բաց է թողնում:

16(1307)

Տիտոխիկ[190],
Տիտմանոխիկ,
Զուռնափոխիկ,
էփեմ գաթա,
Ու կուլուջ,
Եղը վրեն
Կպճպճա,
Ուտե էնի,
Խմե էնի ,
Ելնի էնի[191]:

17(1308)

Կրպոն խփեմ, կրպոն խաղամ,
Ակլե-տկլե, տինազ է,
Էծիկ-մեծիկ բզեզ է,
Աֆտ-ուֆտ նաղարա,
Հարի պապա, հաս արա,
Կապի կոճա, պինդ ու պլոճա,
Զռթ-փռթ[192]:

18(1309)

Ուկուլ-կուկուլ պիպազ է,
Սապա նաքե տուկազ է,
Ալա մուստա, ֆլու ֆստա[193]:

19(1310). ԾՈՒՅԼ ԱՇԱԿԵՐՏ

Ջան, ջան կիրակի,
Վա՛յ երկուշաբթի,
Նանի ջան, փորս կը ցավի,
Չեմ գնա դասի:

20(1311)

Այբ, բեն, գեմ,
Գլխուդ դմբեմ,
Գտալ չկա՝
Ապուր ուտեմ:

21(1312)

Այբ, ժե, ճե, ռա,
Նանե, անոթի մեռա:

22(1313)

Դմբո-դմբո, դուռը բաց,
Քարղան ապուր, էրկու հաց:

23(1314)

Դավա՛, դավա՛,
Մուկն անկաջ ունի,
Դու չունիս:

24(1315)

Ըլեզ-մլեզ
Ղանլճու խլեզ:

---

190 Մանկական խաղ. Մի քանի հոգի ձեռները դնում են իրար վրա և ոտանավոր ասելով՝ մեկ-մեկ վերցնում (ծանոթ. կազմողների):

191 Վերջին երեք տողի համար մատով ցույց է տալիս՝ ո՞վ (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի)

192 Իրանի հայերից մեզ հասած բանահյուսական նմուշը գործածվում է երեխաների խաղերի ժամանակ (ծանոթ, բանահավաք Պ. Բարսեղյանի):

193 Իրանի հայերից մեզ հասած բանահյուսական նմուշը գործածվում է երեխաների խաղերի ժամանակ (ծանոթ, բանահավաք Պ. Բարսեղյանի):

25(1316)

Թաքլալուլիճ,
Գունդ ու կծիկ,
Դուս թռի:

26(1317)

Թիզ ու կես
Գետնի բզեզ:

27(1318)

Իրի՛ս, իրի՛ս,
Սլիվոչնի իրիս,
Կավալեր կուպիտ,
Բարիշնա կուշիտ:

28(1319)

Խռով կատու
Մոմ ճրագու:

29(1320)

Կիկլի, խիար, ագուրեց,
Ալեքսանդր մալադեց:

30(1321)

Սատանա՛, սատանա,
Պոչիդ տակը բան՚մ կա,
Կեսը՝ ընձի, կեսը՝ քեզի:

31(1322)

Ռասպուտինի շապիկը կարեց
Նիկոլի կնիկը:

32(1323)

Մեկ, էրկուս՝ երկննաս,
Իրեք, չորս՝ չորնաս
Հինգ, վեց՝ վերանաս,
Օխտը, ութը՝ յո՛ւր կերթաս,
Ինը, տասը՝ տուն կերթամ:

33(1324)

—Մեկ, էրկու տասնըվեց,
—Էդ ո՞վ ասավ տասնըվեց,
—Ես ասացի տասնը վեց,
Չես հավատա, համբրե՝ տես:

34(1325)

Գնացի՝ գուքար,
Ըսեցի՝ չեկավ,
Էկավ, օր չեկավ,
Օր չգար, գուքար:

35(1326)

Աղջիկ, աղջիկ՝ շան պլոճիկ:

36(1327)

Աղվես, աղվես՝ հողում թաղվես:

37(1328)

Աշիկ՝ գըլոխդ ըսպիշկի յաշիկ:

38(1329)

Աքա-բուքա, էշը չամուռն յընկնի տքա:

39(1330)

Բարև ձեզ, էդ աղջիկը տվեք մեզ:

40(1331)

Գաղթականի լակոտ՝
Երեսը՝ աղտոտ:

41(1332)

Ինը՝ դառնաս թուրքի դինը:

42(1333)

Ծտի չափ ցանկություն,
Աքլորի չափ իրավունք:

43(1334)

Կացին՝ թուղթը բացին, վրեդ լացին:

44(1335)

Նորի պես նորանաս,
Լուսնի պես հնանաս:

45(1336)

Շաբաթ՝ լուսը գա վրադ:

46(1337)

Չեչոտ չաման՝ շան լակաման:

47(1338)

Ջահիլ տղեն տուն չունի,
Գիշերները քուն չունի:

48(1339)

Տղա, տղա՝ օսկե ջղա[194]:

49(1340)

Ուրբաթ՝ մուկը մտնի գուլպատ:

50(1341)

Ուրբաթ, շաբաթ, կիրակի,
Ուռմի տղեն տրաքի:

51(1342)

Փիլոս, էլի կուտես սիլոս:

52(1343)

Քաղքցի՝ փորիդ քացի:

53(1344)

Քսան՝ մկները բերանդ փսփսան:

54(1345)

Քուրդ՝ ականջդ բուրթ,
Դաստեմ քոքուրդ դնեմ հոգուտ:

55(1346)

Օսկին գնաց՝ թուջը մնաց,
Մարդը գնաց՝ բիջը մնաց:

[194] Օսկե ջղա - շահի թագ (բացատրությունը բանահավաք Պ. Բարսեղյանի):

III. ԱՍՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

1(1347). Աբուռ չկա, հայա չկա, հա տոջկա, հա տոջկա:

2(1348) Ագահ մարդու փորը կրնա կուշտ էղնի, հմը աչքը միշտ անոթի կեղնի:

3(1349) Ագռավը աղբ չը կերած՝ դուք կերաք:

4(1350) Ագռավը նըստե ծառին, սոխակների դարդը գուլա:

5(1351) Ազատվա՛վ, գլոխքար աղջիկ է:

6(1352) Ալյուր չի ճարվի՝ մաղ կառնին:

7(1353). Ածան հավը կչկչան կեղնի:

8(1354). Ակաս-մակաս, դու էիր պակաս:

9(1355). Ակռա ունիմ՝ կակալ չունիմ ջարդելու:

10(1356). Աղ չես, օր հալիս:

11(1357). Աղ ու հաց, սիրտդ՝ բաց:

12(1358). Աղջըկան փարի չըպիտի տալ, մարդու պիտի տալ:

13(1359). Աղջիկը գարի է, շուտ կհասնի:

14(1360). Աղջիկը ուրիշի տան ճրագ է:

15(1361). Աղջիկը օր կա, թևավոր թռչուն է, թևերն օր հասան, տնից կթռնի:

16(1362). Աղջիկն օր կա, չկիսված խնձոր է:

17(1363). Աղջկա գեշը չը տեսանք, հարսի՝ լավը:

18(1364). Աղջկան օր թողնես, զուռնաջու կառնի:

19(1365). Աղվեսն իր պոչին վկա բերեց:

20(1366). Աղուն աղի կսեմ, անլուն՝ անլի:

21(1367). Աղքատ մարդու սիրտն է լեն, հարուստինը՝ տեղը:

22(1368). Ամանաթը տերը գուզե:

23(1369). Ամանաթի հոգին ամուր է:

24(1370). Ամառ, ձմեռ մե խելքը ի՞նչ էնե:

25(1371). Ամեն բանի վերջն է գովելի:

26(1372). Ամեն բանի տեղը գիտես,
Ջաղչի ճամփեն չիդե՞ս:

27(1373). Ամեն գեղ մի ադաթ,
Ամեն կերակուր մի լազաթ:

28(1374). Ամեն թռչուն իր երամն ունի:

29(1375). Ամեն մարդ գիշերը իրա խելքի հետ կը քնի:

30(1376). Ամեն մարդ իր պատիվը իր ձեռը պիտի պահի:

31(1377). Ամեն մարդու տռածը իրա կըրընկին կը կըպնի:

32(1378). Ամեն մի խոսքը օսկի է[195]:

33(1379). Ամեն միրուքից մի մազ՝ կդառնա մի միրուք:

34(1380). Ամեն մորուք ունեցողի «օրհնա ի տեր» չեն ասի:

35(1381). Ամեն տռողի ռռ որ բամբակ կոխենք, Երևանում բամբակ չի մնա:

36(1382). Ամեն տռողի պեխ դեմ չեն տա:

37(1383). Ամենաէժան բանը մարդն է՝ էն էլ չի ճարվի:

38(1384). Ամեն ինչ ենպես է
խառնըվե իրար,
Որ շունը տիրոջը չի ճանչե:

39(1385). Ամեն կընկա զիբիլի աման իրան գյորա է:

[195] Այսինքն՝ խելացի մարդ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

40(1386). Ամմեն հիվանդանոց գընացող-եկող Գիտի, թե երկան պիտի ապրի:

41(1387). Ամմեն հիվընդության բուժումը մե ծաղկի՝մ տակ է պայ մընտած:

42(1388). Ամմեն մարդ աշխրհքիս երեսին, մե քյոշա-պուճախըմ ընկած՝ կընսպասե մայվան:

43(1389). Ամմեն մարդու հըմար իրա մունտառ թաշկինակը իրան հըմար մաքուր կերևա:

44(1390). Ամմեն շապխա ծածկող հըլը տղամարդ չէ:

45(1391). Ամմեն շապխի տակ տղամարդ չըկա:

46(1392). Ամմեն փափագող որ հասներ սերի, շատ ու շատ գործեր չէր մնա թերի:

47(1393). Ամռան փուշը ձմռանը նուշ է:

48(1394). Այբը թոռով կը բռնե:

49(1395). Անասունի չալը դսեն է, մարդունը՝ նեսեն:

50(1396). Անասունների պոչն էլ իրանց ղամշին է:

51(1397). Անգետ մարդու հետ ուբոռնի բիլամ չի կարելի երթալ:

52(1398). Անգետները խըժըռեցին գրագետներին:

53(1399). Անեծքը յիրա տեղը գիտե:

54(1400). Անծինը ծնեցնե կը:

55(1401). Անհախ կեղնի՝ առանց հացի չի եղնի:

56(1402). Անճաշ կատու՝մ էղար, մուկ՝մ բռնիր:

57(1403). Անշուն գեղ է մտել, առանց փեդի ման կուգա:

58(1404). Անպտուղ ծառին քար չեն քցի:

59(1405). Անջաղ իմ եղովս կը տապակվիմ:

60(1406). Անսխալ մարդ չի էղնի:

61(1407). Անսխալ մենակ Աստված է:

62(1408). Անսկամ կնկա շառից Աստված ազատե:

63(1409). Անտերի տերը Աստված է:

64(1410). Անտերին գելն է կերել, Տիրովին տերն է կերել:

65(1411). Անցավել գլուխդ մի՛ ցավցնե:

66(1412). Անցուկ մոռցուկ էղնի[196]:

67(1413). Անուն հանեցինք, Դամրչի սիրինք, Հիմի օխտը տարի Մուր շոռենք պիտի:

68(1414). Անուն հոր, աչքդ քոռ:

69(1415). Անունը կա, ամանում չկա:

70(1416). Անուշ լեզուն օձը ծակից կհանի:

71(1417). Աշելով որ մարդիկ բան սովրեյին, ղասպընոցի շները վաղուց ղասաբ էին դառե:

72(1418). Աշելով օր բան սորվեն, Շները թեզունց ղասաբ էին դառել:

73(1419). Աշխարհը դմակ է, մարդը՝ դանակ, թե կռնաս կտրի կեր:

74(1420). Աշխարհը մարդու համար հյուրանոց է:

75(1421). Աշխարհը մարդու համար փանջարա է, մարդ մե անգամ կաշե ու կերթա:

76(1422). Աշխարհը նառդվան է, մարդիկ բարձրանում ու իջնում են:

77(1423). Աշխարհը չալվով ծածկված չէ:

78(1424). Աշխարհի մալը աշխարհին կմնա:

79(1425). Աշխարհք մտանք ինչ տեսանք, Որ հողը մտնինք ինչ տեսնինք:

80(1426). Աշխարհք մտնելն ինչ է, Դուս գալն ինչ:

81(1427). Աշխարհք մտնելս որն է, Ելնելս՝ որը:

82(1428). Աշխարհքը վենձ է, մարդիկ են պըզտիկ:

83(1429). Աշխարհքը փուչ չէ, մարդիկ են փուչ:

84(1430). Աչքե տես, բերնե՝ կարոտ:

---

[196] Խոսքը քաշած չարչարանքների մասին է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

85(1431). Աչքը տեսածից կվախենա:

86(1432). Առանց «Հ»-ի հանճար է,
Առանց «Բ»-ի բանջար է:

87(1433). Առանց չալելու կը խաղա:

88(1434). Առյուծի սիրտ ունի[197]:

89(1435). Առվին ասացին.—Ինչու՞ ես գոռգոռում, ասաց՝ տակս քար ա:

90(1436). Ասա՝ ընկերդ վով է, ասեմ՝ վով ես դու:

91(1437). Ասածդ խոսքը, փութ՛մ մեղրով չի ուտվի:

92(1438). Ասեղ քցելու տեղ չկար:

93(1439). Ասեղ քցես գետին չի յնկնի:

94(1440). Ասողին էլ լսող է պետք:

95(1441). Աստծու բանը բոզուրմիշ չի էղնի:

96(1442). Աստծու պահած գառը գելը չի ուտե:

97(1443). Աստված ազատե քոռեն, թոփալեն, քաչալեն:

98(1444). Աստված էլ բեթարեն ազատե:

99(1445). Աստված ինչ որ մարդուն կուտա,
Մեռնելու վախտը նորից ետ կառնի:

100(1446). Աստված թող մահին
առողջություն տա,
Հացին էլ՝ էժանություն:

101(1447). Աստված լավին կը տանի:

102(1448). Աստված հալալին կուտա:

103(1449). Աստված մարդու ահն օր սրտից տանի, ամոթն էլ երեսից կերթա:

104(1450). Աստված շատ չհամարե:

105(1451). Աստված որ ուժ կիտա մարդուն, խիղճ լե հետը կիտա:

106(1452). Աստված սարը տեսե,
ձյունը դրել է:

107(1453). Աստված տվե՝ չէ խնայե:

108(1454). Աստված փլաֆը յում կուտա, իշտայը՝ յում:

109(1455). Աստված օղորմած է՝ խեղճը մարդու մոկոնածն է:

110(1456). Աստված օր ղառղառի ղըռղըռոցին լսե, վարդէվորին ձյուն կդնի:

111(1457). Աստվածածինը եկավ՝
մըտի բակը,
Սուրբ խաչը եկավ՝ մըտի ծակը:

112(1458). Աստվածածնան մտի բակը,
Սուրբ խեչն եկավ մտի ծակը:

113(1459). Աստըծու ամենավենձ սըխալը ինիկ է, որ անունը կա, հըմը ինքը չըկա:

114(1460). Ավել հոգին պատն է դրե, մատը ծակեն դուս է հանե:

115(1461). Ավելի թիքեն փոր չի ծակե:

116(1462). Ավլած տեղը գըտած փարեն բարաքյաթով է:

117(1463). Արդար ես, ուրեմն պիտի զարդարես:

118(1464). Արի ու էշը ցեխիցը հանե:

119(1465). Արհեստավորը մինչև կեսօր սոված կմնա:

120(1466). Արհեստը օսկե բիլազուկ է:

121(1467). Արտը՝ խախուդ, միանան՝ կարկուտ:

122(1468). Արևը քեզ բաշխեց:

123(1469). Արևին ասում է.—Դու դուրս մի գա, ես էմ դուրս գալու[198]:

124(1470). Բալքի բարին էս է:

125(1471). Բաղտդ մի՛ տա նամարդի ձեռը:

126(1472). Բան դի՝ փախի, հաց դի՝ արի[199]:

127(1473). Բանը մինչև չեփի, չի բըլթա:

128(1474). Բան՛մ ըսինք՝ առար անցար:

129(1475). Բանվորի ջաղացը ինչ ըսես կաղա:

130(1476). Բառբռությունը գլխո՛ւս վրա պիտի սորվիս:

131(1477). Բարեկամդ երեսիդ կաշե, դուշմանդ է՝ ոտներուդ.
յիստակ պահե ոտներդ:

---

[197] Նշանակում է՝ անվախ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[198] Այսինքն՝ շատ գեղեցիկ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[199] Այսինքն՝ ծույլ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

132(1478). Բարեկամիդ հետ կերուխում էրա, առևտուր մի էնե:

133(1479). Բերան չէ, ավետռան է:

134(1480). Բերան պատռող շատ կա, կարկըտող՝ չըկա:

135(1481). Բերանը մեշոկ չէ, որ կարես:

136(1482). Բերանը սրբեց՝ կայնավ քեանար:

137(1483). Բերանիդ համը ինչ գիտես, օր կնգատ համը գիտենաս[200]:

138(1484). Բերնե բերան՝ էղավ գերան:

139(1485). Բերնեդ խո քիրա չես յուզե:

140(1486). Բերնիդ գալածը մի դուս տա:

141(1487). Բերնիդ մեջ չիր չի թռչի[201]:

142(1488). Բերնով կերավ՝ քթեն էկավ:

143(1489). Բերնով յուզած, ոռով կերած:

144(1490). Բերնով ուզեմ, ինչո՞վ ուտեմ:

145(1491). Բոյը՝ երկան, խելքը՝ կարճ:

146(1492). Բոշան փաշա դառավ, ու շատերի արևը մարավ:

147(1493). Բոշի պես խոսքը ջեբն է:

148(1494). Բոռերը միշտ մեղրի վրա կը հավաքվին:

149(1495). Բուգը գլոխն է զարկե:

150(1496). Գազ՚մ չեղնի, մազ՚մ կեղնի:

151(1497). Գառը գիլուն պահ տվին:

152(1498). Գավի քով ինչքա՞ն կուժեր են փշրված:

153(1499). Գարի հաց՝ պարզերես:

154(1500). Գարնան գառն է գովական, աշնան՝ հավը:

155(1501). Գարունը հեքիաթ չեն պատմե:

156(1502). Գդլով հավաքածը, շերեփով դուս չեն տա:

157(1503). Գելերի մեջ ապրողը գիլու պես կոռնա:

158(1504). Գելը մտավ օչխարի մեջ, Ըսին՝ վա՛յ մեկի տիրոջը:

159(1505). Գելը մութ գիշեր է սիրում:

160(1506). Գելն անոթի չի կռնա քելե, Կսեն՝ տեսնես քանի օչխար է կերե:

161(1507). Գեղ գզե, գավառ մանե, անունը կեղնի Շատխաթունի:

162(1508). Գեղացի է՝ մարդ չէ:

163(1509). Գեղացի ըսածդ՝ քոքը կտռվի:

164(1510). Գեղացին ծիլ-ծիլ օսկի դառնա՝ ջեբդ մի՛ քցե:

165(1511). Գեղացին որ սապոն դառնա, ոռիս բիլամ չեմ քըսե:

166(1512). Գեղացին օր դռանդ ախը բռնե, կտռե ու դուս քցե:

167(1513). Գեղացին օր էշ չեղնիր, իշու գինը հազար մանեթ կեղնիր:

168(1514). Գեղացին օր մանուշակ էղնի, ոռդ մի սրբե:

169(1515). Գեղացին օր քաղաք գա, թանով ապուրը չանգլով կուտե:

170(1516). Գեղացու երեխեն իրա քաքի հետ խաղալով էլ կը մեծնա:

171(1517). Գեղացուն որ ղազանը քցես, ժամերով եփես, անկճները էլի հում կը մնա:

172(1518). Գեղը որ կայնի, գերան կկոտրի:

173(1519). Գեշ կնիկ ունենալը լավ է՝ ապահով կեղնիս:

174(1520). Գեշ կովի պես կաթը կուտա, կուտա, յետև ոտքով զարկե թափե կը:

175(1521). Գեշ յարեն գեշ մարդու վրեն կեղնի:

176(1522). Գետինը յանկաջ ունի:

177(1523). Գետնացողին, եզան ուսին, մեր քըրտնքին:

178(1524). Գերեզմընների «աչքը» միշտ գեղերի ու քաղքըների ճամփին է:

179(1525). Գիլազ ուտողը գիլասի կուտ պիտի քաքե:

180(1526). Գիլու աչքը միշտ ոչխըրի դըմակին է:

---

[200] Այսինքն՝ անճաշակ ես (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[201] Այսինքն՝ գաղտնապահ չես (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

181(1527). Գիլու բնի մեջ օսկոռ չի մնա:

182(1528). Գիլու գլխին ավետռան կարդացին, ասաց՝ շուտ էրեք, օչխարը փախավ:

183(1529). Գիլու ձագը տամազլղ չի էղնի:

184(1530). Գիլուց վախեցողը անտառ չի մտնի:

185(1531). Գիշերվա կերածը կորած է:

186(1532). Գիշերվա սաբռը խեր է:

187(1533). Գիտե, թե մեջ լոշին հալվա կա:

188(1534). Գիտունին գերի էղի, անգետին սիրելի մի էղնի:

189(1535). Գիտունին մեկ ըսա, անգետին՝ հազար ու մեկ:

190(1536). Գիր ու ղալամին տված փարեն կորած չէ:

191(1537). Գիրք չըսիրողը գրագետ մարդու ղադրը չի հասկնա:

192(1538). Գլխեդ վեր մի խոսի:

193(1539). Գլխիդ վրա լաչակ է:

194(1540). Գլխիս մազի չափ [այս կամ այն] բանն եմ էրել:

195(1541). Գլխներս դարձավ ամպի տակ մտած արև:

196(1542). Գլոխ էղած տեղը ոտքն ի՞նչ էնե:

197(1543). Գլոխ քերելու ժամանակ չունիմ:

198(1544). Գլորավ խուփը,
Գտավ պուտուկը:

199(1545). Գլորվե խուփ,
գտե պուտուկ: (տրբ)

200(1546). Գլուխ ունի, ոռ չունի:

201(1547). Գյուղ կայնի, գերան կկոտրի:

202(1548). Գյումրեցի երեխեն, քուֆուրը կը սովրի մոր փորի մեջ:

203(1549). Գյումրեցու վրեն դանակ չի բանի:

204(1550). Գյումրեցուն հարցրին. —
Եփ է յաշխրքի վերջը:
Ըսավ. — Կնիկս օր մեռավ,
յաշխրքի վերջն է:

205(1551). Գնա մեռի, արի սիրեմ:

206(1552). Գնաց հասավ հազար տարվա մեռելներին

207(1553). Գողը գողից գողացավ,
Աստված՝ վերև զարմացավ:

208(1554). Գող կատվի մանգզիլը մինչև մարագն է:

209(1555). Գող, սիրտը՝ դող:

210(1556). Գող ու բոզին 40 օր է[202]:

211(1557). Գողը մութ գիշեր է սիրում:

212(1558). Գողի, բոզի օրը քառսուն է: (տրբ)

213(1559). Գողի ու բոզի մանգզիլը քառսուն օր է:

214(1560). Գողն օր տնից էղնի,
Եզն երթկից դուրս կելնի:

215(1561). Գոմշի կաշի՝ ոչ կհալի, ոչ կմաշի[203]:

216(1562). Գովե, հայր Աբրահամի գոգն է դրե:

217(1563). Գործը վռազգլխու պիտի էնել:

218(1564). Գորտի երեսին թքում են,
Ըսում է՝ թոն գուկա:

219(1565). Գրազ եկողներից մեկն ու մեկը սայլուկ կեղնի:

220(1566). Գրողը մտավ տուն, բիթուքը փեսի երեսին աշին:

221(1567). Դաբաղը սիրած կաշին գետնե գետին կը զարկե:

222(1568). Դաբաղից փրկություն կա,
Գեշ մարդկանցից չըկա:

223(1569). Դադարկ կարասը զիլ ձեն կհանե:

224(1570). Դամրճու հետ օրըմ հաց ուտողը շաբաթըմ մուր կը շռե:

225(1571). Դամրչու տունը խաճրկաթ չի գտնվի:

226(1572). Դանակ զարկես՝ յարուն չի գա:

227(1573). Դանակ օր խփես, արյուն չի գա: (տրբ)

228(1574). Դանակը միշտ փափուկ տեղ կը փնտրե:

---

[202] Այսինքն՝ շուտով կբացահայտվի (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[203] Ասվում է անամոթ մարդու համար (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

229(1575). Դանակը օսկորին հասավ:

230(1576). Դանակը օսկռին է հասե: (տրբ)

231(1577). Դառավ Բրոյի ջաղացը:

232(1578). Դառավ հայոց հարցը:

233(1579). Դառավ Հոռոմի տեռը:

234(1580). Դառավ Շատվորենց կալը:

235(1581). Դառավ Տտվզենց քիֆտեն:

236(1582). Դառդակ կռութը գլուխը բանձր է պահում:

237(1583). Դառը դադիս, դառդակ նստիս:

238(1584). Դաստե՛մ խոտի համար իշուն քեռի չեն ըսե:

239(1585). Դավեն հեծել, կուզեկուզ ման կուգա:

240(1586). Դավեն փալանով կուլ կուտա:

241(1587). Դավի խաղը կարմնջի վրա կուգա:

242(1588). Դավի պոչի պես ոչ կը երկնա, ոչ կը կարճնա:

243(1589). Դավին ըսին. — Շլինքդ ծուռ է, ըսավ. — Որտեղս է դյուզ, օր շլինքս դուզ էղնի:

244(1590). Դավին ըսին. — Վիզդ ծուռ է: Ըսավ. — Ինչս է դուզ, օր վիզս ծուռ չեղնի: (տրբ)

245(1591). Դարդ կա՝ գուկա կանցնի,
Դարդ կա՝ վառե կանցնի:

246(1592). Դարդ որ չունենամ, դու հերիք ես:

247(1593). Դարդ՝ վըր դարդի,
Դոդոշ լե պարկե աղջիկ է բերել[204]:

248(1594). Դեղի համար ման գայիր՝ չէիր գտնի:

249(1595). Դեռ հացին «փափա» է ասում[205]:

250(1596). Դեռ մինչև օրս չի ասել, որ աչքիդ վերևը ունք կա:

251(1597). Դիզ խոսողի ձին թամբած պիտի էղնի:

252(1598). Դիլիմով ձմերուկ ուտողը մեննակ անգըճները կշիրոտե:

253(1599). Դիշմանիս ռաստ չը բերե:

254(1600). Դիպլոմավոր երեխեն լուլկից է բյալու:

255(1601). Դմբլ է՝ դավուլ է,
Կարոյին ղաբուլ է:

256(1602). Դոխդ եղնիմ,
Գոգըդ եղնիմ:

257(1603). Դրկցի հարսը սիրուն կերևա:

258(1604). Դրկցի հարսի ոռը վենձ կերևա:

259(1605). Դու էրկու կով մի անգամեն կը կթես:

260(1606). Դու ինչ գուզես ըսա,
Էնիկ յիրա էշը կը քշե:

261(1607). Դուզ խոսքը իշուն կըսեն:

262(1608). Դուռդ փակ պահե, օր դրկցիդ գող չը բռնես:

263(1609). Դուռը՝ կատու, նեսը՝ ասլան:

264(1610). Դուռը՝ փակող, հաց՝ ուտող:

265(1611). Դուս գելնիս՝ կրակ, նես մտնիս՝ կրակ:

266(1612). Դուսը՝ կատու, տունը՝ ասլան: (տրբ)

267(1613). Եբ որ ապրելու մեջ նըպատակ չըկա, գուզես հազար տարի ապրի, հաշիվը մեկ է:

268(1614). Եբ օր տանը մեծ չի լինում, նրա տեղը մի մեծ քոթուկ են դնում:

269(1615). Եզը կը բանցոցնեն, տակը հորթ ման գուկան:

270(1616). Եզն օր յընկնի, դանկվորը կշատանա:

271(1617). Եթե բերանդ ծուռ է, տուր դարբինին թող դզի:

272(1618). Եթե դու Շարայի որկորն ունես, մենք Շիրակա ամբարները չունենք:

273(1619). Եղը քաքի վըրա էլ լըցնես կուտվի:

274(1620). Եղն էժան է, ճմուռը՝ թանգ:

275(1621). Ես՝ աղա, դուն՝ աղա,
Մեր աղունը վո՞վ աղա:

---

[204] Բանասացը մշեցի է:

[205] Այսինքն՝ երեխա է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

276(1622). Ես էդոր հում վախտը գիտեի, հիմի էփեր է, չիդեմ:

277(1623). Ես ընդուր կաշին դաբախանից եմ ճանճնում:

278(1624). Ես ընդուր պոպկած ծառը կհանեմ:

279(1625). Ես ընդուր հետ մատաղ ուտելու չեմ էրթա:

280(1626). Ես իմ խաչի զորությունը գիտեմ:

281(1627). Ես կսեմ, ես կը լսեմ:

282(1628). Ես տանձ կսեմ, դու գանձ կը հասկնաս:

283(1629). Ես քեզ ջուրը կտանեմ, ծառավ կբերեմ:

284(1630). Ես օր բախտավոր էղնեի, մորես աղջիկ կեղնեի:

285(1631). Երբեմն էիր փիլոն պատվական, Յետև դառար ոռի կարկատան:

286(1632). Երեխեն՝ փորես, հացը՝ հորես:

287(1633). Երեկ մեռներ, յէսօր էրգու օր կէղներ[206]:

288(1634). Երես չէ, պադոշ է[207]:

289(1635). Երես տվինք, աստառ էլ ուզեց:

290(1636). Երես տվինք, աստառ գուզե: (տրբ)

291(1637). Երեսի ապուռը գնացել է:

292(1638). Երեսին աշողը կը կշտանա:

293(1639). Երկաթը տաք-տաք կը ծեծեն:

294(1640). Էրկան օրեր՝ լեն-լեն փորեր:

295(1641). Երկնքեն փնտրածս գետնին գտա:

296(1642). Երկու իշու չորս գարի չի կոնա բաժնե:

297(1643). Երկուսն էլ մի սանդրի կտավ են:

298(1644). Երտիկ ցանողն էլ է մեռե:

299(1645). Երուսաղեմ էլ շուն կա:

300(1646). Եփ օր ապրի, եփը գա:

301(1647). Զանգին մեռել է՝ օղորմի հոգուն:

302(1648). Զատիկը առանց հավկթի չի էղնի:

303(1649). Զատկից յետև կարմիր հավկիթը էղած-չեղած մե հաշիվ է:

304(1650). Զատկվա հավկթի պես քեզի յառկիս զարկի:

305(1651). Զարը բիլամ անգաճ ունի, կընիկը չունի:

306(1652). Զարը շան ոսկոր չէ, կընկա ոսկոր է:

307(1653). Զիանի կեսեն եդ դառնալը խեր է:

308(1654). Զոքանջը որ լավ բան եղներ, գոնե մե հատըմ Աստվածն էլ կունենար:

309(1655). Զոքանջն էլ մեր է չէ, որ տըղոնցը աղջիկ կուտա:

310(1656). Զուլումից զուլումը լիրբ կնիկն է:

311(1657). Էդ թիքեն յամեն յառկի բան չէ:

312(1658). Էդիկ օր կա, մատի փուշ է, հանես՝ կը լավնա, թողնես՝ կը թարախոտի:

313(1659). Էդոր ջուրը հլը դարիվեր է:

314(1660). Էժան մսի շուրվեն շունը չի ուտի:

315(1661). Էլի կարպեֆ ունիս թափ տալու:

316(1662). Էլի կորկոֆ ունիս ծեծելու:

317(1663). Էծը մտավ բոստանը, Քաքս կերավ Կոստանը:

318(1664). Էծն էլ միրուք ունի, խո տերտեր չէ:

319(1665). Էղավ բուռ՚մ կրակ, յընկավ ջանս:

320(1666). Էղավ, եղն էլ վրեն պաղավ:

321(1667). Էման լավություն էրա, օր շաբիկդ չիմանա:

322(1668). Էման կէնեմ, օր շունը ձեռնեն հաց չառնի:

323(1669). Էն գնալն էր, օր գնաց:

324(1670). Էն վաղ էր, որ էշը կաղ էր:

325(1671). Էնողին չի մնա:

326(1672). Էնոր ասեղ ուտողը մախաթ կը ք...

---

[206] Ասվում է մարդուն չուզենալու մտքով (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[207] Այսինքն՝ անամոթ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

327(1673). Էնպես բան կսե, օր էշը ախոռում կը զռռա:

328(1674). Էնպես խոսք կա, օր փութ՚մ մեղրով չի ուտվի:

329(1675). Էնպես կէնեմ, որ շունը ձեռնեդ հաց չի առնի:

330(1676). Էնպես վախեցա, օր թուքը բերնիս մեջ չորցավ:

331(1677). Էնքան աղքատ է, օր թնդիր քցես վառես՝ շորի հոտ չի յելնի:

332(1678). Էնքան է խմե, օր գոմշին «օրհնա ի տեր» կսե:

333(1679). Էնքան է խմե, օր իշուն քեռի կսե:

334(1680). Էնքան է խմե, օր շներուն կտի-կտի կենե:

335(1681). Էնքան ըսէցի, օր երեսիս աբուռը թափվեց:

336(1682). Էնքան ըսէցի, օր երեսիս կաշին մաշեց:

337(1683). Էնքան ըսէցի, օր երեսիս մեռոնը գնաց:

338(1684). Էնքան համով է, օր մատներդ հետը կուտես:

339(1685). Էնքան սիրուն է, օր յերեսը յետևեն կերևա:

340(1686). Էնքան ցուրդ է, օր շուն կը սատկի:

341(1687). էնքան քերիր, օր շինողը միջեն հանիր:

342(1688). Էշ էկել է, հայվան կերթա:

343(1689). Էշ կերել է, էշ մենձցե:

344(1690). Էշ մի սատկի, գարուն կգա:

345(1691). Էշերին կը նալեն, անբախտ մարդկանց կը դաղեն:

346(1692). Էշը դատի, ձին ուտե:

347(1693). Էշը իշու քովը օր կապես, յա զռռալը կը սովրի, յա՝ ֆռռալը:

348(1694). Էշը իշու քովը օր կապես, յա «չուն» կը սորվի, յա «խուն»:

349(1695). Էշը կերավ, պոչին խռովավ:

350(1696). Էշը չէ, պոչն է:

351(1697). Էշը չի ուտվի, հմա նրա կաշու գինը կուտվի:

352(1698). Էշը օր կը զռռա, պլորներից է:

353(1699). Էշից առաջ ախոռ մի մըտնի:

354(1700). Էշն ինչ գիտե՝ նուշն ինչ է:

355(1701). Էս դավեն մի օր էլ ձեր դուռը կչոքի:

356(1702). Էս խմորը հլը շատ ջուր կը վերցնե:

357(1703). Էսօր մարդն է հողի վըրա, Էգուց հողն է մարդու վըրա:

358(1704). Էս պատին էս ծեփը հերիք է:

359(1705). Էս օրվա գործը էգվան մի թող:

360(1706). Էրածդ էրած չէ:

361(1707). Էրեխեն անուշ օրթունք է:

362(1708). Էրեխին բանի դիր, դու էլ ետևից գնա:

363(1709). Էրեխին բանի դիր՝ հետը էրա:

364(1710). Էրեկ՝ մեկ, էսօր՝ էրկուս:

365(1711). Էրթաս մեշեն, սորվիս փեշեն:

366(1712). Էրկու էրնեկ մի տեղ՚մ չի էղնի:

367(1713). Էրկու ոտքով փորին չեն էլնի:

368(1714). Էրկու ջուր հավասար է մե հացի՚մ:

369(1715). Էրկու վախը, մի մահ է:

370(1716). Էփածդ ճաշեն օղորմածիկի հոտը գուկա:

371(1717). Ընձեն էղածը, ինձի լող է սովրեցնում:

372(1718). Ընձնից յետև շատ ցամաքեն ծով ու գետեր:

373(1719). Ընծի տես՝ քեզի օղորմի:

374(1720). Ըսա՝ դուշմանդ վով է, ըսեմ, թե դու վով ես:

375(1721). Ըսա՛, մի խանձրմի:

376(1722). Ըսա՝ ջան, լսե ջան:

377(1723). Ըսա՝ վով է յընկերդ, ըսեմ՝ վով ես դու:

378(1724). Ըսածդ՝ բարի, կերածդ՝ գարի:

379(1725). Ըսածդ ըսած չէ:

380(1726). Ըսածս ըսած է:

381(1727). Ըսի, օր յիմանաս, չ'սի, օր խլանաս:

382(1728). Թազա ավելը լավ կավլե:

383(1729). Թազա հավ է դառել, թազա հավկիթ է ածըմ:

384(1730). Թակարդ դնողը ինքը մեջը կընգնի:

385(1731). Թաղածդ մեռելը յետևեդ կը վազզե:

386(1732). Թամամ խոսքը իշուն կսեն:

387(1733). Թամայ արեցին մալին, աղջկան տվին հայվանին:

388(1734). Թամբալ մարդու գողընքի մեջ սունկ բիլամ կը բուսնի:

389(1735). Թամբլությունեն իշուն քեռի կսե:

390(1736). Թան էլ չէ՝ բրդած մածուն:

391(1737). Թանգեն էժանը չկա:

392(1738). Թանի ճանճի պես ամեն բանի մեջ է յընկնում:

393(1739). Թաց տեղ չի պարկի:

394(1740). Թաց տեղ պարկող չի: (տրբ.)

395(1741). Թաց փեդը կմխա:

396(1742). Թացն էլ չորի տեղ կը վառեն:

397(1743). Թե էրել ես, աշե,
Թե՝ չէ, յորղանը գլխուդ քաշե:

398(1744). Թե խաչը իմս է,
զորությունը ես գիտեմ:

399(1745). Թե որ ունիս լավ կնիկ,
էլ ինչ ունիս հարսնտուն,
Թե որ ունիս չար կնիկ,
Ինչ բան ունիս մեռելտուն:

400(1746). Թե սրտումդ տեղ էղնի,
Պուլիկումդ էլ եղ կէղնի:

401(1747). Թըխ բերանսի եղնի յարա,
Մինակ ջեբսի մըտնի փարա:

402(1748). Թընդիր չեմ ընկե, որ ոտքերըս վառի:

403(1749). Թթու թան չի,
Ամեն մարդու բան չի:

404(1750). Թղթի մե երեսը մի՛ կարդա:

405(1751). Թնդիր մի՛ գովե:

406(1752). Թող ըսեն՝ գեշ է, չսեն թե՝ էշ է:

407(1753). Թող սև էղնի, բոլ էղնի:

408(1754). Թողնեն կը՞, օր տղեն հորը քաշե:

409(1755). Թոքերըս լըրբութենից իջավ չոքերըս:

410(1756). Թսեմ ես, բամբեմ քեզ:

411(1757). Թրի կտրածը կլավնա,
հմա լեզվի կտրածը չի լավնա:

412(1758). Թույլ մարդիկ ավելի վտանգավոր են, քան ուժեղները:

413(1759). Թուրը որ բերանը կոխես,
էլի չի վախենա:

414(1760). Թուրքը՝ անիծած, խոսքը՝ օրհնած:

415(1761). Թքածդ մի՛ լիզե:

416(1762). Թքե բուռս, զարկեմ ճակատդ:

417(1763). Ժամ քանդելը ավելի լավ է, քանց մե ագսիգատակի'մ[208] անունը կոտռելը:

418(1764). Ժամանակը օսկի է:

419(1765). Ժամեն ես գուկամ,
«Օղորմի Աստված» դու՞ կսես:

420(1766). Ժամից ես եմ գալմ, «ողորմի աստված»-ն յինքն է ըսում: (տրբ)

421(1767). Ժնգռտան մարդուց փախի:

422(1768). Իդոր աշե, հլը ոռես նոր է ելե,
յնձի լող խրատ կուտա:

423(1769). Իդոր ոռի վրա փլաֆ կուտվի:

424(1770). Իդոր փորին օր ջաղչի քար դնես,
հոր խերի մե հատ'մ չի տռե:

425(1771). Իդորեն Պողոս-Պետրոս դուս չի գա:

426(1772). Իզն ու թոզը չերևաց:

427(1773). Իծու ոռը օր քոր գա, չոբնի դագյանակին կքսե:

428(1774). Ինադ էրավ էլերուն,
Պոչը տվեց գելերուն:

429(1775). Ինգլիզու տանկի պես կտռեց:

430(1776). Ինոը ամիս ինչղ դիմացար:

---

[208] Ագսիգատակ – անարատ, բայց տանը մնացած անբախտ աղջիկ (ծանոթ. բանահավաք Պ.Բարսեղյանի):

431(1777). Ինչ է, աշխարհը չալվո՞վ է ծածկված:

432(1778). Ինչ է, խանչալիդ քարն յընկամ՞վ:

433(1779). Ինչ է, խասդ խավարե՞ց:

434(1780). Ինչ է քաշե ոտներս էս ախմախ գլխուս ձեռքը:

435(1781). Ինչ էնեմ յաշխրքի մալը, եփոր ոտնըմանս փոքր է:

436(1782). Ինչ էնեմ օսկի լագանը, օր մեջը յարուն պիտի թքեմ:

437(1783). Ինչ կէնեմ աշխարհքի մալը, Օր սա է իմ հալը:

438(1784). Ինչ կենեմ ճերմակ այվան, Օր միջի քնողն է հայվան:

439(1785). Ինչ, մանած ունի՞ս ներկելու:

440(1786). Ինչ տանձ էղնի, օր պոչ չունենա:

441(1787). Ինչ օր մարդ յիրա գլխին կենե, դիշմանը չի էնե:

442(1788). Ինչ օր սրտումն է, էն էլ լեզվի ծերին է[209]:

443(1789). Ինչ օր ցանես, էն կը հնձես:

444(1790). Ինչղ օր աստված գորտին կաշե, էման էլ գորտը աստըծուն կաշե:

445(1791). Ինչքան հագնիս ղումաշ ու խաս, Էլի կսեն ծռտոտի հարս:

446(1792). Ինչքան մարդիկ կան, որ սաղ կյանքը անտեր-անտիրական կրիայի պես մեջքի վըրա ընկած են:

447(1793). Ինչքան օր գետնի էրեսն է, Օխտը էնքան էլ գետնի տակն է:

448(1794). Ինչքան օր գետնի յերեսն է, Էդքան էլ գետնի տակն է:

449(1795). Ինչքանով օր առել եմ, էդքանով էլ կը ծախեմ:

450(1796). Ինքը՝ անիծած, կարգը՝ օրհնած:

451(1797). Ինքը կը չալե, ինքը կը խաղա:

452(1798). Ինքը յիրա շքեն կը վախենա:

453(1799). Ինքը չկա թիզ ու կես, արարմունքը՝ գազ ու կես:

454(1800). Ինքը տիկ է դառե, յուրիշին բերան է շինե:

455(1801). Ինքը տիկ է դառել, ուրիշին բերան է էրել: (տրբ)

456(1802). Իշավարի կուտե, ձիավարի կը խմե:

457(1803). Իշտայիդ պռաս ջարդե:

458(1804). Իշու բեռը քանի ծանդր էղնի, էնքան չափուկ կվազե:

459(1805). Իշու զըռռոցով որ գարուն գար, իշու գինը թանկ կեղներ:

460(1806). Իշու վ... մախատ կոխել չ'իդե:

461(1807). Իշու քուռակը օր մենձնա, էշ կը դառնա:

462(1808). Իշուն աշե, քար կը քաշե:

463(1809). Իշուն ըսին. — Աչքդ լուս, քեզի քուռակ էղավ, Ըսավ. — Ինչ էնեմ, գարին պդի առաջիցս առնի, խո բեռը շալկես չի՞ առնի:

464(1810). Իշուն օրհնա տեր կսե:

465(1811). Իսանը թող գոտուտեն ունենա, Մենձընալ չունենա:

466(1812). Իսանը նեղ օրի շատ կը դիմանա, լեն օրի չի դիմանա:

467(1813). Իսպես երեխից՝ իսպես հեր:

468(1814). Իրա տեռը, ուրիշի ոռն է կոխում[210]:

469(1815). Լախանեն էլ է ճերմակ, հըմը քոքը ղայիմ է:

470(1816). Լամպի շուշա խո չէ՞:

471(1817). Լավ եզը շատ ավելի լավ է, քան թամբալ ու անպետք մարդը:

472(1818). Լավ է գիտունին՝ գերի, Քանց անգետին՝ սիրելի:

473(1819). Լավ է լինել անգետ, քան՝ գրագետ:

474(1820). Լավ է միամիտ գեղացին, Քանց չըոփըսըզ առևտրականը:

475(1821). Լավ է ճընճուղը բռումըս, Քան բազեն՝ օդում:

---

[209] Այսինքն՝ բացբերան է (ծանոթ.բանահավաք Հ. Օհանյանի):

[210] Այսինքն՝ իրա արածը գցում է ուրիշի վրա (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

476(1822). Լավ է մարդ շուն եղնի,
Քանց տան պզտիկը:

477(1823). Լավ է շունը մարդուն խածե,
Քան մունտառ մարդը:

478(1824). Լավ է, վատ է՝ մերն է, ուրիշն
իրան լավը մեզի չի տա:

479(1825). Լավ կնիկը տուն կը շինե, գեշ
կնիկը տուն կը քանդե:

480(1826). Լավ հարևանից լավը չըկա,
Վատ հարևանից վատը չըկա:

481(1827). Լավ յընկերը լավ յարա կը բանա:

482(1828). Լավ շորը փեդին էլ օր հագցնես,
սիրուն կեղնի:

483(1829). Լավ պարելու հըմար պըլորները
պիտ հանել դնել մե թարաֆ:

484(1830). Լավ օտարը, հազար անգամ վատ
բարեկամից լավ է:

485(1831). Լավաշ, լավաշ, հարուր լավաշ,
Նեղեն ելանք յավաշ, յավաշ:

486(1832). Լավություն էնելը, փոխհաց է:

487(1833). Լավություն էրա, թեկուզ ջուրը
քից:

488(1834). Լավություն էրա ջուրը քցե, թող
տանի:

489(1835). Լավություն էրա ջուրը գցե, թե
շիտակ մտքով ես էրել, չի կորի:

490(1836). Լավությունը երկու կողմից կեղնի:

491(1837). Լենկ-Թեմուրը ծնվել էր լենկ,
Ու իր գործերն էին նենգ:

492(1838). Լեզվով բան չես անի:

493(1839). Լեզուն խանչալից սուր է:

494(1840). Լեզուն մարդու թշնամին է:

495(1841). Լիզվի խածածը տեյ գերեզման
կերթա:

496(1842). Լիզվի տակը օսկոռ չկա, օր սուտ
խոսելուց ծակե:

497(1843). Լիզվիդ չափ ու չվան դիր:

498(1844). Լիզուդ քեզի համար պահե:

499(1845). Լիզուդ օր չեղնի, ղառղոները
յաշկերդ կը հանեն:

500(1846). Լիզուն մարդու գլոխը թեզ կը
կտռե, քանց ղազախի թուրը:

501(1847). Լոլո, լոլո, քրդի տղին էլ լոլո[211]:

502(1848). Լվացքի պես բախտ ունեցար:

503(1849). Լվացքի տոպրակը միշտ լիքն է:

504(1850). Լվից եղ կհանի:

505(1851). Լուն ծռտե՝ խաբար կուտա:

506(1852). Լուն թստե՝ խաբար կուտա: (տրբ)

507(1853). Լուն չայրից յընկնի, հազար կտոր
կեղնի:

508(1854). Լուսնյակի լույսը մարդկանց չի
ջերմացնե:

509(1855). Լֆիկ մարդը հեչ մե տեղ՚մ երես
չունի:

510(1856). Խափվա դամրչի՚մ սիրեցի,
Օխտը տարի մուր շռեցի:

511(1857). Խաղ շատ գիտեմ, համա ձենս չի
գալիս:

512(1858). Խանչլիդ քարերը խո չընկանՃ:

513(1859). Խաչը տերը զորավոր կէնե:

514(1860). Խելըռների բախտը ուլիցն է
թաբլած:

515(1861). Խելոք գառը օխտը մեր է ծծել:

516(1862). Խելոք մարդու վրա ձի քշողը,
ինքը ձիուց վար կընկնի:

517(1863). Խելոքին մեկ ըսա,
Խելառին՝ հազար ու մեկ:

518(1864). Խելք բաժանելիս նա քնած է եղել:

519(1865). Խելք բաժնելու վախտը յոՃրտեղ
էիր:

520(1866). Խելք խելքի վրա թաղավուրդ
ունի:

521(1867). Խելք թոփ էրա՝ գարուն յելնիս:

522(1868). Խելք ունիս, քեզի համար պահե:

523(1869). Խելքե՝ թեթև, ուտքե՝ չափուկ:

524(1870). Խելքը բոյի մեջ չի:

525(1871). Խելքը խելոքներին ավելի է
պետք, քան սարսաղներին:

526(1872). Խելքս խո հացի հետ չեՃմ կերե:

---

[211] Այսինքն՝ գնա միամիտ մարդ գտիր, խաբի, ինձ խաբել չես կարող (ծանոթ. կազմողների):

527(1873). Խեղդվող մարդը ձեռքը խոտերին է քցում:

528(1874). Խիարը ծուռ է բուսնե:

529(1875). Խիղճը քյասիբ մարդկանց հարստությունն է:

530(1876). Խլի ոռին դավուլ-զուռնա կը չալեն, գիտե թե դմդմբոց գուկա:

531(1877). Խմելը էնքա՜ն լավ բան է, մարդ օր խմե, գիտե թե դեմի սարերը յիրանն են:

532(1878). Խմիչքը սեղանի թագավորն է:

533(1879). Խմորը լավ թթվել է, ինչդ կերևա թխելու վախտ է:

534(1880). Խնձորը ծառից հեռու չի ընկնի:

535(1881). Խնձորի համը կարմրության մեջ չի:

536(1882). Խոզի գլուխը խալու վրա չի մնա:

537(1883). Խոսքդ փութ՚մ մեղրով չի ուտվի:

538(1884). Խոսքը՝ մեծին, ջուրը՝ պզտկին:

539(1885). Խոսքը՝ մենձին, հացը՝ փոքրին:

540(1886). Խոսքերս մեր մեջը մնա:

541(1887). Խոսքն օր կա, թռչուն է,
Բերնից օր թռավ, էլ չի բռնվի:

542(1888). Խոսքով կերթան Մոսկով:

543(1889). Խոսքս՝ խոսք է:

544(1890). Խորամանկ աղվեսը երկու ոտքով է տուզաղ ընկնում:

545(1891). Խորոզի խորոզլամիշ եղնելը հավերի շատ եղնելուց է:

546(1892). Խևը գնաց հարսնքտուն,
Ըսավ. — Էստեղ լավ է, քանց մեր տուն:

547(1893). Խևին խրատ, սևին սապոն ինչ կէնե:

548(1894). Ծակ հլունը գետնին չի մնա:

549(1895). Ծակաչք մարդը որ չի կըշտանա, վերջը ինքը իրան կուտե:

550(1896). Ծառը տես՝ պտուղը քաղե:

551(1897). Ծառը քոքեն կը չորնա:

552(1898). Ծերանաս, ծերի հալը իմանաս:

553(1899). Ծիրանը որ հասնի, ծառից վեր կընկնի:

554(1900). Ծնողը պիտի ապրի իր զավակի մեջ:

555(1901). Ծո, կապեկ՚մ չաժե, յընչի՞ կաշե:

556(1902). Ծոծրակդ կը տեսնիս, լավ մարդ չես տեսնի:

557(1903). Ծոծրակս քերեմ, տեղը բերեմ:

558(1904). Ծովն ընկնողը փրփրին ձեռք կը քցե:

559(1905). Ծոցիդ քարերը թափե՛:

560(1906). Ծուռ ակոսը, խամ եզեն է:

561(1907). Ծուռ բուսնած խիարը
Օրըմ՝ չէ, օրըմ կը ջարդի:

562(1908). Ծուռը նստինք՝ շիտակ խոսինք:

563(1909). Կա՞մ տանձ, օր պոչ չունենա:

564(1910). Կաթի հետ մտածը հոգու հետ դուս գուքա:

565(1911). Կալեն ի՞նչ խեր տեսանք, որ կալատըկեն ինչ տեսնինք:

566(1912). Կալ ու կուտը՝ մամու, պապու հարսնիքը:

567(1913). Կակալը կընկըտիք կջարդեն,
Միջինը տըղամարդիկ կուտեն:

568(1914). Կակալը ու՞մ կուտա՞ս, ակռեն՝ ում:

569(1915). Կակխնաս՝ կուտես:

570(1916). Կաղ իշով քարվան է խառնվե:

571(1917). Կամ աղն է պակաս, կամ՝ մաղը:

572(1918). Կաշառքը մութ տեղը լուս կուտա:

573(1919). Կապեկի՚մ արժեք չիմացողը,
Մանեթինը չի իմանա:

574(1920). Կապեկի՚մ համար օխտը թախլա կուտա:

575(1921). Կատվի աշխարհքն էլ, մկի ծակն է:

576(1922). Կատվի պես կռնկի վրա[212] չի ընկնի:

577(1923). Կատվի պես մեջքիդ չես գա:

578(1924). Կատվին ըսին՝ քաքդ դեղ է,
խորունկ թաղեց:

---

[212] Կռնկի վրա – մեջքի վրա (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

579(1925). Կատվին խաղ է, մկան մահ է:

580(1926). Կատու է դարձե էնոր յառաջը:

581(1927). Կատուն յելավ ժեշտերուն:

582(1928). Կատուն մսին չհասավ, ասաց.- Փիֆ, հոտած է:

583(1929). Կատուն քացաղ է խմե:

584(1930). Կարիճն օր կը խեթե, խասիաթն է:

585(1931). Կարկուտը ծեծած տեղը կը ծեծե:

586(1932). Կարմիր կովի նման
կթվեց, կթվեց,
Վերջը զարկեց կաթը թափեց:

587(1933). Կարմիր կովը յիրա կաշուց դուս չի գա:

588(1934). Կարոն հավանեց Մարոյին,
Մարոն չհավանեց Կարոյին:

589(1935). Կարպետի չորս ծերը ջրին է տվե:

590(1936). Կարևորը եմիշը չէ՝ քաղցրությունն է:

591(1937). Կարևորը կանուխ զարթնելը չէ,
Կարևորը օրվա գործի
հաջողությունն է:

592(1938). Կեսուրս մեռավ՝ տեղս լենցավ:

593(1939). Կերա, հմը վայ էն ուտելուն:

594(1940). Կերել է սարի խոտը, չի եկել լծի մոտը:

595(1941). Կընիկ՝ հոգու բընիկ:

596(1942). Կընկա իստընկությունը իրա հոգու իստկությունն է:

597(1943). Կընկան ազատ թողած ու տուրը տված՝ մեկ է:

598(1944). Կիրակմտին գործ էնողը հավկուր գնկնի:

599(1945). Կծու, կծու փամռք աստուծո:

600(1946). Կճուճն ասաց. — Տակս օսկի է,
Շերեփն ասաց. — Բա ես
որտեղից եմ գալիս:

601(1947). Կնիկը տաքտեղ է:

602(1948). Կնիկը օր խորոզի չափ մարդ ունենա, կալի չափ տեղ կունենա:

603(1949). Կնկա խելքով նստողն էլ կնիկ է:

604(1950). Կնկա մազերը երկար է, խելքը՝ կարճ:

605(1951). Կնկան ծեծելը օրինված բան է:

606(1952). Կնկան օր ձեռես, ապրեշում կը դառնա:

607(1953). Կողբա աղը ոռը կոխինք,
էլի ալնի կտռե:

608(1954). Կողբը ոռն է կապե,
անլի կը թսե:

609(1955). Կոտրած ամանը հարուր տարի կապրի:

610(1956). Կոտրած փետի կացնավորը շատ կեղնի:

611(1957). Կռնակդ ճռ գուկա:

612(1958). Կռնկի յաչքի պես յիստակ հոգի ունի:

613(1959). Կսեն՝ աստված շատ բան գիդե,
Հըմը արի տես, որ հեչ բան չիդե:

614(1960). Կրակի յառաջը չախմախ չեն զարկե:

615(1961). Կրակի վրա չալու չեն դնի:

616(1962). Կրակով եփած գլմանի:

617(1963). Կուժը ջրի ճամփին է կոտրվում, մարդը՝ կյանքի:

618(1964). Կուժն աղբյուրի ճամփին կկոտրի:

619(1965). Կուշտն անոթուն մանդռ կբռդե:

620(1966). Կուշտը սովածին մանդռ կը բրթե: (տրբ)

621(1967). Կուշտը անոթուն որ հասկնար, աշխրհքի դարդ ու ցավը քիչ կեղներ:

622(1968). Կուտը պոլոզե ելած գլմանի:

623(1969). Հագուստի գյորա ընդունում են, խելքի գյորա՝ ճամպու դնում:

624(1970). Հազար չափե, մեկ ձևե:

625(1971). Հազարից մեկ՝ զատիկ,
էն էլ՝ նավակատիկ:

626(1972). Հալալ քրտինքով աշխատած հացը համով է ուտվում:

627(1973). Հալղի վրա շուն կհաչե, մեզ վրա՝ կատու:

628(1974). Համբերի,
Տանտերը բան կբերի:

629(1975). Համբերությունը կյանք է:

630(1976). Հայ ծընվողը պիտի համփերե:

631(1977). Հայը համփերանքն էլ հետն է ծընվել:

632(1978). Հայի համփերանքով կըրնան ուրիշ ազգեր լողնան:

633(1979). Հայից՝ թագավոր,
Եզդուց՝ կամավոր:

634(1980). Հանաքը դառավ գորչակ:

635(1981). Հավ ես էրե, թառն ես դրե:

636(1982). Հավը էրազում կուտ է տեսնում:

637(1983). Հավնողս հավնել է, առնողս առել է:

638(1984). Հարազատներից խեր չըտեսանք,
Աչքերս դըրկըցների շուքին է:

639(1985). Հարամ հացը փոր չի կշտացնի:

640(1986). Հարամը գուկա հալալին կը տանի:

641(1987). Հարգանքն ու պատիվը առնելու չէ:

642(1988). Հարի մարդ իրան նեղություն չտա, ուրիշներին լենություն չի տա:

643(1989). Հարսի լավը չտեսանք, աղջկա էլ՝ վատը:

644(1990). Հարսի ոռով, փեսին լավություն կէնե:

645(1991). Հարստի ցանածը կը բուսնի, քասիբի՝ դիրտմածը:

646(1992). Հարցնելն էլ խո յամ՞թ չէ:

647(1993). Հարցնելով Երուսաղեմ կը հասնիս:

648(1994). Հարփած մարդը իրա ջեբի հետ կը խոսի:

649(1995). Հարևանի հարսը սիրուն է:

650(1996). Հաց ու պանիր՝ կեր ու բանիր:

651(1997). Հացը դրած՝ բանն անիծաց:

652(1998). Հացը երեսից կուտվի:

653(1999). Հացով մենձըցած մարդը հացի ղադրը կիմանա:

654(2000). Հեռանա մոտեն, օտարանա սրտեն:

655(2001). Հեռանաս մոտեն, օտարանաս սրտեն: (տրբ)

656(2002). Հեռու ման եկա, մոտիկ գտա:

657(2003). Հետևեդ կարմիր խնձո՞ր ենք ուղարկելու:

658(2004). Հերդ էլ գիտե, թե նախիրը էշ ունի:

659(2005). Հերիսի հոտը թափեցեն գուկա:

660(2006). Հերվա մեռելը էս տարի կը թաղե:

661(2007). Հին դարմանը քամուն չեն տա:

662(2008). Հին հավերին՝ ջու, ջու, ջու,
Թազա հավերին՝ քշա, քշա, քշա:

663(2009). Հինգ մատիս պես գիտեմ:

664(2010). Հինգ մատս օր մոմի պես վառեմ, էլի վատ եմ:

665(2011). Հիսուս-Քրիստոս,
Մոլեն յընկավ փոսեփոս:

666(2012). Հիվանդը ինիկ է, դո՞ւ կը տքաս:

667(2013). Հիվընդի աչքը միշտ դրռանն է:

668(2014). Հիվնդնաս, դոստ ու դուշմանդ յիմանաս:

669(2015). Հո վերի արտի ցորե՞ն չես:

670(2016). Հոգին տվել է, անհոգի կապրի:

671(2017). Հոլն էլ իրանն է, կոբալն էլ:

672(2018). Հող էր, հող դառավ:

673(2019). Հողը լիզու չունի, ուժ ունի:

674(2020). Հողը հարուստի ու աղքատի չի հարցնում:

675(2021). Հողը մեր բերողի գլխուն:

676(2022). Հոպոպը ինքն է հոտած, հենց գիտե, թե բունն է հոտած:

677(2023). Հոր ու մոր պատիվը չիմացողը Աստծու պատիվն էլ չի իմանա:

678(2024). Հորդ հոգին՝
Ծառի քոքին:

679(2025). Հորե եթումը եթում չէ, մորե եթումն է եթում:

680(2026). Ձեզի համար բողքն է լավ:

681(2027). Ձենը՝ տակը, քարը՝ վրեն:

682(2028). Ձեռը ձեռ կլվա, էրկու ձեռը՝ երեսը:

683(2029). Ձեռքովդ էրել ես, հոգովդ էլ պիտի քաշես:

684(2030). Ձեռքս՝ բան, ոտս՝ գերեզման:

685(2031). Ձիավորին ձիուց ցած կբերի:

686(2032). Ձիերը կաշխատին՝ էշերը կուտեն:

687(2033). Ձին չառած՝ մսուր է սարքում:

688(2034). Ձին չեղաստան, մսուրք կը շինե:

689(2035). Ձվածեղի խաթեր՝ թավի պոչը կպագե:

690(2036). Ձվածեղի սիրուն՝ թավի պոչը կը պաքե:

691(2037). Ձվի գողը, ձիու գող կը դառնա:

692(2038). Ձտի պես կպավ մարդու, էլ պոկ չի գալիս:

693(2039). Ձուկը գլխից կբռնեն:

694(2040). Ձուկը գլխեն կը հոտի:

695(2041). Ձուկը ծովումը բազար չեն էնե:

696(2042). Ձուկը ջրի մեջ, բազար չեն անում: (տրբ)

697(2043). Ձուն է էկել, որ ոտ մրսի:

698(2044). Ձունը կծածկե ամեն քաք ու դեք:

699(2045). Ղազարը գիտե յիրա բազարը:

700(2046). Ղանդլի ջաղացը էս է,
Թեփը ալրի հետ կես է,
Ուտես-չուտես կաղբարը էս է:

701(2047). Ղանջիլ շան գլոխը գիլու փորն է:

702(2048). Ղառղառի ոռն է քաքոտ, գիդի թե բունն է քաքոտ:

703(2049). Ղառղռի ձագն էլ իրա մոր հըմար է սիրուն:

704(2050). Ղասաբի թուքանում ամեն ոչխար իր ոտից է կախված:

705(2051). Ղըռ ձին գարի չի՞ ուտե:

706(2052). Ղոլթուղներու տակը ձմերուկ է դրե:

707(2053). Ղոնախը Աստծունն է:

708(2054). Ղոնաղը տանտիրոջ ստրուկն է:

709(2055). Ճակտի գրվածը չի ջնջվի:

710(2056). Ճանի դար է, կըրնաս էնպես քից, որ ալչու կայնի:

711(2057). Ճանճերը միշտ տաք-տաք քաք կը փնտրեն:

712(2058). Ճանճն ի՞նչ է, որ իրա ճենջն ինչ էղնի:

713(2059). Ճերմակ շունը բամբակ ծախողին վնաս է:

714(2060). Ճիժ մահանա՝ մեր կշտանա:

715(2061). Ճիշտ խոսողի փափաղը ծակ է:

716(2062). Ճտերը աշնանն են համարում:

717(2063). Ճրագն յիրա տակը լուս չի տա:

718(2064). Ճուտը ձվի մեջ բալու կենե:

719(2065). Մազերու ճերմակությանը օր աշես, ղազն էլ ճերմակ է:

720(2066). Մազը՝ երկար, խելքը՝ կարճ:

721(2067). Մազը որ լավ բան եղներ, ամմեն տեղ չէր բուսնի:

722(2068). Մազի չափ խելք չունի:

723(2069). Մազմնի յաշկերտի պես ետ-ետ կերթա:

724(2070). Մալը տիրոջը օր չը քաշե, կսեն գողածուրիկ է:

725(2071). Մախաթ եմ ու յախադ եմ:

726(2072). Մածուն ուտող շունը ոռից է բյալու:

727(2073). Մահը ձևեր ունի հարյուր-հազար,
Մարդկանց հետ չի էնե
անտեղի բազար:

728(2074). Մահի թանկությունը հացի էժանությունն է:

729(2075). Մահվան ջեբը ծակ է,
Ինչքան գուզես լից, էլի չի լըցվի:

730(2076). Մահվան տըված կաշառքը կորած է:

731(2077). Մամի հարսնիքը միտքն էկավ:

732(2078). Մանածդ ներկե, յետև նորից ներկե:

733(2079). Մանդր է, հմա գինը ծանդր է:

734(2080). Մանեթ՚մ կուտամ՝ շահեցեդ անցի:

735(2081). Մատդ տնկես՝ խելքը կերտա:

736(2082). Մատից փուշ հանել գիտի՞:

737(2083). Մատից փուշ հանող չէ:

738(2084). Մատ՚մ չամուռ առել ես ձեռքդ:

739(2085). Մարգարիտը աղբի մեջն էլ փայլ կտա:

740(2086). Մարդ էլ կա, մարդակ էլ:

741(2087). Մարդ իր տան ծառան է:

742(2088). Մարդ յիրա յաչքը քո՞ռ գուզե:

743(2089). Մարդ՝ ծոցի վարդ:

744(2090). Մարդ կա գըլխի մազերը
կը թափի,
Մարդ էլ կա խելքը կը թափի:

745(2091). Մարդ կա ժամանակ կը փնտրե,
Մարդ էլ կա ժամանակ կը կորցնե:

746(2092). Մարդ կա ոչ աղի է, ոչ էլ՝ մաղի:

747(2093). Մարդ կա քուֆթա կուտե,
Մարդ կա մուֆթա կուտե,
Մարդ էլ կա դավի չուֆտա կուտե:

748(2094). Մարդ հողից է կշտանում:

749(2095). Մարդ շուն լինի, համա անտեր չլինի:

750(2096). Մարդ տան ու դսի խելք պիտի ունենա:

751(2097). Մարդ ու կընիկ՝
Շուն ու կատու:

752(2098). Մարդ ու կընիկ՝
Սոխակ ու վարդ:

753(2099). Մարդ օր չամչընա, լավ կապրի:

754(2100). Մարդաչնման՝ մարդաչհավան:

755(2101). Մարդը առանց փողի, ինչխոր երկրագունդը՝ առանց հողի:

756(2102). Մարդը թևավոր ղուշ է,
էսօր ըստեղ է, յեկուց՝ էնտեղ:

757(2103). Մարդը ինքը իրանից չի կըրնա առաջ վազե:

758(2104). Մարդը լիզու կտրող չունի,
անասունն ունի՝ լեզու չունի:

759(2105). Մարդը կնոջ ընկերն է և ոչ թե տերը:

760(2106). Մարդը հախ գյումրեցի է՝ նամուսի համար մեռած է:

761(2107). Մարդը մարդով է ապրում:

762(2108). Մարդը մինչև հասկընա կյանքի գաղտնիքը, արևը կը թռնի իրա տանիքը:

763(2109). Մարդիկ կըշտանալուց ետև կըռիվ կփնտրեն:

764(2110). Մարդն իր գործովն է հայտնի:

765(2111). Մարդու աչքն ելնի, անունը չելնի:

766(2112). Մարդու բախտը որ չը բերեց, ձին ախոռում էշ կը դառնա:

767(2113). Մարդու բաղդը իր բռի մեջ է:

768(2114). Մարդու դարդը շուքի պես բան է, միշտ հետը կերթա:

769(2115). Մարդու դեմքը հոգու հայլին է:

770(2116). Մարդու մահը անկճի ետևն է պայ մտած:

771(2117). Մարդու մեռնելուց ետև, տեր ու տիրականը հողն է:

772(2118). Մարդու միջի մարդ ունենամ,
Հազար մանեթ պարտք ունենամ:

773(2119). Մարդու յաչքը մենակ մե բուռ՚մ հողը կը կշտացնե:

774(2120). Մարդու փեշը յիրա դիշմանն է:

775(2121). Մարդուց խեղճը գազանն է,
Գազանից գազանը մարդն է:

776(2122). Մարտի ընինի
Լակլակը՝ իր բնին:

777(2123). Մե դռան շան պես յոլա գնացեք:

778(2124). Մե թելը քաշես՝ հազար
կարկտան կը թափի:

779(2125). Մե խելացու՚մ կարոտ մնացինք:

780(2126). Մե ծաղկով՚մ գարուն չի գա:

781(2127). Մե կովի կաթը՝
Շատ երեխոնց բախտը:

782(2128). Մե ձեռը ծափ չի տա:

783(2129). Մե ձեռք օր չես կրնա կտռե,
պաքե դիր ճակտիդ:

784(2130). Մե ձեռքը եղի մեջն է, մեկելը՝ մեղրի:

785(2131). Մե ձեռքով երկու ձմերուկ չեն բռնե:

786(2132). Մե մուկը օխտը կարաս կը մունտռե:

787(2133). Մե «չէ»-ն յամեն չարեն կազատե:

788(2134). Մե վատ մարդը հազար մարդու գլուխ կուտե:

789(2135). Մե օրվա հաց ճարելը ավելի քաղցր է, քան իրեք օրվա անտեղի մըտածելը:

790(2136). Մեզնեն քարվան կտրող չի էղնի:

791(2137). Մեծնաս՝ մոռնաս կը:

792(2138). Մեկ մորե, երկու հորե:

793(2139). Մեկ շուտ վեր կեցողը չի փոշմանի, մեկ՝ շուտ կարգվողը, մեկ էլ՝ շատ ուտողը:

794(2140). Մեկ չուտողեն վախեցի, մեկ՝ ուտողեն:

795(2141). Մեկ ուտողից վախեցիր, մեկ էլ՝ չուտողից: (տրբ)

796(2142). Մեկը պիտի բամբակ լինի, մյուսը՝ զանգակ:

797(2143). Մեկի ոռը դուս գուքա գործ էնելով, մեկելը կըսե՝ տուր տանիմ, թող կատուս ուտե:

798(2144). Մեկի պոչը, մեկելի տակն է:

799(2145). Մեղըր ծախողը շիրա չի վերցընե:

800(2146). Մեղրը լավ բան է, ափսոս շան տըկի մեջ է:

801(2147). Մեղքը՝ լալեն, պարտքը՝ տալեն:

802(2148). Մենձ որ չըխոսիս, պըզդիկ խոսողը չի վախենա:

803(2149). Մեննակ հաց ուտողը մեննակ էլ կը մնա:

804(2150). Մեռած է՝ թաղած չէ:

805(2151). Մեռանք, մեռոնվանք:

806(2152). Մեռելի ետվեն վռ՞վ է մեռե:

807(2153). Մեռելի ետևեն կամ լավը խոսի, կամ հեչ մի խոսի:

808(2154). Մեռելի ոռին միշտ մեղըր է քըսած:

809(2155). Մեռելի պես ապրանքը գետնին չի մնա:

810(2156). Մեռելի յետևից փութ՞մ մեղր է կախած:

811(2157). Մեռնողի ետևից միննակ բաժակները կը զընգզընգան:

812(2158). Մեռնողի ետևից միշտ լավն են խոսում:

813(2159). Մեռնողի հետևից վատ չեն ասի:

814(2160). Մեր հացին աղ չկա:

815(2161). Մերը էղնի, բերանը չեղնի:

816(2162). Մերը մանուկն ուրացավ:

817(2163). Մեր շունը ձեր տունը կացին բերե՞լ է:

818(2164). Մըխի ծակած ձեռքը կը լավնա, փարի ծակածը չի լավնա:

819(2165). Մի թել օր քաշես, հազար կարկատան կթափի:

820(2166). Մի խելառ քարը քցեց հորը, տասը խելոք չկարողացան հանել:

821(2167). Մի խոսքով՝
Մեր կյանքը ծախինք ոսկով:

822(2168). Մի ծաղկով գարուն չի գա:

823(2169). Մի ձեռքը ծափ չի տա:

824(2170). Մի ռուբլի խնայում ենք
առողջության համար,
Հիվանդանալուց հետո
հարյուր ենք ծախսում
առողջանալու համար:

825(2171). Մի քրվե իմ բոշա հորը,
Օր չքրվեմ քո փաշա հորը:

826(2172). Մինչի քեզի ցավ չտաս,
ուրիշին դուր չես գա:

827(2173). Մինչև աղն էկավ, մատաղը վերջացավ:

828(2174). Մինչև հիմա բրդած է կերել:

829(2175). Մինչև չգա վերջինը, չի հիշվի առաջինը:

830(2176). Մինչև տան տերը ուտելուց չտրաքի, ղոնաղը չի կշտանա:

831(2177). Մինչև ցամաք առուն ջուր գա,
Գորտի աչքերն էլ դուրս կգան:

832(2178). Միշտ քոսոտ շըները կը կատղեն:

833(2179). Միշտարի յաչքով աշել:

834(2180). Միշտարին օր կա, թել է, մեկը քաշես՝ յիրեքը գուքա:

835(2181). Միսը՝ քեզի, օսկոռն՝ ընձի:

836(2182). Միսն անոսկոռ չի եղնի:

837(2183). Միսն օսկորից չեն ջոկե:

838(2184). Միսս կերար, օսկոռս թողիր:

839(2185). Միրուք չունիմ՝ խոսքս չի անցնի:

840(2186). Մկան համար կատուն ամենաուժեղ գազանն է:

841(2187). Մկի ծակին հազար թուման էիր տալիս:

842(2188). Մկի շեռը ջաղջին օգութ է:

843(2189). Մոր անեծքը չի բռնե:

844(2190). Մոր թախտը՝ աղջկա բախտը:

845(2191). Մորես մի անգամ եմ էղե:

846(2192). Մորը տես՝ աղջկան ուզի:

847(2193). Մորքուրս էլ որ պուպուլ ունենար, քեռի կըսեյին:

848(2194). Մսի և եղունկի արանքը չեն մտնի:

849(2195). Մտքից թագավորություն է անցնում:

850(2196). Մուխանաթի կապած կարմունջեն մի՛ անցնի, յնկի՝ թող ջուրը տանի:

851(2197). Մուկ չեղած՝ մեշոկ կը ծակե:

852(2198). Մուկը ծակը չի հավքի, ցախավելն էլ պոչեն կապին:

853(2199). Մուկը ծակը չի մտնում, ցախալն էլ պոչից կապին: (տրբ)

854(2200). Մուկն ի՞լ աղանձ կուտե:

855(2201). Մուկն էլ օրոճալ գիտե:

856(2202). Յա աղն է պակաս, յա՝ մաղը:

857(2203). Յամեն անգամ ջուրը կոճ չի բերե, պառավն էլ պառկի՝ մանչ բերե:

858(2204). Յամեն բանի վերջն է գովելի:

859(2205). Յամեն մարդ յիրա եղովը կը տապկվի:

860(2206). Յամեն մարդ յիրա կաթին ընկածը կէնե:

861(2207). Յամեն մարդ՝ յիրա տունը, լակլակը՝ յիրա բունը:

862(2208). Յամեն մարդ յիրա փափաղի տակը մարդ է:

863(2209). Յամեն մարդու շապիկը յիրա ջանին մոտիկ է:

864(2210). Յամեն տռողի ոռին բամբակ չեն զարկե:

865(2211). Յամեն տուն հաց չի ուտվի:

866(2212). Յամոթը մտել է հարսի կամոդը:

867(2213). Յամոթը յորղան-դոշկի մեջն է:

868(2214). Յամոթուս յառկեքս օսկոռ դառան:

869(2215). Յանդեր բողազ, ի՞նչ կը դողաս, Քիչ՚մ կեցի, քեզի էլ կուտան:

870(2216). Յանկջի մեկեն մտնի, մեկելեն գէլնի:

871(2217). Յաշխարք ապրել կա, յաշխարք մեռնել կա:

872(2218). Յաշխարքը՝ դմակ, դու՝ դանակ, կտռե ու կե:

873(2219). Յաշխարքը ինչղ բռնես, էնպես էլ կէրթա:

874(2220). Յաշխարքը հեչ մեկի՚մ չէ մնացե:

875(2221). Յաշխարքը օր մե յարթար՚մ էղնի, երկրին սուն կուտա:

876(2222). Յաչքե տես, բերնե՝ կարոտ:

877(2223). Յաչք է՝ տեսնի, սիրտ է՝ գուզե:

878(2224). Յաչքը տեսածեն կը վախենա:

879(2225). Յաչքերու տերն էկել է:

880(2226). Յաչքից էլ պրծանք, յաչքացավից էլ:

881(2227). Յառկեքդ մի՛ բանա, շները օսկոռ ման գուքան:

882(2228). Յառչը պլորներեն կը խեղճնա:

883(2229). Յարտը՝ խախուտ, միանա՝ կարկուտ:

884(2230). Յարև էղնի՝ մայրե՚մ չի չորցնե:

885(2231). Յարև չորցնող կնիկ է, չի կրնա ծունկը տակը դնե:

886(2232). Յարևը ամբի տակը չի մնա, լուսը կը բացվի:

887(2233). Յարևը մարդու վրա լուս կուտա:

888(2234). Յարևը յերթքեն թռել է:

889(2235). Յուրիշի համար փոս փորողը ինքը մեջը գ'նկնի:

890(2236). Յուրտեղ որ քուկդ պատմես, էնտեղ էլ իմը պատմե:

891(2237). Յուրտից մեզի՝ քասիբներուս էդքան բախտ, որ մեր ագսիգատակն էլ օրիֆորդ[213] դառնար:

892(2238). Նազ էնողի տակը շատ բան կա:

893(2239). Նազ կենե՝ հազ կէնե:

894(2240). Նազարն է կերե չաչ բանջարը:

895(2241). Նալատ Սլիկին էլ, Պլիկին էլ:

896(2242). Նախանձը նախանձողի պատիժն է, չարը՝ չարի, բարին՝ բարու:

897(2243). Նախիրը մտավ, իշու ճակատը պաքեց:

898(2244). Նամուսը ու պատիվը փարով չեն առնի:

899(2245). Նամուսը քցեցին շան՝ չկերավ:

900(2246). Նեղը ընկած մարդը միշտ լեն օրերը կհիշե:

901(2247). Նմանը նմանին կը սիրե:

902(2248). Նստիմ գիրկդ, փետրեմ միրուքդ:

903(2249). Նրա թրի էրկու բերանն էլ կտրում է:

904(2250). Շաբաթը թեզ էկավ, քանց ուրբաթը:

905(2251). Շաբաթ'մ փուքս կը փչենք, Տարի'մ մուր կը շռենք:

906(2252). Շահ էիր, շահբազ դառար:

907(2253). Շահի'մ տվինք խոսեցուցինք, մանեթով ձենը չի կտռե:

908(2254). Շահու'մ խունկ կը ծախեն, աբասու'մ կը թսեն:

909(2255). Շան անունը տուր, քարը վերցրու:

910(2256). Շան աջալը որ գա, կերտա ժամի դռանը կքաքե:

911(2257). Շան բերանը շաքար է ընկե:

912(2258). Շան բնի մեջ օսկոռ չի մնա:

913(2259). Շան հետ ախպրացի, փետը ձեռքեդ մի քցե:

914(2260). Շան հետ ընկերություն էրա, հմա փետդ ցած մի դիր:

915(2261). Շան ոռից անուշ թիս ո՞վ է տեսե:

916(2262). Շան ոռից էլ՝ անուշ հո՞տ:

917(2263). Շան պես հավատարիմ ընկեր մեկ էլ շունն է:

918(2264). Շապիկս ջանիս մոտ է:

919(2265). Շատ գիտես՝ քիչ խոսի:

920(2266). Շատ դատողին՝ շալե շապիկ:

921(2267). Շատ մարդիկ շնորհք ունին, հըմը փարա չունին:

922(2268). Շատ մի ատե՝ սիրել կա:

923(2269). Շատ մի սիրե՝ ատել կա, շատ մի ատի՝ սիրել կա:

924(2270). Շատ մի բարձր դասե քեզի, վար կը մնաս:

925(2271). Շատ մի խըղճա ռամիկին, բիրդան կը թռնի քու քամակին:

926(2272). Շատ մի սիրե՝ ատել կա:

927(2273). Շատ ջայելներ գիտեն, թե նըշանվելը ջուխտըմ բաբուճ առնել է:

928(2274). Շատ սիրված էրեխեն երեսառած կէղնի:

929(2275). Շատ սիրուն էր՝ ծաղիկ էլ հանեց:

930(2276). Շատ սիրուններ կան, որ էշ են, շատ գեշեր կան, որ էշ չեն:

931(2277). Շատ վազողը փոշտի ձիու կը նմանվի:

932(2278). Շատ ու շատ մարդկանց համար ռախին ու Աստված մեկ է:

933(2279). Շատ փարա ունեցողը փարա էլ կը շռե:

934(2280). Շատ քիչ բան է ունենալ տանիք, Մեջը պիտի էղնի բարիք:

935(2281). Շատը գնաց, քիչը մնաց:

936(2282). Շատը շատին, իշու պոչը՝ աղքատին:

---

[213] Ագսիգատակ – տանը մնացած անարատ, բայց անբախտ աղջիկ: Մոր հասկացողությամբ օրիֆորդը դա վարժուհին է (ծանոթ.բանահավաք Պ. Բարսեղյանի):

937(2283). Շատը շատին, իշու կ...ը՝ աղքատին: (տրբ)

938(2284). Շաքար է, բայց շան բերան է:

939(2285). Շաքար չես, որ հալվես:

940(2286). Շինողը միջեն հանիր:

941(2287). Շիշաջուն աղջիկ տըվին՝ զարմացավ, որ ջրհեզի մեջ շիշա կըտրելու ալմազը կը պակսեր:

942(2288). Շիտակությունը կը հիվնդնա, հըմը չի մեռնի:

943(2289). Շնից մե մազ պոկելը քյար է:

944(2290). Շնորքդ հորդ տունը մնար:

945(2291). Շնորհքով ոռ սըրբելն էլ հունար է:

946(2292). Շորն ասաց. — Ընձի պահիր վարդի մեջ,
Ես քեզ պահեմ մարդամեջ:

947(2293). Շորն ըսավ. — Ընձի պահե բողջի մեջ,
Քեզի պահեմ մարդու մեջ:

948(2294). Շոր չունի հագնելու, ֆայտոնով կերթա ք..ելու:

949(2295). Շտապողին չի յաջողվի:

950(2296). Շուն, թե գել՝ մերն է:

951(2297). Շունը առնի մեղքը:

952(2298). Շունը գիշերը որ կոռնա,
Կամ շունը կը սատկի կամ՝ տերը:

953(2299). Շունը եղել է, որ մարդու վըրա հաչա:

954(2300). Շունը իր շնությունը թարկ չի տա:

955(2301). Շունը հաչալով ժամը չի մունդռե:

956(2302). Շունը հաչի՝ քամին փչի:

957(2303). Շունը մի յարով չի սատկի:

958(2304). Շունը շալկվորին կը հաչե:

959(2305). Շունը շան միս չի ուտե:

960(2306). Շունը շան ոտ չի կոխե:

961(2307). Շունը շապիկ է հագե, կատուն՝ վարտիկ:

962(2308). Շունը տերը չի ճանչնա:

963(2309). Շունը օր շուն է, տունդ օր բերիր, տամազլըղը պիտի հարցնես:

964(2310). Շունն էլ գարուն գելնի, քաշածը այազը գիտե:

965(2311). Շունն օր գիտենար շահը ինչ է, հավատարիմ չէր էղնի:

966(2312). Շունս որ իմանամ գյումրեցի է, պոչը քըրթ կը կըտրեմ:

967(2313). Ոճիլը բանըմ չէ,
Կը խածե, մարդ կը մեռցնե:

968(2314). Ո՛չ դիր ու լաց, ո՛չ առ ու փախի:

969(2315). Ո՛չ թանդ՝ փորս, ո՛չ՝ քիթդ ոռս:

970(2316). Ո՛չ է լաս, ո՛չ է խնդաս:

971(2317). Ո՛չ խելք ունի, ո՛չ՝ դարդ:

972(2318). Ո՛չ սատանին տես, ո՛չ բարև տուր:

973(2319). Ոռով մըխ քաշելն էլ արհեստ է:

974(2320). Ոտը դրած տեղը կը չորնա:

975(2321). Ոտնամաններդ յիստակ պահե, չունքի դիշմանը ոտներուն կաշե:

976(2322). Ոտներուդ տակը հավկիթ խո չեմ դրե:

977(2323). Ոտքով գլխով մեջն յընկա:

978(2324). Ո՞ր քամին է բերե:

979(2325). Որբին խրատ տվող շատ կա, հաց տվող՝ քիչ:

980(2326). Որդուց ի՞նչ խեր տեսանք, որ թոռից ինչ տեսնենք:

981(2327). Որձ էշը քուռակի հետ ման չի գա:

982(2328). Որտեղ հաց՝ ընտեղ կաց:

983(2329). Որտեղ կտռի կապը, անիծեմ տիրու պապը:

984(2330). Որտեղ տանձ կա, էնտեղ պոչ կա:

985(2331). Որտեղ փող կա՝ էնտեղ խիղճ չըկա:

986(2332). Չարը չարության ճանապարհին կկորչի:

987(2333). Չափուկ քելեմ, կսեն «խելառ է», յավաշ քելեմ, կսեն «դմբո է»:

988(2334). Չբլախ ջանով կատու կը շալկե:

989(2335). Չեմ յուզե, ջեբս քցե:

990(2336). Չեն թողնե, օր տղեն հորը քաշե[214]:

[214] Այս ժողովրդական ասացվածքը շատ տարածված է եղել քաղաքում (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

991(2337). Չէ էղե գիշեր, օր չը լուսանա:

992(2338). Չէր տեսել պատեն կախ,
Տեսավ ճակտեն կախ:

993(2339). Չըկերանք մսեն,
Խելըռանք թսեն:

994(2340). Չըպլախ մարդն ու անփարա մարդը մե հաշիվ է:

995(2341). Չըպլախ ջանին չի աշե, կատու կշալկե:

996(2342). Չիդե թե վով է մեռե, ճվա կը. «Վայ Վարդան»:

997(2343). Չիմանալը ամոթ չի, չիարցնելն է ամոթ:

998(2344). Չսես, թե յաչքի վրեն ունք կա:

999(2345). Չտեսը տեսավ, զարմացավ:

1000(2346). Չրին մեկ կը խոսի, չամչին՝ էրկուս:

1001(2347). Չունենալը ամոթ չէ, չաշխատելն է ամոթ:

1002(2348). Չուտողի մալը, ուտողին հալալ է:

1003(2349). Պառավ ձին գարի՞ չի ուտե:

1004(2350). Պառավը գիտուն չէ, բայց գլխին էկած է:

1005(2351). Պառավը յիրա թանին թթու չի ըսե:

1006(2352). Պառավն էլ դժոխք չէր էրթա, կոպալն օր տեսավ, վազզելեն գնաց:

1007(2353). Պառկես հարսի կուշտը,
Ուտես հացի բուշտը:

1008(2354). Պատեն ընկնողը պատեն ընկնողի հալը կհասկանա:

1009(2355). Պատիվը որ ծախու եղներ,
Մուշտարիք իրար գլոխ կը ջարդեյին:

1010(2356). Պատիվը պատվավոր մարդու համար է:

1011(2357). Պատիվն ու նամուսը, թող ամմեն մարդ իրա մեջ փընտրե:

1012(2358). Պար մտնողը ոռը պիտի շորորցնե:

1013(2359). Պար մտնողը քամակը կշորորի:

1014(2360). Պարապութենեն շներուն աղու կուտա:

1015(2361). Պարը մնացել է պոկոշներին:

1016(2362). Պարտքը ծերանալ ունի, մեռնել չունի:

1017(2363). Պարտքով տըված կյանքը՝ վերջը պարտքտերն էլ կը տանի:

1018(2364). Պեպեն էդ է, ոռը փետ է:

1019(2365). Պզտի ժամի մեջ էլ կարելի է մենձ պատարագ էնել:

1020(2366). Պզտիկ է, հմը ճզտիկ է:

1021(2367). Պըզդիկ բըրդուճ ուտողը մենձ խոսել չի սովրի:

1022(2368). Պիտի որդի կորցնել, որ որդի կորցրածի մոր կսկիծը հասկանալ:

1023(2369). Պղտոր ջրի մեջ ձուկ կը բռնե:

1024(2370). Պուտ՚մ ջուրը բուռ՚մ լուս է:

1025(2371). Ջահելի չվանին շոր չի փռվի:

1026(2372). Ջահելներու յաչքի վրեն ֆարդա կա:

1027(2373). Ջահելության դատածը, ծերության գավազանն է:

1028(2374). Ջաղացը կորցրել է՝ չախչախին է ման գալիս:

1029(2375). Ջաղացը ջուրը տարել է, յընկե չախչախը ման գուկա:

1030(2376). Ջայիլ տղա՝ որձ էրեխա,
Համ ճուղ ունի, համ կակալա:

1031(2377). Ջան ըսա, ջան լսե:

1032(2378). Ջրի բերածը ջուրը կտանի:

1033(2379). Ջրի կաթիլքը, որ երկան ժամանակ մե տեղըմ կաթեց, տակը քար էլ եղնի կը ծակե:

1034(2380). Ջրի պես գնում է, ավզի պես մնում:

1035(2381). Ջրին ըսում ին.- Ցնչի՞ էս զրմփում,
Ըսում ա.- Տակս քար ա:

1036(2382). Ջուրը գնաց, ծառավ ետ էկավ:

1037(2383). Ջուրը ընկնողը անձրևից չի վախենա:

1038(2384). Ջուրը թող պըզտըկին եղնի, փարեն՝ վենձին:

1039(2385). Ջուրը կտանե, ծարավ կբերե:

1040(2386). Ջուրը մէ տեղ՛մ օր շատ մնաց՝ կը հոտի:

1041(2387). Ջուրը մտնողը քամակը կթրջի:

1042(2388). Ջուրը յիրա գնացած տեղովը կէրթա:

1043(2389). Ջուրը չը տեսած՝ չեն բոբլկնա:

1044(2390). Ջուրը տանեմ, ծարավ կբերեմ:

1045(2391). Ջուրն ամեն օր գերան չի բերի:

1046(2392). Ջուրն ընկնողը անձրևից չի վախենա:

1047(2393). Ջուրն իր ճամփեն գիտի:

1048(2394). Ջուրն իր ճամփով կերթա:

1049(2395). Ռանչպար մարդը լավ է, քանց իշխանը:

1050(2396). Ռուսը որ իմանա ուրտեղ վար գընկնի, տակը սալոմ կը փռե:

1051(2397). Սալդատը յամոթուն մեռավ:

1052(2398). Սանդ խփողի թևը կցավի:

1053(2399). Սատանի մայլեն քյանդրբազ է խաղում:

1054(2400). Սատանի չարոխը մե օր՛մ կը մաշի:

1055(2401). Սատանից օխտ օր առաջ է էղել:

1056(2402). Սատանուց օխտը օր յառաջ է ծնվե: (տրբ)

1057(2403). Սատկած էշ ման գուկա, օր նալերը քաշե:

1058(2404). Սատկած էշ է փնտռում, օր նալերը հանի: (տրբ)

1059(2405). Սատկած ուղտի կաշին էլի մեկ իշու բեռ կէղնի:

1060(2406). Սար ու ձոր՝ տերտերի փոր:

1061(2407). Սարը սարին չի հանդիպի, Մարդը մարդուն կը հանդիպի:

1062(2408). Սարթ քացախը իր ամանը կկոտրե:

1063(2409). Սելը չի ճռռում, սելվորն է ճռռում:

1064(2410). Սելով աղվես չեն բռնե:

1065(2411). Սերը աթարին է կպե:

1066(2412). Սերը կպավ աթարին, ինչ արին, չարին՝ պոկ չեկավ:

1067(2413). Սերը սովորն է կերել:

1068(2414). Սերը սովորն է կերե, Թանը՝ մոլորը:

1069(2415). Սիմ-Սիմ ըսելու տեղը, Սիմոն ըսա:

1070(2416). Սիրտը որ կա, շուշա է, որ կոտրվեց, էլ չի կպչի:

1071(2417). Սիրտը սուփռա չէ, օր յամեն տեղ բաց էնեմ:

1072(2418). Սիրուն երեսին փլաֆ չի ուտվի:

1073(2419). Սիրունի երեսին փլավ չեն ուտի: (տրբ)

1074(2420). Սոխ չես կերե, սիրտդ յընչի՞ կը մռմռա:

1075(2421). Սոխ չես կերե, բերանդ յընչի՞ կը մռմռա: (տրբ)

1076(2422). Սոխ ու հաց՝ սիրտը բաց:

1077(2423). Սոխի անուշը չի եղնի:

1078(2424). Սոխի սեյրակը բոստնջուն ձեռ չի տա:

1079(2425). Սոված մարդը էրածին լավաշով կարած շոր կը հագնի:

1080(2426). Սոված մարդու հըմար սև ցամաք հացն էլ գաթա է:

1081(2427). Սովոր մեյմունը ղամշու կարիք չունի:

1082(2428). Սպիտակ շունը բամբակ ծախողին վնաս է:

1083(2429). Սրտի սիրածը սիրուն կերևա:

1084(2430). Սուտ ըսողի տունը կրակ ընկավ, ոչ ոք չհավատաց:

1085(2431). Սուտ խոսալը մարդու պատիվ չի բերի:

1086(2432). Սուտ խոսողը խո կոտոշ չի՞ ունենա:

1087(2433). Սուտ կա, օր ղորթեն լավ է:

1088(2434). Սուտը ղորթի դանդանեն է:

1089(2435). Սուր բանը թեզ կը ջարդի:

1090(2436). Սև է՝ սիրեկան է,
Ամեն մարդու դուրեկան է:

1091(2437). Սև ոռը բաղնիսում կերևա:

1092(2438). Սևն սպիտակից չի ջոկում[215]:

1093(2439). Սևին սապոնն ինչ կանի,
Խևին խրատն ինչ կանի:

1094(2440). Վազող ձիյուն չեն խփի:

1095(2441). Վախեցիր մարմանդ ջրից,
Մի վախեցիր ելման ջրից:

1096(2442). Վա՛յ, բարի լուս,
Չըբխիս գլոխը քաշե դուս:

1097(2443). Վայ էն հորիկը, որ առջի քալողը
կով է:

1098(2444). Վա՛յ էն մարդուն, որ կնիկը
մեռնելուց յետև քենի չունի:

1099(2445). Վա՛յ քեզ, քաղաք, օր դատավորդ
մանուկ է:

1100(2446). Վատ պարողին պըլորները կը
խանգարեն:

1101(2447). Վար թըքեմ՝ միրուքս է,
Վեր թըքեմ՝ բեխերըս է:

1102(2448). Վարդ քաղողը փշի ծակոցին էլ
պիտի դիմանա:

1103(2449). Վարդապետին ըսին. —
Որդիդ մեռնի:
Ըսավ. — Որդի չունիմ,
հմը խոսքդ խոսք չէ:

1104(2450). Վարդը առանց փշի չի էղնի:

1105(2451). Վարդը պոկիր, փշին կրակ
տուր[216]:

1106(2452). Վարդի թերթով կնգադ խաթերը
մի կպիր:

1107(2453). Վարը վարել եմ, վարոցն էլ թաղել
եմ[217]:

1108(2454). Վարի՛, վարի՛, ա՛յ գութան,
թանը դառավ չորթան:

1109(2455). Վենձ աշխարհք, պըզտի մարդիկ:

1110(2456). Վերից աշողը վարը կը մնա:

1111(2457). Վերջ կա աշխարհին, վերջ չըկա
աշխարհի գործերին:

1112(2458). Վերջերս վեց արշին տախտակ է:

1113(2459). Վերջը կատու՛մ եղար, մուկ
բըռնիր:

1114(2460). Վերև թքեմ՝ ունքս է,
Ներքև՝ մորուքս է:

1115(2461). Վերևն՝ Աստված, ներքևը՝ դու:

1116(2462). Վիրավորանք չնդունելն էլ մի
տեսակ վիրավորանք է:

1117(2463). Վնասի կեսից հետ կանգնելը
օգութ է:

1118(2464). Վով հարցըրեց, ինիկ էլ լավցրեց:

1119(2465). Վով է տեսե, օր որձ էշը յիրա
քուռկի հետ ման գա[218]:

1120(2466). Վով՝ էշ, ես՝ փալան:

1121(2467). Վով յուշ՝ ոռը փուշ, վով թեզ՝
ոռը խլեզ:

1122(2468). Վով չուստ, փորը՝ կուշտ:

1123(2469). Վով տըռե, վով Էրթա
սանատորիա:

1124(2470). Վով՝ փալան, մենք՝ էշ:

1125(2471). Տան մեջ կորած փարեն էլի
տանտիրոջն է:

1126(2472). Տանձ էիր՝ հասար, խնձոր էիր՝
կարմրար:

1127(2473). Տանձը՝ ընձի, խնձորն՝ ընձի,
ձեռքս զարկեմ սերկևիլին:

1128(2474). Տանձն առանց պոչի չի եղնի:

1129(2475). Տան տիրոջը «Օրհնա տեր» չկա:

1130(2476). Տաշած քարը գետնին չի մնա:

1131(2477). Տարի՛մ դամրջու սիրեցինք,
Տասը տարի մուր շոեցինք[219]:

1132(2478). Տաք ես՝ տաք կերթա,
Պաղ ես՝ պաղ կերթա:

1133(2479). Տգեղ կնիկ ունենալը լավ է՝
ապահով կեղնիս:

---

[215] Այսինքն՝ անգրագետ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[216] Նշանակում է՝ լավ աղջիկը վատ ծնողներից վերցրու և նրանց հետ կապերդ խզիր (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[217] Այսինքն՝ ամեն բան վերջացել է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[218] Քաղաքում (Գյումրի) շատ տարածված ասացվածք (ծանոթ. Պ. Բարսեղյանի):

[219] Գյումրեցի կանանց առածներից է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

1134(2480). Տեղեն յելնողը պապիս հալը կը հարցնե, մամիս հալը հարցնող չկա:

1135(2481). Տեմոր մարդու հետ փութ'մ աղ չուտես՝ չես ճանչնա:

1136(2482). Տերտերն ամեն օր գաթա չի ուտի:

1137(2483). Տըղամարդը որ կիլո'մ հաց բերե տուն, փութըմ կերևա:

1138(2484). Տըռտըռան կնիկ կը քանդե իրա մարդու բնիկ:

1139(2485). Տըրուբի ծըռությանը չեն աշե, ծուխը քաշելուն կաշեն:

1140(2486). Տիրոջ խաթեր հըմար շանը քար չեն քցե:

1141(2487). Տիրոջը խաթր կանին, շանը քար չեն քցի:

1142(2488). Տիրովին տերն է տարե,
Անտերին գելն է տարե:

1143(2489). Տղամարդը գերդաստանի սունն է, կնիկը՝ երթիքը:

1144(2490). Տղամարդի վաստակը՝ տունը, ինքը՝ դուսը:

1145(2491). Տղամարդու ամենամեծ պատիժը կընկա մեռնելն է:

1146(2492). Տըղեն թող տըղա եղնի, թող թաք սապոն գողնա:

1147(2493). Տղեն հորը կքաշի:

1148(2494). Տղեն պորտեն շռող պիտի էղնի:

1149(2495). Տնե տուն՝ տուն քանդվի,
Գեղից գեղ՝ գեղ քանդվի:

1150(2496). Տնտես՝ հավսար տես,
Որ դատաստանին
չեղնիս սևերես:

1151(2497). Տկեն մտավ, վրաեն ելավ:

1152(2498). Տըռեց առուն, ելավ գարուն:

1153(2499). Տոտոն փոփոլի սովոր չէ:

1154(2500). Տռան ոռին թոբա չի լինի:

1155(2501). Տռան ոռին փեյդա չկա:

1156(2502). Տռան ոռին էյթար չկա: (տրբ)

1157(2503). Տռեմ ես, բամբեմ քեզ:

1158(2504). Տռեն յընկե, տռծկեն չէ յընկե:

1159(2505). Տռճմնով յայնի դառցուցիր:

1160(2506). Տուն ու տեղ դընողը կընիկն է:

1161(2507). Տունը՝ առանց կընկա, ինչխոր տղամարդը՝ առանց շալվարի:

1162(2508). Տունը առանց մեծի,
Ինչխոր ոչխարների հոտը
առանց էծի:

1163(2509). Տունը կընիկ կա՝ ընտանիք կա:

1164(2510). Տունը՝ մերը, խոսքը՝ մերը:

1165(2511). Տունը միս չի բերե, քյուֆտա է ուզում:

1166(2512). Տունը նրա համար է, որ ընտանիքի սըռը տանից դուրս չգա:

1167(2513). Տունը վառես շորաֆոդ չի գա[220]:

1168(2514). Ռախին խելըռները խըմեցին՝
խելոքցան,
Խելոքները խըմեցին՝ խելըռան:

1169(2515). Ռախին ջիգարով աշխատող արհեստավորի հարազատ արունն է:

1170(2516). Ռախին ցընդի ու կերթա՝
Մարդկանց լավ ու գեշ ըսած
խոսքերը կը մնա:

1171(2517). Ցամաք գդալը բերանը չեն տանի:

1172(2518). Ցամաք ձորի աղվես է դառել[221]:

1173(2519). Ցավը իսանի համար է:

1174(2520). Ցավը քաշողը կը գիտենա:

1175(2521). Ցռան մոզին նախրի անունը կը խայտառակե:

1176(2522). Ցըռան ոռին չի աշե՝ տաքդեղով քյաբաբ կուտե:

1177(2523). Ուզեց կաքավի երիշ քելե, բայց ղառղառինն էլ մոռացավ:

1178(2524). Ուզողի երեսը կթան կովին հավասար է:

1179(2525). Ուզողի մի երեսն է սև, չտվողի՝ երկուսը:

1180(2526). Ուլը քթոցի տակ չի մնա:

1181(2527). Ուխտավորի էշ խոր չի՝ զռռա:

---

[220] Այսինքն՝ աղքատ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[221] Այսինքն՝ նիհարել է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

1182(2528). Ունեցածս օր հավկիթ էնեմ զարկեմ պատին, չի խոսի:

1183(2529). Ունքը շինելու տեղը յաչքն էլ հանեց:

1184(2530). Ուշ լինի, նուշ լինի:

1185(2531). Ուսում ըսածդ օսկի բիլազուկ է:

1186(2532). Ուտող՝ ուտողի, տանող՝ տանողի:

1187(2533). Ուտող ուտողի է:

1188(2534). Ուրագն իր պոչը չի տաշի:

1189(2535). Ուրբաթը շուտ եկավ, քան թե շաբաթը:

1190(2536). Ուրիշի աչքի չոփը կը տեսնի, իր աչքի գերանը չի տեսնի:

1191(2537). Փայ էնողին փայ չը մնաց:

1192(2538). Փառքիդ մեռնեմ, թթու թան ու գարի հաց:

1193(2539). Փարա ձեռքե տվիր՝ բարեկամ ես, յուզեցիր՝ դիշման ես:

1194(2540). Փարա չունիս՝ չըփլախ ես ու էլ բեթար ես:

1195(2541). Փարա ունենալը քիչ է, մարդ պիտի ֆայմ էլ ունենա:

1196(2542). Փարա ունիս՝ մարդ ես, մարդկանց մեջ զարդ ես:

1197(2543). Փարա ունիս՝ զարդ ես, մարդկանց մեջ մարդ ես:

1198(2544). Փարեն եբ ըսես կը խուրդըվի՝ Մարդը չի խուրդըվի:

1199(2545). Փարեն ճամպա ունի, հըմը անկաճ չունի:

1200(2546). Փարից բանձրը՝ ֆայմն է:

1201(2547). Փեշդ քու թշնամին է:

1202(2548). Փեշքաշ ձիու յառկոցը չեն աշե:

1203(2549). Փեսի հովի տակ նստողը աբուռ չունի:

1204(2550). Փեսի շուք՝ փըշի շուք:

1205(2551). Փեսին էիթիբար չկա:

1206(2552). Փետը օր վերցնես, գող շունը գիմանա:

1207(2553). Փըրթած ապուրը բիդուքն էլ կուտեն:

1208(2554). Փողը մութ տեղը լուս կուտա:

1209(2555). Փոշմնողը ու խոսքեն յետ էղնողը նամարդ է:

1210(2556). Փոր է՞, թե՞ հոր է:

1211(2557). Փորձանքը որ գա՝ խաշիլն էլ ատամ կը ջարդե:

1212(2558). Քահանեն ու սատանեն մեկ է:

1213(2559). Քաղվորի մանգաղ գողացող է:

1214(2560). Քամին մարագին ասաց. — Դուռդ բաց՝ դարման բերեմ: Մարագն ասաց. — Իմ դարմանը չտանես, քո բերածը քեզի էղնի:

1215(2561). Քամին մեռավ ցրտուն:

1216(2562). Քամին քարեն ի՞նչ կտանի:

1217(2563). Քամու բերածը, քամին կը տանի:

1218(2564). Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

1219(2565). Քանի որձ ես, պիտի փորձես:

1220(2566). Քաշողը գիտե, չքաշողը ի՞նչ գիտե:

1221(2567). Քաչալ Հասան, Հասան քաչալ՝ մեկ է:

1222(2568). Քաչալը դեղ գիտենա, յիրա գլխուն կենե:

1223(2569). Քասիբ մեռել է՝ տռեմ հոր հոգուն:

1224(2570). Քասիբի մեկը էրկուս չի էղնի:

1225(2571). Քա՞ր ես քցել, որ թևդ ցավի:

1226(2572). Քար էղնիր, չէր դիմանա:

1227(2573). Քարավան որ գընցնի՝ շըներ կը հաչան:

1228(2574). Քարի տակ կմնա, հմա խոսքի տակ չի մնա:

1229(2575). Քարն օր վերցնես, գող շունը կիմանա:

1230(2576). Քարվանջու ղաթրը կը խրտնցնես:

1231(2577). Քաք սըրտին՝ մըխիթարանք:

1232(2578). Քեզ նման տղամարդուն շորերով թաղեմ:

1233(2579). Քեզի լավ ըսողին ի՞նչ ըսեմ:

1234(2580). Քեզի ջրի ձեն է գալմ[222]:

1235(2581). Քեզի վերն էլ եմ տեսե, վարն էլ:

1236(2582). Քեզնեն՝ հեռու, Աստծուն՝ մոտիկ:

1237(2583). Քեզնեն պահեմ, Աստծուց ի՞նչ պահեմ:

1238(2584). Քեզնեն Պողոս-Պետրոս դուս չի գա:

1239(2585). Քիթը բռնես, հոգին կուտա:

1240(2586). Քիթն այնքան է բանցրացրե, որ մզրաղով քոք չի հասնի:

1241(2587). Քիչ բառցի, շուտ դառցի:

1242(2588). Քիֆիրը տեղն օր էկավ, չսիր՝ մեղք է:

1243(2589). Քիֆիրն օր տեղը գա, չսես՝ մեղք է: (տրբ)

1244(2590). Քյաչալը գլոխը չըքերե, Որ քերեց, արուն կը բերե:

1245(2591). Քյաչալը դեղ էնող էղնի իրա գլխին կէնե:

1246(2592). Քյասիբ մարդկանց փարի վըրա գերբ չկա:

1247(2593). Քյասիբ մարդու ունեցածը խորոզի՛մ բառնաս, կտանի:

1248(2594). Քյասիբ մարդու ունեցածը խորոզի՛մ բեռ է:

1249(2595). Քյասիբի կովը թող փորով եղնի, Եբ կը ծնի, թող ծընի:

1250(2596). Քյուֆուրը պատ չի ծակե:

1251(2597). Քո տաք ապուրը ե՞րբ է իմ բերանը վառել:

1252(2598). Քոլիկ իծուն կոտոշ չկա, գիտեն թե հերվան ուլն է:

1253(2599). Քոռը թե ըստեղ, թե Բաղդադ, նրա համար մեկ է:

1254(2600). Քոռը ի՞նչ գուզե՝ երկու աչք:

1255(2601). Քոռը ի՞նչ գուզե՝ ջուխտ՛մ յաչք: (տրբ)

1256(2602). Քչի արժեքը չըհասկըցողը, շատին չի հասնի:

1257(2603). Քրդի փորին են զարկում, ըսում է. — Վա՜յ, մեջքս:

1258(2604). Քրչիկ ուտողը չի տա տոճիկ:

1259(2605). Քու գործած գուլբեն ոտս չի էղնի:

1260(2606). Քու թազին իմ շանը չի բռնե:

1261(2607). Քու ջրիդ փլաֆ չի քցվի:

1262(2608). Քու տերն էլ պիտի ըսե՝ նախիրը էշ ունիմ:

1263(2609). Քու ցերեկվա ման գալածը ես գիշերն եմ ման էկե:

1264(2610). Քու ուստեն իմ յաշկերտս է:

1265(2611). Քուրդ գըտար՝ քըթին տըռեցիր, հա՞:

1266(2612). Քուֆուրը խոսքի ծաղիկն է:

1267(2613). Օխտը մարդու գլուխ կլվա:

1268(2614). Օձը առաջ իր տաքացնողին կզարկե:

1269(2615). Օձը փորս է մտե, լակլակ ման գուկա:

1270(2616). Օձի վրեն թքե՝ օձը կը սատկի:

1271(2617). Օձն օր օձ է, մարդուն ջուր խմելիս չի զարկե:

1272(2618). Օղի, օղի՝ առանց փողի, Խմանք, չհարբանք գեղովի:

1273(2619). Օսկին մութ տեղը լուս կուտա:

1274(2620). Օսկոռ բերող շունը օսկոռ էլ կտանի:

1275(2621). Օր ըսավ մածունը սև է՝ սև է:

1276(2622). Օր ծերություն՝ խայտառակություն:

1277(2623). Օր կը դատի, օր կուտե:

1278(2624). Օրը գա, բարին՝ հետը:

1279(2625). Օրը կերթա, խաթեն՝ հետը:

1280(2626). Օրը ցերեկով օր ճրագով ման գայիր, չէիր գտնի:

1281(2627). Ֆիկտիվ խաղաղությամբ մարդկանց ծակ ոռերը չի կարկըտվի:

---

[222] Այսինքն՝ շատ հեշտ ես կարծում (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

1(2628). Ազգով-տակով

2(2629). Ազիզ օր

3(2630). Ալամ յաշխարք

4(2631). Ալան-բուլան

5(2632). Ալան-թալան

6(2633). Ալիշ-վերիշ

7(2634). Ալրի մեշոք

8(2635). Ախ ու վախ կէնե:

9(2636). Ածիկ հաց

10(2637). Աղ ու հաց

11(2638). Աղբերս օր դու ես:

12(2639). Աղջիկ է՞, թե՞ տղա[223]:

13(2640). Աղջիկը սիրուն է, ղազախ գլմանի:

14(2641). Այան հանել

15(2642). Ային-բեյին էղա:

16(2643). Ային-օյին[224]

17(2644). Անալուր խաղք[225]

18(2645). Անաստված ուրացող

19(2646). Անդանակ մորթես կը:

20(2647). Անլիզու հայվան[226]

21(2648). Անհոտ ծաղիկ

22(2649). Անձեն թվանք[227]

23(2650). Անպակ ջուր[228]

24(2651). Անսխալ մարդ չկա:

25(2652). Անտիտեժե[229]

26(2653). Աչքիս լույս

27(2654). Աչքիս վրա

28(2655). Ապուզամբախ խոսել

29(2656). Ապուռ-զպուռ խոսել

30(2657). Առանց կրակ վառիմ կը:

31(2658). Առոք-փառոք

32(2659). Աստծու երեսից յընկած

33(2660). Աստծու յիրա օրը[230]

34(2661). Աստծու կրակ[231]

35(2662). Աստծու սիրուն

36(2663). Աստված չունիս:

37(2664). Աստված տա[232]:

38(2665). Արաբով կը մոտենա:

39(2666). Արամիս հայրիկը[233]

40(2667). Արջի լավություն

41(2668). Արս ու փարս էղավ[234]:

42(2669). Արփաչայը պաժար է յնկե[235]:

43(2670). Արք ունիմ վրեն:

44(2671). Ափալ-թափալ

45(2672). Ափեղ-ցփեղ խոսել

46(2673). Աքան ցաքան[236]

47(2674). Աքսիգատակ[237]

48(2675). Բազ-բազի

49(2676). Բաղդիդ քար մի քցի:

50(2677). Բաղտը բանի կը:

51(2678). Բայրաղ բացվավ[238]:

---

223 Առաջինը՝ անհաջողություն, երկրորդը՝ հաջողություն (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

224 Այսինքն՝ անպետք բաներ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

225 Այսինքն՝ խայտառակ մարդ (ծանոթ. կազմողների):

226 Այսինքն՝ ոչինչ չգիտե, անգրագետ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

227 Այսինքն՝ արտաքուստ փափուկ, բայց դաժան մարդ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

228 Այսինքն՝ մաքուր ջուր (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

229 Այսինքն՝ անախորժ հոտ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

230 Այսինքն՝ ամեն օր (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

231 Ասվում է շատ ժիր մարդուն կամ չարաճճի երեխային (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի և Պ. Բարսեղյանի):

232 Ասվում է աղքատին (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

233 Կամ մի ուրիշ անուն, բայց կնոջ առաջնեկը: Համեստ և ամաչկոտ կանայք այդպես էին հիշեցնում իրենց ամուսիններին (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

234 Այսինքն՝ շատ տուժեղ վայր ընկնելիս (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

235 Ասվում է հետաքրքիր, անսովոր երևույթի ժամանակ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

236 Այսինքն՝ թափթփված (ծանոթ.բանահավաք Պ. Բարսեղյանի):

237 Այսինքն՝ տանը մնացած, անբախտ աղջիկ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

238 Այսինքն՝ կռիվ բացվեց (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

52(2679). Բանը բանեն անցել է:
53(2680). Բան-ման առնել
54(2681). Բան չունիս:
55(2682). Բանդ էղնել[239]
56(2683). Բանը բուրթ էղավ:
57(2684). Բանը գլոխ եկավ:
58(2685). Բարակ է մանում[240]:
59(2686). Բարակ՚մ օր մտածեմ:
60(2687). Բարի յիշողաց
61(2688). Բարձդ փոխե:
62(2689). Բարի ծաղիկ չի:
63(2690). Բարութի պես մարդ[241]
64(2691). Բաց ու խուփ էնել:
65(2692). Բեդովլաթ
66(2693). Բեյինդ մտամ՝:
67(2694). Բեսու տալ
68(2695). Բեր էդիկ դավա շինենք[242]:
69(2696). Բերան ծռել
70(2697). Բերանը բաց մնաց:
71(2698). Բերանը լիզու է դրե:
72(2699). Բերանը մոմել կայնել է:
73(2700). Բերանը չի բացվի:
74(2701). Բերանը ջուր է առե:
75(2702). Բերանը սրբեց, կայնավ քյանար:
76(2703). Բերանս չի բացվի:
77(2704). Բերնե բերան ջուրը լցվավ:
78(2705). Բերնեն թուլ է:
79(2706). Բերնեն յամուր է:
80(2707). Բերնի թիքա չէ:
81(2708). Բերնի՞ն է յնկե[243]:
82(2709). Բերնիս ջուրը գնաց:
83(2710). Բերնփոխ
84(2711). Բզեզը մտնել[244]
85(2712). Բմբլե բերդ[245]
86(2713). Բմբլե բերդ է շինե:
87(2714). Բմբուլդ սիրեմ:
88(2715). Բոբլիկ է:
89(2716). Բոբոլական կրակ
90(2717). «Բոդլո» սապոն[246]
91(2718). Բոյախանի կարաս խո չէ՞:
92(2719). Բոյով-բուսաթով
93(2720). Բոստանը քար գցել
94(2721). Բովեն թռած է:
95(2722). Բոքոնդ կեր:
96(2723). Բրնձեցիր:
97(2724). Բրոդցկի շաքար[247]
98(2725). Բուշտ ու բաղաջ էղավ:
99(2726). Գաբդ մի բանա:
100(2727). Գալու բաշտան
101(2728). Գեղսի կռիվ
102(2729). Գետնի կոճակ[248]
103(2730). Գլխե հանեց:
104(2731). Գլխով մարդ է[249]:
105(2732). Գլխու գալաջախ
106(2733). Գլխո՞ւ ես:
107(2734). Գլխուն զոռ կուտա:
108(2735). Գլոխը աղալ
109(2736). Գլոխը կերավ:
110(2737). Գլոխը կորցուց:

---

239 Այսինքն՝ կաշկանդված լինել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
240 Այսինքն՝ հիվանդ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):
241 Այսինքն՝ շուտ բռնկվող (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
242 Այսինքն՝ ուտենք (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
243 Այսինքն՝ անկարող է՞ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
244 Այսինքն՝ համոզել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
245 Այսինքն՝ անկայուն (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
246 Այսինքն՝ որակյալ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
247 Այսինքն՝ որակյալ ապրանք (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
248 Այսինքն՝ կարճահասակ է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
249 Այսինքն՝ հասկացող է (ծանոթ.բանահավաք Հ. Օհանյանի):

111(2738). Գլոխս իմս չէ:

112(2739). Գլոխս տարավ[250]:

113(2740). Գլոխքար գնաց:

114(2741). Գլուխը եղել[251]

115(2742). Գլուխը խառն է[252]:

116(2743). Գոռ ու ջայլամ

117(2744). Գործս ալչու է:

118(2745). Գռել-գռփել

119(2746). Գրե պզին:

120(2747). Գրե վրես:

121(2748). Գրե կոնկիս:

122(2749). Դամ բռնել

123(2750). Դաշ ու խոշ կենե[253]:

124(2751). Դավա շինել[254]

125(2752). Դավի-դառապա

126(2753). Դարդ ու ղասավատ

127(2754). Դարդին դարման էնել

128(2755). Դարդս կապուտ է:

129(2756). Դարդս կտռել է:

130(2757). Դարմնի տկի ջուր է:

131(2758). Դափս-դատարկ

132(2759). Դաքը մեջը

133(2760). Դեղ ու դարման

134(2761). Դիզ (կամ դուզ) խորաթա

135(2762). Դիվադադար էղա:

136(2763). Դմդմբոց գուկա:

137(2764). Դսի-նեսի խելք ունի:

138(2765). Դրա շեռը պղտոր է:

139(2766). Դու ապրիս էրթալ[255]:

140(2767). Դու գնդես[256]:

141(2768). Դու մի ըսե:

142(2769). Դու վերի յարտի ցորենն ես:

143(2770). Դու ու քո հերվա հոգին:

144(2771). Դու քեզի-քեզի կառնիս, կուտաս:

145(2772). Դուռը բացող չունի:

146(2773). Ես քու ղոնախն եմ,
քու յաչքիդ լուսը:

147(2774). Երալու-փարալու

148(2775). Երես կուտա:

149(2776). Երեսը դեմ տվավ:

150(2777). Երեսը ետևը դարձավ:

151(2778). Երեսի կաշին պինդ է:

152(2779). Երեսիս մեռոնը գնաց:

153(2780). Երեսից կախ յնկավ

154(2781). Երեսս չի բռնե:

155(2782). Զանզանաթ[257]

156(2783). Զռ ազապ է:

157(2784). Զոզոնա խոսավ:

158(2785). Էդ խելքիդ «քշա՞» ըսինք:

159(2786). Է՛դ է, Մկոն է

160(2787). Էկող՝ էկողի

161(2788). Էշ ներկող է:

162(2789). Էնոր մատը մեջն է:

163(2790). Էնոր յարունը կը խմե:

164(2791). Էնոր փեշեն է բռնե:

165(2792). Էնքան սիրուն է, որ երեսը
հետևեն կերևա:

166(2793). Էսթին-էնթին

167(2794). Էսոր-էնոր կաթը կը մունտռե:

168(2795). Էրազի պես միտքս է:

169(2796). Էրթուգալ

170(2797). Էրթում կրակ կերավ:

---

[250] Այսինքն՝ ձանձրացրեց (ծանոթ.բանահավաք Պ. Բարսեղյանի):

[251] Այսինքն՝ խաբել (ծանոթ.բանահավաք Հ. Օհանյանի):

[252] Այսինքն՝ զբաղված է հազար ու մի գործով (ծանոթ.բանահավաք Հ. Օհանյանի):

[253] Այսինքն՝ խումարի (թղթախաղ) ժամանակ փող է հավաքում (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[254] Այսինքն՝ ուտել վերջացնել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[255] Այսինքն՝ մեռելատուն գնալ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[256] Հեգնանք՝ դու գիտեսի տեղը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[257] Երկրորդական, բայց անհրաժեշտ բան (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

171(2798). Էրկու ոտը մի ամանում դրեց[258]:

172(2799). Էրկու ոտքով եմ էկե:

173(2800). Ընձնեն բեշ բեթար

174(2801). Ընձեն քեզի օսիաթ:

175(2802). Ըսա՛, մի՛ խանձրմի:

176(2803). Ըսել գուզե...

177(2804). Թաժա հարս գլմանի:

178(2805). Թալաթոսել

179(2806). Թալեմ-բոնեմ:

180(2807). Թամ-թազա

181(2808). Թանազուկ չի էնե:

182(2809). Թաշախուստ կէնե[259]:

183(2810). Թավաքալի կը խոսի:

184(2811). Թաց տեղը պառկող չէ:

185(2812). Թափալ-մափալ

186(2813). Թաք ու թուք կերևա:

187(2814). Թե Աստված կը սիրես:

188(2815). Թեփ է կուլ տվել:

189(2816). Թեփ է հանել:

190(2817). Թիզ ու կես՝ գետնի բզեզ:

191(2818). Թիփի մի՛ անե[260]:

192(2819). Թիք-կոլոտ մարդ

193(2820). Թիքա-թիքա էնել

194(2821). Թլըսումը բոզուրմիշ էղավ:

195(2822). Թնդրի կատու է:

196(2823). Թոբա էրա:

197(2824). Թոզ ու դումանը յելավ:

198(2825). Թոկեն փախած

199(2826). Թոկը կտրածն է:

200(2827). Թոկով կապելու է:

201(2828). Թող ջանը դուս գա:

202(2829). Թրաշի քավոր

203(2830). Թրջված հավ

204(2831). Թուր ու թվանք է դարձե:

205(2832). Թուրքի շուն է դարձե:

206(2833). Թուք ու մուր երեսին

207(2834). Թուք ու մուր թափեց:

208(2835). Թուք ու մուքս կերավ:

209(2836). Թքածս չեմ լիզե:

210(2837). Թքեմ՝ կչորանա[261]:

211(2838). Թուքը բերնիս մեջ չորցավ:

212(2839). Թևերս կտրեցին:

213(2840). Ժեշտ յնկանք:

214(2841). Ժիժի գալ

215(2842). Ի սերն Աստծու:

216(2843). Իզով-թոզով կորավ:

217(2844). Իծանը եկել են:

218(2845). Իմս ընձի հասավ:

219(2846). Ինգիլիզի դանակ[262]

220(2847). Ինչ որ ա:

221(2848). Ինչ որիս ա:

222(2849). Ինչ պտուղ է:

223(2850). Ինչ պրոբի մարդ է:

224(2851). Ինչն ինչոց է:

225(2852). Ինս ու ջինս

226(2853). «Ինքը» էկավ[263]:

227(2854). Ինքար էնել[264]

228(2855). Իշու երկիր խո չէ՞:

229(2856). Իշու զատկին, գիլու բարկենտնքին

230(2857). Իշու ինադը բռնեց:

231(2858). Իշու նահատակ

232(2859). Իշու պես զռռա կը:

---

[258] Այսինքն՝ իր խոսքն առաջ տարավ (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[259] Ուզում է ցույց տալ իրեն, հագուստը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[260] Այսինքն՝ դատարկ մի խոսի (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[261] Այսինքն՝ իր ուժն է ցույց տալիս (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[262] Այսինքն՝ որակյալ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[263] Այսինքն՝ ամուսինը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[264] Այսինքն՝ հրաժարվել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

233(2860). Իշու տեղ է դրե:

234(2861). Լամբե-լամբ լցվավ:

235(2862). Լամպի շուշա խո չէ[265]:

236(2863). Լա՛վ-լա՛վ, թուլցու:

237(2864). Լավ ձեռք ունի[266]:

238(2865). Լեղիս պատռավ:

239(2866). Լեղիս ցամքավ:

240(2867). Լեզվակոխ երին:

241(2868). Լեզուն յերկնցել է:

242(2869). Լըլկվել է:

243(2870). Լի օր

244(2871). Լիզուդ քեզի քաշե:

245(2872). Լիզուն խաձե

246(2873). Լոբի-լոբի դուս մի տա:

247(2874). Լոբի կերած գլմանի[267]:

248(2875). Լուն դավա կը շինե:

249(2876). Լուռ ու մունջ

250(2877). Լուսը քեզի տեսնողին:

251(2878). Խաթերս համար

252(2879). Խաթրը առնել

253(2880). Խաղք ու խայտառակ

254(2881). Խամ կը քանդե:

255(2882). Խաչք ու բեղք

256(2883). Խափելն էլ խո փարով չէ:

257(2884). Խելքամաղ էղավ:

258(2885). Խելքդ սիրեմ:

259(2886). Խելքեն դուս կուտա:

260(2887). Խելքը գնաց:

261(2888). Խելքը հացի հետ է կերել:

262(2889). Խելքի պտուկ

263(2890). Խելքի տոպրակ

264(2891). Խելքիդ աղ ցանեմ:

265(2892). Խելքին զոռ կուտա:

266(2893). Խելքս բան չի կտռե:

267(2894). Խելքս չի հասնի:

268(2895). Խեղճի օջախը մարեց:

269(2896). Խոլերի տարին[268]

270(2897). Խոսելու վրա է:

271(2898). Խոսք ու խորաթա

272(2899). Խոսքդ թագավորցնեմ:

273(2900). Խոսքդ շաքրով կտրեմ:

274(2901). Խոսքը երթիկը մի քցի:

275(2902). Խոսքը լիզվիս վրա է:

276(2903). Խոտի տակի ջուր է:

277(2904). Խորոզը յերթիք է հանե:

278(2905). Խորոզը նալեր է:

279(2906). Խորոզլամիշ կեղնի:

280(2907). Ծախել-ծխել

281(2908). Ծածկադմբոց էրեց:

282(2909). Ծակ բուկ[269]

283(2910). Ծակ յաչք է:

284(2911). Ծակ ու ճեղ

285(2912). Ծանդռ տեղդ մի՛ թեթևցնե:

286(2913). Ծանդռ տեղդ նստի:

287(2914). Ծանդռ ու բարակ

288(2915). Ծերը ծերին հասցնել

289(2916). Ծո՛, այ օղուլ

290(2917). Ծո՛, ջան

291(2918). Ծռտի-պռտի բան

292(2919). «Կալոսի պռկեն» չալե[270]:

293(2920). Կակուխ փուշ է:

294(2921). Կամը կալից հանեց:

295(2922). Կապե փախած

296(2923). Կապելու խելառ

---

[265] Այսինքն՝ հասարակ չէ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[266] Այսինքն՝ լավ ձեռագիր ունի (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[267] Այսինքն՝ խելացի չէ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[268] Ժամանակագրություն է (խոլերայի համաճարակի բռնկման տարին) (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[269] Այսինքն՝ ագահ մարդ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[270] Դա գյումրեցոց եղանակն է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

297(2924). Կատու պատռել

298(2925). Կարթդ մի քցե:

299(2926). Կարճ կտռե:

300(2927). Կարճ ու կլոր՝ ծոցի լոր:

301(2928). - Կարմրա՛, գա՛մ[271]:

302(2929). Կարոտցել եմ՝ լիզուն խաձե:

303(2930). Կարոտցել եմ՝ յանկանջը կանչե:

304(2931). Կացինը քարին դիպավ:

305(2932). Կերած-խմած

306(2933). Կերածս կոնակս գնաց:

307(2934). Կերածս քթես էկավ:

308(2935). Կիսատ-պռատ

309(2936). Կծիկը բացեց:

310(2937). Կնիկ մարդու բաղնիք դառավ:

311(2938). Կնիկ մարդու քոքը կտռվի:

312(2939). Կողքի յնկավ[272]:

313(2940). Կոճի-բռռ[273]

314(2941). Կոտր յնկավ[274]:

315(2942). Կոտրած գդլի պես մեջ է յնկե:

316(2943). Կոֆցած աղջիկ[275]

317(2944). Կպռե կարասի խարճ մարդ

318(2945). Կռնակ ունի:

319(2946). Կսկուծ հաց

320(2947). Կտոր-բրթուջ էկավ[276]:

321(2948). Կրակ ուտես:

322(2949). Կրակի գին է[277]:

323(2950). Կուռկուռի ձագ է դառե:

324(2951). Հազր մալի բաբասի է:

325(2952). Հալ ու մաշ

326(2953). Հալալ կաթնակեր

327(2954). Հախեն գալ

328(2955). Համը բերանը մնաց:

329(2956). Համտես էնել

330(2957). Հանաք-մասխարություն

331(2958). Հաշիվդ առ:

332(2959). Հաչե-հաչե, մնա:

333(2960). Հավ ու ճիվ

334(2961). Հավկթի միջեն ելած

335(2962). Հավկիթ խուզող է:

336(2963). Հարամ կաթնակեր

337(2964). Հարաքաթս գնացել է:

338(2965). Հարաքաթս պարպավ: (տրբ)

339(2966). Հարկավորություն ունի[278]:

340(2967). Հե՛յ գիտի յաշխար:

341(2968). Հեչ, կը խոսիս:

342(2969). Հեչ, միջեն չէ:

343(2970). Հե՛չ, պարպած է[279]:

344(2971). Հեռի լսողաց

345(2972). Հեռի փեշերեդ

346(2973). Հեռի քեզնեն

347(2974). Հերիք է լակվռտիս:

348(2975). Հլը գլխու չէ յընկե:

349(2976). Հոգի ունիմ տալու:

350(2977). Հոգիդ կոծեմ:

351(2978). Հոգիդ մի ծախե:

352(2979). Հոգիդ սիրեմ:

353(2980). Հոգին բերանն էկավ:

354(2981). Հոգին խորն է:

355(2982). Հոգին կրակն է քցե:

356(2983). Հոգիս առավ:

---

[271] Ասել է դեռահաս միամիտ աղջիկը, որին եկել էին խնամախոս և որին մայրը նախօրոք ուղարկել է տաք վառարանի մոտը կանգնի, որպիսի կարմրի՝ գեղեցկանա (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[272] Այսինքն՝ համառեց (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[273] Այսինքն՝ կոպիտ մարդ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[274] Այսինքն՝ սնանկացավ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[275] Այսինքն՝ հասակն առած աղջիկ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[276] Այսինքն՝ կոտրատվեց (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[277] Այսինքն՝ շատ թանկ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[278] Այսինքն՝ բնական պահանջ ունի (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[279] Այսինքն՝ առանձնահատուկ է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

357(2984). Հոգուն հասավ:
358(2985). Հոգուս տունը մարավ:
359(2986). Հոգուտ մեղք մի էնե:
360(2987). Հողդ տակցավ:
361(2988). Հողոց-մոխրոց էղավ:
362(2989). Հոր գինը վրեն է դրել:
363(2990). Հորդ խերին
364(2991). Ձեթ մարդ է[280]:
365(2992). Ձեն ու ձուգ չի հանե:
366(2993). Ձենը տաք տեղեն գուկա:
367(2994). Ձեռ ու ոտ է էղե[281]:
368(2995). Ձեռք առնել
369(2996). Ձեռք բռնել
370(2997). Ձեռք կուտա:
371(2998). Ձեռք քաշել
372(2999). Ձեռս խոմ քարի տակը չէ:
373(3000). Ձեռքե գնաց[282]:
374(3001). Ձեռքը թեթև է:
375(3002). Ձեռքը ծանդռ է:
376(3003). Ձեռքը քարի տակը չէ:
377(3004). Ղաբուլ էնել
378(3005). Ղաշանք է:
379(3006). Ղարալի չուխալի տղա
380(3007). Ղարաչուխալի
381(3008). Ղոճա էշ է:
382(3009). Ղռ ձի
383(3010). Ղուտումս կոտրավ:
384(3011). Ճակատս բաց է:
385(3012). Ճամփես կաշե:
386(3013). Ճանճից ճմուռ կհանե:
387(3014). Ճանս ալչու է:
388(3015). Ճեփ-ճերմակ
389(3016). Ճզե կռնկիս:
390(3017). Ճզեն յելավ:
391(3018). Ճղել արանքը[283]
392(3019). Ճճլմորթ էնել
393(3020). Ճոշմիշ էղնել
394(3021). Ճվտմիշ էղնել
395(3022). Մազ մնաց:
396(3023). Մազալու մարդ
397(3024). Մազե կարմունջ
398(3025). Մազե կարմունջ դառավ:
399(3026). Մազի չափ էլ խելք չունի:
400(3027). Մազիս համբրնքով
401(3028). Մազփեթուկի[284]
402(3029). Մաթ մնալ
403(3030). Մախմուրահան էղնել
404(3031). Մաղդ գործե[285]
405(3032). Մաղը ծակ է:
406(3033.). Մահը յաջքովս տեսա:
407(3034). Մայիլ մնալ
408(3035). Մանդռ-մունդռ
409(3036). Մանկութ ծանոթ է:
410(3037). Մավա չի երթա:
411(3038). Մատը խածեց[286]:
412(3039). Մատի վրա կը խաղցնե:
413(3040). Մատի փաթթոց է էրե:
414(3041). Մատ՚մ անասուն է[287]:
415(3042). Մատներուս միսը կերա:
416(3043). Մատով ցուց կուտան:
417(3044). Մատս՝ խուփ:
418(3045). Մատս մեջն է:
419(3046). Մարդու բերնի ջուրը կերթա:

[280] Այսինքն՝ կպչուն մարդ է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[281] Այսինքն՝ ոգևորվել է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[282] Այսինքն՝ ուշաթափվեց (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[283] Այսինքն՝ փախչել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):
[284] Մազերը փետրել, սգալ, ողբալ:
[285] Այսինքն՝ գործիդ նայիր (ծանոթ. բանահավաք Պ.Բարսեղյանի):
[286] Այսինքն՝ գլխի ընկավ (ծանոթ.կազմողների):
[287] Այսինքն՝ փոքր է՝ անհասկացող (ծանոթ. բանահավաք Պ.Բարսեղյանի):

420(3047). Մարդուս յաչքը ծակ է:

421(3048). Մարթ-մուրթ չկար:

422(3049). Մե ծիկո՛մ թաբլե[288]:

423(3050). Մե յաչքը հազար յանկաջ է:

424(3051). Մե հոգավորը

425(3052). Մե մատ՛մ մոմ կը շինես:

426(3053). Մե ոտը գերեզմանն է:

427(3054). Մե չեշիտ

428(3055). Մեկ էլ տեսնիս

429(3056). Մեղրաբերան մարդ

430(3057). Մեղքը կոտռավ:

431(3058). Մեղքը՝ քու վիզդ:

432(3059). Մենծ էշը ախոռում ենք մոռցել:

433(3060). Մեջներեն սև կատու է անցել:

434(3061). Մեջք չունիմ:

435(3062). Մեր գլխին տեղ ունես:

436(3063). Մեր հացին աղ չկա:

437(3064). Մի ուռի հնդուհավի պես:

438(3065). Միննաթ գալ

439(3066). Միշավարա էնել

440(3067). Միշտարի յաչքով աշել

441(3068). Մխի գլոխ խո չենք:

442(3069). Մոլլի պարտքը տալ[289]

443(3070). Մորե մերկ

444(3071). Մռթշվորել

445(3072). Մտա տունը, բարևս մոռացա:

446(3073). Մտքիդ մեջ աղոթք կէնես:

447(3074). Մրեն ելանք, մրջուրն ընկանք:

448(3075). Մրքիս տկեն կանցնի:

449(3076). Մուխը պնչնիրես ելավ:

450(3077). Մուխս մարավ:

451(3078). Մուրազը փորը մնաց:

452(3079). Յախա թափ տալ

453(3080). Յախալամիշ է էրե:

454(3081). Յակոն տանը չէ:

455(3082). Յամռթամեռ

456(3083). Յամոթուս գետինը մտա:

457(3084). Յամուր երես ունի:

458(3085). Յայլեն սարին է:

459(3086). Յանկանջը կանչե:

460(3087). Յանկանջը յերկնցուց:

461(3088). Յանկանջը սրեց:

462(3089). Յանկջի յետև մի քցե:

463(3090). Յանկջի օղ շինե:

464(3091). Յանկջները կախեց:

465(3092). Յանկջիդ բուրդը հանե:

466(3093). Յաչք է քցե[290]:

467(3094). Յաչքե շոռ

468(3095). Յաչքետես-բերնեկարոտ

469(3096). Յաչքերեն լոթի

470(3097). Յաչքը դռանն է:

471(3098). Յաչքը մտնել

472(3099). Յաչքի լուս տալ

473(3100). Յաչքի ճիճուն կոտռել

474(3101). Յաչքի փուշ է դառել:

475(3102). Յաչքիս ղժի-բժի կերևաս:

476(3103). Յաչքով էնել

477(3104). Յաչքս ճամփուն մնաց:

478(3105). Յաչքս պաղավ:

479(3106). Յաչքս վրեն մնաց:

480(3107). Յառաջ մե հատ՛մ թաբլե, յետև խոսի:

481(3108). Յառաջը կուտ կը ցանե:

482(3109). Յառավոտը էն գլխեն

483(3110). Յառկեքը կոտռեցի:

484(3111). Յառկեքը համբռել եմ:

485(3112). Յատուկ կը խնդրվիմ:

486(3113). Յարալու Մահմուդ է դառե:

---

[288] Այսինքն՝ փոքր գավաթով խմե (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[289] Այսինքն՝ բնական պահանջը բավարարել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[290] Այսինքն՝ սիրահարվել է (ծանոթ. բանահավաք Պ.Բարսեղյանի):

487(3114). Յարունը ջուր չի դառնա:

488(3115). Յարունը քաղցր է[291]:

489(3116). Յբը ղոլմ է:

490(3117). Յերեկվա կերածս է մտքես յելե:

491(3118). Յերկան-բարակ խոսել

492(3119). Յերկան ճանկ է[292]:

493(3120). Յէսօրվա պես միտքս է:

494(3121). Յիջաթ էրեց:

495(3122). Յիրար կուտեն:

496(3123). Յնձի համար վսո ռավնո է:

497(3124). Յուդա ես կտռել:

498(3125). Յիրար հետ չաշկի-լոշկի են:

499(3126). Յնկած-յելած մարդ է:

500(3127). Յոլա էրթալ

501(3128). Յոլով-թոլով կնիկ է:

502(3129). Յո՞ւմ դարտն է կտռե, որ:

503(3130). Յուրտի՞ց է՝ գողին կսեն:

504(3131). Նա բուն տաքացնող չի[293]:

505(3132). Նա իմ աջ թևն է:

506(3133). Նա իր բերանի համը գիտե:

507(3134). Նա իր բերանի համը չիդե:

508(3135). Նազ ու տուզ

509(3136). Նալատ քեզի, չար սատանա:

510(3137). Նալերը քցեց:

511(3138). Նեյնիմ-նեյնիմ կենե:

512(3139). Նիկոյի յախոռը գնաց:

513(3140). Նես է քցե:

514(3141). Նրա բաժին աշխարհը խավարեց:

515(3142). Նրա երգը երգված է:

516(3143). Շան բախտ ունի:

517(3144). Շան թագավորի տեղ է:

518(3145). Շան լափ լցեց գլխուն:

519(3146). Շան մսի գին է:

520(3147). Շան չափ հաջեց:

521(3148). Շան պես սընգսընգաց:

522(3149). Շան տեղ չի դնե:

523(3150). Շան օր կը քաշե:

524(3151). Շան օրի է:

525(3152). Շանսատակ էղավ:

526(3153). Շաշ ու բեշ կաշե:

527(3154). Շապիկը կարճ է:

528(3155). Շառ ու շլթաղդ քաշե:

529(3156). Շատ կապը կտրածն է:

530(3157). Շեյ ու շալակ շորեր

531(3158). Շեռդ պղտոր կերևա:

532(3159). Շիլափլաֆ դառցուցիր:

533(3160). Շները վրեդ գանգատ կերթան:

534(3161). Շներոց-գելերոց էրավ:

535(3162). Շոռը դուս տվեց:

536(3163). Շուն կերած մարդ

537(3164). Շուն ու կատու դառան:

538(3165). Շուն ու շանգալ

539(3166). Ողջում, ախպեր:

540(3167). Ոչ բարով...

541(3168). Ոչ ու փուչ էղավ:

542(3169). Ոտը կտռեց դռնեն:

543(3170). Ոտը տեղ բռնեց:

544(3171). Ոտներդ յորղնիդ գորա երկնցու:

545(3172). Ոտները հինա է դրե:

546(3173). Ոտներս իմս չէ:

547(3174). Ոտներս ջո՞ւրը դնենք:

548(3175). Ոտով-գլխով կորավ:

549(3176). Ոտով-ձեռքով կէնե:

550(3177). Ո՞ր մեկը ըսեմ:

551(3178). Չայիր-չիման տեղ

552(3179). Չայրեն կախել է:

553(3180). Չաչանակ է դառե[294]:

---

[291] Այսինքն՝ սիրելի է (ծանոթ. բանահավաք Պ.Բարսեղյանի):

[292] Այսինքն՝ իրա կողմ քաշող (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[293] Այսինքն՝ թափառող է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[294] Այսինքն՝ շատախոս է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

554(3181). Չար Ուլիանոս

555(3182). Չափ ու չվան չկա:

556(3183). Չափ ու չվանը կորցել է:

557(3184). Չափը չի լցե:

558(3185). Չափչու խանը դառավ:

559(3186). Չաքուրկի տարին[295]

560(3187). Չեղնիմ-չիմանամ:

561(3188). «Չեմ» ու «չում» կենե:

562(3189). Չի ղմըշի:

563(3190). Չիվու պես թքվի կը:

564(3191). Չխոսկան հարս

565(3192). Չնդրմիշ է էղե:

566(3193). Չոքե-չոք գնաց:

567(3194). Չոթի-փոթի բան

568(3195). Չրաղ եղավ:

569(3196). Չուլ ու մուլ

570(3197). Չուլ ու չափութ

571(3198). Պաթմիշ էղավ

572(3199). Պասս կերա:

573(3200). Պատի ծակեն յելած

574(3201). Պատի ծակեն յելած գլմանի:

575(3202). Պատի ծակը չոփ՝մ խրենք:

576(3203). Պատիժ դառավ գլխուս:

577(3204). Պարապ-սարապ

578(3205). Պզդի Դրըմփ է դառե[296]:

579(3206). Պլոճիկով տղա է[297]:

580(3207). Պլորով տան տիկին

581(3208). Պոչը խուզեց:

582(3209). Պոչի հետ կը խաղա:

583(3210). Պոպկած ծառը կհանեմ նրան:

584(3211). Պռունկը պատռած[298]

585(3212). Պուտ՝մ ջուր է էղե:

586(3213). Ջանին հասավ:

587(3214). Ջանին միննաթ:

588(3215). Ջանջալ մարդ

589(3216). Ջանս դուս գար:

590(3217). Ջարդ ու խուրդ էղավ:

591(3218). Ջարդ ու կտոր գուկա:

592(3219). Ջեբը մկները կը խաղան:

593(3220). Ջիգրով մարդ է:

594(3221). Ջրի ճամփա է սարքել:

595(3222). Ջրի պես կը կարդա:

596(3223). Ջրի վրեն ակ կը ֆըռացնե:

597(3224). Ջուխտ ձեռքով գոմբես:

598(3225). Ջուխտ շահու՝մ դոխ կը թռցնե:

599(3226). Ջուր կը պնդցնե:

600(3227). Ջուր պնդացնող է երևում[299]:

601(3228). Ջուր տու քշի արավ:

602(3229). Սաբաբ էղնել

603(3230). Սաբր էկավ:

604(3231). Սաղ-սալամաթ

605(3232). Սամի կոտրող է:

606(3233). Սանդ զարկողին «դըխկ» կէնե:

607(3234). Սանդ խփողին թըխկ է ասում[300]:

608(3235). Սատանեն կսե...

609(3236). Սատանի ետի կրունկն է:

610(3237). Սատանի ձիուն է նստե:

611(3238). Սատանի ճրագ

612(3239). Սատանի պոչ

613(3240). Սատանի սաղմոս

614(3241). Սարք ու կարք

615(3242). Սաքի թե

616(3243). Սելդ քշե՛:

617(3244). Սեյր էնել

---

295 Ժամանակագրություն՝ մորեխների հարձակման տարին:

296 Դրըմփ – կրճատված Դրամբյան, քաղաքի հին հարուստը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

297 Այսինքն՝ համարձակ, անվախ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

298 Այսինքն՝ ուրախ մարդ (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

299 Այսինքն՝ ստախոս է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

300 Այսինքն՝ անգործ է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

618(3245). Սեր քցել

619(3246). Սեր ու սավդա

620(3247). Սիլի-բիլի էնել

621(3248). Սիլլա կպցուց:

622(3249). Սիվտի-սիվտի ենել[301]

623(3250). Սիրտ չունիմ:

624(3251). Սիրտը դարտկեց:

625(3252). Սիրտը զարկեց:

626(3253). Սիրտը շահեց:

627(3254). Սիրտս գնաց:

628(3255). Սիրտս տաք չէ էդ բանի վրեն:

629(3256). Սիրտս փորիս մեջ ջուր դառավ:

630(3257). Սիրտս փորս ընկավ:

631(3258). Սխտորել

632(3259). Ստին ինչ ըսեմ:

633(3260). Սրտաբաց մարդ

634(3261). Սրտիս սուն

635(3262). Սուս ու փուս

636(3263). Սուտ բստրել

637(3264). Սուտ ու մուտ բստրել

638(3265). Սուտ խոսելը խո փարով չէ:

639(3266). Սուրբ Աստված դառցուցիր:

640(3267). Սև աղվես դառավ:

641(3268). Սև ու մութ օրեր

642(3269). Վազ գալ

643(3270). Վախտը գիտե:

644(3271). Վախտի-բեվախտի

645(3272). Վա՛յ չուտող-չխմողին

646(3273). Վայը էկել յընձի տարել է:

647(3274). Վայս տաս:

648(3275). Վարի-վերո մարդ

649(3276). Վարողդ-վաստկողդ[302]

650(3277). Վենձցե-պզտկցել է:

651(3278). Վեր քաղել[303]

652(3279). Վերի գլոխը նստեցնել

653(3280). Վերնատունը դարտակ է:

654(3281). Վերջանալու վրա է:

655(3282). Վիզը դառել է տանձի պոչ:

656(3283). Վիզը ծուռ մնաց:

657(3284). Վիրունի հավ

658(3285). Վո՛վ եղոտ սիրտ ունի:

659(3286). Վռազ գլխու

660(3287). Վոկզկի տալ[304]:

661(3288). Վրա-վրա կուտա:

662(3289). Վրաեն անցի[305]:

663(3290). Տազ էնել

664(3291). Տալտա տեղ

665(3292). Տամարը բռնեց:

666(3293). Տանող՝ տանողի

667(3294). Տանս ճրագ

668(3295). Տասնըհինգ օրվա լուսինակ գլմանի:

669(3296). Տարի օր է:

670(3297). Տարին տասերկու ամիս

671(3298). Տափակ-տափակ դուս կուտա:

672(3299). Տափակ-տափակ կը խոսի: (տրբ)

673(3300). Տեղդ ծանդռ նստի:

674(3301). Տեղոց-տեղ

675(3302). Տեր Աստված, փառքդ շատ:

676(3303). Տըստըզ մարդ է:

677(3304). Տընկըվիզ էնել

678(3305). Տին ու նայ[306]

679(3306). Տիրոջը խեր չունի:

680(3307). Տիրոջը միջեն հանիր:

---

[301] Այսինքն՝ հետքը կորցնել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[302] Այսինքն՝ հայրդ և մայրդ (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[303] Այսինքն՝ արագորեն ուտել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[304] Այսինքն՝ թռչկոտել (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[305] Այսինքն՝ երկար մտածի (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[306] Բանահավաք Պարույր Բարսեղյանն այս արտահայտությանը երկու բացատրություն է տվել՝ 1. ուրախության ազդանշան, 2. կաշառք:

681(3308). Տկինը կարդա[307]:

682(3309). Տնանկ աղքատ է:

683(3310). Տնով-տեղով

684(3311). Տոռի ձի

685(3312). Տորտոզալ

686(3313). Տռլտի բան

687(3314). Տռճիկ տվեց:

688(3315). Տրաք-տրաք գուկա:

689(3316). Տուր թե կուտաս

690(3317). Տուր ու դմփոց

691(3318). Տօ՛, տնավեր

692(3319). Ցամաք ձորի աղվես

693(3320). Ցուրտ-ղիամաթ

694(3321). Ցփռ բերան

695(3322). Ութը կը քելե:

696(3323). Ուլդ մի քցե[308]:

697(3324). Ունեցած-չունեցած

698(3325). Ունքերը ղալամով քաշած է:

699(3326). Ուտող ուրացող է:

700(3327). Ուրբաթախոս

701(3328). Ուրմիշ գալ

702(3329). Փաթլամիշ էղնել

703(3330). Փակե մոզու ոռը[309]:

704(3331). Փասա-փուսեն քաշեց

705(3332). Փափուկ բարձ դրեց գլխու տակը:

706(3333). Փափուկ երես ունի:

707(3334). Փեյտա էղնել

708(3335). Փեշը դսեն է:

709(3336). Փեշը քաշել

710(3337). Փետե ջորի[310]

711(3338). Փո՛ր է թե ֆոր

712(3339). Փոր-փոշման

713(3340). Փորս վեց-վեց կէնե:

714(3341). Փրցլոտել

715(3342). Փուղկ կակալ

716(3343). Փուշը թողեց:

717(3344). Փուչ կենդանի

718(3345). Փուչ-փչացած

719(3346). Փուքը իջավ:

720(3347). Քադակ յընկնել

721(3348). Քաթադան, թե քասմադան[311]

722(3349). Քաղցրյարուն աղջիկ է:

723(3350). Քամի վռնդող

724(3351). Քամու ջաղաց է:

725(3352). Քամու քարվան քշող է:

726(3353). Քանի բոչկա տրաքցուցիր:

727(3354). Քանիսը քամին տարել է:

728(3355). Քասսա խոսք

729(3356). Քար ու քացաղ ուտեիր:

730(3357). Քարը գոգեդ թափե:

731(3358). Քեֆ-քեֆ էղնել

732(3359). Քեֆը թամամ է:

733(3360). Քեֆը տնկոզ է:

734(3361). Քեֆին մի դիպնի:

735(3362). Քեֆս տեղը չէ:

736(3363). Քթեն բերեց:

737(3364). Քթեն-բերնեն էկավ:

738(3365). Քթեն էլ չդրեց:

739(3366). Քթեն ընկած է:

740(3367). Քթես մուխը հանեց:

741(3368). Քթի մազ է:

742(3369). Քթի տակը խնդաց:

743(3370). Քթին չի դնե: (տրբ)

744(3371). Քթի շուրվեն քաշեմ:

745(3372). Քիթ ու պռունկ

---

[307] Այսինքն՝ մտքինդ արտահայտիր (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[308] Այսինքն՝ մի վախենա (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[309] Այսինքն՝ վերջացրու խոսակցությունը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[310] Ասվում է աղջկա մասին (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[311] Ասվում է նոր զգեստը շնորհավորելիս (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

746(3373). Քիթ-քթի կը խոսին:

747(3374). Քիթը կախեց:

748(3375). Քիչ-միչ

749(3376). Քիրմ՞ջ կը մարես:

750(3377). Քիփս պատը[312]

751(3378). Քձի-բրի մարդ

752(3379). Քյոշա-պուճաղ

753(3380). Քյունջ ու պուճաղ

754(3381). Քյուֆուր-քյաֆար

755(3382). Քո տաքն ու պաղը շատ եմ տեսել:

756(3383). Քոռուփուչ արավ[313]:

757(3384). Քոփակ շանը հաչե՞լ կը սովորցնես:

758(3385). Քցխրտալ

759(3386). Քու բախտը յընկնիմ:

760(3387). Քու սրտեդ չունիմ:

761(3388). Քունս փախավ:

762(3389). Օխտը պորտով

763(3390). Օխտը սարի ավազակ

764(3391). Օձ խուզող է:

765(3392). Օղվել-ցողվել

766(3393). Օջախի քոռ

767(3394). Օսկի ձեռներ ունի:

768(3395). Օսկոռ-մոսկոռ

769(3396). Օսկոռ քցեց բերանը:

770(3397). Օր ցերեկով

771(3398). Օր ու յարև է տեսե:

772(3399). Ֆարազի

773(3400). Ֆիլան-բեֆան

774(3401). ֆլան-ֆստան

775(3402). Ֆլի տարին[314]

[312] Ասվում է վեգ խաղալիս (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[313] Այսինքն՝ ունեցածը վատնեց, լափեց (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[314] Հավանաբար նկատի ունի այն տարին, որ Երևանի կենդանաբանական այգուց փիղը փախել էր (ծանոթ. կազմողների):

ՕՐՀՆԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ

1(3403). Աճեք, բազմացեք, ծլեք, ծաղկեք:

2(3404). Անուշ ուտեք:

3(3405). Անփորձ անքատար մնաս աշխարհում:

4(3406). Աչքդ լույս:

5(3407). Աչքդ՝ վարդի վրա:

6(3408). Աչքի լուսով մնաս:

7(3409). Ապրի արևդ:

8(3410). Ապրին որդիքդ:

9(3411). Ապրիս, գառս, Աստծու օրհնությունը վրեդ եղնի:

10(3412). Ապրիս, զորանաս, ծլիս, ծաղկիս:

11(3413). Աստծո աջը գլխիցդ անպակաս լինի:

12(3414). Աստծով մխիթարվիս:

13(3415). Աստծու աջն ու խաչը վրեդ էղնի:

14(3416). Աստծու աչքը վրեն եղնի:

15(3417). Աստծու լուսը հասնի:

16(3418). Աստծու հոր հոգուն մեռնիմ:

17(3419). Աստծու շնորքը վրայեդ անպակաս էղնի:

18(3420). Աստծու օղորմությունը հասնի քեզի:

19(3421). Աստծու օրհնենքը գլխուդ անպակաս էղնի

20(3422). Աստված ամեն մարդու սրտի գյորա իրան տա:

21(3423). Աստված արևդ երկարե:

22(3424). Աստված արևդ օրհնե:

23(3425). Աստված բանիդ, գործիդ յաջողություն տա:

24(3426). Աստված բարի դուռ՛մ բանա:

25(3427). Աստված գործդ յաջողե:

26(3428). Աստված դատաստանը քաղցր էնե:

27(3429). Աստված դիշմանի սրտովը չենե:

28(3430). Աստված երեսդ թող նայի:

29(3431). Աստված էլ բեթարեն ազատե:

30(3432). Աստված էնոր ծնունդն օրհնե:

31(3433). Աստված էնոր հողով քեզ կյանք տա:

32(3434). Աստված թե մե դուռը փակեց, մեկել դուռը կը բանա:

33(3435). Աստված թող յամեն մարդու յիրան սրտովը տա:

34(3436). Աստված իրա տեսությանը արժանացնե:

35(3437). Աստված լուսավորե ձեր անցավորաց հոգին:

36(3438). Աստված խելք ու շնորհք տա քեզ:

37(3439). Աստված ծուռը ծռե, անմեղը ազատե:

38(3440). Աստված հալալիդ հարամ չը խառնե:

39(3441). Աստված հախը նհախին չտա:

40(3442). Աստված ձեզի անփորց և անքատար պահե:

41(3443). Աստված մե ձեռքդ մեկելին էյթաճ չենե:

42(3444). Աստված մեկդ հազար էնե:

43(3445). Աստված մեկի տեղը տասը տա:

44(3446). Աստված մենձի շուքը մարդու գլխուց անպակաս էնե:

45(3447). Աստված մուխաննաթին էյթաճ չենե:

46(3448). Աստված յաշխրքին խաղաղություն տա:

47(3449). Աստված յերկան ձեռքդ չը կարճցնե:

48(3450). Աստված շատ չհամարե:

49(3451). Աստված չար աչքը խափանի:

50(3452). Աստված չարը խափանե, բարին առաջնորդե:

51(3453). Աստված պահի նշանածդ:

52(3454). Աստված ջանիդ սաղություն տա:

53(3455). Աստված սեղանդ շեն պահե:

54(3456). Աստված սրտիդ համեմատ թող քեզ տա:

55(3457). Աստված վերջդ բարի էնե:

56(3458). Աստված վերջը բարի էնե: (տրբ)

57(3459). Աստված տա՝ չխնայե:

58(34060. Աստված տանդ վրա շուք անի:

59(3461). Աստված ցամաք յաչքով պառվցնե:

60(3462). Աստված ունեցածիդ բարաքատ տա:

61(3463). Աստված քեզի գողեն, բոզեն ազատե:

62(3464). Աստված քեզի երկար կյանք տա:

63(3465). Աստված քեզի հորդ ու մորդ բաշխե:

64(3466). Աստված՝ քեզի պահապան:

65(3467). Աստված քեզի սաղ պահե:

66(3468). Աստված քեզի ուժ ու կարողություն տա:

67(3469). Աստված օջախդ վառ պահե:

68(3470). Աստված օղորմի ննջեցյալների հոգուն:

69(3471). Աստված օրհնե ճամփեդ:

70(3472). Արևդ ապրի:

71(3473). Բազկիդ՝ ուժ:

72(3474). Բախտավոր ապրեք, ձեր տան ծուխը չկտրվի:

73(3475). Բախտավոր զավակ էղնի:

74(3476). Բախտիդ ծառը բերքով կռանա:

75(3477). Բաղնիքդ՝ անուշ:

76(3478). Բանից կարոտ չը մնաս:

77(3479). Բարի բախտ ունենաս:

78(3480). Բարի տեսանք, բարին յարևուդ:

79(3481). Բարի օրինակ դառնաս:

80(3482). Բարին՝ յարևուդ:

81(3483). Բարձդ բարի էղնի:

82(3484). Բարով էրտաս, բարով գաս:

83(3485). Բարով հասնես մուրազիդ:

84(3486). Բարով հասնիս թակ ու պսակիդ:

85(3487). Բարով մաշես, էսիկ հին էղնի, հազար նոր էղնի:

86(3488). Բարով մաշես շորերդ՝ էդիկ հին էղնի, հազարը նոր էղնի: (տրբ)

87(3489). Բարով մաշես, ջառմեն քաշես:

88(3490). Բարով մաշես, ջուրը քաշես: (տրբ)

89(3491). Բերանդ մեղր ու շաքարով բանաս:

90(3492). Գաբրել հրեշտակը հավարիդ հասնի:

91(3493). Գդալով ցանես, շերեփով ժողվես:

92(3494). Գեշ օր չը տեսնիս:

93(3495). Գեշ օրդ էս օրն էղնի, էլ յուրիշը չը տեսնիս:

94(3496). Գեշ օրվա կարոտ մնաս:

95(3497). Գերեզմանը լուս կտրի:

96(3498). Գլխիդ ոսկի թափի:

97(3499). Գլխովդ պտույտ գամ:

98(3500). Դըռներըդ միշտ բաց լինի:

99(3501). Դիշմանիդ յաչքը քոռանա:

100(3502). Դոստդ՝ ուրախանա, դիշմանդ՝ քոռանա:

101(3503). Դրախտի բաժին էղնի:

102(3504). Դրախտի փայ էղնիս: (տրբ)

103(3505). Դու սաղ եղնիս:

104(3506). Եդեմական դրախտին արժանանաս:

105(3507). Ելած սրտիդ համբերություն:

106(3508). Երկան արև էղնիս:

107(3509). Երկար ձեռըդ չկարճանա:

108(3510). Զորանաս, ապրիս, ծաղկիս:

109(3511). Էդ դարդը օր ես եմ տեսե, թշնամին չտեսնի:

110(3512). Էրեխեքիդ գլխից անպակաս լինես:

111(3513). Ըսածս յանկըջիդ օղ էրա:

112(3514). Թակ ու պսակիդ արժանանաս:

113(3515). Թե մեկ'մ ցանես, հազար ու մեկ քաղես:

114(3516). Թե սաղ է, Աստված բանն յաջողե, թե մեռած է՝ օղորմի հոգուն:

115(3517). Թող երկինքը ցավին փրկություն տա, գինուն էժանություն, մահին թանկություն:

116(3518). Թող ձեր մեկը հազար դառնա:

117(3519). Թող ձեր սուփրեն միշտ լաքոտ էղնի:

118(3520). Թուրդ կտրուկ էղնի:

119(3521). Ժամի զընկընկան զանկերը բարեխոս էղնին քեզի:

120(3522). Իսիկ հին էղնի, հազարը նոր էղնի.

121(3523). Լսի փայ էղնիս:

122(3524). Լուս դառնա էնոր հոգին:

123(3525). Լուսը կաթե գերեզմնին:

124(3526). Խմողաց խումն անուշ:

125(3527). Խոսքդ շաքարով կտրեմ:

126(3528). Ծառդ դալար մնա:

127(3529). Ծերանաս, ծերի պատիվն իմանաս:

128(3530). Ծիրանի պես հասնիս:

129(3531). Ծլես, ծաղկիս, զորանաս, բանի կարոտ չը մնաս:

130(3532). Ծլիս, ծաղկիս, փռփռջոտիս:

131(3533). Կանանչ յարվուդ խերը տեսնիս:

132(3534). Կերածդ կաթը հալալ էղնի:

133(3535). Կյանքդ թող երկար լինի:

134(3536). Կյանքդ ջրի նման երկար լինի:

135(3537). Կյանքիդ մեջ հեչ ախ ու վախ չէնես:

136(3538). Կյանքում վատ օր չունենաս:

137(3539). Հալալ էղնի կերածդ կաթը:

138(3540). Հալալ էղնի քո տված կաթը:

139(3541). Հալալ կաթնակերի ռաստ գաս:

140(3542). Հալալ հաց ուտես:

141(3543). Հայր Աբրահամի բարաքաթը մեջը էղնի:

142(3544). Հայր Աբրահամի գոգը նստիս:

143(3545). Հայր Աբրահամի օրհնությունը վրեդ էղնի:

144(3546). Հարյուր ճյուղ ունենաս, շատ սերունդներ ունենաս:

145(3547). Հեչ ախ ու վախ չենես:

146(3548). Հիվանդություն թող չլնի, ապրեք շատ ու շատ տարիներ:

147(3549). Հոգիտ արքայություն էրթա:

148(3550). Հոգիդ դրախտը էրթա:

149(3551). Հոգիդ լուսո փայ դառնա:

150(3552). Հոգով ուրախանաս:

151(3553). Հող ցանեք, ոսկի հնձեք:

152(3554). Հողը բռնես՝ օսկի դառնա:

153(3555). Հոտավետ ու երջանիկ ծաղիկներ լինեք:

154(3556). Հորդ օջախին հաստատ մնաս:

155(3557). Հորով, մորով էղնի[315]:

156(3558). Հորով, մորով մեծնաս:

157(3559). Հորով-մորով մնաս: (տրբ)

158(3560). Ձեռդ որ չոր տեղը դնես, կանընչի:

159(3561). Ձեռներդ մեջքիդ դրած պապիկ դառնաս:

160(3562). Ձեռքդ քարին խփես, կանաչ բուսնի:

161(3563). Ձեռքերդ դալար լինի:

162(3564). Ձեր յաչքը լաց ու թաց չը տեսնի:

163(3565). Ձնծաղիկի պես ծլիս ու ծաղկիս:

164(3566). Ճակատդ յամեն տեղ բաց էղնի:

165(3567). Ճանապարհդ միշտ կանաչ լինի:

166(3568). Մադաղդ էղնիմ:

167(3569). Մազերդ չծռվի:

168(3570). Մատդ երբեք փուշ չմտնի:

169(3571). Մարդ ապրիս, մարդ մեռնիս:

170(3572). Մե բարձի՛մ ծերանաք[316]:

171(3573). Մեկդ հազար էղնի:

172(3574). Մեր գլխից անպակաս եղնիս:

173(3575). Մի ձեռքդ մեղրի մեջն էղնի, մեկելը՝ եղի:

174(3576). Միշտ խնդում յերես ու ուրախ ապրիս:

175(3577). Միշտ ուրախ էղնիս:

176(3578). Մորդ կաթի պես հալալ էղնի:

177(3579). Մուրազիդ հասնիս:

178(3580). Յերկան յարև էղնիս:

179(3581). Յիշատակդ բարի մնա:

180(3582). Նամարդ մարդու էյթաճ չեղնիս:

181(3583). Շատ ապրիս:

182(3584). Շեն կենաս:

183(3585). Շեշմա դառնաս:

184(3586). Շերեփը ձեռիդ մեռնես[317]:

185(3587). Շնորքդ անպակաս եղնի:

186(3588). Ոսկի ձեռքեր ունենաս:

187(3589). Ոտդ բարի էղնի:

188(3590). Ոտդ քարին չառնի:

189(3591). Ոտքդ ուր դնես կանաչի:

190(3592). Չոլը էշտաս, կանաչ դառնա:

191(3593). Չոր քարին էրթաս, յառաջդ կանանչ բուսնի:

192(3594). Պարզերես էղնիս:

193(3595). Ջրի պես երգար կյանք ունենաս:

194(3596). Ջրի պես զուլալ էղնի բաղտդ:

195(3597). Ջրի պես յերկան յարև էղնիս:

196(3598). Ջուրդ՝ անուշ:

197(3599). Սաղ ջանով պառվնաս:

198(3600). Սեղանդ միշտ առատ լինի:

199(3601). Սեղանդ միշտ բաց էղնի:

200(3602). Սեղանդ միշտ էսպես լի էղնի:

201(3603). Սիմավոն ծերունի դառնաս:

202(3604). Սրտիդ սիրածին բարով արժանի էղնիս:

203(3605). Սուրբ հոգով մխիթարվես:

204(3606). Սև օր չտեսնիս:

205(3607). Վերջդ բարի էղնի:

206(3608). Տա Աստված, օր դիշմանդ վար աշե, յամոթով մնա:

---

[315] Ասում են նորածիններին (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[316] Ասում են նորապսակներին (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

[317] Այսինքն՝ իրավունքը միշտ ձեռքին մնա (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

207(3609). Տանողի տանը մնաս:

208(3610). Տան դռներդ միշտ բաց լինի:

209(3611). Տաշտներդ լի հաց լինի:

210(3612). Տառոսը ձեզի էղնի:

211(3613). Տերը փրկե ազատե յամեն չարից ու փորձանքից:

212(3614). Տունդ շեն մնա: Ցամաք աչքով, ուրախ սրտով ծերանաս:

213(3615). Ցամաք յաչքով հող մտնիս:

214(3616). Ուխտդ ընդունական էղնի:

215(3617). Ուրախ ծերություն ունենաս:

216(3618). Փակ դռները յառաջդ բացվին:

217(3619). Փուշ բռնես՝ վարդ դառնա:

218(3620). Քաշածդ ապաշխարանք էղնի:

219(3621). Քարը էրշտաս, կանաչ բուսնի:

220(3622). Քարի էրթաս՝ կանանչ դառնա:

221(3623). Քրիստոս տերը քեզ պահապան:

222(3624). Քու մերը չը մեռնի:

223(3625). Քու տունը չը քանդվի:

224(3626). Օխտը որդով սեղան նստիս:

225(3627). Օղորմի կողքի մեռելներու հոգուն:

226(3628). Օղորմի հորդ:

227(3629). Օղորմի հորդ ու մորդ հոգուն:

228(3630). Օղորմի ձեր անցավորաց հոգուն:

229(3631). Օճախդ վառ մնա:

230(3632). Օճաղդ հաստատ մնա:

251(3633). Օճաղիդ մուխն ու ծուխը անպակաս էղնի:

252(3634). Օջախդ շեն մնա:

253(3635). Օրհնյալ լինեք:

254(3636). Օրհնվեք, ձեր օջախը շեն մնա, ձեր մեկը հազար դառնա:

255(3637). Օրհնվի ձեր յոթը պորտը:

ԵՐԴՈՒՄՆԵՐ

1(3638). Աղբորս ազիզ յարևը գիտենա, թե...

2(3639). Անարատ կաթը վկա:

3(3640). Անունհորը վկա:

4(3641). Առեք-կերեքը վկա:

5(3642). Աստծու անունը գիտենա:

6(3643). Աստված գիտենա, թե...

7(3644). Աստված, երկինք, գետին, ծով, ցամաք, չիդեմ:

8(3645). Աստված յաչքս հանե, թե գիտեմ:

9(3646). Աստված պատիժս տա, թե գիտեմ:

10(3647). Աստված վկա:

11(3648). Ավետռանը գիտենա:

12(3649). Բարի լուսը գիտենա:

13(3650). Բերանս ծռվի, թե սուտ եմ:

14(3651). Բոբոլական կրակին գամ, թե ես եմ:

15(3652). Գետինը մտնեմ, թե սուտ կըսեմ:

16(3653). Գլոխս քարին տամ, թե էդպես բան էնեմ:

17(3654). Գունդ ու կծիկ էղնիմ, թե խաբեմ:

18(3655). Դժոխքի կոճ դառնամ:

19(3656). Դժոխքի փայ էղնիմ, թե...

20(3657). Դիզը ըսա, հոգի ունիս տալու:

21(3658). Դու էղնիս քու Աստվածը:

22(3659). Ես իմ Աստվածը չիդեմ:

23(3660). Ես՝ իմ հոգին, դու գիտես:

24(3661). Ես՝ իմ Քրիստոսը, չիդեմ:

25(3662). Ես ու իմ հոգին

26(3663). Ես փչանամ, թե...

27(3664). Երեսս յետևս դառնա, թե սուտ եմ:

28(3665). Երկինքը գիտենա:

29(3666). Երկինք գետին վկա, օր չիդեմ:

30(3667). Զորավոր խաչը վկա:

31(3668). Էս բարի լուսը գիտենա, օր ես չեմ:

32(3669). Էս հալալ հացը իմ յաչքերը բռնե,

թե ես խաբար եմ:

33(3670). Էս հացը վկա:

34(3671). Էս հացի բարաքատը չը տեսնիմ, թե ես եմ:

35(3672). Թե հորդ գերեզմանը կը սիրես, ըսա:

36(3673). Թե սուտ ըսես, որդիքդ թաղես:

37(3674). Թե սուտ խոսամ, լուսը վրես չբացվի:

38(3675). Թե սուտ կսեմ, իշու պես զռռամ:

39(3676). Թե սուտ կսեմ, իսոնք թրաշեմ[318]:

40(3677). Թե սուտ կսեմ, լաչակ կապեմ:

41(3678). Թե սուտ կսեմ, կանանչ մեռոնը յնձի քրքրե:

42(3679). Թե սուտ կսեմ, ռախով հոգիս չը թռչեմ:

43(3680). Թող Աստված գլխուս քար քցե, թե...

44(3681). Իմ ու քո յարևը վկա, թե...

45(3682). Խաչը գիտենա, օր...

46(3683). Խաչը վկա...

47(3684). Խավարիմ, թե...

48(3685). Ծակծկվիմ, թե ես եմ:

49(3686). Կանանչ մեռոնը գիտենա:

50(3687). Կարգդ վկա[319]:

51(3688). Կերածդ կաթը հարամ էղնի, թե չերթաս:

52(3689). Կերածդ կաթը քթիցդ գա, թե չսես:

53(3690). Կյանքս մեռնի, թե...

54(3691). Հայրիկիս ազիզ յարևը գիտենա:

55(3692). Հացին քոռ աշեմ, թե գիտեմ:

56(3693). Հոգիս դժոխքի բաժին եղնի, թե...

57(3694). Հոգիս սատանի փայ էղնի, թե ես եմ:

58(3695). Հոգիս վկա:

59(3696). Հորով-մորով եթում մնամ, թե ես եմ:

60(3697). Հորս արև:

61(3698). Հորս գերեզմանը պղծեմ, թե առել եմ:

62(3699). Հորս գերեզմանը վկա:

63(3700). Ձեռներս քոքոջ մնան, թե գիտեմ:

64(3701). Ձեռքդ սրտիդ դիր ու խղճով ըսա:

65(3702). Ճշմարիտ կսեմ:

66(3703). Մայրամ մայր Աստվածածինը գիտենա:

67(3704). Մեկուճարիս թաղեմ, թե սուտ կսեմ:

68(3705). Մեկուճարիս խերը չը տեսնիմ, թե ես եմ:

69(3706). Մեղանչեմ, թե սուտ եմ:

70(3707). Մեղքդ վիզս, թե...

71(3708). Մշու Սուլթան սուրբ Կարապետ

72(3709). Մորս արև, վիրև Աստված վկա:

73(3710). Մորս գերեզման

74(3711). Մուրազիս չը հասնիմ, թե վերջ չը տամ:

75(3712). Մուրազս փորս մնա, թե...

76(3713). Յարևիս խերը չը տեսնիմ, թե...

77(3714). Յարևս մեռնի, թե...

78(3715). Յարևս վկա:

79(3716). Յընձի թաղես, թե սուտ ըսես:

80(3717). Յոթվերքը վկա:

81(3718). Նստածս տեղեն չելնիմ, թե...

82(3719). Նստած տեղս չորնամ, թե բան գիտեմ:

83(3720). Շան կաթ կերած էղնիմ, թե սուտ կսեմ:

84(3721). Ոչ ու փուչ էղնիս, թե խոսիս:

85(3722). Պապանձվիմ, թե ձեն հանիմ:

86(3723). Պատարաքը գիտենա:

87(3724). Պարտական մնամ ահեղ դատաստանին, թե...

88(3725). Պարտական մնամ, թե ես եմ:

---

[318] Ցույց տալով բեղերը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[319] Ասվում է քահանային (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

89(3726). Սաղ սալամաթ տուն չը հասնիմ, թե գիտեմ:

90(3727). Սատանի փայ դառնամ, թե մեկել ըսեմ:

91(3728). Ստի յաչքը դուս գա:

92(3729). Ստի օճախը Աստված քանդե:

93(3730). Սուտ ըսողին թող Աստված փչացնե:

94(3731). Սուտը թող կկզի:

95(3732). Սուտը ուտե հավի բուդը:

96(3733). Սուրբ կարգը վկա:

97(3734). Վասակ դառնամ, թե ըսեմ:

98(3735). Տանս վրա անեծք թափի, թե ես գիտեմ:

99(3736). Տունս տակն ու վրա էղնի, թե ինատս չը հանեմ:

100(3737). Տունս-տեղս քանդվի՝ հավատա՛:

101(3738). Ցամաք հացի կարոտ մնամ, թե...

102(3739). Ցավ ու դարդի տեր դառնամ, թե խոսիմ:

103(3740). Ցավ ու չոռը վրես թափի, թե...

104(3741). Փչանամ, կուրանամ, թե...

105(3742). Քիթս կը կտրեմ, թե չեղնի:

106(3743). Քոռ յաչքով աշեմ էս հացին, թե...

107(3744). Քոռանամ, լուսս խավարի, թե...

108(3745). Քրիստոսի խաչը վկա էղնի, որ...

109(3746). Քրքրիմ, թե բանից խաբար եմ:

110(3747). Քու մեղքը՝ իմ վիզը, թե գիտեմ:

111(3748). Քու հոգիդ, քու Աստվածը, ըսա:

112(3749). Քու յարևը գիտենա, թե...

113(3750). Օխտը անունը պատիժս տա, թե...

114(3751). Օխտը ռանգ ցավ գա վրես, թե գիտեմ:

115(3752). Օճախս մարի, տունս քանդվի, թե...

ԱՆԵԾՔՆԵՐ

1(3753). Ազարը տանի քեզ:

2(3754). Ազիզդ թաղեմ:

3(3755). Ազիզդ սատկի:

4(3756). Ակոռի[320] դառնաս:

5(3757). Աղի պես հալիս:

6(3758). Աղջի՛, օձի բնին նստես:

7(3759). Անեծքդ բերնիցդ դուս գա, ծոցդ թափի,

8(3760). Գոտիդ էլ ղայիմ կապած էղնի, օր ծոցեդ չը թափի:

9(3761). Անժամ, անպատարաք թաղեմ:

10(3762). Անմաս, անբաժին սատկիս:

11(3763). Անմուրազ մնաս:

12(3764). Անտեր, անտիրական մնաս:

13(3765). Անունդ կտրվի:

14(3766). Անունդ յաշխրքից վերանա:

15(3767). Անունդ սևանա:

16(3768). Անունդ քարին գրեմ:

17(3769). Ասեղ տնգես՝ հովը նստես:

18(3770). Ասեղի ծակով մտնես, դուրս չգաս:

19(3771). Աստված բոր տա, եղունկ չտա:

20(3772). Աստված գա քու հախեն:

21(3773). Աստված գլխուդ խռով կենա:

22(3774). Աստված դավուլ-զուռնով տունդ քանդե:

23(3775). Աստված դոստին ուրախացնե, դիշմանին քոռցնե:

24(3776). Աստված էդոր թևերը թափե:

25(3777). Աստված քլխուտ քար քցե:

26(3778). Աստված քոս տա՝ եղունգ չտա:

27(3779). Աստծու կրակն ու բոցը թափի վրեդ:

28(3780). Աստծու պատիժը վրեդ թափի:

29(3781). Արգանդդ չորնա:

---

[320] Ակոռի գյուղը գտնվել է Մեծ Մասիսի լանջին և հիմնիվեր կործանվել է 1840 թ. երկրաշարժի ժամանակ (ծանոթ. կազմողների):

30(3782). Արեգակին քոռ յաչքով աշես:

31(3783). Արևի երես չտեսնիս:

32(3784). Բալեդ մեռնի:

33(3785). Բարձիդ տակն ուտիս[321]:

34(3786). Բարով յիշատակդ յաշխրքի յերեսից կտրվի

35(3787). Բեբելական կրակին արժանանաս:

36(3788). Բելավիս, մեռնիս:

37(3789). Բեղ ու մորուքդ թափի:

38(3790). Բեմուրադ մեռնիս:

39(3791). Բեմուրադ մնաս:

40(3792). Բերանդ պապանձվի:

41(3793). Բերանդ օրթնի:

42(3794). Բերնեդ յելածը գիրկդ թափի:

43(3795). Բըրընձի պըզտի հատիկը Թող թըռնի չար մարդկանց կատիկը:

44(3796). Բոբոլական կրակը վրեդ թափի:

45(3797). Բոյդ անլվա կտավը դնեմ:

46(3798). Բոյդ թաղեմ:

47(3799). Բոյդ խամ թելերով չափեմ՝ չը բարձրնա:

48(3800). Բոյդ սև անդունդը պարտկվի:

49(3801). Բոյով կարճնաս:

50(3802). Բորոտիս:

51(3803). Գարդանդ խուրդ ու խշիլ էղնի:

52(3804). Գեշ օրից հեչ յաչք չը բանաս:

53(3805). Գետինը բշտես:

54(3806). Գետինը մտնիս:

55(3807). Գետնի օխտը ղաթը պարտկվիս:

56(3808). Գետնի օխտը ղաթն էրթաս:

57(3809). Գիլու ու շան կեր էղնիս:

58(3810). Գլխիդ սև ամպեր հավաքվի:

59(3811). Գլխիդ վիրևը՝ կռավատիդ վիրևը, տղամարդու վարտիք, շաբիգ չտեսնիս:

60(3812). Գլխուդ խշիմ թափի:

61(3813). Գլոխդ՝ քարին:

62(3814). Գլոխդ՝ քարովը, երեսդ՝ պատովը:

63(3815). Գյանջ ու բուրջ մեռնիս:

64(3816). Գյարդանդ խուրդ էղնի:

65(3817). Գյուլան փորդ մտնի:

66(3818). Գյուլլեն ջիգյարիդ դիպչի:

67(3819). Գյուլլի տարած, ոչ մեծենաս:

68(3820). Գնալդ լինի, գալդ չլինի:

69(3821). Գոթենաս ու քրքրիս:

70(3822). Գոռ ու ջանլամ էրթաս:

71(3823). Գոռբեգոռ էղնիս:

72(3824). Գոռիդ մեջը չը դատարիս:

73(3825). Գրող ու մահ ուտես, փորեդ դուս չգա:

74(3826). Գրող ու ցավ:

75(3827). Գրողը բկեդ բռնե:

76(3828). Գրողը՝ բկիդ, մահը՝ երեսիդ:

77(3829). Գրողը կողքեդ բռնե:

78(3830). Գրողը տանի քեզի:

79(3831). Գրողի բրթուջ դառնաս:

80(3832). Գրողի դավտարը յնկնիս:

81(3833). Գրողի հոր ծոցը էրթաս:

82(3834). Գրող՝մ՝ յերեսդ:

83(3835). Գրողի ծոծն էրթաս:

84(3836). Գրողի փայ եղնիս:

85(3837). Գունդ ու կծիկ էղնին ձեռներդ:

86(3838). Դառը դադիս, դառդակ նստիս:

87(3839). Դառը դատիս, յուրիշները ուտեն:

88(3840). Դատածդ բարձի տակը ուտես:

89(3841). Դատաստանդ աստված էնե:

90(3842). Դատիս, աշխատիս, ձեռքդ կուշտ փորիդ չը դնես:

91(3843). Դարդ ու ցավի գաս:

92(3844). Դեղին ջրերն ընկնես:

93(3845). Դժոխքի փայ էղնիս:

94(3846). Դժոխքի քյութուկ էղնիս, վառիս-վառիս չանցնիս:

[321] Այսինքն՝ հիվանդ ժամանակ ուտես այն, ինչ որ զրպարտությունով առար (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

95(3847). Դժոխքի օխտը ղաթը անցնիս:

96(3848). Դիշմնիդ խնդացք եղնիս:

97(3849). Դիվոտիս:

98(3850). Դոշիդ վարդեր շարեմ:

99(3851). Դոնեն դուս չելնիս:

100(3852). Դրախտի երես չը տեսնիս:

101(3853). Դուռ չը բանաս, տուն չը մտնիս:

102(3854). Դուռդ սև քարով շարեմ:

103(3855). Զայրումար ուտես:

104(3856). Եթիմ մնաս:

105(3857). Երեսդ առնակավոր շները լիզեն:

106(3858). Երեսդ յետևդ դառնա:

107(3859). Երզնկյանը դուռդ գա[322]:

108(3860). Երկնքիդ ու լենքիդ նստեմ, քեզի գովեմ:

109(3861). Երկնքից կրակ թափվի գլխիդ:

110(3862). Զայր ու զխկում ուտես:

111(3863). Զրկի-բրկի գաս:

112(3864). Էդ էլ քեզի, Աստծու կրակն էլ քեզի:

113(3865). Էն օրը յնկնիս, օր շները ձեռնեդ հաց չառնին:

114(3866). Էն օրը սև էղնիր, օր դու յաշխար էկար:

115(3867). Էնպես հիվնդնաս, օր չամիչը օխտը տեղով կրծես:

116(3868). Էնքան ապրիս, օր ճանճ էղնիս պատին կպնիս:

117(3869). Էրթալդ էղնի, գալդ չէղնի:

118(3870). Էրկու լսով անմա(?)[323] նստիս:

119(3871). Էրկու լսով մարում մնաս:

120(3872). Ընձնեն պրծնիս, քու ցավեդ ու դարդեդ չը պրծնիս:

121(3873). Թագ ու պսակի արժանի չեղնիս:

122(3874). Թազա մեռել էղնիս, քարթու հիվանդ:

123(3875). Թաժա մեռել էղնիս:

124(3876). Թաղեմ ազիզդ:

125(3877). Թաղեմ բոյդ:

126(3878). Թաղեմ գլուխդ:

127(3879). Թաղեմ թիկունքդ:

128(3880). Թելիկ-մելիկ մեռնիս:

129(3881). Թերմաշ մնաս:

130(3882). Թող երկինքը քեզի անիծե:

131(3883). Թող թուքդ բերանդ չորնա:

132(3884). Թուք ու նալլաթ՝ յերեսիդ:

133(3885). Թևերդ թուլանան:

134(3886). Ժուռ ու մուռ մեռնիս:

135(3887). Իզդ ու թոզդ յաշխրքեն վերանա:

136(3888). Իզդ ու թոզդ քամին տանի:

137(3889). Իմ տան աղ ու հացը քթեդ գա:

138(3890). Ինչքան գեշ մարդիկ կան ու բոզ,
Թող թաթարի ընկնին իծու
բրուցելյոզ:

139(3891). Ինչքան զխտիս, չը կշտանաս:

140(3892). Ի՞նչ է, չոռը պինչդ է:

141(3893). Իշու նհատակ էղնիս:

142(3894). Լաշդ շան փայ էղնի:

143(3895). Լաչակս գլխիդ էղնի:

144(3896). Լավ օրի երես չը տեսնիս:

145(3897). Լարդ լարեմ, պատանքդ կարեմ:

146(3898). Լեզուդ բերանումդ չորանա:

147(3899). Լեզուդ լալկվի:

148(3900). Լեզուդ ծակծկվի, ծոծրակիցդ ելնի:

149(3901). Լեզուդ պապանձվի:

150(3902). Լեղի ջուր խմես:

151(3903). Լեն յաշխրքի մեջ նեղ ապրիս:

152(3904). Լենքիդ նստիմ, բոյիդ լամ:

153(3905). Լիզուդ ծոծրակիցդ դուս գա:

154(3906). Լիզուդ պապանձվի:

155(3907). Լուլումբայի[324] օրը յնկնիս:

---

[322] Երզնկյանը հին տների քանդողն էր (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[323] Բանահավաքն այս բառը չի հասկացել, հավանաբար բանասացը «անմահ» կամ «անմայր» բառն է օգտագործել (ծանոթ. կազմողների)

[324] Պատրիս Լումումբա (1925–961) – Կոնգոյի դեմոկրատական հանրապետության վարչապետ, խոշտանգումներից հետո գնդակահարվել է (ծանոթ. կազմողների):

156(3908). Լուս օրդ սևնա:

157(3909). Լուսդ թափի յառաջդ:

158(3910). Լուսդ խավարի:

159(3911). Խաչը գլխուդ խռով կենա:

160(3912). Խաչը քեզի քոռցնե:

161(3913). Խելռիս չոլե-չոլ յնկնիս:

162(3914). Խլանա յականջդ:

163(3915). Խմբապետ Մխիթարի պես իշավարի մեռնիս:

164(3916). Խնդումի երես չը տեսնիս:

165(3917). Ծակծակ լեշիդ նստիմ:

166(3918). Ծակիս-ծակծկիս դեղին ջրերը վազեն:

167(3919). Ծակծկիս, ծակ-ծակ շապիկ հագնիս:

168(3920). Ծիծդ ծակի:

169(3921). Ծիծդ ծոցիդ մեջ ծակծկվի, քրքրի:

170(3922). Ծնունդդ մեռնի:

171(3923). Ծովն էրթաս՝ չորնա, պապակած մնաս:

172(3924). Կայծակի փայ դառնաս:

173(3925). Կայնիս՝ միսդ թափի, նստիս՝ օսկոռներդ:

174(3926). Կանաչ օրդ կտրի:

175(3927). Կանիծեմ՝ լվացքիդ մեջ տղամարդու շալվար չեղնի:

176(3928). Կատղիս՝ թևերիդ միսը կռծես:

177(3929). Կատղիս՝ մսերդ ուտես:

178(3930). Կարմիր գյուլուլիմ ռաստ գաս:

179(3931). Կարողությունդ բարձի տակը ուտես:

180(3932). Կարոտ մնաս մի կտոր հացի, պուտ'մ ջրի:

181(3933). Կերածդ հացը գլխուդ խռով մնա:

182(3934). Կերածդ կաթը հարամ էղնի:

183(3935). Կերածդ հացը յաչքերդ բռնե:

184(3936). Կերածդ փորեդ դուս չգա:

185(3937). Կերածդ քթեդ գա:

186(3938). Կիսամանգզիլ մեռնիս

187(3939). Կյանքդ փուչ էղնի:

188(3940). Կյանքիդ խերը չտեսնիս:

189(3941). Կոճիկներուդ աղ ցանեմ:

190(3942). Կպրե կարասը յնկնիս:

191(3943). Կռնակդ գետնին մաշի:

192(3944). Կրակը գլուխդ թափի:

193(3945). Կրակը յնկնի ջանդ:

194(3946). Կուբին մտնիս:

195(3947). Կուրանաս:

196(3948). Հարամ էղնի կերածդ:

197(3949). Հացդ ցամաք ուտես:

198(3950). Հացը պատիժդ տա:

199(3951). Հերդ ու մերդ անիծվին:

200(3952). Հերդ ու մերդ մեռնին:

201(3953). Հերդ ու մերդ շներու հետ հաչեին, Քեզի իմ տունը չբերեին:

202(3954). Հերդ ու մերդ շուն դառնան:

203(3955). Հոգիդ շան լափ դառնա:

204(3956). Հոգիդ սատանոց բաժին դառնա:

205(3957). Հոգիդ ցավի:

206(3958). Հող տամ արևիդ վրեն:

207(3959). Հողեմ գլոխդ:

208(3960). Հողը գլխիդ:

209(3961). Հողն ու մոխիրը գլուխդ էղնի:

210(3962). Հոտդ յաշխրքից կտռի:

211(3963). Հորդ դուռը սև քարով շարեի, տունս չգայիր:

212(3964). Հորդ թիթինը թափի:

213(3965). Հորդ տունը ավիրի:

214(3966). Հորդ ու մորդ՝ կողն ու կուշտը:

215(3967). Հորս ծոծն էրթաս:

216(3968). Հորս ցավը ուտեիր:

217(3969). Ձենդ փորդ մնա:

218(3970). Ձեռդ կանըչնին զարկես՝ փուշ դառնա:

219(3971). Ձեռդ կուշտ փորիդ չը դնես:

220(3972). Ձեռդ ոռիդ կպչի:

221(3973). Ձեռներդ գյունդարմա էղնին՝ դոշիդ կպնին:

222(3974). Ձեռներդ քոքոջ դառնային:

223(3975). Ձեր դուռը սև քարով շարվի:

224(3976). Ձունը գա գլխուդ:

225(3977). Ղառղոները յաչքերդ հանեն:

226(3978). Ղարա խաբարդ առնիմ:

227(3979). Ղարա ղուրղուշունի գաս:

228(3980). Ղաֆիլ-ղադիլի գաս:

229(3981). Ղուրբանս եղնիս, ոտիս տկի ֆողն էղնիս:

230(3982). Ճամփուդ փուշ ու տատասկ բուսնի:

231(3983). Ճանճ դառնաս պատին կպնիս:

232(3984). Մալդ շներն ուտեն:

233(3985). Մահը բկեդ բռնե:

234(3986). Մահի բերանը էրթաս ու յետ չգաս:

235(3987). Մահի հոր շալակը յելնիս:

236(3988). Մահի շալակը քեզի դնեմ, առնի տանի:

237(3989). Մահի ու գրողի տարած:

238(3990). Մահս՝ գլխուդ:

239(3991). Մարդու երես չը տեսնիս:

240(3992). Մարի օջախիդ կրակը:

241(3993). Մե չամիչը օխտը անգամ խածես:

242(3994). Մեծ քուն մտնիս:

243(3995). Մեկուճարդ բարով մեռնի, թաղեմ:

244(3996). Մեռել լողցնես ջուրը խմես:

245(3997). Մեռելի հորը խորանաս:

246(3998). Մեսրոբ Մաշտոցի «Է»-ի օրը յնկնիս:

247(3999). Միլիցու յառաջը յնկնիս:

248(4000). Միսդ թափի:

249(4001). Միսըդ օսկըռիդ ձեն տա:

250(4002). Մոմճոնց կնկա անեծքին գաս:

251(4003). Մտածածդ չը կատարվի:

252(4004). Մուխդ մարի:

253(4005). Մուրազդ փորդ մնա:

254(4006). Մուրազիդ չը հասնիս:

255(4007). Յամեն կիրակի հացդ բերեմ:

256(4008). Յանկջներդ խլանա, ձեն չիմանաս:

257(4009). Յաշխրքում հեչ լավ օր չը տեսնիս:

258(4010). Յաչք ունենաս, լուս չունենաս:

259(4011). Յաչքդ հեչ չը կշտանա:

260(4012). Յաչքդ միշտ յուրիշի դուռը էղնի:

261(4013). Յաչքե-բերնե կարոտ մնաս:

262(4014). Յաչքերուդ սև ջուր յիջնին:

263(4015). Յաչքիդ լսեն մարում նստիս:

264(4016). Յաչքիդ լուսը դուս գա:

265(4017). Յաչքիդ լուսը խավարի:

266(4018). Յաչքիդ լուսը ճերմկի:

267(4019). Յաչքիդ լուսը յառաջդ թափի:

268(4020). Յարևդ թաղեմ:

269(4021). Յարևդ խավարի:

270(4022). Յարևդ մեռնի:

271(4023). Յարևի երես չը տեսնիս:

272(4024). Յարևիդ խերը չը տեսնիս:

273(4025). Յարուն փսխես:

274(4026). Յոխ դաֆտարի գաս:

275(4027). Յուվեդ[325] բլի:

276(4028). Յուր ու կոճոռ էղնիս:

277(4029). Յուրիշի դուռը մնաս:

278(4030). Նաշդ նխշեմ, պատանքդ կարեմ:

279(4031). — Ներողություն, մայրիկ,
ձեր ոտը կոխեցի:
— Ներողությունը վրադ թափի:

280(4032). Նստիս միսդ թափի, կայնիս՝ օսկոռդ:

281(4033). Շան գռեն ուտես:

282(4034). Շան ու գիլու փայ էղնիս:

283(4035). Շանսատակ էղնիս:

284(4036). Շա՛տ ապրիս, գե՛շ ապրիս:

285(4037). Շա՛տ դատիս, քի՛չ ուտես

[325] Խոսքը Յուվա գյուղի մասին է, որ քանդվել է (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

286(4038). Շները միսդ ուտեն:

287(4039). Շները օռնան վրեդ:

288(4040). Շորերդ տերտերին տամ:

289(4041). Շորերով թաղեմ քեզի:

290(4042). Շուն դառնաս, յընկնիս դռները:

291(4043). Ոչ բարով յաշխար գայիր:

292(4044). Ոչ բարով գա:

293(4045). Ոչ բարով էրթա: (տրբ)

294(4046). Ոչ տեսանես Եգիպտոս:

295(4047). Ոչ ու փուչ էղնեիր:

296(4048). Ոտդ Աբրահամի բուդկի ճամփին ջարդի:

297(4049). Ոտդ կոտռի, չոլխնաս:

298(4050). Ոտիս տկի հողը էղնիս:

299(4051). Ոտով-գլխով պարտկվիս:

300(4052). Ոտքդ քարին գա:

301(4053). Չալմիշ էղնիս:

302(4054). Չայդանը եռա, թափի քու հոր տանտեղի վրա:

303(4055). Չարժանանաս լավ օրին:

304(4056). Չարս տանիս:

305(4057). Չը չորնա յաչքիդ յարտսունքը

306(4058). Չմեծանաս:

307(4059). Չոռ ու գրող ուտես:

308(4060). Չոր կոճ դառնաս:

309(4061). Չոր քարին նստիս:

310(4062). Չորնաս, տեղդ մնաս:

311(4063). Չունենամ քեզի պես անառակ զավակ:

312(4064). Չքվիս, չորանաս:

313(4065). Պաթմիշ էղնիս:

314(4066). Պաշտում պատարաքը քեզի խռով մնա:

315(4067). Պառկիս, վրեդ վարդ դնեմ:

316(4068). Պատանքդ կարեմ:

317(4069). Պատանքդ սև թելով կարեմ:

318(4070). Պատերը բռնելով ման գաս:

319(4071). Պատերի տակը սատկիս:

320(4072). Պատերու տակը մնաս:

321(4073). Ջանդակդ շուն ու գիլու փայ էղնի:

322(4074). Ջանիդ խերը չը տեսնիս:

323(4075). Ջանլամը էրթաս ու յեդ չգաս:

324(4076). Ջիգարդ դաղի:

325(4077). Ջնջվի անունդ:

326(4078). Ջրի տակից սև խաբարդ գա:

327(4079). Ջուխդ յաչքով քոռանաս

328(4080). Ջուրը ոռդ տանի:

329(4081). Սաթայելի գոգը նստիս:

330(4082). Սատանեն սիրտդ մտնի, դադար չտա քեզի:

331(4083). Սատանի դասը դատվիս:

332(4084). Սատանի փայ դառնաս:

333(4085). Սարեսար ու ձորեձոր յընկնիս:

334(4086). Սերունդդ կտրվի:

335(4087). Սիրիր, թողիր թերի,
Անիծում եմ, յար ջան,
մնաս որբևերի:

336(4088). Սիրտդ մեռնի:

337(4089). Սուգ մտնիս:

338(4090). Սև գա վրեդ:

339(4091). Սև գիրդ գա:

340(4092). Սև գրողին ռաստ գաս:

341(4093). Սև էղնի երեսդ:

342(4094). Սև խաբարդ առնիմ:

343(4095). Սև կապես:

344(4096). Սև հագնիս:

345(4097). Սև հողերը գլխուդ:

346(4098). Սև հողը մտնիս:

347(4099). Սև հողը պարտկվիս:

348(4100). Սև սիրտ մնաս:

349(4101). Սև ու մութ կապես:

350(4102). Սև օրդ տեսնիմ:

351(4103). Սևալաչակ մնաս:

352(4104). Սևանա անունդ, պատիվդ, հոգիդ, օրդ:

353(4105). Սևանա տակն էրթաս[326]:

354(4106). Վազզած յախպուրին էրթաս՝ ջուրը ցամքի:

355(4107). Վարող ու վաստկողդ գոռբեգոռ էղնին:

356(4108). Վիզդ կոտռի տակդ մնա:

357(4109). Տափն ի մտնես, դուրս չգաս:

358(4110). Տաք քնես, պաղ ելնես:

359(4111). Տեղդ դարտակ տեսնիմ:

360(4112). Տեղնուտեղը ցամքիս:

361(4113). Տիզ դառնաս, պատին կպնիս:

362(4114). Տիրամոր յարեն վրեդ էղնի:

363(4115). Տրաքիս ու պատռվիս:

364(4116). Տուն քանդողի տունը Աստված քանդե:

365(4117). Տունդ դարտակ մնա:

366(4118). Տունդ վրեդ բլի:

367(4119). Տունդ տեղդ վերանա:

368(4120). Տունդ ու տեղդ մոխիր դառնա:

369(4121). Տունդ քանդվի, դուռը շարվի:

370(4122). Տուր ու դմփոցը Աստված գլխիդ անպակաս էնե:

371(4123). Ռախու գուրուֆտար էղնիս:

372(4124). Ցածիկ մնաս, չը յերկնաս:

373(4125). Ցամաք հացի կարոտ մնաս:

374(4126). Ցավը գլխուցդ անպակաս էղնի:

375(4127). Ցավը կողքիցդ բռնե:

376(4128). Ցավս ուտես, ցավս քո պինչ:

377(4129). Ցավս՝ փորդ:

378(4130). Ցավեդ բարով չազատվիս:

379(4131). Ումբր ու արևդ մեռնի:

380(4132). Ումուդդ չորանա:

381(4133). Ուտածդ չը մարսես:

382(4134). Ուտածդ փորեդ դուս չգա:

383(4135). Ուտածդ քթեդ ու պնչեդ գա:

384(4136). Փայդ շան փայ դառնա:

385(4137). Փաթլամիշ էղնիս:

386(4138). Փարա կըտրող, թևերդ կըտրի, հա՛, որ փարեն թև չառնի ու չըթռնի:

387(4139). Փարեդ հող դառնա, քամին տանի:

388(4140). Փարեքդ բարձիդ տակը ուտես:

389(4141). Փորձանքը գլխուցդ միշտ անպակաս էղնի:

390(4142). Փչանաս, պարտկվիս:

391(4143). Փուչ-փչանալու

392(4144). Քամբախ էղնի տունդ ու տեղդ:

393(4145). Քաչալ Գարանի մայլամով մեռնիս:

394(4146). Քար կտռիս:

395(4147). Քեզի թաղեմ:

396(4148). Քեզի պես յիշատակը թաղե՛մ:

397(4149). Քնիս՝ չելնիս:

398(4150). Քո հոր տունը քանդվի:

399(4151). Քոռ բու դառնաս:

400(4152). Քոռ գրողի փայ դառնաս:

401(4153). Քոռ ու փուչ էղնիս:

402(4154). Քոռանա լուսդ:

403(4155). Քոռանաս ու կուրանաս:

404(4156). Քոս յնկնիս, եղունգ չունենաս:

405(4157). Քոքդ կտրի:

406(4158). Քոքդ չորնա:

407(4159). Քրքրիս, միսդ վրայեդ թափի:

408(4160). Քու էղած օրը խավարիր, յաշխարք չգայիր:

409(4161). Օխտը ասեղով պատանքդ կարեմ:

410(4162). Օխտը գազ գետնի տակը մտնիս:

411(4163). Օխտը պորտըտ չորանա:

412(4164). Օխտը պորտով ավուր դատաստանին պարտական մնաս:

413(4165). Օխտը սարի յետև մեռնիս:

414(4166). Օձի բնին նստիս, ձագ հանես:

[326] Ըստ երևույթին, այս անեծքը շատ հին է: Սևանի հատակի պեղումների ժամանակ պարզվել է, որ առաջ այստեղ մարդիկ են ապրել: Գուցե ջուրը բարձրացել է և տակովն է արել մարդկանց, որի հետևանքով մնացել է այս անեծքը (ծանոթ. բանահավաք Հ. Օհանյանի):

415(4167). Օձի ծակին նստիս, կարիճի՝ բնին:

416(4168). Օձի պես փորիդ վրեն սողաս:

417(4169). Օճախիդ մուխը մարի:

418(4170). Օջախդ մարի:

419(4171). Օջախիդ կրակը մարի:

420(4172). Օրդ կտռվի:

421(4173). Օրերդ միշտ ախ ու վախով անցնես:

422(4174). Օրերդ սև անցնին:

423(4175). Օրթնիս...

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

1(4176). Ա՛յ օղուլ, գլխո՞ւ ես, թե յում հետ գործ ունիս:

2(4177). Ապուրդ կեփեմ:

3(4178). Բիթուքն էլ գիտեն ես վով եմ, դու՝ վով:

4(4179). Բուրդ ու բամբակդ կը գզեմ:

5(4180). Գնա պարտական եղի[327], օր քեզի սաղ թողեցի:

6(4181). Գլխուցդ խո չես անցե, օր յընձի հետ թարս գ'նկնիս:

7(4182). Գլոխդ թռցնել կուտամ:

8(4183). Գունդ ու կծիկ կենեմ քեզի:

9(4184). Դու իմ վայը տաս:

10(4185). Դու հլը կայնի, տես ինչ բերեմ գլուխդ:

11(4186). Ես էնոր պորտը տեղը կը դնեմ:

12(4187). Ես իմ հոր տղեն չեղնիմ, թե հախեդ չգամ:

13(4188). Ես մեռած պիտի էղնիմ, օր էնիկ յիրա էրածը մարսե:

14(4189). Ես քու հախեն գուկամ:

15(4190). Էդ արարմունքդ վրեդ թանկ կը նստեցնեմ:

16(4191). Էդ էրածդ քեզի չի մնա:

17(4192). Էդիկ յո՞ւմ շունն է, օր էնոր խոսքը չվնին դնեմ:

18(4193). Էդոր բմբուլ քցողի հերը կանիծեմ:

19(4194). Էդոր յարունը խմեմ, օր սիրտս հանգչի:

20(4195). Էժան չես պրծնի:

21(4196). Էն օրը քցեմ, օր շները ձեռքեդ հաց չուտեն:

22(4197). Էնոր յաչքի փուշը էնպես կոտրեմ, օր ինքն էլ հավնի:

23(4198). Էնպես բան բերեմ գլխուդ, օր էկածդ ճամփեն մոռնաս:

24(4199). Էնպես զարկեմ, օր յաչքերդ լպադանա բանաս:

25(4200). Էնպես զարկեմ, օր յաչքերեդ պեծեր թափին:

26(4201). Էնպես զարկեմ, օր ո՛չ տա, ո՛չ առնի:

27(4202). Էնպես զարկեմ, օր վխկունդ յելնի:

28(4203). Էնպես էնեմ, օր թափեդ ֆռռա:

29(4204). Էնպես էնեմ, օր յաշկերդ լպազանա բանաս:

30(4205). Էնպես թրաշեմ, օր ճանճը յերեսիդ բուքսավատ էնե

31(4206). Էնպես տամ, օր յերեսը յետևը դառնա:

32(4207). Էնպես տամ, օր քանի կա, հեչ մտեհան չենե:

33(4208). Էնքան զարկեմ, օր տիկ կտռիս:

34(4209). Էնքան մեռա, օր դու էլ վրես խոսի՞ս:

35(4210). Էս անգամը ըսիր, էլ չեղնի ըսես:

36(4211). Ընձնեն էլ չես կրնա պրծնի:

37(4212). Թե էրածդ մարսեցիր, գնա պարզենցիր:

38(4213). Թեզ էրա տո՛ւր, քանի յաչքերդ չոր է:

39(4214). Թոզ ու դումանդ երկինք կը հանեմ:

40(4215). Թոզդ քամուն կուտամ:

41(4216). Թողեք, էդոր հախեցեն գամ:

[327] Բանահավաքը փակագծում գրել է՝ այսինչին, որը կարելի փոխարինել ցանկացած կոնկրետ անձնավորության անունով (ծանոթ. կազմողների):

42(4217). Իմ վրեն հաջողի յառկեքը փորը կը թափիմ:

43(4218). Լեզուդ կարճ պահե:

44(4219). Լեզուդ ծոծրակետ կը հանեմ:

45(4220). Լիզուդ քեզի քաշե, թե չէ ես գիտեմ:

46(4221). Լիմա-լիմա կենեմ:

47(4222). Խաթրիս կպնողի հոգին կը հանեմ:

48(4223). Խելքը թե հացի հետ է կերե, թող յնձի հետ յնկնի:

49(4224). Խմե (կեր), թե չէ գլխուդ կը լցնեմ:

50(4225). Կայնի, էնոր փորին էնպես զարկեմ, օր բերանը մե հատ՚մ բանա ու խփե:

51(4226). Կաշիդ կը քերթեմ:

52(4227). Կաշիդ տիկ կը հանեմ:

53(4228). Կերվա՝ կռնակդ եռ գուկա:

54(4229). Կերևա՝ դու յնձի մե աչքով կաշես:

55(4230). Հավի պես վիզդ կը քաշեմ:

56(4231). Հերիք է միսս ուտես:

57(4232). Հլը կայնի, Մամիկոն տղա, յըլբթ յիրիկունը հերդ տուն գուքա:

58(4233). Հոգիդ բուռս է:

59(4234). Հոգիդ կը հանեմ:

60(4235). Հում ու լում քեզի կուլ կուտամ:

61(4236). Ձենդ կտռե, թե չէ:

62(4237). Մե հատ՚մ էնպես տամ թուլա կողքին, օր հոգին դուս գա:

63(4238). Մե հատ՚մ օր զարկեմ կը սատկիս, հմը վրես մարդ կը հաշվեն:

64(4239). Մեկ է, յուր կերթաս ձեռքես չես պրծնի:

65(4240). Մենձ թիքեդ յանկաջդ կը թողնեմ:

66(4241). Միսդ օսկռիցդ կը ջոկեմ:

67(4242). Միրուքդ կը փետեմ:

68(4243). Յակռեքդ քաշեմ, ճակտիդ կը շարեմ:

69(4244). Յաչքդ կը հանեմ:

70(4245). Յաչքերդ կը հանեմ:

71(4246). Յաչքիդ բիբը հանեմ:

72(4247). Շան օրի կը քցեմ:

73(4248). Շանսատակ կէնեմ:

74(4249). Շունը էղած՝ դու էղած:

75(4250). Չուլ ու չափութդ կրակին կուտամ:

76(4251). Պատե-պատ որ չը տամ, էլ ինչու տղեն եմ:

77(4252). Պորտեն շռող տղա պիտի էղնի օր յնձի մոտենա:

78(4253). Ջուխտ պլորըս որ զանգուլակ էնեմ, ճտեդ կախեմ, էլի էն էշն ես:

79(4254). Ռադ էղի:

80(4255). Սաղ տեղդ յանկաջդ կը թողնեմ:

81(4256). Սխտորի պես կը սղկեմ:

82(4257). Վայդ մե օր՚մ կուտամ, տեսնինք՝ ճփ է:

83(4258). Վիզդ կը քաշեմ:

84(4259). Վով որ իմ հավիս քըշա ըսե, ես ինոր խորոզի ոտքերը սվառկա կենեմ ու պուպուլը կը պոկեմ:

85(4260). Տեսեք՝ էդոր ինչ օրի քցեմ:

86(4261). Տղամարդ ես կայնի՛, սև օրդ բերեմ:

87(4262). Տո, բռնեք յնձի, թե չէ էդոր փոստը կը փռեմ:

88(4263). Տո, թողեք յընձի, ես էդոր հերը անիծեմ:

89(4264). Փոստդ կը փռեմ:

90(4265). Քարը քարի վրա չեմ թողնե:

91(4266). Քթիցդ մազ կանցնեմ:

92(4267). Քնածդ տեղն էլ քեզի հյուռթլամիշ կենեմ:

93(4268). Քու իզն ու թոզը էստեղ էլ չերևա:

94(4269). Օր յուզենամ, քեզի հում-հում կուտեմ:

ՀԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԾԱՂՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

1(4270). Աղջիկ՚մ չէ՞, սիրե՝ էրթա:

2(4271). Աշես՝ ի՞նչ պրոբի մարդ է:

3(4272). Բլեթ, բլեթ, մե՞զ էլ բլեթ:

4(4273). Գնա, օղո՛ւլ, ճան խաղա, էստեղ տղամարդու տեղ է:

5(4274). Գլոխդ կը կոտրեմ, խաթրդ չեմ կոտրե:

6(4275). Դու քեզի-քեզի պալկովնիկի բաղչեն մի քցե:

7(4276). Դու օր չսես, քեռիդ չի՞դե:

8(4277). Եղանակը[328] լավ է, հմը ղայդեն գեշ:

9(4278). Ես ինչ ըսեմ ուստա Կարոյին[329], օր յամեն մարդու գլխուն շախպա կը դնե:

10(4279). Ես՝ յո՛ւր, դու՝ յո՛ւր:

11(4280). Ես քեզի ղուբան, դու յնձի՝ հեչ:

12(4281). Ես օր թոփով կտոր էի, դու կարկտան էլ չէիր:

13(4282). Ես օր քու ռանգիտ կատու ունենայի, տնեն դուս կէնեի:

14(4283). Էդ ընչի ես փըրցըլոտե, կարկըտած էշ:

15(4284). Էդոր բմբուլ քցող չ՚եղնի:

16(4285). Էլի ջոջերի կաբինետները քաշ գուքաս՝ իշու կարկըտան:

17(4286). Ըսինք, խո չէրինք:

18(4287). Իմ ու քու մեջը մենձ թաղավուրդ կա:

19(4288). Ի՞նչ գուզես, հիմի յորղանը առնինք յե՞րթիկը քնինք:

20(4289). Ի՞նչ է, քու հերդ իմ հորիցը լա՛վ մարդ է:

21(4290). Ինչ կը ղընջըրտաս, փոստո պըլոր:

22(4291). Ի՞նչ կսես, հիմի ոտներս ջո՛ւրը դնենք:

23(4292). Իշու քուռակ, ջոջերի կաբինետները վազելով՝ հըլը էշ չըդառա՞ր:

24(4293). Իսիկ ուտողը ջուխտ կը բերե:

25(4294). Լավ է յնձի սաղ-սաղ թաղես, քան թե խոսքս գետին քցես:

26(4295). Խելք օր բաժնին, մե գդալ՚մ էլ քեզի հասնիր:

27(4296). Ծո՛ դուռդուշ, հըլը թամամ էշ չըդառած՝ ընկերտոնցդ քացի կուտա՞ս:

28(4297). Ծո՛, էս մեռելի անտազեն վո՞վ է:

29(4298). Կերևա՝ դու յնձի մե յաչքով կաշես:

30(4299). Հերսդ օր գելնի, ոտներդ պաղ ջուրը դիր:

31(4300). Հլը ըսենք՝ խելքըդ չը հասավ, քթի ծակ էլ չո՞ւնիս:

32(4301). Հլը իսոր աշե, ինչղ օր իսնի փշրանք էղնի...

33(4302). Ղուրբանս էղնիս, ոտիս տկի հողը էղնիս:

34(4303). Ճոնճըխտելով էդ ու՞ր կերթաս, ուտիլ սիրոյի գառնիտուռ:

35(4304). Մարդ ե՞ս, թե՞ միլիցիոներ:

36(4305). Մտքիդ մեջը աղո՞թք կենես:

37(4306). Յանի էդտեղ վով կա՞ օր[330]:

38(4307). Յերեսը էնքան չեչոտ է, օր կաթոլ՚մ ջուր գլխուն լցնես, գետին չի թափի:

39(4308). Յերեսը էնքան չեչոտ է օր կոտ՚մ գարի կը տեղավորվի:

40(4309). Յերեսը Պալկովնիկովենց փանջարի շուշոց պես կը պլպլա:

41(4310). Շատ մի՛ աշե, յաչքերդ ղառըխ[331] գընկնին:

42(4311). Չուստիկով ադվակատ գլմանի:

---

[328] Պետք է հասկանալ երգի եղանակը (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[329] Գելխոյենց Կարոն քաղաքի ամենալավ գլխարկ կարողն էր (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[330] Այսինքն՝ շատ հեշտ է (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

[331] Ղառըխ – ուժեղ սպիտակությունից տեսողության խանգարում (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

43(4312). Պրիվետ, իշու պըկու, էլի ջոջերիդ փալանները խիմչիստկա կը տանի՞ս:

44(4313). Տեղոստեղ որ ըսպիչկա եղնիս, հեչ մե օգուտըմ չես տա մարդկանց, մըգլած նաչալնիկ:

45(4314). Տո՛, խելքի տոպրակ:

ՓԱՂԱՔՇԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐ

1(4315). Աղունիկս

2(4316). Անմեղ գառնուկս

3(4317). Աննիդ ղուրբան:

4(4318). Աննիդ մեռնիմ:

5(4319). Անտենադ ուտեմ ծուկուլո ջան՝, էս ինչղ ֆանտանդ ծուկլի կը գըցե:

6(4320). Անուշ ջան

7(4321). Աստծու անմեղ գառս

8(4322). Բալա ջան

9(4323). Բերան չի՝ տաճար է:

10(4324). Բերնիցդ յելած խոսքին մեռնիմ:

11(4325). Բոյիդ մեռնիմ:

12(4326). Բոյով-բուսաթով բալա

13(4327). Գլխուդ մեռնիմ:

14(4328). Գլխուս վրեն տեղ ունիս:

15(4329). Դեղձանիկս

16(4330). Ես քեզի՝ ղուրբան, դու յընձի՝ հեչ:

17(4331). Երկանվզիկ, թերվաջրիկ[332]

18(4332). Թևավոր ղուշ էղնիս, գլխուս վերևը պտտիս:

19(4333). Իմ աչքի լուս, իմ արև:

20(4334). Լավ օրդ տեսնիմ, նոր մեռնիմ:

21(4335). Լիզուդ ուտեմ:

22(4336). Խնդալդ էկա՞վ, անուշ ջան:

23(4337). Ծիծիկդ մամամ:

24(4338). Հեյրան էղնիմ քու ջանիդ:

25(4339). Հոգիս, ջանս, ջանիկս

26(4340). Հոգուդ ղուրբան, արևիդ մատաղ էղնիմ:

27(4341). Հոգուդ մեռնիմ:

28(4342). Հոգուս հատոր

29(4343). Հոգուս ճրագ

30(4344). Հոգուս տուն

31(4345). Հոգուս տունը, սրտիս սունը

32(4346). Հոգուտ տնկլիկին ղուրբան:

33(4347). Հող ու մոխիր դառնամ ոտներիդ տակը:

34(4348). Հորդ հոգուն մեռնեմ:

35(4349). Հրեշտակս

36(4350). Ձեռներդ թողած՝ ոտներդ պաքեմ:

37(4351). Ղադեդ առնիմ:

38(4352). Ղուրբանդ էղնիմ:

39(4353). Մատաղդ էղնիմ:

40(4354). Մեռնիմ յարևուդ:

41(4355). Յաչքիս վրեն տեղ ունիս:

42(4356). Յարևուդ մատաղ:

43(4357). Յոտներուդ տակը մեռնիմ:

44(4358). Շուքդ գլխուս անպակաս եղնի:

45(4359). Չարդ տանիմ:

46(4360). Չիչակս

47(4361). Պլպլուն բալա

48(4362). Ջանիդ մեռնիմ:

49(4363). Ջանիկս

50(4364). Ջան ու ջիգարս

51(4365). Ջիգարս

52(4366). Վարդի կոկոմի պես բացվել ես:

53(4367). Վարդի հոտ ու ռանկ ունենաս:

54(4368). Վրայիցդ խնկահոտ գուկա:

55(4369). Ցավդ թող իմ ջանին թափի:

56(4370). Ցավդ տանիմ:

57(4371). Քա՛, ջան

58(4372). Քեզի մեռնիմ:

59(4373). Քուրս

60(4374). Քունդ՝ անուշ:

[332] Ասում են երեխային ջրում լողացնելիս (ծանոթ. բանահավաք Պ. Բարսեղյանի):

ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԻ ԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1(4375). ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Լոթի-փոթի գյումրեցի,
Էնպես լիպաս ունեցի,
Օր թուրք ասկարը քեզի տեսնի՝
Զարզնդի:

2(4376). ԱՆՎԱԽ ԳՅՈՒՄՐԵՑԻՆ

Ես հեչ բանե չեմ վախենա,
Սավայի ժաժքեն,
Տղամարդու պես դեմդ չի գա,
Զարկե կը տկեն:

3(4377). ՎՈ՞Վ Է ՏՂԱՄԱՐԴԸ

Տղամարդը էնիկ է,
Վով տաս շահի աշխատի,
Մանթ՚մ կուտե:

4(4378)

Աբոզ գրվինք,
Պատվով մեռնինք:

5(4379)

—Այվա՛զ, աշե դիպա՛վ,
—Դիպավ էլ, չաբալամիշ էլ էղավ:

6(4380)

Բաքու աշխատիս,
Թիֆլիզ ապրիս,
Գյումրի մեռնիս:

7(4381)

Գլոխդ կը կոտռեմ,
Խոսքդ չեմ կոտռե:

8(4382). ԿԱԼՈՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Կալոսն օր կը պըտըտի,
Ըսե գուզե՝ նպատակ՚մ ունի:
Յլբթ մե օր՚մ էլ մենք
Կալոս կեղնինք,
Տկներս կը պըտըտինք:

9(4383)

Ուտող-խմող, անոթի քնող,
Մանեթին փարա չըսող,
Կապեկին սլուժի կայնող:

10(4384)

Տիրունի փորը փութ՚մ դառավ,
Օխտը էրեխեն ութը դառավ:
Ճերմակ տակ է կերածը,
Բիթուն էգ է բերածը:

11(4385). ԱՆԲԱՆ ԱՂՋԿԱՆ

Աղջի՛, գրղմ անբան երեսդ,
Լավ չէր էղնի, օր մերդ
Ջուխտ վալինկա բերեր տեղդ,
Տաք տաք կը հագնեինք:

12(4386)

Բուլքի-բուլքի՝ բուռակի
Կամերսկի՝ դուռակի:

13(4387). ԻԴՈՐ ԱՇԵ

Իդոր ա՛շե, իդոր ա՛շե,
Ոտքեն-գլոխ շահի՚մ չաժե,
Կերթա-գուկա յնձի կաշե:
Քելե՛, քելե՛, ճամբեդ աշե,
Հերս քեզնեն լավին կաշե:

14(4388). ՔԱՎՈՐԻՆ ԿՍՊԱՍԵՆ

Ծեծեն կը դուռը,
Հաչե կը շունը,
Աղջի՛, թեզ էրա, թռի,
Հաչե կը, քավորը կեղնի:

15(4389)

Թաթխես ու կուտես,
Թաթխես ու կուտես:
Չես թողնի, օր
Բրթեմ ու ուտեմ,
Բրթեմ ու ուտեմ:

16(4390). ԷՐՆԵԿ ՔԵԶԻ

Էրնեկ քեզի, դարդ չունիս,
Գիմնազը աղջիկ չունիս,

Կամերսկին տղա չունիս,
Կլուբ էրթացող մարդ չունիս,
Բանկումը սրոկ չունիս:

17(4391)

Քանի քնիս՝ քուն գուկա,
Քանի ուտես՝ դուր կուգա,
Եփ որ կսեն. «Գործ էրա [կա]»
Տունը գլխուս շուռ գուկա:

18(4392)

Հորքուր էղա,
Մորքուր էղա,
Քեռեկին'մ էլ էղնեի,
Նոր մեռնեի:

19(4393)

Թան, թան, թանանա,
Պապը ուտե զվարդանա,
Խավիծ, խավիծ խավլըվորից,
Պապեն ուտե՝ ընկնի ոտից: (տրբ)

20(4394)

Հաց կերա՝ թաժա հաց,
Հաց'մ կերա՝ տան հաց,
Մե հաց կերա՝ վառած էր,
Հաց'մ էլ կերա կտռած էր:
Թերմաշ կեսուրս չեկավ,
Որ նստեինք՝ հալալ հաց:

21(4395)

Քանի ազապ աղջիկ էի,
Ջուխտ-ջուխտ տղա կբերեի:
Մարդ առա, չառա՝ հիմի
Քոռ աղջիկ'մ էլ չեմ բերե:

22(4396)

Նստեմ թախտին,
Սպասեմ բախտին:
Թելն ու ասեղը
Առնեմ կողքիս:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1(4397)

Համբերանքը համբերողին համբերանքից հանեց:

2(4398)

Հոր չաքուճ, ուր մանչին տըվեց ճուճ,
Թոռնիկ ծընվավ՝ թըռավ
բըռնեց պապի ճուճ:

3(4399)

Մեր դռան տանձի ծառին
Երկու ծանդռ տանձ կա ծերին:

4(4400)

Անոտի էս, փափա կեր,
Գնա չարսուն՝ կակա կեր,
էշը մորթե՝ միսը կեր,
Ղառղառներու թիսը կեր:

5(4401)

Ծտի ճուտը՝
Ճմբան ծերին,
Ծտի ճուտի
Ճիտը ծուռ:

6(4402)

Մուկ քցեմ ձուկ ուտեմ,
Ձուկ ուտեմ մուկ քցեմ:

7(4403)

Ախ լուսին, լուսին,
Նստիմ քո ուսին,
Ժամի երկուսին,
Հասնիմ Մասիսին:

8(4404)

Արեգակը՝ բերանս:
Արեգակը՝ մեր եղի զնդան:

9(4405)

Քեռի, էլի էն ալրեն առ:

10(4406)

Ձուկը քցեմ՝ ձուկն ուտեմ,
Մուկը քցեմ՝ ձուկն ուտեմ: (տրբ)

11(4407)

Ձուկ քցեմ՝ ձուկ կուլ տամ,
Մուկ քցեմ՝ ձուկ կուլ տամ:

12(4408)

Ձուկն ու մուկը՝ մի թաբախ.
Ձկին վազեմ՝ ձուկն ուտեմ,
Մկին վազեմ՝ ձուկն ուտեմ:

13(4409)

Ուլը ելավ ուռի ծառին,
Ուլը ոռով ուռը օլըրեց:

14(4410)

Մեր տան տանձի ծառին
Օխտը ծանդռ տանձ կա ծերին:

15(4411)

Ծիտը ծմբան ծառի ծերին,
Ծտի ճուտի ճիտը՝ ծուռ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1(4412). ԱՐԵՎ

ա)
Բռնեմ բռովս մեկ,
Թողնեմ աշխարհով մեկ:

բ)
Էստեղ պուպուզ,
Էնտեղ պուպուզ,
Էրթկեն դուս:

գ)
Էստեղից մինչև Վան,
Վանա մինչև Երևան,
Քառսուն գոտի գործման:

դ)
Հոս պուպուզ,
Հոն պուպուզ,
Էրթըքեն դուս:

2(4413). ԼՈՒՍԻՆ

Քրիստոսից առաջ է ծնվե,
Տարին չէ թըմմե:

3(4414). ԱՍՏՂԵՐ

ա)
Իրիկունը երթկի վրեն մի մաղ ձու դրեցի,
Առավոտը ելա՝ չկա:

բ)
Ձու դրեցի երթիքը,
Առավոտը ելա՝ չկա:

4(4415). 12 ԱՄԻՍ

Տասերկու չորթան
Շարվել են, կերթան:

5(4416). ԿԱՅԾԱԿ

Ըսդից Վան,
Վանա էրևան,
Օսկե չադըր,
Մեչը՝ դիվան:

6(4417). ԿԱՐԿՈՒՏ

ա)
Ելնեմ սարը,
Ցանեմ սիսեռը:

բ)
Պըզտի-պըզտի մարթիք
Հաքել են սեկե վարտիք,
Ձարկեմ կը տըռճիկ:

7(4418). ՁՅՈՒՆ

Էլա երթիք, էլըմ տեսսա,
Ձարմանալի գելըմ տեսսա,
Ինքը ցըռթավ, ինքը կերավ:
Գլոխն առավ ու կորավ:

8(4419). ՔԱՄԻ

ա)
Չունի բերան,
Չունի ձեռք,
Բայց ունի ուժ,
Ունի երգ:

բ)
Յառանց բերնի փչում է,
Յառանց թևի թռնում է:

գ)
Թռչկոտում է երկնքով,
Ինքը կա, մարմինը չկա:

9(4420). ԳԻՇԵՐ

Լամբալ Օղլին բեխերն օլըրեց
Տասը հազար մարդ գլորեց:

10(4421). ԳԵՏ

Օրան-օրան սող է տալիս
Ոտներ չունի՝ ման է գալիս,
Բերան չունի՝ կուլ է տալիս:

11(4422). ԳԵՏ ԵՎ ԿԱՄՈՒՐՋ

Ձին գնաց,
Թամքը մնաց:

12(4423). ԾՈՒԽ

Ալըրեն՝ մանտրռ,
Դավեցեն՝ բանցրռ:

13(4424). ԱՅԳԻ

Մի կով ունիմ ալա է,
Ազնիվ նանի բալա է,
Տարին մի անգամ է կաթ տալիս,
Տուն չի գալիս:

14(4425). ԱՅԳԻ, ԽԱՂՈՂ, ԳԻՆԻ ԵՎ ՕՂԻ

Կուկուզ մոմը,
Խելոք տղեն,
Խելառ թոռը:

15(4426). ԽԱՂՈՂ ԵՎ ՆՈՒՌ

Անթել դերձան,
Անծակ մարջան,
Աստծու շինած,
Իսնի քանդած:

16(4427). ԽԱՂՈՂ

Անծակ մարգըրիտ,
Աստված կը շարե,
Մարթ կը քաղե:

17(4428). ԾԱՌ

ա)
Գիրկդ նստիմ,
Միրուքդ փետեմ:

բ)
Բարձրանամ վրադ,
Բավարարիմ ինձ,
Թեթևացնեմ քեզ:

18(4429). ԾԻՐԱՆ

ա)
Ձին մտավ ձորը,
Քուռակը՝ փորը:

բ)
Ձին ձորում,
Յղի քուռակը՝ փորում:

19(4430). ԾԻՐԱՆԻ ԿՈՒՏ

Էն ի՞նչ է, ձին ձորը, քուռակը փորը:

20(4431). ՁԻՐ

Ձին՝ ձորը,
Քուռակը՝ փորը:

21(4432). ՆՈՒՌ

Ուլուլիկ,
Պուլուլիկ,
Սատանեն
Ու ուր կնիկ:

22(4433). ՓՇԱՏ

ա)
Փայտը՝ ուստի տաշած չէ,
Ալուրը՝ ջաղչի աղցած չէ,
Պարկը՝ թարզա կարած չէ:

բ)
Փետ է, ուրքի տաշած չէ,
Ալուր է, ջաղացի աղած չէ,
Դայրա է, ասղի կարած չէ:

գ)
Մեջը փետ՝ ալրով ծակած,
Վրեն ատլասը փաթած:

դ)
Կարճ-կարճ մարդիկ,
Հագել են կարմիր վարտիք:

23(4434). ԿԱՂԻՆ

Պըզտի կըճուճ,
Համով ապուր:

24(4435). ԿԱՂԱՄԲ

ա)
Պապս քառսուն քուրք է հագե,
Էլի կը մրսի:

բ)
Պառավըմ կա նստած,
Վրեցեն հազար կարկըտան
Կը թափի:

25(4436). ԲԱԶՈՒԿ

Հանելուկ,
Հանմանելուկ,
Ծերը՝ ծաղիկ,
Տակն՝ ավելուկ:

26(4437). ՁՄԵՐՈՒԿ

ա)
Պզդի եկեղեցի, դանկով զարկեցի,
Դուռը բացի, մտա մեջը համբուրեցի,
Ելա երթիկ, քար քցի:

բ)
Պզտի, պզդի եկեղեցի,
Դանկով զարկի՝ դուռը բացի,
Մտա մեջը՝ համբուրեցի,
Ելա դուսը՝ քարոտեցի:

գ)
Մըտնիմ վանքը համբուրեմ,
Էլլեմ դուռը քարոտեմ:

27(4438). ԱՐՏ

ա)
Հինեմ սև,
Գործեմ կանանչ,
Կտրեմ դեղին:

բ)
Սև խինեմ,
Կանաչ գործեմ,
Դեղին քաղեմ:

28(4439). ԼՈԲԻ

Չայիր չիման,
Գյամն ի բերան,
Օխտը մեռել,
Մե գերազման:

29(4440). ԱԼԱԽԱՇԽԱՇ ԾԱՂԻԿ

Լազ ու լազ,
Աթլազ ու ղումաշ,
Մեչ՝ պոպոտիկ,
Բոլորն է մազ:

30(4441). ԲՈՎԸ ԵՆ ԿՏԱՎԱՏԸ

Սալած գոմ,
Տըռճըկան կծանը մեչը:

31(4442). ՍՈՒՆԿ

ա)
Մի սնանի,
Հարուր հազար
Տախտըկանի:

բ)
Մե սընանի,
Մե տընանի,
Բյուր հազար
Տախտըկանի:

գ)
Անձրևը գա,
Նա դուրս կգա,
Մի գլխանի,
Մի ոտանի:

32(4443). ԿՈՎ

Չորսը կոխիկ,
Չորսը կախիկ,
Էրկու տնտիկ,
Մեկ տնտնիկ:

33(4444). ԿՈՎԻ ՊՏՈՒԿՆԵՐԸ, ՈՏՆԵՐԸ, ՊՈՉԸ

Չորսը կախիչ,
Չորսը կոխիչ,
Մեկ տըմբտըմբիչ:

34(4445). ԿՈՎԻ ԿՈՒՐԾՔ

Չորսը բրուկ,
Դարից կպուկ:

35(4446). ԿԹՎՈՐԸ, ԿՈՎԸ, ԿԱԹԸ

Տասսը՝ չորսին,
Չորսը՝ ծովին,
Ծովը՝ ծընկան,
Ով չը հանա,
Մատաղ լինա
Իր կնկան:

36(4447). ԽՈՉ, ԿՈՎ, ՈՉԽԱՐ, ՀԱՎ

Ութ ունի բաբոր տան մոլիկը,
Չորս ունի ֆաթե ֆլիկը,
Էրկուս ունի աքիկը,
Հեչ չունի ֆաթիկը,
Ի՞մալ պախի ձաքիկը:
Երկեն արտ, կարճ գարի
Սըմբուլ գնա, շուտ արի:

37(4448). ԵՉՆ ՈՒ ԻՐ ԿԱՇԻՆ

Օր կենթանի է,
Աշխարհ կը վարե,
Օր կը սատկի,
Աշխարհ ման կուգա:

38(4449). ԱՅԾ

Սարեն գուգա,
Ձորեն գուգա,
Ոռը բաց
Տուն գուգա:

39(4450). ՈՉԽԱՐ ԵՎ ԿԹՎՈՐ

Գլոխն ի ոռ,
Ոռն ի գետին:

40(4451). ՁԻ ԵՎ ՁԻԱՎՈՐ

ա)
Մսից բերդ, երկաթից փիլաքան,
Ոտս դրի ելա վրան:

բ)
Չորս ոտ հողին,
Էրկուս լե կողին,
Ոռ պառեկին:

41(4452). ՁԻ, ՄԱՐԴ, ԱՍՊԱՆԴԱԿ

Մսե կոճ, երկաթե թարանջա,
Տերը ելնե վրեն, կը հաջա:

42(4453). ՁԻՈՒ ԹԱՄԲ, ԱՍՊԱՆԴԱԿՆԵՐ, ՍԱՆՁ

Վերցնեմ վրեն դնեմ,
Երկու կողմեն կախ անեմ,
Պոչի տակը բանդ անեմ,
Չոր կոխեմ, թաց հանեմ:

43(4454). ՍԱՆՁ

ա)
Ախ անեմ,
Վախ անեմ,
Էրկու կըշտից
Կախ անեմ,
Չոր կոխեմ,
Թաց հանեմ:

բ)
Վերում, վրետ դնեմ,
Էրկու կողմից կախ անեմ,
Չոր կոխեմ, թաց հանեմ:

44(4455). ՋՈՐԻՆ ՈՒ ԿԱՄՈՒՐՋԸ

Անծին առավ
Անբըսին,
Անդադարի տակեն
Ընցավ:

45(4456). ԱՂԸ, ՋՈՐԻՆ ՈՒ ԿԱՄՈՒՐՋԸ

Անծիլը բարցան անծընին,
Ընցըրին անդադարի վրայեն:

46(4457). ԱՂՈՎ ԲԱՐՁԱԾ ՋՈՐԻՆ ԿԱՄՐՋՈՎ ԱՆՑՆԵԼԻՍ

Անբուսը բառցին անծնին,
Անդադարի երթկեն անցուցին:

47(4458). ՇՈՒՆ, ԿԱՏՈՒ, ՀԱՎ

Ութն ունի մոլլեն,
Չորսն ունի ատլասոլլեն,
Հեչ չունի մաքիկը,
Ինչխ կը պահե ձագիկը:

48(4459). ԿԱՏՈՒ

Չորքոտանի զորեղ գազան,
Խլուզ ականջ խիստ որսական,
Տեղ կը նստի տերունական.
Որ քերովբեք ահեն դողան:

49(4460). ԵՂՋՅՈՒՐՆԵՐ

Ես մի ծառ եմ ճանաչում,
Չունի տերև, ունի ճյուղ,
Աճում է անհող ու ջուր:

50(4461). ԿՐԻԱ

ա)
Կոկռում եմ՝ կաքավ չեմ,
Ձու կածեմ՝ հավ չեմ:

բ)
Ձու կածա՝
Հավ չէ,
Խոտ կուտա՝
Կով չէ:

գ)
Քար է,
Քար չէ,
Կով է,
Կով չէ,
Հավկիթ կածի,
Հավ չէ:

դ)
Ձու ածող է՝ հավ չէ,
Արածող է՝ կով չէ:

51(4462). ՕՁ

ա)
Շարժվում է,
Ոտք չունի,
Մըտրակ է,
Կոթ չունի:

բ)
Ալաչի միզար,
Դույնի գուզալ,
Համ շայեն է,
Համ շայ մեզար:

գ)
Կայնի՝ ոտ չունի,
Նըստի՝ ոռ չունի,
Գլոխ ունի,
Մազ չունի:

52(4463). ՕՁԻ ՇԱՊԻԿԸ

Շապիկ է,
Մըկրատով ձևած չէ,
Կարած է, մաշինի կարած չէ:

53(4464). ՄՈՒԿ

Գետնի տակը բուրտ-պլոճիկ,
Թե որ գտնես՝ քեզ ռոճիկ:

54(4465). ԳՈՐՏ

Ձարե զըմբան,
Մսե թումբան,
Ոչ հայ է, ոչ մուսուլման:

55(4466). ԱՔԱՂԱՂ

ա)
Ինքը՝ արաբի, լիզուն՝ թուրքավարի:

բ)
Իքի, իքի,
Օտներ թեք ի,
Ինքն արաբ ի,
Լիզուն՝ թուրքի:

գ)
Իքը իք է,
Պոչը թիք է,
Ինքը հայ է,
Լիզուն թուրք է:

56(4467). ՀԱՎ

Միրուքը՝ մըսից,
Բերանն՝ օսկոռից,
Թըռչուն է ընտանի,
Ապրում է մեզ մոտ:

57(4468). ՔԱՐԱՃԻԿ

Կաշին՝ տակը,
Միսը՝ վրեն:

58(4469). ՀԱՎԿԻԹ

ա)
Շունչ ունեցողը արտադրում է անշունչին,
Անշունչը արտադրում է շնչավորին:

բ)
Բոլորը՝ արծաթ, մեջը՝ ոսկի:

գ)
Սաղից՝ սատկած, սատկածից՝ սաղ:

դ)
Կարաս՝մ ունիմ մի պուճուր,
Մեջը էրկու գույնի ջուր:

ե)
Կուժըմ ունիմ մե պուճուր,
Մեջը էրկու գույնի ջուր:

զ)
Ուր, ուր,
Միչին երկու
Գույնի ջուր,
Թե չանեցիր՝
Մորքուրըդ տուր:

է)
Կենդանուց՝ անկենդան,
Անկենդանուց՝ կենդանի:

59(4470). ԱՂԱՎՆԻ

Սընունդ կառնի տասնըյոթ,
Ամսե ամիս կը ծնի
Մինն արի (աչու), մինն էգ:

60(4471). ԾԻԾԵՌՆԱԿ

Սև է սաթի նման,
Ըսպիտակ է կաթի նման,
Ման է գալիս, մարթի նման:

61(4472). ԲՄԲՈՒԼ

Կըտոր՝մ ունիմ,
Ո՛չ մըկըրտով կտրած է,
Ո՛չ ասեղով կարած է:

62(4473). ՄԵՂՈՒ

Կովըմ ունիմ՝ անի, անի,
Պըտուկներն՝ ասղաբանի,
Կաթ է տալի, տուն չի գալի:

63(4474). ԲԶԵԶ

ա)
Կովըմ ունիմ,
Անի, անի,
Պըտկըները՝
Մըսըրխանի,
Կաթ կուտա,
Տուն չի կայնի:

բ)
Սև է, ղառղառ չէ,
Թոփ է շինըմ, ուստա չէ:

64(4475). ԿՈՅԱԲԶԵԶ

Թոփ կը շինա՝
Թոփչի չէ,
Երկինք թռնի՝
Թռչուն չէ,
Գույնը սև ա,
Ագռավ չէ:

65(4476). ԼՈՒ

Լուս, լուս, լուս կարպետին,
Չիֆտա զարկին,
Դամըրխանին:

66(4477). ՈՋԻԼ

Որտեղից քցես չի ջարդի,
Ըղունգի տակ ընկնի՝ կը ջարթի:

67(4478). ԱԳԱՀ ՄԱՐԴ

Ոտները՝ մակարոն
Թևերը՝ վերմիշել.
Գլոխը՝ եմիշ,
Ինքը՝ գերմամիշ:

68(4479). ՄԱՐԴՈՒ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Առավոտը՝ չորս ոտնանի,
Ճաշին՝ երկու ոտնանի,
Իրիգունը՝ երեք ոտնանի:

69(4480). ՄԱՐԴՈՒ ՎԻԶԸ, ԲԵՐԱՆԸ, ԱՏԱՄՆԵՐԸ, ՔԻԹԸ, ԱՉՔԵՐԸ, ԳԼՈՒԽԸ ԵՎ ՈՋԻԼՆԵՐԸ

Մեկ սուն,
Կելնի վերև՝ մի տուն,
Մեջը լիքը ուրագ,
Կելնի վերև՝ մի սուն, էրկու տուն
Կելնի վերև՝ էրկու լուսնակ
Ընտից վերև՝ բաղ ու բոստան,
Խոզեր մեջը կարածան:

70(4481). ՀՂԻ ԿԻՆԸ ԵՎ ԳՐԿԻ ԵՐԵԽԱՆ ԿԱՄՈՒՐՋՈՎ ԱՆՑՆԵԼԻՍ

Մեկը քշեց ու անցավ,
Մեկը տեսավ ու անցավ,
Մեկը անտեսնել անցավ:

71(4482). ՄԱՅՐԸ, ԳՐԿԻ ԵՐԵԽԱՆ ԵՎ ՓՈՐԻՆԸ

Իրեք հոքի ընցան կարմընջի վրայից,
Մեկը համ տեսսավ, համ քելեց ընցավ,
Մեկը տեսսավ ու չը քելեց, ընցավ,
Մեկն էլ ո՛չ տեսսավ, ո՛չ քելեց, բայց ընցավ:

72(4483). ՏԵՐՏԵՐԻ ՄՈՐՈՒՔԸ

Դաստե՛մ ժախ,
Պատեն կախ:

73(4484). ԳԼՈՒԽ, ՃԱԿԱՏ, ԱՉՔԵՐ, ՔԻԹ, ԲԵՐԱՆ, ԱՏԱՄՆԵՐ

Ծառըմ ունիմ՝ ճոշնա է,
Ճոշնի տակը մեյդան է,
Մեյդընի տակը կթխա է,
Կըթխի տակը զուռնա է,
Զուռնի տակը մարագ է,
Մեչը լիքը ուրագ է:

74(4485). ՈՏՔԵՐԸ, ՓՈՐԸ, ԲԵՐԱՆԸ, ԳԼՈՒԽԸ, ՈՋԻԼՆԵՐԸ

Իք, իքի, վըրեն՝ տիկ,
Տկի վրեն՝ ջաղաչ,
Ջաղչի վրեն՝ խոզան,
Խոզնի վրեն հորթեր կարծան:

75(4486). ԱՉՔԵՐԸ

ա)
Սև սալա,
Սպիտակ սալա,
Խաթուն մեչը
Կը պըլպըլա:

բ)
Երկու ախպեր իրար նման,
Միշտ իրար հետ կերթան,
Իրար չեն տեսնի:

գ)
Երկու ախպեր մե սարի տակ կաշխատեն,
Հմը մեկը մեկին չի տեսնի:

դ)
Դար ու դաշտ կը վարա,
Իր տան էտև չը կռնա վարա:

ե)
Ես ու Չիչին գնացինք արտը,
Չիչին օր չեղներ, ես կմնայի սարը:

76(4487). ՀՈՆՔԵՐԸ

Սև-սև ուլնիկ
Պառկի կողիկ:

77(4488). ՔԻԹ

Մե սուն,
Երկու տուն:

78(4489). ԱՏԱՄՆԵՐ

Փանջարեն լիքը տաշեղ:

79(4490). ԲԵՐԱՆ ԵՎ ԱՏԱՄՆԵՐ

ա)
Մի մարագ, մեջը լիք ուրագ:

բ)
Մարագ,
Լիքը ուրագ:

80(4491). ՇՐԹՈՒՆՔՆԵՐ

ա)
Էն ի՞նչ է.
Ասում եմ՝ արի, արի, չի գալիս,
Ասում եմ՝ մի գա, մի գա, գալիս է:

բ)
Կըսեմ՝ «արի՛, արի՛», չի գա,
Կըսեմ՝ «մի՛ գա, մի գա՛», կուգա:

81(4492). ԼԵԶՈՒ

Ուլըրե մաշիկ,
Գըմշու կաշի,
Ոչ կը հալի,
Ոչ կը մաշի

82(4493). ԾԾԵՐ

ա)
Էրկու բոքոն՝ պատեն կախ:

բ)
Էրկու բոքոն
Սարի էտև դրած էր:

գ)
Ջուխտըմ փուռնիկ
Սարի էտև դրված է:

83(4494). ՆՈՐԱԾԻՆԸ ԵՎ ԾԾԵՐԸ

Վիրևեն իչավ անխոս փաշեն,
Իչավ, նստավ աստվածաշենք աթոռին,
Կերավ անոսկոռ գառին:

84(4495). ՔՈՒՆ

Հանես բազար, չի ծախվի,
Բերես տունը, չի ուտվի,
Ըտից էլ անուշ բան չկա:

85(4496). ԵՐԱԶ

Թռչունն անթև,
Երամախառ,
Ինքը կա, մարմինը չկա:

86(4497). ՄԵՌԵԼԸ ԵՎ ԹԱՂՄԱՆ ԹԱՓՈՐԸ

Ղոշուն էկավ ջերերալեն,
Ղոթն առեչ տընգտընգալեն,
Ղոթ, դու մացի,
Ղոշուն դու դառցի:

87(4498). ԴԱԳԱՂ

ա)
Էլա դուռը,
Էլըմ տեսսա,
Մե անոթի
Գելըմ տեսսա,
Անսռնի
Սելըմ տեսա:

բ)
Շիկողին պետք չէ,
Առնողին էլ պետք չէ,
Ում օր պետք է,
Էն չի տեսնի:

88(4499). ԱՀԵԼԸ, ՋԱՀԵԼԸ, ՀԱՑԸ

Ի՞նչն է մանդըռ,
Ի՞նչն է թեթև,
Ի՞նչը ձեն կուտա:

89(4500). ԱԾԻԿ

Սըմբըլիկ սուսան,
Անհող բուսան:

90(4501). ԽԵԾԱՂ

Էլի, էլի,
Սելի սըռնի,
Չար սատանեն
Շուտ կը թըռնի:

91(4502). ԹՈԿԸ, ԽՆՈՑԻՆ, ԿԱՐԱԳԸ, ԹԱՆԸ

Մազե կըլա,
Դեղին ճլոլա,
Դեղին բեխավոր,
Ճերմակ ձիավոր,

92(4503). ՉՈՐԹԱՆ

ա)
Մե բան ըսիմ՝ խամ իս
Ճըխտիմ քամիս,
Ձմեռ ծամիս:

բ)
Ես ճխտեմ,
Դու քամես,
Ամառը չորցընես,
Ձմեռը ուտես:

93(4504). ԲՐԴՈՒՃ

Դնեմ բուռըդ,
Կոխեմ պըլտուղըդ:

94(4505). ՄԵՂՐ

ա)
Ոչ ցորեն եմ,
Ոչ գարի,
Որ հընձվորը
Ինձ ցանի,
Ոչ ջաղացի
Աղած եմ,
Ոչ էլ ձեռքով
Շաղած եմ,
Ձեր ամենքի
Սիրածն եմ:

բ)
Ոչ ցորեն եմ,
Ոչ գարի,
Ոչ հողագործն
Ինձ ցանի:
Առանց ձեռքի
Քաղած եմ
Անկըրակ եփած եմ,
Ձեր ամենքի
Սիրածն եմ:

95(4506). ՕՂԻ

ա)
Տընկտըցընեմ տամ բուռըդ
Տըրտմի հոգիդ,
Խնդա մարմինըդ:

բ)
Տընկըցում տամ՝ ձեռտ ի,
Ըլնաս ծակ՝ դուռտ ի,
Ուրախանա հոգիտ,
Տըրտմի մարմինըտ:

գ)
Խելոք մորեն գիժ զավակ,
Թափառում է գյուղ քաղաք,
Շատ մի սիրի դու նրան,
Քեզ միշտ կանի խայտառակ:

96(4507). ԾԽԱԽՈՏ

Հանեմ տես,
Ճոթը օլըրեմ,
Կոխեմ նես:

97(4508). ԳԼԱՆԱԿ

ա)
Կըլորցընեմ, կըպցընեմ,
Ծակտ անցընեմ:

բ)
Կըլորցընեմ,
Կարմըրցընեմ,
Բերանըդ ընցընեմ:

գ)
Լցեմ փորըդ,
Ծըծեմ պորտըդ:

98(4509). ԾԽԱՄՈՐՃ

Պզդի երթիք,
Թսեմ խեղդիք:

99(4510). ՔԹԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՔԹԱԽՈՏ

Պզտի երթիք,
Թըստեմ խեղթիք:

100(4511). ՅԱՓՆՋԻ

Սև սատանեն՝ պատեն կախ:

101(4512). ՇԱԼՎԱՐԻ ԿԱՊԸ (ՕՂՋՈՒՐ)

Հանքըս հանես,
Ծիփըս ծամես:

102(4513). ԳԼԽԱՐԿ

Քառսուն գոտի գործման,
Ոսկե չադրոռ,
Մեչը՝ դուման:

103(4514). ՏՐԵԽ

Էն ի՞նչն է, կապեմ կերթա,
Արձակեմ՝ կը կայնի:

104(4515). ԳՈՒԼՊԱՆԵՐ

Էրկու պռունկից բռնեմ,
Չըփլաղըս նես տանեմ:

105(4516). ԳՈՒԼՊԱ ԵՎ ՈՏՔ

ա)
Փռչոտը բացված,
Չըլբաղը նես վազեց:

բ)
Փռչոտը բերանը բաց արավ,
Չըպլաղը նես վազզեց:

գ)
Իմ տկլորը, մեջ փռչոտը:

դ)
Երկու պռկեն բռնեմ,
Չբլաղս մեջը կոխեմ:

ե)
Բռնեմ մռթիկդ,
Կոխեմ ճռթիկդ:

106(4517). ԳՈՒԹԱՆ

Մութ փողան,
Էրկեն սողան,
Սերկևիլներ մեջ
Կերթան- կուգան:

107(4518). ԿԱՄ

Երեք գլուխ ունի,
Տասսը՝ ոտ,
Երեք ամիս կաշխատի:

108(4519). ՇՂԹԱ

Դնամ գետին ձեն կըտռա,
Արնիմ ձեռքս ձեն կուտա:

109(4520). ԿԱՄԸ, ԵԶՆԵՐԻ ԵՎ ԿԱՄԸ ՔՇՈՂԻ ՈՏՆԵՐԸ ԵՎ ԳԼՈՒԽՆԵՐԸ

Վրեն՝ փետ,
Տակը՝ քար,
Տասը ոտ,
Իրեք գլուխ:

110(4521). ԱՆԻՎՆԵՐ

ա)
Չորս աղպեր են, բայց իրար
չեն հանդիպում.

բ)
Չորս ախպեր են,
Իրար էտև վազզեն կը, չեն հասնի:

111(4522). ԳԵՐԱՆԴԻ

ա)
Կեռ ու մեռ,
Չանգլի բիբեռ,
Կեռ ունի,
Կըտրում չունի:

բ)
Սարեն իջավ սլսլալով,
Ոսկե բեխեր պլպլալով:

112(4523). ԱԾԵԼԻ

Սև ալաքը սարը ելավ,
Անհամարը վար բերավ:

113(4524). ԵՐԵՍ ԵՎ ԱԾԵԼԻ

Կալս կաշե
Ձիս երկաթե,
Ջուր տուր քշե:

114(4525). ՍԱՆԴԵՐՔ

ա)
Շեքերդ դնեմ, թաթերդ ելնիս:

բ)
Դնեմ շեքերըտ,
Թափ տաս թևերըտ:

115(4526). ՃԱԽԱՐԱԿ

Ա՛, լըգլընգա,
Պա՛, լըգլընգա,
Քասմա քաշեմ,
Կը լըգլընգա:

116(4527). ՃԱՂԵՐ

Հինգ ախպեր մի հորի
Վրա կաշխատին:

117(4528). ԳՈՒԼՊԱՅԻ ՃԱՂԵՐ

Չորս քույր պատ են շարում,
Իսկ մեկը ջուր է կրում:

118(4529). ԱՍԵՂ

Բըռնեմ՝ մըտնի կը,
Քըշեմ՝ չըռթի կը:

119(4530). ԹԵԼ, ԱՍԵՂ

ա)
Կոծեմ կոխեմ, թողեմ կոխեմ:

բ)
Մլմլեմ (մլմլացնեմ) ծակը կոխեմ:

գ)
Լպստեմ, լպստեմ՝ ծակը կոխեմ:

դ)
Պըռտա, անցա,
Թե չը մտավ,
Կըռծա՝ անցա:

ե)
Երկար արտը
Կարճ գարի,
Սըմբուլ գնա ու արի:

զ)
Ըռտա -մըռտո,
Ըռտա -մըռտո,
Օր չը մըտավ,
Կըռծա մտցու:

120(4531). ՄԿՐԱՏ

ա)
Մատներս կոխեմ ոռդ,
Բերանդ ժաժ տաս:

բ)
Երկու ախպեր ջուխտ կերթան,
Ես գիտեմ թե ուխտ կերթան:

գ)
Մատը ոռը,
Արոջ կենե:

121(4532). ԵՐԿԱՆՔ

ա)
Իմ կռնակ,
Քու կռնակ,
Իմ սուլուլիկ
Քու ծռնակ:

բ)
Իմ տափակ վր քու տափկին,
Իմ սրուխ մեջ քու ծակին:

գ)
Փալաս փռեմ,
Տակդ զոզոցնեմ:

դ)
Մերդ եկավ մեր տունը,
Մինդարը քցինք տակը,
Ղռղռոցը ընկավ փորը:

ե)
Նըստիմ տակտ ի,
Կըռկըռցում
ծակտ ի:

զ)
Ա՛յ, ըռնակըս, ըռնակըս
Տտի ղուլի տըռծակըս
Բըռնա, բըռնա, նես կիտա,
Դըռդըռալով դուս կիտա:

է)
Իմ կռնակ քու կըռնըկին,
Իմ շամաթեն վըր քու ծկին,
Ես մեջք կիտամ,
Դու դուս տուր:

ը)
Էրկու ձի, իրար
Կռնակ կը կըռծեն:

թ)
Մերըդ գա մեր տունը,
Փոստը փռեմ տակը,
Գըռգըռանն ընկնի ծակը:

ժ)
Իմ կոնակ,
Քու կոնակ,
Իմ սուլուլիկ
Քու ծռնակ:

122(4533). ՌԱՆԴԱ

Փորեն կուտե,
Մեշկեն քաքե:

123(4534). ՋՐԱՂԱՑԻ ԿԱՄ ԵՐԿԱՆՔԻ ՔԱՐԵՐ

Մեկը տակը խելոք նստած,
Մեկելը վրեն պար է գալիս:

124(4535). ՋՐԱՂԱՑԻ ՔԱՐ

Ոռիդ շռեմ, կատաղիս:

125(4536). ՋՐԱՂԱՑԻ ՔԱՐԸ, ՉԱԽՉԱԽԸ ԼՑՎՈՂ ՑՈՐԵՆԸ ԵՎ ԹԱՓՎՈՂ ԱԼՅՈՒՐԸ

Իմ կուռ վըր քու կռան,
Իմ շամա թուռեն վըր քու ճռան,
Էս կրկնեմ, նես տամ,
Դու կրկնես, դուս տաս:

126(4537). ՋՐԱՂԱՑ

ա)
Եզըմ ունիմ՝ դախ ա,
Միսն օսկըռեն կախ ա,
Եզ, մի՛ վախեցի,
Քու տերը քեզ չի ծախա:

բ)
Նապաստակ,
Քարե վաստակ,
Քանի վազզե,
Փորը դարդակ:

գ)
Ութում, դութում,
Դրահել, դըրակոճ,
Աշխարհ լըփլըփա,
Տուն չը կըռնա գա:

127(4538). ԽՆՈՑԻ

ա)
Կերթա գուգա, մորդ պորտին
Բարև կուտա:

բ)
Մի բան ունիմ քամակը գետնին է,
Ոտները վերևն է:

գ)
Երկար սողան,
Վարժա[333] ճժեր
Մեչ կը դողան:

128(4539). ԱԼՅՈՒՐՄԱՂ

Ինքը մեկ՝մ է, աչքերը՝ հազար,
Էթթիշանով (շուքով) կերթա բազար

129(4540). ԹՈՆԻՐ

Նըստիմ կողքըտ,
Կոխեմ ծակըդ:

130(4541). ԹՈՆՐԻ ԱԿԸ

Պառավը՝ ձորը,
Քըռչը՝ ոռը:

131(4542). ԱՆԹԵՂ

Փութ-փութ փորին,
Ասլանը մեջը հորին:

132(4543). ԻՆՔՆԱԵՌ

ա)
Վերևը ծակ,
Ներքևը ծակ,
Մեչը լիքը
Ջուր ու կրակ:

բ)
Մարդ՝ բոլորիք,
Ճուղս օլորիք:

գ)
Տերտերն եկավ քրտնած,
Բան՝մ դեմը տնկված:

---

[333] Վարժա – վարժարանի (ծանոթ. բանահավաք Վ. Բդոյանի):

դ)
Առավոտյան զարթնեցին,
Դեղին հարսին լացուցին,
Սիրտ կրակով վառեցին,
Փորը ջրով լցրեցին:

133(4544). ԻՆՔՆԱԵՌ ԵՎ ԾՈՐԱԿ

Սարեն կուգա քըրտընած,
Անտերն առաջը տընկըված:

134(4545). ԿՈՒԺ

ա)
Չլտվեմ, թռնեմ մորդ շալակը:

բ)
Մերըդ գնաց առուն,
Մոլլեն թըռավ օռուն:

135(4546). ԿՈՒԺ ԵՎ ՄԱՐԴ

Մամս ի գնաց առուն
Մոլլեն թռավ ոռուն:

136(4547). ՃՐԱԳ

ա)
Հոր,
Հորի մեջը՝ ջուր,
Ջրի մեջը՝ օg,
Օgի բերանը՝ բոg:

բ)
Մի ծով կա,
Ծովի մեջը մի օձ կա,
Օձի բերանը օսկի կա:

137(4548). ԼԱՄՊԻ ՊԱՏՐՈՒՅԳ

ա)
Կեսը կրակի մեջն է, կեսը՝ ջրի:

բ)
Պոչը ջրի մեջ է, գլուխը՝ կրակի:

138(4549). ԼԱՄՊԻ ԼՈՒՅՍԸ

Բռնեմ բռովըս մեկ,
Թողնեմ տնովըս մեկ:

139(4550). ՄՈՄ

Հանելուկ,
Հանմանելուկ,
Ծերն է ծաղիկ,
Տակն ավելուկ:

140(4551). ՆՈՐԱԾԻՆԸ, ԵՐԿՈՒ ԾԻԾԸ ԵՎ ՕՐՈՐՈՑԸ

Ղոնաղ էկել է,
Անուն չունի,
Օրական էրկու ղըսըր կուտե,
Օսկոռ չունի,
Ձի հեզնում է
Միս ու արուն չունի:

141(4552). ՀԱՅԵԼԻ

Չորս քողանի բոզ կնիկ:

142(4553). ՕՃԱՌ

Առա մի քար
Ջարկի մի ղուշ,
Ոչ քարն էր քար,
Ոչ ղուշն էր ղուշ:

143(4554). ՇՈՐԻ ԽՈՋԱՆԱԿ

Կռնակը փայտ է, փորը մազ է,
Առավոտները վրադ կը վազե:

144(4555). ԱՎԵԼ

ա)
Գնացի Ղարս,
Ճամփին գտա
Երեք հատ հարս,
Մեկին ղրկի Ղարս,
Մեկին ճղթի թարս,
Մեկ լե պահի,
Չուրի դու գաս:

բ)
Քըստա հունա (այնտեղ),
Քըստա հունա,
Կերթա նստի
Դռան էտև:

գ)
Քըստա հուտա,
Քըստա հունա,
Ինատ կենա,
Նստի դինա:

դ)
Էստեղ լիզեմ, էնտեղ լիզեմ,
Դռան տակը պպզեմ:

ե)
Բստադան-քստադան,
Խռովի նստի տան:

զ)
Էստին պուպուզ, էնդին պուպուզ,
Դռան տակը գենա պուպուզ:

145(4556). ԿՇԵՌՔ

Վեցը սուն,
Էրկու տուն,
Մի գերան:

146(4557). ՁԵՌՔԻ ԿՇԵՌՔ

Մեկ՝ պարզեմ, երկուս՝ կախեմ,
Գամ իմ հախը տնից տանեմ:

147(4558). ՀԱՐՍՆԱՏՈՒՆ, ՀԱՐՍՆԱՎՈՐՆԵՐ, ՊԱՐ

Էկան լցվան,
Կայնան ցցվան,
Բռնին կցվան:

148(4559). ՍՅՈՒՆԵՐ

ա)
Ալեզներ, պալեզներ,
Եզներ՝ շիվարած կայնած:

բ)
Ալ եզներ,
Պալ եզներ,
Շիվարեր են ու կայնել:

149(4560). ՍՅՈՒՆԵՐ, ԾԱԾԿ, ԵՐԴԻԿ

Ոտները՝ ցից,
Սրտիկը՝ սև,
Բերանը՝ բաց:

150(4561). ԳԵՐԱՆ, ՍՅՈՒՆ, ԿՈՆԹ

Մեկըն ըսըմ է.- Վա՛խ, մեջկս,
Մեկըն կըսե.- Վա՛խ, գլոխըս,
Մեկն է կըսե.- Մի՛ վախենա ընկերըս:

151(4562). ԿՈՂՊԵՔ

Տիզն ի պատ,
Տզտանն ի պատ,
Հարի տիզը չըգա,
Տըզտան աղեն
Պատեն վեր չի գա:

152(4563). ՓԱԿԱՆՔ

Սև շունը կըզկտված,
Դրռան վրա պըպըզած,
Ոչ հաչում է, ոչ էլ կծում,
Ոչ էլ մարթ է ներս թողնում:

153(4564). ՁԻԹՀԱՆՔ

Ունենք էծ մը.
Էլավ սար,
Կերավ քար,
Էկավ տուն,
Կոպտոն թրքեց,
Արուն շռեց:

154(4565). ՀՈՐ

ա)
Տըկեն տաշշես՝ կերկըննա
Վրայեն տաշշես՝ կը կարճընա:

բ)
Քանի կը կըտրես,
Էրկըննա կը,
Քանի կը տաշշես,
Լեննա կը:

154(4565). ԳԻՐՔ

ա)
Խոսամ, կը խոսա,
Քընիմ, կը քընի,
Բայց չի մեռնի:

բ)
Սև ցանեմ,
Սպիտակ քաղեմ:

գ)
Ըստին դետի,
Ընդին դետի,
Քու դետին էլ՝
Իմ փետին:

155(4566). ԹՈՒՂԹ

ա)
Սարեն քցես՝ չի կոտրի,
Ձորեն քցես՝ չի կոտրի,
Քցես ջուրը՝ կը կոտրի:

բ)
Քարին քցեմ՝ չի ջարդի,
Ջուրը քցեմ՝ կջարդի

գ)
Սարեն, ձորեն գցեմ,
Չի կոտրի,
Ջուրը քցեմ, ջարթի կը:

156(4567). ՆԱՄԱԿ

Ձեռով ցանեմ,
Աչքով քաղեմ:

157(4568). ԳՐԵԼ ԵՎ ԿԱՐԴԱԼ

Ձեռով կը ցանե,
Բերնով կը քաղե:

158(4569). ԴԱՎՈՒԼ-ԶՈՒՌՆԱ

Կախեմ պատեն,
Տամ շամաթեն:

159(4570). ԴՀՈԼ

Սարեն, ձորեն ձեն գուգա,
Ձին անոթի տուն գուգա:

160(4571). ՆԱՎ

ա)
Փետ փետի ախպեր,
Ջուր՝ հորոխպեր,
Սիրելի՛ Ավագ,
Չի՛ մըտնի քաղաք:

բ)
Ջուր ջրի ախպեր,
Փետի հորոխպեր,
Սիրելի՛ Ավագ,
Չի՛ մըտնի քաղաք:

161(4572). ԱՌԱԳԱՍՏԱՎՈՐ ՆԱՎ

Սև է սաթի նման,
Սպիտակ է կաթի նման,
Կը շորորա մարդի նման:

162(4573). ՀՐԱՑԱՆ

ա)
Միսը՝ էրկաթից,
Հաքուստը՝ փայտից:

բ)
Հաքուստը՝ փետից,
Մարմինը՝ պողպատից:

գ)
Փորից կը հղանա,
Բերանից կը ծնի:

163(4574). ՍՈՒՐ ԵՎ ՊԱՏՅԱՆ

Փուտ փետ փորեցին,
Ասլանը մեջը հորեցին:

164(4575). ՄԵԾ ՊԱՍ

Հանք, հանք, հրամանք
Օխտը սարի դեմ առանք:

165(4576). ԾՈՎԸ ԵՎ ՄՈՎՍԵՍԻ ԳԱՎԱԶԱՆԸ

Ջրից՝ կողպեք,
Փայտից՝ բանալի:

166(4577). ԱՆՈՒՆ

Էն ի՞նչն է, մեջն է:

ԱՂՈԹՔՆԵՐ

1(4578). ԱՂՈԹՔ

Սուրբ Հովհաննես կայնե սարին,
Մեջքը տվել մարմար քարին,
Մատաղ կանեմ լույս կիրակին,
Չընկըլի դիվան սուրբ Կարապետ:
Ճամփա ընկնիս՝ ոլոր -մոլոր,
Դուռդ գուքան շատ ըխտավոր,
Շատ ոտավոր, շատ ձիավոր,
Ձիավորին ճամփա կուտաս,
Ոտավորին մուրազ կուտաս,
Քեզի մեռնիմ, յոթ անվան տեր:

2(4579). ԳԵԼԿԱՊ

Գայլը կապեմ երկ բըթով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրբ Սարկըսի ձիյու ձայնով,
Տեր Մովսեսի գավազանով:
Էկած ճամբին գայլ մոլորի,
Իմ տիրոջը խաչը տեսնի,
Դիվանի պես թող սասանի:

3(4580). ԳԵԼԿԱՊ

– Ո՞վ գել գազան,
Քեզի ո՞վ կապեց,
– Սուրբ հայր Օսեփ,
– Քա՞նի մատով.
– Ութը մատով,
Երկու բըթով,
Մայրամ Աստվածածնա,
Ձիու ծծի կաթով:

4(4581). ՊԱՌԿԵԼԻՍ

Օղջում Մայրամ անապատին,
Ակն ի բոլոր պատարագին,
Իսուս ծնավ, բերեց որդին,
Բուրթ խանձելով փաթըթեցին,
Գետ, որ տարան մըկըրտեցին,
Սուրբ Կարապետ քավոր էրեցին,
Ամեն Իսուս կոչեցին,
Գլուխս ի բարձ,
Բարձըս ի գերեզման,
Հոգիս քեզի տամ:

5(4582). ՊԱՌԿԵԼԻՍ

Տեր իմ Աստված, տեր բարերար,
Դու պայպանե ինձ այս գիշեր,
Տուր հորըս ու մորըս կյանք երկար,
Հանգըստութուն ու լավ օրեր,
Քու սուրբ հըրեշտակըդ մեր մոտից
Չը հեռանա զվարթագին:

6(4583). ՏՂՈՑԿԱՆԻ ԱՂՈԹՔ

Ճրագ, ճրագ, ճշմարիտ,
Կոստանտինոս, Մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Քրիստոս նստավ կապուտ քուռակ,
Գնաց էլավ Անի քաղաք,
Ծաղիկ քաղեց՝ ծաղկացավ,
Գլոխ զարկեց՝ զարթնացավ,
Իմ տերութան, դո՞ր կերթաս,
Դուռըն հիվընդի,
Բալնիք տվեց տղոցկանին,
Չը վախեցավ սիրտն իր ծոցին:

7(4584). ՕՂՋՈՒՄ

Իսուս Մայրամ, դու կուս իս,
Հոգով սրտով դու լուս իս,
Լուսեղեն կամար իս կապի,
Հոգիս քեզ համար իս պահի,
Տու ինձի իմաստութուն,
Հոգիս տանիս արքավութուն:

8(4585). ԼՈՒՅՍԻ ՓԱՌԱԲԱՆՈՒՄ

Լուսացավ, լուսացավ,
Լուսն է բարին,
Ծիտն է ծառին,
Հավն է թառին:
Աշխատավոր, վեր կաց բանի,
Ծույլ տղայի քունը կը տանի:
Երկնքի դռները բաց է,
Օսկե աթոռ դրած է,
Քրիստոս վրեն նստած է,
Լուսավորիչ կանգնած է,
Օսկե ղալամ բռնած է,
Մեծ ու պզդիկ գրում էին,
Մեղավորները լալիս էին,
Արդարները խաղում էին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություններում բանահյուսական նյութերը ներկայացված են ըստ ժողովածուի բաժինների հերթական և արխիվային ֆոնդային համարների: Ներկայացված են նաև նյութը գրառողի, գրառման ժամանակի ու վայրի, ծագման, բանասացի և նրա նախնիների մասին եղած տեղեկությունները: Քանի որ ժողովածուի նյութերն առաջին անգամ են հրատարակվում, ապա համապատասխան տեղեկություն է տրվում եզակի այն նմուշների մասին, որոնք նախկինում տպագրվել են: Հնարավորինս տրված են հեքիաթների տեսակների միջազգային զուգահեռներն ըստ Հանս-Յորգ Ութերի դասակարգման:

1(1). Հազարան բլբուլ (էջ 20) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8196-8203 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. նոյեմբերի 29-ին Երևանում, բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 707

2(2). Օսկեքյանքյուլ տըղի հեքյաթը (էջ 24) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7675-7696 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1973 թ. դեկտեմբերին՝ Լենինականում բանասաց Սուրեն Սարգսյանից: Հեքիաթասաց Սուրեն Հակոբի Սարգսյանը ծնվել է 1906 թ. Ախուրյանի շրջանի Չրախլի, այժմ՝ Ջրառատ գյուղում՝ հողագործի ընտանիքում: Ծնողները գաղթել են Ղարսից, իսկ պապերը Ղարս են եկել Մուշի Խոտալվի գյուղից («Կողբա կողքը», ինչպես ասում է պատմողը): Սուրեն Սարգսյանը ոչ մի տեղ չի սովորել, միայն տառերն է ճանաչում: Ապրել է Թբիլիսիում, Ուկրաինայում: Մասնագիտությամբ պատշար է: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, պարգևատրվել է մեդալներով: Եղել է պարտիզան Կարպատներում: Վերադարձել է 1947 թվին: Ունի կին և երեխաներ (7 երեխա): Այժմ աշխատում է դպրոցում՝ որպես պահակ: Գիտեցած հեքիաթները մեծ մասամբ լսել է պապից: «Պապըս ուզածիդ պես հեքիաթներ էր ըսըմ: Նըստըմ էյն օդեն, յիրան քելելու տեղ էյն թողնըմ, չըմքի հեքյաթ ըսողը բըդի ման գա: Սարժուձևերը (շարժուձևերը) բըդի ցուց տա, թեզ-թեզ էլ բըդի երգե: Մե խոսքով՝ հեքյաթը հավեսին բըդի ըսես, թե չէ... Հըմի ինչ օր ես ըսըմ եմ, մըտքիս զոռ եմ էնըմ: Ա՛խ, էման հեքյաթներ եմ լըսե՛... վո՛վ գիտեր, օր ըտոնք հըմի պետք են գալըմ»,- ասում է հեքիաթասացը:

«Սարգսյանի պատմած հեքիաթները գրի եմ առել այնպես, ինչպես պատմել է, լիովին պահպանված է պատմողի բարբառը և ոճը»—գրել է Հ. Մկրտչյանը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATУ 707

3(3). Դունյա Գոզալու հեկատը (էջ 28) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2052,01-2097,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հերիք Հարթենյանի հավաքածուի հիմնական նյութերը ժամանակին պատմել է նրա հայրը՝ աշուղ Ծաղկալին (Մելիքսեթ Հարթենյան): Մելիքսեթ Հարթենյանը ծնվել է 1870 թ. Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում, մահացել է 1937 թվականին: զբաղվել է աշուղությամբ: Նրա երկացանկը բաղկացած է եղել թե՛ իր և թե՛ Շիրակի մյուս աշուղների երգերից: Իր ելույթների ժամանակ նա երգերին զուգահեռ, պատմել է նաև ժողովրդական և աշուղական հեքիաթներ, աստվածաշնչյան պատումներ և ավանդություններ: Աշուղ Ծաղկալու երկացանկը գրի է առել իր դուստրը՝ Հերիք Հարթենյանը, 1924 թ. սկսված: Գրի առնված բանահյուսական բազմաժանր նյութերը Հերիք Հարթենյանը 1969 թ. արտագրել և հանձնել է ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնին: Հերիք Հարթենյանի հավաքածուն պահվում է բանահյուսական արխիվի FFVI: ֆոնդում և մշակվել է: Հ. Հարթենյանի գրառած նյութերի մի մասն ընդգրկվել է սույն ժողովածուի մեջ և տպագրվում է առաջին անգամ: Ժողովրդական հեքիաթների սյուժեներն աշուղ Ծաղկալին յուրովի է ներկայացրել, չի բացառվում, որ դուստրը ևս փոփոխություններ է կատարել և պատումները դարձրել երկարաշունչ, երբեմն ավելորդ մանրամասնություններով: Ժամանակին Հերիք Հարթենյանը եղել է պարագետ-ազգագրագետ Սրբուհի Լիսիցյանի բանասացը: Նրան անձամբ ճանաչել է նաև պարա-

գետ, արվեստագիտության դոկտոր Էմմա Պետրոսյանը: Ճշգրտումներ կատարելու համար մենք դիմեցինք Է. Պետրոսյանին, որը հաստատեց, որ Հերիք Հարթենյանը շատ ազատ է վարվել ժողովրդական պատումների հետ՝ հայտարարելով, որ «ինքն էլ ժողովուրդն է»: Այդուհանդերձ Հերիք Հարթենյանի հավաքածուի հեքիաթներում կան շատ հետաքրքիր դրվագներ, որոնք առկա չեն նմանօրինակ հեքիաթների մեջ: Թերևս դրանք Շիրակի տարածաշրջանին բնորոշ պատումներ են: Վերջին խոսքը թողնում ենք ապագա հետազոտողներին:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

4(4). Բիլդիլիկի Մառջանի հեկյաթը (էջ 39) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2104,01-2169,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 707

5(5). Սոյլամազ խանում-1 (էջ 55) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2277,01-2290,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1961 թ. Երևանում ալեքսանդրապոլցի Շուշանիկ Միրզոյանից: Բանասաց Շուշանիկ Միրզոյանը (ծնյալ Ամիրյան), 66 տարեկան, բուժքույր, ներկայումս ապրում է Երևանում, թոշակառու: Հեքիաթը լսել է եղբորից: Բարբառը խառն է, մոտ է գրական լեզվին:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 507

6(6). Սոյլամազ խանմ-2 (էջ 58) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2190,01-2209,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 507

7(7). Ավջու տղի հեքյատը (էջ 63) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2334,01-2355,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

8(8). Ջումշուտի և Սալվինազի հեքիաթը (էջ 69) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII:1709-1734 էջերում: Գրառել է բանահավաք Եղիշե Խաչատրյանը 1974 թ. սեպտեմբերի 1-ից 8-ը Լենինականում: Բանասացն անհայտ է:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

9(9). Հախվերդու հեքիաթը (էջ 75) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 1735-1766 էջերում: Գրառել է բանահավաք Եղիշե Խաչատրյանը 1974 թ. սեպտեմբերին Լենինականում, բանասաց Արշավիր Աղաքարյանից: Բանասաց Արշավիր Աղաքարյանը ծնվել է Արթիկի շրջանի Արթիկ գյուղում, գրառման ժամանակ 72 տարեկան էր: Երկար ժամանակ ապրել է Լենինականում: Աշխատել է կահույքի ֆաբրիկայում որպես ատաղձագործ: Կենսաթոշակառու է, միաժամանակ աշխատում է ավտոդպրոցում՝ որպես պահակ:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 302B+ATU 513

10(10). Ջամփուլադի հեքիաթը (էջ 81) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 6649,01-6681,00 համարի տակ: Գրի է առել Բարխուդար Ղազիյանը, 1973 թ. հունիսին Լենինականում: Բանասաց Ազատ Զաքարի Մելիքյանը ծնվել է 1908 թվին՝ Արևմտյան Հայաստանում, որտեղ էլ հեքիաթները լսել է: Դեռ փոքր էր, երբ կոտորածից մազապուրծ հասավ Արևելյան Հայաստան: Մեծացել է որբանոցում, մեծամասամբ Լենինականի պոլիգոններում: Գրագետ է, սովորել է բանֆակում, 1929-30 թվերին Հոկտեմբերյանում բատրակ է եղել: Հետո եղել է Կարմիր բանակում, մասնակցել է Հայրենական պատերազմին: Ապրել և եղել է Ռուսաստանի շատ վայրերում, Հայաստանի տարբեր շրջաններում, լեզվի մեջ չկա որոշակի բարբառ և ոչ էլ գրական՝ նույնիսկ առօրյա խոսակցության ժամանակ: Աշխատում է Լենինականի շուկայի գրախանութում:

Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:
ATU 560

11(11). Աղբալասի և Ղուշբալասի (էջ 87) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 2997,01-3084,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. օգոստոսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Դուշիկ Պետրոսյանի երկացանկում մեծ տեղ են գրավում աշուղական հեքիաթները և երգերը: Այս հեքիաթն աշուղական ստեղծագործության փայլուն օրինակ է և տարածված է Շիրակի տարածաշրջանում: Բանասաց Դուշիկ Պետրոսյանի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը:
Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:
ATU 303

12(12). Աղ-Բալասի, Ղուշ-Բալասի (էջ 97) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1116,01-1147,00 համարի տակ Գրառել է բանահավաք Համլետ Մովսիսյանը 1958 թ. Ախուրյանի շրջանի Բենիամին գյուղում բանասաց Արամ Բաղդասարյանից: Բանասացի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվել: Բանահավաքը հայտնել է, որ հեքիաթի պատումն ընդմիջվել է 12 երգով, որոնց տեքստը չի ներկայացրել: Այս հանգամանքից ելնելով՝ կարծում ենք, որ այս հեքիաթը աշուղական է: Ըստ բանահավաքի. «Նման և հրաշապատում այլ հեքիաթներ կարելի է Շիրակում գրի առնել հարյուրներով»:
Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:
ATU 303

13(13). Թագավորի տղի հեքիաթը (էջ 102) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7631-7672 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. Լենինականում բանասաց Սուրեն Սարգսյանից: Սուրեն Սարգսյանի մասին տե՛ս № 2(2) ծանոթագրությունը:
Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:
ATU 522+ATU 302C*+ ATU 507

14(14). Ջան Հրեշ թագավորը (էջ 110) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2257,01-2275,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1961 թ. հուլիսին Կիրովականի (Վանաձոր) առողջարանում բանասաց Գրիգոր Սարգիսյանից: Բանասաց Գրիգոր Գրիգորի Սարգիսյանը (Ֆիզդո) ծնվել է 1889 թ. Ղարսի մարզի Ղզլ-Չախչախ գյուղում: Նախնիները Մշո Կոպայծ գյուղից են: Գաղթել է Ղուկասյանի շրջանի (Աշոցք) Բաշգյուղ գյուղը: 1944 թ. տեղափոխվել է Լենինական: Զբաղվել է ռանչպարությամբ, ապա սևագործ բանվոր է եղել, նաև պահակ: Նյութերը գրառելու պահին եղել է թոշակառու: Կիսագրագետ է, սովորել է լիկկայանում: 8 տարեկանից զրկվել է ծնողներից, ապրել է քրոջ մոտ: Մասնակցել է 4 պատերազմների, երկու անգամ վիրավորվել է: Ամուսնացած է, ունի 2 տղա, 7 աղջիկ, 50 թոռ: Խնամել է նաև զոհված եղբոր ընտանիքը: Գիտե շատ հեքիաթներ, մասալներ, առակներ և անեկդոտներ: Առույգ, կենսուրախ, խոսքաշեն մարդ է: Իմացածները լսել է գյուղի օդաներում և պատմելիս ճոխացրել է: Բանահավաքը նյութերը գրառել է Կիրովականի առողջարանում և Լենինականում:
Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

15(15). Իշու քուռակի հեքիաթը (էջ 114) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7699-7714 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. մարտի 7-ին՝ Լենինականում բանասաց Սուրեն Սարգսյանից: Բանասացը հեքիաթը լսել է իր պապից 13 տարեկանում: Բանասաց Սուրեն Սարգսյանի մասին տե՛ս № 2(2) ծանոթագրությունը:
Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:
ATU 430

16(16). Փետե ձին (էջ 117) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2291,01-2310,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1961 թ. Երևանում ալեքսանդրապոլցի Շուշանիկ Միրզոյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(5) ծանոթագրությունը:
Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:
ATU 575+ATU 881

17(17). Թուրութամքի հեքիաթը (էջ 121) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2393,01-2446,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. հունիսին Լենինականում բանասաց Գրիգոր Սարգսյանից: Բանասացի մասին տե՛ս № 14(14) ծանոթագրությունը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 302B+ATU 513

18(18). Դիվոկ-Ղուկանոս (էջ 131) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 3065,01-3104,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասաց Եղիշ Աբրահամյանից: Բանահավաքը բանասացի մասին տվել է հետևյալ տեղեկությունը. «Աբրահամյան Եղիշ Խաչատուրի (ծն. 1915 թ. Սիրվանճուղ): Ծնողները ռանչպար են եղել: Սովորել է մինչև 4-րդ դասարան: Աշխատել է կոլտնտեսությունում: Մասնակցել է Հայրենական պատերազմին: Ձեռքը հաշմանդամ է: Այժմ սովխոզում պահակ է: Նա իրենց գյուղի հոդայի մշտական այցելու է եղել մինչև վերջին տարիները, երբ փակվել է հոդան: Դրան նպաստել են հեքիաթասաց ծերունիների մահը, որ ամենակարևորն է, հեռուստացույցի մուտքը Լեռնակերտ: Այս հեքիաթը նա լսել է հենց իրենց հոդայում»:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

Ըստ բանահավաքի դիտարկումների՝ հեքիաթը հունաբյուզանդական ծագում ունի:

ATU 516+ATU 516C [S268 մոտիվ]

19(19). Լուտվիկի հեքիաթը (էջ 137) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8176-8181 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. հոկտեմբերի 18-ին բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 516C [S268 մոտիվ]

20(20). Տուտի ղուշի հեքիաթը (էջ 139) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8161-8170 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. հոկտեմբերի 31-ին բանասաց Համբարձում (ինքը՝ Աբրահամ) Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 881

21(21). Թաքավորի տղեն մութ աշխարքում (էջ 144) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8137-8140 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. նոյեմբերի 15-ին բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

22(22). Հեքիմի տղի հեքիաթը (էջ 145) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8115-8121 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. սեպտեմբերի 25-ին բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

23(23). Ջիվանշահի հեքիաթը (էջ 148) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8171-8175 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. հոկտեմբերի 14-ին բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

24(24). Սինամի ու Գյուլի հեքիաթը (էջ 150) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8189-8194 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. նոյեմբերի 25-ին բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

25(25). Գառնիկ ախպոր հեքյատը (էջ 153) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2170,01-2181,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ

գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը: Այս հեքիաթի սյուժեն շատ տարածված սյուժե է, բայց չի բացառվում, որ բանասացը ծանոթ է եղել Հովի. Թումանյանի մշակմանը: Հեքիաթի որոշ դրվագներ հիշեցնում են Գարեգին Սրվանձտյանցի գրառած «Գառնիկ ախբեր» հեքիաթին:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

26(26). Դալի Այմադը (էջ 156) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2268,01-2287,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

27(27). Խըրատըն փարով բըդի էղներ (էջ 161) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7727-7750 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը Արթիկի շրջանի Փանիկ գյուղացի բանասաց Երվանդ Սեխլեյանից 1940 թվականին: Բանասաց Երվանդ Սեխլեյանը պատմելու ժամանակ եղել է 42 տարեկան: Հեքիաթի ձեռագիրը պահպանվել է բանահավաք Հրաչ Մկրտչյանի անձնական արխիվում, որը 1974 թ. հունվարին արտագրել է Լենինականում: Ծանոթագրության մեջ Հ. Մկրտչյանը գրել է. «Գրի եմ առել նույն թվին (1940), աշխատել եմ լիովին պահպանել պատմողի բարբառը: Միայն հանել եմ շատ կրկնվող բառերն ու արտահայտությունները»: Բանասաց Սեխլեյանը 1974 թ. բնակվել է Երևանում:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 910B

28(28). Էրա լավուտեն քցե ջուրը, գուկա դեմդ, չի կորչի (էջ 165) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2260,01-2267,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

29(29). Մեռել շուռ տվող մարդը (էջ 167) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1658,01-1659,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանում՝ բանասաց Գրիգոր Հակոբյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 332

30(30). Կուզիկն ու հուրի փարեքը (էջ 167) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1069,01-1070,00 համարի տակ: Բանահավաք Համլետ Մովսիսյանը գրառել է 1958 թ. Շիրակում: Բանասացն անհայտ է:

Տպագրվում է առաջին անգամ:

31(31). Արաբստանի պատմությունը (էջ 168) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1058,01-1068,00 համարի տակ: Բանահավաք Համլետ Մովսիսյանը գրառել է 1958 թ.: Բանահավաքի դիտարկումները այս պատմության մասին.

«Սույն զրույցը մի քանի անգամ լսել եմ Ախուրյանի և Արթիկի շրջանների տարբեր գյուղերում, տարբեր մարդկանցից՝ չնչին փոփոխություններով՝ որպես հայտնի պատմություն, որ «սաղն էլ գիտեն»:

Գրեթե բոլոր պատմողները այն ներկայացնում են որպես իրական եղելություն՝ չկասկածելով նրա ճշտության վրա: Պատմողներից մեկը, նույնիսկ ասաց, թե իր պապը տեսել է Հարութին, նրա «արաբստան կընկան»

Հիմք չընդունելով պատմողների այդ հավաստիացումները տվյալ զրույցի վերաբերյալ, որպես ավելի մոտ ժամանակների և իրական եղելություն (որովհետև պատմողները, գյուղական ասացողները, եթե կարելի է այդպես անվանել սույն զրույցի «հեղինակներին», մի ցանկություն ունեն՝ հավատացնեն և հավատան, որ իրենց պատմությունը զուտ ճշմարտություն է), պետք է կարծել, որ այն վերաբերում է ավելի ուշ ժամանակաշրջանի:

Ամենայն հավանականությամբ զրույցն ստեղծվել է դեռևս Հայաստանում արաբական գերիշխանության այն տարիներին (748-750 թվակ.), երբ Աբբասյանների իշխանության օրոք առանձնապես սաստկացավ գյուղացիության վրա հարկային ծանր քաղաքականությունը և ծայր առավ բարբարոսական կողոպուտն ու թալանը (այդ մասին մանրամասն տեղեկություններ ունի Ղևոնդ պատմիչը):

Կասկածից վեր է, որ տվյալ զրույցի համար հիմք է ծառայել տվյալ ժամանակաշրջանի որևէ դեպք, եղելություն: Հետագայում, ապրելով ժողովրդի բերանում, այն կրել է ժողովրդական պատմելաձևի դրոշմը և դարձել է հեքիաթանման: Ժամանակի ընթացքում արաբ ասպատակողը կորցրել է իր կոնկրետ անվանումը և դարձել է «արաբստան դև», որ քամուց ավելի արագ է սլանում:

Հատկանշական է այն, որ զրույցի մեջ հանդես եկող «արաբ բիձեն և կնիկարմատը» (որոնք արաբ հասարակ, աշխատավոր մարդկանց տիպարներ են) լինում են զրույցի հերոսի խորհրդատուն և օգնողը:

Դա աշխատավոր մարդու հատուկ զգացումն է՝ շահագործվող, հասարակ մարդը ոչինչ չունի իր նման մարդու դեմ, ինչ ազգի և դավանանքի էլ պատկանելիս լինեն նրանք, դեռ մի բան էլ ավելի, ասպատակողը հավասարապես ատելի է երկուսին էլ: Զրույցը շարադրվում է առանց փոփոխության»:

Պատումը տպագրվում է առաջին անգամ:

32(32). Տիգրան վաճառականը (էջ 170) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 2949,01-2996,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հուլիսին Արթիկի շրջանի Հառիճ գյուղում բանասաց Խաչատուր Սողոյանից: Բանահավաքի տեղեկատվությամբ. «Խաչատուր Մկրտչի Սողոյանը ծնվել է 1926 թ. Հառիճ գյուղում: Սովորել է մինչև 9-րդ դասարան: Ունի հինգ զավակ, աշխատում է սովխոզում որպես պահեստապետ»:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

33(33). Ղասաբե Ջոմառդ (էջ 176) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 3065,01-3104,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասաց Երվանդ Հովհաննիսյանից: Ե. Հովհաննիսյանը այս հեքիաթը լսել է հորից՝ Սահակից՝ դեռևս պատանի հասակում, մոտ 35-40 տարի առաջ: Բանահավաքը բանասացի մասին տվել է հետևյալ տեղեկությունը. «Հովհաննիսյան Երվանդ Սահակի (ծն. 1921 թ., Լեռնակերտ): Գյուղի դպրոցում մաթեմատիկայի դասատու է: Հորինել է երգեր՝ գյուղում, շրջանում կատարված իրադարձությունների մասին: Ունի չորս զավակ»:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

34(34). Վաճառականի տղան (էջ 178) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 5565,01-5585,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Բարխուդար Ղազիյանը Լենինականում՝ 1973 թ. հունիսին բանասաց Ռուբեն Վարդանյանից: Բանահավաք Բ. Ղազիյանը բանասացի մասին պատմում է հետևյալը. «Ռուբեն Հայրապետի Վարդանյանը, 62 տարեկան, ապրում է Լենինականում՝ 1919 թվից մինչև օրս: Եղեռնի ժամանակ, երբ 4 տարեկան էր, ծնողները փախել են Տաճկաստանից և հաստատվել Լենինականում: Ունի 7-րդ դասարանի կրթություն: Հեքիաթները լսել է դեռ երեխա ժամանակ: Պատմել են իրեն այնպես, ինչպես ինքը պատմեց մեզ, միայն այն տարբերությամբ, որ հնարավոր է, թե մենք ոչ մեկին չպատմենք, իսկ ինքը մինչև կյանքի վերջը պատմելու և զվարճացնելու է բարի լսողներին: Պատմում է ոգևորված, իսկ քանի դեռ չկա ոգևորությունը, նախադասությունները շարադրվում են գրական լեզվով: Դա պատահում է, երբ նոր է սկսում պատմել: Ես գրի առա Բոշի սադում, ուր համախմբվել և ոգևորում էին համաքաղաքացիները: Նրան նույնիսկ կոչում են Շեկ Ռուբեն, քանի որ մազերը շիկավուն են: Հեքիաթները գրի են առնված մագնիտոֆոնով: Արտագրվում է առանց որևէ փոփոխության»:

Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

35(35). Զարգյար Մուրադը (էջ 181) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2210,01-2227,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

36(36). Գողուտեն կէնես՝ խղճով էրա (էջ 186) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2242,01-2259,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

37(37). Ալիխան թակավորը (էջ 191) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2292,01-2319,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

38(38). Ղարիբությունում աշխատած հարյուր ոսկին (էջ 198) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 5589,01-5599,00 համարի տակ: Վերծանված է ձայնագրությունից: Գրառել է բանահավաք Բարխուդար Ղազիյանը Լենինականում՝ 1973 թ. հուլիսին բանասաց Ռուբեն Վարդանյանից: Բանասացի մասին տե՛ս № 34(34) ծանոթագրությունը:

Իրապատում հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

39(39). Հավատարիմ վազիրի պատմուտենը (էջ 200) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI:1980,01-1991,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը, նյութերն արտագրվել են 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

40(40). Ես չխնդամ, վո՛վ խնդա (էջ 202) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 5599,01-5605,00 համարի տակ: Ձայնագրել և վերծանել է բանահավաք Բարխուդար Ղազիյանը Լենինականում՝ 1973 թ. հուլիսին բանասաց Ռուբեն Վարդանյանից: Բանասացի մասին տե՛ս № 34(34) ծանոթագրությունը:

Իրապատում հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

41(41). Խնդալու պատճառները (էջ 203) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2987,01-2990,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ., բանասացն անհայտ է:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

42(42). Սուտ գիտունի հեքիաթը (էջ 204) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7613-7628 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1973 թ. հոկտեմբերի 16-ին Լենինականում իր քրոջից՝ բանասաց Սիրանուշ Մկրտչյանից՝ Լենինականի խոսվածքով: Բանասացը հեքիաթը լսել է Արթիկի շրջանի Փանիկ գյուղում բանասաց Երվանդ Սեխլեյանից, որն այն պատմել է Փանիկի խոսվածքով:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

43(43). Նախրչու տերտեր դառնալը (էջ 207) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2028,01-2032,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

44(44). Նախրջու տղի հեքիաթը (էջ 208) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2459,01-2472,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. հունիսին Լենինականում բանասաց Գրիգոր Սարգսյանից: Բանասացի մասին տե՛ս № 14(14) ծանոթագրությունը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

45(45). Երազ մեկնողը (էջ 211) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2353,01-2458,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. նոյեմբերին Լենինականում բանասաց Աղասի Վխկրյանից: Բանասաց Աղասի Վխկրյանը թոշակառու է, նախկին դերձակ:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

46(46). Թակավորի էրազ տեսնելը (էջ 212) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2232,01-2241,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

47(47). Մարդն ու նամարդը (էջ 215) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7717-7726 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. փետրվարին՝ Լենինականում բանասաց Կարո Ներսիսյանից: Բանասաց Կարո Գասպարի Ներսիսյանը ծնվել է 1920 թ.: Հեքիաթը լսել է իր հորից՝ Գասպար Ներսիսյանից, որը Ղարսի գավառի Փալտրվան գյուղից էր:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

48(48). Խելքից պակասի հեքիաթը (էջ 216) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7753-7764 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. փետրվարի 22-ին՝ Լենինականում բանասաց Միսաք Տոնոյանից: Բանասացը հեքիաթը լսել է իր հորեղբորից, որը ծնվել է 1912 թ.:

Հեքիաթի տարաբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 910B

49(49). Ինչ կամես ինձ, աստված կամե քեզ (էջ 218) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7765-7770 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. փետրվարի 22-ին՝ Լենինականում բանասաց Միսաք Տոնոյանից: Բանասացը հեքիաթը լսել է իր հորեղբորից, Սմբատ Տոնոյանից: Սմբատ Տոնոյանը ծնվել է 1912 թ. Մուշ գավառի Արգավանք գյուղում:

Հեքիաթի տարաբերակը տպագրվում է առաջին անգամ:

50(50). Իմաստուն ծերունին ու թագավորը (էջ 219) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7789-7792 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. փետրվարին՝ Լենինականում բանասաց 85-ամյա մշեցի Խաչիկ Ասլանյանից:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

51(51). Մայր օձի պատմությունը (էջ 220) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7817-7821 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. ապրիլին՝ Լենինականում: Բանասաց Միսաք Տոնոյանը, լենինականցի է, սովորող, 19 տարեկան է, լսել է իր հասակակից ընկերոջից՝ Սանասար Պողոսյանից, Ոսկեհասկ գյուղից: Վերջինս էլ լսել է իր ծնողներից:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

52(52). Նախրջու հեքիաթը (Բարի մարդու հեքիաթը) (էջ 221) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2353,01-2362,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1964 թ. Երևանում բանասաց Սաթենիկ Զաքարյանից: Սաթենիկ Զաքարյանը ծնվել է 1890 թվին (71 տարեկան): Ալեքսանդրապոլցի, անգրագետ: Ներկայումս թոշակառու: Ապրում է Երևանում իր ընտանիքի հետ: Ապրել է նաև գյուղերում: Լեզվանի և ճարտար կին է: Բարբառը մոտ է Լենինականի բարբառին:

Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

53(53). **Գարսևանը՝ թագավոր (էջ 223)** – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2371,01-2376,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1964 թ. Կիրովականի (Վանաձոր) առողջարանում Ուլիանոս Հակոբյանից: Բանասացը Մարալիկից է, վարորդ, 33 տարեկան, ունի տարրական կրթություն:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

54(54). Թագավորի փեսի երազը (էջ 224) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8134-8136 էջերում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. հոկտեմբերի 9-ին բանասաց Աբրահամ Ղուկասյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

55(55). Թաքավորի հրամանը (էջ 225) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXII: 8195 էջում: Գրառել է բանահավաք Անուշավան Գևորգյանը 1975 թ. նոյեմբերի 26-ին բանասաց Արփիկ Կարապետի Գևորգյանից: Բանասացը բնակվում է Երևանում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

56(56). Գտնված օսկու պատմությունը (էջ 225) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջ 88-97: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկում բանասաց Արուսյակ Հակոբյանից: Բանասաց Արուսյակ Խորենի Հակոբյանը ծնվել է 1923 թ. Անիի շրջանի Ձիթհանքով գյուղում (նախկինում՝ Թալինի շրջան): Արթիկում ապրում է 35 տարի, սովորել է մինչև 9-րդ դասարան: Հեքիաթները լսել է երեխա ժամանակ օդաներում):

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

57(57). Խորհրդավոր հայելին (էջ 227) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI:1998,01-2002,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1924 թ., արտագրել է 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

58(58). Ասվատուր քեռու խրատը եկանին (էջ 228) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2182,01-2189,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

59(59). Վախկոտ մարթը (էջ 230) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FAV: 8054,01-8061,00 համարի տակ: Գրառել է Երվանդ Լալայանը, գրառման տեղը, թիվը և բանասացն անհայտ է:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

60(60).- Իմաստուն ջուլակը (էջ 231) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 3125,01-3131,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Հառիճ գյուղում բանասաց Հովհաննես Սահակյանից: Բանասաց Հովհաննես Սահակյանը ծնվել է 1898 թվականին Հառիճ գյուղում, կիսագրագետ թոշակառու:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

61(61). Ջուլհակի հնարագիտուտենը (էջ 232) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2012,01-2019,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

62(62). Թուրքմանի հեքիաթը (էջ 234) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1371,01-1402,00 համարի տակ: Գրառել է բանագետ-բանահավաք Սարգիս Հարությունյանը 1965 թ. սեպտեմբերի 25-ին Լենինականում: «Պատմեց Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղի նախկին բնակիչ 76-ամյա Նիկոլ Մխիթարյանը, որն արդեն երեք տարի է, ինչ ապրում է Լենինականում: Լսել է Պեդոյենց Ավեդիսից՝ մի տաղանդավոր հեքիաթասացից, որին պարտ են իրենց ռեպերտուարով Ղազանչի գյուղի հետագա բոլոր հեքիաթասացները»,- նշել է բանահավաքը:

Իրապատում հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

63(63). Էձ ծախողի հեկատը (էջ 237) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1343,01-1370,00 համարի տակ: Գրառել է բանագետ-բանահավաք Սարգիս Հարությունյանը 1965 թ. սեպտեմբերի 25-ին Լենինականում՝ բանասաց Նիկոլ Մխիթարյանից, բանասացի մասին տե՛ս № 62(62) ծանոթագրությունը:

Իրապատում հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

64(64). Թակավորի հրամանը (էջ 239) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1409,01-1416,00 համարի տակ: Գրառել է Սարգիս Հարությունյանը 1965 թ. սեպտեմբերի 25-ին Լենինականում՝ բանասաց Նիկոլ Մխիթարյանից (արտագրված է ձայնաժապավենից): Բանասացի մասին տե՛ս № 62(62) ծանոթագրությունը:

Իրապատում հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

65(65). Շառոյի հեքիաթը (էջ 240) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1437,01-1486,00 համարի տակ: Գրառել է Սարգիս Հարությունյանը 1965 թ. սեպտեմբերի 25-ին Լենինականում՝ բանասաց Նիկոլ Մխիթարյանից (արտագրված է ձայնաժապավենից): Բանասացի մասին տե՛ս № 62(62) ծանոթագրությունը:

Իրապատում հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

66(66). Թագավորի յիրեք կնիկը (էջ 242) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6142,01-6145,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1968 թ. Լենինականում բանասաց թոշակառու Գուրգեն Կուպալյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

67(67). Թակավորն ու իրան կնգտիկը (էջ 243) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2020,01-2025,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

68(68). Կնկա շառը (էջ 244) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6146,01-6147,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1968 թ. Լենինականում բանասաց թոշակառու Ենոք Մելքոնյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

69(69). Խորամանկ հարսը (էջ 245) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 6629,01-6635,00 համարի տակ: Ձայնագրել և վերծանել է բանահավաք Բարխուդար Ղազիյանը Լենինականում՝ 1973 թ. հունիսին: Բանասաց Երեմ Իսահակի Քոչարյանը ծնվել է 1899 թ., միշտ ապրել է Լենինականում: Ստացել է միջնակարգ կրթություն, ծառայել է որպես մատակարարման բաժնի պետ: Ձայնագրման ժամանակ արդեն թոշակառու է եղել: Իր պատումները որտեղից գիտի հարցին պատասխանել է. «Ես ի՞նչ գիտնամ, սրանից, նրանից, ժողովրդից»

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

70(70). Կիներու կոտորումը (էջ 246) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 6607,02-6619,00 համարի տակ: Ձայնագրել և վերծանել է բանահավաք Բարխուդար Ղազիյանը Լենինականում՝ 1973 թ. հուլիսին բանասաց Ռուբեն Վարդանյանից: Բանասացի մասին տես № 34(34) ծանոթագրությունը:

Իրապատում հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

7**1(71). Համզա փայլևանի հեքիաթը (էջ 248)** – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7601-7608 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1973 թ. դեկտեմբերի 25-ին Լենինականում բանասաց Սիրանուշ Մկրտչյանից: Սիրանուշ Մկրտչյանը ծնվել է 1915 թ., բանահավաք Հրաչ Մկրտչյանի քույրն է: Բանասացը հեքիաթը լսել է հորից՝ Ասատուր Մկրտչյանից, որն իր հերթին լսել է իր տատից Նանեից՝ 1899 թ.:

Իրապատում հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

72(72). Կնկա լավն էլ կա՛, գեշն էլ (էջ 249) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7775-7782 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. փետրվարի 15-ին՝ Լենինականում: Բանասաց՝ 85-ամյա մշեցի Խաչիկ Ասլանյան:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

73(73). Բարի վազիրը ու թակավորը (էջ 251) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2036,01-2051,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տես № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

74(74). Յամեն մարդու գաղտնիքն յիրան մոտ բըդի մընա (էջ 255) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7783-7788 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. հունվարին՝ Լենինականում բանասաց Մ. Հարությունյանից, որը վերապատմել է Թորգոմ Հարությունյանի պատումը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

75(75). Հորի բերանը բացվե՝ կընիկս դուս է էկե (էջ 256) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7795-7802 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1970 թ.՝ Լենինականում բանասաց Կարապետ Մխիթարյանից: Բանասաց Կարապետ Մխիթարյանը ծնվել է 1904 թ. Ղարսի գավառի Փալտրվան գյուղում:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

76(76). Ջավոն էկավ (էջ 257) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7803-7806 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1973 թ. դեկտեմբերին՝ Լենինականում բանասաց Մարգարիտ Վարդանյանից: Բանասաց Մարգարիտ Վարդանյանը 75 տարեկան է, Արթիկի շրջանի Փանիկ գյուղից: Հեքիաթը լսել է

իրենց գյուղում, երբ ամուսնացած չի եղել, մոտավորապես 55 տարի առաջ: Պատմելու ընթացքում օգտագործում է Լենինականի խոսվածքը և իրենց գյուղի՝ Փանիկի՝ իրեն հայտնի բարբառը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

77(77). Կընիկս ջրհորեն դուս է էկե (էջ 258) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7807-7816 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1969 թ. Լենինականում 36-ամյա բանասաց Շիրման Ենգոյանից:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

78(78). Անսկամ կնիկ (էջ 259) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2363,01-2368,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1964 թ. Երևանում բանասաց Սաթենիկ Զաքարյանից: Բանասացի մասին տե՛ս № 52(52) ծանոթագրությունը:

Հեքիաթը տպագրվում է առաջին անգամ:

79(79). Կուռկուռի փաչեն (էջ 260) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2345,01-2352,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1961 թ. Երևանում բանասաց Սաթենիկ Զաքարյանից: Բանասացի մասին տե՛ս № 52(52) ծանոթագրությունը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

80(80). Խելքից պակաս կնիկը (էջ 262) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջ 98-103: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկում բանասաց Արուսյակ Հակոբյանից: Բանասացի մասին տե՛ս № 56(56) ծանոթագրությունը:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

81(81). Ձգների ծիծաղը (էջ 263) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2002,01-2004,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1924 թ., արտագրել է 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ATU 875D

82(82). Թակավորի թամբալ ախճիկը (էջ 264) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2006,01-2012,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

83(83). Նռան հատը (էջ 266) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 2026,01-2027,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Հերիք Հարթենյանը 1969 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: Հարթենյանների մասին տե՛ս № 3(3) ծանոթագրությունը:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

84(84). Հունարով տղեն (էջ 266) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1659,01-1660,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանում՝ բանասաց՝ Լևոն Սենոյի Հակոբյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

85(85). Տերտերը, դուրգյարը, թարզին (էջ 267) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1661,01-1661,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մարալիկ գյուղում՝ բանասաց Դերենիկ Ստեփանյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

86(86). Հանելուկ (էջ 267) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1662,02-1663,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մուսլուղլի գյուղում՝ բանասաց Արամ Աբրահամյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

87(87). Թագավորի գլուխը կոտոշ կա (էջ 267) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7823-7828 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. ապրիլի 5-ին՝ Լենինականում բանասաց Սիրանուշ Մկրտչյանից: Վերջինս 1928 թ. լսել է Վարդուշ Խաչկալյանից:

Հեքիաթի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

88(88). Ալեքսանդր Մակեդոնացին (էջ 268) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFV:1625,01-1645,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Արազ Կարապետյանը 1963 թ. ապրիլի 18-ին Լենինականում բանասաց Հովհաննես Հովհաննիսյանից (Կալոթկաջի Օնես): Բանահավաք Արազ Կարապետյանը բանասացի կենսագրությունը ներկայացրել է այսպես. «Հովհաննես Հովհաննիսյանը ծնվել է 1887 թվին Ալեքսանդրապոլում: Հայրը խանութպան է եղել: Ըստ իր պատմելու՝ իրենց նյութականը շատ բարեկեցիկ է եղել: Հինգ տարի սովորել է Սուրբ Փրկչի վանքում, որից հետո թողել է ուսումը և զբաղվել արհեստով: Խոսում է երբեմն մաքուր Լենինականի բարբառով, երբեմն էլ՝ մաքուր գրական լեզվով: Ես զգացի, որ ինձնից է քաշվում: Քանիցս անգամ խնդրեցի, որ մաքուր Լենինականի բարբառով պատմի, բայց դարձյալ նա մեծ մասը գրական լեզվով էր պատմում: Ապրում էր միայնակ, ոչ ոք չուներ մոտը: Վերին աստիճանի մաքուր էր և մաքրասեր: Տուն մտնողը մի պահ կկարծեր, թե յոթը նորահարս կա այս տան մեջ և յոթն էլ ձգտում են սենյակը պահել մաքուր հավաքված և կարգուկանոնի մեջ»:

Տպագրվում է առաջին անգամ:

89(89). Իմաստուն Սողոմոնը (էջ 271) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1662,01-1662,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մարալիկ գյուղում՝ բանասաց Հարություն Աբաջյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

90(90). Սողոմոն Իմաստունի պատմվածքը (էջ 271) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2387,01-2390,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում Տեփո Քեռուց: Բանասաց Ստեփան Սահակի Իսահակյանը (Տեփո քեռի) ծնվել է 1884 թվականին Ղարսի մարզի Երազդվոր (Բաշ Շորագյալ) գյուղում: Բանասացն անգրագետ է, զբաղվել է հողագործությամբ, եղել է սևագործ բանվոր, ներկարար, նյութի գրառման ժամանակ՝ թոշակառու: 1918 թվականին եղել է թուրքա-կան բանակի գումակում (обоз): 1920 թվականին գաղթել է Լենինական: 1928 թվականին երկու տղաները գնացել են բանակ և չեն վերադարձել: Ամուսնացել է երեք անգամ. առաջին երկու կանայք մահացել են: Գիտի շատ հեքիաթներ, առակներ, որոնք լսել և սովորել է գյուղի օդաներում՝ մշեցի Աղաջանից և ուրիշներից: Բանասացն առույգ է, բայց ծերության պատճառով երբեմն խառնում է պատումի ժամանակագրությունը և թռիչքներ է կատարում՝ խաթարելով սյուժեի բնականոն ընթացքը: Սողոմոնի մասին պատումն աստվածաշնչյան պատմությունների ժողովրդական վերապատումն է ժողովրդական մեկնաբանություններով՝ ըստ հասարակական ընկալման: Պատումի սկզբնամասում Դավիթ թագավորի և Ուրիայի կնոջ՝ Բերսաբեի կապն ու Ուրիայի սպանությունն է: այնուհետև Դավիթի և Բերսաբեի որդի Սողոմոնի մասին պատումների թռուցիկ հանրագումարը: Աստվածաշնչյան պատումները և հատկապես Սողոմոն իմաստունի մասին պատումներն ակտիվորեն շրջանառվել են ժողովրդական բանավոր խոսքում և ընկալվել են որպես բանահյուսական դրսևորումներ:

Պատումը տպագրվում է առաջին անգամ:

Այժմ տոների և հանդեսների ժամանակ (Մարտի 8, Մայիսի 1 և 9, նոյեմբեր և այլն) գյուղական Երիտասարդությունը պարեր է կազմակերպում (հատկապես խմբակային շուրջպարեր) և երգվում են այդ քառյակները, կրկնվում տարբեր եղանակներով: Յուրաքանչյուր եղանակի հետ փոխվում է կրկներգը (Մանի): Երգողները մրցում են միմյանց հետ, դրանք երկու-երեք զույգ աղջիկներ են, որոնցից յուրաքանչյուրը աշխատում է երգել ամենալավ քառյակը, որը կարժանանա ընդհանուր հավանության; Հիմնականում կրկնվում են հնից եկած մի քանի տասնյակ հաջողված քառյակներ, որոնք արվեստի լավագույն նմուշներ են: Սակայն հիմնականում այդպիսի քառյակները վերստեղծագործվում են և ստեղծագործվում- անշուշտ նոր օրերի շունչը, կենցաղի ու կուլտուրայի դրոշմը ունենալով իրենց վրա»:

Ջանգյուլումների տարբերակները տպագրվում են առաջին անգամ

264(1205)–265(1206). Վիճակի երգեր (էջ 420) – Բնագրերը պահվում ե ՀԱԻԱԲ FFX:2855,02-2857,00 համարների տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասացներ Հայաստան Վարդանյանից և Օլգա Ավդալյանից (բանասացների մասին տես № 261(714) ծանոթագրությունը):

Վիճակի երգերը տպագրվում են առաջին անգամ

1(1207). Անի քաղաք (էջ 420) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1209,01-1214,00 համարի տակ: Գրի է առել բանահավաք Արտաշես Նազինյանը 1965 թ. սեպտեմբերին՝ Լենինականում: Բանահավաքը երգն ընդօրնակել է 1884 թ մի ձեռագիր երգարանից, որը պատկանում է գյումրեցի Զոփուր Թաթոսին Կալոսնիկ (Պապիջանյան): Բանահավաքը տեղեկատվության մեջ գրել է. «Միջնադարյան այս երգը հիշյալ երգարանում աղավաղվել է և՛ լեզվական, և՛ բովանդակության տեսակետից և փաստորեն դարձել է բանահյուսական մի փոփոխակ: Պահպանել ենք երգարանի մեջ եղած բնագիրը՝ ուղղելով կետադրական սխալները և բացահայտ վրիպակները»:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

2(1208). Անիի ողբը (էջ 421) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջեր 8-9: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկի շրջանի Նահապետավան գյուղում, բանասաց Թեղուշ Զաքարյանից: Բանասացի մասին տես № 12(465) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

3(1209). Մմե-Զինե (էջ 421) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2881,01-2883,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արթիկի շրջանի Հառիճ գյուղում բանասաց Հովհաննես Սահակյանից: Բանասաց Հովհաննես Հակոբի Սահակյանը ծնվել է 1898 թ. Հառիճ (նախկին՝ Ղփչաղ) գյուղում: Կիսագրագետ է, թոշակառու:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

4(1210). Քաջ Վարազդատի պատմությունից (էջ 421, 422) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFXI: 7829-7830 էջերում: Գրառել է բանահավաք Հրաչ Մկրտչյանը 1974 թ. ապրիլի 30-ին՝ Լենինականում՝ Միսաք Տոնոյանից: Պատմել և երգել է Մխիթար Մխիթարյանը, 75 տարեկան կիսագրագետ: Այս պատմությունը և երգը սովորել է հորից, լավ չի հիշում: Հայրը և ինքը Մշո Բուլանըղ գյուղից են:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

5(1211). Ես Խաչոն եմ Արմուտլեցի (էջ 422) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1223,01-1224,00 համարի տակ: Արտագրել է բանահավաք Արտաշես Նազինյանը 1965 թ. սեպտեմբերին՝ Լենինականում 1884 թ. ձեռագիր մի երգարանից: Վիպական փոքր երգ է՝ կենցաղային դեպքի առթիվ հորինված:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

6(1212). Ես Սաթոն եմ (էջ 422) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3010,01-3010,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

7(1213). Հայդուկների երգը (էջ 422) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2887,01-2887,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղում բանասաց Դանիել Մարտիրոսյանից: Բանասացի մասին տես № 1(1223) ծանոթագրությունը:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

8(1214). Հայ կամավորներ (էջ 423) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2887,02-2889,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղում բանասաց Դանիել Մարտիրոսյանից: Բանասացի մասին տես № 1(1223) ծանոթագրությունը: Երգն առաջին անգամ տպագրվել է Ա. Ղազիյանի «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» աշխատության մեջ (ՀՍՍՀ ԳԱ հրատ, Ե., 1988, № 39(88), էջ 129): Տպագրության մեջ վերջին քառատողը բաց է թողնված, որովհետև կրկնակ է:

9(1215). Հասան Ղալի պատմությունը (էջ 423) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը 2024 թ. օգստոսի 31-ին՝ Կապսում բանասաց Վրեժ Մարգարյանից: Բանասացը այս երգը լսել է մորից՝ Հայաստան Հարությունյանից՝ ծնված 1906 թ. Մեղրաշատ գյուղում: Բանասաց Վրեժ Մարգարյանի մասին տես № 10(114) ծանոթագրությունը:

Երգի պատառիկը տպագրվում է առաջին անգամ:

10(1216). Շուն տաճիկը Արփաչայը անցկացավ (էջ 423) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3071,01-3088,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. հունիսին Լենինականում: Բանասաց՝ Ռուբեն Վարդանյան՝ ծնված 1911 թ.:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

11(1217). Վա՛յ էն մարիկին (էջ 423) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1225,01-1228,00 համարի տակ: Երգը արտագրել է բանահավաք Արտաշես Նազինյանը 1965 թ. սեպտեմբերին՝ Լենինականում 1884 թ. կազմած մի ձեռագիր երգարանից, որը պատկանել է գյումրեցի Զոփուր Թաթոսին Կալոսնիկ (Պապիջանյան):

Երգը առաջին անգամ տպագրվել է «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» գրքում, աշխատասիրությամբ Ա. Ս. Ղազիյանի, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, № 1(146)ա, էջ 176-177:

12(1218). (էջ 423) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2839,01-2840,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

13(1219). (էջ 424) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2840,01-2840,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

14(1220). (էջ 424) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2840,02-2840,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

15(1221). Հաղթանակի երգ (էջ 424) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2757,03-2758,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հուլիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տես № 5(946) ծանոթագրությունը): Այս երգը հորինել է մեղրաշենցի Ապի Իլիջյանը: Դուշիկ Պետրոսյանը սովորել է նրանից:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

16(1222). Ֆիլանդիա (էջ 424) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2759,01-2759,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հուլիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Արտուշ Իլիջյանից: Այս երգը հորինել է մեղրաշենցի Ապին Իլիջյանը՝ 1939-ին: Ասացողը որդին է՝ Արտուշ Իլիջյանը: Երգը նվիրված է Խորհրդա-ֆիննական պատերազմին:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

1(1223). Հորովել (էջ 424) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2885,01-2885,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղում բանասաց Դանիել Մարտիրոսյանից: Բանասաց Դանիել Մարտիրոսյանը ծնվել է 1897 թ. Ղոլղաթ (այժմ՝ Գեղանիստ) գյուղում: Ունի տարրական կրթություն: Երիտասարդ տարիքում գյուղում եղել է տիրացու, հետո աշխատել է կոլտնտեսությունում: Թոշակառու է:

Հորովելի պատառիկը տպագրվում է առաջին անգամ:

2(1224). Հորովել (էջ 424) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2885,02-2886,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղում բանասաց Բալասան Կարապետյանից: Բանասաց Բալասան Իսահակի Կարապետյանը ծնվել է 1913 թ. Ղոլղաթ (այժմ՝ Գեղանիստ) գյուղում: անգրագետ է, թոշակառու: Բանասաց Սեդրակ Կարապետյանի կինն է:

Հորովելի պատառիկը տպագրվում է առաջին անգամ:

3(1225). Հորովելի պատառիկներ (էջ 425) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1681,01-1681,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանում: Բանասացն անհայտ է:

Այս պատառիկները տպագրվում են առաջին անգամ:

4(1226). Գութանն ըսավ (էջ 425) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1680,01-1680,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մարալիկ գյուղում՝ բանասաց Վալոդյա Փիլոյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

5(1227). Շինականի աշխատանքային երգ (էջ 425) – Բնագրը պահվում է ՀԱԻԱԲ Շիրակի բանահյուսական խմբարշավի նյութերի հավաքածուում (խմբարշավի անդամներ Մարինե Խեմչյան, Էսթեր Խեմչյան, Լուսինե Ղռեջյան, Հասմիկ Մատիկյան): Ձայնագրվել է 2022 թ. հուլիսի 12-ին Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում ՝ բանասաց Սաթենիկ Աղայան-Վարդերեսյանից: Սաթենիկ Հարութի Աղայան-Վարդերեսյանը ծնվել է 1930 թ. Մեծ Մանթաշում, ունի 6 զավակ: Նախնիները Բասենի Խորասան գյուղից են:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

6(1228). (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Դոնարա Զարգարյանից: Դոնարա Զարգարյանը ծնվել է 1957 թ. Գյումրիում: Ունի 2 երեխա, տնային տնտեսուհի է, ապրում է Գյումրիում::

Տպագրվում է առաջին անգամ:

7(1229). Աշխօր ունեմ (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1090,01-1090,01 համարի տակ Գրառել է բանահավաք Համլետ Մովսիսյանը 1958 թ. Ախուրյանի շրջանում: Բանասացն անհայտ է:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

8(1230). Ծառզարդարին (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3029,01-3032,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1960-ական թվականներին: Բանասացն անհայտ է:

Այս ծիսական երգը տպագրվում է առաջին անգամ:

9(1231). Համբարձման զէրկուշաբթի (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2751,01-2751,01 համարների տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը): Դուշիկ Պետրոսյանից գրառված նյութերը բանահավաքը նաև ձայնագրել է:

Երգի տարբերակի հատվածը տպագրվում է առաջին անգամ:

10(1232). Մենծ Պասի երկուշաբթի (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջ 34: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկում բանասաց Ասանեթ Ալոյանից: Բանասացի մասին տե՛ս № 393(846) ծանոթագրությունը:

Երգի պատառիկը տպագրվում է առաջին անգամ:

11(1233). Ճուճուներս (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1681,02-1681,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Սառնաղբյուր գյուղում՝ բանասաց Հրաչյա Վարդանյանից:

Տպագրվում է առաջին անգամ:

12(1234). Կընիկըս (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1681,03-1681,03 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Սառնաղբյուր գյուղում՝ բանասաց Հրաչյա Վարդանյանից:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

13(1235). Պոտոլ աչառը (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1682,01-1682,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մարալիկ գյուղում՝ բանասաց Դերենիկ Ստեփանյանից:

Տպագրվում է առաջին անգամ:

14(1236). Ցոլոն (էջ 426) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1682,02-1682,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մարալիկ գյուղում՝ բանասաց Երվանդ Պողոսյանից:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

15(1237). Կերան գաթեքն ու հավերը (էջ 427) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1684,01-1684,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մուսլուղլու գյուղում՝ բանասաց Մերուժան Գասպարյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

16(1238). Մկնիկ աղեն (էջ 427) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1685,01-1685,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Սառնաղբյուր գյուղում՝ բանասաց Սերյոժա Բաղդասարյանից:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

1(1239). (էջ 427) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 2851,02-2855,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. օգոստոսին Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասացներ Սիրանուշ Խաչատրյանից (ասող) և Զարիկ Մկրտչյանից (պատասխանող): Բանահավաքը բանասացների մասին տվել է հետևյալ տեղեկությունը. «Խաչատրյան Սիրանուշ (ծն. 1901 թ. Սիրվանճուղ): Թոշակառու է, անգրագետ: Զարիկ Մկրտչյանի մայրն է: Մկրտչյան Զարիկ (ծն. 1930 թ., Սիրվանճուղ): Սովխոզում բանվորուհի է, ամուսնացած է, ունի 5 զավակ: Ունի 7-ամյա կրթություն»:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

2(1240)–6(1244). (էջ 428) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, 26-28 էջերում: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկում բանասաց Ասանեթ Ալոյանից: Բանասացի մասին տե՛ս № 393(846) ծանոթագրությունը:

Երգերի տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

7(1245). Հարս ու փեսի գովքը (էջ 428) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2767,02-2769,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը):

Երգը տպագրվում է առաջին անգամ:

8(1246). Վարդ կոշիկս (էջ 429) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1215,01-1222,00 համարի տակ: Արտագրել է բանահավաք Արտաշես Նազինյանը 1965 թ. սեպտեմբերին՝ Լենինականում: 1884 թ. ձեռագիր մի երգարանից: Ժողովրդական երգի տարբերակ է, որտեղ հիշվում է աշուղ Ֆիզունու անունը: Եթադրվում է, որ աշուղ Ֆիզունին եղել է երգի հեղինակը: Աշուղի մասին տեղեկություն չկա:

Երգի այս տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

9(1247). Ղաշանք է (էջ 429) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2832,01-2832,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը հայտնի չէ:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

10(1248). Սոֆիկի երգը (էջ 430) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2833,01-2834,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

11(1249). Ես մեկ տղա եմ (էջ 430) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3009,01-3009,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

12(1250). Բատոլա (էջ 430) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2771,01-2771,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը):

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

13(1251). Ղրռ ձին (էջ 430) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2773,02-2773,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը):

Երգի պատառիկը տպագրվում է առաջին անգամ:

14(1252). Մեր տուն, ձեր տուն... (էջ 430) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2779,01-2779,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. օգոստոսին Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասաց Երվանդ Հովհաննիսյանից: Բանասաց Երվանդ Սահակի Հովհաննիսյանը ծնվել է 1921 թ. Լեռնակերտ գյուղում: Գյուղի դպրոցում դասավանդում է մաթեմատիկա: Հորինել է երգեր գյուղում, շրջանում կատարված իրադարձությունների մասին:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

1(1253). Լվեր (էջ 431) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1683,01-1684,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մուսլուղլու գյուղում՝ բանասաց Սողոմոն Խաչատրյանից:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

2(1254). Տաշղալա (էջ 431) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1685,02-1685,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մուսլուղլու գյուղում՝ բանասաց Մերուժան Գասպարյանից:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

3(1255). (էջ 431) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3027,01-3027,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1960-ական թվականներին: Բանասացն անհայտ է:

Կատակերգը տպագրվում է առաջին անգամ:

4(1256). Գեշ կնիկ (էջ 431) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3027,02-3027,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1960-ական թվականներին: Բանասացն անհայտ է:

Կատակերգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

5(1257). Կատակերգ (էջ 432) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2767,01-2767,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը):

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

6(1258). Ա՛խ, ջանիման, ջանիման (էջ 432) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3028,01-3028,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1960-ական թվականներին: Բանասացն անհայտ է:

Կատակերգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

7(1259). Կատակերգ (էջ 432) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2883,01-2884,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Լենինականում բանասաց Ժորա Խաչատրյանից: Բանասաց Ժորա Արտավազդի Խաչատրյանը ծնվել է 1946 թվականին Լենինականում: Ունի բարձրագույն կրթություն, ավագ ինժեներ է: Ամուսնացած է, ունի երկու երեխա: Այս կատակերգը նա լսել է մի արթիկցուց: Բանասացը բանահավաքի եղբայրն է:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

1(1260). Ժաժքի երգը (էջ 432) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2835,02-2836,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

2(1261). Ժաժքը (էջ 432) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2835,02-2836,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

3(1262). Քոռ Մկոյի ոտանավորը (էջ 433) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 2843,01-2843,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասացը անհայտ է:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

4(1263). Ղայղուլու շրջանի երգը (էջ 433) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3011,01-3011,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում: Բանասաց՝ Հարություն Հայկազունի:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

5(1264). Բենոն՝ նախագահ (էջ 433) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3023,02-3024,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1963 թ. վարպետ Արշավիր Սարգսյանից:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

6(1265). Ջա՛ն, ջա՛ն, Վարդանուշ (էջ 433) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3025,01-3026,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1963 թ.: Երգել է բանասաց հնոցապահ Լենդրոշ Խեչիմյանը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

7(1266). Պանդուխտի երգ (էջ 434) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջ 9: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկի շրջանի Նահապետավան գյուղում, բանասաց Թեղուշ Զաքարյանից: Բանասացի մասին տե՛ս № 12(465) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

8(1267). Խանում Եվա ջան (էջ 434) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFV:1623,01-1624,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Արազ Կարապետյանը 1963 թ. ապրիլի 16-ին Լենինականում: Երգել է բանասաց Հովհաննես Հովհաննիսյանը: Բանասացի մասին տե՛ս № 88(88) ծանոթագրությունը:

Տպագրվում է առաջին անգամ:

1(1268). (էջ 434) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3021,02-3022,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1964 թ. Լենինականում, բանասաց Աղասի Վխրկյանից: Հավանաբար երգի հեղինակը՝ Քեթեցի Ասատուրը, աշուղ է եղել:

Երգի տեքստը տպագրվում է առաջին անգամ:

2(1269). Անբախտ Արարատի նման (էջ 435) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2759,02-2761,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հուլիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն (նախկին՝ Ղազանչի) գյուղում բանասաց Արտավազդ Պետրոսյանից: Բանասաց Արտավազդ Երվանդի Պետրոսյանը ծնվել է 1920 թ. Արթիկի շրջանի Ղազանչի (այժմ՝ Մեղրաշեն) գյուղում, բնակվում է Երևանում, աշխատում է «Պոլիվինիլացետատ» գործարանում որպես ապարատավար:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

3(1270). Մարաքյա-Դիվանի (էջ 435) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2761,01-2761,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

4(1271). Հանելուկ մեռոնի ու մեռոնամանի մասին (էջ 435) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2761,02-2763,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հուլիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն (նախկին՝ Ղազանչի) գյուղում բանասաց Արտավազդ Պետրոսյանից: Բանասաց Ա. Պետրոսյանի մասին տե՛ս № 2(1269) ծանոթագրությունը:

Աշուղական մրցամարտի երգը տպագրվում է առաջին անգամ:

5(1272). Մրցության երգ (էջ 436) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2763,01-2765,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

6(1273). Մրցման երգ (էջ 436) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2765,01-2765,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

7(1274). Ազապ տղա, ազապ աղջկա վեճը (էջ 436) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2765,02-2767,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

8(1275). Դու ես կենաց ծաղիկ (էջ 436) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2769,01-2769,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը:

Երգի հեղինակ Աշուղ Ֆիզային (իսկական անունը՝ Գևորգ) ծնվել է 1847 թ. Ալեքսանդրապոլում: Կույր է եղել, նվագել է ջութակի վրա, ստեղծագործել է միայն հայերեն: Ֆիզայի պարսկերեն նշանակում է լաց, ողբ, աղաղակ:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

9(1276). Կայնի, Մայբուբ, սիրտս եղավ ավերակ (էջ 436) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2769,02-2771,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տես № 5(946) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

10(1277). Գեշ կնկա թարիֆը (էջ 437) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3067,01-3068,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. հունիսին Լենինականում: Այս ստեղծագործությունը հորինել է անգրագետ գյուղացի Գրիգոր Սարգիսյանը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

11(1278). Հոգին ու մարմինը (էջ 437) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 3068,01-3070,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. հունիսին Լենինականում: Այս ստեղծագործության հեղինակն է անգրագետ գյուղացի Գրիգոր Սարգիսյանը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

12(1279). Մուկուչ, Բենիամին, երեք սասունցին (էջ 437) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 2749,01-2749,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Հառիճ գյուղում՝ բանասաց Խաչատուր Սողոյանից: Բանասաց Խաչատուր Մկրտչի Սողոյանը ծնվել է 1926 թ. Հառիճ գյուղում: Սովորել է մինչև 9-րդ դասարան: Երգը գրառելու ժամանակ եղել է սովխոզի պահեստապետը: Ունի հինգ զավակ:

Այս երգը հորինել է հառիճեցի Երվանդ Եգանյանը, որը եղել է տեղական երգիչ-աշուղ՝ ծնված 1876 թվին, վախճանված 1935 թվին: Երգի շարժառիթը եղել է հառիճեցի 2 եղբայրների՝ Մուկուչ և Բենիամին Թադևոսյանների, ինչպես և Աշնակ գյուղի երեք բնակչի սպանությունը քուրդ ղաչաղների կողմից: Սպանությունը կատարվել է Հառիճի ամառանոցում՝ Արագածի լանջին: Երգը հորինվել է 1925 թվականի մայիսին, երբ եղել է նաև մեծ հեղեղ: Բանահավաք Ստ. Խաչատրյանի հավաստմամբ բանասացը ամբողջությամբ չէր հիշում երգը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

13(1280). Գերմանիան դուրս ելավ (էջ 437) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2751,04-2752,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տես № 5(946) ծանոթագրությունը: Բանահավաք Ստ. Խաչատրյանը տեղեկացնում է, որ այս երգը հորինված է պատերազմի տարիներին՝ 1943-1944 թթ.:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

14(1281). Յուշապ (էջ 438) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2751,04-2752,00 համարների տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Լիզա Գևորգյանից: Լիզա Գևորգյանը ծնվել է 1929 թ. Արթիկի շրջանի Բաշգյուղ (այժմ՝ Սարալանջ) գյուղում: 1954 թ. ամուսնացել է և տեղափոխվել Մեղրաշեն, ունի 3 զավակ: աշխատում է կոլտնտեսությունում:

Երգի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

15(1282). Կարտոլի երգը (էջ 438) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2753,04-2755,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Արտուշ Պապիկյանից: Արտուշ ԱպինիՊապիկյանը ծնվել է 1928 թ. Ղազանչի (այժմ՝ Մեղրաշեն) գյուղում: Ապրում է գյուղում, աշխատում է երկաթգծում՝ որպես բանվոր: Ունի տարրական կրթություն

Երգը տպագրվում է առաջին անգամ:

16(1283). Երգ խնամիներին (էջ 438) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2755,02-2756,00 համարների տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը): Ստեփան Խաչատրյանը տեղեկացրել է, որ այս երգի հեղինակը Դուշիկի ամուսնու՝ Բելիաս Մարգարյանի տատի պապն է՝ Տեր-Խաչատուր Նազարեթյանը, որը եղել է Ղազանչի (այժմ՝ Մեղրաշեն) գյուղի ծխատեր քահանան:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

17(1284). Ապոյի երգը (էջ 438) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2771,03-2773,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հունիսին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից: Բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը: Այս երգի հեղինակ Ապոն (Դրաստամատ) Մեղրաշեն գյուղից է, երկաթգծի բանվոր, հիսունին մոտ:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

18(1285). Տիգրան Պետրոսյանի գովքը (էջ 438) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2781,01-2783,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. օգոստոսին Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասաց Երվանդ Հովհաննիսյանից: Երգը հորինել է բանասացը: Բանասացի մասին տես № 14(1252) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

19(1286). Խոպան գնացողի կնկա խաղը (էջ 439) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2879,01-2880,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասաց Զարիկ Մկրտչյանից: Բանասաց Զարիկ Մկրտչյանը ծնվել է 1930 թ. Սիրվանճուղ (այժմ՝ Լեռնակերտ) գյուղում: Ունի յոթամյա կրթություն: Աշխատում է սովխոզում որպես բանվորուհի: Ամուսնացած է, ունի հինգ զավակ:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

20(1287) (էջ 439) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Մոսկով Սարգսյանից: Բանասացն այս երգի մասին ասում է. «Պապս սազ է նվագել: Պապիս պապն էլ է հեքիաթներ գրել»: Բանասաց Մոսկով Մկրտիչի Սարգսյանը ծնվել է 1926 թ. Լուսակերտում, պատերազմի վետերան է, նախնիներն Ալաշկերտից են, ունի 9 թոռ, 13 ծոռ:

Տպագրվում է առաջին անգամ:

21(1288) (էջ 439) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Մոսկով Սարգսյանից: Բանասացի մասին տես № 20(1287) ծանոթագրությունը:

Տպագրվում է առաջին անգամ:

1(1289). Զոհված հերոսի գովքը (էջ 439) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2757,01-2757,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում բանասաց Դուշիկ Պետրոսյանից (բանասացի մասին տե՛ս № 5(946) ծանոթագրությունը): Այս երգը հորինել է Դուշիկ Պետրոսյանի հայրը՝ Երվանդ Պետրոսյանը: Երգել է հանրահայտ «Քյորօղլու» եղանակով: Հորինել է 1946-47-ին, հարևան Գետափ (Ղասմալի) գյուղացի Մնացական Սիմոնյանի թաղման առթիվ:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

2(1290). Ողբ ծնողի (էջ 439) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2787,01-2787,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. օգոստոսին Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում բանասաց Երվանդ Հովհաննիսյանից: Այս երգը Ե. Հովհաննիսյանը հորինել է մոր դագաղի մոտ, գիշերը, երգել թաղման ժամանակ: Բանասացի մասին տես № 14(1252) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

3(1291). Հիշատակություն (էջ 440) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX:2789,01-2790,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Ստեփան Խաչատրյանը 1973 թ. հոկտեմբերին Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղում բանասաց Սեդրակ Կարապետյանից: Բանասաց Սեդրակ Բալաբեկի Կարապետյանը (Սեդրակ Կարենց) ծնվել է Գեղանիստ (նախկին՝ Ղոլղաթ) գյուղում չքավոր գյուղացու ընտանիքում: Ստացել է տարրական կրթություն: Աշխատել է կոլտնտեսությունում նախ՝ որպես տրակտորիստ, ապա՝ պահեստապետ և բրիգադիր: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել է: Թոշակառու է: Ստեղծագործելու հակում է ունեցել, և իր կյանքի տարբեր իրադարձություններ դարձել են նրա ստեղծագործությունների թեման: Այս երգը Սեդրակ Կարապետյանը հորինել է եղբոր դստեր՝ Գեղեցիկի մահվան առթիվ:

Սգերգը տպագրվում է առաջին անգամ:

1(1292). Օրորոցի մոտ (էջ 440) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1091,01-1091,01 համարի տակ Գրառել է բանահավաք Համլետ Մովսիսյանը 1958 թ. Ախուրյանի շրջանում: Բանասացն անհայտ է:

Օրորոցայինի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

2(1293). Օրորոցային երգ (նանիկ) (էջ 440) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջ 8: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկի շրջանի Նահապետավան գյուղում, բանասաց Թեղուշ Զաքարյանից: Բանասացի մասին տե՛ս № 12(465) ծանոթագրությունը:

Երգը տպագրվում է առաջին անգամ:

3(1294). (էջ 440) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Կորյուն Հայրապետյանից: Կորյուն Մարտիրոսի Հայրապետյանը ծնվել է 1946 թ. Սառնաղբյուր գյուղում, նախնիները Խնուսից են: Ունի 8 թոռ, 1 ծոռ:

Օրորոցայինը տպագրվում է առաջին անգամ:

4(1295). (էջ 440) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Խանում Միքայելյանից, 85 տարեկան, ապրել է Թավշուտ գյուղում, մահացել է 2022 թ.:

Օրորոցայինը տպագրվում է առաջին անգամ:

5(1296). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Խանում Միքայելյանից: Բանասացի մասին տես № 4(1295) ծանոթագրությունը:

Օրորոցայինը տպագրվում է առաջին անգամ:

6(1297). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Ռուզան Խաչատրյանից: Բանասաց Ռուզան Խաչատրյանը ծնվել է 1954 թ. Առափի գյուղում: Ապրում է Առափի գյուղում, կրթությունը՝ միջին մասնագիտական: ունի 2 երեխա, 5 թոռնիկ:

Տպագրվում է առաջին անգամ:

7(1298). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Ռուզան Խաչատրյանից: Բանասացի մասին տես № 6(1297) ծանոթագրությունը:

Տպագրվում է առաջին անգամ:

8(1299). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Ֆրիդա Շաբոյանից: Բանասաց Ֆրիդա Մխիթարի Շաբոյանը ծնվել է 1939 թ. Ախուրիկ գյուղում: Ապրում է Գետք գյուղում, տնային տնտեսուհի է:

Տպագրվում է առաջին անգամ:

9(1300). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Ռիմա Ավագյանից: Բանասաց Ռիմա Մանուկի Ավագյանը ծնվել է 1942 թ. Ոսկեհասկ (Մոլլամուսա) գյուղում: Ապրում է Ոսկեհասկում, ունի 4 երեխա:

Տպագրվում է առաջին անգամ:

10(1301). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Սուսան Սմբատյանից: Սուսան Մուկուչի Սմբատյանը ծնվել է 1941 թ. Լուսաղբյուրում: Ունի 6 թոռ, այժմ ապրում է Լուսաղբյուրում:

Տպագրվում է առաջին անգամ:

11(1302). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Հայկուշ Գասպարյանից: Հայկուշ Եղիազարի Գասպարյանը ծնվել է 1928 թ. Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղում, կրթությունը՝ միջին մասնագիտական:

Տպագրվում է առաջին անգամ:

12(1303). Հեքիաթ-հեքիաթ (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 1090,03-1091,00 համարների տակ Գրառել է բանահավաք Համլետ Մովսիսյանը 1958 թ. Ախուրյանի շրջանում: Բանասացն անհայտ է:

Հեքիաթի չափածո սկսվածքի տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

13(1304). (էջ 441) – Բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվի Հասմիկ Մատիկյանի ֆոնդում: Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը բանասաց Ռիմա Ավագյանից: Բանասացի մասին տես № 9(1300) ծանոթագրությունը:

Տպագրվում է առաջին անգամ:

14(1305). Գելն էկավ (էջ 442) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI:6382,01-6382,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

Մատնախաղերի՝ Ախալցխայի, Վասպուրականի, Կոտայքի տարբերակները տպագրվել են Բդոյան Վ., Հայ ժողովրդական խաղեր, III հատոր, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան 1983, էջ 30-31:

15(1306). Էշը ջուրը տարել ես (էջ 442) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6383,01-6383,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

16(1307). (էջ 442) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFIV: 1227,02-1227,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Հրաչյա Օհանյանը 1965 թ.՝ Շիրակում: Բանասացն անհայտ է:

Մանկական խաղը տպագրվում է առաջին անգամ:

17(1308). (էջ 442) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6384,02-6384,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

18(1309). (էջ 442) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6384,03-6384,03 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

19(1310). (էջ 442) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6384,04-6385,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

20(1311)–31(1322). (էջ 442–443) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV:2925,01-2926,05 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1963-66 թթ. Լենինականում՝ տարբեր բանասացներից:

Մանկական հաշվերգերը տպագրվում են առաջին անգամ:

32(1323)–34(1325). (էջ 443) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFVI: 6380,01-6381,00 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

35(1326)–55(1346). (էջ 443–444) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFVI: 6378,01-6379,08 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ. Լենինականում:

Մանկական ասելուկների տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(1347)–1281(2627). Առած-ասացվածքներ (էջ 445–470) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIII: 4929-5125, FFIII: 5932-6088, FFIV: 1241,01-1370,00, FFIV: 2883,02-2900,00, FFVI: 6276,01-6311,06 համարների տակ: Գրառել են բանահավաքներ Պարույր Բարսեղյանը (1960-ական թթ. և 1969 թ., Լենինական), Աշոտ Գևորգյանը (1971-73 թթ Լենինական) և Հրաչյա Օհանյանը (1975 թ. Շիրակ):

Բանահավաք Պարույր Բարսեղյանն առած-ասացվածքները լսել է տարբեր մարդկանցից նախ՝ Ալեքսանդրապոլում, ապա՝ վերանվանված Լենինականում:

Բանահավաք Աշոտ Աբրահամի Գևորգյանն առած-ասացվածքները լսել է բազմաթիվ բանասացներից, որոնց շարքում աչքի են ընկել Խաչիկ Մինասյանը (Ջղեր)՝ 51 տարեկան, Սիմոն Սաֆարյանը՝ 67 տարեկան, Արտավազդ Փաշայանը՝ 60 տարեկան, Գըմփռ Օնիկը՝ 54 տարեկան, Մանիկ Սիմոնյանը՝ 36 տարեկան, Մինաս Մարկոսյանը՝ 78 տարեկան, Եպրաքսյա Գրիգորյանը՝ 60 տարեկան, Աբրահամ Գևորգյանը՝ 76 տարեկան, Սեդրակ բիձան՝ 91 տարեկան, Ժորա Ավետիսյանը՝ 32 տարեկան, բուֆետապան Սիֆոն Օնիկը՝ 51 տարեկան, Բաբկեն Կարախանյանը՝ 49 տարեկան, Ցոլակ Ամերիկյանը՝ 74 տարեկան, Լևոն Խուրշուդյանը՝ 72 տարեկան, Ժան Էլոյանը՝ 62 տարեկան, Ղալաչի Մըկոն՝ 72 տարեկան, Գավրոշը (դերասան)՝ 61 տարեկան, Սերոժ Կարապետյանը (Կուժիկ)՝ 44 տարեկան և ուրիշներ:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(2628)–775(3402). Դարձվածքներ (էջ 471–483) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 1241,01-1370,00 և FFIV: 2929,01-2948,00 համարների տակ: Գրառել են բանահավաքներ Պարույր Բարսեղյանը (1960-ական թթ. և 1969 թ., Լենինական) և Հրաչյա Օհանյանը (1975 թ. Շիրակ)՝ տարբեր բանասացներից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(3403)–255(3637). Օրհնանքներ և բարեմաղթանքներ (էջ 483–487) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ Շիրակի բանահյուսական խմբարշավի նյութերի հավաքածուում (խմբարշավի անդամներ Մարինե Խեմչյան, Էսթեր Խեմչյան, Լուսինե Ղռեջյան, Հասմիկ Մատիկյան): Ձայնագրվել է 2022 թ. հուլիսի 13-ին Շիրակի մարզի Բասեն գյուղում՝ բանասաց Համլետ Պետրոսյանից: Բանասաց Համլետ Սամվելի Պետրոսյանը ծնվել է 1976թ., Բասեն համայնքի վարչական ղեկավար, մասնագիտությամբ ինժեներ է, ավարտել է Գյումրիի Պոլիտեխնիկ ինստիտուտը:

Գրառել է բանահավաք Հասմիկ Մատիկյանը 2020-24 թթ. Գյումրիում տարբեր բանասացներից:

Գրառել են բանահավաքներ Մարինե և Էսթեր Խեմչյանները 2024 թ. Երևանում բանասաց Սիրուն Հարությունյանից: Բանասաց Սիրուն Վաղարշակի Հարությունյանը ծնվել է Գյումրիում 1924 թ., ծնողները Ախուրյանի շրջանի Թափադոլակ (այժմ՝ Արևիկ) գյուղից են: Ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը: 50 տարի ուսուցչուհի է եղել Լենինականի տարբեր դպրոցներում: Վերջին տարիներս ապրում է Երևանում:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(3638)–115(3752). Երդումներ (էջ 487–489) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 2657,01-2664,02 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1960-ական թվականներին տարբեր բանասացներից:

Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ Շիրակի բանահյուսական խմբարշավի նյութերի հավաքածուում (խմբարշավի անդամներ Մարինե Խեմչյան, Էսթեր Խեմչյան, Լուսինե Ղռեջյան, Հասմիկ Մատիկյան): Ձայնագրվել է 2022 թ. հուլիսի 13-ին Շիրակի մարզի Կառնուտ գյուղում՝ բանասացներ Իզոլդա Գաբոյանից և Արթուր Գաբոյանից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(3753)–423(4175). Անեծքներ (էջ 489–496) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 1219,01-1221,20 և FFIV: 2631,01-2646,09 համարների տակ: Գրառել են բանահավաքներ Պարույր Բարսեղյանը (1960-ական թթ. և 1969 թ., Լենինական) և Հրաչյա Օհանյանը (1975 թ. Շիրակ)՝ տարբեր բանասացներից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(4176)–94(4269). Սպառնալիքներ (էջ 496, 497) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 2673,01-2676,01 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը (1960-ական թթ. և 1969 թ., Լենինական)՝ տարբեր բանասացներից:

Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ Շիրակի բանահյուսական խմբարշավի նյութերի հավաքածուում (խմբարշավի անդամներ Մարինե Խեմչյան, Էսթեր Խեմչյան, Լուսինե Ղռեջյան, Հասմիկ Մատիկյան): Ձայնագրվել է 2022 թ. հուլիսի 13-ին Շիրակի մարզի Ջրառատ գյուղում՝ բանասաց Վազգեն Մարգարյանից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(4270)-45(4314). Հանդիմանական և ծաղրական խոսքեր (էջ 498, 499) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 2901,02-2902,14 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում՝ տարբեր բանասացներից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(4315)–60(4374). Փաղաքշական ասույթներ (էջ 499) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 2667,01-2671,04 համարների տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 թ. Լենինականում՝ տարբեր բանասացներից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(4375)–22(4396). Գյումրեցիների ասելուկներ (էջ 500, 501) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: և FFVI: ֆոնդերի Պարույր Բարսեղյանի հավաքածուում: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1966 և 1969 թթ. Լենինականում՝ տարբեր բանասացներից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(4397)–15(4411). Շուտասելուկներ (էջ 501, 502) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFIV: 1227,01-1229,04 և FFIV: 2737,01-2737,08 համարների տակ: Գրառել են բանահավաքներ Հրաչյա Օհանյանը 1965 թ.՝ Շիրակում և Պարույր Բարսեղյանը 1966թ. Լենինականում՝ տարբեր բանասացներից:

Տարբերակները տպագրվում են առաջին անգամ:

1(4412)–166(4577). Հանելուկներ (էջ 502–526) – Բնագրերը պահվում են ՀԱԻԱԲ FFII: 1695,01-1706,16 (Վարդ Բդոյանի հավաքածու), FFIV: 1231,01-1240,00 (Հրաչյա Օհանյանի հավաքածու) և FFIV: 2721,01-2735,01 (Պարույր Բարսեղյանի հավաքածու) համարների տակ: Բանահավաք Վարդ Բդոյանը հանելուկները գրառել է 1945 թ. հուլիսին Անիի (նախկին՝ Աղին) շրջանի Մարալիկ, Սառնաղբյուր և Լանջիկ գյուղերի պատանիներից (անունները հիշատակված չեն): Բանահավաք Հրաչյա Օհանյանը հանելուկները գրառել է 1950-60-ական թթ. Բանասացներ Աստղիկ Խաչատրյանից, Գարան Մարտիրոսյանից, Արտեմ Սարդարյանից, Արամ Մարտիրոսյանից: Բանասացների նախնիները գաղթել են Կարսի մարզի Ճալա և Գորխանա գյուղերից: Բանահավաք Պարույր Բարսեղյանը հանելուկները գրառել է 1960-ական թթ. Լենինականում՝ տարբեր բանասացներից:

Հանելուկների մի մասը տպագրվում է առաջին անգամ, իսկ մի մասն էլ բանագետ Սարգիս Հարությունյանը տեղադրել է «Հայ ժողովրդական հանելուկներ» ժողովածուում (ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965):

1(4578). Աղոթք (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ Վարդիթեր Առակյանի ֆոնդում, Գործ № 1, էջ 42: Գրառել է բանահավաք Վարդիթեր Առակյանը 1982 թ. Արթիկում բանասաց Ասանեթ Ալոյանից: Բանասացի մասին տես № 393(846) ծանոթագրությունը:

Աղոթքը տպագրվում է առաջին անգամ:

2(4579). Գելկապ (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1692,01-1692,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Մուսլուղլու գյուղում՝ բանասաց Հովսեփ Լուսիկյանից:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», Երևան, 2006, № 181ա, էջ 147:

3(4588). Գելկապ (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1692,02-1692,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանում: Բանասաց՝ մուսլուղլեցի Սողոմոն:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», Երևան, 2006, № 185գ, էջ 149:

4(4581). Պառկելիս (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1692,03-1692,03 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Լանջիկ գյուղում:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», Երևան, 2006, № 328ա, էջ 181:

5(4582). Պառկելիս (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1693,01-1693,01 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Լանջիկ գյուղում՝ բանասաց Սիմոն Մինասյանից:

Աղոթքը տպագրվում է առաջին անգամ:

6(4583). Տղոցկանի աղոթք (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1693,02-1693,02 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Լանջիկ գյուղում՝ բանասաց՝ Սողոմոն Խաչատրյանից:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», Երևան, 2006, № 146լբ, էջ 126:

7(4584). Օղջում (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFII: 1693,03-1693,03 համարի տակ: Գրառել է բանահավաք Վարդ Բդոյանը 1945 թ. Աղինի (ներկա՝ Անի) շրջանի Լանջիկ գյուղում՝ բանասաց Հովսեփ Լուսիկյանից:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», Երևան, 2006, № 329ա, էջ 182:

8(4585). Լույսի փառաբանում (էջ 517) – Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFVI: 6382,02-6383,00 համարի տակ: Գրառել է բանահավաք Պարույր Բարսեղյանը 1969 թ.՝ Լենինականում: Բանասացն անհայտ է: Բանահավաքն այս ստեղծագործությունը ներկայացրել է որպես մանկական բանահյուսություն: Սարգիս Հարությունյանը այն տեղադրել է առավոտյան աղոթքների շարքում (№ 353) և դիտարկում է որպես աղոթք, որի առաջին վեց տողը բանավոր ավանդության մեջ հանդես է գալիս իբրև անկախ մանկական երգ (տես Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, ԵՊՀ հրատ., Երևան 2006, էջ 187, 415):

Տարբերակը տպագրվում է առաջին անգամ:

ԲԱՆԱՀԱՎԱՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԴԻԹԵՐ ՆՈՐԱՅՐԻ ԱՌԱԿՅԱՆ – Ծնվել է 1953 թ. մարտի 13-ին Արթիկ քաղաքում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1971 թ. ընդունվել է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ավարտել 1976 թ.-ին՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ: 1976–1977 ուս. տարում աշխատել է Արագածի շրջանի Հայի Փամբ (Լեռնապար) գյուղում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1978 թ. դեկտեմբերից մինչև 1991 թ. աշխատել է Երևանի «Ագիտատոր և պրոպագանդիստ» (հետագայում՝ «Կուսակցական խոսք») հանդեսում, նախ, որպես արտահաստիքային թղթակից, հետո՝ սրբագրիչ, գրական աշխատող: Խմբագրության լուծարումից հետո՝ 1991 թ, այլևս չի աշխատել:

1980–1983 թթ. եղել է Հայկական ՍՍՀ Գիտություններ Ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արտադրությունից չկտրված ասպիրանտ՝ «Հայ ժողովրդական բանահյուսության» մասնագիտությամբ (ղեկավար՝ Սարգիս Հարությունյան): Այդ տարիներին զբաղվել է բանահավաքչական աշխատանքով: Գրառել է ժողովրդական խաղիկներ, մանիներ, հեքիաթներ՝ Շիրակի տարածաշրջանից:

ՊԱՐՈՒՅՐ ՍՏԵՓԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ – Ծնվել է Ալեքսանդրապոլում հավանաբար XX դարասկզբին ախալքալաքցի Ստեփան Բարսեղյանի ընտանիքում. մայրը գյումրեցի էր: Մականունն էր Գոնչո, ինչպես Բարսեղյանն է ասում՝ կլորավուն լինելու պատճառով: Սովորել է Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցում, ապա՝ Մոսկվայի Պլեխանովի անվան ինստիտուտում: Ահա մի պատմություն նրա ուսանողական կյանքից.

«Մոսկվայի Պլեխանովի անվան ինստիտուտի սյունազարդ սրահում ման էին գալիս և ռուսերեն զրուցում երկու գյումրեցի ուսանող ընկերներ՝ Բասենցյան Աղասին և Պարույր Բարսեղյանը: Վերջինս արտաքինով հայի նման չէր. շիկահեր էր և առանց առոգանության խոսում էր ռուսերեն: Նա կրում էր անշրջանակ պենսնե՝ à la Մոլոտով: Նրանց խոսակցության ժամանակ աննկատելիորեն Աղասուն է մոտենում մի հավլաբարցի ուսանող, որը չէր ճանաչում Բարսեղյանին, հայերեն հարցնում է Աղասուն.—Իդիկ ինչացո՞ւ է:

—Եզդի է,—կատակում է Աղասին:

—Ինչպե՞ս թե, եզդի է:

—Հա՛, Ֆրանսիայի եզդի է,—պնդում է Աղասին:

—Աղբեր,—զարմանում է հավլաբարցին,– ինչ տեսել, տեսել էինք, պենսնեով եզդի չէինք տեսե»:

Պարույր Բարսեղյանն աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո իր կյանքի վերջին տարիներն անշահախնդիր նվիրել է հայրենի Շիրակի բանահյուսական նյութերի գրառմանը, ինչպես ինքն է ասում. «...իմ շատ չնչին լուման մտցնելու հայկական ֆոլկլորի մեջ» (ՀԱԻԱԲ FFVIII: 4798):

Սկզբում նրա ցանկությունն է եղել բանահյուսական նյութեր գրառել միայն բնիկ շիրակցիներից՝ Շիրակի բարբառով, սակայն գտել է, որ այդ պարագայում կկորչեին այլ տարածաշրջանների (Կարս, Ախալքալակ, Վան և այլն) նմանատիպ արժեքավոր նյութերը: Նա իր գրառած յուրաքանչյուր նյութի համար տվել է ծանոթագրություն գրառման վայրի, գրառման ժամանակի, բանասացի, նյութի ծագման մասին և այլ տեղեկություններ:

Պարույր Բարսեղյանն իր մասին շատ ժլատ տեղեկություններ է հաղորդել (նույնիսկ նրա լուսանկարը չունենք), նա գրում է. «Ես նյութերը հավաքել եմ Լենինականում, Երևանում, որտեղ ապրում են շատ լենինականցիներ, նաև Կիրովականում, Աշտարակում և այլուր: Շատ տներ եմ ներս մտել (ավելի ուղիղ՝ «ներս խուժել»), հավաքել և գրի եմ առել այգիներում, սանատորիաներում, հանգստյան տներում, հյուրանոցներում՝ իմ ընկերներից, ծանոթներից, հյուրերից և այլն: Ոչ բոլորն են դրական վերաբերվել ինձ՝ որպես բանահավաքի...» (ՀԱԻԱԲ FFVIII: 4797):

Պարույր Բարսեղյանը բանահյուսական նյութերը Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվին է հանձնել երեք փուլով.

Առաջին փուլ. 1961-1967 թթ. (FFIV: 2045-3572)

Երկրորդ փուլ. 1969 թ. (FFVI: 6076-6911)

Երրորդ փուլ. 1972 թ. (FFVIII: 4479-4804)

Պարույր Բարսեղյանի մեծաքանակ հավաքածուների նյութերում ներկայացվում են Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի ինքնատիպ միջավայրը, բնակիչները, բանավոր խոսքի դրսևորումները: Հավաքածուում առանձնանհատուկ տեղ են գրավում Գյումրիի և Շիրակի բնակիչների մականունները (շուրջ 1400 հատ)՝ իրենց բացատրություններով: Ցավոք, ժողովածուի ծավալը թույլ չի տվել մականուններն ընդգրկել սույն ժողովածուում:

ՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԴՈՅԱՆ – Ծնվել է 1910 թվականին Վրացական ՍՍՀ Բոգդանովկայի շրջանի Փոքր Խանչալի գյուղում: Պատմական գիտությունների դոկտոր: 1959 թվականից աշխատել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Հավաքել և հրատարակել է հայ ազգագրությանն ու բանահյուսությանը վերաբերող նյութեր: Հեղինակ է մի շարք հիմնարար աշխատությունների («Հայ ժողովրդական խաղեր» եռահատոր և «Երկրագործական մշակույթը Հայաստանում» գրքերը): Վախճանվել է 1986 թվականին: Վարդ Բդոյանը իր՝ 1945 թվականի ամռանը գրառած բանահյուսական նյութերի մասին գրում է.

«Աղինի շրջանի Մարալիկ, Սառնաղբյուր և Մուսլուղլի գյուղերի ժողովուրդը խոսում է Կարնո բարբառով: Մեսրոպյան ձայնավորներից բացի բարբառն ունի ա̈, ո̈, ու̈, իե ձայնավորները, որ մեծ մասամբ գործածվում են թուրքերենից փոխառված բառերում:

Մարալիկն ու Սառնաղբյուրը Մուսլուղլիի չափ հարուստ ֆոլկլոր չունեն: Մուսլուղլու ժողվուրդը խիստ ավանդապահ լինելով՝ մինչև այսօր էլ ուտելիս, աշխատանք սկսելիս, քնելիս, առավոտյան լվացվելիս և այլ պարագաներում համապատասխան աղոթքներ է մրմնջում: Այստեղ յոթ տարեկան երեխան արդեն գիտի աղոթքների մեծ մասը և առանց Հիսուսին հիշելու երբեք գործ չի սկսի: Ամբողջ աղոթագրքերը անգիր գիտեցողներ կան, որոնցից մի քանիսին անձամբ տեսա և մի քանի ժողովրդական աղոթքներ գրի առա:

Բանակից ազատված շատ երիտասարդներ կան, որոնք իրենց արկածների մասին հորինած երգերում գտնում են, որ առանց Տիրոջ միջամտության իրենք «զուլումից» ազատվել չէին կարող:

Այս մոլեռանդության շնորհիվ է, որ այստեղ քիչ, թե շատ անաղարտ է նաև ֆոլկլորը:

Սույն՝ երկրորդ գործուղման ընթացքում ես առավել լավորակ նյութեր գրի առնելու հնարավորություն չունեցա երկու պատճառով. 1) առօրյա սուր կարիքը ծերունիներին ու պառավներին լռիկ է դարձրել, 2) խոտհնձի պատճառով ժողովրդի մեծ մասը դաշտում է գտնվում: Ինչ էլ որ գրի եմ առել, պարտական եմ պատանիներին (հանելուկներ) և պատերազմի հաշմանդամներին:

Եղածս գյուղերում երիտասարդությունը ֆոլկլոր գիտե ու չգիտե. ամեն բան, բացի հանելուկներից ու հայհոյանքներից, նա աղավաղել է: Շատերն էին ինձ մոտենում և «բարեկամաբար» հարցնում, թե արդյո՞ք ես ավելի խելացի զբաղմունք չունեմ»:

Վարդ Բդոյանը նյութերը հավաքելիս խտրություն չի դրել բանահյուսության տեսակների միջև և գրառել է այն ամենը, ինչ հնարավոր է եղել: Հատկապես դժվարություն է հարուցել «... ներքին երկյուղը՝ արդյո՞ք վտանգավոր չէ պատմել անցած-գնացած բաների մասին»:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ – Ծնվել է 1901 թվականին Կարսի նահանգի Հովերա (Հոպվերան) գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում: Մինչև 4-րդ դասարանը սովորել է գյուղի դպրոցում: Աշխատել է Սարիղամիշի երկաթուղային կայարանում: Գաղթից հետո բնակվել է Հայաստանի տարբեր բնակավայրերում: Ապրուստի միջոցը եղել է օրավարձու աշխատանքը: 1920 թվականին զորակոչվել է բանակ. ծառայել է մինչև 1923 թվականը: 1923 թվականին տեղափոխվել է Բաքու, որտեղ աշխատել է որպես բանվոր (гайкорез): 1929 թվականին ընտանիքով տեղափոխվել է Լենինական. աշխատել է որպես միլպետի օգնական: Թբիլիսիում ֆինանսական կուրսերն ավարտելուց հետո ուղարկում են Իջևան՝ ֆինբաժնի վարիչ: Աշխատել է նաև Ղուկասյանի շրջանում՝ որպես բանկի կառավարիչ, Յուղարդ գործարանի տնօրեն, Ճանապարհաշինարարության գրասենյակի պետ: 1960 թվականից անցել է թոշակի: ՍՄԿԿ անդամ է եղել 1926 թվականից: Հեռակայել է Թբիլիսիի Անդրկովկասյան ֆինանսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետում: Նյութերի գրառման ժամանակ բնակվել է Երևանում:

ԵՂԻՇԵ ՊԵՏՐՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ – Ծնվել է 1906 թվականին Կարսի մարզի Ճալա գյուղում՝ արհեստավորի ընտանիքում: Գաղթելուց հետո ապրել է Լենինականում: Եղիշե Խաչատրյանը նյութերը լսել է մանկության տարիներին հորից՝ Պետրոս Խաչատրյանից, հորեղբորից, հորեղբոր տղայից՝ Արսեն Խաչատրյանից, Ճալա գյուղացի հայտնի հեքիաթասաց և գուսան Հովսեփ Բզնունուց, համագյուղացի Նազար Թորոսյանից: Ե. Խաչատրյանի գրի առած հեքիաթների մեծամասնությունը պատմել է Արսեն Խաչատրյանը:

ՍՏԵՓԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ – բանահավաք Լենինական քաղաքից, որն իր կատարած աշխատանքի մասին թողել է հետևյալ տեղեկությունը.

«1973 թվականի ամռանը Արթիկի շրջանում կատարել եմ բանահավաքչական աշխատանք՝ ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժող. բանահյուսության սեկտորի գիտությամբ ու ցուցումով: Այդ աշխատանքի նպատակն էր՝ ի մի բերելու հիշյալ շրջանում մի քանի տարի շարունակաբար կատարած բանահավաքչական աշխատանքս՝ լինելով այն գյուղերում, որտեղ առաջ չէի եղել: Այդ նպատակով՝ շրջագայել եմ Լեռնակերտ, Հառիճ, Նահապետավան, Մեղրաշեն, Պեմզաշեն գյուղերում, Արթիկ շրջկենտրոնում: Հմուտ բանասացներ հանդիպել են Լեռնակերտում, Հառիճում, Մեղրաշենում:

Առաջին երկու գյուղերը բարձրադիր են, Արագածի լանջերին, իսկ Մեղրաշենը հարթավայրային է: Լեռնակերտում և Մեղրաշենում ապրում են լավ երգասացներ, որոնք գիտեն ժողովրդական տարբեր երգեր ու պարերգեր:

Այս մատյանում տեղադրել եմ գրի առնված ժողովրդական երգերն ու պարերգերը, ինչպես և անհայտ կամ քիչ հայտնի աշուղների երգեր: Հաջորդ մատյանում հեքիաթներն ու առակներն են:

Կենսագրական տեղեկություններ՝ բանասացների մասին, տեղադրված են վերջում՝ ցանկից առաջ: Լեզվական տեղեկություններ՝ այդ շրջանի բարբառի, արտասանության մասին տրված են իմ նախորդ մատյաններում»: Բնագիրը պահվում է ՀԱԻԱԲ FFX: 2747,01-2748,00 համարի տակ:

ԱՐԱԶ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – Ծնվել է 1922 թ. Իջևանի շրջանի Ուզունթալա (այժմ՝ Այգեհովիտ) գյուղում՝ 1915 թ. եղեռնից մազապուրծ շատախցի Համբարձումի և ալաշկերտցի Զմրուխտի ընտանիքում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Ստալինգրադի ճակատամարտում գերի է ընկել, գերությունից փախել է և միացել Ֆրանսիայում գործող պարտիզանական ջոկատին: Պատերազմից հետո Սարգիս Հայկունու՝ Մարսել քաղաքում բնակվող հարազատները նրա ձեռագրերը հանձնում են հայրենիք վերադարձող հայ զինվորներին, որ հասցնեն Հայաստան: Նրանցից Արազ Կարապետյանն իրեն բաժին հասած հատվածը անվթար տեղ է հասցրել և հանձնել ՀՍՍՀ ԳԱ Գրականության և արվեստի, ինչպես նաև Պատմության թանգարանների արխիվին: Անտեսելով իր ֆրանսիացի ընկերների զգուշացումը, թե. «Բեխավորը կպատժի», նա վերադարձել է հայրենիք և 1949–56 թթ. եղել է սիբիրյան աքսորավայրում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Որպես բանահավաք՝ շրջել է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բոլոր հայկական շրջաններում և հավաքել մեծաքանակ արժեքավոր բանահյուսական նյութեր: Նրա գրառումների մեծ մասն անտիպ է և պահպանվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում: Գրառած հեքիաթների մի մասը տպագրվել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի 6-րդ հատորում: Վախճանվել է 2002 թվականին:

ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – Ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին ներկայիս Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1940 թ. ընտանիքով տեղափոխվել է Թբիլիսի: 1947 թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի Արևելյան լեզուների և գրականության բաժինը: 1956 թ. ընդունվել է Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: 1959-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1971-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1972 թվականից մինչև կյանքի վերջը եղել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Բանահյուսության տեսության և պատմության բաժնի վարիչ (1992 թվականից մինչև 2008 թ. ՀԱԻ փոխտնօրեն): 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Հեղինակ է «Հայ ժողովրդական հանելուկներ» (1960), «Մանուկ Աբեղյան» (1970), «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» (1975), «Հայ առասպելաբանություն» (2000), «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006), «Բանագիտական ակնարկներ» (2010) և այլ մենագրությունների ու բազմաթիվ գիտական հոդվածների: Վախճանվել է 2019 թվականին:

Սարգիս Հարությունյանը գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ՝ զբաղվել է նաև բանահավաքչական աշխատանքով: 1965 թ. սեպտեմբերին բանահյուսական նյութեր է հավաքել և՛ Լենինականում, և՛ Աշոցքում: Ապա 1969 թ. հուլիս-օգոստոս ամիսներին ղեկավարել է Ախուրյանի շրջանի բանահյուսական արշավախումբը (անդամներ՝ Ժենյա Խաչատրյան, Զորայր Խալափյան, Արուսյակ Սահակյան): Շիրակի տարածաշրջանից գրառել է մեծաքանակ արժեքավոր բանահյուսական նյութեր:

ԲԱՐԽՈՒԴԱՐ ՋԱՎԱԴԻ ՂԱԶԻՅԱՆ – Ծնվել է 1923 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Աշան գյուղում՝ հողագործի ընտանիքում: Վաղ հասակում զրկվել է ծնողներից: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1938 թվականին տեղափոխվել է Երևան: 1940 թվականին զորակոչվել է բանակ: 1941 թվականին գերի է ընկել: Մասնակցել է ֆրանսիական դիմադրության շարժմանը: 1945-ին վերադարձել է հայրենիք: 1947 թվին ընդունվել և 1958 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: 1949–1956 թթ, եղել է աքսորավայրում: Վախճանվել է 1988 թվականին: Բ. Ղազիյանը իր դերասանական գործունեությանը զուգահեռ՝ զբաղվել է բանահավաքչությամբ: Նյութեր է հավաքել Արցախում, Երևանում, Լենինականում, Բաքվում և այլուր: Նրա հավաքած նյութերի մի մասը տպագրվել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 15-րդ և «Բաքվի հայոց բանահյուսությունը» գրքերում:

ՀՐԱՉ ԱՍԱՏՈՒՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ – Ծնվել է 1920 թվականին՝ Կարսի շրջանի Փալդրվան գյուղում՝ Ասատուր Մկրտչյանի ընտանիքում: Հ. Մկրտչյանի ծնողներն ունեին պատմելու մեծ ընդունակություն, որը ժառանգել էին իրենց նախնիներից (մասնավորապես տատից՝ Նանեից): Նա իր գրառած պատումների մեծ մասը լսել է ծնողներից: Հրաչ Մկրտչյանը ապրել է Լենինականում: Բանահյուսական մշակույթի նկատմամբ ունեցած սերը նրան ուղղորդել է դեպի բանահավաքչություն: Նա մեծաքանակ և արժեքավոր նյութեր է հավաքել շիրակցիներից (մասնավորապես լենինականցիներից և փանիկցիներից, ինչպես նաև նախկին փալդրվանցիներից ու կարսեցիներից:

Հ. Մկրտչյանի հավաքածուներում ընդգրկված են վիպական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերը: Առանձին տեղ են գրավում ժողովրդախոսակցական առօրյա զրույցները, բամբասանքները և Շիրակի տարածաշրջանում գոյատևող տարբեր բարբառների ու խոսվածքների ինքնատիպ նմուշները:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՄԱՏԻԿՅԱՆ – Ծնվել է 1987 թ. Լենինականում: Ավարտել է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը: 2019 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2012-ից ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող է: Մասնագիտական առարկաներ է դասավանդում Շիրակի պետական համալսարանում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում: Երկու մենագրությունների՝ «Անուշ ձայնով կանչեմ օրոր» (2020), «Շիրակի տղաբերք և մանկատածություն» (2024) ու բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Գիտական զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում՝ Հայաստանում, Միացյալ Թագավորությունում, Իսպանիայում, Իտալիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ավստրիայում: Շիրակի մարզում գրառել է քնարական և ասույթաբանական բանահյուսական նյութեր:

ԲԱՆԱՍԱՑՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Աբաջյան Հարություն – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
2. Աբգարյան Հրայր – Լենինական
3. Աբրահամյան Աղունիկ Տիգրանի – Արթիկ
4. Աբրահամյան Արամ – Անիի շրջանի Լանջիկ (Մուսլուղլի) գյուղ
5. Աբրահամյան Բաբկեն – Երևան
6. Աբրահամյան Եղիշ Խաչատուրի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
7. Աբրահամյան Հարություն – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
8. Ալոյան Ասանեթ Ալեքսանի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
9. Աղաբաբյան Զոհրաբ – Լենինական
10. Աղաբաբյան Խանում – Արթիկ
11. Աղայան-Վարդերեսյան Սաթենիկ Հարութի – Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ
12. Աղաքարյան Արշավիր – Արթիկի շրջանի Արթիկ գյուղ
13. Ամերիկյան Ցոլակ – Լենինական
14. Անանյան Գրիշա – Լենինական
15. Աշուղ Ֆիզայի (Գևորգ) – Ալեքսանդրապոլ
16. Ապիկյան Գևորգ – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
17. Առակյան Կլարա – Արթիկ
18. Առաքելյան Սեդրակ – Անիի շրջանի Լանջիկ (Մուսլուղլի) գյուղ
19. Ասլանյան Խաչիկ – Լենինական (մշեցի)
20. Ավագյան Ռիմա Մանուկի – Ախուրյանի շրջանի Ոսկեհասկ գյուղ
21. Ավագյան Սարգիս – Լենինական
22. Ավագյան Ստեփանոս Սիմոնի – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
23. Ավայան Վարդուշ Գարեգինի – Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ գյուղ
24. Ավդալյան – Լենինական
25. Ավդալյան Օլգա Անդրանիկի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
26. Ավետիսյան Անանիկ Գեիմի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
27. Ավետիսյան Զավեն – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
28. Ավետիսյան Ժորա – Լենինական
29. Ավետիսյան Սվետլանա
30. Արզուշյան Ազնիվ – Մեծ Մանթաշ
31. Ափինյան Նվարդ – Լենինական
32. Բաղդասարյան Արամ – Բենիամին գյուղ
33. Բաղդասարյան Սերյոժա – Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղ
34. Բարսեղյան Աստղիկ – Ղոշավանք գյուղ
35. Բուֆետչիկ Խաչիկ – Լենինական
36. Գաբոյան Արթուր – Շիրակի մարզի Կառնուտ գյուղ
37. Գաբոյան Իզոլդա – Շիրակի մարզի Կառնուտ գյուղ
38. Գասպարյան Եղիկ – Անիի շրջան
39. Գասպարյան Հայկուշ Եղիազարի – Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղ

40. Գասպարյան Մերուժան – Անիի շրջանի Լանջիկ (Մուսլուղլի) գյուղ
41. Գավրոշ – Լենինական
42. Գեգելյան Գևորգ – Լենինական
43. Գըմփռ Օնիկ – Լենինական
44. Գնդապետ Սողոյան
45. Գրիգորյան Եպրաքսյա – Լենինական
46. Գրիգորյան Իվան – Աշտարակի շրջան
47. Գրիգորյան Լուսյա Արտաշի – Արթիկ
48. Գևորգյան Աբրահամ – Լենինական
49. Գևորգյան Աշոտ – Լենինական
50. Գևորգյան Արփիկ Կարապետի – բնակվում է Երևանում
51. Գևորգյան Լիզա – Արթիկի շրջանի Սարալանջ գյուղ
52. Դավթյան Հայաստան Լեոնի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
53. Դերձյան Աշոտ – Կիրովական
54. Եզեկյան Արուս Եսայիի – Արթիկի շրջանի Նահապետավան գյուղ
55. Ենգոյան Շիրման
56. Զարգարյան Դոնարա – Գյումրի
57. Զաքարյան Թեղուշ Հայկի – Արթիկի շրջանի Նահապետավան գյուղ
58. Զաքարյան Սաթենիկ – Ալեքսանդրապոլ
59. Զաքարյան Ստեփան (Ֆլա Տեփան) – Լենինական
60. Էլոյան Ժան – Լենինական
61. Թադևոսյան Վերա – Մեծ Մանթաշ
62. Թորոսյան Հռիփսիմե – Անիի շրջան
63. Իլիջյան Ապի – Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղ
64. Իլիջյան Արտուշ Ապիի – Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղ
65. Ինճիկյան Վերգինե – Լենինական
66. Ինվալիդ Ալեքսան – Լենինական
67. Իսահակյան Ստեփան Սահակի (Տեփո քեռի) – Լենինական
68. Լալայան Ավետիք – Լենինական
69. Լուսիկյան Հովսեփ – Անիի շրջանի Լանջիկ գյուղ
70. Խաչատրյան Աստղիկ – Շիրակի մարզ
71. Խաչատրյան Գարեգին – Լենինական
72. Խաչատրյան Եղիշե Պետրոսի – Լենինական
73. Խաչատրյան Ժորա Արտավազդի – Լենինական
74. Խաչատրյան Կատյա – Արթիկի շրջանի Հոռոմ գյուղ
75. Խաչատրյան Մամիկոն – բնակվում է Երևանում
76. Խաչատրյան Ռուզան – Ախուրյանի շրջանի Առափի գյուղ
77. Խաչատրյան Սիրանուշ – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
78. Խաչատրյան Սողոմոն – Անիի շրջանի Լանջիկ գյուղ
79. Խեչիմյան Լենդրոշ – Լենինական
80. Խոյեցյան Գարեգին – Լենինական
81. Խուրշուդյան Լևոն – Լենինական
82. Կարախանյան Բաբկեն – Լենինական
83. Կարապետյան Բալասան Իսահակի – Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղ
84. Կարապետյան Սեդրակ Բալաբեկի – Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղ
85. Կարապետյան Սերյոժա (Կուժիկ) – Լենինական
86. Կարո (վարորդ)

87. Կիրակոսյան Հակոբ – Անիի շրջան
88. Կիրակոսյան Մուկուչ – Լենինական
89. Կուպալյան Գուրգեն – Լենինական
90. Հակոբյան Արուսյակ Խորենի – Անիի շրջանի Ձիթհանքով գյուղ, ապրել է Արթիկում
91. Հակոբյան Գրիգոր – Անիի շրջան
92. Հակոբյան Լևոն Սենոյի – Անիի շրջան
93. Հակոբյան Ռաֆայել
94. Հակոբյան Ուլիանոս – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
95. Համբարձումյան Սալաթ – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
96. Հայկազունի Հարություն – Լենինական
97. Հայրապետյան Կորյուն Մարտիրոսի – Սառնաղբյուր գյուղ
98. Հարթենյան Մելիքսեթ (Աշուղ Ծաղկալի) – Արթիկի շրջանի Հոռոմ գյուղ
99. Հարությունյան Թորգոմ – Լենինական
100. Հարությունյան Կայսրուհի Ներսեսի – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
101. Հարությունյան Հայաստան – Մեղրաշատ գյուղ
102. Հարությունյան Մ. – Լենինական
103. Հարությունյան Սիրուն Վաղարշակի – Լենինական
104. Հովակիմյան Վելիխան – Լենինական
105. Հովհաննիսյան Աստղիկ – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
106. Հովհաննիսյան Երվանդ Սահակի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
107. Հովհաննիսյան Հովհաննես (Կալոթկաջի Հովհաննես) – Ալեքսանդրապոլ
108. Ղազարյան Թորգոմ – Ապարան
109. Ղազարյան Պողոս – Լենինական
110. Ղազարյան Փայլակ – Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղ
111. Ղալաչի Մըկո – Լենինական
112. Ղուկասյան Աբրահամ – Լենինական
113. Ղուռուշտանյան Ազնիվ – Արթիկի շրջանի Պեմզաշեն գյուղ
114. Մադաթյան Սերգո – Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղ
115. Մամիկոնյան Մամիկոն – Լենինական
116. Մանուկյան Ռոբերտ Արտաշի – Ախուրյանի շրջանի Ջրառատ գյուղ
117. Մանուկյան Ս. – Շիրակ
118. Մարգարյան Վազգեն – Ախուրյանի շրջանի Ջրառատ գյուղ
119. Մարգարյան Վրեժ Հմայակի – Ախուրյանի շրջանի Կապս գյուղ
120. Մարկոսյան Մինաս – Լենինական
121. Մարտիրոսյան Արամ – Շիրակի մարզ
122. Մարտիրոսյան Գարան – Շիրակի մարզ
123. Մարտիրոսյան Դանիել – Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղ
124. Մելիքյան Ազատ Զաքարի – Լենինական
125. Մելքոնյան Ենոք – Լենինական
126. Մինասյան Խաչիկ (Ջղեր) – Լենինական
127. Մինասյան Մարտին – Լենինական
128. Մինասյան Սիմոն – Անիի շրջանի Լանջիկ գյուղ
129. Միրզոյան (Ամիրյան) Շուշանիկ – Ալեքսանդրապոլ
130. Միքայելյան Խանում – Ղուկասյանի շրջանի Թավշուտ գյուղ
131. Մխիթարյան Հայկազ – Լենինական
132. Մխիթարյան Նիկոլ – Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղ
133. Մկրտչյան Աննա – Լենինական

134. Մկրտչյան Զարիկ – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
135. Մկրտչյան Ջուլիետա Սաշայի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
136. Մկրտչյան Սիրանուշ – Լենինական
137. Մուրադյան Գաբրիել – Աշտարակի շրջան
138. Նավոյան Սեդրակ – Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղ
139. Ներսիսյան Զավեն – Լենինական
140. Ներսիսյան Կարո Գասպարի – Լենինական
141. Ներսիսյան Ռաֆայել
142. Շաբոյան Աղասի – Լենինական
143. Շաբոյան Ֆրիդա Մխիթարի – Ախուրյանի շրջանի Ախուրիկ գյուղ
144. Չախոյան Թեղուշ – Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ գյուղ
145. Չոլաղյան Մնացական – Ալեքսանդրապոլ
146. Պապիկյան Արտուշ Ապինի – Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղ
147. Պետրոսյան Արտավազդ Երվանդի – Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղ
148. Պետրոսյան Գեղամ Գրիգորի – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
149. Պետրոսյան Դուշիկ Երվանդի – Արթիկի շրջանի Մեղրաշեն (Ղազանչի) գյուղ
150. Պետրոսյան Համլետ Սամվելի – Շիրակի մարզի Բասեն գյուղ
151. Պողոսյան Ամալյա Եղիշեի – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
152. Պողոսյան Երվանդ – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
153. Պողոսյան Վալերի – Համզաչիման գյուղ
154. Ջահուկյան Գևորգ – Երևան
155. Սահակյան Հովհաննես Հակոբի – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
156. Սահակյան Մկրտիչ Հակոբի – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
157. Սարգիսյան Գրիգոր Գրիգորի (Ֆիզդո) – Աշոցքի շրջանի Բաշգյուղ
158. Սարգսյան Արշավիր (Ուստա Աշո) – Ալեքսանդրապոլ
159. Սարգսյան Հայաստան Հարությունի – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
160. Սարգսյան Մոսկով Մկրտիչի – Արթիկի շրջանի Լուսակերտ գյուղ
161. Սարգսյան Սուրեն Հակոբի – Ախուրյանի շրջանի Չրախլի (Ջրառատ) գյուղ
162. Սարգսյան Մուկուչ – Լենինական
163. Սարդարյան Արտեմ – Շիրակի մարզ
164. Սարուխանյան
165. Սաֆարյան Սիմոն – Լենինական
166. Սեդրակ բիձա – Ալեքսանդրապոլ
167. Սեխլեյան Երվանդ – Արթիկի շրջանի Փանիկ գյուղ
168. Սիմոնյան Երջանիկ Սեդրակի – Արթիկի շրջանի Նահապետավան գյուղ
169. Սիմոնյան Մանիկ – Լենինական
170. Սիսակյան Ռուբիկ – Թբիլիսի
171. Սիֆոն Օնիկ – Լենինական
172. Սմբատյան Սաղաթել – Երևան
173. Սմբատյան Սուսան Մուկուչի – Անիի շրջանի Լուսաղբյուր գյուղ
174. Սողոյան Խաչատուր Մկրտչի – Արթիկի շրջանի Հառիճ գյուղ
175. Սողոյան Հարություն – Լենինական
176. Ստեփանյան Դերենիկ – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
177. Վարդանյան Հայաստան Լևոնի – Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղ
178. Վարդանյան Հրաչյա – Անիի շրջանի Սառնաղբյուր
179. Վարդանյան Մարգարիտ – Արթիկի շրջանի Փանիկ գյուղ
180. Վարդանյան Ռուբեն Հայրապետի – Լենինական

181. Վարդանյան Վանիկ – Լենինական
182. Վարդերեսյան Անուշիկ – Մեծ Մանթաշ
183. Վարդերեսյան Սաթենիկ Աղասու – Մեծ Մանթաշ
184. Վխկրյան Աղասի – Լենինական
185. Տոնոյան Միսաք – Լենինական
186. Փաշայան Արտավազդ – Լենինական
187. Փաշայան Ռոբերտ – Լենինական
188. Փիլոյան Վալոդյա – Անիի շրջանի Մարալիկ գյուղ
189. Քոչարյան Երեմ Իսահակի – Լենինական
190. Քոսյան Աղունիկ Վարդանի – Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ գյուղ

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ա, ալ – էլ
Աբասի – քսան կոպեկանոց
Աբելսին – նարինջ
Աբլավ (ռուս. облава) – շուրջկալ
Աբոզ (ռուս. обоз) – գումակ
Աբով – պատճառով
Աբուռ – պատիվ, ամոթ
Աբուռով – պատվի, ամոթի զգացումով
Ագենտ (ռուս. агент) – գործակալ
Ագլամիշ էղնիլ – զբաղվել
Ագլաջա – զբաղմունք
Ագռա – ատամ
Ագուրեց (ռուս. огурец) – վարունգ
Ադաթ – սովորույթ
Ադաշ – անվանակից
Ադե, ատե – մայր, տատ
Ադին (ռուս. один) – մեկ
Ադյալ (ռուս. одеяло)- վերմակ
Ադվակատ, ատվակատ (ռուս. адвокат)- փաստաբան
Ադում – քայլ, մեծ քայլ
Աթտար – մանրավաճառ, չարչի
Ազափ – ամուրի, չամուսնացած
Ազըմ, ազմ – մի քիչ
Ազրայել – քաջազն, հսկա
Ալ-բինիշ – ծիրանի
Ալա – բազմագույն
Ալաբալաղ – կարմրախայտ ձուկ
Ալագյոզլու – խոշոր աչքերով, աչագեղ
Ալահվաքիլ – Աստված վկա
Ալաճա – խայտաբղետ, երփներանգ
Ալաճա շեյթան – գույնզգույն սատանա
Ալան-թալան – 1.կողոպուտ, 2. անտերություն
Ալարղա – կրնկի վրա բաց
Ալաք – քաղհան անելու գործիք
Ալաքփար – ամենամեծ
Ալաֆ – անասնակեր
Ալաֆտար – անասնակեր վաճառող
Ալբիալ – անմիջապես
Ալթի – վեց
Ալիշ-վերիշ – առևտուր
Ալմա – էլի, կրկին
Ալմազ – ալմաստ
Ալչու կայնել – գործերը հաջող ընթանալ
Ալվանչի – կտոր ներկող
Ալվատ-թալվատ – ժառանգ
Ախարամ, ախարըմ – վերջապես, ի վերջո
Ախել – կողպել
Ախլուխ, աղլուխ – տե՛ս Այլուղ
Ախու – ահից, վախից
Ակմակչի, աքմաքչի – հացթուխ
Ակռա – ատամ
Ակուշկա (ռուս. окошко) – պատուհան
Ահ ու զար -1. սարսափ, 2. ախուվախ
Ահել – մեծահասակ
Ահեղ – սթափ
Ահյալ, ահվալ – դրություն, վիճակ
Աղլ – փարախ, մակաղատեղ
Աղոթրան – 1. արևելք, 2. այգաբաց, լուսաբաց
Աղու – թույն
Աճայիբ – զարմանալի, տարօրինակ
Աճառ – հաճար
Ամարատ, ամարաթ – 1. դղյակ, ապարանք, 2. զարդարանք
Ամբոհանի – ամպհովանի, հովանոց
Ամզուկ – տե՛ս Նամզուկ
Ամի – հորեղբայր, քեռի
Ամոտ-զամոտ – ամաչկոտ
Այազ – սառնամանիք
Այան հանել – հրապարակել
Այար – թամբ
Այարել – թամբել
Այիբ, այիպ, այբ – թերություն, պակասություն
Ային-բեյին էղնել – զարմանալ
Ային-ղային – մեծ հարստություն
Այինօյին, այնօյին – 1. չնչին, 2. սովորական, 3. ունեցած-չունեցած
Այլոդրոմ (ռուս. аэродром) – օդանավակայան
Այլուղ – թաշկինակ
Այղռ ձի – բարձրակարգ ձի, հովատակ

Այվաղ – գաղտնիք
Այվան – 1. պատշգամբ, 2. վերնահարկ
Այրոպլան (ռուս. аэроплан) – ինքնաթիռ
Այուն – վախից, ահից
Ան – վերցրու
Անահուն – անչափ շատ
Անբաշար – անկարող
Անբույուղ – անբեղ տղամարդ
Անբուս – չբուսնող
Անգեղա ղուշ – անգղ
Անգյալ – աշխատանքի համար անընդունակ
Անեղ – աղեղ
Անեղնակ – ծիածան
Անզավալ – անվնաս, անփորձանք
Անզվուկ (ռուս. без звука) – անձայն
Անթիքա – հազվագյուտ, արժեքավոր, նմանը չունեցող բան
Անժուր – ոչ սննդարար
Անկ – անդամալույծ
Անկամորդ – չկամեցող, նախանձ
Անհախ – անվարձ
Անղարիա – անտեղի, անկարգ
Անոթի – քաղցած
Անջախ, անճախ – հազիվ
Անսաս – անձայն
Անտազա – 1. երկարության չափ = 63 սմ
Անտազիա – ձևվածք
Անֆայմ – անհասկացող
Աշել – նայել
Աչողուտուն – հաջողություն
Աչքըռնել – չար աչքի դիպնել
Ապերացի էնել (ռուս. операция, оперировать)- վիրահատել
Ապլա – մայր, մեծ քույր, մորաքույր
Ապլպել – խարխափել, շոշափելով փնտրել
Ապռեշում – մետաքս
Ապուզամբախ – ափեղ-ցփեղ, դատարկ ու անմիտ
Աջալ – կյանքի վերջ, օրհաս, մահ
Աջեպ – զարմանալի
Աջլաջեբ – անճոռնի, այլանդակ, տգեղ
Առ – գութանի խոփի միանգամից կտրած և շուռ տված հողաշերտը
Առիք, առիկ – առաստաղ
Ասեղ -փայտե սեպեր, որ սայլի աջ և ձախ կողմերից ամրացնում են՝ բեռը պարանով կապելիս
Ասկապ – ծուռ
Ասղաբան – ասեղնագործ
Ասնավ – 1.արհեստավոր, 2. համքար, համքարություն
Ասնել – անցնել
Ասոր – սրա
Ասչի – խոհարար
Ասչիխանա – ճաշարան
Ավալ ժամանակին – հին ժամանակներում
Ավարա – դատարկապորտ, անբան
Ավզնոց – ավազուտ
Ավղուշ, ավղուշություն – որսորդություն
Ավտարիտետ (ռուս. авторитет) – հեղինակություն
Ավուր – օրվա
Ատաշ (ռուս. этаж) – հարկ
Ատեժանի, ատաշանի (ռուս. этажный) – հարկանի
Ատկազ էնել (ռուս. отказать) – մերժել
Արալը – արահետ, կածան
Արարկու էնել – զրուցել
Արգան – երգեհոն
Արգանչիկ – երգեհոնահար
Արենդատոր (ռուս. арендатор) – վարձակալ
Արթղ, արտղ – այդուհետև, այլևս, արդեն
Արխեյին – հանգիստ, ապահով
Արսըս – անամոթ, աներես
Արտել – արհեստանոց
Արք – իրավունք
Ափար – մեծահասակ, ծանրակշիռ մարդ
Ափլըփել – 1. խարխափել, 2. շոշափել
Ափռ-ցփռ – ափեղ-ցփեղ
Աքիստ – աքիս
Աքշի – թթու պաստեղ
Աֆարմ – կեցցես, ապրես
Աֆերիստ (ռուս. аферист) – խարդախ
Աֆիցիանտ (ռուս. официант) – մատուցող
Աֆսանա – անխելք, հիմար

Բ

Բաբալը – 1. հայր, 2. ծերունի
Բաբասի – թութք
Բաբուճ, բաբուջ – հողաթափ
Բադաթ, բաթատ – արևածաղկի սկավառակը
Բադան – պարիսպ
Բադիավա, բադևա – ձրի, անվարձ
Բազազ – կտորեղենի վաճառական
Բազար – շուկա
Բազի – 1. որոշ, 2. երբեմն
Բազրգյան, բեբազրգյան – վաճառական
Բալագան – փայտաշեն մարագ

Բալիջ, բալիչ, բալինջ, բարիջ – բարձ

Բալլինք – բանալի

Բալկոն (ռուս. балкон) – պատշգամբ

Բալու էնել – հայտնի լինել

Բալուլ – բարուր

Բալուլել – բարուրել

Բաՙլքի, բլքի, բալի, բալկի, բալքիմ – գուցե

Բախալ – նպարավաճառ

Բախլել – նախանձել

Բախլութեն – նախանձություն

Բակալեյնի խանութ (ռուս. бакалейный) – նպարեղենի խանութ

Բակմազ – դոշաբ

Բաղ, բախչա – այգի

Բաղբանջի – այգեպան

Բակարա – թղթախաղի տեսակ

Բամբոստ – շուշան ծաղիկ

Բայլու էնել – հայտնվել

Բայղուշ -1 . բու, 2. գիշատիչ թռչուն, 3. Չարագուշակ,
4. միայնության մեջ ապրող անձ

Բայրաղ – դրոշակ

Բանդ – պատնեշ

Բանկ – խալ

Բանկլի – խալեր ունեցող

Բանտ էղնել – դանդաղել, հապաղել

Բաշարել – կարողանալ, գլուխ հանել

Բաշիբոզուկ – սանձարձակ, ավազակ

Բաշիբորդ, բաշպորտ (ռուս. паспорт) – անձնագիր

Բաշլել – 1. շարունակել, 2. սկսել

Բաշլղ – նվեր

Բաշխա – առանձին

Բաշմակ (ռուս. башмак) – մաշիկ

Բաշտան – պես

Բաջանաղ – քենակալ

Բառադյա – 1. անօգուտ, անիմաստ, 2. ձրի, անվճար,
3. բարձիթողի

Բառբառ – վարսավիր

Բառբառխանա – վարսավիրանոց

Բառբռություն – վարսավիրություն

Բարա – չափ

Բարաքյաթ – առատություն, լիություն, շահավետություն

Բարդակ – պոռնկատուն

Բարդաշնիկ – պոռնկատան տեր

Բարիշ – հաշտ

Բարխաթ, բարխթ, բարխտ – թավիշ

Բարխանա – կահ-կարասի, տնային իրեր

Բարխանաջի, բարխանչի – մեծածախ առևտուր անող

Բեբախտ – անբախտ

Բեբութ – փոքրիկ դաշույն

Բեզըրել – հոգնել

Բեդնի (ռուս. бедный) – աղքատ

Բեդովլաթ – անպետք, ծույլ

Բեթար, բետար – վատթար, ավելի վատ

Բելուկ, բոլուկ – 1. ոհմակ, 2. հոտ, 3. խումբ, 4. բազմաթիվ

Բեխավել – անակնկալ

Բեխլի – բեղառատ

Բեղեյրաթ – անջանասեր, անձգտում

Բեմուրազ, բեմուրադ – 1. անմուրազ, նպատակին չհասած, 2. օգտագործվում է նաև որպես անեծք կամ պարսավանք

Բեյավա, բեյայա, բեհայա – անամոթ, անպատկառ

Բեյին – ուղեղ, խելք

Բեխավել – անակնկալ

Բեշքյարթմա – ծնողների փոխադարձ համաձայնությամբ օրորոցի երեխաներին նշանելը

Բեսու տալ (ռուս. бесить) – կատաղեցնել

Բեվուշտ – ուշաթափ

Բերզել – տե՛ս Բեզըրել

Բերնփոխ – կերակրի փոփոխություն

Բեուշտ – անգիտակից

Բզել – թեթևակի բոթել

Բըլկեմսի, բըլկի -տե՛ս Բաՙլքի

Բըլմազ, բլմազ, բլմաս, բիլմազ – 1. անգրագետ, 2. խելքից պակաս

Բըլուզ – վերնաշապիկ

Բըլքոս – խարխուլ

Բըկի – գոնե

Բըրդուճ – պատառ

Բըրխըտալ -1. փայլել, պսպղալ, 2. բուրել

Բիապուռ – անամոթ

Բիթմիշ լինել – 1. հայտնվել, 2. գործը հաջողել

Բիթուք, բիթուն, բիդուն, բիդուք – բոլորը

Բիլազուկ – ապարանջան

Բիլակ – դաստակ

Բիլամ, բիլա – նույնիսկ, անգամ

Բիլբուլ, բլբուլ – սոխակ

Բիլետ, բլեթ (ռուս. билет) – տոմս

Բիլկով – ուժեղ

Բիլոռ – կլոր

Բիձա – ծերուկ

Բինա բռնել – տեղ ունենալ

Բինիշ – թիկնոց

Բիշի – 1. ձեթի մեջ տապակած բլիթ, 2. թեթևսոլիկ մարդ

Բիջ – ապօրինածին

Բիտտուն, բիտուն – բոլորը, ամբողջը

Բիրադի – ամբողջը

Բիրդ̈ն, բիրդան – հանկարծ

Բլագադարնստ (ռուս. благодарность) – շնորհակալագիր

Բլդուղ – 1. այտ, 2. այտերն ուռեցրած

Բլել – փլվել

Բլնգազ – թույլ, խեղճ, անճարակ, անօգնական

Բլոջ – բզեզ

Բլուդ (ռուս. блюдо) – սկուտեղ

Բլուլ – հնձած խոտի խուրձ

Բյալու – հայտնի

Բնաղուն – ձմռան համար պահվող հացահատիկ

Բոբլիկ – բոբիկ

Բոբոլ – 1. երևակայական հրեշ, որով վախեցնում են երեխաներին, 2. խրտվիլակ

Բոգրակ (ջիգրով) – երիկամներ (լյարդով)

Բոզ – 1. բաց գորշ գույն, 2. անբարոյական

Բոզարած – պոռնկություն անող

Բոզուրմիշ էղնել – ի չիք դառնալ, անհետանալ

Բոլ – բավականին

Բոխոլոջ – 1. երեխաների չսանրված մազերը, 2. բզեզ,
3. անախորժ ճիճու, 4. խրտվիլակ

Բոխչա, բողչա – շորերի կապոց

Բողազ – 1.բուկ, կոկորդ, 2. ծայր

Բողմաղ – օձիքի կանացի զարդ

Բոճկա (ռուս. бочка) – տակառ

Բոյախանա – ներկատուն

Բոյաճի – ներկարար

Բոնդո – կոպիտ մարդ

Բոշ – դատարկ, փուչ

Բոշա – 1. գնչու, 2. աներես, ագահ

Բոռալ – գոռալ

Բոստան – բանջարանոց

Բորոտել – բորով հիվանդանալ

Բռի-բառադա – գռեհիկ, անկարգ ու անկանոն

Բռլիանտ – ադամանդ

Բռնոթի – քթախոտ

Բրախել, բրախ տալ – թողնել, բաց թողնել, արձակել

Բրըշկել – քանդվել

Բրնձել – որևէ բան լավ անել չկարողանալ

Բուդետ (ռուս. будет) – կլինի

Բութիլկա, բուտուրգա, բուդուլկա, (ռուս. бутылка) – շիշ

Բութկա, բուտկա (ռուս. будка) – կրպակ

Բուկ, բուգ – կոկորդ

Բուկեդ (ռուս. букет) – փունջ

Բուղ – գոլորշի

Բուղա – ցուլ

Բուշտ – պալար, ուռուցք

Բուսու պայել – դարան մտնելով հետամտել

Բուտա (բութա) տալ – սիրած էակի հետ համաձայնության գալ

Բուտո բի (ռուս. будто бы) – կարծես թե, իբր թե

Բուրդուկ (ռուս. бурдюк) – տիկ

Բուքսավատ էնել (ռուս. буксовать) – տեղապտույտ տալ

Գ

Գաբ – երախ

Գադառլամա – 1.ցավ, վիշտ, 2. ցավագար

Գազ – փուշ

Գազեթ – թերթ

Գալաճաղ – 1. գալիք, սպասելիք, 2. գլխին եկածը, գլխով անցածը, 3. փորձանք, 4. զրույց, պատմություն

Գամի – նավ

Գամջի – նավավար

Գառադավոյ (ռուս. городовой) – քաղաքապահ ոստիկան

Գառնիր (ռուս. гарнир) – խավարտ

Գառնիտուռ (ռուս. гарнитур) – լրակազմ

Գաստինցա (ռուս. гостиница) – հյուրանոց

Գավռակ – դյուրաբեկ, շուտ կոտրվող

Գարազի – անուշ

Գարդան – վիզ

Գարդիրոբ (ռուս. гардероб) – զգեստապահարան

Գարշոկ (ռուս. горшок) – 1.կ ճուճ, 2. գիշերանոթ

Գդածուրիկ – գտած, գտնված

Գեժան – ապշած, շվարած, շշմած

Գեժդանգեժ – հազիվհազ

Գելխո – գայլի նման շատակեր, ագահ

Գեշ – վատ

Գեջտանգեջ – հազիվհազ

Գերոյ (ռուս. герой) – հերոս

Գըրգլամիշ էղնել – գրկել

Գըփալ – կռանալ, վրան ընկնել

Գիզալ – սիրուն, գեղեցիկ, պատվական

Գիլազ – կեռաս

Գիլազի – կեռասենի
Գիլիզ – բոլորովին, էլ ավելի
Գիլիլա – փամփուշտ, գնդակ
Գլավնի (ռուս. главный) – գյուղապետ, տանուտեր
Գլմանի – կնմանվի
Գլոխքար – գոնե, ինչ արած
Գմբռ – մարմնեղ, կոպտամարմին
Գմշո – գոմշանման
Գյադա -1. անտաշ, 2. ստոր, 3. ժլատ
Գյադակ, գադակ – գոմեշի ձագ
Գյալաջա – տե՛ս Գալաճա
Գյամ, գյամի, գամ – սանձ
Գյամի – նավ
Գյավազա – շատախոս
Գյատա – ճանապարհ
Գյարդան – 1.վիզ, 2. մեջք, ողնաշար
Գյոդակ – կարճահասակ
Գյոզ – 1. աչք, 2. ջրի ակունք
Գյոզունա գյոնգուգյուն – փաղաքշական խոսք՝ կյանքին մեռնեմ
Գյոլ – լճակ
Գյոռ, գոռ – գերեզման
Գյորա – համեմատ, համապատասխան
Գյոքս – կուրծք
Գյուգյում – 1. պղնձյա ջրաման, 2. կճուճ
Գյուլ – վարդ
Գյուլա գցել – հրազենով կրակել
Գյուլաշ – կոխ
Գյուման, գիման – 1. հույս, 2. տեղյակ
Գյումրա – 1. գեր, 2. առույգ, 3. ուժեղ, զորեղ
Գյունաբախան, գինաբախան – արևածաղիկ
Գյունդարա – մաշած ցախավելի ճիպոտները
Գյուրջի – վրացի
Գոգոռ – հաստագլուխ
Գոթենալ – անդամալույծ դառնալ
Գոթի – 1. ծույլ, անբան, 2. շփացած, 3. կարճահասակ
Գողինք – անկողին
Գողտուկ – գաղտնի, թաքուն
Գողտյել – բողբոջել
Գողուծուրիկ, գողածուրիկ – գողացված
Գոմբել – բռունցքով խփել՝ հարվածել
Գոնչո – մեծ գլուխ ունեցող
Գոջի – խոճկոր
Գոռ – գերեզմանոց
Գոռբեգոռ էղնել – գերեզմանից գերեզման փոխադրվել
Գոռսուզ – վատ բան
Գոտություն – անդամալուծություն
Գովանի – գովելի
Գորխըրցել, գորխրել – 1. կրակը թեժացնել, 2. հուզվել,
3. աղիողորմ լաց լինել
Գործելի – փայտածուխ
Գորտնխալի – կանգնած կամ դանդաղ հոսող ջրի երեսին բռնած կանաչ մամուռը
Գռոշ, գրոշ – կես կոպեկանոց
Գռսել – սաստիկ ծեծել
Գրվանքա – ֆունտ, կշռի հին միավոր (=409,5 գրամ)
Գրուզ (ռուս. груз) – բեռ
Գրուզչիկ (ռուս. грузчик) – բեռնակիր
Գուբուր – գողացված
Գուզ – ընկույզ
Գուղտուկ – տե՛ս Գողտուկ
Գուռոբդել – հրահրել

Դ

Դաբախանա – կաշի մշակելու՝ դաբաղելու արհեստանոց
Դաբաղ – կաշեգործ
Դաբրո պաշալովայտ (ռուս. добро пожаловать) – բարի գալուստ
Դագյանակ, դագինակ – հաստ գլխով երկար մահակ
Դադռել, դատռել – 1. հոգնել, 2. կանգ առնել
Դաժե (ռուս. даже) – նույնիսկ
Դալի – խելառ, գիժ
Դալլաք, դալակ – վարսավիր
Դալլաքանոց – վարսավիրանոց
Դախա – բոպե
Դախլ – 1. վաճառասեղան, 2. դրամարկղ, գանձարկղ
Դակի քաշել – տե՛ս Դաքի բերել
Դակլատ էնել (ռուս. доклад, докладывать) – զեկուցել
Դակմա – ոչ բոլոր դեպքերում
Դահուլ – տե՛ս Դավուլ
Դամ բռնել – նվագակցել
Դամրճի, դամրչի, դամրջի – դարբին
Դամըրխանա – դարբնոց
Դան – աղալու համար ջրաղաց տարվող հացահատիկ, աղուն
Դանդանա – հենարան
Դանդուռ – հիմար, տխմար
Դաչա (ռուս. дача) – ամառանոց

ԴապՀն – խուրձ, շատ
Դառանա – դարպաս
Դաստա, դըստը – 1. կապուկ, 2. փունջ
Դավա, դէվա – ուղտ
Դավաթվոր, դավատվոր – հարսնառ գնացող
Դավաչի – ուղտապան
Դավերյա էնել (ռուս. доверие, доверить) – վստահել
Դավի – 1. վեճ, 2. գանգատ
Դավի դառապա – վեճ, կռիվ
Դավուլ – դհոլ, թմբուկ
Դար – բարձունք
Դարանջա – կարգ, դրություն
Դարգայ – դուռ
Դարգյա – դարպաս
Դարդ – 1. վիշտ, 2. հոգս
Դարդաժարով – նազանքով
Դարզ – 1. արտից հնձվածը, 2. ճեղք
Դարզ անող -շարվող պատի քարերի միջև եղած ճեղքերը շաղախով ծածկող
Դարժ ու վարժ էնել – խորհել, ծանրութեթև անել
Դարտլամիշ էղնել – վշտանալ
Դափ-դատարկ – դատարկաձեռն
Դաքի բերել – դավ նյութել, խորամանկությամբ խաբել
Դաֆչի – դափ խփող
Դաֆտար – գիրք
Դբըռ – արու ուլ
Դեմի – դեպի
Դեյի, դեի – իբրև, որպես
Դեյրա – շրջազգեստ
Դենչիկ (ռուս. денщик) – զինվորական սպասավոր
Դեպեշ (ռուս. депеша) – 1. հեռագիր, 2. ճեպագիր
Դեսետնիկ (ռուս. десятник) – տասնապետ
Դերեկտոր, դիրեկտոր (ռուս. директор) – տնօրեն
Դերձան – բամբակե ամուր թել
Դեք – ավլելուց առաջացած աղբը
Դեֆեկտ – արատ
Դըբա – սանր
Դըմբըստել – բռնցքահարել
Դընգ, դնգ – բլուր
Դըպա, դիպա – դեպի
Դըպար – պարեն
Դըռտել – հրահրել, թելադրել
Դի – կողմ
Դըրկից – հարևան
Դիզ – տե՛ս Դուզ
Դիզանի – ուղիղ, կանոնավոր
Դիլբար – գեղեցիկ
Դիլաք – խնդրանք
Դիլիմ, դուլում – շերտ
Դիլխոր – տխուր
Դիխանի (ռուս. дыхание) – շնչառություն
Դին (էն) – (այն) կողմ
Դինա – այնտեղ
Դինգ, դինկ – հատուկ սարք, որ ցորենը թեփհան են անում՝ ձավար սարքելու համար
Դինջանալ (դնջանալ)- հանգստանալ
Դինսըզ – 1. անհավատ, 2. լաչառ
Դիվադադար էղնել – անհանգստանալ
Դիվան – 1. ատյան, դատաստան, 2. բազմոց, 3. դևեր
Դիվանխանա – 1. դատարան, 2. ընդունարան, 3. դիվանատուն
Դիվոտել – 1. դիվահարվել, 2. սաստիկ զայրանալ
Դիրգար, դուրգյար – հյուսն
Դիրտմել – 1. հրել, 2. ձեռքով իմաց տալ
Դիփ – բոլորը
Դհա – էլ ավելի
Դմբլ – փոքրիկ թմբուկ
Դմբլդուն – լուր
Դմբրած – անշնորհք, ձեռից բան չեկող
Դմշո – սատանայապետ
Դյագա, դագյա – թաղիքե վրան կամ դալար ճյուղերից հյուսած պատերով հյուղակ
Դյուրբի – հեռադիտակ
Դյուքան, խանութ
Դնտալ – 1. դղրդալ, 2. շարժվել
Դոխ – աղավնի
Դոխճի – աղավնի խաղացնող
Դոխովոյ մուզիքան (ռուս. духовой оркестр) – փողային նվագախումբ
Դոնուշ – անգամ
Դոշ – կուրծք
Դոշակ, դյոշակ – ներքնակ
Դոստ – բարեկամ
Դովլաթ – հարստություն, ունեցվածք
Դովլաթ ղուշ – հաջողություն բերող թռչուն՝ թագավոր ընտրող
Դոտ – կերակուր եփելու կավե մեծ աման
Դոր – 1. դեպի ուր, 2. ինչպես, 3. որտեղ
Դրագոն (ռուս. драгун) – հեծյալ զինվոր
Դրեթ – անգամ
Դրինդ – ձեռքի ափի վերևի փափուկ մասը
Դրոգ – սայլ
Դրոգչի – սայլապան

Դրստել – ուղղել
Դրուգոյ (ռուս. другой) – ուրիշ
Դրուստ – ճիշտ
Դուգյուն – վերք, խոց
Դուզ – 1. ուղիղ, 2. Ճիշտ, 3. հարթավայր
Դուզան – փորձանք, օյին
Դուման – մշուշ, մառախուղ
Դուշ էղնել – հանդիպել
Դուշման, դիշման – թշնամի
Դուռդուշ – ծաղկատար երեսով
Դուռնա, տուռնա – ուռուցք
Դուր – ախորժելի
Դուրան – հարթ, տափարակ տեղ
Դուրգար – հյուսն
Դուրթմել – թեթևակի հրել

Ե

Եբ, եպ – երբ
Եդակ – ուրիշ ձիու հետևից հոժարությամբ գնացող ձի
Եթում – որբ
Եկան, եգան – քրոջ որդի, եղբոր որդի
Եմ – կեր
Եմիշ – սեխ
Եսիր – գերի
Ետք – ետևի մաս
Երգյան – նավը պահող պարան
Երիշ – քայլվածք
Երկանք – 1. երկարություն, 2. բոյ
Երտիկ (էրեթիկ) – մաշկի սնկային հիվանդություն
Եքա – մեծ
Եքաբաշ – 1. մեծ գլուխ ունեցող, 2. հաստագլուխ, բթամիտ

Զ

Զաբթյա – տե՛ս Զապտիա
Զաբնել – նիհարել
Զաբուն – նիհար
Զաթի – 1. արդեն իսկ, 2. հենց
Զալըմ – 1. դաժան, 2. կատաղի
Զակաս (ռուս. заказ) – պատվեր
Զակլոպկա (ռուս. заклёпка) – դարձաբևեռ
Զակոն (ռուս. закон) – օրենք
Զակրոյչիկ (ռուս. закройщик) – ձևող վարպետ
Զակուսկի, զակուսկա (ռուս. закуска) – սառը թեթև ուտեստ
Զահլա տանել – ձանձրացնել, զզվեցնել
Զաղար – փոքրիկ շուն, շնիկ
Զամ (ռուս. заместитель) – տեղակալ
Զայ էնել – փչացնել, վնասել
Զայր, զահր – թույն
Զանիտ (զանիթ) էնել (ռուս. занять) – զբաղեցնել
Զապիսկա (ռուս. записка) երկտող, գրություն
Զապտիա – ոստիկան
Զասառենի (ռուս. засорение) – խցանում
Զավալ (ռուս. завал) – վնաս, վտանգ, դժբախտություն
Զավզակ – շատախոս
Զավոդ (ռուս. завод) – գործարան
Զատի – 1. արդեն իսկ, 2. հենց, 3. ճիշտն ասած
Զար – 1. զառ, 2. հաջողություն
Զարար – վնաս
Զարբաբ – մետաքսյա նուրբ գործվածք
Զարգյար – ոսկերիչ
Զարնել – խփել
Զարսի – բացի, բացի դրանից
Զդաչի (ռուս. сдача) – փողի մանր
Զեինը բացվել – ինքնասիրությունն արթնանալ
Զելված – 1. դիմացկուն, 2. աշխատանքի մեջ կոփված,
3. փայլեցրած
Զեմլյակ, զեմլակ (ռուս. земляк) – հայրենակից
Զերզամբա, զերուզամբի – 1. ներքնատուն, նկուղ, մառան, 2. լայն, ընդարձակ
Զըբոռ (ռուս. сбор) – հավաք
Զըմբզըմբան – աղմկալից
Զըռ ազապ – մեծահասակ, տարիքով
Զիան – վնաս
Զիանքար – վնաս տվող
Զիբարը բացվել – ուրախանալ
Զիբիլ – աղբ
Զիլ – շատ լավ, ուժեղ
Զխկում – անպետք, վատ ուտելիք
Զխտել – ուտել, լափել
Զմռվել – խցանվել
Զնջիլ – շղթա
Զոզո – չափից ավելի տգեղ բարձրահասակ
Զոլոտ (ռուս. золото) – ոսկի
Զոխ – բանջարեղենի (սիբեխի) դալար ցողունը
Զոնտիկ (ռուս. зонтик) – հովանոց, անձրևանոց
Զոռ – ուժ, զորություն
Զոռ է – դժվար է
Զոռբա – բռնակալ, ագրեսիվ
Զպռտիկ, զպռտուկ – անհամ, ջրիկ
Զպրտիկ, զլպտիկ – պճնված, զարդարված

Զոզա – սողնակ
Զոզո, զոզոփ – բարակ, բարձրահասակ մարդ
Զոտո – թեթևսոլիկ
Զոփի – անճոռնի կերպով մեծ
Զվանոկ (ռուս. звонок) – զանգ
Զրկի-բրկի գալ – մեռնել, ոչնչանալ
Զրպանց – թափով
Զուլում – աղետ, պատուհաս
Զուր ու բուխտան – զրպարտություն
Զուքս – զարդ
Զուֆ – ուղտի բրդից մանած ու ներկած միատակ հաստ թել

Է

Էգվան – վաղվան
Էդիկ – դա
Էդման – այդպիսի
Էդոր – դրա
Էթում – որբ
Էթուր – այդպես
Էլ – կողմնակի, անծանոթ, օտար մարդ, ուրիշ
Էլակ – մորթուց պատրաստված անթև բաճկոնակ
Էլօղլի – օտար մարդ
Էկանոմիա (ռուս. экономия) – տնտեսում
Էկանոմիստ (ռուս. экономист) – տնտեսող, խնայող
Էկսպեդիտոր, էքսպեդիտոր (ռուս. экспедитор) – առաքիչ
Էկվան – վաղը
Էման – այնպիսի
Էյթիաճ – կարիք
Էյթիբար, էյտիբար, էիթիբար – 1. վստահություն, հավատ, 2. պատիվ, հարգանք
Էյրամ – բրդե շատ բարակ թելից գործած քառանկյունի գլխաշոր
Էնդի, էնդ – դրա համար
Էշխ – եռանդ, ավյուն, ոգևորություն
Էջզել – ձանձրանալ
Էսման – այսպիսի
Էսպեսուտունով – այսպիսով
Էստրից – սրանից
Էվելորդ – ավելորդ
Էտաբային կարգով – փուլերով
Էտթավուր – այդպես
Էտրից – դրանից
Էրած, էրաճ (էրձին) – երազ (երազում)
Էրակ – կարճատև հորդ անձրև
Էրամ – մարդկանց խումբ, բազմություն, գերդաստան
Էրեխտիք – երախտիք
Էքսի օր – հաջորդ օր
Էքվան – հաջորդ օրը

Ը

Ըման – այդպես
Ըդոնք – դրանք
Ըդուր – դրա
Ըղող – ուղեղ
Ըղունգ – եղունգ
Ընդուր – նրան
Ըշպարգալկա (ռուս. шпаргалка) – հուշաթղթիկ
Ըշտը – դե, ահա
Ըռաստ գալ – տես Ռաստ գալ
Ըռպ, ըռուպ – մեկ քառորդ կոտի չափ
Ըռութ – աղքատ, մերկ, դատարկ
Ըսման – այսպես
Ըսպիշկա – տես Սպիչկա
Ըսպուտնիկ (ռուս. спутник) – արբանյակ
Ըստանցի (ռուս. станция) – կայարան
Ըստուր – սրա
Ըրաղ – օղի

Թ

Թաբաղ – բաց վաճառասեղան փողոցում առևտուր անելու համար
Թաբդիր ղըլղ, թապտիր ղըլըղ – հագուստը փոխած
Թաբի – 1. սրճարանի սուրճ մատուցող, 2. ենթակա
Թաբլել – նետել
Թադարուկ, թատարուկ, թաթարուկ – պատրաստություն
Թազա, թաժա – նոր
Թազադան, թաժադան – նորից, կրկին
Թազբեղ – տերողորմյա
Թազի – 1. որսորդական շուն, 2. շնիկ
Թաթ – նժար
Թաթալաբազ – խաբեբա, ստախոս
Թաթարի – անմիջապես, իսկույն, արագորեն
Թաժա – նոր, թարմ
Թալաթոսել – գլխից ռադ անել
Թալալ – 1. մունետիկ, 2. ձեռքի վրա հին շորեր ծախող. 3. մանրավաճառ
Թալալ տալ – հայտարարել
Թալան-թրաշուտեն – կողոպուտ, ավարառություն
Թալաշ էնել – մտահոգվել
Թալել – գցել, նետել
Թալիմ – զինավարժություն
Թախլա տալ – գլուխկոնծի տալ

Թախմընել – նկատել

Թախտաբիթի – փայտոջիլ

Թախում, թոխում – ազգակից, սերունդ

Թակրրել – կրկնել

Թահր – տեսակ, կերպ

Թաղաթ – ուժ, թափ, կարողություն

Թաղավուրդ ունենալ – տարբերվել

Թամալ գցել – հիմնադրել

Թամալա տալ – 1. հարգել՝ ձեռքը գլխին դնելով, 2. Խոնարհվել, պատիվ տալ

Թամամ – լրիվ, ամբողջովին, իսկական

Թամամ առնել – լրացնել

Թամայ էնել – 1. որևէ բան ունենաու անկշտում ցանկություն ունենալ, 2. շահագրգռվել, շահասիրություն ցուցաբերել

Թամաքյար – ժլատ

Թամբա (թամպա) էնել – հանձնարարել, պատվիրել

Թամբալ – ծույլ

Թամաշ էնել – նայել, դիտել

Թամբխել – պատվիրել, հանձնարարել

Թամկով – քացով

Թայ – 1. հասակակից, 2. զույգից մեկը, 2. քուռակ

Թայնա – 1. խուլ, ապահով, խաղաղ, 2. դատարկ, ոչ ոք չկա

Թայտաշ – հասակակից

Թանազուկ էնել – վայել համարել, արժան տեսնել

Թանգիլ-մանգիլ – իրեն կտրտելով, հապշտապ

Թանթանա – կանացի գլխազարդ

Թաշախուստով – ամեն բան տեղը տեղին

Թառ – սայլի առջևի եռանկյունաձև մասը, որի տակ կախված է շարժական սնարքը

Թառլան – 1. շատ գեղեցիկ, չքնաղ, 2. քաջ, խիզախ

Թասա – 1. ծանր վիշտ, 2. վշտամահ

Թասիբ – պատիվ, հարգ, արժանապատվություն

Թասլիմ էղնել – հանձնվել

Թասոտել – վշտանալ

Թավաքալի – անիմաստ

Թավն է – ընդունելի է

Թավուր (էդ) – տեսակ (այդպես)

Թատարի – անմիջապես, իսկույն, արագորեն

Թարանջա – սանդուղք

Թարաֆ – կողմ

Թարեք, թարաք – գյուղական պատին հարմարեցված բաց պահարան

Թարզի, թառզի – դերձակ

Թարիֆ – գովք, մեծարանք

Թարկ էնել – դադարեցնել

Թարկ տալ, թարգ տալ – հրաժարվել, վերջ տալ

Թարկն առնել – մեկին իր հետ նստեցնել ձիու գավակին

Թարկրել – կրկնել

Թարքար – նորից

Թափա – գլուխ

Թափալ գալ – թավալվել

Թափել – 1. ազատել, 2. կռել

Թափշուր անել – հանձնարարել, պահ տալ

Թափտիղրլրղ – ծպտված, հագուստը փոխած

Թաք – զույգի մեկը

Թաք ու թուք – հատ ու կենտ, երբեմն

Թաքիլա, թակիլա, թակիլան – միայն թե

Թաքմուկ – աքացի

Թաքյին – միայնակ

Թաքո – անիվ

Թաքրար – նորից, դարձյալ, կրկին

Թաքրըրել, թակրրել – կրկնել

Թեզ – վաղ, շուտ

Թեզունց – շուտվանից

Թեշիկ – իլիկ

Թեշտ – տաշտ

Թեպուր – փետուր

Թեփե հանել – գործը գլուխ բերել

Թըթըրկիչ – թրթնջուկ

Թըլըսըմ, թելիսմ – կախարդանք

Թըմմել – լրանալ

Թընդիր, թնդիր – թոնիր

Թըռփոշնալ – մեծանալ, փարթամանալ

Թիթեն – անասունի չոր աղբ՝ թրիք, որը օգտագործում են որպես վառելիք, կամ թղթի մեջ ոլորում են ու ծխում

Թիթին – ծխախոտ

Թիմար տալ, թիմրել – ձիուն հարդարել

Թիս – հետույքից անձայն արձակվող գարշահոտ գազ

Թիրիթ – մսով կամ ոսպով ապուր

Թիփի – բուք

Թիփի անել – սուտ խոսել

Թիք – համառ, կամակոր

Թիք կոլոտ մարդ – մեծամիտ

Թիքա – կտոր

Թիքան – խանութ

Թիքչի – կոշիկ կարկատող

Թլիկ – կակազ

Թլիսմ – կախարդանք

Թղրի – հիվանդ՝ վերջին շնչում

Թոբա էնել – դադարեցնել, հրաժարվել, թարգ տալ

Թոզ – փոշի
Թոթոլ – թմբլիկ, փափլիկ
Թոխլի – մեկ տարին լրացած գառ
Թողապիս տալ – ցավակցություն հայտնել հանգուցյալի հարազատին
Թոմառի – բոլորը
Թոն – անձրև
Թոփ էղնել – հավաքվել
Թոռչի – ձկնորս
Թոռու – անձրև
Թորբաքաշ – մանր ծառայություններ մատուցող
Թորթոփ էնել – հավաքել
Թորկել – թողնել
Թոփ – գնդակ
Թոփալ – կաղ
Թոփչի – հրետանավոր
Թոփ էղնել – հավաքվել
Թստան խուրմա – թստան արմավ, մանր ու սև 4-5 կորիզով արմավ
Թվանք – հրացան
Թրաշվել – սափրվել
Թրքի (թրիք) բզեզ – կոյաբզեզ
Թութխալ – սոսինձ
Թութխըլել – սոսնձել, սոսնձով կպցնել
Թուլա – շան լակոտ
Թուլուղ – 1. փուչիկ, 2. միզափամփուշտ, 3. տիկ
Թուման -պարսկական ոսկեդրամ (= 10 ռուբլի)
Թուշ էղնել – հանդիպել
Թումբան – վարտիք
Թուռա, թուրա – ցողուն
Թուքան – տե՛ս Դյուքան

Ժ

Ժաժ (ժաշ) գալ – շարժվել
Ժաժկ, ժաշք – 1. երկրաշարժ, 2. որևէ գործ բռնելը, ձեռնարկելը
Ժախ – 1. բոխի, 2. անպետք, թեթևսոլիկ մարդ
Ժամ – եկեղեցի
Ժարիտ անել (ռուս. жарить) – տապակել
Ժելեզնի դարոգ (ռուս. железная дорога) – երկաթուղի
Ժեշտ (ռուս. жесть) – մետաղյա թիթեղ
Ժեռ քար – ժայռ
Ժերեբ քաշել (ռուս. жеребьёвка) – վիճակ հանել
Ժընջըլած – շղթայված
Ժժնթպած – մազերը գզգզված
Ժիժի կայնել – ընդդիմանալ, հակառակվել
Ժնգռտան – մռայլ, թթված
Ժնջիլ – տե՛ս Զնջիլ
Ժշխել – շարժել, թափահարել, թափ տալ
Ժողվողկրան – մուրացկան
Ժուլիկ – ճարպիկ
Ժուռ – 1. չհասունացած, 2. մռայլ
Ժուռ գալ – 1. փնտրել, 2. ման գալ, շրջագայել, զբոսնել

Ի

Իբրուխ – սափոր, ջրաման, որն օգտագործվում է լվացման համար
Իդարա -1. վիճակ, 2. ապրուստ, 3. հալ
Իդը – այդ
Իդմա – այդպես
Իզ – հետք
Իզին տալ – թույլատրել
Իզվեստնի (ռուս. известный) – հայտնի
Իլլայի – մանավանդ
Իլլաջ, իլաջ, իլաճ – ճար
Իլվանի – գեղեցիկ
Իմալ – ինչպես
Իման – հավատ
Ինադ – 1.համառություն, 2. քեն, վրեժ
Ինադ էնել – համառել, կամակորություն անել
Ինչղ, ինչխ – ինչպես
Ինջմիշ էղնել – վատ զգալ, նեղվել
Ինսանօղլի – մարդու որդի
Ինվալիդ (ռուս. инвалид) – հաշմանդամ
Ինքար (ինքյար) գալ – ժխտել, ուրանալ
Իշխնալ – հանդգնել
Իշկել, իշել – նայել
Իշտայ – ախորժակ
Իսան – մարդ
Իսպայի – մաքուր, հստակ, իստակ
Իստակ – մաքուր, կարգին
Իստըկվել – մաքրվել, կարգի բերվել
Իստըկություն – 1. մաքրություն, 2. Արդարություն
Իտա – այդ
Իրկվորե – երեկոյան

Լ

Լաբզդրակ – նապաստակ
Լաբլաբու -բոված սիսեռ
Լագան – տաշտ
Լազատին, լազաթին – 1. հաճույքով, ախորժակով, 2. ուզածիդ պես, կարգին
Լազիրակ -ստահակ, փողոցային
Լալ – համր

Լալա – 1. կակաչ, 2. դայակ, 3. սենեկապետ, 4. պատվավոր սպասավոր, 5. վեզիր

Լախանա – կաղամբ

Լակեյ (ռուս. лакей) – սպասավոր

Լակլակ, լագլակ – արագիլ

Լաղաբ – 1. Մականուն, 2.մորթ, կաշի, 3. կերպարանք

Լաղում – թունել

Լաղումջի – թունել փորող

Լամաթ էնել – կոտրել

Լամբե-լամբ – բերնե-բերան

Լայեղ, լայաղ – վայել, պատշաճ

Լանգ – աքացի

Լաշ, լեշ – դիակ

Լաչակ – կանացի սպիտակ գլխաշոր

Լաչառ – անամոթ, կռվարար

Լապառոշ, լաբառոշ – մեծախոս, մեծաբերան

Լապատկա (ռուս. лопатка) – բահ

Լավանդ – լկտի, շփացած, ծույլ

Լաֆ – դատարկախոսություն, փչոց

Լե – էլ

Լենը հանել – նյութական ծանր վիճակից դուրս բերել

Լենկ – կաղ

Լըլալ – լցնել

Լժալ – սահել

Լիմա-լիմա – կտոր-կտոր

Լիշնի (ռուս. лишный) – ավելորդ

Լիպաս, լիբազ – 1. հագուստ, 2. տեսք, դեմք

Լիտեյչիկ (ռուս. литейщик) – ձուլող բանվոր

Լիրբ – 1. անամոթ, 2. անբարոյական

Լխտիկ – փափլիկ, թմբլիկ

Լկրտվել, լակվռտել – երես առնել, շփանալ, անբարոյական կյանք վարել

Լղար – նիհար

Լման – նման

Լյուբոյ (ռուս. любой) – յուրաքանչյուր, ցանկացած

Լոդռ (ռուս. лодырь) – ծույլ

Լոդչիկ, լոտչիկ (ռուս. лётчик, лёдчик) -օդաչու, սառցամատակարար

Լոզոտ – փսլնքոտ

Լոթի – 1. կերուխում սիրող երիտասարդ, 2. ստահակ

Լոլոզ, լոլոշ – բարակ ու երկարահասակ

Լողջի – լողորդ

Լոշկա (ռուս. ложка) – գդալ

Լոպազ – պարծենկոտ, մեծամիտ

Լոռդել – շպրտել

Լոտկա (ռուս. лодка) – նավակ

Լուլկա (ռուս. люлька) – օրորոց

Լուկ (ռուս. люк) – իջանցքի դուռ

Լուպ – ձեռքի ափ

Լուպ ու լըպուստ – դատարկաձեռն

Լֆիկ մարդ – դուր գալու ճիգ թափող

Խ

Խաբար – լուր

Խազեյին – տեր

Խազնա – գանձարան

Խաթա – փորձանք

Խաթեր համար – պատվին

Խաթնաբեռ, ղատնաբեռ, ղաթրաբեռ – ջորեբեռ

Խալա – գին, որ վճարում է փեսացուն աղջկա հորը

Խալադիլնիկ (ռուս. холодильник) – սառնարան

Խալխ – տես Հալղ

Խալվատ – 1. ազատ, դատարկ, 2. աչքից հեռու

Խալվար – հացահատիկ կշռելու չափ = 490 կգ կամ 30 փութ

Խալֆաթ էղնել – խաղաղ լինել, մեկուսի լինել

Խախոլ (ռուս. хохол) – ուկրաինացի

Խածել, խաձել – կծել

Խաղալ – պարել

Խաճրկաթ – թոնրին դրվող խաչաձև երկաթ

Խամ – 1. հողի ներքին շերտը, 2. անփորձ

Խամբաջի -աներորդու կինը

Խայալ – 1. զգույշ, 2. մտահոգ, 3. զառանցանքի, երազի, ջերմության մեջ

Խան – հյուրատուն, իջևանատուն

Խանձրմել – խանձվել

Խանչալ – դաշույն

Խանջի – իջևանատան տեր

Խանջուկ – տիկնիկ

Խառնել առաջ – առաջը գցելով տանել, քշել

Խառվել -կենակցել

Խաս բախչա – թաքավորական այգի

Խաս ու ղումաշ – մետաքսյա կտոր, կերպաս

Խասը խավարել – հմայքը, գեղեցկությունը կորցնել

Խասիաթ – բնավորություն

Խարաբ էնել (խարապ էղնել) – փչացնել (փչանալ)

Խարաբա – փչացած

Խարազ -մաշիկ կարող

Խարճ – 1.ծախս, հարկ, 2. վայել

Խարճել – ծախսել

Խարջըլըղ – ծախսի փող

Խափան – շուկա

Խեթել – խայթել

Խելի, խեյլի – բավականին
Խելրտուկ – խելառ, խելքը պակաս
Խեծաղ – բոված ցորեն
Խեյրաթխանա – բարեգործական հյուրատուն
Խերվել – 1. օգտվել, 2. բախտավորվել
Խզար քաշել – սղոցել
Խզարչի – սղոցող
Խզմաթքյար – ծառայող
Խըլդբըլդուն – խառնաշփոթ, իրարանցում
Խըլսել – վերջանալ
Խըխրթմիշ էնել – կրնկակոխ վրա հասնել
Խըսմաթ – տե՛ս Ղսմաթ
Խիար – վարունգ
Խիբար – որմնադրության մեջ օգտագործվող մանր տափակ քարեր, որ դնում են մեծ քարերի արանքը
Խիլ – չոփ
Խլեզ – մողես
Խլուզ – ցցված
Խյաշիմ – անփորձ, խամ
Խնամաթոր – խնամաթոռ, խնամաքար
Խնդլու – ուրախությունից
Խշիմ – 1. աղետ, 2. կարկուտ
Խշտացնել – խշտոց առաջացնել
Խոլոռ աշել – հանդիմանական հայացքով նայել
Խոխուրդ – խորհուրդ
Խոմ – հո, արդյոք
Խոնախ – տե՛ս Ղոնախ
Խոնճա-բոխչա – ուտելիքի կապոց
Խոշբեշ էնել – զվարճանալ
Խոշուն – տե՛ս Ղոշուն
Խոչ – խոյ
Խոջ էնել – ձիարշավ անել
Խոսվռդել – շատախոսել, բանավիճել
Խոտիկ – ուղտի ձագ
Խորաթա, խորաթ, խորատա – խոսք, զրույց
Խորակ – ճաշ, ուտելիք
Խորթումորի – անհարազատ
Խորմել –-ցորենի կամ գարու խուրձ կապել
Խորոզ – աքաղաղ
Խորոզլամիշ էղնել – պարծենալ, գոռոզանալ, հպարտանալ
Խորոզխոս – գիշերվա այն պահը, երբ աքաղաղները կանչում են
Խորոտ – գեղեցիկ
Խոցվորել – 1. խոցերով ծածկվել, 2. դիվահարվել
Խռա – հիվանդոտ
Խռկալ – խռմփացնել
Խսիլ – խսիր
Խսմատ – տե՛ս Ղսմաթ
Խվոստավոյ (хвостовой) – ծայրի, վերջի
Խրամկախ – իրիկնապահ, մայրամաուտ
Խրիտ – առևտուր
Խուդում – տե՛ս Ղուդում
Խուլասա, խուլայսա – 1. վերջապես, 2. ինչ որ է
Խումար – թղթախաղ, մոլախաղ
Խումարբազ – խաղամոլ
Խույսուզ – յոլա չգնացող
Խույվորել – գժվել, կատաղել
Խուրդա – 1. մանրադարմ, 2. Կտորտանք
Խուրդ ու խշիլ էղնել – ջարդվել, ջարդուփշուր լինել
Խուփ – կափարիչ

Ծ

Ծըվըռդել – ծվատել, բզկտել
Ծիփ – ծոպ
Ծմակ – խոնավ տեղ
Ծռել – սիրահարվել, խենթանալ
Ծուկուլ – տես Ցուկուլ
Ծուղա -կարմիր կամ դեղին կաշվից երկար ճտքով, սրածայր ոլորած քթով և առանց կրունկների կոշիկ

Կ

Կազոնի (ռուս. казённый) – պետական
Կաթոլ – տե՛ս Կոթոլ
Կալամաշկա (ռուս. коломажка) – երկանիվ սայլ
Կալբաս (ռուս. колбаса) – երշիկ
Կալբասնիկ (ռուս. колбасник) – երշիկագործ
Կալմեջ էնել – շրջապատել
Կալոշ (ռուս. галоши) – կրկնակոշիկ
Կալոս (ռուս. колесо) – անիվ
Կալոսնիկ (ռուս. колёсник) – անվագործ
Կախարան- կախաղան
Կածկածել – կասկածել
Կակալ – ընկույզ
Կակխել – փափկել
Կակխնալ – մեղմանալ, հանդարտվել
Կակոյ նիբուտ – ինչ-որ
Կամանդ անել (ռուս. команда, командовать) – հրամայել
Կամանդիրովկա (ռուս. командировка) – գործուղում
Կամպանիա (ռուս. компания) – 1. ընկերություն, 2. հասարակական միջոցառում
Կանդխտոր (кондуктор) – վագոնավար

Կանվա (ռուս. канва) – գործվածքի, հյուսվածքի համար ցանց, հենք

Կանտռալոր (ռուս. контролёр) – վերահսկիչ

Կանցելար, կանցիլար (ռուս. канцелярия) – գրասենյակ

Կանուխ – շուտ

Կաչկա, կաճկա – սայլակ

Կաչկաչի – սայլապան

Կապեյիչնիկ, կապեեչնիկ (ռուս. копеечник) – կոպեկի մարդ, գծուծ մարդ

Կապոտ – կանացի շոր

Կապրիզ (ռուս. каприз) – կամակորություն

Կապուտ – ծանր, դժվար տանելի

Կառան-կառան – շարան-շարան, խումբ-խումբ

Կառավատ (ռուս. кровать) – մահճակալ

Կառեթ (ռուս. карета) – կառք

Կառծիկ(ներ) – կասկածելի(ներ)

Կառտոլ – կարտոֆիլ

Կասա (ռուս. касса) -դրամարկղ, գանձարկղ

Կաստիլ (ռուս. костиль) – հենակ

Կաստում (ռուս. костюм) – կոստյում

Կատաց անել (ռուս. кататься) – զբոսնել

Կատեկորիյա (ռուս. категория) – կարգ

Կարգվել – ամուսնանալ

Կարդոն (ռուս. картон) – ստվարաթուղթ

Կարիդոր (ռուս. коридор) – միջանցք

Կարտեճ, կարտեչ (ռուս. каторга) – տաժանակիր աշխատանքի վայր

Կաֆարի – կոպիտ, խոպոտ

Կենալ – 1. մնալ, 2. սպասել

Կեռ – խուլ

Կերակուլ – կերակուր

Կզգտել – 1. կծկվել, 2. կռանալ, 3. խեղճանալ

Կզել, կըզանալ – կռանալ

Կըռանտ (ռուս. кран) – ծորակ

Կիճկին – չափավոր խոսող

Կիմբիլ – փոքր ու ժիր

Կլեճ – փոքր, վտիտ

Կլիենտ (ռուս. клиент) – հաճախորդ

Կլյաուզնիկ (ռուս. кляузник) – բանսարկու

Կլլոճ – անթթխմոր հաց, բաղարջ

Կլուբ (ռուս. клуб) – ակումբ

Կճա – ոչխարի սմբակ

Կնդլ – փոքր, գնդլիկ

Կնթիկ – կանայք

Կնկտանց – կանանց

Կնյազ (ռուս. князь) – իշխան

Կնութ (ռուս. кнут) – մտրակ

Կոզնի (ռուս. козлы) – 1. կառապանի նստիք, 2. իշոտնուկ

Կոթոլ (ռուս. котёл) – կաթսա

Կոժո – գոմշի ձագ

Կոլթուղ – տե՛ս Ղոլթուղ

Կոլիկ – գեր և կարճահասակ

